ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ

9(47.925)
О-84

23229

Ստեփանոս Օրբելյան

Սյունիքի պատմությունը

թարգմանությունը, ներածությունը
և ծանոթագրությունները
Ա. Ա. Աբրահամյանի

ԵՐԵՎԱՆ, «ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ», 1986

ԳՄԴ 84Հ1
0—843

Հրատարակության է երաշխավորված ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանի գիտական խորհրդի կողմից:

Խմբագրական կոլեգիա՝

Աբգարյան Գ. Վ., **Աբրահամյան Ա. Ա.**
Առեշյան Ս. Ս., Դեվրիկյան Գ. Խ.,
Նալբանդյան Վ. Ս., Տեր-Վռոնդյան Ս. Ն.

Խմբագրեց Խ. Ա. Թորոսյանը

Օրբելյան Ստեփանոս

0—843 Սյունիքի պատմություն (թարգմ., ներած. և ծանոթագր. Ա. Ա. Աբրահամյանի: Խմբ. Խ. Ա. Թորոսյանը.— Եր.: Սովետ. գրող. 1986, 616 էջ, (Հայ մատենագիրներ):

Պատմությունն ընդգրկում է առաջին դարերից մինչև XIV դարն ընկած ժամանակաշրջանը: Առանցքը Սյունիքի պատմությունն է, բայց միահյուսված է բովանդակ Հայաստանի պատմությանը:

Հեղինակն անդրադառնում է նաև հարևան ժողովուրդների պատմության հարցերին: Առավել արժեքավոր են երկի այն հատվածները, որտեղ հեղինակը պատմում է որպես ականատես:

Աշխարհաբար թարգմանությունը լույս է տեսնում առաջին անգամ:

0 4702080100 (190) / 705 (01) 86 — 86 «S» — ԳՄԴ 84Հ1—63.3(2Հ)

© *«Սովետական գրող» հրատարակչություն, 1986, երևան. ձևավորման, առաջաբանի, ծանոթագրության համար:*

Կատարածս ճվիրում եմ հորս՝ տոհմիկ երկրագործ Ս.սեն Աբրահամի Պետրոսյանի հիշատակին:

Ա. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ստեփանոս Օրբելյանը 13-րդ դարի երկրորդ կեսի և 14-րդ դարի առաջին տարիների գործիչ է: 13-րդ դարը հայ մշակույթի ու գիտության պատմության մեջ աչքի ընկնող ժամանակաշրջան է: Դարի բազմաժանր ու ճոխ մատենագրության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում պատմագրությունը: Այս բնագավառի կարկառուն դեմքերից է Ստեփանոս Օրբելյանը (Ուռպելյան), որը միաժամանակ բանաստեղծ ու կրոնական-հասարակական խոշոր գործիչ է եղել:

Միջնադարի մեր նշանավոր գործիչների շարքում նա մեկն է այն երջանիկ բացառություններից, որոնց մասին կան կենսագրական բավականաչափ տվյալներ: Նրան վերաբերող տվյալները քաղում ենք իր իսկ մատենագրական, ինչպես նաև վիմագրական ժառանգությունից: Այս տեսակետից հիմնական աղբյուրը հեղինակի «Պատմութիւն նահանգին Սիսական» հայտնի երկն է, որի ՀԱ (71-րդ) գլուխն ամփոփ ինքնակենսագրական է: Այդպիսի բնույթ ունեն ԿԶ (66-րդ) գլխի որոշ հատվածներ: Արժեքավոր տեղեկություններ են պարունակում նաև ԿԳ (63-րդ), ՀԳ (73-րդ՝ հիշատակարան) գլուխները[1]: Հետագայի բանասիրության մեջ աչքաթող չի արվել պատմիչի կենսագրությունը: Եղած տվյալների հիման վրա ուսումնասիրողներն աշխատել են այն ներկայացնել ըստ պատշաճի[2]:

---

[1] Երկի գլուխները նշում ենք ըստ փարիզյան հրատարակության: Համմտ. «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց ի լոյս ածեալ հանդերձ ծանօթագրութեամբք կարապետ վարդապետ Շահնազարեանց...», հատոր Ա և Բ, Փարիզ, 1859:

[2] *Ընթերցողներին տեղյակ պահելու նպատակով անհրաժեշտ ենք համարում նշել այն աշխատությունները, որտեղ այս կամ այն չափով ներկայացված է պատմիչի կենսագրությունը կամ շոշափված են կենսագրական առանձին կարևոր հարցեր: Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հատոր Գ, Վենետիկ, 1784,* Saint-Martin M., Mémoires historiques et géographiques sur l'Arménien, t. II, Paris, 1819, *Տ. Գևորգեան Յովհաննիսեանց, Յամառոտ տեղեկութիւն զհեղինակէ մատենիս. «Ստեփանոսի արքեպիսկոպոսի Սիւնեաց Պատմութիւն ի վերայ ծագման տոհմին Օրպէլեան*

Ստեփանոս Օրբելյանը Սյունիքի նշանավոր Օրբելյանների իշխանական տոհմից էր։ Այդ տոհմը Սյունիքում սկզբնավորվեց 12-րդ դարի վերջին քառորդում և իշխող մնաց մինչև 15-րդ դարի կեսերը՝ հսկայական դեր կատարելով միջնադարյան Հայաստանի ու մասնավորապես նրա մեծ մարզերից մեկի՝ Սյունիքի կյանքում։

Պատմիչն իր ծագման մասին գրել է. «Սերվել եմ Սիսական մորից և Օրբելյան հորից. վերջինս, որ Տարսայիճ էր կոչվում, տիրում էր Բաղքից մինչև Այրարատ»[1]։

Օրբելյան ազգանունը գալիս է Օրբեթ ամրոցի անունից։ Ինչպես ինքը՝ պատմիչն է հաղորդում[2], ըստ ավանդության՝ հիշյալ ամրոցում մեր թվականության առաջին դարերում ապաստան էին գտել Ճենաց աշխարհի արքայական տնից այստեղ հասած մի խումբ փախստականներ՝ գահակալական պայքարում պարտված մի արքայազնի գլխավորությամբ, որոնց սերունդները տեղի անունից ստացան Օրբուլ (այսինքն՝ «Օրբեթեցի») անվանումը։ Ապա սա էլ, ընդունելով Օրբել (Օրբելի) ձևը, դարձավ տոհմա-

---

և ի վերայ յարձակման Թաթարաց ի Հայս», Մոսկուա, 1858, Histoire de la Siounie par Stéphannos Orbélian, traduite de l'arménien par M. Brosset, second livraison, introduction, Saint-Pétersbourg, 1866, Գ. Զարբհանալեան, Պատմութիւն հայերէն դպրութեան, Վենետիկ, 1878, Կ. Կոստանեանց, Յառաջաբան. Ստեփանոս Օրբէլեան, Ողբ ի սուրբ կաթուղիկէն, Թիֆլիս, 1885, Ե. Դուրեան, Պատմութիւն հայ մատենագրութեան ի վաղ ժամանակաց մինչև մեր օրերն, Կ. Պոլիս, 1885, Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, Հայապատում, Վենետիկ, 1901, Մ. Օրմանեան, Ազգապատում, Կոստանդնուպոլիս, 1912—1913, Գ. Ալթունեան, Մոնղոլները և նրանց արշավանքները ԺԳ դարում, Վաղարշապատ, 1913, Ա. Զամինեան, Հայ գրականութեան պատմութիւն, Ա մաս, Նոր Նախիջևան, 1914, Հ. Պետրոսյան, Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիա, Երևան, 1941, Ա. Գ. Աբրահամյան, Առաջաբան. Ժամանակագրութիւն Ստեփանոս Օրբէլեանի, Երևան, 1942, Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Երևան, 1946, Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Դ, Երևան, 1948, Ա. Գ. Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն (1-ին դ. մ. թ. ա.— 14-րդ դ.), Երևան, 1959, Թ. Խ. Հակոբյան, Ս. Տ. Մելիք-Բախշյան, Ստեփանոս Օրբելյան, Երևան, 1960, Լ. Ս. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը. «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1969, № 9, В. С. Алексанян, Жизнь, деятельность и научно-историческое наследие Степаноса Орбеляна. Автореферат канд. дисс., Ереван, 1975, Մ. Գ. Գրիգորյան, Ստեփանոս Օրբելյան. «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 4, Նույնի Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981, Լ. Հ. Բաբայան, Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության, Երևան, 1981։

[1] Համմտ. հեղինակի հիշյալ երկը, գլ. ՀԱ։

[2] Տե՛ս նույն տեղում, գլ. ԿԶ։

նուն։ Նույն անունն էլ անցավ տոհմից Հայաստանում շառավիղված սերունդների վրա՝ այստեղ տարածվելով Օրբելյան ձևով։

Պատմիչի հայր Տարսայիճը, որի մասին արդեն շոայլ գովեստներով ու մեծ ակնածանքով է խոսում, Հայաստանում Օրբելյանների տոհմն սկզբնավորած Ելիկում Օրբելյանի թոռն էր։ Իսկ ինչպե՞ս սկզբնավորվեց այդ տոհմը։ Այս հարցին պատմիչը հատուկ կարևորություն է տվել, որին և հանգամանորեն անդրադարձել է իր գրքի ԿԶ գլխում։ 1177 թվականին Վրաստանի Գեորգի 3-րդ թագավորի դեմ երկրի ֆեոդալական վերնախավի կողմից ապստամբություն սկսվեց, որը ղեկավարում էր զորքերի գլխավոր հրամանատար (ամիրսպասալար) Իվանե Օրբելին՝ Սմբատի որդիներից մեկը։ Այդ ժամանակ նրա եղբայր Լիպարիտը իր որդիներ Ելիկումի և Իվանեի հետ ուղարկվեց Ատրպատականի Ելտկուզյան աթաբեկություն՝ օգնական զորք բերելու։ Ապստամբությունը շուտով ճնշվեց։ Լիպարիտն օգնական զորքով կես ճանապարհից ետ դարձավ, մնաց Ատրպատականում ու այնտեղ էլ վախճանվեց։ Տարիներ անց նրա որդի Իվանեն բերվեց Վրաստան, երբ այստեղ թագավորում էր Թամար թագուհին։ Նրան վերադարձվեց հայրենի Օրբեթ ամրոցը։ Այսպիսով նա հնարավորություն ստացավ շարունակելու Օրբելի տոհմը Վրաստանում։ Իսկ Ելիկումը մնաց Ատրպատականում և այստեղ բարձր դիրքի հասավ. այնուհետև իր խնդրանքով տիրույթներ ստացավ Նախիջևանի կողմերում և նշանակվեց այս տեղերի «գործակալ և զորագլուխ»։ Նա ամուսնացավ Սյունյաց եպիսկոպոս Տեր-Ծատփանոսի քրոջ դստեր հետ, որը բնակվում էր Ճահուկում։ Այս ամուսնությունից ծնված որդին Սյունյաց հետագայի մեծ իշխան Լիպարիտ Օրբելյանն էր։ Ահա այսպես առաջացավ Օրբելյան տոհմը Հայաստանում, որը իշխանությամբ փոխարինելու էր գալիս Սիսական տոհմին։ Իշխանաց իշխան այս Լիպարիտ Օրբելյանն իր ծագման (ինչպես և կատարած գործերի) մասին եղեգնաձորի Ամաղուի նորավանքում թողել է վիմական արձանագրություն, որը սույն երկում հիշատակում է պատմիչը[1]։

Լիպարիտ (1-ին) Օրբելյանը քաջ ռազմիկ և շինարար մարդ է եղել։ Մարտնչել է Հայաստանի և Վրաստանի շատ գավառներ սելջուկ-թուրքերի լծից ազատագրելու համար։ Արժանացել է ժամանակի պետական և ռազմական խոշոր գործիչներ Զաքարե ու Իվանե Զաքարյան եղբայրների հովանավորությանը և պաշտպանությանը։ Տիրույթներ է ստացել Հայաստանի տարբեր մասերում (Վայոց ձորում, Գեղարքունիքում, Կոտայքում, Կայենում)։ Նրա տնօրինությանն էին հանձնվել նաև հենց իր առաջնորդությամբ սելջուկ-թուրքերից ազատագրված բուն Սյունիքի շատ կարևոր մի շարք բերդեր՝ Սյունիքը (Սյունին), Որոտնը, Բարկուշատը և ուրիշներ՝ շրջակա տարածքներով։ Նշանակվել է Սյունյաց աշխարհի կուսակալ։ Նա մեծ ջանքեր գործադրեց Սյունիքի Օրբելյան նախարարության քաղաքա-

---

[1] Համմտ. հեղինակի հիշյալ երկը, գլ. ԿՆ, հ. 2-րդ, էջ 104—105։ Արձանագրությունը պահպանվել է մինչև մեր օրերը։ Համմտ. «Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 211։

կան իշխանության ամրապնդման, տեղում մշակութային նոր օջախների հիմնման ու զարգացման ուղղությամբ: Նրա գիծն ավելի խորացրին իրեն հաջորդած իշխանները՝ իր որդիներ Ելիկումը, Սմբատը, Տարսայիճը, որոնք իրենց քաղաքական դիրքի կայունացման, հայրենիքի ապահովության համար հարաբերությունների մեջ էին մտնում նաև մոնղոլ-թաթարական իշխանության հետ՝ դիվանագիտորեն «լեզու գտնելով» կամ այլ միջոցներ գործադրելով: Նրանք երբեք չէին անտեսում բարեկամական սերտ կապի կարևորությունը Վրաստանի հետ՝ հանուն հայ և վրացի եղբայրական ժողովուրդների ընդհանուր շահերի:

Վերոհիշյալ Տարսայիճ Օրբելյանն այս լիպարիտի կրտսեր (5-րդ) որդին էր, որ հետագայում դարձավ իշխանաց իշխան, ապա և նշանակվեց աթաբեկ ու հռչակվեց ռազմական, վարչաքաղաքական, շինարարական եռանդուն գործունեությամբ: Նրա իշխանության օրոք էլ ավելի ընդարձակվեցին Օրբելյանների տիրապետության սահմանները:

Նրա մասին տեղեկություններ ենք ստանում ինչպես իր որդի պատմիչի հաղորդածներից, նույնպես և վիմագիր ու ձեռագիր այլ աղբյուրներից[1]:

Մեր պատմիչ Ստեփանոսը Տարսայիճի առաջին ամուսնությունից ծնված չորս զավակներից մեկն էր, երկրորդ որդին: Նա աշխարհ է եկել ու գործել այն ժամանակ, երբ Օրբելյան իշխանական տունն իր զարգացման գագաթնակետին էր:

Ընդհանրապես դեպքերը համապատասխան թվականներով ներկայացնող պատմիչը իր ծննդյան թվականը, դժբախտաբար, չի նշել և այն ստույգ հայտնի չէ: Նրա ծննդյան ժամանակի մասին հետագայի ուսումնասիրողները միայն ենթադրություններ են արել: Առաջին և հավանական կարծիքը պատկանում է Մ. Բրոսեին, ըստ որի պատմիչը պիտի ծնված լիներ 1250—1260 թվականների միջև ընկած ժամանակամիջոցում[2]: Ավելի ուշ համանման կամ ոչ մեծ տարբերություններով կարծիք են արտահայտել Ա. Գ. Աբրահամյանը[3], Թ. Խ. Հակոբյանը, Ս. Տ. Մելիք-Բախշյանը[4], Վ. Ս. Ալեքսանյանը[5]: Վերջին ժամանակներս բավական տարբեր կարծիք

---

1 Տե՛ս նաև այս գրքում՝ համապատասխան ծանոթագրությունները:

2 Տես՝ "Histoire de la Siounie par Stéphannos Orbélian, traduite de l'arménien par M. Brosset, second livraison, introduction, S.-Pétersbourg, 1866, էջ 170:

3 Տե՛ս Ստեփանոս Օրբելյանի «Ժամանակագրություն» աշխատությանը կցած Նրա «Առաջաբան»-ը, Երևան, 1942, էջ 3:

4 Թ. Խ. Հակոբյան, Ս. Տ. Մելիք-Բախշյան, Ստեփանոս Օրբելյան, Երևան, 1960, էջ 26:

5 В. С. Алексанян, Жизнь, деятельность и научно-историческое наследие Степаноса Орбеляна. Автореферат, 1975, էջ 19: Հեղինակը այն կարծիքն է հայտնում, թե Ստեփանոս Օրբելյանը վարդապետական աստիճան պիտի ստացած լիներ 24 տարեկան հասակում, ուստի և պիտի ծնված լիներ մոտավորապես 1260 թվականին (Ն. տ.):

է հայտնել Գ. Մ. Գրիգորյանը՝ գրելով, թե պատմիչը ծնված պիտի լիներ 13-րդ դարի 40-ական թվականներին և ապրած 60 տարուց ոչ պակաս[1]:

Հորեղբայրը՝ Սյունյաց գահերեց «մեծ և արքայաշուք իշխան» Սմբատը, անզավակ լինելով, որդեգրել է փոքրիկ Ստեփանոսին ու հոգ տարել նրա կրթության և դաստիարակության մասին: Սմբատի մահից հետո (1273 թ.) իշխանությամբ նրան փոխարինած Տարսայիճն է հետևել որդու կրթությանն ու հետագա առաջընթացին:

Ստեփանոսն սկզբնական կրթությունն ստացել է Տաթևի թեմի առաջնորդ Տեր-Հայրապետ եպիսկոպոսի ղեկավարությամբ, որն այդ պաշտոնին էր անցել 1252 թ.: «Իսկ սուրբ ավազանի հոգևոր ծնունդով,— գրել է Ստեփանոսը,— որդիացել եմ Սյունյաց եպիսկոպոս Տեր-Հայրապետին: Դաստիարակվել ու սովորել եմ աստվածային կրոնավոր մարդկանց մոտ» (գլ. ՀԱ): Սովորել է մատենագրություն, կրոնական գրականություն և երաժշտություն: Գործունեությունն սկսել է որպես շարքային եկեղեցական: Դարձել է սաղմոսերգու և գրակարդաց, եկեղեցական դպիր ու սարկավագ: Տարսայիճի նախաձեռնությամբ Վայոց ձորի Նորավանքում գումարված ժողովի որոշմամբ 1280 թ. ձեռնադրվել է քահանա: Այնուհետև ուսանել է Գլաձորի հռչակավոր բարձրագույն դպրոցում, որի ռաբունապետը երախտավոր Ներսես Մշեցին էր: Այդ մասին ինքը՝ երախտագետ սանը, գրել է. «Ուսանեցի աստվածային դպրության կրթարանում, մի փոքր զգացի [գիտության] քաղցր նյութի ճաշակը և աստծով համակված, աշխարհալույս ռաբունապետ Ներսեսից իրավունք ստացա ու տհաս խակությամբ նստեցի վարդապետական աթոռին» (գլ. ՀԱ):

Իր երկում Օրբելյանը Գլաձոր անունը չի հիշատակում: Բայց միանգամայն ակներև է, որ նրա նշած աստվածային դպրության կրթարանը հենց նույն Գլաձորի բարձրագույն դպրոցը կամ համալսարանն էր: Նրա հիշատակած աշխարհալույս ռաբունապետ Ներսեսը նույն ինքը ժամանակի հայտնի գիտնական և մշակութային մեծ գործիչ Ներսես Մշեցին էր, որ Արևմտյան Հայաստանի ս. Առաքելոց վանքից տեղափոխվել էր Արևելյան Հայաստան և Վայոց ձորում հիմնադրել Գլաձորի համալսարանը ու դարձել նրա առաջին տնօրեն-ռաբունապետը:

Մեր բանասիրության մեջ պարզված է, որ Ներսես Մշեցին Գլաձորում հաստատվել է 1280 թ. և վախճանվել է 1284 թ.[2]: Ուրեմն կարելի է ասել, որ այդ համալսարանում Ստեփանոս Օրբելյանը Ներսես Մշեցի ուսուցչապետի ձեռքի տակով անցած առաջին շրջանավարտներից է եղել: Ուսանել է քահանայական հոգևոր կոչումով և ավարտելով արժանացել է վարդապետական դավաճանի:

---

1 Գ. Մ. Գրիգորյան, Ստեփանոս Օրբելյան, «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 4, էջ 155, այլև՝ նույնի «Սյունիքը Օրբելյանների օրոք», Երևան, 1981, էջ 194:

2 Տե՛ս Գ. Յովսեփեան, «Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ», մասն երկրորդ. Հոգևոր կեդրոններ և Գլաձորի բարձրագոյն դպրոցը Պռոշեանց իշխանութեան մէջ», Երուսաղէմ, 1944, էջ 191:

1285 թ. նա ուղարկվել է Կիլիկիա, Հայոց Հակոբ 1-ին կաթողիկոսի մոտ՝ եպիսկոպոս ձեռնադրվելու։ Մինչև տեղ հասնելը կաթողիկոսը Հռոմկլայում վախճանված է եղել։ Ապա Ստեփանոսը, Սիս մայրաքաղաքում այդ մասին իմանալով, այնտեղից անցել է Ադանա, Լևոն 3-րդ թագավորի մոտ, որի կողմից ընդունվել է մեծ պատվով ու հարգանքով։ Թագավորը, անձնական շփումով ավելի լավ ճանաչելով նրան, թախանձել է կաթողիկոս ընտրվել և մնալ Կիլիկիայում[1], բայց նա նախընտրել է եպիսկոպոս ձեռնադրվել ու վերադառնալ Սյունիք։ Իր իսկ վկայությամբ մինչև կաթողիկոսի ընտրությունը հարկադրված է եղել թագավորի մոտ սպասել երեք ամիս[2]։ Վերջապես 1286 թ. գատկի տոնի նախօրեին նոր կաթողիկոս է ընտրվում Կոստանդին 2-րդը (Կատուկիցի, Պրոնագործ), որն էլ Ստեփանոսին հաջորդ օրը հանդիսավորությամբ ձեռնադրում է եպիսկոպոսի։ Ստեփանոս Օրբելյանը միաժամանակ հաստատվում է Սյունիքի մետրոպոլիտ և հայտարարվում հայոց պատրիարքի պատոհֆրոնտես, այսինքն՝ առաջին աթոռակալ, եպիսկոպոսապետ։ «Ու այսպես,— գրում է նա,— շատ բարձր փառքով այնտեղից վերադարձրին յոթ հարյուր երեսունվեց (այսինքն՝ ընդհանուր 1287— Ա. Ա.) թվականին» (գլ. ԿԶ)[4]։ Այս թվականի նշումն իր հերթին ցույց է տալիս, որ Ստեփանոս Օրբելյանն իր ձեռնադրումից անմիջապես հետո չի մեկնել, այլ որոշ ժամանակ մնացել է Կիլիկիայում։ Դա նրան լայն հնարավորություն է ընձեռել ավելի հանգամանորեն ծանոթանալու այդ թագավորության կյանքին, քաղաքական, կրոնական ու մշակութային անցուդարձերին։

Նորընծա մետրոպոլիտին սպասում էր շատ դժվարին աշխատանք։ Այդ նկատի ունենալով՝ նա գրել է. «Մեր հիմարությամբ համաձայնեցինք՝ չգիտակցելով ահարկու և անտանելի այս լծի ծանրությունը։ Միայն ախտավոր մտքով առօրյա փառքին ախորժեցի։ Դրա համար երանի եմ տալիս չեղածներին և բյուր երանի՝ արգանդից վիժածներին» (գլ. ՀԱ)։ Բայց, այդուհանդերձ, նա ձգտել է իր գործունեությամբ օգտակար լինել, «ես, ինքնին խավար լինելով, կամեցա ուրիշների համար լույս լինել»,— գրել է նա՝ իր սովորության համաձայն միաժամանակ ծայրահեղորեն նսեմացնելով սեփական անձը։

Կարելով երկար ճանապարհը՝ Ստեփանոս Օրբելյանը վերադառնում է հայրենի նահանգը։ Այստեղ նա թեև ընդհանրապես ուրախությամբ է ընդունվում, բայց միաժամանակ հանդիպում է Տաթևի թեմի եպիսկոպոսներ Հայրապետի և Հովհաննեսի դիմադրությանը. նրանք ամեն կերպ աշխատում էին խոչընդոտել նրա գործը։ Շուտով նա ներկայանում է ժամանակի իշխան Արղունին, նրան ցույց տալիս իր լիազորություններին վերաբերող շրջաբերական գրությունը, ինչպես նաև Տարսայիճի իշխանական հրամանագիրը՝ համապատասխան աշխարհիկ ժառանգության ու Սյունիքի մի շարք վանքերի՝ Տաթևի, Նորավանքի, Ցաղաց քարի, Արատեսի և ուրիշների տնօրինման մասին։ Արղունից հատուկ հրամանագիր է ստանում, որով հաստատվում են նրա պաշտոնական ու ժառանգական իրավունքները։ Այդ իրավունքները նա հետո վերստին հաստատել է տալիս նաև Քեղաթու և Ղազան իլխաններին։

Ո՛չ այն ժամանակ, երբ Ստեփանոս Օրբելյանը մեկնում էր Կիլիկիա, ո՛չ էլ վերադարձին՝ Սյունիքի հոգևոր աթոռները թափուր չէին։ Սակայն ընդհանուր միասնական թեմը բաժանված էր երկու՝ Տաթևի և Նորավանքի առաջնորդարանների։ Այդ հանգամանքը նպաստավոր չէր նաև նահանգի աշխարհիկ միասնական իշխանության համար, և այդպիսով առաջացել էր միասնական աթոռը վերականգնելու և հոգևոր ընդհանուր ղեկավար ունենալու հարցը, որի լուծումը նախաձեռնում է նույն իշխանաց իշխան Տարսայիճը՝ հոգևոր բարձր դասի ներկայացուցիչների մասնակցությամբ։ Պատմիչը փաստն արձանագրում է՝ իր ձեռնադրման ու նշանակման անհրաժեշտության և նպատակի մատնանշումով։ Ըստ այդմ՝ նա ձեռնադրվել է «Սյունիքի մեծ աթոռի մետրոպոլիտ՝ մյուս եպիսկոպոսների վրա, որոնք գտնվում էին այս ու այնտեղ, ոմանք Վայոց ձորում, ոմանք՝ Տաթևում» (գլ. ԿԶ)։ Նրան ձեռնադրման էին ուղարկել «վերականգնելու սուրբ աթոռը, նրա նախկին պատիվն ու դիրքը, որ վաղուց վերացել էին երկրի ավերման ու կործանման պատճառով» (գլ. ԿԶ)։ Այդ էր հաստատում նաև կաթողիկոսից իր վերցրած շրջաբերական գրությունը, որի մասին ինքը գրել է. «Այնտեղ բարձրաձայն խոսքերով հայտարարվում էր Սյունյաց մետրոպոլիտության աթոռի վերահաստատման, նրա պատվի վերականգնման մասին» (գլ. ԿԶ)։ Այսպես ուրեմն, Ստեփանոսը գալիս էր իր հայրենի նահանգում հոգևոր ընդհանուր ղեկավար լինելու։ Եվ նա հայրենիք վերադառնալով այդպես էլ սկսում է իր առաքելության իրագործումը՝ տնօրինելով դեռևս երկփեղկված թեմի հոգևոր գործերը։

Բացի իր իսկ հիշատակումներից, այլ աղբյուրներից ևս երևում է, որ նորընծա եպիսկոպոսը պաշտոնապես ճանաչվել է Սյունիքի հոգևոր ընդհանուր առաջնորդ։ Օրինակ՝ հիշենք հայոց ՁԽ (=740), այսինքն՝ ընդհանուր 1291 թվականով մեզ հասած խաչքարի արձանագրությունը, որտեղ

---

[1] Տե՛ս Օրբելյանի սուրբ երկը, գլ. ԿՋ։

[2] Տե՛ս նույն տեղում, գլ. ՀԱ։

[3] Այս կապակցությամբ Մ. Օրմանյանը գրել է, թե Ստեփանոս Օրբելյանի նշած երեք ամիս սպասելու ժամանակամիջոցը պետք է ընդունել մոտավորությամբ, որովհետև Հակոբ 1-ին կաթողիկոսը վախճանվել էր 1286 թ. փետրվարի 12-ին, իսկ Ստեփանոսը ձեռնադրվել է ապրիլի 14-ին, որը կազմում է ճիշտ 60 օր։ Տե՛ս «Ազգապատում», Կոստանդնուպոլիս, 1912—1913, էջ 1695։

[4] Ջնայած հեղինակի կողմից այս և նախորդ որոշ թվականների որոշակի նշմանը, հետագայի առանձին բանասերներ ներկայացնում են տարբերվող տվյալներ։ Որպես բնորոշ օրինակ վերցնենք Կ. Կոստանյանի նշումները։ Այս բանասերը Ս. Օրբելյանի քահանա ձեռնադրվելը նշում է 1281, Կիլիկիա մեկնելը՝ 1286, մետրոպոլիտ ձեռնադրվելը՝ 1287, Սյունիք վերադառնալը՝ 1288 թվականները՝ այսինքն՝ յուրաքանչյուր դեպքում իրականի հանդեպ մեկ տարվա տարբերությամբ։ Տե՛ս «Ողբ...»-ի հրատարակությանը կցված նրա «Յառաջաբան»-ը, Թիֆլիս, 1885, էջ 7—8։

նշված է. «Ի հայրապետուն տր Ստեփանոսի որդո Տարսայիճին...»[1] («Տարսայիճի որդի Տեր-Ստեփանոսի հայրապետության ժամանակ»)։ Նույնպիսի վկայություններ ենք գտնում նաև Նորավանքի երկու՝ 1291 և 1292 թվականներով հայտնի արձանագրություններում[2] (տվյալ դեպքում նկատի չենք առնում ավելի ուշ տարիների վիմագրական նման հիշատակումները)։ Անշուշտ, ճիշտ են վարվել հետագայում պատմիչի կենսագրությանն անդրադարձած բանասերները՝ նրա մետրոպոլիտական պաշտոնավարության սկիզբը համարելով հայրենի նահանգը վերադառնալու ժամանակը (անկախ թվականի ընդունման որոշ տարբերություններից)[3]։

Սակայն անժխտելի փաստ է, որ հենց ինքը՝ Ստեփանոս Օրբելյանը, իր Պատմության ԿԲ գլխի վերջում գրել է, թե մետրոպոլիտության պաշտոնն ստանձնել է Տաթևի Հայրապետ առաջնորդին հաջորդած Հովհաննես եպիսկոպոսից հետո։ Այսպես. «Եվ քանի որ Տեր-Հայրապետի կենդանության ժամանակ ձեռնադրվել էր իր եղբորորդին՝ Հովհաննես անունով, նրանից հետո բազում հակառակություններով երեք տարի սա աթոռակալեց, վախճանվեց ու թաղվեց իր հորեղբայր Տեր-Հայրապետի մոտ։ Այս Հովհաննեսից հետո մեր ապիկար ու չնչին անձը հաջորդեց Սիսական տանս մետրոպոլիտության կրկնանորոգ գահին...»։

Հայտնի է, որ Հայրապետն աթոռակալել է 40 տարի (սա ևս նշում է Ստեփանոս Օրբելյանը), մինչև 1292 թ.։ Նրան հաջորդածը Հովհաննես 9-րդն էր։ Սրա աթոռակալման երեք տարին լինում է 1292—1295 թթ. ժամանակամիջոցը։ Հայրապետ-Հովհաննես-Ստեփանոս Օրբելյան հաջորդականությունը հավաստված է նաև վիմական մի արձանագրությամբ[4]։ Ուրեմն դուրս է գալիս, որ Ստեփանոս Օրբելյանը Սյունիքի մետրոպոլիտության պաշտոնին է անցել ձեռնադրվելուց 9 տարի հետո, որն ակնհայտորեն հակասում է վերը ցույց տրված իսկությանը։ Սակայն այս հակասությունը սոսկ արտաքին է։ 1286 թ. ապրիլի 14-ին[5] եպիսկոպոս ձեռնադրված և Սյունիքի մետրոպոլիտ հաստատված Ստեփանոսը, որ նեղվել է Հայրապետի ու Հովհաննեսի խժդժություններից, պայքարել է նրանց դեմ, սակայն ասպարեզից պաշտոնապես չի հեռացրել, մինչև որ բնությունը մահով իր գործն է կատարել նրանց նկատմամբ։

---

[1] «Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 172, արձ. № 527, լուսանկար № 195։

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 220, արձ. № 698, էջ 238, արձ. № 779։

[3] Օրինակ՝ Կ. Կոստանյանցն այդ ժամանակը նշում է 1288 թվականը։ Տե՛ս «Ողբ ի կաթողիկէն...», էջ 8—9։ Իսկ ընդհանրապես բանասերների ճնշող մեծամասնությունը ընդունում է պատմիչի նշած վերադարձի 1287 թվականը։

[4] Տաթևի վանքից հարավ, ձորի մյուս կողմի ս. Աստվածածին կիսավեր եկեղեցու մոտի խաչքարի վրայի արձանագրությունը։ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 2-րդ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյանը, Երևան, 1960, էջ 33, արձ. № 64։

[5] Ամսաթիվը նշում ենք ըստ Մ. Օրմանյանի հաշվումների։

Ստեփանոս Օրբելյան մետրոպոլիտի առաջնահերթ խնդիրն էր՝ միացնել նահանգի երկփեղկված թեմը։ Նրա ջանքերը հաջողությամբ պսակվեցին. միավորվեց ու վերականգնվեց երբեմնի միասնական հոգևոր թեմը։

Սյունյաց սահմաններում եկեղեցական վեճերի ու տարաձայնությունների հաղթահարմանը, վերացմանը և հոգևոր գործերի կարգավորմանը զուգահեռ Ստեփանոս Օրբելյանի եռանդուն գործունեությունը ծավալվում էր երեք ուղղություններով՝ դավանաբանական, մշակութային-շինարարական և մատենագրական։

Դավանաբանական հարցերում Ստեփանոս Օրբելյանի գործունեությունը դուրս էր գալիս Սյունիքի շրջանակներից և ընդգրկում ավելի լայն ոլորտներ։ Որպես նախաթոռ և եպիսկոպոսապետ նա ամբողջ խորությամբ պատասխանատվություն է զգացել ընդհանրապես իր ժողովրդի դավանանքի անշեղ պահպանման գործում։ Նա քաջ գիտակցել է հայ ժողովրդի քաղաքական ինքնուրույնության, գոյատևման համար նաև կրոնական-մշակութային պայքարի նշանակությունը։ Այդ պայքարը չափազանց կարևոր էր և իր ապրած դարաշրջանում, որը բնորոշ էր ինչպես քաղաքական արհավիրքներով, նույնպես և դավանանքային վտանգներով։ Իր Պատմության մեջ շատ անգամ անդրադառնալով հայ եկեղեցու դավանաբանային դիրքին՝ պատմիչը անվարան, հաստատուն կողմնորոշմամբ հանդես է եկել ինքնուրույնության գծի պաշտպան ու ջատագով, մերժելով մերժել է քաղկեդոնականությունը և համանման դավանանքային ուղղությունները։ Իսկ այժմ, երբ ստանձնել էր կրոնական ղեկավար գործչի պաշտոնը, ցուցաբերում է անմիջական գործուն միջամտություն։

Կիլիկիայի հոգևոր ու պետական ղեկավար շրջաններում այդ ժամանակ գնալով ուժեղանում էր օտարամոլությունը։ Կրոնական ու պետական որոշ ղեկավարներ դիրքորոշվում էին դեպի հունա-հռոմեական եկեղեցիները, որոնց ընդունած դավանանքի հիմքում ընկած էր երկաբնակության գաղափարը։ Այդ դիրքերից նրանք ձգտում էին «նորույթներ» մտցնել հայ եկեղեցում ու դրանք տարածել ամբողջ երկրում՝ ներառյալ Արևելյան Հայաստանը։ Դա լուրջ սպառնալիք էր երկրի ներքին ինքնուրույնության պահպանման համար։ Հայ եկեղեցու՝ միաբնակության գաղափարի վրա հենվող դավանանքի ավանդականության կրքոտ պաշտպան Ստեփանոս Օրբելյանը չէր կարող հանդուրժել դա, և պայքար է սկսում՝ դիմելով գործնական քայլերի։ Այդ տեսակետից խիստ բնորոշ է նրա դիրքը Գրիգոր Աննավարզեցի կաթողիկոսի դավանանքային օտարամոլ գործողություններին նկատմամբ։ Վերջինս կաթողիկոս դառնալով սկսել էր զանազան «նորաձևություններ» մտցնել՝ շեղվելով հայ եկեղեցու ավանդություններից և բացահայտորեն հարելով արևմտյան եկեղեցիներին։ Այդ «նորույթները» Արևելյան Հայաստանի եկեղեցիներում ևս տարածելու նպատակով իր առաջարկները բովանդակող հատուկ նամակով նա այստեղ է ուղարկում համախոհ և գործակից պատվիրակ՝ Կեսարիայի եպիսկոպոս Կոստանդինին։ Առաջարկները շարժում են տեղի հոգևոր և աշխարհիկ իշխանական բարձր դասերի զայրույթը։ Ստեփանոս Օրբելյանի նախաձեռնությամբ հրավիրվում է բարձրաստիճան կրոնավորների ժողով՝ աշխարհիկ իշխանությունների

ներկայացուցիչների մասնակցությամբ։ Որոշվում է մերժել կաթողիկոսի առաջարկները։ Պատասխան նամակի պատրաստումը հանձն է առնում ինքը՝ Ստեփանոս Օրբելյանը։ Մեզ է հասել այդ արժեքավոր փաստաթուղթն ամբողջությամբ։ Հեղինակն այն գետեղել է իր Պատմության մեջ՝ դարձնելով նրա ԿԲ (69-րդ) գլխի հիմնական մասը։ Այստեղ նախ խոսվում է հայ եկեղեցու ընդունած միաբնակական դավանանքի էության ու դրա պահպանման համար մղված պայքարի մասին։ Հիշվում են հայ եկեղեցական այն բոլոր ժողովները, որոնք զանազան ժամանակներում քննարկել և որոշում են կայացրել դավանանքի անխաթար պահպանման մասին՝ ընդդեմ քաղկեդոնականության և համանման դավանանքների։ Առաջարկվում է հավատարիմ մնալ ավանդության։ Այնուհետև մեկ առ մեկ քննարկվում ու քննադատվում են կաթողիկոսի առաջարկած ծիսական, պաշտամունքային-արարողական ու նման կարգի այլ «նորամուծությունները» և մերժվում։ Առաջարկվում է կտրականապես հրաժարվել դրանցից՝ հանուն ինքնուրույնության։ Այնուհետև խորհուրդ է տրվում այդ ոգով հաստատել ընդհանրական թուղթ և ետ ուղարկել՝ ի ղեկավարություն։

Ստեփանոս Օրբելյանը զանազան նկատառումներով շարագրանքի մեջ արտաքուստ դիվանագիտորեն պահպանում է քաղաքավարական մոտեցումը՝ կաթողիկոսին տեղ-տեղ մեծարանքի խոսքեր ուղղելով, բայց բացահայտորեն նկատելի է, որ նա էապես, սկզբունքների խնդրում անողոք է, անզիջում ու հետևողական։

Այս փաստաթղթի արժեքն ավելի է մեծացվել նրանով, որ նրան տրվել է ժողովի ընդհանուր որոշման և յուրատեսակ համախոսականի բնույթ։ Պահպանվել և մեզ է հասել նաև այս փաստաթղթին կցված «Ձեռնարկ»-ը (ներառված Ստեփանոս Օրբելյանի հիշյալ երկի նույն ԿԲ գլխի մեջ), որը պարունակում է ժամանակի 14 նշանավոր պաշտոնական անձանց անունները՝ նրանց համաձայնական խոսքերով ու հակառակվողներին ուղղված նզովքներով հանդերձ։ Այդ ստորագրողների մեջ են եղել Արևելյան Հայաստանի կրոնական ու մշակութային մի շարք կենտրոնների՝ Ամաղուի Նորավանքի, Բջնու, Հաղպատի, Հավուցթառի, Գողթնի, Գլաձորի և այլ տեղերի հոգևոր առաջնորդներ ու բարձրաստիճան զանազան այլ գործիչներ՝ թվով 10 հոգի։ Մնացած 4-ը Սյունիքի իշխաններից են՝ Օրբելյան և Պռոշյան իշխանական տներից։

Ժամանակի պայմաններում Ստեփանոս Օրբելյանի կողմից գործի այսպիսի կազմակերպումը և ղեկավարումը՝ որոշակի նպատակադրումով, անշուշտ, հրատապ էին։ Սակայն այդպիսով խնդիրը դեռ չէր ավարտվում։ Հետևողական գործիչը շարունակում էր պայքարը։ 1302 թ. նա գրեց իր քննախոսական ավելի ընդարձակ աշխատությունը՝ «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» խորագրով։ Այստեղ ավելի հիմնավոր ձևով պաշտպանելով միաբնականական դավանանքը՝ առավել հանգամանորեն ու սրությամբ քննադատության է ենթարկում երկաբնակությունը, դավանանքային այն բոլոր ըմբռնումները և ծիսակատարությունները, որոնք խորթ էին հայ եկեղեցուն, բայց պարտադրվում էին օտարամոլների կողմից։ Նա բազմիցս ընդգծում է դրանք ընդունելու վտանգավորությունը և իր առաջ խնդիր է դրե-

նում վեր հանել ու ճանաչել տալ դրանց ջատագովների «օտար վարդապետության մահահոտ գարշությունը»[1]։ Օրբելյանը կոչ է անում չընկրկել շարիքի առաջ, զերծ մնալ օտարամոլ կրոնավորների աղանդից։ «Տեղի չըտանք չարին. բնավ ու երբեք չհոտոտենք նրանց գարշելի աղանդի ժանտալից հոտից»[2],— հորդորում է նա։

Նույնպիսի նպատակով է գրվել նաև նրա «Պատճառ ժողովոյն Քաղկեդոնի» փոքրիկ գրվածքը (1302 թ.)։ Նույն պայքարին առնչվում է նաև «Ողբ ի սուրբ կաթուղիկէն» քերթվածը (1299 թ.)։

Ստեփանոս Օրբելյանի շինարարական գործունեության մեջ ամենանշանակալիցը Տաթևի վանքի հիմնակործան ս. Գրիգոր եկեղեցու վերստին կառուցումն է[3]։ Շենքը մինչև այժմ էլ կանգուն է և կրում է Օրբելյանի թողած արձանագրությունը՝ հայոց ՉՆԴ (=744+551=1295) թվականով[4]։

Ժամանակի կրոնական-մշակութային օջախների գործունեությանը նպաստելու համար նա կազմակերպել է նվիրատվություններ՝ լինելով մեծ սեփականատեր՝ անձամբ իր ունեցվածքից ևս խոշոր միջոցներ է տրամադրել նրանց։ Սույն երկից բացի, այդ նվիրատվությունների մասին պատմում են նաև նրա թողած արձանագրությունները[5]։

Զգալի է եղել Ստեփանոս Օրբելյանի դերը ձեռագիր մատյանների ընդօրինակման և ընդհանրապես մեր մատենագրության ծավալման գործում։ Ընդօրինակել է տվել մի Ավետարան (1302 թ., գրիչ՝ Հովհաննես Օրբել, ծագկող՝ Մոմիկ, վայր՝ Սյունիք), Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց»-ը (1303 թ., գրիչ՝ Դանիել, վայր՝ Աղթամար), «Մեկնութիւն ժողովոդին Գրիգորի Նիւսացւոյ»-ն (1303 թ., գրիչ՝ Խաչատուր Երզնկացի, վայր՝ Արատես մենաստան)։ Գլաձորի համալսարանի տնօրեն, ժամանակի մեծ գիտնական և մանկավարժ Եսայի Նչեցին նրա հանձնարարությամբ է գրել Եզեկիէլի Մարգարեության մեկնությունը (հայտնի է «Հաւաքումն մեկ-

---

[1] Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց նախագահ արհիեպիսկոպոսի Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց, շարադրեալ ի թուին Հայոց ՉՕԱ, ի կաթողիկոսութեան Գրիգորի Անաւարզեցւոյ, Կոստանդնուպոլիս, 1756, էջ 4—5։

[2] Նույն տեղում, էջ 59։

[3] Ստեփանոս Օրբելյանին են վերագրել նաև այժմյան Եղեգնաձորի շրջանի Ալայազ գյուղի արևելյան ծայրին գտնվող «Զորաց տաճար»-ի կառուցումը, բայց Ս. Գ. Բարխուդարյանի կողմից պարզվել է, որ այդ տաճարը 2—3 տասնյակ տարի ավելի ուշ է շինված, քան ընդունված է. և նրա շինողը պատմագիրը չէ։ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 105։

[4] Արձանագրության ընդօրինակումը տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 2-րդ, էջ 25, № 41։

[5] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 215—216, արձ. № 685, էջ 125, արձ. № 363, էջ 126, արձ. № 364 և այլն։

նութեան Մարգարէութեանն Եզեկիէլի» ձեռագրով)[1]։ Այս բոլորի մասին նշվում է համապատասխան հիշատակարաններում[2]։

Ստեփանոս Օրբելյանի թողած գրական ժառանգությունը հայ միջնադարյան մատենագիտության մեծ շղթայի մի կարևոր օղակն է կազմում։ Նրա գրչին են պատկանում տարբեր ծավալի ու բնույթի աշխատությունները, որոնց հիմնական մասը համապատասխան առիթներով հիշատակեցինք վերը։ Ըստ բնույթի դրանք երեք կարգի են՝ պատմագիտական, դավանաբանական և գեղարվեստական։ Պատմագիտական երկերն են «Ցիշատակաց մատեան»-ը, որ հրատարակություններով ընթերցողներին հայտնի է «Պատմութիւն նահանգին Սիսական» և «Պատմութիւն տանն Սիսական» վերնագրերով, «Ժամանակագրութիւն»-ը[3]։ Դավանաբանական գրվածքներն են վերը հիշված՝ Գրիգոր Անավարզեցուն ուղղված նամակը՝ «Թուղթ վասն հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ յարևելեան աշխարհէս առ կաթուղիկոսն Հայոց Տէր-Գրիգոր...» վերնագրով, «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց»-ը, «Պատճառ ժողովոյն Քաղկեդոնի»-ն։ Տպագրում «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց»-ի մեջ ներառված են մյուս երկուսը՝ «Պատճառ...»-ը և «Թուղթ...»-ը որպես 11 և 12-րդ գլուխներ[4]։ Գեղարվեստական է «Ողբ ի սուրբ կաթուղիկէն» քերթվածը[5] գրված խաչատուր Կեչառեցու խնդրանքով, որը զերծ չէ պատմական հենքից։

---

1 Գ. Հովսեփյանը, խոսելով Գլաձորի համալսարանի գործիչների և նրբանց աշխատանքի մասին, նաայի Նշեցու գործերից հատկապես առանձնացնում է այս աշխատությունը որպես ամենամեծը, որ գրված է Ս. Օրբելյանի հանձնարարությամբ («Աղբյակեանք կամ Պռոշեանք...» 2-րդ, էջ 267)։ Գրվել է 1303 թ., պահպանվել և հասել է մեզ վերը նշված ձեռագրով (Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. № 5566, վերջին ժամանակներս ստացվել է նաև մեկ այլ ձեռագիր)։ Եզեկիելի սուրբ երկի մասին Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան»-ում 1307 թվականով նշումը (հ. 2-րդ, Երևան, 1944, էջ 128) վրիպակ պետք է համարել և չպետք է կարծել, թե խոսքը մեկ ուրիշ աշխատության մասին է։

2 Տե՛ս Լ. Ս. Խաչիկյանի կազմած «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ը, Երևան, 1950, էջ 8, 9, 12, 13, 17։

3 Ժամանակագրութիւն Ստեփանոսի Օրբէլեանի, հրատարակության համար պատրաստեց պատմ. գիտ. թեկնածու Ա. Աբրահամյանը, Երևան, 1942։ Տե՛ս նաև «Մանր ժամանակագրություններ 13—18-րդ դդ.», կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 35—50։

4 Տէառն Ստեփաննոսի Սիւնեաց նախագահ արհիեպիսկոպոսի Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց, շարադրեց Հայոց ՉԺԱ..., Բայց հիշենք, որ «Թուղթ...»-ը գրված է ավելի առաջ՝ 1297 թ.։ Կոստանդնուպոլիս, 1756։

5 Հայտնի են այս քերթվածի երեք տպագրություններ՝ ա) «Ողբք և հառաչանք ի դիմաց մօր մերոյ...», Նոր Նախիջևան, 1790, բ) «Ողբք և հառաչանք ի դիմաց մօր մերոյ...», Կալկաթա, 1846, գ) «Ողբ ի սուրբ կաթուղիկէն» (Կ. Կոստանդյանցի առաջաբանով և ծանոթագրություններով), Թիֆլիս, 1885։ Այս երկի հանգամանալից վերլուծությունը ընթերցողը կարող է տեսնել Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմություն» աշխատության 2-րդ գրքում։

Իր ժամանակի հայ իրականության այդ խոշորագույն պատմագիրը և մշակութային-կրոնական նշանավոր գործիչը վախճանվել է 1303 թվականին և թաղվել Վայոց ձորի Ամաղուի Նորավանքում։ Սակայն նրա մահվան ժամանակի վերաբերյալ մեր պատմագրության ու բանասիրության մեջ բերվել են իրականից տարբերվող ու իրարամերժ տվյալներ։ Այսպես. գիտնականների մի խումբ՝ Մ. Չամչյան, Ոսկան Տ. Գեորգյան Հովհաննիսյանց, Մ. Բրոսե, Մ. Օրմանյան, Գ. Ալթունյան, Հ. Աճառյան և այլք, նշում է 1304 թվականը[1], մեկ այլ խումբ՝ Կ. Կոստանյանց, Ա. Ջամինյան, Մ. Աբեղյան, Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան և Լ. Բաբայան՝ 1305-ը[2]։ Իսկ Ղ. Ալիշանը դեպքը ներկայացնում է ավելի ուշ՝ գրելով, թե պատմիչն ապրել է մինչև 1309 կամ 1310 թվականը[3]։

Լ. Ս. Խաչիկյանը ճիշտ կերպով նշելով 1303 թվականը[4], միաժամանակ բերում է մի տվյալ, որը կասկածի տեղիք է տալիս։ Այսպես. Սյունյաց 14—15-րդ դարերի եպիսկոպոսների նրա ներկայացրած ցանկում առաջինը նշված է Տարսայիճի որդի այս Ստեփանոս Օրբելյանը՝ աթոռակալման 1286—1303 թվականներով, նրանից հետո՝ Լիպարիտի որդի Հովհաննես Օրբելը՝ 1302—1323 թվականներով[5]։ Պատմական անժխտելի իսկություն է, որ Ստեփանոս Օրբելյանին պաշտոնով հաջորդել է հիշյալ Հովհաննես Օրբելը, բայց եթե նրա նախորդի պաշտոնավարման վերջին թվականը 1303-ն է, ապա ինչպե՞ս կարող էր ինքը որպես հաջորդող սկսել աթոռակալել 1302 թվականից։ Ստեփանոսի կենդանության օրոք այդ ժամանակամիջոցում

---

1 Տե՛ս Մ. Չամչեան, «Պատմութիւն Հայոց», հ. Գ., Վենետիկ, 1786, էջ 283, Ոսկան Տ. Գեորգեան Յովհաննիսեանց, «Յամառօտ տեղեկութիւն զհնդկինակէ մատենիս». «Ստեփանոսի արքեպիսկոպոսի Սիւնեաց Պատմութիւն ի վերայ ծագման տոհմին Օրպէլեան և ի վերայ յարձակման Թաթարաց ի Հայս յօգուտ ազգիս ի լոյս ածեալ յՈսկանայ Տ. Գեորգեան Յովհաննիսեանց (համապատասխան տեղում էջ նշված չկա), «Histoire de la Siounie par Stéphannos Orbélian traduite de l'arménien par M. Brosset, second livraison, introduction», էջ 59, Մ. Օրմանեան, Ազգապատում, էջ 1773, Գ. Ալթունեան, Մոնղոլները և նրանց արշավանքները ԺԴ դարում, էջ 90, Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 4-րդ, էջ 632։

2 Տե՛ս Կ. Կոստանեանց, «Յառաջաբան», «Ստեփանոս Օրբէլեանի Ողբ ի սուրբ կաթողիկէն», էջ 9, Ա. Ջամիճեան, «Հայ գրականութեան պատմութիւն», Ա մաս, էջ 206, Մ. Աբեղյան, «Հայոց հին գրականության պատմություն», գիրք երկրորդ, էջ 210, Թ. Խ. Հակոբյան և Ս. Տ. Մելիք-Բախշյան, «Ստեփանոս Օրբելյան», էջ 35, Լ. Ս. Բաբայան, «Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի պատմության», էջ 294։

3. Տե՛ս «Սիսական», Վենետիկ, 1893, էջ 205։

4 Տե՛ս նրա «Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը» աշխատությունը. «Բանբեր Մատենադարանի» № 9, Երևան, 1969, էջ 190։

5 Տե՛ս նույն տեղում, էջ 198։

ուրիշի աթոռակալման փաստ չունենք։ Նշանակում է՝ տվյալ դեպքում գործ ունենք ակնհայտ վրիպակի հետ։

Պատմիչի մահվան ժամանակի անառարկելի վավերագիրը նրա տապանագիրն է։ Բարեբախտաբար մինչև օրս էլ պահպանվում է այդ նշանավոր գործչի տապանը, որը գտնվում է Վայոց ձորի Ամաղուի Նորավանքի (այժմ՝ Եղեգնաձորի շրջան) ս. Կարապետ եկեղեցու (կառուցված Սյունյաց Օրբելյանների տոհմի մեծ իշխան Լիպարիտի կողմից) գավթում (կառուցված Սմբատ մեծ իշխանի կողմից, 1261 թ.)։ Այդ գավիթը Օրբելյանների տոհմի և վանքի առաջնորդների տապանատունն է և ներառում է բազմաթիվ շիրմաքարեր։ Պատմիչի շիրիմը դեպի արևմուտք նայող մուտքի մոտ է։ Ներսից սպիտակավուն մեծադիր տապանաքարի վրա կարդում ենք. «Թվին ՉՇՌ։ Այս է շիրիմ հանգստեան մեծի մեծրաժպիտին Սիւնեաց Ստեփանոսի»[1]։ Իսկ հայոց թվականության ՉՇՌ-ն հավասար է համաշխարհային թվականության 1303-ին (752+551=1303)։ Հարցը միանգամայն պարզ է։ Դժվար է գտնել ուրիշ հաստատուն ապացույց։

Սակայն գոյություն ունի մեկ այլ փաստ, որը նույնպես չի կարելի անտեսել։ Հայտնի է, որ Ստեփանոս Օրբելյանը Տաթևի վանքին նվիրել է երկու բրոնզաձույլ զանգ՝ մակագրությամբ[2]։ Նրանցից առաջինը նշված է ՉՇԱ (=1302), իսկ երկրորդը՝ ՉՇԴ (=1304) թվականով. «Թվ. : ՉՇԴ։ Լսելի արա ինձ, Տէր զձայն ցնծութեան և ուրախութեան և ցնծասցեն ոսկերք իմ տա[ռապեալ]. զթա Քրիստոս Աստուած ի Տէր Ստփ [Ստեփաննոսի]»[3]։ Սա ևս անժխտելի է, քանի որ նյութեղեն առկա փաստ է։ Բայց այս փաստը չպետք է դիտել որպես հակասություն նախորդի, կամ, առավել ևս, չպետք է հենվել սրա վրա և անտեսել շիրմաքարի թվականը։ Հասկանալի է, որ Օրբելյանը Տաթևի վանքին նվիրելիք երկրորդ զանգը ձուլելու համար պատվիրել է իր կենդանության օրոք, և այդ գործը չավարտված՝ նա վախճանվել է, ու այդպիսով զանգը նշվել է ձուլման ավարտման՝ 1304 թվականով։ Ուրեմն, այդուհանդերձ, հիմնականը մնում է տապանագրի տվյալը՝ 1303 թվականը, որը ոչ մի կասկած չպետք է հարուցի։ Սա նշանակում է, որ Ս. Օրբելյանը խոր ծերության չի հասել, այլ վախճանվել է իր ուժերի ծաղկման շրջանում։

Նա եղել է իր ժամանակի և միջավայրի ամենազարգացած մտավորականներից մեկը։ Ինչպես տեսանք, ստացել է ամենաբարձր կրթություն, որպիսին կարելի էր ստանալ ժամանակի Հայաստանում։ Իմացել է լեզուներ։ Մայրենի հայերենից բացի, տիրապետել է վրացերենին, ծանոթ է եղել հունարենին։ Դա երևում է նրա հիմնական երկի շարադրանքից, այլև ուղղակի խոստովանությունից։ Բազմաթիվ օտար բառերի գործածությունից բացի, մի տեղ ուղղակիորեն նշում է, որ 1177 թվականին վրաց Գեորգի 3-րդ թագավորի դեմ ապստամբված ֆեոդալ ազնվականության պարագլուխ Իվանե Օրբելու հետ ամրոցում պաշարված ժամանակ տեղի ունեցած գրագրության նամուշները եղել են վրացերեն, որոնք հայերենի է թարգմանել ինքը՝ Ստեփանոս Օրբելյանը (գլ. ԿԶ)։ Օգտագործել է «Վրաց պատմության»-ը՝ «Քարթլի կյանքը»։ Կատարել է թարգմանություններ նաև հունարենից։ Կա այն կարծիքը, որ, օրինակ, ինքն է թարգմանել Մեթոդիոսի Երազը, որը տեղադրել է իր պատմական երկում՝ «Տեսիլ սրբոյն Մեթոդի՝ եպիսկոպոսի Պատարայ և վկայի, յաղագս անցելոյն, ներկայիս և ապառնեացն, ասացուածք յԱստուածաշունչ գրոց, որ թարգմանեալ է Տեառն Ստեփաննոսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի» վերնագրով, որպես ԼԲ (32-րդ) գլուխ[1]։ Սակայն այս թարգմանությունն իրականում նրան չի պատկանում։ Այստեղ հիշատակված Սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսը ոչ թե մեր պատմիչն է, այլ մեկ ուրիշը՝ 8-րդ դարի նշանավոր գիտնական, երաժիշտ, մշակութային-կրոնական գործիչ Ստեփանոս Սյունեցին։ Բացառված չէ, որ պատմիչը ծանոթ լիներ պարսկերենին ու թաթարերենին։ Այդ ենթադրության համար հիմք են ծառայում նրա հանդիպումները ժամանակի իշխանների ու զանազան այլ պաշտոնյաների հետ։

Պաշտոնապես լինելով կղերական դիրքավար՝ նա երևույթներին հաճախ մոտենում է կրոնական դիրքերից։ Նույնիսկ հավատում է հրաշքներին, կրոնական պաճուճանքով ներկայացվող առասպելներին և այլն։ Այս հանգամանքը, իհարկե, զգալի չափով սահմանափակում է նրա աշխարհայեցողությունը։ Սակայն դա, կարելի է ասել, նրա մոտեցման արտաքին, պաշտոնական կողմն է։ Իբրև գիտնական Ստեփանոս Օրբելյանը լայնախոհ է, շրջահայաց, իրողությունների մեջ խոր թափանցող, քննող ու քննադատող, ճշմարտության հետամուտ, փաստեր որոնող և դրանց վրա շարադրանքը կառուցող։

Իհարկե, բոլոր դեպքերում նա մնում է կղերական բարձր դասի և ֆեոդալական իշխող նախարարական տան ներկայացուցիչ ու գաղափարախոս։ Հասկանալի է, որ ժամանակակից ընթերցողի համար կարևորն ու արժեքավորը ոչ թե դա է, այլ պատմական այն հսկայական նյութը, որ նա ներկայացնում է որպես գիտնական մատենագիր։

Փիլիսոփայական առումով նա իդեալիստ է։ Ընդունում է, որ աշխարհի սկզբնապատճառն աստված է, որից սկիզբ են առել բոլոր գոյացությունները՝ երևելի և աներևույթ։ Բայց նա միաժամանակ մատնացույց է անում նաև ուրիշ երկու սկզբնապատճառներ (սկիզբներ)՝ սերը և խոհականությունը (բանականությունը)։ Մեկը՝ որպես բարիքների, մյուսը՝ շնորհների սկզբնավորիչ։ Այսպիսով «Բոլոր գոյացությունների սկիզբն աստված

[1] Տե՛ս նաև «Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 233, արձ. № 751։ Տապանագիրը տեղում դիտել և ստուգել ենք անձամբ— Ա. Ա. Ա.։

[2] Այդ զանգերի մասին իր ժամանակին գրել և նրանց վրայի արձանագրությունները վերծանել է ազգագրագետ-հնագետ Ե. Լալայանը։ Տե՛ս «Զանգեզուր գավառ, նիւթեր ազգագ. ուսումնասիրութեան համար, Ա հատոր, Սիսական», Թիֆլիս, 1898, էջ 41։ Զանգերը վերջին երկրաշարժից մնացել էին փլվածքի տակ։ Այժմ դուրս են բերված և առնվում էն Տաթևի վանօճն կից թանգարանում։

[3] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 2-րդ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 37, արձ. № 79։

[1] Համմ. Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հ. 4-րդ, էջ 632։

2329

Ա, բոլոր բարիքների սկիզբը՝ սերը, բոլոր շնորհների սկիզբը՝ խոհակա-նությունը»,— բանաձևում է նա (գլ. Ա)։ Ըստ նրա՝ աշխարհի արարումը սիրո արդյունք է։ Աստված մարդուն ստեղծել է իրեն արարչակից, որը բարիքներ է ստեղծում՝ սիրուց դրդված, և իր անելիքի մասին նախապես խորհում է բանականության շնորհիվ։ Մարդն ամբողջական է իր ունեցած երեք սկզբնավորիչ հատկանիշներով՝ արարչությամբ, սիրով ու բանակա-նությամբ։ Դրանով մարդը հասցվում է աստվածացման։

Ստեփանոս Օրբելյանը մարդու մասին ունեցած այսպիսի պատկերաց-մամբ էլ սկսում է իր թե՛ հասարակական-քաղաքական և թե՛ մատենա-գրական գործունեությունը։

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑԸ. ՍՏԵՂԾՄԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Խոսքը Ստեփանոս Օրբելյանի հռչակավոր պատմական ծավալուն երկի մասին է, որ հեղինակն անվանել է «Ցիշատակաց մատեան», և այն գրա-բար հրատարակություններում հայտնի է «Պատմութիւն նահանգին Սիսա-կան», «Պատմութիւն տանն Սիսական» անվանումներով, իսկ այժմ էլ աշ-խարհաբար հրատարակությամբ ներկայացվում է «Սյունիքի պատմություն» խորագրով։

Հեղինակը, խորապես զգալով իր կոչումը հայ պատմագրության համար, լիովին ճանաչելով իր ուժերը, պարզ գիտակցելով գործի անհրաժեշտությու-նը, երազել ու ձգտել է ստեղծել հատուկ ընդգրկում ունեցող երկ։ Իր իսկ խոստովանությամբ՝ այդ մտահղացումը նրան երկար ժամանակ հանգիստ չի տվել։ Եվ նա, բազմազբաղ լինելով հանդերձ, կարողացել է հաջողու-թյամբ իրագործել այդ հույժ կարևոր նպատակադրումը։ Արդյունքը եղել է մեզ հասած այս շատ արժեքավոր աշխատությունը, որը հեղինակի գլուխ-գործոցն է և միաժամանակ հայ միջնադարյան մատենագրության խիստ նշանակալից մատյաններից մեկը։

Իր երկի ստեղծման դրդապատճառներին Ստեփանոս Օրբելյանն անդ-րադառնում է գրքի 1-ին գլխում, որ միաժամանակ նախաբանի դեր է կա-տարում, և հիշատակարանում, որ նույն աշխատության ՀԹ գլուխն է, ինչ-պես նաև Ե (5-րդ) գլխում։

Հեղինակն իր գրելիք գործը նախ պատկերացրել է հայ հին մի շարք նախաբարական տոհմերի, ինչպես՝ Մամիկոնյանների, Բագրատունիների, Արծրունիների պատմություններ նման՝ համապատասխան տարածքների ընդգրկումով։ Չի մոռացել նշել և Աղվանքի պատմությունը։ Դրանից զատ հիշել է և Վրաց պատմությունը (գլ. 5-րդ)։ Նա նկատի է ունեցել Մով-սես Խորենացու, Հովհան Մամիկոնյանի, Թովմա Արծրունու և այլոց եր-կերը, Աղվանքի համար՝ Մովսես Կաղանկատվացու մեզ հասած գիրքը։ Վր-րաստանի և վրաց ժողովրդի պատմության համար աչքի առաջ է ունեցել «Քարթլի կյանքը»։

Սյունիքի գրավոր պատմությունը պիտի ստեղծվեր։ Սյունիքի պատմու-թյան վերհանման նշանակությունն ակնհայտորեն մեծ էր ողջ Հայաստա-

նի պատմության ամբողջականության համար։ Սյունիքը, լինելով պատմա-կան Հայաստանի մեծագույն երկրամասերից («աշխարհ»-ներից) մեկը, կա-րևոր էր դիրքով, ռազմաքաղաքական կարելիություններով։ Իբրև շատ հնուց կազմավորված նախարարություն՝ ուներ իր զորքը՝ հատուկ զինանշանով. պաշտպանողական պատերազմներում տալիս էր ամենամեծաքանակ այրու-ձին։ Ուներ արժեքավոր բնական հարստություններ. արդյունահանում էր պղինձ (Կատար, Ագարակ), արծաթ (Վայոց ձոր)։ Անցած լինելով դա-սական ֆեոդալիզմի ժամանակաշրջանով և ապրելով հետագա դարերի զարգացած ֆեոդալիզմի բնորոշ կյանքով՝ պատմության համար նա հե-տաքրքրական էր իր սոցիալ-անտեսական հարաբերություններով։ Ինչպես նաև իր մշակութային կյանքով երկրի համար բերում էր շատ ուշագրավ ներդրումներ։ Ընդհանրապես նրա անցյալը և ներկան լի էին քաղաքական, կրոնական դավանանքային ուշագրավ իրադարձություններով։

Ստեփանոս Օրբելյանը երկար որոնումներ է կատարել և Սյունիքի հա-մար փոքրիշատե մի ամփոփ պատմություն չի գտել, քանի որ այդպիսին երբևէ գրված չի եղել։ Կամ գուցե բազմաթիվ ավազակային հարձակում-ների ու երկրի ահավոր ավերումների հետևանքով կորստյան է մատնվել՝ հայտնի չէ։ Հին Հայաստանի այս ընդարձակ երկրամասին վերաբերող առանձին իրադարձությունների մասին, ինչպես նշում է Օրբելյանը, անդ-րադարձումներ եղել են մինչ այդ ստեղծված հայ մատենագրության մեջ, բայց ցաք ու ցրիվ, առանց գիտական համակարգվածության, բազմաթիվ կարևոր անցքերի բացթողումներով, որոնք ուշադրության պիտի արժանաց-վեին։ Ուրեմն այդպիսով վաղուց հասունացել էր Սյունիքի պատմության ստեղծման անհրաժեշտությունը։ Այդպիսի երկի գրության դրդապատճառ-ները նշված անհրաժեշտության հիման վրա հեղինակն ի վերջո ամփոփում է Է կետերի մեջ. ա) գոյություն են ունեցել աշխարհիկ և հոգևոր իշխանու-թյուններ, կատարվել են շատ երևելի գործեր, որոնք պետք է արձանագրը-վեին և անհիշատակ չթողնվեին, իրական կյանքի շարժումով ժամանակի ըն-թացքում առաջացած պատմությունը պիտի շարադրվեր ու գրավոր տուք ստանար, բ) հաճախ առաջ էին գալիս վեճեր աշխարհիկ և եկեղեցական տի-րույթների վերաբերյալ, կատարվում էին սահմանների խախտումներ, հա-փշըտակումներ, ուստի պետք էր հաստատապես արձանագրել այդ տիրույթ-ներն ըստ պատկանելոյն, հիմնավորել ու նշել ստույգ սահմանները. սա միաժամանակ բխում էր և Օրբելյանի անհատական շահերից, քանի որ ինքն էլ խոշոր սեփականատեր էր։ Այստեղ զուգադիպում էին ընդհանուր և անհատական շահերը։ Այդ բոլորով հանդերձ՝ ընդգծում է նաև Սյունյաց իշխանությունների դիրքի ու պատվի ճանաչման և պահպանման հարցը, «...որպեսզի ճանաչեն,— գրում է հեղինակը,— Սյունյաց իշխանների և հայրապետների աստիճանն ու դիրքը և նրանց ամբողջ կարգուկանոնը, սո-վորությունները, որ [երկիրը] չոտնահարվի ու կողոպտվի հափշտակիչներից և դիվահաճ մարդկանցից» (գլ. 1-ին)։ Այդպիսով նախատեսվող մատյանը գիտականի հետ որոշ առումով պիտի ունենար նաև գործնական նշանա-կություն։

Այսպիսի դրդապատճառների նշումը Ստեփանոս Օրբելյանի համար իր Տարկի ստեղծման թերևս բավարար հիմնավորում էր: Սակայն պետք է խոստովանել, որ իրականում ստացվել է շատ ավելի մեծ արդյունք, քան կարելի էր նախօրոք պատկերացնել այսպիսի հիմնավորումով: Այո՛, Ստեփանոս Օրբելյանի այս երկի, եթե կարելի է ասել, առանցքը Սյունիքի պատմությունն է, սակայն այն վարպետորեն մի՛հյուսված է ընդհանուր Հայաստանի և ամբողջ հայ ժողովրդի պատմությանը, ըստ պատշաճի առնչվում է հարևան երկրների ու ժողովուրդների պատմություններին: Հեղինակն անհրաժեշտաբար տեղ է հատկացնում նաև այնպիսի հարցերի, որոնք վերաբերում են, ժամանակի հասկացողությամբ, տիեզերական (այսինքն՝ համաշխարհային, ընդհանուր) պատմությանը:

Երկի այսպիսի բնույթը, անշուշտ, հուշում է ընդունել, որ Օրբելյանի, որպես պատմագրի, ուսուցիչը եղել է քերթողահայր Մովսես Խորենացին՝ իր մեծահռչակ «Պատմութիւն Հայոց» երկով:

Օրբելյանի այս երկը գերազանցապես գիտականորեն շարադրված լայնահուն մի գործ է, որը խորենացիական երկի հեղինակություն է վայելում մեր պատմության հետագա դարերի և առանձնապես հեղինակի ապրած ժամանակաշրջանի համար: Չի կարելի ասել, թե այն կառուցվածքային առումով անթերի է: Ո՛չ: Նույնիսկ ունի կրկնություններ, անհարկի անդրադարձներ կամ որոշ բացթողումներ: Սակայն նրա արժեքն անուրանալի է կարևոր նյութի ընդգծմամբ, հետևողական քննությամբ և պատշաճ մատուցմամբ, ժամանակակիցների ու նախորդ սերունդների հանդեպ հեղինակի ցուցաբերած պատասխանատվության բարձր զգացումով:

Որպես գիտնական մատենագիր Ստեփանոս Օրբելյանը հատուկ կարևորություն է տալիս սկզբնաղբյուրների օգտագործմանը: Նա այդ մասին ընդհանուր ձևով նշելուց բացի իր երկի բազմաթիվ մասերում լայնորեն ցուցադրում է սկզբնաղբյուրները՝ շատ դեպքերում թողնելով, որ նշանք «խոսեն» ներկայացվող իրողությունների մասին:

Տարբեր չափերով ու նկատառումներով որպես սկզբնաղբյուր նա օգտագործել է.

1. Աստվածաշունչը:

2. Հայ հին և միջնադարյան մատենագրության բազմաթիվ ներկայացուցիչների՝ Ագաթանգեղոսի, Կորյունի, Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու, Հովհան Մամիկոնյանի, Ղևոնդի, Հովհաննես Դրասխանակերտցու, Թովմա Արծրունու, Մովսես Կաղանկատվացու, Արիստակես Լաստիվերտցու, Ուխտանեսի, Մատթեոս Ուռհայեցու, Սամուել Անեցու և այլոց պատմագիտական աշխատությունները:

3. Պետրոս Սյունեցու ճառերն ու ներբողները:

4. «Գիրք թղթոց» ժողովածուն:

5. Սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսի՝ Կապան քաղաքի ավերմանը վերաբերող թուղթը՝ գրված Մխիթար Անեցու խնդրանքով:

6. Վիմական բազմաթիվ արձանագրություններ:

7. Ձեռագիր մատենագրության հիշատակարաններ:

8. Դիվանական (հատկապես Տաթևի, ինչպես և ուրիշ վանքերի) բազմաթիվ ու բազմազան փաստաթղթեր՝ կալվածագրեր, կտակագրեր, վճռագրեր, պայմանագրեր, նվիրագրեր և այլն:

9. Թագավորական ու իշխանական պաշտոնական գրություններ՝ հրովարտակներ, նամակներ, հանձնարարականներ և այլն:

10. Կրոնական պաշտոնյաների (կաթողիկոսների, եպիսկոպոսների և այլն) պաշտոնական գրություններ՝ կոնդակներ, շրջաբերականներ, նամակներ և այլն:

11. Միջազգային հունալեզու աստվածաբանների երկեր:

12. Մոնղոլ-թաթարական տիրակալների պաշտոնական գրագրություն:

13. Վրաստանի ու վրաց ժողովրդի պատմությունը ներկայացնող «Քարթլի կյանքը»:

14. Ժողովրդական բանահյուսության նմուշներ, ավանդություններ, զրույցներ և այլն:

15. Դեպքերին ու միջավայրին լավատեղյակ մարդկանց բանավոր հաղորդումներ և այլն:

Իհարկե, սրանք դեռ բոլորը չեն: Երկում կան և այնպիսի մասեր, որոնցում շարադրվող նյութի ակունքը դեռ պարզված չէ: Հուսանք, որ հետագայում այդ ուղղությամբ կկատարվեն ուսումնասիրություններ և կբացահայտվեն այդ կարգի սկզբնաղբյուրներ ևս:

Սկզբնաղբյուրների տեղին և քննաբար օգտագործումը շեշտում է հաղորդվող նյութի հավաստիությունը, շարադրանքին տալիս է գիտական բնույթ ու ընթերցողին վստահություն ներշնչում գրքի հանդեպ: Դրանով ևս հեղինակը բարձրանում է փաստերը սոսկ արձանագրող ժամանակագրից իսկական գիտական պատմագրի աստիճանի: Բայց ոչ միայն այս: Ստեփանոս Օրբելյանն իր աշխատության մեջ բերել է և մեծ քանակությամբ այնպիսի վավերագրերի պատճեններ կամ ընդօրինակումներ, որոնց բնօրինակներն այժմ անդառնալիորեն կորած են: Ուստիև դրանք բնօրինակների դեր ունեն և անգնահատելի նյութ են ծառայում ուսումնասիրողների համար՝ տարբեր հայեցակետերից նորանոր հետազոտություններ կատարելու գործում: Այսպես. համապատասխան նյութը հիմնավոր, ճշտությամբ ու փաստացի տվյալներով ներկայացնելու նպատակով պատմիչն օգտագործել է մի քանի տասնյակ կալվածագրեր, վճռագրեր, կտակագրեր, հրովարտակներ, նվիրագրեր, կալվածքային առ ու ծախի, փոխանակման գործարքների, շինարարական ձեռնարկումների և այլ կարգի փաստաթղթեր՝ ուղղակիորեն բերելով դրանց պատճենները, որոնք այսօր արդեն բնօրինակների արժեք ունեն: Դրանք հուսալի աղբյուր են ֆեոդալական Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների, եկեղեցական և աշխարհիկ կալվածատիրության, ժողովրդի ծանր կացության, այլև նրա ըմբոստացման դրսևորումների, ընդհանրապես երկրի քաղաքական ու մշակութային կյանքի ուսումնասիրության համար: Դրանք չափազանց արժեքավոր ու հետաքրքրական են նաև լեզվական տեսակետից: Զգալիորեն տարբերվելով երկի հեղինակային շարադրանքից՝ դրանք լեզվական մեծ կարևորություն ունեցող նյութ են պարունակում: Եվ հայոց լեզվի պատմաբանը մեր լեզվի

պատմական զարգացման ընթացքը քննելիս ու բնութագրելիս հատկապես 9—12-րդ դարերն ընդգրկող ժամանակաշրջանի համար (փաստաթղթերը վերաբերում են այդ ժամանակներին) դրանց կողքով անցնել չի կարող, եթե չի ուզում, որ իր գործը թերի լինի։

Նույնը կարելի է ասել նաև պատմիչի օգտագործած և մեջ բերած որոշ վիմական արձանագրությունների մասին։ Ստեփանոս Օրբելյանն առաջին պատմիչն է, որ գիտական բարձր մակարդակով վերծանել, ընդօրինակել ու պատմագիտական նպատակներով օգտագործել է մեր յուրօրինակ քարեղեն մատենադարանների հայերեն շատ արձանագրություններ։ Դրանցից հիշենք ամենակարևորները՝ Կոթի վանքի, Մաքենոցաց վանքի՝ Սուփանի, Վանեվանյան վանքի՝ Շապուհ Բագրատունու (գլ. ԼԷ—37-րդ), Տաթևի վանքի Պողոս-Պետրոս եկեղեցու առաջին շինարարական (գլ. ԽԱ—41-րդ), Ամաղուի Նորավանքի՝ Լիպարիտ մեծ իշխանի, նույն վանքի՝ Սմբատ մեծ իշխանի, Զաքարե ամիրսպասալարի, Իվանեի (գլ. ԿԵ—65-րդ), Տարսայիճ մեծ իշխանի (գլ. ԿԶ) արձանագրությունները, այլև՝ իր իսկ արձանագրությունը ս. Նշանի պահարանի մեջ (գլ. ՀԱ)։

Նրա օգտագործած այս կարգի ամենավաղ թվակիրը Սևանի վանքի ս. Առաքելոց եկեղեցու 874 թվականի արձանագրությունն է, որը, սակայն, նա բերել է պատմողաբար (գլ. ԼԷ)։

Ընդհանուր առմամբ պատմիչի վերծանումներն ու ընդօրինակումները վստահելի են։ Բոլոր դեպքերում նա աշխատել է հարազատ մնալ արձանագրությունների ոգուն, ձգտել է ճշտությամբ ներկայացնել, թեև նկատելի են նաև շեղումների դեպքեր[1]։

Այս վիմական արձանագրությունների մեծ մասը հասել է մինչև մեր ժամանակները։ Սակայն դրանցից կան և այնպիսիները, որոնք համապատասխան շենքերի փլուզումների հետևանքով կամ հետագայում կատարված անզգույշ վերանորոգումների պատճառով ամբողջովին անհետացել կամ զգալի չափով եղծվել են։ Նրանց համար սկզբնական օրինակի դեր են կատարում Ստեփանոս Օրբելյանի ընդօրինակումները։ Որպես օրինակ հիշենք Կոթի վանքի՝ Գրիգոր Սուփանի և Գնդեվանքի շինարարական արձանագրությունները, որոնք բովանդակությամբ հույժ արժեքավոր են, սակայն առաջինն ամբողջովին անհետացած է վանքի փլուզման պատճառով, իսկ երկրորդը՝ զգալի մասով անհետացած և որոշ մասերով եղծված՝ հետագա անզգույշ վերանորոգումների հետևանքով։ Այսպես էլ կան և ուրիշները։

Պատմիչը ափսոսանքով է նշում իր ժամանակ իսկ եղծված վիմական արձանագրությունների ու գրչագիր փաստաթղթերի հնացած, մաշված և անընթեռնելի լինելու մասին։ Սա ևս իր հերթին ցույց է տալիս, որ գիտնական մատենագիրը մեծ կարևորություն է տվել սկզբնաղբյուրներին։

[1] Նմանօրինակ որոշ դեպքերի մասին նշվում է սույն գրքում տրվող ծանոթագրություններում։

ԸՆԴԴՐԿՈՒՄԸ ԵՎ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Յուրաքանչյուր պատմական երկ բովանդակային առումով թեկուզև համառոտակի քննելիս կամ բնութագրելիս բնականորեն առաջին հերթին պետք է նկատի ունենալ նրա ընդգրկած ժամանակը և շոշափած նյութը։ Այս տեսանկյունից մոտենալով Ստեփանոս Օրբելյանի սույն երկին՝ տեսնում ենք, որ այն վավերական պատմությամբ ընդգրկում է մի պատկառելի ժամանակաշրջան՝ հայ Արշակունի Տրդատ 1-ին թագավորի (մ. Խորենացու հետևողությամբ՝ Վաղարշակ 1-ին անվանումով) ժամանակներից (մ. թ. 1-ին դարի 2-րդ կես) մինչև 13-րդ դարի վերջին տարիները։ Դրանից զատ հեղինակը Սյունյաց նահապետության մասին խոսելիս անդրադառնում է նաև վաղնջական ժամանակների ավանդական որոշ դրվագների։ Նա գիտակցաբար խուսափում է մշուշապատ առասպելաբանությունից, ձգտում է տեղիքը ներկայացնել վավերականորեն, թեև որպես կրոնական բարձրաստիճան պաշտոնյա հաճախ տեղ է տալիս կրոնական գումարտումներով հորինված որոշ դրվագների (օրինակ՝ կնվնվանքի հիմնադրմանը վերաբերող պատումը, գողթնեցի Գյուտ կրոնավորի արկածային հրաշագործությունների մասին պատմող դրվագները, Վայոց ձորի 8-րդ դարի ահավոր երկրաշարժը և Մոզ ավանի հիմնահատակ կործանումը Ստեփանոս Սյունեցու չարամիտ սպանությամբ բացատրելը, Աղվանից ս. Նշանի առաջ բերած հրաշքները և այլն)։ Այդպիսիները հեշտությամբ առանձնանում են իրական ու հավաստի փաստերով հիմնավորված պատումությունից, որը բացարձակապես իշխում է աշխատության մեջ։ Առավել հավաստի են ուշ դարերին վերաբերող հատվածները և հատկապես նրանք, որտեղ պատմիչը նյութը շարադրում է որպես ականատես։

Բազմակողմանի և հարուստ նյութ է ընդգրկված։ Իրական առնչումներով շաղկապված բովանդակ Հայաստանին, անհրաժեշտ դեպքերում և հարևան այլևայլ ժողովուրդների ու նրանց երկրների պատմությանը՝ լայն տեղ է հատկացվում Սյունիքի քաղաքական պատմությանը։ Տրվում է Սիսական տոհմի, ապա և դիրքով ու իշխանությամբ նրան փոխարինած Օրբելյանների տոհմագրությունը, ցուցադրվում նրանց քաջագործությունները, շինարարական, մշակութային, դիվանագիտական երևելի գործերը։ Երևան են հանվում ֆեոդալական ներքին տնտեսական հարաբերությունները՝ ըստ զանազան գործարքների։ Պատմվում է զանազան ժամանակների օտարերկրյա նվաճողների արշավանքների և դրանց դեմ ուղղված ազատագրական պայքարի, ինչպես նաև գյուղացիների կողմից եկեղեցու դեմ ուղղված սոցիալական շարժման մասին։ Շարադրվում է Սյունիքի եկեղեցական պատմությունը, այլև դավանաբանական պայքարը՝ սերտորեն կապված ամբողջ Հայաստանի (ներառյալ Կիլիկիայի հայկական պետությունը) եկեղեցական պատմության էական իրադարձությունների հետ։ Տեղեկություններ են տրվում Սյունիքի բնության, վարչական բաժանման մասին և այլն։

Պատմության ամբողջ շենքը կերտված է երկու հիմնական հենասյուների վրա։ Դրանք են Սյունիքի քաղաքական և հոգևոր կյանքի պատմությունները։ Ճիշտ են նկատել Թ. Խ. Հակոբյանը և Ս. Տ. Մելիք-Բախշյանը՝ դրի-

լով. «Այդ բոլոր հարցերը նրա (այսինքն Ս. Օրբելյանի— Ա. Ա.) պատմության մեջ տրված են ոչ հավասար չափով։ Հեղինակը մեծ ուշադրություն է դարձրել Սյունիքի քաղաքական ու եկեղեցական պատմության՝ հատկապես Սյունյաց իշխանների ու եպիսկոպոսների գործերի վրա»[1]։

Իր փիլիսոփայական հայացքները, երկի ստեղծման դրդապատճառները ամփոփի շարադրելուց և Սիսական տոհմի ծագման մասին ակնարկելուց հետո հեղինակը ընթերցողին ծանոթացնում է Սյունյաց աշխարհի բնատարածքին ու նրա վարչական բաժանմանը։ Մեկ առ մեկ թվարկում է 12 գավառները՝ Ծղուկը, Վայոց ձորը, Գեղարքունիքը, Սոթքը, Աղահեճը (Քաշաթաղ, Խոժոռաբերդ), Հաբանդը, Բաղքը (Աճեն), Կովսականը (Գրհամ), Արևիքը (Դաշտոն և Մեղրի), Զորքը (Կապան), Երնջակը և Գողթնը, ճանաչուկը։ Տալիս է այս գավառների անունների մի մասի բացատրությունը՝ գերազանցապես ժողովրդական ստուգաբանությամբ։ Միաժամանակ նշում է, որ դրանք հիմնականներն են, կան և այնպիսիները, որոնք տարբեր ժամանակներում առանձնացել են դրանցից, կամ ուրիշներն էլ՝ միացել նրանց, որոնց վրա հարկ չի համարում կանգ առնել (գլ. Գ—3-րդ)։ Ակնհայտ է, որ Նա հիմնական գավառների անվանումները բերել է ըստ «Աշխարհացոյց»-ի (բայց ոչ նույն հերթականությամբ)։ Յուրաքանչյուր հին անվան մոտ նշել է նաև փոխվածը, իր ժամանակվա հորջորջումը։ Այսպիսի ծանուցումը շատ կարևոր է, որովհետև պատմության հետագա շարադրանքի մեջ զանազան իրադարձությունների մասին խոսում է ոչ միայն ըստ ժամանակի, այլև ըստ միջավայրի, համապատասխան գավառի. դա նպաստում է դեպքերի ընկալմանն ըստ տեղի։ Հեղինակը երկրամասի գավառների ցուցադրումով միաժամանակ ցուցադրում է նրա բնատարածքը։ Դրանք մատնացույց անելուց հետո Սյունիքի բնաշխարհի պաշտպանունակությունը ներկայացնելու նպատակով հարկ է համարում հիշատակել նաև այդ սահմաններում գտնվող բերդերն ու ամրություններ՝ Բաղաբերդը, Բաղակու ամրոցը կամ Բաղակի քարը, Երնջակի ամրոցը, Հայրաբերդը, Գրհամը, Մայրին, Շլորուտը, Կաքբերդը, Բարկուշատի բերդը, Անդոկաբերդը, Գեղարքունվո, Բղենո, Վանանդա (Վանդա), Բորոդանա, Հանբաղա կամ Հաբանդա կամ Զագեձորո, Քաշեթաղուց, Որոտան, Սյունյաց, Բորտո, Շահապունից բերդերը, Խոժոռաբերդը, Վայոց ձորի Կապույտ, Հրասեկա (Հրասկա, Հրաշկա), Սուլեմա բերդերը։ Դրանք հուսալի պատվարներ են եղել երկրամասի բնակչության պաշտպանության ու պատսպարվելու համար՝ օտարերկրյա նվաճողների ավազակային հարձակումների դեպքերում, այլև ներկայանում են որպես մեր ժողովրդի կառուցողական մեծ ջանքերի ու արվեստի յուրատեսակ մարմնացում։

Սյունիքի աշխարհագրության լրիվ պատկերը տալու նպատակով իր երկի նույն (3-րդ) գլխի վերնագրում պատմիչը խոստանում է շարադրել նաև բնական հարստությունների մասին, սակայն մեզ հասած բնագրում գլխի այդ հատվածը պակասում է[2]։

[1] Ֆ. Ե. Հակոբյան, Ս. Տ. Մելիք-Բախշյան, Ստեփանոս Օրբելյան, Երևան, 1960, էջ 47։

[2] Այդ մասին համմտ. սույն գրքի 66-րդ ծանոթագրությունը։

Ժամանակի հոգևոր կյանքում նշանակալից է եղել վանքերի դերը։ Ուսոի ոչ միայն ի պաշտոնե, այլև որպես պատմագիր Ստեփանոս Օրբելյանը չէր կարող դրանց կողքով լռությամբ անցնել։ Իհարկե, վանքերի հիմնական դերը կրոնականն էր։ Դա գլխավոր գործառույթն էր, բայց ոչ միակը։ Վանքերը ըստ ամենայնի երկրի մշակութային օջախներն էին։ Այնտեղ էին ստեղծվում մեր մատենագրության նորանոր երկերը, զարգանում էին գրչության արվեստն ու մանրանկարչությունը, ընդօրինակվում ու բազմացվում էին ձեռագիր մատյաններ։ Նրանցից շատերը միաժամանակ դպրոցներ, կրթության կենտրոններ էին։ Պատմիչը, Սյունիքի վանքերը դիտելով որպես երկրամասի յուրատեսակ հարստություն՝ նրանց դերի հաշվառումով, իր երկում մի հատուկ գլխով (ԿԲ—62-րդ) հանրագումարի է բերում ու ընթերցողին ցուցադրում դրանք։ Նա ամբողջ ցուցակը չի բերում, գլխավորներից հիշատակում է երեք տասնյակ (Տաթևը, Թանահատը, Սյունին, Կնեվանքը (Կինեվանքը), Վաղատնին, Նորավանքը, Երիցավանքը, Շատանյան, Գողոտյան, Վահանավանքը, Տանձափարախը, Լուսկեվանքը, Լհվանքը, Քրոնից, Թադեի, Կուռափաձորո, Միծառնա, Խաչատրո, Ջյունաբու վանքերը, Վայոց ձորում՝ Խոտակերաց (Քարկոփ) վանքը, Ամաղուի Նորավանքը, «Միւս Նորավանք»-ը, Ցաղաց քարը, Հերմոնի, Թանատեի վանքերը, Գընդեվանքը (Գնդայի վանքը), Գեղամ երկրամասում՝ «Մաքենոցն և Վանաց վան և միւս Վանէ վան», Շողվագայի (Շողվագա) վանքը։ Մասնակիորեն տալիս է համառոտ բնութագրումներ։

Այս ամփոփումից զատ, իր գրքի տարբեր մասերում հեղինակը, հլնելով մի շարք վանքերի պատմամշակութային առավել կարևոր դերից, նրանց վրա կանգ է առնում առանձնակի։ Այս առումով առաջին գծի վրա են նախ՝ Տաթևը, ապա՝ Ամաղուի Նորավանքը։

Տաթևի մասին պատմիչը վերոհիշյալ գլխում գրել է. «Առաջինը, Սիսական տան բոլոր վանքերի գլուխն ու շնորհաբաշխության աղբյուրը Տաթևն է»։ Թեև հեղինակը Տաթևից անմիջապես հետո նշում է «մեծ առաքինարան» Թանահատի վանքը, իսկ Վայոց ձորի կողմի վանքերի մեջ էլ Նորավանքը դնում է երկրորդ տեղում, սակայն ողջ երկի շարադրանքից պարզ երևում է, որ վերջինիս մեծ նշանակություն է տալիս և կրոնական, քաղաքական ու մշակութային դերով ներկայացնում է Տաթևից հետո երկրորդը։

Տաթևի վանքի կազմավորման ու կառուցման պատմությանը, դարերի ընթացքում հանդես բերված շինարարական, նորոգման տարբեր շերտերին, կալվածքներին, նրանց սահմաններին, վանական ներքին կյանքին ու արտաքին հարաբերություններին գրքում նվիրված են մի շարք գլուխներ (ԼԲ—39-րդ, ԽԱ—41-րդ, ԽԲ—42-րդ, ԽԳ—43-րդ, ԽԲ—49-րդ, ՇԱ—51-րդ)։ Էլ չենք խոսում այլ և այլ առիթներով զանազան ուրիշ անդրադարձումների մասին։

Ամաղուի Նորավանքի պատմությանը, տիրույթներին, ծավալած գործունեությանը նվիրված են ԿԴ— (64-րդ) և ԿՀ (65-րդ) ընդարձակ գլուխները։

Առանձին գլուխներ են հատկացված Թանահատի (ԼԴ—34-րդ), Խոտակերաց (ԽԴ—44-րդ) վանքերին, Վահանավանքին (ԽՀ—45-րդ), Բղենո նո-

բավանքին (խէ—47-րդ), Գնդեվանքին (Ծ—50-րդ)։ Պատմվում է նրանց տեղադրության, հիմնադրման, հետագա ընդարձակումների, ավերումների ու նորոգումների, տնտեսական ու քաղաքական վիճակների մասին և այլն։

Վանքերը միաժամանակ նաև ճարտարապետական կոթողներ են, հայ ճարտարապետության պատմության խոսուն վկաներ։ Այդ քաջ գիտակցելով՝ պատմիչը հաճախ տեղ է տալիս նրանց հորինվածքային նկարագրին և իր հերթին գալիք սերունդներին հիշատակ թողնում նրանց մասին։ Դրանց արժեքն առավել ընդգծվում է հատկապես այն դեպքերում, երբ իր ժամանակին կանգուն հուշարձանն այս կամ այն չափով և զանազան պատճառներով ավերվել է, նրա վերաբերյալ հետագայի սերունդներին պատկերացում տվողը մնում են պատմիչի հիշատակություններն։ Քիչ չեն դեպքերը, երբ հեղինակը չի թաքցնում իր հիացմունքը և հիացական դիպուկ ու բնորոշ արտահայտությամբ է գնահատում կերտվածքը։ Նրա աչքից չի վրիպում և ուրիշների հիացմունքը։ Բնորոշ է, օրինակ, որ նա հատուկ խնամքով բերում է Սոփիա տիկնոջ՝ Գնդեվանքի այն արձանագրությունը, որի մեջ վանքը բնորոշվում է սքանչելի համեմատությամբ։ Այնտեղ ասված է. «Վայոց ձորն անակ մատանի էր, շինեցի սա և [որպես] ակ դրեցի վրան»։

Օրբելյանն ընդհանրապես ուշադիր է շինարարական աշխատանքների նկատմամբ։ Հիշատակում է նկատածը և ոգևորվում կարևորներով։ Հիշենք, օրինակ, նրա հիշատակումները Զագեձորից Տաթևի ճաքուտը (գլ. ԽԹ—49-րդ), Զկնարած գետից Գնդեվանքի անդաստանը (գլ. Ծ—50-րդ) ջրանցք հանելու, անջրդի հողերը ջրովի դարձնելու, այգիներ հիմնելու, Արփա գետի վրա մեծ կամուրջ կառուցելու (գլ. ԿԶ) մասին։ Ավելորդ չենք համարում մեջ բերել այն հատվածը, որտեղ պատմիչը բնութագրում է կամուրջը. «Այս Տեր-Սարգիսը... մի առավել երևելի գործ ևս արեց. Արփա գյուղում գետի վրա կառուցեց մի էրմանալի կամուրջ՝ սրբատաշ քարերով, խիստ բարձր, ընդարձակ ու լայն, որ հիացմունք է պատճառում տեսնողներին»։

Անցնելով իշխանապետությանը՝ Ստեփանոս Օրբելյանը պարծանքով ընդգծում է, որ սկսած Սիսակ նահապետից, Սյունյաց իշխանները սերընդափոխությամբ հերթագալով բազում երևելի քաջագործություններ են հանդես բերել և հայոց, պարսից, Հուլնիսկ հունաց թագավորների կողմից արժանացել են պարգևների ու մեծ պատվի։ «Եվ այնքան անվանի եղան, որ մինչև անգամ արտոնվեց նրանց արծաթե գահույք ունենալ և մարգարտե վարսակալ օգտագործել ու վարազագիր մատանի դնել, նաև կարմիր կոշիկ [հագնել] ու բռնել ոսկե գավազան՝ վրան նշված տոհմի անունը և պատվաստիճանը»,— գրում է նա (գլ. Դ—4-րդ)։

Հայոց Տրդատ 1-ին (Վաղարշակ 1-ին) թագավորը երկրի կառավարման կարգ ու կանոն սահմանելով, նախարարական տներն ըստ ամբողջ Հայաստանի համապատասխան գործառույթներով օժտելով՝ Սյունյաց նախարարությանը վստահում է երկրի արևելյան կողմի գործերի կառավարումը և ամբողջ ղորքերի հրամանատարությունը։ Պատմիչը գրում է, «Եվ

հրաման է տալիս Սիսականներին՝ լինել հրամանատար բոլոր ղորքերին ու իր թագավորության երկրորդը...» (ն. տ.)։

Այնուհետև նա մատնանշում է, որ հետագայում Տրդատ 3-րդ թագավորը, վերակազմելով Հայաստանի պետական աստիճանակարգությունը, պալատական հանդեսների ժամանակ թագավորի աջ և ձախ կողմերում նըստող 400 իշխանների մեջ ամենապատվավոր տեղերը հատկացնում էր նախարարական գահագլուխ 8 իշխանների, որոնցից մեկը Սյունյաց իշխանն էր (գլ. է—7-րդ)։ Ուրեմն՝ նա բովանդակ Հայաստանի բոլոր իշխանների գահագլուխներից մեկն էր։

Լինելով իսկական հայրենասեր՝ պատմիչը խանդավառությամբ է հիշատակում Սյունյաց իշխանների և ընդհանրապես սյունեցիների քաջագործությունների, պատմության մեջ այս կամ այն չափով հետք թողած գործողությունների մասին։ Այսպես. գրքի մի ընդարձակ գլխում (Թ—9-րդ) տպավորիչ ու աշխույժ խոսքով պատմվում է Անդոկ իշխանի հնարամիտ և համարձակ գործողությունների մասին, թե ինչպես իշխանը, օգտվելով նրանից, որ Պարսից Շապուհ արքան իր ղորքերով զբաղված էր խազիրներին դիմագրավելով, իր հազար յոթ հարյուրանոց զորքով հարձակվում է Տիրքոնի արքունիքի վրա և մեծ ավար է տանում բաղաբերդ։ Նա իր հայրենիքում եղած շատ արժեքներ կենտրոնացնում է Շաղատի եկեղեցում և վերջինս՝ թաղում հողաբլրի տակ։ Հմտորեն կազմակերպում է հայրենիքի պաշտպանությունը թշնամու զորքերի սպասելի հարձակումից։ Եվ երբ խաչիրների դեմ մղած կռվից վերադառնալով՝ պարսկական զորքերը հարձակվում են Սյունիքի վրա, Անդոկը քաջաբար դիմադրում է նրանց բազմաթիվ հարձակումներին։ Չի հաջողվում նրան ընկճել ու անձնատուր անել։ Ի վերջո անցնում է Բյուզանդիա։ Սրա համար սկզբնաղբյուր է եղել Մովսես Խորենացու աշակերտ Պետրոս Սյունեցին։

Նյութ վերցնելով նույն հեղինակից՝ պատմիչը մեծ համակրանքով ու ախորով է պատմում Անդոկի որդի Բաբիկի արիության, հաղթանակների ու հայրենասիրության մասին (գլ. ժ—10-րդ)։ Բաբիկը, որ հոր հետ անցել էր Բյուզանդիա, խիստ նեղվում է մենակությունից և հայրենիքի կարոտից։ Նա ծպտյալ վերադառնում է Պարսկաստան. այստեղ բազմիցս մասնակցում է օլիմպիական խաղերին և հաղթանակներ տանում։ Երբ հոնները հարձակվում են երկրի վրա և նեղում պարսիկներին, արքայից արքային հայտնում են, որ պատերազմի ելքը կարող է վճռել այստեղ գտնվող մի քաջ մարդ՝ Բաբիկը։ Եվ այս դյուցազնը կռվում է հոների հզոր զորավար «մարդախոշոր և վիշապազոր գազան» Հոնագուրի հետ ու հաղթանակում։ Իբրև հատուցում նա Պարսից արքայից պահանջում է վերացնել Սյունիքի պատիվը նշավակող՝ մոխրով լի սանդը, որ դրված էր նրանց արքունիքում, և իրեն վերադարձնել իր բուն հայրենիքը։ Շապուհը բավարարում է նրա պահանջները։ Բաբիկին վերադարձնում է Հայաստան՝ արտոնելով նրան համապատիվ լինելու Բագրատունիների ու Մամիկոնյանների հետ։ Բաբիկը շարունակում է Սյունյաց ընդհատված իշխանապետությունը։

Ստեփանոս Օրբելյանն ընթերցողին հաղորդակից է դարձնում իր անսահման ուրախությանն ու հպարտությանը՝ պատմելով Վահան Մամիկոն-

յանի ղեկավարած զորաբանակի՝ պարսկական զորավար Միհրանի դեմ մղած մարտերում Սյունյաց սեպուհներ Բարկենի, Բակուրի և մանավանդ Ագռի ցուցաբերած արիության ու տոկունության մասին (գլ. ԺԸ—18-րդ)։

Նա խոր համակրանքով որպես սուրբ է ներկայացնում Պարսից բռնապետության զորքերի դեմ մարտնչելիս զոհված հայ մարտիկներին։ Պատմում է, թե ինչպես Վարդանանց հերոսական ճակատամարտից հետո Վասյոց ձորով դեպի Արցախ գնացող հայկական զորամասը հետապնդվում է պարսկական զորքի կողմից, բախվելով նրան՝ կատաղի դիմադրություն է ցույց տալիս։ Ահեղ կռիվ է տեղի ունենում Արտաբունք, Ուտինք գյուղերի, Ցաղաց քար վանքի շրջանում։ Հերոսաբար ընկնում են շատ հայ զինվորներ, որոնց մասին պատմիչը խոսում է «սուրբ» անվանելով։ Հին, այժմ արդեն վաղուց մոռացված աղբյուրներից օգտվելով՝ արձանագրում և սերունդներին է հաղորդում այդ սրբացված նահատակների աճյունների ամփոփման ու նրանց հիշատակի հավերժացման նպատակով կառուցված վկայարանի պատմությունը (գլ. ԺԹ—19-րդ)։

Վառ հայրենասիրությամբ տոգորված պատմիչն անսահման ատելություն ունի հայրենիքի դավաճանների նկատմամբ։ Այդպիսի զգացմունքով է նա խոսում, օրինակ, Վասակ Սյունեցու, Վարազվաղանի ու Գդեհոնի մասին։ Նա քաչատեղյակ է հայ Արշակունի թագավորության վերացումից հետո, մարզպանական շրջանում մեծ սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ պարսից բռնապետության դեմ ազատագրական պատերազմի նախապատրաստմանը և հուժկու ցասումով է պատմում «ուրացող» ու «անօրեն» Վասակ մարզպանի դավաճանական գործողությունների մասին։ Նա միաժամանակ խոր վերլուծությամբ աշխատում է ցույց տալ Վասակի այդ վարքագծի պատճառներն ու հիմքերը։ Բայց, միևնույն է, Վասակը չէր կարող արդարացվել, քանի դավաճան էր (գլ. ԺԷ—17-րդ)։ Վասակն այնքան զազրելի է պատմիչի համար, որ նրա կողմից հիշվում է նույնիսկ արձանագրության նզովքի բանաձևում. «Իսկ եթե որևէ մեկը հանդգնի... այն բոլոր անեծքները, որ օձից մինչև Նեռը կան բոլոր չարագործների վերաբերմամբ, նրա վրա լինին, Հուդայի հետ բաժին ունենա, ուրացող Վասակի պես ոդեձալից սատկի» (գլ. ՀԱ—71-րդ)[1]։

Դավաճան Վարազվաղանը, որ պարսիկների կողմն էր անցել ավելի վաղ, իբրև հատուցում ստացավ Սյունիքի իշխանությունը ինչպես պատմիչն է ասում, դիվաբախ էր և հետո էլ դևից խեղդամահ եղավ։ Իսկ հակայամարմին Գդեհոնը, որ Ավարայրից հետո միշտ կռվում էր հայոց մնացած զինվորների դեմ, սպանվեց Վահան Մամիկոնյանի ձեռքով Շիրակ գավառում (գլ. ԺԷ)։

Պատմիչի խառնվածքը բնորոշ է անմիջականությամբ։ Նա հենց վերհիշյալ դեպքերի ու դեմքերի մասին արտահայտվել է այսպես. «...Եթե մի բանով պարտությունը կրելով ամաչեցինք և կորագլուխ եղանք Սյունի իշխանների ամոթալի գործերի համար, ապա այս մյուսով (այսինքն՝ սե-

[1] Հեղինակի վկայությամբ արձանագրությունը հիշատակագրված է 1294 թվականին, ս. Նշանի պահարանի մեջ։

պուհների արիությամբ ու տոկունությամբ— Ա. Ա.) գլուխներս բարձր պահած՝ պարծենում ենք և կարծես զորմանահյուս պսակ մեր գլխին դրած՝ քայլում ենք առաջին վերքերից, ճոխազարդ շքեղությամբ համարձակորեն ցնծում» (գլ. ԺԸ)։

Ստեփանոս Օրբելյանը հետևողականորեն հետամուտ է Սյունյաց իշխանների գործունեությանը՝ հաշվի առնելով, որ դա խիստ անհրաժեշտ է երկրամասի թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական, թե՛ մշակութային կյանքի ուսումնասիրման տեսակետից։ Բաբիկից հետո նա իշխանների մասին պատմում է խմբավորումներով։ Այսպես. նշում է, որ Բաբիկից մինչև Քուրդո (4—8-րդ դարեր) 332 տարում իշխել են 20 իշխաններ (գլ. ԼԷ—37-րդ)։ Բերվում են նրանց անունները իշխման տարիների նշումով։ Ըստ երևույթին փաստերի պակասության պատճառով հեղինակը գրեթե ոչինչ չի ասում նրանց գործերի մասին, միայն առանձնացնում է Վասակին, Վարազվաղանին և Գդեհոնին որպես պատկառելի անձերի և նկարագրում է Գրիգորի մի ճարպիկ արարքը։

Պահպանված տեղեկությունները, թեկուզ համառոտ, հնարավորություն են ընձեռել պատմիչին ավելի շատ բան ասելու հետագա ժամանակների իշխանների մասին՝ սկսած 9-րդ դարի առաջին քառորդից՝ 821 թվականից (գլ. ԼԷ—37-րդ. ՄԷ—55-րդ)։ Նրանց գործունեության մասին խոսելիս պատմիչն առանձնապես ընդգծում է հայ ժողովրդի ազատագրական պայքարին իշխանների ունեցած մասնակցությունը և շինարարական գործունեությունը։ Սկսում է «մեծ նահապետ» Սահակ իշխանից, որը Սյունյաց «մեծ նահապետ» Վասակի երկու որդիներից մեկն էր և գործում էր Հայոց Դավիթ Կակաղեցի կաթողիկոսի աթոռակալության ու Սմբատ Բագրատունու սպարապետության օրոք։ Բովանդակ Հայաստանի միասնականության տեսակետից կարևոր համարելով՝ պատմիչը չի մոռանում գրել, որ նա հուժկու միաբան ու համախոհ էր Հայոց սպարապետ Սմբատ Բագրատունու հետ թե՛ պատերազմական գործերում և թե՛ առհասարակ երկրի նկատմամբ օգտակար որևէ գործ կատարելու մեջ։ Այդ «գեղեցկագիսակ իշխան»-ը քաջի մահով ընկնում է արաբ Հոլ ոստիկանի երկու հազարանոց զորքի դեմ մղած ճակատամարտում (գլ. ԼԷ)։ Այս Սահակ մեծ իշխանի սերնդափոխական գիծը իշխանությամբ շարունակվում է այսպիսի հաջորդականությամբ՝ Գրիգոր Սուփան (1-ին)— Վասակ Գաբուռ—Գրիգոր Սուփան (2-րդ)։ Պատմիչը հետամուտ է Սյունյաց և բովանդակ Հայաստանի կենտրոնական իշխանությունների հարաբերությունների։ Նա կողմնակից է նրանց ուժավել սերտացմանը և դրա համար էլ չի ուզում անտեսել այդ ուղղությամբ կատարված որևէ քայլ։ Այսպես. նշում է, որ Գրիգոր Սուփան 1-ինը աջակցում է Սմբատ սպարապետին՝ վերստին պաշտոնավարման կոչելու զբաղված ու հանիրավի հրաժարեցված Հովհաննես կաթողիկոսին և միաժամանակ պատժելու մեղավորներին։ Սյունյաց իշխանությունն ավելի է մերձենում կենտրոնականին, երբ Վասակ Գաբուռը փեսայանում է Աշոտ Բագրատունուն (հետագայում՝ թագավոր)՝ կնության առնելով նրա դուստր

Մարիամին։ Գրքում շեշտվում է Վասակի ու Աշոտի հատուկ մտերմությունը, որը կարևոր էր նրանց համագործակցության համար։

Վասակ Գաբռուի ընտանիքը, որ տիրում էր Գեղարքունիքին, աչքի էր ընկնում շինարարական գործունեությամբ։ Պատմիչը մեծ գոհունակությամբ մեկ առ մեկ հիշատակում է Մարիամ իշխանուհու, նրա որդիներ Գրիգոր Սուփան 2-րդի և Սահակի կառուցումները։ Մարիամը կառուցում է Սևանի վանքի ս. Առաքելոց եկեղեցին, ապա՝ Շողվագա վանքը, Գրիգոր Սուփանը շինում է Կոթ գյուղաքաղաքի նշանավոր վանքը, Նորոգում է Մաքենոցաց հռչակավոր վանքը և կառուցում նրա հիմնական գմբեթահարկ եկեղեցին, Սահակը կառուցում է Նորատուսի եկեղեցին, որոնք մեր միջնադարյան ճարտարապետության շատ արժեքավոր կոթողներից են (9-րդ դար)։ Բարի նախանձով լցված՝ Շապուհ Բագրատունին կառուցում է Վանեվանյան հրաշակավոր վանքի եկեղեցին (9-րդ դարի վերջ— 10-րդ դարի սկիզբ)։ Նշվում է, որ Սյունիքի գահագուխ իշխաններից Աշոտն ու իր որդի Սմբատը նույնպես շինարարական կարևոր աշխատանքներ են կատարել (գլ. Լէ)։ Մի գլխում ամփոփելով Լէ գլխում ասվածը՝ հեղինակն ավելացնում է նաև այլ իշխանների մասին, հատկապես մատնանշում է Շահանդուխտ թագուհու և իր որդի Սևադայի շինարարական եռանդուն գործունեությունը։

Սահակ մեծ իշխանը և նրա հաջորդներն իշխում էին Գեղամա երկրում (Գեղարքունիքում), իսկ իշխանական նոր դինաստիայի հիմնադիր համարվող[1] Վասակի մյուս որդին՝ Փիլիպեն, մնում է բուն Սյունիքում։ Իրականում տեղի է ունենում Սյունյաց մեկ ամբողջական իշխանության ներքին ճեղքում։ Հանդես են գալիս նաև ուրիշ մանր-մունր իշխանություններ, որոնց մասին պատմիչը հարկ չի համարում հանգամանորեն պատմել։ Ճիշտ է Նկատված[2], որ այսպիսի մասնատումներն արդյունք էին ֆեոդալական հարաբերությունների ավելի ու ավելի խորացման, որոնք ընդգրկում էին ինչպես ամբողջ երկիրը, նույնպես և այս երկրամասը, նրա տարբեր գավառներն ու գավառակները։

Շուտով Սյունիքի իշխանապետությունը վերաճում է թագավորության։ Նրա կազմավորման սկիզբը ճանաչվում է 970-ական թվականների սկզբներից, երբ Սմբատ գահերեց իշխանը հռչակվում է թագավոր։ Դա Հայաստանում ֆեոդալական հարաբերությունների վերելքի շրջան էր։ Այդ ժամանակներում «Հայաստանի մի շարք շրջաններ տնտեսապես այնքան առաջադիմեցին, որ նրանց ֆեոդալների համար նյութական խոշոր միջոցներ կուտակելու, զինվորական բազմամարդ ջոկատներ պահելու և կենտրոնական իշխանության հանդեպ իրենց համար ինքնանկախ գոյավիճակ ստեղծելու մեծ հնարավորություններ առաջացան[3]։ Երկրի խոշոր ֆեոդալների շրջանում գնալով ուժեղանում էր կենտրոնախույս ձգտումը բագրատունյաց կենտրոնական թագավորության նկատմամբ։ Կազմավորվում ու առանձնանում են ֆեոդալական մի քանի փոքր թագավորություններ։ Դեռ 908 թվականին Գագիկ Արծրունին հիմնադրել էր Արծրունյաց թագավորությունը Վասպուրականում։ Հետագայում Վասպուրականի թագավորությունը ներառեց նաև Մոկսը, Աղձնիքի մի մասը և Վանա լճի հյուսիս-արևելյան ափերին հարող տարածքները։ Աշոտ 3-րդ Բագրատունի (Աշոտ Ողորմած) թագավորի իշխանության օրոք (954—977) առանձնացան Վանանդի, Սյունյաց, իսկ Սմբատ 2-րդի օրոք (977—990)՝ Գուգարքի թագավորությունները։ Բագրատունի այս թագավորները վճռական չդտնվեցին երկրի ներքին ամբողջականության պահպանման գործում։ Երբ Աշոտ 3-րդը կարսից արքունիքը փոխադրեց Անի, նրա եղբայր Մուշեղը, որ երկրի սպարապետն էր, անջատվեց, մնաց Կարսում ու դարձավ Վանանդի թագավոր (962 թ.)։ Անիի կենտրոնական թագավորությունից Գուգարքի անջատումն սկսվում է Սմբատ 2-րդ թագավորի դեմ նրա եղբոր՝ իշխան Գուրգենի ըմբոստացումով։ Գուրգենն ամրացել էր Լոռում և չէր ենթարկվում կենտրոնական իշխանությանը։ Նրան հաջորդած որդին՝ Դավիթը, 989 թվականին իրեն հայտարարում է թագավոր՝ սկիզբ դնելով մի նոր թագավորության, որը մեր պատմության մեջ կոչվել է Զորագետի, Լոռու կամ Կյուրիկյան թագավորություն։ Այսպիսով 10-րդ դարի երկրորդ կեսին Հայաստանում կենտրոնական թագավորությունից զատ արդեն գոյություն ունեին չորս փոքր թագավորություններ։ Էլ չենք խոսում Տայքի կյուրոպաղատության և երկրի տարբեր մասերի բազմաթիվ էմիրությունների գոյության մասին։ Քաղաքական այս վիճակը, անշուշտ, մեծ չափով թուլացնում էր կենտրոնական իշխանության ազդեցությունը և լուրջ վտանգ էր երկրի ներքին ամբողջականության պահպանման։

Ստեփանոս Օրբելյանը ամբողջ խորությամբ գիտակցել է այս հանգամանքները և Սյունյաց թագավորության պատմության կապակցությամբ արտահայտել է իր վերաբերմունքը։ Լինելով հայրենասեր պատմաբան՝ նա կողմնակից է եղել Հայաստանի կենտրոնացած, միասնական պետականության՝ դրա մեջ տեսնելով երկրի ու ժողովրդի ամբողջականության և գոյատևման ապահովման խիստ կարևոր գործի հաջողությունը։ Նա հաճույքով չի հիշատակում երկրում մանր թագավորությունների առանձնանալու իրողությունը և ջանում է ցույց տալ, որ սյունեցիները բարեկամական կապերի մեջ են եղել արքունական տների՝ նախ՝ Արշակունիների և ապա՝ Բագրատունիների հետ. «բայց երբեք չըմբոստացան հայրենի իշխանությունների դեմ» (գլ. Մհ)։ Նա անջատողականությունը գնահատում է որպես ապստամբություն կենտրոնացված պետականության դեմ։ Ահա թե ինչպես. նկատի ունենալով անջատողականությունը՝ նա գրում է. «Երբ դուռ բացեցին նախ Արծրունիները՝ թագադիր լինելով ընդդեմ Հայոց թագավոր Սմբատի, Ափշինը մեծարանքով [առաջարկեց] թագադիր լինել Վասակ Սյունիին, բայց սա չկամեցավ ապստամբի անուն վաստակել» (ընդգծումը մերն է— Ա. Ա.) (գլ. Մճ)։ Եվ հեղինակը իր այս հաղորդածները համարում է «պանծալի բաներ» (ն. տ.)։ Դիմելով ընթերցողին՝ ասում է, թե

[1] Տե՛ս Թ. Խ. Հակոբյան և Ս. Տ. Մելիք-Բախշյան, «Ստեփանոս Օրբելյան», էջ 50։

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 51։

[3] Հ. Գ. Ժամկոչյան, Ա. Գ. Աբրահամյան, Ս. Տ. Մելիք-Բախշյան, Ս. Պ. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն (սկզբից մինչև 18-րդ դարի վերջը), Երևան, 1975, էջ 450։

նրան պատմելու է պանծալի բաներ, և պատմում է։ Այնպես որ վերաբերմունքը միանգամայն որոշակի է։

Բայց, այնուամենայնիվ, կանգնած լինելով կատարված պատմական իրողության առաջ՝ պատմիչը ջանում է արդարացնել Սյունյաց թագավորության կազմավորումը։ Արձանագրելով Սյունիքի գահերեց իշխան Սմբատի բագադրվելու փաստը՝ նա ավելացնում է. «Բագրատունիներն իշխում էին միայն Շիրակին ու Այրարատին՝ մինչև Գեղարքունիք, Ուխտիք, Կարին, Վասպուրականի սահմանը, Ջորագետ ու Գարդման։ Իսկ Սյունիքը կտրված էր նրանցից։ Այդ պատճառով էլ Սմբատը քրեական մեղք չհամարեց։ Եթե Բագրատունիները գերեվարությամբ բերված լինելով Հրաշէից, արժանի գտնվեցին դրան, ապա որքան առավել արժանի էին սրանք, որ Հայկից ակնհայտ հարազատությամբ որդիները հայրերին փոխարինելով, բնիկ իշխանությամբ եկել-հասել են մինչև այժմյան ժամանակները» (Ն. տ.)։ Սա, իհարկե, բավարար հիմնավորում չէ և միաժամանակ հակասում է պատմիչի կենտրոնածիգ կողմնորոշմանը։ Օրբելյանն ամեն կերպ աշխատում է ընդգծել ֆեոդալական այդ թագավորության օրինականությունը, ցուցադրել թագավորների բարեմասնությունները և կատարած լավ գործերը։ Օրինակ, նշում է, որ Սմբատը թագավորել է ինքնակալ թագավորների նման և ճոխ ու երևելի շատ գործեր է կատարել (Ն. տ.)։ Եվ ընդհանրապես պատմիչը բարձր կարծիքի է այս թագավորության մասին. համարում է «գեղեցիկ և ամուր թագավորություն» (գլ. ՄԲ—59-րդ)։

Հեղինակն իր աշխատության մեջ առանձին գլուխ է նվիրել Սյունիքի թագավորության պատմության ամփոփմանը (գլ. ՄԲ)։ Հիմնադիր թագավոր Սմբատը, որ պատմիչի կողմից բնութագրվում է որպես «քաջարի, հզոր և բարեպաշտ արքա», բուն Սիսական տոհմից էր, սերվում էր «մեծ նահապետ» Վասակի սերունդներից, վերջինիս որդի Փիլիպեի ժառանգական գծով նրա որդի Աշոտի թոռն էր, Սահակի որդին։ Նրան հաջորդում է իր որդի Վասակը՝ «հաճելի, աստվածասեր և բոլոր գործերի մեջ հաջողակ մի մարդ»։ Վասակին հաջորդում է քրոջ որդիներից մեկը՝ Սմբատը (Սմբատ 2-րդ), որը բնորոշված է որպես «առավել հաճելի ու հեզահամբույր, սակայն շրջակա բոլոր ժողովուրդների համար ահարկու» արքա։ Նրանից հետո թագավորությունն ստանձնում է իր եղբայր Գրիգորը։ Այս եղբայր թագավորներն են, որ իրենց հոր անունով կոչվել են Ավագ Աշոտյաններ։ Այս չորս թագավորներից հետո թագավորական դինաստիան փոխվում է։ Գրիգորն ամուսնացած էր Աղվանքի թագավորաղն Սևադայի դուստր Շահանդուխտի հետ։ Նրանք թագաժառանգ չունեին, «իշխանների հետ խորհուրդ անելով՝ Աղվանքից բերում են նույն Շահանդուխտի եղբայր թագավորազն մանուկ Սենեքերիմին, խիստ գեղեցիկ տեսքով, առողջ կազմվածքով, խմաստուն ու հանճարեղ, այլև՝ աստծուց երկյուղած»։ Սենեքերիմի օրոք թագավորությունը հասնում է իր զարգացման բարձր աստիճանին։ Պատմիչն առանձնապես նշում է, որ Սենեքերիմը և իր քույր Շահանդուխտը շինարարական ու նվիրատվական նշանավոր շատ գործեր են կատարել։ Սենեքերիմից հետո սկսվում է թագավորության քայքայման ու անկման շրջանը։ Նկատի ունենալով Սենեքերիմի ննդավոր սպանությունը

Պարտավի, Առանի ու Գանձակի ամիրայի կողմից՝ պատմիչը գրում է. «Ահա այսպես մարեց քրիստոնյաների ճրագը, որ մնացել էր Բաղքի ամուր տեղերում» (Ն. տ.)։ Սենեքերիմին հաջորդում է իր որդի Գրիգորը[1], որը որևէ նշանակալից հետք չի թողնում։ Սյունիքի թագավորության պատմության մեջ վերջին թագավոր է ցույց տրվում Հասան Խաչենցին՝ Սյունյաց արքայադուստր Կատայի ամուսինը (1166—1170)։ Այսպիսով թագավորությունն իր սկզբնավորումից մինչև վերջնական անկումը ընդգրկում է շուրջ 200 տարվա ժամանակաշրջան։

Սյունիքի թագավորության անկմանը նպաստող վճռական հարվածը հասցնում են սելջուկ-թուրքերը, որ այդ ժամանակ իշխում էին շատ տեղերում, այդ թվում՝ և Հայաստանում ու նրա հարևան երկրներում։

Սյունիքի թագավորության վրա սելջուկ-թուրքերի արշավանքներն սկսվում են մայրաքաղաք Կապանի գրավումով ու ավերումով։ 1103 թվականին Զորթմանի գորքը հանկարծակի հարձակվում է քաղաքի վրա, անխնա կոտորում բնակչությանը, քարուքանդ անում քաղաքը և գրավում այն։ Պատմիչը, իբրև սկզբնաղբյուր օգտագործելով Սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսի թուղթը, ցասումով ու դառնությամբ, բայց և կենդանի ու վառ գույներով է նկարագրում զարհուրելի տեսարանը (գլ. ԿԱ—61-րդ)։ Խոր ցավով է բնութագրում ու վերլուծում այդ ավազակային հարձակման հետևանքները։ Նա գրում է. «Եվ ահա այս եղավ այս աշխարհի ավերման սկիզբը. և այդ թագավորությունն օրըստօրե սկսեց թուլանալ ու ապա վերացավ։ Այն ուներ իրեն ենթակա քառասուներեք բերդ, որոնցից տասներկուսն անվանի էին, քառասունութ վանք, հազար ութ գյուղ»։

Թագավորությունն այս գրոհով ծանր հարված ստացավ, սակայն ընդհանուր հարձակումների դաժան պայմաններում հոգեվարք ապրեց մինչև ամենախոշոր ամրոցի՝ Բաղաբերդի գրավումը։ 1104 թվականին գրավվեց ու կողոպտվեց Որոտնը, 1105-ին՝ Բղենը, 1126-ին՝ կաքավաբերդն ու Բաղակի քարը, 1152-ին՝ Շևորտուը, 1157-ին՝ Մեղրու բերդը, և վերջապես 1170 թվականին ընկնում է Սյունիքի թագավորության մեծ հենարան անառիկ Բաղաբերդը։ Ամենուրեք՝ կոտորած, կողոպուտ ու ավեր։ Պատմիչը մեծ ցավով է արձանագրում հատկապես Բաղաբերդի գրավումն ու ավերումը։ Դա ծանր կորուստ էր ոչ միայն երկրի ռազմաքաղաքական և տնտեսական կյանքի ապահովմա՛, այլև մշակութային տեսակետից։ Օրբելյանը խորին ափսոսանքով նշում է այնտեղ ապահովության համար ամբարված բազում գանձերի և ավելի քան 10000 ձեռագրերի կողոպուտը, աշխարհով մեկ ցրումն ու ոչնչացումը։

Այսպես ընկավ Սյունիքի (Բաղքի) թագավորությունը։ Տիրեցին սելջուկ-թուրքերը։ Եվ ի՞նչ... «Վրա հասավ դառն ու դժնդակ ժամանակը. ընդհանրապես երկիրն ու բնակիչի վայրերը ավերվեցին ու անմարդաբնակ դարձան»,— այսպիսի ամփոփիչ խոսքերով է բնութագրում պատմիչն իր սի-

[1] Վահանավանքի պեղումների ժամանակ հայտնաբերվել են նաև դամբարաններ։ Այնտեղ են Սյունիքի թագավորության մի քանի թագավորների շիրիմները՝ տապանագրերով։ Տե՛ս Գ. Մ. Գրիգորյան, «Սյունիքը Օրբելյանների օրոք», Երևան, 1981, էջ 207, ծան. 269—271։

բելի հայրենիքի կացութիւնը տվյալ ժամանակաշրջանում (գլ. ԿԱ)։ Իսկ մինչ այդ գրել էր. «Բազմաթիվ քրիստոնյաներ սրի քաշվեցին։ Բոլորովին ավերվեց Բաղաց երկիրը։ Վանքերի բոլոր միաբանութիւնները լռեցին պաշտամունքային արարողութիւններից։ Թանձրամած խավարը պատեց հայաստանյան ժողովրդին (ընդգծումը մերն է— Ա. Ա.)։ Սաստիկ սգի մեջ ընկան Հայաստանի բոլոր եկեղեցիներն ու քրիստոնյաները» (Ն. տ.)։

Պատմիչը չի զլանում տեղեկութիւններ հայտնել Սիսական նախարարական տոհմի վերջին շրջանի մի քանի իշխանների մասին, որոնք ցրիվ են գալիս ու ապաստան գտնում տարբեր վայրերում։ Ջուրջն ու Խոսրովիկը գնացին Նախիջևան ու այնտեղ մեռան։ Ջուրջի Մահնան անունով եղբորորդին փախավ Անի քաղաք։ Ամենավերջինը հիշատակվում է Բաղաց «մեծ իշխան» Հասանի որդի Համտունը, որը վերաբնակվեց Վայոց ձորի Հրաշկաբերդի մոտի Նորավանքի խորաձոր անապատում և վախճանվեց 1231 թվականին։

Այժմ արդեն երկրամասի ռազմաքաղաքական կյանքի կազմակերպման ու ղեկավարման համար պատմականորեն անհրաժեշտ էր նոր ուժ, իշխանական նոր տոհմ։ Պատմական այդ դերը վիճակվեց Օրբելյանների իշխանական տոհմին, որն արդեն 13-րդ դարի առաջին քառորդում հասավ իշխող դիրքի։ Պատմիչը, լինելով նույն տոհմի շառավիղն ու բարձր գնահատելով նրա պատմական դերը Հայաստանի և մասնավորապես Սյունիքի պատմության մեջ, իր աշխատության ամենաընդարձակ (ԿԶ) գլուխն է հատկացրել նրան։ Տոհմի պատմության շատ դրվագներ, որոնք համընկնում են հեղինակի գիտակցական կյանքի ժամանակամիջոցին, բնականորեն ներկայացվում են որպես ականատեսի վկայություններ, ուստի և հավաստիության առումով համապատասխան հատվածները չափազանց արժեքավոր են։ Տոհմի ծագման ու կազմավորման վերաբերյալ արդեն խոսվեց վեր՝ պատմիչի կենսագրության շարադրման առիթով, և դա կրկնելու հարկ չկա։ Միայն հիշենք, որ պատմիչը հասցնում է շարադրել այդ իշխանական մեծ տան մոտավորապես մեկ դարի պատմությունը՝ 12-րդ դարի վերջին տարիներից մինչև 13-րդ դարի վերջերը։ Նա ներկայացնում է այդ ժամանակաշրջանում ապրած ու գործած մի քանի սերունդներ։ Սյունյաց Օրբելյանների իշխանապետության հիմնադիրը Լիպարիտ 1-ինն է (տոհմի նախնի Ելիկումի որդին)։ Նրա հայտնվելը մեծ ուրախություն է պատճառում ժամանակի պետական նշանավոր գործիչներ Զաքարյան եղբայրներին։ Լիպարիտը վայելում է նրանց հովանավորությունն ու աջակցությունը։ Շուտով նա տիրույթներ է ստանում Վայոց ձորում և տարբեր վայրերում, ի վերջո նրա ձեռքն է անցնում ամբողջ Սյունիքը, որի ազատագրման համար մարտնչել էր քաջաբար։ Նա դառնում է ողջ Սյունիքի կուսակալ։ Այդ պաշտոնը վարում է հաջողությամբ։ Պայքարելով երկրամասի ամբողջականության պահպանման համար՝ միաժամանակ շինարարական նշանակալից աշխատանքներ է կատարել։ Այդ բնագավառում ամենանշանակալիքը Ամաղուի Նորավանքի մեծ եկեղեցու (ս. Կարապետ) կառուցումն է (1223 թ.), որով փաստորեն հիմք էր դրվում Սյունիքի հոգևոր մի այլ մեծ կենտրոնի՝ նոր շըր-

ջանի Նորավանքին։ Իր կառուցած եկեղեցում Լիպարիտը թողել է ընդարձակ արձանագրություն, որը Սյունյաց Օրբելյան տոհմի սկզբնավորման յուրովի պատմությունն է ներկայացնում։

Օրբելյանների իշխանական հաջորդ սերունդը Լիպարիտի զավակներն են։ Նա հինգ որդի ուներ, որոնցից Սյունիքի իշխանապետության զեկավարներ են դառնում Ելիկումը, Սմբատը և Տարսայիճը։ Լիպարիտին անմիջականորեն իշխանությամբ փոխարինում է ավագ որդին՝ Ելիկումը (որը կրում էր իր պապի անունը)։ Սրա իշխանության օրոք արդեն Հայաստան են թափանցում մոնղոլ-թաթարները։ Քննելով իրավիճակը երկրամասի անվտանգության համար՝ Ելիկումը դիմում է դիվանագիտության։ Նա ամրացած էր Հրաշկաբերդում, երբ եկավ Ասլան զորավարն իր զորքով։ Չկարողանալով գրավել անառիկ բերդը՝ նա Ելիկումին առաջարկեց խաղաղությամբ ենթարկվել ու սիրով վարվել իրենց հետ։ Վերջինս չընդդիմացավ և «քաղցրությամբ պատասխանելով» նրան ընդառաջ ելավ բաղում ընծաներով։ Ասլանն այնուհետև գրավեց շատ վայրեր։ Գրավելով ամբողջ Վայոց ձորը՝ հանձնեց Ելիկումին՝ ասելով. «Քրով նվաճածն ու ոսկով գնածը մարդու համար միատեսակ սեփականություն են։ Արդ՝ այն գավառները, որ ես քրով նվաճեցի, թող լինեն քո և քո տոհմի սեփականությունը» (գլ. ԿԶ)։ Ելիկումն ընդունում է գոհունակությամբ ու ծառայում հավատարմորեն։ Նա նույնիսկ մոնղոլ-թաթարական զորքի հետ գնում է Նիբրկերտի վրա, որտեղ և ծանր հիվանդանում է ու, ըստ ոմանց, ավագի սադրանքով բժիշկների կողմից թունավորվելով՝ վախճանվում է։

Նրանից հետո իշխանաց իշխան է դառնում իր Սմբատ եղբայրը, որի մասին պատմիչը հիացմունքով ու մեծ գովեստներով է խոսում։ Ավելորդ չենք համարում մեջ բերել Սմբատին բնութագրող հետևյալ տողերը. «Ապա նրա (Ելիկումի— Ա. Ա.) իշխանությանը տիրում է իր եղբայրը՝ ամենօրհնյալ և բոլորից գովելի Սմբատը, որը մեծահասնաբար էր, ուժեղ մտքով, անսման խելքով, խիստ հնարագետ, խոսքաշնո և քաղցրախոս, լեզուների իմացությամբ հմուտ ու ճարտար։ Դատաստանական ատյանում անպարտելի էր, որովհետև խոսում էր հինգ լեզվով՝ հայերեն, վրացերեն, ույղուրերեն, պարսկերեն և հենց բուն մոնղոլերեն։ Նա, մանկությունից դաստիարակված լինելով աստվածային պատվիրաններով, խորհրդավատ և բարեպաշտ էր, սիրում էր սրբերին ու եկեղեցիները, վանքեր էր կառուցում, հովանավորում ու սփոփում էր քահանաներին, ողորմում էր աղքատներին։ Վշտահարված մեր հայ ժողովրդի համար վերանորոգիչ ու զորացուցիչ էր, ազատարար գերիներին և [ընդհանրապես] բոլորին» (գլ. ԿԶ)։

Բուռն ու բազմակողմանի է եղել այս «արքայազուր իշխան»-ի գործունեությունը։ Նա տաղանդավոր դիվանագետ էր և դիվանագիտորեն ամեն հնար գործադրում էր իր հայրենիքի ազատության ու ապահովության համար։ Երկու անգամ (1251 և 1256 թթ.) լինում է մոնղոլ-թաթարական պետության մայրաքաղաք Կարակորումում ու անձամբ բանակցություններ վարում Մանգու զանի հետ։ Արդյունքը լինում է այն, որ ստանում է բարձրագույն արտոնյալ պարգև՝ փայլիզա, և հռչակվում ենլու (արքունական)։ Նրա վրա կրկնակի հաստատվում են Սյունիքի տիրույթները, վերականդ-

նրվում հափշտակվածները, ավելացվում նորերը։ Հայրենիքի եկեղեցիները ազատվում են ծանր հարկատվությունից, երկիրը խաղաղվում է։ «Կարծես արեգակ է ծագում դիշերային խավարում»,— նկատի ունենալով Սմբատի առաջին վերադարձը՝ գրում է պատմիչը (Ն. տ.)։ Սմբատը «մեծ փառք ու պատիվ և սեր էր վայելում նաև» հաջորդ՝ Հուլավու ղանի կողմից, քանի որ սրա շատ և շատ գործերի դեկավարումը նրան էր հանձնարարված, այն ու շատ արդյունավետ է եղել նրա շինարարական գործունեությունը։ «Շինեց վանքեր, վերակառուցեց բոլոր ավերված եկեղեցիները՝ մեծ խնդություն պատճառելով քրիստոնյաներին» (Ն. տ.)։ Ավարտի հասցրեց Ցաթևի ավերված վանքի վերաշինումը, նրան վերադարձրեց բոլոր հափշտակված կալվածքները։ Կառուցեց (1261 թ.) Ամաղուի Նորավանքի «հրաշակերտ» ժամատունը և այլն։ Սմբատի բարոյական կերպարն ամբողջականությամբ ներկայացնելու նկատառումով պատմիչը հաղորդում է նաև հետևյալ դրվագը։ Երբ Սմբատի բարի ծառայությունները վայելող Վրաց թագավորը նրան հրավիրում է Տփղիս՝ վարձահատույց լինելու ըստ նրա պահանջի, Սմբատի մեջ բորբոքվում է արյան կանչը։ Նա պահանջում է վերացնել տոհմի նախատինքը, որ հասցվել էր Գեորգի 3-րդ թագավորի կողմից՝ իվանե Օրբելի ամիրսպասալարի ղեկավարությամբ նրա դեմ կազմակերպված ապստամբության պատճառով։ Սմբատը թագավորի ձեռքով այրել է տալիս հրամանների այն գիրքը, որը պարունակում է Գեորգի 3-րդի հրամանը՝ ոչ միայն Օրբելի տոհմի բնաջնջման, իր հայրենիքից տեղահան անելու, այլև Վրաստանի պատմության մեջ նրա մասին եղած բոլոր հիշատակագրությունները անդառնալիորեն վերացնելու և այդ ուղղությամբ քար լռություն պահպանելու վերաբերյալ։

Ստեփանոս Օրբելյանն ընդգծում է, որ եռանդուն ու արգասաբեր գործունեությամբ Սմբատը գերազանցում է իր բոլոր նախորդներին։

Նրան իշխանությամբ հաջորդում է մյուս եղբայրը՝ Տարսայիճը (պատմիչի հայրը), որը Սյունիքի իշխանապետությունը հասցնում է իր զարգացման գագաթնակետին, ինչպես և հետագայում իշխում է նաև նրա սահմաններից դուրս։ Պատմիչն այսպես է բնութագրում նրան. «Տարսայիճը... հարգված և սիրված էր աշխարհականների և բոլոր մեծամեծների կողմից։ Իր իշխանությունը վարում էր բարձր ու շքեղ փառքով։ Ահարկու էր բոլոր թշնամիների համար... Քանի որ Տարսայիճը զորեղ, արտոռ, պատերազմող մարդ էր ու կազմվածքով ահագին, բոլոր պատերազմներում մեծամեծ քաջագործություններ և անպատմելի զորություններ էր ցույց տալիս, ուր էլ որ գնում էր պատերազմելու... ինն անգամ անձամբ է ճակատամարտ վարել ու հաղթող դուրս եկել։ Դրա համար էլ մեծամեծ պարգևներով մեծարվել էր արքայից արքայի կողմից ու ստացել ոսկե բալիշը... Դա հենց հաղթանակի պատվո պարգևն էր» (գլ. ԿԶ)։ Շինարարական լայն գործունեություն է ծավալել. կառուցել է եկեղեցիներ, նորոգել խարխլված վանքեր, ցաղաց քարի վանքին նվիրել է գյուղ և այգի, թողել է վիմա-

կան արձանագրություններ։ Նա ղրղհայաց քաղաքական գործիչ էր և բարեկամական հրաբերությունների մեջ էր իր հայրենիքի, ինչպես և հարևան երկրների ղեկավար գործիչների հետ։ Այսպես. Տարսայիճը ոչ միայն սիրով հանձն է առնում Վրաց թագավոր Դավիթ 3-րդի որդի Դեմետրեի դաստիարակությունը, այլև մեծ չանքերով օժանդակում է նրան արքայական գահ բարձրանալու, նույնպես և ստանձնում է սրա ժառանգներ Դավթի ու Մանվելի խնամակալությունը և դաստիարակությունը։ Տարսայիճին շուտով տրվում է Հայաստանի և Վրաստանի աթաբեկության պաշտոնը։ Պատմիչը նշում է, որ նա աթաբեկ դառնալով շատ բարություններ է անում, ընդհուպ մինչև հարկերի դիվանական դավթարի ոչնչացումը և Հայաստանի 150 եկեղեցիների ազատումը հարկերից։ Օրբելյանը հարկ է համարում հիշելու, որ այդ գործչի կատարած լավ գործերի համար Հրազդան գետի մոտի Նետիս գյուղում նրա անունով խաչքար է կանգնեցվում։

Պատմիչը, վերջապես, խոր երախտագիտությամբ է հիշում հոր կատարածը իր առաջընթացի գործում. չէ որ Սմբատի մահից հետո (1273 թ.) Տարսայիճն էր հետևում որդու ուսմանը և հետևողականորեն կազմակերպում նրա աճը որպես կրոնական ու հասարակական գործչի։

Այն կարծիքն է հայտնվել, թե պատմիչն իդեալականացրել է Սմբատին և Տարսայիճին[1]։ Այդտեղ, իհարկե, ճշմարտություն կա, բայց նաև անժխտելի է, որ նրանք առանձնանում են իրենց արգասավոր գործունեությամբ և տոհմի հասարակական կշռի, դերի ու հեղինակության բարձրացման խնդրում։

Տարսայիճի մահից հետո (1290 թ.) վեճ է սկսվում Սյունիքի իշխանության շարունակման համար։ Ժամանակի մոնղոլ-թաթարական տիրակալության համաձայնությամբ իշխանության ղեկը հանձնվում է նրա ավագ որդի Օլիկումին։ Սա էլ իր հերթին դրանից բաժին է հանում իր անհամամայր եղբայր Ջալալին ու հորեղբոր որդի Լիպարիտին։ Պատմիչը գոհունակությամբ է նշում, որ գործերը տարվում են խաղաղությամբ, քանի որ նույն տոհմի ներկայացուցիչների ձեռքում էր ոչ միայն աշխարհիկ, այլև հոգևոր իշխանությունը։

Ստեփանոս Օրբելյանը, խոսելով ժամանակի իշխանական տարբեր ֆեոդալական տների մասին, միաժամանակ արձանագրել է նրանց միջև եղած սոցիալ-քաղաքական հակամարտությունները։ Դա նույնպես կարևոր էր երկրի հասարակական-քաղաքական պատմության ուսումնասիրման տեսակետից։

Ստեփանոս Օրբելյանի առջև դրված հիմնական խնդիրներից մեկն էլ եղել է Սյունիքի հոգևոր իշխանության պատմության վերհանումը, որը նույնպես նա ներկայացնում է բովանդակ Հայաստանի հոգևոր իշխանության պատմության հետ ունեցած սերտ կապի մեջ։ Նկատելի է, որ նա իր աշխատության մեջ ավելի մեծ տեղ է տվել հոգևոր իշխանության պատմության և կրոնական-դավանաբանական հարցերի լուսաբանմանը։ Դա կա-

---

[1] Համմ. Լ. Հ. Բաբայան, «Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության», էջ 324։

բելի է բացատրել հեղինակի՝ կրոնական բարեփոխման գործիչ լինելու հանգամանքով։

Սկսում է Հայաստանում քրիստոնեական կրոնի պաշտոնական ընդունումից և Սյունիքի առաջին մետրոպոլիտ եպիսկոպոս Գրիգորիսից, շարունակում ու հասնում է մինչև իր պաշտոնավարումը։ Նա նախ ցույց է տալիս Սյունիքի գործուն մասնակցությունը Հայաստանում քրիստոնեական կրոնի տարածմանը։ Հիշեցնում է, որ Սյունյաց մեծ իշխանն իր գնդով Գրիգոր Լուսավորչի շքախմբի հետ գնում է Կեսարիա՝ մասնակցելով նրա կաթողիկոսական ձեռնադրությանը, ապա վերադարձին անցնում է Տարոն և կալում Գիսանյան կռապաշտ քուրմերի դեմ, պայքարում այնտեղից անում, որ, օրինակ, հանուն ուղղադավանության՝ քաղկեդոնականության ու նեստորականության դեմ ուղղված պատմական ժողովներին անպայմանորեն մասնակից են եղել Սյունիքի ներկայացուցիչները։ Կամ հայրենիքի ազատության համար մարտնչած և արյունաքամ Հազկերտի կողմից աքսորի քշված ու անլուր տառապանքների ենթարկված բարեփոխման հոգևորականների մեջ է եղել նաև Սյունյաց եպիսկոպոս Անանիա 1-ինը (գլ. ԺԶ—16-րդ)։

Հեղինակը Սյունիքի եպիսկոպոսների մասին պատմում է խմբերով և անհատաբար՝ ըստ ժամանակագրական հաջորդականության, և ի վերջո իր գրքի ՀՔ (72-րդ) գլխում տալիս է ընդհանուր ցուցակը՝ յուրաքանչյուրի անվան դիմաց նշելով պաշտոնավարման տարիների քանակը։ Անհատաբար է ներկայացնում նրանց, որոնք իրենց գործունեությամբ առանձնապես աչքի են ընկել պատմության մեջ։ Այս ձևով նա շարադրում է մի շարք գործիչների, ինչպես՝ Գրիգորիսի (1-ին), Մաթուսաղայի, Ստեփանոս Սյունեցու, Սողոմոնի, Հովհաննեսի, Հակոբի, Վահանի, Գրիգորի և ուրիշների վարքագրությունը։ Հայրենասեր պատմիչի գնահատման չափանիշը նրանց

կատամարտը՝ Մարտիրեի գլխավորությամբ, որտեղ նահատակվեցին հարյուրավոր քաջարի հայ զինվորներ։

Գրքում խորին ակնածանքով ու անվերապահ համակրանքով է խոսվում հինգերորդ դարի պետական ու ռազմական նշանավոր գործիչ Վահան Մամիկոնյանի գլխավորած ետավարայրյան պայքարի մասին՝ ուղղված պարսկական բռնապետության դեմ։ Նյութ վերցնելով Ղազար Փարպեցուց՝ պատմիչը հանգամանորեն կանգ է առնում այդ մեծատաղանդ գործչի՝ Ճարմանի դաշտում պարսկական զորաբանակի հետ կռվով բախվելու վրա։ Հայոց զորաբանակը Վահան Մամիկոնյանի հրամանատարությամբ Վրաստանի քաղաքավոր Վախթանգի խնդրանքով օգնության էր գնացել դաշնակից եղբայրական վրաց ժողովրդին (գլ. ԺԸ)։

Յոթերորդ դարի սկզբներին կազմավորված Արաբական խալիֆայությունը, որ ռազմաֆեոդալական մի հզոր պետություն էր, շուտով կործանիչ հարվածներ է հասցնում Պարսկաստանի Սասանյան աշխարհակալական պետությանը և նվաճում այն։ Սկսվում են արաբական նվաճողական արշավանքները դեպի տարբեր երկրներ։ Այդ ավերիչ արշավանքներից զերծ չի մնում նաև Հայաստանը, որտեղ արաբ նվաճողները ոտք են դնում 640 թվականից։ Նրանց տիրապետությունն այստեղ շարունակվում է Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո էլ։ Զավթիչները ահավոր ավերածություններով, հարկային սարսափելի քաղաքականությամբ, ժողովրդին ստրկական աշխատանքի հարկադրումով, գերեվարությամբ մեր երկիրը հասցրել էին դժոխային կացության։ Թշնամու դաժան լուծը թոթափելու համար այստեղ ծայր էին առել ընդվզումներ, ազատագրական շարժումներ։ Ստեփանոս Օրբելյանն իր աշխատության մեջ պատշաճ տեղ է հատկացնում և այս պատմության վերարտադրմանը։ Առաջինը հիշատակում է «անիծյալ և աշխարհավեր» զորավար Մրվանին, որը բազմաքանակ զորքով արշավելով Հայաստան, «որպես սաստիկ հուր այրեց ու հրդեհեց մեր գեղեցիկ երկիրը»։ Նա անցավ նաև Սյունիքն ավերելու։ Սակայն այստեղ կազմակերպվեցին նրա ջախջախումը և փախուստի մատնումը (գլ. ԼԹ—33-րդ)[1]։ Այնուհետև հաջորդաբար ներկայացվում են մյուս ասպատակողներն ու ավերիչները։ Մամոն (Մայմուն) ամիրապետի կողմից Հայաստան է ուղարկվում ոստիկան Հուլն իր զորքով, որը ջանում է հաստատվել Դվինում։ Նրա դեմ (Սյունյաց իշխանների մասնակցությամբ) ճակատամարտ է կազմակերպվում Կավակերտ բնակավայրի մոտ, որտեղ, ինչպես նշել ենք, հերոսի մահով ընկնում է Սյունյաց իշխան Սահակը (գլ. ԼԷ)։ Ամիրապետ Ջաֆարը մեր երկիրն արշավանքի է ուղարկում Աբուսեճ ոստիկանին, որը գալով Տարոն կալանավորում և բանտ է նետում Բագրատ իշխանին, հալածանքներ սկսում բնակչության դեմ։ Նրա դեմ մարտի են ելնում Տավրոսի բնակիչները, սպանում են ոստիկանին, նրա զորքն էլ

[1] Պետք է ընդունել, որ Մրվանի ջախջախումը կազմակերպողը ոչ թե իշխանաց իշխան Վասակն էր (9-րդ դար), ինչպես նշված է Ս. Օրբելյանի աշխատության մեջ, այլ նրան նախորդած ժամանակի գործիչներից մեկ ուրիշը։

փախուստի մատնում (Ն. տ.)։ Դրանից գազազած՝ ամիրապետը ուղարկում է «ավելի չար մեկին՝ Բուղա անունով, ծանր զորքով»-և հրամայում է Հայաստանի բոլոր իշխաններին ու զեկավարներին ձերբակալելով իր մոտ տանել ու մնացածներին սրի քաշել։ Նա, կատարելով այդ հրեշավոր հրամանը, կալանավորեց Տարոնի և Վասպուրականի իշխաններին, մյուսներին անխնա կոտորեց, գեղեցկատես աղատատոհմ մարդկանց պահեց հավատափոխ անելու։ Այստեղ էր, որ քաջաբար նահատակվեցին Ատոմյանները և 150 ուրիշ տղամարդիկ։ Նրանց համար Հայոց երկրում սահմանվեց հատուկ տոն։ Դրանք հայտնի են որպես 852 թվականի դեպքեր[1]։ Արյունարբու Բուղան, զգալով Սյունյաց իշխանների դերի կարևորությունը երկրի քաղաքական կյանքում, հետապնդում է նրանց։ Ոստիկանի հրոսակները որոնում են Փիլիպեի որդի մեծ իշխան Վասակ Իշխանիկին ու իր եղբայրներին։ Վասակն ամրանում է Կոտայքում և սուրը գործի դնելով քավլզող է անում վրա հասած թշնամու զինվորներին։ Բայց թշնամին համառում է։ Ապա Գարդմանում Վասակին դավաճանաբար հանձնում են ոստիկանին, որը նրան, եղբորը և մորը ձերբակալում է, տանջանքների ենթարկում և շատերի հետ տանում ամիրապետի մոտ։ Այնտեղ ահավոր տառապանքների գնով չեն կարողանում հավատափոխ անել հայրենասերներին։

Ավելի երկար են տևում Յուսուփի զարհուրելի լարագործությունները։ Պատմիչը գրում է. «...Իր որջից դուրս եկավ վանդակազերծ գազանը և կատաղի շունը՝ Յուսուփը, որը կամենում էր կլանել ամբողջ Հայաստանը» (գլ. ԼՀ—38-րդ)։ Այդ անողորմ թշնամին երբ հարձակվում է Սյունիքի վրա, կազմակերպված ջոկատներով նրա դեմ է դուրս գալիս գահերեց իշխան Սմբատը։ Հայրենասերները ոչ միայն փակում են թշնամու առաջ իրենց հայրենի հողի մատույցները, այլև մեծ ջարդ տալիս նրան։ Սակայն թշնամու մեծաքանակ զորքի ճնշման տակ իշխանները ցրիվ են գալիս տարբեր տեղեր, ամրանում ամրոցներում, իսկ ժողովուրդը սրածության է ենթարկվում։ Թշնամին հրի ու սրի է մատնում երկրամասը, ավերում, թալանում, գերիներ է վերցնում և ի վերջո կենտրոնանում է Դվինում։ Պատմիչը համապատասխան սկզբնաղբյուրների հիման վրա հանգամանորեն վերապատմում է Հայաստանի Սմբատ Բագրատունի թագավորի հետապնդման, խորամանկությամբ կալանավորման և չտեսնված ու լսված տառապանքներով սպանման պատմությունը։ Ցնցող տպավորություն է թողնում Երնջակ բերդում պատսպարված փախստականների ահավոր չարչարանքների ու հալածանքների նկարագիրը։ Յուսուփից «կրկնակի չար» ու «շնաբարո» նսրըը ոստիկան նշանակվելով «հիմա, ասպատակից, ի սպառ ջնջեց մեր ամբողջ Հայոց աշխարհը»։ Շարունակելով նույն ավերիչ քաղաքականությունը՝ նա ամեն կերպ ջանում էր ծնկի բերել Սյունյաց գահերեց իշխան Սմբատին։ Բայց սա ամրանալով Նռնեքիրճում՝ հմտորեն պաշտպանություն կազմակերպեց, և ոստիկանն ստիպված դիմեց հաշտության։

Աշխարհակալությամբ տոգորված դավիճիները լավ գիտեին հավատքի ուժը ժողովրդի միասնության պահպանման խնդրում և ջանում էին ամեն

[1] Ս. Օրբելյանը ցույց է տալիս 853 թվականը։

կերպ կրոնափոխ անել նրան, կործանել կրոնական օջախները, խանգարել նրա հոգևոր կյանքը։ Որպես օրինակ առանձին գլխով պատմիչը բերում է Տաթևի վանքի ավերումը։ Թշնամին թափանցում է վանքը, թալանում, այրում ու կործանում է եկեղեցիները և օժանդակ շինությունները, ավարում արժեքավոր իրերն ու գանձերը։ Սակայն դա՝ իր ընկճում միաբանությանը։ Պատասխանը լինում է վանքի շտապ, բայց հիմնավոր վերաշինումը (գլ. ՃՀ—58-րդ)։

Ստեփանոս Օրբելյանի աշխատությունն ալսպիսով մի օժանդակ աղբյուր, իսկ առանձին դրվագների համար էլ սկզբնաղբյուր է Հայաստանում արաբական խալիֆայության տիրապետության նվաճողական ու կործանարար քաղաքականության և մյուս կողմից՝ հայ ժողովրդի պայքարի պատմության ուսումնասիրման համար։

Արաբներին հաջորդում են սելջուկ-թուրքերը։ Օրբելյանը իրեն նախորդող պատմիչների երկերից և այլ աղբյուրներից քաջատեղյակ է նրանց բարբարոսական արշավանքների ու կործանարար գործողությունների պատմությանը, ինչպես նաև նրանց դեմ ուղղված ազատագրական-հայրենասիրական պայքարին, որոնց վերաբերյալ բնորոշ դրվագներ կան նրա աշխատության մեջ։ Հայտնի է, որ քոչվոր ցեղերի ուղեկցությամբ սելջուկ-թուրքական առաջին արշավանքը դեպի Հայաստան տեղի է ունենում 1048 թվականին, հաջորդ տարին դրան հաջորդում է երկրորդ արշավանքը, այնուհետև հետագա տարիներին կրկնվել են մի քանի արշավանքներ, և 11-րդ դարի վերջերին արդեն գրեթե ողջ Հայաստանն ընկնում է այդ զավթիչների տիրապետության տակ, ենթարկվում ահավոր ավերածությունների, ընկնում տնտեսական ու քաղաքական ծանր դրության մեջ։ Նույնպիսի վիճակի մեջ են ընկնում և հարևան ժողովուրդները։ Թե՛ հայ և թե՛ մյուս տուժած ժողովուրդները չէին կարող հանդուրժել անարգ թշնամու բարբարոսական կամայականությունները, ուստի և պայքարի են ելնում։ Պատմիչը հիշեցնում է հայկական, վրացական և բյուզանդական միացյալ զորքերի ճակատամարտը Բասենի դաշտում 1049[1] թվականին քաջ զորավար Լիպարիտի գլխավորությամբ[2]։ Բովանդակ Հայաստանի հետ սելջուկ-թուրքերի կործանիչ հարվածներին ու դաժան ճնշմանը ենթարկվեց նաև նրա անքակտելի մասը կազմող Սյունիքը։ Ինչպես արդեն վերը նշվեց, նրանց բարբարոսական հարձակումներից ընկավ Սյունյաց թագավորությունը, ավե-

[1] Հ. Մանանդյանն այլ տվյալների հիման վրա այս ճակատամարտը նշում է 1048 թ. սեպտեմբերի 18-ին։ Տե՛ս «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. 3-րդ, Երևան, 1952, էջ 44։

[2] Այս ճակատամարտի վերաբերյալ պատմիչներ Ա. Լաստիվերտցու, Մ. Ուռհայեցու և Ս. Օրբելյանի հաղորդածների միջև կան փաստական որոշ տարբերություններ։ Համմ. «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ», աշխատասիրությամբ Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 80—82, Մատթեոս Ուռհայեցի, «Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 104, 107—109, «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 373—377։

րի ենթարկվեցին երկրամասի հարստությունները, մշակութային գանձերը և այլն, բնակչությունը հասցվեց սոսկալի աղքատացման։ Բայց կենսատուն ու ազատասեր հայ մարդը կուլ չէր գնում, այլ մի ձեռքում զինք, մյուսում՝ մուրճ, պայքարում էր ու կառուցում։ Սակայն մեկ ժողովրդի և առավել ևս մեկ երկրամասի բնակչության ուժերը բավական չէին մաքառելու շատ երկրներ նվաճած ու ռազմական-աշխարհակալական ընդարձակ պետություն հաստատած թշնամու բազմաքանակ ուժերի դեմ։ Հարկավոր էր օժանդակ ուժերով միասնական ճակատ։ Եվ դա ստեղծվեց՝ տալով ցանկալի արգասավոր հետևանքներ։ Ստեփանոս Օրբելյանը ցույց է տալիս, թե ինչպես հայ-վրացական միասնական ուժերը 12-րդ դարի վերջերի և 13-րդ դարի առաջին տասնամյակների պետական-ռազմական նշանավոր գործիչներ Զաքարյանների (ապա և նրանց սերունդների) գլխավորությամբ վճռական ու կործանիչ հարվածներ են հասցնում արյունռուշտ թշնամուն՝ մեկը մյուսի ետևից ազատագրելով երկրի զավթած շրջանները։ Ահա թե ի՛նչ է գրում պատմիչը. «Թամարը [իր հայր] Գեորգի թագավորի մահից հետո մեծ պատվի արժանացրեց հայ-քրիստոնյա Զաքարե իշխանի որդի Սարգսի որդիներին՝ Զաքարեին և Իվանեին՝ նրանց հասցնելով բարձր ասպիճանի։ Զաքարեին նշանակեց Օրբելյանների տեղում՝ Վրաստանի ամիրասպասալար՝ նրան հանձնելով Օրբելյանների լոռե տիրույթը, իսկ Իվանե եղբորը դարձրեց մեր Հայոց աշխարհի և Վրաստանի աթաբեկ։ Նրանք մեծ ջանքերով մեր Հայոց աշխարհն ազատեցին պարսիկներից[1]. գրավեցին Առանից մինչև Ներքին Բասեն, Բարկուշատից մինչև Մժնկերտ, Վերջերին Կարսը, Վաղարշակերտը, Կաղզվանը, Սուրբ Մարին, Անին, Անբերդը, Բջնին, Գառնին, Դվին մայրաքաղաքը, Գարդմանը, Գանձակը, Ջարեքը, Հերքը, Շամքորը, Պարտավը, Ջարաբերդը։ Վեց հարյուր վաթսուն [=1211] թվականին վերցրին նաև Սյունիքը, Որոտնը, Բորոդնը, Բղենը, Բարկուշատը։ Թեպետև դա տեղի ունեցավ տարբեր թվականների, սակայն բոլորն էլ նրանք ու իրենց որդիները գրավեցին և մեր երկիրն ազատեցին սելջուկ-թուրքերի լծից» (գլ. ԿԶ)։

Արևելյան Վրաստանն ու Հայաստանի հյուսիսային մի քանի շրջաններ ազատագրվել էին շատ ավելի առաջ։ Եվ այդպիսով 13-րդ դարի առաջին տասնամյակներին ամբողջ Անդրկովկասն ազատվում է սելջուկ-թուրքական վտանգից։ Բայց անմիջապես հաջորդում է մեկ ուրիշ աղետ։ Այստեղ են թափանցում Խորեզմի սուլթան Ջալալեդդինի հրոսակները։ Ստեփանոս Օրբելյանը մռայլ գույներով է բերում մեր երկրում նրանց կատարած խըժդըժությունների պատմությունը, որը համարում է «զարհուրեցուցիչ զրույց»։ Ջալալեդդինի ասպատակությունները Հայաստանում տևում են յոթ տարի (1225—1232 թթ.), որոնք երկիրը հասցնում են էլ ավելի ծանր կացության։ Պատմիչը գրում է, թե Ջալալեդդինի զորքը ուր հասնում էր, ավերում, թալանում, ապականում էր՝ չխնայելով ո՛չ մարդու, ո՛չ էլ անասունի։ Անողորմ հրոսակներն անխնա կոտորում էին խաղաղ բնակչությանը, ավերում, քարուքանդ էին անում գյուղերի ու քաղաքների շինությունները, վան-

[1] Տե՛ս ծան. 1278։

քերը, հրի ճարակ դարձնում ամեն ինչ. այրում էին աշխատավորների ստացած բերքը, կտրատում և փշացնում էին այգիներն ու պարտեզները։ Այդ ամենի հետևանքը եղավ համատարած սովը, երկրի դաշտերը, ձորերն ու լեռները լցվեցին դիակներով։ Այդ պատճառով էլ բազմացան մարդակեր գայլերը, «որոնք հոշոտելով սպանում էին նրանց, ովքեր ազատ էին մնացել սրից, օձից, սովից ու մահից»,— դառնությամբ նկատում է պատմիչը (գլ. ԿԶ)։ Քալալեդդինին ևս դիմակայում են վրացական ու հայկական միացյալ ուժերը։ Ջաքարյան Իվանե աթաբեկը հավաքում է հայոց և վրաց ուժերը ու մարտի դուրս գալիս նրանց դեմ։ Հայտնի է Գառնիի ճակատամարտը, որին, ինչպես նշում է պատմիչը, մասնակցում է նաև Լիպարիտ (1-ին) Օրբելյանն իր զոհատուղ։ Թեև ճակատամարտում հայրենասերները պարտություն են կրում, սակայն, այնուամենայնիվ, թշնամու զորությունը սասանվում է։

Բայց մի՞թե սա վերջն էր։ Ո՛չ։ Շուտով Հայաստան է հասնում օտարերկրյա նվաճողական նոր հորձանք։ Երկիրը ենթարկվում է մոնղոլ-թաթարական աշխարհակալական արշավանքներին։ Ստեփանոս Օրբելյանն իր աշխատության մեջ արտացոլում է այդ նոր նվաճողների տիրապետության շուրջ վաթսուն տարվա պատմությունը, որի մեծագույն մասը համընկնում է պատմիչի ապրած ժամանակամիջոցին։ Այնպես որ այդ ժամանակամիջոցում տեղի ունեցած անցքերի զգալի մասը նա պատմում է որպես ականատես, ուստիև մոնղոլ-թաթարների պատմության այդ մասը հավաստիության առումով խիստ վստահելի կարող է դիտվել, որը և իր հերթին է՛լ ավելի է բարձրացնում նրա երկի պատմագիտական արժեքը։ Մոնղոլ-թաթարների տիրապետությունը Հայաստանում (այլև Վրաստանում) տևեց մեկ դարից մի քիչ ավելի՝ տասներեքերորդ դարի երեսնական թվականների կեսերից մինչև տասնչորսերորդ դարի քառասնական թվականները։

Ժամանակի մեր պատմիչները (Վարդանը, Գրիգոր Aկներցին (Մաղաքիա), Կիրակոս Գանձակեցին, Սամվել Անեցու շարունակողը՝ Մխիթար Այրիվանեցին և այլն), այդ թվում՝ նաև Ստեփանոս Օրբելյանը այս նոր նվաճողների մուտքը Հայաստան նշում են 1236 թվականով, երբ Ջարմաղան ղորավարն իր զորաբանակով արշավեց այստեղ։ Մեր միջնադարյան պատմագրության մեջ այս նվաճողները կոչվել են «մուղալք» («մոնղոլք»), «թաթարք» կամ «ազգ Նետողաց» (ճարպիկ և հմուտ նետաձիգներ լինելու պատճառով)։ Ստեփանոս Օրբելյանը «մուղալք», «ազգ Նետողաց» անվանումներն նշելուց հետո ավելացնում է՝ «ըստ գեղչկացն՝ թաթարք», այսինքն՝ որպես թե միայն գեղչուկներն են նրանց «թաթարներ» անվանում։ Իրականում դրանք միատարր ժողովուրդ չէին, հավանաբար գերիշխող մասով մոնղոլներ էին, որոնց միացած էին թաթարական և այլ զանազան ցեղեր։ Այդ պատճառով էլ մեր պատմագրության մեջ այժմ սովորաբար անվանվում են «մոնղոլ-թաթարներ» կամ պարզապես «մոնղոլներ»։ Ժողովրդացեղային միությունը բնակվում էր Սիբիրի և Հյուսիսային Չինաստանի միջև ընկած տարածքներում։ 1206 թվականին Տեմուչինը, որ վերանվանվեց Չինգիզ խան, հռչակվեց թագավոր (խաքան) և այդ ժողովուրդներն ու ցեղերը միավորելով իր գրոշի տակ՝ նվաճողական արշավանքներ սկսեց աշխա-

հի տարբեր ուղղություններով։ Նվաճելով շատ երկրներ՝ մոնղոլ-թաթարները տեղերում հաստատում են իրենց տիրապետությունը. կոտորածներով, ավարառությամբ, գերեվարությամբ, հարկահանությամբ ու ռազմական դաժան վարչակարգով ծանր լծի տակ դնում բազմաթիվ ժողովուրդներին։ «Նոր նվաճողների տիրապետության առաջին շրջանում, սկսած 1236 թ. մինչև 1256 թ., ուրեմն՝ ուղիղ քսան տարի՝ Հայաստանը Վրաստանի հետ կազմում էր Չինգիզ խանի հիմնած միացյալ մեծ խանության մասը, իսկ 1256 թ. սկսած մինչև 1344 թ. նա գտնվում էր Հուլավյան տոհմի իլխանների իշխանության տակ»[1]։ Տեղական իշխանությունները, իհարկե, պահպանվում էին, բայց նրանք վասալական կախման մեջ էին դրված նվաճողների իշխանություններից և չէին կարող չկատարել նրանց թելադրանքը։ Ստեփանոս Օրբելյանը պատմում է մոնղոլ-թաթարական ղաների, նոյիննների, վերակացուների և այլ կարգի գործիչների ու նրանց վարած քաղաքականության պատմությունը, ընդհուպ մինչև իր կյանքը վերջին տարիներին գործած Ղազան ղանի (իլխանի) գործունեության առաջին տարիները։ Երբեմն մանրամասնությամբ է շարադրում այդ պաշտոնյաների գործողությունների, պալատական հեղաշրջումների, զանազան դավադրությունների և այլնի մասին, որոնք ընթերցողի վրա ցնցող տպավորություն են գործում։ Նա տալիս է նաև մոնղոլ-թաթարների բարոյական, կենցաղային, մարդաբանական, վարվեցողական բնութագիրը՝ ընդհանուր առմամբ դրական մոտեցմամբ, որը, իհարկե, հակասում է մեր մյուս պատմիչների բնութագրումներին։ Ճիշտ է նկատված, որ այդ կարգի բնութագրումների մեջ Օրբելյանը ցուցաբերել է սուբյեկտիվ մոտեցում և անարդարացի վերաբերմունք[2]։ Անառարկելի է, որ այս հարցում անպայմանորեն դեր է կատարել անհատական զրդապատճառներով թելադրված մարդկային թուլությունը։ Սակայն անժխտելի է նաև այն, որ պատմիչի մեջ ի վերջո հաղթել է բարձր քաղաքացիությունը, և նա իր դաժան ժամանակի մասին գրել է, թե ինքն ապրել է «...Դառն օրերում, սովախեղդ ու մահաշունչ ժամանակներում, երբ մահը ցանկալի ու երանելի է, իսկ կյանքը՝ ատելի ու թշվառ, երբ բոլոր մարդիկ շարունակ գիշերը ցավի, ցերեկը՝ ցնորքի մեջ են անցկացնում, նրանք բարի բանի ակնկալություն չունեն, այլ օրեցօր [վրա հասնող] սոսկալի վշտերի ու նեղությունների են սպասում» (գլ. ՀԹ)։ Իսկ դրանք մոնղոլ-թաթարական տիրապետության ժամանակներն էին։ Այս բնութագրման մեջ պատմիչն իրավացի է, այնպես, ինչպես պատմական-իրական անցքերն ու իրադարձությունները բնութագրելիս։ Իր ժամանակի վերաբերյալ սա միակ բնութագրականը չէ։ Իր իսկ թողած մի արձանագրության մեջ, որի պատճենը բերված է նույն երկում, պատմիչը «դառն և գժնդակ ժամանակ» է համարում իր ապրած դարաշրջանը (գլ. ՀԱ)։

Ստեփանոս Օրբելյանի սույն երկում որոշ տեղեկություններ կարելի է գտնել նաև եգիպտական մամլուքների գործողությունների, խաչակրաց արշավանքների և պատմական ուրիշ իրադարձությունների մասին։

[1] Հ. Մանանդյան (Երկեր, Գ, Երևան, 1977, էջ 256)։

[2] Համմ. Լ. Հ. Բաբայան, «Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության», էջ 322։

Հայաստանում տեղի ունեցած սոցիալական շարժումների պատմության ուսումնասիրման տեսակետից մեծ արժեք ունեն Ստեփանոս Օրբելյանի հաղորդած տեղեկությունները Սյունիքի գյուղացիական շարժման մասին։

Իններորդ դարում արդեն մեր երկիրը թևակոխել էր զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանը, գնալով խորանում էին ֆեոդալական հարաբերությունները, սկզբնավորվել և ուժեղանում էին գյուղացիների ճորտացումն ու նրանց հողազրկումը։ Աշխարհիկ կալվածատիրության հետ զարգանում էր վանական կալվածատիրությունը։ Աշխատավորությունը հեծում էր ներքին աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների և օտարերկրյա նվաճողների կրկնակի ճնշման տակ։ Հետզհետե սրվում էին հակամարտությունները հզորացող ֆեոդալների և ճորտացվող ու հողազրկվող գյուղացիության միջև։ Տասներորդ դարի սկզբներին Սյունիքում կազմակերպվում է Տաթևի միաբանության՝ ավելի քան հինգ հարյուր միաբաններով կարճ ժամանակամիջոցում ընդլայնվեցին վանքի կալվածքները՝ երկրամասի գյուղերի հաշվին։ Վանքը դարձավ չափազանց խոշոր կալվածատեր։ Իսկ դա իհարկե ծանր էր նստում աշխատավոր շինականների վրա։ Եվ այստեղից էլ ապստամբական շարժում է սկսվում վանքի դեմ, որը շարունակվում է շուրջ հարյուր տարի։ Ստեփանոս Օրբելյանի ընձեռած տվյալների հիման վրա այդ շարժումը նորագույն ուսումնասիրություններում բաժանվում է երեք շրջանի[1]։ Ապստամբական շարժումը ծայր է առնում վանքի շրջակա գյուղերում՝ Ցուրաբերդում (Ցուրա գար, Ցուրագետ), Տամալեկքում, Ավելադաշտի բերդում։ Նախ այն արտահայտվում է բնակչության ուժեղ ու համառ դիմադրությամբ, երբ միաբանության կազմակերպման և նրա կալվածքների ընդլայնման ժամանակ նախատեսվում է այդ գյուղերն իրենց ողջ հողատարածություններով հանձնել վանքին։ Պատմիչն այդ մասին գրում է. «Թեև այս բոլոր նվիրատվությունները կատարեցին, սակայն Ցուրաբերդի բնակիչներին չկարողացան տեղահան անել, քանի որ նրանք հին տեղաբնիկ սեփականատերեր էին, [բայց] բարբարոս ու պիղծ մարդիկ էին։ Այսպե՛ս սեփականատերեր էին, որ նաև Տամալեկքը չկարողացան սեփականել, որովհետև նրա բնակիչները ևս նույնպիսի մարդիկ էին։ Կար նաև Բերդ անունով մի ավազականոց, վանքի դիմաց, մեծ գետի այն կողմում, գարափի այն եզրին, որ Ավելադաշտ են կոչում, Ներքին Ուսակում, այն ևս չկարողացան ընկճել։ Դրանցից ոչ քիչ վնաս էր հասնում միաբանությանը։ Թեև հետո, տարբեր ժամանակներում, դրանք ևս սեփականեցին հայրապետները, սակայն հետագայում, երբ հայրապետանոցը խանգարվեց ու օջախն ավերվեց, այս հոգեբաժին տրված կալվածքները բաժան-բաժան եղան, իսկ երբ հակառակությունը վերացավ, մեկ առ մեկ վերահաստատվեցին» (գլ. ԽԲ)։ Ուրեմն՝ պարզ է, որ գյուղացիական հուզումներն սկսվել են այն պահից, երբ գյուղերն ու հողերը «հոգեցատուր» են արվել վանքին։ Իսկ այնուհետև շինականներն անցել են ավելի ակտիվ պայքարի։ Հարձակողական ապստամբության առաջին ալիքն սկսվում է Ցուրա բեր-

1 Համմ. օրինակ, Տ. Սահակյան, «Գյուղացիական ապստամբությունը Սյունիքում 10-րդ դարում», ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1956, № 3, էջ 41—44։

դում։ Ցասումով լի ցուրաբերդցիները 915 թվականի մի գիշեր հարձակվում են Տաթևի վանքի վրա, կոտորում վանականներից մի մասին, իսկ մյուս մասին փախուստի մատնում։ Սպանելու համար որոնում են Տեր-Հովհաննես (5-րդ) եպիսկոպոսին, բայց չեն գտնում (այդ ժամանակ նա վանքից բացակայում էր)։ Ավերում են վանքը, վերցնում շատ հարստություններ և տանում իրենց բնակավայրերը։ Միաբանության դեմ նրանց ատելությունն ու ցասումն այն աստիճանի էին հասել, որ դրանով չեն բավարարվում. նաև վերցնելով մեռոնով լի կաթսան՝ տանում ու մեռոնը թափում են ժայռն ի վար։ Հետևյալ օրը գալիս է եպիսկոպոսը, բայց ոչինչ չի կարողանում անել և հեռանում է վանքից։ Նրան վերադարձնում է Սյունիքի գահերեց իշխան Սմբատը, որը և զինված ուժերով ճնշում է ապստամբությունը, հիմնահատակ ավերում է Ցուրաբերդը, բնակիչներին «զնջում, հեռացնում է աշխարհից» և կարգադրում է եպիսկոպոսին վճռագիր գրել, նզովել, որ ոչ ոք չհամարձակվի վերականգնել ապստամբների բնակավայրը։ Պատմիչը մեջ է բերում այդ փաստաթուղթը (գլ. ԽԸ)։ Երկրորդ ալիքն սկսվում է 930-ական թվականներից, Տեր-Հակոբ Դվինեցի եպիսկոպոսի օրոք։ Այս անգամ ելույթները շարունակվում են մինչև այս եպիսկոպոսի մահը (958 թ.)։ Ոտքի են ելնում Ավելադաշտի բնակիչները, որոնք, պատմիչի ասելով, «շատ ոճիրներ էին գործում ու շատ նեղություն հասցնում միաբաններին ու շրջակա մյուս սահմաններին» (գլ. ԽԲ)։ Ապստամբությունը դաժանորեն ճնշվում է Սյունյաց իշխանների միջոցով, որոնց զինված ուժերը հալածում են ապստամբներին, հիմնիվեր կործանում «ապստամբանոց»-ը։ Տեղը իր սահմաններով զարձվում է վանքի սեփականություն։ Խստորեն արգելք է սահմանվում, որ ոչ ոք չհանդգնի վերաշինել կամ բնակվել։ Անհանգիստ էին Տամալեկքի բնակիչները, որոնք «բազում և մեծամեծ վիշտ ու նեղություն էին հասցրել վանքին» (գլ. ՕԱ)։ Նախորդ եպիսկոպոսը մեծ ջանքերով չէր կարողացել ընկճել նրանց և գյուղերն ու հողերը սեփականել։ Տեր-Հակոբի ժամանակներում նրանք շարունակում են իրենց ընդվզումները, մինչև որ իշխանուհի Սոփիան գնում է տեղը և հանձնում վանքին։ Հոգևոր իշխանությունը սարսափով մտածում է՝ չլինի՞ թե որևէ աշխարհական բնակվի այնտեղ։ «Ապստամբանոց»-ում եկեղեցի են կառուցում և ուխտ հաստատում։ Այդ առթիվ Տեր-Հակոբը վճռագիր է գրում, որի պատճենը գտնում ենք պատմիչի սույն երկում (գլ. ՕԱ)։ Հաջորդ դեպքերը հայտնի են տասնմեկերորդ դարի սկզբներից, Սյունյաց Վասակ Թագավորի, Մեծաղա իշխանաց իշխանի օրոք։ Պատմիչը հաղորդում է, որ ժամանակներ էին անցել, և որոշ մարդիկ վերցնելով Ցուրաբերդը՝ վերաշինել էին ու բնակություն հաստատել։ Նրանք վերստին հարձակվում են վանքի վրա, քարուքանդ անում այն։ Ցասկոտ շինականները դարանակալելով սպանում էն Բաղքից վերադարձող Տեր-Հակոբ 2-րդ (1000—1003 թթ.) եպիսկոպոսին (գլ. ԽԸ—48-րդ, ՕԴ—54-րդ)։ Մեկ հայտնի վերջին բախումը տեղի է ունեցել Տեր-Գիրգոր 3-րդ (1003—1006 թթ.) եպիսկոպոսի օրոք։ Սա հիմնահատակ կործանում ու բնաջնջում է Ցուրաքարը (գլ. ՕԴ)։ Դրանից այս կողմ ուրիշ տեղեկություններ չկան։ Եվ առհասարակ մեր մատենագրության մեջ Սյունիքի գյուղացիական այդ շարժման մասին հիշատակություններ

չեն պահպանվել։ Միակ աղբյուրը Ստեփանոս Օրբելյանի սույն երկն է։ Մեզ չեն հասել նաև հեղինակի օգտագործած փաստաթղթերի բնօրինակները, որոնցից մի քանիսի ընդօրինակումները նրա կողմից բերված են այս աշխատության մեջ։ Ուրեմն՝ սույն երկը մնում է որպես գիտության համար միակ և շատ արժեքավոր սկզբնաղբյուր վերը մատնացույց արված տեղեկությունների։ Այս առումով ևս բարձրանում է աշխատության պատմագիտական նշանակությունը։ Սակայն չի կարելի չնկատել, որ պատմագիրը այդ շարժման մասին համակրանքով կամ հաճույքով չի խոսում։ Բացահայտ է նրա բացասական վերաբերմունքը։ Նրա համար ապստամբները «բարբարոս» են, «շնաբարո», «պիղծ», «ավազակ», իսկ նրանց բնակավայրերը՝ «ավազականոց», «ապստամբանոց», «անիծաբնակ» և այլն։ Միանգամայն հասկանալի է, որ պատմիչը, լինելով ֆեոդալական բարձր դասի ներկայացուցիչ, իրողություններին պիտի մոտենար իր դասակարգի շահերի դիրքերից։ Իբրև պատմագիր նա արձանագրել է փաստերը, բայց դրանք անցկացրել է իր դասակարգային բեկման կետով։

Շրջահայաց պատմագիրն ընդհանրապես իր երկում անդրադարձել է գրեթե այն բոլոր էական իրադարձություններին, որոնք դրսևորվել են մեր ժողովրդի պատմական կյանքում՝ իր ընդգրկած համապատասխան ժամանակներում։ Այսպես. բացի վերը մատնանշված պատմական իրողություններից, նա այս կամ այն չափով անդրադարձել է հայ-վրացական, հայ-աղվանական, հայ-հունական (բյուզանդական) կրոնական, այլև քաղաքական հարաբերություններին, քրիստոնեության տարածման կապակցությամբ Սյունիքում կռապաշտության մնացուկների վերացման նպատակին ուղղված ջանքերին, Կիլիկիայի հայ թագավորության քաղաքական ու կրոնական վիճակին, հայոց թվականության սահմանմանն ու կիրառմանը, տոմարական փոփոխություններին, Բագրատունիների թագավորության հիմնմանն ու Հայաստանի քաղաքական անկախության վերականգնմանը և ուշագրավ շատ ուրիշ անցուդարձերի. բերել է բազմաթիվ հետաքրքրական ու արժեքավոր փաստեր, կատարել յուրօրինակ բնութագրումներ ու վերլուծություններ և այլն։

Այս համառոտ բնութագրականն իսկ ցույց է տալիս, որ այս երկն ունի ճոխ բովանդակություն, նյութի բազմաճյուղ ընդգրկում։ Պատմիչը կարողացել է ընտրել և ընդգրկել էական ու կարևոր հարցերը։ Նա ջանացել է այնպիսի հիշատակումներ անել, որոնք անհրաժեշտ է սերունդների հիշողության մեջ պահել։ Այս բոլորով գիրքը մեզ ներկայանում է որպես մի կոթողային գործ։ Այն ունի ոչ միայն պատմական-ճանաչողական մեծ արժեք, այլև հայրենասիրական-դաստիարակչական անվիճելի նշանակություն։ Ուստի և մեր երախտավոր նախնիները այն պահպանել ու հասցրել են մեզ։ Եվ այս անգին գանձը պիտի շարունակի իր ճանապարհը անհամար դարերի միջով։

ԵՐԿԻ ԼԵԶՈՒԻՆ ԵՎ ՈՃԸ

Ստեփանոս Օրբելյանի մատենագրական այս գլուխգործոցը հետաքրքրական և արժեքավոր է նաև լեզվի ու ոճի կողմից։ Այս առումով էլ այն արժանի է առանձին ուսումնասիրության։ Սակայն, նկատի ունենալով տեղի սղությունը, առայժմ այստեղ կբավարարվենք համառոտ քննությամբ ու բնութագրումով։

Այս երկն ստեղծվել է այն ժամանակամիջոցում, երբ ընդհանուր հայերենի մեջ կատարվել էին պատմական էական տեղաշարժեր։ Հին հայերենը (գրաբարը) որոշ փոփոխություններով հանդերձ շարունակում էր ծառայել որպես գրական լեզու հատկապես պատմագրության և էլի ուրիշ բնագավառներում։ Զևավորվել և գործածության մեջ էր միջին հայերենն իր գրաբառներով իրենց զգալ էին տալիս այդ շրջանում գոյություն ունեցող բարբառները։ Մեծ աշխատություն էր ձեռք բերել ժողովրդական ընդհանրացված խոսքը և այլն։

Իր աշխատության շարադրման համար Ստեփանոս Օրբելյանն ընտրել է մեր հին ու միջնադարյան գրաբար մատենագրության ավանդական լեզուն։ Հասկանալի է, որ ժամանակի լեզվական իրավիճակը այս կամ այն չափով իր կնիքը պիտի դներ նաև այս հեղինակի երկի լեզվի վրա։ Դրան գումարելով նաև հեղինակային նախաձեռնումների արդյունքները՝ անկասկած չի կարելի չընդունել, որ սույն երկի լեզուն գրաբարն է՝ իր կրած որոշ հատկանշական փոփոխություններով հանդերձ։ Խոսքը, իհարկե, վերաբերում է հեղինակային շարադրանքին։ Բանն այն է, որ, ինչպես վերը նշեցինք, Օրբելյանն իր երկում օգտագործել է նաև բազմաթիվ կալվածագրեր, նման կարգի այլևայլ վավերագրեր ու վիմական արձանագրություններ։ Պարզորոշ երևում է, որ լեզվական տեսակետից վերջիններս տարբերություններ ունեն պատմության հեղինակային շարադրանքի համեմատությամբ։ Դրանց մեջ կան այնպիսիները, որոնք ժամանակային առումով նույնիսկ մի քանի հարյուրամյակով նախորդում են այս երկի շարադրանքին, սակայն ավելի շատ բարբառային-աշխարհաբարյան տարրեր են պարունակում։ Այդ ցույց տալու նպատակով զուգադրենք նմուշներ։ Այսպես. «Եւ բաղձալի ի կենցաղս ոչ այլ ինչ, բայց միայն սեպուհականութեան ժառանգութիւն առն, յորում ծնեալ և սնեալ լինի, և վայելել խորհրդի. որպէս զտունս մօր և զգուխ հօր, այնպես քաղցր թուեցեալ լինի ի միտս ժառանգորդին։ Վասն որոյ միշտ կարօտի շրջիլ տեսանել, զբօսնուլ, խնդամտիլ ի վերայ նորա, որպէս և գովելի և քաջուղէշ մանուկս այս Բաբիկ, որ չետ տիրելոյն քնիկ ժառանգութեան իւրոյ՝ յորս ելեալ խնդալով, խաղալով ի վերայ սովորական թատերացն և խնջոյից խրախարանացն ի լերինս որաստան և բազմաջուիր վայրացն Սիւնեաց, նաև ի տես որպիսութեան գաւառացն յառաջին ամին իւրոյ տէրութեանն» (գլ. ԺԱ—11-րդ)։ Սա նմուշ է հեղինակային շարադրանքից։ Հետևյալը մի հատված է հեղինակի մեջ բերած 906 թվականի վավերագրից, որով նշվում են Տաթևի վանքի

ղրջակայքի սահմանները. «...զսահմանս ղրջակայ, որք են այսպէս։ Ցարևմտից կողմանէդ սկսեալ ի մեծ դիտաւոր սարէդ Գազբոլայ ջրաթափովն մինչ ի խոռին ճանապարհն, որ լորաձորին սահմանն է։ Եւ ի հիւսիսոյ դեհաց քնասեռովն ի վայր ի գետն հանդէպ Խոտայ, և գետովն ի Խոտանան և անցեալ ընդ գետն՝ փոքր ձորակովն որ ելանէ յԱւազեաց խոռ ի խոզաց բլուրկովն, նորին բարակ ճանապարհովն բացահորինն, նուրբ անջուր ձորակովն ի վայր ի Դեղնաձորն և ի կարմունջն և ի կարմնջէն Քարաձորն, և Քարաձորին մեծ քնասեռովն ի սարն և ի բուն ճանապարհն, որ գայ սարովն ի Հարսնավազն...» (գլ. ԽԹ)։

Առաջինը կանոնավոր գրաբար է, երկրորդում զգացվում է աշխարհաբարյան շունչը, թեև վերջինս առաջինին նախորդում է շուրջ չորս դարով։ Սա ավելի մոտ է կանգնած իր ժամանակի կենդանի խոսակցական լեզվին և ապացույց է նրա գոյության, որը գնալով ավելի ու ավելի էր կերպարանափոխվել ու տարածվել Օրբելյանի ժամանակներում, բայց փաստ է, որ պատմագիրը չի շարադրել այդ լեզվով, այլ դիմել է գրաբարին։

Ընդգծելով, որ ընդհանուր առմամբ գրաբարն է այս երկի հեղինակային լեզուն, չենք կարող պնդել, թե այնտեղ շեղումներ չկան գրաբարի կառուցվածքային իրողություններից, թե այն լիակատար կերպով մնացել է մնացել ժամանակի լեզվական յուրահատկություններից և այլն, քանի որ փաստերն այլ բան են վկայում։

Երկի լեզուն բնութագրելով փաստական առումով՝ նախ պետք է նկատել, որ այն ունի հարուստ բառապաշար։ Հեղինակը, օգտվելով մեր լեզվի մատենագրությամբ ավանդված ճոխ բառագանձից՝ միաժամանակ բառագործածությամբ առաջ է անցել. կատարել է նորակերտումներ. փոխառություններ, վերաիմաստավորումների և նման այլ միջոցներով գործածության մեջ է դրել և այնպիսի բառեր, որոնք կոչված էին արտահայտելու համապատասխան ժամանակի յուրահատուկ հասկացողություններ կամ ընդհանրապես իմաստային նրբերանգներ։

Գրաբարով շարադրող մատենագրի համար, որն օգտագործում է կուտակված բառամթերքը, նույնիսկ մի քանի նորակազմ բառերի գործածությունը նկատելի երևույթ է համարվում։ Այս տեսակետից Ստեփանոս Օրբելյանը մեր մատենագրության մեջ գրավում է կարևոր տեղերից մեկը։ Զգալի թիվ են կազմում նրա նորակերտումները։ Դրանք այնպիսի կազմություններ են, որոնք, համենայն դեպս, մեզ ծանոթ են նրա երկից և գրաբարյան բառարաններում էլ արձանագրված չեն։ Այդ կարգի բառերից են՝ աղեցաւ (Հ. 2-րդ, էջ 196[1]), աղիւսաբարտար (Հ. 1-ին, էջ 88), անգրաւոր (Հ. 1-ին, էջ 90), արբելութիւն (Հ. 2-րդ, էջ 38), բոլորապոյր (Հ. 2-րդ, էջ 88), բոցաթոյն (Հ. 2-րդ, էջ 199), գետավարար (Հ. 1-ին, էջ 86), խակակիրք (Հ. 2-րդ, էջ 254), ծնրաճանգոյց (Հ. 2-րդ, էջ 198), ծովամատոյց (Հ. 1-ին, էջ 170), նաստատագիծ (Հ. 2-րդ, էջ 64), նեղտապաշտակութիւն (Հ. 1-ին, էջ 77), նրաշագիտակ (Հ. 1-ին, էջ 107),

[1] *Փակագծում ցույց են տրվում Օրբելյանի աշխատության փարիզյան հրատարակության էջերը։*

մեծանձնեայ (Հ. 1-ին, էջ 212), մոմոանիք (Հ. 2-րդ, էջ 64), սովամածոյց (Հ. 2-րդ, էջ 254), փարթամաբնակ (Հ. 1-ին, էջ 223)։

Պակաս հետաքրքրական չէ և այն, որ մի շարք բառեր Օրբելյանը գործածել է այնպիսի իմաստներով, որոնք գրաբարյան բառարանները չեն արձանագրում։ Օրինակ՝ պարարտութիւն բառը սովորաբար բացատրվում է «գիրութիւն», «յուղ, ճարպ» (ԱՌ[1])։ Օրբելյանը գործածել է «հարստութիւն» իմաստով։ Միագլուխ բառը բացատրվում է «մի գլուխ ունեցող», իսկ այստեղ գործածված է մեկ այլ՝ «միանվագ» իմաստով (Հ. 2-րդ, էջ 238)։ Գայլապատառ բառը գրաբարի բառարանները ներկայացնում են «գայլից պատառոտված» իմաստով, իսկ այստեղ գործածված է «գայլի պես պատառոտող» իմաստով (Հ. 1-ին, էջ 208)։ Թիթեղնակապ և կամարակապ բառերը ներկայացվում են ածականի արժեքով, առաջինը՝ «թիթեղով պատած, թիթեղով կպցրած», երկրորդը՝ «կամար կապած, կամարաձև շինված» իմաստներով, իսկ այստեղ բերված են գոյականի արժեքով՝ զարդեր, հանգեցնանքի կցացուցիչ մասի նշանակությամբ (Հ. 2-րդ, էջ 96)։ Այլ բառն ավելի հաճախ է հանդիպում «էլ, այլևս» իմաստով (Հ. 1-ին, էջ 106, 119) և այլն։

Հանդիպում են որոշ բառերի բարբառային ձևերի գործածություններ, ինչպես՝ գեղ «գյուղ» (Հ. 2-րդ, էջ 75), եղ «յուղ» (Հ. 2-րդ, էջ 191), կարմունջ (Հ. 1-ին, էջ 279), դեհ «վողմ» (Հ. 1-ին, էջ 285), փրթուած «փըլված, խանդակ» (Հ. 1-ին, էջ 208), մատակ «ջրավազան, մայր առու» (Հ. 1-ին, էջ 302, 309), միհ «մեկ» (Հ. 2-րդ, էջ 165) և այլն։

Նկատելի կշիռ ունեն օտար բառերը, որոնց մեջ քանակական առումով առաջին տեղում են հունական փոխառությունները, ինչպես՝ աղաբողոն[2], անագաւոս, արհեպիսկոպոս, դիակոն, եպիսկոպոս, եմիփորոն, զատախ, էգոնոմոս, ընդիմտիրոն (ընդիկտիոն), կաթողիկոս, կատեպան, կաւն (կօն), կենեաւ, կղերիկոս, հեննեկտիկոն, հիւպատոս, հոոգի, մարտիրոդոգ, մեսեղի, մետրոպոլիտ, մուճի, նափտոս, ողոգոմէն, ողոմպիադ, ուրար (ն), պատրիարք, պենտակոստէ, պերեզոտ, պռոտոֆրոնատէս, ռետին սեղէն, սիգէլ, սիւնեոդոս, ստոդոգի, տրապեզ, փակեղն, փսաղտ (փսալա), քարտէս, քոռեպիսկոպոս։ Սրանք գերազանցապես վերաբերում են կրոնական ու մշակութային բնագավառներին։ Սրանց մի զգալի մասը դեռ վաղ ժամանակներում հայերենին անցած բառեր են և լայն կիրառություն ունեն հայ մատենագրության մեջ (ինչպես՝ կաթողիկոս, եպիսկոպոս, արքեպիսկոպոս, աղաբողոն և այլն), դրանք սովորական փոխառություններ են, շատերն էլ հազվադեպ են հանդիպում, կան և այնպիսիները, որոնք գալիս են բյուզանդական շրջանի հունաբերենից (ինչպես՝ կատեպան, հոոգի և այլն)։ Այսպիսիների մեծագույն մասը, մերված չլինելով մեր գրական լեզվի բառապաշարին, ներկայանում է որպես օտարաբանություն։ Իհարկե, այստեղ

[1] *ԱՌ = Առձեռն բառարան հայերէն լեզուի, Վենետիկ, 1865։*

[2] *Այստեղ իմաստները չենք նշում, քանի որ դրանք տրված են համապատասխան ծանոթագրություններում։*

բոլորը հունարենի տառացի պատկերով չեն ներկայանում, դրանք մեծ մասամբ հարմարեցված են հայերենի արտասանութ֊յանը (հունարենի համեմատությամբ ձևափոխությունները կարելի է տեսնել սույն գրքին կցված ծանոթագրություններում)։

Այնուհետև քանակական հաջորդականությամբ գալիս են արաբերեն և իրանյան բառերը։ Արաբերենից են՝ թաբուտ (*թափուտ*), խիլայել, խիսար (*խասր*), կլայ (*կալայ*), ճալալ, ճարամ, ճեջուպ (*հեջուբ*), դատի, մէյդան, շեխ (*շիխ*), սճոպար, սուլտան (*սուլթան*), ջավաճիր։ Իրանյաններից են՝ աթաշփարիստ, ամիրսպասալար, բուտփարիստ, դաճեկան, դաւթար, թարխան, խոստակդար, կուղպակ, ճամիմաղ, ճարակաշ, փայիզայ, փարման, փեղամբար։

Ժամանակի ռազմավարչական, քաղաքական և նման կարգի այլ հասկացություններ արտահայտելու համար հեղինակը գործածել է մոնղոլ-թաթարական ու արևելյան թուրքական որոշ բառեր։ Այսպես. եճու (*ինջու*), մանղլայ, նոյին (*մոնղոլերեն*) դուման (*թուման*), եաուղեխ, ղան, պասխաղ (*բասաղա ∠ բաշբող*)— թաթարական, աթաբէկ, բալիշ (*արևելյան թուրքական*)։

Մեր լեզվի միջին շրջանին (*միջին հայերենին*) հատուկ՝ ժամանակի ֆրանսերենից կատարված որոշ փոխառություններ տեղ են գտել նաև Օրբելյանի սույն աշխատության մեջ, ինչպես՝ բրինձ (prince), գոնք (conte), արծուխտ, դամփլու, եոսպիտալու, ալամանու, որոնք վարչաքաղաքական հասկացություններ են արտահայտում։

Այստեղ գտնում ենք նաև վրացերեն մի շարք բառեր՝ կապված հայ-վրացական քաղաքական ու մշակութային հարաբերությունների հետ՝ դպէլ, դէդէպուլ (*դիդեպուլ*), խատ (*խատի*), ծիգնաւպար (*ծիգնօբարի*), ծիրամ ծղաւր (*ծինամձղուարի*), եերիսքաւ (*էրիցաւի*), եղաւնդիդել (*ճղօնդիդէլի*), մամթավարի։

Հիշատակված այս լեզուների բառերը ևս համապատասխանեցված են հայերենի արտասանության յուրահատկություններին, թեև նկատելի է նաև, որ հեղինակը առանձին դեպքերում տուրք է տվել որոշ ազդեցություններիւ Այսպես. նա կարող էր ազատ կերպով գրել պրինց, տամպլու (templier), բայց հետևել է միջինհայերենյան տառադարձությանը։

Վերը մատնացույց արված արաբական, իրանյան, մոնղոլ-թաթարական, ֆրանսերեն ու վրացերեն բառերը հիմնական մասով մնում են որպես օտարաբանություններ, միայն որոշ բառեր մնացել են բարբառներում որպես փոխառություններ (թաբուտ, հալալ, հարամ, մէյդան, շեխ, սուլթան, ջավահիր, դաւթար, թուման և այլն), որոշ բառեր էլ մնում են որպես պատմական հնաբանություններ (կլայ, ամիրսպասալար, դահեկան, նոյին, ղան (*խան*), աթաբէկ և այլն)։

Ուշագրավ են և քերականական իրողությունները։ Նախ նշենք այն երևույթները, որոնք դրսևորված են գրաբարի համակարգային սահմաններում։ Մեծ հաճախականություն ունեն անորոշ դերբայի -իլ մասնիկով ձևի կիրառությունները, ինչպես՝ սխալիլ, գթիլ (*հ. 1-ին, էջ 102*), պատերազմիլ

(*հ. 1-ին, էջ 106*), ճասաճիլ (*հ. 1-ին, էջ 129*), կարճիլ (*հ. 1-ին, էջ 209*), խառճիլ (*հ. 1-ին, էջ 240*), ապստամբիլ (*հ. 1-ին, էջ 241*), ճակատակիլ (*հ. 2-րդ, էջ 102*), ճաղարդիլ, խթիլ (*հ. 2-րդ, էջ 206*) և այլն։ Հայտնի է, որ անորոշ դերբայն այսպիսի ձևավորումով դասական շրջանում գրեթե չկար, այն իրեն որոշակիորեն զգալ տվեց եղդասական շրջանում, իսկ Օրբելյանի ժամանակներում հասավ լայն տարածման։ Հինգերորդ դարում մատենագրության մեջ կարելի էր գտնել բայի անցյալ անկատար ժամանակի -իր կրավորական վերջավորության հատ ու կենտ օրինակներ (դրանք ավելի ընդունված էին հունաբան հայերենում), իսկ այս երկում գրեթե սովորական են, ինչպես՝ ճանաչիւր (*հ. 1-ին, էջ 202*), կոչիւր (*հ. 1-ին, էջ 207, 213, 301*), յորջորջիւր (*հ. 1-ին, էջ 212, 249*) և այլն։ Նշված վերջավորությունը կրավորականության իմաստի արտահայտման համար գրվում է ներգործական բայերի վրա, բայց այստեղ հանդիպում է նաև չեզոք բայի հետ, օրինակ՝ եղանիւր (*հ. 1-ին, էջ 83*)։

Ուշքի են զարնում բայածևերի իմաստային փոփոխությունները։ Դեռ մեր հին գրական լեզվի դասական շրջանից նկատվում էր, որ սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը տեղ-տեղ սկսել էին կիրառվել սոսրադասական եղանակի ձևերի իմաստներով։ Հետագա դարերում այդպիսի կիրառությունները ծավալվեցին։ Օրբելյանի երկում գրանք ավելի մեծ չափերի են հասնում։ Ահա մի երկու նմուշ. «...եթէ ոչ ճաւանեա... ճաւանեմ» (*հ. 2-րդ, էջ 64*), «...եթէ ոք խորնի կամ մտաբերէ...» (*հ. 2-րդ, էջ 30*), «...եթէ ոք հանդգնի...» (*հ. 2-րդ, էջ 103*)։ Հատկապես անցյալ անկատարի նման կիրառությունների համար տե՛ս *հ. 1-ին, էջ 107—108* և այլն։

Կան խոնարհման տիպերի փոփոխություններ։ Այսպես. խօսեաց ճառս (*հ. 1-ին, էջ 131*), փոխ.՝ խօսեցաւ, իջաւ (*հ. 1-ին, էջ 118, հ. 2-րդ, էջ 134*), փոխ.՝ էջ, ոչ գտաւ զնոսա (*հ. 2-րդ, էջ 131*), փոխ.՝ ոչ եգիտ, տեսաճ (*հ. 2-րդ, էջ 235*), փոխ.՝ տեսին, ճասաւ (*հ. 2-րդ, էջ 222*), փոխ.՝ նեաս, մտաւ (*հ. 2-րդ, էջ 223*), փոխ.՝ եմուտ և այլն։ Եթե սրանք նույնիսկ գրշագրական վրիպումներ լինեն, դարձյալ չեն զրկվում հետաքրքրական լինելուց, որովհետև այլ աղբյուրներից ևս հայտնի է, որ համապատասխան ժամանակներում մեր կենդանի լեզվի մեջ արդեն հաստատվել էին համակարգային նման փոփոխությունները, իսկ այսօր արդեն շատ հաստատուն իրողություններ են։

Աշխատության լեզվում այսպիսիները ընդհանուր համակարգ չեն ներկայացնում, այլ հանդես են գալիս որպես շեղումներ՝ հիմնականի՝ գրաբարյանի հանդեպ, բայց պայմանավորված նոր համակարգի առաջացմամբ։ Թեկուզև ոչ գերիշխող փաստերով նկատելի է համակարգային իրողությունների աշխարհաբարականացման միտում։ Մատնանշենք որոշ հատկանշական երևույթներ։ Հոլովման համակարգում իրենց զգալ են տալիս հոգնակիության աշխարհաբարյան-միջինհայերենյան-բարբառային դրսևորումները։ Գրաբարյան համակարգային է մասնիկի համատարած գործածության պայմաններում տեղ-տեղ երևում է-եր մասնիկը։ Այսպես. գործատեերս (*հ. 1-ին, էջ 270*), գործատեերն (*հ. 2-րդ, էջ 27*), զայդ տեղերդ (*հ. 2-րդ,*

էջ 13), չեներ (հ. 2-րդ, էջ 49), բերդերեն (հ. 2-րդ, էջ 81), վաներ (հ. 2-րդ, էջ 194), վաներեն (հ. 2-րդ, էջ 221) և այլն։ Այսպիսի գործածությամբ փոխվում է բառաձևի տիպաբանական պատկերը. երևան է գալիս կցականությունը, որը որոշակի տարբերություն ունի գոյականների հոգնակի թվի հոլորվման մեջ, որտեղ հոլովական վերջավորությունները հաջորդում են հոգնակիության մասնիկին, ինչպես՝ ոսներին (հ. 2-րդ, էջ 107, 164)՝ տուն+եր+ի+ն, բերդերոյն (հ. 2-րդ, էջ 143)՝ բերդ+եր+ոյ+ս։ Հանդիպում են հավաքականության գաղափար արտահայտող մասնիկների գործածություններ. -աս՝ գեղաս (հ. 1-ին, էջ 285, հ. 2-րդ, էջ 48), առայ՝ գեղառայ (հ. 2-րդ, էջ 72), -առէ՝ գիւղառէ, բերդառէ (հ. 2-րդ, էջ 143), գիւղառէն (հ. 2-րդ, էջ 164), -անի՝ չաղացանով (հ. 1-ին, էջ 251), -այ՝ պառոնայ (հ. 2-րդ, էջ 102) և այլն։

Տարբեր հոլովումների ենթարկվող որոշ բառեր հակում են ցուցաբերում դեպի ի հոլովումը՝ ձորի (հ. 1-ին, էջ 274, 304, 311), փոխ.՝ ձորոյ, բլրին (հ. 1-ին, էջ 122)՝ փոխ. բլրոյն և այլն։ Ինչպես հայտնի է, հետագայում աշխարհաբարում առավել ծավալվեց ի հոլովման ընդհանրացումը։

Պատմական հնահնչաբանական հետաքրքրական իրողություններ կան առանձին հոլովաձևերի կազմության մեջ։ Նկատելի են ներգոյական հոլովի ձևավավորման բավականաչափ փաստեր՝ ի Քաղկեդոնի ժողովումն էր (հ. 1-ին, էջ 164), ի տարումն (հ. 2-րդ, էջ 102), յոսկում (հ. 2-րդ, էջ 47, 181), ի կենցաղումս (հ. 1-ին, էջ 102) և այլն։ Հոլովի ձևավորման հաջորդ քայլը պիտի լիներ նախդրերի անկումը, որը և եղավ աշխարհաբարի մեջ։ Մեր լեզվի պատմությունից հայտնի է, որ այսպիսի կիրառություններով գրաբարում դեռ ավելի վաղ ժամանակներում հանդես էին գալիս որոշ դերաբաններ, ածականներ, գերբայներ, իսկ գոյականները շատ հազվադեպ էին։ Օրբելյանի (այլև ուրիշ հեղինակների) երկը ցույց է տալիս գոյականների ընդգրկումը, որը և ընդհուպ մոտեցնում է հոլովի վերջնական ու հաստատուն ձևավորմանը։

Որոշ հոլովաձևեր ձևոք են բերում ընդհանրացնող հոլովական վերջավորություններ։ Այսպես. գործիականի համար պարզորոշ զգացվում է -ով ձևույթի ընդհանրացման միտումը՝ ձեռվոս, ազատովս (հ. 2-րդ, էջ 71), գաւառովն (հ. 2-րդ, էջ 124), սաճմանով (հ. 2-րդ, էջ 163) և այլն։ Բացառականի համար աշխուժանում է -էն ձևույթը՝ ճաւատէն (հ. 2-րդ, էջ 36, 71), մարդէն (հ. 2-րդ, էջ 36)։ Ըստ գրաբարյան օրենքի այս բառերը բացառականում չէին կարող հոլովակերտ մասնիկ առանալ, նրանք կունենային ո հոլովիչը (ի ճաւատոյ, ի մարդոյ)։ Հոլովակերտի հետ ն հոդի ձուլումը խիստ ցայտուն է ճազարէն ճազար արտահայտության մեջ (հ. 1-ին, էջ 265)։ Բացառականի «աշխարհաբարացմանը» նպաստում է և ի նախդրի անկումը։

Հոլովաձևերի փոփոխությունների մեջ ուշագրավ է նաև ի հոլովակերտի բարացումը, ինչպես՝ մտանէ ի վաճ (հ. 1-ին, էջ 128), դէպ ի վաճճն (հ. 1-ին, էջ 129), զՔնունիի (հ. 1-ին, էջ 274), զիւր կեանճն մի՛ վայելեսցէ, զարդի կեանճն ցաւագին կատարեսցէ (հ. 2-րդ, էջ 70), դնեն... ապարանճ (հ. 2-րդ, էջ 82), փոխ.՝ ի վանս, դէպ ի վանսն, զՔնունիս,

կեանսն, ապարանս։ Դժվար չէ նկատել, որ բերված օրինակները անեզական բառեր են, և հոլովաձևի քարացումն սկսվում է հենց այդպիսի բառերից։ Բայց չի կարելի չնկատել նաև, որ երևույթը վերաբերում է ընդհանրապես ի մասնիկի քարացմանը։ Դա ցույց են տալիս նաև այնպիսի բառերի գործածությունները, որոնք անեզական չեն, ինչպես՝ զբերդի (հ. 1-ին, էջ 218), զարզարեաց զեկեղեցիս (հ. 2-րդ, էջ 90)։ Ինչպես քիչ հետո կտեսնենք, ի-ի քարացումն ազդում է նաև նախադասության կառուցվածքի վրա։

Վերը բայական համակարգի որոշ իրողությունների մասին խոսեցինք. այստեղ չենք ուզում աչքաթող անել մի քանի հետաքրքրական երևույթներ ևս։ Օրբելյանի երկում գտնում ենք եմ բայի եղակի 3-րդ դեմքի բարբառային ա ձևը՝ «մայր անդ այ, մայր անդ այ» (հ. 1-ին, էջ 112). աճդ այ նշ. «այնտեղ է»։ Կան հարակատար դերբայով և օժանդակ բայով ձևավորված ժամանակաձևերի օրինակներ, որոնք հատուկ են բարբառներին ու աշխարհաբարին, ինչպես՝ գրած են (հ. 1-ին, էջ 251, 260), ճափշտաւկած էր, ճաստատած էին (հ. 2-րդ, էջ 72) և այլն։ Սրանք, իհարկե, չեն մտնում հեղինակային լեզվի բայական հարացույցի մեջ, բայց կարևոր են աշխարհաբարի պատմության և պատմական բարբառագիտության հայեցակետից։

Մի երկու տեղ հանդիպում են միջին հայերենին հատուկ վերլուծական կազմություններ՝ կազմված կամել սպասարկու բայի և անորոշ դերբայի զուգակցությամբ, որտեղ խոնարհվում է կամել բայը, իսկ անորոշ դերբայը մնում է անփոփոխ։ Այսպես. «կամէր զոգին առնակել» (հ. 1-ին, էջ 130), «կամէր մնալ թագաւորութիւն նոցա անժառանգ» (հ. 2-րդ, էջ 62)։ Այսպիսի զուգակցությամբ անորոշ դերբայը դիմավոր բայի արժեք է ստանում, քանի որ նրա խոնարհման կարգերն արտահայտվում են հարադրվող սպասարկու բայի օգնությամբ։

Հարկ ենք համարում կանգ առնել նաև շարահյուսական որոշ իրողությունների վրա, որոնք կարևոր են երկի լեզվի յուրահատկությունների բնութագրման փոքրիշատե ամբողջականության համար։ Ընդհանուր առմամբ այս երկի լեզվի շարահյուսությունը կանոնական է և պահպանում է գրաբարի շարահյուսական կառուցվածքի ավանդական օրենքները։ Բայց նկատելի են նաև որոշ յուրահատկություններ, որոնց հաշվառումը կարևոր է մեր գրական լեզվի կառուցվածքի պատմական փոփոխությունների ուսումնասիրման համար։ Այստեղ հատկապես նկատի ունենք նախադասության անդամների շարադասությանը, համաձայնությանը, ինչպես և խնդրառությանը վերաբերող առանձին երևույթներ։ Հատկացուցչի և հատկացյալի շարադասության մեջ տեղ-տեղ միտում է նկատվում դեպի աշխարհաբարյան-ժողովրդական կառուցվածքը, ինչպես՝ իմ սրտի սիրով (հ. 2-րդ, էջ 38), վասակայ մանու (հ. 1-ին, էջ 101), Երիցակայ ձեռամբ (հ. 1-ին, էջ 117) և այլն։ Այսպես էլ (ի) վերայ կապի հոլովառության դեպքում՝ որոց վերայ (հ. 1-ին, էջ 111)։ Գրաբարում ենթակայական դերբայի խնդիրը սովորաբար հատկացուցչի ձևով (առարկայական սեռականով) է արտահայտվում, իսկ այստեղ հանդիպում է հայցական հոլովով կիրառության դեպք՝ փրկողին զիս (հ. 1-ին, էջ 209)։ Սովորականը կլիներ փրկողին իմ։ Իսկ նշված

կիրառությունը ներգործական սեռի ենթակայական դերբայի մոտ օրենք դարձավ աշխարհաբար գրական լեզվի համար։

Զգալի են ենթակայի և ստորոգյալի թվային անհամաձայնության դեպքերը։ Օրինակներ. «նշխարք... մնաց» (հ. 1-ին, էջ 83), «էր վանքն այն տեղի» (հ. 1-ին, էջ 117), «խնամք... ճեռացեալ էր» (հ 1-ին, էջ 230) և այլն։ Այսպիսի անհամաձայնությունը, անշուշտ, կապված է f հոգնակիական մասնիկի քարացման հետ, որը, ինչպես նշել ենք, սկսվել է անեզական բառերում (այստեղ՝ վանք), ապա տարածվել նաև այլ կարգի բառերի վրա (այստեղ՝ խնամ, նշխար)։ Այժմ արդեն ավելի որոշակի վանք, խնամք բառերում f-ն ածանցի դեր ունի, պարզ է, որ ենթակա դառնալիս պիտի ունենան եզակի թվով ստորոգյալ, իսկ նշխար բառն առանց այդպիսի ածանցի է։ Բոլորն էլ հոգնակի թվով ստորոգյալ կարող են ունենալ հոգնակի թվով գործածվելիս (վանքեր, խնամքներ, նշխարներ)։

Շարադրանքի ոճը միապաղաղ չէ։ Ըստ հաղորդվող նյութի և ըստ հեղինակի ցուցաբերած վերաբերմունքի՝ այն փոխվում է։ Վիպական հատվածները, ավանդություններն ու զրույցները շարադրելիս հեղինակը կիրառում է աշխույժ և թեթև ոճ, ինչպես այդ տեսնում ենք Տիրոտի արկածներին (գլ. ԺՆ), Դյուտ կրոնավորի գործողություններին (գլ. ԻԱ), Շահանդուխտ օրիորդին (գլ. ԼԶ—36-րդ) վերաբերող և այլ հատվածներում։ Դատողություններ անելիս, դավանաբանական խնդիրների շուրջը խորհելիս հեղինակը ծանրախոհ է, ոճը՝ ծանր, բայց հաճախ հանդիսավոր ու կրքոտությամբ արտահայտված (հմմտ. գլ. Ա—1-ին, ԿՀ—68-րդ, ԿԹ—69-րդ և այլն)։ Բնութագրումների մեջ երբեմն դիմում է համեմատություններ՝ խոսքը պատկերավոր, բնորոշ ու առարկայական դարձնելու նպատակով։ Հիշենք օրինակներ. պատմելով Տաթևի վրա իամայելացիների կատարած հարձակման մասին՝ հեղինակը թշնամուն համեմատում է սաստիկ կրակի հետ. «Եւ յարուցեալ անցին ընդ Երասխ և զանխնդաբար եկեալ հասին հանկարծակի ի վերայ սրբոյ ուխտին, և իբր զհուր սաստիկ հեղան ի մէջ վանիցն...» (գլ. ՇԸ—58-րդ)։ կամ՝ Մրվանի արշավանքի մասին սկսում է պատմել հետևյալ պատկերով. «...նլանէ անիծեալն և աշխարհաւերն Մրվան բազում զօրօք Տաճկաց ի Հայս. և իբրև հուր սաստիկ այրեաց և հրդեհեաց զգեղեցկութիւն աշխարհիս...» (գլ. ԼԹ—33-րդ)։ կամ՝ «...Տեառն Սմբատայ, եկեալ դարձոյց զմեզ այսրէն. և ըստ քաջ սրտին և մեծայոյս հաւատոյն, իբրև զառիւծ մրմնջեալ ի վերայ յարացն՝ ցան և ցիր կացոյց զամենեսեան...» (գլ. ԽԱ) և այլն։ Բնութագրումների մեջ անմիջական է. հաճախ բնորոշ որոշիչներով կամ մակդիրներով իր վերաբերմունքն է արտահայտում այս կամ այն գործչի, երևույթի և այլնի նկատմամբ, ինչպես՝ Տարսայիճի մասին ասում է. «Մեծափառ իշխան, առաջնորդ վսեմական և աշխարհադէտ տանցս Տաթևոյ և Նորավանից» (գլ. ՀԱ)։ Այստեղ միաժամանակ բնութագրվում են Սյունիքի հոգևոր երկու կենտրոնները։ Արաբ ոստիկան Յուսուֆը բնորոշվում է իբրև «չարագոյն», իսկ Նսրը՝ «կրկին չար և շնաբարոյ քան զՅուսուփ» (գլ. ԼՀ) և այլն։

Օրբելյանն անսահման սիրով ու ջերմությամբ է խոսում իր համակրած գործիչների, նողկանքով, անեծքով ու ցասումով՝ թշնամիների ու գաղափա-

րական հակառակորդների մասին։ Տեղ-տեղ զգացվում է նաև նրա սրտի պայքարությունը։ Հիշենք, օրինակ, թե ինչպիսի գորովանքով ու անհուն թախիծով է խոսում իր վաղամեռիկ եղբայր Փախրադուլայի վախճանի և դրանով իրեն համակած մեծ վշտի մասին. «Եւ արդ ասասանօր, ո՛վ եղբարք, յիշեմ զխոցուած լերդի իմոյ, զի սակաւ մի յառաջ քան զզծագրութիւն տապս հասաւ մեզ սուգ անվերանալի. զի կրտսեր և սիրելի եղբայրն իմ՝ Փախրադուլայն ի զարդ և ի գեղ մանկական հասակի՝ մինչ տէգ մօրուացն փաղփաղեալ լինէր թխատիպ տեսակաւ շուրջ բոլորեալ զպատշաճագեղ ծնօտիւք՝ և սիրտ նորա զուարճ խնդամտական խորհրդօք ի վայելս քաղցրաբոյս կենցաղոյս, և կամք նորա ի վազս և ի թիռս իշխանաշուք փառաց՝ հանկարծակի հասեալ օրհասն կենաց՝ խլեաց զբոյսն քաջուղէշ և խլեաց զսունկն ծաղկափթիթ եբարձ տարաժամ զբաղձալին ինձ...» (գլ. ՀԱ)։ Դեռահաս պատանին համալրված է բոյս քաջուղէշ, տունկ ծաղկափթիթ, որը հեռանալով աշխարհից անհուն մորմոքով է լցրել եղբոր սիրտը։ Այս տողերը զուրկ չեն և գեղարվեստական արժեքից։

Հեղինակը վաղուց անցած-գնացած դեպքերի մասին տեղ-տեղ պատմում է աշխույժ ու պատկերավոր խոսքով՝ ստեղծելով ականատեսի տպավորություն, որով թվում է, թե դեպքերին մասնակից է ոչ միայն ինքը՝ հեղինակը, այլև ընթերցողը։ Ահա մի օրինակ. «...Տեսեալ զայն անպարտելի ախոյեանն քաջն Լիպարիտ՝ զօրացոյց զգունդն իւր... և այնպես զինեալ զինեաւք՝ հեծեալ ի տաճիկ երիվարն, և ընկենոյր զոսկեկնար վահանն ի թիկունսն, և զճօճ նիզակիկն յահեակ բազուկն, և զլայն պողովատիկ շիմշիրն երկբերանի ի յաջ ձեռինն և զվաղրն ահագին ի ներքոյ բարձիցն իբր զուռն դարբնաց և կամ զսակր կոցաւոր քարահատաց՝ անցեալ ի մէջ ռազմաւոր հանդիսին արշաւէր սիգալով յայսկոյս և յայնկոյս։ Եւ յոսկեկուռ զրահէն և ի սաղաւարտէն նշոյլք հատանէին իբր յարեգականէ։

Փչէր, գոռայր իբր զառիւծ, խնդրէր ի նոցանէ մենամարտիկս և ասէր. «Ես եմ Լիպարիտն Աւիխազաց, եկայք քաջքդ Պարսից և Արեաց և նախամարտեսցուք ընդ միմեանս»։ Եւ թէպէտ բազում անգամ խնդրեաց ոչ ոք իշխեաց ելանել ընդ առաջ նմա. և յոր տեղ ալանայր Լիպարիտն և իբր զարծիւ խոյանայր ի վերայ նոցա. յետս յետս մատչէին՝ զմիմեանս առաքուր կոխոտէին» (գլ. ԿՉ)։

Սա մի հատված է քաջ Լիպարիտի կռվի նկարագրությունից։ Ինչպես հայտնի է, պատմական այս դեպքը տեղի է ունեցել 1049 թվականին, այսինքն՝ պատմիչի ապրած ժամանակից շուրջ երկու հարյուր հիսուն տարի առաջ։ Պարզ է, որ պատմիչը օգտվել է ուրիշ աղբյուրներից, սակայն նյութը վերարտադրել է՝ անցկացնելով իր անհատականության բովով, ձգտել է առարկայական, գունագեղ, պատկերավոր ու հեշտ ընկալելի դարձնել նկարագրությունը, և դա նրան, անշուշտ, հաջողվել է։

Լեզվաոճական այս բնորոշ իրողությունները ավելանալով երկի պատմագիտական ակնհայտ արժեքին, անշուշտ, մեծացնում են նրա մատենագրական նշանակությունը։

Կարևոր ենք համարում այս հատվածի վերջում հիշել մեծ բանասեր Ղ. Ալիշանի տված բնութագրականը. «Ճշմարտութեան հետ, որ պատմու-

թեան կարևորագոյն խնդրելին է, Ստեփանոս ունի չափաւոր մաքուր լեզու, ծանրութիւն և աղնուականութիւն մի՝ պատշաճ իր ցեղին և աստիճանին, հանդերձ համեստութեամբ, որով յայտնէ ոչ ինքն իրեն, այլ իր աշխոյժն մեծութիւնը ցուցանել փափագած։ ... Աւելի ստուգութեան հոգ տարեր է ամենայն ջղիւ աւանդելու՝ քան երկարաբանութեան և տարակուսական բաներ յիշելու...»[1]։

ԲՆԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Ստեփանոս Օրբելյանն իր այս երկը գրել է 1297 թվականին։ Թեև նշվում է նաև 1299 թվականը, սակայն իր խոսքի հեղինակի հաշվումներով և համապատասխան իրողությունների համաժամանակյա դուգադրությամբ հաստատվում է, որ ճիշտը 1297 թվականն է[2]։

Հետաքրքրությունը Օրբելյանի Պատմության նկատմամբ եղել է վաղ ժամանակներից։ Իհարկե, երկի ինքնագիրը չի պահպանվել։ Բայց դարերի ընթացքում կատարվել են ձեռագրական բազմաթիվ ընդօրինակումներ, որոնցից շատ օրինակներ են հասել մեզ։ Թեև պետք է ասել, որ երկի ամբողջական պատճենումները համեմատաբար քիչ են, կան և հատվածներով ու կիսատ ընդօրինակումներ։

Աշխատության նկատմամբ հետաքրքրությունն այնքան մեծ է եղել, որ մինչև տասնիններորդ դարի վերջին տասնամյակներն այն ընդօրինակվել է ձեռագրերով։ Օրինակ, ժամանակագրական կարգով մեզ հայտնի վերջին ընդօրինակումը վերաբերում է 1865 թվականին։ Դա Մաշտոցյան Մատենադարանում կրում է 7503 համարը[3]։ Այդպիսի ընդօրինակում է կատարվել նույնիսկ տպագիր օրինակից[4]։ Ամբողջական բնագրի ձեռագիր օրինակներից լավագույնը 6271 համարը կրողն է, որը խնամքով պահպանվում է Մաշտոցյան Մատենադարանում։ Ձեռագիրը նշված է հայոց ՋԿՒ թվականով (էջ 6 ա, 7 ա,), որը հավասար է ընդհանուր 1513 թվականին։

Ցավոք պետք է նշել, որ մինչև այժմ չի կազմվել այս արժեքավոր երկի համեմատական-գիտական բնագիրը[5]։ Ամբողջական երկն առաջին անգամ հրատարակվել է 1859 թվականին, Փարիզում, 2 հատորով, առաջաբանով և ծանոթագրություններով։ Դա իրագործել է բանասեր Կ. Շահնազարյանցը։ Տպագրությունը զերծ չէ վրիպակներից ու որոշ աղավաղումներից։ Մեկ այլ հրատարակություն իրագործել է նշանավոր հայագետ Մ. Էմինը։ Գիրքը լույս է տեսել Մոսկվայում, 1861 թվականին։ Հրատարակիչը ծանուցում է, որ ձեռքի տակ է ունեցել երկու անթվակիր գրչագիր, որոնցից մեկը՝ Բերիի։ Դրանց հետ նա օգտագործել է նաև փարիզյան հրատարակությունը և դրանց բաղդատությամբ լույս է ընծայել գիրքը։ Տողատակերում նշել է իր կողմից կարևոր համարված որոշ տարընթերցումներ։ Վերջին հրատարակությունը կատարվել է Թիֆլիսում, 1910 թվականին. արտատպվել է փարիզյան հրատարակությունից «Ղուկասյան մատենադարան» շարքով, առանց առաջաբանի և ծանոթագրությունների, սակայն ավելացվել է հատուկ անունների ցանկ։ Այստեղ տպագրական վրիպակներն ավելի շատ են։

Ձեռագիր ընդօրինակումներից կարելի է ենթադրել, որ դեռ մինչտպագրական շրջանից հատուկ վերաբերմունք է եղել երկի ԿԶ (կե) գլխի նկատմամբ, որը կրում է հետևյալ վերնագիրը. «Վասն մեծի նախարարութեանն մամբ, որը կրում է հետևյալ վերնագիրը. Օրբէլեանց, եթէ ուստի էին և որպէս. և վասն գալոյ նոցա յաշխարհս յայս. և վասն բազում բանից և գործոց գրոյցք յոլովք»։ Կան բազմաթիվ ձեռագրեր, որոնք ներկայացնում են երկի այս ամենաընդարձակ գլուխն առանձին, Մաշտոցյան Մատենադարանում պահվող ձեռագրերից այդպես են 6882, 6995, 7084, 8344, 784, 791, 1482, 1535, 1721, 1724, 2560 համարներով նշվածները[1]։

Այս գլուխն իբրև ուրույն գործ նաև տպագրվել է։ Մեր բանասիրությանը հայտնի է, որ այն առաջին անգամ հրատարակվել է 1775 թվականին Մադրասում[2]։ Դրան 1819 թվականին հաջորդել է Ֆրանսիացի հայագետ Սեն Մարտենի հրատարակությունը (որի մասին՝ քիչ հետո)։ Մյուս հրատարակությունը կատարվել է 1858 թվականին, Մոսկվայում։ Գրքույկի վրա կարդում ենք. «Ստեփանոսի արքեպիսկոպոսի Սիւնեաց Պատմութիւն ի վերայ ծագման տոհմին Օրպէլեանց և ի վերայ յարձակման Թաթարաց ի Հայս, յօգուտ ազգիս ի լոյս ածեալ յՈսկանայ Տ. Գեորգեան Յովհաննիսեանց, ի Մոսկուա, 1858»։ Այնուհետև տպագրվել է ամբողջական գործի մեջ։

Իհարկե, սա Օրբելյանի Պատմության բաղկացուցիչ մասն է։ Իսկ նրա հանդեպ ձեռագրական առանձին ընդօրինակություններով և ասյա տպագրություններով (ու թարգմանություններով) հանդես բերված վերաբերմունքը դժվար չէ բացատրել։ Դա, կարելի է ասել, երկի ամենակարևոր մասն է, այնտեղ պատմվում է ոչ միայն Օրբելյան նախարարական տան ծագման, այլև սելջուկ-թուրքական, Ջալալեդդինի, մոնղոլ-թաթարական արշավանքների ու տիրապետությունների, հայ-վրացական հարաբերությունների և այլ իրադարձությունների մասին, որոնց մի զգալի մասը հեղինակը ներկայացնում է որպես ականատես։

Օրբելյանի երկը նաև արժանացել է թարգմանությունների ու այդպիսով ավելի լայն ճանաչում ստացել։ Նախ կատարվել են հատվածական թարգ-

---

[1] Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, մասն Ա, էջ 117։

[2] Տե՛ս այստեղ՝ մեր 1647-րդ, 1648-րդ և դրանց նախորդող մի քանի ծանոթագրությունները։

[3] Տե՛ս «Ցուցակ ձեռագրաց», հ. Բ., Երևան, 1970, էջ 547։

[4] Համմտ. № 4442 ձեռագիր ժողովածուն, որը վերաբերում է 1870—1891 թվականներին։ Տե՛ս «Ցուցակ ձեռագրաց», հ. Ա, Երևան, 1965, էջ 1214։

[5] Միայն լսել ենք, որ Թբիլիսիում այդ ուղղությամբ աշխատանք է տարվում։

[1] Համմտ. «Ցուցակ ձեռագրաց», Բ, էջ 413, 437, 456—457, 725, հ. Ա, էջ 409—410, 411, 562, 577—578, 619—620, 826։

[2] Տե՛ս Գ. Զարբհանալեան, «Պատմութիւն հայերէն դպրութեան, Բ, Նոր մատենագրութիւն», Վենետիկ, 1905, էջ 105։

մանութիւններ։ Առաջին թարգմանութիւնը լատիներէնն է։ Հայագետ Լա Կրոզը ԿԶ գլխից ընտրել է հատվածներ և թարգմանել լատիներէն լեզվով։ Թարգմանութիւնը լույս է տեսել 1717 թվականին, Բեռլինում. կրում է հետևյալ վերնագիրը՝ «Historia Satraparum Orbelensium in majore Armenia»։ Նույնը 1810 թվականին վերահրատարակվել է Պետերբուրգում՝ «Excerpta ex libri Stephani, Synensis Archiepiscopi, scripto sub finem saeculi XIII» վերնագրով[1]։

Հաջորդը հայագետ Սեն-Մարտենի ֆրանսերեն թարգմանութիւնն է։ Գիտնականը Օրբելյանի երկի ԿԶ գլխին է նվիրել իր նշանավոր «Mémoires historiques et géographiques sur l'Arménie» գործի երկրորդ հատորը (1819, Փարիզ)։ Սկզբից տրվում է Ս. Օրբելյանի կենսագրութիւնը՝ վերնագրված «De la vie et des écrits d'étrenne Orbélian archeveque de Siounic» (էջ 1—14)։ Սրան հաջորդում է ուսումնասիրութիւնը՝ Dissertation sur l'origine de la famille des Orpelians...» վերնագրով (էջ 17—55)։ Այնուհետև գալիս է Օրբելյանի երկի ԿԶ գլուխը՝ գրաբար բնագիրը և ֆրանսերեն զուգադիր թարգմանութիւնը (էջ 56—175)։ Բնագիրը վերնագրված է «Պատմութիւն Օրբէլեանց», որին համապատասխան և ֆրանսերենը՝ «Histoire des Orpelians»։ Թարգմանիչը երկի այդ գլուխը բաժանել է 9 գլուխների և վերնագրել առանձին-առանձին՝ թե՛ հայերեն, թե՛ ֆրանսերեն։ Ապա ըստ գլուխների տվել է ընդարձակ ծանոթագրութիւններ՝ «Notes sur l'histoire des Orpelians» (էջ 176—300)։

Բանասեր թարգմանիչը ձգտել է հարազատ մնալ բնագրին և միաժամանակ տվել է կարևոր մեկնաբանութիւններ և մեր բանասիրության պատմութեան մեջ մտել է որպես Օրբելյանի գործի գիտական ուսումնասիրութեան սկզբնավորողներից մեկը։

Երկի առաջին ամբողջական թարգմանութիւնը կատարել է հայտնի արեվելագետ Մ. Բրոսսեն՝ ֆրանսերեն լեզվով։ Գրքի վրա կարդում ենք. «Histoire de la Siounie par Stéphannos Orbélian, traduite de l'arménien par M. Brosset, premiér livraison, Histoire de la Siounie, S.-Pétersbourg, 1864»։ Գործը կատարված է Ռուսաստանի կայսերական ակադեմիայի նախաձեռնութեամբ։ Ընդհանուր առմամբ թարգմանութիւնը հաջողված է։ Մեր բանասիրության մեջ համարվել է ընտիր և գովելի թարգմանութիւն[2]։ Այն օժտված է տողատակի բազմաթիվ ծանոթագրութիւններով, որոնք լավ են կողմնորոշում ընթերցողին։ Գիտնական թարգմանիչը գրել է նաև ընդարձակ ուսումնասիրութիւն, որը էապես մի մենագրութիւն է՝ նվիրված Ստեփանոս Օրբելյանի գործի փաստական քննութեանը, բայց հեղինակն այն համեստաբար անվանել է «Ներածութիւն» և հրատարակել որպես երկրորդ մաս (1866 թ.)։ Մ. Բրոսսեի կատարածը նոր շրջան սկզբնավորեց մեր միջնադարյան խոշորագույն պատմագրի ժառանգութեան ուսումնասիրութեան մեջ։ Պատութիւնն ամբողջականութեամբ դուրս եկավ համաշխարհային ասպարեզ։

[1] Տե՛ս Գ. Զարբհանալեան, նշվ. աշխ., էջ 104։

[2] Համմ. Գ. Զարբհանալեան, նշվ. աշխ., էջ 104։

Նյան և ռուսերեն հատվածական թարգմանութիւններ։ Հայտնի արևելագետ-լեզվաբան Քերովբե Պատկանյանը մոնղոլ-թաթարների պատմութեան ուսումնասիրման նպատակով թարգմանել է հայ միջնադարյան պատմագիրների գործերից։ Այդ թվում Ստեփանոս Օրբելյանի երկից ընտրել է դրան վերաբերող հատվածներն ու հրատարակել «История монголов по армянским источникам, ժողովածուի 1-ին պրակում, որը լույս է տեսել Պետերբուրգում, 1873 թվականին։ Թարգմանութիւնն օժտված է համապատասխան ծանոթագրութիւններով և ունի գիտական որոշակի արժեք։

Այնուհետև բանասեր Քուչուկ Հովհաննիսյանը ռուսերեն թարգմանել է Պատմութեան ԿԶ գլուխը ամբողջովին և հրատարակել առանձին գրքով՝ «История князей Орбелян. Извлечение из сочинения Стефана Сюнийского, армянского писателя XIII века. Перевел с армянского Х. Иоаннисов (с примечаниями и объяснениями), Москва, 1883»։ Գիրքն ունի առաջաբան (էջ III—XI) և ծանոթագրութիւնների առանձին բաժին (էջ 51—80)։ Չի կարելի չնկատել կատարածի կարևորութիւնը, սակայն պետք է նշել, որ այս թարգմանութիւնն իր որակով զիջում է Քերովբե Պատկանյանի կատարածին, իսկ ծանոթագրութիւնների մեջ էլ կան որոշ անընդունելի բացատրութիւններ և փաստական անճշտութիւններ։

Այդ գլուխը թարգմանել է նաև Մ. Էմինը, տե՛ս Эмин М. Исследования и статьи по армянской мифологии, археологии, истории и истории литературы, М., 1896, стр. 355—393, մի գլուխ ևս, նույն տեղում, էջ 395—401 (ծանոթագր. խմբագրի)։

Պատմութեան 66-րդ գլուխը թարգմանվել է վրացերեն արդեն XVIII դ.։ Հայտնի է եղել չորս ձեռագիր, հասել է մեզ երեքը։

Երկու ձեռագրի հիման վրա բնագիրը առաջին անգամ հրատարակել է Լ. Մելիքսեթ-Բեգը. տե՛ս Ლ. მელიქსეთ-ბეგი, «ორბელთა ისტორიის» ქართული ვერსია, «საისტორიო მოამბე», თბ. 1962, № 6, § 33—84։ Լ. Մելիքսեթ-Բեգին անհայտ ձեռագիրը, նրա հրատարակած ընագրի համեմատութեամբ լույս է ընծայել հայագիտը ե. ցագարեիշվիլին. տե՛ս ს. ცაგარეიშვილი. სტეფანოს ორბელიანის «ცბოვრება» ორბელიანთაი-ს ძველი ქართული თარგმანები, თბილისი, 1978 (ծանոթագր. խմբագրի)։

Գալով ներկա աշխարհաբար թարգմանութեան հանգամանքներին՝ պետք է խոստովանենք, որ շատ վաղուց, դեռ մեր ուսումնառության տարիներից, զբաղմանքով ու ախտասանքով էինք գործ այս չափազանց արժեքավոր բնագրի թարգմանութեան բացը։ Երջանիկ ենք, որ դրա վավերացումն ի վերջո բաժին ընկավ մեզ։ Այն սիրով հանձն առանք և գլուխ բերեցինք ծանր աշխատանքով ու, մանավանդ, շատ կարևոր ժամանակի ծախսումով։ Հաստուցումը կլինի այն, որ մեր օրերի հետաքրքրասեր ընթերցողը նրանից կօգտվի իրեն հասկանալի լեզվով։

Ասացինք, որ գիտական-համեմատական բնագիրը դեռ չկար։ Թարգմանութեան համար հիմք ենք ընդունել փարիզյան և մոսկովյան հրատարակութիւնները՝ միաժամանակ։ Դժվար էր դրանցից որևէ մեկին առաջնու-

թյուն տալ, քանի որ մեկը մյուսի նկատմամբ ունի և՛ առավելություններ, և՛ թերություններ։ Աշխատել ենք օգտագործել երկուսի առավելություններն էլ՝ փոխադարձաբար թերությունները հարթելով։ Իսկ երբ այդ դեպքերում չի հաջողվել դրական արդյունքի հասնել, հատկապես կասկածելի տեղերի պարզաբանման համար դիմել ենք Մաշտոցյան Մատենադարանի № 6271 ձեռագրին, որը ինստիտուտի տնօրինությունը սիրահոժարությամբ տրամադրել է մեզ։

Ընկալման առումով ընթերցողին դյուրություն ընձեռելու և կողմնորոշելու նպատակով գիրքն օժտել ենք ներածությամբ և ծանոթագրություններով։

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՈՒՄ ԵՐԿԸ

Հայագիտության մեջ արդեն Ստեփանոս Օրբելյանի աշխատությունների շարքն է դասվում նաև մի փոքրիկ ժամանակագրություն, որը մեզ է հասել միակ ձեռագրով։ Գրշագիրը չունի վերնագիր և անթվակիր է։ Համարվում է 14-րդ կամ 15-րդ դարի ընդօրինակություն։ Մի ժամանակ եղել է Կարնո Սանասարյան վարժարանի ձեռագրերի մեջ, հետագայում տեղափոխվել է Էջմիածնի ձեռագրատուն և այժմ գտնվում է Մաշտոցյան Մատենադարանում։ Առաջին անգամ հրատարակվել է 1942 թ. պատմաբան Ա. Գ. Աբրահամյանի կողմից՝ «Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի» վերնագրով[1]։ Բնագիրը, որ ընդամենը 20 էջ է կազմում (էջ 11—31), հաջորդում է կցված «Առաջաբան»-ին։ Այստեղ ուսումնասիրողը համառոտակի խոսում է Ստեփանոս Օրբելյանի գործունեության և մատենագրական ժառանգության մասին, այնուհետև անցնում է ձեռագրի հնագրական նկարագրությանը, հեղինակի հարցին և պատմագիտական նշանակությանը։ Նա նշում է, որ այնտեղ հիշատակված է «Ստեփանոս անուամբ այցելու»[2], բայց դա դեռ բավական չէ հեղինակի ինքնության որոշման համար, քանի որ Օրբելյանի ապրած ժամանակահատվածում ապրել և գործել են նույն Ստեփանոս անունով մի շարք գործիչներ։ Ուստի ապավինում է բնագրային զուգադրումներին և ցույց է տալիս, որ համընկնում են Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» և այս «Ժամանակագրութեան» որոշ հատվածներ[3]։ Պետք է ասել, որ գիտնականի փաստարկումները համոզիչ են։ Մինչ այդ, դեռ ձեռագիր վիճակում, «Ժամանակագրութիւն»-ը Ստեփանոս Օրբելյանի հեղինակած գործ են համարել բանասերներ Ն. Ակինյանը[4], Հ. Քոսյանը[5] և Գ. Հովսեփյանը[6]։

1 Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, հրատարակութեան համար պատրաստեց պատմ. գիտ. թեկնածու Ա. Աբրահամյանը, Երևան, 1942։

2 Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, հրատարակութեան համար պատրաստեց պատմ. գիտ. թեկնածու Ա. Աբրահամյանը, Երևան, 1942, էջ 6։

3 Նույն տեղում, էջ 6։

4 Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1921, էջ 177—178։

5 Տե՛ս նույն տեղում, էջ 173—181։

6 Տե՛ս «Խաղրակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ», մասն 1-ին, Վաղարշապատ, 1928, էջ 8։

Այս «Ժամանակագրութեան» տպագրի քննությամբ հանդես գալով՝ պատմաբաններ Լ. Խաչիկյանը և Վ. Հակոբյանը անդրադարձել են նաև նրա հեղինակային պատկանելությանը և ընդգծել, որ այդ գործի հեղինակը ոչ թե հայտնի պատմագիր Ստեփանոս Օրբելյանն է, այլ այդ ժամանակներում ապրած մեկ ուրիշ Ստեփանոս[1]։

«Ժամանակագրութիւն»-ը երկրորդ անգամ տպագրվել է 1951 թվականին։ Վ. Հակոբյանն այն զետեղել է իր կազմած «Մեր ժամանակագրությունները»-ի 1-ին հատորում (էջ 34—50)։ Իր կարծիքի համաձայն ներածականում ցույց տալով էլի ուրիշ Ստեփանոսների գոյությունը 13-րդ դարի երկրորդ կեսի Արևելյան Հայաստանում, վերստին պնդում է, որ դա Օրբելյանի աշխատությունը չէ։ «Ստեփանոս եպիսկոպոսի Տարեգրությունը (13-րդ դար)» վերնագրումով նկատի է ունեցել ուրիշ Ստեփանոս եպիսկոպոսի, բայց չի փորձել ցույց տալ, թե իր հիշած Ստեփանոսներից ո՛վ էր դա։

Սակայն հրատարակված բնագիրը հայագիտության մեջ շրջանառության դրվեց որպես Ստեփանոս Օրբելյանի աշխատություն։ Բավական է նշել, որ մեծ հայագետներ Հ. Մանանդյանը և Հ. Աճառյանը իրենց աշխատություններում այն անվերապահորեն ընդունել և օգտագործել են որպես Օրբելյանի գործ[2]։

Տարեգրության հեղինակի հարցին անդրադարձումներ եղել են նաև վերջին ժամանակներս։ Վերստին հաստատվել և ընդունվել է, որ հեղինակը Ստեփանոս Օրբելյանն է[3], ևս դա ճիշտ է։

Իր այս փոքրիկ աշխատությամբ պատմագիր-ժամանակագիրը լրացրել և շարունակել է տասներկուերորդ դարի ժամանակագիր Սամվել Անեցու տարեգրությունը։ Լրացնելու համար Օրբելյանը չի վերցրել Սամվել Անեցու աշխատության սկզբնամասը (կամ, ինչպես նկատված է, թերևս ձեռքի տակ ունեցել է այնպիսի ձեռագիր, որն այդ մասը չի ունեցել, թերի է եղել)։ Լրացումներն սկսել է Նժէ (=417+551=968) թվականից՝ «Ի Նժէ թուին շինեցավ Հաղբատ...», և ապա շարունակել է 1193 թվականից։ Հայտնի է, որ Սամվել Անեցու տարեգրությունը, ըստ պահպանվող հնագույն ձեռագրի, վերջանում է 1176 թվականով։ Նշանակում է՝ Ստեփանոս Օրբելյանից առաջ մեկ ուրիշը շարունակել է 17 տարվա իրադարձությունների արձանագրումը, և նրան հաջորդել է մեր պատմիչի շարադրածը։ Այդպիսով «Ժամանակագրութիւն»-ն ավարտվում է 1290 թվականով, պատմիչի հոր՝ Տարսայիճի մահվան արձանագրումով։ Վերջին նախադասությունն է. «Իսկ ՉԼԹ [=1290]

1 Տե՛ս «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների, 1949, № 2, էջ 77—87։

2 Հմմտ, Հ. Մանանդյան, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. 3-րդ, Երևան, 1952, էջ 188, 194, 204 և այլն, Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հ. 4-րդ, Երևան, 1948, էջ 632 և այլն։

3 Հմմտ. Է. Մ. Բաղդասարյան, «13-րդ դարի մի ժամանակագրության հեղինակի մասին». «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 2, էջ 211..., Լ. Հ. Բարայան, «Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության», Երևան, 1981, էջ 334, ծան. 175։

թուականին մեռաւ Տարսայիճն, եղբայր Սմպատայ, որդին մեծի Լիպարիթի՝ ի ցեղէն Աւրբէլեանց և եղաւ ընդ հարս իւր ի Նորավանս ի Վայոց ձոր»[1]։

«Ժամանակագրութիւն»-ը թեև խիստ համառոտ է և իրեն շարունակություն ընդգրկում է մոտավորապես 100 տարվա ժամանակաշրջան, գիտական կարևորություն ունի։ Նախ լրացուցիչ կերպով հաստատում է պատմական այն իրողությունները, որոնք զուգահեռաբար ներկայացվում են պատմիչի մեծ երկով և ապա՝ տալիս է նաև այնպիսի մանրամասնություններ, որոնք այլ աղբյուրներում պակասում են։ Այդ տեսակետից հատկապես բնորոշ են տասներեքերորդ դարի 80-ական թվականներին տեղի ունեցած մոնղոլ-թաթարական իշխողների գահակալական հակամարտություններին վերաբերող որոշ տվյալներ, որոնք հեղինակը նշել է որպես ականատես։

Այս գործը յուրովսանն լրացնում է պատմիչի պատմագիտական ժառանգության պատկերը, որն այսօր շատ քանի է հայագիտության համար։

Ա. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

4 հունիսի 1984 թ.

---

[1] ԺամանակագրութիւնՍտեփաննոսի Օրբէլեանի, էջ 31։

ՍՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ[1]

Մեր Սիսական տան հաղցրալուր պատմությունների շարադրանքը՝ նախնիների հիշատակարանը, հրաշակերտ հորինվածքով ճարմարեցված ևվաստ ու ապիկար ճոգի Ստեփանոսի՝ մեծափառ իշխանաց իշխան Տարսայիճի որդու, Սյունյաց եպիսկոպոսի և նախաթոռ մեառոպոլիտի կողմից։ Սա հենց այն է, որ «Հիշատակաց մատյան»[2] է կոչվում։

Ա

ԱՅՍ ԳՐՔԻ ՆԱԽԱԲԱՆԸ ԵՎ [ՀՈՐԻՆՄԱՆ] ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ՝ ԱՌԱՆՁՆԱԲԱՐ

Բոլոր գոյացությունների սկիզբն աստված է, բոլոր բարիքների սկիզբը՝ սերը, բոլոր շնորհների սկիզբը՝ խոհականությունը։

Աստված է բոլոր գոյացությունների սկիզբը, որովհետև բոլոր տեսանելի և անտեսանելի արարածները[3] նրանից սկզբնավորվեցին՝ իրենց համապատասխան ձևերով, կերպերով ու որակներով։

Սերն է բարիքների սկիզբը, որովհետև նրանից են ծնվում տարբեր տեսակի բոլոր բարությունները՝ աստծու, հրեշտակների և մարդկանց մեջ։ Աստծու մեջ, որովհետև նա սիրուց մղվելով գոյացրեց այս բոլոր գոյացությունները, նույնպես և սիրուց դրդված, իր պատկերի համար Որդուն չխնայեց Հայրն, Որդին չխնայեց իր անձը, Հոգին չխնայեց միշտ բաշխվել մարդկանց։— Հրեշտակների մեջ, որովհետև խո-

նարհ կամքով, անխզելի սիրով միշտ հարած են աստծուն և շարունակ հոգ են տանում մարդկանց համար՝ համագոյակից ու ծառայակից լինելով մեզ։— Մարդկանց մեջ, որովհետև [սրանք] սիրուց հղանալով առաջ են բերում հոգեկան ու մարմնական բոլոր բարիքները. հոգեկանը այնքան է, որ արքայության համար [մարդիկ] իրենց մահվան են մատնում և զանազան տանջանքների ու սաստիկ ճգնություններ [ենթարկվում]՝ երկար ժամանակով. իսկ մարմնականը, այսինքն՝ աշխարհիկը, այնքան է, որ խելացնորվում էլ են և անկարելի բաների ձեռք զարկում։

Խոհականությունն է շնորհների սկիզբը, որովհետև մարդկանց մեջ եղող բոլոր շնորհները՝ հոգեկան և մարմնական, [լինեն] խոսքով թե գործով, նախապես մտածվում են խոհականությամբ։ Բազում մտածումներից և լավի ու վատթարի, օգտակարի և անօգուտի զանազանումից հետո են առաջանում միտքն ու բանական խոսքը և կամ կատարյալ արվեստը՝ ընտիր ծնող խոհականության գեղեցիկ ծնունդները։

Եվ այսպիսով աստված ստեղծել է մարդուն՝ ամեն ինչով նման իրեն, ու նրա մեջ դրել այս երեք բաները՝ արարչությունը, սերը և խոհականությունը, այսինքն՝ բանականությունը, որոնցով [մարդը] կարողանում է ըստ ամենայնի նմանվել աստծուն։ [Դրել է] արարչությունը, որով [մարդը] արարչակից է լինում ստեղծողին.— սերը, որով միշտ տենչում է ցանկալիին և շարունակ ձգտում է հասնել ու վայելել այն.— խոհականությունը, որով տարբերվում է անբանականներից և կարողանում է խորհել ու զանազանել պիտանին ու անպետքը, վնասակարն ու օգտակարը, ուսմամբ և ջանասիրությամբ հասնել կատարյալ հասունության։ Ահա թե ինչպե՛ս է արարչակից լինում. ուսուցիչները ուսմամբ տհասներին կատարյալ այր են դարձնում, քահանաները՝ ախտածիններին՝ անախտ, մարդկանց՝ աստված։ Իսկ արհեստավորները անմշակ բաներից հարմար ու պիտանի առարկաներ են ստեղծում. ինչպես՝ հյուսները՝ ծառերից սեղան ու աթոռ, կարողները՝ մորթիներից կոշիկ ու մուշտակ, գարբինները՝ քարերից երկաթ [են հանում] և երկաթից սուսեր ու այլ գործիքներ [պատրաստում]։ Ահա սրանցով մարդիկ նմանվում են աստծուն և արարչակից կոչվում։

Եվ այս պատճառով մարդը չի կարողանում իր մարմնի տարողության մեջ այս երեք շնորհները թաքցնել ու անգործածական պահել, այլ միշտ եռում-փոթորկվում է ոստոստելով և ջանում է այդ ամենը գործածության մեջ դնել, որովհետև անընդհատ դեպի վեր է պահում ձգտումը և սաստիկ փափագը՝ իր նմանների հանդեպ։ Եվ սիրուց հղացած մարդը այս ձևով է գործում թե՛ բարին, թե՛ չարը։ Սաղմն ընդունելով իր մտքի արգանդում՝ միշտ մտածում է բանականությամբ անհրաժեշտ միջոցներ գտնել, ջանում է ծնել ու գլուխ բերել բաղձալին և ապա առաջ բերելով կատարում է սիրով հղացածն ու բանականությամբ հարմարեցրածը։ Այդպիսով լինում է այդ բանի արարիչը։ Ես էլ՝ մարդկանցից մեկը, բոլորից վատթարագույնը և եկեղեցու ծնունդների մեջ վերջինը, լի անկարգությամբ, ամեն տեսակի պիտանի ու մնայուն գործերում ծույլ, զրկված լույսից, ապականված շնորհներից, չկարողացա դիմանալ մեր էության մեջ եղող աստվածատուր պարգևներից, այլ վաղուց և երկար ժամանակ սիրուց սաղմ ստացած լինելով՝ ալեկոծվում էի սաստիկ բաղձանքով, խորհում, մտատանջվում, փնտրում էի մի փոքր բան իբրև լուման նվիրաբերել մեր փառահեղ ու աստվածաբնակ Սյունիքի[4] սուրբ եկեղեցիներին, այն է՝ ըստ իմ կարողության՝ շարադրմամբ մատնացույց անել Սյունիքի նախարարության հաջորդական սերնդափոխությունը, բարձր իշխանության մեծ նահապետությունը և այստեղի վսեմ ու աստվածամեծար հայրապետական աթոռի գահակալությունը։ Եվ այս [արեցի] ո՛չ պատահականորեն, այլ Հոգու ներգործությամբ, որովհետև վերջին ժամանակներս, այս վատթարացած օրերում տեսանք[5] ամբողջովին վերացած և բոլորովին ջնջված իշխանության այս գեղեցիկ ու մեծափառ աթոռների հիշատակը. աշխարհիկը բնավ վերջացած ու մոռացության տրված, հոգևորն էլ՝ նրանից ոչ պակաս, վերջանալուն մոտ։

Բազում չարչարանքներով որոնելով՝ չգտանք սրանց հիշատակը նախնիների կողմից գրի առնված և թողնված հետագա սերունդներին որպես գովելի հուշարձան։ Թե գրի չէր առնվել և կամ թե բազմաթիվ ավերումներից ու ավազակային հարձակումներից կորել էր՝ չգիտեմ։ Դրա համար էլ մենք չկամեցանք անուշադրության արժանացնել, անգիտության

խավարի տակ թողնել ու կորստի մատնել մեր այս իշխանությունների որպիսությունը և իշխանների ու հայրապետների հոգևոր ու աշխարհիկ գործերին վերաբերող պիտանի և գովելի զանազան զրույցներ. և սա երկու պատճառով. մեկը՝ որ [առանց հիշատակման] չկորչի նախնիների քաջագործությունը, մյուսն էլ՝ որ բնաւ չջնջվեն ու հետագա սերունդների համար անգիտության չմատնվեն նախնիների հիշատակն ու մեր եկեղեցիների ժառանգությունը. նաև չչփոթվի այս իշխանության սահմանը, չխանգարվի ու խախտվի և պառակտվի զանազան բարբաջանքներով, ինչպես որ եղավ շատ անգամ. և որպեսզի ճանաչեն Սյունյաց իշխանների ու հայրապետների աստիճանն ու դիրքը և նրանց ամբողջ կարգ ու կանոնը, սովորությունները, որ [երկիրը] չոտնահարվի ու կողոպտվի հափշտակիչներից և դիվաբախ մարդկանցից։ Բայց թեպետ սա ինձ համար ցանկալի է, սակայն անփորձ ուղեղիս սաստիկ երկյուղով ահաբեկված իմ միտքը ինձ շեղում է այս ձեռնարկումներից։ Դրա համար սատար, նեցուկ ու օգնական ընդունելով նախնի սուրբ հայրապետների և ձեր իսկ՝ ընթերցողներիդ աղոթքները, նաև մեր մեծ ու առաքելական եկեղեցու և աստվածագումար սրբերի շնորհները՝ մտքիս գարշապարը կկապեմ անկասկածելի հույսին ու անկեղծ սիրուն և ուժ ստացած աստծուց, որը բանով ստեղծեց այս բոլոր գոյացությունները, խոսքիս ընթացքը կուղղեմ չտրորված այս ճանապարհի անհայտ շավիղների վրա։ Հին և նոր զրույցների ամփոփումով սկսելով այս ընդարձակ պատմության շարադրումը՝ նրա ավարտն ու հանգրվանը ապավինում եմ հմուտ և անխոտոր նավապետին։ Եվ այսպես, ո՛վ եղբայրներ, շատ տարիներ ի վեր փափագելով իմ այս խնդրի իրագործմանը, որի պատճառը նախապես հայտնեցի, միշտ բաղձանքիս տապից հարկադրված՝ շատ հետախուզումներ ու քննություններ կատարեցի հեռու ու մոտ աշխարհներում, վանքերում ու դիվաններում, ինչպես նաև հին պատմություններին տեղյակ ու գիտուն [մարդկանց] մոտ, իրազեկ եղա, բայց չգտա հատկապես այս աշխարհի[6] համար հիշատակագրված պատմություններ և կամ իրողությունների տեղեկություններ։

Ապա ուսումնասիրելով հայոց բոլոր պատմագիրներին՝ ինչ որ գտանք, հավաքեցինք նրանցից ամենայն ճշտությամբ, մի

փոքր էլ Սյունյաց եպիսկոպոս Պետրոսի[7] ճառերից՝ Սյունյաց տեր Բաբիկի մասին, այլև նյութեր Հայաստանի թագավորների ու Սյունիքի իշխանների գրություններից և հայոց կաթողիկոսներից ու Սյունյաց եպիսկոպոսներից՝ վաղ ժամանակներից մնացած քարանձավի ամուր տեղերում, Տաթևի հայրապետանոցի[8] սուրբ միաբանությունում, եկեղեցիների արձանագրություններից ու գրքերի հիշատակարաններից։ Այս ու այնտեղ գտնելով իշխանների և եպիսկոպոսների, զանազան գործերի ու անցքերի, կառուցումների ու ավերումների օրերի թիվը և ժամանակների թվականը, ինչպես նաև սուրբ աթոռիս կարգին, սովորություններին ու դիրքին, սուրբ եկեղեցիներին առատորեն տրված պարգևներին վերաբերող սակավ տեղեկություններ՝ ինչ որ մեր կողմից հնարավոր ու կարելի էր՝ հավաքելով և թանաքով [շարադրելով] տեղադրեցինք մի ամփոփագրքում։ Եվ հանուն ստուգության առավել շափով տառապեցինք՝ [պատմությունս] սկսելով առաջին նահապետ Սիսակից[9] մինչև նահապետների վերացումը և Սյունյաց առաջին եպիսկոպոս Գրիգորից մինչև մեր թշվառ ժամանակը։ Եվ սա դու ընդունիր սիրով ու գրածներիս հավատա ամենայն ողջամտությամբ. շնորհակալ եղիր Հոգուց և մեզ անմեղադրելի թող։

Բ

ՅԱԳՄԱՆ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ. ԹԵ ՈՐՏԵՂԻՑ ՍԵՐՎԵՑ ՍԻՍԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏՈՀՄԸ՝ ԱԴԱՄԻՑ ՀԵՏՈ։

Աստվածապատվեր հրամանով կաշկանդված պրպտող ժամանակագիրների [համար] անվիճելի օրենքով, որ ասում է՝ «ձեզ չի վերաբերում իմանալ ժամերն ու ժամանակները, որ Հայրը սահմանեց իր իշխանության մեջ»*, միայն հետագա [մարդկանց] անուններին ու ծննդաբանությանը հետամուտ կլինենք ստույգ շարադրանքով՝ մարդկության սկզբնավորությունից մինչև Սիսական տոհմի նահապետության սկիզբը։ Եվ

* Գործք, Ա, 7։

սա նրա համար, որ չկարծես, թե այս տոհմի մարդիկ խառնիճաղանջ ամբոխներից են կամ ինչ-որ առաջադիմության պատճառով և կամ պատահաբար են ստացել նախաթոռ նահապետությունը, այլ աստվածաստեղծ մարդու նախասկզբնական աղնիվ տոհմից սկսած ակնհայտ հարազատությամբ որդիները հայրերին փոխարինելով հասան նախարարության։

Գ

ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ[10]. ՆԱԵՎ՝ ԹԵ ՄԱՐԴԿԱՆՑ ՊԵՏՋԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՆՉ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ, ՈՐՔԱՆ ԵՆ ԳԱՎԱՌՆԵՐՆ ՈՒ ԱՆԱՌԻԿ ԲՆՈՒԹՅՈՒՆՔ[11]։

Ունի տասներկու գավառ[12]. առաջինը, որի մեջ հենց [Սյունյաց] իշխանների և հայրապետների գահն է, Ծղուկ գավառն[13] է՝ անվանված Ծղուկ[14] գավառապետի [անունից]։ Երկրորդը Վայոց ձորն[15] է, որ ընդհանուր աղետից, ողբ ու վայնասուններից կոչվեց Վայոց ձոր[16]։ Երրորդը՝ Գեղարքունին, որ Հայկյան Գեղամի [անունից] կոչվեց Գեղարքունի[17]։ Չորրորդը՝ Սոթք գավառը, որ մշտական բուքերի և ցրտաշունչ եղանակների պատճառով կոչվեց Սոթք[18]։ Հինգերորդը՝ Աղահեճ գավառը[19], որ այժմ կոչվում է Քաշաթաղ և Խոժոռաբերդ։ Վեցերորդը՝ Հաբանդ գավառը[20]։ Յոթերորդը՝ Բաղք գավառը[21], որ այժմ կոչվում է Աճեն. դա Բաղակի [անունից այդպես] անվանվեց[22]։ Ութերորդը՝ Կովսական գավառը[23], որն այժմ Գրհամ են կոչում։ Իններորդը՝ Արևիք գավառը[24]. որ այժմ կոչվում է Տաշտուն[25] և Մեղրի։ Տասներորդը՝ Ձորք գավառը[26], որ ունի Բաղաբերդ անմատչելի ամրոցը[27], և այժմ կոչվում է Կապան[28]։ Տասնմեկերորդը՝ Երնջակ գավառը[29] և Գողթնը[30]։ Տասներկուերորդը՝ Ճահուկ[31] գավառը, որը և Շահապոնք կոչվող ձորն է։

Ահա սրանք են Սյունիքի տասներկու գլխավոր գավառները։ Բայց ունի ուրիշ շատ գավառներ էլ, որոնք չհիշատակեցինք։ Կան գավառներ, որոնց անունները փոխված են, ուրիշներն էլ այլ և այլ գավառների են բաժանված։ Իսկ այստեղ [գտնվող] անառիկ ամրոցները, որ անհասանելի են

մարդկանց մուտքին, և միայն տերը կարող է մատչելի դարձնել [հետևյալներն են]՝ Բաղաբերդ[32]. դա այն է, որ Սիսակի[33] սերունդներից մի մարդ՝ Բաղակ անունով, այս գավառն ստանալով ժառանգության բաժին, Բաղակի ապառաժը շինում է ամրոց, որը կոչվում է Բաղակի քար[34], բերդն ամրացնում է և անվանում Բաղաբերդ[35]. և գավառն էլ իր անունով կոչվեց Բաղաց գավառ[36]։ Իսկ նույն [Սիսակի սերնդի] նահապետների կանանցից մեկը՝ Երնջիկ անունով, շինում է խիստ անմատչելի Երնջակ ամրոցը, և իր անունով գավառն ու բերդը կոչվում են Երնջակ[37]։ Բերդում տեղադրում են նաև նահանգի գանձերի և հարկերի տունը։ Մարդկանց մեքենայությունների հանդեպ անսասան ու հաստատուն մյուս ամրոցները՝ Հայրաբերդ[38], Գրհամ[39], Մայրի[40], Շլորուտ[41], Կքեբերդ[42], Բարկուշատա բերդ[43], Անդոկա բերդ[44], Գեղարքունվո բերդ[45], Բղենո բերդ[46], Վանանդա բերդ[47], Բորոդանա բերդ[48], Հանբաղա բերդ[49], որը Սիսակի նույն տոհմի Զագ նահապետը շինեց մի դեսի վրա և իր անունով ձորը կոչեց Զագեձոր[50], բերդն էլ Զագեձորո բերդ[51], Քաշեթաղուց բերդ[52], Խոժոռաբերդ[53], Որոտն բերդ[54], Սյունյաց բերդ[55], Բորտո բերդ[56], Շահապոնից բերդ[57]՝ շինված և նույն ձորն էլ իր անունով Շահապոնից ձոր[58] անվանված պարսիկ Շահապի[59] կողմից, որ գաղթի պատճառով եկել էր Սյունյաց նահապետների մոտ։ Իսկ Վայոց ձորում՝ Կապույտ բերդ[60], Հրասեկա բերդ[61]՝ կառուցված Հրասեկի կողմից, չափազանց ամրություններով և աստվածաստեղծ պարիսպներով ամրացված. Սուլեմա բերդ[62]՝ Սուլեմ տանուտերի[63] կողմից շինված, և ուրիշ շատերը, որոնք ավելորդ համարեցինք հիշատակել[64]։ Ունի Նախիջևան մայրաքաղաքը։

Եվ ահա այսքանը որպես տեղեկություն քեզ համար[65]՝ մեր Սիսական աշխարհի բնական հարստությունների[66], սահմանների, բերդերի և գավառների մասին։

Դ

ՍԻՍԱԿԱՆ ՏՈՀՄԻ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵ՛Ս ՍԱՀՄԱՆՎԵՑ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐ ՎԱՂԱՐՇԱԿԻ[67] ԿՈՂՄԻՑ.

Մեզ համար այժմ փափագելի է թողնել հների դատարկաբան առասպելները և ձեռք զարկել միայն Սյունյաց վեհափառ տերերի ու Սիսակի ցեղի երջանկավետ բարեբախտություններին և նախաթոռ տիրապետություններին, որովհետև չարշարանքները շատ են, բայց ոչ մի օգուտ չկա. [ուստի], անօգուտից հեռու պահենք մեր մտքի ձգտումը, որ պիտանիները միայն մեջտեղ գալով կերպարանավորվեն մեզ համար։

Եվ այսպես, սկսած նախնի Սիսակից՝ այս նահապետության իշխանությունը ակներև հարազատությամբ որդիները հայրերից հաջորդաբար փոխանցեցին երկար ու ձիգ ժամանակներով։ Բազմաթիվ ու մեծամեծ քաջագործություններ ցույց տվեցին հայոց թագավորների [մղած] պատերազմներում և բազում ու մեծամեծ պարգևներով և գահերով մեծարվեցին պարսից, հայոց, այլև հունաց իսկ թագավորների կողմից։ Եվ այնքան անվանի եղան, որ մինչև անգամ արտոնվեց նրանց արծաթե գահույք ունենալ և մարգարտե վարսակալ օգտագործել ու վարազագիր մատանի[68] դնել, նաև կարմիր կոշիկ [հագնել] ու բռնել ոսկե գավազան՝ վրան նշված տոհմի անունը և պատվաստիճանը։ Եվ այսպես հասան մինչև Վաղարշակին, որին իր եղբայր Արշակը հայոց վրա թագավոր դարձրեց՝ Հայաստանում Արշակունյաց ցեղի թագավորության սկզբնավորման ժամանակ[69]։ Սա Վաղարշակ Առաջինն էր, որը չկամեցավ խառնակ ձևով ու ոչ տոհմիկ մարդկանցով վարել իր թագավորությունը, որովհետև մինչև այն ժամանակ նախնիներից ոչ մեկը հոգ չէր տարել կարգ ու կանոնի և թագավորական օրենքների գեղեցիկ հարմարեցման մասին, այլ ըստ հաջողության ու դիպվածի ամեն ոք բարձրանում էր և ամեն ոք նսեմանում։

Սա կարգ ու կանոն է սահմանում՝ գեղեցիկ կարգավորումներով ու գովելի օրենքներով. նախ սկսելով գլխից՝ բագրատունիներին առաջարկում է թագադիր լինել[70], ու նրանց

անվանում է ասպետներ[71], շնորհում է գրավել առաջնակարգ բարձ[72]՝ բոլորից վերև։ Եվ ապա սրանց[73] հետ Ձեռնհին[74] քանանացիների սերնդից, Գնթունիների ցեղից, կարգում է իրեն զգեստներ հագցնող և դնում արքունի հանդերձների վրա։ Սրանց նման էլ ուրիշներին նույնպես [նշանակում է] ըստ արքունի տան կարիքների։ Իսկ արևելյան կողմից սահմանում է մեծ և առաջին՝ Սիսական տոհմի նահապետությունը, սրա հետ էլ Կադմյանը։ Եվ հրաման է տալիս Սիսականներին՝ լինել հրամանատար արքունի բոլոր զորքերին ու իր թագավորության երկրորդը և պատերազմով շարունակ դեմ կանգնել Հոնաց դռանը[75]։ Այս նահապետության առաջին [նահապետի] անունը Սիսակ էր։ Իսկ սրանց սերնդից ընտրելով մի շատ քաջ, գեղեցիկ ու քաղցրաբարո մարդու՝ Եոան (Առան) անունով, նահապետ է կարգում Առանա մեծ դաշտի[76] վրա, Երասխից[77] մինչև Հունարակերտ[78]։ Եվ քաղցր բարքի պատճառով նրան Աղու էին կանչում, որտեղից էլ աշխարհը նրա անունով Աղվանք կոչվեց[79]։ Ահա սա էլ մի փոքր տեղեկություն քեզ, որ իմանաս, թե սրանից ոչ միայն սյունեցիները, այլև աղվանները ևս ունեցել են նախնի՝ նրանցինի պես հնադույն[80]։

Ե

ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀԻՍ ԼՈՒՍԱՎՈՐՎԵԼԸ ԱՍՏՎԱԾԱՆԱՁԱՆԱԶՈՒԹՅԱՄԲ, ՏՐԴԱՏԻ[81] ՀԵՏ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱԼԸ ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՎԱԾՈՒՆ՝ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ՝ ՄԵՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ ՄԻՋՈՑՈՎ. ՄԵՀՅԱՆՆԵՐԻ ԱՎԵՐՈՒՄՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ. ՍՅՈՒՆՅԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՁԵՌՆԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՈՐԻՇ ՊԻՏԱՆԻ ԶՐՈՒՅՑՆԵՐ

Միտքս, լցված անդիմանալի խնդությամբ, սքանչանում է առաջադիր այս սխրալի պատմության վրա. քանի որ մինչև այստեղ խոսեցինք կարծես թե մեկի գարշահոտ դիակի մասին, [այսինքն նրանց մասին], որոնք, հեթանոսական մոլորություններով հրապուրված, հաղորդակից էին միայն մարմնականին և անցողիկ փառքին, զուրկ ու թափուր ճշմարիտ գեղեցկություններից և անկապտելի փառքից, իսկ այժմ փառաբանություն պիտի գրենք երկու բանի մասին՝

հոգևորի ու մարմնավորի, մնայունի ու մշտնջենականի՝ որպես գեղեցիկ ու անուշահոտ կենդանի մարդու մասին, [այսինքն նրանց մասին], որոնք պայծառացան արդար արեգակի[82] անպարփակ ճառագայթներից և երկու աշխարհով[83] վայելուչ ու զարդարուն դարձան։ Եվ արդ՝ մինչև այստեղ, ըստ Սյունյաց նահապետների և իշխանների հաջորդականության ու ազգակցության՝ ասելիք չունենք նրանց անունների ու սերունդների վերաբերյալ, որովհետև առաջին պատմագիրներին էլ անհայտ էին այդ իրողությունները, և մենք թեև շատ անգամ ջանացինք, բայց միայն այնքանը գտանք, որը վերը շարադրեցինք։ Այսպես էլ պետք է նկատի ունենալ առաջիկաները։ Իսկ թե ինչո՞ւ՝ կասեմ պատճառը, որ դու ինձանից չպահանջես իշխանների հաջորդական շարքերը և ժամանակագրությունը։ Որպես և այս Պատմության սկզբում նշեցինք, չգտանք առաջիններից [մեկին], որը այս մասին հոգ տարած լիներ և գրած ուրույն պատմություններ ու [ցույց տված] այս աշխարհի և նրա տերերի որպիսությունը, ինչպես որ տեսնում ենք ուրիշներինը՝ Մամիկոնյաններինն ու Տարոնինը, Բագրատունիներինը, վասպուրականցիներինը, որոնք հետո թագավորեցին, Վիրքինը, Աղվանքինը[84]։ Այդ պատճառով չեն երևում իշխանների շարքն ու ժամանակների թվականները, միայն գտանք ցիր ու ցան առաջին պատմագիրների պատմությունների մեջ այս ու այնտեղ աղոտ կերպով նշված։ Այն էլ այն պատճառով, որ երբ ինչ-որ տեղ Սյունյաց իշխանների կողմից որևէ երևելի գործ է ցույց տրվել, պատմիչները ժամանակին անհրաժեշտություն են համարել այդ ևս հիշատակելու, իսկ աննշան ու անհայտ գործերի վրա ընդհանրապես ուշադրություն չի դարձվել՝ որպես ինչ-որ օտարի։ Դրա համար մենք ևս չհետևեցինք ժամանակագրական հաջորդականության, այլ ժամանակի ընթացքում հանդիպած պիտանի բաները քաղելով առաջին պատմիչների խոսքերից՝ կշարադրենք ըստ կարողության։

Եվ այսպես. երբ մեր Հայոց աշխարհում ծագեցին արդար արեգակի հոգեղեն ճառագայթները[85], և արևելքում ու հյուսիսում ծավալվեց Ավետարանի հորդառատ քարոզությունը՝ բազմաշարշար առաջամարտիկ առաքելական մարդու՝ սուրբ Գրիգորի շնորհիվ, երբ աստվածապսակ թագավոր Տրդատը բոլոր նախարարներով ու խառնիճաղանջ ամբոխով մկրտվեց Եփրատ գետում[86], այնտեղ իր գնդով լուսավոր մկրտություն ստացավ նաև Սյունյաց մեծ իշխանը, որը նույնպես սուրբ Գրիգորի հետ գնացել էր Կեսարիա[87]։ Վերադարձին նա մտնում է Տարոն գավառը[88] և այնտեղ բազմաթիվ ու մեծամեծ քաջագործություններ ցույց տալիս Գիսանյան կուռքերի քրմերի պատերազմում, որի մասին պատմում է տարոնցի Ջենոբ եպիսկոպոսի գիրքը[89]։ Եվ բազում գանձերով ու ջանքերով մասնակից է դառնում սուրբ Կարապետի հանգըստարանի կառուցմանը. այնտեղ, Գլակա վանքում[90] իր հիշատակի համար կոթող է կանգնեցնում քրիստոնեական խաչը։ Իսկ այն ժամանակ, երբ գալիս ու հանդիպում է մեծ արքա Տրդատին, ճանապարհորդ նախարարները հրաման են ստանում՝ գնալ իրենց գավառները, հանգստանալ և հոգ տանել իրենց աշխարհների բարեկեցության։ Եվ քանի որ նախարարների գավառներում դեռ կային բազմաթիվ կուռքեր ու մեհյաններ, այնուհետև Սյունյաց իշխանը, արքայից թույլտվություն ստանալով, սուրբ Գրիգորից վարդապետներ և ուսուցիչներ է խնդրում, որպեսզի իր աշխարհին քարոզի քրիստոսյան Ավետարանը ու կործանի կուռքերի բագինները։ Եվ Գրիգորը նրան տրամադրում է մեկին, որին բերել էր Աստրիքից։ Ապա Սյունյաց իշխանը մեծ ուրախությամբ անցավ, եկավ իր աշխարհը, բոլոր յուրայիններին ավազանում մկրտեց լուսավորությամբ և կործանեց կուռքերի բոլոր բագինները ու իր ամբողջ աշխարհը քրիստոնյա դարձրեց, բագինների տեղերն էլ հատկացրեց եկեղեցիների և աղոթատների շինությանը։ Եվ սա դարձյալ գնաց Տրդատ արքայի ու սուրբ Գրիգորի հետ՝ հանդիպելու Կոստանդիանոսին[91]։ Բյուզանդիայից[92] վերադառնալուց և մեր Հայաստան աշխարհը գալուց հետո սուրբ Գրիգորը չէր դադարում շրջելուց, քարոզելուց ու եկեղեցիներ կանգնեցնելուց։ Գնալով Վիրք, այնտեղից՝ Աղվանք, մինչև Մասքութք[93] ու Հոնաց պահակը[94] և բոլորին հաստատելով քրիստոնեական հավատքի մեջ՝ գալիս է Փոքր Սյունիք[95]. մտնելով Ամարաս[96]՝ եկեղեցի է շինում ու այնտեղ թողնում կրոնավորներ։ Եվ այնտեղից դուրս ելնելով՝ գալիս է Սիսական աշխարհիս սահմանները։ Սյունյաց մեծ նախարարը, նրան ընդառաջ ելնելով, բերում է մեր երկիրն

ու իր տունը, թանկարժեք ընծաներով ու արքունական պարգևներով պատվում նրան և ման ածելով գավառներում՝ [բնակչությանն] ամրապնդում է քրիստոնեական հավատքի մեջ. համապատասխան տեղերում շինում է եկեղեցիներ ու կանգնեցնում տերունական նշանը։ Այնուհետև մինչև գործի ավարտվելը աստծու բոլոր շնորհներով քիչ խնդությունն չեղավ բոլորին։ Այդ պատճառով [նախարարը], ընկած սուրբ Գրիգորի առաջ, աշխարհի համար տեսուչներ և առաջնորդներ է խնդրում, որը և [Գրիգորը] փութով ու հոժարությամբ համաձայնում է կատարել։ Գալով Վաղարշապատ՝ ձեռնադրում է իր մերձավոր աշակերտներից մեկին՝ ճշմարտախոս ու լավ մի մարդու, լի բոլոր հմտություններով, երիտասարդ հասակով, Գրիգորիս անունով, տալիս է իշխանին տանելու և հաստատելու մեր Սյունյաց աշխարհի եպիսկոպոս։ Այստեղից եղավ Սյունիքի եպիսկոպոսության սկիզբը[97]։ Եվ սա գալով մեծ ջանադրությամբ ամրապնդեց քրիստոնեությունը նոր ընդունածների հավատքը՝ չդադարելով քարոզել սուրբ Ավետարանի ճշմարիտ ուսմունքը։

Ջ

ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՋՐՈՒՅՑՆԵՐ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ՍՈՒՐԲ ԱՌԱՔՅԱԼԻ՝ ՄԵՐ ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀԸ ԳԱԼՈՒՈՑ, ԳՈՂԹԱՆ ԳԱՎԱՌՈՒՄ[98] ԵԿԵՂԵՑԻ ՇԻՆԵԼՈՒՑ, ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՎԱՏԱՑԱԾՈՒ ԱՆԵԼՈՒՑ, ՍՈՒՐԲ ՍԵՂԱՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒՑ ԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒՑ ՄԱՍԻՆ

Ամենից առաջ ինձ համար կարևոր ու չափազանց անհրաժեշտ էր ցույց տալ հենց այս, թե հայերից նախ հավատացյալ դարձան սյունեցիները, որոնք սուրբ Ավետարանին հնազանդվեցին Բարդուղիմեոս սուրբ առաքյալի միջոցով. և անտեղի չէ այժմ դա շարադրել։ Բարդուղիմեոսը Պարսկաստանից վերադառնալիս իր աշակերտների հետ գալիս է Ատրպատական[99] և անցնելով Երասխ գետը՝ մտնում է Սիսականի սահմանները, սկսում է քարոզել Որդվատ գյուղում[100], Արևիք գավառում[101], Բաղքում[102] և Գողթնում[103]։ Սրանք, ընդունելով Ավետարանի քարոզությունը, լուսավորվեցին ավազանի մկրտությամբ՝ Բարդուղիմեոս սուրբ առաքյալի շնորհով։ Ապա սուրբ առաքյալը կառուցում է եկեղեցի Գողթնի արևմտյան ծայրամասում, մի ժայռի վրա, իրենց կացարանի գրաված տեղում։ Նրա անունը կոչեցին Տյառնընդառաջ և այնտեղ մեծամեծ հրաշքներ գործեցին։ Քանի որ Որդվատ գյուղում վնասակար էր ջուրը, որ ամեն տարի ոռոգում էր բոլոր դաշտերն ու այգիները, աղոթեցին ու հանկարծակի խափանեցին այդ ջուրը, որի տեղը դեռ մինչև այսօր էլ երևում է։

Գավառի իշխանն էր Շարը, որ ուներ որդի՝ Խոսրով, թոռ՝ Վահան, և կին՝ Նշան։ [Բարդուղիմեոսը] նրանց համար վերակացու է նշանակում, որպեսզի նորից չմոլորվեն կռապաշտությամբ։ Իր աշակերտներից մեկին՝ Կումսի անունով, ձեռնադրելով եպիսկոպոս ու նրան հանձնելով սուրբ հոգուն՝ ինքը գալիս է Վանանդ գյուղը[104]։ Այնտեղ նրա աշակերտներից մեկը՝ Լուսիկ անունով, վախճանվեց, որին թաղեցին նույն տեղում ու գերեզմանի վրա շինեցին մի փոքրիկ մատուռ։ Եվ մինչև այսօր [այնտեղ] կատարվում են մեծ հրաշքներ, բժշկություններ. գերեզմանի հողը կատաղիներին խիստ հնազանդության է բերում։ Այնտեղ կար և մի կաղատուն, այն էլ կործանեց և տեղում կառուցեց անշուք մի եկեղեցի ու կոչեց սուրբ Թովմայի անունով, որտեղ բազմաթիվ հրաշքներ են տեղի ունենում։ Ապա սուրբ առաքյալը այնտեղից դուրս գալով գնաց Հայաստանի մայրաքաղաքը՝ Դվին։ Այնուհետև վախճանվեց Կումսին, և տեղացի այն հավատացյալները չկամեցան առանց առաջնորդի մնալ, բայց ոչ մի տեղից ակնկալություն չունեին։ Ապա իրենց առաջնորդ դարձրին մի օտարականի[105]՝ Բաբելաս անունով։ Սրանից հետո քաջալերվելով սուրբ հոգուց ուղարկեցին սուրբ Թադեի մոտ Մուշե անունով մի մարդու, որը չկարողացավ այնտեղից վերադառնալ։ Եվ այսպես կրոնասերները մնացին առանց առաջնորդի՝ բնակվելով այս ու այնտեղ։ Ոմանք, պատսպարվելով Դարու[106] լեռան վրա, իրենց կյանքն անցկացնում էին մենավորությամբ և երկար ժամանակ քարոզում էին շատերին՝ մինչև մեծ լուսավորչի Հայաստան գալը և մեր ամբողջ Հայոց երկիրը լուսավորելը։ Ապա սրանք գնացին ու իրենց առաջնորդ խնդրեցին, և [Լուսավորիչը] տվեց մի տարոնացի մարդու՝ Մովսես անունով[107]։ Սրան հաջորդեց տարոնացի Սահակը, ապա՝ Զբր-

վանդատը, ապա՝ Ստեփանոսը, ապա՝ Հովհաննեսը։ Եվ այսպես կարգի են ընկնում՝ մեկը մյուսին փոխանորդելով մինչև այժմ։ Բայց իմացի՛ր, որ գողթնեցիները Սյունիքից մեկուսացած չէին, այլ առաջ ժամանակ, երբ մեր Հայոց երկրում եպիսկոպոսներ նշանակված չէին և հավատացյալ չէին, սրանք տեսուչներ ունեին առանձին։ Իսկ երբ սուրբ Գրիգորը լուսավորեց Հայաստանը և սահմանեց եպիսկոպոսների պաշտոնն ու աստիճանը, սրանց հանձնեց Սյունիքի եպիսկոպոսներին, որպեսզի հնազանդությամբ նրանց հրամանին ենթարկվեն։ Սրա մասին վկայում են առաջին կաթողիկոսների շրջաբերական թղթերը, գավառների եկեղեցական հին հարկացուցակը, որը իր մեջ լրիվ ընդգրկում է նաև ամբողջ Գողթան գավառը։ Նույնպես և Գողթան իշխանները ոչ թե ուրիշ տոհմից էին, այլ՝ նույն Սիսական ցեղից, ինչպես ցույց է տալիս Մովսես Խորենացին։ Իսկ թե ինչպիսի՞ն են հայոց եպիսկոպոսների աստիճանն ու դիրքը՝ քեզ ցույց կտամ մյուս գլխում։

ՀԱՅՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԵՎ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ. ԵՎ ԹԵ ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԳԱՀԵՐԵՑՆԵՐ ՈՒ ԳԱՀԱԳԼՈՒԽՆԵՐ ՆՇԱՆԱԿՎԵԼ ՏՐԴԱՏ ՄԵԾԻՑ ԵՎ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻՑ ՈՒ ՆՐԱՆՑ ՈՐԴԻՆԵՐԻՑ ԵՎ ԹՈՌՆԵՐԻՑ. ՆԱԵՎ ՍՑՕՒՆԻՒԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՏՎԻ ՈՒ ԱՍՏԻՃԱՆԻ ՄԱՍԻՆ։

Հայաստանը նորածին շնորհներով նորոգելով՝ աստծու առաքելագործ այրը՝ սուրբ քահանայապետ Գրիգորիոսը, հրաժայում է Տրդատ Մեծին իր թագավորությունը կազմակերպել հունաց կայսրերի օրինակով և գահ ու աստիճան տալ իշխաններին՝ յուրաքանչյուրին ըստ պատշաճի[108], աջից ու ձախից, որը և նա իրագործում է գեղեցիկ կերպով։ [Սահմանում է]՝ ճաշի ժամին բարձերի վրա նստեն չորս հարյուր իշխաններ, բոլորից վեր՝ Գուգարաց բդեշխը, Աղձնյաց, Անգեղտան, Կորդվաց իշխանները, Բագրատունի ասպետը, Արծրունյաց, Սյունյաց և Մամիկոնեից իշխանները։ Սրանք հայոց բոլոր իշխանների գահակալներն էին։ Իսկ ամբողջ զորքերի ու երկրի վրա որպես իր թագավորության երկրորդ ու հրամա-

նատար է նշանակում միայն չորսին՝ արևելյան կողմի հա-մար, Սյունյաց իշխանին՝ քսանմեկ իշխաններով, հյուսիսայինի համար՝ Գուգարաց բդեշխին՝ քսաներկու իշխաններով, արևմտյանի համար՝ Կորդվաց իշխանին՝ քսանմեկ իշխաններով, հարավայինի համար՝ Անգեղտան իշխանին՝ քսաներկու իշխաններով։ Սա այսպես գտանք[109] հայոց իշխանների գահնամակում[110], որը գրել է Ղևոնդը[111]՝ սակավ [տեղեկություններ] ցույց տալով Ագաթանգեղոսի ու Ներսեսի [դրածներից]։

Երբ այս այսպես կարգավորվեց, ապա սուրբ Գրիգորն էլ սահմանեց եկեղեցական դասերը, եպիսկոպոսների դիրքն ու պատվաստիճանը. կարգադրեց, որ իր հետ աթոռներով ու ականակուռ բարձերով բազմեն երեսունվեց եպիսկոպոսներ՝ տասնութը աջից, տասնութն էլ ձախից. աջից առաջինը՝ Հարքի եպիսկոպոսը, ձախից առաջինը՝ Բասենինը։ Իսկ Սյունիքի եպիսկոպոսին նստեցնում է աջից յոթերորդ տեղում. սա էլ ցույց է տալիս Սամվել Կամրջաձորեցին։ Իսկ Արշակի թագավորության ժամանակ Ներսես Մեծին հայրապետական աթոռին նստեցնելիս, երբ սրան ուղարկեցին Կեսարիա Եվսեբի հայրապետի մոտ ձեռնադրվելու, այն ժամանակ Ներսեսի հետ ուղարկեցին Սյունիքի Անդոկ իշխանին՝ հայոց ուրիշ իշխանների գլուխն անցած, և Սյունիքի եպիսկոպոս Գրիգորիոսին՝ որպես հայոց եպիսկոպոսների գլխավոր։ Եվ Արշակն առաջարկեց ձեռնադրել Ներսեսին ոչ միայն հայոց եպիսկոպոսապետ, այլև անկախ պատրիարք, «Որովհետև,— ասաց,— Հայաստանը պարտավոր չէ ենթարկվելու Կեսարիայի եպիսկոպոսապետին. թեև մեր առաքյալ Թադեոսը այնտեղ միայն եկեղեցի է հինել ու իր աշակերտներից ձեռնադրել եպիսկոպոս, և այս պատճառով էլ այնտեղից ենք ձեռնադրում ստանում, բայց որքա՞ն առավել է մեզ մոտ նույն ինքն առաքյալը ուրիշ երեք առաքյալների հետ, որոնց հանգստարանը, աթոռը, եկեղեցին ու ձեռնադրածները բոլորն էլ այստեղ են. ի՞նչ կարիք ունենք ուրիշ ավելի կրոսերից օրհնություն ստանալու»։ Այս պատճառով էլ Ներսեսին նստեցնում են Հայաստանի պատրիարք։ Եվ բոլորով պետք է ենթարկվեին պատրիարքին՝ [ներառյալ] արքեպիսկոպոսն ու մետրոպոլիտը, որպեսզի լրացվեին եկեղեցու ինը դասերը՝ ըստ

վերը նշվածի։ Ապա թագավորը կարգադրում է մեծ ժողովով սահմանել եկեղեցու բոլոր կարգերը առանց պակասի։ Նշանակում են պատրիարք սուրբ Ներսեսին և նրան ենթակա՝ Աղվանքի արքեպիսկոպոսին, որը կաթողիկոս է, և մետրոպոլիտներ՝ Սյունյաց, Վրաց ու Մարզպետական եպիսկոպոսներին։ Հետո ուրիշ մետրոպոլիտներ էլ են նշանակում՝ Մելիտենեին ու Սեբաստիայինը։ Իսկ Սյունյաց մետրոպոլիտ Գրիգորին իր հետ Կեսարիա գնալու համար ավելի պատիվ անելով՝ սուրբ Ներսեսը նրան տալիս է ոսկեթել գահավորակ ու Սյունիքը հռչակում պատրիարքի նախաթոռ, որը հունարեն լեզվով կոչվում է պրոտոֆրոնտես[112]՝ Մեծ Հայքի։ Այնուհետև ոչ շատ ժամանակ անց, Սահակի և Մեսրոպի օրոք Սյունիքի Անանիա եպիսկոպոսը կրկին պատվի արժանացավ Աղվանքի Եսվաղեն թագավորից, որը նրան պարգևեց իր թագավորական կարմիր դրոշը՝ ոսկերիզ նուրբ խաչվառով՝ գլխին ոսկի գունդ ու վրան՝ պատվական խաչ. և առաջարկեց միշտ տանել Սյունիքի եպիսկոպոսների առջևից։ Դրա պատճառն ու որպիսությունը իր տեղում կպատմեմ։ Ահա այսպես կազմակերպվեց ու մեծարվեց Սյունյաց եպիսկոպոսությունը, որ սկզբնավորվեց սուրբ Գրիգորից և իր որդիներից ու թոռներից, որոնք մետրոպոլիտներ են կոչվում։ Եվ գավառների եպիսկոպոս ձեռնադրելը սրանց գործն է. դրա համար տասներկու եպիսկոպոսների գլխավոր դրվեց։ Առանց սրանց հայոց պատրիարք չի ձեռնադրվում, և ոչ էլ ժողով է լինում, այլ ժողովի ղեկավարն ու կարգադրողը սրանք են լինում։ Հայոց մեջ նախաթոռ վարդապետությունը և [գրքերի] մեկնության ու թարգմանության իրավունքը միայն սրանց շնորհվեցին սուրբ Սահակի և երանելի վարդապետ Մեսրոպի կողմից։ Մեր Հայոց աշխարհում երկար ժամանակներից հետո եղան նաև վիճաբանություններ սրանց գահերեցության վերաբերյալ, ինչպես և զանազան պատահումների ու ամբարտավանությունների պատճառով։ Դրանցից չափավորն ու շատ պիտանին կնշեմ իրենց տեղում։

Ը

ՍՅՈՒՆՅԱՑ ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ԳՐԻԳՈՐԻՍԻ ՎԱԽՃԱՆՎԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ԱՔՈՒՐԸ ՍՈՒՐԲ ՄԱՇՏՈՑԻ ՓՈԽԱՆՈՐԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հների գրքերում այս ու այնտեղ ինչ որ գտանք մասնավորապես, ճշտությամբ քննելով զետեղեցինք այստեղ, որը և այս է հաղորդում։— Երբ Ներսես Մեծը վերադառնում է Կեսարիայից և մեր Հայոց աշխարհում գովելի օրենքներ է հաստատում, այնուհետև քիչ ժամանակ անց վախճանվում է Սյունյաց եպիսկոպոս Գրիգորիսը՝ եպիսկոպոսության պաշտոնում մնալով քառասունվեց տարի։ Եվ Սյունիքի մեծ նահապետ ու նախարար Անդոկը իր աշխարհի համար սուրբ Ներսեսից առաջնորդ ու տեսուչ է խնդրում։ Իսկ սա, կատարելով նրա խնդրանքը, երանելի Մաշտոցին ձեռնադրում ու նրա տեղնում է Սյունիքի մետրոպոլիտական աթոռին՝ Գրիգորիսից հետո երկրորդը։ Եվ նա գալով առաքինի վարքով ու ջանադրությամբ զարմացնում է բոլորին, բարեպաշտության բազմաթիվ օրենքներ է սահմանում այս աշխարհում, գիշեր ու ցերեկ չի դադարում իր համայնքին քարոզելուց։ Եվ այսպես բարի վարվեցողությամբ ու իսկական առաքինությամբ մնալով մետրոպոլիտական աթոռին որոշ տարիներ՝ փոխադրվում է հրեշտակների կարգը։ Ապա երկար տարիներ աթոռը խափանվեց, քանի որ Սյունիքի իշխանությունը խանգարվեց պարսից թագավորների կողմից, երկիրը մնաց անիշխան, ամայի և զուրկ ամեն տեսակի բարենորոգումներից, մարդկանցից ու անասուններից՝ քսանհինգ տարի։ Դրա պատճառն ու որպիսությունը այժմ կշարադրեմ։

Թ

ՍՅՈՒՆՅԱՑ ԱՆԴՈԿ ԻՇԽԱՆԸ ԵՎ ԻՐ ԱՐԱՎ ԳՈՐԾԵՐԸ. ԱՅԼԵՎ ՊԱՐՍԻՑ ՇԱՊՈՒՀ ԱՐՔԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՍԻՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՆԱՀԱՏԱԿՄԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ԴԵՊՔԵՐԸ. ԱՆԴՈԿԻ ԳՆԱԼԸ ՀՈՒՆԱՑ ԹԵՈԴՈՍ ՄԵԾԻ ՄՈՏ ՈՒ ԱՅՆՏԵՂ ՎԱԽՃԱՆՎԵԼԸ՝ ԸՍՏ ՍՅՈՒՆՅԱՑ ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ[113] ՊԱՏՄԱԾՆԵՐԻ

Ստուգությամբ քննելով իմացանք, որ սուրբ Ներսեսի աճեծքը Արշակի նկատմամբ կատարվեց, քանի որ [Արշակը],

ինքնակամ թողնելով հայոց թագավորությունը, գնաց Շապուհի մոտ [114] և այնտեղ Անուշ բերդում ինքնասպան եղավ[115]։ Իսկ նրա թագավորությունը, Ռոբովամի[116] թագավորության նման, երկու մասի բաժանվեց, և մեր երկրի կեսն ընկավ պարսից, կեսն էլ հռոմայց իշխանության տակ[117]։ Այդ պատճառով էլ Սյունիքի իշխանությունն ընկնում է պարսկական բաժնի մեջ։ Իսկ այս Անդոկը ուրիշ նախարարների հետ շարունակ լինում էր արքունիքում. սա հայոց իշխանների մեջ հզոր ու փառավոր էր և խնամիությամբ կապված էր Արշակունիների հետ, որովհետև իր զարմանագեղ դստերը՝ Փառանձեմին, տվել էր Արշակի եղբորորդի Գնելին կնության, որին հետո Արշակն ինքը կին վերցրեց[118] և նրանից ունեցավ իր Պապ թագաժառանգը, որը հորից հետո թագավորեց Հայաստանին։

Եվ պատահեց մի ազատ օր, որ Շապուհը՝ Որմիզդի որդին, Պարսից, Արյաց ու անթիվ այլ աշխարհների արքայից արքան կամեցավ զվարճանալ և ճաշկերույթ սարքեց բոլոր մեծամեծների՝ պարսից ամբողջ հնամենի[119] ազնվական տոհմերի նախարարների ու Արյաց գնդի համար[120], ըստ պատվավոր դիրքի հարգելով՝ յուրաքանչյուրին առանձին բաժակաճառերով ու պսակներով[121] իր առաջ խիստ պատվավոր էր ներկայացնում։ Մովպետան մովպետին[122] էլ արքունական այդ հրավերքի ժամանակ մեծապատվությամբ մեծարում էր։ Ապա պարսից Շապուհ թագավորը խորհուրդ անելով սկսեց խոսել Հայոց նախարարների հետ և ասել. «Պարսիկներին, պարթևներին՝ բուն պահլավիկներին, և Արյաց աշխարհիս ազնվական մարդկանց դասերը, նախամեծար պատվաստիճանների կարգերն ու որպիսությունը քաջ գիտենք, բայց Հայաստանի[123] ազնվական տոհմերը, նրանց նախնական պատվաստիճանավորումն ու գահակալությունները չկարողացանք իմանալ ո՛չ մեր նախնի թագավոր հայրերից ու պապերից, ո՛չ էլ բազմագետ մատենագիրներից։ Արդ՝ ձեր՝ հայոց նախարարներդ ու ազնվական մարդկանցդ առաջ ծառացած է [ընտրել] երկուսից մեկը՝ կատարել մեր՝ Արյաց աշխարհի բոլոր ազնվատոհմ կուսակալների պահանջը. ցույց տալ ձեր նախնական պատմությունը ըստ ներկայացած ազնվազարմերդ յուրաքանչյուրի տոհմի պատվաստիճանն ու սկզբնական

իշխանական դիրքը և դարձյալ ընդունել առավել շատ շքեղաշուք մեծարանքներ։ Իսկ եթե չեք կարող արյաց այս հսկայագունդ բազմությանը ակնհայտորեն ցույց տալ ձեր իշխանական դիրքի գրությունը, ապա ձեր պատիվն ու տունը, հողն ու ջուրը, ամբողջ ունեցվածքը Արյաց աշխարհի ազնվական մարդկանց կտանք և ձեզ շնորհազուրկ ու ձեռնունայն բաց կթողնենք։ Եվ ձեր գյուղերի ու ապարանքների ունեցվածքը արյաց ազնվական մարդկանցս ծառայության տակ կլինի»։

Մեծ Հայաստանի իշխաններն ու իշխանապետերը անմիջապես խորհուրդ արեցին և թագավորին ներկայացրին բոլոր գրքերից սիրելին՝ հրաշապատում գրավոր շարադրանքը, սուրբ Դրիգորի գիրքը, որ Ագաթանգեղոս[124] է կոչվում։ Պարսից թագավորը հրամայեց կարդալ և թարգմանել պարսկերեն լեզվով ու գրով։ Եվ իմանալով, որ այն սկսվում է իր նախնի Արտաշիրից, չափազանց ուրախացավ համախմբված արյաց բազմության առաջ։ Վերցնելով սուրբ Գրիգորի գիրքը՝ դրեց իր աչքերի վրա։ Պարսից թագավորն ուրախացած համբուրում էր սուրբ Գրիգորի այդ գիրքը և խանդաղատանքով գուրգուրում ու պարսկերեն պես-պես խոսքերով գովաբանում, որովհետև իմացել էր, որ գրքի սկզբում պատմվում է իր ցեղակից Արտաշիրի մասին։ Եվ այնտեղ գտնելով Հայաստանի ազնվականների ու իշխանների տասնյոթ բարձրերի գիրը՝ սկսեց ըստ այնմ կարգավորել յուրաքանչյուրի նախանշված պատվավոր տեղը արքունական դահլիճում, ուրախության սեղանի մոտ։ Տասնչորսերորդ բարձր հասավ Սյունյաց տեր Անդոկին։ Եվ սա գոռոզությամբ հոխորտաց ու ոչինչ չճաշակեց արքունական այդ ուրախարար հյուրասիրության ժամանակ։ Արքունի սպասավորները թագավորին իրազեկ դարձրին Սյունյաց տեր Անդոկի վիրավորվածության ու երեսից զգացվող արյունռուշտ ոխակալության մասին, բայց պարսից Շապուհ արքան դրան կարևորություն չտվեց։ Այն ժամանակ շուտով արքունիքում իմացվեց, որ խազիրները[125], բազմամարդ զորքերով ելնելով Ճորա դռնով[126], հասան մեր երկիրը։ Եվ պարսից Շապուհ արքան անթիվ զորքեր հավաքեց Ասորիքից, Խորասանից, Խորեզմից, ավելի շատ՝ Պարսկաստանի Ատրպատական նահանգի քաջերից, Հայաստանից, Վիրքից, Աղվանքից, Կովկաս լեռան ցրտաշունչ բարձունքների տասներկու

խուժադուժ ցեղերից և անհամար բազմությամբ եկավ-գնաց պատերազմով բախվելու նրանց հետ։ Իսկ Անդոկը հազար յոթ հարյուր ընտիր մարդկանցով, առույգ, ուժեղ ու արագաքայլ ձիերով խույս տվեց և այնուհետև դարանակալ դավաճանությամբ զորքը թաքցրեց այս ու այնտեղ արքայանիստ Տիզբոն մեծ քաղաքի շուրջ, որ գտնվում է Պարսից աշխարհի Իստահր գավառում[127]։ Ապա մի փոքր պահապան խմբով՝ ընտիր, քաջակորով հեծյալներով, արքայանիստ քաղաքի դարպասներով ներս մտավ և անտեղյակ ու անմեղ ձևանալով ասաց. «Ես եկել եմ Շապուհ արքայի մոտ»։ Քաղաքի բնակիչները պարսից օրենքի համաձայն նրա համար իջևանատեղ պատրաստեցին և զանազան ըմպելիքներով ու բազմախորտիկ համեղ ուտելիքներով հյուրասիրելով՝ մեծ շքեղությամբ պատվեցին։ Իսկ երբ ճիշեր եղավ, Անդոկն իր զորքին դավաճանությամբ իմաց տվեց։ Եվ երբ լուսացավ, ու քաղաքի դարպասները բացվեցին, Անդոկի զորքը անակնկալ կերպով դարպասներով ներս խուժեց, վերցրեց ոսկու և արծաթի անհամար գանձեր, արժեքավոր ու մեծագին ակնեղեն՝ գոհարներ ու մարգարիտներ, ոսկեթել հագուստներ, արքայական ծիրանի, մարգարտազարդ պատմուճաններ արքունիքից ու պարսից իշխանների բոլոր տներից։ Վերցրին՝ ինչ որ կարող էին տանել։ Եվ բերելով անհաշիվ ավարը՝ ամբողջը հավաքեցին Բաղաբերդում[128]։ Եվ բոլոր գավառների հացի, խոտի, հարդի պաշարները, ամբողջ գինին, յուղը, մսացուները, մեղրը, տեսակ-տեսակ մրգերը՝ անհամար կենսապաշար, ինչպես նաև հեծելազորի սարքերն ու զենքերը կենտրոնացրին Բաղաբերդում։

Ապա Սյունյաց տեր Անդոկը բոլոր սյունեցիներին հրաման տվեց փախչել, տներն ու համբարանոցները պաշարներով հանդերձ այրել։ Եվ Սյունիքի բոլոր գավառների բնակչությունը ժողովեց եկեղեցիների պատվիրանագրքերը, կտակարանները, ոսկե ու արծաթե անթիվ սուրբ խաչերը, սրբերի, պատվական ու սուրբ նահատակների նշխարները։ Բոլորը կենտրոնացրին Շաղատի[129] քարկոփ գմբեթավոր եկեղեցում։ Ոմանք, եկեղեցու պատերի մեջ երկաթով խորշեր պատրաստելով, այնտեղ էին դնում սուրբ առարկաները։ Ոմանք եկեղեցու բեմի տակ քարե գաղտնարաններ էին պատրաստում

ու լցնում, ոմանք էլ՝ եկեղեցու մեջ, և արկղերով վայր իջեցնելով եկեղեցու տակ՝ լալով ու արտասվելով առանձին-առանձին համբուրում էին խաչերը, սուրբ նահատակների նշխարները, սուրբ ավետարանիչների, մարգարեների ու առաքյալների կտակարանները, հանձնում սուրբ Ստեփանոսի սուրբ եկեղեցուն։ Նույն եկեղեցում բոլոր սյունեցիները ութ օր աղոթքներով գիշերային արարողություն կատարեցին։ Ապա բազմությունը հողաբլուր ստեղծեց Շաղատի եկեղեցու վրա, հողակոշտերի տակ թաղեց այն, որը և գտնվում է Ողուկ գավառում։ Իրենք փախան, ցրվեցին ամբողջ երկրով մեկ։ Եվ ոչ ոք չէր համարձակվում տալ սյունեցիների անունը։ Սյունյաց բազձալի աշխարհն էլ քսանհինգ տարի անբնակ ու ավերակ մնաց։ Եվ խազիրների դեմ մղած պատերազմն ավարտելուց հետո պարսից Շապուհ արքան վերադարձավ, մեծ ցասումով հրամայեց իր բոլոր զորքերին գնալ Սյունյաց աշխարհը, գերել մարդ ու անասուն՝ [իրենց] ծառայեցնելու համար։ Հասնելով աշխարհը՝ նրանք բոլորովին բան չգտան, բացի որբացած տեղերից՝ սուրբ եկեղեցիներից, որոնք քանդեցին, ավերեցին ու այրեցին Սյունյաց ամբողջ աշխարհում։ Եվ պարսկական անաստված զորքերը հասան Ողուկ գավառը, Շաղատ գյուղաքաղաքը. մոտենալով այն բլրին, որի տակ թաղված էր եկեղեցին, հասկացան, որ բլրի տակ, ներսում ինչ-որ բան կա։ Պարսկական հետևակ զինվորներից ոմանք բարձրացան եկեղեցաբլուրը։ Եվ հանկարծ որոտագին թնդյուն [լսվեց], ու երկրաշարժ եղավ։ Վեր բարձրացած պարսիկները եկեղեցաբլրից դեն շպրտվելով կոտորվեցին։ Եվ ինքը՝ Աթաշխոդա[130] [զորապետը] պարսկական իր այդ զորքերի հետ, դիպվածից սաստիկ ահաբեկված, փախուստի դիմեց։ Որմիզդի որդի Շապուհը գարձյալ Պարսկաստանի, Արյաց աշխարհի, այսինքն՝ Խորասանի զորքի ամբողջ բազմության զորահավաք կատարեց, գնաց պատերազմելու Բաղաբերդի դեմ, բայց տեղի ամրության պատճառով ոչինչ չկարողացավ անել, որովհետև բերդից զառիվայր քարեր գլորելով՝ բոլորին առհասարակ ոչնչացնում էին։ Ապա Շապուհ արքան հրամայեց, որ դրանից ավելի շատ, կրկնապատիկ զորքեր գան Պարսկաստանից։ Եվ վերջապահ թողնելով՝ կարգադրեց սաստկացնել պատերազմը ամրոցի դեմ։

Եվ ինչպես առաջին, նույնպես և այս երկրորդ անգամ, պարսաքարերով ու վեմերի գլորումով պարսկական զորքի անհամար բազմությանը ամբողջովին դիաթավալ արեցին։ Շապուհը նորից ուրիշ զորք գումարեց՝ դրանից եռապատիկ ավելի, ու հրամայեց սաստկացնել պատերազմը։ Կարգադրեց վերջապահներ թողնել և ասաց. «Եթե մեկը ետ դառնա, սպանեցե՛ք»։ Սրանք էլ նույն ձևով, ինչպես առաջին, երկրորդ, այնպես և այս երրորդ անգամ, վեմերով ու պարսաքարերով ջախջախվելով առհասարակ ոչնչացան։ Եվ պարսից Շապուհ արքան կատարված դեպքերից զարձյալ զայրացավ ցասումով լցվեց ու կամեցավ ուրիշ անհամար զորք գումարել՝ ևս սաստիկ պատերազմ տալու Բաղաբերդի դեմ։ Այդ ժամանակ մեծամեծ իշխաններն ու նախարարները, պարսից Շապուհ արքայի առաջ ծնկի իջնելով, աղաչեցին՝ էլ չպատերազմել Բաղաբերդ անառիկ ամրոցի դեմ և արյաց զորքերը կոտորել չտալ։ Բայց ասացին՝ ամրոցի շրջակայքը պետք է ավերակ դարձնել, այդպես էլ՝ Սյունիքի գավառների բոլոր իշխանությունները։ Արքունիքից հրաման ելավ՝ մարդ թե անասուն Արյաց աշխարհի զորքերի ծառայության տակ լինեն։ Իսկ Սյունյաց տեր Անդոկը հարմար օր գտնելով, դուրս եկավ Բաղաբերդ ամրոցից մեծ ավարով, անցավ Բյուզանդիա մեծ ինքնակալ Թեոդոսի՝ հունաց արքայի մոտ։ Նրանից մեծագույն պատվի արժանացավ՝ պատրկաց պատրիկ[131] դարձվեց։ Այնտեղ, Հռոմոց երկրում էլ վախճանվեց։

ԺԲ

ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻՑ ՇԱՊՈՒՀԻ ՄՈՏ ԲԱՐԻԿԻ ԳԱԼՈՒ, ՔԱՋՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՅՑ ՏԱԼՈՒ, ԻՐ ՀԱՅՐԵՆԻ ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀԸ ՎԵՐՍՏԻՆ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ, ԱՅՆ ՆՈՐՈԳԵԼՈՒ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՀԵՏ ՆԱԽԱՊԱՏԻՎ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝ ՔԱՂՎԱԾ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԻ[132] ՆՈՒՅՆ ՁԱՌԵՐԻՑ. ՍԱ ԵՂԱՎ ՊԱՐՍԻՑ ՇԱՊՈՒՀԻ՝ ՈՐՄԻԶԴԻ ՈՐԴՈՒ, ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԱԹՍՈՒՆՈՒԹԵՐՈՒՄ ՏԱՐՈՒՄ

Պատրկաց պատրիկ Անդոկի վախճանվելուց հետո նրա որդի Բարիկը մնաց որբ, անմխիթար ու միայնակ։ Նա թեև բազմաթիվ ու մեծամեծ պատիվներ էր ստացել Թեոդոս Մեծ աստվածապսակ ու սուրբ թագավորից, բայց չէր հանդուր-

ժում իր բնիկ տերությունից դուրս գտնվել՝ սաստիկ կարոտով փափագելով իր երկրին՝ ըստ Դավթի այն ասածի, թե՝ «իրենց հողերին կգթան»* և դարձյալ ըստ իմաստունի այն խոսքի, թե՝ «Մարդ իր ծնողներից ու գավառից ավելի քաղցր բան չունի»։ Եվ Բյուզանդիայից գնում է պարսից Շապուհ արքայի մոտ, հասնում է արքունիք, տեղավորվում արքայի զորականներից մեկի մոտ՝ կամավոր ծառայություն անելով։ Պարսկական օլիմպիական պես-պես մրցախաղերում բազմաթիվ քաջություններ է ցույց տալիս՝ իր մասին ոչ ոքի չհայտնելով, թե ո՛վ կամ որտեղի՛ց է։ Հենց այդ ժամանակ Հոնաց երկրից Հոնագուր անունով մի հոն դուրս գալով ավարում է ամբողջ Պարսից երկիրը։ Նա [արքային] ասում է. «Ինչի՞ համար են արյունահեղությունը և բազմաթիվ զորքերի ոչընչացումը. ե՛կ ես և դու առանձին մենամարտենք»։

Եվ այդ հոնը, որ ճանաչված էր Հոնագուր անունով, իր չափազանց բարձր ու հաստ մարմինը զրահավորեց հիսուն նյութից կազմված զրահով, ահեղակերպ գլուխը՝ երկաթագամ ու բևեռապինդ սաղավարտով, ճակատն էլ պղնձե տախտակաձև հարմարանքով ամրացրեց, իր վրա հարմարեցրեց փայտե երկար կոթով հսկայական գեղարդը և բոցափայլ, արյուն թափող սուսերը՝ ահաբեկելով Մարաց, Պարսից ու Արյաց աշխարհի զորքերին, ինչպես որ իր ներբողի մեջ տեղեկացնում է երանելի Պետրոսը՝ Սյունյաց եպիսկոպոսը, քերթողահայր Մովսեսի[133] աշակերտը։ Եվ պարսից արքայից արքային հաղորդում են Բաբիկի մասին՝ ասելով. «Քո պալատում կա մի մարդ, որի միջոցով կռիվդ գլուխ կբերվի»։ Արքայից արքան կանչում է Բաբիկին և թագավորական պատվի վճիռ է կայացնում ու հաստատում վարազագիր մատանիով և ասում. «Եթե այս վրիժառուությունը գլուխ բերես, արտահայտածս մեծամեծ խոստումներին կարժանանաս»։ Եվ նա արքայի առաջ ձեռքը կրծքին է դնում որպես նշան արքունի հրամանը կատարելու։ Միաժամանակ ապավինելով վերին օգնությանը՝ վերցնում է զորավոր զենքերն ու հարմարեցնում իր վրա. արքունական մարգարտազարդ ճաճանչափայլ զրահով [պատում է] վայելուչ մարմինը, վագրակերպ սաղավարտով [ծածկում] գեղեցիկ գլուխը, պողպատե սուսերը [կապում] սեգ մեջքին, ոս-

* Համմ. Սաղմ., ճԸ, 15։

կեզարդ ու ականակուռ վահանը գցում ձախ ուսը, ամրակուռ աջ ձեռքում բռնում խոր մխրճվող սուր գեղարդը և ցատկելով ուժեղ սև ձիու վրա՝ խոյանում է թշնամու դեմ։ Հարձակվում են միմյանց վրա։ Գեղարդների հարվածների փոխանակումից որոտ ու ճայթյուն էին առաջանում առավոտից մինչև [երեկոյան] ժամը ինը։ Եվ պարտվում է Հոնագուր ահռելի հսկան, հաղթում է քաջ Բաբիկը, որը շտապով դիմում է միասայրի սրին ու նրանով տեղնուտեղը սպանում արյունարբու, վիշապի ուժ ունեցող այդ դաղանին։

Եվ ինչպես վերն ասացինք, սա վերցրել ենք Սյունյաց եպիսկոպոս Երանելի Պետրոսի ներբողից, որ ստեղծել է վեհ Բաբիկի մասին, որին պարսիկները իրենց լեզվով լավ էին կոչում[134]։ Այս սխրալի ու հրաշալի եղելություններից հետո պարսից Շապուհ արքան կանչեց Բաբիկին՝ մեծ ցնծությամբ ու բերկրանքով, կատարելու նրան խոստացած իր մեծ խոստումները։ Եվ նա արքայից արքա Շապուհից խոսք առավ՝ վերացնելու նրա պալատում դրված հնոցի մոխրով լի սանդը, որը ծեծելիս մոխիրը նկատի ունենալով ասում էին. «Սյունյաց տերերի նախապատիվ գահակալությունը այս մոխրի հետ թող ցած թափվի, այդպես էլ՝ նրանց կյանքն ու մտադրությունները»։ Արքայից արքան մեծապես զարմացած հրամայեց սանդը վերցնել այնտեղից։ Ապա Բաբիկը խնդրեց արքայից արքային, որ միայն իր հայրենի աշխարհը՝ իր տոհմի նախնական բնիկ տերությունը իրեն վերադարձնի։ Արքայից արքա Շապուհը նրան ընդառաջեց. մեծ պատվով ուղարկեց իր Սյունիք աշխարհը և արտոնեց գահակալ դառնալ՝ Բագրատունի ու Մամիկոնյան իշխանների հետ հավասար աստիճանով։

Եվ Բաբիկը, անցնելով Երասխ գետը, կառուցում է մի գյուղաքաղաք ու անունը կոչում Նախկորզան[135], որ նշանակում է «նախ այն կորզելով իրեն վերցրեց իր հայրենիքից»։ Ինչպես վերն էլ ասացինք, պարսից Շապուհ արքայի՝ Որմիզդի որդու վաթսունութերորդ և Հայոց Խոսրով թագավորի երկրորդ տարում Բաբիկը Սյունիքի տիրակալ դարձավ. նրանից էլ ստացավ իշխանությունը։ Սա եղավ Հռոմեական հարյուր քսանչորս թվականին, որը ստույգ իմացանք,— հայկական թվականությունից էլ հարյուր երեսունութ տարի առաջ[136]։

ՇԱՂԱՏԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՑՆՎԵԼԸ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ԵՂԱԾ ԱՆՁԱՓ ՍՐԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՋԵՐԻ ՈՒ ՆՇԱՒԱՐՆԵՐԻ[137] ԳՏՆՎԵԼԸ. ԳՈՐԻ, ԳԱՋԱՆԻ ԵՎ ՈՒՐԻՇ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ՝ [ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆԸ] ՀԱՎԱՏԱԼԸ. ՏԻՐՈՑ ԵՐԵՑԻ ՀՐԱՇՔՆԵՐԸ

Ուրիշ ոչ մի բան կյանքում [ավելի] բաղձալի չէ, քան միայն մարդու սեփական ժառանգությունը, որի մեջ ծնվել, սնվել է ու կամենում է վայելել։ Մոր ստինքների ու հոր գութի նման այն քաղցր է թվում ժառանգորդի հոգում։ Այդ պատճառով սա միշտ ձգտում է շրջել և տեսնել, ուրախանալ ու զվարճանալ նրանով, ինչպես այս գովելի և քաջ երիտասարդ Բաբիկը, որ իր հայրենի ժառանգությանը տեր դառնալուց հետո ելնում է որս անելու Սյունյաց որսատուն ու որսատուն վայրերի լեռներում, ուրախանալու և զվարճանալու սովոր տեսարաններով՝ խնջույքներով ու խրախճանքներով, նաև տեսնելու գավառների որպիսությունը՝ իր իշխանության առաջին տարում։ Նկատի առ, որ սա ոչ թե ինչ-որ աշխարհիկ զվարճության դատարկ գործ էր, այլ հոգուց էր մղված։ Եվ նա, այդպես առաջ անցնելով, տեսավ այս սիրելի աշխարհը ողորմելի տեսքով՝ մարդ ու անասունից թափուր, գեղեցիկ և հարմարավոր ավաններն ու շենքերը, գյուղերն ու ագարակները հիմնակործան արված, ամբողջը ոչնչացված ու ավերակ դարձված։

Այս ողբալի պատկերները տեսնելուց հետո անցնում է Շղուկ գավառը, հասնում է Շաղատ բնակելի ավանը, դիմում է դեպի արևելյան կողմի հանդիպակաց մի բլուրը։ Հենց այդ ժամանակ բլրից մի եղջերու է դուրս գալիս և խուճապի մատնվելով փախչում է՝ իրեն գցելով եկեղեցաբլուրը։ Բաբիկը, արագաքայլ ձիով հետապնդելով, եղջերուի ետևից բարձրանում է եկեղեցաբլուրը։ Եվ այն ժամանակ ձիու ոտքերը խրվում են բլրի մեջ, իսկ եղջերուն բլրում աներևութանում է։ Սյունյաց տեր Բաբիկը, ձիուց իջնելով եկեղեցաբլրի վրա, հրամայում է բազմությանը ձիու խրված ոտքերը դուրս քաշել բլրից։ Եվ երբ Սյունյաց տեր Բաբիկի շքախմբի բազմությունը ուժգնորեն դուրս է քաշում, կրկին սաստիկ զարմանք ու ահ է համակում ամբողջ բազմությանը, որովհետև ձիու ոտնատեղե-

բից անուշահոտություն է բուրում և գրեթե ամբողջ գավառաձորը լցնում։ Սյունյաց տեր Բաբիկը հրամայում է բազմությանը՝ քանդել բլրի հողը։ Եվ [քանդելով] հողը՝ նրա տակ տեսնում են քարակոփ չքնաղաշեն եկեղեցի, որպիսի հրաշալի ճարտարապետական կառուցվածք ուրիշ ոչ մի տեղ չկար. գմբեթն ու խորանները քառակողմ էին, միահարկ, մեկ [ընդհանուր] տանիքով և ոչ թե առանձին-առանձին, ինչպես ուրիշ քարակերտ եկեղեցիներն են։

Եվ բացելով Ստեփանոս Նախավկայի սուրբ եկեղեցու դռները՝ տեսնում են բազմաքանակ ոսկե ու արծաթե խաչեր, բազում պատվիրանագրքեր, Սյունիքի բոլոր եկեղեցիների ուրիշ սպասքներ՝ յուրաքանչյուրը իր գյուղաքաղաքի գրությամբ, ինչպես նաև սուրբ ու պատվական նահատակների անթիվ և անհամար նշխարները, որոնք մնացել էին եկեղեցու պատերի մեջ։

Շաղատի եկեղեցու այս հայտնությունը և սրբությունների գյուտը եղան հոռի ամսի[138] մեկի օրը։ Եվ այն ժամանակ ամեն տարի Սյունյաց տերն ու եպիսկոպոսը հանդես գումարելով՝ տոնախմբությամբ նշում էին սուրբ եկեղեցու երեման օրը՝ որպես ամբողջ Սյունյաց աշխարհի մայր եկեղեցու [օր]։ Եվ այն օրը մաղթողական ժամերգությամբ ինչ որ խնդրում էին աստծուց, լինում էր հրաշքների կատարումով։ Սուրբ Ստեփանոսի սուրբ եկեղեցու տեղի ունեցած հրաշքները, զանազան հիվանդությունների բուժվելը տեսնելով՝ հավատացին ու մկրտվեցին այն ժամին այնտեղ հանդիպած Գոր և Գազան երկու եղբայրները՝ իրենց գնդի պարսիկ բազմությամբ հանդերձ, որոնք եկել էին Պարսկաստանից Սյունյաց տեր Բաբիկի հետ։

Սյունյաց տեր Բաբիկը վիճակով բաժին է հանում Գորին ու Գազանին. Գորին՝ ավագ եղբորը, հասնում է Խոտ ավանը[139], իսկ արի քաջամարտիկ Գազանին՝ Շաղատ գյուղաքաղաքը՝ հանդերձ եկեղեցով, որը այն ժամանակ եկեղեցիների մայր էին անվանում։ Սյունյաց տեր Բաբիկը վանական պաշտոնյա է նշանակում ընտրյալ Տիրոտին՝ հավատարիմ, սուրբ ու ներանձնացած քահանային, որի նման առաքինի վարքով ոչ ոք չկար այն ժամանակ։ Հրաշագործ հավատքով էր, որի մասին մի փոքր պիտի հիշատակենք։ Երբ գայլը ուլ կամ գառ

էր հափշտակում, և Տիրոտին իմաց էին տալիս, նա իր սուրբ աջով գազանի դեմ խաչի նշան էր անում ու ասում. «Քրիստոսի միջոցով եմ ասում՝ չհամարձակվես տանել», և գազանը, ուլը կամ գառը ցած դնելով, հանդարտ կերպով հեռանում էր։ Շաղատի մի թաղը գտնվում էր լեռան վրա, մի ծովակի[140] եզրին։ [Այնտեղ մի անգամ] երանելի Տիրոտը նըստած էր մարդկանց մեջ. ծովակում գորտերն իրենց սովորության համաձայն կռկռոց էին տարածում՝ շարունակ աղաղակելով։ Երանելի Տիրոտը բարկացավ նրանց վրա ու ասաց. «Օ՜հ, դադարեցրե՛ք ձեր անհեթեթ կռկռոցը»։ Եվ գորտերը երկար ժամանակ կարկամեցին ու չկարողացան կռկռալ։ Մի օր էլ սուրբ, երանելի Տիրոտը եկավ նույն տեղը, և տեղի բնակիչները հիշեցրին գորտերի մասին։ Նա ասաց. «Հրամայել եմ նրանց ազատ զգալ ու նույն դատարկ կռկռոցը վերսկսել»։ Եվ գորտերը իսկույն աղաղակ բարձրացրին ու առաջվա պես բարձր ձայնով շարունակ կռկռում էին։

Մեկը ևս. մի օր երեկոյան տեսավ օրանը հրդեհված, գավազանը նետեց օրանի կրակի մեջ։ Եվ առավոտյան, երբ համապատասխան աղոթքը վերջացրեց, կարգադրեց բերել իր գավազանը։ Մարդիկ աղմուկ բարձրացրին ու ասացին. «Օրանը սաստիկ այրվել է, այժմ գավազանը որտե՞ղ փնտրենք, բարի տեր աստծու»[141]։ Իսկ Տիրոտը սաստելով նրանց ասաց՝ բերե՛լ։ Եվ մարդիկ գնացին, տեսան սուրբ Տիրոտի գավազանը կրակի մեջ անվնաս մնացած՝ աստծու շնորհիվ։ Մեծ զարմանքով երանելի Տիրոտի մոտ բերեցին գավազանը՝ կարմիր գույն ստացած, ինչպես կրակ։ Եվ նա, այն վերցնելով իր ձեռքը ու նայելով գույնին, ասաց. «Այսպես արյունագույն, կարծես կրակ կտրած, կսկծալով այրվում է օրանի ներսը սիրտը»։ Այլև՝ «Հավիտենական անողորմ, անշեջ հրով պիտի դատվեն այն վնասակար գործը կատարողները»։

Երանելի Տիրոտը մի մշակ ուներ, որը դաժան ու չարաչար վնասներ գործեց, և սուրբը չարանալով՝ ցասմամբ նրան ասաց. «Գնա՛, քո վարձը չեմ տալիս»։ Նա, գաղտագողի ու խորամանկությամբ մի կացին վերցնելով, գնաց։ Երբ հասավ Անձնատու փոսը, որը գտնվում է եկեղեցու արևմտյան կողմում, մոտ մի ձայն տալու հեռավորությամբ, ոտքերը կապ ընկան, ու չկարողացավ քայլել։ Վերադառնալով սուրբ Տի-

բոտի մոտ, զղջալով ու մեղա գալով՝ կացինը դրեց նրա առաջ։ Իսկ հեզ, բարեպաշտ, սուրբ ու սիրելի Տիրոտը դարձյալ[142] *վարձը տվեց, օրհնեց և հեռացրեց իրենից։*

Մեկ ուրիշն էլ. գետի մյուս կողմում մի ջրաղաց կար։ Երանելի Տիրոտը, ջրառատ տեղերով[143]*, միշտ խաչակնքելով, աներկյուղ անցնում էր գետը։ Օրերից մի օր տեսավ ցանկալի ու գեղեցկատես մի ջահել էշ և իր մտքում ասաց. «Գնամ, այն իշով անցնեմ գետը»։ Եվ նստեց էշն ու մտավ գետը։ Գետի մեջ էշը նրան դառնալով փայլատակումով ցույց տվեց իր երկաթե ատամները*[144] *և ասաց. «Դու իշի այսպիսի ատամներ տեսե՞լ ես»։ Իսկ նա, պատյանից հանելով իր փոքրիկ դանակը, ցույց տվեց և ասաց. «Իսկ դու իշի այսպիսի մտրակ տեսե՞լ ես. ինձ անցկացրո՛ւ գետը, եթե ոչ՝ կխփեմ, կվիրավորեմ քեզ»։ Եվ սրբին անցկացնելով գետը՝ չար սատանան աներևութացավ։ Երանելու միջոցով ուրիշ շատ հրաշագործություններ էին կատարվում. պես-պես ցավեր ու տառապանքներ դադարում էին, դիվահարներ՝ բուժվում նրա աղոթքներով։ Այդ սուրբը վախճանվելով գերեզման դրվեց սուրբ եկեղեցու արևելյան կողմում, որտեղ էլ նրա գերեզմանից շատ օգնություն էր լինում հիվանդներին։ Այլև՝ նրա կողմից իրավունք չվերապահվեց կանանց՝ մտնել սուրբ եկեղեցին, ինչպես կին ունեցող քահանա[ներ]ին՝ այս սուրբ տեղում պաշտոնավարել*[145]*։ Կրոնական այս կարգ ու կանոնով Շաղատի սուրբ եկեղեցին մնաց մինչև երեք հարյուր [=851] թվականը։*

ԺԲ

ԴԱՐՁՅԱԼ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԻ ՆՈՒՅՆ ՁԱՌՆԵՐԻՑ՝ ԱՆՑԱԾ ԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԶՐՈՒՅՑՆԵՐ ՇԱՂԱՏԻ ԿԿԵՂԵՑՈՒՄ ԵՂԱԾ ՍՐԲԵՐԻ ՆՇԱՆԱՐՆԵՐԻ ԳՅՈՒՏԻ ՄԱՍԻՆ. ՀՈՎՀԱԿԻՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԺԱՄԱՆԱԿՎԱ ՎԻՃԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՍՅՈՒՆՅԱՑ ԳՅՈՒՂԵՐԻ ՏԱՆՈՒՏԵՐԵՐԻ ԳԵՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ, ԵՎ ԹԵ Ո՛Վ ՆԱԽԱՊԱՏԻՎ ՈՒ ԳԱՀԱԳԼՈՒԽ ՀԱՍՏԱՏՎԵՑ

Երկար ժամանակներից հետո սուրբ եկեղեցու կուսակրոն քահանա և սպասավոր Հովհաննեսը գիշերը նույն սուրբ եկեղեցում առանձին աղոթք էր անում։ Եվ հանկարծ ցնցում

եղավ՝ անուշահոտության տարածումով։ Եկեղեցում, խորանի արևելյան կողմից աղյուսաձև մի քար պոկվեց պատից ու ընկավ բեմի սալահատակի վրա։ Քահանան, մեծ երկյուղով բեմ բարձրանալով, տեսավ բացված մի անցք և ներսում՝ սրբերի բազմաթիվ նշխարներ՝ յուրաքանչյուրի անվան գրությամբ դրված կողովների մեջ, լի անուշ ու հաճելի բուրմունքով։ Շտապով գնալով պատմեց աստվածապահ իշխան Խոսրովին, որը Գաղանի սերնդից էր։ Սա եկավ, տեսավ սրբությունները, փառաբանեց ու աղոթքներով գոհունակություն հայտնեց աստծուն և հրամայեց նույն աղյուսաձև քարով ծածկել սրբերի հանգստարանի տեղը։

Երանելի իշխան Բարիկը՝ Սյունյաց տերը, սահմանել էր, որ ամբողջ Սյունիքում նախաթոռ լինեն[146] *Շաղատի սուրբ եկեղեցու սպասավոր քահանաներն ու հավատացյալ աշխարհիկ պաշտոնյաները*[147]*, որպես մայր եկեղեցու և Սյունյաց ամբողջ աշխարհի մայրաքաղաքի պաշտոնյաներ։ Բայց Սյունյաց եպիսկոպոս, աստվածապատիվ և հոգևոր տեր Հովակիմի կողմից հիշատակվում է, որ պատարագի ժամանակ սաստիկ հակառակություն տեղի ունեցավ գյուղաքաղաքների նախաթոռ գերադասության ու նախապատվության վերաբերյալ, թե ո՛րն է լինելու [այդպիսին]։ Եվ Շաղատի Խոսրովը՝ Գաղանի սերնդից, շարադրված վճռագիրը*[148] *ներկայացրեց աստվածապահ ու բնիկ տեր Ատրներսեհին՝ Սյունիքի տիրոջն ու հայոց իշխանին։ Արտոնվեց շաղատեցիներին՝ որպես մայրաքաղաքացիների, առաջին տեղում նստել՝ վեհագույն պատվով։ Նույնպես և Սյունիքի վարդապետական առաջին աթոռը առաջարկվեց Գևորգին՝ Շաղատի վարդապետին։ Դրանից խիստ զայրանում է Փանոս Ուլծեցին՝ Սիոնի վանականը, և ակամա հեռանում, իսկ հավաքվածներից ոչ ոք դա բանի տեղ չի դնում։ Այնուհետև Ուլծի*[149] *և Աղխիատուի*[150] *միջև սաստիկ հակառակություն է ծագում։ Իսկ պատմությանը լավատեղյակ աղխիատուեցիները հաստատեցին, որ բովանդակ Սյունիքից ուլծեցիները պանդուխտ և եկվոր են Վրաց աշխարհից։ Շաքիին*[151] *ու Աղխիատուին առաջարկվեց Շաղատից հետո ունենալ գերադասության երկրորդ և երրորդ*[152] *բարձր պատիվը։ Գերադասության չորրորդ աստիճանն ստացավ Մորենի*[153] *մեծ գյուղաքաղաքը՝ հնից աղնվատոհմ լինելու համար։ Ապա*

ուշ ձեցիներին առաջարկվեց ընդունել հինգերորդ տեղը։ Եվ այնուհետև յուրաքանչյուրն իր քահանայական [դիրքով էր շարժվում]։ Սա էլ փոքր-ինչ հիշելով՝ գալիքի համար վերահաստու լինելու նկատառումով հայտնեցինք, որպեսզի հետնորդների միջև հակառակություն չառաջանա։

ԺԴ

ԴԱՐՁՅԱԼ՝ ԲԱԲԻԿԻՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սոսու պես վայելչագեղ, սիրասուն, շքեղազարդ ու գեղանի այն Բաբիկը՝ Անդոկի որդին, գովելի գործով և բոլորից գերազանց հավատով, Սյունիքի սեփական իշխանությունն ստանալուց և ամբողջ ավերված գավառները նորոգելուց հետո՝ կրկնակի անգամ առավել, քան առաջիններըը, ունենում է Վասակ անունով մի որդի։ Երբ [Վասակը] մեծանում էր, [հայրը] նրան նվիրում է պարսից արքա Վռամի արքունիքին։ Քանի որ յոթանասուներկու տարի թագավորելուց հետո վախճանվում է Շապուհը, և թագավորությունն ստանձնում է նրա որդի Արտաշիրը, [իշխում] երեք տարի, ապա՝ Կրմանը, այսինքն՝ Վռամը, տասնմեկ տարի։— Սա նա չէր, որ պատերազմեց Հայաստանի դեմ[154]։— Այնուհետև՝ Հազկերտը՝ տասնմեկ տարի[155]։ Իսկ Բաբիկը, ստանալով Սյունիքի իշխանությունը պարսից Շապուհ արքայի վաթսունութերորդ տարում և իշխելով քսանմեկ տարի[156], այս կյանքից փոխադրվում է դեպի երկնքի անփոփոխ թագավորությունն ու անվախճանելի ուրախությունը։ Իսկ նրա սենեկապետ Սամ Գնթունին գնում է արքայի պալատը և հայտնում մահվան բոթը։ Դրանից Վռամը տրտմում է և մորմոքում պալատում գտնվող մանկան համար, իր սենեկապետի հետ մտածում է [Սյունիքի] իշխանությունը հանձնել Վասակին ու նրան ուղարկել իր երկիրը։ Եվ սենեկապետն այս իմանալով գալիս է Վասակի մոտ ու նրան ավետում արքայի մտադրությունը։ Իսկ Վասակը, տարված լինելով շար ու չոր մտքերով, նրան ոչ թե ավետյաց է շնորհում, այլ, սառն ու անշնորհակալ պատասխան տալով՝ ասում է. «Ի՞նձ է տեր դարձնում [այն դեպ-

քում], երբ Սյունիքի ժառանգությունը իմ բուն հայրենական է»։ Սենեկապետը գնում, սա հայտնում է արքային։ Իսկ Վռամը մոայլվում է Վասակի խոսքերի վրա և հրամայում է ներս կանչել Բաբիկի սենեկապետ Սամ Գնթունուն, որին և նշանակում է Սյունիքի տեր։ Սա, իշխելով մեկ տարի, մեռավ՝ դավաճանությամբ թույն[157] խմեցված լինելով։ Նրանից հետո ինը տարի [իշխեց] Վաղինակը՝ Սյունիքի իշխանների բնիկ ցեղից։ Սրանից հետո էլ Բաբիկի որդի Վասակը Վռամշապուհից ստանում է իր իշխանությունն ու վարում երեսունինը տարի։ Ուրիշ զրույցներ ու գործեր ևս, որ եղել են սրանց օրոք, չենք անտեսի, այլ ըստ պատշաճի կհիշատակենք պիտանիների մասին։

ԺԴ

ՍՅՈՒՆԻՔԻ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԲԱԲԻԿԻՑ ՄԻՆՉԵՎ ՔՈՒՐԴՈՆ

Այսպիսով պատշաճ համարեցինք այստեղ նախ դնել իշխանների հաջորդական շարքը և ապա նորից անդրադառնալով ցույց տալ յուրաքանչյուրի ժամանակներում կատարված այն գործերը, որոնց մասին պետք է խոսել։ Այսպես. Բաբիկը Սյունիքի իշխանությունն ստանում է Շապուհից և ապրելով [իշխանության մեջ] քսանմեկ տարի՝ վախճանվում է։ Նրա սենեկապետ Սամ Գնթունին իշխում է մեկ տարի։ Վաղինակը՝ ինը, Վասակը՝ երեսունինը, Վասակին փեսա դարձած Վարազվաղանը՝ քսանհինգ։ Հինգ տարի ընդմիջում [է լինում]։ [Ապա իշխում է] Գդեհոնը՝ տասնյոթ տարի։— Այս [վերջին] երեքը բաժանվեցին եկեղեցու աստվածադրոշմ միաբանությունից՝ չարությամբ հիմարանալով և խաբվելով կրակապաշտներից։ Վռամն իշխում է յոթ տարի, ընդմիջում մեկ տարի, մյուս Վասակը՝ տասնմեկ տարի, Աշիրը՝ ինը տարի, ընդմիջում՝ երեք տարի, Բաբիկենը՝ տասը տարի, ընդմիջում՝ տասնմեկ տարի՝ երբ մյուս Շապուհն էր գահակալում, Հովհանը՝ տասնութ տարի, Վասղուղը մեկ տարի, Գրիգորը՝ տասը տարի, Միհրարտաշիրը՝ քսաներեք տարի, ընդմիջում՝ երեք տարի,

Պիրանը՝ մեկ տարի, ընդմիջում՝ երկու տարի, Սարգիսը՝ երկու տարի, ընդմիջում՝ երեք տարի, Սահակը՝ տասը տարի, ընդմիջում՝ տասներեք տարի, երբ պարսիկներն իշխեցին։ Գրիգորը, որ առողջ և ուժեղ կազմվածքի առավելության պատճառով «քաջաց նվիրակ» կոչվեց, իշխեց տասնվեց տարի, Հրահատը՝ տասնվեց տարի, Հովհանը՝ քսանյոթ տարի, Քուրդոն՝ տասնութ տարի։

Ահա սրանք են, որ Բաբիկից ի վեր մինչև այժմ իշխեցին՝ որդին հորը հաջորդելով, թվով քսան, երեք հարյուր երեսուներկու տարի[158]։ Իսկ «քաջաց նվիրակ» կոչված Գրիգորի մասին քեզ ցույց կտամ պատմությունը, որ իմանաս, թե սրանց տոհմը ոչ թե սոսկ հայկազուն է, այլ խառնված է Պահլավիկ և Արշակունի թագավորական ցեղին, ուստի այսուհետև սրանց ճանաչիր որպես Արշակունի զարմ ու Պահլավունի սերունդ, այնքան բարձր ու փառավոր, որ իշխող դիրքով հավասար էին պարսից և հայոց թագավորություններին։

Եվ օրերից մի օր այսպես եղավ. պարսից Խոսրով արքան՝ Որմիզդի որդին, որին ոմանք շահնշահ, այսինքն՝ թագավորների թագավոր են անվանում, աղնվականախումբ Արյաց գընդի հանդես կազմակերպեց և կամեցավ ճաշկերույթով զվարճանալ։ Մի խոշոր ու սևաթույր թռչնաքաշտ վերից վայր սլացավ, եկավ դեպի թագավորի սեղանը, ուզեց սեղանից բան փախցնել։ Իսկ թագավորը խրոխտացավ, ցասումով լցվեց՝ դա չարագուշակ բան համարելով։ Բայց այն ամբողջ բազմությունից ոչ ոք թռչունի եռևից չշարժվեց։ Ապա Գրիգորը, վերցնելով իր հաստաբեստ աղեղը, լայնաբացվածք աղեղից կորովաբար արձակեց նետը օդն ի վեր չափազանց բարձր, թռչունը վայր գցեց թագավորի առաջ, սեղանի մոտ։ Թագավորն ուրախությամբ խանդավառվելով իր մոտ կանչեց Գրիգորին և հրամայեց նրան պահանջել ցանկալի ամենամեծ բանը։ Եվ Գրիգորը՝ Սյունիքի տերը, ասաց. «Տե՛ր իմ, քանի որ հրամայեցիր պահանջել, թող արքայի դուստրը տրվի ինձ կնության»։ Եվ պահանջն անմիջապես կատարվեց բազմաթիվ մեծ պարգևներով ու շատ բարձր փառքով։ Սիսական ամբողջ նահանգն էլ ցնծաց։

ԹԵ ԻՆՉՊԵ՛Ս ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԵՍՐՈՊԸ ԳԱԼԻՍ Է ՍՅՈՒՆԻՔ ԵՎ ԳՈՂԹՆ, ՇՐՋՈՒՄ ԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՁԱՆԱՁԱՆ ՏԵՂԵՐՈՒՄ ԹԱՔՆՎԱԾ ԿՌԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՅՆՈՒՄ Է ՎԱՂԻՆԱԿ ԻՇԽԱՆԻ ՈՒ ՇԱԲՈՒԹԱՅԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

Պետի ցույց տամ այս աշխարհի կրկին լուսավորվելը[159] այն սուրբ և բազմերանելի մարդու՝ Մաշտոցի ձեռքով, որը Մեսրոպ է կոչվել։ Հայոց թագավորությունը երբ թուլացավ, ամեն ոք համարձակվեց ըստ իր բարքերի առաջնորդվել, ինչպես և այստեղ։ Քանի որ հեթանոսական աղանդը դեռևս տեղ-տեղ թաքնված մնում էր Սիսական և Գողթն գավառներում, այժմ համարձակաբար երևան հանեցին։ Իսկ երանելի Մեսրոպը արքունիքի դիվանի դպիր էր. և նա ցանկացավ մեկուսանալ այս խռովահույզ կյանքից։ Միայնակյացի տեսք ընդունելով՝ ձգտում էր իր նպատակին։ Գալով Սիսականի կողմը՝ հաճելի համարեց բնակվել Գողթան գեղեցիկ գավառում։ Խստակյաց ճգնությամբ շատ օրեր առաքինաբար ապրելով՝ իմացավ կռապաշտական աղանդի կրկին երևալը. սկսեց քարոզչությունը՝ մեծամեծ ու հսկայական հրաշագործություններով չտարբերվելով սուրբ Գրիգորից՝ Սիսական աշխարհը հավատքի բերելիս։ Սյունիքի բարեպաշտ Վաղինակ իշխանի հրամանով և օգնությամբ ջնջեց կռապաշտությունը՝ խորտակելով թաքցված կուռքերը։ Նույնպես և Գողթնեը մաքրեց իրենց Շաբիթա իշխանի օգնությամբ։

Եվ այնքան հալածեց դևերի բազմությանը, որ մարմնավոր տեսքով ծխի նման ծառանալով ու խումբ-խումբ վեր բարձրանալով՝ վայնասունով ու աղաղակով փախուստ տվեցին. Երասխն անցնելով ընկան Մարաց կողմերը։ Իսկ աստծու այն սուրբ մարդը այն ժամանակ Սյունյաց աշխարհում թողեց թարգմանիչ և ուսուցիչ իր ընտրյալ աշակերտներից Բենիամինին ու Անանիային։ Վերջինս էլ հետո ձեռնադրվեց եպիսկոպոս այդ աշխարհի համար, որ վերստին (մոլորության մեջ չընկնի)։ Ինքն էլ գնաց սուրբ Սահակի մոտ։

ՏԵՐ-ԱՆԱՆԻԱՅԻ՝ ՍՅՈՒՆՅԱՑ ՆՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԼԻՆԵԼԸ. ՆՐԱ ԱՂՎԱՆՔ ԳՆԱԼԸ ԵՎ ԱՅՆՏԵՂԻ ԵՍՎԱՂԵՆ ԹԱԳԱՎՈՐԻՑ ՊԱՏՎԻ ԱՐԺԱՆԱՆԱԼԸ

Վրա հասավ [ժամանակը], որ մենք պիտի պատմենք ցանկալի ու շատ լավ դեպքերի, այսինքն՝ մեր խավարած ու անգործության մատնված եկեղեցու և Սյունիքի մետրոպոլիտության աթոռի նորովի նորոգության մասին։ Չէ՞ որ այս աշխարհը վերակացու և ուսուցիչ չուներ վաղուց ի վեր, Անդոկի [ժամանակվա] ավերմունքից[160] մինչև Վասակ իշխանի տիրապետությունը։ Իսկ մեծ Սահակը[161], երբ իր հայրապետության ժամանակ վերանորոգում էր Հայաստանը, շրջում էր բոլոր տեղերում, ուղղում ու լրացնում եկեղեցու կարգերը, Մեսրոպի աշակերտ Անանիային էլ, որ թարգմանիչ էր ու առաքինությամբ լի, ձեռնադրեց Սյունիքի եպիսկոպոսության համար՝ նստելու մետրոպոլիտության աթոռին և կոչվելու հայոց պատրիարքի նախաթոռ։ Եվ նա եկավ, նորոգեց իր մեծ թեմի տասներկու գավառները։ Իսկ երբ վերին պարգևումով սուրբ Սահակի ու սուրբ Մեսրոպի ձեռքով սկզբնավորվեց հայ դպրությունը, Սյունյաց աշխարհում նա դպրոցներ հիմնեց և ղեկավար նշանակեց իր դասընկեր Բենիամինին։ Շատերին ջանադրությամբ սովորեցրեց հայերեն գրությամբ ու դարձրեց աստվածային կտակարանների[162] գիտակներ։ Եվ սա կարգավորելուց հետո իր հետ վերցնելով Բենիամինին՝ գնաց Աղվանից աշխարհը, Եսվաղեն թագավորի մոտ՝ Մեսրոպի խնդրանքով. և միասին նրանց ազգի կոպիտ լեզվին համապատասխան գիր ստեղծեցին[163]։ Մնացած կռապաշտությունը սրբեց, քրիստոնեական վարդապետությամբ լուսավորեց աշխարհը կրկին անգամ։ Եվ Բենիամինին թողնելով թարգմանության ու մանուկների դպրոցների [գործի] վրա՝ ինքն՝ Անանիան, կամեցավ այնտեղից վերադառնալ։

Իսկ Աղվանքի Եսվաղեն թագավորը, որ պարսից թագավոր առաջին Շապուհ Արտաշիրյանի քրոջ թոռն էր, նրան պատիվ անելով երախտահատույց է լինում. պարգևում է իր թագավորական դրոշը՝ մետաքսյա ոսկերիզ նուրբ հյուսվածքով,

գլխին ոսկեգունդ, վրան՝ պատվական խաչ։ Հրամայում է, որ Սյունյաց եպիսկոպոսները իրենց հետ այն շարունակ մանածեն՝ ի հիշատակ Աղվանքի թագավորների։ Սա մեզ մի փոքր ցույց է տալիս քերթողահայր Մովսեսը, իսկ ամբողջը ճշտությամբ՝ նրա աշակերտ Պետրոսը՝ Սյունյաց եպիսկոպոսը։ Երբ Հազկերտը չարչարում էր հայոց քահանաներին ու իշխաններին, այս Անանիան նրանց հետ էր[164]։ Սա հետո մասնակցեց Շահապիվանի ժողովին[165], որտեղ էր և Հովհան Մանդակունին. և նրանք եկեղեցու կանոններ ստեղծեցին։ Անանիան քառասուներկու տարի[166] մնալով Սյունյաց մետրոպոլիտության աթոռին՝ որպես Մեծ Հայքի պրոտոֆրոնտես[167], կյանքն ավարտեց, գնաց Քրիստոսի մոտ։

ՍՅՈՒՆՅԱՑ ԱՆԱՐԻ ՈՒ ՎԱՏ ԻՇԽԱՆ ՎԱՍԱԿԻ ԳՈՐԾԸ, ՆՐԱ ԿՈՐՍՏՅԱՆ ՊԱՏՃԱՌԸ

Ավա՛ղ խոսքիս և ափսո՛ս, որ սկսում եմ, որովհետև չեմ կամենում շարադրել այս պատմությունը ուրախ սրտով, այլ՝ լի տառապանքներով ու սգով, բազմահոծ, տարափանման ու մթագնած ողբերով։ Չէ՞ որ ընկավ մեզ պատշաճող պսակը, վերացավ թագավորությունը Արշակունիների ցեղից, քահանայապետությունը՝ սուրբ Գրիգորի սերնդից, քայքայվեց ու խանթարվեց իշխանավորության կարգը, բարին չքացավ, խաղաղությունն էլ տեղի տվեց. եկավ խռովությունը, թագավորեց չարը։

Երբ վերացավ հայոց թագավորությունը, որի վերջին թագավորն էր Արտաշեսը, սրա տեղը մարզպան նստեց Վեհմիհր Շապուհը՝ [իշխելով] տասներեք տարի։ Իսկ սուրբ Սահակը խնդրելով Վռամշապուհին՝ իր թոռ Վարդանին[168]՝ Համազասպի որդուն, դարձնում է Հայաստանի սպարապետ և ինքը, ավարտելով կյանքի ուղին, այս աշխարհից փոխադրվում է հրեշտակների շարքը։ Իսկ Վեհմիհր Շապուհի մարզպանությունից հետո նրա տեղը Հայաստանի մարզպան են նշանակում Սյունիքի տեր Վասակին։ Այսպիսով Հայաստանի մարզպանն էր Վասակը, իսկ սպարապետը՝ Վարդան Մամիկոնյա-

նը։ Վռամշապուհից հետո Պարսկաստանում թագավորում է Հազկերտը[169]՝ տասնինը տարի։ Սա մի հազարապետ ուներ՝ խիստ խորամանկ, Միհրներսեհ անունով։ Սա գտնվում էր Ատրպատական աշխարհում, խիստ չարահնար և խարդախ բնավորությամբ էր ու վաղուց ի վեր ուզում էր հնարներ գտնել քրիստոնեական ուսմունքը[170] վերացնելու և խափանելու համար։ Վասակը շքեղ ու բարձր էր մեր Հայոց աշխարհում, չափազանց հարգված ու երևելի՝ արքունիքում։ Սա ուներ երկու որդի՝ Բաբիկ ու Ատրներսեհ անուններով, և մի դուստր, որի համար իրեն փեսա էր դարձրել Վարազվաղանին՝ նույն Սիսական տոհմից։ Եվ սատանայական դիպվածով նրանց միջև ատելություն առաջացավ, ու Վարազվաղանն ատում էր իր կնոջը։ Այդ պատճառով Վասակը չարությամբ լցվելով կամենում էր սպանությամբ վրեժխնդիր լինել։ Վարազվաղանը դա իմանալով՝ փախչում-ընկնում է Միհրներսեհի մոտ ու սաստիկ չար նախանձից նրան հաճոյանալու նպատակով հրաժարվում է քրիստոնեական աստվածադրոշմ ուխտից և երկրպագում կրակին ու արեգակին։ Նա Միհրներսեհին՝ արքայի հազարապետին, շարունակ գրգռում էր Հայաստանի դեմ, որ թերևս կարողանար կատարել իր քինախնդրության մտադրությունը Վասակի նկատմամբ։

Իսկ Միհրներսեհը նրան ներկայացնում է Հազկերտին ու սրան հայտնում նրա մտադրությունը։ Եվ Հազկերտը մեծարում է Վարազվաղանին՝ դեպքը համարելով աստվածներից կատարված. մովպետան մովպետի և մյուս մեծավորների հետ խորհում է մեր Հայոց աշխարհը իրենց կրոնին դարձնել։ Բոլորն էլ հավանություն են տալիս։ Եվ թագավորը հրամայում է հրովարտակ[171] գրել՝ ուղղված հայոց իշխաններին, նրա հետ էլ ուղարկում է առուշաններ, թիկնապահ զինվորներ ու քուրմեր՝ իրենց մեծամեծների միջոցով։ Սրանք, գալով ու հասնելով մեր Հայոց աշխարհը, գրությունը հանձնեցին մեծամեծ նախարարներին, որոնք երբ տեսան[172], սաստիկ սուգ պատեց բոլորին։ Եվ շտապ կերպով մի վայրում[173] հավաքեցին երկրի եպիսկոպոսներին ու վանականներին, սեպուհներին ու ավագ տանուտերերին։ Նրանց հավաքի գլխավորն էր Հովսեփը[174], որը սուրբ Սահակից հետո դարձավ նրա աթոռի տեղապահը, այլև՝ Սյունիքի եպիսկոպոս Անանիան,

Ղևոնդ Երեցը։ Եվ միասին խորհրդածելով՝ իրենց կրոնի մասին չափազանց խիստ ու ամուր պատասխան գրեցին թագավորին[175]։ Եվ պատվիրակները վերադառնալով՝ արքային հանձնեցին պատասխանը։ Դրանից նա սաստիկ զայրացավ սրտի ահավոր տագնապով, օձի նման թավալգլոր էր լինում։ Շտապ կերպով հրավիրակներ ուղարկեց ու կանչեց հայոց բոլոր իշխաններին[176]. կամա թե ակամա բերել տվեց իր առաջ և մեծ ատյանի մեջ սաստով դիմեց նրանց՝ ընտրելու այս երկուսից մեկը՝ կա՛մ ընդունել մոգության կրոնը ու աղատվել և կա՛մ տոհմով ու զավակներով իսպառ ոչնչանալ։ Նրանք նույն պահին ոչինչ չպատասխանեցին. դուրս գալով խորհուրդ արին և որոշեցին միաոժամանակ արտաքուստ ընդունել արքունի հրամանները, վերադառնալ իրենց երկիրն ու հնարամտել պատերազմով կամ սիրաշահումով փրկելու երկիրը և իրենց։ Հենց այդպես էլ արեցին։ Եվ մեծ պարգևներով ուղարկվեցին իրենց երկիրը՝ հետները տանելով աստուշաններ ու այդ կրոնի քարոզիչներ։

Բայց թագավորը կասկածելով, որ կխաբվի, պատանդ վերցրեց Վրաց Աշուշա բդեշխին և Վասակի երկու որդիներին՝ Բաբիկին ու Ատրներսեհին։ Իսկ հայոց իշխանները նախապես միմյանց հետ ուխտ էին արել և Ավետարանի երդումով հաստատել ուխտագիրը՝ ապրել միաբանությամբ և մեռնել քրիստոնեական կրոնի համար։ Նրանք եկան-հասան իրենց երկիրը, Այրարատյան գավառը, ցույց տվեցին դաղտնի ուխտագիրը և մոգերից ոմանց սպանեցին, ուրիշներին էլ փախուստի մատնեցին, իսկ կրակը ցրիվ տալով թափեցին ջուրը։ Դրանից Վասակը մոայլվելով տարակուսում էր մեծ տրտմության մեջ, մեկ [այն պատճառով], որ ծնողական բոցը տաքացրեց նրա ներաշխարհը՝ պարսից արքունիքում պատանդ գտնվող որդիների համար, որոնք խելացնորելով ապշեցրին նրան, մեկ՝ երկյուղից թշնամի Վարազվաղանի, որը արքայի մոտ էր և սպասում էր Վասակի մահվանը, մյուսն էլ՝ որ [կարող էր] զրկվել մեծ ու երևելի փառքից և հայրենի իշխանությունից։ Այս երեք սաստիկ տարակուսանքներից խուճապի մատնված՝ միշտ տագնապում էր և գիշերը քուն չուներ, ցերեկը՝ հանդիստ։ Իսկ քանի որ մարդու համար սահմանված է այս կյանքում միշտ սխալվել ու սայթաքել,

այդ պատճառով էլ սա սխալվեց սուրբ Ավետարանի երդման մեջ։ Եվ համարձակվում եմ ասել, որ մի խոսքով ի վերջո մեղքը խոստովանել էր, և աստծու անսահման գթությունը նրան չէր թողել կորստի մատնվել։ Բայց սա արդյունք էր չար հուսահատության, որի հանգամանքը դատարանի ժամանակ աստված միայն գիտե և ուրիշ ոչ ոք։

Այսպիսով, այս պատճառով խաբվելով չար դևից՝ զղջման հույսով միառժամանակ ուխտը դրժեց, որ թերևս իրեն ու իր որդիներին զերծ պահի վրա հասած չարիքից։ Եվ Վարդանին հայոց զորքով ուղարկեց Աղվանք՝ պատերազմելու պարսիկների դեմ, որ եկել էին այնտեղ։ Իսկ ինքը Միհրներսեհ հազարապետին, այլև Աղվանքում գտնվող պարսից զորագլուխներին նամակների միջոցով հայտնեց իր հավատարմության միտքը՝ որպես թե պահում է թագավորի հավատքը, այս ևս օրինապահության համարելով, ինչպես որ ասում է աստվածային Գիրքը, «Հնազանդ եղեք ձեր մարմնավոր տերերին, ինչպես աստծուն»*։ Եվ սա ապստամբվեց Վարդանի, Կամսարականների ու նրանց հետ եղած մյուս ազնվականների դեմ՝ հանդերձ հայոց ուրիշ իշխաններով՝ Բագրատունի Տիրոց իշխանով, Խոռխոռունի Գադիշոյով, Վահևունի Գյուտով, Պալունի Վարազշապուհով, Գաբեղյան Արտենով, Ուրծի Ներսեհով և ուրիշ բազում պահապաններով, գերդաստանների ու տոհմերի սեպուհներով, որոնք, պարսիկների ահից վախեցած, կամենում էին հաճոյանալ թագավորին։ Հայաստանի բոլոր բերդերն ու ամրոցները իրենց ձեռքի տակ պահեցին։ Վասակը Մամիկոնյան, Կամսարական և այլ ազնվական տոհմերի բոլոր մանուկներին բերել տվեց իր մոտ ու փակեց Սյունյաց աշխարհիս անառիկ ամրոցներում։ Եվ այս այսպես լինելուց հետո Վարդանը լսեց դառն ու մահաբեր գույժը և մեծ հաղթանակով գալով Աղվանքում մղած պատերազմից՝ բազում օրեր ուրիշ ազնվականների հետ մտածում էր ինչ-որ հնարներ [գտնել]։ Եվ երբ ամբողջ հույսը կտրեցին, մահը գերադասեցին կյանքից։ Անցան Արտազ գավառը[177]. մեկ ամիս անց մեծ պատերազմ եղավ, որտեղ սուրբ Վարդանը ուրիշ ընկերներով նահատակությամբ պսակվեց։ Եվ Հազկերտն այս լսելով՝ անսահման մեծ ու դառն սգի մեջ ընկղմում էր։

* Առ եփես., Ջ, 5։

Իսկ Վասակը, իրեն համարելով հավատարիմ ու մեծավաստակ, վերցրած կալանավոր մանուկներին ու սուրբ քահանաներին, շարժվում, գնում էր արքունի դուռը, որտեղ մեծ ատյան եղավ, և հարց ու փորձ արեցին կալանավորներին Վասակի հետ։ Եվ անօրեն Վասակը լիովին պարտված ու հիմարացած գտնվեց։ Նա իր արժանի վաստակի դիմաց դա ստացավ։ Նույն արքունիքում բանտում մնաց, մինչև որ այնտեղ էլ մեռավ, որի հանգամանքների մասին քիչ լրիվ պատմում են Եղիշեն ու Ղազար Փարպեցին։ Իսկ Սյունիքի իշխանությունն ստանձնեց ուրացող Վարազվաղանը, որը դիվահար էր և դրանից էլ խեղդամահ եղավ։ Նրանից հետո նույն չարությամբ՝ անճոռնի հսկա Գդեհոնը, որը զորությամբ անպարտելի էր և միշտ պատերազմում էր մնացած հայերի դեմ, նրան՝ այդ ահավոր բուրգ Գդեհոնին էլ Վարդանի եղբորորդի Վահանը վերին օգնությամբ խփեց-սատկեցրեց պատերազմի ժամանակ, Շիրակի գավառում, Ըշտե անվանվող գյուղի մոտ։ Եվ նրա ծառաները թափելով փորոտիքը՝ նրան եղեդով ծածկեցին ու բերին-դրեցին դամբարանի մեջ, իր նախնիների մոտ։

ԺԸ

ՍՅՈՒՆՅԱՑ ՍՈՒՐԲ ԵՎ ՓԱՌԱԲԱՆՎԱԾ ԵՐԱՆԵԼԻ ՀԱՅԴՈՒԿ[178] ՍԵՊՈՒՀԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԸ ԵՂԱՎ ՄԻՀՐԱՆԻ ՁԵՌՔՈՎ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ԲԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ավելի լավ և ուրախալի է թվում ինձ այս վկայաբանությունը, քան վերը պատմածը, որովհետև եթե մի բանով պարտություն կրելով ամաչեցինք և կորագլուխ եղանք Սյունի իշխանների ամոթալի գործերի համար, ապա այս մյուսով գլուխներս բարձր պահած՝ պարծենում ենք և կարծես զարմանահույս պսակ մեր գլխին դրած՝ բուժվում ենք առաջին վերքերից, ճոխազարդ շքեղությամբ համարձակորեն ցնծում։ Քանի որ թեպետ Սիսական տոհմի ոստերը ցցվելով մի ժամանակ փուշ ու տատասկ տվեցին մեզ, բայց այս դեպքում ահա անուշահոտ վարդ ու շուշան և գեղեցիկ ու քաղցրահամ

պատուղ պարգևներին։ Եվ տերը հոտառեց այդ անուշ բուրմունքը։

Այսպես. թեև մեր երևելի Սիսական իշխանության տերերը, խաբվելով հին խաբողից, հետևեցին թագավորի կամքին և ժառանգեցին աշխարհիկ առօրեական ու անցողիկ փառքը, սակայն նրանցից ոմանք՝ մարմնով ու արյամբ եղբայրներ, իմաստնացած վերին իմաստությամբ ու հավատքի լույսով, չզնացին մոլոր շավղով, որն ուղղված է դեպի կորստյան վիհը, այլ հրաժարվելով բոլոր աշխարհիկ բաներից՝ թողեցին փառք ու մեծություն և գնացին երանավետ կանչի հետքով։ Նրանց անուններն են Բաբկեն, Բակուր և Հազդ։ Սրանք, դուրս գալով Սյունյաց գնդից, գնացին հայոց ուխտադրյալների հետ, որոնց գլուխն ու սպարապետն էր երանելի և քաջ Վահան Մամիկոնյանը՝ Վարդանի եղբորորդին։ Նրանք բազմաթիվ պատերազմներում մեծամեծ քաջագործություններ ցույց տվեցին։ Իսկ երբ Միհրանը[179] բազմաթիվ զորքերով եկավ Վիրք՝ պատերազմելու վրաց թագավոր Վախթանգի դեմ, Վահանը հայոց զորքերով գնաց Վախթանգին օգնության, որովհետև միմյանց դաշնակից էին։ Եվ իջնելով Ճարմանի դաշտը[180], կուր գետի մոտ՝ ճակատամարտեցին[181] պարսիկների դեմ ու մեկ անգամ հաղթեցին։

Իսկ վրացիները, վախենալով պարսիկների բազմությունից, փախուստի դիմեցին։ Եվ Վահանն այս իմանալով իր գնդով վերադարձավ այնտեղ, որտեղ և զոհվեց Վասակը՝ Վահանի կրտսեր եղբայրը։ Իսկ Միհրանը հետապնդելով զորքին՝ բռնեց Հրահատ Կամսարականին՝ Շիրակի տեր Ներսեհի եղբորը, որովհետև ձին սաստիկ փախս տալով նրան ցած գցեց։ Ապա հետապնդելով բռնեցին նաև գովելի Սյունի իշխան Հազդին։ Միհրանը շատ ուրախանալով ետ դարձավ։ Իսկ Վահանը Սյունյաց պայազատ Բաբկենին գտնում է սաստիկ վիրավորված և մի տեղ ընկած, նրան ձի է նստեցնում ու այնտեղից դուրս բերելով փրկում է, որը և վիրավորված լինելու պատճառով Վահանի հետ այլևս չի շրջում, այլ անցնում, գերնում է անվտանգ տեղեր։

Բայց պիղծ Միհրանը, երկու սեպուհներին վերցրած, մանէր ածում իր հետ ու հետապնդում Վահանին. նրանց էլ օրըստ կապանքներով իր առաջը բերելով՝ դաժան տանջանքներ

շարշարում ու նախատում էր, հնարավորություն ստեղծում նրանց իր կրոնին դարձնելու։ Կամսարական Հրահատը աներևույթ օգնությամբ դրանից ազատվեց։ Այդ պատճառով Միհրանը սաստիկ բարկացավ, այլև վախեցավ՝ չլինի՞ թե Սյունի Հազդն էլ նույն ձևով ազատվի. հրամայեց այն անմեղ տարեկան գառանը առաջը բերել, որ լինի իր տիրոջը անուշահոտ պատարագ։ Եվ քանի որ այս բռնակալը առավելապես զրպռվում էր Հազդի անօրեն ու կայենատիպ եղբորից՝ Սյունյաց տեր Գդեհոնից, դրա համար սաստիկ լցված էր ցասումով։ Հազդի հետ խոսել է սկսում մեծամեծ նախատինքներով և ահարկու հոխորտանքով, ջանում է ամեն տեսակի հնարներով խախտել քրիստոնեական հավատքից. խոստանում էր նաև պատժի փոխարեն մեծամեծ պարգևներ՝ եթե իր կամքը կատարի։ Իսկ այն երանելին միայն լուռ ունկնդրում էր նրա խոսքերին։ Ապա իր հրաշագեղ տեսքով հայացքն ուղղեց դեպի երկինք՝ իր փափագելիին, նրան օգնության կանչեց և սրտապնդվելով ու զոտեպնդվելով անճառելի հույսով՝ պատասխան տվեց Միհրանին և ասաց. «Եթե մեկը ժամանակավոր մարմնական կյանքը վաճառեր, և հնարավոր լիներ ես գնեի մարմնիս ցավերի պատճառով ու ապրեի կյանքի սիրո համար, ամբողջ ունեցածս կտայի և կգնեի։ Բայց հավիտենական պատուհասն ու անշեջ գեհենի սպառնալիքները ունեցվածքով գնելը խիստ անմտություն կլիներ, մանավանդ որ անհայտ է առևտրի ելքը, որովհետև ոչ ոք չգիտեր իր ապրելու կարճ կամ երկար լինելը, գուցե գնելով ուրախանա, բայց վաղը վախճանվելով կուտարկվի արտաքին խավարի մեջ։ Իսկ եթե ես սիրած լինեի աղտեղի ու կորստաբեր առևտուրը, ինչո՞ւ այժմ պիտի գնեի դա՝ ապրելու համար, այլ ավելի վաղ կատանայի փառքով ու մեծամեծ պարգևներով։ Սակայն ընտրեցի սա, որի մեջ ես գտնվում եմ, և սա էլ համարելով լավ ու պատվաբեր՝ հրճվում եմ և ուրախ եմ մեռնելու Քրիստոսի համար, քան թե հազարավոր տարիներ ապրել շատ մեծ փառքով՝ ուրացության մեջ, և անվախճան պատուհասի ժառանգորդ լինելու։

Երբ անօրեն պարսիկները սուրբ Հազդից այս խոսքերը լսեցին, անվանդակ գազանի նման հարձակվեցին նրա վրա և ուզում էին ողջ-ողջ խմել նրա արյունը։ Եվ մարդասպանները նրան տարան սուրբ ու առաքելական նահատակ Գրիգորի

մատուռի մոտ, այն գյուղը, որ կոչվում է Բագավան՝ Վաղարշակերտ գավառում, Բագրեւանդ նահանգում, Նպատ կոչված լեռան լանջակողմում, սուրբ մատուռի տեղի մոտ, մոտավորապես երկու քարընկեց հեռավորությամբ։ Այնտեղ կտրեցին սուրբ գլուխը, որը քրիստոնյաները վերցնելով տարան, թաղեցին Գրիգորի սուրբ մատուռի մեջ։ Սյունի սուրբ սեպուհը՝ երանելի նահատակ Հազդը, սպանվեց Հոռի ամսի[182] տասնվեցին։ Նրա վրա մեծամեծ հրաշքներ եղան. բոլոր հիվանդները բուժվում էին։ Նա մեզ և այս աշխարհի համար բարեխոս է Քրիստոսի մոտ, որին հավիտյան փա՛ռք[183]։

ԺԲ

ԱՅՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ԹԱՂՎԱԾ ԵՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՏԱՐԲԵՐ ՏԵՂԵՐՈՒՄ. ԱՅԼԵՎ ՎԿԱՅԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԿԱՌՈՒՑՎԵՑ ԵՂԵԳԻՔ ԵՎ ՄՈԶԱՆ[184] ԳԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ, ԱՅՆ ԲԼՐԻ ՄՈՏ, ՈՒՐ ԱՄՐՈՑՆ ԷՐ

Մեր Հայոց աշխարհի ավերումից և սուրբ Վարդանանց [պատերազմի] ավարտից հետո պարսկական սուրը քսան երեք տարի չդադարեց արամյան սերունդը[185] կոտորելուց, քանի որ Հազկերտից հետո թագավորեց անիծյալ արյունարբու Պերոզը[186]՝ քսաներկու տարի, որը խստացրեց մեր Հայոց աշխարհի անողորմ կոտորումն ու գերումը, այրումն ու քանդումը։ Իսկ հեփթաղների[187] թագավորի կողմից նրա սպանվելուց և ամբողջ տնով ու զավակներով բնաջնջվելուց հետո Պարսկաստանում թագավորում է խաղաղասեր Վաղարշը[188], որն իր տիրապետության առաջին տարում հաշտություն կընքեց Վահանի և հայոց ուրիշ նախարարների հետ[189]։ Վահանին նշանակեցին մեր երկրի մարզպան։ Երդման պայման կնքեցին ու խաղաղությունն հաստատեցին Հայաստանում։

Իսկ սուրբ Վարդանից հետո պարսկական զորքը վխտում էր ամեն տեղ. ոմանք արշավում էին փախստականների հետևից, ոմանք՝ բերդերի ու ամրոցների դեմ և ձգտում էին բնաջնջել, արմատախիլ անել հայ ժողովրդին։ Ամեն մի հայ զինվորի դեմ սուր կար մերկացված. ուզում էին, որ բոլորը միաձայն ուրանան Քրիստոսին և ընդունեն արեգակի պաշտա-

մունքը, հակառակ դեպքում մեռնեն անմիջապես։ Այդ պատճառով էլ մեր Հայոց երկրի բոլոր քարքարուտները, խորաձորերը, հովիտներն ու բլուրները լցվեցին նահատակներով և կեսպիշերին փայլող աստղախմբերի նման թանձրախիտ էին երկրի երեսին։ Այսպես էլ կարելի էր տեսնել մեր Սիսական աշխարհում, Վայոց ձոր գավառում, ուր հայոց զորքերից փախել-ելել էին և ուզում էին անցնել Արցախի ամուր աշխարհը[190]։ Նրանց հետապնդեց Աթաշխուդայի չարահնար պարսկական անիծյալ զորքը[191]։ Հասնելով Վայոց ձոր գավառի մեջտեղը, Եղեգիս և Մողան գետերի միջև գտնվող քարաժայռերով պատած բլրի մոտ, [ուր դիմել էին փախստականները] տեղի ամրության պատճառով, մեծ արյունահեղություն արեցին։ Քրիստոսի անվան պատճառով կոտորեցին բազմաթիվ գեղեցիկ մարդկանց՝ հայոց ազնվական տոհմերից, որոնց վրա վերուստ զարմանալի հրաշքներ եղան։ Իսկ մյուսներին հետապնդեցին և նրանց մի մասին հասնելով մի բերդաժայռի ստորոտում, նեղ ձորակի մեջ՝ այնտեղ կոտորեցին. սրանց գլխավորի անունը Մարտիրէ էր։ Հենց այն տեղն էլ կոչվեց Անգեղաձոր[192]։ Եվ այնտեղից արշավելով վրա հասան երեք հարյուր մարդու Ոստինք և Արտաբույնք[193] կոչված [գյուղերի մոտի] գետախառնման տեղում, որտեղ նրանց էլ խողխողեցին, որոնց վրա հետագայում տեղի բնակիչների կողմից եկեղեցի կառուցվեց։ Եվ պարսիկներն այնտեղից մի փոքր անցան դեպի ձորաբերանը, որը ձախ կողմից դեպի վեր նայում է Ցաղաց քար[194] կոչված սուրբ վանքին՝ կառուցված բարձրավանդակի վրա, երկու այն գյուղերի[195] սահմանների միջև, որ վերը նշեցինք։ Այնտեղ ևս կոտորեցին սեպուհ մարդկանց և ընտիր զորականների մեծ բազմություններ։ Ապա եկան գյուղի հրապարակը, վրաններ խփեցին, կոտորածից հոգնած ու թուլացած՝ ուզեցին գիշերել։ Իսկ կեսգիշերին մի պարսիկ, որ զորքի դեսքն էր, տեսավ երկինքը բացված և ուժեղ լույս սփռված սպանվածների վրա ու մի ոսկեղեն կառք խիստ բարձր՝ վրան նստած մի կին՝ թագավորական ծիրանի զգեստներով, հրեշտակների հսկայական զորախմբերով շրջապատված։ Նա նայում էր կոտորածին, ողբագին լալիս ու գգվում ընկածներին մեկ առ մեկ։ Եվ այն պարսիկը զարհուրելով կամեցավ իմաց տալ իրենց զորքին, բայց ոտքերն

ու լեզուն կապվեցին։ Ապա մեկը սրբերի զորախմբերից մոտեցավ նրան, և նա հարցրեց՝ այդ ո՞վ է։ Իսկ հրեշտակն ասաց. «Դա երկնային թագավորի մայրն է՝ որ իջել է նահատակների ու իր որդու սիրելիների մոտ և ուզում է մեկ ատ մեկ փառաբանել նրանց»։ Այդ տեսարանը մնաց մինչև առավոտ ու աներևութացավ։

Իսկ երբ լույսը բացվեց, զորքը կամեցավ այդտեղից հեռանալ, այն մարդուն գտան թուլացած, ընկած։ Նրան հարցրին պատճառը, բայց նա ուրիշ բան չէր կարողանում պատասխանել, միայն մատով ցույց էր տալիս ու լեզվով ասում. «Մայր անդ այ, մայր անդ այ»[196], որի համար էլ մինչև այժմ այն տեղի անունը Մարանդ է կոչվում։ Եվ այն պարսիկը գնաց, սրբերի [ոտքն] ընկավ, բուժվելով ինքն էլ քրիստոնյա դարձավ ու իր կյանքի բոլոր օրերում ծառայում էր սրբերին։ Հետո քրիստոնյաները գնալով նրան էլ ամփոփեցին սրբերի մեջ ու վրան մատուռ շինեցին։ Իսկ առաջին սրբերին, որ սպանվել էին բլրի մոտ, ժամանակին թաղել էին քրիստոնյա մարդիկ։ Այդ ժամանակ կաթողիկոսն էր Գյուտը, որը, այդ մասին լսելով, կարգադրում է սրբերի վրա մեծ վկայարան կառուցել ու նրանց ոսկրերը հավաքել վկայարանի մեջ։ Ապա Հրեն ու Շահիբեռը, Արշեն երեցն ու Աբդիոն գործի անցնելով՝ սուրբ կաթուղիկեի հիմքը դրեցին երանելի Գյուտի՝ հայոց կաթողիկոսի իններորդ տարում[197], ամառնամուտի ամսի հինգերորդ օրը։ Կառուցումն ավարտեցին մեծ գանձեր ծախսելով։ Կանգնեցրին մի երկնանման ճեմարան հրաշակերտ կառուցվածքով՝ երկնագմբեթ, եռախորան, երկու կողմերից գավիթներ ու սրահակներ, վերնատներ՝ սյուներով և սքանչելի հորինվածքով շինված։ Եվ ամբողջ վայրը, մեծ գետից մինչև վեր, Սրկղոնք կոչված լեռնակողմը որպես կալվածք ընծայվեց եկեղեցու պաշտոնյաներին։

Երբ գործն ավարտվում է, գալիս են երանելի Գյուտ կաթողիկոսը և Սյունիքի եպիսկոպոս Անանիան ու բազմամարդ հանդեսով սրբերին տեղափոխում են հանգստյան և ութ օր տոնում են սուրբ եկեղեցու նավակատիքը[198], ի փառս հավիտյան օրհնյալ մեր աստված Քրիստոսի։ Բայց այժմ ավերվելուց հետո տեղը դարձել է գեղջուկների բնակավայր և կոչվում է Խոտորալեզ[199]։ Ահա այս ամենն իմացանք իր արձանագրություններից, մի մասն էլ՝ գրքերից, տեղերի ու նահատակների անուններից, հավաստի հին ավանդություններից, և [այսպես] բոլորին ստույգ կերպով տեղեկանալով՝ ավանդեցինք ձեզ։

Ի

ՍՅՈՒՆԻՔԻ՝ ԱՆԱՆԻԱՅԻՆ ՀԱՋՈՐԴԱՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ, ԱՅԼԵՎ ՏԵՐ-ԵՐԻՑԱԿԻ ՍՔԱՆՉԵԼԻ ՕԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Սյունիքի աստվածային սուրբ եպիսկոպոս Տեր-Անանիայից հետո աթոռակալում է Տեր-Նուն՝ բարի ու լավ մի մարդ, ութ տարի, նրանից հետո՝ Գաղատը՝ տասնյոթ տարի, սրանից հետո՝ Մուշեն՝ երեսունվեց տարի։ Եվ ապա Երիցակավանքի[200] սուրբ վանահայր, մեծ տնտեսվար[201], խարազնազգեստ ու խստակրոն ճգնավոր Երիցակին հարկադրելով՝ բերում, նշանակում են Սյունիքի եպիսկոպոս։ Նա մնաց մեկ տարի, որի հանգամանքները արժանի են [առանձին] համառոտ հիշատակության։ Պարսից Կավատ արքայի տարիներին, Վահան Մամիկոնյանի՝ հայոց մարզպանության և Տեր-Մուշե կաթողիկոսի հայրապետության ժամանակ վախճանվում է Սյունիքի երանելի եպիսկոպոս Մուշեն՝ աթոռակալելով երեսունվեց տարի։ Եվ քանի որ Սյունի իշխանը մեռել էր, բայց կար նրա կինը՝ մեծահավատ, լի ամենայն բարեպաշտությամբ՝ Սահակիա անունով, իսկ [բնակիչները] հոգևոր առաջնորդ չունեին, ուստի նահանգի բոլոր ազնվականները, տանուտերերն ու ավագ քահանաները բողոք բարձրացնելով դիմեցին բարեպաշտուհի Սահակիային, իրենց համար առաջնորդ պահանջեցին։ Եվ նա պատվիրակություն կազմեց մեծ ու պատվավոր մարդկանցից, ընտիր քահանաներից, բազմաթիվ ընծաներով ու պիտանի նվերներով ուղարկեց հայոց սուրբ կաթողիկոս Մուշեի մոտ և թախանձանքով խնդրեց նրան գալ իր աշխարհը, ընտրել արժանավոր մարդու և դնել Սյունիքի մետրոպոլիտության աթոռը։ Եվ նա տիրաբար ունկնդրեց ու, գթալով իր հոտին, գալուց ոչ քե հրաժարվեց, այլ հրամայից ըստ հայրապետական ճոխության կազմակերպել ուղևորությունը։ Հեծած ոսկեզօծ թամբով սպիտակ ջորի՝ եպիսկոպոսներով, բազմախումբ

սպասավորներով, առջևում բռնած աստվածընկալ ոսկեփայլ, արևակերպ ցոլքերով խաչը, սաղմոսներով ու քաղցրաձայն երգերով ուղևորվեցին։ Եվ երբ հասան Սյունիքի սահմաններ-ը, Վայոց ձոր գավառը, տեսան, որ երկար ժամանակ երաշտ է եղել, և բոլոր բույսերը ողորմելի տեսքով թարշամել են։ Ապա հայրապետը, արտասվագոչ պաղատանքներով ձեռքերը վեր բարձրացնելով, գթություն խնդրեց աստծուց։ Եվ հենց նույն ժամին տերը հաճելի անձրև բերեց։ Երեք օր ու գիշեր տեղումը չէր դադարում, ու ամբողջ բնակչությունը զարմա-ցած մեծ գոհունակությամբ փառաբանություն էր հղում եր-կինք։

Իսկ երբ մոտենում էին Սյունիքի իշխանների գահատե-ղին, առջևից լրաբերներ ընթացան։ Եվ տիկինը իր որդով, ամբողջ աղատագունդ հեծելազորով և քահանաների ու տա-նուտերերի մեծ ամբոխով ընդառաջ ելավ կաթողիկոսին։ Մեծ խնդությամբ հանդիպելով՝ նրանք բոլորով ծնկի իջան ու երկրպագեցին։ Աջ ու ձախ կողմերից մի մասը հետիոտն, մի մասը ձիով էր ընթանում և օրհնության երգեր էին երգում այնքան բարձր ձայնով, որ ամբողջ գավառի ձորը լցվում էր՝ ինչպես ամպերի որոտումից։ Եվ այսպես փառավորությամբ տարան, իջեցրին արքունական դահլիճ[202], նստեցրին ոսկե-թել ու մարգարտազարդ բազմոցին, իշխանների գահի վրա, կից վտակաց կոչված տեղում։ Այնտեղ երեք օր հանգստա-նալուց հետո հայրապետը հրաման տվեց բազմությանը՝ իրենց համար առաջնորդ ընտրեն, որ ինքը ձեռնադրի։ Ապա ամբողջ բազմությունն աղաղակ բարձրացնելով միաբերան ասաց. «Մենք մեր հոգիների վերատեսուչ ենք ուզում հայր Երիցակին. նրանից բացի, մեզ ուրիշ ոչ ոք պետք չէ»։ Հայ-րապետը հրամայեց երիվարներ պատրաստել, որ [մարդիկ] շտապ կերպով գնան նրա կացարանը։ Իշխանին էլ ասաց. «Դու գնա որսի պատրվակով և վանքի դուռը բռնիր, որ չլի-նի թե իմանա ու դուրս գա, փախչի, մեր շարշարանքն էլ իզուր անցնի»։ Իսկ տիկին Սահակիան նրան տվեց արքունի վրա-նը ամբողջ կահույքով և նստեցրեց սպիտակ ջորիների ոսկե-պատ կառք։ Նաև ամբողջ բազմությունը, գրոհ տալով, գնաց նրա հետից։ Երբ նրանք հասան Երիցավանքի դուռը, որը գտնվում է Բաղք[203], այսինքն՝ Քաշունիք, իսկ այժմ

Բարկուշատ կոչվող գավառում[204], սուրբ Երիցակն ուղեց պա-րանոցներով պարսպից իջնել ու փախչել, բայց պահակները չթո-ղեցին։ Այնտեղի վանքը գեղեցիկ էր, զարմանալի տեսքով. եկեղեցին մի բարձրադիր տեղում էր՝ կառուցված նույն Երի-ցակի ձեռքով, սուրբ Նախավկայի անվամբ, պարսպապատ-ված մեծամեծ քարերով. պարսպից ներս կային շուրջ քա-ռասուն խցիկներ՝ քարձ հագնող լուսկյաց մշտական ճգնա-վորներով, որոնք, ինչպես մշտավառ ու անշեջ կանթեղներ՝ յուրաքանչյուրն իր հյուղի մեջ, անընդհատ տքնությամբ վառ-վում էին հոգու շնորհների բոցով։

Այս Երիցակը նախ երկար տարիներ ապրել էր Բաղք գա-վառում, մի քարանձավ տեղում՝ ապա գնացել էր երանելի Գյուտի վանքը և այնտեղ անասնելի ճգնությամբ անցկաց-րել շատ օրեր։ Այնուհետև սուրբ Տեր-Գյուտի օժանդակու-թյամբ ու հրամանով գալով այդ տեղը՝ տասներկու կրոնա-վորներով ու հայր Գյուտի պարգևած բազմաթիվ ունեցվածք-ներով, շինեց եկեղեցին, որը կոչվեց Նոր Երուսաղեմ։ Բայց բորոտները, որ ժամանակին քշվում էին անբնակ տեղեր, հայր Գյուտի կողմից բնակեցվել էին այդ վայրում։ Նրանք դիմա-դրում էին Երիցակի շինարարությանը։ Սուրբ հայրը այդ լսե-լով եկավ, նրանց համոզեց, որ խաղաղվեն, և սահմանեց համապատասխան չափով վանքից [նրանց] կարիքները [հո-գալու հնարավորություն] ընձեռել։ Ինքն էլ օրըստօրէ մաս-նակցում էր շինարարությանը ու կառուցողներին ճաշ էր ուղարկում։ Եվ [Երիցակն] այսպես շինելով աստծու տուն և կանգնեցնելով փառաբանության տեղ՝ այն հարմարեցնում է հրեշտակակրոն մարդկանց բնակության համար։

Այժմ՝ երանելի Մուշե հայրապետը մտնելով վանքը՝ ողջ-ունում է եկեղեցին ու [այնտեղ] բազմելով պատգամավոր է ուղարկում այրու որդուն և մեկ ուրիշին՝ Արագածոտնի[205] Հովհաննավանքից[206], որը սարկավագապետ էր և հայրապե-տի գրագիրը։ Նույնպես [գնում են] նաև իշխաններ ու այլ պատվիրակություններ, բայց չեն կարողանում համոզել Երի-ցակին։ Այնուհետև կաթողիկոսն ինքն է գնում հայր Երիցա-կի մոտ, նրա սրահը և բարկությամբ լցված ու զայրանալով խաչակնքում է և ասում. «Ինչո՞ւ ես այդպես համառած մնում, քո մեջ դև կա, աստված թող սաստի ու հալածի չարին»։ Այն

ժամանակ սրբի խոսքից թանձր ծուխ բարձրացավ որպես փոթորիկ և շենքից վերացավ։ Ապա եկան սպիտակ աղավնիների երամներ, իջան սրահի տանիքին։ Եվ աղավնիներից մեկը սլանալով եկավ, իջավ կաթողիկոսի վրա, նրա վրայից էլ բարձրանալով՝ իջավ երիցակի վրա ու շրջում էր նրա խոշոր կնգուղի վրա, բարակ ձայնով մարդու պես ասում. «Արժանի՛ է, արժանի՛ է»։ Իսկ բազմությունն այդ տեսնելով միաբերան ուժեղ ձայնով գոչում էր. «Արժանի՛ է, արժանի՛ է»։ Սուրբ հայրն այս տեսնելով էլ չհամարձակվեց հակաճառել, այլ ծնկի գալով կաթողիկոսի առաջ՝ արտասվաթոր աղերսանքով ասաց. «Թող լինի քո՝ տիրոջդ, կամքը և ոչ թե իմը»։ Ապա կաթողիկոսը, նրա ձեռքից բռնած, տանում է եկեղեցին և հանելով բեմի վրա՝ օծում Սյունիքի մետրոպոլիտ ու բերում, նստեցնում է աթոռին։ Իսկ ինքը մեծարանքներով ու անսահման շքեղությամբ հրաժեշտ է տալիս բոլորին, գնում է հայրապետական աթոռը, Դվին[207] կենտրոնական քաղաքը՝ բազում փառք ու շնորհակալություն հղելով ամենատիրոջը։ Երանելի երիցակն էլ, աթոռին մնալով մեկ տարի, փոխադրվում է վերին Երուսաղեմ[208], որտեղ սրբերի բազմությունն է, որոնց քաղաքապետը բոլորի աստված Հիսուս Քրիստոսն է։

Նաև ավանդաբար գրույց է պատմվում երիցակի մասին, թե գնալով Երուսաղեմ սուրբ քաղաքը և այնտեղ մնալով մինչև սուրբ հայտնության[209] մեծ ճրագալույցի օրը[210], Բեթղեհեմում[211] գտնվող սուրբ քարայրի դռանը մտաբերում է իր սուրբ մենաստանն ու կրոնավոր եղբայրներին, սաստիկ կարոտից դառնապես լալիս է և ցանկանում է նույն ժամին լինել իր կրոնակից եղբայրների հետ։ Մի կախարդ կին դա լսելով, թերևս սուրբ հոգու ազդմամբ, հարցնում է այդ հորն ու ասում. «Ինձ ասա՛՝ ինչի՞ համար ես դառնագին արտասվում»։ Եվ նա հայտնում է պատճառը։ Ապա կինը խնդրում է նրան. «Ո՛վ աստծու սուրբ, քրիստոսից ներում խնդրիր իմ անչափելի հանցանքների համար, և հենց այս պահին քեզ ցույց կտամ քո փափագածը»։ Հայրը այս լսում է և, աստծու գթառատությունից համարձակություն առած ու կարոտից հարկադրված, համաձայնվում է [կատարել] նրա խնդրանքը։ Եվ կինը մի ինչ-որ անոթ է պատրաստում՝ ջրով լի, իր կախարդանքով այն հարմարեցնում է ու սրբին նստեցնում վրան, որը և իսկույն հայտնվում է երիցավանքում, եկեղեցու դռանը, երբ դեռ չէր վերջացել փրկական արարողությունը։ Ապա երիցակն իմաց չտվեց ու չերևաց կրոնավորներին, մինչև որ հավաքվեցին ճաշի։ Եվ այն ժամանակ ծանոթություն տալով ողջունեց բոլորին ու անհավատալի բաներ պատմեց նրանց. ցույց տվեց հետը բերած նշանները, այսինքն՝ կանաչներ, նարինջներ ու թուրինջներ և դրանցով հավաստեց իր խոսքը։ Ճաշելուց հետո վեր կացան, գնացին եկեղեցու դուռը և այն գիշեր ժամերգության արարողությամբ գթություն խնդրեցին այն կնոջ համար։ Մարդասեր աստվածը լսելով՝ ներում շնորհեց նրան և սուրբ հորը հայտնեց տեսիլքով։ Այդպիսի մարդասիրության համար բյուրապատիկ օրհնությամբ շնորհակալություն և փա՛ռք նրան անվախճան ու հավիտենաբար։

ԻԱ

ՀԱՅՐ ԳՅՈՒՏԻ ՈՒ ՔՐԻՍՏՈՍԱՍԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՐԱՍԽԻ ԱՓԻ ՎԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Ո՛վ դու, [ընթերցող], առաջիկա խոսքս անտեղի չհամարես և ինձ էլ շատախոս[212] չկարծես. ընդհակառակն, սա համապատասխան ու հարմար է մեր այս ձեռնարկմանը։ Քանի որ սկսեցինք շարադրել Սիսական աշխարհի պատմությունը, ուստի և անհրաժեշտ է ցույց տալ այստեղ կատարված բոլոր գործերն ու հրաշքները։ Հենց այնքան շատ ավելի լավ բան չի եղել այս աշխարհում, ինչպես սա, որի մասին սկսում ենք պատմել։ Գողթան գավառում[213] կար մի բարեպաշտ իշխան՝ Շաբիթա[214] անունով։ Նա ուներ երկու թոռ՝ իր որդիների որդիները, որոնց անուններն էին Վասակ և Շապուհ։ Սատանան նրանց միջև կռիվ ու նախանձ առաջացրեց՝ իրենց հայրենական ժառանգության բաժնի համար։ Եվ կռվեցին Որդվատ[215] գեղեցիկ գյուղի համար։ Զորքերով միմյանց դեմ ճակատամարտելիս Վասակը մերձիմահ սրահարեց եղբորը։ Ապա զղջալով եղբայրական խղճմտանքով՝ գնաց նրա մոտ, ընկավ վրան, լաց եղավ սաստկագին՝ աղիողորմ ոլբով հա-

ուշելով, և ուխտեց աստծուն, որ եթե եղբայրը բուժվի, ինքը կհրաժարվի աշխարհիկ բոլոր բաներից։ Եվ եղբայրը բուժվեց։ Այն ժամանակ Վասակը իր հոգու ազատության համար անսպասելիորեն մեջտեղից անհայտացավ, թաքնվեց ընտանիքից, ելավ ու գնաց Բաղաց կողմերը[216]։ Եվ երբ հասավ բարձր լեռանը, ապավինեց հոգու շնորհներին, բերանն առնելով հետևյալ սաղմոսը՝ անդադար ասում էր. «Իմ այս ճանապարհն ինձ համար ուղիղ դարձրու, տե՛ր, ըստ քո խոսքի, և թող ինձ չտիրեն բոլոր մեղքերը»*։ Եվ գավառներով անցնելով Աղավնո գետի[217] եզրը՝ այնտեղ անցկացրեց ամեհային եղանակը, [ապա] անցավ մյուս վտակը, դեպի բերդի կողմը, Քաշունիք գավառը[218], որ այժմ Բարկուշատ է կոչվում, և բնակվեց չոր ու անբերրի բլրում, մի հյուղակի մեջ երեք տարի ու վեց ամիս։ Երկիրն անբնակ էր, ավեր, լի անտառախիտ ծառերով, ներքևում դաշտ էր լայնատարած՝ մինչև Երասխի ափը։ Իսկ Վասակի տնեցիները չգիտենալով, թե նրան ո՞ւր հափշտակեց հոգին, մարդիկ էին ուղարկում Հայաստան, Բյուզանդիա, Պարսկաստան, սաստիկ սգում ու ողբում էին, բայց հետքը չիմացան։

Ապա մի օր էլ, երբ այդ սուրբը հայրը ազատվեց երեկոյան աղոթքից և ուզում էր հանգստանալ, երգ ու պարի ձայներ լսվեցին։ Դրանից զայրացած ասաց. «Չկարողացա այնքան փախչել աշխարհից, որ նրա ձայները չլսեի»։ Նույն ժամին վեր կացավ, այնտեղից հեռացավ։ Եվ ընկնելով դաշտը՝ հրեշտակի առաջնորդությամբ գնաց մինչև արեգակի ծագելը։ Հասնելով Երասխի ափը՝ մի ձորակ գտավ՝ մեջը մի մեծ ժայռ, իսկ ներքևում՝ փոքրիկ մենարան, որտեղ բնակություն հաստատեց տասը տարի։ Նրա կերակուրն էին ընդեղենն ու ծառապտուղները, որովհետև երկիրը ամառ ու ձմեռ Եգիպտոսի պես էր[219]։ Ապա ըստ այն ասացվածքի, թե. «Ճրագը չի վառվում ու դրվում ծածկոցի տակ»՝ տերը կամեցավ հայտնի դարձնել իր սուրբ ծառա Գյուտին, որ առաջ Վասակ էր կոչվում։ Պարսից արքայի որդին որսի ելավ մերձակա լեռը, որ նայում է Մուղանի դաշտին[220]։ Նրա առաջ երևաց մի որսի կենդանի՝ եղջյուրների մեջ լուսեղեն խաչ։ Եվ երիտասարդին

* Սաղմ., ՃԺՀ, 133։

ղորախմբից Եվստաթեի[221] նման բաժանելով՝ եկավ, բերեց մինչև Երասխի եզերը, Քարավազ կոչված տեղը, որը ջուրը երեք մասի է ճեղքում։ Խաչը լուսեղեն մարդու կերպարանք առավ ու վազեց գետի մեջ. երիտասարդը դա տեսնելով՝ լույսից շլացած աչքերով ընկավ գետն ու երկու ծառանների հետ անցավ եղջերուն, [նրանց] առաջնորդելով մինչև ժայռի ստորոտը, այնտեղից անհետացավ։ Այնուհետև վերև նայելով տեսան մի արջ՝ ահավոր կերպարանքով նստած, մի թաթը սրբի ձեռքում, որի վերջը բուժում էր [սուրբը]։ Այն ժամանակ երիտասարդը խիստ վախեցավ։ Եվ քանի որ սուրբ հայրը երազում իմացել էր նրա գալը, ձայնեց. «Մի՛ վախեցիր, ե՛կ ինձ մոտ»։ Իսկ նա ասաց. «Դու ի՞նչ ես»։ Պատասխանեց. «Քեզ նման մարդ եմ»։ Երիտասարդն ասաց. «Այդ ի՞նչ են քեզ հետ»։ Գյուտն ասաց. «Իմ շներն են»։ Իսկ նա ասաց. «Դրանց հրամայիր հեռանալ»։ Եվ հրամայեց։ Ինքը՝ Գյուտը, վեր կացավ, ժայռից իջավ, քարոզեց Ավետարանը, ուսուցանեց Քրիստոսի հավատը։ Երիտասարդը շատ սիրեց և խնդրեց մկրտել իրեն։ Եվ սուրբը, տիրոջից իսկույն հրաման ստանալով, մկրտեց երիտասարդին ու երկու ծառաներին։ Երիտասարդի անունը դրեց Քրիստոսասեր։ Եվ բազում օրեր ճգնակեցությամբ մնալով՝ Քրիստոսասերն ասում է. «Հա՛յր, փափագում եմ եկեղեցուն և նրա լուսավոր կարգ ու կանոնին, ուզում եմ տեսնել։ Լավ չէ, որ մենք միայնակ բնակվենք այս ժայռում։ Թույլ տուր, որ ես գնամ, արծաթ բերեմ, եկեղեցի կառուցեմ, միաբանություն հիմնեմ, որ կրոնավորներ հավաքվեն»։ Եվ թույլ տվեց նրան գնալ։ Նա գնաց ու շատ արծաթ բերեց։ Արհեստավորներ կանչեցին, եկեղեցի[222] կառուցեցին և հավաքեցին բազմաթիվ կրոնավորներ։

Իսկ պարսից թագավորը բազմաթիվ հանձնակատարների միջոցով ծով ու ցամաքում փնտրեց իր որդուն։ Եվ քանի դեռ նրա հետքերը չէին երևում, գիշեր ու ցերեկ դառնապես ողբում էր և երբեք չէր մխիթարվում։ Ապա մի գիշեր երազում հրեշտակից իմացավ, որ իր որդին այսինչ տեղում է՝ քրիստոնյա դարձած։ Դրանից թագավորը շատ ուրախանալով շատապով հանձնակատարներ ուղարկեց, որ որդուն բերեն։ Նրանք եկան, որդուն գտան, բայց չկարողացան տեղահան անել։ Դառնալով վերադառնալով ասացին. «Չկավ, այլ

աղաչում է քեզ, որ թույլ տաս իրեն՝ մնալ։ Ասում էր. «Ես [ուրիշ] հայր ունեմ, որը ինձ վերածնեց լուսավոր ու անապական ծնունդով։ Չեմ կամենում սրան թողնել, որը խոստացել է ինձ թագավորություն՝ քոնից բյուրապատիկ ավելի»։ Այնուհետև թագավորն ինքը վեր կացավ, եկավ այնտեղ և ոչ ոքի չգտավ, բացի միայն մի հիվանդից, որին հարցրեց. «Ո՞ւր է իմ որդին»։ Նա ասաց. «Հրեշտակից իմացան քո գալը և փախան»։ Ապա հրամայեց նրան ապաքել, տեղն էլ ավերել ու այրել։

Թագավորը այնտեղից վերադառնում է իր երկիրը և որդու կարոտից սաստիկ հիվանդանում։ Դարձյալ հանձնակատարներ է ուղարկում ու աղաչում՝ պահանջել, ինչ որ պետք է։ Եվ որդին պահանջում է շատ գանձեր ու արհեստավորներ, որ ավերված տեղերը նորոգի։ Անմիջապես ուղարկվում են հազար մարդ՝ հինգ հարյուր քարագործ ու հինգ հարյուր փայտագործ։ Տեղը փոխում են ժայռից վեր, հարթում քարքարոտ տեղերը, շինում են երեք եկեղեցի՝ սուրբ երրորդության անունով։ Եվ սրա համբավը տարածվում է ամբողջ աշխարհում։ Գալիս են բազմաթիվ կրոնավորներ, լցվում աստծու տունը։ Երեկոյան դեմ սկսեցին ժամերգությունը. կեսգիշերին եկավ մի լուսավոր մարդ՝ խաչը ձեռքին, ու ասաց. «Հա՛յր, երկնքի թագավորը քեզ օծեց հայրապետ այս տանը, որ երկրորդ Երուսաղեմն է, քո բարձրավանդակ տեղն էլ՝ Գողգոթան[223]. և նույն անցքերը, որ անցան Երուսաղեմի գլխով, պիտի անցնեն նաև այս տեղի վրայով. սրա բնակությունը շարունակ չարիքների մեջ է լինելու, և այստեղի կրոնավորները առավել շատ պիտի օրհնեն, քան ուրիշ աշխարհներինը։ Դու վե՛ր կաց և օրհնի՛ր այդ եկեղեցին»։ Այս ասաց ու ինքն անհետացավ։ Իսկ առավոտյան սքողված հայրը սուրբը բեմ եկավ ու օրհնեց սեղանը և տաճարը։ Օծելիս հրեշտակների դասերը խորանի մեջ պատկառանքով գոչում էին օրհնության «ամեն»-ը, որից հավաքված մարդիկ զարհուրելով դուրս եկան։ Եվ աստված այսպես փառավորեց այն տեղը երանելի հայր Գյուտի և Քրիստոսասիրի միջոցով։ Այնտեղ հինգ հարյուր կրոնավորներ նշանակեցին, երկու հարյուրը վանքում, երեք հարյուրը՝ քարանձավներում և մենաստանավոր անտառներում, որոնք անհանելի ճգնությամբ ու անդադ-

րում աղոթքներով հրեղեն սյան նման կանգնած էին երկրից երկինք։ Իսկ նախանձոտ սատանան, չկարողանալով հանդուրժել այս ամենը, գրգռեց պարսից թագավորին չար նախանձով։ Եվ սա վեր կացավ, հարյուր հիսուն հազար հեծյալներով եկավ-հասավ այդ սուրբ տեղը, սպանեց կրոնավորներից տասին, իսկ մյուսները փախան։ Ինքը՝ հայր Գյուտը, բռնվեց, որին հանեցին ժայռի վրա ու վայր նետեցին, բայց աստծու շնորհով չվնասվեց։ Կամեցան նորից բռնել, բայց նրանցից մեկը կուրացան, մյուսներն էլ մեռան։ Եվ զորքն այս տեսնելով փախուստի դիմեց ու հեռացավ այնտեղից։ Ապա [մնացած] սուրբ կրոնավորները հավաքվեցին եկեղեցում, ողջույն ու համբուրելով սպանվածներին՝ նրանց թաղեցին եկեղեցու արևելյան կողմում, ուր գլխավոր դուռն է։ Այն ժամանակ սուրբ Գյուտը կրոնավորներից ոմանց ուղարկեց Գողթն՝ եպիսկոպոս Անաստասի ու իր հարազատների մոտ՝ հրավիրելով տեսության։ Նրանք, շատ ուրախանալով անսպասելի իրողությունից, եկան Գյուտի վանքը։ Մայրը դեռ կենդանի էր, բայց կուրացած էր։ Նա, որդու գրությունն[224] ստանալով, դրեց աչքերի վրա, և [աչքերը] լուսավորվեցին, ու ինքը մեծապես շնորհակալ եղավ աստծուց։ Սուրբ հայրը կրոնավորների հետ եպիսկոպոսին դիմավորելով տարավ եկեղեցին և մեծ գոհությամբ նրա իրավասությանը հանձնեց այն։ Նա էլ իբրև նվեր արտոնեց յուրաքանչյուր տարի ութ ու կես օր Երասխից ձուկ [որսալ][225]։ Այդպիսով Գյուտը հարազատությունն ցուցաբերելով Գողթնի հանդեպ՝ եպիսկոպոսին այնտեղից վերադարձրեց իր տեղը։ Ապա օրեր անց մկրտեցին պարսից նույն թագավորի եղբորորդուն՝ Աբել Աբաս անունով, նրան փեսա դարձրին Աղվանքի արքա Վաչագանին։ Գետի ափին բերդ կառուցեցին, որ նա այնտեղ բնակվելով պաշտպանի կրոնավորներին։ Ապա Աբել Աբասն ու Վաչագանը, Սյունիքի իշխանին խնդրելով, վանքի համար հաճմանիներ առանձնացրին։ Տվեցին հինգ գյուղ՝ այսպիսի սահմաններով՝ սկսած Սևասարից մինչև Բոթիբոթեր, դեպի վար, որտեղ Թզենու գետն է, մինչև ուրկանոցի այգիները, այնտեղից մինչև Աղավնո գետի պուտյները, Նակորզանի եկեղեցու դիմաց, մինչև աստծու տունը[226]։ Տնտեսությունն էլ փարթամացած էր, որովհետև ուներ հազար խոշոր եղջերավոր անասուն, տասներկու հազար ոչ-

խար, յոթ հարյուր ուխտ, վեց հարյուր ձի, չորս հարյուր էշ և հարյուր յոթանասուն այգեպան։

Ապա Բարկուշատում մեռնում են Վաշագան և Աբլ Աբաս թագավորները։ Եվ Վռամշապուհի թոռն այդ լսելով բազմաթիվ զորքերով գալիս ու առավոտյան հանկարծակի մըտնում է վանքը, կոտորում կրոնավորներին։ Ավագագուլաներին կապում են, եկեղեցին քանդում, հիմնահատակ կործանում, քարն էլ թափում են գետը։ Կեսգիշերին [երկնքից] հրեշտակ է իջնում ու ազատ արձակում կապվածներին, և նրանք զարհուրած փախչում են։ Ապա առավոտյան վանականները հավաքվելով սաստիկ ողբով լալիս են եկեղեցու համար ու թաղում [սպանված] կրոնավորներին։ Սկսում են աստծու նոր տուն կանգնեցնել՝ առաջինից ավելի շքեղ։ Հավաքվում են վեց հարյուր վանականներ, այլ տեղում կառուցում են եկեղեցի, տալիս Մանակկա[227] [անունը], որպես և կոչվում է նոր վանքը։ Հիմնում են ուրկանոցներ և վանքից առատորեն հոգում նրանց կարիքները։ Եվ Կապանից[228] այստեղ եկավ հայր Հովհաննեսը, վանականներին վերցնելով գնաց գետի ափը, տիրոջից խնդրեց վանականների կարիքների համար ձուկ շնորհել։ Տեսիլքով մի լուսավոր տղամարդ երևաց, որ քայլում էր գետափով, գավազանը կախել էր ջուրը, և գավազանի ծայրից դուրս էին գալիս ձկների անթիվ ու անհամար խմբեր. ինքն էլ նրան բացատրում էր որսի հանգամանքները։ Եվ այսպես վանքին արտոնվեց գետից ձուկ որսալ[229]։

Իսկ երբ լրացավ սուրբ հայր Գյուտի կյանքի ութսունչորս տարին, Քրիստոսասերը երազ տեսավ ու վեր կենալով պատմեց հորը, թե «Ագռավները պատել էին վանքը և ապա թռան, նստեցին իմ գլխին, այստեղից էլ իջան քո գլխին։ Ապա սպիտակ աղավնիներ իջան իմ գլխին ու թռան դեպի քո գլուխը»։ Սուրբ հայրն այս լսելով հասկացավ, որ հասել է իրենց կյանքի վերջը։ Նա բազում քաջալերանքներով սրտապնդում ու հորդորում էր Քրիստոսասերին՝ չվախենալ, այլ ջանալ հասնել երկնային արքայությանը։ Եվ կերակուր վերցնելով՝ նրանք շրջեցին ճգնավորների մեջ, կերակրեցին ու ողջունեցին նրանց և օրհնվեցին նրանցից։ Եվ երբ սաղմոսելով Մախաղատափով գալիս էին դեպի վանքը, տեսան հեծյալների բազմություն, որը գալիս էր։ Իրենք շտապեցին եկեղեցի։ Նախ՝ մտնելով աղբյուրը լվացվեցին, ապա անցան եկեղեցին, համբուրեցին սուրբ սեղանը, ողջունելով լաց եղան։ Եվ ահա զորքը շրջապատեց եկեղեցին։ Ներս մտնելով փնտրեցին Գյուտին ու Քրիստոսասերին։ Իսկ նրանք առաջ գալով ներկայացան։ Նրանց բռնեցին, կապեցին, տարան Գողգոթա ու [այնտեղից] վայր գցեցին։ Առաջին անգամ ոչ մի վնաս չեղավ, իսկ հետո Գյուտի գլուխը ճեղքվեց, և երբ պիտի շունչը փչեր, ձայն էր տալիս Քրիստոսասերին. «Որդյա՛կ, ջանա՛, դիմացի՛ր ինձանից հետո»։ Իսկ զինվորները Քրիստոսասերին սրով սպանեցին քարի վրա։ Եվ այսպես մեռան սրբերը քաղց ամսի[230] տասնհինգին։ Այն ժամանակ եկավ ամպածածկոցն ու վեց ժամ պատեց վանքը։ Անօրեններն այս տեսնելով սաստիկ վախեցան ու դողալով փախան։ Իսկ ցրված վանականները հավաքվելով մեծ սգով լաց ու կոծ արին և փարվեցին հոր ու Քրիստոսասերի սուրբ մարմիններին. Գյուտին տարան, թաղեցին եկեղեցու գավթում, Քրիստոսասերին՝ եկեղեցում. տեղերն էլ գաղտնի պահեցին։ Ահա այս հրաշալուր պատմությունը մեզ ավանդեց Յովհաննեսը՝ սուրբ միաբանության եկեղեցապանը, որը քսանհինգ տարի եկեղեցուց դուրս չելավ և ոչ ոքի հետ չխոսեց, միայն պաշտամունքային արարողություն կատարեց։ Այդ սրբերի բարեխոսությամբ թող մեզ հետ հաշտ լինի Քրիստոսը և խաղաղություն ու շենություն տա աշխարհին։

ԻԲ

ՍՅՈՒՆՅԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ ՄԱԿԱՐԻ, ՊԵՏՐՈՍԻ, ԳԻԳԱՆԻ ԵՎ ՎՐԹԱՆԵՍԻ ՄԱՍԻՆ

Երանելի Երիցակը, եպիսկոպոսության աթոռը գրավելով մեկ տարի, փոխադրվում է վերին քաղաքը, որի պարիսպը հասպիս ու կարկեհան է, դռները՝ թափանցիկ խոշոր բյուրեղներից, քաղաքագլուխը՝ Քրիստոսը։ Այնտեղ են հավաքված սրբերի բոլոր բազմությունները։ Իսկ Երիցակից հետո [իշխում է] աստծու արժանապատիվ այր Մակարը՝ քսանութ տարի։ Այնուհետև՝ բազմերջանիկ, մարդկանց հետ անհամեմատելի Պետրոսը՝ քերթողահոր աշակերտը, հմուտ հռետորն ու անպարտելի փիլիսոփան՝ լի իմաստությամբ ու կատարյալ առաքինությամբ, հայոց վարդապետներից առաջ-

նակարգը, քերթող ու թարգմանիչ։ Նա բազմաթիվ թարգմանություններ կատարեց, իմաստալից ճառեր շարադրեց Քրիստոսի ծննդյան մասին, քաղկեդոնականների դեմ և շատ ուրիշներ, մեկնաբանեց Հին և Նոր կտակարանների խրթին ու դժվարիմաց խոսքերը։ Սա ձեռնադրվում է Սյունիքի իններորդ եպիսկոպոս հայոց Ներսես կաթողիկոսի կողմից, Վահան Միհրանյանի մարզպանության ժամանակ։ Աղվանքի Վաչագան թագավորը սրան հարցում է արել բազմաթիվ լուրջ ու ծանրակշիռ խնդիրների մասին և պատասխան ստացել շատ պատշաճ ու ճիշտ լուծումով[231]։ Հայոց ուրիշ վարդապետների՝ Մամբրեի, Եղնիկի, Կորյունի, Դավթի հետ[232] սա գնաց Կոստանդնուպոլիս թագավորական քաղաքը։ Նրանք ներկա եղան Քաղկեդոնի ժողովին[233], խիստ մարտնչեցին հերետիկոսների դեմ, բոլորին պարտության մատնելով և ամոթահար անելով՝ մեծ ճոխությամբ ու ողջամիտ ուսմունքով եկան մեր Հայոց աշխարհը և բոլորին ամրապնդեցին երեք սուրբ ժողովների[234] ճշմարիտ հավատքի մեջ՝ ավանդված սուրբ Գրիգորի կողմից։

Սա գնաց Դվինի առաջին ժողովին[235], որը տեղի ունեցավ Ներսես կաթողիկոսի[236] հրամանով՝ ընդդեմ խուժիկ նեստորականների[237], որոնք, հավաքվելով Գրիգոր Մանաճիհր Ռաժիկի վանքում, սկսեցին սերմանել իրենց գարշելի ու պիղծ աղանդը։ Դա քանդելով ցիր ու ցան արեցին և մեծ կանոնով մեղ սահմանազատեցին նրանց հետ ամեն տեսակի շփում ունենալուց և սոսկալի նզովքներով արգելեցին։ Պետրոսը նկատեց, որ ճշմարտությունը պակասել է, քայքայվել է սուրբ Գրիգորի աթոռը և մոտ է բաժանման, քանի որ հունական ու պարսկական երկու կողմերը հակառակության վեճ էին առաջացնում միմյանց հանդեպ։ Հույներն ուզում էին հակառոո նստեցնել, որը և կատարեցին կարճ ժամանակ անց։ Չէ՞ որ Մովսեսը սուրբ Գրիգորի աթոռին նստեց Դվինում, իսկ ոմն Հովհան Թեոդուպոլսում[238] եղավ կաթողիկոս ու եկավ, աթոռ հիմնեց Կոտայքի Արամոնս[239] գյուղում, որը հետո գահակալեց Աբրահամ կաթողիկոսը։ Եվ այսպիսի վեճերի պատճառով սուրբ Պետրոսը հրամայեց զերծ մնալ այդ աղմուկից ու խառնաշփոթությունից, Աղվանքից ստանալ ձեռնադրություն ու մեռոն, մինչև որ խռովությունը դադարի։ Դա հենց այդպես էլ արեցին[240]։

Սա, աթոռին մնալով տասը տարի, վախճանվում է, որից հետո գահակալում է Տեր-Գիգանը՝ երեք տարի, ապա՝ Պետրոսի երանելի աշակերտ Վրթանեսը, որ սուրբ Պետրոսի հրամանների համաձայն չենթարկվեց հայոց խախտված աթոռին, այլ Սյունիքի գահերեց իշխան Միհր Արտաշիրի հրամանով գնաց Աղվանք, երջանիկ կաթողիկոս Տեր-Զաքարիայի մոտ և նրանից ստացավ եպիսկոպոսության ձեռնադրություն։ Եվ ամեն տարի այնտեղից էին ստանում մեռոնը, մինչև որ գահակալեց հայոց Աբրահամ կաթողիկոսը, և հակառակությունը մեջտեղից վերացավ։ Հայոց սուրբ կաթողիկոս և մեծ պատրիարք Տեր-Հովհաննեսը այս Վրթանեսին թուղթ գրեց ճշմարիտ հավատքի մասին, ինչպես և քաղկեդոնականությունից ու Նեստորի պիղծ աղանդից զգույշ լինելու համար։ Թուղթը հետևյալ տեսքն ուներ։

ԻԳ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԵՎ ՈՒՐԻՇ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԳՐԱԾ ԹՈՒՂԹԸ ՍՅՈՒՆԻՔԻ ՎՐԹԱՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԵՎ ԻՇԽԱՆԻՆ[241]

«Քրիստոսով պայծառացած ու սիրված կրոնավոր և մեր աթոռակից Տեր-Վրթանեսին՝ Սյունյաց եպիսկոպոսին և վսեմափայլ ու փառաբանված Միհր Արտաշիրին՝ Սյունիքի տիրոջը, հայոց կաթողիկոս Հովհաննեսից, Մամիկոնյանների եպիսկոպոս Աբրահամ Տարոնացուց, Բասենի և Մարդաղի եպիսկոպոս Ներսից, Խոռխոռունյաց եպիսկոպոս Մաշտոցից, Վանանդի եպիսկոպոս Գյուտից, Աբդիշոյից[242], Ամատունյաց եպիսկոպոս Բարից՝ օրհնությամբ և հոգևոր սիրով ողջո՛ւյն։

Դուք ինքներդ գիտեք այն մեծ վտանգը, որ այժմ հասել է մեր աշխարհին։ Չէ՞ որ մեզ նախորդած մեր երանելի հայրերը և նրանցից հետո՝ մենք, ընդունեցինք ճշմարիտ հավատքը՝ այն, որ քարոզեցին մարգարեները և առաքյալները, սովորեցրին ճշմարիտ հայրերը, սուրբ Գրիգորը՝ սուրբ Թադեոսի հաջորդը, և երեք հարյուր տասնութ եպիսկոպոսները, որոնք հավաքվեցին Նիկիա քաղաքում[243], հարյուր հիսունը, որ հավաքվեցին Կոստանդնուպոլսում[244] և երկու հարյուրը, որ հա-

վաքվեցին Եփեսոսում[245]. նրանք սուրբ հոգու ազդումով մեղ սովորեցրին ինչ որ հենց սկզբից տերունական լեզուն քարոզեց աշակերտներին՝ ասելով. «Գնացե՛ք, աշակերտեցե՛ք բոլոր ժողովուրդներին, նրանց մկրտեցե՛ք հոր, որդու և սուրբ հոգու անունով»*: Դա որպես բարձր ու հաչակավոր կնիք դրվեց բոլորի վրա: Այս ճշմարիտ հավատքը ճշգրիտ միաբանությամբ պահպանում էր մեր Հայոց աշխարհը. ոչ ոքի կողմից որևէ արատավորում չէր ցուցաբերվում. մենք էլ ապրում էինք սուրբ կաթողիկե եկեղեցով՝ մեր Քրիստոս աստծու սուրբ խաչի հովանու ներքո; խոր խաղաղության մեջ: Իսկ անիծյալ Նեստորի[246] ժամանակներում, երբ նա իր չար հերձվածքով կուրացրեց Խուժաստանի կողմերը, մեր աշխարհում ևս երևաց նրա չարության թթխմորը, որը համակել էր անսուրբ անձանց, որոնք սկսեցին պղտորել սուրբ երրորդության հստակ հավատքը, անկայուն մարդկանց խաբել մարմնասեր ցանկություններով: Տարածվեց երկմտությունը, շատերն էլ վարակվեցին այդ անտանելի ախտով:

Եվ չկարողանալով տանել այսպիսի չարաչար ու դառն հերետիկոսությունը՝ ջանացինք մենք և մեր Հայոց աշխարհի մյուս եպիսկոպոսները, որոնց հետ էր և ձեր երանելի Պետրոս եպիսկոպոսը, քահանաները, սուրբ եկեղեցու կղերականությունը, վանքերի միաբանները, աղնվականները, հասարակ ճշմարտահավատ աշխարհականները, համախմբվեցինք սուրբ եկեղեցիներում և միաբանությամբ մեր սուրբ եկեղեցուց նզովքներով հալածեցինք նեստորականներին[247], քաղկեդոնականներին[248] ու այլ հերձվածողների[249] և մեր սուրբ ու փառավորընկալ սեղանի, կենսատու Ավետարանի, փրկչական սուրբ խաչի առաջ ուխտեցինք բոլորովին զերծ մնալ նրանց հետ շփվելուց, չունկնդրել նրանց մահաբեր խոսքին: Քանի որ հավատարիմ մարդկանցից լսեցինք, թե բազմաթիվ պիղծ նեստորականներ կան նաև ձեր աշխարհում բնակված, և դուք դրանց ընդունում եք սուրբ եկեղեցիներում ու հետները հաղորդություն ստանում, մենք, հիշելով մեր սուրբ Գրիգորի մեծ վաստակն ու ջանքը[250] մեր և ձեր աշխարհի վրա հավասարապես ու այն սուրբ ծնունդը, երբ սուրբ մկրտությամբ

* Մատթ., ԻՀ,19:

վերածնվեցինք, լուսավոր ու ճշմարտացի հավատքը, որը միասին ընդունեցինք ու այժմ էլ պահում ենք, և այն հոգևոր սերը, որ տածում ենք ձեր նկատմամբ ամենից առավել, հոգ տարանք ձեզանից հեռացնել չար որոմի սերմերը: Դրա համար մեր ուխտից հավատարիմ այր Մաթևոս քահանային ուղարկեցինք ձեզ մոտ և մեր Քրիստոս աստծով աղաչում ենք ձեզ՝ ինչպես որ մինչև այժմ եք եղել սուրբ տոհմ՝ տեր աստծուն հպատակ ժողովուրդ, նույնպես և այժմ ու մինչև հավիտյան դուք և ձեր զավակները զորացեք տիրոջով և նրա զորության կարողությամբ, վերցրեք աստծու սպառազինությունը և սուրբ ու ճշմարիտ հավատքը, որ ընդունել եք սուրբ Գրիգորից ու այլ հոգեկիր երանելի հայրերից, հաստատուն ու անխախտ պահեցեք ձեր մեջ: Եվ ձեր աշխարհում գտնվող նեստորականներին ու մյուս հերձվածողներին նույնպես սուրբ եկեղեցուց ու ձեզ հետ շփվելուց նզովքներով հեռու վանեցեք: Բոլոր ճշմարտապաշտներին պատվիրեցեք մասնակից չլինել նրանց անպտուղ գործերին, չլսել նրանց խաբեբայական ու չարաթույն խոսքերը: Չէ՞ որ սուրբ առաքյալը նրանց բնորոշեց որպես անեծքի մանուկներ, նրանց կորստաբեր ուսմունքն էլ անվանեց անձրևազուրկ ամպեր՝ մրրկով քշված դեպի կորուստ, չորացած ու պտղազուրկ ծառեր, հավիտենական կրակի վառելանյութեր, որոնք իսկապես նզովվում են, որովհետև նրանք Քրիստոս աստծու եկեղեցու պղտորիչներն են մեր ժամանակներում, բոլոր տեղերում: Հենց նրանք էլ սուրբ առաքյալի կողմից անվանվեցին սուտ կրոնավորներ, անօրեն մշակներ ու աշխարհ եկած նեռեր: Եվ սուրբ ավետարանիչ Հովհաննեսի կողմից հրամայվեց մեղ՝ իսկական հավատացյալներիս, նրանց տուն չթողնել ու ոչ էլ բարև տալ, այլ բոլորովին հեռու կանգնել նրանցից՝ որպես Քրիստոսի խաչի թշնամիներից: Եվ մենք աղոթում ենք, որ հենց նույն սուրբ Երրորդությունը ընկճի ու խափանի իր թշնամիներին՝ ճշմարիտ հավատքի հակառակորդներին, հզորացնի իր սուրբ անվան սպասավորներին ու երկրպագուներին: Իսկ եթե հերձվածողներից որևէ մեկի մեջ զղջում առաջ գա, ու նա իր ամբողջ կամքով դառնա մեր սուրբ հավատքին՝ առանց խաբեության, գրավոր ձևով նզովելով պիղծ Նեստորին, բոլոր հերձվածողներին և Թեոդորետոսին ու Քաղկեդոնի ժողո-

վը, ապա այնպիսինին պետք է ընդունել ապաշխարութեամբ, որովհետև աստծու ողորմութեան դուռը միշտ բաց է ճըշմարիտ հավատքն ընդունողների ու ապաշխարողների համար»։

ԻԴ

ԹԵ ՈՐ ՕՐԸ ՀԱՍՏԱՏՎԵՑ ՀԱՅՈՑ ԹՎԱԿԱՆԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԵՑ «ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾ, ՈՐ ԽԱՉՎԵՑԻՐ» [ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ]

Հայոց կաթողիկոս Տեր-Մովսեսի[251] հայրապետութեան չորրորդ և Մժեժ Գնունու՝ Հայաստանի մարզպանութեան տասներորդ տարում, երբ քրիստոնեական հինգ հարյուր հիսունեռրք թվականն էր, ավարտվել էր Անդրեասի երկհարյուրյակը[252]. այդ տարվա զատկի [տոնի լուսնային] լրումն էլ ընկնում էր մարտի 25-ին, մինչդեռ սկզբում ապրիլի 4-ին էր, և [այդ պատճառով] չկարողացան վերադառնալ սկզբնականին, որովհետև [մարտի] 25-ից հետո [այն պիտի լիներ] ապրիլի 13-ին, բայց այդ ժամանակամիջոցում ինը շրջան պակաս էր դուրս գալիս։ Դրա հետևանքով էլ տարվա բոլոր տոներն սկսեցին խառնաշփոթվել[253]։ Ուստի և հարկ եղավ հայոց թվական սահմանել[254], որպեսզի դրանով ուղղեին այդ անհարմարությունը։ Դա հենց այդպես էլ ուղղեցին տասը թվականին էաս գիտնականի[255] միջոցով, որը և ստեղծեց հինգհարյուրյակի[256] ստույգ օրինակը՝ Հայաստանի որոշ գիտնականների հետ։ Եվ այն ժամանակ, երբ Դվինն քաղաքում մեծ ժողովով սահմանում էին թվականը, Սյունիքի եպիսկոպոսն էր Տեր-Վրթանեսը, իշխանը՝ Միհր Արտաշիրը, որոնք էլ միաբանվելով ժողովին, ուղարկեցին իրենց գիտուն վարդապետներին՝ նշանավոր գիտնականների, որոնք հայոց վարդապետների մեջ նախաթոռ էին։ Այսպես ուղղեցին այն տարակուսելի տոմարը։ Այդ տարի նույն ժողովում էլ հաստատեցին «Սուրբ աստված, որ խաչվեցիր»[257] [արտահայտությունը] ընդդեմ քաղկեդոնականների ու Նեստորի ուսմունքի։ Այս ժամանակներում տանջամահ եղավ Քրիստոսի մեծ վկա, նոր նահատակ և երանելի պարսիկ Մախոժը, որը Դվինն քա-

ղաքում մկրտվելով՝ վերանվանվեց Հիպոբուզիա[258], որ նշանակում է Աստվածատուր։ Նրա հետ նահատակվեցին նաև Սահակը, Սամվելը և Հըղըմխվաստը՝ նույն ժողովրդից[259]։

ԻԵ

ՎՐԹԱՆԵՍԻ ՎԱՃԱՌԱՆՎԵԼԸ. ԳՐԻԳՈՐԻ ՈՒ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ՀԱՋՈՐԴԵԼԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՕՐԵՐՈՒՄ ԵՂԱԾ [ԱՆՑՔԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ] ՋՐՈՒՑՑՆԵՐ

Տեր-Վրթանեսի՝ Սյունիքի եպիսկոպոսի ժամանակներում նեստորական ու քաղկեդոնական որոշ մարդիկ եկան և խաբեությամբ բնակվեցին մեր Սյունյաց աշխարհում ու Աղվանքում։ Ապա Տեր-Հովհաննեսը[260] [այդ մասին] լսելով գրություններով[261] զգաստացրեց և ծանուցեց այն վտանգի մասին, որ թաքնված էր հարդի տակ։ Տեր-Վրթանեսը դրանից զարհուրելով [նրանց] դուրս քշեց իր թեմից և մեծ նզովքներով արգելք դրեց, որ չհամարձակվեն թույլ տալ [նրանց մուտքը] իր սահմանները։ Եվ այդպես ճշմարիտ դավանանքով ու առաքինի վարքով մետրոպոլիտության աթոռին մնալով քսաներեք տարի՝ վախճանվեց[262]։ Այնուհետև Աղվանքում ձեռնադրվելով՝ աթոռին տիրեց Տեր-Գրիգորը[263]՝ տասնհինգ տարի։ Սրան հաջորդեց փառաբանված ու երանելի Քրիստափորը[264]՝ նույնպես ձեռնադրում ստանալով Աղվանքից։ Իսկ Մովսեսի վախճանվելուց[265] հետո երեք տարի [կաթողիկոսական] տեղապահ եղավ Վրթանես Քերթողը[266]։ Եվ քանի որ Հայաստանն իշխան չուներ, Մժեժի մահից հետո երեսունվեց տարի պարսիկ մարզպաններն էին Հայաստանը տնօրինում, այդ պատճառով [կաթողիկոսական] աթոռի խափանում եղավ. Վասակի որդի Վարդ Մամիկոնյանն էլ ապստամբել էր պարսիկների դեմ ու անցել հույների կողմը։

Ապա երկու կողմերի՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի բաժինների, բոլոր հայերը համաձայնության եկան, եպիսկոպոսներն ու վանականները հավաքվելով Դվինում կամեցան կաթողիկոս նատեցնել. բայց այդ անգամ դա չհաջողվեց։ Դրա համար Սյունյաց մետրոպոլիտ Քրիստափորը միացավ ժողովին, կանոններ մշակեցին ու եկեղեցու համար կարգեր սահմանեցին։ Իսկ հաջորդ տարի[267], քառասնորդի[268] պասի

օրերին կրոնավորները հավաքվեցին Դվինում ու ծառազարդի տոնի[269] օրհնության[270] օրը հայոց պատրիարք ընտրեցին Ոշտունյաց եպիսկոպոս Տեր-Աբրահամին[271]։ Եվ Սյունյաց բաժանված աթոռն այս օրերին վերստին միավորվեց ու դասվեց սուրբ Գրիգորի և [այժմ] հաջորդած Տեր-Աբրահամի աթոռի գլխավոր ու պատվական կարգում։ Բայց այս ժամանակ Բյուզանդիայի, Վիրքի և Հայաստանի միջև եղան շատ խռովություններ, մեծամեծ հուզումներ՝ երկպառակություններ, բաժանումներ, վեճեր, պայքար ու աղմուկ, շփոթություններ, արհամարհանք՝ աստվածային օրենքների հանդեպ՝ երբեմն Քաղկեդոնի ժողովի, երբեմն եկեղեցու ինը դասերի համար, մի ժամանակ էլ վրացիները հավակնություն ունեցան ազդել Աղվանքի վրա, այդ պատճառով վերջինս երես դարձրեց Հայաստանից, Մարդպետական եպիսկոպոսն էլ գոռոզացավ ու պատվազուրկ եղավ։ Ուստի և բազմաթիվ ժողովներ [գումարվեցին], Աստվածաշնչի ուժեղ քննություն [եղավ]։ Եվ ապա հաղիվհազ հայերը հաշտվեցին, ու եկեղեցու խաղաղություն [եղավ]։ Այդ անցքերի բնույթն ու դեպքերի պատճառները ըստ վերը մեր խոստացածի պիտի ցուցադրենք համառոտակի, ինչպես որ հավաստի կերպով ուսումնասիրեցինք Սեբաստիայի եպիսկոպոս Ուխտանեսից[272]։ Մաքենոցաց առաջնորդ սուրբ Սողոմոնի թղթից, որ գետեղված է Աղվանքի պատմության միջին հատորում[273], սուրբ Մաշտոցի թղթից[274], որը նա գրել է Տեր-Գեորգ կաթողիկոսի[275] պահանջով։ Այս երեք հավաստապատում ու ճշմարտամիտ վարդապետներից քեզ ցույց կտամ այն ամենը, ինչ խոստացա։

ԻԶ

ՀԱՅՑԵՐԻ ՄԻԱԲԱՆՎԵԼՈՒ, ՏԵՐ-ԱԲՐԱՀԱՄԻ[276] ԱԹՈՌԱԿԱԼԵԼՈՒ, ԴՊԻՆՔ ՄԵԾ ԺՈՂՈՎԻ[277], ԵԿԵՂԵՑՈՒ ԻՆԸ ԴԱՍԵՐԻ ԵՎ ՎՐԱՑԻՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ[278]՝ ՇԱՏ ՈՒ ՊԻՏԱՆԻ ԶՐՈՒՅՑՆԵՐ, ՈՐ ՀԱՎԱՔԵՑԻՆՔ ՀԻՆ ԹՂԹԵՐԻՑ ԵՎ ՈՒԽՏԱՆԵՍԻ[279] ԳՐՔԻՑ. ԱՅԼԵՎ ԱՂՎԱՆՔԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅԱՆ, ՍՅՈՒՆԻՔԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ԵՎ ԹԵ ԻՆՉՈՒ՞ ՀԱՄԱՐ ՍՅՈՒՆԻՔԻՆ ՀԱՋ ՏՐՎԵՑ

Արքայից արքա Խոսրովի[280], ինքնակալ կայսր Հուստինիանոսի[281] տարիներին, Վրկան աշխարհի մարզպան կոչված

Սմբատ Բագրատունու[282] իշխանության, Վրթանես Քերթողի՝ հայոց [կաթողիկոսական] աթոռի տեղապահության[283] և Սյունիքի Սահակ իշխանի տիրապետության ժամանակ Սմբատի հրամանով ու Հայաստանի այլ իշխանների կամքով հայոց եպիսկոպոսները հավաքվեցին Դվինում։ Հրավիրվեցին և Բյուզանդիայի բաժնում հակառակությամբ եղողները՝ Բասենի[284] եպիսկոպոս Մանասեի գլխավորությամբ, ինչպես նաև Սյունիքի Քրիստափոր[285] [եպիսկոպոսը]։ Նրանք միասնության ուխտ դրեցին։ Սմբատը՝ Վրկանի մարզպանը, նրանցից պահանջեց կազմված ուխտագիրը, վերցրեց, կնքեց մատանիով ու դրեց սուրբ եկեղեցում։ Այնուհետև վերին ներգործումով ու ավետարանական կարգով ընտրելով Ոշտունյաց[286] եպիսկոպոս Աբրահամին՝ դարձրին հայոց կաթողիկոս։ Այն ժամանակ Բյուզանդիայի բռնակալ թագավորների ձեռքով բորբոքվում էր Քաղկեդոնի չարահնար աղանդը[287] և որպես քաղցկեղ ուզում էր ճարակել մեր Հայոց աշխարհն ու ճշմարտադավան ասորիներին՝ առավել ևս, երբ թագավորում էր Մորիկը[288]։ Եվ Բյուզանդիայի պատվիրակներն ու կոչնակները երբեք չէին դադարում գնալ-գալուց. բազմիցս հրաման էին տալիս ժողով գումարելու. և մեկ անգամ Կոստանդնուպոլսում, երեք անգամ՝ Թեոդուպոլսում գումարեցին, ու դեմ հանդիման խիստ քննություններ էին լինում։ Իսկ այն ժամանակ Հայաստանում նորոգ ու շեն դպրոցներ գոյություն ունեին, կային հունարեն լեզվին և դպրությանը խիստ հմուտ ու տեղյակ մարդիկ։ Եվ բյուզանդացիներն ինչպես հարցնում էին, առավելաբար պատասխան էին ստանում։ Այդ կապակցությամբ ոմանք զրպարտում են սուրբ հայր Հովհան Մայրագոմեցուն[289], թե, [իբր], նա ասաց, որ հայերը դավանանքի խընդրում պարտվեցին, իսկ դա բնավ չի եղել ու չի էլ լինի, այլ [ընդհակառակն,] մեզ իսկությունը ցույց է տալիս Սողոմոնը՝ Մաքենոցաց[290] սուրբ միաբանության հայրերի հայրն[291] ու առաջնորդը, որը և հարցրեց հայոց կաթողիկոսից սրա պատճառը, և նա գրավոր ավանդեց այսպես, թե՝ «Հովհանը վկայեց, որ հայերը դավանանքի հարցում անպարտելի մնացին, իսկ մյուս խնդրում խիստ պարտված գտնվեցին ու լռեցին, քանի որ բյուզանդացիներն ասացին, թե աստված սուրբ եկեղեցին կարգավորեց ինը դասերով՝ ըստ երկնայինների

և ըստ չորս ավետարանիչների մեծախորհուրդ դիտման՝ երկրի վրա սահմանից միայն չորս աթոռ ու պատրիարքություններ[292], որոնց վրա հանգչում է նույն ինքը՝ բանն աստված՝ հավերժական թագավորը. և ամբողջ աշխարհով հնազանդվում ենք այս աթոռներին։ Իսկ սրանցից ներքև դասավորված են եկեղեցու ութ դասերը։ Արդ՝ ո՞րն է ձեր աթոռը և պատրիարքը, որին էլ ստորադասված լինի արքեպիսկոպոսը և այլն։ Կա՛մ ձերը ցույց տվեք, կա՛մ երբ չունեք, ենթարկվեցե՛ք այս չորս աթոռներից մեկին, այլապես կատարյալ հերձվածող եք և աստվածային բոլոր շնորհներով թերի»։

Ահա այս հարցում հայերը խիստ պարտված գտնվեցին։ Եվ թեպետ առաջներում սահմանված կարգերը նրանք հիշատակում էին, [բայց հույները չէին ընդունում], որովհետև մինչ այդ նրանց համար անհայտ ու գաղտնի էին մնացել, նույնիսկ վերացել ու աթոռակալների կողմից անուշադրության մատնվել։ Եվ այնուհետև հայերը դարձյալ խորհրդակցեցին, եպիսկոպոսներով, իշխաններով, ավագ տանուտերերով մտածեցին ելք գտնել տարակուսանքների համար։ Եվ ամբողջ երկրում հրաման արձակելով՝ մեծ աշխարհաժողով գումարեցին Պարսկաստանի Ապրվեզ Խոսրովի ու Բյուզանդիայի Մորիկի թագավորության ժամանակ։ Նրանց հետ էին նաև ժողովի գահերեց, գահագլուխ Դավիթը՝ Սյունյաց եպիսկոպոսը, և Մանասեն՝ Բասենի [եպիսկոպոսը], քանի որ իր եպիսկոպոսության տասը տարուց հետո Քրիստափորը վախճանվել էր, իսկ նրա տեղը նստել էր Տեր-Դավիթը[293]՝ ձեռնադրված Աբրահամ կաթողիկոսից։

Սրանք նախ հաստատեցին երեք սուրբ ժողովների[294] ճըշմարիտ դավանությունը, միաձայն նզովեցին Քաղկեդոնի և Լևոն[295] աղանդները։ Բոլորն էլ ստորագրեցին հավատո թուղթը և կնքեցին Տեր-Աբրահամի, այլև եպիսկոպոսների ու իշխանների մատանիներով։ Եվ համաձայնություն ստացան հետևյալ պատճառով. երբ Հուստինիանոսը թագավորում է, հավաքում է մեծամեծ աթոռակալներին, սուրբ հայրերին, թուլտվություն է վերցնում ու նրանց հետ միասին Հովհաննես ավետարանիչի աթոռը փոխադրում է Եփեսոսից Կոստանդնուպոլիս, Մատթեոս ավետարանիչինը՝ Անտիոքից Երուսաղեմ, և բուն աթոռը մնում է իր տեղում։ Եվ ահա սրանից

համաձայնություն ստանալով՝ այնուհետև բոլոր հանդուցննները, հավակնողները գոռոզացան և, որտեղ առաջյալ էր վախճանված, բոլորի աթոռները ինքնագլուխ դարձրին ու պատրիարք հռչակվեցին։ Մերոնք էլ սրանից ընդօրինակելով Աբրահամ կաթողիկոսին հռչակեցին հայոց պատրիարք, Աղվանքի կաթողիկոսին՝ արքեպիսկոպոս, Վրաստանի կաթողիկոսին՝ մետրոպոլիտ։ Իսկ Սյունիքը, որ Պետրոսի հրամանով մի ժամանակ անջատվել էր հակառակ աթոռներից[296], այժմ նորից միացավ։ Ապա վրացիները, մեծամտանալով աղվանցիների նկատմամբ, չէին կամենում կարգով նրանցից ցած դասվել, այլ իրենց նրանցից առաջադասվան էին համարում։ Վրաց առաջնորդն էր Կյուրիոնը[297], որը ծածուկ կերպով շաղախված էր Նեստորի աղանդով ու չէր կամենում դա հայտնի դարձնել, այլ սպասում էր [հարմար] ժամանակի ու առիթի։ Իր հետ էլ մի խուժաստանցի եպիսկոպոս ուներ, որին ինքն էր ձեռնադրել։ Այս Կյուրիոնը եղել էր Վաղարշապատի սուրբ կաթողիկեի փակակալ, սարկավագության ժամանակ գնացել էր Կողոնիա[298], բնակվելով մի երկաբնակ քահանայի մոտ՝ վարակվել էր այդ աղանդով։

Այնուհետև, երբ վրացիները հայոց կաթողիկոս Մովսեսից[299] իրենց համար առաջնորդ խնդրեցին, նա ձեռնադրեց Նեռի կարապետ Կյուրիոնին ու տվեց նրանց։ Երբ աղվանքցիները իմացան վրացիների վարմունքի մասին, իրենք էլ մատնացույց արեցին Ծղիշե անունով մի առաքյալի[300], որը, նախապես, առաջ եպիսկոպոս ձեռնադրված լինելով, եկել էր Աղվանք, եկեղեցի շինել՝ Հայաստանից վաղ։ Մի առ ժամանակ նրանք էլ Հայաստանից երես դարձրին։ Վրացիները բաժանվեցին՝ պատրվակ բերելով, թե երբ Կյուրիոնը Աբրահամից արքեպիսկոպոսության [աստիճան] խնդրեց, սա նրան սաստեց։ Եվ թեպետ Պետրոս եպիսկոպոսի միջոցով [Աբրահամը] շատ անգամ խոստացավ Կյուրիոնին տալ իր խընդրածը, բայց նա չհաշտվեց ու հետո էլ բանադրվեց Աբրահամի կողմից։ Կյուրիոնը, կնկուղն ու փիլոնը վերադարձնելով Պետրոսին, ասաց. «Ձերը ձեզ լինի»։ Իսկ հետո վախենալով գաղտնի կերպով նրա ետևից [մարդիկ] ուղարկեց ու Պետրոսին երկու սարկավագների հետ սպանել տվեց Կանգրաց լեռան[301] վրա։ Բայց Կյուրիոնի աղանդի մասին հայտնեց

Մովսեսը[302]՝ եպիսկոպոսը Ցուրտավի, այսինքն՝ Դաշյանքի, որի թեմն այժմ ենթարկվում է Հաղպատին։

Իսկ մինչ այս այսպես էր լինում, մետրոպոլիտությունը հանձնեցին Մարդպետական եպիսկոպոս Թեոդորոսին։ Ապա սա էլ գոռոզանալով ուզում էր [մյուս] եպիսկոպոսներին էլ իրեն ենթարկել։ Հայերը դրանից երկյուղ կրելով ասացին. «Դուցե և ուրիշ տեսակ պառակտում լինի»։ Եվ նրանից վերցրին այդ [աստիճանը]։ Սյունյաց տերերին տեսնելով որպես անսասան ճշմարտադավաններ, ամբողջ Հայաստանում երևելի ու առաջին հայրերից նույն պատվով կոչված՝ պատշաճ համարեցին միասնական ժողովով նրանց հանձնել մետրոպոլիտությունը, դարձնել կաթողիկոսին սեղանակից ու աթոռակից, աթոռով ու բարձով միասին բազմող։ Ապա Դավթին[303] նշանակում են Սյունիքի մետրոպոլիտ, նրան տալիս են խաչանշանը՝ միշտ առջևում կրելու, և [արտոնում են] իր եկեղեցիներում, սուրբ սեղանի վրա քարոզել ոչ թե հայոց կաթողիկոսի, այլ միայն իր անունով։ Եվ գրագրությունների ժամանակ Սյունիքի մետրոպոլիտները կաթողիկոսին չէին նշում «եպիսկոպոսապետ» կամ ուրիշ անվանումով, այլ «աստվածապատիվ և հոգևոր տեր» էին գրում, իսկ կաթողիկոսը՝ «գործակցից», բացի [միայն այն դեպքից, որ եղավ] Երիցավանքում՝ Տղիա կաթողիկոսի[304] անհմուտ վարվեցողության պատճառով, երբ նա գնում էր աղվանքցիներին հնազանդեցնելու. սրանք չգրեցին «ծառայից», նրանք էլ՝ «հոգևոր տեր»։

Ահա բյուզանդացիների նախանձի պատճառով, որ ջանում էին փոքրացնել Թադևոսի համայնքը, մարել սուրբ Գրիգորի աթոռը, այսպես սահմանեցին ու տեղաբաշխեցին եկեղեցու ինը դասերը. Հայաստանի համար՝ պատրիարք, Աղվանքի համար՝ արքեպիսկոպոս, Սյունիքի համար՝ մետրոպոլիտ։ Բայց Հովհաննես պատմագիրը[305] հիշատակում է, որ Մելիտինեն ու Սեբաստիան ևս մետրոպոլիտներ են ունեցել։ Մյուս աշխարհները թողեցին նախկին սովորությամբ, որ աղմուկ չբարձրանար։ Այլև պահանջեցին սյունեցիներից՝ ուրիշ ավելի բանի չձգտել, այսինքն՝ իրենց ենթակա եպիսկոպոս ունենալ և ձեռնադրել, այլ միայն գահավորակով ու խաչով պատվեցին և կոչեցին պատրիարքի նախաթոռ, որը պռոտոֆրոն-

տեսն[306] է, և անվանեցին մետրոպոլիտ[307]։ Այսպիսով նրանց կրկին անգամ շնորհվեցին այս պատիվն ու նշանը, առաջին անգամ Աղվանքի Եսվաղեն թագավորից, երկրորդ անգամ՝ հայոց ժողովից, Տեր-Աբրահամից։

Եվ արդ՝ ո՛վ ընթերցասեր, քեզ համառոտ կերպով ցույց տվեցի միայն այս ամփոփումը։ Իսկ եթե կամենում ես իմանալ հիմնավորապես ու ընդարձակ, կարդա՛ Ուխտանեսի գիրքը, «Աղվանքի պատմության»-ը, տեղեկացի՛ր «Գիրք թղթոց»-ից, ինչպես և Տեր-Մաշտոցի[308] [թղթից], որ գրել է հայոց կաթողիկոս Գեորգի[309] պահանջով։ Եվ շատ ընթերցումներից հետո նկատեցի այլևայլ գրվածքներ ու բազում չանքերով գտա ստույգն ու զետեղեցի այստեղ։ Դրա համար էլ նրանց շարադրանքի նկարագրությունը չտվեցի, այլ պատմածի բուն էությունը ամբողջականորեն վերցնելով՝ ուղիղ հաջորդականությամբ շարադրեցի այստեղ։ Եվ դու ամենայն ողջախոհությամբ ընդունիր ու մի՛ կասկածիր։

Իէ

ԵԿԵՂԵՑՈՒ ԻՆԸ ԴԱՍԵՐԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՎԱՐՎՈՒՄ

Այսպես՝ երբ բանն աստված եկավ և մարդու կերպարանք ստանալով[310] մեր մարդկային էությունն ազատեց սատանայի գերությունից, երկնահրավեր Ավետարանով լուսավորեց ու ավազանի վերածնությամբ որդիացրեց երկնավոր Հորը։ Եվ այդ անճառելին հրեղեններին ու հոգեղեններին շնորհներ տվեց, մարդկանց առաջապես պարգևեց իր մարմինն ու արյունը որպես կերակուր, որով աստծու հետ միանում են և աստվածացածները։ Մարդկային ցեղը հրավիրեց դեպի երկնային քահանայություն՝ իրավունք տալով աստվածաբար կաշկանդել կամ ազատ պահել երկնքից մինչև երկիր, և ահռելի շնորհներով ու փառքով զարդարեց մեր էությունը։ Դրա համար հիմնեց ու հաստատեց երկրի վրա երկինքը՝ սուրբ եկեղեցին։ Եվ քանի որ մենք՝ երկրածիններս, դարձանք կենդանի երկնայիններ, ապա պետք էր, որ երկնայիններս երկնքի մեջ ներկայանայինք և հրեշտակների հետ ճախրեինք ու փառավորապես ճեմեինք՝ աստծու մշտենջենական փառաբանության համար։

Եվ ահա այս ձևով երկինքը կառուցված էր լինում երկրի վրա, և երկնային երկրավորներս էլ նրա մեջ ներկայացված։ Ուրեմն՝ համապատասխանաբար պետք էր, որ երկնայինները դասով ու սահմանով կարգավորվեին եկեղեցու մեջ՝ ըստ երեք քահանայապետությունների ու ինը դասերի, որոնք հոգի-աստվածը սահմանելով տնօրինեց աստվածային տեսլությամբ՝ առաքյալների ու հայրապետների միջոցով։ Դա ունի հետևյալ պատկերը։—

Եկեղեցու առաջին դասը, որ անմիջականորեն մոտ է աստվածայիններին, հայրապետներն են՝ պատրիարք[311] անվանումով, որոնք բազմած են չորս ավետարանիչների աթոռներին[312]։ Սրանք ընդունում են առաքելական ձև՝ զգեստավորվելով բոլորակ նափորտով[313] ու գցելով հնգակի եմիփորոն[314]։ Սրանց գործն է արքեպիսկոպոսներ ձեռնադրել աշխարհի չորս բաժիններում և աշխարհաժողովներ գումարելու հրաման տալ։

Երկրորդ դասն են արքեպիսկոպոսները[315], այսինքն՝ եպիսկոպոսապետերը, որոնք կոչվում են կաթողիկոսներ[316]։ Նրանց հագուստն է մինչև կրունկները հասնող բազմախաչ փիլոնը, վրայից քառակի եմիփորոն։ Նրանց գործն է ձեռնադրել մետրոպոլիտ ու օրհնել աստվածաստեղծ մեռոնը։ Իսկ երբ պատրիարքը մեռնում է, երեք արքեպիսկոպոսներ եկեղեցական ուրիշ դասերով ձեռնադրում են պատրիարք։

Երրորդ դասը մետրոպոլիտներն են[317], որոնք լինում են մայրաքաղաքների և ավագագույն աթոռների վերակացուներ։ Նրանց հագուստն է նափորտը՝ վրան թուխ կտավե խաչեր՝ իրենց ենթակա եպիսկոպոսների թվի չափով, ու եռակի եմիփորոն։ Նրանց գործն է եպիսկոպոսներ[318] ձեռնադրել և օրհնել այն ձեթը, որ եկեղեցին հավելյալ պահում է երեխաների ու հիվանդների կարիքների համար. իսկ եթե կամենան [կարող են] խառնել առաքելական ձեթին, այսինքն՝ մեռոնին։ Եթե ինչ-որ անհրաժեշտություն է լինում՝ կամ պատրիարք չի լինում, կա՛մ ուրիշ շատ մեծ պատճառ է լինում, մեծ աթոռի հրամանով երեք մետրոպոլիտներ եկեղեցական ուրիշ դասերով ձեռնադրում են իրենց արքեպիսկոպոսին։

Չորրորդ դասը եպիսկոպոսներն են, որ կոչվում են [նաև] այցելուներ, իշխում են գավառների վրա։ Նրանց զգեստն են

անխաչ նափորտը և եմիփորոնը՝ միայն երկակի։ Նրանց գործն է ձեռնադրել քահանաներ ու սարկավագներ, օրհնել եկեղեցի, օծել սեղան ու ավազան, բայց մեծագույն աթոռի մեռոնն ստանում են իրենց մետրոպոլիտից, իսկ մետրոպոլիտը՝ իր արքեպիսկոպոսից, որովհետև աստվածային շնորհը աստիճանանման իջնում է վերևից՝ սկսած պատրիարքից դալիս-հասնում է բուն վերջիններին, որոնք ժողովրդականներն են։

Հինգերորդ դասը երեցները, այսինքն՝ քահանաներն են։ Նրանց տարազն է ջուրջառը, երկու ուսերին՝ ուրարը[319], այսինքն՝ փակեղը[320], և բեմի վրա իրավունք ունեն լինել բաճկոնով։ Նրանց գործն է՝ կատարել հաղորդության կենարար խորհուրդը և [հաղորդությունը] բաժանել արժանավորներին, մկրտություն անել ու օրհնել խաչ և, ինչպես որ քրիստոնյաների համար սահմանված կարգ է, մեղք գործածներից խոստովանության վերցնել ու մեղքերի ներում տալ։ Կարող են իրենց համայնքին բանադրել-կաշկանդել ու ներել-ազատել. սակայն իրավունք չունեն տեղափոխելու մեռոնը, այլ՝ հասարակ ձեթը, որ մետրոպոլիտներն ու եպիսկոպոսներն են օրհնում, որովհետև մեռոնը, որ առաքելական ձեթ է, միայն եպիսկոպոսն իրավունք ունի տեղափոխելու և տարին մեկ անգամ շրջելով գավառում՝ օծում է ձեռնադրված քահանաներին։

[Քահանան] կարող է մանուկներին դարձնել գրակարդացներ ու սաղմոսերգուներ, ինչպես և կարգ է տալիս ապաշխարողներին ու սարկավագուհիներին։

Վեցերորդ դասն են սարկավագները, այսինքն՝ սպասավորները, որ ուրիշ լեզվով դիակոն[321] են կոչվում։ Սրանք շապիկ[322] են հագնում և մերկ դրությամբ միայն ձախ ուսին փակեղ են կրում, գլխաբաց սպասավորում են սուրբ բեմին, սեղանին ու քահանաներին։ Նրանց գործն է Ավետարան կարդալ, քարոզել, խնկարկել, ծառայել սուրբ խորհրդին՝ սկիհն[323] ու մաղզման[324] բռնել։ Իսկ կանանցից լինում են սարկավագուհիներ, որպեսզի կանանց վանքերում քարոզեն։ Նրանք միանձնուհիների զգեստներ են ունենում. փիլոն են գցում, ճակատին խաչ են ունենում և փոքրիկ ուրարը աջ կողմից բազկից ներքև շորից կամ գոտուց կախ պահած՝ բարձրանում են բեմ, քարոզում ու Ավետարան են կարդում ոչ թե ամբիո-

նում,[324] բեմի վրա, այլ՝ առանձին կամ մի անկյունում։ Բայց սուրբ պատարագին սպասավորությամբ բոլորովին չեն մասնակցում, ինչպես որ արական սարկավագներն [են անում]։

Յոթերորդ դասը դպիրներն են, որոնք կես սարկավագ են։ Ունենում են սարկավագների զգեստ, բայց ուրարը [կրում են] ձախ բազկին, արմունկի վրա, կանգնում են առանց գոտու։ Սրանց գործն է կարդալ առաքելական եկեղեցական գրքերը, սպասավորել տաճարին, վերցնել մոմեղենն ու գլխին խաչ ունեցող գավազանը և պահել եկեղեցու դռները։

Ութերորդ դասը անագանոսներն[325] են, այսինքն՝ գրակարդացները։ Հագնում են նույն զգեստն ու աղաբողոնը[326], բայց առանց ուրարի։ Եկեղեցուց դուրս հագնում են կտավե վերնազգեստ՝ պաճուճանքներից զերծ։ Նրանց գործն է մարգարեական ու վարդապետական գրքեր կարդալը։

Իններորդ դասը փսաղտները[327], այսինքն՝ սաղմոսերգուները են, որոնց զգեստն ու հագնելաձևն էլ նույնն են։ Նրանց գործն է սաղմոսերգել ու երգասացությամբ սպասավորել եկեղեցուն, ձայնական արվեստով երգել ալելուիա, միջներգ[328] և նման ուրիշները։

Ահա սրանք են եկեղեցու ինը դասերը, որոնք կարգով սահմանեց սուրբ հոգին սուրբ առաքյալների ու նրանց հաջորդող սուրբ հայրապետների միջոցով, որոնք լրիվ ու անթերի պիտի պահպանի եկեղեցին, որովհետև բոլորովին անհնար է, որ սրանց ամբողջությունը պակաս ունենա։ Իսկ եթե պակաս լինի, աստված չի հավանի, նույն ձևով էլ պակաս կլինի աստվածային շնորհը։ Իմացի՛ր, որ եկեղեցին հորինված է մարդու մարմնի անդամների ամբողջության նման՝ Քրիստոս գլխով։ Ուրեմն՝ եթե եկեղեցու անդամներից պակաս կա, թեկուզ և խիստ փոքրագույններից, նրա մարմինն արատավոր է, իսկ արատավոր մարմնի համար Քրիստոսը չի ցանկանա գլուխ լինել։ Եվ դու, եղբա՛յր, քննի՛ր ու իմացի՛ր վնասի չափը։ Բայց եթե եկեղեցու այս բոլոր դասերը ամբողջական ու միասնացած են, կարող են ձեռնադրել պատրիարքին։

ՍՅՈՒՆՅԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՇՈՒՍԱՂԱՅԻ[329], ՀԵՐԱԿԼԻ[330] ԿՈՂՄԻՑ [ԴՈՒՄԱՐՎԱԾ] ԿԱՐՆՈ ԺՈՂՈՎԻ[331] ԵՎ ՔԱՂԿԵԴՈՆԻ ԱՂԱՆԴԻ ՄԵՋ ԵԶՐԻ[332] ՇԱՂԱԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երանելի հայր և բազմապայծառ ճգնակյաց Տեր-Դավիթը, քսանյոթ տարի մնալով Սյունիքի մետրոպոլիտության աթոռին, վախճանվում է։ Այնուհետև որպես տեղապահ աթոռը գրավում է մեծ քերթող և անհաղթ փիլիսոփա Մաշուսաղան, որը դաստիարակվել էր ամենայն պարկեշտությամբ, աճել ամենայն առաքինությամբ, սովորել էր քերթողությունը, վարժվել ճարտասանությամբ, հմտացել փիլիսոփայական գիտություններին, լի էր ամենայն իմաստնությամբ և կատարյալ գիտությամբ։ Եվ քանի որ Սյունյաց աթոռը հայոց վարդապետների մեջ մեծապատիվ ու առաջնակարգ էր, և որովհետև վաղնջական ժամանակներից սուրբ Սահակի ու Մեսրոպի կողմից վերապահված էր նրանց վարդապետներին թարգմանություններ կատարել ու մեկնաբանել, լինել հայոց բոլոր վարդապետների պարագլուխ ու առաջատար, այդ պատճառով էլ տեսնելով այն ժամանակ իմաստառատ ճառագայթներով պայծառացած երանելի Մաշուսաղային, որ դաստիարակված և կրթված էր նույն տեղում, նրան հաստատեցին եկեղեցու վարդապետի աստիճանին, նստեցրին բոլոր վարդապետների գլուխ, բարունարանի բարձր ու ազդեցիկ ամբիոնում, որից գետի պես բխում է աստվածային իմաստությունն ու փարթամացնում բոլոր աշակերտողներին։

Կոմիտաս սուրբ պատրիարքը[333], այս համբավից սքանչացած, շրջանցելով կաթողիկոսարանի բոլոր վարդապետներին, այլև Արշարունիքում[334] գտնվող հայոց վարդապետարանը, որտեղ Հայաստանի ճարտարներն ու գիտունները հավաքել էին մանուկներին՝ [ուսուցանելու],— դա այն վարդապետարանն է, որ Նրասխաձորում է և այժմ էլ Վարդիկ հայր է կոչվում,— Սյունյաց քերթող Մաշուսաղայի մոտ է ուղարկում իր դեռահաս սանին՝ իր եղբորորդի Թեոդորոսին, որին ինքը մեծափափագ սիրով դաստիարակում էր սրբությամբ։ Մաշուսաղան նրան ընդունելով՝ մեծ զգուշությամբ

սովորեցրեց և հասցրեց գիտության բարձունքներին՝ զարդարելով տեսականով ու գործնականով։

Ապա հայոց պատրիարք Տեր-Կոմիտասը վախճանվելով գրվում է տապանում իր շինած եկեղեցու մեջ, սուրբ Հռիփսիմեի հանգստարանի մոտ, և աթոռին նստում է Քրիստափորը՝ ազնվական տոհմից, երեք տարի[335], իսկ սրանից հետո՝ եկեղեցու խավարաբեր[336] Եզրը՝ տասը տարի։ Սա նիզ գավառի Փառաժնակերտ գյուղից էր։ Սրա կաթողիկոսության երրորդ տարում, երբ Դավիթ Սահառունին[337] վախճանվել էր, և հայոց մարզպանությունն ստանձնել էր Թեոդորոս Ռշտունին[338], Հերակլ կայսրը հրաման արձակեց Հայոց և Ասորաց աշխարհներին՝ գալ-հավաքվել Կարին քաղաքում դավանանքի քննության համար։ Եվ ինքն էլ, հետը վերցրած հունական ճարտարաբան մարդկանց, եկավ այնտեղ։ Ապա իշխան Թեոդորոս Ռշտունին և հայոց մյուս նախարարները, խորհուրդ անելով Եզր կաթողիկոսի հետ, ասացին. «Մենք շտապ գնում ենք արքային ծառայելու։ Դու ընտրի՛ր մեր ժողովրդի գիտուններին ու մեր հայոց եպիսկոպոսներով ե՛կ այն ժողովին։ Բայց չլինի թե տեղիդ շարժվես առանց Մաթուսաղա Սյունեցու և Հովհան Մայրագոմեցու, ու չլինի, որ չարը փլցնի մեր հավատքի գեղեցիկ շինվածքը։ Ահա՛, տե՛ր կաթողիկոս, օրն է կռվի և հաղթանակի, օրը փրկության և ժամանակը պատշաճ։ Գոտեպնդվի՛ր որպես կատարյալ տղամարդ, սպառազինվի՛ր հավատքի ամրությամբ, որ հունական հանդեսի մեջ չթուլանաս ու չպարտվես ճարպիկ խաբեբաներից, և մենք չկողոպտվենք ու չզրկվենք մեր ճշմարտացի դավանանքից»։

Եվ կաթողիկոսը պատվավոր մարդկանցից հրավիրակներ է ուղարկում Մաթուսաղայի մոտ ու նրան հայտնում վրա հասած վտանգի մասին, հրավիրում միասին հոգալու անհրաժեշտ անելիքը։ Իսկ նա, չկամենալով խափանել վարժարանի գործը, իր ցերեկվա ու գիշերվա ճիգ ու ջանքը, չի գնում։ Ապա կաթողիկոսը կրկին հարկադրում է նրան գնալ, բայց նա չի համաձայնվում. պատճառ բերելով մարմնի տկարությունը՝ նրա մոտ է ուղարկում վերոհիշյալ Թեոդորոսին[339], իր աշակերտին, Կոմիտասի եղբորորդուն։ Նաև թուղթ է գրում դավանության մասին, որի ձևով թերևս խոսեն։ Այդ թուղթը

կա տոնագրքում, և մենք էլ այստեղ զետեղեցինք[340]։ Մաթուսաղան աղաչում է չգնալու համար չմեղադրել։ Ասում է. «Դուք ինքներդ գիտուն եք, ձեզ հետ էլ ունեք աշխարհալույս վարդապետ Հովհանին. ուրիշ շատ գիտուններ ու ճարտարաբաններ էլ կան ձեզ մոտ, իսկ մեր կողմից ուղարկվեց մեր աշակերտ Թեոդորոսը։ Դա կբավականացնի»։

Սակայն Եզրը իր հետ չի վերցնում Հովհանին[341], այլ վրստահ լինելով Թեոդորոսի վրա՝ գնում է ժողովի, Հերակլի մոտ։ Ապա Հերակլը հարցնում է նրան. «Դավանանքով ինչո՞ւ չեք միանում մեզ հետ»։ Եզրն ասում է. «Բարերա՛ր արքա, եթե միանում մեզ հետ», Եզրն ասում է. «Բարերա՛ր արքա, եթե կամենաս, դա հեշտ կլինի, միայն հրաժարվիր Քաղկեդոնի ժողովից ու Լևոնի տոմարից[342], և մենք կմիաբանվենք»։ Ապա թագավորը, վերցնելով Քաղկեդոնի ժողովի դավանության թուղթը, դնում է իր մոտ եղող սուրբ խաչի վրա ու ասում. «Ահա, տե՛ր կաթողիկոս, ա՛ռ, կարդա՛ և քննի՛ր, թե դրա մեջ կա՞ որևէ արատ կամ թյուրություն, ցո՛ւյց տուր ինձ, և ես բոլոր հույներին քո դավանանքին կդարձնեմ ու կայրեմ այս թուղթը. իսկ եթե ոչ, ապա դուք էլ միացեք մեզ հետ»։ Կաթողիկոսը վերցնելով թուղթը տարավ իր իջևանը. երեք օր քննեցին և չկարողացան վերահասու լինել նրա ծածուկ ու անհայտ աղանդին։ Եկան թագավորի մոտ ու ասացին. «Թագավորը հավիտյան ապրած կենա, սրա մեջ թյուրություն չգտանք, ամեն ինչով համապատասխանում է սուրբ հայրերի ճշմարիտ դավանությանը»։ Թագավորն ասում է. «Այժմ համաձա՞յն եք մեզ հետ»։ Կաթողիկոսն ասում է. «Այս խընդրում համաձայն ենք, բայց չենք ընդունում այն, որ ձեր եկեղեցականները անկաշկանդ են պոռնկության ու այլ պղծությունների մեջ և հաղորդություն են ստանում առանց խորության»։ Թագավորն ասում է. «Մեր խոսքը դավանությանն է վերաբերում և ոչ թե [նման] գործերի քննությանը. դուք՝ հայերդ, ունեք անբնական պղծություններ... դրանք վերացրեք Հայաստանից, մենք էլ հիշյալները կվերացնենք Բյուզանդիայից։ Անառականոցներն ու մունին[343] Քաղկեդոնի ժողովը չի ստեղծել, որ դուք այժմ հիշում եք։ Դրա համար իշխանները [կարգ] դրեցին, որ այլանդակ չարիքները երևան չգան»։

Եվ կաթողիկոսը թագավորից հեռանում է առանց պա-

տասխանի։ Խորհրդակցում է ասպետի[344] ու այլ իշխանների հետ, թե ի՛նչ անեն, ասում է. «Հիմնավորում չենք գտնում»։ Ասպետը խոժռովելով ասում է ցասմամբ. «Քեզ չասացի՞, թե առանց Մաթուսաղայի ու Հովհանի մի՛ գա այս ժողովին։ Ահա՛ քո տգիտությամբ մեզ կորստյան մատնեցիր»։ Եզրն ասում է. «Մաթուսաղան չեկավ, իսկ Հովհանը չկամեցավ թողնել եկեղեցին ու կաթողիկոսարանը, և բոլորն էլ ասացին, թե Մաթուսաղայի աշակերտը հետներս է, մենք ուրիշ մարդու կարիք չունենք. նա բավական է»։ [Մաթուսաղայի աշակերտ] Թեոդորոսն սկսում է խոսել և ասում է. «Ինչո՞ւ եք վիճում ու ինչո՞ւ եք տրտմել։ Նրանց մեջ դավանության հարցում թյուրություն չկա, այլ մենք ու նրանք մեկ ենք։ Նրանք բունն ու արմատներն են, և մենք՝ մի ոստը՝ նրանցից բուսած, ընդունել ենք քրիստոնեական հավատքն ու բոլոր կարգերը։ Պետք չէ ընդվզել նրանց դեմ ու պոկվել մեր արմատից, այլ մենք՝ կրտսերագույններս, պիտի հնազանդվենք նրանց՝ ավագագույնների հրամաններին. և [այդպիսով] կլինենք մեկ հոտ ու մեկ հովիվ»։

Այս խոսքերով անմիջապես խմորեց իշխանի ու եպիսկոպոսների միտքը։ Եվ քանի որ Եզրը արքայից ագահությամբ ակնկալում էր փառք ու հարստություն, իր միտքն էլ թուլացել էր ճշմարտությունից, միայն քաշվում էր իշխաններից և եպիսկոպոսներից՝ ինքնակամ ու առանձին համաձայնվելու։ Իսկ երբ լսեցին Թեոդորոսի այն խոսքերը, միասին գնացին թագավորի մոտ ու հանձն առան Քաղկեդոնի դավանանքը։ Պատարագ արեցին ու միմյանց հետ հաղորդություն ընդունեցին և արքային միաբանվելու համաձայնագիր տվեցին։ Խնդրեցին նաև Քաղկեդոնի օրենքը, որը և թագավորը տվեց ոսկեգիր մագաղաթով։ Եզրին էլ պարգևեց Կողբ[345] գյուղաքաղաքի երրորդ մասն ու ամբողջ աղահանքերը։ Օ՜, անմիտ ու չար առևտուր։ Եվ այդպես խիստ մեծ փառքով ու երևելի պարգևներով հրաժեշտ տալով արքային՝ Դվին վերադարձան ճշմարիտ դավանանքից կողոպտվածները։ Նրանք ցանկացան այնտեղ ժողովով հաստատել նոր ընդունած օրենքները։ Հովհան Մայրագոմեցին դրան չհամաձայնվելով՝ Եզրի կողմից անարգվեց ու հալածվեց։ Իսկ ինքը [Եզրին] ասում էր. «Հիրավի՛ Եզր կոչվեցիր, որովհետև եզր ու վախճան եղար ճշմարիտ դավանանքին»[346]։

Նաև Սյունիքից եկավ Մաթուսաղան և չափազանց տրտմեց կատարված չարիքից, բայց միաժամանակ պապանձվեց ու լռեց, որովհետև չարիքն իր աշակերտից էր ծագել։ Իսկ ժողովականներն ու Եզրը, շատ սիրաշահումներով նվաճելով նրա կամքը, համաձայնեցրին ձեռնադրվելու Սյունիքի եպիսկոպոս, և ձեռնադրեցին էլ ու մեծ պատվով ուղարկեցին իր աթոռն ու թեմը։ Նա էլ գալով ամենայն ջանադրությամբ զգուշացրեց իր թեմին չշաղախվել քաղկեդոնական աղանդով, այլ ամուր պահել սուրբ հայրերից ավանդված ճշմարիտ դավանանքը, որը և պահում էին սուրբ Գրիգորից մինչև այն ժամանակ։ Եվ նրա մեջ էլ մնացին սուրբ հոգու շնորհիվ։ Իսկ Հայաստանը հիշյալ աղանդի մեջ մնաց վեց կաթողիկոսների օրոք՝ ութսունհինգ տարի, մինչև սուրբ եկեղեցու զարդարուն զավակ, բազմերջանիկ ու գովելի Հովհան Օձնեցին[347], որի ձեռքով Հայաստանը նորոգվեց ու մաքրվեց այդ աղանդից։ Իսկ երանելի Մաթուսաղան, Սյունիքի մետրոպոլիտության աթոռին մնալով տասնութ տարի, վախճանվեց։ Առաքինական բազում ու մեծամեծ վաստակներով գնաց տիրոջ մոտ՝ ստանալու վաստակներին արժանի այն, ինչ աչքը չի տեսել, ականջը չի լսել ու մարդու սրտի մեջ չի ընկել։

ԻԹ

ՍՅՈՒՆՅԱՑ ՄԱԹՈՒՍԱՂԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԹՈՒՂԹԸ, ՈՐ ՆԱ ԳՐԵԼ Է ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԵՐ-ԵԶՐԻ ԵՎ ՄՅՈՒՍ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ ԴԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԵՐԱԿԻ ԹԱԳԱՎՈՐԻՆ

«Ամենաբարերարդ, քաջահաղթ, Քրիստոսով պայծառացած և մեծամեծ բարեգործություններով որպես պարծանք քրիստոնյաների, աստծու կողմից առաքված՝ Բյուզանդիայի Հերակլես թագավորին՝ նվաստ եղրասից՝ հայոց կաթողիկոսից, Մարդպետական եպիսկոպոս Հովհաննեսից, Սյունիքի եպիսկոպոս Մաթուսաղայից և ձեզ հնազակա Հայոց աշխարհիս [մյուս] բոլոր նվաստ եպիսկոպոսներից՝ տիրոջով ողջո՛ւյն։

Տեսնելով դավանանքի խոստովանագիրը, որ ձեր վեհանձնությունը պատրաստել և ուղարկել էր մեզ՝ նվաստներիս, քննությամբ իմացանք, որ ըստ բոլոր հայրերի՝ ճշմարիտ և ուղիղ ճանաչմամբ բարեպաշտական է սուրբ երրորդության միասնության հանդեպ։ Եվ դա ստացանք ու ընդունում ենք։ Բայց [դրանում] ընդունված էր Քաղկեդոնի ժողովն ու դասված երեք ժողովների կարգում՝ Նիկիայի երեք հարյուր տասնութի ժողովի, որ Արիոսի պատճառով էր, որը աստծու որդուն համարում էր արարած և ոչ թե արարչակից, Կոստանդնուպոլսի հարյուր հիսունի ժողովի, որ Մակեդոնի պատճառով էր, որը սուրբ հոգին սպասավորության շարքում համարում էր հրեշտակ կամ առաքյալ, Եփեսոսի երկու հարյուրի ժողովի, որտեղ նղովեցին Նեստորի հայհոյանքը՝ սուրբ կույսից ծնվելու վերաբերյալ, և դրանից հետո էլ՝ Քաղկեդոնինը։

Իսկ Քաղկեդոնի ժողովի պատճառը Եվտիքեսը եղավ, որն ընդունում էր, թե բանն աստված կույսից է ծնվել, բայց աստծու՝ իր մարմնի հետ միանալուց հետո ուրանում է նրա միասնությունը և երկու բնության բաժանելով էր ներկայացնում ու այս գաղափարներով առաջնորդվում՝ այսպես ասելով. «Զվերացնելով այդ բնությունների տարբերությունները, այլ երկուսինն էլ ամբողջական ու անջատապես պահելով»։ Իսկ դա չեն ընդունում ո՛չ Աստվածաշունչ գիրքը, ո՛չ էլ հոգևոր նշանավոր վարդապետները, որոնք եղել են՝ յուրաքանչյուրն իր ժամանակին՝ սրբացված ու աստվածախոս, վկայված աստծու եկեղեցիներից, ամբողջ աշխարհում, որովհետև երկու բնությունների մեջտեղ բերումով լուծումը համարում էին Եվտիքեսի հայհոյանքը։ Նրանք պիտի կիրառեին երանելի հայրերի՝ տիրոջ մարմնավորությանը վերաբերող ամենապայծառ, ամենահրաշափառ խոսքերը՝ Աթանաս Աղեքսանդրացուն, Բարսեղ Կեսարացուն, Գրիգոր Նազիանզացուն, Գրիգոր Նեոկեսարացի Սքանչելագործինը, Բարսեղի եղբայր Գրիգոր Նյուսացուն, Պրոկղինը և առաջներում եղած ուրիշ վարդապետներինը։ Չէ՞ որ նրանք կատարյալ աստծու և կատարյալ մարդու երկու բնություններից մեկ աստված ընդունեցին և ի վիճակի են Եվտիքեսի հայհոյանքը հիմնիվեր տապալելու։ Իսկ ովքեր առաջնորդվում են նրանով, թե երկու բնու-

թյունները միմյանցից բաժանված են, հակառակ են վերհիշյալ վարդապետներին, որովհետև Քրիստոսին ուրիշ մեկը համարելով, բանն աստված՝ ուրիշ և երկու զավակներից յուրաքանչյուրի գործն էլ՝ առանձին, ընկան հայհոյանքի մեջ։ Դա ոչ թե երրորդություն [է դուրս գալիս], այլ՝ չորրորդություն։ Դրանք անփառունակ, չարահավատ, հրեամիտ Նեստորի տեսակետով են, որովհետև ասում են, թե Քաղկեդոնի ժողովի առաջնորդների մեջ եղել են Թեոդորետոսը և Իբասը՝ Նեստորի ախտակիցները։ Եթե կամենում եք իմանալ սրա այսպես լինելը, ապա հայտնի է ճշտությամբ, որովհետև Երուսաղեմի Հովնաղ անունով եպիսկոպոսը Քաղկեդոնի ժողովում էր. այնտեղից գալով՝ երուսաղեմացիների գիրքը կալմեց, որը և մենք պահել ենք մինչև այժմ։ Նրանք Քաղկեդոնի ժողովը մերժողներին հերետիկոսներ են անվանում և այսպես են բամբասում, թե «աստված խաչված» են ասում և «անմահ խաչված», բայց իրենք մեր մասին այսպես են գրում, թե ասում են «Հիսուսն էր, որ չարչարվեց, և Քրիստոսն էր, որ խաչվեց»։ Իսկ նրանց գիրքը մեզ մոտ է գտնվում, ուստի չեն կարող ուրանալ։ Դրանից շատերը և այս կողմերում շեղվեցին և չեն կամենում ասել «աստված խաչված» և «անմահ խաչված»։ Չէ՞ որ անչարչարը չարչարվեց չարչարողով, անմահը մեռավ մահկանացուով, այսինքն թե՝ անչարչար բանն աստված մեռավ իր մարմնով։ Այդ պատճառով էլ համարձակվում ենք ասել «աստված խաչված», ինչպես տերունական խոսքն էլ է պատմում, թե. «Աստված այնպես սիրեց աշխարհը, որ մինչև անգամ իր միածին որդուն տվեց»*։ Եվ Պողոս առաքյալն է ասում. «Եթե ճանաչած լիներ, ապա փառքի տիրոջը չէին խաչի»**, որը Կոստանդնուպոլսի եպիսկոպոս Հովհանը մեկնում է, թե՝ «Դևերն էլ չեն հանդգնում փառքի տիրոջը սոսկ մարդ համարել»։ Դրա ձևով էլ ասում են ճշմարիտ հայրերը՝ Երուսաղեմ քաղաքում պաշտոնավարած եպիսկոպոս Հովհանը, թե՝ «Աստված կույսից ծնված և աստված խաչված», Գրիգոր Նազիանզացին, թե՝ «Աստված խաչվեց, և երկիրը շարժվեց», և երկին մի ուրիշ տեղ էլ, թե՝ «Ով կույսին

* Յովհ., Գ, 16։
** Ա Կորնթ., Բ, 8։

աստվածածին չի ընդունում, հետու է աստծուց. ով խաչվածին չի երկրպագում, աստվածասպանների շարքին կդասվի», որովհետև ով չի ասում «աստված խաչված», չի էլ ընդունում աստծուն կույսից ծնված, իսկ կույսին՝ աստվածածին, ինչպես Նեստորն [էր վարվում], քանի որ Հիսուս Քրիստոսը ուրիշ մեկը չէ, բանն աստված՝ ուրիշ, այլ՝ նույն և մեկ աստված՝ ծնված կույսից, իր աստվածությամբ նույն անչարչարելին, նույն անմահն ու նույն մեռածն իր մարմնով, ինչպես Աղեքսանդրիայի եպիսկոպոս Աթանասն է ասում, «Դրա համար են մոլորվում նրանք, որոնք ասում են, թե ուրիշ մեկն է չարչարվածը, և ուրիշ ոք՝ չչարչարվածը. բայց ոչ այլ ոք էր, քան բանը, որ չարչարվեց ու մահ ընդունեց. բայց նույն ինքը անչարչարելի և անմահ բանը, լինելով մարդկային մարմին, հավատալով ամեն ինչ լրացրեց»։ Սքանչելագործ Գրիգոր Նազիանզացին էլ է ասում. «Նա, որ ասում է, թե ուրիշ է ախտակրյալը, և ուրիշ՝ ոչ ախտակրյալը, և չի ընդունում նույն անախտակիր բանն աստծուն մարմնով ախտակրելի, ինչպես որ գրված է, կնզովվի»։

Եթե ըստ նրանց խոսքերի՝ ուրիշ մեկն է Հիսուս Քրիստոսը, և ուրիշ մեկը՝ բանն աստված, և նրանցից մեկը ախտ ու չարչարանք է կրում՝ ծնված կույսից, իսկ մյուսը, այսինքն՝ բանն աստված, հրաշքներով փայլում էր, ապա այդպիսով նրանք հեռացնում են նրան աստվածային խորհրդից, ինչպես որ կա Լևոնի տոմարի մեջ, որը Քաղկեդոնի ժողովը ուղղափառ է համարում և իր շինությունը կառուցում է խարխուլ ու երերուն հիմքի վրա։ Եթե այդպես է, [ապա] մեզ համար ինչպե՞ս աղքատացավ մեծատունը. մեզ կասե՞ն նրանք, որոնք բաժանում են մարդը բանն աստծուց, միացածը անջատում բնությունների տարբերությամբ, Քրիստոսին համարում են երկու էություն՝ մեկը միայն մարդով ավելացնելով։ «Որովհետև մեծատունը ձեզ համար աղքատացավ,— ասում է առաքյալը,— որ դուք նրա աղքատությամբ մեծանաք»*։ Այսինքն՝ անմարմին բանն աստված, հավիտենությունից առաջ ծնվելով Հորից՝ էակից ու բնակից Հորն ու սուրբ Հոգուն, վերջին ժամանակներում իջավ ու մարմնացավ սուրբ Մարիամ կույսից, ըստ Հովհաննես ավետարա-

* Ա կորնթ., Ը, 9։

նիչի, թե՝ «Բանը մարմին եղավ ու բնակվեց մեր մեջ»*։ Մարդ դարձավ ճշմարտապես, ամեն ինչով մեր նմանությամբ՝ առանց մեղքերի. խանձարուրի մեջ փաթաթվելով՝ դրվեց մսուրում, որ քերովբեների վրա շրջում էր, մոր գրկում գուրգուրվեց, կաթով սնուցվեց, հասակ առավ, ճանապարհորդեց՝ կյանքի բոլոր կրքերով հանդերձ. հրեաներից մատնվեց, չարչարվեց, խաչվեց, թաղվեց, հարություն առավ անապականությամբ, որովհետև նրա հոգին չթողնվեց դժոխքում, իսկ նրա մարմինն էլ ապականություն չտեսավ, ինչպես Պետրոս առաքյալն է ասում, որը և Աթանաս Աղեքսանդրացին գրում է հավատի խոսքում. «Մարմին առավ այս ապականացուներից, որպեսզի զգեստավորի անապականությամբ, մարմին առավ այս մահկանացուներից, որպեսզի այս մահկանացուներին օժտի անմահությամբ, ինչպես և այժմ իր մահվան ու հարության միջոցով մեզ շնորհեց կյանք ու անապականություն»։

Իսկ եթե ըստ նրանց խոսքերի լիներ, թե աստված իրեն՝ էին, չազատեց, ծառայի կերպարանք չառավ, կերպարանքով իբրև մարդ հանդես չեկավ, ինչպե՞ս պիտի կատարեր տնօրինության բովանդակ խորհուրդը։ Չէ՞ որ աստվածային բնությունն առանձին չի առաջացել կնոջից ու մտել օրենքի տակ, աղքատացել մեծությունից ու օծում ընդունել, ինչպես և բարձրյալը մարդկային բնությամբ առանձին որդի չի ունեցել՝ հավիտենական աթոռ գրաված, այլ [կա] երկու բնությունների անճառ միավորություն, քանի որ երկուսից հետո մեկն են ընդունում ճշմարիտ քրիստոնյաները, ինչպես որ Պրոկղոսն է ասում, թե՝ «Նրա վրա աստվածաբար դրոշմված է միավորվածության պատուհասն»։ Եսիխիոսն էլ է ասում Ապոդինարին, երբ վերջինս վիճաբանությամբ ընդդիմանում է, թե՝ «երկու կատարյալները՝ աստված և մարդը, մի կատարելություն չեն լինի»։ Նա պատասխանում է. «Մարդկանց վերաբերյալ այդպես անկարելի է, իսկ աստծու նկատմամբ կարելի է (Բարսեղի լուծումով), ինչպես կույսի ծննդաբերելը, ինչպես ծովի վրա գնալը, փակ դռներով խառացած և մսից ու ոսկրերից կազմված մարմնի մտնելը, դրանց նման էլ սա

* Յովհ., Ա, 14։

է կարելի աստծուն»։ Եվ այսպես Աստվածաշունչը ցույց է տալիս մեր նույն տեր աստծու աստվածավայելուչ մարդկային կողմերը, որոնք հայրը ժառանգ դարձրեց կամեցողության պատճառով և անդրանիկին բերեց աշխարհ՝ բազմաթիվ եղբայրների մեջ։ Նա ցույց է տրվում հավիտյան ստեղծող, որը հոր փառքի արտափայլումն ու էության նկարագիրն է։ Հենց նույնն էլ ծառայի կերպարանքով է երևացել, մարդկանց նմանությամբ եղել։ Հիսուս Քրիստոսը հափշտակության չհամարեց աստծուն հավասար լինելը՝ վերջին ժամանակներում կույսից ծնվելով, իսկ սկզբում հոր հետ աշխարհի ստեղծիչ լինելով, ինչպես Պողոսն էլ ասում է. «Բայց մեկ է աստված հայրը, որից ամեն ինչ է, մենք էլ նրանով ենք, մեկ է տեր Հիսուս Քրիստոսը, որով՝ ամեն ինչն է, մենք էլ՝ նրանով»*։

Նա, աստվածային հատկանիշներով դիմանալով, քաղցում էր, բայց ինքը կերակրում էր բազմահազար ժողովուրդներին։ Նա ծարաված էր, բայց հենց ինքն էլ՝ ծարավիների ծարավը հագեցնող։ Նա մարդկային բաներ էր խոսում, նույն ինքն էլ աստվածավայել բաներ ասում աշակերտներին. «Իմ հայրը ինձանից մեծ է»**։ Նույն ինքը հափշտակության չհամարեց աստծուն հավասար լինել։ Նա խաչվելու ժամանակ աղաչում է հայր աստծուն. «Եթե հնար կա, թող ինձանից անցնի այս բաժակը»***։ Նույն ինքը կամովին այն ժամին գալով ասում է. «Ես իմ անձով գնում եմ իմ անձը և իրավունք ունեմ կրկին ստանալու այն»****։ Պիղատոսի առաջ դատված, հրեշտակներից սպասավորված, փայտի վրա մեխված և հոր աջ կողմում երկնքում բազմած, գերեզմանում թաղված, դժոխքն ավերած, մեռելներից հարություն առած և դեպի վեր՝ երկինք, գնացած, որտեղ առաջինն էր՝ ըստ նույն տիրոջ խոսքի, որի մասին Պողոսն էլ ասում է. «Նա, որ իջավ, նույնն է, և նա, որ ելավ բոլորից վեր, գալիս է դատելու կենդանիներին ու մեռածներին»*****։

* Ա. Կորնք., Ը, 6։ Տարբեր է։

** Հովհ. ԺԴ, 28։

*** Հմմտ. Ղուկ., ԻՒ, 42։

**** Յովհ., Ժ, 18։

***** Հմմտ. Առ Եփես., Դ, 9—10, Գործ., Առաք., Ժ, 42։ Փոփոխված ու միացված են։

Սա բոլորի աստվածն է, հավիտենական թագավորը՝ հավիտյան երկրպագված Հոր և Հոգու հետ։ Այդ պատճառով և առաջներում եղած ճշմարիտ վարդապետներ Դիոնիսիոսը, Պիղատոսը և Հուլիոսը՝ Հռոմի եպիսկոպոսները, Դիոնիսիոսը, Պետրոս նահատակը, Թեոփիլիոսը և ետիններից՝ Աթանասը, Կյուրեղը, Գրիգորյանները և ուրիշ շատերը երկու բնությունները մեկ աստված են ընդունել։ Բայց Քաղկեդոնի ժողովում երկու բնությունները անջատումով ներկայացրին՝ այսպես պատճառաբանելով. «Գոյություն ունեցող երկու բնություններն էլ ունեն իրենց առանձնահատկությունները»։ Դա չընդունեցին ձեր գիտուններից ոմանք՝ աղեքսանդրացիների առաջնորդները, այլև հայտարարությամբ շատ ընդդիմություն ցույց տվին։ Եվ հայոց շատ ուսումնականներ, որ Աղեքսանդրիայում և այլ քաղաքներում երկար ժամանակ ուսանում էին, այն չընդունեցին ու հաղորդությամբ չմիավորվեցին ձեր աշխարհին։ Իսկ այժմ ավելի շատ են այսպես ասում, թե անխտիր հաղորդություն են առնում, որը սաստիկ չարություն է, որովհետև տերն ասում է. «Ես եմ երկնքից իջած հացը, ես եմ կյանքի հացը, և իմ մարմինը ճշմարիտ կերակուր է, արյունս՝ ճշմարիտ խմելիք։ Ով ուտի իմ մարմինը և խմի իմ արյունը, նա իմ մեջ կբնակվի, և ես՝ նրա մեջ։ Եվ ով ուտի այս հացը, կապրի հավիտյան»*։ Պողոսն էլ շատ երկյուղով զգուշացնում է. «Թող քննի մարդը իր անձը,— ասում է,— և հետո այն հացից ուտի ու այն բաժակից խմի, որովհետև ով անարժան կերպով է ուտում ու խմում, իբրև իր անձի դատապարտում է ուտում ու խմում, քանի որ չի տարբերում Քրիստոսի մարմինը»**։

Եվ առավել սոսկալի է, եթե անարժանությամբ հաղորդվածները պարտական լինեն տիրոջ մարմնին, որը հաստատապես ճշտեց ընդհանրական կանոնը՝ ժամանակների չափ սահմանելով, յուրաքանչյուրին առանձին իր հանցանքների համար, որոնց մեջ խիստ ամուր զղջումով մեղքերից մաքրվածները արժանանում են հաղորդության։ Իսկ այժմ նրանք հանդես են գալիս տիրոջ հրամանը մի կողմ նետած և, ուղ-

* Հովհ., Զ, 48—52, 56—57։ Վերակազմված ու համադրված են։

** Ա. Կորնք., ԺԱ, 28, 29։

ղագուն կանոնները անտեսելով՝ ստեպ-ստեպ մեղանչում են ու մարմնի լվացումներով անարժանները անմիջապես հաղորդության են գալիս, որոնց տերը մերժում է՝ Ավետարանում ասելով փարիսեցիներին. «Բաժակի և ափսեի արտաքինը լվանում եք, բայց ձեր ներքինը լի է պղծությամբ»*, Եվ Պողոսը ստեպ-ստեպ հրեաների մկրտությունը մարմնի արդարության է կոչում, որ ուղղությունների ժամանակից առաջ էին։ Այն պաշտոնյաները ուրիշ հայհոյական խոսքերով ևս շատ տկար դատողություններ են անում՝ [մեղադրելով, որ ընդունում ենք], թե՝ «Տիրոջ մարմինն ու արյունը մեղքերի քավության համար են»։ Դեղեցիկ է, եթե այդպես է, և ոչ թե անարժանության։ Եվ առաքյալն ու համապատասխան կանոնները սուտ են դուրս բերվում, որ ասում են, թե անարժան են մեղանչածներն ու չղջացածները և համարձակ վայելում են թե՛ տիրոջ մարմինն ու արյունը և թե՛ դևերի սեղանից ճաշակում։ Իսկ ոչ ոք թող չհարբվի, որ տիրոջ մարմինն ու արյունը իսկապես մեղքերի քավության համար են, բայց չղջացածների ու մեղքերից հեռացածների և ոչ թե մեղքերի մեջ միշտ թաթախվածների համար, որովհետև տերն սպառնում է այնպիսիներին, թե վրիժառու կլինի սաստիկ տանջանքներով՝ մեծ դատաստանի օրը։ Ջենք պարծենում, թե մենք սուրբ ենք, բայց առանց խորության հաղորդության չենք դիմում, այլ վախենալով մեծ երկյուղով առանձնանում ենք։ Իսկ Եվտիքեսին և իր նմաններին՝ առաջին ու վերջին հերձվածողներին, նզովել ու նզովում ենք, այն ժողովն էլ, որ [աստվածային] բնությունները բաժանված է ներկայացնում և թույլ չի տալիս ասել «աստված խաչվածծ», ինչպես բյուզանդացիներից շատերը, որոնցից ոմանք հենց մեր կողմից շեղվեցին, չենք կարող ընդունել, ոչ էլ հաղորդվել նրանց հետ, որոնք նսեմացնում են Քրիստոսի մարմինն ու արյունը, քանի որ այդպիսի սովորություն չունենք»։

* Համմ. Մատթ., ԻԳ, 25, 28։

Ը

ՍՅՈՒՆԻՔԻ ԱՅՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ՀԱՋՈՐԴԵՑԻՆ ՏԵՐ-ՄԱՔՈՒՍԱՂԱ ՔԵՐԹՈՂԻՆ[348]

Երանելի Տեր-Մաթուղասաղայից հետո Սյունյաց [մետրոպոլիտության] աթոռն ութ տարի մնաց թափուր՝ ավազակային հարձակումների և խռովությունների պատճառով՝ երբեմն Պարսկաստանի, երբեմն Բյուզանդիայի, երբեմն՝ հոների կողմից։ Ապա ընտրում են մի փառավոր մարդու՝ շատ լավ ու եկեղեցական գործի մեջ պիտանի, և դարձնում Սյունիքի եպիսկոպոս։ Նրա անունն Աբրահամ[349] էր կոչվում։ Սա, երեսուն տարի մնալով աթոռին, վախճանվում է։ Նրան հաջորդում է Տեր-Հովսեփը[350]՝ նրա պես բարի և լավ մարդ, [տիրելով] տասնինը տարի։ Այնուհետև՝ Տեր-Հովհանը[351]՝ քսաներկու տարի, ապա՝ Տեր-Մովսեսը[352]՝ յոթ տարի։ Սա ամենայն զգուշությամբ դաստիարակում էր սուրբ Ստեփանոսին՝ իմաստասերին ու նահատակին։ Հետո [աթոռակալում են] Անանիան[353]՝ յոթ տարի, այնուհետև՝ Հովհանը[354]՝ ինը տարի։ Ապա Թորգոմյան տան ջահ դարձած արեգակը՝ բոլորից սիրելին, երանելի ու մեծ նահատակը, պանծալի զավակը, մեր Սյունիքի սուրբ ու փառահեղ աթոռի անդրանիկ որդի Ստեփանոսը[355]՝ առաջինից ոչ տարբեր, որ բոլոր նահատակների գլխավորն է։ Նրա գործերի պատկերը և բարեմասնությունների հանգամանքները չեմ կարող զանց առնել, այլ համառոտությամբ պիտի զետեղեմ այս մատյանի մեջ[356]։

ԼԱ

ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑՈՒ[357] ՄԱՍԻՆ. ԿՅԱՆՔՆ ՈՒ ՎԱԽՃԱՆԸ ԵՎ ԱՅՆ, ԻՆՉ ՊԱՏՄՎՈՒՄ Է ՆՐԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սրտիս գործարանի բուռն բաղձանքը դրդում է միտքս՝ իմ այս շարադրանքի մեջ հոմերական քերթողությամբ ստեղծագործել, հորինել ելևէջուն գեղեցիկ տողեր, հյուսել ախորժալուր գովեստներ՝ բոլորի սիրելիի ներբողումը հոժարակամ

լսողների ականջներում թնդացնելու համար։ Նկատի ունեմ բոլոր էակներից անհամեմատելիին, իմաստունին և սերովբեներից սպասարկված աստծու մարդուն՝ Ստեփանոս իմաստասերին և անհաղթ հռետորին՝ Սյունյաց մետրոպոլիտին, որի փառահեղ առաքինությունը, սիրելի կյանքի ավարտը, նրա վախճանից հետո եղած սարսափելի պատուհասը այսպես իմացանք և ձեզ համար համառոտակի կշարադրենք։

Ստեփանոսը սյունն էր երկնքի և խարիսխը՝ հավատքիս, սուրբ եկեղեցու անխախտելի վեմն ու անվախ պաշտպանը, մարդն էր երկնային և հրեշտակը՝ երկրային, հավիտյան մեռածը և միշտ կենդանին, հրեշտակներին հիացնողը և քերովբեներին[358] զարմացնողը, որի գովությունների փունջը իմ տհաս ու թերավարժ միտքը խոսքերով չպիտի աղավաղի, այլ միայն զրույցներին պիտի ապավինի։ Սա Հայաստանի մեծ մայրաքաղաք Դվինի ավագ քահանայի որդի էր։ Դաստիարակվում և ուսմամբ զարգանում էր հայոց կաթողիկոսարանում։ Լրիվ հասունանալուց հետո այդ ջահը չէր կամենում թաքնվել մարմնավոր ծածկոցի տակ, այլ հրաժարվելով բազմամարդ քաղաքից, գնում է մեծահամբավ և հիասքանչ հանդիսարանը՝ հրեշտակերամ սուրբ կրոնատունը՝ Մաքենոցաց աստվածաբնակ առաքինարանը[359], աստվածակիր և սերովբեատիպ հայրերի հայր Սողոմոնի մոտ, որը մեծ ուխտի կառավարիչն[360] էր և այն ժամանակ փայլում էր մեծ ճգնություններով ու սաստիկ խստակեցությամբ։ Այնտեղ Ստեփանոսը կազմեց տերունական տոների լուսաբանիչը և նահատակների հիշատակարանը՝ «Տոնական»-ը, հայոց հարյուր հիսուն թվականին[361]։ Այն ժամանակ նա անձնատուր եղավ մեծամեծ տքնությունների ու մշտաջան առաքինական գործերի անասելի զբաղմունքի։ Եվ որոշ տարիներ անց, երբ ներքուստ գործնականապես բավարարվեց, այլևս պատշաճ չհամարեց անգիտության խավարի տակ մնալ, այլ ձգտում էր հասնել աստվածային իմաստնական գիտության և կրթության, քանի որ նպատակահարմար չէր երկրագործության ակոսը միակողմանի լծով քաշել, այլ լծվել երկուսին, այսինքն՝ տեսականին և գործնականին, որպեսզի ամբողջը պատշաճավոր լիներ։ Դրա համար դուրս գալով այն մենաստանից՝ շտապով դիմում է դեպի գիտությունների աղբյուրը՝

Սյունյաց վարդապետարանը, որը Հայաստանի բոլոր գիտությունների գլխավոր տեղն էր, որտեղ գտնվող դպրոցները ծաղկած էին։ Չէ՞ որ ինչպես աթենական դպրոցներն էին հռոմեականների ու հունականների մեջ փարթամացած և գիտությունների մայր հռչակված իսպանացիների աշխարհում՝ լատինական ու հունական դպրությամբ, այսպես էլ սրանք՝ Թորգոմյան տանը՝ մեր Հայոց աշխարհում։

Այս Ստեփանոսը, գնալով Սյունյաց երանելի եպիսկոպոս Մովսեսի մոտ, աշակերտում է նրան. ըստ ունեցած շնորհի՝ արագորեն հմտանում է աստվածային գիտություններին, մեծ ճոխությամբ զարգանում ու հասնում տեսական շնորհի գագաթին՝ լցվելով անհամեմատելի հանճարով։ Եպիսկոպոսից իրավունք ստացավ՝ մնաց րաբունարանի ամբիոնում և վարժարանում սովորողներին մեկնաբանում էր Աստվածաշունչը։ Ապա երբ մոտենում է երանելի Մովսեսի վախճանը, նա սրան է հանձնարարում աթոռի հոգաբարձությունը։ Եվ նրանից հետո Ստեփանոսը գալիս է Դվին, կաթողիկոսի մոտ ու Սյունիքի եպիսկոպոսության աթոռի համար ձեռնադրել է տալիս Անանիային, իսկ ինքը մնում է կաթողիկոսարանում ու երբեք չի դադարում Հին ու Նոր կտակարանների գրքերը մեկնելուց։ Ապա նա դավանության վերաբերյալ հակաճառություն ունեցավ մի երկաբնակ[362] իշխանի հետ. դա Հայաստանի ասպետ[363] Սմբատ Բագրատունին էր։ Իսկ քանի որ իշխանը հմուտ չէր փիլիսոփայական արտաքին գիտությանը, նրա մտքերին հավանություն չտվեց, այլ անարգեց նրան՝ տգետ անվանելով, և կամենում էր հալածել։ Այնուհետև Ստեփանոսը, քաղաքից գաղտնի դուրս գալով, ծպտվելով, փախավ-գնաց Կոստանդնուպոլիս կայսերական քաղաքը և բնակվեց մի մենարանում, ճշմարտադավան մի միայնակյացի մոտ, որը հմուտ էր արտաքին գիտություններին[364]։ Եվ այնտեղ սովորելով հույն և հռոմեացի ժողովուրդների գիրը՝ գիշեր ու ցերեկ վարժվում էր նրանց գրականության և գիտությունների մեջ՝ ըստ փիլիսոփայական ոճի։ Ասպետ Սմբատը, այդ մասին լսելով, տեղեկացնում է Լևոն կայսերը, թե մի հերետիկոս մարդ, որ անարգում է քո թագավորությունը և հայհոյում քո սուրբ հավատը, մեզանից հալածվե-

լով բնակվում է այդտեղ, այսինչ անունով մենակյացի մոտ։ Այդ մարդու անունը Ստեփանոս է։

Կայսրն այդ լսելով սաստիկ զայրացավ և հրամայեց նրան բերել պալատ, որը և կատարեցին։ Իսկ մենակյացը նրան սովորեցրել էր ասել իր մասին, թե հասարակ ծագումով ու օտար մարդ է և մուրալու համար է այստեղ եկել։ Ուստի երբ կայսրը հարցնում է, նա նույնն է պատասխանում։ Դրանից կայսեր բարկությունն իջնում է, և նա հրամայում է [Ստեփանոսին] բաց թողնել։ Դրանից հետո նա, համարձակությամբ բնակվելով քաղաքում, գնում էր սուրբ Սոֆիայի[365] տաճարը և գրադարանից պետքական գրքեր էր խնդրում ու շարունակ կարդում էր։ Գնաց նաև Աթենք ու այնտեղ հմտացավ բոլոր գիտություններին, ապա վերադարձավ նույն քաղաքը։ Ծանոթանալով Դավիթ անունով պալատական մի մեծ պաշտոնյայի[366]՝ թագավորական սեղանապետի հետ՝ նրա օժանդակությամբ թարգմանում է սուրբ Դիոնիսիոսի[367] գեղեցիկ գիրքը և ինքն էլ կատարում է շատ դժվարին ու խրթին խոսքերի մեկնաբանություն՝ բառ առ բառ. թարգմանում է նաև Գրիգոր Նյուսացու[368] քաղցրաբան գիրքը՝ [մարդու] բնության և կազմության մասին։ Ծանոթանում է նաև Գերմանոս պատրիարքի հետ և տերունական տոներին հաճախում էր եկեղեցի, կանգնում պատարագի ժամին, որտեղ էլ մի օր հարկադրեցին հաղորդվել օրենքով, բայց չհամաձայնեց՝ պատճառաբանելով, որ առանց իր պատրիարքի հրամանի իրավունք չունի։ Պատրիարքը դրանից դժկամելով նրան շատ հարց ու փորձ արեց դավանության վերաբերյալ. զգալով նրա անհաղթահարելի իմաստությունը՝ հիացավ և հավատքի մասին Հայաստանին ուղղված թուղթ գրեց, որի սկիզբն է՝ «Քրիստոսն է մեր խաղաղությունը»։ Այն կնքելով իր մատանիով՝ հանձնեց Ստեփանոսին՝ տանելու Հայաստան։ Նրա գիտելիքների համբավը հասավ կայսեր ականջը, և կայսրը կանչեց նրան ու հարցրեց դավանանքի մասին, իսկ նա համարձակությամբ ասաց. «Ո՛վ բարերար արքա, հրամայի՛ր բացել գրքերի պահարանները, որ ես այնտեղ գտնեմ այն գիրքը, որը ցույց է տալիս ճշմարիտ դավանանքը»։ Եվ թագավորն իսկույն հրամայեց բացել։ Ստեփանոսն այնտեղ գտավ սուրբ հայրերի ոսկետուփ մի մատյան՝ գրված ճըշ-

մարիտ դավանանքի մասին, և հանձնեց թագավորին, որը նա շատ հավանեց, ուրախացավ և ասաց. «Դուք՝ հայերդ, ա՛յս հավատքն ունեք», պատասխանեց՝ այո՛։ Կայսրն ասաց։ «Գնա՛ Հռոմ և այնտեղ զննի՛ր մեծ եկեղեցու պահարանները, եթե գտնես սրա նման ուրիշ երեք գիրք, ապա ամբողջ աշխարհն այդ դավանանքին կդարձնեմ»։ Ստեփանոսը խիստ ուրախացավ այս բանի վրա՝ համարելով աստվածային մի տեսություն։ Գնաց Հռոմ, այնտեղ գտավ ուրիշ երեք մատյան՝ բովանդակությամբ հար և նման առաջինին։ Դրանցից մեկը Կյուրեղի Պարապումներից ու Դանձերից էր, մյուսը՝ Աթանաս Աղեքսանդրացու, երրորդը՝ սուրբ Եպիփանոսի գըրվածքներից։ Վերցնելով աստվածային գանձերը՝ ծանոթացավ հոգով. քանի որ կայսեր պայմանը չէր իրագործվելու, այլևս [նրա մոտ] չվերադարձավ, այլ Հռոմից դուրս գալով նավով անցավ օվկիանոսատիպ աշխարհատարած ծովի լայնածիր գոգի անհուն տարածություններ՝ հասավ Դվին, տեսավ մեր երկիրը արաբներից ավերված ու քարուքանդ արված։ Հայոց իշխաններն էլ վերացված էին, որոնցից ութ հարյուր հոգու այրել էին Նախիջևանում. մնացել էին միայն մնացորդներ։ Հայոց կաթողիկոսը երանելի Հովհան Օձնեցին[369] էր, որը երկիրը մաքրել էր Եղրի[370] աղանդից, ինքն էլ վախճանվել էր։ Նրա տեղը նստել էր Դավիթը[371], նա՛, որը Արամոնքում հաստատեց կաթողիկոսական աթոռը։ Ստեփանոսը նրան մատուցեց գրքերն ու Գերմանոսի թուղթը։ Դրանից կաթողիկոսը խիստ ոգևորվեց ու լցվեց մեծ խնդությամբ և չափազանց շատ պատվեց ու փառաբանեց սուրբ Ստեփանոսին։ Հրամայեց նրան գրել իր բերած թղթի պատասխանը, որը և նա գրեց շատ զարմանալի խոսքերով. բառ առ բառ վերլուծեց թուղթը՝ պախարակելով նրա խակ ու տգետ բովանդակությունը։ Դա այս տեսքն ունի[372]՝ «Քրիստոսը խաղաղություն բերելով»։

Այն ժամանակ վախճանվել էր Սյունյաց Հովհան եպիսկոպոսը, իսկ Սյունիքի իշխան էր Բաբկենը, ինչպես և Քուրդը, որոնք եկան Դավիթ կաթողիկոսի մոտ՝ նրանից խնդրելու մեծ իմաստասեր երանելի Ստեփանոսին, որը ամենասուրբ հոգու ձեռքին հրեղեն սուր էր։ Եվ կաթողիկոսը նրան ձեռնադրում է [եպիսկոպոս և նշանակում] Սյունյաց մետրոպոլիտության աթոռում ու մեծ երախտիքի համար առավել չափով պատ-

վում է, դարձնում է եպիսկոպոսների գլխավոր, իսկ Սյունյաց աթոռը՝ բոլոր աթոռների գլուխ։ Ոմանք ասում են, թե Սյունյաց եպիսկոպոսությունը Հայաստանի եպիսկոպոսների յոթերորդ կարգում էր, այժմ երրորդ կարգում դասեցին։ Մի՛ հավատա, որովհետև Սյունիքի եպիսկոպոսությունից վեր էր միայն Աղվանքինը՝ արքեպիսկոպոսության պատճառով։ Իսկ Սյունիքինը մետրոպոլիտության պատճառով բարձր էր Հայաստանի բոլոր եպիսկոպոսություններից, որովհետև ուրիշ ոչ ոք չուներ մետրոպոլիտության պատիվը։ Որքան պատրիարքն է բարձր արքեպիսկոպոսից, արքեպիսկոպոսը՝ մետրոպոլիտից, այնքան էլ մետրոպոլիտը՝ եպիսկոպոսից, որովհետև նա է ձեռնադրում եպիսկոպոսին։

Եվ ահա Ստեփանոսը ստանալով մետրոպոլիտությունը գնում է իր վիճակը, աստվածային օրենքներով խրատում ու սովորեցնում էր. որպես սուր կտրում էր ախտահարվածությունները, որպես իմաստուն բժիշկ բուժում էր վիրավորներին, որպես ընտիր աղ համ էր տալիս անհամություններին, որպես արեգակ պայծառ լուսավորում էր խավարյալներին, տհասներին Քրիստոսի միջոցով կաթով սնում էր որպես ծնող, կատարյալներին կատարյալ կերակուր էր մատուցում որպես հավատարիմ տնտես։ Մեկնում է բազմաթիվ գրքեր՝ Առարածքը, Հոբը, Եզեկիելը[373] և ուրիշ շատերը։ Նրա նշանավոր գրվածքները ուրիշ մեկնիչների գործերի մեջ փայլում են պայծառ ջահի նման։ Գրեց նաև բազմաթիվ ճառեր. ութ եղանակները բաժանեց, կարգեց, շարեց Հարության օրհնություններ[374], երգեց և քաղցրալուր կցուրդներ[375]. հարմարեցրեց «Յինանց»-ի[376] տաղաչափությունը[377] յոթ եղանակներով՝ հույժ խորհրդավոր, ինչպես և պասերինը, որ երգվում են աղ ու հացի վրա. պարզաբանեց նաև գիշերային արարողության իմաստը։

Սա մի քույր ուներ, որը մանկությունից ընդունել էր կույսի վարքը, առանձնացել էր Գառնու ձորի[378] մի քարայրում և կյանքն անցկացնում էր անտանելի ճգնակեցությամբ. նրա անունը Սահակդուխտ էր։ Նա շատ հմուտ էր երաժշտության արվեստին, որը և սովորեցնում էր շատերին՝ վարագույրի տակ նստած, նաև ստեղծեց բազմաթիվ քաղցրեղանակ կցուրդներ ու մեղեդիներ, որոնցից մեկը [նվիրված] սուրբ Մարիա-

նին, որն իր անունով հորինեց։ Նա մեռավ ու այնտեղ էլ թաղված է գերեզմանում, որից շատ բժշկություններ են լինում։ Իսկ երանելի Ստեփանոսը եպիսկոպոսության պաշտոնում մնաց մեկ տարի, որը ոմանք ութ տարի են ասում։ Նա ամառը շրջում էր իր իշխանության ընդարձակ վիճակի տասներկու գավառներում և քարոզում ճշմարիտ գաղափարները։ Հոգևոր ծառայության անհրաժեշտությամբ եղավ նաև Եղեգյաց ձորի բարեբեր գավառում, Մոզ ավանում, որտեղ բնակվում էր մի անբարոյական կին՝ համակված հիմար ախտով։ Եպիսկոպոսը նրան մինչ այդ երեք անգամ զգուշացրել էր ըստ տիրոջ հրամանի, բայց նա չէր զղջացել։ Այդ պատճառով այս անգամ սուրբը սաստիկ զայրանում է և մեծ պատժի վճիռ կայացնում։ Սաստիկ շոգի պատճառով ինքը դուրս է գալիս գյուղից ու գնում Ավագ ակն կոչված քաղցրահամ աղբյուրի ակունքում զովանալու։ Կարգադրում է իր վրանը խփել, ինքն էլ հանգստանալու մահիճը գնում է մի ուռենու վրա։ Եվ առանձին ելնելով ու երկար ժամանակ աղոթելով՝ ննջում է այնտեղ։ Իսկ անպատկառ կինը, ցանկության կատաղի բոցից դրդված, հետը վերցնում է իր սիրեկանին, գալիս է սպանելու սրբին, որ իրենք համարձակ գործեն։ Մոտենալով ծառին՝ սիրեկանին բարձրացնում է վեր, սուրը տալիս ձեռքը, որ սրբին սպանի։ Մարդը բարձրանալով տեսնում է, որ սուրբը քնած է, և շունչը բոցի նման վեր է ցոլանում ու ճախր առնելով կրկին իջնում է. մի հրեշտակ էլ, կանգնած նրա գլխավերևում, թևերով հով էր անում։ Այդ տեսնելով՝ մարդը կարկամում է, թուլանում. նրա մարմնի ամբողջ կազմվածքը ցնցվում է. նա մեծ սոսկումով դողում է։ Եվ այնքան է ուշքի գալիս, որ մի կերպ իջնում է ծառից ու պատմում կնոջը։ Կինը նրան կրկին հորդորում է, պոռնկական քաղցր-մեղցր խոսքերով դրդում և քաջալերում է ու նորից ուղարկում։ Եվ նա առաջինից ավելի հրաշափառ տեսարան է տեսնում ու դարձյալ սաստկապես թուլանում, անզգա մարմնով մեռելի նման ընկնում է ծառից։ Ապա կինը, մարդուն տեսնելով խիստ պատուհասի մեջ ընկած, զղջալու փոխարեն առավել ևս չարանում է և, սրված սատանայից, վերցնում մերկացած սուրը ու բարձրանում ծառը, սուրը խփելով սրբի փորին՝ անքիծ արյունը թափում է փայտե մահճի վրա, ինչպես իր տիրոջ

արյունը մահվան փայտեղեն սարքի վրա՝ աստվածային օրենքների նկատմամբ [տածված] սաստիկ նախանձի պատճառով։ [Սա հիշեցնում է] Հեղիասին ու Հովհաննեսին, որոնցից մեկը քառասուն օր փախստական եղավ Աքաաբի Հեզաբել կնոջից, իսկ մյուսը գլխատվեց Հերովդիադի դստեր կողմից[379]։ Ապա առավոտյան սպասավորներն իմանալով՝ շատ լաց ու կոծով վերցնում են սրբի մարմինը, տանում Սիոն կոչված լեռան[380] վրայի մենաստանը, որն այն ժամանակ ճգնավոր մարդկանցով ծաղկում էր Եգիպտոսի Սինայից[381] ու Սկյութայից ավելի։ Արկազան գյուղի բնակիչները, դեպքի մասին իմանալով, իրենց տանուտերի հետ ընդառաջ են գալիս և սպասավորներին համոզում [հանգուցյալին] ամփոփել այն սենյակում, որը կառուցվել էր քաջ զորավար սուրբ Քրիստափորի անունով։ Եվ տանում ու դնում են այն սենյակում։ Իսկ աստծու երանյալ Նու ճգնավորը, որը շատ տարիներ բնակվում էր Սիոն սուրբ լեռան վրա և ամբողջ վարքով հրեշտակացել էր, երազում տեսնում է, որ այն առավոտյան երկինքը բացվել էր ու հրեշտակների բազմությունը խմբերով դուրս էր գալիս սուրբ Ստեփանոսի առաջ և փարվելով նրա մաքուր ու արյունաներկ ոգուն՝ բարձրաձայն գոչում էին. «Բարի և հավատարիմ ծառա, ե՛կ, մտի՛ր քո տիրոջ ուրախության մեջ»*։ Եվ այսպես մեծամեծ գովեստներով տարան, հասցրին աստծու ահեղ աթոռին, որի վրա մարմնական տեսքով նստում էր Քրիստոսը՝ աստծու որդին։

Ապա սուրբը երկրպագելով մոտեցավ աստծուն ու նրան ցույց տվեց սպիտակ նափորտով[382] փաթաթված արյամբ լի իր գոգը և ասաց. «Քոնն են վրեժխնդրությունը և արդարատուությունը»։ Եվ առաքյալներն ու հայրապետները նրան այնպես համբուրելով տարան և դրեցին իրենց կայանը՝ մինչև հատուցման օրը։ Սուրբ Նուն, այդ [երազը] տեսնելով ու հասկանալով, որ վնաս [է լինելու], հավաքեց մենակյացների բազմությունը և լեռնից դիմեց սրբի մոտ ու մեծ ողբով և լաց ու կոծի աղաղակներով պատմեց երազի և գավառի նկատմամբ աստծու բարկության գալու մասին։ Նա խնդրեց զգույշ լինել և աղոթքներով հնարավոր դարձնել աստծու հաշտությունը։ Այնուհետև հանկարծակի վրա հասավ տիրոջ պատուհասը։ Թանձր խավարը քառասուն օր պատեց ամբողջ գավառը, սաստիկ երկրաշարժ ու դղրդյուն եղավ։ Ահեղ տատանումներով ցնցվում էր գետինը՝ խորքերից մինչև մակերեսը, ու այստեղ ծովի ալիքների նման փլչում էր։ Լեռները տապալվում էին, քարաժայռերը՝ հիմքից խախտվում, տներն ու ապարանքները դառնում էին բնակիչների գերեզմանները։ Աղբյուրները խափանվում էին, գետերը՝ կորչում։ Բոլոր տեղերը սասանմամբ երերում էին։ Անդունդներից և օդի միջից լսվում էին մարդկային լեզվի ձայներ. «Վա՛յ ձոր, վա՛յ ձոր»։ Տասը հազար մարդ ողջ-ողջ թաղվեցին գետնի տակ։ [Մարդիկ] այդ թվի մեջ հաշվել էին՝ ում ճանաչում էին, իսկ անծանոթների հաշիվը ոչ ոք չգիտեր։ Կատարվածի պատճառով գավառն էլ կոչվեց Վայոց ձոր[383]։

Իսկ պատուհասի քառասուն օրից հետո վերևից դադարեց աստծու բարկությունը, և գավառի մնացած բնակիչները հավաքվելով՝ հրավիրեցին կաթողիկոսին ու վանականների ժողով գումարեցին. շատ օրեր եկեղեցական գիշերային արարողություն կատարեցին և սուրբ Ստեփանոսի աճյունը փոխադրեցին միաբանաբնակ Թանահատից վանքը[384], որի միաբաններն անդադար սպասավորություն էին կատարում՝ փափուկ կերակուրներից զերծ. այդ պատճառով էլ կոչվեցին Թանահատներ[385]։ [Գերեզմանի] վրա մի փոքրիկ մատուռ շինեցին, որտեղ հետագայում՝ յոթ հարյուր քսանութ թվականին[386] տեղի բնակիչները կառուցեցին գմբեթահարկ եկեղեցի՝ գեղեցիկ կառուցվածքով, և սրբի տապանը դրեցին նրա հիմքի մեջ։

Սուրբ Ստեփանոսի վախճանը հայոց թվականության հարյուր ութսունչորսի[387] հրոտից ամսի տասնհինգին, այսինքն՝ հուլիսի 21-ին էր, սրբուհի Մարգարիտի և դիվահար Սիմեոնի հիշատակի օրը։ Իսկ տիրասպան կինը ավելի ուշ սգավոր դարձավ, մերկանում և քարեր վերցրած ծեծում էր կուրծքը։ Այնքան խփեց, որ արյան առվակ էր հոսում։ Մեծ ողբով, դառն աղաղակով ճչում էր ու դատապարտում իր չարագործությունները։ Եվ գալով վանքի դիմաց, դեպի արևմուտք՝ ձորակի այն կողմում հողը փորելով՝ մինչև ստինքները թաղվեց. ամառ ու ձմեռ տոթակեզ և ցրտահար լինելով՝ վայում ու ողբ

* Մատթ., Իե, 21, 23։

բում էր գիշեր-ցերեկ, խոստովանում իր մեղքերը։ Այդպիսով շարժում է հայրապետի գութը, որը տիրոջից ներում է խնդրում նրա համար։ Մի օր էլ պատարագի ժամին սրբի տապանից լսվում է ահեղ գոչյուն. «Թող ներվեն քո մեղքերը, ո՛վ կին»։ Եվ դա լսելով բոլորը մեծ մարդասիրության ու անհիշաչար բարերարության համար փառք էին տալիս և գոհունակություն հայտնում աստծուն։ Իսկ կինը թեև ներում ստացավ, բայց տեղից դուրս չեկավ, այլ, մնալով այնտեղ, վախճանվեց և թաղվեց իր ապաշխարության փոսի մեջ. ու վանքի դիմաց այդպես էլ մնում է։ Ուստի և այնպիսի մեծ մարդասիրության համար բոլոր էակներից անհատնում ու անվերջ փա՞ռք և գոհունակություն աստծուն՝ այժմ և հավիտենապես. ամե՛ն։

ԼՐ

ՍՈՒՐԲ ՄԵԹՈԴԻՈՍԻ[388] ՊԱՏԱՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՎ ՆԱՀԱՏԱԿԻ ԵՐԱՋԸ՝ ԱՆՑՅԱԼԻ, ՆԵՐԿԱՅԻ ԵՎ ԳԱԼԻՔԻ ՄԱՍԻՆ՝ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՔԱՂՎԱԾՔՆԵՐՈՎ ՀԱՆԴԵՐՁ, ՈՐ ԹԱՐԳՄԱՆԵԼ Է ՍՅՈՒՆՅԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՈՍԸ

Վերջին դարում արմատախիլ կլինի պարսից թագավորությունը։ Իսմայելի[389] զորքը կելնի Եթրիբի անապատից[390] և կտիրի Գաբաւոնին[391]։ Այն ժամանակ կկատարվի եզեկիել մարգարեի ասածը. «Կանչեց անապատի գազանները ու երկընքի թռչունները և ասաց նրանց. «Հավաքվեցե՛ք, եկե՛ք, որովհետև մեծ սպանդ է լինելու ձեզ համար։ Կերե՛ք, կերե՛ք հզորների մարմինները և խմեցե՛ք հսկաների արյունը»*։ Իսմայելի որդիների կողմից հունական զորավարները կընկնեն Գաբեթի այս Գաբաւոնում, ինչպես որ նրանք սպանեցին երբայեցի ու պարսիկ զորավարներին։ Քանի որ [նրանց] զայրույթով ու բարկությամբ կուղարկի երկիր մարդկանց, անասունների, անտառի գազանների, տնկիների և առհասարակ բոլոր պտղաբեր տեսակների վրա։ Եվ նրանց գալուստն անողորմ պատիժ կլինի։ Նրանց առաջից կընթանան չորս տեսակի աղետներ՝ կործանում, ասպատակություն, ապականություն ու ավերում։

* Համմտ.Եզեկ., ԼԹ, 17—18, մեծ տարբերություններով։

Մովսեսն[392] իսրայելացիներին ասաց. «Աստված ձեզ Ավետյաց երկիրը[393] ժառանգելու է տանում ոչ թե նրա համար, որ ձեզ սիրում է, այլ նրա բնակիչների անօրինության պատճառով»։ Այսպես էլ տեր աստված Իսմայելի որդիներին ոչ թե սիրելուց է զորություն տալիս՝ ավերելու քրիստոնյաների երկրները, այլ եղող անօրինության պատճառով։ Եվ նրանց ուրիշ այսպիսի վտանգ ոչ եղել է, ոչ էլ երբևէ կլինի։ Չէ՞ որ տղամարդիկ հագնում էին անառակների հագուստները և իրենց զարդարում պոռնիկ կանանց նման։ Այսպես էլ կանայք կանգնում էին քաղաքների փողոցներում ու հրապարակներում դեմ-հանդիման և բնական պահանջները փոխարինում անբնականներով, ինչպես աստվածային առաքյալն է ասում։ Մի կնոջ մոտ միաժամանակ մտնում էին հայր ու որդի և բոլոր եղբայրներն ու ազգականները առհասարակ։ Այդ պատճառով էլ իմաստուն Պողոսը, նախքան այդ ժամանակները աղաղակ բարձրացնելով, ասել էր. «Դրա համար նրանց մատնեց անարգ ախտերի՝ գործելու անվայել բաներ, որովհետև նրանց էգերը փոխանակեցին բնական պահանջները։ Նույնպես և արուները, թողնելով իգականի բնական պետքերը, ցանկությամբ բորբոքվեցին միմյանց նկատմամբ. արուներն արուների հետ էին խառնակվում։ Պետք էր, որ իրենց մոլորության [հատուցումը] իրենց վրա ընդունեին»*։

Այսպիսով, սրա համար աստված նրանց բարբարոսների ձեռքը մատնեց, որոնք պիտի ընկնեն մեղքերի ու գարշանքի մեջ, նրանց կանայք էլ պիտի պղծվեն պիղծերից։ Եվ նրանց այդ վիճակի մեջ պիտի գցեն Իսմայելի որդիները։ Պարսիկները պիտի ենթարկվեն բնաջնջման։ Սրով պիտի ընկնի Կապադովկիան[394], պիտի քարուքանդ լինի ու հիմնովին գերեվարվի։ Սիցիլիան[395] պիտի անապատ դառնա, և նրա բնակիչները պիտի գերեվարվեն ու սպանվեն։ Հուդան[396] պիտի ավերվի ու գերվի։ Բյուզանդացիները փախուստի պիտի դիմեն, կղզիները պիտի կործանվեն, իսկ բնակիչները՝ սրով ու գերությամբ կորչեն։ Հայերը պիտի փախչեն ու գերության տարվեն։ Եգիպտոսը, Արևելքը և Ասորիքը լծի ու նեղության

* Համմտ.Պող., Ա՛ Հռովմ., Ա, 26—27։ Կա հատվածների տեղափոխություն, ինչպես և բնագրային որոշ տարբերություններ։

տակ պիտի ընկնեն. նրանց անխնայաբար պիտի ծառայեցնեն. նրանց անձերից հարկ պիտի պահանջեն կարողությունից ավելի. տանջանքների ու նեղության մեջ կգտնվեն՝ ավելի, քան գերության մեջ եղողները։ Եվ Ավետյաց երկիրը երկընքի չորս հողմերի միջոցով պիտի լցվի մարդկանցով՝ մորեխի բազմության նման։ Ապականություն և սով պիտի լինի այնտեղ։ Նրանց սատակիչների սրտերը պիտի ոգևորվեն և նրանք ամբարտավանությամբ արժանավորներից պիտի վեր դասվեն մինչև իրենց համար սահմանված ժամանակը։ Նրանք պիտի տիրեն մինչև հյուսիսի վերջին սահմանները, մինչև արևմուտք. նրանց լծի տակ պիտի լինեն բոլորը՝ մարդ, անասուն, թռչուն, ծովի ջրերը՝ հնազանդվելով նրանց։ Բնակիչներից դատարկված անապատները գերության մեջ եղողներից առավել չափով պիտի գտնվեն նեղ վիճակում։ Պիտի սեփականեն լեռները, ծովի ձկները, անտառի փայտը և երկրի հողը։ Ե՛վ անպտուղ քարերը, և՛ երկրագործների քրտնաթոր աշխատանքի վաստակը, և՛ բոլոր շտեմարանները նրանցը պիտի լինեն։ Նրանք բարկացած սրտով [հարկ] պիտի պահանջեն մեռածներից՝ կենդանիներին հավասար, որբերին ու այրիներին չպիտի ողորմեն. տնանկին և աղքատին պիտի անարգեն, բոլոր ծերերին խռովեցնեն և չպիտի խղճան տնանկներին։ Անզգայորեն պիտի հայհոյեն ու ծաղրեն նրանց, որոնք փայլում են իմաստությամբ։ Եվ ամենքը դա լռությամբ պիտի ընդունեն որպես չարաչար օրենք ու չպիտի կարողանան հանդիմանել կամ որևէ բան ասել, այլ ահից պիտի զարհուրած լինեն։ Ոչ ոք չի լինի, որ կարողանա այլափոխել կամ պարսավել նրանց ասածները։ Ծովից մինչև ծով, արևելքից մինչև արևմուտք, հյուսիսից մինչև անապատը պիտի լինի նրանց ճանապարհը։ Եվ այդ ճանապարհը պիտի կոչվի անձկություն։ Նրանով պիտի ընթանան ծերերն ու պառավները, տնանկներն ու մեծամեծները, քաղցածներն ու ծարավիները և կապվածները՝ երանի տալով մեռածներին, քանի որ սա առաքյալի ասած ապստամբության պատիժն է։ «Որովհետև,— ասում է նա,— եթե նախ չգա ապստամբությունը, և հայտնվի անօրեն մարդը՝ կորստյան որդին»*։ Այդպիսով ապստամբությունն է հորդորում։ Եվ քանի որ աստված վայրի էշ կոչեց Իսմայելին, այդ պատճառով էլ անապատի իշավայրիներն ու այծյամները և բոլոր տեսակի գազանները պիտի ձեռնասուն դառնան ու ընտանեցվեն։ Մարդիկ պիտի սովեն, ապականվեն ու հալածվեն։ Գազանները պիտի սատկեն։ Անտառի բոլոր ծառերը պիտի կտրատվեն։ Լեռների գեղեցկությունը պիտի խաթարվի։ Քաղաքները պիտի ավերվեն, ու նրանց սահմանները անկոխ պիտի մնան, որովհետև մարդիկ պիտի պակասեն։ Հողը պիտի պղծվի արյամբ ու դադարեցնի իր պտղաբերությունը, որովհետև այն բռնությամբ գրավածները մարդիկ չեն, այլ՝ բարբարոս ու անապատականներ, որ պիտի գան անապատացնելու։ Ապականվածները պիտի ուղարկվեն ապականելու. իրենց սրի ծայրով պիտի հարվածեն հղիներին, մայրերի գրկից պիտի խլեն մանուկներին ու գետնով տան, որոնք գազանների կերակուր պիտի դառնան։ Քահանաներին էլ ներսում, սրբություններ մեջ պիտի սպանեն ու պիտի պառկեն նրանց կանանց հետ՝ սուրբ տան մեջ, որտեղ աստվածային պատարագ էր մատուցվում։ Սուրբ սպասավորության պատմուճանը պիտի հագնեն նրանց կանայք, որդիներն ու դուստրերը և այն պիտի գցեն իրենց երիվարների վրա։ Իրենց գրաստները պիտի կապեն սրբերի հանգստարաններում։ Պիտի լինեն սպանողներ ու ապականիչներ՝ որպես քրիստոնյաների ցեղի փորձիչ հուր, որովհետև սրբազան առաքյալն ասում է. «Ո՛չ բոլորն են իսրայելացի, որոնք Իսրայելից են»*։ Ուրեմն և ոչ բոլորն են քրիստոնյաներ, ինչպես Գիրքն է ասում. իսրայելացիներից յոթ հազարը փրկվեցին, որոնք չըխոնարհվեցին Բահաղին[397], և ամբողջ Իսրայելը փրկվեց նրանց ձեռքով։ Այսպես և ապստամբության և Իսմայելի որդիների պատժի ժամանակ սակավ կգտնվեն իսկական քրիստոնյաներ, ինչպես որ հենց ինքը՝ մեր փրկիչն է ասել սուրբ ավետարանում. «Մարդու որդին գալով՝ արդյոք երկրում հավատք կգտնի՞»**։ Այն ժամանակ հոգին կպակասի, և շատերը կուրանան ճշմարտությունը, կենարար խաչն ու սուրբ խորհուրդը և առանց բռնությունների ու չարչարանքների կուրանան Քրիստոսին և կգնան ապստամբների հետևից։ Չէ՞ որ

* Պաղ., Առ Թեսաղ., 2-րդ, Բ, 3։

** Ղուկ., ԺԸ, 8։

ավելի վաղ աստվածային առաքյալը քարոզելով ասել է, թե «Վերջին ժամանակներում մարդիկ պիտի ապստամբվեն հավատքի դեմ՝ հարելով մոլոր հոգի ունեցողներին, դիվական ուսմունքներին, ստախոսների կեղծավորությանը՝ խաբելով իրենց խղճմտանքը»*։ Դարձյալ նույն ինքն է ասել. «Վերջին օրերում պիտի գան չար ժամանակներ, որովհետև մարդիկ կդառնան եսասեր, փողամոլ, պարծենկոտ, ամբարտավան, հայհոյող, ծնողներին անհնազանդ, անշնորհք, անմաքուր, անմիտ, անողորմ, մատնիչ, հանդուգն, ցոփ, գոռող, անբարեսեր, որոնք արտաքուստ աստվածապաշտի կերպարանք կընդունեն, բայց ըստ էության աստծուն կուրանան»**, Եվ հավատով բոլոր տկարները այն ուղաժի մեջ կհայտնվեն ու իրենք իրենց հոժարակամ կբաժանեն սուրբ եկեղեցիներից։ Նույն ժամանակը նրանց մոլորության մղեց, որովհետև ցածրասիրտներն ու հնազանդները, իսկական քրիստոնյաներն ու Թորգոմյան սերնդի ազատները, իմաստուն ու ընտիր մարդիկ այն ժամանակ ճշմարտությունը չորոնեցին, այլ նրանց փոխարեն փնտրեցին եսասերները, փողամոլները, հայհոյողները, ամբարտավանները, հափշտակիչները, հարբեցողները, պոռնիկները, շնացողները, անողորմները, գողերը, ապստամբները, անխիղճները, բանսարկուները, ցոփերը, գոռողները, մատնիչները, պարծենկոտները, ցանկասերները, սուրբկամիտները, որոնք, բարեպաշտի տեսք ունենալով, էապես հրաժարված են բարեպաշտությունից։ Այսպիսիները պիտի լինեն այն օրերի սպասավորներ և ուրախությամբ պիտի կատարեն այն ամենը, ինչ որ հրամայվի իրենց։ Եվ երկյուղած աստվածապաշտը նրանց մոտ ոչինչ պիտի համարվի։

Իսմայելի որդիների պատժի ժամանակ մարդիկ հոգեկան անհուսալի պահանջմունքների մեջ կընկնեն։ Կվերանա քահանաների պատիվը, կպակասի աստծու տան արարողությունը, կլռեն եկեղեցու բոլոր պատարագները, և քահանաները ժողովրդի նման կդառնան։ Եվ երբ նրանց դաժան ժամանակը վրա հասնի, կբազմանա մարդու ու անասունի նեղությունը. մարդիկ կապականվեն ու կթափվեն գետին, և նրանց հա-

* Պող., ԱՏիմ., Գ, 1, Լրիվ չի համընկնում հիշյալ շարադրանքին։
** Պող., ԲՏիմ., Գ, 1—5։ Կան բնագրային որոշ տարբերություններ։

մար կավելանա մի ուրիշ հարված ևս՝ երեկոյան կքնի մարդը և առավոտյան վեր կենալով՝ իր դռանը կգտնի ոսկու և արծաթի հարկահանին։ Կնվաղի ոսկու ու արծաթի ամբողջ առևտուրը։ Մարդիկ կվաճառեն իրենց բոլոր պետքական բաները։ Այդ ժամանակ նրանք կվաճառեն իրենց զավակներին։ Արդ, ասում են, աստված ի՞նչ պատճառով պիտի անտեսի հավատացյալների նեղությունը կրելը։ Չէ՞ որ հավատացյալներն ու անհավատները պիտի երևան, և որոմը պիտի զատվի ցորենից, որովհետև այն ժամանակը փորձիչ հուր է, և աստված ներողամտաբար թողնում է, որ ընտրյալները երևան։ Ըստ այդմ ասում է. «Երանի է ձեզ, երբ ձեզ նախատեն, չարշարեն և ձեր մասին ասեն ամեն չար ու սուտ բաներ իմ պատճառով, ցնծացե՛ք և ուրա՛խ եղեք, որովհետև ձեր վարձը շատ է երկնքում»*։

Իսկ Իսմայելի որդիների [բերած] վերջին նեղության ժամանակ, երբ մարդիկ վտանգվեն ու նրանցից փրկվելու հույս չունենան, նրանց վրա հանկարծակի զայրույթով կհարձակվի Հունաց, այսինքն՝ Բյուզանդիայի թագավորը, ինչպես քնից արթնացած մարդ, որին մարդիկ համարում էին մեռած ու ոչ պիտանի։ Սա նրանց դեմ կելնի Եթովպական ծովից և սրածությունն ու ավերածությունը կգործի մինչև Եփրատ՝ նրանց երկիրը։ Կգերի նրանց կանանց ու մանուկներին։ Թագավորի զինվորները սրով կմտնեն նրանց երկրի բնակիչների մեջ, կկոտորեն և նրանց վրա ահ ու սարսափ կտարածեն։ Նրանց բոլոր բանակները կհանձնվեն Բյուզանդիայի թագավորի ձեռքը։ Թագավորի լուծը կընկնի նրանց վրա՝ յոթնապատիկ ավելի, քան իրենցն էր նրանց վրա[398]։ Նրանց կվիճակվեն նեղություն, քաղց, ծարավ, չարչարանք։ Եվ իրենք ծառա կդառնան։ Նրանց կանայք ու զավակները կծառայեն նրանց, որոնք իրենց ծառայեցրել էին։ Նրանց ծառայելը կլինի հարյուրապատիկ ավելի դաժան և տանջալից. ու կխաղաղվի երկիրը՝ նրանց կողմից ավերված լինելով։ Եվ յուրաքանչյուր ոք կգնա իր երկիրը, իր բնակատեղը՝ Հայաստան, Կիլիկիա, Սիրիա, Աֆրիկա, Գաղատիա[399], Սիցիլիա, իսկ մնացածները գերությունից իրենց աշխարհը չեն տարվի[400], այլ երկրի վրա կը-

* Մատթ., ե, 11—12, այլև՝ Ղուկ., Զ, 22։

բազմանան մորեխի պես։ Արաբիան կավերվի, իսկ առափնյա վայրերը կխաղաղվեն։ Բյուզանդիայի թագավորի բարկությունն ու զայրույթը կբորբոքվի մեր տեր Հիսուս Քրիստոսի ուրացողների նկատմամբ։

Եվ մեծ խաղաղություն պիտի լինի, որպիսին ոչ եղել է, ոչ էլ կլինի։ Հետո վերջում ուրախություն պիտի լինի երկրում։ Քաղաքներ կկառուցեն, քահանաներին վտանգից կազատեն, և այն ժամանակ մարդիկ իրենց նեղություններից հանգիստ կառնեն։ Սա այն խաղաղությունն է, որը ակնարկել է աստվածային առաքյալը, թե՝ «Երբ ասեն խաղաղություն, շենություն և ուրախություն, այն ժամանակ հանկարծակի վրա կհասնի նրանց ոչնչացումը»*։ Այլև տերը Ավետարաններում ասում է. «Ինչպես որ Նոյի օրերում էին մարդիկ ուտում-խմում, կին առնում ու աղջիկ մարդու տալիս, այնպես էլ կլինի ետին օրը»**։ Եվ այդ խաղաղության ժամանակ մարդիկ ուրախությամբ կնստեն ուտել-խմելու, ցնծալու և ղվարճանալու. շինություններ կկառուցեն, որ երկյուղ ու հոգս չունենան։

Այն ժամանակ, ըստ Եզեկիելի մարգարեության մեջ ասված այն խոսքերի, թե վերջին օրերին, այս աշխարհի վախճանի ժամանակ, Գոգը և Մագոգը[401] պիտի մտնեն Իսրայելի երկիրը***, կբացվեն հյուսիսի դռները և դուրս կելնեն Ալեքսանդրի կողմից հյուսիսի կողմերում արգելափակված ժողովուրդների ուժերը՝ գոգ և մագոգ, անիգ և ագիգ, աքիազ, դիփոր, փորինացիներ, աղբենացիներ, հոներ, փարղիացիներ, դեկղիմացիներ, սարմատներ, թեթղեացիներ, զարմատացիներ, կաքոնացիներ, ամազարղներ, գարմադատցի մարդակերներ, թարփացիներ, ալաններ, փասկղինկացիներ, արգնեացիներ, սատարեացիներ[402]։ Սրանք քսաներկու թագավորություններ են, որոնք արգելափակված են Ալեքսանդրի[403] կանգնեցրած դարպասների ետևում։ Մարդիկ կտեսնեն ու կզարհուրեն, կփախչեն ու կթաքնվեն լեռներում, քարանձավներում ու գերեզմանոցներում. շատերն էլ կմեռնեն, և ոչ ոք չի լինի, որ կարողանա նրանց թաղել։ Չէ՞ որ հյուսիսի կողմից եկող

* Համմտ. Պաղ., Ա. Թեսաղ., ե., 3։ Կան զգալի տարբերություններ։
** Համմտ. Մատթ., ԻԴ, 38, Ղուկ., ժէ, 26—27։ Կան տարբերություններ։
*** Համմտ. Եզեկ., ԼՀ, ԼԹ։

այդ ժողովուրդները ուտում են գազանների մարմինները, խմում արյունը. այդպես ուտում են բոլոր պիղծ կարիճներն ու սողունները, մեռածների դիակները, կանանց վիժվածքները։ Նրանք կմորթեն մանուկներին և ուտել կտան իրենց մայրերին։

Կապականեն երկիրը, և ոչ ոք չի լինի, որ կարողանա նրանց դեմն առնել։ Յոթ ու կես տարուց հետո նրանք կհասնեն Հոպպե քաղաքը[404]։ Տերը կուղարկի իր զորավարին ու նրանց կկոտորի մեկ վայրկյանում։ Այնուհետև կգա հունաց թագավորը և կբնակվի Երուսաղեմում յոթ ու [սրա] կես տարի, որը և լինում է տասն ու կես տարի[405]։ Տասն ու կես տարին լրանալիս երևան կգա դժոխքի ծնունդը, որը կծնվի Քորազինում, կսնվի Բեթսաիդայում և կթագավորի Կափառնաումում[406]։ Եվ կուրախանա Քորազինը, քանի որ իր մեջ է ծնվել, կուրախանա Բեթսաիդան, որովհետև այնտեղ է սնվել, Կափառնաումն էլ, որովհետև այնտեղ է թագավորել։ Այս պատճառով էլ տերը Ավետարաններում եռակի վայ է տալիս՝ ասելով. «Վա՛յ քեզ, Քորազին, վա՛յ քեզ, Բեթսայիդա...* և դու, Կափառնաում, որ մինչև երկինք բարձրացար, մինչև դժոխք պիտի իջնես»**։

Եվ երբ երևա կորստյան որդին, հունաց թագավորը կբարձրանա լեռան գագաթի այն տեղը, որտեղ կանգնեցվեց խաչի կենարար փայտը, որի վրա մեխվեց մեր տեր աստվածը և մեզ համար ընդունեց կամավոր մահը։ Թագավորը կվերցնի իր թագն ու կդնի խաչի վրա և ձեռքերը երկինք կտարածի։ Իր թագավորությունը կհանձնի աստծու և հոր ձեռքը. խաչը թագով հանդերձ երկինք կբարձրանա. քանի որ առհասարակ բոլորի փրկության համար [տերը] մեխվեց խաչի վրա, նրա գալստյան ժամանակ նախ և առաջ այն պիտի երևա՝ ի հանդիմանություն անհավատների։ Եվ հունաց թագավորը իր հոգին կավանդի, ու այն ժամանակ կխափանվեն իշխանությունները և պետությունները, կկատարվի Դավթի այն մարգարեությունը, որ ասում է. «Լեռները թող ցնծան տիրոջ առաջ, որովհետև նա է գալիս և գալիս է դատելու երկիրը»***։

* Մատթ., ԺԱ, 21, Ղուկ., ժ, 13, (ուղղել ենք ըստ Աստվածաշնչի)։
** Ղուկ., ժ, 15։
*** Սաղմ., ՂԶ, 13։

Իսկ կորստյան որդին Դան ցեղից է. ըստ Հակոբ նահապետի մարգարեության՝ դարանակալ օձ է՝ նստած ճանապարհի վրա, սպասում է խայթելու երիվարի գարշապարը և վայր գցելու հեծյալին*՝ նրան թողնելով տիրոջ փրկության։ Այդպիսով, հեծյալը ճշմարտությունը և արդարների արքայությունն է, իսկ գարշապարը սրբերն են. ժամանակին հեծած ճշմարիտ հավատքի երիվարը, պիտի խայթվեն այն օձի՝ կորստյան որդու կողմից, վերջին օրը։ [Նա] ցնորքներով, սուտ, անզոր ու ամբարտավանական հրաշքներով [պիտի գործի], որովհետև [իբր թե] կուլրերը պիտի տեսնեն, կաղերը՝ վազեն, խուլերը՝ լսեն, դիվահարները՝ բուժվեն. արեգակը պիտի խավարի փոխվի, լուսինը՝ արյան։ Իր այս սուտ հրաշքներով ու ցնորքներով պիտի մոլորեցնի հավատացյալներին ու ընտրյալներին։ Ինչպես որ Հակոբ հայրապետը մտքի աչքով տեսավ այս գալիք նեղությունը, որ լինելու էր երկրի վրա, և մարդկանց տանջանքը սպանիչ օձից՝ կորստյան որդուց, նկատի ունենալով օձի արածները՝ մարդկության անունից ասաց. «Կսպասենք քո փրկությանը, տե՛ր»**։ Իսկ տերն էլ ավելի առաջ ասել էր, որ եթե որևէ հնար լինի, նա կմոլորեցնի նաև ընտրյալներին, որովհետև պիտի մտնի Երուսաղեմ, նստի աստծու տաճարում՝ աստծուն հավասար մարդու տեսքով մարմնավորված տղամարդու սերմից, Դան ցեղի կնոջ արգանդում՝ Հուդա Իսկարիովտացին, որը և հենց մատնեց տիրոջը։ Նա հենց Դան ցեղից էր։

Իսկ երբ կորստյան որդու անօրինությունները շատանան, աստված չի կարող անտեսել կորուստը մարդկային սերնդի, որին գնել էր իր արյամբ. շտապ կուղարկի իր մտերիմ ծառաներին՝ Նոյոքին ու Եղիային՝ հակառակորդին հանդիմանելու համար, որոնք բոլոր ժողովուրդների առաջ կդատապարտեն նրա ստախոս ու խաբեբա լինելը և կասեն, որ նա եկել է շատերին մոլորեցնելու ու կորստյան մատնելու նպատակով։ Ժողովուրդները նրան տեսնելով՝ կպախարակեն նրա մոլորությունը, կթողնեն ու կփախչեն նրանից և կհարեն այն սրբերին։ Իսկ նա, իրեն տեսնելով խիստ խայտառակված ու

* Համմտ. Ծննդ., խթ, 17։

** Համմտ. Ծննդ., խթ, 18։

բոլորից արհամարհված, բարկությամբ և ցասումով կբորբոքվի ու կսպանի աստծու սրբերին։ Այն ժամանակ կերևա աստծու որդու երկնքից գալու հրաշքը, և նա կգա երկնքի ամպերի վրայով, երկնային փառքով, իր հրեշտակապետերով ու հրեշտակներով, կընդունի չարին՝ հոգով, իր բերանով։ Եվ այստեղ [պատշաճում է] առաքելական պարզ ու հասկանալի խոսքը, թե այն ժամանակ արդարները կփայլեն լուսատուների նման*, իսկ ամբարիշտները դժոխք կգնան ու կորստյան կմատնվեն հավիտենապես։

ԼԹ

ԱՐԱՔ ՋՈՐԱՎԱՐ ՄՐՎԱՆԻ ԳԱԼԸ ՍՅՈՒՆԻՔ. ՊԱՐՍԻԿ ԲԱԲԱՆԻ ՓԵՍԱՅԱՆԱԼԸ ՍՅՈՒՆՅԱՑ ՏԵՐ ՎԱՍԱԿԻՆ. ՄԱՔԵՆՈՅԱՑ ՎԱՆՔՆ ԱՅՐԵԼԸ. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՈՒ ԲԱՂԱՍԱԿԱՆԻ ԿՈՏՈՐՈՒՄԸ[407]

Երբ լրացավ հայոց հարյուր յոթանասունվեց թվականը[408], անիծյալ և աշխարհավեր Մրվանը[409] արաբական բազմաքանակ զորքով արշավեց Հայաստան և որպես սաստիկ հուր այրեց ու հրդեհեց մեր գեղեցիկ երկիրը։ Նա ճանաչված էր հենց Ավարանշան անունով։ Մեծ ավարով գալով Սյունիք՝ հաստատվում է Շաղատ բերդագյուղում. կամենում է Սիսական գեղեցիկ նահանգը ևս ավերել։ Զորքը կենտրոնացնում է այնտեղ՝ Ծղուկ գավառում։ Ապա Սյունիքի տեր և իշխանաց իշխան Վասակը[410] գնում և Ատրպատականից բերում է պարսիկ Բաբանին մեծաթիվ զորքով, Մրվանին սաստիկ ջարդ է տալիս ու փախուստի մատնում։ Բայց ինքը՝ Վասակը, նույն տարում վախճանվում է։ Այն ժամանակ էլ Բաբանը նրա դստերը իրեն կին է վերցնում ու գավառն առնում իր իշխանության տակ։ Նաև նույն տարում իշխան Ներսեհ Սյունին[411]՝ Փիլիպեի որդին, ինչ-որ սխի պատճառով սպանում է Աղվանքի իշխան Ստեփանոսի որդի Վարազ Տրդատին[412], նրա որդուն էլ մոր գրկում ոչնչացնում է ու ամբողջ ունեցվածքը կողոպտում։ Այս Վարազ Տրդատը Միհրական տոհմից էր և տիրում էր Աղվանքի սեփական տերությանը։ Սրանից հետո

* Համմտ. Մատթ., ԺԳ, 43։

Բաղասական գավառը[413] չհնազանդվեց Բաբանի հրամաններին ու օրենքներին. և Բաբանը Աբլ Ասադ Աղվանեցու ջոջանգակութ֊յամբ եկավ ու սաստիկ և անողորմ կոտորեց այդ գավառի բնակչութ֊յանը, ոչնչացրեց մինչև իսկ կանանց ու երեխաներին, որոնք անմեղութ֊յամբ խողխողվելու պատճառով Քրիստոսից պսակի են արժանանալու։

Իսկ հաջորդ տարում Բաբանը գնաց Գեղարքունի գավառը[414] և սրածեց բնակչութ֊յանը՝ մոտ տասնհինգ հազար հոգու։ Մաքենոցաց շատ ծաղկուն մենաստանի, հռչակավոր վանքի[415] ամբողջ հարստութ֊յունն ավարեց, բոլոր շինութ֊յուններն այրեց ու քանդեց։ Բայց կրոնավորները, նախապես տեղեկանալով [վտանգի մասին], երկու մասի բաժանվեցին, որոնց մի մասը Սողոմոն վանահոր հետ, ոչ հայրերի հայր կոչված առաջին Սողոմոնի[416], այլ նրա աշակերտի[417] հետ գնաց Շիրակ գավառը, Ջրեսկ սուրբ վանքը[418], որտեղ ճգնութ֊յամբ փայլեց այս նույն Սողոմոնը՝ մշտական խցաբնակ ճգնավոր դառնալով։ Իսկ մյուս մասը, առաջնորդ ընտրելով կրոնավորներից մեկին, գնաց Աղվանք, բնակվեց Միհրներսեհի, այսինքն՝ Ջրլշտիկ վանքում[419]։ Իսկ Մաքենոցաց վանքի տեղն անբնակ մնաց. հետո Սուփան կոչված Գրիգորի[420]՝ Սյունիքի տիրոջ օրոք վերստին նորոգվեց, շինվեց մեծ եկեղեցին. [վանքն] առավելապես փայլեց։

ԼԴ

ԹԱՆԱՀԱՏԻ ՎԱՆՔԻ[421] ԵՎ ՄԽԻԹԱՐ ՎԱՆԱՀՈՐ ՄԱՍԻՆ

Այն ժամանակ սուրբ և անպատմելի կարգով ծաղկում էր հրաշափառ ու հռչակավոր Թանահատի վանքը, որը գտնվում է վերին Սյունիքի մի լեռան ստորոտի բարձրադիր տեղում, անտառի[422] մեջ։ Այնտեղ կային մշտապես աղոթող նվիրյալ կրոնավորներ՝ հեռացած ամեն տեսակի փափուկ կերակուրներից, միայն ցամաք հացով ու լոկ ջրով էին հագեցնում իրենց քաղցն ու ծարավը, այն էլ օրը մեկ անգամ, երեկոյան դեմ։ Լուռ ու մունջ, անվրդով, որպես վառ կանթեղներ կախված էին աղոթքի համար գիշեր ու ցոր. և նրանց պաշ-

տամունքային արարողութ֊յունները գիշեր֊ցերեկ երբեք չէին դադարում։ Սպասավորներից բացի, վանքի դռներից ոչ ոք դուրս չէր գալիս։ Թեև շատ անգամ Սյունյաց իշխանների ու եպիսկոպոսների կողմից ստիպվեցին, բայց չհամաձայնվեցին կիրակիները թան, պանիր կամ յուղ ճաշակել, միայն բավարվում էին բանջարեղենով ու ընդեղենով։ Այդ պատճառով էլ թանահատներ կոչվեցին[423]։ Միայն գլխավոր տոներին ձեթ էին ճաշակում, այն էլ քիչ՝ բաժակներով։ Այս մասին մենք տեղեկացանք երանելի Մաշտոց Սևանցու Պատմութ֊յունից[424], բայց տեղի արձանագրութ֊յուններում գտանք, որ եկեղեցին հայոց թվականից չորս հարյուր տարով ավելի առաջ է կառուցվել[425] Սյունյաց իշխանների ու եպիսկոպոսների կողմից, Ստեփանոս սուրբ Նախավկայի անունով։

Այդ սուրբ վանքում Մխիթար անունով վանահայր է եղել, որը ճգնութ֊յամբ անցել էր առաքինութ֊յունների բոլոր աստիճաններով և վայրենի գազանները՝ արջերն ու գայլերը, հնազանդեցնում էր սուրբ եկեղեցուն, ծառայեցնում էր վանքին, որը և ցույց է տալիս արձանագրութ֊յունը, թե՝ «դարձրեց հարկատու մեքոր(ա)ին», այսինքն եկեղեցուն[426]։ Գայլերը զգուշութ֊յամբ պահպանում էին ոչխարների հոտերը և տավարի նախիրները, իսկ արջերն իրենց մեջքով բեռ էին կրում։ Սուրբ հայրը Մխիթարը շարունակ անտառ էր գնում, նստում վանքի դիմաց, նրա մոտ հավաքվում էին բոլոր վայրի գազանները, և իբրև հասկացող՝ յուրաքանչյուրն իր կարիքների համաձայն խնդրում էր նրանից աղոթք ու ողորմութ֊յուն։ Սուրբ հայրը վանքը կարգի գցեց և շատ տարիներ անց վախճանվելով՝ փոխադրվեց հրեշտակների շարքը։ Նրա մարմինը փայտե արկղով դրվեց եկեղեցու մոտ գտնվող մի փոքր բլրակի վրա, որտեղ գետնափոր և սրբաշեն գերեզման պատրաստեցին ու նրան ամփոփեցին այնտեղ, որը մինչև այսօր էլ մնում է և մեծամեծ հրաշքներ է կատարում հիվանդների ու ցավագարների համար։ Նրա բարեխոսութ֊յամբ Քրիստոսը թող գթա այս աշխարհին և մեզ՝ հետագայի թշվառացողներիս։

ՍՅՈՒՆԻՔԻ ԱՅՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍԻՑ ՀԵՏՈ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱԹՈՌԱԿԱԼԵՑԻՆ

Սյունյաց քառներկուերորդ եպիսկոպոս սուրբ Ստեփանոսը[427], *մնալով եպիսկոպոսական աթոռին, վախճանվեց մարտիրոսական մահով։ Ապա նրանից հետո աթոռակալեց Տեր-Հովսեփը*[428] *17 տարի. սա բոլորի կողմից վկայված է որպես ճշմարտասեր ու լավ մարդ։ Նրանից հետո՝ Տեր-Հովակիմը՝ տասնյոթ տարի, Տեր-Սադովկը՝ երեսուներկու տարի, Տեր-Հովհաննեսը՝ երկու, Տեր-Սողոմոնը՝ յոթ տարի, Տեր-Եղիան՝ ութ տարի, Տեր-Թեոդորոսը՝ տասնութ տարի, Տեր-Գևորգը՝ ութ տարի, Տեր-Դավիթը՝ տասնյոթ տարի։ Վերջինս Սյունյաց Իշխան Փիլիպեի և Սահակի որդի Սյունյաց մեծ նահապետ Գրիգոր Սուփանի ժամանակներում էր, որը եպիսկոպոսության աթոռը հաստատեց Տաթևի վանքում և ընդարձակեց նրա [իրավասության] սահմանները. դա իր տեղում համապատասխանաբար կպատմեմ։*

Սրանից հետո աթոռակալում է Տեր-Հովհաննեսը՝ տասը տարի, ապա՝ ողջախոհ Տեր-Սողոմոնը, որ զարդարված էր հոգեկան բոլոր առաքինություններով և փայլում էր, ինչպես արեգակը երկնակամարում. հենց նա էլ փարթամությամբ ճոխացրեց եպիսկոպոսարանը։ Եպիսկոպոսության աթոռին մնալով տասնյոթ տարի՝ վախճանվեց։ Ապա աթոռակալեց երանելի, բազմավաստակ, արքայատիպ Տեր-Հովհաննեսը՝ հրեշտակների ու մարդկանց սիրելին՝ երեսունյոթ տարի։ Սա կանգնեցրեց Տաթևի երկնակառույց քավարանը, որի գովելի գործերի հանգամանքների մասին մեծ ճոխությամբ եմ ուզում պատմել։ Բայց այժմ եպիսկոպոսների շարքը [մեջտեղ] բերելուց և շատ խոսքերով նրանց զանազան գործերի մասին պատմելուց հետո պարտք եմ համարում կրկին անդրադառնալ և ըստ իմ կարողության ցույց տալ նաև իշխանների գործերի հանգամանքները և [նրանց մասին եղած] զրույցները, [պատմել] պատերազմների, խաղաղ ժամանակների, շինարարությունների, զարմանալի գործերի, այլև աստծու տների շինությունների մասին, որ իրենց սեփական աշխարհների զանազան տեղերում կանգնեցրին որպես անջնջելի հուշարձան և անմահ հիշատակ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ ԱՐՔԱՅԱԶՆ ԱՂՋԿԱ[429] ԵՎ ՄԵՐ ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԵԾ ՈՒ ԱՀԱԺԴՈՒ ՀՐԱՇՔԻ ՄԱՍԻՆ

Ո՛վ եղբայրներ, ցանկանում եմ ձեզ պատմել այն զարմանալի հրաշքի մասին, որ այն ժամանակ եղավ աստվածային տնօրինությամբ։ Աղվանքի գահերեց իշխան Վարազ Տրդատը մի դուստր ուներ՝ Շահանդուխտ անունով։ Նրա կերպարանքն արտասովոր էր ու հրաշալի. չքնաղ գեղեցկությունը զարմանք էր պատճառում տեսնողներին։ Ոչ ոքի չէր թվում, թե նա նյութեղեն է. այլ կարծես թե կերպարանավորված էր լուսատարր օդից ու նրբանուրբ շողերից։ Նրան հարս խնդրեցին Թորգոմյան տնից։ Եվ նա դուրս ելավ իր աշխարհից, հայրենի տնից գնաց կին դառնալու հայ իշխանին[430]*։ Մտնելով Բաղաց աշխարհը՝ անցնում էր ապահով տեղանքի ճանապարհով, մի ապառաժոտ վայրով, որտեղ մի քարաժայռի փլվածք էր՝ ահռելի խորությամբ, որն անդունդի նման ուղղված էր դեպի Տաթևի մեծ հայրապետանոցի կողմը։ Հենց այնտեղ թաքնված, ծվարած էին սուսերամերկ զորքի լեգեոնախումբ ջոկատներ, որոնք Շահանդուխտի սքանչելի գեղեցկության պատճառով եկել էին Պարսկաստանից, հսկում էին ճանապարհների անցքերն ու կիրճերը, որ հափշտակեն այդ աղջկան։*

Ուղևորներն այդ բանին իրազեկ չէին։ Զինված խմբերը հանկարծակի հարձակվեցին նրանց վրա և սրերը քաշած սկսեցին անխնա կոտորել [այս] քրիստոնյաներին։ Ապա խորահավատ օրիորդն այս տեսնելով հասկացավ պատճառը և, տերունական խաչով երեսին խաչ հանելով, ձին մըտրակեց ու թռավ քարաժայռի փլվածքը։ Այս [տեղեկությունը] գտանք մի հնացած նամակում, որը իր իսկ՝ Շահանդուխտի ձեռքով էր գրված այսպես. «Ես՝ Քրիստոսի մեղավոր աղախին Շահանդուխտս, Վարազ Տրդատի դուստրս, Թորգոմյան տունը հարս էի գնում. հասա Բաղքի սահմանները, այս քարաժայռի գլուխը, որտեղով ճանապարհն է անցնում։ Ահա [այստեղ] ինձ հանկարծակի հանդիպեցին իսմայելացիները,

որոնք իմ հռչակված գեղեցկության պատճառով կամենում էին ինձ հափշտակել։ Նրանք սրերը քաշած կոտորեցին ինձ հետ եղած հեծելագունդը։ Եվ ես լավ համարեցի գայլաբարո այլազգիների ձեռքով կորչելու փոխարեն գահավիժումով մեռնել իմ Քրիստոսի համար։ Եվ հիշելով սուրբ Աստվածածնին ու սուրբ Հռիփսիմեին՝ ինձ հանձնեցի սուրբ երրորդությանը. ողորմելի անձս խաչակնքեցի սուրբ խաչով և ձիու սանձը ետ դարձնելով՝ թռա քարաժայռից։ Քամու ուժգին հոսանքով, աներևույթ զորությամբ, կարծես թե կառքով իջա այս ձորի խորխորատը, ձիս էլ հետս՝ անվնաս։ Այնտեղ դադար առնելով՝ մեծ հիացումով խիստ գոհունակություն վերառաքեցի ինձ այդպես փրկողին և այս անդորր տեղում իմ անձը նվիրեցի Քրիստոսին. ուխտեցի այլևս այստեղից դուրս չգալ մինչև կյանքիս վերջը։ Իսկ խմայելացիներն այս տեսնելով մեծ զարմանքով անվնաս թողեցին իմ զորախմբի [մնացած մասը] և գնացին։ Ես էլ այստեղ շինեցի մի մատուռ ու մի խցիկ, որտեղ ճգնեցի կյանքիս [մնացած] ամբողջ ժամանակամիջոցում։ Թեև ծնողներս ու հարսնածու իշխանները շատ թախանձեցին, բայց ես տեղիցս չշարժվեցի։ Հրավիրելով Սյունյաց երանելի եպիսկոպոսին՝ ենթարկվեցի նրան և իմ ամբողջ ունեցվածքը տվեցի նրա ձեռքը՝ կես մասը բաժանելու կարիքավորներին, կեսն էլ տալու Տաթևի սուրբ եկեղեցուն։ Նաև սուրբ եկեղեցուն ավանդեցի այս տեղերը՝ ամբողջ ձորով հանդերձ, որ ընկած են Շնհերի[431] սահմանից վեր, մինչև Գինական[432] գետը»։ Եվ սա Շահանդուխտը հենց իր ձեռքով էր գրել։ Նա մնալով այնտեղ իր մոտ է հավաքում ուրիշ կույսերի և տառապալից ճգնությամբ ապրելով երեսուն տարի՝ մեռնում է։ Եպիսկոպոսը գնալով թաղում է նույն տեղում սրբի երանելի մարմինը, որի բարեխոսությամբ Քրիստոսը թող խնայի այս տունը և սրան բաժին ընկած հարազատ հոտին։

ՍՅՈՒՆՅԱՑ ՍԱՀԱԿ[433] ԵՎ ՄՅՈՒՍ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ. ՆՐԱՆՑ ԳՈՐԾԵՐՆ ՈՒ ՎԱԽՃԱՆԸ, ՈՐ ԵՂԵԼ ԵՆ ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՑՈՓԱՆԱՍՈՒՆ ԹՎԱԿԱՆԻՑ ԱՅՍ ԿՈՂՄ. ՋՐՈՒՑՑՆԵՐ ՈՒ ՀԱՄԱՌՈՏ ՑԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայոց Տեր-Դավիթ Կակաղեցու[434] հայրապետության և Սմբատ Բագրատունու[435] սպարապետության օրոք Սյունիքի իշխանն էր մեծ նահապետ Սահակը, որն իր իշխանությունը վարում էր արքունական ճոխությամբ և խիստ միաբանված ու համախոհությամբ էր ընդունում հայոց սպարապետ Սմբատի հետ պատերազմական բոլոր գործերում և մեր Հայոց աշխարհի համար օգտակար բաներում։ Այս ժամանակներում մեր Հայոց աշխարհն իր ծառայության տակ էր պահում մեծ ամիրապետ Մամունը[436], որը փոքր զորագնդով ոստիկան է ուղարկում Հայաստան Հոլ անունով մի մարդու։ Սա, գալով մեր երկիրը, հասնում է Դվին քաղաքի դարպասին և կամենում է մտնել ու հաստատվել այնտեղ։ Իսկ այնտեղ մի մարդ կար թագավորական տոհմից՝ Սևադա[437] անունով, որը Բագրատունի տոհմից իրեն կին էր առել Արուսյակին և դրա համար բռնությամբ տիրում էր Հայոց աշխարհիս մեծ մասին։ Սա խանդով լցված ընդվզեց Հոլի դեմ՝ միաբանվելով Սմբատ Բագրատունու և Սյունյաց տեր Սահակի հետ. պատերազմական զորք խմբեց և ուզեց կռվել։ Թեև Դավիթ հայրապետը բազմիցս միջնորդեց, որ [չպատերազմեն], բայց չկարողացավ համոզել։ Այնուհետև Հոլը վեր կացավ իր շուրջ երկու հազար զինվորներով, ուժգին հարձակումով սկսեց ճակատամարտը Հուրազդան[438] գետի ափին, Կավակերտի[439] դիմաց։ Նրանց փախուստի մատնեց, հենց այնտեղ խփելով Սյունի Սահակ գեղեցկատես իշխանին՝ դիաթավալ տապալեց գետնին։ Սևադան ու Սմբատն էլ հազիվ ազատվելով՝ ճողոպրեցին։ Իսկ երանելի Դավիթ հայրապետը, [այս մասին] լսելով, սաստիկ ողբով հեծեծում էր. և սպասավորների մեծ բազմությամբ գնալով՝ դագաղն արքայավայել պատրաստեց, ու [Սահակի մարմինը] վերցնելով՝ շքեղահանդես արարողությամբ, սաղմոսներով, օրհներգությամբ բերեց Դվինի կա-

թողիկոսարանը, թաղեց սուրբ քավարանի մոտի տապանում։ Սահակից հետո նրա իշխանությունը պայազատում է իր որդի Գրիգորը, որը փաղաքշական անվամբ կոչվում էր Սուփան՝ [լինելով] մեծահոգի, շատ խելոք և կյանքի բոլոր հանգամանքներում ձեռներեց մարդ։ Նա իր նախորդներից առավել կարգավորեց իր իշխանության գահը և տնօրինեց մեր աշխարհի շենացումը։

Բայց Դավթին հայոց հայրապետական աթոռում հաջորդում է Տեր-Հովհաննես Կոտայեցին[440] Ովայից[441] գյուղից։ Խստաբարությունյան և անզգամների նկատմամբ ահարկու սաստումների պատճառով նույն տնից ինչ-որ բանսարկու մարդիկ հանդես գալով ստահոդ խոսքերով խաբեցին ու մոլորեցրին Հայաստանի իշխան Բագրատին և ուրիշներին՝ հեռացնելու այս կաթողիկոսին։ Սա, այս մասին իմանալով, կամովին թողնում է աթոռն ու մենակությամբ բնակվում Այրիվանքում[442]։ Մեծ Սուփան Սյունին[443] լսելով՝ չի հանդուրժում այս պատուհասն ու զրպարտությունը և, գնալով Սմբատ սպարապետի մոտ՝ խորհրդակցում է նրա հետ. նըրանք վրեժխնդիր են լինում աստծու այն սուրբ մարդու համար։ Եվ Տեր-Հովհաննեսին ետ բերելով՝ վերստին հաստատում են կաթողիկոսական աթոռին։ Իսկ բոլոր չարալեզուները երկնային մեծ պատուհասներով սատկոտեցին։ Այս իրադարձությունից հետո, երբ Գրիգորը[444] [շարունակում էր] ճոխաբար վարել իր իշխանությունը, սատանան չդիմացավ, այլ չար նախանձ զգեց նույն տոհմից Վասակի որդի Փիլիպեի եղբոր՝ Սյունյաց մյուս նահապետ Բաբկենի սիրտը, նախանձել տվեց ու չար հակառակություն բորբոքեց նրանց միջև՝ Կայենի ու Հաբելի նման[445]։ Նրանք, միմյանց դեմ զորախմբեր հավաքելով, պատերազմեցին, և Բաբկենը սպանեց Գրիգորին։ Իսկ ինքն էլ հետո կործանվեց սիրո գայթակղությունից, տիրավանդ օրենքով։ Եվ երբ այսպես եղավ, Գրիգորի ընտանիքի անդամները դառնագին լաց ու կոծով նրան տարան, թաղեցին իրենց հայրերի մոտ։ Նրա իշխանությունը ժառանգեց իր որդի Վասակը, որը փաղաքշաբար Գաբուռ[446] էր կոչվում։ Սա փեսայացավ Սմբատի որդի, Հայաստանում հետո թագավոր դարձած Աշոտ Բագրատունուն[447]՝ նրա դուստր Մարիամին իրեն կին առնելով։ Վասակն Աշոտի տիրապետության ժամանակ խիստ հնազանդ էր իր աներոջ գործերին ու կամքին, իսկ նա էլ շատ մտերմաբար հոգ էր տանում նրա նկատմամբ։ Այդ պատճառով Վասակը փառքով ու իշխանությամբ իր նախնիներից անցավ՝ խառնվելով Բագրատունի թագավորող տոհմին։

Ահա այս ժամանակ անիծյալ Ջաֆարն էր Պարսկաստանի ամիրապետը[448], որ այժմ սուլթան[449] են ասում։ Նա Հայաստան էր ուղարկել մի ոստիկանի՝ Աբուսեճ[450] անունով, որը գալով Տարոն՝ բռնեց ու կալանավորեց Բագարատ[451] իշխանին։ Այդ պատճառով նրա վրա հարձակվեցին Տավրոս լեռան բնակիչները, իրեն սպանեցին, զորքն էլ փախուստի մատնեցին։ Ամիրապետը, այդ լսելով ու սաստիկ չարանալով, ուղարկում է մի ավելի չարին՝ Բուղա անունով[452], ծանր զորքով, հրամայում է Հայաստանի բոլոր գլխավոր իշխաններին իր մոտ տանել կապանքներով, իսկ մյուսներին սրակոտոր անել։ Նա էլ եկավ, բռնեց Հայաստանի իշխաններին՝ Տարոնի Բագարատ [իշխանի] որդիներ Աշոտին ու Դավթին[453] և Արծրունյաց մեծ իշխան Աշոտին[454], կալանավորեց։ Իսկ Սմբատ սպարապետն ինքը գնաց Բուղայի մոտ։ Մյուսներին սրով անխնա բնաջնջեց, իսկ գեղեցիկ աղնվականներին ընտրում ու պահում էր՝ իրենց անօրեն կրոնին դարձնելու, որոնք, [սակայն], մեծ մասամբ նահատակվեցին հանուն Քրիստոսի, ինչպես՝ Ատոմը[455] յոթ ընկերներով, Կոն Ստեփանոսը[456] և ուրիշ հարյուր հիսուն մարդիկ, որոնց համար տոն սահմանեց սուրբ հայրապետ Հովհաննեսը մեհեկի[457] 25-ը։ Սա տեղի ունեցավ հայոց երեք հարյուր երկու թվականին[458]։

Այնուհետև Բուղան, իր չար գործի այս ամբողջ հաջողությունները տեսնելով, բազմաթիվ հրոսակներով հետամտորեն փնտրեց Իշխանիկ կոչված Սյունյաց Վասակ մեծ իշխանին[459] և իր եղբայրներին՝ Վասակի որդի Փիլիպեի[460] որդիներին, Սյունյաց տերերին։ Նրանցից ոմանք վախեցած ամրացել էին Բաղքի անառիկ ամրոցներում։ Բայց Վասակը, վստահ չլինելով բերդերի ամրությանը, խուսս տալով անցավ, գնաց Կոտայք գավառի կողմերը։ Բուղան դա իմանալով հետևից զորախումբ ուղարկեց։ Զինվորները հասնելով ուզեցին նրան բռնել, բայց նա շուռ գալով սկսեց սուրը գործի դնել. բոլորին թավալգլոր արեց։ Ինքն էլ գնաց դեպի արև-

վելք, Գարդման գավառը[461], նրա իշխան Կորիճի[462] մոտ, որի կողմից թերևս օգնություն ստանար, բայց հուսացածը չգտավ։ Ընդհակառակն, այդ իշխանը դևից խաբվելով դաւաճանեց նրան. բռնելով կապանքներով ուղարկեց Բուղայի մոտ, որպեսզի ինքը դրանով թերևս ղերծ մնա նրա ցասումից։ Բայց ինքն աստծու արդարադատությամբ հետո բռնվեց Բուղայի կողմից և ավելի մեծ չարիքի մեջ ընկավ։ Իսկ այն չար ու անիծյալ Բուղան ուրախությամբ բռնեց Վասակին, նրա եղբայր Աշոտին ու մեծ տիկնոջը՝ նրանց մորը, ասպատակող ավազակախմբի միջոցով բերել տվեց Դվին, որտեղ երկաթե կապանքներով բանտ նետեց։ Հայոց ու Աղվանից իշխաններին այսպես բռնելով՝ շարժվեց գնաց արքունի դուռը և ներկայացրեց մեծ ամիրապետին։ Իսկ չարագուխս Ջաֆարը, տեսնելով նրանց և սաստիկ ցասումով հարց ու փորձ անելով հավատքի վերաբերյալ, մեծամեծ ու տեսակ-տեսակ տանջանքներով, պես-պես նեղություններով բազում օրեր չարչարել տվեց նրանց։ Ոմանց կրոնափոխ անելով՝ թլպատել տվեց։

Իսկ խորհրդավատ Վասակն ու իր եղբայր Աշոտը, չենթարկվելով նրա խոսքերին և չթուլանալով քրիստոնեական հավատքի մեջ, մի առ ժամանակ արտաքուստ համաձայնվեցին կատարել ամիրայի կամքը։ Բայց քաջարի Սմբատը նույն դավանությամբ կապանքների մեջ, բանտում իր կյանքին վերջ տվեց բարվոք մահով, որի դին տարվեց ու թաղվեց Դանիել մեծ մարգարեի վկայարանում։ Նրա իշխանությունը ժառանգեց Աշոտը, որը և թագավոր դարձավ։ Ապա և Սյունյաց մեծ Վասակը, իր մոր, եղբոր և ուրիշ իշխանների հետ աղատվելով Բուղայի գերության դաժան կապանքներից, գալիս է հարազատ Սիսական աշխարհը և այն ամբողջովին համակում, ուրախությամբ։ Իր վրայից դեն է նետում անօրեն Մահմեդի համար տված խոստման ստվերը, զգեստավորվում հարազատ մաքուր զգեստով՝ շատ զղջումով ու ափսոսանքով, ճշմարիտ հավատքի ճանաչումով, աղքատներին ողորմության առատ բաշխումով՝ աստծու հանդեպ միջնորդ ունենալով Սյունյաց երջանիկ եպիսկոպոս Տեր-Սողոմոնին։ Եվ այսպես ճոխանալով երևելի փառքով՝ նա այս ժամանակներում բազմաթիվ քաջագործություններ ցույց տվեց նույն Աշոտ իշխանի օգնությամբ, որը և թագավոր դարձավ։ Իսկ Սյունի Վասակ Գարուն

մեծ սեպուհ-իշխանը մատաղ հասակով երիտասարդ ժամանակ վախճանվեց՝ թողնելով երեք որդի, որոնցից ավագը Գրիգորն էր, որը ևս Սուփան կոչվեց, [մյուսներն էին] Սահակը և Վասակը։

Այնուհետև երանելի Մարիամ տիկինը, նրա դին զարդարելով թագավորական զարդերով, շատ մեծ թափորով, անչափ աղաղակներով ու ողբերգական շարժ ու ձևով, փողհարներով ու քնարահարներով, Զաքարիա[463] կաթողիկոսի հետ տարավ, թաղեց գերեզմանոցում, իր նախնիների մոտ։ Նրա իշխանությունը ժառանգեց իր Գրիգոր Սուփան[464] որդին, որը գեղեցիկ կերպով դասավորեց իշխանական կարգ ու կանոնը։ Իր ողջ հարստությունն ու կյանքը գլխավորապես ծախսեց աստվածապաշտության գործի և պայծառակերտ տաճարների շինարարության համար, որ դեռևս գոյություն ունեն ու վկայում են այդ իրողության մասին։

Այս ժամանակ Սևանա կղզում հռչակված առաքինությամբ փայլում էր երանելի Մաշտոցը[465], որը Գրիգոր անունով եղիվարդեցի մի քահանայի որդին էր։ Դեռ աշխարհիկ լինելով[466] Գրիգորը տեղափոխվել էր Սոթք[467] գավառը և իբրև պանդուխտ ապրում էր այնտեղ։ Նա Մաշտոցին աշակերտ էր տվել Մաքենոցաց վանքի[468] սուրբ վանահայր Սահփանոսի մոտ։ Այնտեղ սա մտավորապես զարգանալով քահանա է ձեռնադրվում Տեր-Դավթի՝ Սյունյաց եպիսկոպոսի[469] կողմից։ Այնտեղից գնում է Արտավազդի Ապարանք անապատը[470], որտեղից էլ անցնում է Սևանա կղզին։ Բազում ճգնություններից հետո երազում հրաման է ստանում եկեղեցի կառուցել՝ տասներկու առաքյալների անունով, ու միաբանություն հաստատել։ Եվ դրա համար երազի մեջ, լճի վրայով նրա մոտ են գալիս տասներկու առաքյալները ու նշանակում եկեղեցու տեղը։

Ահա այդ երևումից ու աստվածային ազդեցությունից մղված՝ մեծ տիկին Մարիամը[471] Վասակ Սյունու կինը, գալիս է սուրբ Մաշտոցի մոտ, բազում թախանձանքներով նրան համաձայնեցնում է, և ձեռնարկելով կառուցում են գեղեցկաղարդ եկեղեցիները՝ մեկը սուրբ առաքյալների, մյուսը՝ սուրբ Աստվածածնի անունով[472]։ Զարդարելով մեծամեծ սպասքներով՝ կանգնեցնում են աստծու տունը և աստվածակիր

մարդկանց բնակարանը հայոց երեք հարյուր քսաներեք թվականին[473]։ Մաշտոցը վանքի [գործունեության] սահմանները դրեց ու այն պայծառացրեց երկնանման կարգ ու կանոնով։ Դրա համաբավից իշխանաց իշխան Աշոտը, միաբանվելով սուրբ ուխտին, գալիս է սուրբ վանահորը տեսության և ընծայում է աստվածընկալ խաչի փրկական նշանը. սուրբ եկեղեցուն ժառանգություն է տալիս գյուղեր՝ Վարսերը[474], Ցամաքաբերդը[475], Գոմաձորը[476], Բերդքը[477], Ուռյաց տափը[478] (և զորս կոտակծին[479]) և այգիներ Գառնիում, Երևանում ու այլ տեղերում, բազում նզովքներով հաստատում[480]։ Այնուհետև՝ այս Մարիամը շինում է Շողվագա[481] մեծապատիծառ եկեղեցին՝ Պետրոս սուրբ առաքյալի անունով։ Այնտեղ միաբանություն է հիմնում՝ քահանաների բազմամարդ դասերով, իր տիրոջ՝ Սյունյաց իշխան Վասակի հոգու համար։ Եվ հազարացի[482] մարդկանցից վաթսուն հազար դրամով գնելով Շողվագ գյուղը, աշխարհական բոլոր հարկերից ազատ նվիրում է սուրբ եկեղեցուն որպես սեփական կալվածք։ Այսպես էլ մի գյուղ Մաղազ գավառում[483] երեք հազար դահեկանով գնում ու տալիս է սուրբ եկեղեցուն։ Այդ գյուղի անունն էր Գներ[484]։ Հաստատում է անջնջելի հիշատակագրությամբ[485] Գեորգ կաթողիկոսի[486], Սյունյաց Հովհաննես եպիսկոպոսի[487], Սյունյաց տեր Գագիկի ու Վասակի եղբայր Հրահատի[488], Արտավազդ Շաղատենեցու[489] և բազմաթիվ այլ ազնվականների ու իշխանների ներկայությամբ։

Իսկ այնուհետև այն ժամանակ Գրիգոր Սուփանը[490] և Իշխանիկ կոչված Վասակը[491]՝ Սյունյաց տերերը, աստվածային տնօրինությամբ խորհրդակցելով Արծրունյաց տան իշխան Դերենիկ կոչված Գրիգորի[492] ու Հայաստանի ուրիշ իշխանների հետ, խնդրում են Ամիր Ահմադ ամիրապետին և Աշոտ Բագրատունուն[493] դարձնում են Հայաստանի թագավոր[494]։ Դրանով մեր հայոց աշխարհը նորովի զարդարվեց շինարարությամբ ու խոր խաղաղությամբ։ Թագավորին օծեցին Տեր-Գեորգը[495], հայոց կաթողիկոսը, և Սյունյաց եպիսկոպոս Տեր-Հովհաննեսը[496]՝ ուրիշ եպիսկոպոսներով հանդերձ, հայոց երեք հարյուր երեսունչորս թվականին[497]։ Բայց սրանից հետո Վասակ մեծ իշխանը, որ Իշխանիկ էր կոչվում, վախճանվում է ու թաղվում իր նախնիների մոտ։ Նրա իշխանությունը ժա-

ռանգում է իր եղբայր Աշոտը[498], որ հեզահամբույր, խաղաղասեր, բարեպաշտ ու աստվածավախ մարդ էր՝ ամբողջովին ու ամեն ինչում զբաղված իր հայրենի տերության շինությամբ։

Իսկ Աշոտ թագավորը հինգ տարի թագավորելուց հետո վախճանվում է, և նրա թագավորությունը ժառանգում է իր որդի Սմբատը[499], որին Ափշինի[500] հրամանով հայոց թագավոր են օծում կաթողիկոս Գեորգը և Սյունյաց եպիսկոպոս Հովհաննեսը, վրաց Ատրներսեհ բդեշխը[501], Սյունյաց իշխան Աշոտը[502], Արծրունյաց իշխան Գագիկը[503]՝ ուրիշ իշխաններով հանդերձ։

Ապա Հայոց աշխարհի գլխով անցած բազմաթիվ իրադարձություններից հետո Ափշինը գնաց արքունական դուռը, Բաղդադ և, այնտեղ մեծ զորք գումարելով, կամենում էր գալ Հայաստան և բնաջնջել այն։ Սակայն նրան վերին կամքը ջուտով մեռցրեց, և նրա չար մտադրությունը խափանվեց։ Բայց Ափշինին փոխարինեց իր եղբայր Յուսուփը[504], որի ձեռքից Հայաստանը հետո ահավոր ավերածություն ու անպատմելի չարիքներ կրեց։ Նա, ամիրապետի կողմից ոստիկան [նշանակվելով], այնտեղից գալիս է Հայաստան։ Սկզբում մեծամեծ պարգևներով խիստ հարգանքի և մեծարանքի է արժանացնում Սմբատ թագավորին ու բոլոր իշխաններին. նույնպես և ինքն է պատվվում նրանց կողմից՝ կրկնակի պարգևներ ընդունելով։ Եվ դա բավական ժամանակ խաղաղություն բերեց ամբողջ Հայաստանին։ Դրա համար էլ եկեղեցիների շինությամբ զբաղվեցին ամենքը, առավել ևս՝ Սյունյաց տեր Վասակի[505] որդիները՝ Գրիգոր Սուփանը[506], Սահակը և Վասակը, իրենց մայր Մարիամը[507]՝ գեղարքունիք գավառում, քանի որ ծովակի շուրջ գտնվող այդ նույն գավառը նրանց էր ժառանգության բաժին հասել։ Իսկ Սյունյաց իշխանների գահակալական բուն տիրույթներն էին Բաղքը[508], Վայոց ձորը[509] և շրջակա մյուս տեղերը, [որոնք պատկանում էին] Վասակին, Աշոտին ու սրա որդիներ Սմբատին, Սահակին, Բաբկենին, Վասակին և սրա որդի Փիլիպեին։

Ուրեմն այսպես. ինչպես վերև ասացինք, Մարիամը կառուցում է Սևանի եկեղեցիները[510], հետո էլ Շողվագինը[511]։ Իսկ Սուփանը[512] շինում է հոգևոր հոտի զարմանակերտ փա-

բախը[513] Կոթ գյուղաքաղաքում[514]՝ սուրբ Աստվածածնի անունով. պարսպում է ահագին վեմերով, զարդարում մեծամեծ սպասքներով ու նրա մեջ կրոնավոր-սպասավորների դասեր է նշանակում: Մեծ բազմութեամբ նավակատիք[515] անելով՝ նա խնդրում է կաթողիկոսին[516], եպիսկոպոսներին և իրենց իսկ Տեր-Հովհաննես եպիսկոպոսին[517] իր հիշատակի համար բոլոր եկեղեցիներում երեք քառասունք՝ խաղաղ ժամի նեղութեան կանոնը[518] և առավոտյան սաղմոսը[519], որը և սահմանեցին նրա մեծ և բազում երախտիքների համար: Եվ նա սուրբ եկեղեցու վրա հիշատակի արձանագրութիւն է փորագրում, որի պատճենն այս է[520]. «Ինձ՝ Սուփանիս համար քրիստոնեական հոգևոր հիշատակարան հաստատեցի Կոթ գյուղաքաղաքում, իմ նախնիների նստավայրում, որը նախքան այս բաղում գանձերի ծախսումով ու շատ չարչարանքով շրջափակել էին պարիսպներով: Իմ նախնիներից դաս առած լինելով՝ հետագայում աստծու կամքով շինեցի տիրոջ տունն ու Հակոբ աստծու հարկը՝ սրբուհի Տիրամայր-Աստվածածնի անվամբ, սրբատաշ, կոփածո քարերով, սրա մեջ՝ վերևում և ներքևում ութ սենյակներ: Եվ ապա այս սուրբ տաճարում քահանաներ նշանակեցի ու զարդարեցի. Աստվածածնի [և] իմ նախնիների քահանաներին ու բաղում այլ սպասավորների ազատեցի արքունական ծանրութիւնից և բեկարից[521]: Հատկացրի հողեր ու ջրեր. յուրաքանչյուր քահանայի տվեցի տարեկան հիսուն դրամ, որը հնգապատիկ է դառնում: Սահմանեցի չորս քառասունք, նեղութեան կանոնի սաղմոսը[522] և առավոտյան սաղմոսը[523], որպեսզի որքան մարմնավս գոյութեան ունեմ, կյանքիս հաջողութեան, իսկ մեղավոր կյանքիս վախճանից հետո՝ իմ հոգու համար կատարեն: Յուրաքանչյուր տարի այս քահանաներից ամեն մեկը չորս քառասունք պիտի կատարի ինձ համար: Եվ արդ՝ եթե մեկը ձեռք զարկի սրան ու ջանա քահանաներից հափշտակել իմ հոգեբաժին հողերը և այլ նվերները կամ նեղութեան մեջ գցի քահանային, որին ես ամեն բանում ազատեցի, [լինի] կա՛մ իմ տոհմից, կա՛մ վանականներից, կա՛մ այլ ավագներից՝ մեզանից հետո, այնպիսինի անունն ու հիշատակը թող վերանան երկրից, նա թող դատապարտյալ ու ամոթալից լինի Քրիստոսի ահեղ ատյանում, թող բաժին ընդունի Կայենի,

Հուդայի ու Քրիստոսի [այլ] ուրացողների հետ և դատաստանի օրը հաշիվ տա իմ մեղքերի համար, ժառանգի անշեջ հուրն ու հավիտենական տանջանքները: Եվ եթե դուք՝ քահանաներդ, երբևէ անուշադրութեան մատնեք ու մոռացութեան տաք շարադրվածը և կամ ծուլանաք սահմանված քառասունքների [կատարման] մեջ, տեր աստված թող դատապարտի ձեզ, և դուք զավակներով ու տոհմով հանդերձ տիրապետական քահանաների հետ բաժին ունենաք»:

Բացի դրանից, հրաշակերտ մենաստանում՝ Մաքենոցաց փառաբնակ վանքում շինում է և երկնասլաց հավաքատեղին՝ գմբեթահարկ եկեղեցին[524], սուրբ Աստվածածնի անունով, պարսպում է վեմերով և, ուրիշ շատ կառուցումներ անելով, այն անխնա գանձերով զարդարում է, հարստացնում շատ ունեցվածքներով, գյուղերով, ագարակներով, ինչպես և այգիներով՝ Գառնիում, Երևանում և այլ տեղերում: Այնտեղ իր հուսառատ գործերի հիշատակին արձանագրութիւն է կատարում, որի պատճենը սա է[525]. «Աստծու կամքով ես՝ Սուփան Սյունյաց իշխանս, շինեցի Մաքենոցաց այս եկեղեցին և անխնայաբար զարդարեցի պատվական սպասքներով ու աստվածային կտակարաններով: Մեր սեփական տեղն էլ, որ եկեղեցուս անունով Աստվածածին[526] է կոչվում, սրան տվեցի իր բոլոր սահմաններով, լեռնով ու դաշտով: Տվեցի ձկնեղի որս՝ Բողաշեն սեղանից[527], յոթ հարյուր դրամ Դեղձանագետի[528] վարձակալութիւնից, երկու հարյուր դրամ Կաթիկից[529], երեք հարյուր հիսուն՝ Անմեռից[530], որ լինում է հազար երկու հարյուր հիսուն դրամ: Տվեցի հինգ կրպակ Անիում, հինգ այգի Երևանում, հինգ հարյուր առու այգի Գառնի գյուղաքաղաքում, երկու այգի Եղեգիսում: Եվ սուրբ միաբանութեան բոլոր կարիքները բավարարեցի առատապես, փարթամացրի ներքուստ և արտաքուստ: Տվեցի եզների ու արջառների խմբեր՝ նախիրներ ու ոչխարների հոտեր: Եվ արդ խնդրում ենք[531] բոլոր սպասավորներիդ աստվածացած այդ սուրբ ուխտի, որին աստված է միջնորդ, մեղավոր հոգուս համար երկու քառասունք տերունի պատարագ և անխափան երգել երեկոյան սաղմոսը՝ նեղութեան կանոնը, և առավոտյան սաղմոսը, որ սահմանել եմ բոլոր եկեղեցիներում: Հայոց կաթողիկոս Տեր-Հովհաննեսը[532] թող իրավունք

չվերապահի այս տան նկատմամբ դատ կամ վիճաբանություն բանալ, ոչ էլ իմ որդիներից կամ վանականներից որևէ մեկի նկատմամբ, այլ ով նվիրատվությանս հակառակվի կամ ձրգտի հափշտակել՝ կեղծ անվանակոչությամբ, թող չարաչար նզովվի աստծու և սուրբ Գրիգորի բոլոր աթոռակալների կողմից և մատնիչ Հուդայի հետ բաժին ունենա։ Դարձյալ ձեզ հետ եմ խոսում, այս վանքի առաջնորդնե՛ր ու կրոնավորնե՛ր, հաստատուն կացեք մինչև Քրիստոսի գալուստը։ Եվ ինձ համար քարոզելն ու սաղմոսելն անխափան թող լինի։ Իսկ եթե որևէ մեկը ծուլանա տարեցտարի քառասնօրյա մեղաքավիչ սուրբ խորհուրդը կարգալուց՝ այս կյանքից իմ հեռանալուց հետո, Քրիստոսից բաժանված լինի, կախարդ Սիմոնի հետ բաժին ընդունի և սուրբ ժողովներից նզովված լինի։

Շինեցի նաև եկեղեցին Կոթ գյուղաքաղաքում, այնտեղ էլ՝ ութ սենյակ՝ նվիրաբերելով տիրոջ տանը, որը շինեցինք։ Եվ Աստվածածնի քահանաներին ազատեցինք արքունի ամեն հարկից, նրանց հետ էլ՝ եկեղեցու ուրիշ սպասավորներին, որոնք քահանայական դասից են»։

Ահա հենց սա էր Մաքենոցաց [վանքի] արձանագրությունը։ Սակայն հնացած և քարերը խախտված լինելու պատճառով չկարողացանք ամբողջն իմանալ. իշխանների գործերի ու նվիրատվությունների մասին շատ բան է պակասում։ Շատ թե քիչ սա դրեցինք, որ նրանց հիշատակը բոլորովին չջնջվի ու կորչի։ Այս ամենը կատարվեց երեք հարյուր թվականից մինչև երեք հարյուր հիսունը[533]։

Իսկ Գրիգորի եղբայր Սահակը Նորատուք գյուղում[534] կառուցում է [եկեղեցու] պանծալի շենքը՝ թանկարժեք կառուցվածքով, և այնտեղ է հաստատում քահանաների բազմություն։ Նրա բակում էլ հենց ինքն է թաղված տապանում։ Բարի նախանձով սրան նախանձելով՝ Շապուհ Բագրատունին[535]՝ Մարիամի եղբայրը, իր քրոջ միջոցով կառուցում է աստծու գլխավոր տունը՝ սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով, Վանևանց ձորակում, որ այժմ կթանոց է կոչվում[536]։ Այն պայծառորեն զարդարում է ու միաբանների կարիքների համար բազում նվիրատվություններ անում և հաստատում կրոնավորների տուն, որի հիշատակագիր արձանագրությունն այս ձևով է[537]. «Հանուն աստծու ես՝ Շապուհ Բագրատունիս, հայոց սպարապետս, իշխանաց իշխանս, հայոց թագավոր Աշոտի[538] որդիս, հայոց թագավոր, իմ հարազատ եղբայր մեծ Սմբատի[539] և վերադիտող հայոց հայրապետ Տեր-Հովհաննեսի[540] ժամանակ իմացա ու հասկացա, որ ամեն փառք ու մեծություն վերջանալու են ու վաղ կորչելու, մեծափափագ տենչանքով վերակացու և տեսուչ դարձնելով իմ քույր Մարիամին[541]՝ Սյունյաց տիկնոջը, իր իշխանության մեջ [մըտնող] վանեվանաց վանքում աստծու տուն կանգնեցրի՝ սըրբատաշ ու կոփածո քարերով, շատածախս գանձերով ու մեծաջան չարչարանքներով կատարելով. թերևս լինի ինձ ողորմություն այն օրը, երբ խոսքերը կվերջանան, և գործերը կթագավորեն։ Եվ հանձնեցինք[542] քեզ, Վանեվանաց վանական հայր Աբրահամ[543], ինչպես և քեզանից հետո հաջորդող մյուսներին՝ աղոթելու և վայելելու։ Եվ տաճարի սպասավորներդ երբ հավաքվեք համատեղ աղոթքի ու կերակրվեք անմահական կերակրից, հիշեցե՛ք ինձ ու իմոնց, որ ողորմած աստված ողորմություն անի։ [Տվեցի] նաև հինգ[544] գյուղերի սահմանի[ները]՝ Կոթաքարի, Աղաբո վանքի, Շավառնահողի, Գետամեջի, Կթանոցի[545], [այլև]՝ Գետավանաց ծովը[546], երկու հարյուր վաթսուն դրամ Կոթաքարից, հինգ հարյուր երեսուն՝ Բոտելեցից[457], վեց հարյուր վաթսուն՝ աղիբողանքից[548], ինն հարյուր իննսուն՝ Կարբիի գետերից և նավերից[549]։ Ոչ ոք չի համարձակվի սրան հակառակվել։ Իսկ եթե որևէ մեկը հանդգնի, երեք հարյուր տասնութ հայրապետներից նզովված լինի և Հուդայի մասն ու բաժինն ստանա[550]։ Հայոց երեք հարյուր հիսուներկու[551] թվական»։

Այստեղ գերեզման[ներում] թաղված են աստվածակիր Տեր-Սողոմոնը, Տեր-Աթանասը[552] և Սմբատ Բագրատունին[553]։ Ապա և որոշ տարիներ անց Աշոտ շահնշահի որդի Գագիկը[554] նորոգում է Վանեվանաց հրաշակերտ սուրբ կաթողիկե եկեղեցին ու նրան է նվիրում Դեղձանագետը[555]. եկեղեցին պարսպապատում է, նզովքի արձանագրություն է կատարում, որ ոչ ոք այն չհափշտակի սուրբ եկեղեցուց։

Ահա այսքանը քեզ տեղեկություն մեր իշխանների գովելի գործերի, եկեղեցիների շինարարության ու նրանց ժառանգության մասին։ Եվ ոչ միայն այս, այլև բազմաթիվ ուրիշ եկեղեցիներ էին շինվել Սիսական աշխարհում ու Այրարատ-

յան նահանգում[556], Բայց Սյունյաց տերության գահագլուխ մեծ իշխաններ Աշոտն ու իր որդի Սմբատը և ուրիշները եկեղեցիների շինարարության մեջ մեծամեծ ու շատ, բոլոր տեսնողներին զարմացնող գործեր ցույց տվեցին, որոնց հանգամանքները հետո կարգով պիտի պատմեմ։ Այժմ կրկին պիտի խոսեմ իշխանների կարգի ու այն մեծամեծ աղետալից անցքերի մասին, որ մեր աշխարհում տեղի ունեցան անիծյալ Յուսուփի կողմից։

ԼՐ

ՅՈՒՍՈՒՓԻ[557] ԳԱԼԸ ՄԵՐ ՍԻՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ. ՄԵՐ ԳԱՎԱՌՆԵՐԻ ԿՈՂՈՊՈՒՏՆ ՈՒ ԿՈՏՈՐԱԾԸ. ԻՇԽԱՆՆԵՐԻ ՓԱԽՈՒՍՏԸ. ԱՇԽԱՐՀԱՈՂՔ ՏԱԳՆԱՊԸ, ՀՐԿԻԶՈՒՄԸ, ՀՐԴԵՀՈՒՄԸ՝ [ԱՌԱՋԱՑԱԾ] ԵՐԿՆՔԻՑ ՏԵՂԱՑՈՂ ԲԱՐԿՈՒԹՅԱՄԲ. ՍՄԲԱՏ ԹԱԳԱՎՈՐԻ ՄԱՐՏԻՐՈՍԱԿԱՆ ՄԱՀԸ[558]. ԳԵՐՎԱԾՆԵՐԻ ՈՒ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ. ԶՐՈՒՅՑՆԵՐ, ՈՐՈՆՑ [ՊԱՏՄԱԾ ԱՆՑՔԵՐԸ] ԶԳՎՈՒՄ ԵՆ ՀԱՅՈՑ ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆԻՑ[559] ԴԵՊԻ ԱՅՍ ԿՈՂՄ

Այն ժամանակ Յուսուփը, ապստամբված լինելով իր ամիրապետի դեմ, կամենում էր բախվել նրա հետ։ Դրա համար ամիրապետը պատգամ է հղում Սմբատ Թագավորին՝ մեծ զորքով գնալ Յուսուփի վրա, Ատրպատական[560]։ Սմբատն էլ դա կամեցավ կատարել, ուստի զորք գումարեց և ծածուկ կերպով իրողության մասին տեղեկացրեց Յուսուփին։ Բայց նա չհավատաց այդ մտերմությանը և իր մտքում դաժան վրեժխնդրություն էր պատրաստում [նրա դեմ] ու աչք պահած սպասում հարմար ժամի։ Ապա հնարավոր միջոցներ ստեղծելով ու հաշտվելով ամիրապետի հետ՝ իր իրավունքին է ենթարկում նաև հայերին. զորք է գումարում, պատրաստություն տեսնում գալիք գարնանը մեր Հայոց աշխարհն արշավելու համար։ Այդ օրերին Սյունի մեծ նախարար և գահերեց իշխան[561] Աշոտը[562] բազում քաջություններից, մեծամեծ ու երևելի գործերից՝ այնքա՜ն բարեպաշտություններից, աշխարհի, եկեղեցիների ու վանքերի կառուցումներից հետո վախճանվեց։ Իսկ նրա կինը՝ բարեպաշտուհի, կանանց մեջ անհամեմատելի Շուշանը, նրա դին զարդարեց արքունական

ձևով. և աշխարհաժողով բազմությամբ, դամբանական փառերով, ողբերգու քնարահարներով տարան, թաղեցին Տաթև եպիսկոպոսարանում, այն եկեղեցու բակում, որն իր հրամանով կառուցել էր Տեր-Հովհաննեսը։ Նրան սգալու եկավ Սմբատ Թագավորը՝ Հայաստանի բոլոր իշխաններով հանդերձ. և մեծ ողբով լաց լինելով՝ մխիթարեցին նրա տիկնոջն ու որդիներին՝ Սմբատին, Սահակին, Բաբկենին և Վասակին։ Սմբատին էլ նշանակեցին Սյունիքի գահագլուխ իշխան և տեր՝ ամբողջ Սիսական աշխարհի վրա։ Իսկ և իսկ, հենց որ գարունը բացվեց, փչեց դառն քամին, և ցոլաց հարավային բոցը մեր աշխարհում. իր որջից դուրս եկավ վանդակազերծ գազանը և կատաղի շունը՝ Յուսուփը, որը կամենում էր կլանել ամբողջ Հայաստանը։ Պասեքի օրերին[563] հասնելով Նախիջևան քաղաքը և ասպատակելով՝ ուզեց ջնջել Սյունիք նահանգը[564] ու իշխաններին բռնել։ Իսկ Սյունյաց գահերեց իշխան Սմբատը, հավաքելով եղբայրներին ու ազգականներին, իր իշխանության ամբողջ ազատագունդ զորքերը, դուրս եկավ արաբական զորքերի դեմ, բռնեց ճանապարհների անցքերն ու կիրճերը։ Այդպես շատերին կոտորեցին։

Բայց քանի որ աստծու խնամքը հեռացել էր, և [աստված] ուզում էր մեզ [փորձության] մատնել, ոչինչ չօգնեց, և [մերոնք] չկարողացան դիմադրել. Սմբատն իր մայր Շուշանին, իր կին Սոփիին, որը Դերենիկի[565] դուստրը, Վասպուրականում թագավորող Գագիկի[566] քույրն էր, մի փոքրիկ, ծծկեր տղայով, և իր եղբայր Սահակի կնոջը, որ Գուգարաց բդեշխի դուստրն էր, [եղբոր հետ] տարավ, ամրացրեց Երնջակի անառիկ ամրոցում[567]. իսկ իրենք փախուստի դիմեցին։ Սմբատը գնաց Վասպուրական, իր աներ[568] Գագիկի մոտ, Սահակը՝ Գուգարք, իր աներոջ մոտ։ Բայց Բաբկենն ու Վասակը մնացին այնտեղ։ Գրիգոր Սուփանն ու իր եղբայրները մնացին իրենց տեղերում՝ ամրացած լեռների կատարներին ու ժայռերի ծերպերում։ Իսկ անիծյալ Յուսուփն այդ իմանալով ասպատակ սփռեց ամբողջ նահանգում և հավաքեց կողոպուտ ու գերի բռնեց բազմաթիվ մարդկանց, որոնց նույն ժամանակ գտավ։ Նրանցից պիտանիներին ու ավելի գեղեցիկներին ընտրեց, գերության քշեց, մյուսներին սրի ճարակ դարձնելով՝ կոտորեց։ Սա տեղի ունեցավ սուրբ

զատկի տոնի օրերին։ Եվ անհամար սպանվածների արյունը խառնվեց մեր փրկիչ Հիսուսի փրկական արյանը, որ այն օրը թափվեց խաչի վրա։ Նրանց մարտիրոսական պսակը պահպանվում է։ Սա կատարվեց հայոց երեք հարյուր հիսունութ[569] թվականին։

Անիծյալ Յուսուփը, այս բոլոր ոճրագործությունները կատարելով, տասներկու գիշեր այստեղ անցկացնելով, անցավ, գնաց Դվին քաղաքը և հսկայական բանակներով նստեց Երասխ գետի ափին։ Այնուհետև, երբ փրկության ամեն մի հնար վերջացել էր և ոչ մի տեղից [օգնության] ակնկալություն չկար, Սյունյաց իշխան Գրիգոր Սուփանը եկավ Յուսուփի մոտ՝ անձնատուր լինելու, որպեսզի դրանով հնարավոր լինի զերծ մնալ վերահաս չարիքից։ Յուսուփը նրան տեսնելով գոհունակությամբ ողջունեց և անմիջապես ընդունեց պատվով, [բայց] արտաքուստ։ Նրա ազգական կտրիճ Վասակը, տեսնելով և իմանալով, որ Գրիգորը պատվի արժանացավ ու չվնասվեց, ինքն էլ գնաց Յուսուփի մոտ՝ անձնատուր լինելու։ Յուսուփը նրան իսկույն ընդունեց, բայց քիչ ժամանակ անց բանտ նետեց Դվին քաղաքում, որը և այնտեղ մնաց մեկ տարի։ Իսկ անիծյալ Յուսուփը Սմբատի[570] դեմ ամբողջ տարին բազմաթիվ ճակատամարտեր էր կազմակերպում՝ նրան որսալու համար, բայց չէր կարողանում։ Եվ սա եղավ ապստամբությունից [հայոց] այն իշխանների, որոնք պառակտվեցին մեկ միասնությունից՝ դատարկ հույսով և մեծ խավար բերեցին և՛ իրենց, և՛ մեր Հայոց աշխարհին։ Նկատի ունեմ մանավանդ Գագիկ Արծրունուն, որը թագավորեց Վասպուրականին՝ հատկապես միացած լինելով Յուսուփի հետ՝ մի չնչին պատճառով. չէ՞ որ նա Սմբատ թագավորից պահանջեց Նախիջևանը վերցնել Սյունի Սմբատ իշխանից ու հանձնել իրեն, իսկ նա չհամաձայնվեց, որովհետև այն բուն հայրենիք էր։ Հենց դրա համար [Գագիկն] ապստամբվելով՝ գնաց Յուսուփի մոտ և թագադիր լինելով ուզեց թագավորել Հայոց աշխարհի վրա։ Ապա Յուսուփի մոտ է գալիս նաև Սմբատ արքայի եղբորորդի Աշոտը[571] և ենթարկվում նրան։ Յուսուփը պատերազմում[572] բռնում է և Սմբատի որդի Մուշեղին։ Եվ այսպես խրոխտացած, գոռոզացած՝ խիստ փքվածությամբ գալիս է Դվին՝ իր հետ ունենալով Գրիգոր Սու-

փանին։ Ապա ինչ-որ կասկածանքի պատճառով բացահայտորեն չէր կարողանում դավել Սյունյաց մեծ իշխանին ու շրջանակ մահ էր խորհում, որի համար գաղտնապես նրան մահու թույն է մատուցում. և այն ողողում է նրա ստամոքսը, ու նա տագնապով շունչը փչում է։ Գագիկ թագավորը և Աշոտ Բագրատունին նրա մոր՝ Մարիամի ու եղբայրների՝ Սահակի և Վասակի հետ սգալով նրան՝ վերցրին, տարան ու դրեցին տապանի մեջ, իր ձեռքով կերտված սուրբ Շիմոնի սրբատաղում։ Այս ձևով էլ նույն մահու թույնը խմեցրեց Մուշեղին ևս, որին տարան Տարոն և դրեցին իր նախնիների մոտ։ Նույնպես և Սմբատին՝ Սմբատ թագավորի եղբորորդուն, սպանեցին։ Իսկ գեղասլաց պատանի, կտրիճ Վասակը՝ Սյունյաց տեր Սմբատի եղբայրը, որ անիծյալ Յուսուփի չար կամքին չենթարկվելու պատճառով բանտ էր նետված ավելի քան մեկ տարի, մի օր, երբ մութն ընկավ, օգնության կանչելով վերին կամքը և երեսը խաչակնքելով՝ ասաց. «Օգնեցե՛ք ինձ, Սյունյաց եկեղեցիներ»։ Վերցնելով պողպատի սուրն ու գործի դնելով՝ պահապաններին դիաթավալ արեց։ Ինքն էլ, բավական տարածություն վազելով, կախվեց պարսպից ու իջավ։ Եվ քանի որ նրա ծառաները [նախօրոք] ձի էին պատրաստ պահել, հեծավ այդ երիվարն ու փախավ։ Ապա պահակների ճիչն ու զինվորների ձայնը մինչև կուժեղանային, մինչ այս, մինչ այն՝ նա ընկավ այգիների միջնակները, այլ և այլ ճանապարհներով անցավ, գնաց իր երկրի ամուր տեղերը։ Այստեղ էլ այնուհետև Սյունյաց հայկազուն իշխանները՝ Սուփան անվանված Գրիգորի եղբայրներ Սահակն ու Վասակը, իրենց մոր՝ երանելի տիկին Մարիամի հետ իրենց կյանքի [փրկության համար] հնար որոնելով ու սրտապնդվելով, ուզեցին պոկվել անօրենի ձեռքից և փախչել, ընկնել իրենց աշխարհի ամուր տեղերը, բայց տարադիր չդառնալ՝ մինչև անցնի աստծու բարկությունը։ Եվ արագաշարժ նավակներով գնացին, ամրացան Սևանա կղզում։ Յուսուփն այս լսելով՝ նրանց հետից զորք ուղարկեց, որը եկավ և նստեց կղզու դիմաց, [լճափին]։ Իսկ նրանք վախենալով, որ թերևս այդ չար մարդկանց ստեղծած հնարավորությամբ իրենց հարազատ փոթորկահույզ [լճի] զնդանում բռնվեն, այնտեղից դուրս գալով՝ գիշերը շատ նավակներով անցան այն կողմը

և գնացին Միափոր ամուր գավառը։ Այդ իմանալով՝ զորքը նրանց հետապնդեց, բայց նախ մտնելով կղզին՝ ամեն ինչ կողոպտեց։ Ապա իշխանները, տեսնելով եկած-հասած հրոսակներին, ետ դարձան, հույժ քաջությամբ շատերին կոտորեցին, ուրիշներին էլ փախուստի մատնեցին, իսկ իրենք անցան գնացին Գարդմանի ու Արցախի ամուր աշխարհը և մնացին այնտեղ՝ վերին օգնությունն ակնկալելով։ Եվ հենց այնտեղ էլ թափառականության ու պանդխտության մեջ վրա հասավ երանելի տիկին Մարիամի՝ իրենց մոր վախճանը։ Նրան խնկելով ու զմռսելով՝ դրեցին փայտե տապանի մեջ, մինչև նախախնամության գթության և իրենց հայրենի տերությունը վերադառնալու օրը՝ նման Հովսեփի ոսկրերին, որ իսրայելացիների հետ Եգիպտոսում էին և նրանց կողմից բերվեցին Ավետյաց երկիր[573]։ Իսկ երբ իշխանները վերադարձան, իրենց մորը շատ շքեղ պատվով բերեցին ու խիստ բազմամարդ հանդեսով գերեզման դրեցին իր կառուցած Շողվագա եկեղեցու մոտ[574]։

Իսկ անհծյալ Յուսուփը, քիչ օրեր անց դուրս գալով Դվինից, կրկին անգամ մտածեց ձեռք գցել Սմբատ արքային, որն ամրացել էր Աշորնյաց ձորում[575], Կապույտ կոչված բերդում[576]։ Նա երդմամբ հնարամտում ու [այնտեղից] արքային դուրս է հանում, վերցնում, գալիս է Դվին, դնում երկաթի դաժան կապանքների մեջ՝ լիովին դեն նետելով իր չարության պատրվակի քողը։ Ապա նրան վերցրած գալիս է կրկվելու Երնջակի անառիկ ամրոցի դեմ, որտեղ էին գտնվում Սյունյաց պատվական տիկիններ Շուշանն ու Սուփին և բազմաթիվ ուրիշ ազնվական կանայք ու տղամարդիկ։ Շատ օրեր սաստիկ մարտ է մղում բերդի դեմ։ Զանազան միջոցներով օր ավուր խստացնում էր մարտը, բայց ոչինչ չէր օգնում։ Դրանից կատաղած՝ թագավորին բերել է տալիս բերդի դիմաց և զանազան կտտանքներով չարչարում է ու հրամայում. «Ասա՛, որ բերդը հանձնեն»։ Իսկ նա իմանալով, որ [միևնույն է]՝ այդ չարից պրծում չկա, ոչինչ չէր խոսում։ Ուստի և այնտեղ Սմբատ սուրբ թագավորին գերմարդկային սարսափելի տանջանքներով սպանեցին և հրամայեցին տանել Դվին ու մեռած մարմինը կախել փայտից։ Այսպես նրա նահատակությունը լուսաճաճանչ փայլեց բարձունքից։ [Նրա սըր-

բությամբ] մեծ բժշկություններ եղան, և շատերը քրիստոնյա դարձան։ Սա տեղի ունեցավ հայոց երեք հարյուր վաթսուներկու թվականին[577]։

Անհծյալը, այսպիսի մեծ ու հանդուգն ոճիր գործելով, [դեռ] չհագեցավ չարիքներից, այլ հենց այն ժամանակ ուզում էր իր թույնը թափել բերդում եղած գաղթականների վրա։ Այդ պատճառով այնտեղից չհեռացավ, մինչև որ գիշերը գողունի բերդը գրավեց՝ երկաթե ճանկերի հարմարեցումով անմատչելի ժայռերը մագլցող՝ անձավամուտ ու քարագնաց մարդկանց միջոցով։ Թեպետև գրավեց, բայց ոչ մարդկանց հնարամտությամբ, այլ աստված էր ուզում կործանում բերել և այդպես էլ արեց։ Ապա բացելով բերդի դռները՝ հանեցին փառավոր տիկիններին՝ կուտակված բազում գանձերով։ Այնտեղի բնակիչներին էլ սրակոտոր արեցին, իսկ մեծ բարեպաշտուհի տիկին Շուշանին՝ Աշոտի կնոջը, Սմբատի ու մյուսների մորը, և Սուփիին՝ Սմբատի կնոջն ու Գագիկ Բագավորի քրոջը՝ մի տղայով, Սահակի կնոջը՝ ուրիշ ազնվական կանանց հետ, քշեցին որպես գերիների, տարան Դվին ու բանտարկեցին խավարչտին բանտի նեղ որջում։ Այնտեղ պետք էր տեսնել ողբալի վիճակը փափկասուն ու արքայազուն կանանց, որոնք անգամ ջուր ու ցամաք հաց չէին գտնում՝ հագենալու համար, ոչ էլ խոտեղեն գետնախշտի անկողին՝ փետրալի հաճելի անկողնու և ոսկեթել գահավորակների փոխարեն։

Այս սարսափելի [իրողության] գույժը լսելով՝ Սմբատը՝ Վասպուրականում և Սահակը՝ Գուգարքում, ճիգ ու ջանք գործադրելով շատ ձգտեցին ազատել գերիներին, [բայց] չկարողացան։ Իսկ այն ժամանակ ամենաբարեպաշտ, խորհրդավոր ու իմաստուն տիկին Շուշանը այն բանտում գոհությամբ, [բայց] խղճալի մահով մեռավ, նրա հետ էլ՝ Սուփիի ու Սմբատի փոքրիկ ծծկեր մանկիկը։ Պահապանները բանտից հանելով [նրանց] դուրս նետեցին, որոնց քահանաները և սպասավորները վերցրին, իբրև ինչ-որ օտարականի [դի], տարան, թաղեցին այն եկեղեցու բակում, որը Սերգե նահատակի անունով կանգնեցրել էր Ներսես Շինողը։ Իսկ երկու տիկիններին՝ Սմբատի ու Սահակի կանանց, [արաբները] տարան Պարսկաստան, Ատրպատական և իրենց ամրոցներում բանտարկեցին։

Այսքան անցքերից հետո Սմբատի եղբորորդի Աշոտը[578] սպարապետության պաշտոնում էր, իսկ իր որդի Աշոտը[579] փախուստի մեջ էր բյուզանդական կայսեր մոտ։ Ռոմանոս կայսրը սրան թագադրելով ուղարկեց Հայաստան։ Դրանից սպարապետ Աշոտը զայրացավ, և [նրանք] ուզում էին սաստկությամբ կռվել միմյանց դեմ, բայց մեծ կաթողիկոս Հովհաննեսը համոզեց ու խաղաղեցրեց, և մեր երկիրը մի փոքր շունչ քաշեց Յուսուփի ավազակային հարձակումներից։

Այն ժամանակ Սյունի մեծ իշխան Սմբատը Վասպուրականից եկավ արքայորդի Աշոտ թագավորի մոտ, որին սա մեծ պատվով ընդունեց ու տեսակ-տեսակ փառքերով շքեղացրեց։ Եկավ նաև Գրիգոր Սուփանի եղբայր Վասակը։ Աշոտը նրան էլ խնդությամբ ընդունեց ու արժանացրեց իր տերությանը։ Կարճ ժամանակ անց իրենց բնիկ աշխարհը՝ Սյունիք, եկան նաև փախստականներ Սյունյաց տեր Սահակը, Բաբկենն ու Վասակը՝ Սմբատի եղբայրները։ Սմբատն այդ լսելով՝ թուլլտվություն է ստանում արքայից ու վերադառնում Արագած լեռնից[580], գալիս, գտնում է իր եղբայրներին, որոնք շատ են ուրախանում։ Նրանք տեսնում էին իրենց արքունական ապարանքները քանդված, եկեղեցիներն ավերված, մեծամեծ ավանները և գեղեցիկ դաստակերտները անբնակ անապատների վերածված, ցորենի ամբարները դատարկված ու գինու հորերը խափանված։ Նրանց մեջ քիչ սուգ, տրտմություն ու արտասուքի հեղում չեղան՝ առավել ևս գերի տարված տիկնանց համար։ Մինչ այսպես վարանած էին, եկան նաև նրանց կանայք՝ Յուսուփի դաժան գերությունից ազատված աստծու գթությամբ։ Դրա համար մեծապես ուրախանալով՝ խիստ գոհունակություն մատուցեցին նրանց պարգևող աստծուն։ Այնուհետև ողբ ու սգի փոխարեն մեծ ցնծություն էր լինում նրանց մեջ։ Եվ շուտափույթ կերպով նրանց ապարանքների ամբողջ ավերածությունը [վերացվեց], և առաջվա նման լիակատար շենության հասան նրանք։ Իսկ Սահակը՝ Գրիգորի ու Վասակի եղբայրը, եկավ Գեղարքունիքի իր հայրենի կալվածքը։ Կարճ ժամանակ ապրելով՝ վախճանվեց և թաղվեց իր կառուցած դամբարանում, Նորատուքի մեծ եկեղեցու[581] դռանը։

Սրա եղբայր Վասակն էլ քիչ օրեր անց վախեցավ հայոց երկփեղկված թագավորությունից, որին տիրում էին երկու Աշոտները և միշտ բորբոքվում էին՝ միմյանց դեմ պատերազմելու։ Արքայորդի Աշոտից կասկածի ենթարկվելով՝ նրա մոտ չգնաց. մեկ [այն պատճառով], որ մյուս Աշոտը՝ Շապուհի որդին, սիրում էր իրեն, մեկ էլ՝ որ փեսա էր Վրաց բդեշխ Գուրգենին, իսկ Գուրգենը հակառակ էր Աշոտ [արքայորդի թագավորին]։ Ապա Հովհաննես կաթողիկոսին մեջ դցելով՝ հաշտության երդմնագիր է խնդրում, որպեսզի նրա հետ համարձակ ու անկասկածելի լինի, որը և Աշոտ [արքայորդի] թագավորը տալիս է՝ հարգելով իր նկատմամբ նրա [արտահայտած] ցանկությունը։ Վասակը, այդ երդմնագիրը վերցնելով կաթողիկոսի ձեռքից, գնում է Աշոտի մոտ և անկեղծորեն ու մտերմաբար ընդունվում նրա կողմից՝ որպես սիրելի համախոհ։ Իսկ հետո Աշոտը մոլորեցվում է ոմանց կողմից, որոնք ասում էին, թե Վասակին ուղղված թուղթ է գտնվել մի սուրհանդակի մոտ՝ գրված մյուս Աշոտի ու Գուրգենի՝ Վասակի աներոջ կողմից, լի քեզ վերաբերող ամենայն չար խորամանկությամբ։ Այդ պատճառով Վասակին բռնելով՝ երկաթի կապանքներով դնում է Կայենի ամուր բերդը[582], թեպետև կաթողիկոսը, թագավորի մոտ շատ միջոցներ գործադրելով, ջանում էր նրան ազատել, [բայց թագավորը] չէր լսում՝ ինչ-ինչ պատճառաբանություններ բերելով։ Ապա որոշ օրեր անց բռնությամբ ազատվեց Զորագետի[583] և Գարդմանի իշխան Սահակի[584] ձեռքով և ուղարկվեց իր տուն, Գեղարքունիք գավառը, քանի որ հենց նա էր իրենց ժառանգական բաժինը մեր Սիսական աշխարհում։

Այս դեպքերից հետո Սյունյաց մեծ իշխան Սմբատը և նրա երեք եղբայրները, ցասկոտ սրտով դժկամելով այն ժամանակ Դողթան գավառին բռնակալաբար տիրող ամիրայից, պահանջեցին իրենց սեփական տիրույթները՝ Երնջակի բերդն ու շրջակա գավառները, որոնք Յուսուփը նրան էր վստահել, բայց Դողթնի ամիրան չկամեցավ տալ, այլ ասաց. «Արքունուստ հենց ինձ են պարգևված»։ Սմբատն այդ լսելով դորք է գումարում՝ ահավոր սաստկությամբ պատերազմելու համար՝ իր հետ բերելով նաև սկյութացի թուրքերին, որոնք վրաններով բնակվել էին իր նահանգում։ Եվ ամիրան էլ ել-

նում է նրանց դեմ. երբ բախվում են միմյանց, հագարացին պարտվում էր։ Ապա այն ժամանակ թուրք զինվորները, որ ձախ կողմից Վասակի թիկունքում էին, միմյանց հետ դիվային խորհուրդ անելով՝ միասնաբար հարձակվեցին Վասակի վրա, դիաթավալ գետին գլորեցին և ուղղության վերցրած փախան Նախիջևանի կողմերով։ Իսկ գեղեցիկ երիտասարդի դիակը ճակատամարտի տեղից վերցնելով՝ նրա եղբայրները անսահման ողբերով, բարձրագոչ աղաղակներով տարան, դրեցին իր հոր՝ Աշոտի մոտ և վրան մեծ լաց ու կոծ արեցին։

Բայց այժմ պիտի պատմեմ նաև Յուսուֆի մասին։ Մեր Հայոց աշխարհի նկատմամբ այս բոլոր ոճրագործությունները կատարելուց հետո նա գնաց Ատրպատական և սկսեց ըմբոստանալ ամիրապետի դեմ։ Իսկ սա, իմանալով Յուսուֆի խորամանկությունը, մեծ զորք է հավաքում ու մի հավատարիմ մարդու զեկավարությամբ ուղարկում Յուսուֆի մոտ։ Նրան բռնելով ծանր կապանքներով բերում են ամիրապետի մոտ։ Իսկ սա շատ ծեծելով նրան կապանքներով նետել է տալիս մթին, նեղ, խոնավ ու ցեխոտ բանտը։ Եվ որոշ տարիներ այնտեղ մնալուց հետո իրենց չար օրենքի մի գլխավոր մարդու միջնորդությամբ կալանքից ազատվեց ու վերստին ուղարկվեց նույն գահին իշխելու։ Նրան հանձնարարվեց Հայաստանի հարկահանությունը։ Եվ նա գալով Վասպուրական [կրկին] գնաց Ատրպատական ու Հայաստանի վրա ոստիկան նշանակեց իր ծառաներից մեկին՝ Նսըր անունով, որին նաև Սրբոքի էին կոչում։ Եկավ այն անիծյալը, Յուսուֆից կրկնակի չարն ու շնաբարոն, որոշ ժամանակ բնակվեց Նախիջևանում։

Խաղաղ ու հավասար վայելումով էին ապրում Սյունյաց իշխաններ Սմբատն ու Սահակը՝ [միմյանց միջև] բաժանած լինելով նահանգի իրենց հայրենի կալվածքները. ավագը՝ Սմբատը, բաժին ուներ Սյունիքի արևմտյան կողմի մեծ մասն ու ամբողջ Վայոց ձորը, իսկ Սահակը՝ արևելյան կողմը, մինչև Հագարի[585]. սակայն կրտսերը՝ Բաբկենը, մի փոքր պակաս բաժին ուներ։ Այդ պատճառով, չար խանդից դրդված՝ իր հանդեպ զրկողություն է համարում Սահակի մեծ տերությունը և մտքում սնոտի հույսի մի գաղափար հղանալով, ինչպես և

չար մարդկանց կողմից հաղորդվելով՝ վեր է կենում, գնում Նախիջևան, հիշյալ Նսըրի մոտ։ Դժոխային պայման ընդունելով՝ դաշինք է կնքում նրա հետ և ցույց է տալիս իր ճընշվածությունը Սահակից։ Իսկ Նսըրը, չար ու խորամանկ մտքով իսկույն ընդունելով նրանց, խոստանում է խնդրանքը կատարել. ապա հրավիրակներ է ուղարկում, կանչում Սահակին [իբր] սիրո համար։ Սահակը, այդ լսելով և խելացնոր կերպով հավատալով նրան, ուրախությամբ գնում է հրավերին, որպես թե արքունիք է գնում՝ բազում ու մեծամեծ ընծաներով։ Եվ Նսըրը, նրան հանդիպելով Նախիջևանում, նույնպես խնդությամբ է ընդունում՝ հրճվելով մեծ որսի հեշտադավ գյուտի մտքերով։ Սահակը ևս անմիջապես նրա հետ հավատարմության դաշինք է կնքում։ Նսըրն ասում է. «Գրնանք Դվին ու այնտեղ ապահովված մտածենք միմյանց օգուտի մասին»։ Եվ Սահակին ու Բաբկենին վերցրած՝ գնում է Դվին։ Երբ մտնում է քաղաք և հանգստանում ապարանքում, որ բանտի մոտ էր գտնվում, արձակում է չարության քողը, բռնում է Սահակին ու Բաբկենին, երկաթի կապանքներով բանտ դնում այդ խելքից բթացածներին ու սրտից անզգայացածներին, որոնք իրենց կամքով անձնատուր էին եղել, անձամբ հանձնվել։

Շնաբարո Նսըրն այս անելով քիչ ժամանակ անց դուրս եկավ, զորքերը սփռեց ամբողջ երկիրը, ասպատակեց, իսպառ ջնջեց մեր ամբողջ Հայոց աշխարհը ևս, Այրարատյան երեք գավառներն էլ։ Եվ ավարներով ու գերիներով հարբուսացած՝ բնակվում էր Դվինում։ Ապա Նսըրին հրաման եկավ՝ գնալ Ատրպատական։ Եվ անմիջապես իր ծառաներից մեկին՝ Բշըր անունով, նշանակեց Դվինում կալանավորված Սյունյաց իշխանների վրա և ինքն անցավ, գնաց Պարսկաստան, Ատրպատական։ Եվ այնտեղ հոգաց արքունի բոլոր հոգսերը ու այնտեղից վերադարձավ սպայակույտ մեծ զորքով։ Իր մեջ մտածեց գնալ Սիսականի կողմերով ու նահանգը ավարի առնել, իսկ եթե հնարավոր լինի, բռնել Սյունյաց գահերեց իշխան Սմբատին՝ կա՛մ ավազակաբար հանկարծակի հարձակվելով, կա՛մ ճակատամարտերով ոտնատակ անելով, գերել ու ավերել նրա տունը, իրեն էլ տանել Դվին, եղբայրների մոտ։ Իսկ իմաստնագույն Սմբատը իր սեփա-

կան գավառում՝ Վայոց ձորում, հանգիստ ու խաղաղ նըստած էր։ Լսելով նրա գալու լուրը՝ ամբացրեց իր տունն ու Վայոց ձորի ամբողջ ամուր գավառը։ Ինքն էլ զորքերը դուրս բերելով սպայակույտ զորքի մեծ ամբոխով իրեն շրջապատեց արքունական ապարանքում, որը գտնվում էր Եղեգիք գյուղաքաղաքում[586]։ Այնուհետև Նսըրը, գալով և տեսնելով նրան այնպիսի պատրաստությամբ ու անհաղթահարելի զորությամբ զգուշացած, իր մտադրությունը չկարողացավ հայտ բերել, այլ նրա հետ խոսեց խաղաղությամբ ու բազմաթիվ պատգամավորների միջոցով հաշտության և խաղաղության պայմանագիր կնքեց։ Սմբատն էլ պահանջեց իր եղբայրներին, որոնք կապանքների մեջ Դվինում էին, և Նսըրը խոստացավ բաց թողնել [նրանց]։ Այնուհետև միմյանց մոտ գալով՝ մեծ ուրախություն արեցին, և Նսըրը, Սմբատից բազմաթիվ նվերներ ու պարգևներ ստանալով, ճանապարհվեց, գնաց մտավ Դվին։ Եվ իսկապես, Բաբկենից չպարտավորված գլխագին վերցրեց ու նրան ազատեց, բայց Սահակին [դեռ] բանտարկված թողեց այնտեղ, որովհետև սա դահկանների այն ծանր չափը չուներ, որ գերեգին էին պահանջում։ Ապա նա էլ, քիչ ժամանակ անց մեծ կշռով ոսկի վճարելով իր փրկագինը ու ազատվելով, կապանքներից դուրս եկավ, գնաց իր սեփական տերությունը։ Եվ մեծ ուրախություն եղավ եղբայրների մեջ ու [իրենց] նահանգում։ Նրանք ապրում էին հաշտ ու խաղաղ՝ զբաղված լինելով շինարարությամբ և [այլ] գովելի գործերով։

Այն օրերին ծաղկում էր այս իշխանների ազգական Զաքիկ[587] մեծ իշխանը՝ Սիսական տոհմից՝ [լի] ամենայն բարեպաշտությամբ, որը բաժին ուներ Բաղաց աշխարհն ու Կապան քաղաքը։ Բազմաթիվ բարեգործություններից հետո նա վախճանվում է ու թաղվում իր նախնիների մոտ՝ ժառանգ թողնելով քաջազոր Զեվանշերին[588] և Վահանին։ Նրա իշխանությունը ժառանգեց Զեվանշերը երկար ժամանակ։ Իսկ նրա եղբայր Վահանը, հանկարծակի չար դևից զարնվելով, տանջվում էր։ Այդ պատճառով հրաժարվեց աշխարհական կարգից, կրոնավորի տարազ հագավ ու երկար ժամանակ ճգնում էր Տանձափարախի[589] սուրբ վկայարանում և Շատանյա[590] վանքի խստակրոն, մեծահռչակ մշտնջենավորանո-

ցում։ Մաքրվելով պիղծ ոգուց՝ կամեցավ իր անունով վանք շինել[591] ու նրա մեջ հաստատել կրոնավորների բազմություն։ Դրա մասին հետո կպատմեմ։ Իսկ երջանիկ ու փառաբանված Սմբատ իշխանը աստվածավայել բաղում բարեպաշտություններից հետո այս աշխարհից փոխադրվեց ու թաղվեց իր հոր՝ Աշոտի մոտ՝ ժառանգ թողնելով իր զավակ, արի ու հանճարեղ իշխան Վասակին[592]։

ԼԹ

ՏԱԹԵՎԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆԻ, ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՈՒ ԱՅԼ ՍՐԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Եվ արդ՝ իշխանների շարքը ցույց տալուց և նրանց մասին երկար խոսքով պատմելուց հետո վերադառնանք եպիսկոպոսներին վերաբերող անցքերին ու գործերին, փոքր-ինչ խոսենք Տաթևի եպիսկոպոսարանի շինարարության և [նրա] հոգևոր իշխանների մասին։ Եվ այսպես, [նշենք, որ] սկզբնապես եպիսկոպոսների համար սահմանված կարգ էր՝ բնակվել քաղաքներում ու գյուղական միջավայրերում, որովհետև հովիվը պիտի հոտի մեջ լինի և ոչ թե ինչ-որ անկյունում [առանձնացած] մնա. շարունակ ներքնատեսությամբ պիտի վերահսկի հոտին, որ խորամանկ մոլորեցնողը չմտնի այնտեղ, գողանա անմեղների հոգիները և դուրս տանելով շեղի հոտից։ Իսկ հետո [նրանցից] ոմանց ինքնասիրական բարքի համաձայն, որպես թե ճգնակյաց ու անապատասեր լինելով ձգտում են աչքերի ու ականջների անդորրության, պատշաճ համարեցին բնակվել վանքերում ու հարմար ժամի դուրս գալ [հոգևոր] հոտի մեջ և խրատել։ Այդպես էլ մեր աշխարհի Սիսական տոհմի եպիսկոպոսներն էին, որոնք առաջներում շրջում էին գավառներում ու իշխանական տներում՝ միշտ անդադրում կերպով քարոզելով կենաց գաղափարը։ Նրանց նստավայրը Սյունիքում էր։ Հետագայում իրենց առաքինի ու պարկեշտ վարքի համաձայն՝ հրապարակների բազմության համար այլևս չէին կարողանում շարունակ մնալ ու դեգերել թատերահրապարակներում, այլ գտնելով այս տեղը՝ խիստ համապատասխան ու հարմար, գրեթե վերին թևալպրանքով առաջնորդվելով՝ եկան, հաստատվեցին այս-

տեղ՝ այս գեղատեսիլ վայրում, որը բարձր դիտանոցի նման նայում է դեպի արևելք՝ շատ գավառների, Դիզափայտի լեռների[593] դիմաց, որտեղ թաղված են բազմաթիվ սուրբ նահատակներ։ Տեղը շատ առողջարար է, հարթ, շրջապատված բարձր ու սրագագաթ լեռներով, կիսաշրջանաձև՝ կարծես կարկինով քաշած։ Վանքի առջևում շատ խոր, դժվարամատչելի ծառապատ ձոր է՝ շատ ընդարձակ ու գեղեցիկ, որտեղով ահեղաձայն գոչգոչումով անցնում է Որոտան գետը։ Ձորը լի է այգիներով ու դրախտացած զանազան բուրաստաններով։ Այնտեղ, խիստ բարձր քարաժայռի վրա եկեղեցի կար՝ անշուք ու անտաշ քարերով կրաշաղախ շարված, շատ հին ժամանակներից, սուրբ Ներսեսի ու Սահակի օրերից։ Նրա մեջ սակավաթիվ կրոնավորներ էին բնակվում մշտաջան ճգնությամբ։ Տեղը հեռու էր թշնամիների ամեն տեսակ ավազակային հարձակումներից, որովհետև նահանգի կենտրոնական մասում էր, ապահով և խաղաղ, ամրացած Սյունիքի ու Բաղքի երկու արքունական աթոռների միջև։ Եվ այսպես, Սյունիքի եպիսկոպոսները, այս տեղը խնդրելով իշխաններից, եկան, հաստատվեցին այստեղ, [իրենց հետ] բերեցին և այս սուրբ եկեղեցում հաստատեցին աստվածամուխ սուրբ նշանը, որ կենարար փայտից էր, բերված հունական աշխարհից Սյունյաց եպիսկոպոսների միջոցով և ի պահպանություն տրված սրանց վիճակված առաջին իշխաններին։ Այստեղ դրեցին նաև աստվածընկալ Բաբկենյան խաչը, որը մի տղամարդու հասակի չափով պատրաստված էր արծաթից Անդոկի որդի Բաբիկի որդու՝ Վասակի կողմից և իր մեջ մաս էր պարունակում փրկական փայտից։ Բերեցին գլխավոր ու երևելի մարդկանց առաքելական, հայրապետական, մարտիրոսական նշխարները, որոնք մեծ քանակությամբ հավաքել էին Սյունյաց իշխանները, որ սուրբ Գրիգորի ու սուրբ Ներսեսի հետ գնացին Կեսարիա և մեծ Հռոմ, նույնպես և տարբեր ժամանակներում շատ փափագներով ժողովվածները։ Դրանց հետ էին և մեծ Հովհաննեսի ու Ստեփանոս Նախավկայի, տասնմեկ առաքյալների ու սուրբ Գրիգորի նշխարները, սուրբ Հռիփսիմեի աջը՝ նույն մարմնով, և ուրիշ շատերը, որոնք անհամար էին, այլև մարդկային էությամբ գերազանց սրբուհի Աստվածածնի մազերը։

Այս բոլորը բերելով՝ կենտրոնացրին սուրբ եկեղեցու մեջ ու այն դարձրին աստվածության հարուստ գանձարան։ Բայց թե ե՞րբ և ո՞ր եպիսկոպոսն էր, որ առաջինը եկավ այստեղ, ես չիմացա, միայն Տեր-Գեորգից ի վեր գտա հիշատակություն և ծանոթացա նրանց բոլոր որպիսություններին։ Սակայն առաջինների մասին չգիտեմ, որովհետև որևէ հիշատակ չգտնվեց, թեև [ընդհանրապես] գիտեմ, որ երկար ժամանակ բնակություն է եղել այնտեղ։ Եվ այսպես, Տեր-Գեորգից հետո Սյունյաց եպիսկոպոսն է եղել աստծու երանելի այր Դավիթը[594]։ Սա Սյունյաց գահերեց իշխան Գրիգորի[595] օրերում էր և մյուս Գրիգորի[596]՝ Սահակի որդու, որ Սուփան էր հորջորջվում ու տիրում էր Գեղարքունիքին. առաջին Սուփանը, ինչպես և աստվածապահ տեր Փիլիպեի[597]՝ Վասակի որդու, Սիսական ամբողջ ցեղի նահապետի ժամանակ։ Նա հայրն էր մեծ իշխաններ Իշխանիկ կոչված Վասակի ու Սյունյաց մեծ գահերեց իշխան Սմբատի հայր Աշոտի։

Եվ քանի որ Տաթևի վանքի տարածությունը խիստ նեղ ու անձուկ էր և չէր բավարարում աթոռի կարիքները, ուստի Տեր-Դավիթը խնդրում է աստվածապահ տեր Փիլիպեից՝ Սյունյաց իշխանից, վաճառել մերձակա ագարակները։ Եվ նա համաձայնվելով կատարում է խնդրանքը։ Վերցնելով տասը հազար դրամ[598], որոնցից յուրաքանչյուրը վեց դանկ[599] էր, նրան է հանձնում Արծիվ[600] գյուղը և Բերդկաներիչը[601], որ վանքից վերև է, ամբողջը ջրման ենթակա՝ ազատ աշխարհիկ բոլոր հարկերից ու նեպակներից[602]։ Գրեցին հավիտենական կտակ (և կնքեցին իրենց մատանի[ներ]ով։ Այն այսպիսի տեսք ուներ. «Ես՝ Տեր-Դավիթս, աստծու շնորհներով Սյունյաց եպիսկոպոսս, հայոց երկու հարյուր ութսուներեք թվականին[603] գնեցի Արծիվը Վասակի որդի իշխան Փիլիպեից՝ Սյունյաց տիրոջից, իր սահմաններով, լեռնով ու դաշտով՝ և՛ անջրդի, և՛ ջրարբի [տեղեր], արոտավայր, արտ ու մարգ։ Իսկ սահմանները սրանք են՝ արևելյան կողմից Հարժիքից[604] ու Բերդկաներիչից եկող ճանապարհների միացքը, որ հասնում է մինչև գետը, այնտեղից մինչև գյուղագլխի բլուրը, այնտեղից ջրվեժով մինչև Ստերջաց գավակ և ջրբաժան գծով մինչև Վարդանամարգի ձորակը, այնտեղից մինչև Արծիվակատար. արևմտյան կողմից՝ Լորաձորը[605], մեծ սա-

րով. հարավային կողմից՝ Հարժիքը, որի ճանապարհից բնա-
սահմանը ձգվում է ձորով վար, մինչև Սևաջուր, իսկ ի վեր՝
դեպի սարը՝ Վանաց ձորի բնասահմանով։ Ես՝ տեր Փիլիպես,
Սյունյաց եպիսկոպոս Տեր-Դավթից ստացա գանձը՝ տասը
հազար դրամ և սուրբ խաչով հաստատեցի գյուղն այն սահ-
մաններով, որ նշված են պայմանագրում, վկայությամբ Վա-
սակի որդի Սյունյաց տեր Ատրներսեհի, Սահակ իշխանի որ-
դի իշխան Հրահատի, Վարդան իշխանի որդի իշխան Ատըր-
ներսեհի, Վահանի որդի Արշակի, Սարգսի որդի Ռաբբեից
հայր Սարգսի, հայր Գեորգի և ավագ քահանա Մարկոսի։

Ես՝ Տեր Փիլիպես, Բերդկաներիչի կեսը տվեցի Սառնա-
քարի[606] փոխարեն, կեսը՝ եկեղեցուն։ Ոչ ոք չհամարձակվի
վերցնել՝ ո՛չ եղբայր, ո՛չ որդի, ոչ էլ իմ ավատառուներից
[որևէ մեկը]։ Իսկ եթե մեկը վեճ բացի այդ սահմանների
համար, դատապարտվի աստծուց, և աստված նրանից իմ
մեղքերի համար [հաշիվ] պահանջի, ու նա դատի մեջ չշահի։
Սրա սահմանն էլ այս է՝ Միրանահողով դեպի ցած, մինչև գե-
տը, դեպի վեր, մինչև Կատար, գետից դեպի Սենյակ[607], Սեն-
յակով մինչև ձորը, այստեղից էլ՝ մինչև Գավակ։ Եվ մենք՝
Տեր-Դավիթն ու տեր Փիլիպեն, այս պայմանագիրը կնքեցինք
մեր մատանիներով»։ Սա էլ Փիլիպեի ստորագրությունն է.
«Ես՝ Սյունյաց տեր Վասակի որդի Փիլիպես, կամեցա իմ ստո-
րագրությամբ հաստատել այս գործարքը»։ Այլև հինգ տարի
անց այս Փիլիպեն, իր խորահավատ ու մեծախորհուրդ բարե-
պաշտության համաձայն, կամեցավ փարթամացնել Տաթևի
վանքը և հավերժացրեց իր արտաքին ողջ ունեցվածքը՝ [գործ-
նելով] անեղծ հիշելի։ Միաբանվելով սուրբ եկեղեցուն և հո-
գեպես հանձնվելով սուրբ խաչին ու Տեր-Դավթին՝ ընծայում
է սուրբ եկեղեցուն մեծագույն պարգևը՝ իր սեփական Տաթև
գյուղը[608], հաստատուն և անխախտ պայմանով, մինչև Քրիս-
տոսի գալուստը։ Կտակագիրն էլ այս է. «Հայոց երկու հար-
յուր իննսուներեք թվականին[609] ես՝ Սյունյաց տեր Վասակի
որդի Փիլիպես, ինչպես որ կամեցա, իմ հոգու համար Տա-
թևը տվեցի ձեզ, Տեր-Դավիթ՝ Սյունյաց եպիսկոպոս. այն
հորիցս ինձ էր հասել որպես կտակված ժառանգություն[610]՝
անխախտելի[611] բոլոր սահմաններով, լեռնով, դաշտով, այ-
գիներով, ընկուզենիներով, մարգագետիններով, ջրաղացնե-

րով ու այդ սահմաններում եղած մյուս բոլոր բաներով։ Իմ
անցումից հետո չհամարձակվի ոչ ոք՝ որդիներիցս կամ եղ-
բայրներիցս կամ ուրիշ ավատառուներից, եկեղեցուց և սուրբ
խաչից հեռացնել այդ գյուղը. այլապես նզովված լինի աստ-
ծուց, այս սուրբ եկեղեցուց ու սուրբ խաչից, անեծք կրի հո-
գևոր տիրոջից։ Այս ամենը սրտանց տվեցի քեզ, Սյունյաց
եպիսկոպոս Տեր-Դավիթ՝ վայելելու խաղաղ կյանքով, և ձեզ՝
մյուսներիդ, որ պիտի նստեք այդ աթոռին. վայելեցե՛ք մինչև
Քրիստոսի գալուստը։ [Այդտեղ] մնացողները թող այդպես
անեն, իսկ եթե դնան, չհամարձակվեն գյուղն իր սահման-
ներով եկեղեցուց հանել՝ ո՛չ վաճառել, ո՛չ փոխանակել, ո՛չ
գրավ դնել. և [ընդհանրապես] եկեղեցուն սպասավոր դար-
ձողները պիտի իշխեն նաև նրա բոլոր սահմաններին։ Վկա
են Սյունյաց տեր, աստվածապահ իշխան Գրիգորը, Սյունյաց
տեր Վասակի որդի իշխան Ատրներսեհը, Սահակի որդի իշ-
խան Գրիգորը, Սահակի որդիներ իշխան Հրահատն ու իշ-
խան Արումանը, Սյունյաց տեր Գրիգորի որդիներ իշխան
Հրահատն ու իշխան Գագիկը, Վարդանի որդի իշխան Վա-
հանը, նույնպես և իմ ազատներից Հուռը, Քուրդոն, Խոսրո-
վը, Շապուհի որդիները, Թեոդորոսի որդի Ջևանշերը, Վա-
հանի որդի Աշնակը, Վահանի որդի Զաքիկը, Ջանադի որդի
Վարդանը, Վասակի որդի Սահակը, Թուրքի որդի Միհրանը,
Ներսեհի որդի Հովհանը, իշխան Տիրոցի որդի Մուշեղը, Շա-
պուհի որդի Հասանը, Մխիթարի որդի Վահանը, Սմբատի որ-
դի իշխան Մուշեղը, Բաբկենի որդի Տեր-Վահանը, իմ՝ Փիլի-
պեի որդիներ իշխան Բաբկենը, իշխան Վասակը և իշխան
Աշոտը, կրոնավորներից՝ Երիցավանքի վանական Ահարոնը,
Գրիգոր քահանան, Մաքենոցաց վանքի վանական Ստեփա-
նոսը, Ույծի[612] ավագ երեց Հակոբը, Ծղուկի քորեպիսկոպոս[613]
Մանկիկը, Միծառնավանքի[614] վանական Ստեփանոսը, դրան
երեց Գրիգորը, Շաղատա վանքի վանական Սիմեոնը, Սյուն-
յաց վարդապետ Գրիգորը։ Առավել հաստատության համար
վրան դրեցի նաև իմ՝ որդիներիս և ուրիշ ազնվականների
սովորական մատանիները»։

Եվ այսպես սա գրելով ու իրենց մատանի[ներ]ով կնքե-
լով՝ դրեցին այս սուրբ եկեղեցու մեջ։ Մագաղաթի վրա մատ-
նադրոշմվածը վրան ուներ մեծամեծ իշխանների վեց կնիք՝

առավել հաստատության համար։ Հետո այս տեսնելով մեծ իշխան Հրահատը՝ Սահակի որդին և Գրիգոր Արումանի եղբայրը, Հայկազուն, նույն Սիսական տոհմից, որ ժառանգական բաժին ուներ Կովսական գավառն ու Քաշունիքը, լքում է բարի նախանձով և գալով Տեր-Դավթի մոտ՝ իր սեփական կալվածքներից [վանքին] նվիրում է Կովսական գավառի Նորաշինիկ գյուղը[615], գրում է և կտակագիր անխախտ պայմանով, որն այսպես է. «Հայոց երկու հարյուր իննսուներ[616] թվականին Սյունյաց եպիսկոպոս, աստվածապատիվ հոգևոր տեր Դավթի օրոք ես՝ երանելի իշխան Սահակի որդի բազմամեղ Հրահատս, որ շար ու անիրավ վարքիս պատճառով խաբված էի սատանայից բազմատեսակ հանցանքներով, ծովի նման լցված էի անթիվ չարիքներով, ահեղ դատաստանի օրվա փրկության ակնկալությունն չունենալով, մըտաբերելով անզավակությունս և այն, որ հույս ու ապավեն չկար հոգուս փրկությունը հոգալու համար և գիտենալով, որ մահկանացու է մարդկային ցեղը, որդիների փոխարեն այդ աստվածընկալ խաչն ինձ ապավեն արեցի։ Եվ մի գյուղ Կովսական գավառում՝ Նորաշինիկ անունով, որը ոչ թե հափըշտակումով կամ մեկին ճնշելով և կամ ուրիշ անիրավություններով, այլ միայն իմ արդար վաստակի արծաթադրամի գնով եմ ձեռք բերել, իմ հոգու համար հատկացրի սուրբ խաչիդ՝ իր բոլոր սահմաններով, լեռնով ու դաշտով, տաք ու ցուրտ [տեղերով], ծառ ու տունկով։ Նրա սահմանները սրանք են՝ արևելյան կողմից Տորվանուտի սահմանը, հյուսիսից՝ Ծորի, արևմուտքից՝ Տրի և Արտավազուց, հարավից՝ Կերեն և Բերքնի[617]։ Այսուհետև դո՛ւ ես իշխանը, Սյունյաց եպիսկոպոս Տեր-Դավիթ, և այն բոլոր մյուս հայրապետները, որ քեզանից հետո հաջորդաբար պիտի աթոռակալեն այդտեղ, [կարող եք] այդ գյուղը վայելել, պահել ու տիրել, վաճառել ու գրավ դնել, ամեն ցանկացածը անել՝ մինչև հավիտյան։ Եվ սրանից հետո ո՛չ ես՝ Հրահատս, ո՛չ էլ իմ եղբայրները կամ իրենց որդիները իրավունք չունենք վեճ ու կռիվ անելու։ Իսկ եթե մեկը հանդգնի սուրբ խաչիդ սպասավորներին նեղություն պատճառել, աստծուց նզովված լինի ու այդ խաչով դատապարտված, օրհնության հողը նրան չբավականացնի, ու ինքը դատի մեջ չշահի։ Եվ այս հաստատ կտակագիրս ես՝ իշխան Սա-

հակի որդի Հրահատ իշխանս, տվեցի քեզ՝ Սյունյաց եպիսկոպոս Տեր-Դավթիդ, վկայությամբ Վարդի վանական Հակոբի, Ներսեսի որդիներ Հովհաննեսի ու Սմբատի, Բաբիկի որդի Հովհանի, իշխան Տիրոցի որդիներ Ստեփանոսի ու Մուշեղի, Վարազտիրոցի որդի Վիժանի, Գրիգորի որդի Ըռանձարի, Հովհանի որդի Խուդափի, Սահակի որդի Համազասպի, Մառաքատի[618] երեց Բարսեղի, Ղվղերծի[619] երեց՝ Մխիթարի որդի Սադոկի, Վանանդի[620] երեց Համայակի, Նորիքի[621] քահանաներ Սահակի ու Ահարոնի, Ույծի ավագ երեց՝ Հակոբի որդի Մաթուսաղայի։ Այս վճռագիրը կնքեցի ես՝ իշխան Հրահատս, իմ սովորական մատանիով։ Եվ շարադրածիս առավել հաստատության համար Սյունյաց տեր, աստվածապահ իշխան Գրիգորի մատանին էլ վրան դրեցի։ Աստված վայելում տա մինչև հավիտյան»։

Իսկ երևելի ու փառավոր իշխան Փիլիպեն կառուցում է մի գեղաշեն եկեղեցի հին եկեղեցու մոտ, հարավային կողմից՝ Գրիգոր սուրբ Լուսավորչի անունով. ինքն էլ վախճանվելով թաղվում է այնտեղ, բակում։ Նրա հիշատակն օրհնությամբ լինի, և անունը գրված կենաց գրքում։ Սա տեղի ունեցավ հայոց երկու հարյուր իննսունյոթ թվականին[622]։

Եպիսկոպոս Դավիթն էլ խիստ կամեցավ կարգի բերել նրա մեծ երախտիքների հիշատակը՝ տարի առ տարի, և գրությամբ գրոշմեց, որը և մենք հարկ ենք համարում նույնությամբ գրել։ Թեև երկար ժամանակի ընթացքում քայքայվել, աղավաղվել, եղծվել են գործիչների, գործերի տվյալները, եպիսկոպոսարանի կարգի բնույթը, բայց որպեսզի չընջվի նրանց մեծ հիշատակը, այժմ նորովի հերթականությամբ պիտի վերհիշենք։ Գրածն այս է. «Ես՝ Սյունյաց եպիսկոպոս Դավիթս, մի այսպիսի ցանկություն ունեցա՝ [ծառայել] աստվածապահ տեր Փիլիպեի հոգու փրկության ու լուսավորության, մշտնջենական ու անմահական կյանքին [նրա] արժանի դառնալու համար, որովհետև նա նույն կատարյալ մտքով ինձ ապավեն ընտրեց ու իր համար բարեխոս դարձրեց աստծու առաջ՝ հանդերձյալ կենդանության համար։ Եվ չնայած որ մարդկային ամբողջ ցեղը մեղքերով շրջափակված է [հենց] իր կամքով՝ ըստ այն իմաստուն խոսքի, թե՝ «Չկա մարդ, որ մեղք չգործի»— քանի որ հողածիններիցս

ոչ ոք չկարողացավ հասնել իսկական արքունյան և կատարյալ արդարության, չնայած որ [ընդհանրապես] առաքինական շատ գործեր կատարեցին՝ չհաշված կամակատարությամբ մշտապես վայելչաբար շարունակվող հաճույքները, սակայն նա, մասնավորապես ենթարկվելով իմ առաջարկներին, բազմաթիվ բարեպաշտական գործեր կատարեց, դրա համար էլ տիրոջից կատարյալ թողություն էի ակնկալում։ Բայց բոլորին հատուկ կյանքի վախճան ունենալով՝ չհասցրեց զղջման, աւետսոանքի և հոգեկան ուրիշ զանազան նորոգումների միջոցով լիովին մաքրագործվել, քանի որ բոլոր բարի գործերը նախաձեռնելիս խափանումներ եղան։ Եվ սրա համար խիստ տագնապ ու տանջանք համակեցին ինձ։ Այնուհետև աստվածային մի ներգործությամբ, որին նա առավել ևս արժանի էր եկեղեցու նկատմամբ [ցուցաբերած] իր կատարյալ երախտագործություններով՝ սահմանների [ընդլայնումով], հարբստության ու շենացնող ուրիշ շատ միջոցների [հատկացումով], այս սուրբ տեղում հաստատեցի բարի հիշատակ նրանից հետո՝ որպես հատուցում նրա բարերարությունների դիմաց, որ դուք՝ Տաթևի վանքի սուրբ եկեղեցում հաստատված կրոնավորներդ, ամեն տարի մի քառասունք պարտադիր կերպով կատարեք նրա հոգու փրկության համար և իմ սահմանած տեղում ամեն օր ասեք «Ներանի նրան, ում մեղքերին թողություն եղավ»[623] սաղմոսն ու վաթսուն «Տե՛ր ողորմյա» էլ հետը։ Եվ նրա մահվան օրը, որ քաղցի[624] տասնհինգին է, հանգուցյալների հիշատակի արարողություններով նշեք, թերևս ազատվի ահավոր պատուհասներից։ Իսկ ովքեր կկատարեն մեր այս հրամանը, սրտագին սիրով կհատուցվեն հոգևոր ծառայությունները, նրանց սուրբ ու աստվածահաճո աղոթքների միջոցով Քրիստոսը աստվածապահ իշխանի հոգին արժանի կանի մշտնջենական ու անվախճան ուրախություններին, իրենք էլ ահեղ դատաստանի ժամանակ ներում կգտնեն։ Քրիստոսը կօրհնի մեր կողմից այս ասածները կատարողներին և կավելացնի բոլոր առաքինական վաստակները նրանց հոգևոր անդաստանում. և կատարած բոլոր բարեպաշտություններով այս աշխարհում ապրելուց հետո աստված, գալիք անճառելի ու անապակ բարություններին [արժանացնելով], նրանց հաղորդակից կդարձնի իր բոլոր սի-

րելի կամակատարների հետ՝ անթառամ պսակներով լուսեղեն խորաններում բնակեցնելով։ Իսկ ովքեր հակառակվեն մեր այս օրինավոր հրամանին և ինչ-որ չնչին բան համարելով ու թեթևամտորեն արհամարհելով՝ ոտնատակ անեն և մեր կողմից առաջադրված պարտավորությունները չկատարեն, նրա ունեցած մարմնական մեղքերի ամբողջ ծանրությունը Քրիստոսը նրանցից կպահանջի և նրանց աղոթքները մեղք կհամարի՝ ըստ գրածի, և փոխանակ բարի հատուցման աչք պահելու բանն աստծու ահեղ ու ամպախաղաց գալստյան ժամանակ դրան հակառակ, անելանելի ու անվախճան պատուհաս կստանան։ Այս հիշատակագրությունը պատրաստեցի ձեզ համար, ո՛վ սրբասեր քահանաներ ու ճգնակյաց կրոնավորներ, ապագայի համար՝ հաստատված իմ սովորական մատանիով հայոց երկու հարյուր իննսունյոթ թվականին»։

Ահա այս աթոռն այսպես ճոխացնելուց ու գեղեցկորեն կարգավորելուց հետո Տեր-Դավիթը վախճանվում է, և նրա տեղը նստում է Տեր-Հովհաննեսը[625], իսկ սրան էլ հաջորդում է Տեր-Սողոմոնը[626]։

Խ

ՏԵՐ-ՍՈՂՈՄՈՆԻ ՄԱՍԻՆ, ՆՎ. ԹԵ ՆՐԱ ՄԻՋՈՑՈՎ ԻՆՉ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՏՐՎԵՑ ԵԿԵՂԵՑՈՒՆ

Նվ այսպես. այս երանելի Սողոմոնը առաքինությամբ վեր էր ճգնավորների բոլոր բազմություններից, դևերին հալածող ու ամեն տեսակ հիվանդների առողջացնող։ Դրա համար նրան նստեցնում են Սյունյաց եպիսկոպոսական աթոռին՝ ձեռնադրելով հայոց կաթողիկոս Տեր-Զաքարիայի կողմից, որը և մեծ ջանքեր գործադրելով զարդարեց այս սուրբ աթոռը զանազան կարգավորումներով։ Սրան հանդիպել էր աստվածաբիր խաչից մի կտոր, որն իր վրա ուներ Քրիստոսի արյամբ ներկվածության նշան, և նրանով զարհուրելի ու մեծ հրաշքներ էին կատարվում։ Եպիսկոպոսը ոսկուց խաչ է պատրաստել տալիս բարձրարվեստ վարպետներին, զարդարում է թանկարժեք ակներով ու մարգարիտներով, մեջը դնում այն փայտը, վրան գրում իր անունը ու նվիրում սուրբ եկեղեցուն։ Ուրիշ հարստություն էլ է գնում ու տալիս սուրբ խա-

չին։ Ինքն էլ հիշատակի այսպիսի կտակ է գրում. «Աստծու շնորհիվ սա ձեռագիրն է իմ՝ Սյունյաց եպիսկոպոս Սողոմոնիս [Իմացա], որ առաջներում Տեր-Գեորգը Խոտի[627] կալվածք-կոռավարը հոգեբաժին էր արել սուրբ նշանին, բայց ինչ-ինչ հանգամանքներով այն հափշտակել էին։ Երբ հաջորդելով գահակալեցի այս սուրբ աթոռին, [այդ կալվածքը վերադարձրի եկեղեցուն և][628] իմ տառապյալ հոգու փրկության համար ինձ ապավեն դարձրի աստվածընկալ այս սուրբ նշանը։ Դարատափին[629] էլ վերցրի Սյունյաց տեր, իշխանաց իշխան Հրահատից[630]՝ Գրիգորի որդուց՝ ո՛չ իբրև հոգեբաժին, ո՛չ էլ բերքանվեր, այլ՝ իմ արդար վաստակով գնեցի հազար երկու հարյուր դրամով և դարձրի այս սուրբ նշանին սեփական կալվածք։ Այսպիսով այս սուրբ աթոռանիստում հաջորդողներդ ինձ՝ Սողոմոնիս, հիշեցե՛ք սուրբ աղոթքների մեջ, և աստված վայելում կտա։ Դարատափի սահմանները նշված են վավերագրի մեջ։ Աղբին գյուղի[631] առջևում նաև երեք դուր[632] հող է հատկացված։ Եվ արդ ես՝ Վասակի որդի Խոտի տեր Գրիգորս, վկա եմ. ես Թադոսի որդի Վարդիկս, վկա եմ. ես՝ Շերանկի որդի Աբասս, վկա եմ. ես՝ տաշվեցի Գրիգոր երեցս, վկա եմ. Վարդ դեհմեթարս՝ վկա եմ. մենք՝ Աբխազում բերդկաներիշցիս, Սարգիս արիտցիս և Պետրոս երեցս, վկա ենք. մենք՝ տաթևացի Ղազարս, քարատնեցի Մրջյունիկս, վկա ենք. Սմբատը՝ Ծուրագետից, Տեբոնականի Պողոս երեցը, Տիրանուն երեցը, Ահարոն երեցը աստծու միջնորդությամբ վերը հիշատակված անունները [կրողների հետ] վկա են այս գործարքին։ Արդ՝ ով Դարատափի և Աղբնի այս գործարքին հակառակ կանգնի, աստծուց ու սուրբ նշանից դատապարտվի, իր կյանքն ու ժառանգությունը չվայելի և աստվածադավ Հուդայի հետ լինի, իսկ հաստատողները օրհնվեն աստծուց ու մեզանից։ Երեք հարյուր երեսուն թվականին է[633]»։

Այն ժամանակ մի Սիսական իշխան՝ Ջևանշեր անունով[634], Սյունյաց տեր Սահակի որդին, գալիս է Սողոմոնի մոտ և նրանից խնդրում Կովսական գավառի Բեխ[635] գյուղը, որը հին ժամանակներից սուրբ խաչի ու եպիսկոպոսների սեփական կալվածքն էր։ Նա [ուզում է] փոխանակել Բաղք գավառի իր սեփական Արուքս գյուղի[636] հետ։ Եպիսկոպոսը համա-

ձայնվելով տալիս է Բեխը և վերցնում Արուքս գյուղը, ու կնքում են այսպիսի պայմանագիր. «Հայոց երեք հարյուր քսան թվականին[637], աստվածապատիվ հոգևոր տեր Սողոմոնի՝ Սյունյաց եպիսկոպոսի ժամանակ, ես՝ Սյունյաց տեր, աստվածապահ իշխան Սահակի որդի Ջևանշերի, Բաղք գավառի Արուքս անունով իմ մի գյուղը, որը հորիցս ու եղբայրներիցս ինձ կտակված ժառանգություն էր հասել և իմ սեփական կալվածքն էր, անվիճելի տեղ, կամեցա փոխանակել Կովսական գավառում գտնվող Բեխ գյուղի հետ։ Այդ գյուղը բուն սուրբ խաչի և հոգևոր տերերի՝ Սյունյաց եպիսկոպոսների կալվածքն էր։ Եվ ես ու Տեր-Սողոմոնը մեր կամքով և փոխադարձ համաձայնությամբ փոխանակեցինք։ Քանի որ փոխանակումը մեր երկուսի միջև կատարվեց, ուստի մենք էլ [գործարքը] հաստատող այս պայմանագիրը կազմեցինք։ Այժմ տեսրինողը դուք եք, Տեր-Սողոմոն՝ վայելելու և ժառանգելու այդ Արուքս գյուղը իր սահմաններով՝ ամբողջովին, ծառերով ու այգիներով, գետով ու ցամաքով, արտերով ու մարգերով, ջրաղացներով ու պարտեզներով, եկեղեցիով ու այլ շինություններով։ Դու, հոգևոր տեր Սողոմոն, և այդ աթոռում հաջորդ փոխարինողներդ ու սուրբ խաչի սպասավորներդ [տնօրինեցե՛ք] մինչև հավիտյան։ Եվ այսուհետև այս անխախտ որոշմանը չհամարձակվի հակառակվել ոչ ոք՝ կա՛մ մերոնցից, կա՛մ օտարներից։ Եվ եթե որևէ մեկը հանդգնի, դատի մեջ չշահի ու երեք սուրբ ժողովներից նզովված լինի, Հուդայի բաժինն ստանա և մեր մեղքերից պարտական լինի։ Իսկ եթե մահմեդական[638] մեծավոր լինի և հափշտակել ջանա, իր Մահմեդից մերժված լինի[639] օրենքով հազար-հազար նալլաթ[640] ստանա և հավատուրաց[641] ու սևեռես լինի իր աստծու առաջ»։

Արուքսի սահմանները սրանք են. արևելյան կողմից Կըշմատուքն[642] է սահմանակից, արևմտյան կողմից Համանդրախտն[643] է նույն սուրբ խաչի սահմանը, հարավային կողմից [բաժանող գիծն անցնում է] հին առվով[644] մինչև Բեխի սահմանը, հյուսիսային կողմից Կավարտի[645] սահմանով է։ Վերցրինք Բեխն իր սահման[ներ]ով և արքունի նեպակով ու տվեցինք Արուքսն իր սահման[ներ]ով և արքունի նեպակով, որը տասներկու դրամ է։ Այս գործարքի վկաներն են

Սյունյաց տեր Վասակը և իմ եղբայր Արումանը, իմ որդի Տիգրանը, Բաղքի տանուտերեր, սուրբ խաչի սպասավորներս կնքեցինք մեր մատանիով»։

Տեր-Սողոմոնի մոտ է գալիս նաև անզավակ Քուպղիդուխտը, որը Սյունյաց տեր Վասակի դուստրն էր, Փիլիպեի քույրը և Հրահատ իշխանի կինը, ու իր հոգեբաժինը նվիրում է սուրբ խաչին և Տեր-Սողոմոնին։ Գրում է նաև այսպիսի վճռագիր. «Ես՝ Սյունյաց տեր Վասակի դուստր Քուպղիդուխտս, մոտենալով ծերության ժամանակներին, մտաբերելով երկրային կյանքի ունայնությունը, հավիտենական կյանք ցանկացա. և քանի որ մարմնավոր կյանքիս ընթացքում զրկված էի զավակ ունենալու բաժնից, սուրբ խաչն ու աստվածապատիվ և հոգևոր տեր Սողոմոնին՝ Սյունյաց եպիսկոպոսին ինձ համար ընդունեցի հոգևոր զավակ՝ հույս ու ապավեն իմ մեղավոր հոգուն. և Բաղաց գավառից մի գյուղ՝ Մաճ անունով[646], որը նախապես Սյունյաց տեր և իմ եղբայր Ատրներսեհը ինձ էր տվել, իսկ նրանից հետո իմ տեր Հրահատը գնել էր իմ եղբորից ու ինձ հոգեբաժին արել, ես՝ Քուպղիդուխտս, այդ գյուղը լեռներով ու դաշտերով, մարգով ու արտով, գետով, ջրով ու ցամաքով, ծառերով ու տունկերով տվեցի սուրբ խաչին ու Սյունյաց եպիսկոպոս Տեր-Սողոմոնին։ Իմ հոգին հանձնեցի քեզ, Տեր-Սողոմոն, այժմ տնօրենը դու ես և սրբերից նրանք, ովքեր պիտի հաջորդեն Սյունյաց այս աթոռում՝ մյուս եպիսկոպոսները, [կարող եք] վայելել այդ գյուղն ամբողջովին՝ իր սահմաններով, մինչև հավիտյան։ Ո՛չ ես, ո՛չ իմ եղբորորդիները և ո՛չ ուրիշ ավատառուներ չհամարձակվենք վեճ հարուցել ու հակառակվել։ Իսկ եթե մեկը հանդգնի խոսք բացել իմ կատարծի դեմ և ցանկանա խախտել իմ այս նվիրատվությունը, աստծուց ու այդ սուրբ խաչից դատապարտվի, հոգևոր տերերից նզովվի և իմ, ծնողներիս, կյանքիս ընկեր իշխան Հրահատի բոլոր մեղքերի ու հանցանքների համար աստված նրան տուժեցնի. նա սատանայի ու իր կամակատարների հետ անշեջ կրակի մեջ տանջվի։ Գրեցի հատց երեք հարյուր տասնվեց թվականին[647]՝ վկայությամբ իմ եղբորորդիներ իշխան Վասակի, իշխան Աշոտի, իշխան Գրիգորի, իշխան Սահակի, իրենց ազնվականների ու բոլոր շնհերցիների։ Գրածիս առավել հաստատության համար նաև կնքել

տվեցի Սյունյաց եպիսկոպոս, աստվածապատիվ հոգևոր տեր Սողոմոնի վավերական մատանիով։ Եվ եթե մահմեդական պաշտոնեություն փոխարինի ու հափշտակել ջանա, հազարից հազար նալլաթ ստանա ու իր փեղամբարի[648] կողմից մերժված լինի»։

Եվ ապա բազմաթիվ ու մեծամեծ վաստակներից հետո սուրբ և երանելի եպիսկոպոս Տեր-Սողոմոնն ավարտում է իր կյանքի ժամանակաշրջանն ու այս աշխարհից փոխադրվում։ Նրան հաջորդում է հոգևոր և աստվածապատիվ, արքայաշնորհ եպիսկոպոս Տեր-Հովհաննեսը[649], որի գովելի ու անհամեմատելի գործերը գովաբանությամբ պիտի ցույց տամ ձեզ։

Խլ.

ՍՅՈՒՆՅԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԵՍԻ[649], ՏԱԹԵՎԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆԻ ՄԵԾ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երիցս երանելի ու բազմերջանիկ հայրապետ այս Տեր-Հովհաննեսն էր, որ Սողոմոնից հետո նրա փոխարեն նշանակվեց Սյունյաց մետրոպոլիտության աթոռակալ։ Սրա մասին պատմվում է, որ Նորիք[650] գյուղից մի որբևայրի աղքատ ու մուրացիկ մարդու որդի է եղել։ [Հայրը] հետո մի անզգամ կին էր առել, որը պահում էր գյուղատիրոջ ընտանի թոլունների երամները, խորթությամբ ու ոխով էր վերաբերվում իր խորթ որդու՝ փոքրիկ պատանյակ Հովհաննեսի հետ. շարունակ ծեծելով ու քաղցած պահելով տանջում էր նրան։ Մի օր էլ մանուկը, [որ օգնում էր խորթ մորը], այդ թոլուններից շատ ճտեր կորցնելով, չհամարձակվեց տուն մտնել, այլ փախավ ու հոգու առաջնորդությամբ եկավ Տաթևի վանքը և բնակվելով մի կրոնավորի մոտ՝ ուսում առավ ու հասունացավ։ Քանի որ լի էր աստվածային շնորհով, հարուստ բանականությամբ ու պայծառ հիշողությամբ, ուստի արժանի համարվեց աստվածային օծության և Սյունյաց եպիսկոպոս Տեր-Դավթի կողմից ձեռնադրվեց քահանա։ Համառանալով

Աստվածաշունչ գրքին՝ կատարելության հասավ և՛ գիտակա-
նորեն, և՛ գործնականորեն։ Տեր-Սողոմոնի օրոք ստանձնեց
եկեղեցու փակակալի պաշտոնը, դարձավ տեղի եկեղեցական
բոլոր ստորին պաշտոնյանների[651] ղեկավար ու եկեղեցապան-
ների ավագ։

Այնուհետև հասավ առաքինի Սողոմոնի վախճանը։ Հա-
վաքվեցին Սյունյաց իշխաններն ու նրանց ազատները[652], նա-
հանգի վանքերի կառավարիչները, ինչպես և ավագ տանու-
տերերը՝ ըստ տարբեր գավառների, և սուրբ եպիսկոպոսի
մարմինը հողին հանձնելուց հետո նոր հայրապետի ընտրու-
թյուն կատարեցին։ Հավաքված այդ բոլոր մարդիկ ձայն
բարձրացնելով իրենց առաջնորդ էին պահանջում Հովհաննես
փակակալին։ Ամբողջ բազմությամբ հավանություն տալով՝
նրան մեծապատիվ փառքով ուղարկեցին հայոց Տեր-Գեորգ
կաթողիկոսի[653] մոտ։ Եվ նա ձեռնադրվելով մեծաշուք պատ-
վով վերադարձավ ու նստեց մեր Սիսական տան մետրոպոլի-
տության աթոռին։ Այս երանելին տեսավ, որ եկեղեցին նեղ
էր, անշուք ու երկար ժամանակներից հնացած, երկրաշար-
ժից էլ խարխլված։ Եվ քանի որ անպատշաճ էր այնպիսի
մեծ կենտրոնական աթոռանիստի սուրբ հայրապետանոցի աշ-
խարհագումար ժողովարանի համար կաթողիկե եկեղեցուց
զուրկ լինելը, այդ պատճառով ներքնապես շարունակ մտա-
տանջվում էր և հնար չէր գտնում, որովհետև մի կողմից
չէր համարձակվում քանդել առաջին սրբերի հիմնադրած տա-
ճարը, իսկ մյուս կողմից՝ թվում էր, թե անմատչելի է ան-
հրաժեշտ հսկայական ծախսի կատարումը։ Ապա երազի մեջ
հրեշտակից հրաման ստացավ՝ հինը մի կողմ թողնել և նոր
եկեղեցու շինարարություն սկսել։ Եվ այն տեսիլը կրկնվեց
ու երրորդվեց, մինչև որ հրեշտակը լրիվ հավաստի դարձրեց
իրողությունը, որ խաբուսիկ երևույթ չկարծվեր. իր գավա-
զանով էլ սահմանագծեց տեղը ու հրամայեց կառուցել գըլ-
խավոր առաքյալներ Վեմ-Պետրոսի և Պողոսի անունով։ Գոր-
ծի համար քաջալերեց՝ ասելով. «Դա մարդու կողմից լի
կատարվում, այլ տերն է ուզում իր փառքի համար տուն
կանգնեցնել»։ Եպիսկոպոսը զարհուրեց և քնից արթնանա-
լով երկար ժամանակ ապշած էր մնացել։ Վեր կացավ, եկավ
այն տեղը և միաբաններին ցույց տվեց հրեշտակի սահմա-

նագծածը։ Այս մասին տեղեկացրեց նաև Սյունյաց մեծ և
գահերեց իշխան Աշոտին՝ Վասակի եղբորը, Փիլիպեի որդուն,
Սմբատի, Սահակի ու Բաբկենի հորը, և նրա կին երանելի
խորհրդավոր Շուշանին, Գեղարքունիք գավառում բնակվող
մյուս իշխանին՝ Գրիգոր Սուփանի որդի Գաբուռ Սահակին,
և Բաղքի Զագիկ կոչված մյուս իշխանին՝ Ջեվանշերի հորը։
Նրանք ոգևորվեցին ու աստվածային տնօրինությամբ շտապ
կերպով այնտեղ բերվեցին և հիացած այն սքանչելի երազով՝
համաձայնությամբ ու համամտությամբ գործի անցան և ջա-
նում էին արագ կերպով կատարել։ Այնուհետև բացվեցին
նրանց գանձարանները, և գանձերը առատապես ծախսվում
էին շինարարության կատարման համար։ Բայց գլխավորա-
պես մեծ իշխան Աշոտը և Տեր-Հովհաննես եպիսկոպոսն էին
մեծամեծ ծախսերով ու ջանքերով կանգնած այդ գործի վրա
և աստվածային համակցությամբ սկսեցին կառուցումը։ Հիմ-
քը գցեցին հայոց երեք հարյուր քառասունչորս թվականին[654],
Աշոտ Թագավորի որդի Սմբատ Բագրատունի նահատակի թա-
գավորության, Փիլիպեի որդի Աշոտի Սյունյաց իշխանության,
Տեր-Գեորգ Գառնեցի հայոց կաթողիկոսի գահավորության
ժամանակ, Աշոտի հրամանով ու կամքով, Տեր-Հովհաննեսի
միջոցով, որը և եկեղեցու վրա արձանագրել էր այսպես. «Այն
տարում, երբ հայոց երեք հարյուր քառասունչորս թվականն
էր, և զատիկը՝ նավասարդի 4-ին, ես՝ Տեր-Հովհաննեսս, որ
Սողոմոնից հետո կարգվեցի Սյունյաց եպիսկոպոս, այս եկե-
ղեցու կառուցման սկիզբը դրեցի[655]։

Եվ այսպես կառուցեց եկեղեցին՝ երկնակամարի նման
գմբեթահարկ, որպես հրեշտակների զբոսարան և մարդկանց՝
քավարան, տա՜ճ վեմերով ու քերած քարերով, որմնադրա-
կան արհեստով հարմարեցված, տեսնողների աչքերը շլաց-
նող։ Նրա բարձրությունը հարյուր կանգուն[656] էր, երկարու-
թյունը՝ քառասունութ, լայնությունը՝ քսանչորս։ Իր մեջ ընդ-
գրկում էր չորս խորան, բացի ավագ խորանից։ Եվ այդ շեն-
քի մեջ Սողոմոնյան տաճարի կամ Զորաբաբելյանի[657] նմա-
նողությամբ կառուցել էր երկու հրաշակերտ սյուներ՝ բոյոն
ու հաքումը[658], որոնք ամուր կերպով միացված խարխխանե-
րով և գեղեցկագիր ու բարձրաբերձ թակաղաղներով[659] ամ-
բողջապես վերցրած պահում են կամարակապ, քարակարկառ

հարկի հսկայական ծանրությունը: Սա ծառայում է որպես խորհրդանիշ երկու գլխավոր առաքյալների՝ Պետրոսի և Պողոսի համար, որոնց նշխարներից զրվեցին այդ սյուների տակ. առաքյալների, հայրապետների, նահատակների՝ այնտեղ հավաքված բազմաթիվ սուրբ նշխարները զրվեցին եկեղեցու հիմքերի մեջ ու աննկյուններում: Տասնմեկ տարում ահա այսպես ավարտելուց հետո եկեղեցու մոտ, հարավային դռան դիմաց կանգնեցնում է մի զարմանալի սյուն[660]՝ սուրբ երրորդության անունով, երեսապատված մանր քարերով, երեսուն կանգուն բարձրությամբ: Պարսպում է եկեղեցին սրբատաշ քարերով, ապա և վանքը՝ կոփածո քարերով: Եվ քանի որ տեղանքն անհարմար էր, ուստի գետնի հաստ թմբերը հարթում է, խոր տեղերը բարձրացնում կրաշաղախ պատերով: Շինում է և գետնափոր գաղտնարաններ եկեղեցուց ներքև, հողի տակ ծածկված՝ բազմաթիվ կացարաններ ու դարաններ՝ եկեղեցու կարիքների համար: Հարթելով ու հավասարեցնելով տեղանքը՝ շինում է նաև սրբազնեն սեղանատներ[661], արհեստանոցներ, մթերանոց-պահեստներ, սրբատներ ու գրատներ: Եկեղեցու բակում կառուցում է աղոթատուն և Սյունյաց իշխանների ու եպիսկոպոսների համար՝ դամբարանատեղ:

Մեծ տան հայրապետանոցի համար ահա այս բոլոր կառուցումները հոգատարությամբ կատարելով և հարմարություններ ստեղծելով ու ավարտելով՝ այն մեր Հայաստան աշխարհում դարձրեց ցանկալի բոլոր մերձավորների ու հեռավորների համար: [Վանքը] լուսապայծառ լինելով, ինչպես արեգակն աստղերի մեջ՝ բոլոր վանքերից նշանավոր էր ոչ միայն շինություններով, այլև փայլում էր շուրջ հինգ հարյուր միաբանների կրոնավորական դասերով: Լի էր խոթաքնին փիլիսոփաներով, երաժիշտ-երգիչներով: Ծոխ էր վարժարանը՝ վարդապետական կրթումով: Կային նաև անհամեմատելի արվեստավոր նկարիչներ ու գրիչներ: Դրա համար այսպիսի համբավից հիացած՝ թագավորները, իշխանները, եպիսկոպոսները գալիս էին տեսության և ընծաներ էին բերում սուրբ ու փառահեղ աթոռին: Եվ երբ Տեր-Հովհաննես եպիսկոպոսն ավարտեց եկեղեցու մյուս կառույցների շինարարությունը, հետամուտ եղավ աշխարհախոմբ հանդեսին՝ կատարելու մեծ և աստվածահրաշ տաճարի նավակատիքը: Կանչեցին հայոց Սմբատ թագավորին՝ ուրիշ իշխանների հետ, և Տեր-Հովհաննես կաթողիկոսին, որը հաջորդեց Մաշտոց Սևանցուն, հայոց մյուս եպիսկոպոսներով հանդերձ: Իր եպիսկոպոսներով, իշխաններով ու ազատներով հանդերձ եկավ և Վասպուրականի Գագիկը, որն էլ [հետո] թագավոր դարձավ: Եկավ նաև Աղվանքի կաթողիկոս Տեր-Սիմեոնը[662]՝ իր աշխարհի եպիսկոպոսներով ու մեծամեծ իշխաններով: Ինչպես և հավաքվեցին Սյունյաց համազգի հայկազուն իշխանները, որոնց վերը հիշատակեցինք, այլև՝ մեր Սիսական աշխարհի ուրիշ վանականներ ու աշխարհականներ: Նրանց մեջ իսկությամբ կարելի էր տեսնել, ըստ իր անսուտ հրամանի, Քրիստոսին՝ հորով ու ամենասուրբ հոգով՝ երկնային բոլոր զորքերով հանդերձ, այլև առաքյալների ու մարգարեների գնդերով, հայրապետախումբ, մարգարեական և նահատակախումբ բազմություններով: Եվ գիշերային արարողության ժամանակ եպիսկոպոս Հովհաննեսը նրանցից տեսիլքով տեսավ Պետրոսին՝ ձեռքին երկաթե բանալի, և Պողոսին՝ գրկում առաքելական գիրքը, որոնք մտնելով եկեղեցին՝ պատրաստում էին աթոռը երկնային թագավորի համար և բանալին ու գիրքը տվեցին եպիսկոպոսին և ասացին. «Տերը հաճեցավ բնակվել սրա մեջ, և մենք նրա համար հանգստյան տեղ ենք պատրաստում. հենց մեզ էլ հրամայվեց այստեղ մնալ մինչև մեր թագավորի հաջորդ գալուստը. դա արքայության բանալին է, թող մնա այս եկեղեցու մեջ, որովհետև այստեղ է բացվելու դրախտի դուռը բոլոր այն մեղավորների համար, որոնք հավատով դիմելու են սրան. այս գիրքը ևս թող մնա սրա մեջ, որովհետև այստեղից բխելու են վարդապետական շնորհը և սուրբ հեղինակների ողջամիտ քարոզները, այստեղ կմնա մաքուր ու անխառն»:

Այս տեսնելով ու սթափվելով՝ մեծ գոհունակությամբ դեպի երկինք փառաբանություն առաքեց, բայց ոչ ոքի ոչինչ չհայտնեց: Ապա առավոտը բացվելիս հայրապետները և բոլոր եպիսկոպոսները զգեստավորվելով բեմ բարձրացան ու կատարելով հոգևոր օրհնությունը՝ օծեցին աստվածաստեղծ յուղով: Եվ «Թող օրհնվի, թող օծվի» ասելիս ամբողջ բազմությունն այնքան բարձր էր արտասանում, որ լսողներին

թվում էր, թե հրեղեն ամպերից ահարկու որոտ ու ճայթյուններ էին գալիս. երկիրը դղրդում էր, շրջակայքը՝ ցնցվում։ Եվ ես այնպես եմ կարծում, թե լոկ մարդկային ձայները չէին, այլև դրանց խառնվում էին ոչ մարմնական ձայներ, որ այդպես ահարկու էին թվում։ Եվ այսպես կատարելով օրհնութիւնը՝ ութ օր նավակատիք արեցին ի փառս աստծուն։ Այնուհետև յուրաքանչյուրը վերադարձավ իր տեղը։ Բայց թագավորը և Սյունյաց իշխանները, տեսնելով այդպիսի հանդեսը և այնքան չքնաղագույն շինվածքը, առավելապես սիրեցին ու պատվի արժանացրին տեղը. մեծ նվիրատվություններով փարթամացրին և շատ ընդարձակեցին նրա սահմանները, որը և պատմվելու է [ստորև]։

ԽՐ

ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՏՎԵՑԻՆ ԹԱԳԱՎՈՐՆԵՐՆ ՈՒ ԻՇԽԱՆՆԵՐԸ. ԱՅԼԵՎ ՎԱՆՔԻ ՍԱՀՄԱՆ[ՆԵՐԻ ՄԱՍԻՆ], ՈՐ ԳՏԱՆՔ ՄԱԳԱՂԱԹԻ ՎՐԱ ԳՐՎԱԾ ԻՒ ԿՆՔՎԱԾ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՄԱՏԱՆՈՎ

Թագավորը[663] սուրբ եկեղեցուն է ընծայում Արևիք գավառի Մեղրաձորի կարճավան[664] մեծ ավանը, որ ինքը ձեռք էր բերել գնումով։ Գնում է և Հարժիքը[665] Սյունյաց իշխաններից ու այն ևս ընծայում է՝ ազատ բոլոր տեսակի հարկերից։ Տալիս է նաև Գեղարքունիքի [մոտի] Սոթք գավառի Խորասանաբակն[666] ու Գառնու ձորի Գոտող վանքը[667]։ Սյունյաց գահերեց իշխան Աշոտն էլ տալիս է Հաբանդ գավառի Ցողունի գյուղը[668], Սյունիքի Ծղուկ գավառի Բնունիքը[669], նվիրում է նաև Ցուրա գետն[670] ու վանքը՝ Ցուր բերդով[671] ու ագարակներով, Տանձատափն[672] ու Դեղնաձորը[673]։ Բաղացիները տալիս են Տաշոն[674], Աշոտի կողմից փոխանակված ուրիշ գյուղի հետ. տալիս են նաև Բաղք գավառի Եղեգք[675] գյուղը։ Սուփանյանները տալիս են Արիտ[676] գյուղը՝ սահմանակից Հարժիքին ու Տամալեկքին[677]։ Հետո էլ նվիրում են Գեղարքունիքի Կոկույք գյուղը[678]՝ ամեն տեսակի հարկերից ազատ։ Սյունյաց մեծ բարեպաշտուհի տիկինը[679] պարգևում է

Սածարդն[680] ու Քարատնիքը[681]։ Եվ այս բոլորի համար մեծ բազմության ու կաթողիկոսի ներկայությամբ կտակ[ներ] են գրում և եղրափակում են ահավոր նզովքներով, սոսկալի ու սարսափելի բանաձևումով։ Վավերագրերը կնքում են թագավորի, կաթողիկոսի և իշխանների վարազագիր մատանի[ներ]ով, հանձնում Սյունյաց եպիսկոպոս Տեր-Հովհաննեսին։ Մենք հենց տեսանք այդ ամբողջ վճռագր[երը] իրենց իսկ՝ ընծայողների ստորագրություններով՝ հնացած ու եղրերը կտրտրված, ուստի և շատերից քիչը կարողացանք կարդալ։ Եվ քանի որ երկար էին, կարդացողների համար ձանձրալի համարելով՝ այս գրքի մեջ չզետեղեցինք։ Բայց ամենակարևոր կալվածագիրը[682], որ շրջակա սահման[ներն] է ցույց տալիս, այստեղ պիտի բերեմ։ Դարձյալ՝ մի բարեպաշտ կին՝ Համասպրուհի[683] անունով, Բաբկեն իշխանի դուստրը, նախ ընծայում է Հալիքի ձորահովտում գտնվող մեծ այգին, ապա՝ հենց Հալիք[684] գյուղը՝ իր բոլոր սահմաններով։ Նաև հաստատուն կտակ է գրում՝ խիստ բանաձևումներով, որ չհամարձակվեն խախտել։ Թեև այս բոլոր նվիրատվությունները կատարեցին, սակայն Ցուրաբերդի բնակիչներին չկարողացան տեղահան անել, քանի որ նրանք հին տեղաբնիկ սեփականատերեր էին, [բայց] բարբարոս ու պիղծ մարդիկ էին։ Այսպես էլ վանքի մոտ, նրա դիմաց գտնվող Տամալեկքը չկարողացան սեփականել, որովհետև նրա բնակիչները ևս նույնպիսի մարդիկ էին։ Կար նաև Բերդ անունով մի ավազականոց՝ վանքի դիմաց, մեծ գետի այն կողմում, քարափի այն եզրին, որ Ավելադաշտ են կոչում, Ներքին Ուսակում, այն ևս չկարողացան ընկճել։ Դրանից ոչ քիչ վնաս էր հասնում միաբանությանը։ Թեև հետո, տարբեր ժամանակներում դրանք ևս սեփականեցին հայրապետները, սակայն հետագայում, երբ հայրապետանոցը խանգարվեց ու օջախն ավերվեց, այս հոգեբաժին տրված կալվածքները բաժան-բաժան եղան. իսկ երբ հակառակությունը վերացավ, մեկ առ մեկ վերահաստատվեցին։

ՏԱԹԵՎԻ ՇՐՋԱԿԱ ՍԱՀՄԱՆ[ՆԵՐ]Ի ՎԱՎԵՐԱԳԻՐԸ

«Մեր աստվածազոր թագավոր Սմբատի, մեր աստվածակիր կաթողիկոս Տեր-Հովհաննեսի և Սյունյաց եպիսկոպոս, աստվածապատիվ հոգևոր տեր Հովհաննեսի ժամանակներում մենք՝ աստծու նվաստ ծառաներս, Սյունյաց Հայկազուն իշխաններս՝ Փիլիպեի որդի իշխան Աշոտս և իմ որդիներ Սմբատը, Սահակը, Բաբկենը, իշխան Գրիգոր Սուփանը և իր եղբայրներ Սահակն ու Վասակը, իշխան Զագիկն ու իր որդի Հավանները և մեր այլ ազատներն ու ազգականները, մեր աստվածապահ թագավորի, սուրբ կաթողիկոսի, Աղվանքի հայրապետի ու իշխանների, Վասպուրականի իշխաններ տեր Գագիկի ու Գուրգենի, մյուս եպիսկոպոսների, քահանաների, ազատների ու տանուտերերի ներկայությամբ կազմեցինք հաստատուն և անխախտ որոշման այս պայմանագիրը Սյունյաց առաքելական աթոռի՝ Տաթևի կենտրոնական աթոռանիստի շրջակա մեծ սահման[ներ]ի վերաբերյալ, այն օրը, երբ հավաքվել էինք սուրբ եկեղեցու նավակատիքին։ Այս վանքը հարստացրինք առատ պարգևներով՝ որը մենք հենց այսօր տալով, որն էլ մեր նախնիների՝ Սյունյաց առաջին իշխանների [թողածը հաստատելով]։

Կարդացինք մեր հայրերի ու պապերի գրած հիշատակագր[եր]ը, ճանաչեցինք այս սուրբ խաչի և հոգևոր տերերի կալվածքները, որ մեր իշխանության մեջ են, և տեղիս սահման[ներ]ը, որոնք և մենք վերստին հաստատեցինք աստվածընկալ սուրբ խաչի վրա ու ընդարձակեցինք և ժողովականների ամբողջ բազմությամբ մեր ոտքով գնացինք, որոշեցինք շրջակա սահմանները, որոնք այսպիսիք են. արևմտյան կողմից՝ սկսած մեծ ու գլխավոր Գաղբույլ սարից, ջրվեժով մինչև փոսի ճանապարհը, որը Լորաձորի սահմանն է. հյուսիսային կողմից՝ բարձրադիր բնասահմանով գեպի ցած, մինչև գետը, Խոտի դիմաց, գետով մինչև Խոտանան[685], գետն անցնելով Ավազյաց փոսը դուրս եկող փոքր ձորակով, Խոզաց բլրակով, Բացահորի նույն բարակ ճանապարհով, ոչ խոր, անջուր ձորակով [իջնում է] ցած՝ Դեղնաձոր,

մինչև կամուրջը, կամուրջից էլ՝ Քարաձոր, Քարաձորի մեծ բնասահմանով մինչև սարը և բուն ճանապարհը, որ սարով գալիս է Հարսնավազ, Հարսնավազի ձորակով, ճանապարհի կողքի եկեղեցու մոտով, սալքարով հատելով մեծ ձորը՝ հասնում է միայնակ քարափին, որ գտնվում է մեծ ձորի այն կողմում. կտրելով մեծ տափը հասնում է երկար խաչին, ջրվեժով՝ մինչև մեծ փոսը և [շարունակվում] մինչև Բաղաց ձորից եկող ճանապարհը, այնտեղից էլ՝ մինչև նույն Գաղբույլ լեռը։

Ահա սրանք են սահմանները, որ մեր ոտքերով կոխոտելով, մեր աչքերով տեսնելով, մեր ձեռքերով նշանակելով՝ արձանագրեցինք առանց զրկողության ու հափշտակման և [փաստաթուղթը] կնքեցինք մեր արքայի, կաթողիկոսի ու մեր իսկ մատանի[ներ]ով։ Եվ այսուհետև հավիտենաբար սրանք պիտի լինեն Տաթևի այս սուրբ ուխտի սահմանները։ Ոչ ոք չհամարձակվի սրան հակառակվել՝ ո՛չ բաղացինները, ո՛չ որոտնեցիները, ո՛չ վաղանդացիները, ո՛չ շնհերցիները, ո՛չ նորիքցիները։ Իսկ եթե մեկը մերոնցից կամ օտարներից, ավագներից կա՛մ հարկահավաքներից և ավատառուներից կա՛մ տանուտերերից դեմ դուրս գա, սուրբ երրորդությունից բաժանված լինի, երկնք սուրբ ժողովներից՝ նզովված, Հուդայի խաչագողերի և այլ չարագործների հետ դատապարտվի ու պատժվի։ Եվ եթե մահմեդական պաշտոնեություն փոխարինի, ու հափշտակել ջանացող հանդգնողներ լինեն, իրենց կրոնով անիծվեն ու հավատակորույս լինեն, փեղամբարից՝ մերժված, ալլահին, հրեշտակներին ու հոգևոր հայրերին ուրացած լինեն, նրանց սերունդներն անարգված լինեն, նրանց հալալը հարամ լինի, և մինչև հազար տարին անեծքը մնա նրանց վրա[686]. նրանց համար երկինքը անձրև չթափի, հողը՝ կանաչ չծլարձակի։ Ես՝ Հովհաննեսս, աստծու շնորհիվ հայոց կաթողիկոսս, վկա եմ այս անխախտ ու անխափան որոշմանը, որ կայացվեց Սյունյաց մեծ իշխանների կողմից. և [փաստաթուղթը] կնքեցի իմ սովորական մատանիով։ Ես՝ հայոց թագավոր Սմբատ Բագրատունիս, իմ ձեռքով հաստատեցի այս որոշումը և վճռագրի վրա, ներքևում դրոշմեցի իմ թագավորական մատանին։ Ես՝ Վասպուրականի ու Արծրունյաց տեր, Գրիգոր Դերենիկի որդի

Գագիկս, վկա եմ այս ընծաներին և Սյունյաց աթոռի սահմանադրմանը։ Ես՝ աստծու նվաստ ծառա Աղվանքի արքեպիսկոպոս Տեր-Սիմեոնս, վկա եմ այս որոշմանը և իմ մատանիով կնքեցի այս վճռագիրը։ Ես՝ Սյունյաց իշխան Գրիգոր Սուփանս, վկա եմ ու հաստատիչ այս որոշմանը, որ մեզ համար սահմանվեց։ Մենք՝ Աղվանքի իշխաններ Գրիգորս, Եսայիս և Ատրներսեհս, վկա ենք այս որոշմանը։ Մենք՝ Սյունի Զագիկս և Հրահատս, վկա ենք այս որոշմանը։ Մենք՝ Գարդմանի տեր Սահակս և Գնթունի Աշոտս ու Վասակս, վկա ենք սրան։ Ես՝ Սյունյաց եպիսկոպոս Հովհաննես, հաստատեցի այս որոշումն իմ ձեռքով ու կնքեցի իմ մատանիով։ Աստված շնորհավոր անի սուրբ խաչին, սուրբ եկեղեցուն և այստեղ նստող աստվածաշնորհ հայրապետներին։ Սա կատարվեց հայոց երեք հարյուր հիսունհինգ թվականին»[687]։

ԽԴ

ԽՈՏԱԿԵՐԱՑ՝ ՔԱՐԿՈՓ ԱՆՎԱՆՎԱՄ ՎԱՆՔԻ[688], ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՆՐԱ ԿՈՐԾԱՆՎԵԼՈՒ ԵՎ ՇՈՒՇԱՆ ՏԻԿՆՈՋ ՈՒ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՇԻՆՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այս վանքի [կառուցումից] առաջ, շատ ժամանակներից ի վեր խոտաճարակ ու քուրձ հագնող մարդիկ էին բնակվում Վայոց ձորի խորքերում, Հրասեկի բերդի սահմաններում, Արաստամուղ[689] գյուղի մոտ, որը բարձր դիտանոցի նման նայում էր Շարուրի դաշտին։ Նրանք մեծ բազմություններով հեռացած էին զգեստներից ու նյութական կերակուրներից և ցրիվ եկած տեղի քարաժայռերի ու խորաձորերի մեջ՝ զբաղված էին մշտական աղոթքներով. կիրակնօրյա տոներին խմբվում էին իրար մոտ ու հաղորդակից լինում երկնային զենմանը. դա էլ լինում էր նրանց համար հացի ու գինու վայելում։ Մյուս օրերին նրանցից ոմանք բնակվում էին ծերպերում, ոմանք՝ խիստ նեղ հյուղակներում, ոմանք՝ առանց օթևանի, լուռ ու անմռունչ և բավարարվում էին հունդերով կամ բանջարների սակավ սնունդով։ Ոմանք մի նեղ

ձորակում, քաղցրահամ աղբյուրի մոտ մատուռ էին շինել ու այնտեղ էին կենում։ Նա այժմ Ուռո քար է կոչվում։ Այնտեղ նրանց գերեզմաններն են, և մեծամեծ բժշկություններ են լինում։ Ոմանք մյուս լայն ձորում շինել էին սենյակ ու այնտեղ էին ապրում։ Դա Հին վանք են կոչում։ Ուրիշներն էլ այս ու այնտեղ ցիրուցան էին։ Նրանց բոն կենտրոնատեղին Արաստամուղ գյուղի մոտի եկեղեցին էր, որի մեջ մի հարմար տեղ հաստատել էին ահարկու և աստվածահրաշ սուրբ նշանը, որ Խոտակերաց խաչ է կոչվում։ Եվ մեր աշխարհի ավերումից հետո այդ կրոնավորները ցրիվ եկան, ու այն տեղը ավերակ և անբնակ մնաց մինչև Սյունյաց տեր Աշոտ իշխանի օրերը։ Հետո Սյունյաց մեծ եպիսկոպոս Տեր-Հովհաննեսը նրան իրազեկ է դարձնում իրողությանը, և նա հրամայում է վերստին շինել եկեղեցին ու վանքը՝ [այնտեղ] հավաքելով կրոնավորներին։ Որպես կալվածք եկեղեցուն է տալիս Արաստամուղ գյուղը։ Դրանք այդպես էլ կատարվում են։

Այնուհետև վախճանվում է բարեպաշտ ու արքայաշուք այն Աշոտ իշխանը, և սաստիկ երկրաշարժից տապալվում են եկեղեցին ու վանքի բոլոր շինությունները, որի մասին նորից եպիսկոպոսը տեղեկացնում է երանելի Շուշան տիկնոջը։ Եվ սա, առավել աստվածասեր ու բարեպաշտ լինելով, խնդրում է եպիսկոպոսին շտապ կերպով սկսել կառուցել եկեղեցին ու շրջակայքը՝ առաջինից ավելի շքեղ՝ ասելով. «Որ չկորչի իմ տեր Աշոտի հիշատակը»։ Երջանիկ եպիսկոպոս Տեր-Հովհաննեսը հենց անհապաղ ու շտապ կերպով կատարում է դա։ Նավակատիքին էլ հրավիրեցին հայոց մեծ կաթողիկոս Տեր-Հովհաննեսին։ Վանքը զարդարեցին պայծառորեն ու առավելագույն չափով և եկեղեցու վրա Աշոտի ու Շուշանի հիշատակին փորագրեցին արձանագրություն, որի պատճենը սա է. «Սրանից առաջ նախ եղել է Խոտակերաց վանքը. և քանի որ ավերվել էին այս կրոնավորանոց ուխտը և սրա մեջ վաղուց եղած քավարանը, ուստի իմ տեր երանելի Աշոտը ջանադրությամբ շինել էր սուրբ եկեղեցին ու միաժամանակ ամբողջ շինությունները զարդարել կրոնավորական դասերով։ Իսկ հենց որ իմ տեր Աշոտը, այս մարմնական կյանքից դուրս գալով, փոխադրվեց իր հայրերի

մոտ, մեր որդիները Արաստամուղ գյուղը սահմանեցին սուրբ ուխտի մեջ իր այն սահմաններով, որոնք իրենց հայրերը վայելել էին, երանելի իշխան Աշոտի և ինձ՝ Սյունյաց տիկին Շուշանիս համար՝ որպես հոգևոր արձան ու հիշատակ մեզ և մեր որդիների արևշատության համար։ Եվ պատահեց [այնպես], որ այս եկեղեցիները հիմնաշարժ լինելով ավերվեցին։ Ես, կամենալով իմ տեր Աշոտի կյանքին հաղորդակից լինել, նրա՝ Քրիստոսի մոտ փոխադրվածի հիշատակը նորոգելու նպատակով շինեցի այս նոր սուրբ եկեղեցին կրոնավորանոց շինություններով՝ արբուհի և մշտապես կույս Մարիամ Աստվածածնի անունով։ Եվ իմ երանելի տեր, Սյունյաց իշխան Աշոտի ու իմ մեղավոր հոգու փրկության և մեր որդիների՝ Սմբատի ու մյուսների երկարաձիգ կյանքի ու հաջողության համար նույն Արաստամուղ գյուղը նրա՝ մինչև այժմ վայելած բոլոր սահմաններով այս վանքի առաջնորդի միջոցով անխախտ պայմանով հաստատեցի Խոտակերաց վանքի սուրբ Աստվածածնի վրա՝ հավիտենաբար, իմ որդիների կամակցությամբ։ Եվ այս սուրբ կրոնավորանոցում, իմ շինած հինգ եկեղեցիներում այս պայմանը դրեցի։ Այս մեր եկեղեցին, որ Աստվածածինն է, հանուն իմ տեր Աշոտի ու ինձ լինի, և տարեկան երեք քառասունք կատարեն մեր մեղավոր հոգիների համար, թերևս ողորմություն գտնենք Քրիստոսի ահեղ դատաստանի ժամանակ։ Իսկ մյուս չորս եկեղեցիները լինեն մեր որդիների արևշատության, հոգիների փրկության ու վանքի կարիքների համար։ Արդ՝ ոչ ոք չը-համարձակվի հակառակություն կամ խափանում առաջ բերել այս որոշմանն ու պայմանին, այլապես այնպիսին մատնիչ Հուդային գործակից լինի և Քրիստոսի ահեղ դատաստանի օրը մեր մեղքերի դիմաց հաշիվ տա։ Եվ մենք՝ հայոց կաթողիկոս Տեր-Հովհաննեսը, մեր եպիսկոպոսներով ու [մյուս] կրոնավորներով, Սյունյաց եպիսկոպոս Տեր-Հովհաննեսս, վրկա ենք այս գրության ու որոշմանը։ Այս կտակ-հիշատակագրությունը գրվեց հայոց երեք հարյուր հիսունինը[690] թվականին, ամենակալ աստծու կամքով[691], որը և օրհնված է հավիտենապես. ամե՛ն»։

ՎԱՀԱՆԱՎԱՆՔԻ[692] ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԶԱԳԻԿԻ ՈՐԴԻ ՎԱՀԱՆԻ[693] ԿՈՂՄԻՑ

Ինչպես վերն ասացինք, ոմն Վահան՝ Զագիկ իշխանի որդին և Զևվանշերի եղբայրը, դիվահար մոլեգնության պատճառով կրոնավոր դարձավ և կամեցավ վանք շինել ու [այնտեղ] հաստատել մշտապաշտոն քահանաների կրոնավորական դասեր։ Եվ շատ ու խիստ ճգնություններից հետո գալով այն բարձր լեռան ստորոտը, որի վրա է Բաղաբերդի անառիկ ամրոցը, Աճանանի[694] դիմաց՝ գտնում է մի հարթ տեղ, շատ հարմար. նախ՝ աղոթքներով տիրոջից խնդրում է հաջողեցնել իր ձեռնադրումը, ապա՝ նույն գործին է հրավիրում իր կրոնակից վանականներին[695]. սկսում է եկեղեցու շինարարությունը ու կանգնեցնում աստծու փառքի տուն՝ հույժ գեղեցիկ կառուցվածքով, գմբեթահարկ, եռախորան, ամուր միացված տաշածո վեմերով, և դարձնում կրոնավորների տուն։ Արժեքավոր ու թագավորական սպասքներով զարդարում է այն, հավաքում է ավելի քան հարյուր մաքրակրոն վանականների։ Եվ սուրբ Գրիգոր Լուսավորչի անունը կրող այդ եկեղեցուն հատկացնում է կալվածքի բաժին՝ ձորը գետով և այս ու այն կողմի հանդերն ու վանքի այգիները, լեռնակողմը՝ դեպի վեր, մինչև բարձրավանդակի ծայրը, որտեղ մակաղում էին մանր եղջերավոր անասունների հոտերը, իսկ քաղաքի կողմից՝ մինչև պարսպի արտաքին պատը, որը սկսվում է լեռնից, Տանձափարախի[696] կողմից՝ մեծ բնաձորը, որ սկիզբ է առնում լեռնից ու իջնում մինչև գետը, և վանքի դիմացի գյուղերը՝ Աչաղուն[697], Աչաղվա գետը, Արավայրը[698], Շեկքը[699], ինչպես և եկեղեցու ուրիշ շատ նվիրատվություններ ու տիրույթներ՝ հաստատելով անխախտ որոշմամբ։ Վահանն իր անունով վանքը կոչում է Վահանավանք[700], որը այնուհետև օրըստօրե ճոխանում է որպես բազմամարդ քաղաք։ Նույն Վահանը շատ ճգնություն ու ջանադիր աշխատանք կատարելուց հետո վախճանվում և թաղվում է սուրբ տաճարի դռանը։

Սուրբ վանքի կառուցումը կատարվել է հայոց երեք հարյուր վաթսուն թվականին[701], Սմբատ Բագրատունու թագա-

վորութ֊յան, Աշոտի որդի Սյունյաց գահերեց իշխան Սմբատի[702], Բաղքի Զեվանշերի իշխանութ֊յան, Տեր-Հովհաննեսի՝ Սյունիքի եպիսկոպոսութ֊յան ժամանակ։

Իսկ հետո մյուս Վահանը[703]՝ նախորդի եղբորորդին, այսինքն՝ Զեվանշերի որդին, այս վանքում մանկութ֊յունից դաստիարակվելով ու սովորելով, վարժվելով աստվածային գիտութ֊յուններին, քահանայացավ ու դարձավ սուրբ միաբանութ֊յան առաջնորդ։ Նա ավելացրեց բազմաթիվ շինութ֊յուններ ու վանքը զարդարեց երևելի բարեկարգումներով։ Եկեղեցու բակում կառուցեց մեծ աղոթատունը՝ վիմակերտ մահարձաններով, որտեղ թաղված են Աղվանքի և Բաղքի շատ թագավորներ ու թագուհիներ, Սիսական աշխարհի բազմաթիվ փառավոր իշխաններ։ Գեղեցիկ հորինվածքով շինեց եկեղեցու գավիթը՝ մեծամեծ հղկած վեմերով, երեսուն կանգուն բարձրութ֊յամբ։ Վանքի դռանը կամար կանգնեցրեց՝ վրան երկու խորան, Պողոս և Պետրոս սուրբ առաքյալների անվամբ։ Կրաշաղախով միացված քարերով կառուցեց և մի մեծ սեղանատուն ու խողովակով ջուր բերեց նրա դուռը։ Եվ այսպես զանազան կառույցներով գեղեցկացրեց վանքը։ Ապա ինքը հրավիրվեց Սյունյաց եպիսկոպոսութ֊յան պաշտոնին՝ Տեր-Հակոբից հետո[704]. իսկ այնտեղից էլ [հասավ] ծայրագույն փառքի՝ հայոց կաթողիկոսութ֊յան, որ եղավ Տեր-Անանիա Մոկացուց[705] հետո։ Կաթողիկոսութ֊յան աթոռին մնալով հինգ տարի[706]՝ վախճանվեց Վասպուրական աշխարհի Տոսպ գավառի Բերկրիի մոտի Զորավանքում[707] ու թաղվեց տաճարի բակում։

Երկար ժամանակ անց Բաղքի Գրիգոր թագավորի[708] օրոք, ինչպես և Շահանդուխտ թագուհու[709], Կատայի[710], Սենեքերիմ թագավորի[711] կողմից բազմաթիվ ու գեղեցիկ կառուցումներով առավել գեղեցկացվեց Վահանավանքը։ Կանգնեցրին մեծամեծ կամարներ՝ վրաները եկեղեցիներ, բազմասյուն ու բարձրահարկ սրահներ, իշխանական հովանոցներ ու խըրախճարաններ։ Այդ ժամանակներում եկավ Աղվանքի երջանիկ կաթողիկոս Տեր-Ստեփանոսը[712] և, որոշ օրեր այնտեղ ապրելով, վախճանվեց ու թաղվեց նույն սրբարանում,

ՏԵՐ-ԳԵՈՐԳ ՔԱՀԱՆԱՅԻ[713] ՄԱՍԻՆ, ՈՐ ՍՅՈՒՆՅԱՑ ԻՇԽԱՆԻ ՈՐԴԻ ԷՐ

Փիլիպեի[714] որդի Սյունյաց տեր Վասակի[715] իշխանութ֊յան օրոք Սիսական տոհմից Գեորգ անունով մի մանուկ՝ հույժ գեղեցիկ տեսքով ու առողջ կազմվածքով, չափահաս դառնալով ամուսնացել էր։ Բայց ըստ աստվածային երկյուղածութ֊յան՝ նրան նեղում էր Ավետարանի այն խոսքը, որ ասում է. «Տղամարդը եթե չի թողնում իր հորն ու մորը, կնոջը կամ որդուն և չի վերցնում խաչն ու գալիս իմ հետևից, ինձ արժանի չէ»*։ Երբեք չէր հանգստանում և մարմնական փառքի ու ցանկութ֊յունների մեջ հաճույք չէր զգում։ Մաքրութ֊յամբ ու սրբութ֊յամբ հասած լինելով օրինական ամուսնութ֊յան՝ նա այնուհետև մի օր հանկարծակի անհայտանում է իր ապարանքից ու ընտանիքից, գաղտնի կերպով գնում է ինչ-որ մի վանք։ Հագուստը փոխում է մաշկեղենով ու մազեղենով, անծանոթ է մնում՝ անհանգիստ տքնութ֊յամբ։ Ապա մայրը՝ խորհրդավոր տիկին Համամուհին, կինը, եղբայրներն ու ծառաները աղմուկ բարձրացրին և շրջում էին՝ որոնելով Գեորգին, բայց չէին գտնում։ Կարճ ժամանակ անց տեղն իմացան. գնացին, բռնութ֊յամբ բերեցին իր ապարանքը։ Պատառոտելով այծի մազից պատրաստված, [ինչպես և մաշկեղեն] կոպիտ հագուստը՝ հագցրին արքունական, մեծագնաք հայրենական զգեստ։ Թեև բռնութ֊յամբ պահում էին, բայց նա մերձավորների հետ չէր շփվում, այլ Քրիստոսի սիրուց կարծես թմրած ու ընդարմացած՝ լուռ էր մնում, միշտ զբաղված էր աղոթքով ու ընթերցանութ֊յամբ։ Մի օր էլ դարձյալ աներևութացավ։ Եվ հագնելով մազեղեն կոպիտ ու պատառոտուն քուրձերը՝ գնաց Երիցավանքի մեծ առաքինարանը աստվածակիր ու սրբափայլ, մեծ կառավարիչ[716] Թեոդորոս քահանայի մոտ, որը չափազանց ուրախությամբ ընդունեց նրան։ Իսկ մայրն ու կինը, իմանալով և վերցնելով Սյունյաց ազգակից իշխաններին, դիմեցին դեպի Երիցավանք, բազում ու զանազան խնդրանքներով ջանացին [վերադարձնել], բայց

* Համմ. Մատթ., ժ, 37—38։

չկարողացան նրա համառությունը կոտրել։ Ապա իմանալով Քրիստոսի հանդեպ ունեցած անխախտելի սերը՝ նրան թողեցին իր կամքին ու գնացին։ Իսկ նա երկար ճգնություններից ու խստակրոն կենցաղավարությունից հետո փափագում էր քահանայական կարգի շնորհի։ Այն ժամանակ ճգնությամբ փայլում էին Սյունյաց մեծ եպիսկոպոս Սողոմոնն ու երանելի Մաշտոց Սևանցին։ Եվ քանի որ վարդապետներից ու աշխարհականներից ոմանք նախանձում և չարակնությամբ, խիստ խոսքերով կսկծեցնում էին Գեորգին, ուստի Թեոդորոսը վերցնելով նրան տարավ Տեր-Սողոմոնի մոտ, որը նրան շատ սիրով ընդունեց ու հորդորական խրատով հուսադրեց. առաջարկեց հեռանալ այնտեղից, գնալ Մաշտոցի մոտ, կրթվել ու նրանից սովորել առաքինական բոլոր վարվեցողությունները։ Նա այդպես էլ արեց։ Թեոդորոսի հետ Գեորգը ճանապարհ ընկավ, գնաց Սևան և երկար ժամանակ բնակվեց այնտեղ։ Մաշտոցի մոտ սովորելով ու դաստիարակվելով ամենայն բարեկրթությամբ՝ վերադարձավ իր տեղը։ Մեռած գտավ Սողոմոն եպիսկոպոսին, որին հաջորդել էր Տեր-Հովհաննեսը։ Շնորհավորական այցի գնաց նրան, որի կողմից արժանացավ մխիթարական շատ խրատների ու հորդորների։ Հաստատվելով Երիցավանքում՝ Թեոդորոսի հետ ճգնողական մեծամեծ գործերով փայլում էր։ Ապա որոշ ժամանակ անց կրկին գնաց Սևան, Մաշտոցի մոտ՝ Տեր-Հովհաննեսի հրամանով, ու նրանից [միջնորդություն] խնդրեց իր քահանայանալու համար։ Մաշտոցը նրան խնդրանքի գրությամբ ուղարկեց հայոց կաթողիկոս Գեորգի մոտ՝ վերջինիս ծանոթացնելով նրա գործի բոլոր հանգամանքներին և որպես հայրապետական երաշխավոր դարձավ Գեորգի համար։ Կաթողիկոսը, տեսնելով Գեորգին և կարդալով գրությունը, մեծ պատվով ընդունեց ու հրամայեց ձեռնադրել նրան քահանա։ Եվ [ձեռնադրելով]՝ նրան վերադարձրին իր տեղը, ու շատ մարդիկ ուրախացան։ Իսկ Մաշտոցը որպես երաշխավոր հաղորդական թղթ[եր]ով ու հոգևոր խորհուրդ[ներ]ով անդադար զգույշ էր պահում նրան։ Մաշտոցի կաթողիկոսության ժամանակ էլ Գեորգը շարունակ նրա հետ էր լինում, մինչև նրա վախճանը։ Իսկ Մաշտոցի մահից հետո գալիս ու բերում է այդ երանելու շուրջառը, խոյրակերպ

կնգուղը և պարեգոտը որպես նշան Սյունիքի համար։ Ինքն էլ Թեոդորոսի հետ հրեշտակակրոն վարքով բնակվում է Երիցավանքում։ Այնտեղ էլ վախճանվում է, և նրա սրբասուն մարմինը թաղվում է երիցս երանելի սուրբ հայր Երիցակի մոտ, նույն սրբարանում։ Նրանց բարեխոսությամբ Քրիստոսը թող խնայի այս աթոռին ու նրա հավատացյալ հոտին։

ԽԷ

ԲՂԵՆ ԳԱՎԱՌԻ[717] ՆՈՐԱՎԱՆՔԻ[718] ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Երանելի սուրբ հայր Գեորգը մի հարազատ մանկիկ ուներ՝ նույն Սիսական տոհմից՝ Ստեփանոս անունով, որին մայրական կրծքից կտրելով՝ մանկուց ուսման ավելցին աստվածային ծերերի մոտ։ Եվ նա, սովորելով, դաստիարակվելով ամենայն կատարելությամբ, զարգացավ և՛ ներքնապես, և՛ արտաքնապես, գիտականորեն ու գործնականորեն և Սյունյաց Տեր-Հովհաննես եպիսկոպոսի կողմից քահանայության աստիճանի կոչվեց։ Ապա փափագելով աստվածային մի գործի՝ կամեցավ եկեղեցի շինել և այնտեղ կրոնավորների միաբանություն ու սպասավորների դասեր հաստատել, չէ՞ որ ով առաջնորդություն է ստանում, անընդհատ զորանում է և աստծուն ու հրեշտակներին է երևում Սիոնում։ Ապա գնալով Կատարի վանքի[719] հակառակ կողմը՝ մի շատ գեղեցիկ ու վայելուչ տեղ է գտնում երկու ձորերի միջև հարթ [մակերեսով] մի լեռնաբազկի վրա և Հրահատ իշխանի[720] օժանդակությամբ եկեղեցի է կառուցում։ Ավարտում է այն և [ավելացնում] եկեղեցական գավիթներ, սրահներ ու կրոնավորների բնակարաններ։ Նավակատիքի է հրավիրում Սյունյաց եպիսկոպոս Տեր-Հակոբին։ Դա սահմանում են միաբանություն, շրջակա բոլոր վայրերն էլ կալվածք [հատկացնում] եկեղեցուն։ Վանքի դիմաց հիմնում են բորոտանոցներ ու այնտեղ հավաքելով բազմաթիվ բորոտների՝ դարմանում էին։ Եվ այսպես ամեն տեսակ հարմարանքներով ու կարգ ու կանոնի հաստատումով վանքը ծաղկեցրեց հայոց երեք հարյուր ութսունհինգ թվականին[721]։ Ինքը՝ երանելի,

մարդկանց մեջ անհամեմատելի Ստեփանոսն էլ, առաքինա-
ջան վարքով շատ տարիներ ապրելով ու հրեշտակակրոն
առաքինությամբ անմարմիններին մարմնի բերելով և կյանք
[պարգևելով նրանց], մեռավ մարմնով և կենդանի հոգով
փոխադրվեց աներևույթ կայանը, հրեշտակների շարքը։ Այդ
երկնաքաղաքացի այրը գնաց իր քաղաքապետ Քրիստոսի մոտ
հայոց չորս հարյուր տասնինը թվականին[722], նավասարդ ամ-
սի 17-ին, հինգշաբթի օրը, սուրբ Հոգեգալուստին[723], թաղ-
վեց սուրբ եկեղեցու մոտի գերեզմանոցում։ Այնուհետև նո-
րավանքի միաբանության առաջնորդությունն ստանձնեց նույն
Ստեփանոսի եղբորորդի Քրիստափորը՝ այդ սուրբ հոր աշա-
կերտը՝ ամբողջովին նմանվելով իր ուսուցչին։

Կարճ ժամանակ անց հայր Գեորգի ու Հովհաննես քահա-
նայի կողմից [այնտեղ] կառուցվեց [նոր] եկեղեցի՝ շատ
գեղեցիկ հորինվածքով, դռանն էլ՝ զարմանալի կամարներ՝
սքանչելի վարպետների ձեռքով հարմարեցված մեծ վեմե-
րով ու խարսխավոր սյուներով[724]։

ԽԸ

ՅՈՒՐԱԲԵՐԴԻ[725] ԱՎԵՐՄԱՆ ԵՎ ՆՐԱ ՎԵՐԱՇԻՆՈՒՄՆ [ԱՐԳԵԼՈՂ] ԱՆԵՑՔԻ ՄԱՍԻՆ

Սյունյաց գահերեց իշխան Աշոտի որդի Սմբատի իշխա-
նության և սուրբ եկեղեցին կառուցող Տեր-Հովհաննեսի
եպիսկոպոսության ժամանակ Տաթևի սուրբ միաբանությա-
նը մեծամեծ վշտեր պատճառեցին Յուրաբերդի բնակիչնե-
րը, որոնք անաստված, լիրբ ու ավազակ մարդիկ էին։ Մի
օր էլ գիշերվա մի անսպասելի ժամի գալով՝ սկսեցին կո-
ղոպտել եկեղեցին, արհեստանոցներն ու կրոնավորների բնա-
կարանները։ Որոնեցին եպիսկոպոսին, որ սպանեն, բայց չգ-
տան։ Ապա ծերերից ոմանց սրի քաշեցին, իսկ ուրիշներին
փախուստի մատնեցին։ Ինչ էլ որ գտան, վերցրին, գնացին
Յուրաբերդ։ Տարան նաև մեռոնն արծաթե սափորով ու քա-
րափից թափեցին։ Իսկ երբ լուսացավ, եպիսկոպոսն [ու մնա-
ցած մյուս կրոնավորները] եկան, տեսան այդ ամբողջ վնա-

սը, վերցրին սուրբ խաչը և ուրիշ սրբություններ, ահավոր
անեծքներով նզովեցին բերդն ու նրա բնակիչներին։ Եվ ան-
միջապես երկրաշարժ եղավ, քարափը ճեղքվեց երկու մա-
սի, ու բոլոր շինությունները փլվեցին, բնակիչներից շա-
տերն էլ անհայտ կորան։ Իսկ եպիսկոպոսը չհամաձայնվեց
իր տեղում բնակվել, այլ վերցնելով խաչը, ամբողջ սպասա-
վորներով ելավ-գնաց օտար աշխարհ։

– Այս մասին տեղեկացնում է փառաբանված իշխան Սմբա-
տը, որը վեր է կենում, ուրիշ ազատներով գնում է եպիս-
կոպոսի ու սուրբ խաչի ետևից. բազում թախանձանքներով
նրանց ետ է բերում իրենց տեղը՝ Տաթևի մեծ հայրապետա-
րանը։ Իսկ Յուրաբարի անհնչյալ բնակիչներին հալածում է,
պատժի ու պատուհասի ենթարկում և առհասարակ ջնջում
ու մաքրում է մեր աշխարհից։ Նրանց բնակատեղին իր սահ-
ման[ներ]ով սեփական կալվածք է հատկացնում եկեղեցուն՝
ավանդելով Տեր-Հովհաննեսի միջոցով։ Հրամայում է գրել
ահավոր նզովագիր, կնքել ու դնել սուրբ եկեղեցում, որ ոչ
ոք չհանդգնի վերաշինել այն տեղը։ Եվ գրվեց փաստաթուղ-
թը, որն այսպիսին էր. «Ես՝ Հովհաննեսս, աստծու շնորհիվ
Սյունյաց եպիսկոպոսս, գրեցի այս որոշումն իմ իսկ ձեռ-
քով, Սյունյաց Սմբատ աստվածազոր իշխանի հրամանով,
որովհետև մեզ վտանգ հասավ Յուրաբերդ կոչված քարափի
վրա բնակված չար ու անաստված ավազակներից, որոնք գի-
շերով հանկարծակի հարձակվեցին բազմությամբ խմբված
վանականների վրա, կողոպտեցին բոլոր շինքերը, ծերերից
ոմանց էլ սպանեցին։ Իսկ մենք, այդպիսի աղետը տեսնե-
լով, սուրբ խաչն առած, հալածական փախանք ուրիշ աշ-
խարհ. և մեր բոլոր կրոնավորները ցիրուցան եղան։ Ապա
աստվածապահ իշխան Սմբատը, այդ մասին տեղեկանալով,
եկավ, մեզ վերադարձրեց այստեղ։ Քաջասիրտ ու մեծահա-
վատ լինելով՝ առյուծի նման մռնչաց այն չարերի վրա ու
բոլորին ցրիվ տվեց։ Մեծ իմաստնությամբ գիտեր, որ այն
քարափն անօգուտ է, որևէ մեկին շահավետ չէ, չի էլ նեղում
ոչ ոքի՝ ո՛չ բաղացիներին և ո՛չ ուրիշ տեղացիների, այլ
միայն տագնապով վշտացնում է մեր եկեղեցուն ու նրա իշ-
խանությանը, որոնք իր և իր նախնիների բազմառատ ու ան-
չափելի միջոցներով և հրաշագործ աշխատանքով ծաղկեց-

օր այնտեղ բորոտների, քոսոտների ու այլ հիվանդների բժշկություն է կատարվում։ Նրան փոխարինում է Տեր-Գրիգորը[729], որը Վասակ Թագավորից խնդրում է այն տեղը [Ցուրը]՝ նրանց ցույց տալով Տեր-Հովհաննեսի ձեռքով գրված առաջին նզովագիրը։ Եվ Վասակը նրան տրամադրում է տեղը՝ պատվեր տալով քարուքանդ անել, հիմնահատակ կործանել ու իսպառ ջնջել բերդի հետքը։ Նա հենց այդպես էլ անում է ու երկրորդ կոտակ է գրում այսպես. «Աստծու շնորհիվ աստվածասեր և բարեպաշտ Վասակ Թագավորը, իշխանաց իշխան Սևադան ու նրանց մայր Շահանդուխտը, ըստ իրենց քաջահավատ հույսի ու երկյուղած բարքի, կամեցան հաստատել այս սուրբ եկեղեցին կառուցող երանելի Տեր-Հովհաննեսի վերոգրյալ վճռագիրը և սաստիկ նզովքներով փակել ներկա ու հանդերձյալ կյանքը Ցուրաքարը [վերա]շինողի համար։ Անհավատներն ու աներկյուղները այն անտես անելով՝ ձեռնարկել ու վերաշինել էին բերդը՝ ժամանակավոր օգտի համար, բայց ոչինչ չշահելով, անօրինությամբ պատճառով որդնալից կերպով սատկոտեցին, պակասեցին, կրան։ Իսկ մեր ժամանակ հրամայվեց ավերել, հիմնահատակ անել։ Ով այլևս հանդգնի շինել, նզովվի Հորից, Որդուց և Սուրբ հոգուց. նրա որդիները մուրացիկ դառնան, թափառեն ու իրենց [կյանքի] օրերը չամբողջացնեն։ Իսկ եթե մահմեդական ավազությունն փոխարինի ու ջանա Ցուրը հաղթահարել կամ բերդաքարափոր շինել, աստծուց անիծվի և Մահմեդից դատապարտվի. նրա համար հալալը հարամ դառնա և իր կորանից ամոթահար ու սևերես լինի։ Այս կատարվեց իմ՝ Տեր-Գրիգորիսի, ձեռքով, որը կնքեցի սեփական մատանիով, աստծու կամքով»։

ԽԲ

ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՎԱԽՃԱՆԸ ԵՎ ՏԵՐ-ՀԱԿՈԲԻ ՀԱՋՈՐԴՈՒՄԸ. ՎԵՐՋԻՆԻՆ ՕՐՈՔ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄԸ

Նրանելի, աստվածակիր Տեր-Հովհաննես մեծ հայրապետը բազմաթիվ բարեկարգումներից և [ուրիշ] մեծամեծ ու երևելի գործերից հետո վախճանվում է հայոց երեք հար-

րել էր ու ցանկալիորեն կարգավորել՝ ազատեց և հանգիստ վիճակի մեջ դրեց սուրբ նշանն ու այս վանքը, մեզ էլ նեղությունից անդորրության բերեց, այն տեղն էլ հանձնեց մեր ձեռքը։ Դրա համար տեր աստված նրան թող հատուցի մարմնական վայելում՝ երկար ժամանակով, խաղաղ իշխությամբ, զավակներով ու տոհմով, այլև արժանանում հավիտենական կյանքին ու արքայությանը՝ սուրբ թագավորների հետ։

Դարձյալ՝ Սյունյաց նույն Սմբատ իշխանի հրամանով իմ ձեռքով գրեցի հավիտենական կտակ, կնքեցի սեփական մատանիովս, դրեցի այս եկեղեցում, որ հետագայում ոչ ոք չհանդգնի նույն ոճիրը գործել։ Արդ՝ եթե մեկը այս մեր հրամանին հակառակվի և Ցուրը այս սուրբ եկեղեցուց վերցնի կամ ցանկանա այդ սուտ քարափը բերդ համարել, մատծի [վերա]շինել և եկեղեցու հանդեպ կրկին հալածանք հարուցել, այնպիսին նզովվի ամենակալ աստծուց, բոլոր սրբերից ու մեզանից և չարժանանա ողորմության, այլև նրա վրա ցավագին անեծքներ գան, կոտորվեն նրա որդիները, նրա անունը ջնջվի ժողովրդից, դրանից հետո ինքն անհետանա պատմությունից, սատանայի հետ անշեջ կրակից բաժին ստանա։ Իսկ ժամանակի [աշխարհական] իշխանը եթե հաստատ մնա այս պայմանին, ինչպես աստվածասեր այս Սմբատ իշխանը, նրա օրհնությունն ու վարձատրությունը կրստանա։ Բայց եթե մոռանա և անուշադրության մատնի, իրենն էլ չվայելի ու ենթարկվի այս գրության մեջ նշված բոլոր նզովքներին։ Սա եղավ հայոց երեք հարյուր վաթսունչորս թվականին»[726]։

Սակայն երկար ժամանակներից հետո, երբ հայրապետանոցը խանգարվել էր, եկեղեցու սեփականությունները՝ ցրիվ եկել, այս տեղը ոմանք վերցրին, վերաշինեցին և եկեղեցու նկատմամբ մեծամեծ հալածանքներ սկսեցին թագավոր դարձած Վասակի[727], Սևադայի և նրանց մայր Շահանդուխտի օրոք։ Վանքը կրկին ավերեցին։ Տեր-Հակոբ եպիսկոպոսը[728], որ գնացել էր Բաղք, այնտեղից վերադառնում էր, և շնաբարոները, հսկելով Ցուրի փոսով անցնող նրա ճանապարհը, հարձակվեցին վրան ու սպանեցին, որը և թաղված կա՝ հիշեցնելով այդ չարագործությունը։ Եվ մինչև այս-

յուր վաթսունյոթ թվականին[730], թաղվում սուրբ եկեղեցու մոտ։ Բայց նրա գործերից ու սուրբ ուխտը փարթամացրած ժառանգությունից շատ բաների մասին չգրեցինք, որովհետև նախ՝ հնացած հիշատակությունները չկարողացանք ճշտությամբ վերծանել, և ապա՝ ընթերցողների համար դա տաղտկալի համարեցինք։ Նրանից հետո Սյունյաց գահերեց իշխան Սմբատը հայոց մեծ և աշխարհակալ կաթողիկոս Տեր-Հովհաննեսից[731] Սյունիքի համար խնդրում է եպիսկոպոս ու առաջնորդ։ Կաթողիկոսարանում կար մի սենեկապետ, կաթողիկոսի գործակալ, շարքային բոլոր կրոնավորների ավագ՝ Հակոբ անունով, որը Դվինից էր, նույն Տեր-Հովհաննես կաթողիկոսի եղբորորդին, բարձրահասակ ու գեղեցիկ տեսքով տղամարդ՝ հանճարեղ ու խմաստուն, քաղցրաբարո ու հեզահամբույր, լի ամենայն պարկեշտությամբ։ Կաթողիկոսը նրան պատշաճ համարեց այն մեծ ու առաքելական աթոռին։ Եվ շատերի վկայությամբ ու ընտրությամբ ձեռնադրելով՝ այդ Հակոբին ուղարկեց Սյունիքի եպիսկոպոս[732], որը եկավ և բազմաթիվ ու երևելի կայքերով պայծառացրեց սուրբ եկեղեցին, չափազանց հարստացրեց և խիստ քաղցր վարդապետությամբ միշտ քարոզում էր հավատացյալներին ու հոգ տանում իր [հոգևոր] հոտի նկատմամբ։

Սա, աներևութաբար բանն աստծուց զորություն ստանալով, Սյունյաց իշխան Վասակի որդի իշխան Փիլիպեից գնում է Զագեձորի[733] Վարարակն[734] կոչված ջուրը տասներկու հազար դրամով և մեկ փայլուն ջավահիրով, որի արժեքն ու որպիսությունը շատերը չգիտեին։ Շատ չարչարանքով ու մեծամեծ ծախսերով ջուրը բերել էր Զագեձորի լեռներից և հասցրել մինչև Ցաքուտ, որը գտնվում է գետի այն կողմում, վանքի դիմաց։ Այնուհետև քարքարոտ ու փշալից այդ ամբողջ վայրը դարձրեց վարդաստան և ծառաստան։ Տնկեց բազմաթիվ այգիներ, աղնիվ տեսակի խաղողի որթեր, զանազան պտղաբեր ծառեր՝ ձիթենիներ, թզենիներ, նռնենիներ, բոլոր մրգատու ծառերով զարմանալի դրախտ դարձրեց. խիստ ընդարձակ ամբողջ վայրը զարդարեց թանձրախիտ ծառերով ու գեղեցկաճյուղ որթատունկերով՝ միաբանության վայելքի և բոլոր կարոտյալների ու աղքատների կարիքների համար։ Եվ ապա այդտեղ տեսնելով մի գեղեցիկ բլուր՝ նրա գլուխը

հարթել տվեց, պարսպապատեց, ներսի կողմը ծառայեցրեց իբրև հաճելի դիտանոց, [քանի որ] նա նայում էր ամբողջ այգեստանի վրա։ Նույն տեղում շինեց զմբեթահարկ մի խորան՝ շատ հրաշալի կառուցվածքով. պատերն ու առաստաղը նկարիչներին զարդարել տվեց զանազան երանգներով, նկարել տվեց քրիստոնեական բոլոր պատկերները, առաքյալներին ու հայրապետներին. ամբողջ եկեղեցու շուրջբոլորն ստեղծեց սրահակներ ու գավիթներ։ Եվ ապա գրեց իր հիշատակի արձանագրությունը, որն այսպիսին է.

«Ես՝ Հակոբս, աստծու շնորհիվ Սյունյաց եպիսկոպոսս, գնեցի վարարակն ջուրը Սյունյաց աստվածապահ տեր Փիլիպեից տասներկու հազար դրամով և մեկ պատվական գոհարով. բազում ծախսերով ու մեծամեծ չարչարանքներով, վերին օգնությամբ ջուրը բերեցի Զագեձորի լեռնից և հասցրի վարդաստանս, տնկեցի աղնիվ տեսակի խաղողի որթեր, հիմնեցի վայելուչ այգիներ, բազմածաղիկ ու պտղալից պարտեզներ՝ ի վայելումն այս սուրբ աթոռում հաստատվող հայրապետների, սուրբ միաբանության և բոլոր քրիստոնյա հավատացյալների։ Եվ արդ աստված բոլորին թող վայելում տա։ Բոլորին աղերսում եմ, որ իրենց սրբամատույց աղոթքների մեջ անմոռաց հիշման արժանացնեն իմ տառապյալ հոգին։ Այս ջրի հարցում հաշիվ չունեն ո՛չ նորիքցիները, ո՛չ խոտանանցիները[735], ո՛չ շնհերցիները կամ հալիքցիները[736], ո՛չ էլ որևէ այլ մարդ։ Չի կարելի ջուրը կտրել արտի կամ մարգի համար, պարտեզի ջուր տալ։ Բացառություն է կազմում [միայն] ջրավազանից[737] մարդու կամ անասունի ջուր խմելը։ Իսկ եթե մեկը հանդգնի և այս ջուրը կտրի, նզովված լինի աստծուց, սուրբ նշանից, Նիկիայում հավաքված երեք հարյուր տասնութ հայրապետներից, բոլոր սրբերից ու մեր կողմից. նրա բաժինն էլ ուրացողների ու կախարդների հետ լինի Քրիստոսի ահեղ դատաստանի օրը. սատանայի ու նրա հրեշտակների հետ անշեջ կրակի տանջանքների ճարակ լինի, և նրանց համար [այդ կրակը] չհանգչի ու որդն էլ չվերջանա։ Այս հիշատակագրությունը գրվեց երեք հարյուր ութսունմեկ թվականին[738], իմ ձեռքով ու կնքվեց իմ սեփական մատանիով, աստծու կամքով»։

Սա գտանք գրված իր ձեռքով մագաղաթի վրա, սրա հետ էլ մյուս՝ վաճառման և գնի վավերագիրը, գրված հենց Փիլիպե իշխանի ձեռքով, որը մեծ Փիլիպեի որդի՝ Իշխանիկ կոչված Վասակի որդին էր։ Փաստաթուղթն այսպիսին էր.

«Աստծու կամքով ես՝ Սյունյաց տեր իշխան Վասակի որդի Փիլիպես, իմ համավորությամբ Վարարակն ջուրը վաճառեցի սուրբ Գրիգոր եկեղեցուն, որը շինել էր իմ պապ իշխան Փիլիպեն Տաթևի սուրբ եպիսկոպոսարանում։ Գնեց Սյունյաց եպիսկոպոս Հակոբը տասներկու հազար դրամով և մեկ մեծագին գոհարով, ամբողջ գինն էլ լրիվ վճարեց։ Ես ստացել եմ դրամն ու մեկ գոհար Սյունյաց Հակոբ եպիսկոպոսից։ Եվ այսուհետև ես, իմ զավակներն ու մյուս հարազատները հավիտենապես հրաժարվում ենք այդ ջրի սեփականության իրավունքից[739]։ Նորիջցիները կամ խոտանացիները կամ շնհերցիներն ու հալիջցիները այդ ջրի մեջ որևէ չափով հաշիվ չունեն, չեն կարող ո՛չ արտի, ո՛չ էլ մարդի համար կտրել. ջրավազանից [միայն] մարդ ու անասուն կարող են ջուր խմել։ Եվ եթե ես կամ իմ զավակները այս պայմանը դրժենք, կա՛մ մտածենք այդ ջրից կտրել արտ թե մարդ [ջրելու] կամ էլ ուրիշ նպատակի համար, աստծուց ու այդ սուրբ նշանից նզովված լինենք և Տեր-Հակոբի վերագրյալ անեծքը հավիտենաբար ժառանգենք։ Աստված շնորհավոր անի սուրբ վանքին և սուրբ ու աստվածակիր հայրապետներին»։

Այս Հակոբը ֆրանկ ժողովրդի[740] հեռավոր աշխարհից բերել տվեց նկարիչներ և զոռախներ, այսինքն՝ պատկերագործներ[471], և աստվածաշնակ տաճարի լուսաճեմ հարկերը ամբողջովին, վերևից մինչև ներքև, անսահման ծախսերով նկարագարդել տվեց։ Փրկչի պատկերն էլ խիստ ահեղ տեսքով նկարել տվեց աստվածագործ սեղանի ճիշտ դիմացը, վերևից՝ երկնքի բոլորակը մեծ կամարի վրա, իսկ սրանից ներքև, սեղանի շուրջ՝ մարգարեների, առաքյալների ու հայրապետների բնականակերպ նկարները՝ շատ խորհրդավոր։ Այսպես ամբողջը համատարած կերպով զարդարեց այնպես, որ նայելիս տեսնողների աչքերը շլանում էին։ Եվ երբեք չէր թվում, թե [նկարները] ներկերով ու երանգներով են ստեղծված, այլ բոլորն էլ կենդանի [ու բնական] են, և նայողները

զարհուրում ու պատկառում էին նրանցից։ Սա կատարեց հայոց երեք հարյուր յոթանասունինը թվականին[742]։ Ապա բազմախոսությամբ հանդիսությամբ նավակատիքի հրավիրեց հայոց կաթողիկոսին՝ բազմաթիվ եպիսկոպոսներով ու իշխաններով հանդերձ՝ պատկերները սրբագործելու և օրհնելու նպատակով, ոչ պակաս [շուքով], քան առաջին հանդիսին, որ եղել էր տաճարի օրհնության համար։

Այն ժամանակ վանքից վերև Ավելադաշտ կոչված բարձունքի վրա գտնվող ավազականոցը, որի մասին ավելի վերը պատմեցինք, դարձյալ լի էր ավազակ մարդկանցով, որոնք շատ ոճրագործություններ էին անում և խիստ նեղություն պատճառում միաբանությանն ու շրջակայքին։ Եվ եպիսկոպոսը, Սյունյաց իշխաններին խնդրելով ու իրավունք ստանալով, հալածեց այդ մարդկանց, քանդեց ու ավերեց նրանց ապաստարանոցը, տեղն իր սահմաններով դարձրեց վանքի սեփականություն։ Մեծամեծ ու ահավոր անեծքներով արգելափակեց, որ որևէ մեկն այլևս չհամարձակվի այնտեղ բնակվել կամ շինություն կառուցել։

Ը

ՏԵՐ-ՀԱԿՈԲԻ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐ ԳԱՎԱՌԻ ՍՄԲԱՏ ԻՇԽԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՈՒ ՎԱՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ. ԱՅԼԵՎ ՍՈՒՐԲ ՄԱՄԱՍԻ ՄԱՍԻՆ

Սմբատ թագավորի որդի Հայոց Աբլաբաս[743] թագավորի իշխանության ժամանակներում և Սյունյաց Սմբատ իշխանի ու նրա եղբայրների և որդիների տիրապետության շրջանում, հայոց երեք հարյուր յոթանասունութ թվականին[744] Սյունյաց երանելի եպիսկոպոսը Եղեգյաց ձորում[745] հանդիպում է մի տեղի՝ [ընկած] Ոստին[746] գյուղից վեր։ Շատ է հիանում նրանով՝ տեղանքի խիստ գեղեցկության ու չափազանց ապահով և անվտանգ լինելու պատճառով. և առաջնորդվելով վերին տնօրինությամբ՝ շինարարություն է սկսում Սմբատ իշխանի[747], նրա կին Սոփիայի[748] ու եղբայր Սահակի աջակցությամբ։ Այնտեղ կանգնեցնում է եկեղեցի՝ տաշած վեմե-

բով, զարդարում ղանազան երանգներով, գեղեցիկ նկարներով։ Տաճարի նավակատիքին էլ հրավիրում է Սմբատին ու Սահակին։ Եվ եկեղեցու համար կալվածք են սահմանում ամբողջ լեռնակողմը ու նրանից ներքև, մինչև գետի այն կողմն ընկած բազմաթիվ ծաղկանոցներ ու արտեր։ Այն հաստատում են կրոնավորների տոմն՝ ի փառս աստծու։

Դարձյալ՝ աստվածազոր Սմբատ իշխանը երեք հարյուր ութսունհինգ թվականին[749], մի օր եղեգիք գյուղաքաղաքում գտնվող իր արքունիքից դուրս է գալիս որսի ու զբոսանքի, հանդիպում է խոտերով սնվող, աստվածակիր ճգնավորների՝ թաքնված բարձրից դեպի գետը նայող արծանի պես կանգուն քարաժայռերի ճեղքերում, Եղեգյաց ձորի վերևի այն տեղում, որը Քարեվանք է կոչվում։ Եվ զարմանալով նրանց հյուծված ու անշուք տեսքի վրա՝ հարց ու փորձ է անում նրանց կյանքից, նրանք էլ հեզահամբույր կերպով պատասխանում են. «Հալածվեցինք ու փախանք աշխարհից, գուցե կարողանայինք փրկվել նրա դաժան ալեկոծությունից»։ Այնուհետև իշխանը դիմում է իր եպիսկոպոս Տեր-Հակոբին՝ առաջարկելով ձեռնարկել ու շտապ կերպով եկեղեցի կառուցել հարմար տեղում՝ սուրբ ճգնավորներին այնտեղ տեղավորելու համար։

Եվ եպիսկոպոսը գալիս է սուրբ հայրերի մոտ, հարցնում նրանց կամքը։ Նրանք էլ ցույց են տալիս մի տափարակ վայր, քարաժայռերի տակ մի ուղիղ տեղ, որտեղ և շինարարությունն սկսում է կոփածո քարերով ու կառուցում գմբեթահարկ եկեղեցի՝ սուրբ Գրիգորի անունով։ Բերում է Ահերմոն անունով ավագագույն ծերունուն ու իր աշակերտ Ազարիային՝ մյուս կրոնավորների հետ, ու հաստատում այնտեղ։ Իշխանը գալով օրհնել է տալիս եկեղեցին։ Իսկ նրա բարեպաշտ տիկին Սոփիան գնում ու նկեղեցուն կալվածք է տալիս վանքի դիմաց եղող Հավու գյուղն[750] իր սահման[ներ]ով, ինչպես և ուրիշ այգիներ ու ծաղկանոցներ եղեգիքում։ Վանքը զարդարում է բազում կահկարասիներով, փարթամացնում ամեն տեսակի անհրաժեշտ բաներով։ Մեծամեծ նզովքներով է [նրա վրա] հաստատում Հավու գյուղը, որ նրանից չխլեն։ Իրենց հիշատակի համար կատարում են սուրբ Գրիգորի տոնը և մի քառասունք պատարագ վար-

դավառին։ Տեղն էլ ծերունու անունով կոչում են Ահերմոնի վանք[751]։

Դարձյալ՝ որոշ տարիներ անց երանելի ու բարեպաշտ տիկին Սոփիան գնում է Գնդեվանք կոչված խորաձոր վայրը՝ այնտեղ գտնվող մենակյացների մոտ ուխտի։ Այնտեղ կային վաղ ժամանակների սուրբ նահատակների մեծաթիվ նշխարներ։ Չիմացանք, թե դրանք ովքե՛ր կամ որտեղի՛ց էին։ Այնտեղ բազմաթիվ ու մեծամեծ բժշկություններ էին լինում։ Տիկինը, տեսնելով ու տեղը խիստ հավանելով, մտադրվում է եկեղեցի կառուցել և նրա մեջ հաստատել կրոնավորների դասեր։ Դրա համար էլ նահատակները գիշերը երևալով խրճդրում են կատարել այդ մտադրությունը։ Ապա տիկինը վեր կենալով շտապ կերպով բերել է տալիս ճարտար քարագործ վարպետներ, սկսում շինարարությունը. վանքի առաջնորդ նշանակելով հայր Սարգսին և գործակալ՝ եղիշե երեցին ու նկարչին և այն հանձնում է Տեր-Հակոբին՝ մեծ հոգատարությամբ կատարելու ու ավարտելու։ Մեծամեծ ճգնությամբ այնտեղ փայլում էր և Գնդունի կոչված հայր Սուփանը։ Կանգնեցնում են աստծու տունը, նկարակերտ հորինվածքով զարդարում նրա առաստաղն ու պատերը։ Նավակատիք անելով մեծահանդես տոնախմբությամբ օրհնում են այն և անվանում սուրբ նահատակների անվանակոչությամբ ու նրա մեջ հաստատում սպասավորների դասեր և կրոնավորների բազմություններ։

Նաև ամբողջ ձորը հարմար տեղերում լցնում են մենաստաններով ու նրանց մեջ տեղավորում ճգնավոր և խստակրոն մարդկանց, որոնց կողմից աստված ավելի էր փառաբանվում, քան Սինայի հայրերից։

Երանելի տիկինը վանքն անվանում է Գնդեվանք[752], որից վերև, քարափի գլխին հիմնում է և գյուղը[753] ու կալվածք տալիս վանքին՝ ազատ բոլոր տեսակի հարկերից, նույն ձեվով էլ՝ մյուս կողմի Առչար[754] գյուղը. մեծամեծ նզովքներով արգելափակում է, որ հետագայում այնտեղից չխլեն։ Սա տեղի ունեցավ հայոց երեք հարյուր ութսունհինգ թվականին[755], իսկ ամբողջ ձորը վերից վար, մինչև Գոլշտ քարը հրամայում է զարձնել քաղցրահամ միրգ տվող ծառերի խիտ տնկարաններ. մեծ բարությամբ գեղեցիկ այգիներ է

տնկում, որպեսզի առատորեն վայելեն սուրբ միաբաններն ու բոլոր կարիքավորները։ Գրում է հիշատակի այսպիսի համառոտ արձանագրություն. «Ես՝ Սյունյաց աստվածապահ տեր Սմբատի կին և Գրիգոր Դերենիկի դուստր տիկին Սոփիաս, կառուցեցի այս եկեղեցին իմ հոգու հիշատակի և իշխանաց իշխան Սմբատի ու մեր որդյակների արևշատության համար և սա զարդարեցի թանկարժեք պարագաներով ու սրան կալվածք տվեցի երկու գյուղ, որոնք ոչ ոք չպիտի համարձակվի անջատել կամ խլել այս սուրբ եկեղեցուց, հակառակ դեպքում անխախտելի նզովքներով անիծվի աստծուց ու աստվածագումար սրբերից։ Վայոց ձորն անակ մատանի էր, շինեցի սա և [որպես] ակ դրեցի վրան»[756]։

Դարձյալ՝ որոշ տարիներ հետո, հայոց չորս հարյուր քառասունութ թվականին[757] սուրբ հայր Քրիստափորը[758] կառուցում է եկեղեցու գավիթները։ Երանելի սուրբ հայր Գուրգենը[759] ևս վանքում ունի շատ հիշատակներ։ Բայց երկար տարիներ անց, Տեր-Սարգսի[760]՝ հայոց կաթողիկոսության, Աշոտի որդի Գագիկի[761] թագավորության, իսկ Սյունիքում և Բաղքում նոր հիմնադրված թագավորության Վասակ թագավորի[762] ժամանակ մյուս հայր Սարգիսը[763], վանքին առաջնորդ դառնալով, բազում արդյունավետ գործեր կատարեց. նաև ջուր բերեց գլխավոր մեծ սարից, որտեղ Զկնարած կոչված քաղցրաջուր գետի[764] ակունքներն են՝ աներևույթ հրեշտակի առաջնորդությամբ, շատ ջանքերով ու մեծամեծ ծախսերով հասցրեց վանքապատկան հողերը, ընդարձակ անջրդի քարուտ[ները] ջրարբի դարձրեց, այդպես էլ ամբողջ լեռնակողմը։ Դրանում հաշիվ չունի ոչ ոք՝ ո՛չ պրակեցիները[765], ո՛չ կեչուտեցիները[766], ո՛չ սահմանակից մյուս գյուղերի բնակիչները, ո՛չ էլ ուրիշ որևէ մեկը։ Սա եղավ չորս հարյուր հիսունյոթ թվականին[677], Սյունյաց Տեր-Հովհաննեսի[768] եպիսկոպոսության օրոք։

Ինքն էլ եկեղեցու վրա սև ներկով արձանագրություն է գրում և ահավոր ու մեծամեծ նզովքներով արգելք դնում ջրի վրա, որ ոչ ոք չհամարձակվի այն կտրել կամ մաս վերցնել ու բաժնետիրաբար օգտագործել, բացի միայն ջրավազանից մարդկանց ու անասունների ջուր խմելուց։ Եվ սահմանում է հիշատակը նշել մեծ զորավար սուրբ Սարգսի օրը՝ յուրա-

քանչյուր տարի կատարելով ութ քառասունք։ Իսկ եթե ծուլանան [այդ կատարելուց], ծանր դատաստանների ենթարկվեն։

Այլև այստեղ համառոտակի պիտի պատմեմ մեծ ու բազմերանելի նահատակ սուրբ Մամասի մասին, որի [նշխարները] շատ հին ժամանակներում բերել էին այս աշխարհը և թաղել Վայոց ձոր գավառում, Սուլեմա անառիկ դղյակի սահմաններում։ Հայոց Արշակունյաց հարստության թագավորության օրոք, երբ շեն էր այս աշխարհը և խրոխտ ու ճոխ իշխանությամբ, երբ խանդավառված էին աստծու սիրով՝ նորահավատ լինելու պատճառով, ջերմ բոցով վառված էին բարեգործությունների համար, առավել ևս աստծու նահատակների սիրո հարցում, յուրաքանչյուր մարդ խիստ չարչարանքով ու անսահման ծախսերով որոնումներ էր կատարում, որպեսզի թերևս կարողանար գտնել սուրբ նահատակների նշխարներից և բերել իր գավառն ու իշխանությունը՝ այսպիսով ամրանալու, թշնամիների ավազակային հարձակումներից ու չարությունների հանդիպելուց ապահով լինելու, ինչպես նաև Քրիստոսի մոտ մշտնջենական բարեխոս ունենալու համար։

Եվ այսպես Սյունյաց իշխանները, որ ժամանակին սուրբ Գրիգորի ու սուրբ Ներսեսի հետ գնացել էին Կեսարիա քաղաքը, նաև ուրիշ ժամանակներում էլ, մեծամեծ գանձերի ծախսումով, անհուն չարչարանքներով, երկարատև, տքնաջան աղոթքներով ու խիստ պահեցողությամբ որոնեցին աստվածակիր նշխարները երանելի ու մեծ ճգնավոր Մամասի, որը բնակվել էր Կեսարիայի մոտի լեռան վրա, և որի ճգնությունների մեծամեծ իրողություններին, նահատակության մարտի մասին մեզ հաղորդում է Վկայաբանության գրքում[769] գրված ճառը, ու լայն հրապարակումով գովքն է անում Գրիգոր Աստվածաբանը[770] նոր կյուրակեի ներբողման մեջ։ Իշխաններն իրենց մեծահավատ հույսով արժանացան աստվածային պարգևների և վերին տնօրինությամբ վերցրին անկշռելի գանձը՝ սուրբ Մամասի նշխարների կեսը, մեջքից վեր՝ գլխով ու բազուկներով հանդերձ, մյուսը թողնելով իր սուրբ եկեղեցում, նույն տապանի մեջ։ Եվ սպիտակ ջորիների կառք պատրաստեցին, արծաթի արկղիկներ[771] շինեցին, այնտեղ դր-

թեցին սրբի նշխարները, վերցրին, սաղմոսներով, օրհնութեամբ, արագավազ նժույգներով, արարչավ երիվարներով, կարծես օդում թևատարած շարժվելով, թռան-անցան երկար ճանապարհի մեծ տարածությունը, հասան իրենց տերության բուն սահմանները, Մազազ[772] գավառը։ Եվ Գեղամա լեռներն անցնելով՝ մտան Վայոց ձորը, քանի որ նպատակադրված էին տանել Սյունիքի իշխանական աթոռը։

Բայց վերին կամքը նրանց հայեցողությանը չթողեց, այլ հոգու ակնարկումով, ուր ինքը կամեցավ, կապեց ջորիների ոտքերը, և կառքը կանգ առավ Սուլեմա ձորի[773] մեջ, մի հարթ տեղում, որը Դեզապանարատ է կոչվում։ Իսկ նրանք տրտմությամբ լցվելով հավաքեցին գավառի բնակիչներին և, մեծաջան աղոթքներով պաշտամունքային արարողություններ կատարելով, խնդրեցին հեռանալ այդ տեղից։ Հաղիվ կառք բարձրանալով՝ քշեցին մոտավորապես երկու ձայնբնկեց տարածություն, նորից ջորիները կանգ առան մի հարմար տեղում, Խարաշկոնք[774] կոչված գյուղի սահմաններում ու այնտեղից էլ դուրս չեկան։ Ապա հրավիրելով Սյունյաց եպիսկոպոսին ու հավաքելով վանական հայրերի բազմություն՝ [նշխարները] թաղեցին քարե տապանի մեջ։ Սրա մոտ կրաշաղախ քարերով վկայարան կառուցեցին։ Եվ շրջակա վայրերը հատկացրին նրան որպես վանքապատկան գաշտ։ Նրա մեջ տեզավորեցին կրոնավոր մարդկանց՝ սրբին ծառայելու համար։

Իսկ հետագա ժամանակներում, մեր աշխարհի անիշխանության օրերին, աթաբեկ Իվանեի[775] տիրապետության շրջանում երկու ճգնավոր, խիստ կրոնապաշտ կրոնեղբայրներ վանքի առաջնորդները՝ Սեթ և Պողոս անուններով, բազում աղոթքներով ու խնդրանքներով հանում են սրբի տապանը, կառուցում են մի փոքր խորան, այնտեղ փոխագրում՝ նայողներին բացեիբաց տեսանելի դարձնելով կափարիչը, հայոց... թվականին։ Բայց տեզափոխելիս բացում են տապանն ու նրշխարներից վերցնում աջը. և այն օրը շատ բժշկություններ են լինում։ Վանականներից մեկն էլ գազանի վերցնում է մի առամը և իսկույն դիվահարվում ու փրփրում է. աղաղակում է ծածուկ գողացածի մասին և հաղիվհազ բուժվում է։ Ապա աջը հանձնեցին Այրիվանքի սուրբ միաբանությանը։ Բայց չիմացանք առաջին բերողների անուններն ու [բերելու] ժամանակի թվականը։ Այժմ էլ գոյություն ունի՝ որպես պարծանք ու բարեխոսություն այս աշխարհի համար՝ օրըստօրե մեծամեծ հրաշքներ գործելով բոլոր նեղյալների, հիվանդների ու դիվահարների համար։ Նրա բարեխոսությամբ Քրիստոս աստված թող խնայի այս աշխարհին, եկեղեցիներին և ինձ՝ բազմամեղ պարտավորյալիս։ Փա՜ռք Քրիստոսին հավիտյանս. ամե՛ն։

ԾԱ

ԱՅՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՀՈԳԵԲԱԺԻՆ ՏՐՎԵՑԻՆ ԵՎ ԱՎԵԼԱՑԱՆ ՏԱԹԵՎԻ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ [ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ] ՎՐԱ՝ ՏԵՐ-ՀԱԿՈԲ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԻՋՈՑՈՎ

Պատահեց այնպիսի ժամանակ, երբ աստվածապահ ու բարեպաշտ Սմբատ իշխանը՝ Աշոտի որդին ու Վասակի[776] թոռը, եկավ Տաթևի սուրբ աթոռը և սուրբ խաչի առաջ աղոթելով՝ կամեցավ անմահ ու անչնջելի հիշատակ հաստատել իր [ու իր սերնդի] հոգու համար։ Եվ սուրբ եկեղեցում որպես ժառանգություն հոգեբաժին նվեր տվեց իրենց հայրենի սեփական գյուղը՝ Կոկուզքը[777], որը գտնվում է Գեղարքունիք գավառում։ Անխախտ վճռագրով այն [վանքին] հանձնեց Հակոբի միջոցով։ Վճռագիրն այսպիսին էր.

«Աստծու կամքով ես՝ Սմբատ իշխանս, որդիս Աշոտի և թոռս Վասակի՝ Սյունյաց աստվածապահ տերերի, ցանկացա Գեղարքունիք գավառի Կոկուզք գյուղը՝ իմ հայրենի բաժինը շրջակա իր բոլոր սահմաններով հանձնել Սյունյաց եպիսկոպոս Տեր-Հակոբին, մեր սուրբ խաչին և լուսաճեմ, աստվածաբնակ եկեղեցիներին՝ մեր հոգիների համար։ Արդ՝ ոչ մեկը մեզանից, մեր զավակներից կամ էլ որևէ այլ մարդ իրավունք չունի իշխելու այս գյուղի վրա կամ թե այս տեղը խլելու այս սուրբ խաչից ու սուրբ աթոռից։ Իսկ եթե մեկը հակառակ դուրս գա, դատապարտված լինի ամենակալ աստծուց, և նրա բաժինը Հուդայի ու [Քրիստոսին] խաչողների հետ լինի, նա դատի մեջ չհաղթի, իրենը չժառանգի ու իր որդիների հետ ընկնի արտաքին խավարի մեջ։ Այժմ տեքերը

դուք եք, Սյունյաց Տեր-Հակոբ եպիսկոպոս, և սուրբ աթոռում հետագայի հաջորդող հայրապետներ, այսուհետև ու հավիտենապես: Մեր մեղավոր հոգիներն էլ կհանձնվեն ձեզ ու այդ սուրբ խաչին: Սա հաստատ է աստծու կամքով:

Ես՝ Սմբատս, իմ ձեռքով գրեցի այս վճռագիրը, կնքեցի սեփական մատանիովս, վրան դրեցի նաև Տեր-Հակոբի տեղունական մատանին, հայոց երեք հարյուր վաթսունինը թվականին[778]:

Ես՝ Հակոբս, իմ ձեռքով հաստատեցի այս վճռագիրը և վկա եմ Սյունյաց տեր Աշոտի որդի Սմբատ իշխանի այս հոգեբաժին պարգևներին, որ տվեց իր սեփական Կոկուզք գյուղը սուրբ եկեղեցուս: Ոչ ոք չհամարձակվի հակառակ կանգնել սրան՝ այժմ և կամ գալիք ժամանակներում. իսկ եթե հանդգնի, նզովված լինի աստծուց, բոլոր սրբերից, սուրբ հայրապետներից ու մեր կողմից. դատապարտված գտնվի Քրիստոսի ահեղ դատաստանի առաջ, և նրա բաժինը անհավատների հետ լինի՝ գեհենում: Եվ մեղանից հետո այս աթոռում նշանակվածներդ պարտավոր եք անմոռաց կատարել իշխան Սմբատի հիշատակը ու նրա մեղքերին ներում խնդրել և ամեն տարի նրա համար մեկ քառասունք անել:

Այս վճռագիրը գրվեց իմ ձեռքով ու կնքվեց սեփական մատանիովս, աստծու կամքով»:

Դարձյալ՝ որոշ ժամանակ անց Փիլիպե իշխանը եկավ այս սուրբ աթոռը, Տեր-Հակոբի մոտ: Այս Փիլիպեն Վասակի որդին էր, թոռը մեծ Փիլիպեի, որը ջուրը վաճառեց Տեր-Հակոբին: Նա, հիշելով [մարդու] վայրկենական կյանքի ոմայնությունը՝ իր համար սահմանում է հիշատակ ու քառասունք և մեծ Փիլիպեի կառուցած սուրբ Գրիգոր եկեղեցուն է նվիրում երկու գյուղ Հաբանդ գավառում՝ Աղվերծն[779] ու Հուրականխոռը[780]: Ինքն էլ անմահ ու անջնջելի հիշատակի արձանագրություն է գրում երեք հարյուր իննսուներկու թվականին[781], այն այսպիսին էր.

«Աստծու անունով Սյունյաց եպիսկոպոս, աստվածապատիվ հոգևոր առաջնորդ Տեր-Հակոբի ժամանակներում ես՝ Սյունյաց տեր, աստվածապահ Փիլիպեի որդի Վասակի իշխան Փիլիպես, ծանոթացա ու իմացա, որ վաղը ամեն մարդ թառամելու է, ինչպես խոտը, թոթափելու է մարդու

ողջ փառքը խոտի ծաղկի նման. և սարսափումով առաքեցի ու դողաց իմ անձը, թե ինչպե՞ս փրկվի: Ապա հույսս դրած այս աստվածաբնակ վանքի վրա՝ ընտրեցի այս սուրբ խաչը՝ հոգուս հիշատակի համար և լիառատ հավատով ընծայեցի իմ արդար սեփականությունից Հուրականխոռը, որ գնել էի Սակոի որդի Արտավազդից, և մյուս գյուղը՝ Աղվերծը, որ գնել էի խոտանանցիներից՝ Աբլաշաբի որդիներից և Վահանիկի որդուց ու եղբորորդուց, հոգուս փրկության ու մեղքերիս ներման համար Սյունյաց եպիսկոպոս Տեր-Հակոբի միջոցով ընծայեցի սուրբ վանքին, Տաթևի սուրբ մայր վանքի սուրբ Գրիգոր եկեղեցուն, որը կառուցել էր իմ պապը՝ իշխան Փիլիպեն, և մեր սուրբ նշանին: Հանձնեցի իր բոլոր սահմաններով՝ լեռնով ու դաշտով, հողով ու ջրով, այգիներով ու ընկուզենիներով, ջրաղացներով ու ամբողջ եկամուտներով: Եվ այսպես, այսուհետև դուք իրավունք ունեք օգտագործելու և վայելելու այդ տեղերը, վաճառելու և գրավ դնելու՝ մինչև հավիտյան: Դրանք ազատ են արքունի բոլոր տեսակի հարկերից: Իսկ ով սրան հակառակվի, խափանել կամ խանգարել ջանա, լինի մեր ոնցից կամ ուրիշ ավազներից, նզովվա՛ծ լինի սուրբ երրորդությունից ու բոլոր սրբերից, Հուդայի ու Արիոսի հետ դատվի, երեք սուրբ ժողովների կողմից կապանքների ենթարկվի. և եթե մահմեդական իշխանության հասնի ու հափշտակել ջանա, աստծուց ու իր փեղամբարից մերժվի և բյուր հազար նալլաթ կրի, դատաստանի վերջին օրն էլ իր դատողի առաջ սեվերես լինի: Եվ արդ խնդրում եմ ձեզանից, ո՛վ հայրեր, իմ՝ Փիլիպեիս հիշատակը կատարել ամեն տարի ու սուրբ Գրիգոր եկեղեցում վարդավառի օրը մեկ քառասունք անել անխափան: Գրեցինք ու կնքեցինք մեր մատանիով, աստծու կամքով, հայոց երեք հարյուր իննսուներկու թվականին»:

Վանքի դիմաց մի ապստամբանոց տեղ կար, որ Տամալեկք[782] էին կոչում: [Նրա բնակիչները] շատ ու մեծամեծ նեղություններ էին պատճառել վանքին: Տեր-Հովհաննեսը թեև բաղում անգամ ջանացել էր, բայց չէր կարողացել հալածել նրանց ու տեղը սեփականել: Ապա աստվածապատիվ և հոգևոր տեր Հակոբի ժամանակներում մեծ տիկին Սոփիան՝ Սմբատի կինը, եկավ սուրբ խաչին երկրպա-

գելու։ Նա, լսելով այդ բնակիչներից վանքի միաբանների ստացած դառնությունների ու վշտերի մասին, դրա համար ջանք գործադրեց ու հաղիվհազ կարողացավ այն տեղը ձեռք գցել՝ գնելով հազար դահեկանով, որը և հանձնեց Տեր-Հակոբին։ Նաև նրանցից վերցրեց խաչը։ Դրանից հետո միաբանությունն ապահով դարձավ։ Տիկինը եպիսկոպոսին առաջարկեց այնտեղ շինել եկեղեցի ու բնակեցնել ճգնակյաց կրոնավորների, անեծքի գրություն գրել, որ այնտեղ այլևս ոչ մի աշխարհական մարդու չբնակեցնեն։ Եվ դա փութաջանորեն կատարում է երջանիկ եպիսկոպոսը, որը և գրում է վճռի այսպիսի հիշատակագրություն. «Սա իմ՝ Սյունյաց եպիսկոպոս Տեր-Հակոբիս ձեռքով գրածն է։ Բազում ջանքերով ու չարչարանքներով ազատեցի Տամալեկքը, որը շատ նեղություն էր պատճառել վանքիս, որի համար Տեր-Հովհաննեսը ջանացել, բայց չէր կարողացել ազատել։ Արդ հնազանդվելով մեր հրամաններին՝ Սմբատ իշխանն ու տիկին Սոփիան գնեցին հազար դահեկանով ու տվեցին սուրբ նշանիս և հոգով ու մարմնով իրենք էլ մեզ հանձնվեցին։ Մենք տեղը վերցրինք, եկեղեցի կառուցեցինք և մենարան հիմնեցինք։ Արդ՝ այս տեղը, որ մեր մեծ ջանքերով ենք ազատել, նրա սեփականատերերին դուրս հանել ու մենաստան հիմնել, եթե մեկը մտածի սեփականատերերին վերադարձնել կամ ամուսնացած տղամարդու այստեղ բնակեցնել, կա՛մ մի ծառի ու մի թփի տեր դարձնել, նզովվա՛ծ լինի միասնական սուրբ երրորդությունից, սուրբ հրեշտակներից, երեք հարյուր տասնութ հայրապետներից, սուրբ նշանիցս ու մեզանից՝ մեռածից եթե կենդանի ժամանակ։ Նրա բաժինը Հուդայի հետ լինի, չարաչար ցավերով իր օրերը չամբողջացնի, գեհենի անշեջ հրի ճարակ լինի և մեր Քրիստոս աստծուց ողորմություն չստանա»։

Դարձյալ՝ գեղարքունիք գավառում, Սոթքի սահմանում կար մի գյուղ՝ Վաղավեր անվամբ[783], որը վաղ ժամանակներում Տաթևի սուրբ վանքին էր նվիրել Տիգրան մեծ նահապետը՝ Սիսական տոհմից։ Հետու լինելու պատճառով Տեր-Հակոբը սա փոխանակումով հանձնում է Սյունյաց իշխան Զագիկին՝ Զեվանշերի որդուն, և վերցնում է Տաշտակերտ գյուղը[784]՝ հաստատուն ու անխախտ վճռով։ Վճռագիրն այսպիսին էր։

«Աստծու կամքով ես՝ Սյունյաց եպիսկոպոս Տեր-Հակոբս, Սյունյաց իշխան, աստվածապահ տեր Զագիկի հետ փոխանակություն կատարեցի. տվեցի Վաղավեր գյուղը, որը Տիգրան իշխանը իր հոգու համար նվիրել էր սուրբ նշանին, ստացա Տաշտակերտ գյուղը՝ իր բոլոր սահմաններով՝ լրիվ։ Սահմանեցինք՝ ամեն տարի քսան օր պատարագ, անխափան կերպով, մինչև Քրիստոսի գալուստը և «Երանի՛ ում թողություն» սաղմոսը երգել նույն օրերին։ Եվ եթե մեզանից հետո որևէ մեկը իշխաններից կամ առաջնորդներից սրան հակառակ կանգնի ու մտածի այս տեղը հափշտակել, չարաչար նզովքներ ընդունի աստծուց, բոլոր սրբերից, այս աթոռից, բոլոր առաքելական եկեղեցիներից և բոլոր հայրապետների կողմից մերժված ու անիծված լինի, Տիգրանի մեղքերին էլ՝ պարտական։— Հայոց երեք հարյուր յոթանասունչորս թվականին[785]։ Հաստատ է աստծու կամքով»։

«Եվ ես՝ Զագիկ իշխանս, իմ կամքով կատարեցի այս փոխանակումը։ Տաշտակերտը փոխեցի Վաղավերի հետ և իմ ձեռքով հաստատեցի վերոգրյալ վճռագիրը։ Եթե մեկը խախտի, նույն նզովքն ստանա, որ առկա է նույնի մեջ։— Եվ մենք՝ իշխան Զագիկի որդիներ Զեվանշերս ու Վասակս[786], վկա ենք այս գործարքին։— Ես ևս՝ Կորիճ իշխանս, վկա եմ այս վերոգրյալին։

Այս փաստաթուղթը գրվեց և կնքվեց Տեր-Հակոբի հայրապետական մատանիով։ Մենք ևս վրան դրեցինք մեր կնիքները»։

Եվ այս ամենը հոգալով ու [վանքը] պայծառապես շքեղացնելով զանազան գույքերով և ունեցվածքներով՝ այլև արծաթյա գրամով ձեռք է բերում ագարակներ ու դաշտեր, հողեր, մարգեր ու այգիներ, նաև՝ իշխաններից ու ազատներից՝ շատ նվիրատվություններ, որոնք եթե գրի առնեինք, խիստ տաղտկություն կպատճառեինք ընթերցողներին և շատ նյութ կծախսեինք։ Բայց մենք ընտրեցինք շատից քիչը և այստեղ շարադրեցինք ամենից կարևորների մասին։ Սակայն ես ափսոսում եմ, որ այժմ չեմ կարող դրական խոս-

քերով ամբողջացնել այսպիսի անհամեմատելի, աստվածա-
վայելուչ, արքայաշուք, երջանիկ ու բարի մարդու կյանքի
և գործունեության լրիվ [պատմությունը], այլ հարկադրը-
ված եմ տարբեր ու վայրենաբարո գործերի մասին խոսելու

ԾԲ

ՀԱԿՈԲԻ ԱՊՍՏԱՄԲՎԵԼԸ ԵՎ ԻՐ ԿՅԱՆՔԻ ՎԱԽՃԱՆԸ: ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՆԱՆԻԱՅԻ[787] ԵՐԵՔ ԱՆԳԱՄ ՍՅՈՒՆԻՔԻ ԳԱԼԸ, ՎԱՀԱՆԻՆ[788] ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԵՌՆԱԴՐԵԼԸ ԵՎ ԱՂՎԱՆՔԸ ՀՆԱԶԱՆԴԵՑՆԵԼԸ

Աղվանքում Սահակ անունով կաթողիկոս կար, որը հո-
գևոր սիրո կապով կապված էր Տեր-Հակոբի հետ: Նրանք
համախոհներ էին ու միմյանց խիստ մոտ: Սահակից հետո
առաջնորդեց նրա եղբայր Գագիկը, որը առավել համար-
ձակ գտնվեց Սյունյաց եպիսկոպոս Հակոբի հետ ունեցած
միաբանական սիրո մեջ: Քանի որ այն ժամանակ[ներում]
Հայոց կաթողիկոսները հեռացած էին իսմայելացիների ավա-
զակային մշտական հարձակումների պատճառով, Դվինի աթո-
ռը թողել ու հայոց թագավորների հետ շրջում էին այստեղ ու
այնտեղ՝ երբեմն բնակվելով Վասպուրականի թագավոր Գա-
գիկի մոտ, Վանա ծովի կղզում, որտեղ կային սուրբ Գրիգորի
սեղանը, աթոռն ու գավազանը, երբեմն՝ Շիրակի գավառի Ալ-
գինայի վանքում[789] այսպես տարուբերվելով, այլև վախճան-
վել էր հայոց Թեոդորոս կաթողիկոսը[790], նրան հաջորդել Անա-
նիա Մոկացին՝ երեք հարյուր իննսուն թվականին[791] այս Հա-
կոբը հեռավորության պատճառով չէր կարողանում ամեն տա-
րի գնալ հայոց կաթողիկոսի մոտ՝ մեռոն վերցնելու, ուստի
հարկ եղավ մեռոնը խնդրելու Աղվանքի կաթողիկոսից: Եվ
սա նրա համար մեծ մոլորություն ու անկանգնելի գլորում
եղավ, որովհետև սխալվեց մարդկային դյուրախաբությամբ
ու ըստ Սողոմոնի այն ասույթի, թե՝ «իմաստունն էլ քոմն ու-
նի»:

Եվ սա կատարեց ինքնահաճությամբ ու ինքնակամորեն;
որովհետև խոշորակազմ ու հպարտ մարդ էր, մեծամիտ ու
ամբարտավան, համարձակ բնավորությամբ ու ճոխ լեզվով,

պայծառ հանճարով ու խիստ քաղցրախոս: Դրա համար էլ
ինքնահավանությամբ մի փոքր գոռոզացավ: Իսկ Անանիա
կաթողիկոսը պատվիրակների միջոցով [իր մոտ] հրավի-
րեց Հակոբին ու Սահակին[792], բայց նրանք իրենց աթոռնե-
րից չշարժվեցին, սուտասուտ պատճառաբանություններ բե-
րելով՝ չգնացին: Եվ քանի որ կաթողիկոսը լսել էր նրանց
խիստ մտերմության ու մոտիկության, ինչպես նաև [Հա-
կոբի կողմից] Աղվանքից մեռոն խնդրելու մասին, գիտեր
և այն, որ շատ տարիներ Հակոբը չի եղել սուրբ Գրիգորի
աթոռը, ահեղ ոխով գրգռված ու սաստիկ ցասմամբ մղված՝
եկավ Հակոբի հարցով, որ կա՛մ հնազանդեցնի ու ըստ իր
կամեցածի անի, կա՛մ մեծագույն պատիժներ ընդունել տա
և ապա գնա Աղվանք, աղվանքցիներին ևս հնազանդեցնի:
Չէ՞ որ Աղվանքի արքեպիսկոպոսները հայոց կաթողիկոսնե-
րից էին ձեռնադրություն ստանում. բայց դրանից քիչ տա-
րիներ առաջ ետ էին կանգնել՝ Գեորգ կաթողիկոսի վախճա-
նից մինչև այս Անանիայի ժամանակները, հինգ կաթողի-
կոսների՝ Մաշտոցի, Հովհաննեսի, Ստեփանոսի, Եղիայի և
Թեոդորոսի օրոք:

Երբ [Անանիան] եկավ-հասավ մեր Սիսական աշխարհը,
նրան ընդառաջ ելան Սյունյաց իշխանները՝ աստվածապահ
տեր Սմբատը և Բաղքի Զեվանշերը: Բերեցին Տաթևի եպիս-
կոպոսարանն ու մեծաշուք պատվով նստեցրին այնտեղ: Ապա
եկավ Հակոբ եպիսկոպոսը, ընկավ նրա առաջ ու մեղքերը
խոստովանեց՝ [ասելով]. «Ո՛վ մեծապատիվ տեր կաթողի-
կոս, որովհետև աստվածաբար դեպի մեզ թեքվեցիր ու մեր
հանդգնությունն անտես արեցիր, հնազանդվում ենք քեզ ու
Գրիգոր Լուսավորչի սուրբ աթոռին՝ որպես աստծու: Մեղք
գործեցինք երկնքի ու քո հանդեպ, բայց դու ների՛ր մեզ ու
մեր հանցանքները»: Կաթողիկոսն այդ տեսնելով մեծապես
օրհնեց նրան, շնորհակալ եղավ և ուղեց գնալ Աղվանք: Բայց
Աբաս թագավորից[793] լրաբեր եկավ՝ [գուժելով] թագուհու
մահվան մասին, կաթողիկոսին ետ դարձրեց այդ ձեռնար-
կումից: Այդ պատճառով էլ մեծամեծ պարգևներով ու առատ
ընծաներով Սմբատ իշխանն ու Զագիկ եպիսկոպոսը նրան
ճանապարհեցին դեպի իր աթոռը:

Իսկ ամենաչարը, որ շարունակ խանդում է բարուն ու

մարդկանց գրգռում դեպի խռովարարական չարութիւն, չըհանդուրժեց այս կատարվածը, այլ սողոսկեց չար ու նախանձոտ մարդկանց սրտերը, [որոնք] սկսեցին կաթողիկոսի մոտ վերստին չարախոսել Հակոբի մասին, թե կրկին ապստամբվեց ձեր դեմ ու նա թույլ չի տալիս Աղվանքին քեզ ենթարկվելու, Անձևացյաց խոսրով եպիսկոպոսին[794] էլ թղթով շեղեց ձեզանից։ Նաև ուրիշ մեղադրանք էին հորինում, թե նա քողարկումով ընդունում է քաղկեդոնականությունը։ Եվ այսպես խռովություն ու մեծ պայքար հրահրեցին եկեղեցու մեջ։ Բայց ես ինքս այսպիսի բաները զրպարտություն եմ համարում և ոչ ճշմարտություն՝ իզուր զատապարտվող Հակոբ եպիսկոպոսի նկատմամբ, որովհետև ի՞նչ փառք ու պարծանք պիտի լիներ նրա համար՝ թողնել Գրիգոր Լուսավորչի սուրբ աթոռը և ծառայել իր ծառայակից[ներ]ին, որոնք պաշտոնական օծությամբ անկատար ու թերի էին։ Սակայն սա թողնենք քննելու արդարադատ աստծուն։

Ապա Աղվանքի կաթողիկոս Սահակը մեռնում է, և նրան հաջորդում է իր եղբայր Գագիկը՝ նույն անկատար օծությամբ։ Տեր-Անանիան այս իմանալով՝ Աղվանքի իշխաններին թուղթ է գրում իր իմաստալից խոսքերով ու հրամայում չենթարկվել կաթողիկոս կոչված այդ սնափառ Գագիկին։ Նրանք հենց այդպես էլ արեցին. նրան ոչ ոք չհնազանդվեց, բացի իշխաններից միայն մեկից՝ Սենեքերիմ անունով։ Իսկ մյուսները միաբանությամբ Հովնան անունով մի մարդու ուղարկում են հայոց կաթողիկոսի մոտ՝ իրենց համար արքեպիսկոպոս ձեռնադրվելու, որին և Տեր-Անանիան սիրով ու պատվով ընդունում է, ձեռնադրելով ուղարկում Աղվանք։ Իսկ երբ այս այսպես եղավ, ոմանց նախանձով ու հակառակությամբ Հովնանի վրա սկսեցին բարդվել փուչ բամբասանքներ, և երկուսի՝ Գագիկի ու Հովնանի միջև բավականաչափ խռովություն եղավ։ Եվ երկուսն էլ մերժվեցին։

Անանիան, այս բոլորը լսելով, իր մտքում վարանում և տարակուսում էր՝ եկեղեցու տեսակ-տեսակ պառակտումների ու ապստամբությունների պատճառով, և հավաքելով եպիսկոպոսների ու գլխավոր հայրերի բազմությունը, խաչն ուսն առած՝ որպես առաջամարտիկ՝ գալիս է եկեղեցու շեղված ու պառակտված պաշտոնյաների հարցով, դիմում-գնում

է Աղվանք։ Եվ երբ հասնում է Խաչենի գավառը[795], նրան դիմավորում է իշխան Գրիգորը՝ տանելով, իշեցնելով իր տանը։ Այդ աշխարհի բոլոր իշխաններին, եպիսկոպոսներին ու վանականներին հավաքում է Ադախ կոչված տեղում. գալիս են նաև Գագիկն ու Հովնանը։ Ապա Անանիա կաթողիկոսը պահանջում է «Աղվանքի պատմություն»-ը[796], որպեսզի իմանան Աղվանքի աթոռակալների որպիսությունը։ Սակայն նրանք թաքցնում ու բոլորովին ցույց չեն տալիս։ Ապա երկնային տնօրինությամբ Գանձասարի եկեղեցապանը գիշերային արարողության ժամանակ դնում է մի գիրք՝ իբր թե Հովհան Ոսկեբերանինը, և կաթողիկոսին մեծարանքով հրավիրում են կարդալու։ Նա էլ, բացելով այն, գտնում է իր փնտրածը, քանի որ դա «Աղվանքի պատմություն»-ն էր։ Նրա մեջ ամենայն ճշտությամբ գրված էր, որ Աղվանքի առաջին եպիսկոպոսը հայոց լուսավորիչ սուրբ Գրիգորից էր ձեռնադրվել՝ Աղվանքի թագավոր Ուռնայրի խնդրանքով։ Եվ չորս հարյուր քառասուն տարի ենթարկվելով հայոց աթոռակալներին՝ Աղվանքի կաթողիկոսները Հայաստանից էին ձեռնադրություն ստանում, որովհետև Հայաստանինը պատրիարք էր, իսկ Աղվանքինը՝ արքեպիսկոպոս[797]։ Սա այսպես էր հայոց քանհինգ կաթողիկոսների ժամանակներում՝ մինչև Տեր-Աբրահամը[798]։

Եվ երբ աղմուկ տեղի ունեցավ մեր աշխարհում, [Հայաստանի] հունական մասում ոմն Հովհան հակաթոռ [կաթողիկոս] էր նստած ու [եկեղեցու] ինը դասերի [կարգի] համաձայն հույների կողմից էր հեռամուտ Հայաստանին։ Վրաց կաթողիկոս Կյուրիոնն էլ իր փառամոլական ախտի պատճառով հեռացավ հայոց [եկեղեցու դավանակցությունից] ու քաղկեդոնիկ դարձավ, ապա և Աղվանքի [կաթողիկոսը] բաժանվելով հեռացավ՝ [ինչ-որ պատրվակներ մեջտեղ բերելով։ Իսկ երբ մեռնում են Աբրահամն ու Հովհանը, հայոց պատրիարք է նստում Կոմիտասը[799]։ Վախճանվում է և Աղվանքի կաթողիկոսը։ Այնուհետև աղվանքցիները դարձյալ ենթարկվում են հայոց [եկեղեցուն] և Կոմիտասից կաթողիկոս են խնդրում, որը և իր հայրապետության երկրորդ տարում ձեռնադրում է։ Եվ այսպես հնազանդության մեջ մնա-

ցին ութսունհինգ տարի՝ հայոց յոթ կաթողիկոսների ժամանակներում՝ մինչև Տեր-Եղիան[800]։

Սրա օրերում Աղվանքի իշխանական կանանցից մեկը կար՝ Սպրամ անունով, որն առնում է իր մերձավոր ու սիրող Բակուր անունով մի եպիսկոպոսի և խոստանում նրան տալ կաթողիկոսության աստիճանը։ Բայց չի համարձակվում ուղարկել Հայաստան, որ չմերժեն, այլ ժողով է անում Պարտավում[801] ու կաթողիկոս ձեռնադրել տալիս նրան, որը և անվանվում է Ներսես։ Վերջինս գաղտնի կերպով ընդունում էր քաղկեդոնական դավանանքը։ Այդ պատճառով Եղիա կաթողիկոսն արքունի հրամանով գնում է Աղվանք և բռնելով այն տիկնոջն ու Բակուրին՝ մերկացնում, կապում է իրար ու իշի վրա նստեցնելով շրջել է տալիս Պարտավի փողոցներում։ Այդ պատճառով Բակուրը ութ օր քաղցած մնալով վախճանվում է։

Իսկ Եղիա կաթողիկոսը Աղվանքի համար արքեպիսկոպոս է ձեռնադրում ու այդ աշխարհի իշխաններից, եպիսկոպոսներից, գլխավոր վանականներից և ավագ տանուտերերից մեծամեծ նվերներով երդում, պայմանագիր ու գրավոր երաշխիք է վերցնում՝ այլևս սուրբ Գրիգորի աթոռակալներից չհեռանալու և ետ չկանգնելու համար, ինքն էլ վերադառնում է Հայոց աշխարհը։ Եվ այսպես միաբանությամբ մնացին հարյուր երեսունյոթ տարի, տասնչորս կաթողիկոսների օրոք՝ մինչև Տեր-Գեորգ Գառնեցին[802]։

Այնուհետև երբ Բուղա ամիրան եկավ Հայաստան, և Գեորգ կաթողիկոսը գերի տարվեց, դառն ու տեսակ-տեսակ պղտորումներ եղան Հայաստանում և Աղվանքում։ Տեր-Գեորգի աթոռից Հովնան անունով դռան եպիսկոպոսը փախավ ու եկավ Աղվանք։ Աղվանքի արքեպիսկոպոսն էլ մեռավ, իսկ [հայոց] կաթողիկոսը գերության մեջ էր։ Կաթողիկոսի հանդեպ հավատարիմ համարելով՝ հավաքվեցին ու դռան եպիսկոպոս Հովնանին ձեռնադրեցին Աղվանքի կաթողիկոս։ Իսկ երբ Գեորգը Աղվանքի թագավոր Համամի[803] միջոցով վերադառնում է գերությունից, տեսնում է Հովնանին նրանց արքեպիսկոպոս և հրամայում է հանել նրա զգեստներն ու կաթողիկոսական նշանները։ Այդ պատճառով էլ Համամը նրա առջևն ընկնելով, ներում է խնդրում։ Եվ կաթողիկոսը լսում

է նրան՝ իր մեծ երախտիքի համար, ու Հովնանին նորից ձեռնադրում է Աղվանքի արքեպիսկոպոս և թողնելով այնտեղ գնում է իր սեփական աթոռը։ Իսկ երբ Գեորգ կաթողիկոսը վախճանվեց, մեր աշխարհին իսմայելացիների կողմից վրա հասած դառն ու տեսակ-տեսակ անցքերի պատճառով աղվանքցիները չէին կարողանում հասնել հայոց հայրապետների մոտ, նույնպես և Աղվանքն անփութորեն անտեսվում էր հայոց կաթողիկոսների կողմից, քանի որ յուրաքանչյուր ոք միայն իր անձի համար էր հնարներ փնտրում՝ իսմայելական սրից ազատ մնալու համար։ Ապա Հովնանից հետո Աղվանքի կաթողիկոս են ձեռնադրում նրա Սիմեոն անունով եղբորը, այնուհետև՝ Դավթին, ապա՝ Սահակին, ապա՝ հիշյալ Գագիկին։ Եվ այսպես վաթսունինը տարի տևեց նրանց ինքնագլուխ ու ինքնաձեռնադրական թերակատար օծումը։

Եվ ահա Անանիա կաթողիկոսը, կարդալով ու իմանալով այս ամենի մասին ու այս բաներով փակելով խոտորախոս մարդկանց ըրախոս բերանները, պապանձեցնելով փառասերների ու ինքնահավանների լեզուն, բոլորին ամոթահար արեց։ Ու իշխանները, իմանալով հաստատ իրողությունը, լիովին համոզվելով, ենթարկվեցին նրան։ Իսկ նա արժանապես քննելով նախ կարգալույծ արեց իր իսկ ձեռնադրած Հովնանին՝ հորինած բամբասանքների պատճառով, և ապա՝ Գագիկին։ Բայց Գրիգոր իշխանը մեծ աղաչանքներով խնդրում էր կրկին ձեռնադրել Գագիկին, որը, սակայն, ուղղադատ ու ճշմարտաքնին հայրապետը պատշաճ չհամարեց, որովհետև վերստին ծնվածը վիժվածք կլինի, կրկին պսակվածը անվավեր կկոչվի։

Ապա խնդրեցին վերադառնալ Հայաստան՝ [ասելով]. «Մենք կընտրենք մի շատ համապատասխան մարդու և կուղարկենք ձեզ մոտ, որպեսզի քո կողմից մեզ համար առաջնորդ ձեռնադրվի»։ Հայրապետը հավաստիացվելով՝ այնուհետև դուրս ելավ Աղվանից տնից ու եկավ Սիսական տուն, Տաթևի սուրբ հայրապետանոցի կողմը։ Հակոբ եպիսկոպոսն այդ իմանալով գնաց Բաղաց ամրոցը՝ թաքցնելով իր երեսը ըստ այն խոսքի, թե՝ «Փախի՛ր, թաքնվի՛ր մի առ ժամանակ, մինչև անցնի տիրոջ բարկությունը»*։ Ջե՞ որ գիտեր,

* Համմ. Եսայ., ԻՋ, 20։

թե անիրավաբար պես-պես զրպարտություններ էին կցմցել ու բարդել իր վրա՝ երկաթը փայտի կամ սնդիկը ոսկու հետ խառնելու նման։ Իսկ Տեր-Անանիան, երբ այդ իմացավ, շատ օրեր մնաց այնտեղ՝ բազմաթիվ գրություններով ու պատգամավորների միջոցով պահանջելով, որ Հակոբը դուրս գա Ջևանշերի հովանավորությունից, բայց սա թույլ չտվեց դուրս գալ։ Այնուհետև կաթողիկոսը չկարողացավ շարունակել Տաթևում մնալ, որովհետև ձմեռ ժամանակ էր. սաստիկ ցասմամբ բորբոքված՝ նա քանդեց ու ավերեց տեղը, ահավոր նզովքներով իշխանին ու եպիսկոպոսին[804] խառնեց իրար, կապեց-կաշկանդեց կապանքներով, իսկ ինքն անցավ-գնաց իր աթոռը։ Ապա այնտեղ մնալով՝ միշտ գրություններ ուղարկելով չկարողացավ հնազանդեցնել ու իր ծառայությանը բերել Գագիկ Աղվանեցուն կամ Հակոբ Սյունեցուն, այդ պատճառով էլ միայն աղոթքներով էր աստծուց խնդրում դրա ելքը։ Եվ սա տեղի էր ունենում հայոց երեք հարյուր իննսունութ թվականին[805]։ Իսկ հայոց չորս հարյուր յոթ թվականին[806], կարծես վերին ակնարկմամբ, վախճանվեցին երկուսն էլ՝ Սյունյաց մետրոպոլիտ ու հայոց բոլոր եպիսկոպոսների գլուխ Հակոբը և Աղվանքի արքեպիսկոպոս Գագիկը։ Վերջինս Անանիայի վերադարձից հետո անզգամաբար ապստամբվել էր ու իր պայմանը դրժել։ Եվ գուժկան գալով՝ նրանց մահվան մասին տեղեկացրեց կաթողիկոսին, որը և, դա համարելով իր աղոթքների սաղրանքով եղած, գոհունակություն հայտնեց աստծուն։ Բայց նա պատշաճ չհամարեց իր կողմից ավերված առաքելական աթոռը զրկել հայրապետական գլխից[807], ուստի և ճանապարհ ընկնելով եկավ մեր այս Սիսական աշխարհը, Սյունյաց եպիսկոպոսարանի անբնակ տեղը, հրաման տվեց հավաքել կրոնավորներին ու շինել տեղը, իսկ ինքը գնաց Կապան քաղաքը։ Նրան ընդառաջ ելնելով բանադրված Ջևանշեր[808] իշխանը՝ զղջմամբ խոստովանեց իր մեղքերը։ Նույնպես և եկավ Սյունյաց գահերեց իշխան Վասակը[809]՝ Աշոտի որդի Սմբատի որդին, գեղեցիկ խոստովանությամբ մեղա եկավ։ Այսպիսով միասին [կաթողիկոսից] իրենց հանցանքների համար ներում ստանալով՝ նրան տարան, իջեցրին Կապան քաղաքի արքունական գահույքի վրա։

Հավաքելով բոլոր խաչապաշտ մարդկանց ու ճգնակյաց

վանականներին՝ [կաթողիկոսից] խնդրեցին իրենց համար վերատին առաջնորդ [նշանակել]։ Եվ նա ընդառաջելով՝ Սյունյաց եպիսկոպոս դարձրեց Ջևանշերի որդի Վահանին, որը Վահանավանքի[810] մեծ միաբանության առաջնորդն էր։ Կաթողիկոսը երդմնագիր վերցրեց Վահանից ու իշխաններից, որպեսզի այլևս չշեղվեն ու չհեռանան սուրբ Գրիգորի աթոռից և մտերմություն չանեն Աղվանքի արքեպիսկոպոսների հետ, որ նմանօրինակ մոլորություն առաջ չգա։ Եվ մեծապայման երդմնագիրը եղբափակեցին ահեղ ու սոսկալի նզովքներով, «որ եպիսկոպոսներից ոչ ոք չհամարձակվի Հակոբի արածն անել կամ մտածել ոճիր, և որ իշխաններից ոչ մեկը չհամարձակվի այնպիսինին հետևել, նրան օգնական կամ պաշտպան կանգնել. իսկ եթե եպիսկոպոսներից մեկը հանդգնի, շտապ կերպով հանձնեն հայոց կաթողիկոսի ձեռքը, և նրա համար թաքստոց կամ պատսպարան չլինեն»։ Եվ երդմնագիրը կնքելով իրենց մատանի[ներ]ով՝ հանձնեցին կաթողիկոսին։ Ավելորդ համարեցինք այն [այստեղ] գրելը, որովհետև [բոլոր նման] գրություններ լրիվ կան «Գիրք թղթոց»-ում[811], որոնք ժողովել է սուրբ Անանիան՝ «Հավատո նամակ» անվանումով։ Բայց միևնույն ժամանակ Սյունյաց տնից վերցրեց պատիվը, այսինքն՝ այն խաչը, որ առջևից էին տանում, թանկարժեք ու մեծագին գավազանը, ոսկեթել գահավորակը, որոնք իրենց հետ ման էին ածում։ Դրանք սահմանված էին հայոց թագավորների ու հայրապետների կողմից։ Սրանք այսպես վերցվեցին ու վերացան մինչև Սյունյաց եպիսկոպոս Տեր-Հովհաննեսի[812] ու հայոց կաթողիկոս Տեր-Սարգսի[813] ժամանակները։ Իսկ երբ Տեր-Հովհաննեսը ձեռնադրվեց, Սյունյաց աթոռակալների ամբողջ պատիվն ու իշխանությունը վերականգնվեցին հայոց կաթողիկոս Տեր-Սարգսի կողմից, որն իր տեղում կպատմեմ։

Ապա այս իրագործումից հետո կաթողիկոսը[814] գնում է Աղվանք՝ այնտեղի աթոռակալությունը հաստատուն դարձնելու համար։ Սակայն նրա եռևից գուժկան է հասնում Վասպուրականի և Արծրունյաց Գրիգոր թագավորի կողմից[815]՝ հայտնելով, թե [մարդ] է վախճանվել ու դին քեզ է ապառում»[816]։ Այսպիսով ետ են դարձնում։

Այս իմանալով Աղվանքի իշխանները՝ Իշխանիկն ու Սև-

նեքերիմը, այլև մյուս Սեւնեքերիմը՝ Գրիգորի որդին, որին նախօրոք հիշատակեցինք, Զեվանշերն ու Գուրգենը իրենց մեղքերը մեծ զղջմամբ խոստովանելով, խոտակերաց վանքից[817] Դավթին ուղարկեցին նրա մոտ՝ իրենց համար առաջնորդ ձեռնադրվելու։ Նրան Տեր-Անանիան ընդունեց մեծաշուք պատվով, ձեռնադրեց, ճոխ ընծաներով և առատաբաշխ պարգևներով այնտեղից ուղարկեց Աղվանից աշխարհը։ Դրա համար էլ բոլորն իրենց լեզվով գոհունակություն ու փառք ուղղեցին վեր, բարերար աստծուն, որն այսպես վերացրեց եկեղեցու մեծ խռովությունը և խաղաղություն բերեց մեր կեղեքված ու տառապած հայոց ժողովրդին. եկեղեցու պատվական անդամները, որ խոտորվել էին նրանից, վերըստին միացրեց գովելի գլխին՝ մեծ պատրիարքներին, որոնք սուրբ Գրիգորի աթոռակալներն էին։

Եվ արդ՝ այս պայքարից հետո եթե մեկը՝ Սյունյաց եպիսկոպոս կամ Աղվանից արքեպիսկոպոս, խորհի կամ մտաբեր այն կորստաբեր շավղով ընթանալ ու հեռանալ հայոց կաթողիկոսներից, ինչ պատճառով էլ լինի, բացի հոգևոր վրնասներից, եթե ինչ-որ հերձված կամ անպատշաճ նորամուծություն հանդես բերի, այնպիսին նզովված լինի սուրբ երրորդությունից, նրա մասն ու բաժինը հերձվածողների և ուրացողների հետ լինի ու սատանայի հետ նա դատապարտվի։ Իսկ եթե ինչ-որ վնաս նկատեն հավատքի կամ եկեղեցու նկատմամբ, ճշմարտությամբ պիտի ստուգել հայոց կաթողիկոսների միջոցով։ Եվ կամ եթե հանդիպեն ինչ-որ մեծագույն արատի ու վնասակարության, որոնք բազմաթիվ մարդկանց խռովության և կորստյան պատճառ են դառնում, իրենք պիտի իմանան՝ արժանապես վարվել, մինչև որ թյուրությունը բոլորովին մաքրվի։

ՍԳ

ՏԵՐ-ՎԱՀԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԿՅԱՆՔԻ ՎԱԽՃԱՆԻ ՄԱՍԻՆ

Տեր-Անանիան, Հովհաննու վանքում[818] Վահանին ձեռնադրելով Սյունյաց եպիսկոպոս, իր հրամանում նաև սահմանում էր, որ [եպիսկոպոսը] քիչ ժամանակ պիտի Տաթևի մեծ

եպիսկոպոսարանում նստեր, իսկ մյուս օրերին՝ իր սեփական տանը[819], որովհետև տեղի ավերման պատճառով շատ պայծառություններ մարել էին, բազում բարեգործություններ խափանվել՝ երկար ժամանակ, շատ ունեցվածքներ հափշտակվել ու պակասել եկեղեցուց՝ Տաթևի մեծ կենտրոնից, որոնք ժամանակի ընթացքում իշխանները քիչ-քիչ այնտեղ վերադարձրին։ Ինչպես օրինակ՝ Սյունիքի տեր աստվածասեր իշխան Սմբատը՝ մեծ Սմբատի եղբայր Աշոտի որդի Սահակի որդին, սուրբ եկեղեցիներին վերադարձրեց Ծացարդն ու Հարժիքը[820]՝ Տեր Վահանի միջոցով։ Իր ձեռքով գրեց նաև այսպիսի վճռագիր.

«Հանուն աստծու, առավել հաստատուն դարձնելու համար նախորդ այն պայմանագիրը, որ մեր հայրերը տվել էին Սյունյաց աստվածապատիվ և հոգևոր [առաջնորդ] եպիսկոպոսներին, ես՝ իշխան Սահակի որդի Սմբատս, Հարժիքն ու Ծացարդը, որ մի կարճ ժամանակ հափշտակվել էին այս տնից, տվեցի աստվածապատիվ և հոգևոր տեր Վահանին ու Տաթևի աստվածաբնակ և լուսաճեմ եկեղեցիներին, այն պայմանով, որ առաջինների հիշատակը նորոգեն, ինձ ևս հիշեն իրենց սուրբ ու մաքրափայլ աղոթքների մեջ և մեր մեղքերին ներում խնդրեն։ Եվ մեզանից հետո ոչ մեկը՝ մերոնցից կամ օտարներից, չպիտի հափշտակի վանքից։ Իսկ եթե հանդգնեն, աստծու բերանով նզովված լինեն սատանայի ու օձի հետ։ Նրանց մասն ու բաժինն էլ Հուդայի, Կայենի և Արիոսի հետ լինի։ Գրեցինք և կնքեցինք մեր մատանիով, չորս հարյուր տասներկու թվականին»[821]։

Վահանը եպիսկոպոսական պաշտոնին մնաց վեց տարի։ Այնուհետև վրա հասավ հայոց կաթողիկոս Տեր-Անանիայի մահը։ Նրան թաղեցին Արգինայի վանքում[822]։ Եվ հայոց թագավոր Աշոտը[823]՝ Սմբատի որդին, եպիսկոպոսների ու սուրբ հայրերի ժողով գումարեց թագավորանիստ Շիրակավանում. նաև Սյունիքից հրավիրեց Վահանին։ Նա առաջարկեց եպիսկոպոսներից մեկին ընտրել ու նստեցնել հայոց հայրապետական աթոռին։

Ապա ամբողջ ժողովն ընտրում է Վահանին՝ առավել սուրբ ու իմաստուն լինելու պատճառով։ Եպիսկոպոսների բազմությունը նրան ձեռնադրում է ու օծում հայոց կաթողիկոս։ Նա

մեկ տարի մնալուց հետո սկսեց Վրաստանից պատկերներ բերել ու դնել սեղանի վրա։ Հրամայեց նույնն անել բոլոր եկեղեցիներում՝ ըստ հույների սովորության, սեղանները զարդարել սրբապատկերներով[824], պատարագ չմատուցել առանց սրբապատկերների։ Այս պատճառով բոլորը կասկածեցին, թե հույների հետ դաշինք է կնքել և կամենում է նրանց ազանդը [մեր] եկեղեցին խցկել։ Թագավորի մոտ բողոք բարձրացրին։ Եվ նա հրաման տվեց ժողով գումարել Անի քաղաքում[825], իսկությունը քննելու նպատակով։ Վահանն այդ իմանալով ժողովին չներկայացավ, այլ ելավ-գնաց Վասպուրականի աշխարհը, Գագիկ թագավորի որդի Համազասպի մոտ ու նրան իր հետ համաձայնության բերեց՝ ասելով, որ ինքը զրպարտված է նախանձոտ մարդկանց կողմից։ Բնակվեց Ջորո կոչված վանքում[826]։ Իսկ Անիում հավաքվածները, երբ իմացան նրա գնալը, Աշոտ թագավորի հրամանով նրա փոխարեն մեկ ուրիշ մարդու կարգեցին կաթողիկոս, Վահանին էլ պաշտոնանկ արեցին։ Եվ այսպես կաթողիկոսի[827] տեղում կաթողիկոս նստեց Ստեփանոսը՝ Անիում, իսկ Վահանը մնաց Վասպուրականում։ Երկու տարի մնալով՝ նրանք մեր աշխարհը լցրին նզովքներով, մինչև որ երկնային ակնարկությամբ երկուսն էլ մի օրում վերացան։ Վահանը թաղվեց այնտեղ, Ջորավանքի եկեղեցու բակում, տեղում եղած կաթողիկոսների [շիրիմների] կողքին։ Իսկ հայոց կաթողիկոսական աթոռին հայրապետ նստեցրին արժանաժառանգ Տեր-Խաչիկին[828], որը Անանիայի հարազատ արյունակիցն էր։

ՍԴ

ՏԵՐ-ՎԱՀԱՆԻՑ ՀԵՏՈ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՍՅՈՒՆՅԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ

Վահանից հետո նրա տեղը եպիսկոպոս են նստեցնում Աշոտ անունով մի որբևայրի քահանայի՝ առավել ճգնակեցության ու խոհեմության համար։ Քանի որ նա սիրված էր իշխանների կողմից ու երևելի էր ամբողջ նահանգում, ուստի և նրան ձեռնադրեց նույն Վահան կաթողիկոսը։ Այս Աշոտը նաև ուներ մի եպիսկոպոս[ացու]՝ Հովհաննես անունով, որին, օրըստ աճեցնում էր մեծ զգուշությամբ։ Եվ հասցվելով այրու-

թյան արբունքի հասակի՝ [պարծավ] պարկեշտ և մաքրակրոն, վայելչագեղ և հանճարեղ։ Նրան էլ հենց ձեռնադրել տվեցին Սյունյաց եպիսկոպոս։ Նրա հայր Տեր-Աշոտը, աթոռին մնալով տասնյոթ տարի, աթոռը հանձնեց նրան՝ իր որդի Տեր-Հովհաննեսին, իսկ ինքը զբաղվեց աղոթքներով։ Հովհաննեսն էլ, մնալով վեց ու կես տարի, վախճանվում է։ Եվ ստիպելով նրա հորը՝ Աշոտին, վերստին դնում են նույն աթոռին, որը և, մնալով հինգ ու կես տարի, վախճանվում է։ Սրանից հետո նշանակում են Տեր-Սամվելին՝ բարեհոգի մի մարդու, որը, մնալով[829] հինգ տարի, մեռնում է։

Ապա ընտրում են Հակոբ անունով մի լավ, խիստ պինտանի մարդու՝ դաստիարակված սրբությամբ ու կուսությամբ, և նշանակում են Սյունյաց եպիսկոպոսի պաշտոնին։ Սրա օրերում վախճանվում է Սահակի որդի, Սյունյաց տեր Սմբատը և թաղվում Տաթևի եպիսկոպոսարանում։ Այս Սմբատը թագ դնելով՝ իրեն թագավոր հռչակեց[830], Եվ նրա բարեպաշտ կինը՝ թագուհի Շահանդուխտը, իր որդիներ Վասակն ու Սևադան բարեպաշտ ու աստվածասեր Սմբատ թագավորի հոգու համար սուրբ եկեղեցուն նվիրեցին վեց հազար դրամ և Հաբանդ գավառի Տեղ գյուղը[831], որը նույն ինքը՝ Շահանդուխտն էր շենացրել խոպան վայրից։ Եվ մեծամեծ նզովքներով վճռագիր գրեցին, որն այսպիսին էր.

«Հանուն աստծու ես՝ Սևադայի դուստր Շահանդուխտս, կամեցա [եկեղեցուն Հաբանդ գավառի Տեղ կոչված գյուղը՝ իր բոլոր շրջակա սահման[ներ]ով, լեռնով, դաշտով, մյուս եկամուտներով, որ ինձ էր նվիրել իմ թագավոր Սմբատը, և ես խոպան տեղից գյուղ էի դարձրել, իմ երանելի թագավորի վախճանից հետո նրա հոգու համար Տաթևի սուրբ կենարոնական վանքին ու սուրբ նշանին տվեցի Սյունյաց եպիսկոպոս Հակոբի միջոցով։ Այսուհետև ես և իմ որդիներ Վասակն ու Սեվադան տիրող չենք, որովհետև աստծու միջոցով սուրբ նշանիս ենք հանձնել։ [Վանքի կրոնավորները] պարտավոր են ամեն տարի վարդավառի քառասունքին պատարագել իմ թագավորի հոգու համար ու ամեն օր «Երանի՛ ում թողությունս աղմոսն[832] ասել նույն քառասունքին։ Արդ՝ այս աթոռում հաջորդող սուրբ հայրապետներ, պարտավոր եք սա անխափան կատարել ու այդ գյուղն էլ հարկերից ազատ վայելել։

Աստված ընդունելի անի։ Արդ՝ եթե մեր զավակներից կա՛մ օտարներից, կա՛մ ավագներից որևէ մեկը ինչ-ինչ պատճառներով մտածի այդ Տեղ գյուղը Տաթևից խլել, կա՛մ հակառակ կանգնել մեր հոգուն, կամ էլ չար[833] թե արքունի ուրիշ որևէ հարկ վրան դնել, այնպիսին իր ունեցածը չվայելի ու բոլոր չարագործների մեղքերին պարտական լինի, Հուդայի ու Պիղատոսի հետ դատվի, նեռի հետ անիծվի, անշեջ կրակի մեջ տանջվի և երեք հարյուր տասնութ հայրապետների կողմից նզովված լինի։ Իսկ եթե մահմեդական մեծավոր լինի ու ջանա հափշտակել, իր հավատքից ու փեղամբարից մերժված լինի, առաջին փեղամբարից, նրա բոլոր հաջորդներից ու գալիք վերջինից նալլաթի արժանանա, երկինքը նրա [գլխին] կրակ մաղի, երկիրը նրա համար փուշ ու տատասկ բուսեցնի և նրա ու իր որդիների, իրեն սիրողների անուն[ներ]ը կորչեն ու ջնջվեն երկրից, նրա հիշատակն էլ երբեք չերևա այլևս։

Առավել հաստատ լինելու համար այս վճռագիրը գրեցի իմ ձեռքով ես՝ Սմբատ Թագավորի որդի Վասակս, իմ մոր հրամանով։ Աստված շնորհավոր անի։ Հայոց չորս հարյուր քառասունյոթ[834] թվականին [գրվեց] և կնքվեց մեր մատանիով»։

«Սա իմ՝ Սյունյաց տան [եպիսկոպոս] Հակոբիս պատվիրանն է Տաթևի նախապատիվ աթոռին ու լուսաճեմ տաճարին, որի [միաբանության] վրա հույս դրեց մեր երանելի Թագավորը, որ պարտավոր եք անխափան կատարելու սահմանված հիշատակը և քառասունքը՝ Տեղ գյուղի [նվիրատվության] համար։ Եվ մենք այդ վկայելով մեր ստորագրությամբ անքակտելի կապերով կաշկանդեցինք սրան հաջորդներին ու կնքեցինք մեր մատանիով՝ աստծու կամքով»։

«Աստծու շնորհիվ և ես՝ Սյունյաց եպիսկոպոս Գրիգորս, հաստատեցի այս վճռագիրը՝ Տեղ գյուղի մասին, որով սուրբ Թագուհի Շահանդուխտի ու իր որդիների կողմից գյուղը սբերվել էր սուրբ եկեղեցուն՝ իրենց խաղաղարար և վայելուչ Սմբատ Թագավորի [հոգու] համար, որ ոչ ոք չհամարձակվի խախտել այս սուրբ աթոռից։ Ով հակառակվի, կախարդ

Սիմոնի հետ գիշամահ սատկի, աստծուց ու բոլոր սրբերից նզովված լինի։ Սմբատի հիշատակը, որ սահմանված է տոներին, անխափան պիտի կատարեն»։

Այս Հակոբն էլ, սակավ տարիներ ապրելով, մեռնում է։ Կարծեմ սրան դավաճանությամբ սպանել են ցուրացիները Ցուրի[835] փոսի վերևում, որտեղ էլ գտնվում է գերեզմանը, որի վրա բժշկություններ են լինում։ Հակոբին հաջորդում է Գրիգորը[836], որը ամեն ինչով պայծառացած էր՝ թե՛ ներքնապես, թե՛ արտաքնապես, և բազմաթիվ երևելի գործեր կատարեց հայրապետանոցում. քանդեց ու հիմնիվեր բնաջնջեց անիծբանակ Ցուրա քարը, Զաքիկ իշխանի որդի Փարաջիից[837] հոգեբաժին նվեր վերցրեց Բոլորաքարը[838]՝ իր ողջ սահման[ներ]ով, բացի Նորիքի վանքի բաժնից, որը հետո վերցրեց մյուս Տեր-Գիրգորը Խաղբակի որդի Դլենից Փարաջի վճռագիրն այսպիսին է.

«Հանուն աստծու սա իմ՝ Զաքիկ իշխանի որդի Փարաջիս ձեռքով գրածն է։ Կարդալով առաջինների գրածը՝ Տաթևի սուրբ եկեղեցիների և Տեր-Գրիգորի վրա վերստին հաստատեցինք Բոլորաքարը՝ իր սահմաններով, որն իմ սեփական կալվածքն էր. այն թեև առաջ նրանց վրա հաստատված սեփականության էր, սակայն քիչ ժամանակով անջատված էր եպիսկոպոսարանի խանգարման պատճառով։— Մենք նորից հաստատեցինք՝ նույն այգով, ծառ ու տունկով, հողով ու ջրով, Տաթևի այս սուրբ կենտրոնի, սուրբ նշանի ու սուրբ Առաքելոցի վրա՝ Սյունյաց Տեր-Գրիգոր եպիսկոպոսի միջոցով։ Սա ես հանձնեցի իմ կամքով և ոչ թե հարկադրանքով կամ մեծավորների բռնության համար կամ թե չէ հարբած լինելով, այլ երկյուղ կրելով առաջին հայրապետներից, իշխաններից ու սոսկալի նզովքներից՝ սրտիս սիրով տվեցի իմ հոգու փրկության համար։ Եվ դուք, աստվածապահ տերեր ու սուրբ եկեղեցականներ, մի՛ մոռանաք իմ անտեր ու մեղավոր հոգին, այլ հիշելու և աղոթքների արժանացրեք այն։ Իսկ եթե որևէ մեկը այս նվիրատվության խաթարման կամ խանգարման պատճառ լինի ու իմ հոգին ոտնահարի և չքաշվի առաջինների ու մեր նզովքներից, նզովված լինի ամենասուրբ Երրորդության և ամոթալից դուրս գա իր դատաստանից ու Հուդայի բաժինն ստանա։ Սրա հաստատման համար վրան

դրեցինք աստվածապատակ թագավոր Վասակի ու մեր սուրբ հայրապետ Տեր-Գիրգորի մատանի[ներ]ը»։

Սրանից հետո Տեր-Գրիգորը, քիչ ժամանակ ապրելով, վախճանվում է, և նրան հաջորդում է աստծու բախտավոր ու բազմերանելի այր, այն մարած տան և մեր ամբողջ Սիսական աշխարհի երկրորդ Լուսավորիչ ու երկրորդ նորոգիչ Տեր-Հովհաննեսը[839], որը մեծ աշխատանքով և երևելի փառքով աթոռին մնաց ավելի քան հիսուն տարի։ Նա արյունակից-ազգական էր հայոց կաթողիկոս Տեր-Սարգսին, որի գործերի մասին իր տեղում կպատմեմ։ Սակայն այժմ պարտք եմ համարում հետ դառնալ, մի փոքր ցույց տալ նաև իշխանների հանգամանքները։

Ը

ՍՅՈՒՆՅԱՑ ԻՇԽԱՆՆԵՐԻ [ՀԱՋՈՐԴԱԿԱՆ] ԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ ՎԵՐՋԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ, ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սյունյաց առաջին իշխաններին, ըստ հաջորդականության, ծանոթացանք ու հիշատակեցինք այս գրքում, սկսեցինք Անդոկից ու [հասցրինք] մինչև վերջինը՝ Քուրդն, ապա անծանոթ մնացինք երկու կամ երեք իշխանների։ Իսկ այնուհետև դարձյալ գահակալեցին Սյունի իշխանները։ Դրանցից առաջինը Վասակն[840] էր՝ Սյունյաց մեծ նահապետը, ապա՝ նրա երկու որդիները՝ Փիլիպեն ու Սահակը և մյուս իշխանը՝ Գրիգորը[841], նույն ցեղից, որը ժառանգության մաս ուներ հայրենի տիրույթներից։ Թեպետ և հայկական իշխանական շատ ցեղեր ու տոհմեր կային, բայց մենք ուշադրություն դարձրինք միայն գլխավոր գահակալ իշխանների վրա։ Ըստ այդմ էլ այստեղ շարադրեցինք նրանց մասին, որոնց և արժանի համարեցինք։

Վասակից հետո հայրենի ժառանգական իրավունքը միմյանց միջև բաժանում են նրա որդիները՝ Փիլիպեն ու Սահակը։ Փիլիպեն դառնում է Սյունիքի գահերեց իշխան, իսկ Սահակը բաժին է ստանում ամբողջ Գեղամա գավառը։ Փիլիպեն մեռնում է՝ թողնելով երեք որդիներ՝ Բաբկենին, Վասակին ու Աշոտին։ Քիչ ժամանակ անց Սահակն սպանվում է Հոլ ամիրայի պատերազմի ժամանակ[842], Հուրազդան գետի ափին, Կավակերտ ավանի[843] մոտ։ Նա իրեն հաջորդ է թողնում Սուփան կոչված իր Գրիգոր որդուն։ Ապա օրեր անց հայրենի տիրույթների նկատմամբ եղած ինչ-որ չնչին պատճառով միմյանց հետ կռվում են Փիլիպեի ավագ որդի Բաբկենը և Սահակի որդի Գրիգորը։ Բաբկենը Գրիգորին հաղթելով դիաթավալ է անում։ Դրա համար էլ նա կայենի բաժինն է ժառանգում, շուտով անհետանում է կյանքից՝ թողնելով վահան անունով մի որդի, որը և ժառանգում է Փիլիպեի իշխանությունը։ Իսկ Գրիգորը երկու որդի է թողնում՝ Գաբուռ կոչված Վասակին և Հրահատին։ Բայց նա ուներ և երկու եղբայր՝ Հրահատն ու Գագիկը։ Նրա իշխանությունը ժառանգեց Վասակ Գաբուռը, որը փեսայացավ Աշոտ Բագրատունուն, որը Հայաստանի առաջին [Բագրատունի] թագավորը դարձավ, կնության վերցրեց նրա դուստր Մարիամին։ Իսկ Փիլիպեն վախճանվելով ժառանգ թողեց Բաբկենին, որը և մեռավ, ու իշխանիկ կոչված Վասակին։ Մեռավ և Վասակը, որի իշխանությունը ժառանգեց իր եղբայր Աշոտը։ Սա երկար ժամանակ ապրեց, ապա մեռնելով թողեց չորս որդի՝ Սմբատին, Սահակին, Բաբկենին և Վասակին։ Նրանք իրենց ժառանգությունը բաժանեցին։ Սմբատը վերցրեց ամբողջ Վայոց Ձորը և Շահապոնքը, որը ճահուկ գավառն էր։ Իսկ Սահակն ու մյուս եղբայրները ստացան Սյունիքը, Բաղքը և այլ տեղեր։ Մեծ Վասակը Փիլիպե անունով մի որդի ուներ, որը տիրում էր Շնհերին[844] ու Համբանդին[845]։

Մեռնում է նաև Վասակ Գաբուռը՝ Գրիգոր Սուփանի որդին, թողնելով երեք որդիներ՝ Գրիգորին, որը ևս Սուփան կոչվեց, Սահակին ու Վասակին։ Նրա իշխանությունը ժառանգեց Գրիգոր Սուփանը, որն աստվածային ինչ-որ վերահսկությամբ զբաղվում էր եկեղեցիների շինարարությամբ ու հոգևոր գործերի [կարգավորմամբ]։ Իսկ Սմբատի եղբայր կրասեր Վասակն սպանվում է Գողթնի ամիրայի դեմ մղած պատերազմում, Երնջակի ամրոցի մոտ։ Ինքը՝ Սմբատը, ստանձնելով գահերեց իշխանությունը և հոգևոր ու աշխարհիկ բազմաթիվ գործեր ցույց տալով, հաջորդ է թողնում իր

ժառանգած իշխանությանը իր որդի Վասակին։ Իսկ Սմբատի Սահակ եղբայրը Սմբատ անունով որդի ուներ։ Սահակը մեռնում է, ու նրա իշխանությունն ստանձնում է իր Սմբատ որդին։ Բաղքում էլ սույն ցեղից Զեվանշեր անունով իշխան կար, որը Զագիկ իշխանի որդին էր։ Իսկ Գրիգոր Սուփանը բազում քաջագործություններից և [ուրիշ] երևելի գործերից հետո մեռնում է՝ թունավորվելով Նսրրից, և նրա իշխանությունը ժառանգում է իր եղբայր Վասակը։ Մեռնում է Սահակը ու թաղվում Նորատուրքի եկեղեցու բակում։ Իսկ Սմբատի որդի Վասակը երկար իշխելուց ու շատ գովելի գործեր կատարելուց հետո մեռնում է, և մեր Սիսական համայն աշխարհին տիրում է Սմբատը՝ Սահակի որդին, գահերեց իշխանությամբ։

Ո՛վ պատվական ընթերցող, այժմ լսի՛ր ինձ, և ես քեզ կպատմեմ պանծալի բաներ. քանի որ Սիսական տոհմը, որ սերվում է Հայկից, մի ժամանակ միավորված էր Արշակունի և Պահլավիկ թագավորական ցեղին, երբեմն առնչվում էր Խազիրների թագավորության, իսկ ամենից հետո՝ Բագրատունիների հետ, երբեք չըմբոստացավ հայրենի իշխանությունների դեմ։ Իսկ երկար ժամանակ անց, երբ դուռ բացեցին նախ Արծրունիները՝ թագադիր լինելով[846] ընդդեմ հայոց թագավոր Սմբատի[847], թագադիր եղան նաև Վրաց բդեշխ Ատբերներսեհն ու Աղվանից Համամը, Ափշինը մեծարանքով [առաջարկեց] թագադիր լինել Վասակ Սյունուն, բայց սա չկամեցավ ապստամբի անուն վաստակել։

Ապա երբ թուլացավ Բագրատունիների իշխանությունը, և ուժեղացավ արաբական բռնությունը, տրոհվելով անջատվեցին երկրի բոլոր գլխավոր նախարարական գահերը՝ Վասպուրականինը, վրացականը, աղվանականը, Կյուրիկյան կոչված Ձորագետցիներինը[848], ինչպես նաև Կարս-Վանանդինը[849], որ Բասյանք է կոչվում։

Ապա Աշոտի որդի Սահակի որդի Սմբատը[850], որ ամուսնացած էր Աղվանից մեծ ու փառաբանված իշխան Սևադայի Շահանդուխտ անվամբ դստեր հետ, իր թոռ Կատրամիդեին՝ իրենից հետո թագավոր դարձած իր Վասակ որդու դստերը, կնության էր տվել Աշոտի որդի Գագիկ թագավորին[851], որը և կառուցեց Անիի մեծ կաթողիկե սքանչելի, հոյաշեն եկեղեցին[852]։ Սմբատը կապված է Ատրպատական աշխարհի թավրիզի մեծ աթաբեկի, Դերբենդի կիրճին[853] տիրող Ռան ամիրայի, ինչպես նաև Աղվանքի իշխանների հետ։ Սրանք բոլորով [իրենց տածած] առավել սիրուց ծանուցում են Խորասանի[854] մեծ սուլթանին, ստանում նրա թուլտվությունը և թագադրում այն գեղեցկահասակ ու վայելչագիսակ հայկազուն մարդուն՝ Սյունյաց իշխան Սմբատին։ Այն ժամանակ Բագրատունիներն իշխում էին միայն Շիրակին ու Այրարատին՝ մինչև Գեղարքունիք, Ուխտիք[855], Կարին[856], Վասպուրականի սահմանը, Զորագետ[857] ու Գարդման[858], իսկ Սյունիքը կտրված էր նրանցից։ Այդ պատճառով էլ Սմբատը քրեական մեղք չհամարեց, եթե Բագրատունիները, որ գերեվարությամբ բերված էին Հրաշեից, արժանի գտնվեցին դրան, ապա որքա՜ն առավել արժանի էին սրանք, որ Հայկից ակնհայտ հարազատությամբ որդիները հայրերին փոխարինելով բնիկ իշխանությամբ եկել-հասել են մինչև այժմյան ժամանակները։ Արդ՝ Սմբատը թագադրվելով ճոխ ու երևելի փառքով կազմակերպում է թագավորությունը՝ ինքնակալ թագավորների ձևով։ Եվ շատ ճոխություններից ու արքունական երևելի գործերից հետո վախճանվում է։ Նրա դին թաղվում է Տաթևի աստվածաբնակ աթոռի մեծ սրբարանում՝ համաժողովրդական մարդաշատ հանդեսով։

Նրա իշխանությունը ժառանգում է իր կտրիճ որդի Վասակը, որը և մեծահասակ համախմբությամբ, ազատակույտ բազմությամբ օծվում է Սյունիքի ու Բաղքի թագավոր[859]՝ Սյունյաց եպիսկոպոս Տեր-Գրիգորի ձեռքով։ Նա իր Սևադա եղբորը դարձնում է իր ազատակույտ զորքերի իշխանաց իշխան։ Սրանց մայրը՝ երանելի թագուհի Շահանդուխտը, [դեռ] կենդանի էր։ Սա, աստվածային մի հիշեցումից մղված, շինում է Վաղատանի գեղեցկակերտ ու վայելչաձև վանքը[860], որը դեռ վաղուց ուխտադիր մարդկանց վայր էր, որովհետև այնտեղ վաղ ժամանակներից մի եկեղեցի կար սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով, որը կարծեմ նրա կողմից էլ հիմնադրված էր, հետո [վերա]շինված Ստեփանոս Հոր և սուրբ ճգնավորի կողմից։ Այն բուժում էր թունավոր օձերից խայթվածներին, ինչպես որ Փարպու եկեղեցին է բուժում մարդու և անասունի անբուժելի կատաղի ցավը։ Այստեղ հենց այժմ էլ տեսնում ենք անպատմելի հրաշքներ. թունավոր [սեռուն-

ներից] խայթված, սևացած ու պայթելու աստիճան ուռած-ներին հանում են բարձրադիր լեռները, ցույց են տալիս վանքը և կամ եկեղեցուց մի քիչ հող են հասցնում, մակարդված թույնն իսկույն քայքայվում է, ու հիվանդը՝ բուժվում։

Այդ պատճառով մեծ բարեպաշտ Շահանդուխտը կուպածո քարերով եկեղեցի է շինում՝ սուրբ Նախավկա Ստեփանոսի անունով, հայոց չորս հարյուր քառասունինը թվականին[861], այնտեղ հաստատում է կրոնավորների ու վանքի բազմաթիվ սպասավորների տուն։ Եկեղեցու բակում շինում է նաև աղոթատուն՝ կրաշաղախ քարե շարվածքով, ինչպես նաև պահեստներ, արհեստանոցներ, և վանքը շրջափակում պարսպով։ Վանքի համար սահմաններ է առանձնացնում Վաղատնից, նրան է հանձնում Գոմեր ագարակը[862]։ Ջանազան զարդերով պայծառապես զարդարում է եկեղեցին։ Ինքն էլ վախճանվելով թաղվում է նույն սրբարանի բակում։ Ապա որոշ տարիներ անց, չորս հարյուր հիսունհինգ թվականին[863], Սեվադան՝ նույն Շահանդուխտի որդին և Վասակ թագավորի եղբայրը, մեծ ջանքերով կառուցում է մի եկեղեցի՝ խիստ պայծառ, գեղեցկակերտ, գմբեթահարկ՝ սուրբ Կարապետի անունով, նրա բակում էլ՝ մի գավիթ։ Նույն բակում իրենք են հանգչում։ Նրանց հիշատակն օրհնությամբ լինի, և վարձը՝ բյուրապատիկ մեր Քրիստոս աստծուց։

ՄԶ

ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅԱՆ ՈՒ ԻՐ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

Սյունյաց եպիսկոպոս Տեր-Գրիգորի վախճանից հետո ընտրում են աստծու երջանիկ ու փառաբանված մարդ Հովհաննեսին[864], որը կարծեմ հայոց կաթողիկոս Տեր-Սարգսի տոհմից էր։ Եվ մեր Սյունյաց ու Բաղաց աշխարհների բարեպաշտ ու աստվածասեր թագավոր Վասակը նրան ազնվական մարդկանցով ու մեծամեծ ընծաներով ուղարկում է Անի, հայոց սուրբ հայրապետ Տեր-Սարգսի[865] մոտ՝ Սյունիքի եպիսկոպոս ձեռնադրվելու։ Կաթողիկոսից խնդրում է վերստին շնորհել [իրենց երբեմնի] ունեցած մետրոպոլիտության աստիճանն ու պատիվը՝ առջևից տարվող խաչը, գավաղանն ու

գահավորակը, որ վերցրել էր Տեր-Ներսեհ Հակոբի խոտորվելու պատճառով։ Սուրն Վասակ թագավորին էր փեսայացել Գագիկ թագավորը, թագուհի Կատրամիդեն էլ նրա դուստրն էր, որը և հայտնի էր սուրբ կաթողիկեի երկնաճեմ սրահակի շինությամբ։ Վասակը նաև արքունի ընծաներ էր ուղարկել նրանց ու գրությամբ հայտնել կաթողիկոսից խընդրելիքի մասին։ Դրա համար էլ Գագիկ թագավորն ու Կատրամիդե թագուհին թախանձելով կաթողիկոսին՝ Տեր-Հովհաննեսին մեծահանդես շքեղությամբ ձեռնադրել են տալիս Սյունյաց մետրոպոլիտ։ Կաթողիկոսը նրան է հանձնում Սյունյաց սեփական խաչը, ոսկերիզ խաչվառը, թանկարժեք գավազանը և պատվական գահավորակը, որոնք պահվել էին Հայրապետանոցի սրբարանի սենյակում։ Այդպիսով նորոգում են Սյունյաց առաքելական մեծ աթոռի աստիճանն ու պատիվը՝ առաջվա ձևով։

Եվ ապա [մետրոպոլիտին] իր աթոռն են ուղարկում մեծապատիվ ճոխությամբ ու երևելի փառքով՝ նրան հանձնելով բազմաթիվ պարգևներ թագավորից և թագուհուց. նաև փրկական փայտից մի մաս՝ ոսկու մեջ ամրացված, որ նրանց էր ուղարկել ինքը՝ ինքնակալ կայսր Վասիլ Միրանածինը[866]. այն ուներ Քրիստոսի արյան ներկվածքի հետք, որից ահռելի զորություններ ու մեծամեծ հրաշքներ էին երևան գալիս։

Եվ այդպես անկշռելի պարգևներով մետրոպոլիտը եկավ Սյունյաց սեփական աթոռը։ Նրան դիմավորեց Վասակ թագավորը, իշխանախոմբ բազմությամբ և մեծապատիվ շքեղությամբ ընդունեց։ Եվ նրանց մեջ ոչ քիչ խնդություն եղավ։ Իսկ սուրբ մետրոպոլիտը առատ քարողներով և քաղցր խոսքերով լուսավորում ու մխիթարում էր իր հավատացյալ հոտին։ Այնուհետև այս տունն սկսեց փարթամանալ, պայծառանալ՝ առաջվանից ավելի։ Հափշտակված ամբողջ կալվածքները վերադարձվեցին նրան։ Չէ՞ որ մաքենացիները Գեղարքունիքն էին հափշտակել, մի մարդ՝ Վայոց ձորը, այնտեղ նստելով եպիսկոպոս. մեկ ուրիշն էլ զավթել էր Երնջակ գավառը և Երնջակի վանքում նստել եպիսկոպոս, իսկ գողթնացիները գրավել էին Բստեձորը[867] Բուտան[868] ու Օրդվատը[869]։ Նմանապես իշխաններն էլ վանքապատկան գյուղեր

էին բաշխել իրենց ազատներին։ Տեր-Սարգիսը, որ շրջաբերական գրութիւններով ահեղ նզովքներով սահմանել էր՝ ոչ ոք չհանդգնի դրանք մերժել այս թեմին, այլ բոլորը վերադարձնել սեփական աթոռին, սուրբ նշանին ու Տեր-Հովհաննեսին, վերադարձրեց դրանք, իրեն ենթարկեց, մերժեց ու հալածեց օտար և գայլացած հովիվներին։ Բարեպաշտ Վասակ թագավորը, բուռն զորութեամբ դրան աջակցելով, վերադարձնում է հափշտակված հոգեբաժին նվերները՝ Ցողունի[870] գյուղն ու Գոդեվանը[871], նաև իր իշխանութեան ամբողջ վիճակը։ Իր ձեռքով էլ այս վիճակին վերաբերող այսպիսի թուղթ է գրում.

«Հանուն աստծու սա իմ՝ Վասակ թագավորիս հրամանն է, որը գրեցի չորս հարյուր վաթսունութ թվականին[872] ու տվեցի իմ աստծու փոխարինողին՝ Տեր-Հովհաննեսին, որին աստված դեռ մոր արգանդից ընտրեց մեծ Կարապետի նման և շնորհեց մեզ բարերար։ Եվ նա բոլորին այնքան լուսավորեց, որ մենք՝ նրա ողջ վիճակայիններս, բոլոր տեղերից, բախտավորվեցինք։ Ապա սուրբ Տաթև մայրաքաղաքին վերադարձրինք Ցողունի գյուղն ու Գոդեվանը, որոնք առաջ ետ էին վերցրել հայրապետանոցի խանգարման ու խափանման պատճառով, այժմ կրկին հաստատեցինք։ Դրանց հետ միասին և բոլոր գավառները՝ տասներկու գավազաններով վերադարձրինք ու կրկին հաստատեցինք Վայոց ձորը, Գեղարքունիքը, Փորակը, Հաբանդը, Ջուղան ու Երնջակը։ Այսուհետև մինչև հավիտյան ոչ ոք ամենակալ աստծուց և բոլոր սրբերից իրավունք չունի հակառակ կանգնելու այս աթոռին կամ հափշտակելու այս շեներն ու գավառները։ Իսկ եթե հանդգնեն, աստծուց և սուրբ հայրապետներից հոգով ու մարմնով նզովված լինեն։— Գրեցինք մեր արքունական հրամանով ու կնքեցինք մեր մատանիով, աստծու կամքով»։— Ես՝ Սմբատ իշխանս, վկա եմ իմ քեռու՝ աստվածապսակ թագավորի այս հրամաններին, որոնք ոչ ոք չի կարող խախտել։— Ես ևս՝ իշխանաց իշխան Աշոտի որդի Գրիգորս, վկա եմ իմ քեռու՝ աստվածապահ թագավորի այս հրամաններին։ Աստված շնորհավոր անի սուրբ աթոռին»։

Վասակ թագավորը դարձյալ նվիրում է Գրվակ[873] գյուղը և գրում այսպիսի վճռագիր.

«Աստծու կամքով ես՝ Սմբատ թագավորի որդի Վասակս, Գրվակ գյուղը, որ առաջ տերերը տվել էին սուրբ նշանին, վերստին հաստատեցի իր բոլոր սահման[ներ]ով Տաթևի վրա՝ Սյունյաց աստվածապատիվ եպիսկոպոս Տեր-Հովհաննեսի միջոցով՝ ազատ բոլոր չարերից ու հարկերից, նախնիների ու մեր հիշատակը կատարելու համար։ Եվ արդ՝ ով ջանա խափանել, ամենակալ աստծուց ու բոլոր սրբերից նզովված լինի և Կայենի բաժինն ստանա։ Իսկ եթե մահմեդական իշխան հաջորդի ու հափշտակել ջանա, աստծուց և իր փեղամբարից մերժվի և հազար-հազար նալլաթի արժանանա։ Ջորս հարյուր վաթսունհինգ թվականին[874]։ Հաստատ է աստծու կամքով»։

Իշխաններից ոմանք, այս ամենը տեսնելով, բարի նախանձով լցվեցին և Շոռոթ[875] գյուղը նվիրեցին Տաթևին՝ գրելով այսպիսի կտակագիր.

«Հանուն աստծու սա մեր՝ Սակուի որդիներիս, խարբի, Արտավազդի, Սուփանի վճռագիրն է, ըստ որի մենք կամեցանք որպես մեր հոր արյան գին Շոռոթ գյուղը նվիրել Տաթևի սուրբ կենտրոնին՝ Սյունյաց եպիսկոպոս Տեր-Հովհաննեսի միջոցով, մեր Վասակ թագավորի ժամանակներում։ Վանքիս բոլոր եկեղեցիները մեր հայր Սակուի հոգու համար մեզ հիշատակ սահմանեցին սուրբ Սարգսի օրը պատարագել։ Հայոց չորս հարյուր յոթանասունհինգ թվականին[876]։ Արդ՝ եթե մեկը այս նվիրատվությունը խախտել կամ խափանել ջանա, ամենակալ աստծուց մերժված լինի, սուրբ առաքյալներից, մարգարեներից, երեք հարյուր տասնութ սուրբ հայրապետներից ու բոլոր սրբերից նզովված և մեր մեղքերին պարտական լինի. ամե՛ն։— Եվ ես՝ Վասակ թագավորս, իմ ձեռքով հաստատեցի ու դրեցի իմ արքունական կնիքը։— Ես ևս՝ Հովհաննես եպիսկոպոսս, հաստատեցի իմ ստորագրությամբ ու կրնքեցի սովորական մատանիով։ Ոչ ոք թող չհամարձակվի խախտել այս վճիռը։ Իսկ եթե մահմեդական մեծավոր լինի ու հափշտակի, աստծուց ու իր փեղամբարից մերժված լինի, բոլոր սրբերից նզովված, հարյուր հազար նալլաթի [արժանի]»։

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԵՐ-ՍԱՐԳՍԻ[877] ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՅՈՒՆԻՔԻ ԱՄԲՈՂՋ ԹԵՄԻՆ

«Ամենակալ հայր աստծու շնորհիվ, նրա միածին որդու բարությամբ և ազատիչ սուրբ հոգու նախախնամությամբ սա իմ՝ աստծու նվաստ ծառա ամենայն հայոց կաթողիկոս Տեր-Սարգսիս հրամանի և օրհնության գիրն է, որ նորին ողորմածությամբ գրեցինք որպես շրջաբերական գրություն՝ ուղղված Սյունյաց նախապատիվ ու աստվածամեծար տանը, աստվածապսակ Վասակ թագավորին, աստվածապահ իշխաններ Սևադային[878] ու Աշոտին[879], բոլոր ազատ մարդկանց ու հասարակ ժողովրդականներին՝ ըստ սահմանված տասներկու գավազանների։ Նախ նրանց օրհնության ու պահպանության թող հասնեն սուրբ Գրիգորի աթոռից և աստվածաներկ ու աստվածագումար այլ սրբերից ու մեզանից։ Դրանցով դուք փրկված լինեք բոլոր տեսակի պատահարներից ու անպատեհ դիպվածներից։

Ի դիտություն ձեզ, մեր հոգևոր որդիներ, որ թեև մեզանից առաջ եղած Տեր-Թեոդորոս[880] և Տեր-Անանիա[881] կաթողիկոսների կողմից ինչ-որ պատճառով խախտված էր ձեր՝ Սյունյաց առաքելադիր աթոռը, և շեղված, բաժանված էր այդ գավազանի թեմը, բայց երբ եկավ աստծու ընտրյալ այս Հովհաննեսը[882], մենք նրան առաջին աթոռակալների նման ձեռնադրեցինք Սյունիքի մետրոպոլիտ ու վերստին հաստատեցինք տասներկու գավազանների նույն թեմը Սյունյաց տան նախապատիվ աթոռի՝ Տաթևի վրա, ձեր այս մետրոպոլիտ ընտրված աստվածաշնորհ, բազմերջանիկ սուրբ եպիսկոպոս Տեր-Հովհաննեսի միջոցով. դրան կրկին հանձնեցինք իրենց նախնական պատիվը՝ խաչը, գահավորակը [և գավազանը]։ Բայց սա չեղավ մեր իսկ պաշտոնական նախաձեռնությամբ, այլ ըստ մեզ մոտ բերված մնծափառ գրությունների և վճռագրերի՝ գրված հայոց նախնի հայրապետների ձեռքով, սկսած սուրբ Գրիգոր Լուսավորչից և իր որդիներից ու թոռներից։ Այդ գրությունները մինչև սուրբ Սահակը գրվել էին հունարեն գրերով՝ յուրաքանչյուրը մատա-

նիով գրոշմված և կապարե կնիքով կնքված, այնուհետև՝ հայերեն գրերով, մինչև Անանիան, նրանից հետո էլ [նույն ձևով] գրված մինչև մեզ, բացառությամբ Անանիայի, որ գրել էր Վահան եպիսկոպոսի համար, բայց ոչ մյուսների ձևով։ Ամբողջը հիսունհինգ շրջաբերական գրություն էր՝ յուրաքանչյուրը [համապատասխան] հայրապետի կնիքով[883], շարադրված երկար խոսքերով ու հրահոսան նզովքներով, որ ոչ ոք չհամարձակվի որևէ բան պակասեցնել սրանց սահմանված թեմից և կամ նվաստացնել ու սրանց պատվից ու աստիճանից զրկել։ Այդ պատճառով էլ մենք, վախենալով առաքելական հայրերի այդպիսի հրամանից ու պատկառելով Սյունյաց հնամենի աթոռից, վերադարձրինք նրանց թեմի բոլոր սահման[ներ]ը, վերստին հաստատեցինք նրանց պատիվը՝ խաչը, գահավորակը և գավազանը։ Սրանք են նրանց ենթակա հոտի գավառների սահմանները՝ Սյունիք, Բաղք, Արևիք, Օրդվատ, Արգուիք[884], Վանանդ[885], Երնջակ, Նախիջևան[886], Ջուղա՝ որքան երասխ գետն է կտրում, Ճահուկ, Վայոց ձոր, Խաչերխոռով[887], Գեղարքունիք՝ Կողբակով[888], Երիշատ[889], Ջաղացաձոր[890], Փորակն[891] էլ ամբողջովին, որի վրա շատ հակառակություններ էին եղել, բայց հայոց կաթողիկոսները մեծամեծ նզովքներով ամրապնդել էին»։

Առանձնացվում է նաև Աղվանքի սահմանը՝ Ռմբաձորը, Շար գավառը[892], Աղահեճը[893], որը հատում է Աղվանո գետը[894]՝ մինչև Քարավազի կամուրջը, և Հաբանդ գավառը, մինչև Երնջակի սահմանի Բստիձորը՝ գրավված գողթնեցիների կողմից, նաև Վանանդն ու Գողթնը ամբողջովին, որոնք թեպետ և եպիսկոպոս ունեին, և սահմանափակ տեղերի համար էլ դեռ կար, բայց ենթարկվում էր Սյունիքին։

«Եվ արդ՝ դուք, Սիսական գավառներդ, ամենայն մտերմությամբ հնազանդ եղեք Սյունյաց աթոռին և ընդունեցե՛ք մեր կողմից ուղարկված ձեր եպիսկոպոս Տեր-Հովհաննեսին՝ որպես աստծու պատվիրակի ու առաքելական մարդու, և ամենայն հպատակությամբ ծառայեցե՛ք դրան, ինչպես աստծուն։ Իսկ եթե որևէ մեկը կամենա հակառակվել այդ աթոռին և կամ խանգարման պատճառ դառնա եկեղեցու՝ հայրապետի կողմից սահմանված պատվին, վիճակին ու սեփա-

կանություններին, ժառանգի անբաւ հրահոսան անեծքներ, որոնք դրվել են առաջին սուրբ հայրապետների և կրկնապատիկ դարձվել մեր իսկ կողմից։ Իսկ այս հրամանը կատարողները կօրհնվեն ամենակալ աստծուց, սուրբ հայրապետներից, մեզանից ու սուրբ Գրիգորի աթոռից։ Ահա այսպես մեր այս հրամանագիրը գրվեց մեր ձեռքով հայոց չորս հարյուր հիսունհինգ թվականին[895]։ Ավելի հաստատուն լինելու նպատակով կնքեցինք մեր սեփական մատանիով, ի փառս աստծու, որն օրհնյալ է հավիտենապես. ամե՛ն»։

ՍԸ

ԻՄԱՅԵԼԱՑԻՆԵՐԻ ԳԱԼԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԿՈՐՄԱՆԵԼԸ, ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔՆ ԱՅՐԵԼԸ. ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՈՒ ՎԱՆՔԻ ՎԵՐԱՇԻՆՈՒՄԸ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԿՈՂՄԻՑ

Այս բազմերջանիկ եպիսկոպոսը եպիսկոպոսարանը՝ Սյունյաց Տաթև մեծ նախաթոռ տունը, զարդարեց զանազան զարդերով, մեծամեծ պարագաներով և աստվածային գեղեցիկ կարգերով ու լցրեց բազմաթիվ կրոնավորներով, անհաղթ փիլիսոփաներով, աննման երաժիշտներով, բանիբուն վարդապետներով, աստվածակիր ճգնավորներով, այլև շատ ու շատ արհեստավորներով։ Եվ այնուհետև այդ տունը կարելի էր տեսնել որպես բազմամարդ կենտրոնատեղի։ Իսկ քանի որ կառուցված էին բազմաթիվ շինություններ ու հավաքված հազարավոր մարդիկ, ուստի նրանց մշտաջան աղոթքը բարձրացած էր աստծու առջև և կանգնած էր երկրից մինչև երկինք իբրև հրեղեն սյուն։ Այդ աղոթողների աղոթքներից մեր Սիսական աշխարհը հիսուն տարի խաղաղվել էր թշնամիների ավազակային բոլոր հարձակումներից. վերուստ անվնաս էր մնում ամեն տեսակի պատիժներից, պատահարներից ու անտեղի դիպվածներից։

Ապա չար սատանան նախանձելով սրան չկարողացավ հանդուրժել և մտավ իսմայելական զորագլուխների սիրտը, որոնք գտնվում էին Մովկանում, Թալիշում, Ահրում, Արտա-

վիլում և Ատրպատականում, գրգռեց ու բորբոքեց տանս երեվելի համբավի պատճառով։ Նրանք էլ միմյանց իմաց տալով հավաքվեցին, համախմբվեցին մեծաթիվ զորքերով, որոշեցին գաղտագողի հարձակվել վանքի վրա, կողոպտել նրա անհամար կարասիները, այսինքն՝ եկեղեցու սրբությունների պարագաներն ու կահավորանքները։ Եվ վեր կացան, անցան երասխը, անաղմուկ եկան ու անսպասելիորեն հարձակվեցին սուրբ ուխտի վրա և սաստիկ կրակի նման թափվեցին վանքի մեջ։ [Վանականներից] ոմքեր կարողացան, ցած թափվեցին փոսը, ազատվեցին-փախան։ Բայց Տեր-Հովհաննեսն այնտեղ չէր գտնվում։ Իսկ մյուս բոլորին սրի ճարակ դարձրին և եկեղեցին, որ սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով էր, փայտով լցրին ու կրակ տալով հրդեհեցին գեղեցկակերտ այդ շենքը, քանդեցին ու կործանեցին։ Ուզեցին նաև կործանել Տեր-Հովհաննեսի սքանչելի սյունը, որը կանգնեցրել էր եկեղեցու նորոգումից երկու տարի առաջ։ Սակայն ինչ-որ հրաշք տեսնելով՝ չհամարձակվեցին մոտենալ նրան, նույնպես էլ՝ մեծ եկեղեցուն։ Բայց վանքի մյուս բոլոր շինությունները այրեցին, քանդելով հիմնահատակ կործանեցին արհեստանոցները, մարմնական սեղանատունը, կրոնավորների ու մյուս բնակիչների բոլոր կացարանները։ Իսկ ինչ որ էլ գտան, ավար վերցրին ու գնացին այնտեղ, որտեղից եկել էին։

Ապա եպիսկոպոսը, այդ մասին իմանալով, եկավ այնտեղ ու տեսավ այնքան մեծամեծ վնասները և սաստիկ աղետները, անտանելի սգով, ողբով դառնագին լաց ու կոծ արեց՝ առավելապես եկեղեցու կործանման պատճառով, ու անմխիթար տրտմությամբ շվարած էր։ Կարգադրեց սպանվածներին խնկարկել ու պատվել մարտիրոսական օրենքով, հանգստի փոխադրել։ Հավաքվեցին ու այնտեղ եկան նաև մեր Սիսական աշխարհի բոլոր ազատներն ու գավառակալները, տեր Սմբատն ու տեր Գրիգորը և բազում մխիթարանքներով ստիպեցին ու հորդորեցին եպիսկոպոսին վերստին շինել տունը՝ [խոստանալով, որ] իրենք ևս կօժանդակեն բոլոր պիտույքներով։ Եվ այնուհետև երանելի եպիսկոպոսը, բստ իր խոհեմության ու իմաստության, գոտեպնդվելով որպես [քաջ] տղամարդ՝ սկսում է [վերա]շինել կործանված

սուրբ Գրիգոր տաճարը, որն առաջ կառուցել էր Փիլիպե իշխանը, և այն կանգնեցնում է գեղեցկակերտ կառուցվածքով։ Այնտեղ է դնում հոգևոր գանձը, գոյակների մեջ անհամեմատելին՝ սուրբ Լուսավորչի պատվական ու երջանիկ նըշխարը՝ գլխի մի կողմը և մյուս բազուկը, ամփոփելով աջակողմյան մեծ կամարի սյան գլխին՝ մարդկանցից աննկատ, որը հետագայում նույն տեղում գտնվեց մեր նվաստությյան կողմից՝ նույն կապարե կնիքով։

Սա կանգնեցնում է նաև կամար վանքի մեծ դռան վրա, որն ուղղված էր դեպի արևմուտք, նրա վրա էլ՝ երկու խորան՝ սուրբ կարապետի անունով, հղկված ու արվեստով համակցված քարերով։ Շինում է նաև այլազգիների կողմից այրված ու քանդված բոլոր ընդհանուր տները և կրոնավորների խցերը՝ առաջվանից շատ ավելի վայելուչ։ Մեծ եկեղեցու հարավային բակում հետո սրբաքարով շինում է գավիթներ ու հարմարավետ սրահներ՝ վանականների հանգստի համար և հավաքելով ցրված բոլոր միաբաններին՝ առաջվանից ավելի պայծառացնում։ Շինում է նաև մի խորան եկեղեցու փոքր դռան մոտ, որտեղով մտնում են եկեղեցու գավիթը։ Դլեն[896] անունով մի իշխան՝ Խաղբակի որդին, իր հայրենի տիրություններից իր հոգու համար Տեր-Հովհաննեսին ու սուրբ նշանին է նվիրում Խոտագետի մեծ այգին և Վժանիքի[898] Ծաղկիկը, որը բաղում ցանքերի տեղ է։ Գրում է իր համար վճռագիր-կտակ և խնդրում տարեկան հինգ օր պատարագ Նղիական շաբաթապասին, չարաչար ու մեծամեծ նզովքներով էլ եզրափակում է, որ սուրբ եկեղեցուց այդ հոգեբաժին նվիրատվությունը ոչ ոք չհափշտակի։ Եվ Տեր-Հովհաննեսի վավերական կնիքը դնում է վրան։— Եվ այսպես ոչ ոք չհամարձակվի սրան հակառակվել կամ էլ նրա հիշատակը խափանել, եթե ոչ՝ նզովքներ ստանա աստծուց ու սուրբ հայրապետներից։ Հայոց չորս հարյուր իննսունհինգ թվականին[899]։

Այլև՝ երջանիկ եպիսկոպոս Տեր-Հովհաննեսը ամբողջովին ոսկուց պատրաստում է բոլորից զարմանալի, ահազդու և մեծագնաչ սուրբ նշանը՝ գերահրաշ ու աստվածատոգոր սուրբ խաչը, որն արեգակի նման լույս էր սփռում մեր Սիսական

աշխարհում ու իր հրաշագործություններով հիացնում բոլոր մարդկանց։ Խորհրդավոր հորինվածքներով այն զարդարում է, վրան ամրացնում է թվով քսանչորս թանկարժեք քար՝ մարգարիտների գեղեցիկ շարքի նման միակցված, մեջը դնում է արարածներին կյանք տվող փրկական աստվածընկալ սուրբ փայտը, որին բևեռներով գամվել էր բանն աստվածացած, և որի վրա կար Հիսուս Քրիստոսի արյան՝ տեսնողներին հայտնի կաթվածքը. նրանից բխում էին ահռելի զորություններ ու հրաշքներ։ Այս փայտը ձևված էր խաչի նշանով ու գտնվում էր մեջտեղի այն ակնաքարի տակ, որն սպիտակափայլ, բյուրեղանման հակինթից էր, ու իր տակից էլ թափանցումով երևում էր սուրբ նշանը։ Հակառակ կողմում փորագրել է տալիս այսպիսի հիշատակագրություն.

«Այս սուրբ նշանը Սյունյաց եպիսկոպոս Տեր-Հովհաննեսինն է։ Ջորս հարյուր յոթանասունվեց[900] թվականին սա պատրաստել ու կանգնեցրել է Սիսական տանը՝ հավատացյալների հույսի ու բոլոր վիճակյալներիս փրկության համար»։

Այսպիսի հանդիսավոր բաներով ու երևելի գործերով ծաղկեցնելով այն տունը՝ բազմերջանիկ, բազմերանելի այս եպիսկոպոս Տեր-Հովհաննեսը իր հիսնամյա մետրոպոլիտությունից հետո հինգ հարյուր յոթ թվականին[901] գնում է կանչողի ետևից անդրանիկների քաղաքը՝ Վերին Երուսաղեմ, որտեղ ժողովված են սրբերը և քաղաքապետն է Քրիստոսը, ստանալու իր մեծ վաստակների և ջանքերի հաղարապատիկ ու բյուրապատիկ վարձը։ Եվ դուք՝ աստվածաստեղծյալ հայրապետներ ու սրբազան վանականներ, որ պիտի հաջորդեք այս սուրբ աթոռում և լինեք այս տան ժառանգորդներ, անմոռաց ու անխափան կերպով պիտի կատարեք այս բազմերախտ սուրբ հոր հիշատակը՝ մշտական աղոթքներով ու կենդանարար արարողությամբ։ Եվ սրա ու մյուս բոլոր հայրապետների աղոթքներով և խնդրանքներով դուք ու մենք միասին փրկված կլինենք մարմնական և հոգեկան բոլոր վտանգավոր կրքերից։ Այսպիսով անխախտելի կմնան այս սուրբ տունն ու իր բոլոր վիճակայիններն։ Դրա համար «ամեն» կասեն սրբերն ու աստծու սիրելիները։

Այսպես. մեր Սիսական աշխարհում առաջինը թագավորեց քաջարի, հզոր և բարեպաշտ արքա Սմբատը[902]՝ Սմբատի եղբայր Սահակի որդին։ Վերջիններս Իշխանիկ կոչված մեծ Վասակի[903] եղբայր բարեպաշտ Աշոտի որդիներն էին։ Իսկ Վասակ-Իշխանիկն ու Աշոտը երանելի Փիլիպեի[904] որդիներն էին։ Փիլիպեն էլ եղբայրն էր Սահակի, որն սպանվեց Դվինում Հոլ ամիրայի դեմ մղված պատերազմում[905]; իսկ այս Փիլիպե ու Սահակ եղբայրները Սյունյաց մեծ նահապետ Վասակի որդիներն էին։

Սմբատից հետո թագավորում է նրա որդի Վասակը[906]՝ հաճելի, աստվածասեր և բոլոր գործերի մեջ հաջողակ մի մարդ, որը քրոջը կնության էր տվել Աշոտին[907]՝ նույն Սիսական տոհմից։ Վերջինս այս ամբողջ թագավորության իշխանաց իշխանն էր. ուներ երկու որդի՝ Սմբատ և Գրիգոր։ Ապա վախճանվում է Վասակ թագավորը և թաղվում իր հայր Սմբատի կողքին։ Իսկ քանի որ նա իր իշխանության համար ժառանգ չուներ, ուստի թագավոր են դարձնում Աշոտի որդի Սմբատին[908]. հոր փոխարեն էլ սրա Գրիգոր եղբորը կարգում են մեր Սիսական աշխարհի իշխանաց իշխան։ Այս Սմբատը, որ առավել հաճելի էր ու հեզահամբույր, սակայն ահարկու՝ շրջակա բոլոր ժողովուրդների համար, որոշ տարիներ թագավորելով, վախճանվում ու թաղվում է Հովհաննու վանքում[909], տաճարի դռանը։ Թագավորությունն ստանձնում է նրա եղբայր Գրիգորը[910], Սրանք երկուսով մեծ Աշոտի որդիներն էին, որտեղից էլ կոչվում են Ավագ Աշոտյանք։

Գրիգորը իրեն կին էր վերցրել ամենաօրհնյալ, խորհրդավոր բարեպաշտուհի Շահանդուխտին՝ Աղվանից տնից, նրանց թագավորաղն մեծ իշխան Սևադայի դստերը։ Նրանք անզավակ էին, և թագավորությունը մնալու էր առանց ժառանգորդի։ Ապա իշխանների հետ խորհուրդ անելով՝ Աղվանքից բերում են նույն Շահանդուխտի եղբայր, թագավորաղն մանուկ Սենեքերիմին՝ խիստ գեղեցիկ տեսքով, առողջ կազմվածքով, իմաստուն ու հանճարեղ, այլև՝ աստծուց երկյուղած։ Սրան դարձնում են իրենց թագավորության ժառանգորդ։ Որոշ տարիներ մնալով՝ մեռնում է նաև [Գրիգոր] թագավորը։

Այն ժամանակ բարձրացել ու զորացել էր տաճիկների[911] իշխանությունը, և ամբողջ աշխարհը ենթարկված ու հարկատու էր նրանց։ Այդ պատճառով էլ մեր Սիսական աշխարհի շատ գավառներ խլեցին իրենց բնիկ տերերի ձեռքից։ Սուլթանության աթոռին նստած էր Մելիքշահը[912]՝ բարի վարքով ու խաղաղասեր մի մարդ, որից թագավորական պատվով մեծարվում էր Սենեքերիմը, որը և երևելի փառքով թագավորեց[913] Բաղաց տանը, ընդարձակեց իր տերության սահմանները. իր թագավորությունը հաճելի ու խաղաղ կյանքով վարեց բազում տարիներ, մինչև Մելիք սուլթանի մահը, որը տեղի ունեցավ հինգ հարյուր քառասունմեկ թվականին[914]։ Այնուհետև սկսեց խախտվել խաղաղությունը և խափանվել աշխարհիս ողջ նորոգությունը, որի մասին իր տեղում կպատմեմ։

Սենեքերիմը երեք որդի ուներ՝ Գրիգորը, Սմբատը, Սևադան և մի դուստր։ Նրա մահն էլ այսպիսի պատճառով եղավ։— Մելիքշահից հետո յուրաքանչյուր ոք, գլուխը վեր պահած, ինքնիշխան դարձավ. և մեկը մյուսի դեմ ելնելով՝ ով որ կարողանում էր, ավերում էր երկիրը, թալանում ու հափշտակում։ Այդ պատճառով անհծյալ իսմայելականները, որ նախանձով էին լցված Բաղքիս գեղեցիկ ու ամուր թագավորության նկատմամբ՝ այն իրենց համար մեծ խոչընդոտ համարելով, [նույնպես գլուխ բարձրացրին]. ու Պարտավի[915], Առանի[916] ու Գանձակի[917] ամիրան բազմամարդ զորքերով ելավ-եկավ պատերազմելու Սենեքերիմի դեմ։ Նրա հետ էր Շիրակի իշխան Գրիգորը՝ Ապիրատի որդին։ Սենեքերիմն այդ իմանալով՝ նահանգի ամբողջ բնակչությունն ամբացրեց անառիկ ամրոցներում։ Եվ ապա անհծյալ ամիրան, գալով ու տեսնելով, որ անհնարին է մարդկանց [ուժով հաղթահարելը], անեցի իշխան Գրիգորին, որն ինչ-որ պատճառով իր մոտ էր գտնվում, ուղարկեց Սենեքերիմ արքայի մոտ՝ ասելով. «Երդմամբ համոզի՛ր նրան, որ գա ինձ մոտ, միմյանց հետ բարեկամանանք, և իրեն մեծամեծ պարգևներով եւս կուղարկեմ, իսկ եթե չհամաձայնեցնես, այդ դեպ-

քում գլուխդ կկտրեմ»։ Ապա Գրիգորն ընթացավ այն չար ճանապարհով. մտնելով Սենեքերիմի մոտ մեծամեծ երդումներով համաձայնեցրեց նրան՝ գալու ամիրայի մոտ։ Եվ նրանք միասին եկան։ Ջարաթույն գաղանը՝ Սենեքերիմին տեսնելով, իր պայմանը դրժեց, մոլուցքով հարձակվելով թագավորի վրա՝ սպանեց նրան, իսկ ինքն անցավ-գնաց իր աշխարհը։ Ահա այսպես մարեց քրիստոնյաների ճրագը, որ մրնացել էր Բաղքի ամուր տեղում։ Եվ եկան մեծամեծներն ու [սպանվածի] որդիները, մեծ լաց ու կոծ արեցին նրա վրա և վերցրին-տարան Վահանի սուրբ վանքը, այնտեղ գերեզման դրեցին ուրիշ թագավորների շիրիմների մոտ։ Նրանից հետո նրա իշխանությունն ստանձնեց իր որդի Գրիգորը[918] թագավորելով քիչ և թույլ։ Բայց այս Սենեքերիմն ու իր քույր Շահանդուխտը բազում արդյունավետ գործեր կատարեցին, երևելի շինարարություններ արեցին Հովհաննու վանքում, նաև բազմաթիվ պարգևներ ու տիրույթներ ընծայեցին Տաթևի սուրբ կենտրոնական աթոռին, որոնց մասին կշարադրեմ այստեղ։

Կ

ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԵՍԻՆ ՀԱՋՈՐԴԱԾ ՍՅՈՒՆՅԱՑ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ[919] ՈՒ ԻՐ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

Երբ Սյունյաց երանելի մետրոպոլիտ Տեր-Հովհաննեսն իր կյանքն ավարտեց, այնուհետև Սյունյաց աստվածապսակ թագավոր Սմբատը[920] ընտրեց մի արժանավոր մարդու՝ բոլորի կողմից ճանաչված, բոլոր տեսակի առաքինություն[ներ]ով զարդարված, գիտությամբ լի՝ Գրիգոր անունով, ուղարկեց Անի, հայոց կաթողիկոսի մոտ ու նրան ձեռնադրել տվեց Սյունյաց եպիսկոպոս։ Նա եկավ, մեծ ջանադրությամբ, մեծավայելուչ առաքինությամբ կառավարեց, իր անձով բոլորին բարության օրինակ ծառայեց՝ մնալով երկար ժամանակ՝ հիսունութ տարի։ Նա զարմանալի շինարարություններ կատարեց Տաթևի եպիսկոպոսարանում. կամարներ կանգնեցրեց վանքի՝ դեպի արևելք նայող դռան վրա, նրա մոտ՝

սրբաշեն տուն, սրանց վրա ավելացրեց մի գեղեցկաշեն գմբեթաձևարկ եկեղեցի՝ Աստվածածնին սրբուհու անունով։ Այն նման էր բարձր դիտանոցի և նայում էր վանքի վրայից։ Չորս կողմերում գավիթներ կառուցեց, իսկ առջևի կողմում բարձրաբերձ սյուներով վայելուչ սրահներ շինեց՝ որպես հաճելի հովանոց։ Եկեղեցու վրա հիշատակի արձանագրություն գրեց և սահմանեց տարեկան մեկ քառասունք կատարել անխափան կերպով՝ ի հիշատակ իրեն։

Այս Գրիգոր եպիսկոպոսը Խաղբակի որդի Դենից[921] գնեց Նորիքի բաժին Բոլորաքարը[922] ու նզովքներով հաստատեց սուրբ եկեղեցու վրա։ Սրա միջոցով երանելի և սուրբ թագուհի Շահանդուխտն ու իր եղբայր բարեպաշտ Իշխավոր Սենեքերիմը նվիրեցին Արիտը[923], որը Տաթևի սուրբ և մեծ աթոռին մոտ ու նրան սահմանակից ավան է։ Եվ ինքն իսկ՝ թագավորը, իր ձեռքով գրեց վճռագիր՝ ահեղ ու սոսկալի նզովքներով, որն այսպիսին էր.

«Հզոր ու կարող Հիսուսի կամքով ես՝ հայոց թագավոր Սենեքերիմս, պաշտոնավարելով Սիսական և Բաղաց աշխարհում, կարգալով առաջին հայրապետների ու իշխանների հաստատագիծ հրամանագիրքը[924], կամեցա վերստին նորոգել ու վերադարձնել։ Եվ գրեցի այս վճռագիրը իմ սրտի հոժարությամբ ու առաջարկությամբ իմ բարեպաշտ և քրիստոսասիրակիր քույրերի՝ թագուհի Շահանդուխտի ու սրբասուն օրիորդ Կատայի, որոնք թողեցին աշխարհիս երկրային փառքը և ընթացան Քրիստոսի երանավետ ձայնի հետքով՝ ճգնակյաց առաքինությամբ։ Սրիտը իր շրջակա բոլոր սահմաններով՝ հողով ու ջրով, ցանքերով և իրեն պատկանող ամեն ինչով, հանձնեցի Տաթևի հայրապետանիստ կենտրոնի սուրբ եկեղեցիներին, սուրբ Առաքելոցին ու սուրբ Գրիգորին[925], Սյունյաց եպիսկոպոս Տեր-Գրիգորի հայրապետության և իրենց որդիացած Տեր-Ստեփանոսի ժամանակ։ Տվեցի առանց հաշվի, առանց վեճի, առանց մեկին զրկելու կամ մեկի ունեցվածքը հափշտակելու, առանց որևէ մեկին անբավարարություն պատճառելու։ Չէ՞ որ մեր սեփականն էր այդ ուրիշ մեկինը, որ նվիրեցի Տաթևի սուրբ վանքին՝ հոգուս փրկության, իմ և հարազատ քույրերիս մեղքերի քավության, իմ որդիներ Գրիգորի, Սմբատի ու Սևադայի, իրենց

մոր ու քրոջ կյանքի և փրկության համար։ Սահմանեցի նաև մեկ քառասունք, որ ամեն տարի կատարեն այս սուրբ եկեղեցիներում՝ տերունի քառասունքին, քսան օրն Աշոտի որդի Գրիգոր թագավորի, քսան օրն էլ իմ մայր Սոփիայի համար՝ որքան մենք կենդանի ենք, իսկ մեր մահից հետո՝ քսան օրն իմ Շահանդուխտ քրոջ համար կատարեն, քսան օրը՝ ինձ՝ Սենեքերիմիս համար։ Արդ՝ եթե մեկը դեմ դուրս գա կամ մտածի խանգարել կա՛մ հանդգնի հափշտակել, կա՛մ մեկին մատնի, կա՛մ բանսարկությամբ միտք դնի շորթել մեր արդյունքն այս սուրբ եկեղեցիներից, այնպիսին աստծուց ողորմության չարժանանա՝ ո՛չ այս աշխարհում, ո՛չ էլ հանդերձյալ կյանքում, այլ նրա վրա գան հափշտակողների արժանի անեծքը, մեղապարտների մեղքը, չարագործների նզովքը, ինչպես Կայենինը, Հուդայինը, Արիոսինը, հոգեմարտ Մակեդոնինը, երկաբնակ Նեստորինը, Լևոն Հռոմայեցունը և նրանց նման ուրիշներինը։ Հաստատողներն օրհնված լինեն ամենակալ աստծուց ու բոլոր սրբերից։ Գրվեց իմ՝ Սևադայի որդի Սենեքերիմիս ձեռքով, աստծու կամքով»։ «Ես՝ Շահանդուխտս, վկա եմ իմ եղբայր Սենեքերիմի այս իրապես կատարածին ու վճռին՝ արված Տաթևի սուրբ Առաքելոցին [ու սուրբ Գրիգորին]։ Աստված շնորհավոր անի սուրբ եկեղեցիներին։ Ով մտածի խանգարել, գրված անեծքը ժառանգի, իսկ հաստատողները օրհնված լինեն»։ «Ես՝ Սենեքերիմի որդի Գրիգորս, ու իմ եղբայրները վկա ենք այս անսուտ և հաստատուն նվիրատվությանը ու այս հրամաններին. հինգ հարյուր երեսունչորս թվականին[926], կամքով ու ողորմությամբ հայր աստծու և նրա օծյալ Հիսուսի, բարձրյալ բանի և կենդանարար սուրբ հոգու»։ «Ես՝ Գրիգորս, Քրիստոսի ամենանվաստ ծառաս և նրա ողորմությամբ Սյունյաց եպիսկոպոսս ու ինձ որդիացած Ստեփանոսը աստծուց օծված և պսակված թագավոր Սենեքերիմից ընդունեցինք այս ընծաներն ու հոգեբաժինը, որն արեցին անխախտելի և հաստատուն որոշմամբ Տաթևի կենտրոնատեղում՝ սուրբ Գրիգոր եկեղեցուն ու կենսաբեր սուրբ նշանին՝ որպես իրենց արյան գին, Շղուկ գավառի Արիտ ավանը։ Եվ իրենց համար հիշատակ սահմանեցին, որ կատարեն այդ սուրբ եկեղեցիներում ամեն տարի, անխափան կերպով՝ ըստ իրենց այդ գրածի, իրենց կենդանության ժամանակ ու իրենց մահից հետո։ Եվ արդ՝ թե՛ մենք և թե՛ մեզանից հետո այս սուրբ աթոռին անցած հայրապետները կամ էլ այս տան ուրիշ առաջնորդ վանականները՝ ավագ քահանա[ներ]ը և եկեղեցական այլ աստիճանավորները, եթե ծուլանանք սահմանված քառասունքը կատարելուց ու ինչ-որ պատճառով մեկ օրով պակաս կատարենք, կամ թե, առավել ևս, խափանենք, անիծված լինենք Քրիստոս աստծուց, և մեր անունները ջնջվեն կյանքի մատյանից, մեր հիշատակը չկատարվի Քրիստոսի սուրբ զոհասեղանի առաջ, աններում մըննանք անհաշտ դատաստանի արդար դատավորից։ Եվ ով որ աստծու պսակադրած թագավորի այս արածը և հոգեբաժին նվերը ջանա խափանել ու հափշտակել սուրբ Առաքելոցից և սուրբ նշանից, լինի մեծամեծներից, փոքրերից, ավագներից, ազատներից, օտարներից թե ծանոթներից, ինչ պատճառով էլ դեմ դուրս գա, խափանման կամ հափշտակման պատճառ դառնա, կա՛մ որևէ բան հափշտակի, անիծվի այն բերանով, որով օձն անիծվեց. նրա վրա ցավագին անեծքներ գան, օրհնություններն էլ անեծք դառնան. երրորդության սիրողների երկնային ու երկրային բոլոր դասերից անիծված լինի նրա հոգին, իր կյանքն ու ժառանգությունը չվայելի, արդի կյանքը ցավագնորեն ավարտի, և իր վախճանի ժամանակ հողը չբավականացնի նրան։ Իսկ հաստատողները օրհնվեն աստծուց ու իր բոլոր սրբերից»։

Բարեպաշտ մեծ իշխան Հասանը՝ Սենեքերիմի ազատներից մեկի՝ Գրիգորի որդին, այս տեսնելով՝ ինքն էլ այս սուրբ եկեղեցիներին նվիրում է Կովսական գավառի Նորաշինիկ[927] գյուղն ու Ձեռատիվանքը[928], որոնք և առաջ ժամանակով կալվածք էին տրվել Տաթևի սուրբ եկեղեցուն։ Նորաշինիկը տվել էր Հրահատ իշխանը[929] Տեր-Դավթի միջոցով, իսկ Ձեռատիվանքը հանձնել էին Հակոբի մետրոպոլիտության ժամանակ։ Ուստի և սա վերադարձնում է Տեր-Գրիգորի միջոցով։ Եվ թագավորի ներկայությամբ գրում է հաստատուն որոշման այսպիսի կտակագիր.

«Հանուն աստծու սա իմ՝ Գրիգորի որդի Հասանիս գրածն է։ Այսօր, որ աստված ինձ հաջողություն տվեց, իմ բերդը Մշտաքաթենից վերցրի ու իմ արյամբ Փատլուն ամիրայից[930] Կովսական գավառն ազատեցի, Նորաշինիկն ու Ձեռա-

տիվանքը Տաթևի սուրբ Նշանին վերադարձրի՝ իմ Սենեքերիմ թագավորի հրամանով, Սյունյաց եպիսկոպոս, աստվածապատիվ հոգևոր տեր Գրիգորի ժամանակներում և ողջ ազատների ներկայությամբ ու բոլորի վկայությամբ հանձնեցի սրանց՝ ազատ արքունի հարկերից։ Հետագայում այս գյուղերի վերաբերությամբ ոչ ոք որևէ չափով հաշիվ չունի։ Եվ ոչ ոք չհամարձակվի սրան հակառակ կանգնել կամ ոսոխ դառնալ այսուհետև և մինչև հավիտյան՝ լինի մերոնցից, օտարներից, ազատներից կամ իշխանավոր պաշտոնյաներից։ Իսկ եթե հանդգնի, նրա վրա անեծքներ, հայհոյանքներ, բոլոր չարագործներին արժանի մեղքեր ու հերձվածներ գան, նա իր կյանքը չվայելի և սուրբ երրորդությունից մերժված լինի։ Իսկ հաստատողներն օրհնված լինեն։ Եթե մահմեդականն պաշտոնյա փոխարինի ու մտածի հափշտակել, իր հավատքից մերժվի, իր փեղամբարից զրկված և անարգված լինի, հազար նալլաթ նրա վրա մնա»։— «Ես՝ Սենեքերիմ թագավորս, իմ ձեռքով հաստատեցի այս որոշումը Հասանի, որը այս գյուղերը[931] իր արյամբ ազատել էր տաճիկներից, իմ հրամանով նորից հանձնեց Տաթևին։ Եվ ես իմ որդիներով և ազատներով վկա եմ, որ այս եկեղեցիները որքան հաստատուն մնան, ոչ ոք չհամարձակվի ու հանդգնի այս նվիրատվությունը հափշտակելու փորձ անել։ Սրա հետ ես էլ տվեցի խաչատատափը[932]։ Արդ՝ եթե որևէ մեկը հափշտակի, վերոգրված անեծքը ժառանգի։— «Եվ ես՝ Ռահիբս, վկա եմ այս գործարքին, որին ոչ ոք չհամարձակվի հակառակ կանգնել։ Հայոց հինգ հարյուր երեսունհինգ թվականին»[933]։

Սրանից հետո թագավորը դարձյալ գալիս է սուրբ վանքը, հոգևոր տեր Գրիգորի մոտ՝ տեսության ու աղոթքի։ [Այդ ժամանակ] Հարժիք գյուղը[934], Բերդականերեչին[935] և Ցուրա գետը[936] հափշտակված էին սուրբ եկեղեցուց և Սենեքերիմի ազատների՝ մեծ իշխան Մահևանի ու մյուս ազատ Գեորգի իրավունքին էին։ Այդ պատճառով եպիսկոպոսը թագավորին ծանոթացնում է եկեղեցու զրկվածքների մասին. նրա առաջ է գնում առաջին թագավորների կողմից անխախտ պայմանով տրված հրամանագրերի ժողովածուն։ Թագավորը դա կարդալով զարհուրեց սոսկալի նզովքներից։ Չէ՞ որ այս գյուղերը երեք անգամ հաստատված էին սուրբ աթոռի վրա.

առաջին անգամ՝ Հայոց Սմբատ թագավորի և Սյունյաց մեծ իշխան Աշոտի կողմից, երբ Բերդաներիչին փողով գնել էր Տեր-Դավիթը[937], երկրորդ անգամ՝ Սահակի որդի, Սյունյաց Սմբատ թագավորի կողմից՝ Տեր-Վահան Բաղացու և նրա Վասակ որդու միջոցով[938]. երրորդ անգամ էլ [այսպես էր եղել]. Սյունյաց գահերեց իշխան մեծ Սմբատի որդի՝ Հայաստանում և Վրաստանում իշխած իշխանաց իշխան Վասակի ազատներից Կորա Քրդի որդի ոմն իշխան Հասանը գնել էր Հարժիք գյուղն ու տվել իր հայրենի սեփականության տեղ։ Նա մեծ Վասակի և նրա որդիներ Սմբատի ու Գագիկի հրամանով այս գյուղը նվիրում է Տաթևի վանքին՝ ազատ բոլոր տեսակի հարկերից։ Եվ գրում են կտակագիր մեծամեծ պայմանավորվածություններով ու նրա [հիշատակի] համար հաստատում մի քառասունք՝ ամեն տարի [կատարելու] հայտնության տոնին։

Ահա այս ամենի մասին կարդալով ու իմանալով՝ բարեպաշտ թագավոր Սենեքերիմը հավատքի երկյուղով հրամայում է իր իշխաններին դրանք վերադարձնել։ Եվ ինքն ու իր իշխանները գրում են կտակագիր՝ հավիտենապես անխախտ պայմանով. այսպես.

«Ես իմ՝ Սևադայի որդի Սենեքերիմ թագավորիս ձեռքով գրածն է։ Երբ աստված, անհիշաչար լինելով իմ նկատմամբ, ողորմելով ինձ՝ կրկին ինձ վրա հաստատեց իսմայելականների ձեռքով խախտված իմ տերության իշխանությունը, կարդացի առաջինների գրածները Սյունյաց երկնահրաշ աթոռի և այս սուրբ եկեղեցի[ներ]ի հափշտակված տիրույթները վերադարձրի Տաթևի կենտրոնին և իմ ձեռքով կրկին սրա համար անխախտ սեփականություն հաստատեցի Հարժիքը, Բերդականերեչին ու Ցուրա գետը։ Եվ սա հաստատումն էր չորրորդ անգամ։ Սրանք իմ ձեռքի գրածով հանձնեցի աստվածային սուրբ հայրապետ Տեր-Գրիգորին։ Եվ արդ՝ ոչ ոք չի կարող իմ այս գիրն ու հաստատված պայմանը այսուհետև մինչև հավիտյան սուրբ Առաքելոցից խախտել կամ հափշտակել և կամ խանգարման պատճառ լինել։ Իսկ եթե որևէ մեկը հանդգնի ու այդ բանը մտքովն անցկացնի, աստծուց և սուրբ առաքյալներից նզովված լինի, Հուդային ու Արիոսին կողմնակից լինի, սատանայի հետ գտնվի

և իր կյանքը չվայելի։ Եվ եթե իշխանությունը փոխված ու մահմեդական անցած լինի և մտածի խլել, քանդել, ավերել, երկրի ու երկնքի արարիչ աստծուց և նրա բոլոր ընտրյալ սրբերից նզովված լինի, մարգարեից, որին փեղամբար են անվանում, մերժված ու անիծված լինի, իրենց օրենսդիր Մահմեդից[939] մերժված ու նալլաթի [արժանացած] լինի նրա տոհմը։ Գրվեց հայոց հինգ հարյուր քառասուն [վեցերորդ] թվականին[940]։— «Հանուն աստծու ես՝ Մահհանես, և ես՝ Գեորգս, մեր աստվածապահ թագավոր Սենեքերիմի հրամանով Հարժիքը, Բերդաներեչին և ծուրա գետը վերադարձրինք Տաթևի սուրբ Առաքելոցին, դրանք գրավվել էին ավերման ու նեղ ժամանակ և մինչև այժմ մեր տրամադրության տակ էին գտնվում։ Եվ արդ՝ ո՛չ մերոնք, ո՛չ էլ ուրիշ մեկը այս գյուղերի հետ չունեն որևէ հաշիվ՝ ո՛չ չարի[941], ո՛չ մահմեդականների հարկի[942]. ո՛չ բերդաշարի[943], ո՛չ գունդգահի[944] և ո՛չ էլ ուրիշ բաների, այլ իրավունքը պատկանում է նույն սուրբ խաչին ու հոգևոր առաջնորդին։ Իսկ եթե մեկը հանդգնի, վերոգրված նզովքը ժառանգի»։— Ես՝ Ռահբիս, վկա եմ մեր թագավորի այս անսուտ հրամաններին ու հաստատմանը։ Ոչ ոք չի կարող խանգարման պատճառ լինել, քանի որ սա հաստատ է աստծու կամքով»։

Դարձյալ սուրբ վանքին տվեցին ուրիշ շատ տիրույթներ, որոնց մասին ավելորդ համարեցինք այստեղ գրել։ Մեղրու բերդի տեր ոմն Աբուսահլը տվեց Մեղրու ձորի Բերդավագյանների մեծ այգին, հինգ հարյուր երեսունհինգ [վեցերորդ] թվականին[945]։ Տվեցին մի գյուղ Բարկուշատից[946]։ Տվեցին և Խոզվանի գյուղը[947] վանահոգ ձորից[948]։ Աշոտ իշխանն էլ սուրբ նշանին տվեց Ամբրավաքարը[949]՝ գրելով այսպիսի կտակագիր.

«Հանուն աստծու ես՝ Կարապինի որդի Աշոտ իշխանս, Տաթևի սուրբ նշանին Սյունյաց եպիսկոպոս Տեր-Գրիգորի միջոցով և աստվածապսակ թագավոր Սենեքերիմի հրամանով հանձնեցի իմ հայրենի տիրույթ Ամբրավաքարը։ Եվ մեզ համար անխափան պատարագ սահմանեցինք տիրոջ համբարձման օրը։ Արդ՝ ոչ ոք իրավունք չունի խափանելու այս։ Եթե հակառակվի և չար ու հարկ դնի վրան, սուրբ երրորդությունից ու նրա բոլոր սրբերից նզովված լինի և Հուդայի

հետ բաժին ստանա։ Իսկ եթե մահմեդական ավագ փոխարինվի ու հափշտակել ջանա, հարյուր հազար նալլաթի արժանանա, իր հավատքից էլ մերժված լինի։ Հայոց հինգ հարյուր երեսունութ [վեցերորդ] թվականին[950], Աստված շնորհավոր անի»։— «Ես՝ Սենեքերիմ թագավորս, որդիներս՝ Գրիգորն ու Սմբատը, հաստատեցինք»։

Եվ այսպիսի ուրիշ շատ բաներ [տվեցին], որոնց դիմաց հազարապատիկ ու բյուրապատիկ փոխհատուցում կլինի ամենաառատաձեռն տիրոջ կողմից՝ անանցական վայելքմամբ ու անգրավական ուրախությամբ։

ԿԱ

ԿԱՊԱՆԻ ԱՎԵՐՄԱՆ ՈՒ ԲԵՐԴԵՐԻ ԳՐԱՎՄԱՆ ՊԱՏՃԱՌԸ. ԲԱՂԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԻՍՊԱՌ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՍԻՍԱԿԱՆ ՏՈՀՄԻ ՎԵՐՋԸ

Այն տարում, երբ հայոց հինգ հարյուր հիսուներկու թվականն էր[951], եղավ Կապան գավառի և Բաղաց ամուր աշխարհի ավերման ու նրանց թագավորների և իշխանների տիրապետության վերացման սկիզբը, որի մասին կարդացինք ու իմացանք Սյունյաց եպիսկոպոս Տեր-Ստեփանոսի[952] գրքից, որ գրել էր հոյակապ Անի քաղաքում՝ Մխիթար քահանայի[953]՝ քաղաքի ավագ երեցի և սուրբ կաթողիկեի փակակալի խնդրանքով։

Մեծ կոտորածի պատճառն էլ այս էր։— Սենեքերիմ թագավորը գնում է Պարսկաստանի մայրաքաղաք Սպահան՝ Մելիքշահ սուլթանին տեսակցության։ Հանդիպելով նրան՝ բարձրագույն փառքով մեծարվում է ու նստեցվում վերևի տեղում։ Սուլթանը խիստ սիրված մի ծառա ուներ՝ Զորթման անունով, որը նրա մոտ մատուցակության էր անում։ Ճաշի ժամանակ սա գինով խիստ նեղում է Սենեքերիմ թագավորին, որը թեև շատ պարգևներ է խոստանում նրան, բայց նա ուշադրություն չի դարձնում։ Ապա խոստանում է Զորթմանին տալ իր դուստրը, որի համար իրենց սովորության համաձայն Զորթմանը հանգույց է դնում Սենեքերիմի գոտու վրա՝ որպես նշան այդ խոստման, ու տանում, ցույց է տալիս սուլթանին։ Դրանից հետո կատակով ասված այն խոսքերը Զորթմանը խո-

բամանկությամբ պահում էր իր մտքում՝ խժդժություն առաջ բերելու նպատակով։ Ապա հասնելով բարձր դիրքի և իշխանության՝ Սենեքերիմից պահանջում է խոստացած աղջիկը։ Իսկ նա խիստ խոսքերով է պատասխանում՝ ծաղրելով նրա պահանջը։ Այն ժամանակ, երբ Զորթմանն իմացավ թագավորի կարծիքը, ըստ որի իր պահանջի կատարումն անհնարին էր, սկսեց դաժան հալածանքներով ու տեսակ-տեսակ նեղություններով կեղեքել և ավերել նրա ամբողջ տերությունը։ Բայց հինգ հարյուր քսանհինգ թվականին[954] շեն էին կապանի գավառները, վանքերը ծաղկած էին պաշտամունքային արարողություններով ու լուսավորությամբ։ Իսկ հինգ հարյուր քառասունմեկ թվականին[955], երբ Մելիքշահ սուլթանը մեռավ, մեկ ամբողջ տարի նրանք բոլորն առհասարակ ահ ու դողի մեջ գտնվեցին։ Ապա Մելիքշահի որդի Բեկիարսլանի իշխանության ժամանակ յոթ տարի մի փոքր խաղաղություն տիրեց։ Իսկ հինգ հարյուր քառասունութ թվականին[956], երբ Բեկիարսլանը մեռավ, նրանք դարձյալ դառնապես ցնցվեցին։ Եվ երբ տասնմեկ հինգյակը և երկու թիվը լրացավ, այսինքն՝ հինգ հարյուր հիսուներկու թվականին[957], մի օր, երբ քաղաքացիներն անհոգ դրության մեջ էին, տերը [կորստյան] մատնեց մարդկանց համար անառիկ Կապան քաղաքը. անիծյալ Զորթմանն իր վրեժը [լուծելու] համար անսպասելիորեն հարձակվեց քաղաքի վրա։ Նախ՝ բազմաթիվ հետևակ ծերպամուտ ու քարագնաց զորականներ բարձրացան ապառաժոտ լեռան գլուխը և հեղեղատի մեծ հունով իջան քաղաք, քանի որ այդ տեղը պարսպափակված չէր՝ մարդկանց մուտքի համար անհնարին լինելու պատճառով։ Սկսեցին կոտորել Ջհտաթաղի կողմից։ Նրանք բացեցին քաղաքի դարպասը, որ նայում էր Խնձորոզլխին[958]։ Բոլոր զորքերը մտան ու ջարդեցին, կոտորեցին ամբողջ բնակչությանն առհասարակ։ Սակայն բերդի նկատմամբ ոչինչ չկարողացան ձեռնարկել և ետ դարձան իրենց տեղը։

Ահա հենց սա եղավ այս աշխարհի ավերման սկիզբը. և այդ թագավորությունն օրըստօրե սկսեց թուլանալ ու ապա վերացավ։ Այն ուներ իրեն ենթակա քառասուներեք բերդ, որոնցից տասներկուսն անվանի էին, քառասունութ վանք, հազար ութ գյուղ, մայրաքաղաքն էլ Կապանն[959] էր։ Դա Բաղքի թագավորությունն էր։

Ապա մեկ տարի անց, հինգ հարյուր հիսուներեք թվականին[960], գրավվեց Որոտանը[961], իսկ հինգ հարյուր հիսունչորս թվականին[962]՝ Բղենը[963], և գերի բռնվեց Խոսրովիկ իշխանը[964]։ Բազմաթիվ քրիստոնյաներ սրի քաշվեցին։ Բոլորովին ավերվեց Բաղաց երկիրը։ Վանքերի բոլոր միաբանությունները լռեցին պաշտամունքային արարողություններից։ Թանձրամած խավարը պատեց հայաստանյան ժողովրդին։ Սաստիկ սգի մեջ ընկան Հայաստանի բոլոր եկեղեցիներն ու քրիստոնյաները։ Բայց Բաղաբերդը[965], Գեղին[966], Կաքավաբերդը[967], Շլորուտը[968], Կարճևանը[969], Մեղրին[970], Գրհամը[971] մնացին Աղոտի թոռների՝ Գրիգոր Թագավորի[972] ու Սմբատի[973] իրավունքին։ Վերջիններս Աղոտի թոռներն էին և անզավակ, միայն Գրիգորը մի դուստր ուներ՝ Կատա անունով[974]։ Իսկ հինգ հարյուր վաթսունհինգ թվականին[975] մեծ ճգնությամբ վախճանվեց սուրբ թագուհի Շահանդուխտը՝ Սենեքերիմ թագավորի քույրը։ Նույն տարում վախճանվում է նաև աստվածային բաղմերանելի այր, սուրբ եպիսկոպոս Տեր-Գրիգորը[976]։

Հինգ հարյուր յոթանասուհինգ թվականին[977] նկավ ամիր Հարոնը և բնաջնջեց Կապանի տունն ու Արևիք գավառը, գրավեց Կաքավաբերդն ու Բաղակաքարը[978]. վերջինս վանք էր, որտեղ հավաքված կային բազմաթիվ սրբություններ՝ խաչեր, նահատակների մասունքներ, ոսկի, արծաթ, կտակարաններ, որոնք փոխադրվել էին գավառներից։ Այս բոլորը գերության մատնվեցին։

Ապա երբ լրացավ վեց հարյուր թվականը[979], և սկսվեց առաջին տարին, Շլորուտ բերդը կողոպտեց Թուրքերի ճարպիկ ցեղը, վեց հարյուր վեց թվականին[980] էլ Մեղրին հափշտակեցին։ Վեց հարյուր տասնինը թվականին[981] աստված կրկին բարկացավ մեր Բաղաց աշխարհի ու Սյունյաց նահանգի վրա և բոլորի ապավեն ու ապաստարան անառիկ Բաղաբերդ ամրոցը մատնեց Իսմայելի՝ անիծյալ ու գիշակեր մարդու ձեռքը, որը բազմաքանակ զորքերով եկավ, բայց չկարողացավ ոչինչ անել։ Այնուհետև խաբեական խոսքերով խաբեց աշաղվացի պարզամիտ քրիստոնյա մարդկանց ու նրանց միջոցով նախ գրավեց Կկոց քարը[982], ապա գիշերը նույն մարդկանց միջոցով հափշտակեց և Բաղաբերդը, որը

գրավելով սաստիկ կոտորած կատարեց։ Եվ քանի որ այն անհաղթահարելի ամրություն ուներ, բոլոր վանքերից այնտեղ էին կուտակել սրբությունները, գրքերը, եկեղեցական սպասքները, առավելապես Տաթևի փարթամ ու հարուստ աթոռի անհամար և աննման սրբություններն ու եկեղեցական սպասքները, ոսկե և արծաթե խաչերը, հիշատակային իրերը՝ զարդարված անգին ակնեղեններով, անհամար մարգարիտներով։ Այնտեղ ամբարված էին շատ կտակարաններ՝ թվով ավելի քան տասը հազար։ Դրանք բոլորն էլ գերի տարվեցին և ցիր ու ցան եղան երկրի երեսին։ Մենք խղճահարության ու կարեկցանքի ենք արժանի, որովհետև մեր կորստան ու ավերածությունը առավել եղան, քան Երուսաղեմինը՝ Նաբուգոդոնոսոր արքայից[983]. չէ՞ որ սա մի ժամանակ գարձ ու նորոգում ունեցավ Կյուրոսի կողմից[984], իսկ մեզ համակեց վերջին թշվառությունը՝ անդառնալիորեն ու հավիտենապես։

Ապա մինչ տերը մեզ դատապարտեց ու կամենում էր օրեցօր ոչնչացնել, մյուս բերդերն ու ամրոցներն ինքնակամ հանձնվեցին Ելտկուզ աթաբեկին[985], և ամենուրեք տիրեց տաճիկը[986]։ Վրա հասավ դառն ու դժնդակ ժամանակը. ընդհանրապես երկիրն ու բնակելի վայրերը ավերվեցին և անմարդաբնակ դարձան։ Բայց Գրիգորը, որ իշխում էր Բաղքում, բերել տվեց Խաչենի իշխաններից, գեռաքարեցի մի կտրիճի՝ Հասան անունով[987], իր դուստր Կատային նրան կնության տվեց ու դարձրեց իր թագավորության ժառանգ։ Ինքն ու իր եղբայր Սմբատն էլ մեռան բերդի գրավումից առաջ, վեց հարյուր տասնհինգ թվականին[988]։ Իսկ երբ [սելջուկները] ուզեցին բերդը գրավել, Հասանը բերդապահներ նշանակեց, ինքն էլ վերցրեց կնոջն ու ընտանիքի [մյուս] անդամներին, գիշերը բերդից դուրս եկավ և անցավ-գնաց Խաչեն՝ իր գավառն ու տունը։

Մնացած Ջուրջ և Խոսրովիկ ազատները փոքր հասակում մեռան Նախիջևանում ու թաղվեցին Ճահուկում։ Ջուրջի մի եղբորորդին՝ Մահևան անունով, փախավ-գնաց Անի քաղաքը։ Իսկ մյուս իշխանը՝ Համտունը, որ Բաղքի մեծ իշխան Հասանի որդին էր ու ավագ Համտունի թոռը, գնաց Վայոց ձոր, իր փառաբանված եղբայր Տեր-Հովհաննեսի մոտ, որը

բնակվում էր Նորավանք[989] կոչված խորաձոր անապատում, Հրաշկաբերդի[990] մոտ. այնտեղ կրոնավորություն անելով՝ մեռավ վեց հարյուր ութսուն թվականին[991]։

Ահա այսպես վերացավ Սյունիքի և Բաղքի իշխանությունը, եղավ Սիսակի տոհմի ու Սյունյաց նախարարության վախճանը, քանի որ բոլորը, որ կային շատ առաջ, Սմբատի և Սահակի ժամանակներում, ոմանք անզավակ մնացին, ոմանք անժամանակ մեռան, ոմանք էլ սպանվեցին ու գերեվարվեցին. մնացել էին միայն այս Գրիգորն ու Սմբատը[992], որոնք և այս ձևով վերացան։

ԿԹ

ԱՅՍ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՂԱԾ ՎԱՆՔԵՐԸ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՔԱՆԱԿԸ

Առաջինը, Սիսական տան բոլոր վանքերի գլուխն ու շնորհաբաշխության աղբյուրը, Տաթևն է։ Նրան հաջորդում է մեծ առաքինարան Թանահատի վանքը[993], ապա՝ Սյունի վանքը[994], որի եկեղեցին չքնաղ ու նորակերտ ձևով, երկնանման գմբեթահարկ խորանով կանգնեցրել է մեծ բարեպաշտուհի Սյունյաց տիկին Վարազդուխտը[995]՝ սուրբ Լուսավորչի անունով, հայոց թվականությունից առաջ։ Վանքի առջև, գեղեցիկ հրապարակի մեջտեղում իշխանները կառուցում են արքունական տուն ու իշխանանիստ ապարանք. և ասում են, թե ամեն օր պատարագի ժամին եկեղեցի էին գալիս։

Ապա Կնեվանքն[996] է, որի մասին պատմում էին [հետևյալը]. նախարապան մանուկները արածեցնում էին եզների նախիրը և սկսեցին խաղալ. կտրելով մի կնյուն[997], խաչ[998] պատրաստեցին ու դրեցին մի քարի վրա և սկսեցին երկրպագել ու ասել. «Ինչ որ երեցն ասում ու կարդում է, այն թող քո նկատմամբ լինի. այս եզներից երեքը թող քեզ մատաղ լինեն»։ Ինչ որ նրանք խաղի ընթացքում արտահայտեցին, հոգի աստվածն իջնելով նույնությամբ տնօրինեց։ Եվ երբ երեկոյացավ, մանուկներն ուզեցին տուն գնալ։ Թեև շատ ջանացին, բայց չկարողացան այն նվիրած մատաղացուները-

րը տեղից վեր հանել։ Գնացին ու իմաց արեցին նրանց տեր-
բերին։ Նրանք էլ գալով չկարողացան տեղներից շարժել։ Մա-
նուկներից պատճառը հարցրին, և նրանք խոստովանեցին
ուղիղը։ Այնուհետև քահանաներ կանչեցին ու խաչն օրհնել
տվեցին։ Եզները մորթեցին ու պատվեցին կնյունի տեղը։
Այս մասին տեղեկացրին Սյունյաց իշխաններին, որոնք եկան
տեսնելու։ Հրամայեցին այնտեղ եկեղեցի շինել։ Եվ այն հաս-
տատեցին կրոնավորների տուն։ Բայց եկեղեցու մեջ կնյունի
տեղում մի փոքրիկ փոս թողեցին։ Եվ դեռ անշեն ժամանա-
կից այդ փոսից ձեթ էր բխում, իսկ դա այնքան էր, որ ուրիշ
ձեթի կարիք չէր զգացվում, և եկեղեցու կանթեղները նրանով
էին սնվում։ Դեռևս կան եկեղեցին, կնյունի տեղը, ինչպես
և խաչը, որոնք վկայում են սրա անստուտ լինելու մասին։

Ապա՝ Վաղատնի[999] վանքը, Նորավանքը[1000], Երիցավան-
քը[1001], որոնք մշտապես գործող էին, Շատանյա վանքը[1002]՝
նույնպես միշտ գործող, Գողորյա վանքը[1003], Վահանավան-
քը[1004], Տանձափարախը[1005], որոնց կրոնավորները խարազնա-
զգեստ[1006] ու սակավապետ էին. Լուսկեվանքը[1007], Լհեվան-
քը[1008], Քրոնից վանքը[1009],Դադեի վանքը[1010], Կուռափաձորի
վանքը[1011], Միծառնո վանքը[1012], Խաչատրո վանքը[1013], Ջյու-
նասարի վանքը[1014],

Վայոց ձորի կողմում մշտապես գործող վանքերը՝ Նո-
տակերից վանքը[1015], որը Քարկոփ է կոչվում, Նորավան-
քը[1016], որը հետո դարձավ եպիսկոպոսարան, մյուս Նորա-
վանքը[1017], Ցաղաց քարը[1018]՝ բարձրահռչակ և սուրբ առա-
քինարանը, որտեղ չորս հարյուր իննսուն թվականին[1019], Գա-
գիկի թագավորության օրոք Վարդիկ անունով մի վանահայր
առաջին սուրբ հայրերի հանգստարանում շինում է երկու
պայծառ եկեղեցի, մեկը գմբեթահարի՝ սուրբ Կարապետի
անունով, մյուսը՝ թեքակտուր, հրաշալի կառուցվածքով։ Ապա՝
Հերմոնի վանքը[1020], Արատինից վանքը[1021], Թանատեի վան-
քը[1022], որտեղ գտնվում են սուրբ Ստեփանոսի նշխարները,
Գնդալի[1023] վանքը։

Իսկ Գեղամում՝ Մաքենյաց մեծ մենաստան վանաց[1024]
վանքը և մյուս Վանեվանը[1025], Շողվագա[1026] վանքը։

Ահա հակառակ-հանվանե սրանք են գլխավորները [Սյու-
նիքի] այն բոլոր վանքերից, որոնցից շատերը ամայի են
ու թափուր ջենությունից։ Այժմ քչերն են լուսավորության
մեջ։ Դրանք թվով երեսուն էին։ Բայց ուրիշ շատերն էլ կա-
յին, որոնք չթվեցինք։

ԿԳ

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԻՑ[1027] ՀԵՏՈ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ

Վախճանվում է Տեր-Գրիգորը՝ պաշտոնավարած լինելով
հիսունութ տարի։ Նրան հաջորդեց Տեր-Ստեփանոսը[1028]՝ [իշ-
խելով] քսանյոթ տարի։ Սրա օրոք, հինգ հարյուր ութսունյոթ
թվականին[1029], եղավ Գանձակի երկրաշարժը, և երկիրը հիմ-
քերից դողաց։ Տաթևի մեծ եկեղեցու գմբեթն իր բոլորաձև
շրջանակով թռավ ու ընկավ սուրբ Գրիգոր եկեղեցու և բա-
կում գտնվող գավթի վրա ու ամբողջը փլցրեց։ Իսկ հինգ
հարյուր իննսուներկու թվականին[1030] վախճանվեց այս եպիս-
կոպոսը, և դժնդակ ժամանակ վրա հասավ, որի մասին լե-
զուն չի կարող պատմել։ Մարդ ու անասուն ամբողջովին բնա-
ջնջվեցին, Սիսական ողջ աշխարհն ամայացավ։ Միայն ժայ-
ռերի ծերպերում տեղ-տեղ մնացել էին երկու կամ երեք մարդ։

Տեր-Ստեփանոսից հետո աթոռը գրավում է Տեր-Բարսե-
ղը[1031], որը, կարճ ժամանակ ապրելով, մի պատահմունքով
Աստապատ գյուղի[1032] մոտ Երասխ գետն է ընկնում՝ իր հե-
ծած չորս հետ միասին։ Լողորդները մտնելով հանում են, և
ջրի վրա մեծ լույս է ճառագում։ Նրան տանում, թաղում են
Մաղարթա վանքում[1033], որը կառուցվել էր սուրբ Բարդուղի-
մեոսի կողմից[1034]։ Եվ պահվեց եկեղեցու պատի մեջ իսրա-
յելացիների երեք հատ մանանայի նման[1035], որը հաստատ-
տում է Մխիթարյ պատմագիրը[1036]։ Այնուհետև աթոռն ամա-
յացել էր բնակիչներից, և տեր կամ իշխող չկար, որ հոգ
տաներ եկեղեցու կամ հավատացյալ համայնքի մնացորդնե-
րի մասին ու առաջնորդի համար որոնումներ կատարեր։

Մեղրի մեծ ավանում կար մի ավագ քահանա՝ Գրիգոր

անունով, ճշմարտասեր մի լավ մարդ, որը Տեր-Բարսեղի եղբայրն էր։ Սրան հորդորեց Ծամամ կոչված իր սրբասեր ու խորհրդավոր տիրուհին՝ ասելով. «Ո՛վ քահանա, Սյունյաց աթոռն ամայացավ, փութա՛ և եղի՛ր քահանապետ, որ մեր որդյակն էլ քահանայապետի որդի դառնա. հիշի՛ր սուրբ Գրիգորին[1037] և նրա որդիներին ու թոռներին, որ բոլորն էլ ամուսնացած էին և կին ունեին»։ Դրանից համարձակություն ստանալով՝ այս ավագ քահանան գնում է Ներսեսի եղբայր հայոց կաթողիկոս Տեր-Գրիգորիսի[1038] մոտ և այնտեղ եպիսկոպոս ձեռնադրվելով՝ գալիս է Սյունյաց վիճակը. քսան տարի աթոռակալելով՝ մեռնում է[1039] Վայոց ձորի Խարձա գյուղում[1040], հավատացյալ համայնքի մեջ շրջելիս, վեց հարյուր տասնյոթ թվականին[1041]։ Նրան տանելով Նորավանքի սուրբ ուխտը՝ թաղում են Տեր-Հովհաննես կաթողիկոսի[1042] մոտ։ Նրա տեղն հաջորդում է իր որդի Ստեփանոսը[1043] մանուկ հասակում՝ լի բազում շնորհներով, սիրված ու մեծարված ժամանակի իշխող ավագների աչքում, որոնք էին՝ Ելակուզ աթաբեկը, նրա որդիներ Փալհավանը և Խոիլ Ասլանը[1044], Բուպաք աթաբեկը, որոնք փաղաքշական անվամբ նրան կոչում էին Ֆախր էլ Մսեհ, այսինքն՝ «սիրող Քրիստոսի»[1045], նրան պատվում տուղրա գրով[1046], ֆարմանով[1047] ու մանշուրով[1048], որը մենք սիգել[1049] ենք անվանում։

Այս Ստեփանոսի ժամանակներում էին Թամարը[1050] և Լաշա Գեորգին[1051]՝ Վրաստանի թագավորները, մեծ ամիրսպասալար[1052] Զաքարեն ու իր եղբայր Իվանե աթաբեկը[1053], որոնք մեծապես սիրում ու հարգում էին սրան։ Կայեն գավառում[1054] սրան հանգստյան տեղ հատկացրին Հաղարծինի գերահռչակ վանքն[1055] ու Աբասաձոր գյուղը[1056]։ Սա նորոգեց Տաթևի սուրբ Առաքելոց խարխլված եկեղեցին և վրան գմբեթ դնել տվեց Հակոբ Ճահկեցի[1057] վանահոր միջոցով։ Հաղպատում[1058] եպիսկոպոս ձեռնադրեց Տեր-Գրիգորիսին[1059]՝ Զաքարեի և Իվանեի քրոջորդուն։ Եպիսկոպոսության պաշտոնին մնալով քառասունվեց տարի՝ մեռավ Վայոց ձորի Արփա գյուղում[1060], տարվեց, դրվեց իր հոր մոտ, նույն Նորավանքում, վեց հարյուր վաթսունհինգ թվականին[1061]։ Դեռ սրա կենդանության օրոք եպիսկոպոս էր ձեռնադրվել իր քրոջորդի Տեր-Սարգիսը՝ Աղվանքի կաթողիկոս իր քեռու հրամանով[1062]։ Եվ Տեր-Ստեփանոսի մահից հետո նրա մյուս հորեղբորորդին՝ Հովհաննես անունով[1063], գնացել էր Աղթամար, այնտեղ ձեռնադրվել եպիսկոպոս, որը նստում է Տաթևում։ Իսկ այս Տեր-Սարգիսը բնակվում էր Վայոց ձորում, Նորավանքի մենաստանում։ Բաժանելով թեմը՝ բովանդակ Վայոց ձորն ինքն է վերցնում, իսկ մնացածը թողնում է Տեր-Հովհաննեսին։ Եվ այնուհետև ու հետագայում էլ Նորավանքը հաստատվեց եպիսկոպոսական աթոռ. չէ՞ որ Սյունյաց տան ավերման ժամանակ տուն ու ապաստարան էր, հանգստարանի տեղ էր, որտեղ էին բազմաթիվ եպիսկոպոսների շիրիմները։ Դրա շենացման որպիսության ու ծաղկման պատճառի մասին հետո պիտի պատմեմ։

Տեր-Հովհաննեսը, [դրանից հետո] ապրելով երեսունութ տարի, վախճանվում է Տաթևի[1064] մեծահռչակ ուխտում և թաղվում Նորակառույց եկեղեցու գավթում, յոթ հարյուր թվականին[1065]։ Նրա աթոռը գրավում է իր եղբորորդի Տեր-Հայրապետը[1066], և ապա՝ մյուս ազգականը՝ Տեր-Սողոմոնը[1067]։ Իսկ Տեր Սարգիսը Նորավանքում վեց հարյուր վաթսունհինգ թվականին[1068] գեղատեսիլ եկեղեցու հիմք է դնում՝ հրամանով ու օժանդակությամբ Ելիկումի[1069] որդի մեծ իշխանաց իշխան Լիպարիտի[1070]՝ վրաց աշխարհից եկած Օրբելյան մեծ նահատակության ցեղից։ Յոթ տարի աշխատելով՝ շենքն ավարտում է հրաշակերպ կերտվածքով, մեջը ութ խորհրդավոր խորաններ, սուրբ Նախավկայի անվամբ[1071]։ Նա բազում արդյունավետ ու երևելի գործերից հետո գնում է Կիլիկիա, հայոց բարեպաշտ արքա Հեթումի[1072] մոտ։ Նրանից մեծ պատիվների արժանացավ, հանգստյան տեղ ստացավ Մելիճի ավանը[1073]։ Այնտեղ շատ ճգնելով դնաց Երուսաղեմ սուրբ քաղաքը, մեր աստված և փրկիչ Հիսուս Քրիստոսի գերեզմանը։ Երկրպագելով աստծու կոխոտած տեղերին՝ գրում է անկշռելի պարգևը՝ սուրբ Ստեփանոս Նախավկայի աջը, և վերցնում է Ֆրանկից[1074], քանի որ այն ժամանակ Ֆրանկներն էին տիրում սուրբ քաղաքին։ Նրա վրա Ֆրանկ[1075], հույն ու ասորի գրով գրված էր, թե սուրբ Ստեփանոս Նախավկայինն է։ Այն ուղարկում է Նորավանքի սուրբ ուխտը, որը և այնտեղ գտնվում է սուրբ եկեղեցու մեջ։

Եվ ապա խորազմը փոանգից վերցրեց Երուսաղեմը, սաստիկ կոտորած արեց, տիրոջ տաճարը լցրեց արյամբ։ Երանելի Տեր-Սարգիս եպիսկոպոսին ուրիշ երեք ընկերների հետ գտնելով տիրոջ գերեզմանի վրա սաղմոսերգելիս՝ գլուխը կտրեցին և արյունը թափեցին տիրոջ գերեզմանի ծածկոցի վրա։ Եվ նա այսպես արյամբ պսակվեց մեր Քրիստոս աստծուց։ Նրա տեղը հաջորդեց իր քրոջորդի Տեր-Ստեփանոսը[1076]՝ [աթոռակալելով] քսան տարի։ Նրանից հետո [իշխեց] Տեր-Սարգիսը[1077]՝ Տեր-Ստեփանոսի եղբայր Վահրամ ճգնավորի որդին, մի իմաստուն, գործունյա մարդ, ընտիր գիտնական ու բազմաշխատ, որն այս տանը շատ արդյունավետ ու երևելի գործեր կատարեց. եկեղեցիները զարդարեց պատվական սպասքներով. հրաշափառ սուրբ մեներստանն առավել փայլեցրեց, քան իր նախորդները։ Իսկ տաճեացիները [վերա]շինեցին վանքը, որ բաղում տարիներ ի վեր ավեր ու ամայի էր մնացել, որը և ամեն տեսակի անհրաժեշտ բաներով փարթամացրին մեծ և փառաբանված իշխանաց իշխաններ Սմբատն ու Տարսայիճը՝ Լիպարիտի որդիները[1078], Այնտեղ միասին իշխած [եպիսկոպոսներից] նախ վախճանվեց Տեր-Սողոմոնը, և ապա՝ Տեր-Հայրապետը[1079]՝ իշխած[1080] լինելով քառասուն տարի։ Եվ քանի որ վերջինիս կենդանության ժամանակ ձեռնադրվել էր իր եղբորորդին՝ Հովհաննես անունով[1081], նրանից հետո բազում հակառակություններով երեք տարի սա աթոռակալեց, վախճանվեց ու թաղվեց իր հորեղբայր Տեր-Հայրապետի մոտ։

Այս Հովհաննեսից հետո մեր ապիկար ու չնչին անձը[1082] հաջորդեց Սիսական տանս մետրոպոլիտության կրկնանորոգ գահին և երկու գահակալական աթոռներն ու աշխարհախոսմբ հանդիսարանները՝ Տաթևն ու Նորավանքը, իրենց բոլոր հովատացյալ համայնքներով միատեղելով՝ այժմ կանք կանգուն՝ որպես երկնանման կամար լեռների վրա, մինչև ինձ համար սահմանված ժամանակները, որը տերը պիտի սպառի։

ՆՈՐԱՎԱՆՔԻ[1083] ՍՈՒՐԲ, ԳԵՐՀԱՐՋԱԿ, ՓԱՌԱՎՈՐ ՈՒԽՏԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԾԱՆՈՒ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՆԱԽԱՊԱՏԻՎ ԳԱՀԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ ԵՎ ՊԱՏՃԱՌԸ

Սրանից շատ ժամանակներ առաջ, վաղ օրեր ու երկար տարիներ ի վեր այն նեղլիկ ձորակում[1084] մի հարմար տեղում կառուցված էր մի եկեղեցի՝ կրաշաղախ քարերով՝ սուրբ Կարապետի անվամբ, հույժ սքանչելակերտ, հայտնապես ահազդու՝ մերձակա շրջակայքի նկատմամբ։ Նրա մոտ բխում էր քաղցրահամ մի աղբյուր։ Ամբողջ ձորը զարդարված էր այգիներով ու մրգաբեր թանձրախիտ ծառերով։ Նույն ձորում, խիտ քարակույտերի մեջ կար նաև մի այլ եկեղեցի՝ կառուցված Փոկաս սուրբ հայրապետի անվամբ։ Եվ եկեղեցու մեջ, բեմի տակից մի քիչ ջուր էր բխում, հետն էլ բուժիչ ձեթ էր դուրս գալիս, որի մասին շատ հին ավանդություններից իմացանք, թե բերվել էր սուրբ հայրապետ Փոկասի՝ այնտեղ թաղված նշխարների մոտից։ Նրա անվամբ էլ տեղը Փոկաս կոչվեց։ Դա զարմանալի հրաշքներ էր կատարում. ամեն տեսակի ցավերը, որոնց բուժումը մարդկանց կողմից անհնարին էր, ինչպես գողությունն ու բորոտությունը, երկար ժամանակվա նեխված ու ապականված վերքերը, բուժման հույսով այնտեղ հասցվելիս, այն ջրով լվացվելիս ու ձեթով օծվելիս բուժվում էին, իսկ դրանց մահացու լինելու դեպքում [հիվանդները] անմիջապես վախճանվում էին։ Այս պատճառով էլ այդ տեղի համբավը խիստ հռչակված էր ամբողջ աշխարհում։

Ապա երբ եկավ նեղ ժամանակը, երբ ամբողջ երկրիս ավեր հասավ, վերացավ թագավորությունը, սպանվեց Սենեքերիմ թագավորը[1085], բնաջնջվեց Բաղքի իշխանությունը, խափանվելով լռեցին բոլոր գործող վանքերը հինգ հարյուր հիսունչորս թվականին[1086], Հովհաննու վանքում[1087] Հովհաննես անունով[1088] մի եպիսկոպոս կար՝ լցված ամեն տեսակի առաքինություններով, ամբողջովին տոգորված Քրիստոսով, աղնվական տոհմից, որդին Բաղաց մեծափառ իշխան Հասանի, որն իր ձեռքի տակ ուներ այն թագավորության բոլոր

աղատներին և մեծ Համտունի[1089] որդին էր։ Այս Հովհաննեսը, իր աշխարհի ավերումից հետո այս ու այնտեղ շատ դեգերելով, գալիս է Վայոց ձոր գավառը և կամենում է հաստատվել Նորավանքի խորաձոր անապատում, Հրասեկաբերդի անառիկ դղյակի մերձակայքում, սուրբ Կարապետի՝ հիանալի զորություն ունեցող և մեծասքանչ եկեղեցում։ Գնում, ներկայանում է Պարսկաստանի մեծ արքա Մահմուդ սուլթանին[1090], ծանոթանում է նրա հետ և այն տեղի համար նրանից ֆարման ու մանշուր[1091] է վերցնում։ Համարձակորեն հաստատվում է այնտեղ՝ հավաքելով կրոնավոր ու ճգնակյաց մարդկանց և հիացնում է այս վայրերի բոլոր աշխարհական մարդկանց. ամբողջ վայրը շրջապատով սահմանափակում է՝ կանգնեցնելով տերունական նշան, որ այնտեղ չանցնեն կանայք ու լկտի [տղա]մարդիկ։ Եվ եկեղեցու համար կալվածք է վերցնում հողեր ու դաշտեր սահմանակից գանձակեցիներից և տխարբեցիներից[1092]։

Այս Հովհաննեսը, նեղվելով Հրասեկի անիծյալ ու պիղծ բերդապահից, որ Խորասանի խազրիկ[1093] էր և ձգտում էր սպանել սուրբ եպիսկոպոսին ու ավերել այդ սուրբ ուխտի կրոնավորանոց տունը, իրեն պարսիկ է ձևացնում, մանավանդ որ հմուտ էր նրանց լեզվի մեջ, փախչում-գնում է Սպահան քաղաքը, սուլթանի մոտ։ Սուլթանը միևուճար մի որդի ուներ, որը հիվանդացել էր անտանելի հիվանդությամբ ու մահամերձ էր. բժիշկների բոլոր միջոցառումներն ապարդյուն էին անցել։ Մանկան ծնողներն ու սուլթանի հայրը մեծ սգի և տրտմության մեջ էին։ Այնուհետև սուլթանի մայրը երազում տեսնում է, որ իրենց քաղաքը մտած այն օտար մարդը եպիսկոպոս է՝ Հովհաննես անունով, որը կբուժի մանկանը։ Դրա համար էլ նրան որոնում են. գտնում, բերում են մեծ սուլթանի մոտ։ Իսկ սուլթանը, լսելով նրա մասին, հիշեց ու ճանաչեց։ Նրան ընդառաջ գնալով՝ երկրպագեց ու խնդրեց եթե հնարավոր է՝ բուժել մանկան հիվանդությունը։ Եվ սուրբ եպիսկոպոսը, մեծահույս հավատով մտնելով կիսամեռ մանկան մոտ ու առաքելական զորությամբ դուրս վանելով ցավը, [գրեթե] մեռած մարմնին հրաման տվեց անկողնուց ոտքի կանգնել։ Այդ պատճառով սուլթանը մեծ զարմանքով ու հիացմունքով եպիսկոպոսից հարցրեց գալու պատ-

ճառը։ Եվ նա պատմեց Հրասեկաբերդի ամիրայի ու Անապատ բերդի[1094] մյուս խուլամի[1095] դառն աղետների մասին։

Սուլթանը դրանից խիստ զայրանում է ու երախտահատույց է լինում Հովհաննեսին։ Եվ հրովարտակով Հրասեկաբերդը հանձնում է եպիսկոպոսի իրավունքին, նրա հետ էլ ուղարկում է հավատարիմ մարդկանց՝ սպանելու բերդապահին իր ընտանիքով և տեղը տալու եպիսկոպոսին։ Սուլթանի մայրը դրա հետ միասին նույն Տեր-Հովհաննեսին շնորհում է Անապատ բերդը՝ տասներկու ագարակներով և իսկական սիգելով ու հաստատուն մանշուրով որպես կալվածք է տալիս Նորավանքի սուրբ եկեղեցուն։ Դրանց արքունական վավերագրերը հենց մենք կարդացինք ու ստուգեցինք։ Ըստ թուրքական օրենքի՝ անհուն երդումով հաստատված էր գրվածը. այնտեղ սահմանված էին բազում նալլաթներ ու ապիշարներ։

Եպիսկոպոսն այնուհետև մեծ խնդությամբ վերադառնում է իր տեղը՝ զինված ջոկատով հանդերձ։ Եվ բռնելով Հրասեկաբերդի ամիրային իր ընտանիքի հետ՝ ժայռից գլորում, սպանում են, տեղն էլ քարուքանդ անում։ Իսկ Անապատի բերդի մյուս ամիրային հալածելով՝ բերդը ագարակների հետ դարձնում է եկեղեցու սեփականություն։

Բայց հետո Հրասեկաբերդը [վերա]շինվեց, և այնտեղ պարսիկներ բնակվեցին, որը և Իվանե աթաբեկի օրոք նույնի հրամանով ուժով վերստին վերցվեց արփայեցի Ախթամարի[1096] ու խաչենեցի այն Վասակ իշխանի[1097] ձեռքով, որոնցից վերջինը բարեպաշտ և մեծատոհմիկ իշխան Պողոի[1098] հայրն էր։ Իսկ Անապատը մնաց սուրբ եկեղեցու իրավունքին՝ մինչև այսօր։ Եպիսկոպոսը լի էր բոլոր առաքինություններով, ապրում էր մեծ ճգնություններով։ Շատ հրաշագործություններ էր ցույց տալիս այն աստիճան, որ գորտերին հրամայում էր լռել, և լռեցին մինչև այժմ։ Մի անգամ Տխարբ գյուղից մի կին ու մի ծծկեր մանուկ ընկնում են վանքի դիմացի քարաժայռից. սուրբը տեսնելով՝ դիմացից խաչակնքում է, և նրանք անվնաս են մնում ու ողջ և առողջ վերադառնում իրենց տունը ու ասում. «Տեր-Հովհաննեսը կանգնել էր ժայռի տակ և երկու ձեռքով բռնելով՝ մեզ փրկեց»։

Այսպես ապրելով բավում տարիներ՝ [եպիսկոպոսը] վախճանվում է հայոց վեց հարյուր վաթսուներեք թվականին[1099], թաղվում է իր աղոթարանում, երկու վեմերի միջև, նույն վանքում։ Նրա գերեզմանից մեծամեծ զորություններ են հանդես գալիս. ոչնչացնում է մուկն ու թրթուրը, բուժում մարդուն, անասունին ու հանդերին հասած վնասները։

Այնուհետև, երբ Ելտկուզն առավ սուլթանի մորը ու տիրեց արքայական գահին, նրանից հետո եկավ շնորհազարդ Ստեփանը[1100], որը և աթաբեկից Ֆախր էլ Մսեհ[1101] կոչվեց, ու հաստատվեց Նորավանքի սուրբ ուխտում, որովհետև հին աթոռն ավերված, խաթարված էր, իսկ հայր Տեր-Գրիգորն[1102] էլ թաղված էր այստեղ։ Եվ այս վանքը հաստատելով եպիսկոպոսական աթոռի տուն՝ մեծ աթաբեկից հրամանագիր ու սիգել է վերցնում այս վիճակի համար, որպեսզի այստեղ հաջորդեն եկեղեցու ժառանգորդները։ Նմանապես շրջաբերական թուղթ է խնդրում հայոց մեծ կաթողիկոս Տեր-Գրիգորից[1103], որպեսզի այս գավառները լինեն սեփական վիճակ Նորավանքի սուրբ ուխտին։

Այնուհետև գնալով Ելտկուզ աթաբեկի մոտ՝ ցույց է տալիս սուլթանի գրությունը, նրանից ևս հաստատում մանրուր է վերցնում Նորավանքի բոլոր սեփականությունների համար։ Պահանջում է նաև Ագարակի ձոր[1104] գյուղը, որը ևս [աթաբեկը] բարյացակամորեն, հաստատուն ու իսկական մանրուրով ընծայեց սուրբ եկեղեցուն և այն ամենը, ինչ պատկանում էր վանքին՝ հող, ջուր, այգի, գյուղ ու ագարակ և հենց Անապատի բերդն էլ, ազատեց աշխարհիկ բոլոր հարկերից։ Այնուհետև [եպիսկոպոսը], ապրելով շատ տարիներ, մեռավ այնտեղ և թաղվեց իր հոր մոտ վեց հարյուր վաթսունհինգ թվականին[1105]։ Նրան հաջորդեց Տեր-Սարգիսը[1106], որը նահատակվեց Երուսաղեմում։ Սա եպիսկոպոս դարձավ [Տեր-Ստեփանոսի] կենդանության ժամանակ և բնակվում էր Նորավանքում։ Իսկ Տեր-Ստեփանոսը գրավ էր դրել աստվածամուխ սուրբ նշանը՝ Տեր-Հովհաննեսի մեծ խաչը, թիթեղնակապն ու կամարակապը[1107]։ Թիթեղնակապը երեսի վրա ուներ ոսկի թիթեղներ, իսկ կամարակապը՝ ակնաձև կամար՝ թևից թև։ [Այդ բոլորը գանվում էին] Շահապոնքի[1108] Ածապ վանքի Պետրոս անունով մի եպիսկոպոսի մոտ։ Այս

կողմերի կուսակալ Վասակը[1109]՝ Պռոշ իշխանը[1110] հայրը, այդ մասին իմանալով, բռնությամբ վերցնում է այս երեք աստվածային սուրբ նշանները և մեծ խաչը տանում, ընծայում է Իվանե աթաբեկին, իսկ մյուս երկուսը՝ թիթեղնակապն ու կամարակապը, տանում դնում է Կեչառույքի իր վանքում[1111]։ Ապա վեց հարյուր վաթսունհինգ թվականին[1112], երբ Իվանե աթաբեկը պաշարել էր[1113] Զարեք կոչված բերդը[1114], Տեր-Սարգիսը[1115] իր քեռի Տեր-Ստեփանոսի[1116] առաջարկությամբ ու գրությամբ գնաց նրա մոտ՝ աստվածընկալ սուրբ խաչի պահանջով։ Աթաբեկն ուներ մի գործակալ՝ իր ամբողջ իշխանության վրա [նշանակված] կառավարիչ, սենեկապանների[1117] ավագ. դա Բուպաք կոչված մեծ ու բարեպաշտ իշխանն էր, որը և Ելիկումի որդի Լիպարիտի աներն էր, իսկ Լիպարիտը շատ սիրված էր Իվանեի աչքում։ Խաչն էլ պահված էր Պղնձահանքում[1118]։ Նրանք եպիսկոպոսին ներկայացնում են աթաբեկին ու հանձնում գրությունը և իրենք էլ, մեծապես հոգ տանելով, ջանում են ազատել գերված խաչը։ Շատ գանձեր ծախսեցին մեծամեծների ու ներքին խորհրդականների միջոցով։ Բարեպաշտ Լիպարիտը հինգ հարյուր դահեկանի չափ ընծայեց։ Աթաբեկի պահանջով էլ հինգ հարյուր դահեկան ընտիր կարմիր ոսկի տվեց ու այս ձևով հաուցելով՝ նրա սիրտը շահեց՝ վերադարձնելու [խաչը]։ Ապա [աթաբեկը] հրամայեց կանչել եպիսկոպոսին։ Նրա առաջ պայման դրեց՝ ասելով. «Եթե մեկը կամենա սուրբ խաչի վերադարձը, [ապա] վաղը այս բերդը պիտի հանձնի իմ ձեռքը, և ես խաչը կհանձնեմ քեզ, եթե ոչ՝ ձեռնունայն պիտի վերադառնաս»։

Իսկ երբ լույսը բացվում է, սուրբ խաչի զորությամբ բերդեցիները ինքնահոժար կամքով բերում են բերդի բանալին, դնում աթաբեկի առաջ։ Նրա հետ բերում են նաև բերդերի ուրիշ երկու բանալիներ ու դնում նրա առաջ։ Շատ ուրախանալով ու զարմանալով այդ հրաշքի վրա՝ [աթաբեկը] հրամայում է իր դիվանի՝ Օնոփրե անունով ավագ քարտուղարին[1119] գնալ Տեր-Սարգսի հետ և Պղնձահանքի վանքում[1120] գտնվող խաչը հանձնել նրան, որը և անմիջապես կատարվում է։ Տեր-Սարգիսը գնալով ուրախությամբ ստանում է խա-

չը և շտապ կերպով անցնում, գալիս-հասնում է Նորավանքի ուխտը ու այնտեղ է հաստատում սուրբ նշանը։ Այնտեղ էլ մեռած է գտնում իր քեռի Տեր-Ստեփանոսին։ Բայց, ինչպես [վերն] ասացինք, գերված խաչի համար հազար դահեկան կարմիր ոսկի [փրկա]գին տրվեց Լիպարիտի կողմից։

ԿԲ

ՆՈՐԱՎԱՆՔԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ, ՆՐԱՆ ՀՈԳԵՒԱԾԻՆ ՏՐՎԱԾ ԿԱՎԱԶԱՓՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ԵՎ ՈՒՐԻՇ ԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԿԱՏԱՐՎԵՑԻՆ ԼԻՊԱՐԻՏԻ ԵՎ ՕՐԲԵԼՅԱՆ [ՄՅՈՒՍ] ԻՇԽԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Այս բազմերջանիկ Տեր-Սարգիս եպիսկոպոսը[1121] *Տեր-Ստեփանոսի վախճանվելուց հետո կամեցավ եկեղեցի շինել ու ծաղկեցնել սուրբ վանքը։ Բայց մի մարդ էլ կար՝ Հովհաննես անունով*[1122]՝ *Տեր-Ստեփանոսի հորեղբորորդին, որը, տարիներ ի վեր հետամուտ լինելով, կամենում էր դառնալ Սյունիքի աթոռակալ։ Եվ գնալով Աղթամար՝ ձեռնադրվում է այնտեղ։ Չսիրելով հակառակությունն ու եկեղեցու պառակտումը՝ հայրապետների մեջ երջանիկ Տեր-Սարգիսը ամբողջ վիճակը թողնում է Տեր-Հովհաննեսին։ Ինքը վերցնում է վայոց ձոր գավառը, Ճահուկն ու Նախիջևանը՝ որպես սեփական ժառանգություն իր Նորավանքի սուրբ ուխտին, մյուսները տալիս է նրան։*

Տեր-Սարգիսը, գնալով հայոց կաթողիկոս Տեր-Կոստանդին[1123] *մոտ, նրանից ստանում է վիճակը հաստատուն ու անխախտելի պայմանագրությամբ, և շրջաբերական դրություն այս գավառների համար, որպեսզի լինեն Նորավանքի սուրբ եկեղեցուն հաստատուն ժառանգական վիճակ։ Եվ հրացայտ անբավ*[1124] *անեծքներով սահմանափակելով՝ ամրացնում է, որպեսզի կաթողիկոսներից, իշխաններից կամ եպիսկոպոսներից ոչ ոք չհամարձակվի հակառակվել կամ խանգարել այս սահմանված որոշումը։ Նաև կռիվ է բարձրանում սուրբ խաչի համար։ Եվ երկու եպիսկոպոսներն էլ Լիպարիտի*[1125] *ու իր ելիկում որդու հետ գնում են Դվին, Իվանե աթաբեկի մոտ՝*

դատաստանի։ Իվանեն էլ, նստեցնելով իր մեծամեծներին՝ Բուպաքին ու գավառապետին[1126], *Իվան դպելին*[1127], *Մեմնա Ջաղելին*[1128], *մեծ նախարարապետին*[1129], *որ եկել էր [Վրաստանի] թագավորությունից, Վարձեի*[1130] *վանահորը*[1131], *Պղնձահանքի վանահորը, Գարշտեուքի մեծ հայրապետին*[1132], *գագեցի*[1133], *մածնաբերդցի*[1134] *ավագներին և ուրիշ բազմաթիվ մեծամեծ մարդկանց*[1135], *ինչպես նաև Տփղիսի, Անիի, Դվինի դատավորներին*[1136], *Սուրմարիի*[1137] *անվանի շեյխին*[1138], *դրանց հետ էլ՝ Անիի մեծ եպիսկոպոսին, Բջնիի*[1139] *ու Հաղպատի*[1140] *եպիսկոպոսներին, առաջարկում է քննել։ Նրանք էլ, քննելով իրավունքի հարցը, դատում են այսպես. «Մեռածն ու գերվածը նույն պատկերն ունեն. որևէ մեկի կողմից վերակենդանացված մեռելը այլևս իր ծնողների ծննդը չէ, այլ՝ իրեն նորոգողինը. և եթե գերվածն ազատվում է մեկի ձեռքով՝ այնուհետև նրանը չէ, ում պատկանում էր, այլ ազատողինն է։ Արդ՝ ինչպես որ այս աշխարհը սրի ու ձեռքի նվաճումով համարվում է Վրաց թագավորության սեփական ժառանգությունը, այնպես էլ այն խաչը Իվանեի սեփականությունն էր, և երբ 1000 դահեկանի հասնող մեծ գումարով այն հանձնվեց Լիպարիտին ու Տեր-Սարգսին, պիտի լինի Լիպարիտի ու իր եկեղեցու հավիտենական սեփականությունը»։ Ապա դատական այս վճիռը խիստ հաճությամբ հավանելով՝ աթաբեկն ու ազատակույտ իշխանների բազմությունը առաջարկեցին խաչը անվիճելիորեն ու առանց հակառակության համարել Լիպարիտինն ու յուրայիններինը։*

Ապա Տեր-Սարգիս եպիսկոպոսը խորհրդակցում է մեծ Լիպարիտի հետ, և նրանք սկսում են միաբանվածությամբ, մեծարդյուն աշխատանքներով ու անչափ ծախսերով կառուցել Նորավանքի գեղաշեն եկեղեցին և յոթ տարում ավարտում են շենքը՝ ութ խորանով, հայոց վեց հարյուր յոթանասուներկու թվականին[1141]. *և մեծահանդես տոնախմբությամբ, եպիսկոպոսներով, վարդապետներով, աթոռակալ իշխաններով ու տանուտերներով կատարում են սուրբ տաճարի նավակատիքը։ Նրանց հետ էր և մեծ իշխան Բուպաքը, որը և նորակերտ սուրբ քավարանին ընծայում է իր օրինական ունեցվածքից և հայրենական սեփականությունից Աղբերիս*[1142] *աղարակը՝ յոթակատար իրավունքով, իր սահմաններով, ջրար-*

բի և անջրդի վայրերով, Թմաձոր[1143] կոչված մեծ ձորով, Գնջյաց սահմանով, մինչև Գանձակի[1144] սահմանը, որ Հայրյաց տափ է կոչվում։ Եվ հրամայում է գրել հիշատակի վճռադիր՝ անխախտ պայմանով, իր համար հիշատակ հաստատել, ամեն տարի տասը պատարագ անել իր մոր համար։ Եվ սա ավանդում է Տեր-Սարգսին։ Վճռագրի օրինակն էլ սա է.

«Թամարի[1145] որդի Լաշայի[1146] թագավորության, Շահանշահի՝ Հայաստանի և Վրաստանի ամիրսպասալարության ու նրա հորեղբայր Իվանեի աթաբեկության ժամանակ եմ՝ Քրիստոսի մեղավոր ծառա, իշխանաց իշխան Բուլաքս, եկա մեր երջանիկ հայրապետ Տեր-Սարգսի մոտ՝ Նորավանքի այս սուրբ եկեղեցու նավակատիքին և ընծայեցի իմ օրինական կալվածքներից բազումներովս այլազգիներից վերցված ու արյունովս ազատագրված, իմ պարոնների մեծ հրովարտակով էլ ինձ հատկացված Աղբերիս գյուղը՝ իր բոլոր սահմանո[ւներ]ով. այն ամեցի Նորավանքի սուրբ Կարապետ և սուրբ Նախավկա եկեղեցիներին՝ ազատ բոլոր տեսակի հարկերից։ Այսուհետև ոչ ոք՝ ո՛չ յուրայիններից, ո՛չ էլ օտարներից, իրավունք չունի մինչև հավիտյան հակառակվելու սրբան։ Եվ Տեր-Սարգիսն ու մյուս միաբանները հաստատեցին տարեկան տասը պատարագ վարդավառի տոնին իմ մոր հոգու համար։ Արդ՝ եթե մեկը հանդգնի և ջանա հակառակվել այս նվիրատվությանն ու պայմանադրությանը, Հուդայի և Քրիստոսին խաչ բարձրացնողների մասն ու բաժինն ստանա և բոլոր չարագործների հետ՝ սկսած Կայենից մինչև Նեռը, դատապարտվի ու պատժվի, սուրբ երրորդությունից, բոլոր սրբերից և երեք սուրբ ժողովներից նզովված լինի թե՛ մեռած, թե՛ կենդանի ժամանակ։ Իմ ազգականներն ու զավակները այս տեղերի վրա իշխանության [իրավունք] լինեն։ Բայց եթե մահմեդական ավագ փոխարինի և հակառակվել ջանա, իր աստծուց մերժված լինի ու իր փեղամբարից հեռացած, բյուր հազար նալլաթ լինի իր, իր որդիների ու տոհմի վրա՝ սրանից հետո մինչև հավիտյան։ Հայոց վեց հարյուր յոթանասուներկու թվականին»[1147].

Եվ քանի որ սրանից առաջ հափշտակել էին Ագարակի ձոր գյուղը, ուստի Լիպարիտը բազում թախանձանքներով պահանջում է ամիրսպասալար Ջաքարիից և տանում, ցույց է տալիս աթաբեկ Եվտկուզի մանդատը ու գյուղն ազատում է։ [Ջաքարեն] առաջարկում է իր համար Նորավանքում հիշատակի արձանագրություն փորագրել ու նզովքներով հաստատել, որ ոչ ոք չհամարձակվի այն հեռացնել սուրբ եկեղեցուց։ Եվ ինքն էլ իր ձեռքով գրում է այսպես.

«Ես՝ Հայաստանի և Վրաստանի սպարապետ մեծ Սարգսի որդի, Քրիստոսի մեղավոր ծառա Ջաքարե ամիրսպասալարս, Ագարակի ձոր գյուղը վերադարձրի Նորավանքին՝ ազատ բոլոր տեսակի հարկերից. և խնդրեցի սուրբ միաբանության առաջնորդ Տեր-Սարգսից ինձ համար տարեկան տասը օր պատարագ, որը պարտավոր են անխափան կատարել։ Եվ մեզանից հետո ոչ ոք՝ մերոնցից կամ օտարներից, չհամարձակվի սուրբ եկեղեցուց հափշտակել այս գյուղը։ Իսկ եթե հանդգնեն, նզովված լինեն ամենակալ աստծուց ու բոլոր սրբերից, և նրանց մասն ու բաժինը Հուդայի, Քրիստոսին խաչ բարձրացնող մյուսների և ուրացողների հետ լինի, [նրանք] մեր մեղքերին պարտական լինեն[1148]։ Հաստատ է աստծու կամքով։ Հայոց վեց հարյուր վաթսուն թվականին»[1149].

Մեծ և բարեպաշտ Լիպարիտը սրանից հետո էլ սուրբ ուխտի համար բազմաթիվ արդյունավետ գործեր հանդես բերեց, քանի որ Իվանե աթաբեկի կողմից հայրենագիր հրովարտակով նրան էին շնորհվել գավառն ու վանքը՝ թագուհու[1150] և Լաշա Գեորգիի հրամանով։ Դա կնքված էր թագավորի անանցական մատանիով։ Դրա համար էլ Տեր-Սարգիս եպիսկոպոսի միջոցով կառուցելով պայծառակերտ քավարանը՝ զարդարում է սպասքներով, հարստացնում ամեն տեսակի գույքերով ու կալվածքով։ Իր հետ միասին [այդպես են վարվում] և իր որդիները, որոնց մասին ըստ կարգի հիշատակելու ենք։ Սուրբ եկեղեցու վրա իր հիշատակին այսպիսի արձանագրություն[1151] է [փորա]գրել [տալիս][1152].

«Հայոց վեց հարյուր յոթանասուներկու թվականին[1153] աստծու կամքով ես՝ Օրբելյան մեծ [Լիպարիտի] թոռ և Ելիկումի[1154] որդի Լիպարիտս... իմ հայրը մեծ քենի պատճառով հեռացավ հայրենի աշխարհից և Աբխազիայի թագավորից, գնաց Պարսկաստան՝ Եվտկուզ աթաբեկի մոտ։ Եվ սա մեծ փառքով ու գորովագութ սիրով ընդունեց[1155] և նրան պարգևեց

Համիան մեծ քաղաքը։ Ժամանակներ անց նա ինձ որբ թողեց։ Մենք անգիտությամբ խաբված էինք Ներանցից[1156]։ Հետո ծանոթացա իմ հայրենի հավատքին և մանկական հասակում վերստին դարձա սուրբ Գրիգորի լուսավոր հավատքին ու եկա մեծ աթաբեկ Իվանեի մոտ։ Եվ նա, մեծ սիրով ընդունելով մեզ, իմ հայրենիքի փոխարեն ավեց Հրաշկաբերդը՝ իր եկամուտներով, և ուրիշ շատ գյուղեր Վայոց ձորում, Գեղարքունիքում, Կոտայքում ու Կայենում։ Եվ մեծ հույսով շինեցի այս վանքը, որ Նորավանք է կոչվում, Տեր-Սարգսի՝ Սյունյաց եպիսկոպոսի առաջնորդության ժամանակ, կանգնեցրի այս սուրբ եկեղեցին՝ բաղում գանձերի ծախսումով. վերադարձրի ավագ սուրբ նշանը՝ մեծ գումարով, Իվանե աթաբեկի տնից ու հաստատեցի սրա մեջ։ Ազատեցի նաև Ագարակի ձորը՝ իր սահմանով։ Նվիրեցի նաև Տխարբ գյուղը՝ իր սահմաններով, և մեկ թաղ Համասրի գյուղում[1157]։

Իսկ Տեր-Սարգիսը և միաբանները հաստատեցին մեզ համար պատարագ ամեն շաբաթ, մեծ խորանում՝ երեք օր, կիրակի և շաբաթ՝ իմ, Լիպարիտիս, մեղապարտ հոգու, հինգշաբթի՝ իմ կենակից Ասփայի համար։ Արդ՝ ովքեր որ լինեք այս սուրբ եկեղեցու կրոնավորներ, մեզ համար մեղքերի թողություն խնդրեցեք և մեր որդյակների՝ Ելիկումի, Սմբատի ու մյուսների համար՝ արևշատություն և մեր հիշատակը կատարեցեք անխափան։ Եվ եթե մեկը հակառակվի այս գրիս[1158], հոգեբաժին տրված գյուղ[եր]ին կամ ուրիշ կատարածներին ու ջանա այս սուրբ եկեղեցուց հափշտակել, սուրբ երրորդությունից նզովված լինի հոգով ու մարմնով, երեք սուրբ ժողովներից ու բոլոր սրբերից անիծված լինի, սատանայի, Հուդայի, Նեռի և բոլոր ուրացողների հետ գտնվի սարսափելի Քրիստոսի ահեղ դատաստանում, իսկ կատարողներն օրհնված լինեն։ Եվ եթե մահմեդական իշխանավոր փոխարինի ու ջանա շորթել, իր հավատքից մերժված լինի և աստծուց ու իր փեղամբարից հազար-հազար նալլաթ կրի։ Երկինքը նրա համար չանձրևի, հողն էլ նրա համար չպտղաբերի»[1159]։

Եվ ահա երբ այս այսպես կատարվեց, ու բոլոր կողմերից հաջողություն եղավ, այնուհետև և ինքը՝ Տեր-Սարգիսը,

բաղում արդյունավոր գործերից հետո, ինչպես վերն ասացինք, գնաց Երուսաղեմ սուրբ քաղաքը և այնտեղ նահատակի մահով մեռավ։ Նրան հաջորդեց Տեր-Ստեփանոսը[1160], որը և, գնալով հայոց մեծ կաթողիկոս Կոստանդինի մոտ, նույն ուխտը վերստին հաստատեց եպիսկոպոսական աթոռ՝ իր ունեցած թեմով՝ ամբողջ Վայոց ձորով, Նախիջևանով ու Ճահուկ դավառով։ Նաև վերցրեց շրջաբերական գրություն, որը ահավոր նզովքներով եղրափակված ու ամրացված էր, որ ժամանակներ անց ոչ ոք չհամարձակվեր խախտել։ Գրությունն էլ այս տեսքն ուներ...[1161]։

Ապա և սրա ժամանակներում մեծ և արքայաշուք իշխան Սմբատը՝ Լիպարիտի որդին[1162], սուրբ Նախավկայի բակում կառուցում է մի ժամատուն՝ աղոթատեղի, հրաշակերտ կառուցվածքով՝ տաշած վեմերից ու կոփած քարերից։ Նա Տեր-Ստեփանոսին հաջորդած Տեր-Սարգսի[1163] օրոք և դրանից հետո եկեղեցին զարդարեց աննման սպասքներով, [հարստացրեց] ոսկու և արծաթի մեծարժեք գանձերով, ընտիր մետաքսեղենով, սուրբ վանքին որպես սեփական կալվածք նվիրեց երեք գյուղ և այգիներ՝ Ակոռիից[1164], Հողոցիմից[1165], Արփայից[1166], Ջվայից[1167] ու Ամաղվաձորից[1168]։ Իր եղբայրների ու ծնողների հիշատակին էլ [փորա]գրում է այսպիսի արձանագրություն.

«Հայոց յոթ հարյուր տասը թվականին[1169]։ Սա հիշատակի անջնջելի արձանագրություն է իմ՝ մեծ Լիպարիտի որդի իշխանաց իշխան Սմբատիս, որ շինեցի այս աղոթատեղին, վերստին նորոգեցի այս եկեղեցիները և աստվածային այս սուրբ նշանները ու սուրբ նշխարները, որ հավաքեցինք այստեղ, զարդարեցի ոսկի պահարաններով և նախ իմ օրինական կալվածքներից նվիրեցի երկու գյուղ[1170]՝ Ավեշն ու Անապատը[1171], որ խլված էին այս տեղից, այլև Ակոռիի նորատունկ մեծ այգին՝ իր կիրակնաջրով[1172]։ Եվ Տեր-Սարգիսն ու մյուս միաբանները սահմանեցին մեզ հիշատակ մեծ բեմը՝ ամբողջ տարին անխափան պատարագներով՝ կիրակին ու շաբաթը Լիպարիտի, հինգշաբթին՝ Ասփայի[1173] երկուշաբթին ու երեքշաբթին՝ Ելիկումի, չորեքշաբթին՝ Իվանեի, ուրբաթը՝ Փախրադուլայի[1174] համար։

Դարձյալ տվեցի Հողոցիմի այգին ու Ջվայի այգին, և սահմանեցինք այս բոլոր եկեղեցիներում մեկ օր պատարագ անեն մեր տատ Խաթունի համար։ Սրանից հետո տվեցինք նաև Ազատ գյուղը[1175]՝ իր բոլոր սահման[ներ]ով, շրջակա լեռնով ու դաշտով՝ սկսած Քուռակախաղաց կոչված բարձրահայաց սարից մինչև Երևան[1176], Հողոցիմ, Ճավաձոր[1177], մինչև Ակոռիի գլուխը։ Սրանց հետ էլ տվեցի Ծաղկաձորի[1178] իմ ձեռքով տնկած այգին՝ իմ եղբորորդի Բուրթելի[1179] հոգու համար, որը երիտասարդ հասակում սպանվեց պատերազմում, Խալանդրաց[1180] աշխարհում, դաշտում խազիրների, որ այժմ ղփչաղներ են կոչվում։ Եվ նրա համար սահմանեցինք պատարագ տասնհինգ օր, որ ամեն տարի անխափան կերպով կատարեն, տասը օրը Դավթի, Հակոբի և ուրիշների մեծ տոներին, իսկ հինգ օրն էլ՝ նոր կիրակիին։ Արդ՝ եթե մեկը՝ մերոնցից կամ օտարներից, ավագներից կամ շարքային պաշտոնյաներից, մեր այս հիշատակը ջանա խափանել և որևէ պատճառով մտածի հակառակվել կամ հափշտակել, աստծու ամենաստեղծ հրամաններով, անլուծելի անեծքներով Բելիարի[1181] ու իր սերնդի և օձի հետ նզովված լինի, առաքյալներից, մարգարեներից, հայրապետներից, նահատակներից ու սուրբ հրեշտակներից մերժված և անիծված լինի, Կայենի, Քամի[1182], Կորխի և Դաթանի ու Աբիրոնի[1183], Հեզաբելի[1184] ու Գեեզիի[1185], Հուդայի ու Արիոսի[1186], դավաճան Վասակի[1187] հետ դատապարտելով՝ անշեջ հրով պատժվի իր որդիներով. նրա անունն ու հիշատակը ջնջված լինեն աշխարհից. նա մեր մեղքերին պարտական լինի։ Իսկ կատարողներն օրհնված լինեն։ Եվ եթե մահմեդական իշխանություն փոխարինի ու խափանել ջանա, աստծուց ու իր փեղամբարից մերժված լինի, և նրա օրինականն իր համար անօրինական լինի։ Երկինքը նրա [վրա] կրակ մաղի, հողը նրան փուշ բերից և նա իր որդիներով ու տոհմով ջնջվի կյանքից. ամե՛ն»[1188]։

Դարձյալ՝ որոշ օրեր անց մի աղնվական մարդ, Բաղքի իշխանական տոհմից, Ջուրջյանց թոռը՝ Մահևան անունով,— որի նախնիներին Իվանե աթաբեկը ավերման ժամանակ բերել-բնակեցրել էր Վայոց ձորում ու կալվածք տվել Նորոբերդը[1189]՝ իր մյուս ագարակներով,— անզավակ լինելով՝ իր կալվածքը բաժանում է իր եղբորորդ Ամիրայի հետ, վերցնում

է բերդի կեսը և Վարդենյաց կողմի դաշտամասը, որչափ որ ջուր է հասնում, և գալով սուրբ ուխտը, Տեր-Սարգսի մոտ, որեղպում է սուրբ նշանը և իր հայրենաբաժին Նորոն, տունը, Արփայում եղած այգիներն ու ամբողջ ունեցվածքը ընծայում է սուրբ նշանին։ Եվ իր հիշատակին արձանագրություն է [փորա]գրում ու ահավոր ու մեծամեծ նզովքներով եզրափակում ու ամրացնում է, որ հետագայում ոչ ոք չհամարձակվի եկեղեցուց հափշտակել այն հոգեբաժին նվերը, և սահմանում է իր համար ամեն տարի քսան օր պատարագ կատարել անխափան. «Եվ արդ՝ եթե մեծամեծներից կամ փոքրավորներից, ավագներից կամ շարքային պաշտոնյաներից որևէ մեկն այս նվիրատվություններին հակառակ կանգնի ու մտածի Նորավանքի սուրբ եկեղեցուց ինչ-որ պատճառներով խլել, և կամ տեղի առաջնորդներից կամ [մյուս] կրոնավորներից ծուլանան պատարագը կատարել ու անհոգության մատնել, այնպիսիները ջնջվեն կյանքի մատյանից և սատանայի, Հուդայի ու բոլոր չարագործների մասն ու բաժինն ստանան և աստծուց ու բոլոր սրբերից նզովված լինեն»։

Եկեղեցու նկատմամբ բազմաթիվ ուրիշ արդյունավոր գործեր են անում նաև ոմանք բնիկ ազատներից և ընտիր տանուտերերից, ինչպես՝ Ախթամարյան տոհմի սերունդները, որ հին ժամանակներից բնակված էին Արփա գյուղում, իրենց տիրույթներից նվիրում են Դայակի քարի[1190] այգու վերին բաժինը, և ուրիշ շատ երախտիք են ցուցաբերում Ախթամարն[1191] ու Արփասլանը[1192] ու իրենց հիշատակին արձանագրություն են [փորա]գրում, պատարագ [սահմանում][1193]։ Նույնպես էլ Շնորհավոր անունով մի քահանա[1194] շատ տիրույթներ նույն գյուղից ու հազար դրամ է ընծայում և իր [հիշատակի] համար պատարագ սահմանում։

Այն ժամանակ չար սատանան սկսեց հրահրել եկեղեցու մեջ։ Ոմանք գլուխ բարձրացրին, չարությունն մտածելով մեր սուրբ ու առաքելական աթոռի նկատմամբ՝ սկսեցին ուղուց դուրս գալ ու խախտել Սյունյաց մեծաթեմ գավազանի սահմանը, որը հին ու շատ երկար ժամանակներից հաստատված կա առաքելական ու հայրապետական կանոն[ներ]ով։

Պռոշ անունով մի իշխան[1195], վասակի որդին, ուզում էր վաչոյց ձորի իր գավառն ու գյուղերը խլել և ուրիշ եկեղեցու տիրույթ դարձնել։ Երնջակ գավառից Հովհաննես անունով[1196] մի աներկյուղ մարդ՝ Ալրակունիք գյուղացի[1197] Սեդրակ անունով մի քահանայի որդի, անզգամաբար մոլեգնելով սրնափառության ու չարության ախտից, գնում է հայոց երջանիկ կաթողիկոս Տեր-Կոստանդինի մոտ ու նրան սուտ խոսքերով խաբելով, եպիսկոպոս է ձեռնադրվում, գալիս է Երընջակի վանքը։ Նա հորինել էր այսպիսի պատճառներ. իբր թե այս աթոռը նույնպես եպիսկոպոսական է, որովհետև այստեղ են գտնվում գերեզմաններն այն հայրապետների, որոնք բերդի ամրության պատճառով դիպվածաբար եկել էին Սյունյաց եպիսկոպոսների ժամանակներում ու այստեղ վախճանվել։ Մի հազարապետ էլ, այլազգիներին օգնական դարձնելով, բռնությամբ հափշտակեց Երնջակ գավառը։ Այդ պատճառով եպիսկոպոսներից Տեր-Սարգիսը[1198]՝ Նորավանքից, և Տեր-Հովհաննեսը[1199]՝ Տաթևից, Սմբատի եղբայր, մեծ ու բարեպաշտ իշխանաց իշխան Տարսայիճի[1200] առաջարկությամբ ու օժանդակությամբ եկան, գնացին հայոց մեծ կաթողիկոս Տեր-Հակոբի[1201] մոտ,— որը հաջորդել էր Տեր-Կոստանդինին[1202],— և նրան ծանուցեցին ահավոր աղետի ու առաքելական թեմի պառակտման մասին։ Իսկ նա լսելով տեղից վեր է թռչում, հրամայում է գրել թուղթ՝ ահավոր նզովքներով, կարգալույծ է անում[1203] Երնջակում գտնվող եղկելի Հովհաննեսին։ Նմանապես մեղադրական թուղթ է գրում Պռոշ իշխանին և հրամայում է հրաժարվել այդ մտադրություններից, հակառակ դեպքում ցավագին անեծքներ կժառանգի։ Եպիսկոպոսները, ահա այսպես հոգ տանելով, այնտեղից վերադառնում են։ Գալով իրենց տեղերը՝ նախ հանձնում են Պռոշի գրությունը։ Նվ նա, ըստ իր հանճարեղ խելքի ու խորահույս հավատքի, մեծ զղջմամբ մեղքերը խոստովանելով, թողնում է հակառակությունը և իր ձեռքով գրված պայմանագրով հաստատում է երդման պայմանը, որ այլևս ինքը կամ յուրայինները չեն մտածի այնպիսի բանսարկություն. թեմը ետ է դարձնում և օրհնվում [Տեր-Սարգիս ու Տեր-Հովհաննես] եպիսկոպոսների կողմից։ Իսկ մյուսին, որը որջ էր մտել Երնջակում, բռնեցին, ցույց տվեցին նզովաբեր գրու-

թյունը, զրկեցին եպիսկոպոսական ու քահանայական կարգից և կրկին հաստատեցին գավառը [թեմի] ամբողջականության մեջ։ Տեր-Հակոբից բերած շրջաբերական գրության պատճենն էլ այս է...[1204]։

ԿԶ

ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ՄԵԾ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ, ՈՐՊԻՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅՍ ԿՈՂՄԵՐԸ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ. ԱՅԼԵՎ ԲԱԶՄԱԹԻՎ ԶՐՈՒՅՑՆԵՐ ՁԱՆԱԶԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՈՒ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մեր Հայոց աշխարհի ու Վրաստանի նահապետության սկզբնավորման ժամանակ մեր սերնդի նախնի ու առաջին ցեղապետ Թորգոմը ութ շատ քաջ ու հսկաաձևակերպ որդիներ ուներ, որոնցից ավագագույնը Հայկն էր, երկրորդը՝ Քարթլոսը, երրորդը՝ Բարդոսը, չորրորդը՝ Մովկանը, հինգերորդը՝ Լեկանը, վեցերորդը՝ Հերոսը, յոթերորդը՝ Կովկասը, ութերորդը՝ Եգրեսը։ Ապա Թորգոմը, իր տիրույթները որդիներին բաժանելով, այս Հայաստան աշխարհը՝ իր բոլոր սահմաններով, տալիս է Հայկին, իսկ հյուսիսային կողմի անտառոտ աշխարհը[1205]՝ Քարթլոսին և մյուս եղբայրներին։ Քարթլոսը գնաց դեպի Արմազ կոչված լեռը[1206] և այնտեղ իր համար տուն շինեց, մի հարմար տեղում էլ անառիկ ամրոց։ Բերդը կոչեց Օրբեթ[1027]։ Եվ այն աշխարհը՝ Խունանից[1208] մինչև Սպերի ծովը[1209], նրա անունով անվանվեց Քարթլ։ Ապա երկար ժամանակների ընթացքում կատարված սերնդափոխությամբ Քարթլի նահապետությունը եկավ-հասավ մինչև Պարսից Քեքավուս կոչված Խոսրով Մեծի[1210] թագավորության ժամանակները։ Վրացիների համար ընդունված էր իրենց զեկավարին կոչել տանուտեր, որովհետև [դեռ] թագավոր չունեին։ Տանուտերը նստում էր Քարթլի մեծ քաղաք Մցխեթայում[1211], որը կառուցվել էր Քարթլոսի ավագ որդի Մցխեթայի կողմից։ Վրացիները, այդ ժամանակ նեղվելով պարսից բռնակալ թագավորից, կամենում էին մահն ընտրել կյանքի փոխարեն։ Իսկ հիշյալ ժամանակամիջոցում Պարսկաստանի, Վրաստանի և Աղվանքի տիրակալ Աբրիտոնի[1212] հրամանով Վրաց աշխարհին պետ էր նշանակված Արդարմոս պար-

սիկը[1213]։ Սա այն Արդարմոան էր, որ վերաշինեց Մցխիթան, պարսպապատեց կրաշաղախ քարերով և պարիսպ դրեց նաև Արմազ լեռնից մինչև Կուր գետը։ Սրա մահից հետո չորս մարդ էին իշխում Վրաստանի վրա. և այնտեղ առհասարակ խռովություն ու խառնակ շփոթություն էր տիրում։ Դա նախ Քեքավուս Խոսրովի, ապա և՝ նրան հաջորդած Քվե Խոսրովի ժամանակում էր։ Եվ վրացիները մեծ վշտի մեջ էին, բոլոր կողմերից հուսահատված։

Հենց այդ ժամանակներում կռիվ, շփոթ ու մեծ խռովություն ընկավ Ճենաստան աշխարհի[1214] թագավորության մեջ, որը գտնվում է արևելյան կողմում, Խալանդրաց աշխարհից[1215] այն կողմ, Խազրաց[1216] և Հոնաց[1217] աշխարհների սահմանակցությամբ՝ երկայնակի ձգվելով մինչև Եմաղոն լեռը[1218]։ Ճենբակուր կոչված թագավորի մահից հետո թագավորազունները սկսեցին պատերազմել միմյանց դեմ։ Եվ երբ մի կողմն ուժեղ դուրս գալով հաղթեց, փախուստի դիմեց մյուսը, որի [գլխավորը] հաջողակ մարդ էր՝ գեղեցկակազմ, ուժեղ, մարմնեղ, հասակով երիտասարդ։ Նա, վերցնելով իր ընտանիքը, թագավորական զինվորական ջոկատով ու գանձերով, օդի մեջ խաղացող երիվարներով սրաթռիչ կերպով անցավ բազմաթիվ երկրներ։ Այդ փախստականներն այնքան ահավոր կերպարանքով էին, որ ոչ ոք չհամարձակվեց դեմ ելնել նրանց։ Եվ անցնելով Դարիալի կիրճը՝ կարծես երկնային թեւադրանքով, եկան Քարթլի աշխարհը, Մցխիթա տանուտիրոջ մոտ, երկիրը տեսան պարսիկների կողմից նեղված ու մեծ վտանգի մեջ շփոթված։

Ապա տանուտիրոջ ու ավագագույն մարդկանց հետ խոսելով՝ ասացին. «Մենք Ճենաց թագավորական տնից ենք, բաժանվելով մեր եղբայրներից՝ եկանք այստեղ և հավանեցինք ձեր ամուր աշխարհը։ Ձեր աստվածները ձեր այդ վըշտի համար մեզ բերեցին ձեզ օգնության։ Արդ՝ մեր կամքն է՝ կա՛մ կարող ենք դադար առնել պարսից թագավորության մեջ, կա՛մ անցնել հունաց ինքնակալության կողմը։ Եվ եթե ձեզ հաճելի ենք թվում, մեզ համար բնակության տեղ տրամադրեցեք, մնանք այստեղ ու ձեզ ազատենք նեղիչներից, եթե ոչ՝ մեր ճանապարհով գնանք [այնտեղ], ուր աստված մեզ համար կհոգա»։ Իսկ տեղի ավագ տանուտերերը, տեսնելով

այդպիսի քաջակորով և ուժեղ մարդկանց ու լսելով նրանց հաճելի խոսքերը, մեծապես ուրախացան այդ եկվորների վրա, մեծ խրախճանք սարքեցին և բարձր փառքով ու մեծաշուք պատվով ընդունեցին նրանց և շատ-շատ սիրեցին։ Անառիկ Օրբեթի ամրոցն էլ, որ կառուցվել էր Քարթլոսի ձեռքով, բնակության տուն ու պաշտպանվելու տեղ տվեցին նրանց և բազմաթիվ մեծամեծ ավաններ ու բերդեր հանձնեցին՝ որպես ժառանգություն։

Ապա նրանք, այնտեղ դադար առնելով, բնակություն հաստատեցին Օրբեթում և բերդի անվան պատճառով դրանից շատ ժամանակ անց կոչվեցին Օրբուլներ, այսինքն՝ օրբեթեցիներ, քանի որ այնտեղի ժողովրդի սովորությունն է իր իշխաններին բնակատեղի անունով կոչել, ինչպես Մեթեուլնեըը, Մեփեուլները և Մրաջուլները, Հերեթից՝ Հերիսթավները, Ջավախեթից՝ Ջավախուլները, Կախեթից՝ Կախեցիները, Լեխթից՝ Լեխթիմանները և այսպես ուրիշ շատերը։ Մինչև այսօր էլ այս պատճառով Օրբելք է կոչվում այն տոհմը, որը առաջ կոչվում էր Ճենաուլք, այսինքն՝ Ճենացիք։ Եվ երբ այս այսպես եղավ, իրենք նեցուկ կանգնեցին Վրաստանին. զորք հավաքելով դեմ դուրս եկան պարսիկներին, հարձակվեցին բոլոր նեղիչների վրա՝ կոտորեցին ու հալածեցին նրանց։ Երկրում խաղաղություն տիրեց։ Դրա համար էլ նրանց կարգեցին ամբողջ Վրաստանի սպարապետ ու զորագլուխներ։ Եվ Վրաստանի առաջին թագավոր Փառնավազի[1219] թագավորության ժամանակ Օրբելյանները նրա կողմից առավել պատվի արժանացան։ Վրաց աշխարհում ոչ ոք, բացի միայն թագավորից, չկար նման կամ հավասար նրանց։ Ահա այն, ինչ որ աղոտ կերպով իմացանք «Վրաց պատմություն»-ից։ Սակայն Գեորգի թագավորի[1220] նախանձի պատճառով նրա կողմից այդ տոհմն ամբողջովին վերացվեց Վրաց աշխարհից. նոանց անունները ջնջեցին իրենց պատմություններից, բոլոր գրքերից ու եկեղեցիներից։ Ուստի և մենք պրպտելով և ուսումնասիրելով իմացանք շատից քիչը գիտակ մարդկանցից, այլևայլ տեղերում մնացած հիշատակություններից, ինչպես հին նախնիների ավանդություններից, որոնք հայրերը որդիներին էին հաղորդել մինչև մեզ։ Եվ քանի որ Օրբելյանների նախնական պատմությունը, ինչպես նաև Վրաստանում կատարած

նրանց բոլոր քաջությունների ու [մյուս] երևելի գործերը չեն հիշատակված «Քարթլի կյանք»[1221] կոչվող ժամանակագրության մեջ, ուստի և մենք չիմացանք իրողությունների բնույթն ու հաջորդականությունը, որ ինչպես կարդն է շարադրեինք մեր այս գրքում։ Բայց ինչպիսի սակավ հիշատակություն էլ որ գտել ենք հայերենով գրված գրքերում, կշարադրենք այստեղ, դրա հետ միասին՝ նաև այն, ինչ վերաբերում է այս տոհմի վախճանին, որը մեզ հավաստի կերպով տեղեկացրեց Մխիթար Անեցու գեղեցիկ Պատմությունը[1222]։

Արդ՝ հայոց չորս հարյուր իննսունութ թվականին[1223], Վրաստանի Դավիթ թագավորի[1224], Հայաստանի՝ Վանանդում նստող Գագիկ Շահնշահի[1225] թագավորության և Բյուզանդիայի Մոնոմախի[1226] կայսրության ժամանակ հագարացին իսմայելացիները, թուլացած տեսնելով քրիստոնյա ժողովուրդներին, իրենց կրոնակիցներին իմաց տվին Խորասանում, Խորեզմում, Ֆարսում, Քիրմանում, Բուխարայում, Մազանդարանում, Իրաքում՝ Բաղդադում և Բասրայում, Առանում և Ատրպատականում, հավաքվեցին պարսիկների, խազիրների, խորեզմացիների, արաբների, ինչպես և թուրքեստանցի սկյութացիների բազմություններ, եկան, անթիվ ու անհամար զորքերով բանակեցին Կարնո դաշտում[1227], մտածեցին մի գաղափար, որ, [սակայն], չկարողացան իրագործել, այն է՝ Հայոց, Վրաց և Հունաց աշխարհներից վերացնել ու ջնջել քրիստոնյաների կրոնը և անունը։

Ապա այդ աշխարհակործան գործի դառնահռչակ լուրը ամենից առաջ հասավ Բյուզանդիայի կայսերը, և սարսռալի ահուդողը համակեց յուրաքանչյուր մարդու էությունը։ Այդ պատճառով Կոմնենոս զորավարին Տրապիզոնի զորախմբով ուղարկում են այս կողմ և Հայաստանից ու Վրաստանից միասնական օգնություն խնդրում, որպեսզի թերևս կարողանան ազատվել հարավցիների ալեկոծուն ու բորբոքուն բարկությունից։ Դավիթ թագավորն ու Գագիկը այդ լսելով չհամարձակվեցին իսմայելացիների զորքի դեմ ելնել, այլ մեծ աղաչանք-պաղատանքներով համաձայնեցրին քաջ ու անպարտելի Լիպարիտ Օրբելյանին[1228] դնալու, միանալու հուսական զորքերին՝ վրա հասնող պատերազմում [թշնամուն]

ընդդիմանալու համար, իսկ իրենք թաքնվելով պատսպարվեցին [իրենց] երկր[ներ]ի ամուր տեղերում։ Ապա Լիպարիտը հանձն առնելով [դիմում է Դավթին ու] անվախ սրտով ասում. «Ես գնում եմ այլազգիների դեմ և կյանքս դնում եմ քրիստոնեական մեր հավատքի համար ու աստծու զորությամբ կա՛մ կվերադառնամ, կա՛մ կմեռնեմ Քրիստոսի համար։ Բայց, ո՛վ թագավոր, իմ հետնորդներին հանձնում եմ քեզ, որ վրաց չարաբարո իշխանավորների նախանձից ղըրդված՝ նրանց նկատմամբ նենգություն չանես և մեր պատվից ու սիրույթներից չզրկես»։

Լիպարիտը, որ տիրում էր թագավորության կեսին, այս ասելուց հետո ինքն անձամբ իր ազատների ու զորքի հանդես կազմակերպեց։ Այդ հանդեսով անցան յոթ հարյուր մեծամեծ ազատներ, որոնք իր իսկ ստորադրյալներն էին, և տասնվեց հազար մարտիկներ։ Արքունի զորքերից էլ վերցրեց տասը հազար մարդ։ Գնաց դեպի Վանանդ, Կարուց դաշտը[1229], [որտեղ] նրանց միացավ հունական զորքը՝ տասնհինգ հազար մարդով։ Այսպիսով բոլորը միասին քառասնմեկ հազար հեծյալներ էին։ Եվ քանի որ այլազգիները մինչ այդ ավերել էին Որդրու[1230] գյուղն ու ասպատակել շրջակա բոլոր գավառները, բանակ էին դրել նույն դաշտում։ Հակառակորդները միմյանց բախվեցին լուսաբացին՝ ճակատամարտելով եռակարգ՝ առաջապահ, միջնապահ և վերջնապահ շարքերով։ Իսմայելացիների անթիվ բազմության հանդեպ Լիպարիտի զորքը չնչին էր երևում։ Նրա զինվորները նրանց մոտ թվում էին ջուր մատակարարողներ և [մարտում ընկածների] զենքերը հավաքողներ[1231]։ Անպարտելի առաջամարտիկ քաջ Լիպարիտը այդ տեսնելով քաջալերեց իր զորքին՝ ասելով. «Մի՛ վախենաք, այլ միայն զոտեպնդվեցե՛ք Քրիստոսի անվամբ և խաչակնքվեցե՛ք խաչի նշանով, և մերը կլինի հաղթանակը»։ Ու ինքն իջնելով ձիուց ծունր դրեց, խաչակնքեց սուրը խաչի նշանով, ապավինեց Քրիստոսին, պարանոցին կապեց փրկչական խաչի մասունքից ու այդպես [նախապատրաստվելով և] զինվելով հեծավ արագաքայլ ձին։ Ոսկեզարդ վահանը գցել էր թիկունքին, ճկուն նիզակը բռնել ձախ ձեռքում, պողպատե երկսայրի լայն սուրը՝ աջ ձեռքում, կոնքն ի վար [կախել] ահավոր վաղրը՝ դարբնի կռա-

նի կամ քարհատի կոցավոր սակրի նման։ Անցնելով պատերազմողների համախմբված տեղը՝ հպարտորեն արշավում էր այս ու այն կողմ։ Նրա ոսկեկուռ զրահից ու սաղավարտից ճառագայթներ էին ցայտում՝ ինչպես արեգակից։

Առյուծի նման մռնչում ու գոռում էր, հակառակորդի կողմից մենամարտիկներ էր պահանջում՝ ասելով. «Ես աբխազացի Լիպարիտն եմ, պարսից և արյաց քաջեր, եկե՛ք նախ միմյանց հետ մենամարտենք»։ Չնայած որ շատ անգամ պահանջեց, բայց ոչ ոք չհամարձակվեց նրա դեմ դուրս գալ։ Լիպարիտը որտեղ որ սլանում էր, արծվի նման էր վրա հասնում։ Նրանք ետ-ետ գնալով իրար ոտնատակ էին տալիս, տրորում։ Այնուհետև Լիպարիտը տեսնելով, որ հակառակորդը սրտաբեկվեց, ուժն էլ սասանվեց, դիմեց իր զորքին, քաջալերեց ու առաջ շարժեց։ Ահեղ աղաղակ բարձրացնելով՝ [կողմերը] խառնվեցին միմյանց. ճակատամարտ տեղի ունեցավ այնպիսի դղրդյունով, որ թվում էր, թե ամպերի որոտում է, կայծակների ճայթյուններ են։ Ինքը՝ Լիպարիտն էլ որպես հրախառն ամպ մտնում ու ելնում էր՝ շատերին կայծակնահար անելով. և ինչպես որ հրդեհն է եղեգնուտով փոթորկալից անցնում, ճեղքում էր հակառակորդի զորքը, անցնում այն կողմ և աջ ու ձախ արյան գետեր էր հոսեցնում. դիակների կույտեր էր առաջացնում. այդ այլազգիներին ջոկատ առ ջոկատ մասնատում էր և ինչպես նապաստակների խմբեր դիաթավալ անում գաշտի մեջ։ Եվ այսպես կոտորելով՝ քաջ Լիպարիտը մեր աստված Հիսուս Քրիստոսի զորությամբ հաղթեց իսմայելացիներին, կենդանի մնացած սակավաթիվ մարդկանց էլ փախուստի մատնեց։

Եվ երբ կեսօր եղավ, մեծաջան տանջանքներից ու չարչարանքներից հետո վերադարձան՝ մեծ գոհունակությամբ ու շատ ուրախությամբ։ Բայց վրաց անիծյալ ու տիրասպան ազատները, վախենալով Լիպարիտի մեծ աղեղնությունից, նրա մեծավոր զորագլուխների հետ խորհրդակցելով, հանկարծակի կտրեցին նրա ձիու ջիլը ու Լիպարիտին գետին ղցեցին։ Բազմությամբ շրջապատելով տեղնուտեղը սպանեցին նրան[1232] և քրիստոնյաների համար խավար ու սուգ բերեցին։ Իսմայելացիներն այս իմանալով մեծ խնդությամբ ետ դարձան և սրերը գործի դնելով կոտորեցին վրաց զոր-

քը. ոմանք փախչելով ցրիվ եկան երկրում։ Եվ դա Հայոց ու Վրաց երկրների համար կորստաբեր վախճան եղավ, որովհետև բոլոր գավառներին տիրեցին սելջուկ-Թուրքերը[1233]։ Մի փոքր ժամանակ անց, հինգ հարյուր տասներեք թվականին[1234], վերջերին Անին՝ Ալփասլան սուլթանի[1235] գլխավորությամբ, դրավեցին նաև Կարսը, Շիրակի, Վանանդի[1236], Արշարունյաց[1237] բոլոր գավառները, Արարատյան և Սյունյաց աշխարհները, Բաղքը, ընդհանրապես բոլոր տարածքները, մինչև Տփղիսի դարպասները։

Այն օրը քրիստոնյաների մեծ կորստի և համընդհանուր կործանման այսպիսի դուռ բացեց վրաց անիծյալ և տիրասպան զորքը[1238]։ Բայց ես Լիպարիտի սպանությունը չեմ համարում իր անձի կորուստ, այլ՝ մեծ փրկության գյուտ, որովհետև իրեն նվիրաբերելով Քրիստոսի հոտին՝ նա չափազանց բարձրացավ և անմեղությամբ յուրայինների կողմից սպանվելով՝ նահատակի արյամբ պսակվեց ու գնաց թագավորների թագավոր Քրիստոսի մոտ՝ նրանից ընդունելու վարձ և պարգևներ իր ծանր չարչարանքի դիմաց։ Այնուհետև հավատարիմ ստորադրյալները մեծ ողբով վերցրին այդ գեղեցիկ երիտասարդի ու անպարտելի հերոսի դիակը, տարան Կարս, դագաղ պատրաստեցին, արքայական ճոխությամբ զարդարեցին ոսկեհյուս զարդերով, տեղափոխեցին իրենց մեծ ու նշանավոր Բեթանիա վանքը[1239], որը նրա նախնիների կողմից կառուցված էր որպես իրենց գերեզմանատուն։

Եկան նաև Դավիթ թագավորն[1240] ու իր մեծամեծները, նրա վրա լաց ու կոծ արեցին, գերեզման դրեցին իր նախնիների մոտ։

Օրբելյանների տոհմի աստիճանն ու բարձր դիրքը արքունիքում այսպիսին էր. լինել բոլոր զորքերի սպասալար ու ամբողջ Վրաց աշխարհի կառավարիչ, արքունի բոլոր գործակալների վրա իշխող, ունենալ սեփական տասներկու դրոշ, յուրաքանչյուր դրոշի տակ՝ հազար զինվոր։ Եվ քանի որ, ըստ սահմանված կարգի, թագավորի դրոշը սպիտակ գույնի հյուսվածքից էր ու վրան կարմիր նշան էր կրում, սրանց առաջարկվեց պահել կարմիր գույնի դրոշ՝ վրան սպիտակ նշան, այլև՝ թագավորի առաջ շրջելիս թե կանգնելիս ձեռքում բռնել առյուծագլուխ

գավաղան, ճաշի ժամանակ նստել հրավիրյալներից առաջին, բոլոր մեծամեծ նախարարներից վեր ու ճաշել արծաթե սեղանից։ Սրանք նաև թագավորի թագադիրներն էին։

Եվ այսպես երկար ժամանակ անց, Գեորգիի[1241] որդի հզոր Դավթի[1242] թագավորության շրջանում Օրբելյան Իվանե մեծ սպասալարը[1243] ռազմականապես շատ ուժեղացավ ու ընդարձակեց Վրաստանի սահմանները՝ պատերազմ մղելով սելջուկ-թուրքերի դեմ։ Սրանցից ետ վերցրեց Տփղիսը, Տավուշը[1244], Գագը[1245], Տերունականը[1246], Լոռին[1247] և Անին՝ հինգ հարյուր յոթանասուներկու թվականին[1248]։ Այդ պատճառով էլ թագավորի կողմից շատ սիրվեց ու հարգվեց։ Ի հավելումն իրենց տիրույթների՝ թագավորի կողմից նրան տրվեց Լոռին՝ իր գավառով, Ագարակը[1249]՝ որպես ապարանքի տեղ, և Շամշուլդեն էլ, որ իրենց սեփականությունն էր, վերստին տրվեց՝ գավառով հանդերձ։ Եվ այս ամենը արքունական կնիքով կնքված մեծ հրամանագրով հաստատվեց որպես սրանց սեփական ժառանգություն։ Իսկ երբ հզոր Դավիթը մեռավ, թագավորական գահը գրավեց նրա որդի քաջ Դեմետրեն[1250], որը գովելի գործերով գերազանցեց իր նախնիներին՝ թագավորելով երեսուներեք տարի։ Սա առավել ևս սիրեց ու հարգեց Իվանեին և նրա որդի Սմբատին։ Սրա օրոք Իվանեն ու Սմբատը վերջերին խունանը, որը շատ տարիներ գտնվում էր սելջուկ-թուրքերի ձեռքում։ Այն նույնպես հաստատվեց նրանց սեփական ժառանգություն՝ հինգ հարյուր յոթանասուն-յոթ թվականին[1251]։ Սրանից հետո Իվանեն վախճանվում է ծեր հասակում, նրա իշխանությունն անցնում է իր որդի Սմբատին։ Իմացա՛ծ եղիր, որ սրանք խնամիությամբ կապված էին Վրաստանի թագավորների և Հայաստանի Կյուրիկյան թագավորների հետ, որոնք բագրատունիներ էին։ Այդ պատճառով վերջիններից վերցրին բագրատունյան անուններ, ինչպես՝ Սմբատ և Իվանե, այսինքն՝ Հովհաննես, իսկ Լիպարիտ, Ելիկում և Բուրթել անունները ժառանգել էին հին նախնիներից, որոնք ճենաց աշխարհից էին եկել։ Մյուս անուններն էլ վրացիներից վերցրին։

Դարձյալ՝ մյուս Իվանեն՝ Աբուլեթի որդին, վերցնում է Դմանիսը[1252]։ Բազմաթիվ հաջողակ գործերից ու մեծամեծ սխրանքներից հետո մեռնում է Դեմետրե թագավորը վեց

հարյուր յոթ թվականին[1253]։ Թագավորությունն ստանձնում է նրա որդի Դավիթը՝ հոր նման ուժեղ ու իմաստուն մի տղամարդ։ Ապրելով երկու տարի՝ սա ևս մեռնում է[1254]։ Մեռնելիս կանչում է կաթողիկոսին, մեծամեծ նախարարներին, իր եղբայր Գեորգիին, փոքրիկ որդի Դեմնային, դնում է իր առջև գլխավոր սրբապատկերը,[1255] փրկական խաչը, սուրբ Ավետարանն ու ասում. «Ո՛վ Վրաստանի մեծամեծներ, դուք ինքներդ քաջ գիտեք, թե իմ հայրը ձեզ համար ինչպիսի՛ ջանքեր թափեց և կրկին նորոգեց այս թագավորությունը ու մեռնելիս մեծամեծ պատվիրումներով և գրությամբ ինձ ավանդեց մեր թագավորությունը, բայց ես էլ այժմ մահամերձ եմ։ Իմ այդ Գեորգի եղբայրը ոչ մի հաշիվ ու գործ չպիտի ունենա այս աթոռի հետ։ Արդ՝ ինչպես որ իմ հայրն ինձ հանձնեց իր այս ժառանգական արքայական գահը, նույնպես էլ ես իմ զավակ Դեմնային եմ հանձնում այն՝ ձեր բոլորի ներկայությամբ։ Եվ դու, Գեորգի՛, եղբայր իմ, առայժմ մնա իմ տեղում, կատարիր մեր երկրի զորապետությունը և վայելիր միայն քո բաժին ժառանգությունը, որ մեր հայրը քեզ տվեց, մինչև որ չափահաս դառնա իմ այս մանուկը»։ Ապա առաջ կանչելով Օրբելյան Սմբատի որդի Իվանեին՝ երդվեցնում է նրան՝ հետևելու մանկան համար [թողած] կտակի կատարմանը։ Եվ բռնելով մանկան ձեռքը՝ դնում է Իվանեի ձեռքը մեջ ու հանձնում նրան։ Մյուս մեծամեծներին էլ երդվեցնում է՝ չդավել տղային, այլ երբ չափահաս դառնա, նրան օծել թագավոր։

Այս կատարելուց հետո վախճանվում է ու թաղվում իր նախնիների մոտ, Գելաթում[1256]։ Այդ օրվանից մանուկն ապրում էր Իվանեի տանը, դաստիարակվում ու աճում։ Իսկ Գեորգին սիրաշահում էր մեծամեծ իշխաններին, ինչպես և կաթողիկոսին՝ կամենալով թագավոր դառնալ։ Սակայն չէր համարձակվում այդ մտադրությունը հայտնել մեծ Սմբատ Օրբելյանին ու նրա Իվանե և Լիպարիտ որդիներին։ Ապա մեկ ամիս հետո Գեորգիի մոտ հավաքեցին բոլոր մեծավորներին ու ազատներին։ Նրանց հետ ներկայացավ նաև Իվանեն՝ յուրայիններով։ Այստեղ Գեորգին հայտնեց իր մտադրության մասին, խիստ սիրաշահումով համոզեց նրան՝ ասելով, թե «երբ իմ եղբորորդին չափահաս դառնա, նրան

ես չեմ զրկի, այլ, եղբորս կտակի համաձայն, կդնեմ թագավորական այս գահին»: Այդ պատճառով բոլորն էլ համաձայնության գալով՝ Գեորգիին օծեցին թագավոր, որը և բոլոր հաղթական գործերում հաջողակ եղավ ու չափազանց խելոք:

Նրա տիրապետության օրոք թագավորությունը շատ ընդարձակվեց: Հենց ինքն անձամբ բազում պատերազմներում ղեկավարեց զորքերին: Իր քաջարի Իվանե սպասալարի միջոցով սարսափեցրեց պարսիկներին, արաբներին ու թուրքերին: Այս նույն Գեորգին վեց հարյուր տասը թվականին[1257] [մահմեդականներից] վերցրեց Անին ու Շիրակի ամբողջ գավառը և հանձնեց Վրաստանի ամիրսպասալար մեծ Իվանեին՝ Սմբատ Օրբելյանի որդուն: Դրանք դարձան նրա սեփական տիրույթը: Այս Իվանեն մի անգամ Անիի դարպասների մոտ ջարդեց Շահի Արմենին[1258], որը քառասուն հազարանոց զորքով եկել էր քաղաքի վրա: Թեև Գեորգի թագավորն օգնության էր եկել [ու ներկա էր], բայց մարտը վարողը Իվանեն էր: Մի անգամ էլ սա Գագի դաշտում փախուստի մատնեց Ելեկուզ մեծ աթաբեկին, որը հարյուր հազարանոց զորքով եկել էր Գեորգիի դեմ և կամենում էր կոտորել բոլոր վրացիներին, թագավորին էլ բռնել: Իվանեն նրա զորքերին մեծ հնարանքներով ու քաջագործություններով այնպես նեղը գցեց, որ գիշերը թողնելով իրենց վրանները, զենքերը, մեծ քանակությամբ գույքը, քաղող ուժը՝ փախան ու մի կերպ ազատվեցին: Թևպետև թագավորի համար արեց այս ամենը, այլև ուրիշ շատ մեծամեծ գործեր ու նախաձեռնություններ, սակայն թագավորը արտաքնապես էր նրան մեծ փառքի ու պատվի արժանացնում, իսկ իր մտքում միշտ կասկածում էր՝ նրան հանձնված տղայի պատճառով, և հարմար պահ էր որոնում գաղտնի հնարքներով դավելու, բայց չէր գտնում: Իհարկե, Իվանեն այդ բանը գիտեր:

Ապա նրա հայր Սմբատը ծեր հասակում մեռնում է ու թաղվում իր նախնիների մոտ: Նրա իշխանությունը ժառանգում են որդիները՝ Իվանեն ու Լիպարիտը: Բայց հայոց վեց հարյուր քսանվեց թվականին[1259] Վրաստանի պետության մեջ կռիվ ու շփոթություն ընկավ, և Օրբելյան տոհմը բնաջնջվեց: Գեորգի թագավորի տիրապետության քսանմեկերորդ տա-

րում[1260], երբ Դեմնան լրիվ հասուն երիտասարդ էր դարձել, մի անգամ Ագարակի իր պալատում եղբայրների ու որդիների հետ խրախճանք անելու ժամանակ Իվանեի մոտ եկան մեծամեծ ավագներից մի քանիսը, ինչպես նաև Դեմնան ու նրան ասացին. «Իվանե՛, հիշի՛ր քո խոստումն ու երդումը, որ տվեցիր Դավիթ թագավորին, և խոստմնազանց մի՛ լինիր. արդեն հասել է այս երիտասարդ Դեմնային թագավոր դարձնելու ժամանակը: Գեորգին սակավաթիվ մարդկանցով գտնվում է թագավորական սենյակում[1261], և մենք բոլորս հավատարիմ ենք մնում այն երդմանը, որ տվեցինք այս Դեմնայի հորը»: Իսկ Իվանեն պատասխանում է. «Մենք բնավ էլ չենք մտադրվի սպանել օծված թագավորին, այլ մեր խոստումն ու երդումը պահելու համար կբռնենք Գեորգիին, մինչև որ թագավոր դարձնենք Դեմնային. և ապա նրանից խոստում, երդում ու ստորագրություն կվերցնենք, որ հնազանդ լինի ու մնա միայն հոր կողմից իրեն ժառանգություն տրված բաժնում»:

Բոլորն էլ հավանություն տվեցին այս ասածին և արագ կերպով սկսեցին զորք գումարել: Մի շատ անարգ զինվորական, իմանալով այս նախաձեռնության մասին, գիշերը գնում, տեղեկացնում է թագավորին: Իսկ սա ձի հեծնելով արագ կերպով փախչում, ընկնում է Տփղիս ու ամրանում այնտեղ: Իվանեն, դրան անտեղյակ լինելով, շարունակում էր հեծյալներ հավաքել, զորք կազմել: Վրաստանի բոլոր մեծամեծերն ու ազատները միաբանված էին Իվանեի հետ և համախմբված նրա մոտ՝ Ագարակ կալվածքում: Այստեղ էին եկել բոլորն էլ՝ Քարթլի էրիսթավները[1262], զորղորացիները, ջավախուրները, կախացին՝ իր որդիներով, մեծ Կամրագելը, Ջաղել Մեմնան, տաշրացիները[1263], կայենեցի Հասանը[1264] և անեցի Գրիգոր Ապիրատյանը[1265], որոնց զորքերը թվով կազմում էին ավելի քան երեսուն հազար [զինվոր]: Իսկ Գեորգի թագավորը միայնակ, առանց զորքի գտնվում էր Տփղիսում: Նա կանչեց իր մոտ Խուպասար անունով մի ղփչաղի ու [նրա միջոցով] ձեռք բերեց մոտավորապես հինգ հազար մարդ: Էլ ուրիշ օգնական զորք չուներ: Երբ նրանք իմացան, որ արքան մտել է Տփղիս ու ամրացել այնտեղ, նրա դեմ չգնացին, այլ սպասում էին այնտեղից ելնելուն: Եվ

մինչ գործն այսպես ձգձգվում էր, մարդկային փոփոխական բնավորության համաձայն՝ մեծ Կամբրագելը դուրս եկավ իշխանների այդ միաբանվածությունից ու գաղտնի կերպով գնաց Գեորգիի մոտ։ Այդ իմանալով Դրիգոր Մաժիստրյանը[1268] ևս գնաց Գեորգիի մոտ։ Նույն ձևով ուրիշներն էլ սկսեցին մեկ առ մեկ քաշվել ու գաղտագողի գնալ թագավորի մոտ։ Եվ այնուհետև Գեորգիի կողմն սկսեց ուժեղանալ, իսկ Դեմնայինը՝ թուլանալ։ Ջէ՞ որ Գեորգին իր մոտ գնացողներին մեծ պատվով էր ընդունում ու անչափ պարգևներով ուրախացնում և խոստանում էր նրանց տալ Օրբելյանների ամբողջ տիրույթներն ու հարստությունը։

Գեորգին, տեսնելով զորքերի ավելանալն ու իր կողմի ուժեղանալը և եղբորորդու ու Իվանեի կողմի թուլանալը, մեծ պատրաստությամբ գնաց նրանց դեմ։ Այդ իմանալով՝ Իվանեն իր ամբողջ ունեցվածքը արագ կերպով լցրեց Շամշուլդե բերդը, որտեղ դեռ հին ժամանակներից գանձվում էր նրանց նախնիների գանձատունը՝ լի անբավ հարստությամբ։ Գլխավոր մարդկանցից այնտեղ բերդապահներ նշանակեց, իսկ ինքը, վերցնելով զորքն ու իր մոտ եղած մեծ իշխաններին, Դեմնային ևս, գնաց Լոռե ու խիստ ամրացավ։ Իր եղբայր Լիպարիտին էլ երկու որդիներով ուղարկեց Ելտկուզ աթաբեկի մոտ՝ նրանից զորք բերելու օգնության։ Իսկ Գեորգի թագավորը եկավ ու Շամշուլդեում նրանց չգտավ. ապա քսանհինգ օր պաշարելով բերդը[1267]՝ այն գրավեց, կոտորեց պահակազորը, կողոպտեց այնտեղի բազմաթիվ գանձերն ու ամբողջ ունեցվածքը, եկավ, բանակ դրեց Լոռեի շուրջ։ Եվ քանի որ Իվանեն հրոտից ամսի[1268] տասներեքին մտավ Լոռե ու մնաց մինչև մեհեկի ամսի հինգը[1269], այդ պատճառով բերդում գանվողները նեղվում էին։ Եվ ազատներն սկսեցին գիշերը մեկ առ մեկ պարաններով պարսպից իջնել ու անցնել թագավորի կողմը։

Ապա այն մեծամեծները, որոնք Իվանեի սիրելիներն ու համախոհներն էին եղել, սկսեցին ծածուկ կերպով դրել խրատագրեր ու նետերով գցել բերդը, Իվանեի մոտ՝ համոզման ու հնազանդեցման նպատակով, որովհետև երկյուղ էին կրում Ելտկուզ աթաբեկի գալուստից։

Դրանց բովանդակությունն այս էր.

«Մեծ Իվանե Օրբելեցի,
Քաջ և հզոր, անպարտելի,
Որ աշխարհով ես ճճնացի,
Տոհմից տիրող թագավորի,
Եկած երկիրն այս գեղանի[1270],
Գտած պատիվ անկշռելի.
Դու՝ պետ, գլուխ արքունիքի՝
Սպասալարը Գեորգիի։
Քե պետք է խոսք արժանիքդիդ՝
Կյանքդ ու պատիվդ են ցանկալի,
Տիրույթներդ են անչափելի,
Վիրքի կեսից էլ ավելի։
Թո՛ղ քո երդումն այն առաջին,
Ուխտն ու կտակն արքա Դավթի,
Ե՛կ, ենթարկվիր Գեորգիին՝
Վրաց հզոր թագավորին։
Բե՛ր ու հանձնի՛ր ընծան բարի՝
Դեմնա որդուն թագավորի,
Որ եղավ քեզ պատճառ չարի
Ու շատ մարդկանց այս աշխարհի»։

Այս թուղթը տեսնելով՝ Իվանեն այսպիսի պատասխան է գրում ու կապելով նետին պարսպից դուրս նետում.

«Ո՛վ ավազներ իմ սիրելի,
Մեծ իշխաններ հզոր, բարի,
Ես՝ Իվանես Օրբելեցի,
Կարդացի գիրը ձեր խրատի։
Համաձայն չեմ այդ խորհրդին,
Որ հանձնել եք դուք այս թղթին։
Մարդը եթե այդպես վարվի,
Կթողնի կարգը տերունի,
Ուխտազրուժ կգտնվի,
Կառնի բաժին ուրացողի,
Միշտ գեհենում կտոչորվի,
Դևերի շարքը կդասվի։
Ես՝ անցավոր մարդ աշխարհի,
Հանուն օրվա կյանքի պատվի
Ջեմ կոխոտի՝ ինչ ուխտեցի,
Դրժի երդումս ահալի,
Այլ կմեռնեմ հանուն գործի,
Գնամ դեպ տերը սիրելի,
Կառնեմ բաժին անպատմելի,
Որ ոչ մեկը էլ չի խլի»։

Թեև սրանք գրված էին վրացերեն, սակայն մենք թարգմանեցինք և շարադրեցինք հայերեն լեզվով։

Իմանալով, որ Իվանեի կամքն անկոտրում է՝ [պաշտողները] մարտը սաստկացրին։ Բայց Դեմնան, փոքրոգաբար երկյուղ կրելով, գիշերը վեր կացավ, պարսպից կախվեց, իջավ-գնաց հորեղբոր մոտ և ընկնելով նրա ոտքերը, խնդրեց միայն իր կյանքը խնայել։ Իսկ թագավորը երբ այդ տեսավ, շատ ուրախացավ, պատվիրակներ ուղարկեց Իվանեի մոտ՝ ասելով. «Ում համար որ դու մարտնչում էիր ու վրեժխնդիր էիր լինում, նա եկել է ինձ մոտ, այժմ ինչո՞ւ ես պայքարում»։ Իվանեն էլ պատասխանում է. «Իրավացի է նա այդ առաջարկով. բայց թող ինձ երդվի, որ չի վնասի ու ժառանգական տիրույթներից չի զրկի, ես կգամ իր մոտ»։ Եվ Գեորգին երդվեց ու նրա հետ պայմանագիր կնքեց՝ մեծամեծ պայմաններով։ Ուստի Իվանեն, դրանից համարձակություն ստանալով, գնաց թագավորի մոտ։ Իսկ թագավորը մեծապես ուրախացած սկզբում նրան ընդունեց շատ սիրով ու փառաբանեց մեծաշուք պատվով, մինչև որ նրա բոլոր որդիներին ու ազգատոհմը բուռը հավաքեց և հետո դժեց իր պայմանն ու ահազդու երդումը։ Իվանեին բռնեց ու աչքերը փորեց։ Նրան փեսա դարձած Դեմնային էլ բռնեց, աչքերը հանել տվեց, ամորձատել տվեց, որ ինչպես ինքն էր ասում, նրանից ժառանգ չսերվի։ Իսկ Իվանեի կրտսեր եղբայր Քավթարին՝ Սմբատի որդուն, ու եղբորորդի Ինային ապաշել տվեց։ Նրանց ամբողջ ազգատոհմը՝ և՛ արու մանուկներին, և՛ կանանց, բնաջնջել ու կորցնել տվեց՝ ոմանց խեղդամահ, ոմանց ջրասույզ, ոմանց գահավեժ անել տալով։ Ու այդպիսով նրանց անունը վերացրեց Վրաստանից։ Հրամայեց Օրբելյան տոհմի հիշատակը ջնջել իրենց պատմական գրականությունից, ինչպես և եկեղեցիներից։ Եվ այս ապստամբության պատմությունը գրել տվեց, բայց ոչ իսկական, իրապես եղած պատճառը [ցույց տալով], այլ, ըստ իր կամեցածի, շատ ու շատ զրպարտություններ կցմցելով ու վերագրելով նրանց։ Եվ նզովագրով սահմանեց, որ այլևս չհիշեն նրանց անունը ու նրանցից ոչ ոքի չթողնեն վրաց աշխարհում և այդ չար կտակագիրն էլ դրեց իր գանձատանը։ Սա կատարվեց վեց հարյուր քսանվեց թվականին[1271]։

Ահա այսպես, զրկանքներով, ապատնեշություններով ու հալածանքներով վերջ տրվեց Օրբելյաններին իրենց հայրենիքում։ Ճենաց աշխարհից նրանց գալու ժամանակը մինչև այս հաշվվում է ավելի քան հազար տարի։ Ոմանք զրպարտում են նրանց, թե մատածելով անձնական փառքի համար՝ կամեցան թագավորությունը վերցնել իրենց ձեռքը, բայց բոլորովին սուտ են ու շան պես հաչում։ Մինչդեռ նրանք Դավիթ թագավորի կտակի ու նրան տված երդման և նրա որդու համար իրենց կյանքը դրեցին, ինչպես վայել է ուխտապահ ու տիբասեր մարդկանց։ Եվ ասվածի զրկողների ու զրկվածների գաղը թող տեսնի իր անաչառ դատաստանի ժամանակ՝ [համապատասխան վճռով]։

Իսկ Լիպարիտը՝ Իվանեի եղբայրը, որ իր երկու՝ Ելիկում և Իվանե որդիներով գնացել էր Ելակուզ աթաբեկի մոտ, ուրքի էր հանել Պարսկաստանը և բազում հեծյալներով՝ թվով քսուր վաթսուն հազար, գալիս էր եղբորն օգնության։ Նա, լսելով պատահածի չարագուշակ լուրը, ասում է. «Անմեղ քրիստոնյաներն ի՞նչ մեղք են գործել, որ գնամ, նրանց կորստյան մատնեմ։ Մեր թափած արյան պարտքն ո՞ւմ մեջ գտնեմ, որ գնամ նրանց բուռս գցեմ»։ Եվ վերադարձավ ու դադար առավ Ելակուզի մոտ։ Դառն կսկիծով ու սաստիկ սգով քիչ ժամանակ ապրելով՝ մեռավ օտար աշխարհում։

Նրա Ելիկում որդին մնում է Պարսկաստանում, իսկ Իվանեն գնում է Գանձակի ամիրայի մոտ, մեծ փառքի ու պատվի արժանանալով՝ բնակվում է այնտեղ։ Հետո, Թամարի տիրապետության օրոք մեծ սիրաշահումներով ու երդմամբ նրան այնտեղից ետ դարձրին ու իրենց տիրույթներից իրեն վերադարձրին միայն Օրբելը։ Նրանից որդիներ սերվեցին, և այժմ նրանք են Օրբելյանների ներկայացուցիչները [Վրաստանում]։ Գեորգին երբ Օրբելյաններին բնավեր արեց, նրանց տիրույթներն էլ բաժան-բաժան արեց. մի մասը տվեց Քշնամիներին ու մատնիչներին, մյուս մասն էլ՝ հուլաստար կոչված զվշաղին, որի մասին վերը խոսեցինք։ Նրան հասցրեց Օրբելյանների իշխանական աթոռին՝ նշանակելով Վրաստանի սպասալար։ Բայց ինքը՝ Գեորգին [ուրիշ] թագաժառանգ չուներ, բացի միայն Թամար անունով մի դստերից, և վախճանվեց վեց հարյուր երեսուներեք թվականին[1272]։ Թա-

գավորությունն ստանձնեց այդ դուստրը։ Նրա համար ամուսին բերեցին ռուսաց[1273] թագավորի որդուն, որի անունը Գեորգի էր[1274]։ Սա վերցրեց Դվին քաղաքը և կարճ ապրելուց հետո վախճանվեց։ Եվ Թամարը մեկ ուրիշ ամուսին առավ՝ Սոսլան անունով[1275]։ Նրան մի որդի ծնվեց, որին անվանեցին Գեորգի Լաշա[1276]։ Թամարը [իր հայր] Գեորգի թագավորի մահից հետո մեծ պատվի արժանացրեց հայ-քրիստոնյա Զաքարե իշխանի որդի Սարգսի[1277] որդիներին՝ Զաքարեին և Իվանեին՝ նրանց հասցնելով բարձր աստիճանի. Զաքարեին նշանակեց Օրբելյանների տեղում՝ Վրաստանի ամիրսպասալար՝ նրան հանձնելով Օրբելյանների լոռե տիրույթը, իսկ Իվանե եղբորը դարձրեց մեր Հայոց աշխարհի և Վրաստանի աթաբեկ։ Նրանք մեծ ջանքերով մեր Հայոց աշխարհն ազատեցին պարսիկներից[1278]. գրավեցին Առանից մինչև Ներքին Բասեն[1279], Բարկուշատից մինչև Մժնկերտ[1280]։ Վերցրին Կարսը, Վաղարշակերտը[1281], Կաղզվանը[1282], Սուրբ Մարին[1283], Անին, Անբերդը[1284], Բջնին, Գառնին, Դվին մայրաքաղաքը, Գարդմանը[1285], Գանձակը[1286], Ջարեբը[1287], Հերթը[1288], Շամքորը[1289], Շաքին[1290], Պարտավը[1291], Ջարաբերդը[1292]։ Վից հարյուր վաթսուն թվականին[1293] վերցրին նաև Սյունիքը, Որոտանը, Բորոտանը, Բղենը, Բարկուշատը[1294]։ Թեպետև դա տեղի ունեցավ տարբեր թվականների, սակայն բոլորն էլ նրանք ու իրենց որդիները գրավեցին և մեր երկիրն ազատագրեցին սելջուկ-թուրքերի լծից։

Իսկ Ելիկումը, որ մնացել էր Ելտկուզ աթաբեկի արքունիքում, նրա և որդիների՝ Փահլավանի ու Եզիլ Ասլանի[1295] սերն ու հովանավորությունը վայելելով՝ հասել էր բարձրագույն աստիճանի և փառքի, արիական ու պարսկական աշխարհի բոլոր մեծավոր իշխանավորներից էլ վեր։ Աթաբեկը նրան տվեց Համիան մեծ քաղաքը[1296], նրան իր որդին կոչեց. արքայական ստորագիր հրովարտակով նրա համար սեփական տիրույթներ հաստատեց. նշանակեց ամիրա ու քաղաքապետ Պարսկաստանի նշանավոր Ռե[1297], Սպահան և Ղազվին քաղաքներին՝ տասներկու տարի։ Սուլթանը նրան ստիպում էր իրեն փեսա դառնալ, վերցնել երկրի մեծ մասն ու հրաժարվել քրիստոնեական կրոնից։ Իսկ Ելիկումը թեև դեռ հասակով երիտասարդ էր, բայց լի էր խելամտությամբ

և տեղի չէր տալիս այդ առաջարկներին ու չէր սասանվում իր հավատքի մեջ։ Ուստի և նեղվելով պարսիկներից և երկյուղ կրելով, որ կրոնի համար բռնություն կգործադրեն, նա պատճառաբանություններով խնդրում է տեղ Նախիջևանի գավառում. «Այն երկրամասն ավելի մոտ է Վրաստանին,— ասում է նա,— ինձ համար այնտեղից հեշտ և հարմար կլինի նախնիներիս ու եղբայրներիս արյան վրեժը լուծել»։ Աթաբեկը դրան համաձայնվեց ու նրան տվեց Երնջակի բերդը, Ճահուկ ավանը, Նախիջևանի Քալասրահ [վայրը] և ուրիշ շատ պարգևներ ու նշանակեց այն կողմի գործակալ ու զորագլուխ։ Եվ քանի որ աթաբեկը երկիրը բաժանել էր երկու որդիների միջև, Խորասանը, Արաղը, Պարսկաստանի ներքին մասը տվել էր Եզիլ Ասլանին, այսինքն՝ «կարմիր առյուծին», իսկ Պարսկաստանի վերին կողմն ու Ատրպատականը, Առանը և Նախիջևանը՝ Փահլավանին, ուստի վերցնում է վերջինիս ձեռքը, դնում Ելիկումի ձեռքի մեջ, հանձնարարում է նրան՝ ասելով. «Դու սրան հայր եղիր, իսկ սա՝ քեզ որդի»։ Եվ Ելիկումին մեծ ճոխությամբ ու երևելի փառքով ուղարկում է Նախիջևան քաղաքը։

Ելիկումը, գալով և տիրելով այդ նահանգին, իր մոտ է կանչում Սյունյաց եպիսկոպոս Տեր-Ստեփանոսին[1298] Տեր-Գրիգորի որդուն, մեծ խնդությամբ ընդունում է նրան. ընկնում է նրա առաջ, մեծ զղջմամբ խոստովանում իր մեղքերն ու հաղորդություն խնդրում։ Եպիսկոպոսը, նրան հաղորդելով օրհնքով, ձեռքը գլխին է դնում ու օրհնում։ Հետո Ելիկումը հետամուտ է լինում ամուսնության խնդրին, բայց չէր գտնում քրիստոնյաներից մեկին՝ պատշաճ իր բարեկամության համար, որովհետև այս երկրամասը դեռ պարսկական իշխանության տակ էր։ Այդ պատճառով էլ կամենում է բարեկամ դառնալ Սյունյաց եպիսկոպոս Տեր-Ստեփանոսի՝ այդ բարձրաստիճան հոգևորականի հետ։ Եվ նրանից խնդրում է նրա քրոջ դստեր ձեռքը, որը Ճահուկում էր, որովհետև եպիսկոպոսի քույրը կինն էր Ճահկեցի ազատատոհմ, հարուստ մի մարդու, որին Աբաս էին կոչում։ Եպիսկոպոսը, մեծ ուրախությամբ համաձայնելով, նրան փեսայացնում է իրեն. Ելիկումին է տալիս գեղեցիկ և ճշմարտահավատ օրիորդին, որի

անունը խաթուն էր[1299]: Նրանից ծնվում է մի չքնաղ որդի, որին Ելիկումն իր հոր անունով կոչում է Լիպարիտ[1300]:

Եվ այսպես երկար ժամանակ ապրելով՝ Ելիկումը մի օր հիվանդացավ ծանր հիվանդությամբ: Մեծ աթաբեկն այդ իմանալով եկավ Ճահուկ ավանը՝ նրան տեսության: Նստելով անկողնու մոտ՝ նեղում է հիվանդին՝ ասելով. «Ես նրա համար եմ եկել, որ ինձ մեծ պարգև տաս»: Իսկ հիվանդն ասում է. «Ո՛վ արքա, ասա՛՝ ի՞նչ է ուզածդ, ի՞նչն է քեզ համար հաճելի, որ ընծայեմ քեզ»: Նա էլ ասում է. «Ինձ պետք չեն ո՛չ գանձ և ո՛չ էլ թանկագին իրեր, միայն թե հավատդ ինձ բաշխես ու ընդունես իմ կրոնը»: Եվ երբ շատ է ստիպում, ողորմելի հիվանդը, ցավերից ընկճված ու ցնորված, աթաբեկից խուճապի մատնված, խելագարի նման նրա խոսքերից գլուխը կորցրած՝ ասում է. «Թող քո ասածով լինի»: Աթաբեկը, դրանից մեծապես ուրախացած, խոնարհվում, նրա առաջ ծունր է դնում, և ապա վեր կենում-գնում: Այնուհետև մեծ հրովարտակով ու հաստատուն գրությամբ նա Ճահուկը, Քալասրահը և Նախիջևանի գլխավոր փողոցի երեսուն կրպակները[1301] ազատ բոլոր տեսակի հարկերից, հատկացնում է մանուկ Լիպարիտին որպես սեփականություն՝ սերնդե-սերունդ տիրելու: Բայց Ելիկումն աստծու խնամատարությամբ առողջացավ, սաստիկ զղջալով գնաց սուլթանի ու աթաբեկի մոտ և ուրացավ մահմեդականությունը. վերստին ընդունեց քրիստոնեական ճշմարիտ կրոնը՝ ասելով. «Ո՛վ տերեր, եթե կամենում եք, ես կմնամ իմ կրոնին և ուղիղ սրտով կծառայեմ ձեզ, եթե ոչ, ապա պատրաստ եմ մեռնելու հանուն իմ կրոնի»: Եվ նրանք մարդուն [իրենց համար] շատ պիտանի լինելու պատճառով էլ չնեղեցին, այլ թողեցին իր կամքին:

Ելիկումը, [դրանից հետո] կարճ ժամանակ ապրելով, աթաբեկի որդու հետ գնաց Գանձակ պատերազմելու և այնտեղ էլ սպանվեց: Փոքրիկ Լիպարիտը որբ մնաց իր մոր մոտ: Այդ իմանալով քաղաքի գլխավոր պաշտոնյաները մորն ու մանկանը տարան Նախիջևան և պատանդ պահեցին, որ մայրը տղային չառնի-փախչի: Մի մահմեդական առևանգեց խաթունին ու տարավ իր տուն և կին դարձրեց: Մանուկը, այդ տանը մեծանալով, ավելի քան տասը տարի անծանոթ մնաց քրիստոնեությանը: Հետո, երբ Զաքարեն ու Իվանեն տիրեցին

այս աշխարհին, և պարսից տիրապետությունը թուլացավ, սկսեցին փնտրել՝ [իմանալու,] թե Պարսկաստանում կա՞ Լիպարիտի զավակներից: Եվ Սյունյաց մեծ եպիսկոպոս Տեր-Ստեփանոսը՝ Ելիկումի աները, նրանց հայտնում է, որ կա մի տղա իր քրոջ [դուստրից]՝ Լիպարիտ անունով, որը պատանդ է պահվում Նախիջևանում: Դրանից խիստ ուրախանալով՝ Զաքարեն ու Իվանեն թախանձագին խնդրում են եպիսկոպոսին՝ այնտեղից մի հնարքով դուրս բերել տղային: Եվ քանի որ եպիսկոպոսը շատ լավ ծանոթ էր ու սիրելի աթաբեկի տանը և նրա բոլոր մեծավորներին ու առավել ևս նրանց, որոնք Նախիջևանում էին բնակվում, ուստի գնաց քաղաքին մոտ մի տեղ, գործի դրեց իր բարեկամներին և զանազան միջոցներով գողանալ տվեց Լիպարիտին ու մորը: Նրանց գիշերը պարաններով կախելով իջեցրին պարսպից: [Եպիսկոպոսը, նրանց] վերցնելով ու տանելով Վայոց ձոր, մորը պահեց մի ամուր տեղ, իսկ տղային առաջնորդեց Իվանեի մոտ, որը տեսնելով նրան՝ լցվեց անասելի խնդությամբ ու անմիջապես հայտնեց Թամարին և Լաշային: Սրանք էլ շատ ուրախացան, որովհետև միշտ վախենում էին նրա կյանքի համար:

Ապա աթաբեկ Իվանեն շքեղորեն հագցնում է[1302] նրան, շատ պատիվների է արժանացնում ու կամենում է փեսա դարձնել իրեն՝ նրան տալով իր դուստր Թամթիին: Իսկ մեծամեծներից մեկը՝ Բուպաք անունով, որ աթաբեկի ամբողջ տան գործակալն էր, Լիպարիտին հրապուրիչ խոսքերով խաբելով՝ ծածուկ դարձնում է իրեն փեսա՝ նրան տալով ամենաօրհնյալ ու գեղեցիկ Ասիա օրիորդին: Դա աթաբեկ Իվանեին մի առ ժամանակ սաստիկ զայրացնում է: Իսկ հետո նա, ըստ թագավորի հրամանի, հաստատուն վավերագրով Լիպարիտին իր ժառանգական տիրույթների դիմաց տալիս է Հրաշկաբերդը՝ շրջակա գավառով, և ուրիշ բազմաթիվ գյուղեր Վայոց ձորում, Կոտայքում՝ Էլառը և զանազան այլ գյուղեր, Գեղարքունիքում՝ Համասրին և ուրիշները, Կայենում՝ Աղստևը՝ իր նկամուտով: Եվ քանի որ նա էր գլխավորել Սյունյաց ու այլ բերդերի գրավումը, նրան է հանձնում նաև Սյունիք, Որոտն, Բարկուշատ և ուրիշ բերդերը:

Լաշա թագավորն ու Իվանե աթաբեկը Լիպարիտին նշա-

նակում եէ հիշյալ աշխարհի կուսակալ։ Նույնպես և մյուս իշխան ամենաօրհնյալ Վասակ Խալխեցուն՝ բարեպաշտ ու քրիստոսասեր պարոն Պռոշի հորը, նշանակում են Վայոց ձոր գավառի կուսակալ։ Սա, մեծ ջանքեր գործադրելով և մարտնչելով քրիստոնեության ու եկեղեցիների համար, օրհնվեց ու գովվեց բոլորի կողմից, որի հիշատակը օրհնությամբ թող լինի այսուհետև և հավիտյան։ Իսկ ամենաօրհնյալ Լիպարիտը մեծ բարեպաշտությամբ գործունեություն էր ծավալում. Նորավանքում եկեղեցի կառուցեց, այն զարդարեց ու ճոխացրեց, ինչպես վերը պատմեցինք։ Նրա մայրն էլ, մեծ ճգնությամբ երկար տարիներ ապաշխարելով նեղլիկ խրճիթում, վախճանվեց ու թաղվեց Նորավանքում, սուրբ Կարապետ եկեղեցու բակում։

Լիպարիտն ունեցավ հինգ որդի՝ Ելիկում, Սմբատ, Իվանե, Փախրադուլա և Տարսայիճ։ Ինքն էլ որոշ տարիներ անց դեռ ծաղկուն հասակում [մի անգամ] ճանապարհ գնալիս հանկարծակի նետերի հարվածներ է ստանում Բորոտնա բերդի դիմացի լեռան գլխին, գալիս-ընկնում է Գոլոշտի վանքի[1303] բերդը, իր մոտ է կանչում իր Տեր-Սարգիս եպիսկոպոսին և հաղորդություն ստանալով մեռնում է այնտեղ. բերվում, թաղվում է Նորավանքում, սուրբ Կարապետ եկեղեցու դռանը, իր մոր մոտ։ Կինն ու որդիները մնում են որբ և անտեր։ Որդիներից գեղեցիկ Ելիկումը փեսայացել էր Գրիգոր Մարճանյանցին, որը համարվում էր Մամիկոնյան տոհմից սերված։ Նա էլ ղեկավարում էր հոր իշխանությունը։

Իսկ Զաքարե մեծ սպասալարը մեռնում է վեց հարյուր վաթսունմեկ թվականին[1304]։ Իվանե աթաբեկը, շարունակելով ապրել ևս տասնհինգ տարի, վախճանվում է վեց հարյուր յոթանասունվեց թվականին[1305]։ Զաքարեի սպասալարությունն ստանձնել էր իր որդի Շահնշահը[1306]։ Աթաբեկությունն էլ ժառանգում է Իվանեի որդի Ավագը[1307], որն ամուսնացավ Գոնցայի հետ ու իշխեց քսաներեք տարի[1308]։

Բայց այստեղ ես ձեզ պիտի պատմեմ զարհուրելի անցքերի մասին։ Նախքան այս հետապնդվելով թաթարների[1309] կողմից՝ խորեզմի սուլթան Ջալալեդդինը՝ խորազմշահի որդին, գալով Պարսկաստան ու անցնելով Ատրպատականով, մտնում է մեր Հայոց աշխարհը[1310]. որտեղ հասնում է, ավե-

րում, թալանում ու կոտորում է՝ չխնայելով ո՛չ մարդու, ո՛չ էլ անասունի։ Ապա գալով Այրարատյան նահանգը[1311] բանակ է դնում այնտեղ։ Այդ պատճառով Իվանե աթաբեկը հավաքում է Հայաստանի ու Վրաստանի ռազմական բոլոր ուժերը և կամենում է բախվել նրա հետ պատերազմով։ Իրենց համար դեսք ու ազդարարիչ են նշանակում ոմն Շալվեի ու Գրիգոր կոչնակին, որոնք, տեսնելով Խորասանի զորքի[1312] խիստ նվազ լինելը, մեր զորքերին ազդարարում են՝ հարձակվեցե՛ք։ Բայց հաղթանակները տնօրինող աստված խիստ կամենում էր ոչնչացնել անօրինացած ու ամբարտավանացած ժողովրդին և ազդարարողների այդ ասածը սրանց ականջներում փոխվեց «փախե՛ք»-ի։ Սրանք էլ, այնտեղ թողնելով իրենց կարասիներն ու վրանները, շտապով նետվեցին դեպի ձիերը, փախան ինչպես խելացնորվածներ, առանց զենք ու զրահի, չպատերազմելով գահավիժեցին Գառնու ձորի մեծ քարափի փլվածքից։ Բոլորն էլ այդպես թափվելով կործանվեցին, միայն Իվանե աթաբեկը տասը մարդով մի կերպ ազատվելով ընկավ Գեղե[1313] ամրոցը։

Իսկ Լիպարիտը յուրայիններով, գտնելով մի կածան, գնաց։ Եվ ողջ ու առողջ հասնելով իր տունը՝ գոհունակություն էր հայտնում աստծուն։ Սա կատարվեց վեց հարյուր յոթանասունչորս թվականին[1314], Եվ սրանից հետո սաստիկ պատուհասներով ու զանազան դիպվածներով քարուքանդ եղավ ամբողջ երկիրը։ Չէ՞ որ խորեզմացիները, մեր երկիրը գտնելով անտեր, [բնակիչներին] անխնա կոտորեցին, գերեվարեցին, քաղաքների, գյուղերի վանքերի բոլոր շենքերը հրդեհեցին, ամբողջ բերքն այրեցին, խաղողի այգիներն ու ծառերը կտրատեցին։ Այդ պատճառով էլ սաստիկ սով տիրեց ամենուրեք, Եկան և մեծ քանակությամբ օձեր, որոնք պիշեր ու ցերեկ վխտում էին ամանների և անկողինների մեջ։ Հարյուր մորեխն էլ կերավ [բուսականությունը] մինչև Օվկիանոս ծովը[1315] և ընդհանրապես սով բերեց մարդու ու անասունի համար։ Եվ բոլորն առհասարակ ընկնում-փռվում էին լեռներում, դաշտերում ու ձորերում։ Այդ պատճառով էլ եկան մարդակեր գայլերը, որոնք էլ հոշոտելով սպանում էին նրանց, ովքեր ազատ էին մնացել սրից, օձից, սովից ու մահից։ Իսկ դա երկու պատճառով էր. մեկ այն, որ [գայլերը]

սովորել էին մեռելներ ուտել, մյուսը՝ որ մարդիկ սովից հյուծվել ու թուլացել էին։ Մեր երկրում այս պատուհասը տևեց յոթ տարի։

Տասնմեկ տարի հետո տերն արևելքից վերկացրեց նետողաց ազգը, որ մուղալներ[1316] էին կոչվում, իսկ ըստ գեղջուկների՝ թաթարներ։ Նրանք Ջին և Մաչին աշխարհից էին, որը գտնվում է Խաթաստանից այն կողմ, անաստված ու անօրենն էին։ Բայց բնականից հակված էին օրինապահության. ատում էին աղտեղի անառակությունն ու ամեն տեսակի վնասակար գործերը, միմյանց նկատմամբ արդարադատ էին, հավատարիմ ու հնազանդ իրենց առաջնորդին, իրավարար ու իրավադատ։ Իսկ բարքերով և նյութապես աղքատ էին ու ընչաքաղց, մարդկանց ճնշող ու կեղեքող։ Կերպարանքով շատ գեղեցիկ էին[1317]. կանացի դեմքի նման լերկ դեմք ունեին։ Ծանոթ էին քրիստոնեական կրոնին և շատ սիրում էին քրիստոնյաներին։ Նետ ու աղեղ գործադրելու մեջ կորովի էին և ընդհանրապես պատերազմների մեջ՝ խիստ ճարպիկ։

Սակայն հետագայում նրանք թողեցին իրենց բնական բարքերը, դուրս եկան նախնիների սովորություններից, ընդունեցին մահմեդական կրոնը, սովորեցին բոլոր տեսակի պղծություններն ու անկարգությունները և անառակ կյանք էին վարում։ Եվ ահա սրանք բաժանվեցին երեք հորդաների։ Մի հորդան շարժվեց հյուսիս-արևելքով[1318] դեպի խազրաց, Սուտաղաց[1319], Ռուսաց, Չերքեզաց և Բուլղարաց երկրները, տիրեց դրանց՝ մինչև Ալամանաց ու Օնկռաց[1320], այսինքն՝ ֆրանկների երկրների սահմանները։ Այդ հորդայի գլխավորն էր Բաթու ղանը[1321]։ Մյուս հորդան Հոքաթայ ղանի գլխավորությամբ շարժվեց դեպի Հնդկաստան, տիրեց Հնդկաստանի մեծ մասին, հնազանդեցրեց ույղուրներին, ուղուզներին[1322], խորեզմացիներին ու դելիմիկներին, գրավեց Ալամալեխն ու Բեշպալեխը[1323] և այն կողմերի ամբողջ տարածքները։ Երրորդ հորդան եկավ միջնաշխարհը, անցավ Ջահան մեծ գետը և այն ջուրը, որ իրենք Ամու Մորան են կոչում[1324], պատահմամբ նման փոթորկելով հասան մեր երկիրը և ամենուրեք տիրելով՝ իրենց ենթարկեցին ամբողջ աշխարհը։ Ոտնատակ տալով կործանեցին բոլոր թագավորությունները։ Գրա-

վեցին Խորասանը և կործանեցին նրա նշանավոր քաղաքները՝ Բալխն ու Հրեն, Մավրն ու Նշավուրը, Տուսն ու Դամղանը։ Նվաճեցին Խուժաստանը, Լոռաստանը, Պարսկաստանը, Քրդստանը, Արաբստանը, Դիարբաքը, այսինքն՝ Ասորիքը, Շուշթարը և Քրմանը, Բաղդադը և Բասրը, մինչև Խուամզ (Հորմուզ) քաղաքն ու Հնդկական ծովը։ Գրավեցին նաև Ատրպատականը, Առանը, Հայաստանը, Վրաստանը, Բյուզանդիան՝ մինչև Անկյուրիա, Գանգրա և Զմյուռնիա, Կիլիկիան՝ մինչև Օվկիանոս ծովը և Պոնտոսի ծովը՝[1325] մինչև Տրապիզոն քաղաքը։ Նվաճեցին Շամա երկիրը[1326], Ուհան, Խառանը՝ մինչև Համս և Համա։ Նախ մեր երկիրը եկան Զորմա, Ջաղատայ, Ասլան, Ասավուր ու Ղատա ղանները և այն գրավեցին վեց հարյուր ութսունհինգ թվականին[1327]։ Հետո եկավ Հուլավու ղանը՝ մեծ Ջանգղ ղանի[1328] թոռը, որը գրավեց նախորդների թողած տեղերը՝ Բաղդադ քաղաքը, որտեղ սպանեց խալիֆին՝[1329] յոթ հարյուր յոթ թվականին[1330], Մուֆարղինը՝ յոթ հարյուր ութ թվականին՝[1331] մեկ տարի պաշարելուց հետո, ապա գնաց մինչև Երուսաղեմ, գրավեց Հալեպը կամ Բերիան, Դրմըշխը, այսինքն՝ Դամասկոսը, Պալպաքը, որ Արեգն է[1332]։ Վերցրեց և մեծ Անտիոքը, որը կամովին հանձնվեց։ Եգիպտացիներից վերցրեց նաև Երուսաղեմը։ Եվ այսպես անշափ ու անսահման քաջություններ ցույց տվեց։ Իսկ քանի որ շատ սիրում էր քրիստոնյաներին, ուստի և քրիստոնյա բոլոր ժողովուրդները ինքնակամ ենթարկվում և օգնում ու աջակցում էին նրան։

Այսքանն այս մասին բավական է։ Այժմ վերադառնանք մեր պատմությանը։

Երբ թաթարներն առաջին անգամ եկան այս երկրները, մեր գավառները բաժին ընկան Ասլան նոյինին[1333], և ելիկումն էլ յուրայիններով ամրացված էր անառիկ Հրաշկաբերդ ամրոցում։ Այս Ասլանը եկավ, շրջեց բերդի մոտերքում, հասկացավ, որ [նրա գրավումը] մարդկանց ջանքերով հնարավոր չէ։ Այնուհետև իջավ բերդի դիմաց ու պատգամավոր ուղարկեց այնտեղ, ելիկումի մոտ՝ ասելով՝ «Մեզ հետ հաշտվի՛ր, եւ՛կ մեզ մոտ ու մեր կողմից բազում բարութիւնների կարժանանաս։ Իսկ հակառակ դեպքում որքա՞ն ժամանակ պիտի նստես այդ քարափի վրա. [միևնույն է,] այս

երկրից չենք գնա, որովհետև աստված մեզ է տվել որպես սեփականություն։ Երբ էլ այդտեղից դուրս գաս, կկորչես գերդաստանով»։

Ելիկումն այս լսելով չընդդիմացավ, այլ քաղցրությամբ պատասխանելով երդում պահանջեց և բազմաթիվ ընծաներով ընդառաջ գնաց Ասլանին։ Վերջինս սիրով ընդունեց նրան, խաղաղության դաշն կնքեց։ Նա, Ելիկումին ուղեկցող բռնելով, գնաց Անի ու ամբողջն իրեն ենթարկեց։ Դրավեց Վայոց ձորն ու եղեգիքը՝ մինչև Երերոն գյուղը, որ Գառնու դիմաց է։ Բոլորը հանձնեց Ելիկումին ու ասաց. «Քրով նվաճածն ու ոսկով գնածը մարդու համար միատեսակ սեփականություն են։ Արդ՝ այն գավառները, որ ես քրով նվաճեցի, թող լինեն քո և քո տոհմի սեփականությունը։ Դու ազնիվ սրտով ընդունիր մեզ և ծառայիր մեծ ղանին, որը մեզ այստեղ ուղարկեց։ Եվ Ելիկումը շատ շնորհակալ լինելով սկսեց ամբողջ սրտով ծառայել նրանց։ Այն օրվանից ի վեր այս տեղերը հաստատվեցին որպես Օրբելյան տոհմի սեփականություն։ Իսկ մյուս զորագլուխները հպատակեցրին մնացած գավառները, Ավագին[1334] էլ դուրս բերեցին Կայեն բերդից, իրենց բուռը հավաքեցին վրաց թագավորությունը և դարձան բոլորի տեր ու տնօրենը։

Այսպա որոշ տարիներ անց այդ թաթարն արշավանքի ընթաց՝ հետը վերցրած վրաց զորքը, Ավագին ու Շահանշահին[1335], որոնց միացավ և Ելիկումը։ Նրանք հարձակվեցին Մարտիրոսաց քաղաքի, այսինքն՝ Նփրկերտի վրա[1336]։ Բոլոր կողմերից շուրջը պատնեշ ստեղծեցին, ամբողջ բանակներով պաշարելով՝ նստեցին մի տարի ու մի քանի ամիս, բայց չկարողացան այն գրավել։ Այդտեղ Ելիկումը հիվանդանում է ծանրագույն հիվանդությամբ, և ասում են, թե Ավագի թելադրանքով բժիշկների ձեռքով թունավորվում է։ Նրան վերցնում բերում են Նորավանք, թաղում սուրբ Նախավկայի բակում։ Նա թողնում է մի որդի՝ Բուրթել անունով, տեսքով շատ գեղեցիկ ու ամրակազմ։ Ապա նրա իշխանությանը տիրում է իր եղբայրը՝ ամենաօրհնյալ և բոլորից գովելի Սմբատը, որը մեծահասակ էր, ուժեղ մտքով, աննման խելքով, խիստ հնարագետ, խոսքաշնո ու քաղցրախոս, լեզուների իմացությամբ հմուտ ու ճարտար։ Դատաստանական ատյանում անպարտելի էր, որովհետև խոսում էր հինգ լեզվով՝ հայերեն, վրացերեն, ույղուրերեն, պարսկերեն և հենց բուն իսկ մոնղոլերեն։ Նա, մանկությունից դաստիարակված լինելով աստվածային պատվիրաններով, խորհրդավատ ու բարեպաշտ էր, սիրում էր սրբերին ու եկեղեցիները, վանքեր էր կառուցում, հովանավորում ու սփոփում էր քահանաներին, ողորմում աղքատներին։ Վշտագնած մեր հայոց ժողովրդի համար վերանորոգիչ ու զորացուցիչ էր, ազատարար գերիներին և [ընդհանրապես] բոլորին։

Բայց Ելիկումից հետո Ավագի տոհմը և առավել ևս նրա կին Գոնցան մեծ նախանձով ու թշնամությամբ էր վերաբերվում Օրբելյանների տոհմը և ուզում էր հալածել, դուրս քշել կամ կորստյան մատնել որբ մնացած տղաներին՝ Սմբատին ու նրա եղբայրներին։ Հափշտակում էին նրանց սեփականությունը։ Իսկ նրանք ծածուկ թափառում էին այստեղ ու այնտեղ։ Նրանց նկատմամբ աստված, խանդաղատական սեր ցուցաբերելով, կամեցավ վերականգնել ու զորացնել Օրբելյան տոհմը՝ Սմբատի միջոցով։ Այդ ժամանակներում նետողաց ազգի զորագլուխն էր Բաչու նոյինը, որն ամենքի վրա իշխում էր որպես թագավոր[1337]։ Նա իր բանակով նստած էր Հաբանդ գավառում, Ջաղաձորի մուտքի վրա։ Այս Բաչու նոյինն իր ձեռքն էր գցել Սոնաց[1338] փոքր թագավոր Դավթին, որը գտնվում էր նրա բանակում, կալանքի մեջ։ Սա վերին խնամակալությամբ մի հնարքով ազատվեց և գիշերը երեք մարդու հետ փախուստ տվեց։ Այս Դավիթն իր մոտ ուներ մի թանկագին գոհար՝ չափազանց փայլուն, կարմիր գույնի, որից ճառագայթներ էին ցայտում, ինչպես կրակից. գիշերը տունը լուսավորում էր ջահի նման։ Նա ուներ նաև փրկական փայտից մի կտոր։ Դրանք հավասար էր համարում իր բովանդակ թագավորությանը։ Պատահեց այնպես, որ Դավիթն անցնում էր Դուտենի կոչված գյուղի մոտով։ Այդ մասին իմաց է տրվում գյուղի տիրոջը՝ Թանկրեղուլ անունով, որ նշանակում է «աստծու ծառա»։ Սա Սմբատի ազատներից էր։ Այս գյուղացիներն անմիջապես հեծնում է ձին ու ընկնում նրա հետևից։ Հասնելով ուղում է բռնել։ Իսկ նա սաստիկ վախենալով կրծքից արձակում է փոքրիկ քսակն ու տալիս Թանկրեղուլին՝ ասելով. «Դու ո՞ւմ կողմից ես»։ «Ես Սմբատ Օրբել-

յանի [ազատներից] եմ»,— պատասխանում է նա։ Դավիթն ասում է. «Տա՛ր այդ և տո՛ւր Սմբատին ու ասա՛, որ դա իմ թագավորության գինն է, վերցրո՛ւ և պահի՛ր։ Թե որ ես այս տեղից դուրս գամ ու թագավորեմ իմ աշխարհին, ինձ մոտ կբերես, և ես քեզ կտամ քո ուզած երկրամասը կամ քաղաքը։ Իսկ եթե չկարողանամ դուրս գալ Սյունյաց[1339] այս աշխարհից, դա թող քեզ լինի»։ Եվ ինքն անցավ, գնաց, մտավ Սոնաց ամուր ու անձուկ աշխարհը և այնտեղից այլևս դուրս չեկավ՝ մինչև մեռնելը։

Իսկ Թանկրեղուլը, Դավթի տվածը մեծ խնդությամբ իր տունը բերելով և որոշ ժամանակ պահելով, տվեց Սմբատին։ Սա էլ ստանալով՝ գոհունակություն հայտնեց աստծուն և իր մտքում խորհում էր այսպես. «Եթե սա պահեմ, ինձ վնաս կլինի, որովհետև միևնույն է, ծածուկ չի մնա ու հաստատ չի պահվի. այլ կտանեմ մեծ ղանի մոտ, որը թագավորաց թագավորն է, տիրում է ծովին ու ցամաքին։ Նա կոչվում է Մանգու ղան, այսինքն՝ «սպիտակ թագավոր»[1340], Ջանգղ ղանի թոռն է։ Նրանից մեր աշխարհի համար գթություն կխնդրեմ»։ Եվ վեր է կենում, գնում Բաչու նոյինի մոտ ու, նրան ցույց տալով շողշողուն գոհարը, ասում է. «Կա՛մ դու վերցրու սա և ինձ պարգևիր այն, ինչ որ ուզեմ, կա՛մ ինձ ուղարկիր մեծ ղանի մոտ, որպեսզի սա նրան տանեմ»։ Նոյինը տեսնելով՝ զարմացած ասում է. «Դա հազվագյուտ ու անգին գոհար է, ես չեմ համարձակվում վերցնել, այլ քեզ կուղարկեմ մեծ ու աշխարհակալ ղանի մոտ»։ Եվ ապա ճանապարհի անհրաժեշտ պատրաստություն տեսնելով, յուրայիններից էլ օգնականներ տալով՝ Սմբատին ուղարկում է Ջին և Մաչին՝ նետողաց աշխարհը,— որտեղ նրանց թագավորության մեծ գահն է,— Մանգու ղանի՝ նրանց առաջին թագավոր Ջանգղ ղանի որդի Գայուկ ղանի որդու մոտ[1341]։

Իսկ Սմբատը [մեկնելուց առաջ] շրջում է մեր վանքերում, որոնք ծանր հարկապահանջության տակ էին, աղոթք էր անել տալիս՝ գիշերային արարողությամբ, իրեն հանձնում սրբերին և խոստանում էր, թե հաջողությամբ վերադառնա, ողջ եկեղեցականներին կազատի հարկատվությունից, բոլոր եկեղեցիներին ընծաներ կտա, նրանց կվերադարձնի իրենցից խլված կալվածքները։ Եվ այսպես շատերի

աղոթքները պաշար առած՝ ճանապարհ է ընկնում ու, անցնելով չափազանց երկար տարածություն, հասնում է արևելյան աշխարհը, աշխարհակալ ղանության աթոռանիստը, որ Ղարաղորում էին կոչում։ Եվ քանի որ Մանգու ղանն օրինավոր քրիստոնյա էր, իր մեծ պալատի բակում ուներ եկեղեցի՝ քահանաներով, որտեղ միշտ անխափան կերպով ժամասացություն ու պատարագ էին լինում։ Ինքն էլ շատ սիրում էր քրիստոնյաներին, որոնց իրենք արքայուն[1342] էին կոչում։ Ամբողջ աշխարհն էլ քրիստոնեություն էր դավանում[1343]։

Սմբատը նախ հանդիպում է մեծավորներին ու արքունիքի ավագանուն, նրանց ծանուցում է իր գալու պատճառի մասին։ Նրանք էլ սրան ներկայացնում են մեծ արքային ու նրան նվիրում թանկագին գոհարը։ Արքան խիստ հավանում է այն ու գովում։ Ապա [Սմբատին] հարցնում է. «Ի՞նչ ազգից ես»։ «Հավատքով քրիստոնյա եմ, աղգությամբ՝ հայ»,— պատասխանում է Սմբատը։ Ուստի և արքան, առավել ևս սիրելով նրան, հարցնում է գալու պատճառը։ Եվ Սմբատը նրան պատմում է ամբողջը՝ եկեղեցիների նեղությունը, իրենց ճնշվածությունը, Ասլան նոյինի հանդևպ եղբոր ունեցած հավատարմությունը։ Եվ այսպես նրան տեղեկացնում է մեր երկրի վիճակի մասին։ Արքան լսում է մեծ ուշադրությամբ ու պատմածներն ընդունում է անկեղծությամբ։ Ապա Սմբատին ներկայացնում է իր Սուրախատամբեկ կոչվող մորը՝ ասելով. «Այս մեկ արքայունին մեզ պիտի պահենք և ոչ ոքի չպիտի թույլ տանք, որ իշխի սրա վրա»։ Նրան անվանեցին Ենկու, այսինքն՝ «արքունական»։ Եվ առաջարկեցին որոշ ժամանակ մնալ արքունիքում։ Գործակալներին հանձնարարեցին արքունիքից ամեն օր օրապարեն տալ նրան, որը և տևեց երեք տարի։ [Այդ ժամանակամիջոցում] Սմբատը գիշեր ու ցերեկ աղոթք անելուց չէր դադարում։

Եվ քանի որ նա մոտն ուներ մի շատ հրաշագործ խիստ փոքրիկ մասունք, մի գիշեր իր վրանում այն դրել էր առջևը ու երեկոյից մինչև առավոտ բազկատարած կանգնել էր մոտը, հորդառատ արտասուքներով հառաչում ու աղոթում էր։ Ապա երկնքից մի ահեղ հրաշք երևաց վրանի վերևում։ Լուսեղեն կամար էր կանգնել այնտեղ՝ վրան խաչ, որից զարմանալի բոցեղեն ճառագայթներ էին ցայտում։ Եվ ուժեղ ճա-

ռազայթներից լուսավորվում էր անսահմանորեն փռված բանակային ճամբարի տարածությունը. ու բոլորն առհասարակ խուռն բազմությամբ թափվում էին արքունի հրապարակը՝ այն տեսարանից զարհուրած։ Արքան իմանալով դուրս է գալիս, տեսնում և, մեծ զարմանքի մեջ դտնվելով, փառաբանություն ու գոհունակություն է հղում աստծուն։ Կանչելով իր քրիստոնյա խորհրդականներից մեկին՝ ազդությամբ ասորի, ասում է. «Գնա՛ և նշա՛ն արա այն վրանին, որ առավոտյան իմանանք, թե ո՛ւմն է եղել»։

Իսկ ինքը՝ Սմբատը, այս ամենի մասին ոչինչ չգիտեր։ Բայց երբ լույսը բացվում է, նրան կանչում են արքայի մոտ։ Նա տեսնելով ասում է. «Սա դեռ այստե՞ղ է»։ Ասում են՝ այո։ Այնուհետև հարցնում է Սմբատին. «Ի՞նչ էր, որ այս գիշեր տեսանք քո վրանի վերևում»։ Իսկ նա վախենալով ասում է. «Չգիտեմ ինչ էր»։ Արքայից արքան ասում է. «Այն բոլոր ճառագայթներն ու երևումը, որ այնքա՛ն ժամանակ շարունակվեցին, մի՞թե չիմացար»։ Սմբատն ասում է. «Իմ աստվածը գիտե, որ իրազեկ չեմ»։ Ղանն ասում է. «Ձեր սրբություններից ի՞նչ ունես մոտդ»։ Սմբատն ասում է. «Ոչինչ չունեմ, բացի մի փոքրիկ խաչից»։ Արքան ասում է. «Ինձ մոտ բեր՝ տեսնեմ»։ Եվ նա անմիջապես բերում է։ Արքան վեր կենալով իջնում է դահից, ծունր դնում, գլուխը բաց համբուրում է այն ու ասում. «Այն լուսեղեն խաչը, որ [գիշերը] տեսանք, այս չափն ու ձևն ուներ. իսկ և իսկ սա նա է»։ Եվ դրանից հետո, ինչպես և առաջ, անչափ սիրեց ու պատվեց Սմբատին, նրան վստահեց ու պալատական ավագանուց վեր դասեց[1344]։ Ու հրամայեց տալ՝ ինչ որ նա կպահանջի։

Եվ նրան տվեցին ոսկե փայիզա[1345], որը տախտակ էր՝ վրան գրված աստծու և արքայի անունները։ Սա նրանց մեծագույն պարգևն էր։ Գրում են յաուկին[1346], այսինքն՝ հրամանը, որ մենք սիրել ենք կոչում, և նրան են տալիս Ասլանի կողմից թրով նվաճած հողերն ու Որոտանը՝ իր գավառով, որ գտնվում էր Բաշուի ու իր մեծամեծների բաժնում, Բորոտնա բերդը՝ իր եկամուտ[ներ]ով, այնտեղ սպանված նրա հայր Լիպարիտի համար՝ որպես արյան գին։ Սմբատի անունը դուրս է հանում վրացական և ուրիշ հարկային բոլոր մատյաններից[1347]։ Եվ սա եղավ նրանց հայրենի տիրապետության կրկնակի հաստատումը, որովհետև առաջին անգամ նվաճված էր թրով և Ասլան նոյինի ձեռքով հանճնված էր նրան որպես իր վասալի, իսկ երկրորդ անգամ շնորհված էր արքայի կողմից իբրև մեծ գին՝ վերցված շողշողուն գոհարի դիմաց։ Սմբատը հրաման է վերցնում նաև հարկերից ազատելու հայոց բոլոր եկեղեցիներն ու եկեղեցականներին։ Եվ այսպես մեծաշուք ճոխությամբ վերադառնում է այնտեղից՝ իր հետ բերելով նաև պալատական մարդ։ Արդ՝ գալով հասնում է այս աշխարհը, որտեղ ծայր է առնում խաղաղությունը. կարծես արեգակ է ծագում գիշերային խավարում։ Սմբատը նախ ներկայանում է Բաշուին և ուրիշ գլխավոր իշխանավորներին։ Նրանցից ևս օգնություն ստանալով՝ վերցնում ու ազատագրում է բովանդակ Որոտն երկիրը՝ մինչև Բորոտնի և Բղենի սահմանները, որտեղ և ավերակ վիճակում գտնվում էր Սյունյաց Տաթև աթոռանիստը։

Վերցրեց և նեղեփքն ու ամբողջ Վայոց ձոր գավառը, Փողահանքը, Ուրծն ու Վեդին՝ իր ձորով, մինչև Երևրոնք[1348], և բազմաթիվ գյուղեր ու ավաններ՝ Կոտայքում ու Գեղարքունիքում։ Հարկերից ազատեց իր տերության ու ամբողջ Հայոց աշխարհի եկեղեցիները և եկեղեցական պաշտոնյաներին։ Շինեց վանքեր, վերակառուցեց բոլոր ավերված եկեղեցիները՝ մեծ խնդություն պատճառելով քրիստոնյաներին։ Եվ քանի որ Սյունյաց աթոռը երկար ժամանակ ավերված էր, և Տեր-Հովհաննես եպիսկոպոսն էլ՝ ծերացած, սրա եղբորորդի Տեր-Հայրապետն էր Բաշուի կնոջ թուլտվությամբ սկսել նորոգել վանքը, բայց, աղքատության մեջ լինելով, [չէր կարող շարունակել,] որովհետև եղած այնքան տիրույթներից մեկ տուն անգամ չէր մնացել վանքին։ Սմբատը, այն իր ձեռքը վերցնելով, սկսեց ամենայն ջանադրությամբ հոգ տանել վանքի վերաշինման ու ծաղկեցման համար և նրանից խլված տիրույթները մեկ առ մեկ վերադարձնել իրեն։

Եվ երբ այս այսպես էր կատարվում, բարությունն ատող սատանան նախանձ առաջացրեց ու Ավագի ընտանիքին և Վրաստանի մեծամեծներին գրգռեց [Սմբատի դեմ]։ Քանի որ Ավագը վախճանվել էր վեց հարյուր իննսունինը թվականին[1349], նրա ամբողջ տերությունը ղեկավարում էր կինը՝ Գոնցան, որը մի դուստր ուներ՝ Խոշաք անունով։ Նրանք հա-

վաքվեցին Տփղիսում, Արղունի մոտ։ Վերջինս մեծ ղանի կողմից նշանակված էր այս ամբողջ աշխարհի վրա վեզիր[1350] և պասխաղ[1351], այսինքն՝ ընդհանուր հրամանատար, տնօրինող արքունի հարկերին ու մեծ դիվանին, որը և յոթ հարյուր երեք թվականին[1352] մեր ամբողջ երկրում աշխարհագիր կատարեց [Գոնցան ու իր համախոհները,] մեծ կաշառք տալով, Արղունից պահանջեցին կորստյան մատնել Սմբատին, թույլ չտալ, որ ժառանգի երկիրը, բայց նա համաձայնություն չտվեց։ Նրանք էլ Սմբատից վերցրին շատ տեղեր, իսկ մնացածները սաստկապես կեղեքեցին։ Այդ պատճառով Սմբատը հարկադրված եղավ երկրորդ անգամ գնալու Մանգու ղանի մոտ։ Եվ Ասլան նոյինի տնից իրեն օգնական վերցնելով՝ գնաց աստծու հաջողությամբ։

Բայց նախքան Սմբատի գնալը ինչ-որ մատնության պատճառով Արղունին կանչել էին արքունի դուռը, և նրա հասնելու ժամանակ Արղունն այնտեղ արդեն կապանքների մեջ էր։ Մանիչները ամն Սևինճ բեկն ու Շարափեդդինն էին՝ այս աշխարհի դիվանի [պաշտոնյաներից], որոնք կամենում էին սպանել Արղունին ու գրավել նրա տեղը։ Սևինճ բեկը միաժամանակ թշնամի էր Սմբատին և ուղում էր դավադրաբար սպանել նրան։

Սմբատը հասնելով պալատ ներկայանում է Մանգու ղանին, որը տեսնելով ճանաչում է նրան։ Եվ քանի որ ղանը չափազանց սիրում էր Սմբատին ու հավատում նրան, մոտ է կանչում և ասում. «Ե՛կ, արքայուն, և ինձ տեղեկացրո՛ւ ձեր երկրի ու իմ զորքերի որպիսության մասին»։ Եվ Սմբատը հանգամանորեն պատմում է։ Այնուհետև արքան հարցնում է Արղունի մասին, թե նա ինչպե՞ս է ավերել այդ երկիրը, կախել է տալիս քահանաներին, մեկին էլ անձամբ է սպանել։ Սմբատը պատասխանելով արդարացնում է Արղունին և հայտնում, թե ովքեր են զրպարտել։ Արքան խիստ բարկանում է իր մեծավորների վրա, թե ինչո՞ւ ուղիղ քննություն չեն կատարում, և հրամայում է շտապ կերպով ատյան բացել ու [գործը] քննել Սմբատի մասնակցությամբ։ Հետևյալ օրն այդպես էլ անում են։ Սմբատը մերկացնում է մատնիչների սուրը, և Սևինճ բեկին ու Շարափեդդինին անմիջապես պատկեցնում են։ Իսկ Արղունին ազատելով կապանքներից՝

բերում են արքայի առաջ, որը մեծարում է նրան ու դարձյալ նշանակում իր գործին։ Սմբատի ձեռքից էլ բռնելով՝ հանձնում է նրան ու հրամայում գրել նոր հրամանագրեր և առաջվանից առավել ամրությամբ հաստատում է Սմբատի ժառանգական տիրույթները։

Եվ այսպես մեծամեծ հաջողություններով այնտեղից դուրս գալով՝ Սմբատն Արղունի հետ եկավ-հասավ այս աշխարհը։ Արղունը չէր իմանում մեծ երախտիքի համար Սմբատին ինչպիսի՛ պատվով մեծարել։

Եվ Սմբատը վերադառնում է [հայրենիք], նրա բոլոր թշնամիներն ու հակառակորդները ամոթահար են լինում։ Նա [վերստին] տեր է դառնում իր գավառներին ու գյուղերին։ Բայց հետո սեր և հաշտություն [պահպանելու] նպատակով հակառակորդներից ոմանց ինքնակամ վերադարձնում է զանազան կողմերում գտնվող որոշ գյուղեր ու ագարակներ, իսկ մնացած բոլորը հաստատում է որպես սեփական հայրենիք իր տոհմի ու զավակների համար։

Մանգու ղանի մոտ Սմբատի առաջին գնալը տեղի ունեցավ յոթ հարյուր[1353], իսկ երկրորդը՝ յոթ հարյուր հինգ թվականին[1354]։ Սմբատը մեծ փառք ու պատիվ և սեր էր վայելում նաև Հուլավու ղանի[1355] կողմից, որի բազմաթիվ գործերի ղեկավարությունը նրան էր հանձնարարված։ Նա Նորավանքում կառուցեց հրաշակերտ ժամատունը[1356]՝ իր նախնիների գերեզմանների վրա, բազմաթիվ արդյունավետ գործեր կատարելով՝ ճոխացրեց այն։ Զարդարեց եկեղեցին և շատ գյուղեր ու այգիներ նվիրեց նրան, ինչպես որ վերն էլ նշեցինք։ Հուլավուի հրամանով գնաց Բասեն՝ եղևնի[1357] և մայրի փայտի համար, որովհետև կառուցում էին արքունական մեծ պալատը Դառն դաշտում[1358], որը Ալադաղ են կոչում։ Ժամանելով Աշորնիք[1359] գնում է Թաթլո վանքը[1360] և շատ ծախսերով ու մեծ չանքերով ձեռք է բերում սուրբ Գրիգոր Լուսավորչի գանգից մի մաս. չէ՞ որ այնտեղ էր գտնվում սրբի գլխի մի կողմը։ Վերցնում է նաև սուրբ Գրիգոր Սքանչելագործի[1361] գանգը։ Սրբի հիշյալ մասունքը բերել ու այնտեղ պահպանության էր տվել Գագիկ Բագրատունի վերջին թագավորը՝ այն ժամանակ, երբ նրա թագավորությունը կործանվեց։ Սմբատը, աստվածային այն անպատմելի գանձը

բերելով, զարդարեց ոսկով ու արծաթով, դրեց աղյուսաձև արկղի մեջ ու հաստատեց Նորավանքի մեծահռչակ ուխտում։ Նաև մեծ սուրբ նշանի համար պատրաստել տվեց ոսկե պահարան՝ աղյուսակի ձևով, երկփեղկ դռներով, և թիկունքի կողմում իր համար հիշատակի արձանագրություն դրեց։

Այդ օրերին վախճանվում է այս Սմբատի եղբայր ծաղկափթիթ Իվանեն[1362] և թաղվում Ելիկումի մոտ[1363]՝ թողնելով մի աղնվածին զավակ՝ Լիպարիտ անվամբ։ Քիչ ժամանակ անց մեռնում է և մյուս եղբայրը՝ քաջ ու մարտնչող Փախրադոլան[1364], որը թաղվում է նրանց կողքին։ Իսկ սրանց եղբորորդի Բուրթելը Հուլավուի զորքի հետ գնաց Բերքա դաշնի[1365] դեմ պատերազմելու այժմ Ղփչաղական կոչվող խազիրական դաշտում և սպանվեց Թերեք կոչվող մեծ գետի մոտ [տեղի ունեցած] ճակատամարտում, յոթ հարյուր տասը թվականին[1366]։ Այնուհետև յոթ հարյուր տասներկու թվականին[1367] մեռնում է վերոհիշյալ եղբայրների մայրը՝ Ասպան, որը թաղվում է իր որդիների մոտ[1368]։ Սմբատին օգնական է մնում միայն իր կրտսեր եղբայր Տարսայիճը[1369], որը զորեղ ու մարտնչող մարդ էր, բոլոր գործերում հաջողակ, նաև բարեպաշտ ու խիստ աստվածասեր։ Նա իր համար կին վերցրեց իմայելացիներից, Սյունյաց տիրոջ դրստերը՝ Արուղ խաթունին։ Սա քրիստոնեություն ընդունելով դարձավ երևելի հավատացյալ և աստծուերկյուղած։ Սրանից ծնվեցին երեք որդիներ՝ Ելիկումը, հետագայում եպիսկոպոս գարձած Ստեփանոսը[1370] և Փախրադոլան։

Տարսայիճը տիրում էր Որոտնի կողմին։ Նա Տաթևի մեծ եկեղեցին զարդարեց սպասքներով ու գեղեցիկ հանդերձանքով, սուրբ եկեղեցուն տվեց վաղուց հափշտակված նրա տիրույթները՝ Հարժիքն ու Ցուրն՝ իրենց սահմաններով, իր ձեռքով տնկած այգին խոտագետում, Քեթիվանքն՝ իր սահման[ներ]ով։ Իր հիշատակի համար հարավային սյան վրա արձանագրություն փորագրեց՝ այսպիսի բովանդակությամբ. «Սա հիշատակագրությունն ու անջնջելի արձանագրությունն է իմ՝ Տարսայիճ իշխանաց իշխանիս, մեծ Լիպարիտի որդուս, մեծ իշխան Սմբատի եղբորս, այս նահանգի կուսակալիս, որ տիրում էի այս գավառներին՝ Բարկուշատի դարպասներից մինչև Բջնիի սահմանը, միաբանվեցի Տաթևի սուրբ Առաքե-

լոց այս եկեղեցուն և ինքնակամ տվեցի իմ հոգեբաժինը այս սուրբ եկեղեցուն՝ վեց գյուղ,— որոնք, ինչպես լսել էինք հին ժամանակներից, սրա սեփականությունն էին եղել՝ Շնհերը, Խոտ ավանը՝ իր սահմաններով, լեռնով ու դաշտով, մեր ձեռքով տնկած այգիները Խոտագետում և Խոտում, Ցուրը և Հարժիքը՝ իր[ենց] սահման[ներ]ով, որ[ոնց] կեսը փղոսով էի գնել, Բորտին[1371], Քեթիվանքը՝ իր[ենց] սահման[ներ]ով։ Եվ տեղիս եպիսկոպոսներ Տեր-Հայրապետը և Տեր-Սողոմոնը[1372] մեզ հիշատակ հաստատեցին ու սահմանեցին տարեկան մեկ քառասուն պատարագ կատարել, տասը՝ Հայտնության տոնին, տասը՝ զատկին, տասը՝ աստվածածնին, տասը՝ ավագ տոներին. քսան օրը ինձ՝ Տարսայիճիս, քսան օրն էլ՝ իմ եղբայր Սմբատի համար։ Արդ՝ մեղանից հետո յուրայիններից կամ օտարներից որևէ իշխան կամ հարկահան պաշտոնյա եթե այս հաստատ սկզմանն ու որոշումը խախտել ջանա կամ մտադրվի հիշյալ գյուղերը կամ այգիները այս եկեղեցուց խլել, Հուդայի և Քրիստոսին խաչ հանած մյուսների բաժինն ունենա, Կայենի ու բոլոր չարագործների պատիժներն ստանա, երեք սուրբ ժողովներից էլ նզովված լինի։ Եվ եթե մահմեդական ղեկավար փոխարինի ու հափշտակել ջանա, աստծուց ու իր փեղամբարից նզովված լինի, սատանայի հետ դժոխքն իջնի, տնով ու սերունդներով ջնջվի և անհետանա. իր օրինականն ապօրինի դառնա, հազար-հազար նալլաթի արժանանա։ Յոթ հարյուր քսաներեք թվականի 1373 նոյեմբեր ամսի 13-ին։ Այս որոշմանը վկա են Նորավանքի եպիսկոպոս Տեր-Սարգիսը, այս սուրբ եկեղեցու փակակալ Սարգիսը և իմ աղատներից Կարապետի որդի Հասանը։ Հաստատ է աստծու կամքով. աստված շնորհավորանի սուրբ վանքին։ Աստծու հույսով ես՝ Տարսայիճս, իմ սեորագրությամբ հաստատեցի ընծաներս։ Արդ՝ ինձանից հետո իմ զավակներից, թոռներից կամ այլ իշխողներից որևէ մեկը եթե մտադրվի զրկել մեր հոգիները, ջանա խափանել մեր հույսը, քանդել մեր սահմանածը, երեք հարյուր տասնութ հայրապետներից նզովված լինի՝ մեռած թե կենդանի ժամանակ, զրկված ու ջնջված լինի այս և հանդերձյալ կյանքից. ամե՛ն»։

Իսկ Սմբատը, խնամակալ դառնալով Ավագի ընտանիքին,

ուրիշ իշխանների հետ խորհրդակցելով՝ դավադրություն է անում. Հուլավու ղանի հրամանով սպանել է տալիս Գոնցային՝ նրան ծովում խեղդելով։ Ինքն էլ իշխում է Ավագի ամբողջ տիրույթների վրա։ Նրա դուստր Խոշաքին կնության է տալիս մեծ խոջա Սահիբ-դիվանին[1374], որը կառավարում էր Աբաղա ղանի[1375] տերության բոլոր երկրները։ Ասում են՝ ըստ դիվանատան մեծ դավթարի՝ ունեցել է 150 թումանի[1376], իսկ մեկ թումանը տասը հազար է։ Հենց նա էլ դիվանատան գլուխն ու ամեն ինչի վերահսկումն էր։ Սա յոթ հարյուր տասնութ թվականին էր[1377]։

Բայց մեծ և բարեպաշտ աշխարհակալ արքան՝ քրիստոնյաների հույս ու ապավեն Հուլավու ղանը, մեռնում է յոթ հարյուր տասներեք թվականին[1378], նրա հետ էլ իր կինը՝ ամենաօրհնյալ Տոնդուզ խաթունը։ Նրանք թունավորվել էին չափազանց խորամանկ խոջա Սահիբի կողմից։ Աստծուն հայտնի է, որ բարեպաշտությամբ սրանք ետ չէին մնում Կոստանդիանոսից ու իր մայր Հեղինեից։ Նրանք թագավորեցին ութ տարի։

Հուլավուի տեղը նստեց իր որդի Աբաղան՝ հեզ, բարի, խաղաղարար մի մարդ, որը ևս սիրում էր քրիստոնյաներին։ Բարեհաղթ հաջողությամբ տասնութ տարի ղեկավարելով գահույքը՝ նա ոմանց դավադրությամբ սպանվում է Համիանում, յոթ հարյուր երեսունմեկ թվականին[1379]։

Սմբատն անզավակ լինելով իր եղբայր Տարսայիճի որդիներից մեկին որդեգրեց. իրեն որդի դարձնելով ուսման տվեց նրան՝ գրքերն ուսումնասիրելու և հոգևորական գործունեության պատրաստվելու[1380]։ Ինքն էլ երկրի տարբեր մասերում շինարարական բազմաթիվ աշխատանքներ տանելուց, վանքեր ու եկեղեցիներ կառուցելուց և [ուրիշ] մեծամեծ ու երևելի գործեր կատարելուց հետո, որոնցով գերազանցեց իր նախնիներին, գնաց արքունի մեծ դիվանը, Արղունի ու Սահիբի մոտ, Թավրիզ կենտրոնական քաղաքը։ Հիվանդացավ ծանր հիվանդությամբ ու այնտեղ էլ մեռավ։ [Մահվանից առաջ] իր ամբողջ իշխանությունը տվեց Տարսայիճ եղբորը, նրան էլ հանձնեց Արղունի ու Սահիբի հովանավորությանը։

ապա ինքը փոխադրվեց հրեշտակների շարքը։ Մեռնելիս նրա մոտ էր իր երանելի և սուրբ ուսուցիչ Շալվեն։ Սմբատն իշխանությունը վարեց մեծաշուք փառքով՝ քսան տարի։ Եկան բոլոր մեծավորները, ողբացին նրան. դագաղը զարդարեցին շքեղորեն, արքայական ճոխությամբ և այդպես բարձրացնելով խաչ ու խաչվառով, վառ ջահերով ու մոմերով, քահանաների բազմության պաշտամունքային բարձրաձայն երգեցողությամբ զարմանք պատճառելով բազմամարդ մայրաքաղաքին՝ հանդիսավոր թափորով հանեցին նրա դարպասներից և բերելով Նորավանքի սուրբ ուխտի հայրենի տապանատունը[1381]՝ աշխարհագումար հանդիսավորությամբ դրեցին տապանի մեջ, իր նախնիների մոտ, յոթ հարյուր քսաներկու թվականին[1382]։ Իր եղբայր Տարսայիճը Սմբատի համար [այնուհետև] կառուցում է դամբարանատուն՝ սուրբ Գրիգորի անունով եկեղեցին[1383], այնտեղ է փոխադրում եղբոր աճյունը՝ [հավերժական] հանգստյան։ Բոլորի հույս աստված քրիստոսը Սմբատին թող հանգիստ ու ողորմություն շնորհի, թող մաքրի նրա հոգու ամբողջ աղտեղությունը, թող նրան դնի հայոց սուրբ ու փառաբանված իշխանների կարգը. թող նրա հիշատակն օրհնությամբ լինի։

Բայց իմացի՛ր, թե իր տոհմի հանդեպ ինչպիսի՞ երախտիքներ կատարեց նա։

Վրաց թագավորությունը Ռուսուդան անունով մի կնոջ[1384] ձեռքում էր։ Իսկ Գեորգի Լաշան ուներ Դավիթ անունով մի որդի, որին այս Ռուսուդանը բազում հնարներով ջանում էր կորստյան մատնել. մի անգամ դնում է արկղի[1385] մեջ ու ծովասույզ անում, մի անգամ էլ հանձնարարում է իշխաններին՝ սպանել, բայց նրանք պահում են գետնափոր տանը. երբեմն էլ քշում էր հեռավոր երկիր, որ կորցնեն։ Բայց նա այդ բոլոր դեպքերում ազատվում է աստծու խնամակալությամբ։ Փախչում-գնում է Մանգու ղան մեծ արքայի մոտ։ Այնտեղից վերադառնալով՝ Ռուսուդանին մեռած է գտնում ու թագավորում է իր հայրենիքում[1386]։ Նա իրեն կին է առնում Խավանդ Եսուգան Նախիջևանցուն, թեև մինչ այդ ամուսնացել էր մեկ ուրիշ կնոջ՝ Գոնցայի հետ և նրանից մի զավակ ուներ՝ Դեմետրե անունով։ Սմբատն ամենայն հավատարմությամբ ընթարկվում էր նրան և բազմաթիվ ու մեծամեծ երախտիք-

ներ էր ցույց տալիս նրա նկատմամբ Հուլավու ղանի ու մեծավորների առջև և առավել ևս՝ մեծ արքունիքում[1387]: Իսկ Դավիթ թագավորն էլ այնքան սիրեց նրան, որ իր գլխին հավասար էր համարում ու իր Դեմետրե փոքրիկ տղային հանձնեց նրան որպես որդի: Սմբատը նրա թագավորության թշնամիներին, [հատկապես առավել] հղփացածներին, մոնղոլական արքունիքում սպանել էր տալիս, որովհետև Հուլավուն այնքան լսում էր նրան, որ նա ում ուզում էր՝ սա նրան սպանում էր, ում ուզում էր՝ կյանքն էր բաշխում: Այդ պատճառով էլ բոլոր մարդիկ դողում էին նրանից, և բոլորի հայացքներն ուղղված էին դեպի նա:

Հետո թագավորը Սմբատին կանչեց Տիղիս՝ կամենալով մեծամեծ պարգևներով երախտահատույց լինել նրան: Ուստի հարցրեց. «Ինչպիսի՞ն է քո կամքը, որ քեզ մեծամեծ պարգևներ ընծայեմ. իմ թագավորությունից ինչ որ կամենաս և ինչ որ քեզ դուր գա, չեմ խնայի»: Եվ Սմբատը վեր կացավ, երկրպագեց նրան ու ասաց. «Ո՛վ թագավոր, այն, ինչ որ ունենք, քեզանից ու քո նախնիներից է տրված, և սա բավական է մեզ. բայց ես քեզանից մի այլ խնդրանք ունեմ, եթե թույլ կտաս»: Թագավորն ասաց. «Ներվել եմ՝ ինչ որ խնդրես ինձանից, կտամ քեզ»: Սմբատն ասաց. «Վերացրո՛ւ մեզ վերաբերող դաժան հիշատակը, որով քո նախնի Գեորգին[1388] զրպարտեց իմ նախնիներին. հրամանագիր գրել տալով նզովք սահմանեց, որ մեզ չթողնեն մեր հայրենիքում: Հրամանագիրն էլ պահեց իր գանձատանը. այն իմ ձեռքը տուր»: Եվ թագավորը զարմանալով նախատինք էր արտատում իր պապի հասցեին, թե ինչո՞ւ այսպիսի զորեղ ու հայտում իր պապի հասցեին, թե ինչո՞ւ այսպիսի զորեղ ու հաջողակ մարդկանց հանեց իրենց երկրից: Ու հրամայեց իր սպասավորներին փնտրել և գտնել հրամանագիրը: Նրանք էլ գնացին, գտան ու շտապով բերեցին: Թագավորը, այն ձեռք առնելով, ոտքի կանգնեց ու ասաց. «Ա՛ռ, Սմբատ, այն գրությունը, որ դու պահանջում էիր»: Սմբատը վեր կացավ, խոնարհվեց ու ասաց. «Ո՛վ արքա, քանի որ այդքան գթասիրտ վարվեցիր, իմ հանդեպ բարերարությունդ կատարելությա՛մբ ցույց տուր. այդ գրությունը գրված է թագավորի ձեռքով, թագավորի ձեռքով էլ պիտի ջնջվի. հրամայի՛ր քո առաջ կրակ վառել, և քո ձեռքով նրա մեջ նետիր այդ գրությունը»: Թա-

գավորն անմիջապես հրամայեց, և կրակ վառեցին: Հանելով սուրը՝ նա կտրատեց թուղթը, գցեց կրակի մեջ ու այրեց, որից Սմբատը շատ ուրախացավ ու մեծապես շնորհակալ եղավ թագավորից: Սրանից հետո ուրիշ բազմաթիվ և մեծամեծ պարգևներով էլ նրան պարգևատրելով, թագավորական ընդհատներով զգեստավորելով՝ Դավիթ թագավորը նրան այդպես վերադարձրեց իր տունը:

Ահա այս ձևով Սմբատը վերացրեց իր նախնիների նախատինքը և գալիք սերունդների համար բարի հիշատակ թողեց: Իսկ Սմբատի մահից հետո, [ինչպես ասվեց,] նրա ամբողջ իշխանությանը տիրեց իր եղբայր Տարսայիճը, որը հարգված և սիրված էր [մոնղոլ] աշխարհակալների ու բոլոր մեծամեծների կողմից: Իր իշխանությունը վարում էր բարձր ու շքեղ փառքով, ահարկու էր բոլոր թշնամիների համար: Այնքան հարգված էր Աբաղա ղանի մոտ, որ վերջինս շատ անգամ իր արքայական հագուստը հանում ու հագցնում էր նրան՝ ոտքից գլուխ, և զուտ ոսկուց քամարը՝ թանկագին ակնեղենով ու մարգարիտներով պատած, կապել էր տալիս նրա մեջքին: Քանի որ Տարսայիճը զորեղ, սրտոտ, պատերազմող մարդ էր ու կազմվածքով ահազդու, բոլոր պատերազմներում մեծամեծ քաջագործություններ ու անպարտելի զորություն էր ցույց տալիս, ուր էլ որ գնում էր պատերազմելու՝ Խորասան, Շամ, Բյուզանդիա, Համս և Համա՝ եգիպտացիների դեմ ինչպես և Դերբենդ[1389]: Ինն անգամ անձամբ է ճակատամարտ վարել ու հաղթող դուրս եկել: Դրա համար էլ մեծամեծ պարգևներով մեծարվել էր արքայից արքայի կողմից ու ստացել ոսկե բալիշը, որը տափարակաձև էր, մի թզաչափ, մեկ լիտր կշռով. դա հենց հաղթանակի պատվո պարգև էր[1390]:

Սա Վրաստանի թագավոր Դավթի ուղեկցությամբ գնաց Խաչենի գավառը, մեծ իշխան Ջալալի[1391] որդի Աթաբեկի[1392] մոտ և նրա քույր Մինա խաթունին իրեն կին առավ[1393], դեռ իր առաջին կնոջ կենդանության օրոք: Դա անհարիր էր քրիստոնեական օրենքին ու չարժանացավ եկեղեցու վարդապետների հավանության: Իր տունը բերելով կնոջը՝ նրանից ունեցավ մի գեղեցիկ որդի, որին անվանեց Ջալալ[1394], և երկու դուստր, որոնցից ավագին[1395] կնության տվեց Իվանե աթաբեկի քեռորդի մեծ Գրիգորի[1396] որդի Հասանի[1397] որդի՝

Խաչենի մեծ ու փառաբանված իշխան Գրիգորին[1398]: Իսկ մյուս դստերը հոր մահից հետո եղբայրները հարս տվեցին վրաց թագավորական տուն՝ որպես կին Դավիթ թագավորի եղբայր Մանվելին[1399]՝ Դեմետրե թագավորի[1400] որդուն. Դեմետրեն էլ յոթ հարյուր տասնինը թվականին մեռած Դավիթ թագավորի[1401] որդին էր:

Տարսայիճը եկեղեցիներ կառուցեց ու վանքերի համար բազում արդյունավետ գործեր կատարեց: Ցաղաց քարի վանքին նվիրեց Գեղարքունիքի Գառնակեր գյուղը[1402] և մի այգի՝ Մաճառակա ձորում[1403]: Իր հիշատակին արձանագրություն է [փորա]գրել սուրբ Կարապետ եկեղեցու վրա[1404], ամենամյա երեք պատարագ է սահմանել, եղբափակել հավաստի նզովքներով, որ այդ հոգեբաժին նվիրատվությունը չխախտեն: Նորոգել է նաև խարխլված ու հնացած բազմաթիվ եկեղեցիներ: Այդ օրերին էլ վախճանվում է նրա բարեպաշտուհի կինը՝ Արուղ խաթունը[1405], որը թաղվում է Տաթևի [վանքի] սուրբ Առաքելոց եկեղեցու դռանը:

[Վրաց] Դավիթ թագավորի [մահից] հետո Տարսայիճը նրա Դեմետրե որդուն բերում է իր տուն, դաստիարակում՝ հոր պատվիրանի համաձայն: Ապա մեծ ջանքերով օժանդակում է նրան, որը հոր տեղում Վրաստանի թագավոր է նստում յոթ հարյուր քսանմեկ թվականին[1406]: Իսկ Աբաղայից հետո, որ մեռավ յոթ հարյուր երեսունմեկ թվականին[1407], այս ամբողջ աշխարհի զանը դարձավ նրա եղբորորդի Թագուտարը[1408], որն իրեն Ահմադ անվանեց: Նա մտածեց վերացնել քրիստոնեական կրոնը և բոլոր ժողովուրդներին մուսուլման դարձնել: Իր իշխանության երրորդ տարում Մուղանում սպանել տվեց մյուս եղբորը՝ Ղոնգրաթային՝ բյուզանդական կողմի սուլթան Խաթեդդինին և Ցաղանի երկու որդիներին: Գարնանային եղանակին անհամար զորքերով գնաց Խորասան՝ Աբաղա զանի որդի Արղունի դեմ, որպեսզի սպանելով վերացներ այդ թագաժառանգին: Եվ նրան գերի բռնելով վերադարձավ:

Բայց այն դիշեր քրիստոնյաների աստվածը մեծավորների սիրտը դարձրեց Արղունի կողմը, որին նրանք ազատեցին բանտի կապանքներից, թագավոր դարձրին ու նրա բոլոր թշնամիներին սրածելով կոտորեցին: Հետապնդելով սատ-

կեցրին Ահմադին ու իր համախոհներին՝ Հասան Մանըլի շեյխին, Սահիբ-դիվանին, Ալինախին և ուրիշ շատերի: Մահմեդականների հետ էր նաև Դեմետրե թագավորը, որին Արղունը սիրեց ու նրան տվեց ամբողջ Հայոց երկիրը՝ Ավագի Շահանշահի, Գագեցու[1409], ինչպես նաև Սադուն աթաբեկի[1410] որդիների տիրույթները: Նա շատ էր սիրում քրիստոնյաներին ու եկեղեցիները և խիստ մեծարեց ու սիրեց նաև Տարսայիճին, որը նույնպես մեծավորների հետ էր:

Ապա Դեմետրեն իր ազատներով վերադարձավ մեծ խնդությամբ, նրանց հետ էլ՝ հայոց ու վրաց մեծամեծները: Երբ հասան Շարուր, թագավորին ընդառաջ գնաց Տարսայիճը և մեծամեծ պատիվներով ու արքայական ընծաներով մեծարեց նրան: Թագավորը Տարսայիճին վերցրեց իր հետ ու տարավ Ավագի երկիրը՝ Այրարատ, և բազում թախանձանքներով համոզելով ու ստիպելով՝ նրան աթաբեկ նշանակեց իր ամբողջ տերության վրա՝ մինչև Տփղիս, Անի ու Կարս: Իր Դավիթ և Մանվել տղաներին էլ հանձնեց նրա ձեռքը՝ դաստիարակելու ու խնամելու:

Եվ այնուհետև Տարսայիճը Հայոց աշխարհի աթաբեկությունն էր կատարում ու մեր ճնշված ժողովրդի համար շատ դյուրություններ ու բարեգործություններ արեց: Գնալով Տփղիս [իր առաջ] բացել տվեց արքունի հնադարանը և կարդաց բոլոր դավթարները: Ջէ՞ որ Հայաստանի վանքերի անունները գրված էին դավթարում, քանի որ վանքերը հարկի տակ էին դրված: Ապա նա կանչել տվեց գլխավոր դիվանադպրության քարտուղարին[1411], փոխեց դավթարը. հանեց ավելի քան հարյուր հիսուն վանքերի անունները. հին դավթարը այրեց կրակով ու այդպիսով բոլոր եկեղեցիներն ազատեց [հարկերից]: Եվ ընդհանրապես Տարսայիճը բոլորի նկատմամբ այնքան բարեգործ ու գթասիրտ գտնվեց, որ Հրազդան գետի մոտի Նեղոս գյուղում[1412] խաչ կանգնեցրին ու կոչեցին նրա անունով:

Նա յոթ հարյուր քսանինը թվականին[1413] Նորավանքի մեծափառ ուխտում բազմաթիվ եպիսկոպոսների, վարդապետների ու վանականների մեծահանդես ժողով գումարեց և իր որդի Ստեփանոսին քահանա ձեռնադրել տվեց[1414]: Ապա հինգ տարի անց նրան ուղարկեց Կիլիկիայի հայոց թագավորու-

թյուն, մեծ կաթողիկոս Տեր-Հակոբի[1415] մոտ՝ եպիսկոպոս ձեռնադրվելու։ Եվ երբ Ստեփանոսը հասավ այնտեղ, կաթողիկոսը վախճանվել էր։ Նա մեծ փառք ու պատվի արժանացավ հայոց Լևոն թագավորի[1416] կողմից, որը և նրան շատ խնդրեց մնալ այնտեղ և նստել հայոց կաթողիկոսության աթոռին։ Իսկ երբ նա չհամաձայնվեց, այն ժամանակ թագավորը մեծ աշխարհաժողով գումարեց, որտեղ ընդհանուր ընտրությամբ զատկի նախորդ օրը հայոց կաթողիկոս կարգեցին Տեր-Կոստանդինին[1417]։ Զատկի տոնի մեծ օրն էլ Ստեփանոսին ձեռնադրեցին Սյունիքի մեծ աթոռի մետրոպոլիտ՝ մյուս եպիսկոպոսների վրա, որոնք գտնվում էին այս ու այնտեղ, ոմանք՝ վայոց ձորում, ոմանք՝ Տաթևում[1418]։ Նրանք էին, որ ընդհանուրի համաձայնությամբ, գրությամբ ու ընծաներով նրան ուղարկեցին կաթողիկոսի մոտ՝ վերականգնելու սուրբ աթոռը, նրա նախկին պատիվն ու դիրքը, որ վաղուց վերացել էին՝ երկրի ավերման ու կործանման պատճառով։ Եվ այսպես Ստեփանոսին պսակելով Տաթևի սուրբ ու առաքելական եկեղեցու հետ՝ փեսայացրին այս աթոռին։ Գրեցին շրջաբերական գրություն՝ ոսկեգիր մագաղաթով, որտեղ բարձրաձայն խոսքերով հայտարարվում էր Սյունյաց մետրոպոլիտության աթոռի վերահաստատման, նրա պատվի վերականգնման մասին։ Ստեփանոսին շքեղացնելով անասելի փառքով՝ հագցրին հայրապետական զգեստը՝ ոսկեթել հյուսվածքով, գլխին դրեցին թանկագին թագ։ Սա եղավ կաթողիկոսի կողմից։ Թագավորն էլ նմանապես նրան հագցրեց արքայական զգեստներից՝ ըստ հայրապետական ձևի, կրկին անգամ գլխին դրեց թանկարժեք թագ՝ ամբողջապես ոսկուց, որն իրենք միթր[1419] էին կոչում։ Տվեցին նաև մետրոպոլիտական մեծախորհուրդ եռածալ եմիփորոն[1420] և խույր՝ ոսկեթել, մարգարտաշար հյուսվածքով և ուրիշ շատ մեծամեծ պարգևներ։ Ու այսպես, շատ բարձր փառքով այնտեղից վերադարձրին յոթ հարյուր երեսունվեց թվականին[1421]։

Երբ նա վերադարձավ, շատ ուրախացան իր հայր Տարսայիճը, եղբայրներն ու ամբողջ երկիրը։ Կարճ ժամանակ անց Տաթևում գտնվող եպիսկոպոսները նախանձով լցվելով նրանցին այլազգիների մոտ, շատ ոճիրներ հրահրեցին ու մեծ

փորձանքներ բերեցին եկեղեցուն։ Եվ մինչև նրանց երկուսի՝ Տեր-Հայրապետի ու Տեր-Հովհաննեսի վախճանը խռովությունն ու հուզումը չդադարեցին։ Իսկ Տեր-Ստեփանոսը, գնալով մեծ աշխարհակալ Արղունի մոտ և նրան ցույց տալով կաթողիկոսի շրջաբերական գրությունը, բացատրեց ամբողջ իրավիճակը։ Արղունը, մեծ պատվով ընդունելով նրան, խիստ գոհունակություն հայտնեց և հրամայեց նրա համար իրենց օրենքի համաձայն յաուլեխ[1422] գրել։ Բոլոր եկեղեցիները, երկիրն ու եպիսկոպոսներին Տեր-Ստեփանոսի վրա հաստատեց, պալատից էլ հետը մարդ դրեց, փայիզա[1423] տվեց ու այդպես ուղարկեց իր աթոռը։ Եվ նա գալով տնօրինեց բոլորին ի փառս աստծու։ Մետրոպոլիտ Տեր-Ստեփանոսի իշխանությանը հնազանդությամբ ենթարկվում էին Տեր-Հովհաննեսի[1424] ազգական Տեր-Գրիգորը և Տեր-Սարգիսը՝ Նորավանքում[1425]։ Այս Տեր-Սարգիսը, ինչպես վերն ասացինք, Նորավանքում բազմաթիվ արդյունավոր գործեր կատարելով, մի առավել երևելի գործ ևս արեց։ Արփա գյուղում գետի վրա կառուցեց մի զարմանալի կամուրջ՝ սրբատաշ քարերով, խիստ բարձր, ընդարձակ ու լայն, որ հիացմունք է պատճառում տեսնողներին։ [Կառուցումն իրագործեց] բազում ծախսերով, հսկայական աշխատանքով՝ հրամանով բարեպաշտ ու մեծափառ իշխան Տարսայիճի, որին Քրիստոսը հազարապատիկը թող հատուցի։

Այդ ժամանակ Արղուն ղանի զորքերը պատակավեցին. մեծ շփոթություն առաջացավ գլխավոր զորավարների [ու այլ պաշտոնյաների] միջև։ Մեծ արյունահեղություն եղավ։ Արղունը բռնեց ավագաց ավագ կամ տերանց տեր կոչված Բուղա Չինքսան զորապետին[1426] ու սպանեց՝ իր դեմ դավադրություն կազմակերպելու մտադրության պատճառով։ Նրա հետ սպանեց նաև նրա բոլոր համախոհներին՝ հազարապետներ Ղազանին և Թուխլուխին[1427], Արուխին[1428], Օճանին[1429] ու բազմաթիվ ուրիշներին։ Այդ նույն առիթով Վրաստանի Դեմետրե թագավորին ևս զրպարտեցին, վրան անհիմն մեղադրություններ բարդելով՝ մահվան դատապարտեցին և տանելով անմեղ տեղն սպանեցին Մովկանա մեծ դաշտում[1430], Կուր գետի եզրին, յոթ հարյուր երեսունութ թվականին[1431]։

Իսկ քրիստոսասեր և ամենաօրհնյալ իշխանաց իշխան

Տարսայիճը, բաղում բարեպաշտական ու [այլ] երևելի գործեր կատարելուց[1432] հետո բոլորելով իր կյանքի սահմանաշրջանը, վախճանվեց Արփայի իր ապարանքում[1433], բազմամարդ ու հանդիսավոր մեծ թափորով տարվեց Նորավանք և թաղվեց եղբոր՝ Սմբատի մոտ[1434], իր ձեռքով կառուցած դամբարանում[1435], յոթ հարյուր երեսունինը թվականին[1436]: Դրանից հետո նրա որդիները վիճում էին հոր գահակալական ժառանգության ու տիրույթների վրա: Եվ նրանք, դնալով արքունական դուռը, ներկայացան աշխարհակալ Արղուն ղանին ու նրան ծանոթացրին իրենց գործերի հանգամանքներին: Իսկ նա կանչեց առաջ ավագագույն եղբորը՝ Ելիկումին, հոր տեղը նշանակելով՝ իշխող դրեց բոլորի վրա:

Ելիկումը թեև տեր դարձավ հոր բոլոր հայրենի տիրույթներին ու իշխանությանը, սակայն չկամեցավ եղբայրներին զուրկ թողնել, այլ եպիսկոպոսների, վարդապետների ու ազատների ներկայությամբ ամբողջ ժառանգությունը բաժանեց և պատշաճ չափով բաժին տվեց իր եղբայր Ջալալին՝ առանձին, հորեղբորորդի Լիպարիտին[1437]՝ առանձին: Եվ այսպես նրանք ապրում էին հաշտ կերպով ու նահանգը կառավարում էին շքեղաշուք արժանապատվությամբ՝ աշխարհակալների և մեծամեծների կողմից պատվի ու փառքի արժանանալով: Երկիրը պահում էին խաղաղ, վանքերը՝ շեն: Եվ քանի որ այս ժամանակ[ներ]ում աշխարհն ավերված ու ապականված էր, վանքերը՝ խափանված պաշտամունքային արարողություններից, մարդիկ ամեն տեղից դիմում էին դեպի Ելիկումի տերությունը՝ այստեղ տեղավորվելով ու հանգիստ գտնելով, ինչպես որ Աղվանքի կաթողիկոս Տեր-Ստեփանոսն[1438] էլ եկավ, բնակվեց նույն Ելիկումի եղբայր Տեր-Ստեփանոսի[1439] մոտ: Այսպես էլ ուրիշ շատ եպիսկոպոսներ, վարդապետներ ու ազնվական մարդիկ եկան: Եվ կարելի էր տեսնել այս տունը աստծու շնորհիվ նոյան տապանի նման աշխարհակործան ալիքների մեջ [լողալիս], որը տեր աստված սուրբ Աստվածածնի ու բոլոր սրբերի բարեխոսությամբ թող անսասան պահի մինչև աշխարհի վերջը:

Այսպիսով շատ փառավոր դարձան [Օրբելյանները], որովհետև իշխաններն իրենց աշխարհիկ իշխանությամբ էին փայլում, իսկ իրենց եղբայրը՝ Տեր-Ստեփանոսը, հոգևոր

շնորհներով ու բարձր եպիսկոպոսապետությամբ էր շքեղանում. և նրանք, սիրով ամուր ձուլված միմյանց, ապրում էին խաղաղությամբ՝ ըստ այն [խոսքի,] թե՝ «Ի՜նչ հաճելի կամ ի՜նչ վայելուչ է, որ եղբայրները միասին են բնակվում»*: Օրբելյան հիշյալ իշխաններն ունեին բարեբոյս բողբոջած զավակներ. Ելիկումն ուներ երկու որդի՝ Բուրթել և Բուղդա անուններով, և մի դուստր[1440], որին կնության տվեց գեղեցկածաղիկ իշխան ու մեծ կուսակալ էաչուն[1441], որը Հասանի[1442] որդին էր, իսկ սա որդին էր մեծ իշխան Պռոշի, վերջինս էլ որդին էր քաջ Վասակի, որի մասին վերը հիշատակեցինք: Լիպարիտը հինգ որդի ուներ, որոնցից ամենամեծագն էր Սմբատը[1443], որը փեսայացել էր Սադուն աթաբեկի տանը, մյուսը Հովհաննեսն[1444] էր, որին Տեր-Ստեփանոսը վերցնելով աճեցրեց, դաստիարակեց, ուսում տվեց ու քահանա դարձրեց:

Արդ՝ ո՛վ ընթերցողներ, ինձ ոչ ոք թող չնախատի, թե, իբր, իմ տոհմն եմ միայն հարգում ու գովում, և կամ կասկածի, թե չափազանցումով ինչ-որ փաստեր հորինեցի ու ավելացրի: Վկա է ինձ տերը, որ այս շարադրանքի սկզբից մինչև վերջը շատ քննություններով հետամուտ եղա ճշտությանը և վերցրի ստույգը. իսկ ինչ որ իմ աչքով էի տեսել, շատերից քիչն ու ճշգրիտը հիշատակեցի այստեղ:

Եվ եթե ես ջանացել եմ [ճշտությամբ պատմել] օտար տոհմերի ու վաղ ժամանակների անցած-գնացած հիշատակների մասին, ապա որքա՜ն առավել [պիտի վարվեի] սեփական ընտանիքի ու տոհմի նկատմամբ: Քանի որ այս գրքում շարադրեցի պատմությունը Սիսական աշխարհի, որին ի վերջո տեր և իշխող դարձան Օրբելյան տոհմի որդիները, ուստի և հարկ ունեցա սրանց մասին ևս պատմել: Այն ընդունեցե՛ք մաքուր մտքով և ինձ մի՛ մեղադրեք: Հավիտենական փա՜ռք: Ամե՛ն:

* Սաղմ., ճԻԳ, 1:

ՀԱՅՈՑ ԱՍՏՎԱԾԱՊԱՍԱԿ ԹԱԳԱՎՈՐ ԼԵՎՈՆԻ[1445] ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՅՈՒՆՅԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏԻ[1446] ՄԻՋՈՑՈՎ ՏԱՃԵՎԻ ՍՅՈՒՆՅԱՑ ՍՈՒՐԲ ՈՒ ՓԱՌԱՀԵՂ ԱՔՈՒՐԻՆ ՆՐԱ ՄԻԱԲԱՆՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգված ու պատվական ծերունի Տեր-Հայրապետը՝ Սյունաց եպիսկոպոսը, Տաճեւի սուրբ ուխտի վերականգնումից հետո նորոգում է սուրբ եկեղեցու խարխլված ու ծակծկված տանիքը, որը փչացել էր երկրաշարժից ու երկար ժամանակվա հնությունից։ Մեծահմուտ վարպետների միջոցով սրբատաշ քարերով, կրաշաղախ միացումներով կառուցում է գմբեթի ծածկույթի ու նրա ներքևի կողմի թեքվածքների և բակում գտնվող գավթի սալակապ տանիքները։ Առաստաղի հին շարվածքի վրայի աղյուսների ու քարերի անկանոն կուտակումները մաքրելիս առաջին խորանի գլխին հյուսիսային կողմից հայտնաբերում են թաքստոց՝ մեջը հավաքված մեծ քանակությամբ սրբություններ, առաքյալների, հայրապետների, նահատակների նշխարներ. այնտեղ էր նաև բարեկենյան աստվածընկալ խաչը։ Դրանք մեծ գոհունակությամբ իջեցրին եկեղեցին, և միաբանության մեջ մեծ խընդություն եղավ։

Այնուհետև շատ օրեր անց ծերունազարդ, բարի վարքի տեր եպիսկոպոս Տեր-Հայրապետը, տիրոջ սիրուց դրդված, տեսության է գնում Երուսաղեմի աստվածակոխ տեղերին։ Հասնելով փափագածին՝ հագուրդ տալով իր հոգու երանելի տենչանքին՝ վերադառնում է հայոց Լևոն աստվածապսակ թագավորի մոտ։ Եվ Լևոնը, որ վաղ ժամանակվանից ցանկություն էր ունեցել միաբանվելու Տաճեւի մեծափառ ուխտին, եպիսկոպոսի հանդիպումից խիստ խանդավառվում է ու, ըստ իր լիահույս հավատի, երկնասաց սուրբ եկեղեցու համար պատրաստում է նվերներ՝ բեմի հանդերձանք՝ բյուզանդական արքունական մետաքսներից, որ հյուսված էին ճարտար արհեստավորների ձեռքով՝ աննման զարդերով, թանկարժեք խաչ՝ ամբողջովին կերտված ոսկու մեջ ամրացված սպիտակափայլ, թափանցիկ քարերից, թանկագին

սկիհներ՝ մաքուր արծաթից, և ուրիշ շատ պարգևներ էլ եպիսկոպոսի համար։ Նա իր ձեռքով [այսպիսի] հիշատակություն է դրում.

«Մարդիկ, որ հոգու աչքով անվախճան կյանքի նայեցին,
Քանի դեռ մարմնով էին, հոգու փրկության ձգտեցին։
Ուստի և ես՝ Լևոնս, թագավորս ազգի հայության,
Հետևողս ուղիղ հավատքին սուրբ երրորդության,
Ուզեցի այս աստվածընկալ ուխտին լինել միաբան,
Որ նրանով հաղորդ լինեմ այստեղի ամեն բարության։
Ահա և աղերսում եմ ձեզ, այս վանքի անձինք սրբազան,
Որ ես ու նախնիներս, որոնք աշեցան հույսով հարության,
Ձեր աղոթքով հասնենք մեղաց թողության,
Լինենք արժանի հանգստյան երկնի արքայության,
Մեր որդիներն ու զարմիկներն էլ, որ մեր տեղը պիտի գան,
Երկար կյանքով, բարի օրով այս աշխարհում թող մնան»։

Հայոց յոթ հարյուր երեսունմեկ թվականին[1447]։

Սյունիքի՝ Տեր-Հայրապետի և Տեր-Հովհաննեսի եպիսկոպոսության ժամանակ հայոց հզոր ու բարեպաշտ արքա Լևոնը, որ իշխում էր Կիլիկիա արևմտյան նահանգում, խիստ մեծ հույսով և առատ պարգևներով միաբանվեց կրոնական միասնական եղբայրության այս սուրբ ուխտին, ինչպես որ հաղորդում են վերոգրյալ խոսքերը։ Արդ՝ մեզ հաջորդողներդ, որ հաստատվելու եք այս աստվածաբնակ աղոթատեղում, այստեղ կատարվող բոլոր բարեգործություններին հաղորդակից դարձրեք հայոց Լևոն բարեսեր թագավորին՝ նրան շարունակ հիշելով մեր հավիտենական օրհնյալ տեր փրկչին աղոթելիս։ Աստվածազոր թագավորի հույսի և սիրո համար մեր այս միաբանությամբ սահմանեցինք սրբի օր՝ զատկի հարության կիրակի օրը, ի հիշատակ նրա. և բոլոր եկեղեցիներում պատարագ են կատարում անխափան, մինչև վերջ։

ՏԵՐ-ՀԱԿՈԲԻՑ[1448] ՀԵՏՈ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ, ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ, ՆՐԱՆՑ ՊԱՏԱՀԱՍ ԴԵՊՔԵՐԻ, ԳԵՐԵՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ. ՀՌՈՄԿԼԱՅԻ[1449] ԵՎ ՖՐԱՆԿՆԵՐԻ ՄՈՎԵՍՋՐՅԱ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայոց սրբասեր կաթողիկոս Տեր-Հակոբից հետո մեծ հանդիսավորությամբ ու աշխարհագումար ամբոխով Սիս քաղաքի սուրբ Սոփի մեծ եկեղեցում հայոց կաթողիկոս են նստեցնում Կոստանդին վարդապետին, որը Խորին կոչված սուրբ և մեծահռչակ մենաստանի առաջնորդն էր։ [Դա արվեց] Հեթումի որդի Հայոց Լևոն թագավորի նախաձեռնությամբ, մեծապատիվ շուքով ու արքունական ճոխությամբ։ Ներկա էր նաև մեր նվաստությունը։ Կոստանդինի աթոռակալելուց երեք տարի հետո Լևոն թագավորը վախճանվում է, որի գահը ժառանգում է ավագ որդին՝ Հեթումը[1450]։ Սա, սրտում կաթողիկոսի նկատմամբ նախանձ ու թշնամանք տածելով, իր համար համախոհ է դարձնում եպիսկոպոսներից, իշխաններից ամենագլխավորներին, այլև վարդապետներից էլ. բոլորին հրապուրելով տիրաննդ գաղափարով՝ ժողով է գումարում Սիս մայրաքաղաքում, մեջտեղ է բերում չար դիտավորություններ։ Հայրապետի վրա զրպարտչական խոսքերով բարդում են բազում անհիմն մեղադրանքներ, որոնք [նույնիսկ] լսողների համար անվայելուչ ու անպատշաճ են։ Առանները քննիչ դարձած տիրոջը, հոտը՝ հովվին, դատափետում են աստծու փոխանորդին։ Եվ այսպես զրպարտում են կաթողիկոսին, որի վերաբերյալ իրավն ու ճշմարիտը միայն աստված գիտե։

Իսկ հեզ ու հանդարտ կաթողիկոսը, ըստ տիրապատվեր հրամանի, չի ընդդիմանում, այլ այդ ամենը հանձն առնելով ասում է. «Այդ բաները ճիշտ են, և ես դրանք խոստովանությամբ կատարել եմ։ Բայց դրանք հայտնիներն են։ Իսկ ծանուկները, որ միայն ծածկագետ աստված գիտե, դրանցից բյուրապատիկ ավելի ամբարված եմ պահում իմ հոգում, ուստի և արժանի չեմ այս աստիճանին. այժմ ինչ կամենում եք՝ արեք իմ նկատմամբ»։ Թագավորն ու ժողովականները նրան պատասխանում են. «Քեզանից հանի՛ր այն, ինչ կաթողիկոսական է, և տո՛ւր մեզ»։ Կաթողիկոսն այս լսելով հոժարությամբ համաձայնվում է։ Եվ հագած հայրապետական բազմախաշ զգեստը, պատրիարքական հնգածալ եմիփորոնը, գլխին դրած թանկագին թագը, մատին՝ մեծագին կնիքը, մատանին, ձեռքը վերցնելով սուրբ Գրիգորի աջը՝ օրհնում է այն թագավորությունն ու ամբողջ երկիրը և ասում. «Շնորհակալ եմ քեզանից, իմ տեր Հիսուս, որ ինձ ենթարկեցիր աշխարհիկ դատաստանի, անցողիկ մեղադրանքների ու ամոթի և չպահեցիր այն մեծ օրվան, երբ դատաստանն ահեղ, պատիժներն անվերջ ու ամոթը հավիտենական են լինելու։ Բայց տուր սրանց բարի առաջնորդ ու ընտիր հովիվ, որ ըստ քո կամքի հովվի քո այս հոգևոր հոտը. դու էլ պիտի որոշես արդարությունը իմ և այն մարդկանց միջև, որոնք վերցրին քո դատաստանն ու նախքան իմ օրը աստվածաբար դատեցին ինձ»։

Եվ ապա հանելով կաթողիկոսական զգեստը՝ դրեց արծաթե մատուցարանի վրա. նույնպես և հանելով եպիսկոպոսական սքեմը՝ դրեց նրա վրա ու ծածկեց թանկագին շորով. մատից հանեց մեծագին մատանին, բերեց գավազանը և այս ամենը տվեց պատգամավորներին ու ասաց. «Ահա այն, ինչ որ պահանջում էիք»։ Ինքն էլ բերել տվեց մի մազեղեն սև զգեստ՝ շատ կոպիտ, հագավ, նույն մազեղենից էլ կնգուղ դրեց գլխին և, հրաժեշտ տալով բոլորին, միայնակ ու լուիկ դուրս եկավ եպիսկոպոսարանից, որը գտնվում էր Սիս քաղաքի մոտ, Գլխիբաց կոչվող տեղում։ Իսկ այն անզգամ, նախանձով ու ոխակալությամբ լցված մարդիկ դրանով չբավարարվեցին և չհագեցան, նրա կատարածի վրա չզղջացին, այլ իրենց մտքում կասկածեցին, թե դուրս կգա այս իշխանությունից, կգնա արևելքի վերին աշխարհը, այնտեղ կընդունվի կաթողիկոսական պատվով, որտեղ մեզ կմերժեն ու կանկախանան։ Եվ [մարդիկ] են ուղարկում, բռնում են նրան ու տանում Լամբրոն[1451] բերդը, դնում մետաղե կապանքների մեջ։ Թեև հետո կապանքները վերցրին, սակայն իրեն բանտից չհանեցին չորս տարի։ Սա տեղի ունեցավ յոթ հարյուր երեսունութ թվականին[1452]։

Այս այսպես անելուց հետո թագավորն ու ժողովը դեպի արևելքի կողմերը, մեր Հայոց աշխարհը, մեզ և ուրիշ եպիս-

կոպոսների ու իշխանների մոտ ուղարկեցին պատվիրակ Ստեփանոս վարդապետ Սկևռացուն, որ մեզ մոտ էր կըրթություն ստացել, հրավիրական գրությամբ հանդերձ, որտեղ կաթողիկոսի աքսորման պատճառի մասին շարադրված էր փուչ խոսքերով, անհիմն մեղադրանքներով կցմցված էին փաստարկումներ, ինչպես որ աղբանոցից հնահավաքներն են ցնցոտիներ հավաքում։ Կոստանդինի վրա հորինված էին շուրջ երեսուն մեղադրանքներ, որոնցից մեկն այն էր, թե պատարագից առաջ շարբաթ է խմում։ Իսկ եթե դա արած լինի, ապա ոչ թե ագահությունից կամ երկյուղած չլինելուց, այլ՝ մարմնի տկարության պատճառով։ Երկրորդը՝ թե Հռոմկլայի անառականոցներից հարկ է վերցնում։ Ո՛վ մեղադրող[ներ], դա կարգ է հայերի, հույների և մյուս բոլոր ժողովուրդների ընդհանրական քաղաքներում։ Հո նրա կողմից չի՞ հիմնվել անառականոցը։ Իսկ եթե վերցրել է, ապա չի մուծել եկեղեցի՝ որպես նվիրատվության կամ պարգև, այլ ռոճիկ է տվել բերդապահ սպասավորներին։ Եվ եթե դա վնաս է, ապա ինչո՞ւ հայրապետական կանոններում սահմանված է պռոնիկներից, շնացողներից ու բոլոր վնասակար մարդկանցից դահեկաններով տուգանք վերցնել եկեղեցու օգտին։ Իսկ եթե դու՝ թագավորդ, մտածեցիր ժողովրդի համար բարեգործություն անել, դա թագավորի գործն է. նախ ինքդ վերացրու քո թագավորությունից, ապա հրամայիր բոլորին, որ վերացնեն։ Մյուսներն էլ սրանց նման մեղադրանքներ էին, որոնք երբևէ կասկած չէին առաջացնում, թե ինչ-որ վնաս են բերում հավատքին կամ եկեղեցուն, և ավելորդ ու անպատշաճ համարեցինք դրանց մասին ևս այստեղ շարադրել։

Այս բաներից հետո մեզ մեծարանքով հրավիրում էին գնալ նոր հայրապետի ընտրության ժողովին։ Այդ հրավերին այսպես պատասխանեցինք. «Մենք հասու կամ կողմնակից չենք [կաթողիկոսի] այդ կարգալուծմանը, որ նորոգմանն էլ մասնակցենք։ Ով ինքնահաճ կամքով կարգալուծումն արեց, նա էլ թող նոր ընտրության մասին հոգ տանի, և արարչի կամքը թող տնօրինի իր եկեղեցուն»։ Պատվիրակը վերադառնում է ու տեսնում, որ նախքան պատասխանն ստանալը կաթողիկոսական աթոռին հաստատել են Ստեփանոս անունով մի ճգնավորի, որը բոլոր տեսակի առաքինությունն[եր]ով լի լավ մարդ էր։ Նրան Հռոմկլայեցի[1453] էին կոչում։

Բայց այս ժամանակ եգիպտական զորքերը սուլթան Ալ-'ֆիի գլխավորությամբ խառնիճաղանջ բազմությամբ գալիս են Տրիպոլիի մեծ մայրաքաղաքի վրա, որը ծովեզերքին[1454] է, և այնտեղ էին գտնվում Անտիոքի[1455] պարտիարքի ու բազավոր հորջորջվող իշխանի[1456] աթոռ[ներ]ը։— Չէ՞ որ յոթ հարյուր տասնյոթ թվականին[1457], երբ Փնտուխտար սուլթանը գրավեց Անտիոքը, գերեց ու կոտորեց ավելի քան տասներկու բյուր[1458] մարդ, քանդեց ու ավերեց երկնասլաց եկեղեցիները, պարիսպների մեջ [արյունը] ծովացրեց, պատրիարքական աթոռը փոխադրվեց Տրիպոլի։— Սուլթանը պաշարում է քաղաքը, իսկ այն հանձնում է մի ուխտադրուժ ու անիծյալ ֆրանկ կոմսի, որն այդ մեծ քաղաքի իշխանն[1459] էր։ Քաղաքը վերցնում, անողորմ կերպով սրով կոտորում կամ գերեվարում են անթիվ ու անհաշիվ քրիստոնյաների, քանդում ու հրդեհում են եկեղեցիները։ Եվ մեծ եկեղեցում գտնվող Քրիստոսի արձանը՝ պրկված խաչի վրա, որը երբեք մարդ չէր կարող կասկածել կամ նկատել, թե անշունչ նյութից է, այլ թվում էր, թե իր մեջ շունչ ու հոգի ունի, վայր են գցում, պարանոցից պարան կապում, քարշ են տալիս փողոցներով, մինչև որ ջարդ ու փշուր է լինում։ Եվ այդ պատճառով մեծ սուգ եղավ բոլոր քրիստոնյաների համար։ Սա յոթ հարյուր երեսունութ թվականին[1460] էր։ Մեկ տարի անց՝ յոթ հարյուր քառասուն թվականին[1461] գրավվեց կորնթական Աքքա մեծ բազմամարդ քաղաքը[1462], որը նույն ծովեզերին է. այստեղ տուն ու աթոռ ունեին ֆրանկների երեք ազգերի թագավորությունները[1463]՝ տաճարականը, հոսպիտալյանը և գերմանականը։ Այնտեղ էր նաև Երուսաղեմի մեծ արծվեսքը[1464], այսինքն՝ արքեպիսկոպոսը։ Քանի որ այնտեղ գտնվող երեք թագավորներից մեկը սեր ու համերաշխություն ուներ Մսրա սուլթանի[1465] հետ, ուստի խաբվեց նրա այն [խոսքերից,] թե՝ «Այդ քաղաքը տուր իմ ձեռքը, իսկ ես կվերացնեմ մյուս թագավորներին ու ամեն ինչ կհանձնեմ քեզ»։ Եվ այդպես խաբեությամբ վերցնելով անառիկ քաղաքն ու անմատչելի ամրոցը՝ հիմնիվեր կործանեց, փլցրեց բոլոր զարմանակերտ շինությունները, բնակիչներից ոմանց կոտորեց։ Շատերն էլ, իրենց ունեցվածքով հանդերձ, նավ նստելով, հեռացան։ Բայց հոսպիտալյան ասպետության թագավորին[1466], որ համերաշխ էր սուլթանի

հետ, վնաս չպատճառեցին, այլ յուրայինների հետ դուրս հանեցին քաղաքից, և նա անցավ ծովի այն կողմը, ֆրանկների մեծ աշխարհը։ Այդ պատճառով էլ անմխիթար սուգ պատեց բոլոր քրիստոնյա ժողովուրդներին։ Այս բոլորից հետո աստված բարկացավ մեր հայոց ասքանազյան սերնդի վրա և մեր ծովացած մեղքերի պատճառով իր բարկության բաժակով մեզ խմեցրեց դառն մրուրը. հիշեց Կոստանդինին[1467] ղրպարտելը և արթնացրեց իր եկեղեցու վրեժխնդրությունը, Մսրա սուլթանին անթիվ զորքերով շարժեց Հռոմկլա անպարտելի ամրոցի վրա, որը հայոց հայրապետների գահն ու կաթողիկոսների աթոռն էր. այնտեղ կային անպատմելի սրբություններ՝ առաքյալների, հայրապետների ու բոլոր գլխավոր նահատակների նշխարներ և մեր ժողովրդի համար փառավորագույնը՝ սուրբ Գրիգոր Լուսավորչի աջը, ինչպես և գավազանը, աթոռը ու այն սեղանը, որի վրա պատարագում էր Քրիստոսին, հողաթափը, նաև այն շղարշը, որ սուրբ Հռիփսիմեի թաշկինակն[1468] էր, ու արյունով ներկված վարշամակը[1469]։ Սուլթանը, մեկ ամիս պատերազմելով, նաև գրավեց քաղաքը, ապա՝ ներքին բերդը, այնուհետև՝ շատ բարձր ամրոցը[1470], որտեղ էին Գրիգոր կաթողիկոսի կառուցած գեղակերտ եկեղեցին ու հայրապետի ապարանքը։ Բռնելով Տեր-Ստեփանոս կաթողիկոսին տասներկու եպիսկոպոսների, բազմաթիվ քահանաների ու սարկավագների հետ՝ տարան սուլթանի մոտ. բերդն ավարի մատնեցին, կողոպտեցին եկեղեցու սպասքները, աստվածային անկշռելի գանձերը և ամբողջ ունեցվածքը, բայց եկեղեցին չքանդեցին։ Ապա մեծ խնդության մեջ գտնվող սուլթանը շատ բաների մասին խոսեց կաթողիկոսի հետ ու այս էլ հարցրեց. «Այսքան ժամանակ, ավելի քան հազար տարի, դուք այստեղ նստում էիք, բայց մեր սուլթանները բազում անգամ ջանացել են գրավել սա և չեն կարողացել. իսկ ինչպե՞ս եղավ, որ քո կաթողիկոսության ժամանակ մեր կողմից գրավվեց»։ Կաթողիկոսը պատասխանեց. «Ես չգիտեմ, միայն աստված գիտե. մի՞թե մեր մեղքերի պատճառով այսպես կատարվեց»։ Սուլթանն ասաց. «Սա իմ զորությունից չէ, այլ աստված ձեզ ու այդ բերդը իմ ձեռքը մատնեց, որովհետև ես երեք անգամ մտածեցի հեռանալ, իսկ ձեր աստվածը ինձ թույլ չտվեց, արգելեց ու այս բերդն

էլ ինձ հանձնեց»։ Այս ասելով բերդապահներ նշանակեց ու հրամայեց շինել պարիսպը, որ բաբաններով[1471] էին փլցրել։ Իսկ ինքը վեր կացավ, այնտեղից գնաց Դըմբըշխ[1472], կաթողիկոսին ցույց տվեց քաղաքացիներին՝ նրան մահ ածելով հրապարակներում։ Այնտեղից էլ գնաց Մսր՝ իր հետ էլ երկաթե կապանքներով տանելով կաթողիկոսին։ Այնտեղ բանտում մեկ տարի մնալով՝ երջանիկ ու փառավոր կաթողիկոս Տեր-Ստեփանոսը վախճանվեց։ Քրիստոնյաները թույլտվություն ստանալով նրան տարան Հաբեշստանի ասորական մի եկեղեցի և պատվով հանգստյան դրեցին։ Այս կործանումը եղավ յոթ հարյուր քառասունմեկ թվականին[1473]։ Բոլոր սրբությունները, որ գերվեցին, կորան անհետ ու անդառնալիորեն և բնավ չերևացին, թեև Հեթում թագավորի[1474] կողմից բազում անգամ որոնումներ կատարվեցին։ Բայց Հռոմկլայի առումից հետո նրան թողեցին Բհհեստին ամրոցը[1475]։

Ո՛վ դատավոր և քո հայրապետին ղրպարտող[1476], ահա տեսար, թե ինչպես աստված շուտափույթ կերպով վրեժ առավ, պատուհաս բերեց՝ արդարությանը հետամուտ լինելով։ Քանի որ դու Կոստանդին կաթողիկոսին Գլխաբաց եկեղեցուց արտաքսեցիր, նա էլ քոնին[1477] արտաքսեց Հռոմկլայի մեծ աթոռից. դու քո ձեռքով Կոնստանդինին մերկացրիր կաթողիկոսական զգեստից, նա էլ Մսրա սուլթանի ձեռքով մերկացրեց քո դրած հայրապետին. Կոստանդինին կապանքներով բանտ ուղարկեցիր Համբրոն, նա էլ քոնին կապանքներով բանտարկության ուղարկեց Մսրա անդառնալի զնդանը։ Այժմ ո՞ւր են հայրապետական զգեստները, ո՞ւր՝ թանկագին թագը, ո՞ւր՝ սուրբ Գրիգորի աջը, գավազանն ու աթոռը, որոնցով պարծենում էիք։ Ավա՜ղ մեր անմտությանը, որ ինչպիսի՜ տույժի ու փորձանքի մատնվեցինք։

Եվ արդ՝ այս աթոռը, որ դրվեց Հռոմկլայում, հիմնվել է սուրբ Գրիգորիս կաթողիկոսի կողմից, որը և՛ Վկայասեր կոչվեց[1478]։ Չէ՞ որ Հայաստանն այն ժամանակ աթոռ[անիստ] չուներ, և [կաթողիկոսները] շրջում էին այս ու այնտեղ։ Գրիգորիսը այս բերդը գնեց Ջուլին կոչված ֆրանկ մեծ իշխանի կնոջից ու որդուց, այստեղ աթոռ դրեց ու հաստատեց հայոց հայրապետական տուն, որտեղ նստեցին տասը կաթողիկոսներ՝ առաջինը՝ Գրիգորիսը, ապա՝ նրա եղբայր Ներ-

սեսը[1479], ապա՝ նրանց եղբորորդի Գրիգորիսը[1480], որը կառուցեց եկեղեցին, ապա՝ Գրիգոր Տղան, որն ընկավ Կոպիտաոի քարափից[1481], ապա՝ Գրիգորիս Ապիրատը[1482], ապա՝ Հովհաննեսը[1483], ապա՝ Կոստանդինը[1484], ապա՝ Հակոբը[1485], ապա՝ մյուս Կոստանդինը[1486], որն աքսորվեց, ապա՝ Ստեփանոսը[1487], որը գերի տարվեց Մսըր ու այնտեղ մեռավ։ Մինչև աթոռի գրավման օրը ավելի քան հարյուր քառասուն տարվա ժամանակ էր։

Այս բոլոր իրադարձություններից հետո Հեթում թագավորը[1488] դարձյալ ժողով է գումարում յոթ հարյուր քառասուներկու թվականին[1489] և կաթողիկոս է ձեռնադրել տալիս Տեր-Գրիգորին[1490՝ Անավարզայի[1491] եպիսկոպոսին, որը գիտնական ու առաքինի մարդ էր, սիրում էր եկեղեցին, տոնասեր էր, տոնախմբությամբ էր նշում տերունական տոները, պայծառացնում էր նահատակների հիշատակը։ Գիտեր լատին և հույն ժողովուրդների լեզուն ու դպրությունը։ Սրա [աթոռակալության] երկրորդ տարում բոլոր ժողովուրդների մոտ եղան լուսնի բոլորման [չափանիշի] խանգարում ու զատիկի տոնի շփոթ, որովհետև հասել էինք այն «սխալական տանը», որը նշված է հինգհարյուրյակում[1492], որով լուսնի բոլորումն ընկնում էր՝ ըստ հույների՝ ապրիլի վեցին, ըստ եբրայեցիների՝ նիսանի[1493] տասնվեցին, ըստ հայերի անշարժ տոմարի՝ արեգի[1494] քսաներեքին. իսկ լուսնի բոլորման այդ օրը կիրակի էր, ուրեմն պետք էր [զատիկ տոնին] հատկացնել հաջորդ կիրակի[1495]։ Այդ պատճառով [քրիստոնյա մյուս ժողովուրդները] մոլորվեցին ճշմարտությունից, կույրի նման կորցրին ուղենիշը և հարության տոնը[1496] տոնեցին ողոգոմնի օրը[1497], զատիկ արեցին, չարշարանքի պասեքը[1498] կերան, խմեցին՝ աստվածասպանների հետ ուրախանալով։ Իսկ հայերը ստուգությամբ մնացին ճիշտ դիրքում։ Եվ մեր հավատակից եղբայրներից նրանք, որ Երուսաղեմում էին, եկան մեզ մոտ ու հավաստիացրին, թե այն լույսը, որ իջնում էր շաբաթ օրը՝ ի պատիվ [Քրիստոսի] գերեզմանի, մերով իջավ՝ ճիշտ և ճիշտ ճրագալույցի օրը։ Դրան ականատես լինելով՝ մենք փառաբանեցինք աստծուն, իսկ այլազգիների կողմերը ամաչելով ապապանձվեցին։

Բայց մեր Տեր-Գրիգոր հայրապետն այստեղ մեծապես

սխալվեց ու շեղվեց ճշմարտությունից, որովհետև, թողնելով սուրբ նախնիների բնական ու հարազատ ճանապարհը, հետևվեց հույների թյուր ու խոտոր ընթացքին և թագավորին համոզելով բռնությամբ տոնեց. ամբողջ Կիլիկիային հարության տոնը տոնել տվեց [նրան նախորդող կիրակի՝] ծառազարդարի օրը՝ զատիկն անելով առանց ազատության։ Սակայն պարկեշտ վանքերում դա չընդունեցին, եպիսկոպոսներից ու վարդապետներից շատերը հավանության չարժանացրին, ոմանք էլ գաղտնի տոնեցին։ Այդ պատճառով շատերը դատափետումով ու աքսորումով հալածվեցին։ Այսպիսի անկարգ արարքներով կաթողիկոսը շատերին մոլորության մեջ գցեց։

Դարձյալ՝ կարգ սահմանեց մեծախորհուրդ տոների ճրագալույց-նախատոնակի թաթախումը չկատարել յուղով, կաթնեղենով և բոլոր տեսակի անմիս ուտելիքներով։ Հրամայեց ձեթ օրհնել հիվանդների, մեղուցյալների ու երեխաների համար։ Այսպես կամաց-կամաց սկսեց հունական նկեղեցու սովորույթները գաղտագողի մուծել մեր եկեղեցին, իսկ մերոնք մեկ առ մեկ ջնջել, վերացնել։ Եվ բազմաթիվ պատվիրակներ համոզման գրություններով ուղարկում էր Կոստանդնուպոլիս, պատրիարքի մոտ՝ խոստանալով կատարել ինչ որ պահանջեն։ Միաբանվելու հանձնառությամբ ասորի Աբունա նեստորական կաթողիկոսի մոտ ևս նույնպիսի թուղթ է ուղարկել, որը մենք իսկ տեսանք։ Բայց մեզ՝ [երկրիս] արևելյան կողմերում եղողներիս, ոչինչ չհայտնեց, միայն այսքանը հաղորդեց, թե՝ «Ուզում ենք, որ Անտիոքի աթոռը մեզ լինի, և այս դժվարին ժամանակների պատճառով ցանկանում ենք մեզ հետ միաբան լինեն հույներն ու [մյուս] բոլոր ժողովուրդները»։ Սակայն եկածներից դառնադաժան մաղձերի հոտը տեղ-տեղ զգացվում էր. և մեր աշխարհից ևս որոշ մարդիկ հավանություն տալով ընդունեցին ու սկսեցին մեր նախնիներին վատաբանել, նորահնար և այլանդակ բաներ անել։

Իսկ մենք, այս բոլորից շարունակ աղիքների ցավով ու լարդի խոցով տառապելով, հալվում ու մաշվում էինք, դիշեր ու ցերեկ ալեծուփ մտքերով [տանջվում]։ Հույսի և ապավինման տեղ չկար, որ [գոնե] սակավաթիվ առաջամարտիկներ վերցնեինք հոգևոր մարտին ընդդեմ կանգնելու համար։ Վախենում էինք, թե մեր օրերում արթնանում է չարը՝ պատե-

բաղմելու եկեղեցու դեմ ու մեր մեջ խռովության մրրիկ է բարձրացնում և ոտնակոխ անելով պիտի կործանի ժողովրդիս մնացած մասը։ Այդ պատճառով, երբ եկավ նրա պատվիրակը՝ Կեսարիայի Կոստանդին եպիսկոպոսը, աշխարհիս եպիսկոպոսների ու իշխանների միաձայն խորհրդով մենք գրեցինք մաղթանքի թուղթ՝ ըստ մեր հայաստանյան եկեղեցու ողջամիտ հավատի ու կարգերի՝ ուղղված մեր Տեր-Գրիգոր կաթողիկոսին, որ չհիվանդանա անբուժելի, քաղցկեղի նման եկեղեցու բոլոր անդամներին ակնթարթորեն ճարակող հիվանդությամբ։ Եվ պատվիրակը, գիտենալով մարդկանց վերջերը, չուզեց հանձն առնել թուղթը տանելու՝ հորինելով ինչ-որ պատրվակներ։ Թղթի օրինակն այս էր, որը և զետեղում ենք այստեղ։

ԿԹ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ ԴԱՎԱՆԱՆՔԻՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԹՈՒՂԹ՝ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԻՆ՝ ԳՐՎԱԾ ՍՅՈՒՆՅԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՈՍԻ ԶԵՌՔՈՎ, ԵՎ ՆՐԱՆ ԿԻՑ՝ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻՆ[1499] ՈՒ ԱԹԱՆԱՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑՈՒ[1500] ՃՇՄԱՐԻՏ ՀԱՎԱՏՔԻ ԴԱՎԱՆՄԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Աստվածային անհաղթահարելի զորությամբ բարձրացած և հզորի ինքնագո աջով պարսպված, Հիսուսի բարձր ձեռքերով գուրգուրված, հոգու հիացուցիչ շնորհներով պերճացած՝ հայոց սուրբ, անբիծ, անարատ եկեղեցիս՝ երկնային փեսայի անբասիր ու մաքուր հարսս, որ հիմնադրվել է Թադևոս և Բարդուղիմեոս սուրբ առաքյալների կողմից, արդասավորվել ահարկու և անհամեմատելի այր Գրիգորիսի սքանչելի քրտինքով, նախ անչափ ու անսահման գոհունակություն և անհատնում անվախճան օրհնություն է վերընծայում իր արարչին, որն ամենավերջին բաժակը չխմեցրեց և կորստաբեր հրապուրանքների դիմաց անդառնալի սպառում վրա չհասցրեց՝ ըստ դառնացող տոհմի արժանի պատուհասի ժառանգման, այլ սաստիկ պատիժներից ու ահավոր արկածներից հետո վհատ-

ված հոգուս կրկին կենդանություն, սգապատ ու լքված սրտիս՝ մխիթարություն շնորհեց։ Նաև գլխիս լերկության փոխարեն պանծալի պսակ և մորթի ու քուրձերի տեղ՝ անձնագործ գոհույք, խնջույք ու խրախճանք տվեց։ Դրա համար ինձ հարմար է գալիս բարձրաձայն գոչել Ամովսի որդուց[1501] վերցված [հետևյալ] խոսքերով. «Իմ անձը պիտի ցնծա տիրոջով, որովհետև ինձ հագցրեց փրկության զգեստ և ուրախության պատմուճան, փեսայի պես իմ գլխին պսակ դրեց ու հարսի նման զարդ[եր]ով ինձ զարդարեց»*. այլև Դավթին ասվածի՝ պիտի ասեմ. «Տերը մեզ վրա մինչև վերջ չի բարկանա և հավիտենապես ոխ չի պահի»**։ Դրանից հետո ծնրադիր խոնարհությամբ ողջունում եմ իմ պանծալի ըլխավորիդ, բոլորից սիրալիիդ, չքնաղիդ և հոգուց նորովի սքանչելի դարձած Գրիգորիսիդ՝ հայկյան հանուր սերնդի հորդ և ընդհանուր կաթողիկոսիդ, [որ իշխում ես] Հոնաց և Լփնաց սահմանից, Կասպից ծովից ու Կովկասյան լեռ[ներ]ից մինչև եգիպտական սահմաններն ու արևմտյան ծովը, որտեղ գիշերն իջևանում է արեգակը։ Եվ այս ողջույնի հետ էլ [թուղթս] տեղեկացնում է պատվական գլխավորիդ՝ բերանով անշուշան ու եղկելի անձ Ստեփանոսի՝ Սյունյաց տհասուկի և տերունական տան գահի[1502] առաջնորդի, թե ո՛վ հայր պատվական և պետ պանծալի, բյուրավոր մարդկանց բերաններում կան կցմցված մեղադրանքներ ու բամբասանքներ, խորթ ու հորինված խոսքեր, որոնցից վախենում ենք. ո՞վ գիտե, վերջին ժամանակներս չարը, տեղ գտնելով, մեր անտեղյակ կրոտսերությունը չարաշահելով, ոտնահարում է և հավատքի ու սուրբ եկեղեցում սահմանված փառահեղ կարգի լուսեղեն աստերի սաղարթը,— որ գալիս է սուրբ Գրիգորից, նրա որդիներից և մեր սուրբ նախնի մյուս աստվածանվեր հայրերից, որոնք անչափ ջանքերով, արյունով ու քրտինքով ուղղելով հաստատեցին,— անակնկալ թունալից հրդեհով այրում-մրկում է, փչացնում ու խամրում է նրա պայծառությունը։

Երկու պատճառով ենք այս թուղթը ներկայացնում ձեղ. մեկ ձեր՝ մեր հոր բոլորովին մաքուր ու սուրբ լինելու և ձեղ

* Եսայի, ԿԱ, 10։
** Սաղմ. ՃԲ, 9։

վրա մեր աներիւթա ու հաստատուն կերպով հենվելու պատճառով, մեկ էլ նախատինքով ու հարվածումով փակելու համար զրախոս, փուչ բանների հետամուտ, զրպարտիչ մարդկանց բերանները, որոնք սկյութացիների[1503] նման ու գաբավոնացիների[1504] օրինակով թափառում են և տնետուն սողոսկելով մարդկանց մեջ այսպիսի կասկածահարույց շշուկներ են տարածում. «Մեր կաթողիկոսը հույն է և հույների հետ է դաշնակցում»: Դրա իսկությունը գիտե աստված և դուք: Եվ ոչ միայն այժմ [է այդպես], այլև այն ժամանակ, երբ մեր նվաստության ձերդ փառավորության մոտ էր, Կարմիր լեռան[1505] կողմի վանականները մեր ականջները սաստիկ ձանձրացրին: Եվ աստվածապսակ թագավորն ու ընդհանուր ժողովը, այսպիսի զրպարտանքներից փաստարկ վերցնելով, հոգու կողմից ընտրյալիդ չօծեցին: Այժմ այս պատճառով ձեզանից խնդրում ենք երկու բան, մեկը՝ հրաժարվելու, մյուսը՝ հանձն առնելու: Եվ այս խնդրանքը նախ ոչ թե մարդկանց, այլ դրեթե հոգու դրդմամբ մարդկանց մոլորությունը վերացնելու և թուլերի միտքը բուժելու համար է: Սա հրաժարվելումն է, իսկ հանձն առնելումն է՝ անթերի պահել երեք աստվածագումար ժողովներին համախոհ ու միաբան հայոց լուսավորիչ առաքելական և սուրբ անձ Գրիգորի, նրա որդիների ու թոռների հավատքի սահմանը, որը մեր Հիսուս Քրիստոս տիրոջով, Աստվածածնով և սուրբ ու փրկագործ խաչով է, դրա հետ էլ՝ սուրբ եկեղեցու կանոնական կարգերը, որոնց մասին պատշաճ չէ, որ հանգամանորեն պատմենք կատարյալիդ: Այս բոլորից բացի՝ լրիվ ու ամուր պահել հայոց սուրբ ժողովների կողմից կրկին նորոգված դավանանքը և եկեղեցու կարգերի համար հաստատված ճշգրիտ կանոնները: Այդ ժողովները երկար պայքարով ու մեծ ջանքերով [ուղղված էին] նեստորական չար աղանդի և քաղկեդոնական կանոնների աշխարհակործան, պիղծ ժողովի դեմ: Ամեն անգամ, երբ չարիքը ծիլ էր արձակում, վտանգից պաշտպանվելու անհրաժեշտությամբ հայոց քաղաքներում հավաքվում էին եկեղեցու առաջնորդներն ու երկրի իշխանները և, մանրազնին քննությամբ ջանք դնելով, արմատախիլ էին անում թունավոր որոմի բույսերը, սերմանում էին ճշմարիտ ու բարի դավանքը: Այդ ջանքերի լույսը ոչ թե պետք է վայր գցել ու

հանգցնել, այլ պետք է միշտ վառ պահել սեփական անձի մեջ:

Այժմ վերհիշենք վերը մեր ակնարկած ժողովները:

Նախ՝ Շահապիվանի ժողովը[1506], որին մասնակցում էր [նաև] գիտությունների մեջ անհաղթելի Անանիան՝[1507] Սյունյաց մետրոպոլիտը և Մեսրոպի աշակերտը: Ժողովը գլխավորում էր հավատքի քաջ պաշտպան Հովհան Մանդակունին՝[1508] հայոց բոլոր եպիսկոպոսներով ու իշխաններով: Այս ժողովը քաղկեդոնի ժողովի և չարի կողմից մեր ժողովրդի մեջ ընկած ուրիշ մասնավոր գաղափարների պատճառով էր:

Մուսը՝ Նոր քաղաքի, հայերի և ուղղափառ ասորիների ժողովն[1509] է՝ [ուղղված] Խուժաստանում տարածված նեստորական չար աղանդի դեմ և եկեղեցու կարգերի պահպանման նպատակին: Դա ղեկավարում էր հայոց կաթողիկոս Բաբկենը[1510], որի հետ էր Սյունյաց երանելի Մուշե մետրոպոլիտը:

Մյուս ժողովը՝ Դվինում[1511], Ներսես կաթողիկոսի[1512] օրոք, որն ուղղված էր քաղկեդոնական դավանանքի և Գրիգոր Մանաճիհր Ռաժկի պղծալից վանքում տեղ գտած նեստորական աղանդի դեմ: Նրան մասնակցում էր [նաև] Սյունյաց երանելի մետրոպոլիտ Պետրոսը[1513]՝ քերթողահայր Մովսեսի աշակերտը:

Նույն Դվինի մյուս ժողովը՝ Մովսես կաթողիկոսի[1514] գլխավորությամբ՝ նույնպես ուղղված քաղկեդոնական աղանդի դեմ. նրան մասնակցում էր և մեր Պետրոսը: Այդ ժողովում հաստատվեց հայոց թվականը[1515], սահմանվեց «Սուրբ աստուած, խաչեցար»-ը, և Հիզդրուզիդը նահատակվեց:

Դվինում կրկնված մյուս ժողովը[1516]՝ Աբրահամ կաթողիկոսի[1517] ղեկավարությամբ, որը վերաբերում էր Վրաստանի պիղծ կաթողիկոս Կյուրիոնի բաժանվելուն ու Աղվանքի զատվելուն[1518]: Ժողովին մասնակցում էր Սյունյաց մետրոպոլիտ սքանչելի Քրիստափորը՝[1519] Հայաստանի մյուս [թեմերի] աթոռակալների հետ: Ժողովում լիովին վերացրին քաղկեդոնականների կապն ու շփումը և ահավոր նզովքներով արգելեցին մեզ հարաբերություն ունենալ ու հաղորդակցվել նրանց հետ:

Հայոց մյուս ժողովը Աղվանքի Պարտավ քաղաքում՝ Հայաստանի Եղիա կաթողիկոսի[1520] գլխավորությամբ, ուղղված

նույն քաղկեդոնականների դեմ։ Այստեղ խիստ անարգանքներով հեռացրին Աղվանքի կաթողիկոս Բակուր կոչված Ներսեսին[1521] ու [դատապարտեցին] Սպրամ թագուհուն, և Աղվանքի բաժանված հոգևոր հոտը միացրին հայերին։

Սրան նախորդած մյուս ժողովը, որ եղավ կաթողիկոսի[1522] օրոք Հերակլ կայսեր հրամանով գումարվել էր Թեոդուպոլսում[1523]՝ հայերի ու հույների միաբանության նպատակով, որտեղ եղբը համաձայնություն տվեց ու տգիտաբար մոլորվեց։ Իսկ Սյունյաց և մյուս [թեմերի] աթոռակալները այդ աղանդը չընդունեցին, այլ աստծու շնորհիվ անդրդվելի մնացին։ Այդ պատճառով Եզրի կողմից անարգվեց ու աքսորվեց Հովհան Մայրագոմեցին[1524]։

Մյուս ժողովը՝ Մանազկերտում[1525] Հովհան Օձնեցու օրոք[1526], որը վեց կաթողիկոսների ժամանակ եզրի մոլորությամբ ընդունված աղանդը մաքրեց և ահավոր նզովքներով մեզ հեռացրեց հույներից։

Մյուսը սուրբ հայրերի ժողովն էր Անիում[1527], որտեղ քննելով վրաց [եկեղեցուն] համախոհ գտան Վահան կաթողիկոսին[1528], որը Բաղից էր։ Եվ քանի որ նա սրբապատկեր էր մտցրել հայոց եկեղեցիները ու պայծառ խաչը վերացրել բոլոր սեղանների վերևից և [դրանք] զարդարել սրբապատկերներով[1529], նզովքներով նրան հեռացրին ու տեղը դրեցին ոմն Ստեփանոսի[1530]։

Իսկ վերջում, սպասալար[1531] Զաքարիայի[1532] և վրաց աթաբեկ Իվանի[1533] ժամանակներում գարձյալ սուրբ հայրերի՝ եպիսկոպոսների, վարդապետների և քահանաների ժողով [գումարվեց] Սևան կղզու մոտի Գետահովում[1534] ու միաժամանակ՝ Անիում, որտեղ սաստիկ նզովքներով վերացրին ու հեռացրին վրացական և հունական [եկեղեցիների] բոլոր համախոհներին։

Եվ այսպես այդ բոլոր հայրերն ու եկեղեցական ժողովները[1535] խիստ քննությամբ հայոց եկեղեցին մաքրեցին բոլոր տեսակի որոմներից ու սահմանված դավանանքը և եկեղեցական կարգը անխախտելի կտակով թողեցին մեզ։ Ուստի պետք է ամենայն հնազանդությամբ ամուր պահել այս սահմանվածը՝ առանց հավելման ու պակասեցման, պետք է միշտ ընթերցել նրանց գրածները, դրանցով առաջնորդվել ու

դրանցով ղեկավարել հայոց եկեղեցիները՝ թե՛ դավանանքի, թե՛ տոների կանոնների, ինչպես նաև կենդանարար խորհրդի սահմանվածության մեջ, որը բոլորովին մաքրեցին ամեն տեսակի անպատեհ խառնուրդներից։ Այդ սահմանորոշումը դուք քաջ գիտեք և ավելորդ է, որ ես այստեղ կրկնեմ։ Սրբանք հանձնառություններն են։ Մեզ համար անհնար է ու մահու չափ ծանր նույնիսկ մասնակիությամբ շեղվել սրանցից, այնքան նզովքների պարտական լինել և հեռանալ մեր հայրերի միասնությունից՝ իբրև չար որդիներ ու մեր հայրերի ցանկությունը խախտողներ, որպիսիների պատիժը հայտնի է շարադրվածներից։ Իսկ հրաժարելիներն են՝ ամենևին հեռու մնալ Քաղկեդոնի [ժողովի որոշումներն] ընդունողների դաշինքներից, որոնք, չգիտակցելով Նեստորի հիմնադրած աղանդի էությունը, իրենք իրենց նզովեցին ու կյանքից զրկվեցին. ամբողջ սրտով նզովել նույն ժողովը և նրա բոլոր ընդունողներին, որոնք, երկու մասի ճեղքելով Քրիստոսի անճառ միավորվածությունը, դառնում են աստվածուրաց և մարդադավան. հրաժարվել ու բոլորովին սահմանազատվել սուրբ խորհրդի ամեն տեսակի անկարգ խառնուրդներից, ապականիչ խմորից ու ջրից, որոնցով ուրանում են ավազանի շնորհը և խաթարում լվացման խորհուրդը, քանի որ ինչ մեզ շնորհվեց ծննդից ստինքներով, այն փոխարկում են բմպելիքով։

Ո՛վ թշվառներ, նույնիսկ այս պարգևները տվողի գիտությունն ու զորությունն անտեսեցիք և նրանց վրա ավելացրիք խմորն ու ջուրը։ Չէ՞ որ նա, բարձրացնելով բաղարջն ու անապակ գինին, աշակերտներին ասաց. «Այս արեք ինձ հիշելու համար»*։ Ինչո՞ւ չավելացրեց խմորը և չգործածեց ջուրը։ Բայց սրա վերաբերմամբ մերթ վկայակոչում են Քրիստոսի կողից արյան հետ ջրի հոսումը և տգիտաբար չեն իմանում եկեղեցու խորհուրդը կողերից սկզբնավորված՝ որպես օրինակ մեր նախնի Ադամի և նրա կողի, որից ծնվում են քրիստոնեական բոլոր ժողովուրդները՝ լուսավոր ու անախտ։ Նախ՝ օրինակ ցույց տվեց երկու բանով՝ Հորդանանի լվացմամբ ու վերնատան խորհրդով, և ապա՝ աստվածային կողից բխեցնելով՝ մեզ պարգևեց երկակի շնորհը։

* Ղուկ., ԻԲ, 19։

Դարձյալ՝ սուրբ խորհրդի կատարման ժամին ոչ թե պետք է ամբոխով աշխարհիկ արարողության նման ուսերով իրար հրմշտել[1536] և մի նշխարը ութ կամ տասը պատարագի բաժանել, այլ ահով ու երկյուղով առանձին աստծու հետ միանալ. իսկ եթե աստիճանով հավասար մարդիկ են, իրար մոտ պիտի կանգնեն և հաղորդության ընդունեն որպես պարգև։ Եվ եթե Դիոնիսիոսի[1537] թուղթն են վկայակոչում իրենց օժանդակության համար, [ապա պիտի իմանան, որ] այնտեղ նա չի ասում, թե բազմությամբ պիտի արարողապետ լինեն ու սրբազնագործեն, այլ առաջարկում է մեկը արարողապետ լինի Հիսուսի նման, ներքևում աստվածային սեղանի շուրջ կանգնած մյուս մարդկանց սրբազան արարողությամբ կենաց հացին հաղորդ դարձնի։

Դարձյալ՝ աստծու եկեղեցին չպետք է դարձնել աշխարհիկ սեղանի տեղ, համարձակությամբ նստել ու քնել և դռները բաց թողնել, որ շներն ու խոզերը [մտնեն,] կոխոտեն, ինչպես որ մենք ականատես եղանք, այլ պարկեշտությամբ, սրբությամբ ու զգուշությամբ պետք է պահել, որպես վայել է աստծու տանը՝ օրինակ վերցնելով աշխարհիկ թագավորների տներից, թե ինչպես այնտեղ որքան պահապանների ու [ինչպիսի] զգուշության հարկ է լինում։

Դարձյալ՝ չպետք է մտնել հունական եկեղեցի և տոնի մասնակցել կամ հաղորդվել, ոչ էլ հույների հետ տոնել ծննդյան կամ ավետիսի տոները, այլ սուրբ Հակոբի[1538] ճշգրիտ նշանակումով՝ հունվարի վեցին՝ ծնունդը, ապրիլի վեցին՝ ավետիսը[1539]։

Դարձյալ՝ ինչպես օրենք է հայոց եկեղեցու համար, ամենայն ամրությամբ ճրագալույցը անել նավակատիք[1540] և նախատոնակ, պասը լուծել յուղով, պանրով ու այն ուտելիքներով, որ առանց մսի են։ Եվ քանի որ հինգ օր [ընդգրկող] նավակատիքը լի է մեծ ու պայծառ խորհուրդներով, ուստի բոլորովին չի կարելի մեծ հարության ու ծննդյան նախատոնակը պասերի մյուս օրերին հավասարեցնել։

Թեև շատ մտքեր ու խորհուրդներ ունենք, սակայն չպիտի երկարացնենք ու ինչպես հմացողի սովորեցնենք, որովհետև քիչն էլ իմաստունիդ կբավարարի։

Դարձյալ՝ թեև ընդունում ենք, որ հիվանդների ու մեղավորների համար ձեթ օրհնելը առաքելական կարգ է, բայց հայրերից սովորությամբ մեզ ավանդված չունենք։ Կարծում եմ դա խիստ համարձակություն է տալիս չափազանց ճարպիկներին՝ մեղք գործելիս, որոնք ձեթի հույսով մեղքերով ապականում են իրենց հոգին և քիչ դրամ ծախսելով ձեթ են օրհնել տալիս ու արդարանում։ Այդպիսի «շահեկան» գյուտերը մենք պիտի հեռու վանենք ու անսայթաք ոտքով պիտի ընթանանք մեր հայրերի շավղով։ Իսկ եթե անկատար յուղը երեխաների համար ևս սահմանում, ընդունելի է։ Եվ էլ ինչո՞ւ երկարացնենք մեր խոսքը. համաձայն ենք մեր հայրերի հետ դժոխք իջնել, իսկ հույների հետ երկինք չբարձրանալ։ Այսպիսի ու այսքան խոսքերով բավականանանք։

Աստվածային ղեկավար հայրապետությունդ թող իմացած լինի, որ թեև ամեն բանով հնազանդ ենք ձեզ՝ մեր տիրոջը, սակայն աղաչում ենք մեր տհաս ու տգետ մտքից [բխած] այս սնոտի կարծիքը վերցնել և բուժել, որովհետև տկարին ամեն ինչում պետք է օգնել։ Եվ ինչ որ խնդրում ենք ստորագրված միավորիչ[1541] թղթով, դարձնել հաստատուն ձեռնարկման ու անխախտ որոշման գրություն՝ ձեր սուրբ և երջանիկ եպիսկոպոսների համաձայնությամբ, ու մեզ մոտ ուղարկել՝ որպես անջնջելի վավերագիր[1542], որպեսզի այն ժամանակ առավել հաստատությամբ և հյու-հնազանդ կերպով ենթարկվենք աստվածային ղեկավարիդ, և դու մեր եկեղեցիներում թագավորես՝ արեգակի նման լուսավորելով։

Եվ եթե կամենում եք ավելի կամ պակաս բաներ մտցնել մեր եկեղեցիները, որոնք հայրերից ավանդված չունենք, և կամ եթե մեր այս գլուխները ձեզ համար խոտելի են, այդ դեպքում նեղություն մի՛ կրեք ու մեզ էլ նեղություն մի՛ պատճառեք. թող ձեր կամքով լինի այդ աշխարհը, ինչպես և նա, ով կամենա. իսկ մեզ թողե՛ք մեր այս ստրկական գերության մեջ, և մենք այսպես կմնանք՝ աչք պահելով վերին տնօրինությանը։ Իսկ եթե թագավորական սաստումով մեզ պատժեք, [ապա] մենք պատրաստ ենք տանջանքների, աքսորի, բանտի և մեռնելու՝ հանուն սուրբ և առաքելական հայրերի ավանդների։

Ո՛ղջ եղիր, թագավորական արգասիքդ, գիտությունների

ծնողդ, ճշմարտադավանության մայրդ, հավատի աղբյուրդ, սուրբ եկեղեցու անվախ պաշտպանդ՝ հայոց կաթողիկոս Գրիգորիոս։

Տերանց տերը թող հովանավորի տիրական ագաչնորդիդ»։

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ, ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻ ԵՎ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՈՒՂԹԸ

«Մենք՝ Տեր-Սարգիսս և Տեր-Գրիգորս[1543], նույն թեմից համամիտ ու համաձայն ենք հայրերի՝ վերը շարադրված այս ավանդներին. իսկ ովքեր համաձայն չեն այս հայրենավանդ և հայրապետական խոր ու հաստատուն դավանանքին, նզովված լինեն Սաբելի ու Արիոսի նման։

Ես՝ Բջնու աթոռակալ Տեր-Հովհաննէս, համամիտ ու համաձայն եմ վերը շարադրված այս ուղիղ, հայրենաբաղձ դավանանքին և նզովում եմ ոչ համերաշխ-հակառակվողներին՝ չար հերձվածողների հետ։

Ես՝ Գրիգորս, աշակերտ ու սպասավոր բանին աստծու, որ Բջնեցի մականունով կոչվեցի, այս աթոռի ղեկավարս, ամուր ու անխախտելի միավորությամբ համամիտ եմ վերոգրյալ սուն դավանությանը՝ մինչև մահ, և սուրբ հայրերի անեծքներով նզովում եմ չհավատացողներին։

Ես՝ Տեր-Հովհաննէս, աստծու շնորհիվ Հաղպատի եպիսկոպոսս, իմ թեմով հանդերձ համամիտ ու համաձայն եմ այս ուղղադավան նամակին և նզովում եմ չդավանողներին՝ ուրիշ հերձվածողների հետ։

Ես՝ Հավուց թառի[1544] եպիսկոպոս Տեր-Մխիթարս, անխախտ միավորությամբ համամիտ եմ վերոգրված այս դավանությանը՝ մինչև մահ, և սուրբ հայրերի անեծքներով նզովում եմ չդավանողներին։

Ես՝ Վանական վարդապետի[1545] եղբորորդի Տեր-Մարգարես, համամիտ եմ վերը շարադրվածներին, [ինչպես և] հորեղբորս կտակին, որն առաջարկում է. «Եթե օձը ցանկանում է պոչը շարժել, աշխատեցե՛ք գլխին տեղ չտալ. և խաբեբային մի՛ հավատաք»։ Արդ՝ նախորդ հայրերի այս ավանդներին հակառակվողները թող զրկված լինեն աստծու որդու փառքից։

Ես՝ Գողթնի նվաստ եպիսկոպոս Տեր-Սարկավագս[1546], համաձայն եմ այս աստվածավանդ վճռին, իսկ հավանությունն չավողները թող նզովվեն սուրբ երրորդությունից։

Ես՝ Եսայիս[1547], ուսումնասերներից կրտսերս և ետին ուսուցիչս, իմ աշակերտներով համամիտ ու համաձայն եմ այս գրությանը և վերը նշված մարդկանց։ Ընդունողներին էլ մենք դատապարտում ենք նզովքներով։

Ես՝ Դավիթս[1548], նվաստագի ուսուցիչս և Հայաստանի եկեղեցու վարդապետս, համամիտ ու համաձայն եմ այս ուղղադավան թղթին, որը ճշգրտությամբ բովանդակում է սուրբ հայրերի ավանդությունները։ Նզովքներով դատապարտում եմ չընդունողներին ու հակառակվողներին։

Մենք՝ Քրիստոսի անպիտան ծառաներ Ելիկումս[1549] և Լիպարիտս[1550], փառավոր իշխաններ Տարսայիճի ու Իլանի[1551] որդիներս, մեր եղբայրներով, որդիներով և բոլոր ազատներով մինչև մահ համաձայն ու հնազանդ ենք այս աստվածատուր ու հայրենավանդ ձեռնարկմանը։ Իսկ ովքեր հակառակվում են, թող բաժանված լինեն սուրբ հայրերի միասնությունից։

Մենք՝ աստծու մեղավոր ծառաներ Պապաքս և Էշխիս, բարեպաշտ իշխան Պռոշի որդիներս[1552], մեր ազատներով հանդերձ ամենայն հնազանդությամբ համակամ ու համամիտ ենք սուրբ հայրերի՝ վերը բերված նամակում շարադրված ավանդներին։ Իսկ ով չի ընդունում, թող նզովված ու մերժված լինի մեր հայրերից և աստվածային այս եպիսկոպոսներից»։

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՀԱՎԱՏՔԸ, ՈՐԸ ՆԱ ՈՒՍԱՆՈՂ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԻ[1553] ԱՎԱՆԴԱՏԻՑ՝ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՎ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԿՈՒՅՍ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ԱՆՆԱԽՐԿՈՒՄՈՎ ՈՒ ՀՐԱՄԱՆՈՎ

Մեկ են աստված և կենդանի բանի, իմաստության ու զորության, մարմնավորման, էության կերպարանավորման հայրը, կատարյալի կատարյալ ծնողը՝ միածին որդու հայրը։ Տերը մեկ է՝ միայնը՝ միայնից, աստվածը՝ աստծուց, աստծու կերպարանքն ու պատկերը, ներգործող բանը, բոլոր գոյացություններիս համապարփակ իմաստությունը և ամբողջ

էացածներիս արարիչ զորությունը:— Ճշմարիտ որդին՝ ճշմարտից, անտեսանելին՝ անտեսանելիից, անապականը՝ անապականից, անմահը՝ անմահից, մշտնջենականը՝ մշտնջենականից: Եվ մեկ սուրբ հոգի է, որ պարունակում է աստծու էությունը. նա որդու միջոցով է երևացել ու ներկայացել մարդկանց. որդու պատկերն է, կատարյալի կատարյալը, կյանքի ու կենդանության պատճառը, սրբության բաշխիչը, որով ճանաչվում է հայրը, որ բոլորի վրա ու բոլորի մեջ է. և որդին աստված է, որով ամենքս [կանք]: Երրորդություն [է]՝ կատարյալ փառքով և մշտնջենականությամբ ու թագավորությամբ՝ անբաժանելի և ինքնաբավ, որովհետև ինչ-որ աստցովի բան չէ՝ ծառի նման աճեցված ու մեջտեղ բերված, որպես թե առաջ չէր եղել, միայն հետո է երևան եկել: Որդին երբեք չի պակասել հորից, ոչ էլ որդուց՝ հոգին, այլ հավիտենարար անփոխարինելի և անայլայլելի երրորդություն է»:

ԵՐԱՆԵԼԻ ԱԹԱՆԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ[1554] ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԻ ԱՍՏՎԱԾՏԱՅԻՆ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՆԻԿԻԱՅԻ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆԱԿՈՒԹՅՈՒՄՈՎ

«Ընդունում ենք, որ աստծու որդին նախքան այս հավիտենությունը մշտնջենաբար ծնված է հորից, իսկ այս վերջին հավիտենության ժամանակներում մեր փրկության համար ծնվել է Մարիամից՝ մարմնով, ինչպես որ աստվածանման առաքյալն է ասում. «Իսկ երբ ժամանակի լրումը հասավ, աստված դուրս ուղարկեց իր որդուն՝ կնոջից ծնված»*: Եվ նույն աստվածն ու աստծու որդին գոյություն ունեն որպես հոգի. իսկ մարդու որդին՝ մարմնով, երկու բնություն չէ մեկը՝ որդի, մյուսը՝ երկրպագական, այլ `բանն աստծու մարմնացած մեկ բնություն, իր մարմնով հանդերձ՝ երկրպագելի: Այլև՝ դա երկու որդի չէ. աստծու ճշմարիտ և երկրպագյալ որդին ուրիշ, իսկ Մարիամինը՝ ոչ երկրպագյալ ուրիշ մարդ՝ ինչպես [բոլոր] մարդիկ, այլ, ինչպես ասացի, աստծուց է աստվածը և աստծու որդին մեկն է, աստված էլ նույնն է և ոչ ուրիշ: Մարիամից մարմնապես վերջին ժամանակներում ծնվածը ևս նույնն է, ինչպես որ հրեշտակն է ասում, երբ Մարիամ Աստվածածինը [նրան հարցնում է]: «Ինչպե՞ս պիտի լինի այս բանը, երբ ես տղամարդու չեմ ճանաչում», [հարցնում է Մարիամը]: «Սուրբ հոգին պիտի գա քեզ մոտ, և բարձրյալի զորությունը քեզ վրա հովանի պիտի լինի, ուստի քեզանից ծնվածը սուրբ ու աստծու որդի պիտի կոչվի»,— պատասխանում է հրեշտակը*:

Ծնվածը սուրբ պիտի կոչվի ու աստծու որդի, այսուհետև՝ Մարիամ կույսից ծնված որդի՝ աստծու բնությամբ ու ճշմարիտ աստված և ոչ թե կցորդումով հարմարեցված: Ըստ մարմնի միայն Մարիամից է մարդ, իսկ ըստ հոգու աստծու որդին է ու ինքն էլ՝ աստված: Նա կրել է մեր հոգսերը, ինչպես որ գրված է. «Մեր մեղքերի պատճառով մարմնով չարչարված Քրիստոսը...», ապա և՝ «Նա, որ իր որդուն չխնայեց, այլ մեր բոլորի համար նրան [չարչարանքների] մատնեց»**: Իսկ նա որպես աստված անախտ ու անայլայլ մնաց՝ ըստ մարգարեի ասածի. «Ես աստված եմ և չեմ այլայլվում»: Մեր մեղքերի պատճառով մարմնապես մեռավ, որ դրանով մահը ոչնչացներ հանուն մեզ՝ ըստ պատմող առաքյալի. «Մահ, ընկղմվեց քո հաղթությունը. ո՞ւր է քո խայթոցը, մահ»***: Եվ դարձյալ «Քրիստոսը մեռավ մեր մեղքերի համար՝ ըստ գրվածի»****: Նա մահվանից անհաղթելի ու անմահ է մնացել, որովհետև աստված է՝ որպես անարատ հոր զորություն, ինչպես Պետրոս առաքյալն է ասում. «Մահն անկարող էր նրան բռնել»: Երկրից բարձրացած բանի մարմինը երկինք վերացավ և նստեց հոր աջ կողմում՝ ըստ Դավթի ասածի. «Տերն իմ տիրոջն ասաց՝ նստի՛ր իմ աջ կողմում»*****: Դա հաստատված է թե՛ տիրոջ և թե՛ առաքյալների կողմից: Իսկ ըստ աստվածության հավիտենաբար պարփակված է հոր մեջ՝ հավիտենակից լինելով նրան, որպես հայրական և անճառ զորության՝ ըստ Պողոսի վարդապետության. «Քրիստոսը՝ աստծու զորու-

* Գաղատ., Դ, 4:

* Ղուկ. Ա, 34—35:
** Հռոմ., Ը, 32:
*** Հմմտ. կորնթ. 1-ին, ժե, 54—55:
**** Կորնթ. 1-ին, ժե, 3:
***** Սաղմ., ճԺ, 1:

թյունը և աստծու իմաստությունը»*։ Ըստ իր խոստացածի՝ գալու է ինքը՝ աստծու որդին և աստվածը՝ դատելու կենդանիներին ու մեռածներին, ինչպես առաքյալն է ասում, «խավարի ծածկույթները բացողը, սրտերի գաղտնիքները հայտնողը, յուրաքանչյուրին ըստ արժանվույն գովաստանք և պարսավանք բերողը»։

Իսկ եթե մեկը այս աստվածային գրածներից դուրս քարոզում է՝ աստծու որդուն ուրիշ համարելով, Մարիամից ծնվածին՝ ուրիշ մարդ, կամ եթե մեկը մեր տիրոջ մարմինը ի վերուստ է համարում և ոչ թե կույս Մարիամից, կամ խառնելով ու այլայլելով աստվածային երկրպագելին մարմնական ոչ երկրպագելիի հետ, ապա այդպիսիներին նզովում է սուրբ և ընդհանրական եկեղեցին՝ հետևելով աստվածանման առաքյալի ասածին. «Եթե մեկը ձեզ ավետարանի ավելին, քան ինչ որ ստացել եք, թող նզովված լինի»**։ Ամե՛ն և ամե՛ն։ Թող լինի՛, թող լինի՛»։

2

ԱՐՂՈՒՆ ՂԱՆԻՆ[1555] ՀԱՋՈՐԴԱԾ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ԱՐՔԱՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԺԱՄԱՆԱԿԻ ԲՈԼՈՐ ԱՆՑՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեր երկրում նետողաց ազգից[1556] առաջինը թագավորեց Հուլավուն[1557]՝ ութ տարի։ Նրան հաջորդեց իր ավագ որդի Աբաղան[1558], և ապա իշխեց Արղունը՝[1559] յոթ տարի։ Սրա մահվան պատճառը եղավ իր շատ սիրելի մի հարճը, որի կողմից նա թունավորվեց և մեռավ Մուղանի դաշտում, Թեոդորոսի տոնին։ Նրա մահվան ժամանակ ավագանու բազմաթիվ մեծավորների կոտորած եղավ[1560]. սպանվեցին Խոջան, որ արքայի գանձապետն էր, Սուլթանը, որ ուտելիքների և ըմպելիքների վերակացուն էր, Ջիշուն ու Օրդուղանը, որոնք դատարանների պետերն էին, Սադադոլան՝ բարեբարո մի հրեա, որ մեծ դիվանատան կառավարիչն էր ու մեր երկրի բոլոր հարկերը տնօրինողը[1561], Արքայի անթիվ ու անսահման գանձերը ցիր ու ցան եղան։

* Կորնք. 1-ին, Ա, 24։

** Հմմտ. Գաղատ., Ա, 8։

իսկ զորագլուխներն ու [մյուս] մեծամեծ պաշտոնյանները պառակտվեցին. ոմանք Բաղդադից հրավիրեցին Արղունի ազգական Բայտուին, որպեսզի դնեին արքայական թախտին, ոմանք էլ Բյուզանդիայից շտապեցրին Արղունի եղբայր Քեղաթուին, որը եկավ, արքայական թախտին նստեց ղան՝ աւրջողջ աշխարհի վրա, հայոց յոթ հարյուր քառասուն թվականին[1562]։ Նա հրամայեց փող[1563] կտրել թղթից[1564]՝ գրի ու խոսվածքի դրոշմումով, որովհետև ուզում էր վերացնել արծաթյա դրամը և գործածության մեջ դնել թղթյան։ Այդ հրամանը խստությամբ տարածեց բոլոր քաղաքների վրա։ Նրա իշխման չորս տարուց հետո աղմուկ ու շփոթ ընկավ արքունիքը, որովհետև կասկածեց որոշ մարդկանց վրա, որոնք, նեղվելով նրա դաժան, խստությունն չունեցող ու զազրելի գործողություններից, կամեցան Բայտուի կողմն անցնել։ Սկսեց բռնոտել իր բոլոր մեծամեծներին՝ Ելչիտայիին, որ [արքունական] որսի թռչունների ու գազանների վերակացուն էր, Դոլոտային, որ բոլոր ուտելիքների ու ըմպելիքների տնօրենն էր, Խոնջիբալին, որ բազմաթիվ զորքերի հրամանատարն էր և շատ ուրիշների, որոնց երկաթե շղթաներով կալանավորելով՝ դրեց իր գլխավոր պաշտոնյաների հսկողության տակ, իսկ ինքը զորքով շարժվեց-գնաց Բայտուին հանդիպելու։ Կալանավորներն էլ ծածուկ կերպով դիմեցին Դուքալ անունով մի բյուրապետի և ելդար անունով մի թագավորազնի օգնությանը, որոնք միաբանվեցին նրանց հետ, եկան, այդ կալանավորներին հանեցին բանտից ու բանտարկեցին նրանց պահապաններին։ Վերջիններից մեկը մեծ հազարապետ Խուռումշին էր. նրան բերեցին մեր Տաթևի վանքը, մեզ մոտ բանտում պահեցին երկար ժամանակ, որը և հետո աղատվեց ու [կրկին] հասավ իր պաշտոնին՝ սուրբ եկեղեցու հրաշքով։ Ապա ապստամբները նրանից գետից այս կողմ անցան, մեծ զորք դարձան ու սկսեցին հետապնդել Քեղաթուին։ Իսկ սրա զորքերը, այդ մասին իմանալով, ահաբեկվեցին ու բոլորն էլ լքեցին իրեն և ցիր ու ցան եղան։ Քեղաթուն մենակ մնաց և հարկադրված եղավ վերադառնալ իր պալատը, որը գրավել էր ապստամբների զորքը։ Աղատված կալանավորները և մեծ զորագլուխներ ելքարն ու Դուքալը տեսնելով նրան բռնեցին ու խեղդամահ սատկեցրին, նաև սպանեցին նրա բոլոր համախոհներին։ Այնուհետև

ընդառաջ գնալով Բայտուին՝ Սրավի դաշտում[1565] մեծ խնդությամբ նրան հռչակեցին ղան և թագավոր ամբողջ աշխարհի վրա։

Բայտուն[1566] կրոնով քրիստոնյա էր, բայց, խաբվելով իր ղորագլուխներից, դարձավ մահմեդական։ Նա իր տերությունը ղեկավարում էր թույլ ու վատթար, տղամարդուն ոչ վայել երկչոտությամբ։ Եվ այսպես իշխեց մինչև աշուն։ Տարսայիճի որդի Ջալալին մի քանի մոնղոլ մարդկանցով նա ուղարկեց Ամարաս[1567], որը հին ժամանակներից Աղվանքի կաթողիկոսական մեծ աթոռն էր եղել, և իր մոտ բերել տվեց սուրբ Գրիգոր Լուսավորչի որդի Վարդանի որդու՝ սուրբ Գրիգորիսի գավազանը։ Քանի որ Գրիգորիսի գերեզմանն այնտեղ էր գտնվում, ուստի և գավազանն էլ պահվում էր նույն եկեղեցում։ Գավազանի հետ տարան նաև աստվածահրաշ սքանչելի խաչը, որն ամբողջովին ոսկուց էր պատրաստված, երեսունվեց թանկագին քարերով զարդարված և հին ժամանակներից այնտեղ էր։ [Տեղը ցույց էր տրվել] նույն թեմից մի լիրբ ու անզգամ քահանայի մատնությամբ։ Եվ քանի որ [այդ ժամանակ] այդ տեղերում էր Բյուզանդիայի կայսեր Դեսպինա անունով դուստրը, որը Աբաղայի կողմից կին էր բերվել ու ինքն էլ դաստիարակել էր Բայտուին՝ որպես որդեգրի, բազում թախանձանքներով վերցրեց այդ խաչն ու գավազանը և ուղարկեց Կոստանդնուպոլիս կայսերական քաղաքը։ Այս ձևով Աղվանից աշխարհը զրկվեց թանկագին ու աստվածային այդ գանձերից։

Իսկ երբ աշունը վրա հասավ, Բայտուի դեմ Խորասանից եկավ Աբաղայի որդի Արղունի որդի Ղազանը՝ իր հոր գահի պահանջով, Խորասանի՝ Ղարավունաս կոչված բոլոր զորքերով։ Այդ զորքերի հրամանատարներն էին մեծ և բարեբարո Խութլուշահը, որի անունը նշանակում է «շնորհալի թագավոր», և պատերազմների մեջ անպարտելի ու չափազանց հնարագետ Նավռուզը, որի անվան իմաստն է «նոր տարի»։ Սրանք բոլորն էլ թողել էին իրենց բուն կրոնը և մահմեդականությունն ընդունել։ Այս Նավռուզը Արղունի որդին էր, որ մեր ամբողջ երկրի վրա եղել էր պետ ու կառավարիչ[1568] և բազմաթիվ ոճրագործություններ արել, ապստամբությամբ ընդվզել Արղունի ու նրա որդի Ղազանի դեմ, այժմ միացել

էր վերջինիս հետ։ Նա խիստ ատում էր քրիստոնյաներին ու թշնամի էր եկեղեցիներին. ասպատակությամբ հարձակվելով փոթորկում էր մրրիկի պես՝ անցած առաջապահ մարտական ջոկատի գլուխը, որ մանղլա[1569] է կոչվում։ Եվ [այսպես հարձակվելով] նա կոտորեց ճանապարհները պահպանող զորախմբերին։ Այնուհետև զույժը հասավ արքունիք, ուր տաք-նապ ու աղաղակ բարձրացավ. այնտեղ գտնվողները զգուշությամբ նախապատրաստված չէին, այլ անտեղյակ էին։ Մեծ բյուրապետ Թաչարը դրանից վախեցած գնաց-միացավ Նավռուզին։ Դրա հետևանքով Բայտուի կողմնակից զինվորները սրտաբեկվեցին, բոլորն էլ նրան թողեցին ու փախան։ Փախավ նաև այն հիմար Բայտուն ու եկավ Դուքալի մոտ, որն իր զորքերով այդ ժամանակ նստած էր Նախիջևանի դաշտում, Երասխի եզրին։ Երբ Դուքալը նրան տեսավ, հոգու արիությամբ ամբողջապես թուլացավ. նրա հաղարապետերն էլ երկմտանքի մեջ ընկան և բռնելով Բայտուին ետ դարձրին, ուղարկեցին Ղազանի մոտ, իրենք էլ փախան դես ու դեն։ Իսկ Դուքալը գնաց-թաքնվեց Վրաստանի ամրոցներում, որին հետո Բեքայը բռնեց ու հանձնեց Խուռումշիի ձեռքը, որը և նրան չարաշար կերպով սպանեց։ Նույնպես և Ելդարը փախավ Կարին քաղաքի կողմը, որին հետո գտան մի շեյխի մոտ և սպանեցին։ Այսպես էլ առհասարակ բռնելով [մյուս] մեծավորներին՝ բոլորին սպանեցին։ Դրանց հետ սպանեցին նաև ամեն ինչով բարի Ելջիդային, որը մեր նահանգի տնօրենն էր, տասներկու հազարանոց ջոկատի հրամանատարը. նրան բերեցին Դիլանից ու դաժան մահով սպանեցին։ Ահա այսպես [Խութլուշահն ու Նավռուզը] առանց պատերազմի ու ճակատամարտի գրավեցին այս ամբողջ աշխարհը և Ղազանին թագավոր նստեցրին[1570] իր հայր Արղունի թագավորական տեղում։

Աստվածատյաց այդ Նավռուզը երբ եկավ, հրաման արձակեց առհասարակ քանդել բոլոր եկեղեցիները, կողոպտել բոլոր քրիստոնյաներին, ելիատել քահանաներին։ Այդ պատճառով քրիստոնյաներին ամենուրեք մեծ վշտեր պատճառեցին ու անտանելի աղետների ենթարկեցին։ Քանդեցին շատ եկեղեցիներ, բազմաթիվ քահանաների խողխողեցին, մեծ թվով քրիստոնյաների կոտորեցին։ Իսկ ովքեր կարողացան

սրից խուսափել, նրանց էլ ունեցվածքը հափշտակեցին։ Դերեվարեցին բազմաթիվ կանանց ու մանուկների։ Բաղդադում, Մոսուլում, Համադանում, Թավրիզում, Մարաղայում, բյուզանդական երկրներում ու Միջագետքում անպատմելի ոճիրներ գործեցին։ Իսկ մեր [նահանգի] սահմաններում կողոպտեցին Նախիջևանի եկեղեցիները, գերի վերցրին քահանաներին, բազում չարչարանքների ենթարկեցին, քանդեցին սրբարանների դռները, խորտակեցին սեղանները. բայց գոբագուխները թույլ չտվեցին եկեղեցիները քանդել՝ վախենալով Վրաստանի զորքերից։ Եկան նաև Սյունյաց մեծ աթոռը և ուզեցին քանդել եկեղեցին, բայց կաշառքներով և ուժով մենք թույլ չտվեցինք։ Կողոպտեցին Նախիջևանի գավառի վանքերը, իսկ Հայաստանի մյուս գավառները, որտեղով Երասխը հոսում է, աստծու շնորհիվ [ազատ] մնացին։ Բռնեցին նաև ասորիների կաթողիկոսին, որը նստում էր Մարաղայում, բազում անարգանքներով մերձիմահ չարչարեցին և ամբողջ հարստությունը կողոպտեցին։ Առաքելոց վանքի[1571] եպիսկոպոս Տեր-Տիրացուին ևս բռնեցին, զանազան անպատիվ բաներով ծաղր ու ծանակի ենթարկեցին և խլեցին նրա ամբողջ ունեցվածքը։ Բացի դրանից, նրա վանքում, որտեղ սուրբ Թադևոս առաքյալի շիրիմն էր գտնվում, շինությունները քանդեցին, ավերեցին, խսպառ կործանեցին ու կողոպտեցին։

[Այդ ժամանակ] Բայտուի մոտ [շնորհավորանքի] էր եկել հայոց Հեթում թագավորը[1572], բայց հասավ հիշյալ տագնապալից խառնաշփոթությունների պահին։ Նա մնում էր Մարաղայի եկեղեցում, որը [ասորիների] կաթողիկոսարանն էր։ Հենց նրան էլ վիշտ պատճառեցին։ Նա գնաց, ներկայացավ Ղազանին։ Վերջինս թագավորին մեծաշուք պատվով ընդունեց։ Հեթումը արքային դեմ-հանդիման պատմեց քրիստոնյաների նկատմամբ կատարված աղետալի անցքերի մասին։ Իսկ Ղազանն անմեղ ձևանալով ասաց. «Ես այդ մասին ոչինչ չգիտեմ, ամեն ինչ Նավռուզն է կատարել»։ Եվ ինքը հրամայեց անմիջապես հրովարտակ գրել, [տարածել] ամբողջ երկրում, որ եկեղեցիներին ու քրիստոնյաներին ձեռք չտան, այլ բոլորը խաղաղ մնան՝ յուրաքանչյուրն իր հավատն ու պաշտամունքը համարձակությամբ պահելով։ Այդպիսով

մի փոքր դադարեցին ավազակային հարձակումները։ Եվ Հեթում թագավորը մեծ պատվով ու շքեղաշուք փառքով այնտեղից ետ դարձավ և խաղաղությամբ գնաց իր աշխարհը՝ Կիլիկիա։

Ղազանը, գանությունը գրավելով յոթ հարյուր քառասունչորս թվականին[1573], իշխում էր ահեղ ուժով, ահարկու բռնությամբ, հզոր ու բարձր բազուկով։ Նա իր բոլոր զորքերի ու [հպատակ] երկրների վրա նշանակեց Խութլուշահին՝ մի բարի, հզոր և պատերազմներում հաղթող մարդու, որը բարեկամական մոտիկ [հարաբերությունների մեջ էր] քրիստոնյաների հետ և աջակցում էր նրանց։ Նա փեսայացավ [մեր] թագավորին՝ նրա քույրը կին վերցնելով։ Եվ նրա ազդեցությամբ մեր աշխարհում ու ամբողջ Հայաստանում խաղաղություն եղավ։ Մինչդեռ անիծյալ ու արյունարբու այն գազանը՝ Նավռուզը, գնաց Խորասանի կողմը՝ այն աշխարհը տնօրինելու, մտադրվեց [ինչ-որ] հնարներով դավել Ղազանին։ Եվ վերջինս այդ իմանալով կոտորեց Նավռուզի բոլոր ազգականներին, եղբայրներին, զավակներին, այսինքն՝ ամբողջ տոհմը։ Իսկ ինքը՝ Նավռուզը, երբ իմացավ, որ հայտնի է դարձել իր չար մտադրությունը, փախավ Խորասանի խորքերը։ Դրա համար էլ Խութլուշահը մեծաքանակ զորք հավաքեց ու գնաց նրա ետևից։ Տեր աստված այն անիծյալին հանձնեց Խութլուշահի ձեռքը, որը նրան աշխարհից ջնջեց՝ անհետ կորցնելով։ Նրան մեծ հրաշքով բռնել էին Հրե քաղաքում[1574], որը Մավրից ու Նիշապուրից այն կողմ է։ Նրա հետ էին նաև մեր Լիպարիտ ու Էալի իշխանները, որոնք թքեցին Նավռուզի երեսին, խիստ անարգանքներով ծաղր ու ծանակի ենթարկեցին նրան։

Ահա տեսեք եկեղեցու զորությունը, թե ինչպես ոչնչացրեց իր թշնամուն, իր քանդման վրեժն առավ. չէ՞ որ այդ թշնամու իշխանությունը մեկ տարի էլ չտևեց. նա ամբողջ տոհմով ջնջվեց։ Նրա անունն էլ վերացավ այս աշխարհից։

Դոհությո՛ւն և փա՛ռք եկեղեցու այսպիսի խնամատարին։

Իսկ մինչ այս արքունի ցեղից Ասլան անունով մի մարդ[1575] գլուխ բարձրացրեց, իր կողմը գրավեց բազմաթիվ զորքերի ու զորագլուխների։ Դա սկսեց Մուղանի դաշտում՝ [մտադրվելով] գնալ դանի պալատի դեմ։ Նա անցավ Երասխի այս

կողմը՝ հեծելազորի ավելի շատ բաղմություն հավաքելու նպատակով։ Դանն այս իմանալով՝ Ասլանի դեմ ուղարկեց թաղմաթիվ զորքեր՝ Ջուխան և Խուռումշի զորավարների գլխավորությամբ։ Նրանք եկան, կռվեցին և ջարդեցին Ասլանի զորքերին, իրեն էլ փախուստի մատնեցին[1576]։ Իսկ հետո նրան ևս իր բոլոր համախոհների հետ բռնեցին և սպանեցին։ Մեծ արյունահեղություն արեցին։ Այդ պատճառով Խորասանում սպանեցին նաև Աբաղայի եղբորորդի Սուքային[1577]։ Այս մասին՝ այսքանը։

Սակայն, երբ Նավռուզը եկավ և եկեղեցիները քանդեց, Դեմաւերեի որդի վրաց մանուկ թագավոր Դավիթը իր բոլոր նախարարներով ու ազատազուն մարդկանցով գնաց Մեթևուլեթ[1578], մտավ այն անառիկ բերդը, որը կոչվում է Մոդենախ[1579], այսինքն՝ «ե՛կ և տե՛ս» ու իրեն օգնական դարձնելով մեթևուլներին, փխայցիներին և շրջակա [մյուս] բոլոր ժողովուրդներին՝ գրավեց Ալանաց դուռը, որ հնում Դարիալ էր կոչվում, իսկ այժմ՝ Քասանի կիրճ. այնտեղից հեռացրեց թաթարական պահակազորը։ Դա ճանապարհն է խազարների, ալանների, օսերի, ղփչաղների և Բերքայի սերունդների՝ հյուսիսային աշխարհի այն մեծ թագավորության [զորքերի], որ տեղ այժմ դան են Թոթամանգուն և Նուխան՝ Բաթուի և Սարթախի թոռները։ Այդ խնդրով [Ղազանը] խոստման երդումով շատ պատվիրակներ ուղարկեց Դավթի մոտ, բայց նա չլսեց ու ամրոցից դուրս չեկավ։ Դրանից հետո մեծ Խութլուշահը մեծաքանակ զորքով վեր կացավ-գնաց, մտավ Վրաստան և նստեց Մուխրանի դաշտում, որը թագավորի բերդի մոտ էր։ Նա իմացավ, որ բերդն անառիկ ամրությամբ է։ Պատվիրակների միջոցով Դավթին բերդից դուրս կանչեց, բայց նա չեկավ, այլ իր կյանքի [ապահովության] համար երաշխիք ծառայող պատանդներ պահանջեց՝ [խոստանալով, որ դրանից հետո] կգա։ Ուստի և Խութլուշահը [որպես պատանդ] ուղարկում է իր որդի Շիպաուշին և ուրիշ երեք մարդու մեծամեծ պատվավորներից։ Թագավորը նրանց գնում է հսկողության տակ, իսկ ինքը գալիս է Խութլուշահի մոտ, որին հանդիպում է շատ ընծաներով։ Նրա կողմից էլ արժանանում է պատվի, մեծամեծ պարգևների, ինչպես նաև իրեն չդավելու

պայման ու խոստում է վերցնում։ Այս ամենի համար միջնորդ էր իր կաթողիկոսը։ Եվ այսպես Դավիթը վերադարձավ իր բերդը ու ազատ արձակեց պատանդներին։ Խութլուշահն էլ խաղաղությամբ վերադարձավ Ռանի դաշտը[1580]՝ այնտեղ ձմեռելու։

ՀԱ

ՄԵՐ ՆԱԱՍՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎԵՐՋՈՒՄ ՍՅՈՒՆՅԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԶԶՄԱՆ ՈՒ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ, ԱՅԼԵՎ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԱՆՑՔԵՐԻՆ [ՎԵՐԱԲԵՐՈՂ] ԶՐՈՒՅՑՆԵՐ

Ես՝ Ստեփանոս, աննշան մարմնով ու եղկելի շնչով, պատվելով մորս արգանդից՝ ընծայվել եմ տիրոջ տանը, որդիացել մեծ և արքայաշուք իշխան Սմբատին։ Սերվել եմ Սիսական մորից և Օրբելյան հորից. վերջինս, որ Տարսայիճ էր կոչվում և տիրում էր Բաղքից մինչև Այրարատ։ Իսկ սուրբ ավազանի հոգևոր ծնունդով որդիացել եմ Սյունյաց եպիսկոպոս Տեր-Հայրապետին[1581]։ Դաստիարակվել ու սովորել եմ աստվածային կրոնավոր մարդկանց մոտ։ Վարժվելով ընթերցանության ու երաժշտության կանոններով՝ դարձա սաղմոսերգու[1582] և գրակարդաց[1583] տիրոջ դավիթներում, հրավիրվեցի եկեղեցու դպրության և սարկավագության։ Քահանայացա և երիտասարդ հասակում անպատշաճ հոգով ու երկչոտ մարմնով կրոնական սպասավոր կարգվեցի աստվածընկալ և ահազդու բեմին։ Ուսանեցի աստվածեղեն դպրության կրթարանում, մի փոքր ղգացի [դիտության] քաղցր նյութի ճաշակը և աստծով համակված, աշխարհալույս ռաբունապետ Ներսեսից[1584] իրավունք ստացա ու տհաս-խակությամբ նստեցի վարդապետական աթոռին։ Ես ինքնին խավար լինելով՝ կամեցա ուրիշների համար լույս լինել։ Ես, անմաքուր հոգի ու ապականված կերպարանք ունենալով, կամեցա քարոզել ուրիշներին որպես քահանայապետ։ Ես առանց հոգու հրավերի իմ հանդգնությամբ կամեցա առաջ գնալ։ Ես նախապատրաստեցի ականջներս՝ հետևելու դեպի խավարը հրավիրող «Զգեստ չունեիր» ու «Եվ չար ու վատ ծառա» խոսքերին, նաև լսելու հենց սարսափելին՝ գեհենում այրվելու

կոչող և դեպի դժոխք հրավիրող «Գնա՛» հրամանը։ Այս ամենի վրա ուրիշ հանդգնություն էլ ավելացրի. այն, որ համաձակվեցի հավակնել հայրապետական աստիճանին։ Եվ մեր եպիսկոպոսները, հավաքվելով իմ հոր մոտ, ինձ առաջարկեցին գնալ Կիլիկիա թագավորական աշխարհը, հայոց երջանիկ կաթողիկոսի[1585] ու աստվածապսակ թագավորի[1586] մոտ՝ Սյունյաց աթոռի համար մետրոպոլիտության ձեռնադրում ստանալու։ Մեր հիմարությամբ համաձայնվեցինք՝ չգիտակցելով ահարկու և անտանելի այս լծի ծանրությունը։ Միայն ախտավոր մտքով առօրյա փառքին ախորժեցի։ Դրա համար երանի եմ տալիս չեղածներին և բյուր երանի՝ արգանդից վիժածներին։

Այնուհետև գնացինք, հասանք Սիս մայրաքաղաքը, բայց կաթողիկոսին վախճանված գտանք[1587]։ Դա մեզ համար մեծ ուշ եղավ։ Այնտեղից գնացինք մյուս քաղաքը՝ Ադանա։ Ներկայացանք թագավորին, որի կողմից մեծ պատվի արժանացանք՝ առավել, քան մեր արժանիքն էր։ Երեք ամիս մնացի թագավորի մոտ, մինչև որ աշխարհագումար ժողովով քառասուն օր ընտրություն կատարեցին և Կոստանդին անունով մի արժանավոր մարդու օծեցին հայոց պատրիարք, զատկի մեծ ճրագալույցին։ Հետևյալ օրն էլ հենց մեզ ձեռնադրեցին ու պսակեցին Սյունյաց սուրբ և առաքելական եկեղեցու հետ. պատվեցին մեծամեծ պարգևներով և կրկնակի թագով հաստատեցին մետրոպոլիտության աստիճանում՝ էդչելով հայոց պատրիարքի պռոտոֆրոնտես[1588], այսինքն՝ հայոց բոլոր եպիսկոպոսների դլուխ և առաջին աթոռակալ։ Եվ այսպես մեծաշուք պատվով վերադարձանք այնտեղից ու հասանք մեր աշխարհը։ Տաթևի եպիսկոպոսներից շատ վշտեր կրեցինք, մինչև որ նրանք իրենց մահով [այս աշխարհից] փոխադրվեցին։ Եվ մենք մնացինք դառն կյանքով՝ տնօրինելով աթոռիս բաժանված թեմերը։ Որոշեցինք մեկ միաբանված տուն լինել՝ միավորելով Տաթևն ու Նորավանքը։

Բայց նախորդ կաթողիկոսների՝ Տեր-Կոստանդինի ու Տեր-Հակոբի և նախորդ եպիսկոպոսների՝ Տեր-Հովհաննեսի ու Տեր-Ստեփանոսի, Տեր-Սարգսի ու մյուս Տեր-Ստեփանոսի, Տեր-Գրիգորի ու Տեր-Սարգսի հրացայտ անեծքների պատճառով վերջիններիս կողմից Նորավանքում ամբողջ Վայոց ձո-

րի եկեղեցական հաստատված ժառանգությունը չխախտեցինք, այլ, ինչպես որ մինչև մեզ տնօրինում էին, այնպես էլ թողեցինք [Որոշեցինք], որ մյուս բուն աթոռն էլ պիտի տրնօրինվի, բայց այս երկուսի համար էլ մեկ եպիսկոպոսություն պիտի լինի՝ մեկ առաջնորդով ու իշխողով. և ով որ եպիսկոպոս լինի, չհամարձակվի երկու հայացքով ու երկու մտքով նայել սրանց՝ մեկի նկատմամբ առավել հոգ տանելով։ Այս տան մեջ ոխ ու նախանձ չպիտի լինեն. սրանց կրոնավորները միմյանց չպիտի ասեն «Դու տաթևացի ես կամ նորավանքցի», այլ պիտի լինեն ինչպես մեկ անձ ու մեկ սիրտ, քանի որ սկզբից էլ մինչև մեր ժամանակները այդպես էին։ Եվ եթե ժամանակները փոխվեն, և Տաթևն ավերվի, նրա եկեղեցական ժառանգությունը Նորավանքի եկեղեցին պիտի ժառանգի, նրա վանականներն էլ այստեղ պիտի հավաքվեն։ Իսկ եթե Նորավանքին ավեր հասնի, նրա ժառանգությունը և հարստությունը Տաթևի եկեղեցին պիտի վայելի։ Եվ մեզանից հետո եթե մեկը այս որոշումը խախտի կամ մտադրվի մյուս կողմին խաբել ու դավաճանել, ցավագին անեծքների արժանանա մեզանից ու բոլոր հայրապետներից, նզովք ընդունի սուրբ երրորդությունից ու միացած լինի բոլոր չարագործներին։ Ապա եթե ինչ-որ հակառակություն ու խառնաշփոթություն հարուցվեն, ինչպես որ մեր ժամանակ եղավ, մեղսագործները անեծքների պարտական լինեն, և ժամանակի իշխողները [նրանց] արժանի [չտատաստանը] տեսնեն։

Այնուհետև՝ երբ մենք Կիլիկիայից վերադարձանք, որոշ օրեր անց գնացինք աշխարհակալ արքա Արղունի մոտ և ներկայացանք նրան։ Նա մեզ ընդունեց, չափազանց հարգեց ու սիրեց։ Մենք նրան պատմեցինք մեր ցավերի մասին ու ցույց տվեցինք շրջաբերական գրությունը, որը նա թարգմանել տվեց ու կարդալ տվեց իր ներկայությամբ։ Ցույց տվեցինք և հայրենի աշխարհիկ [ու հոգևոր] տիրույթներին վերաբերող իմ հոր տված հրամանը[1589], որով մեզ համար [այդ թվում] ժառանգական բաժին էին հանված նրա տիրապետության մեջ գտնվող վանքերը՝ Տաթևը, Նորավանքը, Ցաղաց քարը, Արատեսը[1590] և մյուս բոլորը։ Արղունն այդ տեսնելով հրամայեց հրովարտակ գրել. այդպիսով ամբողջը վերստին մեզ վրա հաստատեց կրկնակի իրավունքով՝ հոգևոր ու աշխարհիկ։

Ս՛խաժամանակ մեզ առաջարկեց մնալ և օրհնել արքունիքի եկեղեցին[1591], որ ուղարկել էր Հռոմի մեծ պապը։ Այնտեղ էր և նեստորական կաթողիկոսը[1592]՝ տասներկու եպիսկոպոսներով, որոնց հետ և օրհնեցինք մեծ հանդիսավորությամբ։ Եվ ինքը՝ Արղունը, իր ձեռքով մեզ հագցրեց հայրապետական զգեստը, որի ձևն անձամբ էր որոշել կաթողիկոսի, մեզ և բոլոր եպիսկոպոսների համար։ Ապա ժամհարը[1593] ձեռքին բռնած՝ նա շրջում էր բանակի ճամբարում, հնչեցնում էր ու օրհնում բոլորին։

Կարճ ժամանակից հետո նույն պապի կողմից եկավ մի եպիսկոպոս, մկրտեց արքայի որդուն և անվանեց Թեոդոսիոս[1594]։ Իրենք՝ թաթարները, նրան կոչում էին Խարբանդա[1595]։ Կնքահայր դարձավ մի ֆրանկ իշխան՝ Սիրշազ[1596] անունով։

Իսկ Արղունի մահից հետո թագավորեց Քեղաթունը, որին անվանում էին երնջի թուրնջի, այսինքն՝ «կորածը գտանք»[1597]։ Գնացինք նրա մոտ, նրանից ևս պատվի արժանացանք, ինչպես իր եղբորից, ստացանք [մեր իրավունքները] վերստին հաստատող հրովարտակ։ Ապա երբ սրանից հետո թագավորեց Ղազանը, նույնպես գնացինք նրա մոտ և արժանացանք ավելի բարձր պատվի, քան արժանացել էինք իր նախորդներից. նա կրկնակի հաստատումով մեզ տվեց նույն հրովարտակը և հրամայեց երկրում շրջելու ժամանակ մեր առջևում բարձր պահել խաչը ու [այդպես] ման ածել[1598]։ Մեզ պարգևեց նաև ոսկի փայտիզա, որը մի տախտակ էր՝ վրան գրված աստծու և թագավորի անունները ու էլի ինչ-որ սակավ բառեր։ Եվ մենք, զգալով նրա անսպասելի ողորմածությունը, փառք ու գոհունակություն վերընծայեցինք արարչին. և այդպես տուն վերադառնալով՝ ապրում էինք ապահովությամբ։

Այնուհետև ձեռնամուխ եղանք Տաճեի եկեղեցու շինարարությանը, որը սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով էր։ Այն փլվել էր ու մինչև հատակը քանդվել։ Եկեղեցու այս շինարարությունը երրորդ անգամն էր։ Առաջին անգամ կառուցվեց Փիլիպե իշխանի կողմից[1599] Սյունյաց Տեր-Դավիթ եպիսկոպոսի[1600] օրոք։ Երկրորդ անգամ կառուցվեց Տեր-Հովհաննեսի[1601] կողմից՝ Սմբատ թագավորի[1602] հրամանով։ Երրորդ անգամն էլ սա է, որ մենք սկսեցինք ու աստծու շնորհիվ հաս-

տահեղույս քարերով և գեղեցիկ տեսքով կերտեցինք շենքը[1603]։ Եվ երբ մենք քանդում էինք հյուսիսային սյան հիմքի մնացած մի փոքր մասը, գտանք աստվածային անպատմելի դանձը՝ սուրբ Գրիգոր Լուսավորչի նշխարը՝ գանգի մի կողմը և աջ թևի բազուկը[1604]՝ դրված մի փայտե փոքրիկ անոթի մեջ, փակված և կապարե կնիքով կնքված։ Դրա համար մեծապես ուրախացանք և մեծ գոհունակությամբ փառաբանեցինք աստծուն։ Շինարարությունն ավարտելուց հետո այն դրեցինք նույն խորանի մեջ, մարդկանցից աննկատ մի հարմար տեղ։

Եվ ժառանգական բաժնի համար մեր եղբայր Ելիկումից վերցրինք Արիտ գյուղը[1605], որը վաղ ժամանակներում խլված էր սուրբ եկեղեցուց, ու նրա հոժարությամբ վերադարձնելով՝ նվիրեցինք մեր կառուցած սուրբ Գրիգոր եկեղեցուն և մեր հիշատակի ու Արիտ գյուղի ապահովության համար անջնջելի արձանագրություն դրեցինք՝ նշելով, որ մեր մահից հետո ոչ ոք՝ լինի մեզանից, թե օտարներից, ավագներից թե եպիսկոպոսներից, չհամարձակվի գյուղը այս սուրբ եկեղեցուց հափշտակել և խափանել մեր հիշատակը կամ փոխանակել, վաճառել, գրավ դնել, կա՛մ որևէ այլ ձևով դավաճանել։ Եվ եթե մեկը հանդգնի, սատանայի հետ կործանվելով անդունդը գլորվի, Կայենի, Հուդայի և Արիոսի հետ դատապարտվի, Սոդոմի ու Գոմորի հետ տնով ու ղավակներով անշեջ կրակի ճարակ դառնա, Նեռի հետ աններելի դատաստանի արժանանա։ Եվ եթե մահմեդական իշխանություն փոխարինի ու ջանա հափշտակել, ամենակալ աստծուց նզովված լինի, իր փեղամբար Մահմեդից ու իր կրոնից անիծված լինի, կռապաշտների[1606] ու կրակապաշտների[1607] հետ կորչի՝ դժոխքն ընկնելով, իր օրինականն անօրինական դառնա։ Սա կատարվեց յոթ հարյուր քառասունվեց թվականին[1608]։

Դարձյալ՝ նախքան այս Արցախ դավառից բերել էին աստվածընկալ խաչի հրաշագործ նշանը, որի մեծամեծ հրաշքների ու զարմանալի սքանչելագործությունների համբավը տարածված էր ամբողջ աշխարհում։ Նա կենսակիր այն փայտից էր, որն իր վրա կրում էր աստվածային կողերից հոսած արյան ներկվածքի հետքը և ամրացված էր ոսկու մեջ՝ փոքրիկ տուփով։ Այն տոհմով սերնդեսերունդ պահում էին Դլեն իշ-

խանի[1609] թոռները. դա այն տոհմն էր, որ Տաթևում ունի եկեղեցի և բազմամարդ միաբանություն: Իսկ աստվածընկալ խաչի՝ խաչեն փոխադրվելու պատճառի մասին այսպես ենք լսել ստույգ իմացող մարդկանցից: Անծանոթ աշխարհից մի ճգնավոր, որ աղոթքի առիթով շրջագայում էր, մի ձմռան ընկավ Դլենի գյուղը: Նա իր պարկի մեջ ուներ աստվածային այդ անկշռելի գանձը: Իջևանելով գյուղի քահանայի տանը՝ պարկը տալիս է տանտիրուհուն ու ասում. «Սա մաքուր տեղ դիր մինչև գնալս»: Դա հայտնության երեգալույցի օրն էր: Քահանայի փոքր տղան գիշերը մեռել էր, բայց տոնի պատճառով դուրս չէին հանել: Տանտիրուհին ճգնավորի պարկը տանում-դնում է վախճանվածի սնարի մոտ: Երեկոյան պաշտամունքային արարողության վերջանալուց հետո, երբ մի փոքր ննջել էին, կենսատու փայտը վերակենդանացրեց մանկանը, որն սկսեց ձայն տալ մորը: Մայրը քնից արթնանալով զարհուրեց. արթնացրեց քահանային: Նրանք գնացին ներքնատունը, տեսան, որ մանուկը վերակենդանացել ու նստած պարկի հետ խաղ է անում: Երկար ժամանակ զարհուրած ու ապշած էին. չգիտեին, թե ինչ բան է դա:

Ապա ճգնավորն իմանում է եղելությունը, և երբ դեռ հյուրընկալողները այսպիսի ընդարմացած վիճակում էին, ծածուկ կերպով վերցնում է պարկն ու փախչում-գնում է: Քահանան ու կինն սթափվելով հասկանում են, թե ինչ է կատարվել: Գնում են գյուղապետի մոտ ու ճիշ բարձրացնելով պատմում տեղի ունեցած հրաշքի մասին: Աղաղակն ընկնում է գյուղը, և բոլորը գալիս են մանկանը տեսնելու: Դլենը վեր է կենում, ծառաներով ու շինականներով ընկնում ճգնավորի հետից՝ ընթանալով դեպի Աղունո գետի կողմը: Ճգնավորն իմանալով, որ իրեն հետապնդում են, տուփից հանում է փայտի շատ փոքրիկ մասը, դնում իր կրած կնգուղի ծալվածքը, իսկ տուփը գցում է մացառախիտ անտառի մի սալորի թփի մեջ և հեռանում է: Հետապնդող մարդիկ գալիս, հասնում են այնտեղ, համատարած ձյան ու սառույցի մեջ տեսնում տուփը հանկարծակի փթթած գեղեցիկ ծաղիկներով և պատած կանաչած սաղարթներով՝ աննման հոտ բուրելով: Մեծապես հիանում են՝ կարծելով այնտեղ է պահված խալը:

Երբ տեղը զննեցին, թփի մեջ գտան տուփը՝ դատարկ, շա-

րունակեցին հետապնդել ճգնավորին, որին հասան Աղունո գետի եզրին: Ճգնավորը ետ դարձավ և տեսավ նրանց. մբռնքում զայրացավ, կնգուղից հանեց փայտը և գցեց գետը: Այն մարդիկ ճգնավորին բռնելով սաստկապես տանջեցին. պահանջում էին փայտն իրենց տալ: Բացելով պարկը՝ ոչինչ չգտան այնտեղ: Վրայի կոպիտ քուրձն էլ հանեցին, բայց փընտրածը չէր երևում: Ապա նայեցին գետին, տեսան հսկայական ջուրը երկու մասի ճեղքված, մասունքն էլ՝ ցամաքած տեղում, որից բորբոքված բոց էր ցոլանում գեպի վեր և զարմանալի բույր էր թանձր ծխի նման տարածվում շրջակայքում: Այն մարդիկ համակվեցին ահով ու խնդությամբ. դողում ու թռչկոտելով ցնծում էին՝ անգին ու անհամեմատելի մարգարտի գյուտից: Մտնելով ջուրը՝ վերցրին փրկական փայտը և դնելով տուփի մեջ՝ բերեցին: Իսկ ճգնավորը գնում էր նրանց ետևից՝ ողբալով ու կուրծքը ծեծելով, մինչև որ հուսահատվեց, դառնորեն անիծեց Դլենի տունն ու անցավ գնաց:

Եվ այն օրվանից ի վեր մասունքը դարձավ այդ տոհմի սեփականությունը՝ նվերներով մեծարվելով իշխանների ու ժողովրդի կողմից: Հետո աստվածասեր և բարեպաշտ իշխանաց իշխան Ջալալը[1610] շինում է Գիշերաձոր անունով մի եկեղեցի և արծաթե պահարան պատրաստելով՝ [հիշյալ մասունքը] հաստատում է այնտեղ:

Ահա այսպիսի աստվածահրաշ նշանը վերին թելադրանքով մեր տիրապետության մեջ բերեցին իրենց գավառի ավերումից և իրենց դառն ու վերջին աղքատությունից նեղված նրա տերերը, որոնք եկան և բնակություն հաստատեցին մեր կողմերում: Քանի որ նրանք սաստիկ կարիքների մեջ էին, այլազգիներին պարտք լինելով՝ ենթակա էին գերեվարման, խիստ տաքնապած էին: Դառն, սարսափելի աղքատությունից այն մեզ վաճառեցին ավագ Դլենի թոռները՝ Հասան անունով մեծ թոռը՝ իր երկու եղբայրներով: Մեզանից ստացան գինը լրիվ, առանց մնացորդի՝ հինգ հարյուր դահեկան, որը կազմում է հինգ հազար դրամ: Ստացան նաև ուրիշ շատ պարգևներ, ձիեր, եզներ և հագուստներ: Մենք այն վերցնելով՝ պահարանը վերադարձրինք տերերին՝ հազար դրամի հաշվով, այն էլ ոչ թե իբրև գին, այլ՝ պարգև: [Մխիթարյանց] տվեցինք

առ ու վաճառքի անխախտ պայմանագիր և հավիտենական մուրհակ՝ բազմաթիվ վկաներով։ Մենք նորովի պահարանիկ պատրաստել տվեցինք ոսկուց ու արծաթից։ Շինել տվեցինք նաև խաչը սուփերական ընտիր ոսկուց, որն ուներ խնձորաձև ոսկի պատվանդան, չորս կենդանակերպ թևեր՝ վզիկներով։ Վրան ամրացրինք ակներ՝ չափազանց թանկագիններից՝ հինգ ծիրանաձև շափյուղա, այդ ակների մեջտեղում՝ չորս մարգարիտ՝ թանկարժեքներից ու առավել ընտիրներից։ Եվ մեջտեղի թանկագին քարի տակ դրեցինք փրկական փայտը, որը փոսիկների շուրջ ուներ մանրատառ գիր։ Թիկունքի կողմից այսպիսի մակագրություն արեցինք «Աստվածընկալ այս սուրբ նշանը՝ պատրաստված Սյունյաց եպիսկոպոս Տեր-Ստեփանոսի կողմից, հավիտենապես հաստատված պետի մնա Նորավանքի այս սուրբ եկեղեցում»։ Նույնպես և պատրաստել տվեցի ավելի մեծ պահարանը ոսկուց և արծաթից՝ աղյուսաձև, գեղեցիկ կերտվածքով, երկփեղկ դռներով։ Այն դարձրինք Նորավանքի սուրբ եկեղեցու սեփականությունը։ Նրա մեջ մեր հիշատակի համար գրեցինք այսպիսի արձանագրություն.

«Մեր Հայոց աշխարհի կործանման տարիներին, մի դառն և դաժան ժամանակ, երբ յոթ հարյուր քառասուներեք թվականն էր[1611], այսինքն՝ տասնհինգերորդ հոբելյանին[1612], Քեղաթու ղանի[1613] տիրապետության, հայոց Տեր-Գրիգոր կաթողիկոսի[1614] աթոռակալության, Վրաստանի Դավիթ Թադավորի[1615] գահակալության, այս նահանգում ամենաօրհնյալ տոհմից Ելիկումի ու իր եղբայրների իշխման օրոք, ես՝ բազում մեղքերի պարտական Տեր-Ստեփանոսս, Սյունյաց եպիսկոպոսս, Տարսայիճ մեծափառ իշխանի որդիս, Նորավանքի և Տաթևի վսեմ ու աշխարհահռչակ տների առաջնորդս, վերին տնօրինությամբ հանդիպելով անպատմելի այս պարգևին՝ աստվածընկալ սուրբ նշանին, վրան տեսա Հիսուսի արյան ներկվածքի հետքը։ Դա բերել էին Արցախ գավառից։ Մեջս եռաց [այն ձեռք բերելու] աստիկ ցանկությունը, և գնեցի բուն սեփականատերերից՝ Դլենի թոռներից, հինգ հարյուր դահեկանով, միանվագ, չհաշված հավելյալ պարգևները։ Նրանք, իրենց դառն ու ծանր կարիքներից և պարտքերից ստիպված, մեծահոժար կամքով վաճառեցին մեզ։ Եվ մենք

վերցնելով՝ մաքուր ոսկով, արծաթով ու թանկագին ակներով պատրաստեցինք նախ խաչը և ապա՝ պահարանը, որպես հույս և բարեխոսություն Քրիստոսի հանդեպ՝ մեր եղկելի հոդու համար. անաչառ դատաստանի ժամանակ թերևս ողորմություն գտնեմ։ Եվ սա ընծայեցի Նորավանքի սուրբ ու մեծափառ ուխտին, մեր հայրենական դամբարանին։ Եթե մեկը ջանա խարդախություն անել կամ այստեղից հափշտակել, Կայենի, Հուդայի և Արիոսի հետ թող դատվի, երկնավորներից, երկրավորներից ու բոլոր սրբերից նզովված լինի՝ մեռած թե կենդանի ժամանակ, մեր մեղքերին պարտական լինի։— Արդ՝ հիշեցե՛ք ինձ և իմ եղբայրներին՝ քաջ ու հզոր իշխաններ Ելիկումին, Լիպարիտին ու մյուսներին և իմ բարի քույր Մամքանին։ Դուք էլ հիշված կլինեք մեր Քրիստոս աստծուց. ամե՛ն»։

Այս ժամանակներում Ամիրա անունով մի մեծատոհմիկ մարդ ամբողջ գերդաստանով բնակվում էր Արփա գյուղում։ Նա Ջուրջիի որդին էր, կապանեցի Մահևանյան կոչված իշխանական տոհմի իշխաններից մեկի թոռը։ Այս Ամիրան Արփայում գտնվող Աղթա այգին գնում է Տարսայիճ մեծ իշխանից, որն [իր հերթին] գնված էր բուն սեփականատերերից. վճարում է գինը՝ չորս հազար դրամ։ Համերաշխելով Նորավանքի սուրբ եկեղեցու հետ՝ այն հանձնեց մեզ և գրել տվեց հավիտենական արձանագրություն, որ ոչ ոք չհանդգնի այն խլել սուրբ ուխտից։ Սահմանեց խստագույն նզովքներ։ Ուստի և մենք էլ Ամիրայի համար սահմանեցինք ամեն տարի հինգ պատարագ կատարել անխափան կերպով։ Վաղ ժամանակներից վանքիս էր հանձնված նաև Դայեկի քարո այդին՝ որպես հոգեբաժին Ախթամարյանների և ուրիշների. արձանագրությամբ ու նզովքներով հաստատված էր, որ ոչ ոք չհակառակվի։

Մենք էլ գնեցինք մեջտեղի մեծ մասը բուն սեփականատերերից երկու հազար հինգ հարյուր դրամով և ամբողջացրինք այգին՝ Նակուտ քարից վեր, մինչև այգու վերջին սահմանը, որ մեծ սարն է։ Նվիրեցին հոգեբաժին նաև մի այգի Կամրջախելում և ուրիշ շատ կալվածքներ՝ հողեր, տներ։ Շինել էին կամուրջի մոտ նաև երկու աչքից ջրաղաց։ Եվ այս ամենը Նորավանքի սուրբ եկեղեցու օրինական, անխախտ

սեփականություն ու ժառանգություն էր, ոչ թե ղրկումով և հափշտակումներով [ձեռք բերված], այլ մի մասը հոգեբաժին [տրված նվեր] էր, մի մասը՝ եպիսկոպոսների ու իշխանների գնածը։ Ոչ ոք՝ ավագներից կամ շարքային մարդկանցից, այս Արփա գյուղի վրա իշխողներից- կամ տեղիս աղատներից ու տանուտերերից իրավունք չունի հակառակ կանգնել և կամ ձգտել հափշտակել, կամ թե չէ այս տիրույթների նկատմամբ ուրիշ դավ ու ղրկանք մտածել՝ ագահությունից, նախանձից կամ ուրիշ պատճառով։ Իսկ եթե մեկը հանդգնի լրբորեն [ալդպիսի] մի բան ձեռնարկել, հայր աստված թող նրա հորը նզովի, որդի աստվածն էլ նրա որդիներին թող նզովի, միաձնական սուրբ երրորդությունը նրա մարմինը թող նզովի, մարգարեների, առաքյալների և հայրապետների բոլոր անեծքները նրա գլխին ու տան վրա թող գան. նրա հիշատակը թող ջնջվի երկրի երեսից, և ինքը անքուն որդերի կերակուր ու անշեջ կրակի ճարակ լինի։ Իսկ հնազանդվողները, օգնողները և ավանդապահները թող օրհնված լինեն աստծուց ու բոլոր սրբերից։ Եվ եթե մահմեդական իշխանություն փոխարինի ու նրա իշխանը մտադրվի խարդախել, բռնությամբ հափշտակել, աստծուց ու իր Մահմեդից նզովված լինի, և իր օրինականն անօրինական դառնա, հարյուր հազար նալլաթ լինի իր, իր տոհմի ու զավակների վրա մինչև հազար տարի։

Դարձյալ՝ այստեղ ևս իմ խեղճ ու թշվառ անձի հոգու համար անջնջելի հիշատակագրություն պիտի թողնեմ։ Ուստի մեծահույս թախանձանքներով խնդրում եմ բոլորի հույս, ամենքի հոգիների տեր աստծուն, որ կընդունի սա որպես որբևայրու լուման[1616] և մուրացիկ շների հետ ինձ ևս չի խնայի սակավ փշրանքներ։ Արդ՝ որպես հիշատակ ինձ՝ ստացա Նորավանքի այս եկեղեցիները և ինձ համար Քրիստոսի մոտ միջնորդ ու բարեխոս դարձրի աստվածակիր այս սուրբ նշանը՝ աստվածընկալ այս ավագ խաչը, որ իմ ձեռքով պատրաստել տվեցի։ Եվ սրանց ընծայեցի իմ հայրենի օրինական կալվածքը և փողով գնած Ջուվա (Ջիվա) գյուղը՝ իր բոլոր սահմաններով, հողով, ջրով, ամբողջ այգիներով և բոլոր բնակիչներով։ Սա գնել էի իմ եղբայր Ջալալից՝ ազատ ամեն տեսակի հարկերից ու դատաստանից, բոլոր կողմերից առանց

վեճի ու հաշվի, առանց եղբայրների կամ ավագների որևէ պահանջի։ Դինը տվել էինք քսանմեկ հազար դրամ։ Տվեցի նաև Աբասաշեն գյուղը և սուրբ Սահակը, որ իմ հայրենաբաժինն էին՝ մեր օրինական ունեցվածքից ու կալվածքներից։ Եվ արդ՝ ոչ ոք չհամարձակվի իշխանություն բանեցնել այս գյուղ[եր]ի վրա կա՛մ հարկ, կա՛մ դատ, կա՛մ անասնատուրք, կա՛մ նման այլ բան վրանները դնել։ Միմիայն Նորավանքի սուրբ միաբանության առաջնորդները պիտի տնօրինեն և այս տան կրոնավորներն ու սուրբ նշաններիս սպասավորները պիտի վայելեն և սուրբ եկեղեցիներում մեզ աղոթքներին ու պատարագներին միշտ հաղորդ պահեն[1617]։

Դարձյալ՝ քանի որ Նորավանքի տեղը տոթ էր, և եպիսկոպոսներն ու սպասավորները ամառ ժամանակ չէին կարողանում այնտեղ ապրել, որոշեցինք [օգտագործել] Արատեսի վանքը, որը Եղեգիքից վերև է։ Վանքն իր բոլոր շինություններով և հոգեբաժին տրված կալվածքներով, գյուղն իր շրջակա բոլոր սահմաններով հանձնեցինք սուրբ Նորավանքին[1618], որ սրա միաբանները այն վերջին-վերջը տնօրինեն, վայելեն, բայց տեղը շեն և եկեղեցին լուսավոր պահելու համար ամենայն ջանադրությամբ պիտի հոգ տանեն, ինչպես մեր տան նկատմամբ է տարվում[1619]։ Դարձյալ՝ տվեցի նաև Քարկոփը[1620] իր բոլոր սահմաններով՝ որպես ժառանգություն Նորավանքի և մեր ուրիշ միաբանությունների առաջնորդներին։

Եվ այսուհետև մինչև հավիտյան նրանք[1621] պիտի լինեն Նորավանքի սուրբ եկեղեցու սեփականությունը։ Այստեղի պաշտոնյաներն էլ ժառանգորդ դառնալով այդ վանքերը շեն և եկեղեցիները՝ լուսավոր պահելը չպիտի անտեսեն, այլ ամենայն ջանադրությամբ դրանց նկատմամբ հոգ պիտի տանեն, ինչպես սեփական տան նկատմամբ։ Եվ արդ՝ ոչ ոք չհամարձակվի այս որոշմանը հակառակվել կամ որևէ պատճառով մտածել այն խափանել և իմ հոգեբաժին նվիրատվությունները խախտել Նորավանքի սուրբ եկեղեցուց, քանի որ Ջվա (Ջիվա) գյուղն իմ գնածն էր, Արատեսն ու Քարկոփը՝ իմ հարազատ հայրենաբաժինը, որտեղ ո՛չ մի ավագ և իշխող, ոչ էլ ուրիշ մեկը ոչ մի հաշիվ չունեն։ Իսկ եթե որևէ մեկը հանդգնի, սուրբ երրորդությունից նզովված լինի՝ մեռած թե կենդանի ժամանակ, և այն բոլոր անեծքները, որ օձից մինչև Նեռը

կան բոլոր չարագործների վերաբերմամբ, նրա վրա լինեն, նա Հուդայի հետ բաժին ունենա, ուրացող Վասակի պես որդնալից սատկի, մեր մեղքերին ու խղճին պարտական լինի և հավիտենական կրակին մատնվի։ Իսկ բարյացակամներն ու հնազանդները թող օրհնվեն աստծուց ու նրա բոլոր սրբերից։

Եվ եթե մահմեդական իշխանություն փոխարինի ու իշխանը ձգտի հափշտակել, ինքն աստծուց և իր փեղամբարից մերժված լինի, տնով ու զավակներով կործանվի և անդունդը [գլորվի], նրա վրա հարյուր հազար նալլաթ գա։ Արդ՝ երբ այս հիշատակագրությունը պատրաստեցինք և հաստատեցինք այս հոգեբաժին նվիրատվությունները, այս սուրբ տան միաբանական միաբանության կրոնավորները համակամ սիրով այս սուրբ եկեղեցում մեզ համար սահմանեցին հիշատակ՝ մեկ քառասունք պատարագ հինունքին[1622] ու կրկնազատկից[1623] մինչև հոգեգալստյան տոնը՝ ամեն առավոտ՝ ամբիծք[1624], և հանգստի Ավետարան [կարդալ] իմ շիրմի վրա, սուրբ հոգեգալուստի[1625] մեծ տոնախմբության օրը իմ հիշատակին հոգեհանգիստ անել՝ արջառներ ու գառներ մորթելով, առատ կերակուրների բաժիններով և ըմպելիքներով հագեցնել աղքատների և կարոտյալների քաղցն ու ծարավը։ Այդ օրը այս բոլոր եկեղեցիներում մեզ համար պատարագ պիտի անեն՝ աստված հոգուց զոհաբերությամբ խնդրելով մեր մեղքերին ներում ու ողորմության փշրանքներ, թևերս կարողանամ փրկվել ահեղ ատյանի ահավոր ամոթից, երբ խոսքերը վերջանում են և գործերն են թագավորում։

Բայց եթե տեղիս առաջնորդներից, եպիսկոպոսներից կամ փակակալներից, կա՛մ ուրիշ շարքային կրոնավորներից ծուլանան կատարել մեր հիշատակի արարողությունները՝ նախանձելով կամ ինչ-որ ձևով պատճառաբանելով, որքան որ մեր այս եկեղեցիները հաստատ ու շեն են, այնպիսիների մասն ու բաժինը Հուդայի և աստվածասպան քահանաների հետ լինի, նրանք սուրբ երրորդությունից մերժված լինեն, մեր անսահման, ծովացած մեղքերին պարտական ու նրանց համար պատասխան տվող։ Իսկ կատարողները օրհնվեն և բոլոր սրբերի հետ մաս ու վարձատրություն ստանան. ամեն։

Եվ այժմ, ո՛վ եղբայրներ, ես այստեղ պիտի հիշատակեմ իմ սրտի խոցվածքը. այն, որ այս գործի շարադրումից մի քիչ առաջ մեզ վրա հասավ անանց սուգ՝ իմ սիրելի կրտսեր եղբայր Փախրադոլան երիտասարդական զարդարուն ու ջնեղեցիկ հասակում, երբ նորաբույս մորուքը թխությամբ սկսել էր փայլփլել՝ բոլորելով վայելչագեղ ծնոտները, սիրտը զվարճությամբ ու խնդությամբ նախապատրաստվում էր քաղցր ու զվարթ կյանքի վայելման, կամքը՝ իշխանական փառքի թափ ու թռիչքի ձգտման, հանկարծ ենթարկվեց օրհասին։ Մահը կոտրեց սլացիկ բույսը, արմատախիլ արեց ծաղկափթիթ տունկը, անժամանակ տարավ իմ բաղձալիին, որը և զատվելով մեզանից, այս աշխարհից գնաց առանց որևէ հիշատակ թողնելու[1626]։ Նրան տարան և թաղեցին իր հոր մոտ։ Իմ տեր Հիսուսը նրան այս կյանքի զրկանքների դիմաց այնտեղ թող ողորմա և անտես առնելով նրա մարմնական մեղակերպ կրքերը՝ զվարճացնի անդրշիրիմյան կյանքի վայելքներով և ուրախություններով. ամե՛ն։

Իսկ այժմ ահա, ո՛վ ընթերցասեր, պատշաճ եմ համարում մատյանիս վերջում դնել նախ Սյունյաց եպիսկոպոսների անվանացանկը և ապա՝ ինչպես ոսկի մանյակը պարանոցին և կամ թագավորական կնիքը թանկագին գանձերի վրա, դասավորել հայոց սուրբ և երջանիկ հայրապետների անունները մեր այս գործի ավարտման գլխում, որովհետև աստծուց սկսելով՝ աստծով համակված սրբերով էլ պարտավոր ենք ավարտել։

ՀՒ

ՍՅՈՒՆՅԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ. ՆՐԱՆՑ [ԱԹՈՌԱԿԱԼՄԱՆ] ՏԱՐԻՆԵՐՆ ՈՒ ԹԻՎԸ

1. Տեր-Գրիգորիս՝ առաջին եպիսկոպոսը՝ ձեռնադրված սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից[1627] 46/47 տարի[1628]
2. Տեր-Մաշտոց՝ նույնքան տարի
3. Տեր-Անանիա՝ 42 տարի
4. Տեր-Նուն՝ 8 տարի
5. Տեր-Գաղատ՝ 17 տարի
6. Տեր-Մուշե՝ 36 տարի
7. Տեր-Երիցակ՝ 1 տարի

8. Տեր-Մակար՝ 28 տարի
9. Տեր-Պետրոս Քերթող՝ 10 տարի
10. Տեր-Գիգան՝ 3 տարի
11. Տեր-Վրթանես՝ 23 տարի
12. Տեր-Գրիգոր՝ 15 տարի
13. Տեր-Քրիստափոր՝ 10 տարի
14. Տեր-Դավիթ՝ 27 տարի
15. Տեր-Մաթուսաղա Քերթող՝ 18 տարի
Ընդմիջում՝ 8 տարի
16. Տեր-Աբրահամ՝ 30 տարի
17. Տեր-Հովսեփ՝ 19 տարի
18. Տեր-Հովհաննես՝ 22 տարի
19. Տեր-Մովսես՝ 7 տարի
20. Տեր-Անանիա՝ 7 տարի
21. Տեր-Հովհան՝ 9 տարի
22. Տեր-Ստեփանոս՝ 1 տարի
23. Տեր-Հովսեփ՝ 17 տարի
24. Տեր-Հովակիմ՝ 17 տարի
25. Տեր-Սադովկ՝ 32 տարի
26. Տեր-Հովհաննես՝ 2 տարի
27. Տեր-Սողոմոն՝ 7 տարի
28. Տեր-Եղիա՝ 8 տարի
29. Տեր-Թեոդոս՝ 18 տարի
30. Տեր-Գեորգ՝ 8 տարի
31. Տեր-Դավիթ՝ 17 տարի
32. Տեր-Հովհաննես՝ 10 տարի
33. Տեր-Սողոմոն՝ 17 տարի
34. Տեր-Հովհաննես՝ 33 տարի
35. Տեր-Հակոբ Հերձվածող՝ 41 տարի
36. Տեր-Վահան՝ 6 տարի
37. Տեր-Աշոտ՝ 17 տարի
38. Տեր-Հովհաննես՝ 6,5 տարի
39. Տեր-Աշոտ՝ նույնը 5,5 տարի
40. Տեր Սամվել՝ 3 տարի
41. Տեր-Հակոբ՝ 3 տարի
42. Տեր-Գրիգոր՝ 3 տարի
43. Տեր-Հովհաննես՝ 52 տարի
44. Տեր- Գրիգոր՝ 58 տարի
45. Տեր-Ստեփանոս՝ 27 տարի
46. Տեր-Բարսեղ՝ 5 տարի
47. Տեր-Գրիգոր՝ 20 տարի
48. Տեր-Ստեփանոս՝ 46 տարի
49. Տեր-Հովհաննես 38 տարի
50. Տեր-Հայրապետ և
51. Տեր-Սողոմոն՝ 20 տարի,
միասին՝ 40 տարի
52. Տեր-Հովհաննես՝ 3 տարի

Իսկ նույն ցեղից Նորավանքում նստած աթոռակալներն էլ սրանք են.

1. Առաջինը՝ Տեր-Հովհաննես Կապանեցի՝ մի քանի տարի
2. Տեր-Ստեփանոս՝ Տեր-Գրիգորի որդին՝ մի քանի տարի
3. Տեր-Սարգիս՝ 20 տարի
4. Տեր-Ստեփանոս 20 տարի
5. Տեր-Գրիգոր՝ 1 տարի
6. Տեր-Սարգիս՝ 24 տարի

53. Եվ ապա երկու աթոռների միասնական տնօրինումով Տեր-Ստեփանոս [Օրբելյանը] որպես Սյունյաց եպիսկոպոս է նստում Նորավանքում՝ [այստեղ լինելով] յոթերորդը[1629]:

Արդ՝ սուրբ աթոռիս ամբողջ թեմում եղած վանքերն ու անապատները սրանք են. Մեղրու սուրբ Հովհաննես վանքը, տղամարդկանց Մեծ անապատը, տղամարդկանց Հարանց անապատը, Շնհերի՝ կույսերի Աստվածածին անապատը, Հալիձորի կույսերի անապատը, Մանլևի՝ կույսերի Ամենափրկիչ անապատը, Գանձափարախի վանքը, Կարճևանի սուրբ ուխտը, Հովհաննի և Սիծեռնակի սուրբ վանքերը։

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ. ՆՐԱՆՑ [ԱԹՈՌԱԿԱԼՈՒԹՅԱՆ] ՏԱՐԻՆԵՐՆ ՈՒ ԹԻՎԸ

1. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ՝ 30 տարի
2. Արիստակես՝ 7 տարի
3. Վրթանես՝ 15 տարի
4. Հուսիկ՝ 6 տարի
5. Փառներսեհ՝ 4 տարի
6. Սուրբ Ներսես՝ 20 տարի
7. Շահակ՝ 4 տարի
8. Ջավեն՝ Շահնակի եղբայրը՝ 1 տարի
9. Ասպուրակես՝ սրանց եղբայրը՝ 3 տարի
10. Սուրբ Սահակ՝ 51 տարի
11. Հովսեփ [1-ին]՝ 12 տարի
12. Գյուտ[1630]՝ 10 տարի
13. Հովհան Մանդակունի՝ 6 տարի
14. Բաբկեն՝ 5 տարի[1631]
15. Սամվել՝ 10 տարի
16. Մուշե՝ 8 տարի
17. Սահակ [2-րդ]՝ 5 տարի
18. Քրիստափոր [2-րդ]՝ 6 տարի
19. Ղևոնդ՝ 3 տարի
20. Ներսես [2-րդ]՝ 9 տարի

21. Հովհաննես [2-րդ]՝ 17 տարի

22. Մովսես [2-րդ]՝ 44 տարի[1632]

Սուրբ Գրիգորիսից մինչև Մովսես [2-րդի] չորրորդ՝ հայոց թվականության ընդունման տարին[1633] կազմում է երկու հարյուր քառասունինը տարի։ Եվ իններորդ տարում[1634] սահմանվեց հինգհարյուրյակը[1635]։

Քրիստոսի ծննդից հաշված՝ հինգ հարյուր հիսուներեք տարի[1636]։

23. Աբրահամ [1-ին]՝ 23 տարի

24. Հովհան [3-րդ]՝ 16 տարի

25. Կոմիտաս՝ 8 տարի

26. Քրիստափոր [3-րդ]՝ 3 տարի

27. Եզր՝ 11 տարի

28. Ներսես [3-րդ]՝ 21 տարի

29. Անաստաս՝ 6 տարի

30. Իսրայել՝ 10 տարի

31. Սահակ [3-րդ]՝ 26 տարի

32. Եղիա՝ 14 տարի

33. Հովհան [4-րդ]՝ Օձնեցի՝ 11 տարի

34. Դավիթ [1-ին]՝ 12 տարի

35. Տրդատ [1-ին]՝ 23 տարի

36. Տրդատ [2-րդ]՝ 3 տարի

37. Սիոն՝ 8 տարի

38. Եսայի՝ 13 տարի

39. Ստեփանոս [1-ին]՝ 2 տարի

40. Հովաբ[1637]՝ 6 ամիս

41. Սողոմոն՝ 1 տարի

42. Գեորգ [1-ին]՝ 3 տարի

43. Հովսեփ [2-րդ]՝ 11 տարի

44. Դավիթ [2-րդ]՝ 27 տարի

45. Հովհաննես [5-րդ] Կոտայեցի՝ 22 տարի

46. Զաքարիա [1-ին] Զագեցի՝ 21 տարի

47. Գեորգ [2-րդ] Գառնեցի՝ 21 տարի

48. Մաշտոց Սևանցի՝ 7 ամիս

49. Հովհաննես [6-րդ] պատմագիր՝ 27 տարի

50. Ստեփանոս [2-րդ]՝ 1 տարի

51. Թեոդորոս [1-ին]՝ 10 տարի

52. Եղիսե [1-ին]՝ 7 տարի

53. Անանիա՝ 22 տարի

54. Վահան՝ 2 տարի

55. Ստեփանոս [3-րդ]՝ 2 տարի

Առանց կաթողիկոսի՝ 1 տարի

56. Խաչիկ [1-ին]՝ 19 տարի

57. Սարգիս [1-ին]՝ 27 տարի

58. Պետրոս [1-ին]՝ 40 տարի

59. Խաչիկ [2-րդ]՝ 6 տարի

60. Գրիգոր [2-րդ]՝ 40 տարի[1638]

61. Բարսեղ [1-ին]՝ 24 տարի

62. Գրիգոր [3-րդ]՝ 53 տարի

63. Ներսես [4-րդ]՝ 7 տարի

64. Գրիգոր [4-րդ]՝ 20 տարի

65. Սրանց եղբորորդին՝ Գրիգորիս [5-րդ]՝ 1 տարի

Սա, բանտարկվելով Կոպիտաուի բերդում, գիշերը կախվում է պարսպից, ընկնում է ու մեռնում։

66. Գրիգորիս [6-րդ] Ապիրատ՝ 7 տարի

67. Հովհաննես [7-րդ]՝ Մածաբարո՝ 18 տարի

68. Կոստանդին [1-ին]՝ 47 տարի

69. Հակոբ [1-ին]՝ 19 տարի

70. Մյուս Կոստանդին [2-րդ], որը 3 տարի մնալով աքսորվեց։

71. Ստեփանոս [4-րդ] Հռոմկլայեցի, որը 2 տարի մնալով գերի տարվեց Մսրը [Եգիպտոս] և մեկ տարի հետո բանտում կապանքների մեջ վախճանվեց։

72. Իսկ այժմ Տեր-Գրիգոր 4-րդն է՝ Անավարզի եպիսկոպոսը[1639]։

ՀԳ

ՆՈՒՅՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՍՈՒՅՆ ԳՐՔԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Ամեն ինչի սկիզբն ու ավարտը աստված է, որովհետև ամեն բան նրանից սկսվելով նրանով է առաջ տարվում ու նույնով էլ ավարտվում, ինչպես որ կարելի է տեսնել կարկինով գծվող շրջագծի բոլորումը, որը որտեղից սկսվում է, նույն կետին էլ հանգում է ու միանում՝ իր մեջ ընդգրկելով

բազմաթիվ մասերը։ Հենց այդ ձևով էլ պետք է պատկերացնել շնորհը, որը, բխելով հորդառատ, ականակիտ աղբյուրից, անցնում է ամենքի միջով՝ յուրաքանչյուրին համապատասխան մասնավոր բաժին տալով։ Եվ այդպես բոլորի մեջ օգուտ ու օգտակարություն առաջ բերելով՝ ինքը նույն հստակությամբ միանում է իր բնման ակունքին։ Ըստ այդմ էլ՝ և ես՝ շնորհներով երկնային, բարքով երկրային, ձևով աստվածային, վարքով եղեռնային, տեսքով կենսատու, ոգով կենսազրկիչ, անվամբ քահանայագլուխ, բանսարկուի գործազլուխ, աստվածային շնորհներից ստանալով՝ կամեցա մի փոքր օգտակար գործ կատարել. սկսելով աստծով նրանով առաջ տարա, նույնով էլ ավարտեցի։

Արդ՝ գոհունակությո՜ւն և փա՜ռք բոլոր էությունները արարչին, անասելիին ու անհասանելիին, առատաբաշխ պարգևիչին, ամենիս խնամատարին. երկնային հրեղեն էակներից ու նյութեղեն, տարրակազմ կենդանի երկրածիններիցս, բոլոր տեսակի ստեղծականներից՝ ընդհանրապես գոյացական արարածներիցս, անսահման բյուրերով, անհասանելի ու անվերջանալի օրհնությո՜ւն, պատի՜վ և երկրպագությո՜ւն նրան, որ կարողություն տվեց իմ թերավարժ ու տհաս մտքին, ցավալից, տարտամ, ծովահեղձ հոգուս՝ տեսնելու այս գործիս ավարտը, հասնելու սկսածիս վերջին՝ այս դառն օրերում, սովախեղդ ու մահաշունչ ժամանակներում, երբ մահը ցանկալի ու երանելի է, իսկ կյանքը՝ ատելի ու թշվառ, երբ բոլոր մարդիկ շարունակ գիշերը ցավի, ցերեկը՝ ցնորքի մեջ են անցկացնում, նրանք բարի բանի ակնկալություն չունեն, այլ օրեցօր [վրա հասնող] սոսկալի վշտերի ու նեղությունների են սպասում։ Եվ արդ՝ կարող ու հզոր հայր աստծու կամքով, միածին որդի Հիսուսի գթության շնորհներով և նախանշող ու ազատարար սուրբ հոգու ողորմածությամբ ես՝ Քրիստոսի նվաստ ու բազմամեղ ծառա Ստեփաննոս, դարձյալ նույնի ողորմածությամբ Սյունիքի տասներկու գավառներին կարգված եպիսկոպոսս, նույնպես և նույնի ներող կամքով նստելով այս նահանգի մետրոպոլիտության գահին՝ վերացված և մերժված տեսա նախնիների անունն ու հիշատակը, հափշտակված և կորստյան մատնված՝ եկեղեցիների տիրույթները։ Եվ վաղուց ի վեր ձգտելով սրանց նորոգմանը՝

ուզում էինք նաև պատմությունը շարադրել։ Ուստի և մեծ ջանք[եր]ով ու շատ չարչարանք[ներ]ով որոնումներ կատարելով՝ հավաքեցինք [տեղեկություններ] հայոց հին և նոր պատմագիրների [երկերից] նաև եկեղեցիների արձանագրություններից ու այն հնագույն թղթերից, որոնք պահված կային Տաթևի համակենտրոն վանքի ամուր պահեստարաններում։ Որոշ նյութեր էլ վերցրինք ստուգապես տեղյակ մարդկանց պատմածներից, որոնք հավաստվում էին անցքերով ու տեղերով։ Ամենայն ճշտությամբ հետամուտ լինելով ստուգությանը՝ գեն նետեցինք փուչ զրախոսությունները, որ ընթերցողները[1640] չձանձրանան։ Սեղմ շարադրանքով ու համառոտությամբ ցույց տվեցինք առավել պիտանին ու ավելի պատշաճը։ Գրեցինք այս քաղցրախոս պատմությունը՝ նախնիների հիշատակագրությունների մեջտեղ բերումով։ Սա ընդհանրական բնույթ չունի, այլ մասնավորապես [վերաբերում է] մեր Սիսական աշխարհին և կոչվում է «Հիշատակաց մատյան»։

Եվ այս մատյանը թողեցինք որպես անջնջելի հուշարձան ու գովելի հիշատակ գալիք ժամանակների համար՝ ի հաստատություն Սյունյաց փառահեղ աթոռիս, ի բարգավաճումն նրա խնամքին ենթակա եկեղեցիների։ Եվ մեղսալից ձեռքերով վերցնելով՝ այս մտավոր պտուղը տարանք, ընծայեցինք տիրոջ տանը՝ որպես տրամադրիչ ընծա Տաթևի կաթողիկե և առաքելական եկեղեցուն ու նահանգիս բոլոր աստվածաբնակ տաճարներին։ Եվ ահա ծնրադիր խոնարհված բազմաղաղակ ձայնով աղաչում-պաղատում ենք, ո՛վ երկնային փեսայի գերապանծ ու լուսաճեմ առագաստ, բոլոր սրբերով խնդրի՛ր քո սխրալի գլխավորին՝ ընդունելու իր աստվածային գանձարանի մեջ շրթունքներիս այս պտուղն ու հոգուս ծնունդը՝ որպես հաճելի նվեր, եթե ոչ [հարուստների] թանկարժեք նվերների հետ, ապա՝ չքավորների, որոնք խորանի համար մազ էին մատուցում*, նաև մի բաժակ սառը ջրի** կամ երկու լումայի*** հետ։ Եվ իր եկեղեցին, այս շնորհավորելով, մեզ հնարավորություն կտա ակնկալություն ունենալու բա-

* Ելից. Լե, 21—26։
** Մատթ. ժ, 42։
*** Ղուկ., Իև, 2։

րիքների և առատորեն բաշխվող պարգև[ներ]ի՝ եթե ոչ կատարյալ[ներ]ին, ապա գոնե փշրանքներին, որոնցով շներն են կերակրվում։ Ինձ տրված քանքարը բնավ էլ անգործության չմատնեցի ու չթաքցրի, այլ, ըստ իմ կարողության, մի փոքր դրամաշատ գցեցի դրամափոխիչի սեղանին*, ուստի [իմ մասին] թող չլսեմ, թե «Չար և վատ ծառա է», այլ երեկո չմնեցող այն մեծ օրը, երբ խոսքերը վերջանում ու գործերն են թագավորում, արժանանամ երանավետ այն ձայնին, թե «Ե՛կ, մտի՛ր տիրոջ ուրախության մեջ»**։ Նրան բոլոր գոյացություններից զոհունակությո՛ւն ու փա՛ռք այժմ և հավիտենաբար. ամե՛ն։

Արդ՝ նյութի պատրաստվելուց հետո աշխատությունը շարադրվեց Արղունի որդի մեծ և ինքնակալ արքա Ղազան ղանի[1641] աշխարհակալության ժամանակ, երբ ամենուրեք տիրում էր նեստղաց ազգը, երբ թագավորում էին Վրաստանի Դավիթ թագավորը[1642]՝ Դեմետրեի որդին, և Հայաստանի թագավոր Հեթումը՝ Լևոնի որդին[1643], իսկ այս նահանգում իշխում էր Տարսայիճի որդի օրհնյալ ու բարեպաշտ Ելիկումը[1644]՝ իր եղբայրներով, աստվածապատիվ ու հոգևոր տեր, ինքնիշխան պատրիարք Գրիգորի[1645] և Աղվանքի կաթողիկոս Տեր-Ստեփանոսի[1646] տարիներին, քրիստոնեական թվականությամբ՝ հազար երկու հարյուր իննսունինը թվականին, իսկ մեր հայոց թվականությամբ՝ տասնչորս հորելյանին և քառասունվեց թվին[1647], հարյուր ութսունվեց օլիմպիադին[1648] և երկրորդ տարում, հիսուն ընդիքտիոնին[1649]՝ պակասած թվով, իսկ ըստ արեգակի քսանությակ շրջանի մեկ հինգհարյուրյակի՝ երկու հարյուր տասնչորս թվականին[1650], Նոռավանքի[1651] այս վսեմ և փառաբնակ ուխտում, աստվածաբնակ այս տաճարների ու աստվածակիր սուրբ նշանների հովանավորության ներքո։ Այդ ժամանակ խորթ և դառնադաժան օրեր էին, երբ գտնվում էինք տիեզերակոծ տագնապի մեջ, միշտ խռովահույզ դիմագրողականությամբ՝ աչքներս հառած միայն երկնային խնամատարությանը։ Դրա համար գետնատարած խնդրում եմ սրբա-

* Մատթ., ԻԵ, 27։
** Մատթ., ԻԵ, 21։

զանների դասերին, որ մեզ հիշման արժանացնեք և չանտեսեք իմ անէությունը, երբ հողացած լինեմ կորդացած գերեզմանում, այլ կհամարեք, որ ձեր աչքի առաջ մուրացկանի նման փեշս վեր բռնած՝ շառագունած դեմքով ու տանջված երեսով ձեզանից ողորմության փշրանքներ եմ խնդրում, այսինքն՝ ուզում եմ, որպեսզի մեկ անգամ երկնային զոհաբերության արժանի անեք։ Նվ եթե սրա մեջ ինչ-ինչ սխալմունքներ կամ պակասություն[ներ] գտնեք, հիվանդագին մտքով չպախարակեք, որովհետև մարդկային էությանը հատուկ է սայթաքել ու տկարանալ խոսքերի և գործերի մեջ, այլ ողջախոհ կամքով ու աստվածասիրելուն սիրով պիտի նեբրեք՝ մեզ բաշխելով մեր հանցանքները։ Եվ դուք բոլորդ ողորմած աստծուց մեկի դիմաց բյուրապատիկ ողորմություն կըդտնեք՝ երկրորդ կյանքով։ Միաժամանակ պատվիրում եմ բոլոր նրանց, ովքեր պիտի հանդիպեն այս գրքին՝ սրա բովանդակությունից ոչինչ չանջատել կամ շարադրանքի կարգը չայլանդակել կամ անամոթաբար թուղթ չպոկել սրանից՝ նախանձից, նենգությունից և կամ ուրիշ պատճառով։ Իսկ եթե մեկը լրբաբար հանդգնի [այդպիսի բան անել], ջնջվա՛ծ լինի կյանքի գրքից, զրկվա՛ծ լինի հավիտենական կտակից, Հուդայի ու [Քրիստոսին] խաչ բարձրացնողների հետ վարձատրվի, սատանայի ու բոլոր չարագործների հետ դատապարտվի։ Եվ ով որ սա ընդօրինակի ու մյուս [մասերի] հետ դնի նաև այս համառոտ հիշատակարանը, մեզ հետ միասին աստծու արարչական սիրուց ողորմություն ստանա՝ թե՛ մարմնով կենդանի ժամանակ և թե՛ գերեզմանում ու երեկո չունեցող այն մեծ օրը։ Փա՛ռք աստծուն բոլոր արարածներից և գոհունակությո՛ւն՝ երկնավորների բոլոր բանակներից անվախճան հավիտենության շարունակվող ժամանակներում. ամե՛ն։

ՍՅՈՒՆԻՔԻ ՏԱՄՆԵՐԿՈՒ[1652] ԳԱՎԱՌՆԵՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ[1653] ՀԱՐԿԱՅՈՒԹՅԱԿԸ ԸՍՏ ՀԻՆ ՍԱՀՄԱՆԱԴԱՏԻ

Ա. Մղուկ գավառ

Նորիք՝ 12[1654]։
Ցուր՝ 6։
Խովիտ՝ 8։
Հարժիք՝ 10։
Բերդկաներեչի՝ 5։
Տաթև՝ 10։
Մացարդ՝ 10։
Տաշու՝ 5։
Արիտ՝ 6։
Արծիվ՝ 6։
Խոտուք՝ 8։
Ախնեն՝ 8։
Բերդն՝ 10։
Երեծ՝ 6։
Ղուսերծ՝ 10։
Մրուց՝ 8։
Մարդակայք[1656]՝ 6։
Տատան՝ 6։
Մազազնի՝ 6։
Տոլորք[1657], 12։
Տորունկուլք[1658]՝ 8։
Աքածի՝ 12։
Դաստակերտ՝ 10։
Մեծիք՝ 12։
Աղաթմարաթ՝ 6։
Ցողունի՝ 10։
Արևես՝ 7։
Արթեք՝ 10։
Մննի՝ 12։
Ոդիհի՝ 10։
Գետակից՝ 12։
Խանք՝ 12։
Մաղկա՝ 12։
Մեղքի՝ 12։
Լծեն՝ 6։
Ոլոտն՝ 10։
Ոպնի՝ 6։
Սբեռք[1655]՝ 6։
Մոզույք՝ 10։
Լոր՝ 12։
Մշկաձոր՝ 6։
Սապատաձոր՝ 8։
Փոքր Ույծ՝ 8։
Տորունիք՝ 10։
Տխունիք՝ 12։
Թործողու՝ 6։
Գրվակ՝ 6։
Պիսաք[1659]՝ 6։
Խուրեք՝ 6։
Մորենի՝ 12։
Բնունիք՝ 6։
Աթղեք՝ 12։
Օրդիքիք՝ 12։
Ըշտկամայրի՝ 12։
Ռղեան՝ 6։
Որձաբերդ՝ 12։
Կորովի՝ 12։
Կիրակոսիկ՝ 12։
Բռնակոթ՝ 12։
Կամավանք՝ 10։
Վասակակերտ՝ 12։
Շաղատ՝ 12։

Ապարանից գետ՝ 10։
Մեծաձոր՝ 10։
Վաղատին՝ 12։
Գոմեր՝ 7։
Կաքավարտի[1661]՝ 12։
Ագարակիկ՝ 12։
Գայլոց վանք՝ 10։
Մուցք՝ 7։
Շաղատո վանք՝ 6։
Շոքար՝ 10։
Փեթականոց՝ 6։
Աղիտու[1660] 12։
Կուրավանք՝ 7։

Բ. Եվայլախ[1662] գավառ

Քաղատակ՝ 12։
Ջաբեի վանք՝ 12։
Դաստակերտ՝ 10։
Քարունջ՝ 10։
Վերին Բորտի՝ 12։
Բյուրոտի վանք՝ 6։
Սարափարախ[1663]՝ 6։
Գոդաձոր Ներքին՝ 7։
Գոդաձոր Վերին՝ 10։
Ականք՝ 10։
Մեծաձոր մյուս՝ 12։
Կոռոշափոր՝ 7։
Մազազնէ[1664]՝ 6։
Շաքե՝ 12։
Լերին վանք՝ 12։
Անկեղակոթ՝ 10։
Բորտի՝ 12։
Գղվրթոտ՝ 6։
Յուղոտամաղք՝ 12։
Ուռական գետ՝ 10։
Գինական գետ՝ 10։
Որդան հայր՝ 12։
Զկանարած՝ 12։
Ջահայրյանք՝ 10։
Սաղատաձոր՝ 8։
Բողոտի ջուր՝ 5։

Գ. Վայոց ձոր գավառ

Գետիկ՝ 12։
Գոլոշտի վանք՝ 6։
Արտոց գետ՝ 6։
Մարտիրոս՝ 7։
Դերբեն՝ 10։
Ուղի ձոր՝ 10։
Տյառնավանք՝ 12։
Ապարանք՝ 6։
Բարձի շեն՝ 12։
Աջողք՝ 10։
Կապույտք՝ 12։
Դեկն՝ 10։
Արուճ՝ 12։
Աջառագավիթ՝ 6։
Գաղատա՝ 10։
Կորոտյունք[1665]՝ 10։
Ըրվենք՝ 6։
Խորձա՝ 8։
Ջեղյա՝ 8։
Եկեռն[1666]՝ 10։
Գնշին՝ 6։
Էրդէչ՝ 10։
Ապանա՝ 6։
Մսեն՝ 12։

Ագարակի ձոր՝ 5։
Եղեգնաձոր՝ 12։
Բերդի մայր՝ 20։
Կուրանք՝ 12։
Հորք՝ 12։
Խարաշկոնք՝ 10։
Արոր՝ 7։
Անգեղի՝ 12։
Եղեգիք՝ 12։
Մողն՝ 12։
Արկազն՝ 12։
Փշատիք՝ 6։
Մայրադուրք՝ 12։
Մոխրոց՝ 6։
Կարոնք՝ 10։
Աղյավ՝ 10։
Բոր՝ 10։
Փշոնք՝ 15։
Խոզավաս՝ 10։
Լիճ՝ 6։
Կամրջո ձոր՝ 8։
Աղոպեն՝ 8։
Քաշի մարդ՝ 6։
Երերունք՝ 10։
Բակերտ՝ 10։
Որդոերեգի՝ 6։
Վարդենիք՝ 10։
Հացիք՝ 7։
Նրբյուն՝ 12։
Նորիք՝ 12։
Ամաղու՝ 10։
Արկաթուկերտ[1667]՝ 6։
Ողյան՝ 10։
Արտաբոյն(ք)[1668]՝ 10։
Փորակո[1669]՝ 12։
Գրկիք[1670]՝ 6։
Սարկողովք՝ 20։
Ագարակ՝ 12։
Երիժու՝ 6։
Արենի՝ 12։
Երերն՝ 10։
Խոտորձի՝ 12։
Անգանք[1671]՝ 6։
Պրակք՝ 12։
Աղթաբույնի՝ 6։
Շատախ[1673]՝ 6։
Գուտենի[1674]՝ 12։
Հավու՝ 6։
Միջագետք՝ 6։
Խնձորուտ՝ 6։
Դրունք՝ 10։
Կաքավուց աղբյուր՝ 6։
Ունջոռք՝ 10։
Աղնջոց բերդ՝ 6։
Ատշար՝ 6։
Երերունք մյուս՝ 10։
Կեչուտ՝ 6։
Ջերմուկ՝ 12։
Երկայնարտի[1672]՝ 6։
Շատախ մյուս՝ 6։
Յրտոգետ՝ 6։
Արատենք՝ 6։
Ըռեդի՝ 8։
Եճեղի[1675]՝ 10։
Ուռիք՝ 8։
Գոմք՝ 6։
Եղնանիստն՝ 6։
Գնդեվանք՝ 10։

Դ. Գեղաբունի գավառ

Կոթ՝ 20։
Գոճո ձոր՝ 12։
Յրցնի՝ 7։
Ոփյաց ձոր՝ 6։
Եվանակաց հուն՝ 12։
Գանձաղ անտառ՝ 7։
Երիզկույք[1677] 15։
Վասակաշեն՝ 10։
Ամասրիա՝ 15։
Կամբրյուն՝ 15։
Խոկառինճ՝ 15։
Արգիճի՝ 10։
Կոկույք՝ 12։
Սկերտ՝ 10։
Խնձի թաղք[1676]՝ 7։
Նորաշեն՝ 7։
Ողենի՝ 12։
Գողաձոր՝ 7։
Դաստակերտ[1678]՝ 10։
Ջառագարակ[1679]՝ 7։
Վաժոց՝ 10։
Հողք[1680]՝ 15։
Խորտան՝ 15։
Թմոկ՝ 15։
Մեհոգած՝ 10։
Ջագ՝ 17։
Ութբրուն՝ 12։
Վարդենիք՝ 6։
Թամբարարք՝ 12։
Առնջո հուն՝ 15։
Պահավանք՝ 6։
Վանավան՝ 7։
Բերան՝ 12։
Բրտի այրք՝ 12։
Գերափու՝ 15։
Ախայենք[1681]՝ 15։
Հովվաց ագարակ՝ 7։
Կածիք՝ 15։
Հուշապերեկ՝ 6։
Ներքին Վարդենիք՝ 15։
Երերուք՝ 15։
Գոմք՝ 12։
Կուտրակագոմք՝ 10։
Փառականք՝ 10։
Ղեխք՝ 10։
Շիկակարբն՝ 15։
Ծաղկա՝ 7։

Ե. Սոթից գավառ[1682]

Սոթք[1683]՝ 20։
Ունչիձոր՝ 7։
Ավազան՝ 12։
Արավիսաբակ[1685]՝ 6։
Տրետուք՝ 8։
Խորթագետ՝ 8։
Նորաբակք՝ 6։
Կուքն՝ 12։
Արփունքն՝ 12։
Կուշկունիք՝ 10։
Վաղավեր՝ 10։
Ամեռնափոր՝ 15։
Շինիք՝ 15։
Երեզ՝ 12։
Ծափաթաղք՝ 7։
Հավաթաղք՝ 7։
Համամաբակք[1684]՝ 7։
Գուկառինճ՝ 15։
Սափչի անապատ[1686]՝ 8։
Վարդանաբակք[1687]՝ 6։

Վասակաշեն՝ 10։
Անապատ՝ 12։
Շատջրեք՝ 10։
Բարկույք՝ 12։
Ուռակարբ՝ 15։
Շատվան՝ 10։
Աստվածածին՝ 10։
Բակափոր՝ 12։
Մաքենոց՝ 15։
Ջերիշատ՝ 12։
Աղբերաձոր՝ 7։
Անապատ՝ 7։
Կուտակք՝ 6։
Ջաղացաձոր՝ 10։
Պաշուզք[1690]՝ 12։
Բերդաձոր՝ 8։
Որդնիք՝ 15։
Դարանակ[1692]՝ 15։
Ոզմունք՝ 12։
Ջահո[1694]՝ 12։
Որոկնք[1696]՝ 12։
Գողոց ագարակ՝ 12։
Գիղամաբակ՝ 10։
Սահակաբակք[1699]՝ 7։
Ջաղացաձոր՝ 6։
Դպրաբակ՝ 6։
Ատրմղենաբակ՝ 12։
Մնաձոր՝ 6։

Գետաբակ՝ 10։
Վարժակի աղբյուր[1702]՝ 10։
Եղջերվենիք՝ 8։
Օձի գետ[1703]՝ 6։
Եռեցիք՝ 12։
Ասխոզ՝ 10։
Արմնալ՝ 17։
Շապուհաթաղ[1688]՝ 7։
Վաշեի բակք՝ 6։
Ջաշուրաբակք[1689]՝ 7։
Տեռնատեան՝ 12։
Դրունք՝ 12։
Դարանք[1691]՝ 7։
Ախոռատուն՝ 15։
Պաշուք Ներքին[1693]՝ 12։
Խորասանաբակ[1695]՝ 6։
Ականք[1697]՝ 12։
Այրք[1698]՝ 15։
Կախան աղբյուր՝ 8։
Խոնթակաբակ՝ 7։
Որուց՝ 8։
Դգոլաբակ[1700]՝ 6։
Խորժա[1701]՝ 12։
Ծար՝ 15։
Երերի՝ 8։
Հոնջենք՝ 7։
Անապատ՝ 10։

Զ. Աղաձեն գավառ

Ավժեն՝ 10։
Տանձուտ՝ 7։
Անեժ՝ 12։
Հացյաց աղբյուր՝ 12։

Քեղաձոր՝ 10։
Արտագետ՝ 12։
Ականք՝ 8։
Մշենի՝ 6։
Վերին շեն՝ 6։
Մատրակերտ՝ 6։
Հունչաք՝ 12։
Բողխոշոխ[1704]՝ 10։
Լսորք՝ 8։
Շաբակի[1706]՝ 7։
Բաղախանիք[1707]՝ 12։
Որբոքո քար՝ 8։
Միծառնավանք՝ 10։
Կադոհորինք՝ 12։
Խրու՝ 8։
Խաղտիք[1709]՝ 12։
Հայրի՝ 8։
Աղտատ՝ 6։
Արքո՝ 6։
Ավարակ[1710]՝ 12։

Հակ՝ 15։
Մեղի՝ 12։
Արվական՝ 6։
Քաշաթաղք՝ 6։
Զիասար՝ 6։
Մննի՝ 6։
Մարգք՝ 10։
Սուրբ Գեորգ՝ 8։
Ագարակու գետ[1705]՝ 10։
Կարկատան՝ 6։
Մոշենք՝ 10։
Արահուձ՝ 6։
Հայելյակ՝ 6։
Մախուլն՝ 10։
Ջորացիք[1708]՝ 10։
Վժնաբերդ՝ 12։
Անուշավան՝ 12։
Շամրթա՝ 8։
Վասակակերտ՝ 10։

Է. Հաբաձդ գավառ

Աղախիրդ[1711]՝ 12։
Կադավանք՝ 8։
Վանոցա՝ 20։
Խորյա՝ 7։
Տանձյակ՝ 7։
Խախալք[1712]՝ 8։
Խնձորեսկ[1713]՝ 10։
Մրկաքար՝ 12։
Շոռնոխո՝ 12։
Թաղթուն՝ 7։
Տեղ՝ 12։
Պատանդավանք՝ 7։
Նորաշինիկ՝ 6։
Վաղատու՝ 12։

Խորխոռ՝ 7։
Կարբինք Վերին՝ 8։
Կարբինք Ներքին՝ 8։
Գորու՝ 20։
Լավակունք[1716]՝ 10։
Շագվա՝ 10։
Անձկայք՝ 6։
Գեննենաթաղք[1717]՝ 6։
Ղոկանի[1718]՝ 8։
Ցողունի[1719]՝ 12։
Ագարակ՝ 8։
Անձկայք՝ 12։
Ջագաձոր՝ 12։
Նախանձփոր[1720]՝ 8։

Գորայք՝ 10։
Խոտ՝ 12։
Մարգաձոր՝ 8։
Բոքս՝ 10։
Արքո՝ 10։
Շաթիթաղք՝ 8։
Հալէ՝ 8։
Քոչագեղ՝ 12։
Եղնի՝ 7։
Խանաձախ՝ 20։
Ակարդան[1714]՝ 10։
Մակաղոց՝ 10։
Մակաղոց մյուս՝ 7։
Դեղի[1715]՝ 12։
Կուվա՝ 6։
Բազմածակք՝ 6։

Արտաշեն՝ 6։
Քրվանք՝ 20։
Գնդաշեն՝ 12։
Բողյան՝ 12։
Բորոտան՝ 15։
Ղզլերձ՝ 12։
Ականա՝ 10։
Պետրոսկա վանք՝ 10։
Աղոջրիկ[1721]՝ 8։
Ուսկածակ[1722]՝ 8։
Ստորին՝ 12։
Բահիզաձոր՝ 18։
Նափակաշեն՝ 12։
Թաղարա՝ 8։
Շնո հերք՝ 24։

Ը. Բաղի գավառ

Աչաղու՝ 8։
Եճանան՝ 12։
Բարերվայր՝ 6։
Վարդավանք՝ 6։
Տափյար՝ 6։
Տագամար՝ 20։
Եղենգն՝ 6։
Նորաշինիկ մյուս՝ 6։
Ոքն[1726]՝ 6։
Ատո՝ 10։
Հողար՝ 8։
Խմուլճ՝ 6։
Արկանի ձոր՝ 10։
Ջարերիտասկերտ՝ 10։
Տերանդատ՝ 8։
Թուրք՝ 12։
Անական[1730]՝ 7։
Պարքոն՝ 6։

Գեղաքունի՝ 10։
Գուկական՝ 10։
Մեծամարգ՝ 12։
Արձանաձոր՝ 6։
Շեքքս՝ 12։
Տորթնի[1723]՝ 26։
Ավարագետք[1724]՝ 10։
Խոտանան[1725]՝ 12։
Նորաշինիկ՝ 6։
Հյունյաց ձոր՝ 6։
Գոդեվանք[1727]՝ 12։
Արուքս՝ 6։
Կրովագետ[1728]՝ 6։
Կավարտ՝ 8։
Տոգող՝ 6։
Տատնեղիշեն՝ 10։
Ագարակ՝ 20։
Մոգարակ[1729]՝ 6։

Մյուս Անական՝ 7։
Պարքոն մյուս՝ 6։
Կմեզ՝ 10։

Փառավագ՝ 8։
Գյուղ Կովսական՝ 12։

Թ. Մյուս բաղ, որ անվանվում է Քաշունիք

Երից՝ 12։
Դաստակերտ՝ 6։
Վանանդ՝ 10։
Անատաց ձոր՝ 6։
Լերմենի շեն[1731]՝ 6։
Խողվանի՝ 10։
Տանձավայր՝ 8։
Մաճ՝ 7։
Շոռնոխոտ՝ 8։
Խախտք՝ 12։
Երեղի՝ 7։
Մոգք՝ 6։
Իցան՝ 6։
Ալվերք՝ 6։
Դիղք[1735]՝ 8։
Մաղձնատուք՝ 6։
Ճողք[1737]՝ 8։
Անծնյակ՝ 6։
Բակուրի վանք[1739]՝ 12։
Մերթակերտ՝ 6։
Ջղու[1740]՝ 8։
Բարկուշատ՝ 12։
Տրյա՝ 12։
Ճապկուտ[1742]՝ 12։
Անդոկաբերդ՝ 12։
Արտեն՝ 10։
Հարթնեք[1744]՝ 10։

Թոռվ մյուս՝ 7։
Բահու բերդ[1745]՝ 7։
Աթխույք՝ 12։
Վաժանիք[1746]՝ 8։
Հալուտուք[1732]՝ 8։
Մարդախանի[1733]՝ 10։
Դողար[1734]՝ 6։
Տաճկաձոր՝ 6։
Կոճորու՝ 7։
Խոդի[1736]՝ 6։
Տուտուտք[1738]՝ 7։
Ակն՝ 6։
Տախն՝ 12։
Հնցնյան՝ 6։
Դադա[1741]՝ 12։
Խիրք՝ 12։
Ագատի՝ 8։
Գորագիտ[1743]՝ 6։
Նակորզան՝ 20։
Նախջավանիկ՝ 10։
Թոխ՝ 3։
Աղահորդ՝ 10։
Ի՛ժուկ՝ 12։
Երվանդակերտ՝ 6։
Կոմեն՝ 6։

Ժ. Կովսական գավառ

Իցան՝ 12։
Շատուռ՝ 6։
Փառավարտո վանք՝ 6։
Հուսկոր[1747]՝ 6։
Բեխ՝ 6։
Ողուչի՝ 12։
Բեխևերջի՝ 8։
Վաժնատուռ՝ 10։
Բուստ՝ 10։
Գազավանք՝ 6։
Թաթու մարգ՝ 6։
Մարուր՝ 6։
Գոն՝ 5։
Երեգիք՝ 7։
Համուրք[1751]՝ 6։
Մաճկան՝ 6։
Նախկոտան՝ 6։
Լիմ՝ Ը։
Լիմ վերին՝ 8։
Փշատեցրուս՝ 6։
Բերքնի՝ 8։
Ուրգաբ՝ 6։
Աղաթաղք[1753]՝ 12։
Պողոսի վանք՝ 7։
Թեղո կից՝ 7։
Արցախամայրի[1755]՝ 17։
Մառի[1756]՝ 6։
Լուցմայրի՝ 6։
Տարվանոտ՝ 6։
Դռնակերտ՝ 7։
Կից[1758]՝ 15։
Մառագաթ[1748]՝ 12։
Մենիք[1749]՝ 6։
Դալք՝ 5։
Վարոսի վանք՝ 10։
Հոյնացկոր՝ 5։
Տախարյան[1750]՝ 10։
Վառամաղբյուր՝ 6։
Մանուշակի մարգ՝ 6։
Գիրկն՝ 6։
Ջամոտուք՝ 8։
Լիմախովիտ[1752]՝ 6։
Դից մայրի՝ 6։
Աշտարակ՝ 6։
Կերեն՝ 12։
Շիկահողք՝ 12։
Վախտանգաձոր՝ 7։
Շաշիգեն[1754]՝ 10։
Ծանաղու՝ 20։
Բարձրութաղք[1757]՝ 6։
Նորաշինիկ՝ 8։
Խոզաձոր՝ 12։
Ծոբի՝ 12։

ԺԱ. Արևիք գավառ

Աղվո վանք[1759]՝ 7։
Մայրի՝ 8։
Կառատի՝ 15։
Աբկավանք՝ 8։
Մալունու՝ 8։
Ն ղրո վանք՝ 20։
Որդիշո վանք՝ 20։
Խոլավանք՝ 12։
Կարճավան՝ 12։
Տաշտուն՝ 12։
Ագարակ՝ 8։
Մել՝ 6։

Կորեկենք[1762]՝ 10։
Խոզու գյուղ[1763]՝ 6։
Տափյար՝ 8։
Լոհավանք՝ 30։
Լուսկա վանք՝ 12։
Ջվարկի վանք՝ 12։
Մոլոշոն[1760]՝ 12։
Կուրավանք[1761]՝ 8։
Մանաղու՝ 8։
Տհհի՝ 8։
Տաղամայրի՝ 6։
Վարդանաձոր՝ 6։

ԺԲ. Ձորք գավառ

Բաղաբերդ՝ 12։
Տինիք՝ 12։
Ծաղիանու՝ 6։
Գեղո վանք՝ 20։
Բեխորոտ 8։
Բեշ՝ 6։
Բագախու[1765]՝ 8։
Աջարաշ՝ 10։
Նորագյուղ՝ 12։
Բակավանք՝ 12։
Կահուրա[1764]՝ 6։
Ոչեքի՝ 6։
Շարաքո՝ 8։
Կաճաճուտ՝ 8։
Կից՝ 8։
Վաժունիք՝ 12։

ԺԳ. Երնջակ գավառ[1766]

Բուստ՝ 12։
Ամասրո վանք՝ 12։
Ողոհի՝ 12։
Գուգավանք՝ 8։
Անկուզիք՝ 12։
Տևի՝ 12։
Նորակերտ՝ 12։
Թեղյակ՝ 8։
Ոսկեձոր մյուս՝ 12։
Նորագյուղիկ՝ 12։
Արևեք՝ 8։
Սուրբ Գևորգ՝ 2 դահեկան և 8 դրամ։
Վան՝ 12։
Գոչեն՝ 8։
Մայրյակ՝ 12։
Ագուլիք՝ 12։
Ամառաշեն՝ 10։
Տքունա՝ 8։
Քարկուի՝ 12։
Ռապատ՝ 52։
Շահկերտ՝ 8։
Ջավաշրի վանք՝ 12։
Ապարանք՝ 12։
Գաղ՝ 12։
Ոփիք՝ 8։
Վանանդ՝ 12։
Տերեկունիք՝ 12։
Ովղավ՝ 12։
Ապրակունիք՝ 12։
Բերդիկ՝ 12։

Ճահուկ՝ 20։
Խախ՝ 12։
Որդոք[1767]՝ 12։
Պահեստ՝ 12։
Ըզդոն[1769]՝ 12։
Նորագյուղ՝ 10։
Խոռատունիք՝ 12։
Գևհենիք՝ 12։
Սաղվասունք[1771]՝ 8։
Հեծանա[1772]՝ 8։
Ոփիք՝ 12։
Թաթերք՝ 12։
Նորբերդ՝ 12։
Եզատունք՝ 12։
Դալարինք՝ 8։
Աղբերխաչ՝ 50։
Կարմիր եկեղեցի՝ 12։
Բլուր՝ 12։
Ղասլեն[1768]՝ 12։
Ընջղակերտ՝ 12։
Կուքի[1770]՝ 12։
Տիգեն՝ 12։
Արմավաշեն՝ 10։
Ջաղա՝ 8։
Թամաշաղ՝ 12։
Նորագյուղ մյուս՝ 12։
Շավեն[1773]՝ 12։
Ակոռի՝ 12։
Ագարակ՝ 8։
Քրտն[1774]՝ 8։
Քուլլք՝ 12։
Դրախտիկ՝ 6։
Ձղու՝ 12։
Ջուր[1776]՝ 8։
Բաբունք՝ 8։
Արգու գետ[1777]՝ 12։
Աղտավ[1778]՝ 8
Շմրթայի՝ 8։
Վասակակերտ՝ 10։
Խոտունիք՝ 6։
Ծավալք՝ 12։
Տալլակաթ[1775]՝ 10։
Ոլենի՝ 8։
Տախտակ՝ 8։
Անուշավան՝ 12։
Նորաշինիկ՝ 6։
Արքույքա՝ 6։
Ավերակի՝ 12։

Եվ Քրիստոսին փա՞ռք հավիտյան. ամե՛ն։ Վերոգրյալ գյուղերի գումարն է վեց հարյուր յոթանասունյոթ։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ստեփան Օրբելյանի սույն երկի խորագիրը տպագրություններում ներկայացված է տարբերություններով։ Այսպես. փարիզյան հրատարակությունը (1859 թ.) ունի «Պատմութիւն նահանգին Սիսական» խորագիրը, որը և նույնությամբ անցել է Թիֆլիսի (1910 թ.) տպագրությանը, իսկ մոսկովյան հրատարակության մեջ (1861 թ.) այն տրված է «Պատմութիւն տանն Սիսական» ձևով։ Նպատակահարմար համարեցինք թարգմանաբար ընտրել «Սյունիքի պատմություն» ձևակերպումը։ (էջ 65)։

2. Երկի խորագրին հաջորդող այս տողերը, որ դրված են 1-ին գլխից առաջ, փարիզյան հրատարակության մեջ չկան։ Վերցրել ենք մոսկովյան հրատարակությունից։ Սակայն նկատելի է, որ վերջին յիշատակ յայնըմ առեան արտահայտությունն աղավաղության արդյունք է. պիտի լինի Յիշատակաց մատեան։ Այստեղ հիշեցվում է երկի մյուս (սկզբնական, հեղինակային) անվանումը։ Հայտնի է, որ Ստեփանոս Օրբելյանն իր աշխատության հիշատակարանում (գլ. ԻԹ) նրա մասին գրել է հենց այդպիսի հիշատակումով. «... որ կոչի Յիշատակաց մատեան»։ Սա արդեն կասկածի տեղ չի թողնում։ Մեր առաջարկած վերոհիշյալ ուղղումը համընկնում է Ստեփանոս Օրբելյանի սույն երկի բնագրի Մաշտոցյան Մատենադարանում պահվող լավագույն ձեռագրին (թ. 7 բ), որը ՋԿԲ (=962+551=1513) թվականից է։ Կրում է 6271 համարը։ (էջ 65)։

3. Արաբած բառը այստեղ գործածել ենք նրա հին իմաստային առումներից մեկով, բնագրային բուրիւն արաբածոց բառակապակցության դիմաց՝ «առարկա, գոյացություն, գոյություն ունեցող բան» նշանակությամբ։ Այս իմաստով մեր հին մատենագիրները այն կիրառել են որպես եզրույթ (տերմին)։ (էջ 65)։

4. Բնագրում՝ տաճս Սիսական։ Հեղինակը Սյունիքը նշելու համար անխտիր գործածում է թե՛ Սիւնիք, թե՛ աշխարհ Սիւնեաց կամ Սիւնեաց աշխարհ, թե՛ Նիսական, տուն Սիսական կամ Սիսական տուն, Սիսական աշխարհ և այլն։ Նա Սիսական և Սիւնի անուններով նշում է նաև տոհմը։ Մատենաբանողները առանձնացնելով Սիսական-ը, ոմանք էլ նույնի հետ կապելով Սիւնի-ն, տվել են զանազան բացատրություններ։ Երկար ժամանակ իշխել է առասպելաբանական ստուգաբանությունը, որը գալիս է Մ. Խորենացուց, ըստ այդմ՝ Սիւնիք-ը և Սիսական-ը բխեցվում են Սիսակ նա-

հապետի անունից (հմմտ. Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց» աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, 1-ին, ԺԲ, էջ 41)։ 19-րդ դարից սկսած՝ ձգտել են տալ գիտական ստուգաբանութիւն։ Մի շարք գիտնականներ տարբեր մոտեցումներով այդ անունները բացատրել են էթնիկական ծագմամբ (Դը Լագարդ, Հ. Հյուբշման, Ն. Ադոնց, Ն. Մառ, Գր. Ղափանցյան, Ա. Ղարիբյան և այլն)։ Վերջերս առաջարկվել է նոր ստուգաբանութիւն։ Ս. Հ. Ոսկռյանը, մերժելով մինչ այժմ եղած ստուգաբանությունները, կանգ է առել Հ. Հյուբշմանի ստուգաբանության վրա, ըստ որի Սիսական-ը բաժանվում է Sis հիմքի և akan մասնիկի (հավաքական իմաստ արտահայտող ձևույթ պարսկերենում)։ Նա sis-ը բխեցնում է ծես բառից՝ «ծես», «զոհ» իմաստներով, տարածված շատ լեզուներում (նրա կարծիքով՝ անցած Հայաստանի լեզվից)։ Այսպիսով եզրակացնում է. «... Սիւնի (Սիսիւնի), Սիսյան, Սիսական և սիս արմատով մյուս տեղանունները նախնական ծագումով արտահայտել են մեկ իմաստ՝ ծիսատեղ կամ զոհատեղ» (Սյունիքը դիցարան, Երևան, 1981, էջ 18)։ Հիշենք, որ Հ. Աճառյանը ծես (ծէս) բառը համարում է փոխառված վրացերենից (հմմտ. «Հայերէն արմատական բառարան», համապատասխան բառահոդվածը)։ (էջ 67)։

5. Բնագրում Ստեփանոս Օրբելյանը քիչ վերը իր հեղինակային գործողությունները նշել է եզակի, իսկ այստեղ՝ հոգնակի թվով։ Նա տեղ-տեղ օգտվում է հեղինակային հոգնակիության հնարից, սակայն հետևողականորեն չի պահպանել դա։ Թարգմանության մեջ ընդհանրապես թողել ենք նույնը։ Հեղինակային գործողություններին վերաբերող բայաձևերը թվով համապատասխանեցրել ենք միայն այն դեպքում, երբ զգացվել է անպատշաճություն՝ հատկապես միևնույն նախադասության մեջ։ Այդ նույնը վերաբերում է նաև ես և մենք (մէք) դերանվանական ձևերին, որոնց նկատմամբ նույն ձևով ենք վարվել։ (էջ 67)։

6. Խոսքը վերաբերում է Սյունիքին, որը Հայաստանի «աշխարհ»-ներից (նահանգներից) մեկն էր։ (էջ 68)։

7. Հեղինակը, այստեղ անդրադառնալով իր երկի աղբյուրներին, հիշատակում է նաև Սյունյաց եպիսկոպոս Պետրոսի ճառերը։ Պետրոս Սյունեցին մեր մշակույթի պատմության մեջ հայտնի է նաև Պետրոս Քերթող անվանումով։ Նրա մասին քիչ բան է հայտնի։ Համարվում է աշակերտած Մովսես Խորենացուն, մասնակցել է Դվինի ժողովին 554 թ.։ 555—556 թվականներին դեռ կենդանի է եղել։ Նշանակում է՝ նրա կյանքի ընթացքն ընկնում է 5-րդ դարի վերջին տասնամյակներից մինչև 6-րդ դարի հինգերորդ թվականները։ Եղել է Սյունյաց եպիսկոպոս, գրել է ներբողական ճառեր։ Ս. Օրբելյանը հետո նրան բնութագրում է որպես համառ հոգևոր, իմաստությամբ լի անպարտելի փիլիսոփա, քերթող և քարզմանիչ (գլ. ԻԲ)։ Գրական ժառանգությունից ամբողջականությամբ չափազանց քիչ բան է հասել մեզ։ Ս. Օրբելյանի ակնարկած՝ Սյունյաց իշխան Բաբիկին (ինչպես և Անդոկին) վերաբերող քերթողական ճառի մասին զգալիորեն ենք կազմում Մ. Կաղանկատվացու և Ս. Օրբելյանի միջոցով, որոնք օգտվել են հիշ-

յալ ճառից։ Երբեմն որոշ գործերի վերագրումով սա շփոթվում է մեկ այլ Պետրոսի հետ։ (էջ 69)։

8. Ս. Օրբելյանի հիշատակած Տաթևի հայրապետանոցը Տաթևի նշանավոր վանքն է, որը ժամանակակից վարչական բաժանմամբ ընկնում է ՀՍՍՀ Գորիսի շրջանում։ Հետո ներառվել է մեծ մասամբ Սղուի, երբեմն էլ՝ Բղենի գավառների մեջ։ Տեղավորված է համանուն գյուղի մոտ, անդնդախոր ձորի եզրին։ Իբրև կրոնական օջախ հայտնի է եղել հին ժամանակներից, բայց նրա ծաղկումն սկսվում է 9-րդ դարի կեսերից։ Դրան նպաստում է նրա՝ նահանգի հոգևոր կենտրոն դառնալը (839 թվականից)։ 9-րդ դարի վերջերին քանդվում են այնտեղի կրոնական ու օժանդակ այլ շինությունները և կառուցվում նորերը, որոնք ներառվում են բրգավոր ամուր պարիսպների մեջ։ Գլխավոր տաճարը, որ կրում է Պողոս և Պետրոս առաքյալների անունը, հիմնադրվել է 895 թվականին։ Կառուցումն ավարտվել է 906 թվականին։ Նրան կից սրահ-գավիթը կառուցվել է 1043 թվականին։ Ապա 1295 թվականին Ս. Օրբելյանի նախաձեռնությամբ նույնպես գլխավոր տաճարին կից կառուցվել է մինչ այդ հիմնահատակ քանդված Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին։ Այստեղ են հուշակավոր շարժուն գավազանասյունը և այլ հուշարձաններ։ Վանքում եղել են գրադարան, գպրոց։ Նա ունեցել է խոշոր կալվածքներ, սեփական գյուղեր։ Նրան տասանորդ հարկ են վճարել հարյուրավոր գյուղեր։ Այս վանքը միաժամանակ եղել է միշնադարյան Հայաստանի գիտական-մշակութային խոշոր կենտրոններից մեկը (հուշարձանների նկարագիրը՝ պատմական անհրաժեշտ տեղեկություններով, ա՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 2-րդ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 11—12)։ Հուշարձանների հիմնական մասը կիսավեր է։ Այժմ բուռն թափով տարվում են վերականգնման աշխատանքներ (մեր վերջին այցելությունը՝ 1981 թվականի հունիսի 25-ին)։ (էջ 69)։

Տաթև անվան մասին պատմվել են ավանդություններ։ Ղ. Ալիշանը հիշեցնում է, որ, ըստ ավանդության, Թադեոս առաքյալի աշակերտ Եվստաթեն կամ Ստաթեն եկել է այդ տեղում քարոզելու, նահատակվել է, որի անունը ոամիկների բերանում աղավաղվելով, դարձել է Տաթև (Սիսական, Վենետիկ, 1893, էջ 224)։ Մեկ այլ ավանդությամբ, անշուշտ, ժողովրդական ստուգաբանությամբ բացատրվում է հայերեն «տա քեզ» արտահայտությամբ (տե՛ս Ե. Լալայեան, «Ջանգզուր գաւառ, նիւթեր ազգագրական ուսումնասիրութեան համար, Ա հատոր, Սիսիան», Թիֆլիս, 1898, էջ 24)։ Վերջերս հայտնվել է նոր կարծիք։ Ս. Հ. Ոսկռյանը գրել է. «Տաթև անունը, մեր կարծիքով, փոքրասիական ծագում ունի։ Այն խեթո-լուվիական երկնքի և ամպրոպի աստվածության Դաթա կամ Տատա անունից պետք է լինի» («Սյունիքը դիցարան», էջ 30)։ (էջ 69)։

9. Ըստ Մովսես Խորենացու (Պատմութիւն Հայոց, 1-ին, ԺԲ)՝ Սյունիքի առաջին նահապետ Սիսակը Հայկի տոհմից էր՝ Գեղամի որդին, անունից էլ նրա աշխարհը կոչվել է Սյունիք կամ Սիսական։ (էջ 69)։

10. Հեղինակը գրում է «Ցուցմունք սահմանաց աշխարհիս Սիսնեաց...», բայց գլխի շարադրանքն սկսում է գավառների թվարկումով, որը առանց սահմանների ուղղակի նշման է պատկերացում տալիս Սյունիքի պատմա-

կան տարածքի մասին։ Սյունիքը Հայաստանի 9-րդ նահանգն էր՝ շատ նշանակալից իր տնտեսական, քաղաքական ու մշակութային դերով։ Ըստ «Աշխարհացոյց»-ի նրա սահմաններն էին՝ արևմտյան կողմից՝ Այրարատ և Վասպուրական նահանգները, հյուսիսից՝ Գուգարքը և Ուտիքը, արևելքից՝ Արցախը, հարավից՝ Երասխ (Արաքս) գետը։ Տ՛ս համապատասխան քարտեզը Ս. Տ. Երեմյանի «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի», (Երևան, 1963) գրքում։ Հիշենք նաև, որ «Աշխարհացոյց»-ի բնագրում ցույց է տրված այդ «իններորդ աշխարհ»-ի տեղը Երասխ գետի և Արցախ աշխարհի միջև, Այրարատից արևելք (Ն. տ., էջ 109—110)։ Գրավել է 15237 քառակուսի կիլոմետր տարածություն (Ն. տ., էջ 117)։ (էջ 70)։

11. Մոսկովյան հրատարակության մեջ (1861, էջ 6) գրքի այս գլուխը միացված է Բ գլխին։ Ըստ որում Գ գլխի վերնագիրն էլ վերացված է։ Այդպես միացված է թարգմանել Մ. Բրոսեն (տե՛ս «Histoire de la Siounie par Stéphannos Orbélian» traduite de l'arménien par M. Brosset, Saint-Pétersbourg *1864*, էջ 46)։ Փարիզյան (1859) և Թիֆլիսյան (1910) հրատարակություններում առանձին է։ Մենք թարգմանեցինք առաձին։ (էջ 70)։

12. Տպագիր բնագրում գլուխն սկսվում է այսպես. «Իսկ գաւառք ունի երկոտասան»։ Դա շարադրանքի ընդհատվածության ապավորություն է թողնում։ Պետք է ենթադրել, որ դրան նախորդել է մի հատված, որը բնագրից ինչ-ինչ պատճառներով դուրս է ընկել։ Չկա նաև № 6271 լավագույն ձեռագրում։ (էջ 70)։

13. Ս. Օրբելյանի հիշատակած՝ Սյունիքի այս 1-ին գավառը (Տղուկը) ըստ «Աշխարհացոյց»-ի 7-րդն է։ Գրավել է 1950 քառակուսի կիլոմետր տարածություն (տե՛ս Ս. Տ. Երեմյան, «Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 56, 109, 117)։ Նրան սահմանակից էին հյուսիսից՝ Արցախի Տար գավառը, արևմուտքից՝ Վայոց ձորը, նրանից ներքև՝ Ճահուկը, հարավից՝ Երնջակը և Արևիքը, արևելքից՝ Բաղքը, Հաբանդը և Աղահեճքը (տե՛ս Ղ. Ալիշան, «Սիսական», Վենետիկ, 1893, էջ 206)։

Ս. Օրբելյանն այս գավառն առաջին տեղում է հիշատակում՝ նկատի ունենալով նրա կատարած դերը որպես կրոնական և վարչական կենտրոնի ամբողջ նահանգի համար՝ նախ՝ իր տարածքի մեջ մտնող Շաղատ կենտրոնով (4-րդ դարի վերջերից մինչև 9-րդ դարի առաջին կեսը), ապա՝ Տաթևով (որտեղից էլ հետո եպիսկոպոսարանը տեղափոխվում է Վայոց ձոր)։ Իր կարևոր դերի շնորհիվ գավառը հաճախ անվանվել է ամբողջ նահանգի անուններով՝ Սիսական կամ Սյունիք։ Այդ անունների արտացոլումն է այժմյան Սիսիան-ը, որը կրում է Սովետական Հայաստանի շրջաններից մեկը։ Ներկայիս Սիսիանի շրջանի տարածքը համընկնում է պատմական Տղուկի մի մասին։ 13-րդ դարից սկսած՝ Տղուկ—Սյունիք—Սիսական գավառը հիշատակվում է նաև Որոտն անունով։ (էջ 70)։

14. Տղուկ տեղանունը Ս. Օրբելյանը բխեցնում է համանուն գավառապետի անունից, որը հավանական չէ։ Ենթադրվում է, որ այն ունի էթնիկական ծագում (հմմտ. Թ. խ. Հակոբյան, «Սյունիքի թագավորությունը», Երևան, 1966, էջ 137, այլև՝ նույնի «Հայաստանի պատմական աշխարհագրություն», Երևան, 1968, էջ 205)։ Ըստ նորագույն տվյալների՝ Տղուկը

գալիս է ուրարտական շրջանից։ 1975 թվականին Սիսիանի շրջանում հայտնաբերված սեպագիր արձանագրության մեջ (մ. թ. ա. 8-րդ դարի վերջերից կամ 7-րդ դարի սկզբներից) հիշատակված Տուլուկու տեղանունը (Տուլուկու երկիր) գիտնականների կարծիքով պատմական Տղուկի անունն է (հմմտ. «Սովետական Հայաստան» օրաթերթ, 20 օգոստոսի 1975 թ., այլև՝ Ն. Վ. Հարությունյանի «Արգիշտի 2-րդի նորահայտ սեպագիրը» հոդվածը. «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 3, 101—102։

Н. Арутюнян, Топонимика Урарту. Ереван, 1985, стр. 236 (խմբագիր)։ Վերջերս այն կարծիքն է հայտնվել, թե Տղ, Տաղ հնչաձևով տեղանունները կապված են եղել կրակի պաշտամունքի հետ, որպիսի անուններ շատ կան հատկապես Սյունիքում (Ս. Ոսկանյան, «Սյունիքը դիցարան», Երևան, 1981, էջ 20)։ (էջ 70)։

15. Վայոց ձորը, որ Ս. Օրբելյանը դնում է 2-րդ տեղում, Տղուկից հետո, «Աշխարհացոյց»-ում նշվում է որպես Սյունիքի 3-րդ գավառ։ Գրավում էր 2350 քառակուսի կիլոմետր տարածություն (տե՛ս Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 82, 109—110, 117)։ Նրան սահմանակից էին՝ արևելքից՝ Տղուկը և Արցախի Տար գավառը, արևմուտքից՝ Այրարատյան նահանգը, հյուսիսից՝ Գուգարքունիքը և Սոթքը, հարավից՝ Ճահուկը և Այրարատի Շարուր գավառը (տե՛ս Թ. խ. Հակոբյան, «Հայաստանի պատմական աշխարհագրություն», էջ 212)։ Նրա տարածքը համընկնում է այժմյան Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններին։ Գավառը նշանավոր էր ոչ միայն նրանով, որ մյուս գավառների համեմատությամբ ամենաընդարձակն էր, այլև՝ որ ուներ տնտեսական, քաղաքական, մշակութային մեծ դեր։ Բավական է հիշել, որ նահանգի համար Տղուկից հետո կրոնական ու վարչական կենտրոն է դառնում այս գավառը։ Գավառն ունի պատմական հուշարձանների արտակարգ հարստություն։ (էջ 70)։

16. Պատմիչը ուրիշների նման ժողովրդական սուտաբանությամբ Վայոց ձորի անվանումը կապում է գավառում 8-րդ դարում տեղի ունեցած ահավոր երկրաշարժի ավերումների առաջ բերած ժողովրդական ողբ ու հառաչի, վայնասունների հետ։ Երկրաշարժին վերաբերող արձագանքները հասել են մինչև Ս. Օրբելյանի ժամանակները։ Նման բացատրության հանդիպում ենք, օրինակ, Ս. Օրբելյանին որոշ չափով ժամանակակից և իր աշխատությամբ նրան անմիջապես նախորդած պատմիչ Կիրակոս Գանձակեցու երկում (Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 74), որտեղ պատմվում է, թե ինչպես գավառի Մոզ ավանի շրջանում քառասուն օր տևած երկրաշարժերի հետևանքով հիմնովին կործանվում է ավանը, 10 000 մարդ գետնի տակ է անցնում։ Դա մեծ սուգ է առաջ բերում։ Այստեղից էլ գավառն ստանում է իր անունը։ Այդ աղետի մասին ավելի պատկերավոր ձևով պատմում է Ս. Օրբելյանը իր երկի ԼԱ գլխում և կրկնում Վայոց ձոր անվան հիշյալ բացատրությունը։ Այս պատմիչները, իհարկե, դեպքը ներկայացնում են ոչ իբրև ականատեսներ, այլ փոխ են առել իրենց նախորդած ժողովրդական զրույցներից։ Իրոք, 8-րդ դարի 1-ին կեսին տեղի է ունեցել այդ զարհուրելի դեպքը, սակայն գավառի անվան ծագումը չի կարելի կապել դրա հետ։ Բանն այն է, որ Վայոց ձոր-ը հիշատակվում է ավելի հին

աղբյուրներում (Ծղիշէ, Խորենացի)։ Եվ հավանաբար եղել է 5-րդ դարից էլ շատ ավելի վաղ։ Հետագայում գիտնականները հիշյալ տեղանվան վաղ ձևից բաղադրիչի վայ մասը բացատրել են կա՛մ դիցանուններով, կա՛մ ցեղանվամբ և այլն։ Վերջերս այն կարծիքն է հայտնվել, թե այն գալիս է հնդեվրոպական uas արմատից՝ «արև» իմաստով (տե՛ս Ս. Ոսկանյան, նշվ. աշխ., էջ 50)։ (Էջ 70)։

17. Գավառի անվան հնագույն ձևն է Գեղաքունի, որը հետագայում ժողովրդական կրկնակի ստուգաբանությամբ դարձավ Գեղարքունի։ Պատմիչը երկու ձևով էլ գործածում է։ Գավառն «Աշխարհացոյց»-ում նշվում է 4-րդը։ Բռնում էր 1735 քառակուսի կիլոմետր տարածությունն (տե՛ս Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 47, 109, 117)։ Ընդգրկում էր Սևանա լճի ավազանի մեծագույն մասը՝ այժմյան Կամոյի, Մարտունու շրջանները և Սևանի շրջանի որոշ մասը։ Հարևան էր Այրարատին, Գուգարքին, Ուտիքին, Սոթքին և բուն Սյունիքին։ Հոչակված էր Գեղամա լճով և Սևան կղզով։ Կղզու անունը հետագայում տարածվել է և լճի վրա։ Գավառի անունը ժողովրդական ավանդությամբ բխեցվել է Գեղամ նահապետի անունից, որը և որդեգրել է նաև Ս. Օրբելյանը։ Ըստ Մովսես Խորենացու՝ Գեղամը Հայկի տոհմից էր՝ Ամասիայի որդին. նա իր անունով է կոչել Գեղ լեռը, Գեղարքունի գավառը և Գեղամա ծովակը (Պատմութիւն Հայոց, 1-ին, ԺԲ)։ Իրականում այս անունները Գեղամի անունից չեն ծագում։ Հետագայում ոմանք նրան վերագրել են տոտեմական (Ն. Մառ), ոմանք՝ էթնիկական (Ն. Ադոնց) ծագում։ Պարզված է, որ Գեղարքունի անունը ուրարտական ծագում ունի. գալիս է Welikuni կամ Welikuhi անունից։ Գեղ, Գեղամ անուններն էլ նրա Wel մասից են (տե՛ս Г. А. Капанцян, «Историко-лингвистические работы, Երևան, 1975, հ. 2-րդ, էջ 82)։ Վերջերս այն կարծիքն է հայտնվել, թե այդ տեղանունը պաշտամունքային ծագում ունի։ «Նրա անվան հիմքը հնդեվրոպական է» (տե՛ս Ս. Ոսկանյան, նշվ. աշխ., էջ 43)։ (Էջ 70)։

18. Այս 4-րդ գավառը («Աշխարհացոյց»-ում՝ 5-րդը) մոտավորապես համընկնում է այժմյան Վարդենիսի շրջանին։ Նրա անունից մնացել է այժմյան Ձոր գյուղի անունը նույն շրջանում։ Այս տեղանունը Ս. Օրբելյանը ներկայացնում է Սոթ(ք) ձևով։ Նրա բացատրությունից երևում է, որ հայերենն ունեցել է սոթ բառ, որը պիտի նշանակեր «բուք, ցրտաշունչ բամի կամ ցուրտ եղանակ»։ Դրա վրա հենվելով՝ Հ. Աճառյանը «Հայերէն արմատական բառարան»-ում (հ. 6-րդ, էջ 313) դնում է այդպիսի արմատ՝ «ուժեղ, մրրկաշունչ քամի» իմաստով։ Ապա բարբառային բաժնում մատնացույց է անում «Սևանա լճի վրա արևելքից փչող ցուրտ քամի» իմաստի մասին։ Վերջինս կարող էր ածանցյալ իմաստ լինել և ոչ հակառակը։ Հայագիտության մեջ սովորաբար նշվում է, որ դա նույն տեղանունն է, որը ավելի հին աղբյուրներում հանդիպում է Սպտ (ք), Սպտեայ(ք), Սպտէ(ք), Սպտ(ք), Ջպտ(ք), Ջպտէ(ք) ձևերով։ Անունը գալիս է շատ վաղ ժամանակներից (հիշատակել են նաև հին հույն մատենագիրները) և ունի էթնիկական ծագում։ Ըստ Ն. Ադոնցի՝ ունի էթնիկական ծագում (հմմտ. Н. Адонц, «Армения в эпоху Юстиниана», Երևան, 1971, էջ 423—424)։

վերջերս արտահայտվել է այն տեսակետը, թե Սոդքը (կամ Սոթքը և Ծավդեքը նույնը չեն (տե՛ս Ս. Ոսկանյան, նշվ. աշխ., էջ 59—61)։ (Էջ 70)։

19. Բնագրում՝ Աղահէջ, «Աշխարհացոյց»-ում՝ Աղահէճ։ Ըստ Ն. Ադոնցի՝ տեղանունը էթնիկական ծագում ունի (նշվ. աշխ., էջ 423), գալիս է լանգեն կովկասյան փոքր ժողովրդի անունից (նշվ. աշխ., էջ 424, ծան. 1)։ Գավառը գտնվում էր Ազուան կամ Աղավնո գետի (այժմ՝ Հագարի) վերին հոսանքի տարածքում։ «Սյունիքի 6-րդ գավառը՝ 1402 քառակուսի կիլոմետր տարածությամբ համապատասխանում է այժմյան Լաչինի շրջանին» (Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 32)։ Ընկած էր Սյունիքի հյուսիս-արևելյան մասում։ Սահմանակից էր Արցախի Վար և Սյունիքի Սղուկ և Հաբանդ գավառներին (հմմտ. Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 265, այլև՝ Թ. Խ. Հակոբյան, «Հայաստանի պատմական աշխարհագրություն», էջ 212)։ Ըստ Օրբելյանի՝ 5-րդ գավառն է և հետագայում կոչվել է նաև Քաշաթաղ և Խոժոռաբերդ։ Դրանք միաժամանակ այնտեղ գտնվող բերդերի անուններ են։ (Էջ 70)։

20. Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ Հաբանդը Սյունիքի 8-րդ գավառն էր (տե՛ս նդ, էջ 109)։ Արևելքից նրա սահմանը երիզվում էր Հագարի գետով, արևմուտքից սահմանակից էր Սղուկին, հյուսիսից՝ Աղահեճին, հարավից՝ երկու բաղքին (Բաղք—Քաշունիքին և Բաղք—Ամանանքին)։

Գրավում էր 1325 քառակուսի կիլոմետր տարածություն (տե՛ս Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 61, 117)։ Նրա տարածքի մի մասն այժմ համընկնում է Գորիսի շրջանին։ (Էջ 70)։

21. Ըստ «Աշխարհացոյց»-ի Սյունիքի 9-րդ գավառն էր (տե՛ս Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 100)։ Թե՛ «Աշխարհացոյց»-ում և թե՛ Ս. Օրբելյանի երկի այս գլխում Բաղքը հիշատակվում է նեղ առումով, որպես մի գավառ, քանի որ նրանից զատ հիշատակվում են և այնպիսի գավառներ (Ձորք, Կովսական և այլն), որոնք մի ժամանակ ներառվել են Բաղաց աշխարհի մեջ։ Բաղքը որպես գավառ նեղ առումով արևմուտքից սահմանակից էր Սղուկին, հարավ-արևմուտքից՝ Ձորքին, հյուսիսից՝ Հաբանդին, հարավից՝ Կովսականին, արևելքից սահմանագծվում էր Հագարի գետի ստորին հոսանքով։ 10—12-րդ դարերում հաճախ լայն առումով կոչվել է «Բաղաց աշխարհ» և ընդգրկել է նաև Ձորք, Կովսական, գուցե և Արևիք գավառները։ Հետագայում անվանվել է նաև Բաղաձոր (հմմտ. Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 273)։ Սրանից բացի, եղել է նաև արևելյան Բաղք։ Գավառը սկզբնապես բռնել է 925 քառակուսի կիլոմետր տարածություն. համապատասխանում է այժմյան Ղափանի շրջանի տարածքի հիմնական մասին (տե՛ս Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 44)։ (Էջ 70)։

22. Բաղքի անունը պատմիչը բխեցնում է Բաղակի անունից։ Համանականը այն էթնիկական ծագումով բացատրելն է։ Ըստ Ն. Ադոնցի՝ այն կապ ունի Բաղասական տեղանվան հետ և ծագում է բաղասցի–ից լեռնային ցեղի անունից (հմմտ. Н. Адонц, նշվ. աշխ., էջ 423)։ Ճշմարտությանն ավելի մոտ է Գր. Ղափանցյանի բացատրությունը։ Ըստ Գր. Ղափանցյանի՝ այն բխում է բալա էթնիկական անունից։ Դրանից է նաև Բաղակ անունը՝ ակ ածանցով (Историко-лингвистические работы, Երևան, 1975, հ.

2-րդ, էջ 126—127)։ Գիտության մեջ բալայերները (պալայերները) ճանաչվում է որպես հնդեվրոպական լեզուս Վերջերս Ս. Ոսկանյանը աշխատել է Բաղջ անվան (և սրա հետ կապված այլ անունների) հիմքը բացատրել ըստ հնդեվրոպական այլ լեզունների որոշ տվյալների և գտնում է, որ Բաղ-բ պիտի նշանակեր «բարձր, լեռնային երկիր» (տե՛ս նրա «Սյունիքը դիցաբան»-ը, էջ 73)։ (էջ 70)։

23. Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ կովսականը նշվում է վերջինը՝ 12-րդը։ Գրավում էր 625 քառակուսի կիլոմետր տարածություն (տե՛ս Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 60, 109, 117)։ «...Հիմնականում տարածված էր այժմյան Ծավ գետի ավազանում և Ողջի գետի աջակողմյան մի շարք վտակների (դրանք են՝ Բեխ, Վաշագան, Գեղանուշ և այլ գետակները) շրջաններում» (Թ. Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 201)։ Ըստ Ս. Տ. Երեմյանի՝ տարածքը համապատասխանում էր այժմյան Ջանգելանի շրջանին (տե՛ս նշվ. աշխ., էջ 60)։ Ըստ առանձին տեղանունների (Բեխ և այլն) հիշատակության՝ գավառի մեջ մտել է նաև այժմյան Ղափանի շրջանի տարածքի մի որոշ մասը (տե՛ս Թ. Խ. Հակոբյան, «Սյունիքի թագավորությունը», էջ 104)։ Կովսական տեղանվան մասին Ս. Ոսկանյանը գրել է, թե ծագում է կոսերի ցեղանունից, որոնք նույն է համարում Հարևան Քաշունիքի քաշերի հետ («Սյունիքը դիցարան», էջ 85)։ (էջ 70)։

24. Արևիք գավառը հիմնականում ընդգրկում էր Մեղրի գետի ավազանը և տարածքով գրեթե համընկնում էր այժմյան Մեղրու շրջանին, արևելյան կողմից մի փոքր ձգվում էր Կովսականի մեջ։ Ավելի հետո մտել է Գողթնի մեջ, ապա ներառվել Սյունիքի կազմում։ Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ Սյունիքի 11-րդ գավառն էր, ուներ 625 քառակուսի կիլոմետր տարածություն (տե՛ս անդ, էջ 39, 109, 117)։ (էջ 70)։

25. Մոսկովյան հրատարակության մեջ՝ Տաշտօն, փարիզյանում՝ Դաշտան։ Այժմ պահպանվել է Տաշտուն ձևով։ Սա իր շրջակայքով վարչական առանձին շրջան չէր, այլ կազմում էր գավառի մի մասը։ Ընկած է Մեղրի գետի ակունքների շրջանում։ (էջ 70)։

26. Զորքը Սյունիքի ամենափոքր գավառն էր. գրավում էր 525 քառակուսի կիլոմետր տարածություն։ Ընկած էր այժմյան Ողջի (հնում՝ կապան) գետի վերին հոսանքի շրջանում։ Նահանգի ամենալեռնոտ մասն էր՝ ծածկված խիտ անտառներով և կտրտված ձորակներով ու ձորերով (այստեղից էլ Զորք անունը, որ նշանակում է «ձորեր»)։ 11-րդ դարից սկսեց կոչվել Կապան, իսկ ավելի ուշ՝ նաև Բաղաբերդ։ Կենտրոնական քաղաքն էր Կապանը, որից այժմ միայն ավերակների հետքեր են մնացել, այժմյան Ղափան քաղաքից դեպի հյուսիս-արևմուտք։ Կապան անունը ծագում է կապան հասարակ անունից, որ նշանակում է «կիրճ, նեղ անցք երկու լեռների միջև», այլև՝ «կիրճի նեղ մասում եղած ամուր դուռ»։ Այդ իմաստը հենց պատշաճում է գավառի տեղանքին։ Այդ անունը արտացոլում ունի Ղափան անվան մեջ, իսկ վերջինս արդյունք է հետագայի ժողովրդական կապան—Ղափան։ Աղավաղումով կապվել է թուրքական զափան բառի հետ՝ «մեծ կշռաքար» նշանակությամբ։ (էջ 70)։

27. Հին Հայաստանի նշանավոր բերդերից մեկը՝ Զորք գավառում

Հայտնի է շատ հին ժամանակներից։ Մինչև այժմ պահպանված են Բաղաբերդի ավերակները։ Ողջի գետի և նրա ձախակողմյան Գիրաբաղ վտակի անկյունում, այժմյան Դավիթ բեկ ավանի մոտ, Ղափան քաղաքից դեպի հյուսիս, քաջարան քաղաքից 17 կիլոմետր արևելք (բերդի դիրքի, նրա ավերակների ներկա վիճակի բնութագրման, ինչպես նաև պատմության մասին տե՛ս Թ. Խ. Հակոբյան, «Սյունիքի թագավորությունը», Երևան, 1966, էջ 112—118)։ (էջ 70)։

28. Տե՛ս ծան. 26։ (էջ 70)։

29. Երնջակ գավառը «Աշխարհացոյց»-ում հիշատակվում է որպես Սյունիքի 1-ին գավառը. ուներ 600 քառակուսի կիլոմետր տարածություն, ընկած էր Երնջակ գետի (այժմ՝ Ալինջա չայ) վերին հոսանքի շրջանում (տե՛ս Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 51, 109, 117)։ Նրան սահմանակից էին՝ արևելքից՝ Գողթնը, արևմուտքից՝ Ճահուկը և Նախիջևանը, հյուսիսից՝ Ճահուկի մի մասը և Ծղուկը, հարավից՝ Երասխ (Արաքս) գետը (հմմտ. Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 348)։ Նրա պատմական տարածքն այժմ ընդգրկում է Ադրբ. ՍՍՀ Նախիջևանի ԻՍՍՀ Ջուլֆայի շրջանը (տե՛ս Ա. Այվազյան, «Նախիջևանի պատմա-ճարտարապետական հուշարձանները», Երևան, 1978, էջ 34)։ (էջ 70)։

30. Գողթն (Գողթան) գավառը Պատմական Հայաստանի հայտնի գավառներից մեկն էր։ «Աշխարհացոյց»-ում նշված է Վասպուրականի նահանգի կազմում որպես նրա 33-րդ գավառը։ Բռնում էր 1375 քառակուսի կիլոմետր տարածություն. ընդգրկում էր այժմյան Նախիջևանի ԻՍՍՀ-ի Ապրակունիի և Օրդուբադի շրջանները (տե՛ս Ս. Տ. Երեմյան, «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի», էջ 48, 109, 117)։ Նրան է ժամանակ, երբ Գողթնը հաղվիվել է Սյունիքի կազմում։ Ս. Օրբելյանն այստեղ հիշատակում է Երնջակի հետ միասին։ Գողթն տեղանվան ծագման վերաբերյալ մերժելով Կ. Շահնազարյանցի այն բացատրությունը, ըստ որի այս անունը (ինչպես և համանման ուրիշները) բխեցվում է գալլական էթնիկական անունից, այլև Ղ. Ալիշանի ստուգաբանությունը՝ Գորութ իշխանի անունից։ Ս. Ոսկանյանը պնդում է, որ դա առաջացել է երբեմնի տեղաբնիկ կողթերի անունից (տե՛ս «Սյունիքը դիցարան», էջ 94). (էջ 70)։

31. Ճահուկ գավառը «Աշխարհացոյց»-ում հիշվում է 2-րդ տեղում։ Ընկած էր Ճահուկ (այժմ՝ Ջահրի) և Շահապոնս (այժմ՝ Շահբուզ) գետերի հովիտների շրջանում։ Գրավում էր 1130 քառակուսի կիլոմետր տարածություն (տե՛ս Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 64, 109, 117)։ Նրա պատմական տարածքը համընկնում էր այժմյան Ադրբ. ՍՍՀ Նախիջևանի ԻՍՍՀ Շահբուզի ամբողջ շրջանին և Նախիջևանի շրջանի մի մասին (հմմտ. Ա. Այվազյան, նշվ. աշխ., էջ 65)։ Ճանուկ (Ջահուկ) տեղանվան ծագումն անհայտ է։ Ղ. Ալիշանը հիշեցնում է Ղազար կաթողիկոսի ստուգաբանությունը, ըստ որի անունը բխեցվում է հայերեն ճահ «հարմար, պատշաճ, տեղին» բառից՝ «վասն պատուականութեան տեղեացն ճահ և ըմբռճ, այսինքն գեղեցիկ հարկաւոր և կարի պատշաճ» (Սիսական, էջ 479)։ Ս. Ոսկանյանը, հայերեն ճանուկ բառից անջատելով ճահ մասը, որպես անվան հիմք, ներկայացնում է «ջոկ», «խումբ», «առանձին» իմաստներով և ենթադրաբար ավելացնում է. «Երևի գավառանունը Նախիջևանից անջատ-

վելու կապակցությամբ է ստացել այդ անունը...» («Սյունիքը դիցարան», էջ 100)։ Հայերեն նահապետ բառը որպես հասարակ անուն ամբողջությամբ մի ժամանակ գործածվել է «խումբ», «ջոկ», «հոտ», այլև «բանակատեղի» իմաստներով և ստուգաբանված չէ (հմմտ. Հ. Աճառյան, «Հայերէն արմատական բառարան», համապատասխան բառահոդվածը)։ Նման գավառ կար նաև Կորճեից հարավ-արևելք (էջ 70)։

32 Տե՛ս ծան. 27։ (էջ 71)։

33. Խոսքը Սյունիքի ավանդական նահապետի մասին է։ (էջ 71)։

34. Բաղակի քար բերդը (և վանքը) գտնվում է Բաղաբերդի (ծան. 27) դիմաց, նրանից 700—800 մետր հեռավորության վրա, Ողջի գետի կիրճի աջ ափին, այժմյան Վերին Ջրաձոր գյուղի տարածքում։ Մնացել են ավերակները։ Բերդի տեղի, դիրքի և ներկա վիճակի բնութագիրը տե՛ս Թ. Խ. Հակոբյան, «Սյունիքի թագավորությունը», էջ 118։ (էջ 71)։

35. Բաղաբերդը և Բաղակի քարը (բերդը) նույնական չեն։ Գտնվում են միմյանցից 700—800 մետր հեռավորության վրա, Ողջի գետի կիրճի հակադիր ափերի բարձր ժայռերի գլուխներին։ Տե՛ս ծան. 27, 34։ (էջ 71)։

36. Այսպիսով Բաղաբերդի և Բաղակի քար բերդի տեղանշման կապակցությամբ Բաղաց գավառը հիշատակվում է լայն առումով, մինչդեռ նեղ առումով այդ ամբողջները տեղադրված են Զորք գավառում։ Եղել է ժամանակ, երբ Բաղքի մեջ ներառվել է նաև Զորքը (ուրիշ գավառներ ևս), և այդպիսի լայն առումով ամբողջը կոչվել է Բաղաց աշխարհ։ Տե՛ս նաև ծան. 21։ Թերևս այս հանգամանքը նկատի չի ունեցել Կ. Շահնազարյանը, երբ ծանոթագրելով Ս. Օրբելյանի աշխատության համապատասխան հատվածը՝ նշել է, թե պատմիչը շփոթել է գավառները (տե՛ս փարիզյան հրատարակությունը, հ. 1-ին, էջ 314)։

Բաղաբերդ անվան հիմքում ևս ընկած է Բաղ էթնիկական անունը, որը դառնալով տեղանուն՝ անցել է նաև բերդին։ Ինչպես նշել ենք (ծան. 22), Բաղակ անձնանվան ծագումը ևս բացատրվում է նույն էթնիկական անվամբ։ Դրանից է և Բաղէ տեղանունը։ (էջ 71)։

37. Փարիզյան հրատարակության մեջ (հատ. 1-ին, էջ 52)՝ Երնջակայ, մոսկովյան հրատարակության մեջ (էջ 7)՝ Երնջակէ։ Հարմար համարեցինք թարգմանության մեջ արտացոլել առաջինը։ Երնջակ տեղանունը աղավաղված ձևով արտացոլված է այժմյան Ալինջա լայ, Ալինջա կալա անուններում։ Երնջակ գավառի մասին տե՛ս ծան. 29։ Երնջակ համանուն բերդը գտնվում էր նույն անունը կրող գետի ափի մի բարձր քարաժայռի վրա։ Այժմ հայտնի է Ալինջա կալա ավերակներով։ (էջ 71)։

38. Ըստ Թ. Խ. Հակոբյանի՝ Հայրաբերդը գտնվել է Հաբանդ գավառում (տե՛ս նրա «Սյունիքի թագավորությունը», Երևան, 1966, էջ 76)։ (էջ 71)։

39. Գրհամը Կովական գավառի նշանավոր բերդն է եղել մինչև 13-րդ դարը։ «... Հավանաբար գտնվում էր այժմյան Ղափան—Մինջևան երկաթգծի Շաիբլու կամ Շարիբլու կայարանի դիմաց, Ողջի գետի ձախ կողմում, նրանից ոչ հեռու» (Թ. Խ. Հակոբյան, «Հայաստանի պատմական աշխարհագրություն», Երևան, 1968, էջ 201)։ (էջ 71)։

40. Մայրի բերդի մասին որոշակի ոչինչ հայտնի չէ։ «Հայաստանի բերդերը» աշխատության հեղինակ Մ. Հովհաննիսյանը միայն ընթերցողի ուշադրությունը հրավիրում է Ղ. Ալիշանի կողմից «Սիսական»-ում բերված բերդ ունեցող գյուղերի մի ցուցակի վրա, որտեղ նշված է նաև «Մացրի ք. (կամ Մայրի ք.)», Սիսական, էջ 7—8։ Տե՛ս «Հայաստանի բերդերը» Վենետիկ, 1970, էջ 433։

Ղ. Ալիշանի ցուցակում նշված է 69 անուն (անդ, էջ 7)։ Դրանցից դուրս հիշատակվել է ևս 5 բերդ՝ օտար անվանումներով, և միաժամանակ կասկած է հայտնել՝ գուցե և հիշված բերդերից վերանվանումով են (անդ, էջ 8)։ Ալիշանը առանձին-առանձին նշել է Բեղդի մայր գ. (16-րդ), և Մացրի (45-րդը) անդ, էջ 7)։ Հարկացուցակում սրանցից հիշատակված է միայն Բեղդի մայրը (Բերդիմայր), որը գտնվել է Վայոց ձորում։ Մեծ բնակավայր է եղել (ունեցել է 20 միավոր հարկաչափ)։ Թերևս այստեղ է եղել Մայրի բերդը։ Գուցե կարելի էր մատնացույց անել հարկացուցակում Արևիք գավառի հարկատու գյուղերի շարքում նշված Մայրի բնակավայրը։ Սակայն սրա ճշգրիտ տեղը չգիտենք։ (էջ 71)։

41 Շլորուտը Սյունիքի նշանավոր բերդերից մեկն էր։ Գտնվում էր այժմյան Ղափանի շրջանի Լեհնաձոր և Վերին Հանդ գյուղերի մոտ։ Այժմ էլ նրա ավերակները նկատելի են Վերին Հանդից մոտ 1 կիլոմետր դեպի հյուսիս ընկած լեռան լանջերին (տե՛ս Թ. Խ. Հակոբյան, «Հայաստանի պատմական աշխարհագրություն», էջ 202)։ (էջ 71)։

42. Կթքերդը նույն կաթսավաբերդն է, որը գտնվել է Արևիք գավառում (այժմ Մեղրու շրջան)։ (էջ 71)։

43. Բարկուշատ բերդը գտնվել է Բաղք գավառի երրեմնի մասը կազմող Մյուս Բաղքում։ Գավառի այդ մասը հետո կոչվում էր Քաշունիք, իսկ Ս. Օրբելյանի օրոք՝ Բարկուշատ (հմմտ. սույն երկի ԻԱ գլուխը)։ Այստեղ Աղավնո (Հաջարի) գետի ափին կար համանուն քաղաք, որը բերդ ուներ։ Դա էլ Ս. Օրբելյանը հիշատակում է որպես Բարկուշատա բերդ (Տե՛ս Մ. Ցովհաննիսեան, «Հայաստանի բերդերը», Վենետիկ, 1970, էջ 418)։ (էջ 71)։

44. Անդոկայ բերդը գտնվել է Բաղք գավառի երրեմնի մասը կազմող Մյուս Բաղքում (Քաշունիքում)։ Հարկացուցակում հենց այստեղ հիշատակվում է Անդոկաբերդ գյուղը՝ 12 միավոր հարկաչափով։ Կասկած չկա, որ այդտեղ էլ եղել է Անդոկա բերդը։ Գոյություն է ունեցել շատ հին ժամանակներից և մեծ դեր է խաղացել Սյունիքի ռազմաքաղաքական կյանքում։ Անունը կապվում է նշանավոր Անդոկի (Անդոկ) իշխանի անվան հետ։ (էջ 71)։

45. Գեղաքունվո (Գեղարքունվո) բերդի տեղը ուսումնասիրողները ցույց չեն տալիս։ Մեզ թվում է, որ այդ բերդը պիտի լիներ այժմյան Կամո (նոր Բայազետ) քաղաքի Բեղդի գլուխ կոչված ամրոցի տարածքում։ (էջ 71)։

46. Բղենո բերդի տեղի որոշման համար Մ. Հովհաննիսյանը հենվում է հարկացուցակում Ծղուկ գավառի գյուղերի թվում նշված Բղէան գյուղի վրա (Հայաստանի բերդերը, էջ 414)։ Բայց նա կասկած է հայտնում Նորավանքի մասին, Արդեն հայտնի է երրեմնի փոքրիկ Բղյան գավառի տեղը, որտեղ եղած Նորավանքը Ա. Բակուցնցի մատենաշարով հայտնաբերել է Ս. Գ. Բարխուդարյանը։ Բղյան գավառը եղել է այժմյան Գորիսի շրջանի Բարձրավան գյուղի (Որոտան գետի աջ ափին) տարածքի շրջակայքում, որտեղ և գտնվել է Բղենո բերդը։ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 2-րդ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 41—42։ (էջ 71)։

47. Վանանդա բերդը փարիզյան հրատարակության մեջ նշված է Վանդայ բերդ: Գտնվել է Մյուս Բաղքում կամ Քաշունիքում, որտեղ, ըստ հարկացուցակի, եղել է Վանանդ գյուղ: Համմ. նաև Մ. Հովհաննիսեան, նշվ. աշխ., էջ 432: (էջ 71):

48. Բորոդանա կամ Բորոտն բերդի մասին Մ. Հովհաննիսյանը գրում է. «Բորոտն բերդը Որոտնայ բերդէն շատ հեռու չէր, հավանաբար Սղուկ գաւառին մէջ և սեփականութիւն եղած Օրպէլեան իշխաններուն...» (Հայաստանի բերդերը, էջ 411): Այնուհետև մերժելով Ղ. Ինճիճյանի կարծիքը, ըստ որի նույնացվում են Որոտնը և Բորոտնը, նա պնդում է, որ դրանք տարբեր բերդեր են, քանի որ Ս. Օրբելյանն իր երկի տարբեր տեղերում հիշատակում է առանձնացած (նույն տեղում, էջ 412): Պետք է ընդունել, որ, իրոք, Որոտնը և Բորոտնը տարբեր բերդեր են եղել (էջ 71):

49. Հանբադա կամ Հաբանդա (այլև՝ Ջագնձոր) բերդի տեղը ստույգ հայտնի չէ: Անունից երևում է, որ գտնվել է համանուն Հաբանդ գավառում (այժմյան Գորիսի շրջանում): Իսկ որոշակի տեղի մասին հայտնվել են այլևայլ կարծիքներ: Դրանցից հիշենք հնագետ Ս. Գ. Բարխուդարյանինը, որը հավանական ենք գտնում. «Ներկա Գորիսի հարավից բարձրանում է լաստ զագաթը, որի ապառաժների վրա կառուցված է եղել Սյունիքի նշանավոր բերդերից՝ Հաբանդի բերդը, որը հետագայում կոչվել է նաև Ջագնձորի բերդ» («Դիվան հայ վիմագրության», պրակ 2-րդ, էջ 78): (էջ 71):

50. Պատմիչը այսպիսով Ջագնձոր անունը կապում է Ջագ Նահապետի անվան հետ: Սրա վրա հենվելով՝ նույնպիսի բացատրություն են տվել հետագայի որոշ գիտնականներ ևս: Սակայն այդպիսի բացատրությունը հավանական չէ: Այժմյան Գորիս քաղաքի այդ ձորը վաղնջական ժամանակներից բազմաթիվ փորվածքներ (մարդկանց կացարաններ) ունենալու պատճառով անվանվել է Ծակաձոր: Դեռ այսօր էլ անվանում են Ծակերի ձոր: Ջագնձոր-ը Ծակաձոր-ից է, իսկ Ջագնձոր-ն էլ հետագայում այլափոխվելով (հատկապես այլազգիների հնչմամբ) դարձել է Ջանգեզուր, որը վերջին դարերում տարածվել է ամբողջ Սյունիքի վրա: Հիշենք նաև, որ Ծակ բաղադրիչով հարկացուցակում ուրիշ տեղանուն է ցույց տրվում նույն գավառում (Բազմածակք): Ջագնձոր անվան այսպիսի բացատրություն է տվել ազգագրագետ Ե. Լալայանը, որը և հավանական ենք համարում: Տե՛ս նրա «Զանգեզուր գաւառ, նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, Բ հատոր, Զանգեզուր», Թիֆլիս, 1899, էջ 7: Պրոֆ. Թ. Ա. Հակոբյանը Ջագնձոր-ը դիտում է սակ էթնիկական անունից առաջացած: Տե՛ս նրա «Սյունիքի թագավորությունը», էջ 162—163: (էջ 71):

51. Սա նույն Հանբադա կամ Հաբանդա բերդն է: Համմ. նաև ծան. 49: (էջ 71):

52. Քաշեղաղուց բերդը գտնվում էր Աղահեճ գավառում, որի անունից էլ հետագայում նույն գավառն է անվանվել (համմ. Մ. Հովհաննիսեան, նշվ. աշխ., էջ 432): (էջ 71):

53. Խոժոռաբերդը սովորաբար հիշատակվում է Քաշեղաղուց բերդի հետ: Գտնվել է Աղահեճ գավառում (համմ. Մ. Հովհաննիսեան, նշվ. աշխ., էջ 432): (էջ 71):

54. Որոտն բերդը գտնվում էր այժմյան Սիսիանի շրջանի Լորաձորի գետաբերանի և Վաղուդի գյուղի միջև, Որոտան գետի բարձրադիր աջ ափին՝

Հայաստանի նշանավոր բերդերից է եղել՝ հայտնի դեռ 5-րդ դարից: Սյունյաց աշխարհի կարևոր ամրություններից էր: 13-րդ դարի կեսերին մեծ իշխան Սմբատ Օրբելյանի ջանքերով դառնում է Օրբելյանների սեփականությունը՝ իր շրջակա գավառի հետ: Այժմ ավերակներ են մնացել: Բերդի տեղի և ներկա նկարագրի մասին տե՛ս Թ. Ա. Հակոբյան, «Հայաստանի պատմական աշխարհագրություն», էջ 206: (էջ 71):

55. Սյունյաց բերդը կամ Սյունի բերդը գտնվել է այժմյան Սիսիանի շրջկենտրոնում, որի մնացորդներն այժմ հազիվ նշմարելի են: (էջ 71):

56. Սյունիքում եղել է Բորտի անունով գյուղ: Նա պատկանել է այն 6 գյուղերի թվին, որոնք Տարաւյիճ իշխանաց իշխանը նվիրել է Տաթևի վանքին (տե՛ս սույն երկի փարիզյան հրատ., հ. 2-րդ, էջ 163, այլև՝ «Դիվան հայ վիմագրության», պրակ 2-րդ, էջ 15, արձանագրություն № 11): Ըստ հարկացուցակի՝ Բորտին գտնվել է Այլախ գավառում, հարկաչափը եղել է 12 միավոր: Հենց այս գյուղն էլ ամենայն հավանականությամբ գտնվել է բերդի մոտերքում, և բերդն էլ անվանվել է Բորտո բերդ: Համմ. նաև Մ. Հովհաննիսեան, նշվ. աշխ., էջ 413: (էջ 71):

57. Շահապոնից բերդը գտնվում էր Շահապունիքում: Իսկ վերջինս ճահուկ գավառի հիմնական մասն էր կազմում (այժմ՝ Ադրբ. ՍՍՀ-ի Նախիջևանի ԻՍՍՀ-ում): Բերդի ավերակներն այժմ գտնվում են Շահբուզ գետի ստորին հոսանքի շրջանում, մի ժայռապատ լեռան վրա, համանուն գյուղի մոտ: Շահբուզ անունն էլ Շահապօնք (Շահապուն) (Շահապոնիք) հին անունից է՝ Շահապօնք—Շահապօնս—Շահբուզ: Այս փոփոխությունը կատարված է ժողովրդական ստուգաբանությամբ: Գ. Հովսեփյանն անդրադառնալով տեղանքին այսպես է գրում. «Շահապունյաց ձորը կամ գավառը երեք մասի կարելի է բաժանել նույնանուն գետակի երեք վտակների հովիտներով. հարավային ձորակ, որի միջն էր գավառի կեդրոն Շահապունք ամրոցը, համանուն գետակի առվակներից մեկի վրա, բարձրաբերձ ժայռի գլխին ցցված...» և տալիս է լուսանկարը (Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ, մասն առաջին, Վաղարշապատ, 1928, էջ 52—53): (էջ 71):

58. Շահապոնից ձորի մասին տե՛ս նախորդ ծանոթագրությունը: (էջ 71):

59. Ս. Օրբելյանը միայն այստեղ է հիշատակում պարսիկ Շապուհին և նրա գաղթելու հանգամանքներին չի անդրադառնում: (էջ 71):

60. Ղ. Ինճիճյանն այն կարծիքն է հայտնել, որ այս կապույտ բերդը Վայոց ձորի նույն Հրասկաբերդն է (Հրասեկա բերդ), և դա չպետք է շփոթել Երասխաձորի համանուն Կապույտ բերդի հետ (Ստորագրություն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 257): Իսկ Մ. Հովհաննիսյանն այդ ընդունելով՝ ապացույցի համար մատնանշում է Ս. Օրբելյանի հիշատակումները (Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 361): Ս. Օրբելյանն ուղղակի վկայություն չունի: Բերդերի այս թվարկման մեջ նա կապույտ բերդից անմիջապես հետո նշում է Հրասեկա բերդը: Ուրիշ տեղ պատմիչը կապույտ բերդ անունը չի հիշատակում (ՀՀ գլխում հիշված ամուրն կապույտ-ը Աշորնիքի ամրոցն է): Հիշենք նաև, որ Ղ. Ալիշանը Վայոց ձորի բերդերի անունները թվարկելիս Հրասեկա բերդի անվան մոտ գրել է, «կամ կա-

պայմ՚ը: Տե՛ս «Սիսական», էջ 98: Սակայն իրականում դրանք տարբեր բերդեր են: կապույտ բերդը, որ Սյունիքի հին և նշանավոր բերդերից է եղել, գտնվում էր այժմյան Ագիզբեկովի շրջանի Հերհեր գյուղի մոտ, նրանից մոտավորապես 1 կիլոմետր դեպի հյուսիս-արևելք ընկած սարի գագաթին: Մինչև այժմ էլ մերձակայքի բնակիչները տեղը կոչում են նույն անունով: Տեղի և անվան մասին տե՛ս Հ. Եղիազարյան, «Ագիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները», Երևան, 1955, էջ 108: (էջ 71):

61. Հրասեկա բերդը նաև անվանված է Հրաշկաբերդ, Հրասկաբերդ: Առաջին գրավոր հիշատակությունը Հարաշկաբերդ ձևով է՝ վայոց ձորի Ամագուի Նորավանքի՝ Լիպարիտ Օրբելյանի 1221 թվականով նշված արձանագրության մեջ («Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, կազմեց Ս. Գ. Նագրեպյան մեջ («Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 111, արձանագրություն, № 677): Բերդը գտնվել է այն ձորի տարածքում, որտեղ Նորավանքն է (այժմյան Եղեգնաձորի շրջանի Ամաղու գյուղից դեպի արևելք): (էջ 71):

62. Անշուշտ, սա այն բերդն է, որ Ս. Օրբելյանն իր երկի Ը գլխում հիշատակում է որպես Սուլեմա գղյակ: Նույն գլխում հիշվում է նաև Սուլեմա ձորը: Մեր կարծիքով այս Սուլեմ անվան արձագանքն այժմյան Սելիմ-ն է, ձորը: Մեր կարծիքով այս Սուլեմ անվան արձագանքն այժմյան Սելիմ-ն է, ձորը: Բերդը գտնվել է համանուն լեռնանցքի մի բարձր լեռան գագաթին, որի դիմաց (դեպի Վայոց ձոր) ընկած է մի գեղեցիկ դաշտ, այ կողմում Սուլեմա խոր ձորն է, որտեղով հոսում է նույնանուն գետակը: Այժմ մնացել են բերդի ավերակները (հմմտ. Մ. Հովհաննիսեան, «Հայաստանի բերդերը», էջ 364): (էջ 71):

63. Այս անձնանունը Ս. Օրբելյանը միայն այստեղ է հիշատակում: Հետինակն ընդհանրապես սովորություն ունի տեղանունները բացատրել անձնանուններով: (էջ 71):

64. Ինչպես պատմիչն էլ նշում է, Սյունիքի բերդերն ավելի շատ են եղել: Բայց Ս. Օրբելյանի կողմից հիշատակվածների մեջ կան և այնպիսիները, որոնք իրենց դերով ավելի քիչ են նշանավոր եղել, քան չհիշատակվածներից մի քանիսը: (էջ 71):

65. Նկատի ունի անորոշ ընթերցողին: (էջ 71):

66. Թե՛ այստեղ և թե՛ գլխի վերնագրում պատմիչը նշում է նահանգի բնական հարուստությունների մասին, սակայն շարադրանքի մեջ ոչ մի խոսք չի ասվում այդ մասին: Հավանաբար աշխատության ձեռագրից ընդօրինակումների ժամանակ ինչ-ինչ պատճառներով դուրս է ընկել գլխի համապատասխան հատվածը: Այս պակասը նկատվել է դեռ գրքի առաջին հրատարակության ժամանակ, բանասեր Կ. Շահնազարյանցի կողմից (տե՛ս փարիզյան հրատարակության 1-ին հատորի 5-րդ ծանոթագրությունը, էջ 315): Այնուհետև սրա վրա ուշադրություն են դարձրել Ղ. Ալիշանը և ուրիշ ուսումնասիրողներ: Հատվածը բացակայում է նաև № 6271 լավագույն ձեռագրում: (էջ 71):

67. Նկատի ունի Մովսես Խորենացու հիշատակած Վաղարշակ 1-ինին (Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, 1-ին, Ը, էջ 28): Ինչպես հայտնի է մեր պատմագիտության մեջ, իրականում դա Տրդատ 1-ինն է: (էջ 72):

68. Վարաչագիր մատանի՝ իր վրա վարազի պատկեր կրող մատանի: Վարազի պատկերը պարսից Սասանյան թագավորների կնիքի նշանն էր: Այդպիսի պատկերով մատանին նաև կնիքի դեր էր կատարում: Ըստ երեվույթին այդպիսի մատանի կարող էին դնել հատուկ արտոնություն ունեցող մեծամեծներ: (էջ 72):

69. Հայաստանում Արշակունյաց հարստության սկզբնավորումը պատմիչը նշում է ըստ Մովսես Խորենացու: Համմտ. Մովսես Խորենացի, «Պատմութիւն Հայոց», 1-ին, Ը, էջ 28—29): (էջ 72):

70. Պատմիչը նկատի ունի Մովսես Խորենացու հաղորդածը այն մասին, որ Վաղարշակ 1-ինը Շամբատ Բագրատունուն իշխանություն է տալիս սերբևդ-սերունդ թագավոր լինել Արշակունիներին (նրա անունով էլ կոչվում է Բագրատունիների տոհմը): Համմտ. Մ. Խորենացի, «Պատմութիւն Հայոց», 2-րդ, Գ, էջ 104—105, այլև՝ 2-րդ, է, էջ 110): (էջ 72):

71. Ասպետ բառը իրանյան ծագում ունի և սկզբնապես նշանակել է «ձիապետ»: Զևափոխվելով ու անցնելով հայերենին (aspapati>aspati>ասպետ)՝ գործածություն է ստացել «ձիավոր ազնվական», «հնձյալ իշխանավոր» նշանակությամբ: Հին Հայաստանում դա բարձր պաշտոնի անուն է եղել: Իսկ ի՞նչ էր այդ պաշտոնը՝ որոշակի հայտնի չէ: Դրա բացատրությունը ձգտել են տալ Մ. Էմինը, Ն. Բյուզանդացին, Ս. Մալխասյանցը և ուրիշներ: Թերևս հավանական է Ս. Մալխասյանցի ենթադրությունը, ըստ որի ասպետը բագավորի մերձավոր խոհրդականն ու երկրի ընդհանուր կառավարիչը պիտի լիներ (տե՛ս Մովսես Խորենացի, «Պատմութիւն Հայոց», թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ս. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 341): Այս կարծիքը Ս. Մալխասյանցն արտահայտել է և ավելի վաղ՝ Սեբեոսի երկի ռուսերեն թարգմանության կապակցությամբ: (էջ 73):

72. Բառն բառը հնում ունեցել է նաև «նստելու հարմարանք, նստարան, գահ» նշանակությունը: Այս դեպքում գործածված է պատվավոր տեղի, ըստ աստիճանի հատկացվող գահի իմաստով: Հին Հայաստանում բագավորները ազնվականներին, նախարարներին արքունիքում իրենց սեղանի շուրջ տեղեր էին հատկացնում նրանց աստիճանի ու պատվի համաձայն: Ըստ մեզ հասած «Գահնամակ»-ի՝ «ասպետը նշանակված է երկրորդ տեղում (տե՛ս Н. Адонц, «Армения в эпоху Юстиниана», СПб, 1908, էջ 249): (էջ 73):

73. Բնագրում սա դերանունը եզակի թվով է՝ ընդ սմա: Այդպես է նաև № 6271 լավագույն ձեռագրում (էջ 15 ա): Սակայն ավելի ճիշտ կլիներ հոգնակի թվով՝ ընդ սոսա, քանի որ վերը բագրատունիների մասին խոսելիս հոգնակի թիվ է օգտագործում: Այդ նկատառումով թարգմանեցինք հոգնակի թվով: (էջ 73):

74. Բնագրի այս մասում ևս Ս. Օրբելյանն օգտվել է Խորենացու երկից, որտեղ (2-րդ, է, էջ 110) Զեռէս-ը փոքրատառով է (զձեռէս): Որոշ բանասերներ սա ընդունել են որպես հասարակ անուն «ձեռնոց» իմաստով: Վիստոն եղբայրները դա հասկացել են «ձեռքերը հագցնել»: Թերևս սրանց հետևողությամբ Մ. Բրոսեն հասկացել է «ձեռնոց հագցնող» ու արտահայտել Օրբելյանի երկի իր ֆրանսերեն թարգմանության մեջ՝ le ganter (տե՛ս անդ.

էջ 7)։ Ճիշտ են այն բանասերները (Ն. Մառ, Ս. Մալխասյանց), որոնք դա ընդունել են որպես հատուկ անուն։ Նկատի ունենալով, որ Ս. Օրբելյանի երկի տպագիր բնագրում էլ այն ներկայացված է հատուկ անուն (գրված է մեծատառով)՝ մենք թողեցինք որպես այդպիսին։ (էջ 73)։

75. Հոնաց դուռը ռազմական կարևոր նշանակություն ունեցած այն կիրճի ամրացված տեղն էր Կասպից ծովի արևմտյան կողմում, Դերբենդ քաղաքի մոտակայքում, որ կոչվել է Ճորայ պահնակ, Դուռն (կամ Դռուճ) Աղուանից, Ջոլայ և այլն։ Մի ժամանակ, երբ այս շրջանում հանդես եկան հոները, այն կոչվեց նաև Դուռն Հոնաց։ Սակայն, ինչպես դիտում է Կ. Շահնազարյանցը, Ս. Օրբելյանի նշած ժամանակներում հոները դեռ այդտեղ չէին արշավել (տե՛ս Օրբելյանի երկի փարիզյան հրատարակության նրա համապատասխան ծանոթագրությունը, հ. 1-ին, էջ 316)։ (էջ 73)։

76. Առանա մեծ դաշտը գտնվում էր Առանում։ Իսկ սա մի ժամանակ եղել է Մեծ Հայքի արևելյան երկրամաս, որը նախապես ընդգրկում էր Խաչեն և Տրտու գետերի միջին և ստորին հոսանքների ավազանները («Հայաստանի սովետական հանրագիտարան», հ. 1-ին, էջ 524)։ Խորենացու հետևողականությամբ (Պատմութիւն Հայոց, 2-րդ, Ը) Ս. Օրբելյանը տեղանունը բխեցնում է Առան նահապետի անունից և երկրամասի սահմանները նշում երասխից մինչև Հունարակերտ։ (էջ 73)։

77. Երասխը Արաքս գետն է։ (էջ 73)։

78. Հունարակերտ քաղաքը գտնվում էր Մեծ Հայքի, Վիրքի և Աղվանքի սահմանների հատման կետում՝ ըստ «Աշխարհացոյց»-ի (Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 63)։ (էջ 73)։

79. Աղվանքի անվան այսպիսի բացատրություն է տվել Մովսես Խորենացին (Պատմութիւն Հայոց, 2-րդ, Ը, էջ 113), որից և օգտվել է Ս. Օրբելյանը։ (էջ 73)։

80. Բնագրում՝ «երիցագոյն քան զնոսա», որը տառացիորեն բովանդակությանը չի պատշաճում։ Ուստի վերարտադրեցինք «ներանցինի պես հնագույն» ձևակերպումով։ (էջ 73)։

81. Խոսքը Հայաստանի Տրդատ 3-րդ թագավորի մասին է, որն իշխել է 298—330 թվականներին։ Սրա օրոք 301 թվականից քրիստոնեությունը Հայաստանում հռչակվեց պետական, պաշտոնական կրոն։ (էջ 73)։

82. Քրիստոնեության մեջ առդարութեան առեգակն արտահայտությամբ նկատի էր առնվում Քրիստոսը։ (էջ 74)։

83. Բնագրում՝ երկու աշխարհաւ. հեղինակը հավանաբար դրանով նշել է աշխարհիկ և հոգևոր կյանքը։ (էջ 74)։

84. Մամիկոնյանների և Տարոնի համար Ս. Օրբելյանն այստեղ նկատի ունի Հովհան Մամիկոնյանի, Բագրատունիների համար՝ Մովսես Խորենացու և Հովհաննես Դրասխանակերտցու, վասպուրականցիների համար՝ Թովմա Արծրունու, Աղվանքի համար՝ Մովսես Կաղանկատվացու համապատասխան երկերը։ (էջ 74)։

85. Այսինքն՝ քրիստոնեության տարածման ժամանակ։ (էջ 74)։

86. Այս մասին տե՛ս Ագաթանգեղոս, «Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1909, էջ 433։ (էջ 75)։

87. Գրիգորին քահանայապետ օծելու համար Կեսարիա գնացած հայոց նախարարների և կուսակալների մեջ Ագաթանգեղոսը Սյունյաց իշխանին հիշատակում է 10-րդ տեղում (Պատմութիւն Հայոց, էջ 414)։ (էջ 75)։

88. Տարոնը Պատմական Հայաստանի Տուրուբերան նահանգի 3-րդ գավառն էր, գրավում էր Մեղ գետի (Մեղրագետի) բարեբեր հովիտը՝ 3195 քառակուսի կիլոմետր տարածությամբ (Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 85)։ (էջ 75)։

89. Համմ. Յովհան Մամիկոնեան, «Պատմութիւն Տարօնոյ», Երևան, 1941, էջ 79—95։ (էջ 75)։

90. Գլակա վանքը նույն Իննակնյան կամ ս. Կարապետի վանքն է։ Պատմական Հայաստանի հնագույն և նշանավոր վանքերից մեկն է եղել։ Գտնվում է Տարոնի գավառում (այժմ՝ Թուրքիայում), Մուշ քաղաքից 35—40 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք։ (էջ 75)։

91. Խոսքը հռոմեական (բյուզանդական) կայսր Կոստանդինոս Մեծի մասին է, որ մայրաքաղաքը Հռոմից փոխադրեց Բյուզանդիոն, քրիստոնեությունը հայտարարեց Թուլլատրելի կրոն, ապատ համարեց նրա տարածումը։ Նա էր, որ 325 թվականին գումարել տվեց եկեղեցական առաջին տիեզերական ժողովը։ (էջ 75)։

92. Այստեղ փարիզյան հրատարակությունն ունի ի Հռոմոյ (հ. 1-ին, էջ 59), մոսկովյանը՝ ի Հռովմայ (էջ 12)։ Վերջինս ճիշտ չէ։ Ճիշտն առաջինն է, որը հաստատվում է նաև № 6271 լավագույն ձեռագրով (էջ 17 ա)։ Թարգմանելիս նկատի ենք առել հիշյալ ձևը։ (էջ 75)։

93. Մասքութքը (Մասքութքը կամ Մազքութքը՝ մասքութների երկիրը) գտնվում էր Կասպից ծովի արևմտյան ափին, Աղվանքից հյուսիս-արևելք։ Կոչվել է նաև Ճոր, Ջոր անուններով, որտեղից էլ Ճորա պահակի անվանումն է։ (էջ 75)։

94. Տե՛ս ծան. 75։ (էջ 75)։

95. Փոքր Սյունիք ասելով հասկացվել է Արցախը։ (էջ 75)։

96. Ամարասը գյուղաքաղաք էր. գտնվում էր այժմյան Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Մարտունու շրջկենտրոնից 10 կիլոմետր դեպի հյուսիս-արևելք։ Այստեղ Գրիգոր Լուսավորիչը 4-րդ դարի սկզբին հիմնադրել է վանք, որի կառուցումը շարունակել և ավարտել է նրա թոռը։ Այս վանքը երկար ժամանակ ոչ միայն կրոնական, այլև մշակութային նշանավոր կենտրոն է եղել։ Դարերի ընթացքում բազմիցս վերանորոգվել է և այժմ էլ կանգուն է Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Սոս գյուղի մոտ (մեր վերջին այցելությունը՝ 1983 թ. հոկտեմբերի 29-ին)։ (էջ 75)։

97. Փարիզյան հրատարակության «Աստանօր եղև սիիրզն եպիսկոպոսութեանս Սիւնեաց» նախադասությունը (հ. 1-ին, էջ 59—60) պակասում է մոսկովյան հրատարակության մեջ, թեև այստեղ տողատակում նշվում է, որ ձեռագիր երկու օրինակում կա։ Հիշյալ նախադասությունն ունի նաև № 6271 լավագույն ձեռագիրը (էջ 18 ա)։ Ամենայն հավանականությամբ հեղինակային է, և թարգմանության մեջ չէր կարելի բաց թողնել։ (էջ 76)։

98. Տե՛ս ծան. 30։ (էջ 76)։

99. Երկրամաս Պարսկաստանի հյուսիսային մասում՝ ընկած Ուրմիա լճի և Կասպից ծովի միջև։ Այժմյան իրանական Ադրբեջանն է։ (էջ 76)։

100. Այս տեղանունը միեշև մեր ժամանակները պահպանված է Օրդուբադ ձևով, որն այժմ էլ կրում է համապատասխան բնակավայրը Ադրբ. ՍՍՀ Նախիջևանի ԻՍՍՀ-ում։ (էջ 76)։

101. Տե՛ս ծան. 24։ (էջ 76)։

102. Տե՛ս ծան. 21։ (էջ 76)։

103. Տե՛ս ծան. 30։ (էջ 76)։

104. Գյուղ Երնջակ գավառում։ (էջ 77)։

105. Բնագրում գործածված է խուժիկ։ Այս բառը մեր լեզվում իրանյան փոխառություն է և բուն նշանակում է «խուժաստանցի» (տե՛ս Հ. Աճառյան, «Հայերէն արմատական բառարան», համապատասխան բառահոդվածը)։ Մ. Բրոսեն թարգմանել է étranger «օտարական» (ֆրանս. թարգմ., էջ 12)։ Սա հավանական է, որպես և թարգմանիցինք մենք։ (էջ 77)։

106. Փարիզյան հրատարակության մեջ այս լեռան անունը Գառու ձևով է (ի լերինն Գառուայ), մոսկովյան հրատարակությունն ունի Դառու (Դառուայ)։ Բրոսեն իր ֆրանսերեն թարգմանության մեջ տվել է Daron ձևով (անդ, էջ 12)։ Ալիշանը, հենվելով իր ժամանակի հնչման, ինչպես և այլ վկայությունների վրա, ընդունել է Դարու ձևը (տե՛ս «Սիսական», էջ 448)։ Ճիշտը վերջինս է, դա հաստատվում է նաև № 6271 լավագույն ձեռագրով, որն ունի Գառուայ (էջ 19 բ)։ Ուստի մենք արտահայտեցինք Գարու ձևով։ (էջ 77)։

107. Ինչպես նկատել է Կ. Շահնազարյանցը (փարիզյան հրատ., հ. 1-ին, էջ 318), սա հակասում է Օրբելյանի երկի ե գլխում արված այն հիշատակությանը, թե Գրիգոր Լուսավորիչը Սյունիքին տալիս է առաջին եպիսկոպոսը Գրիգորիս անունով, որը հիշվում է նաև պատմիչի երկի ՀԲ գլխում։ է գլխում ևս նշվում է, որ Սյունյաց եպիսկոպոսությունը սկզբնավորվել է Գրիգորից։ (էջ 77)։

108. Փարիզյան հրատարակությունն ունի աշխարհի, մոսկովյանը՝ պատջաճի։ Թարգմանել ենք վերջինիս հաշվառումով։ (էջ 78)։

109. Փարիզյան հրատարակությունը այստեղ չունի գտաք բառաձևը, որ առկա է մոսկովյան հրատարակությունում (էջ 16)։ Թարգմանելիս նկատի ենք առել վերջինս, թեև № 6271 վստահելի ձեռագիրը նույնպես չունի (էջ 21 բ)։ Տրամաբանությունը թելադրում էր ավելացնել։ (էջ 79)։

110. Գահնամակը նախարարների գահերի՝ քան պատվաստիճանների դասավորության ցուցակն էր։ Գահնամակ բառը հյուս. պահլավական ծագում ունի, կազմված է gah «գահ, դիրք, պատվաստիճան և namak» գրություն, գրվածք, ցուցակ» բառերից (տե՛ս Հ. Աճառեան, «Հայերէն արմատական բառարան», համապատասխան բառահոդվածը)։ (էջ 79)։

111. Եթե խոսքը Ղևոնդ պատմիչի մասին է, ապա մեզ հասած նրա երկում գահնամակի մասին ոչինչ չկա։ Գուցե Ս. Օրբելյանի ձեռքի տակ եղել է մեկ այլ գործ, որը հայ բանասիրությանը հայտնի չէ։ Ն. Ադոնցը, անդրադառնալով այս հարցին, նախ նշել է, որ Ղևոնդի երկի՝ մեզ հասած բնագիրը պակասավոր է։ Ապա այն կարծիքն է հայտնել, թե հնարավոր է, որ ձեռագրի ընդօրինակման ժամանակ հավելվածի ձևով գահնամակը կցված

է եղել Ղևոնդի երկին, որից և կարող էր օգտված լինել Ս. Օրբելյանը (Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Երևան, 1971, էջ 254—255)։ Գահնամակի այժմ հայտնի օրինակը առանձին պատառիկով գտել է նշանավոր սայաթնովագիտ Գևորգ Ախվերդյանը (Ахвердов)։ Այն խորենացու երկի ռուսերեն թարգմանության կապակցությամբ առաջին անգամ հրապարակել է Մ. Էմինը հիշյալ թարգմանության առաջին հրատարակության մեջ (1893 թ.), ապա նույնը օգտագործել է Ա. Ստեփանեն՝ աշխարհաբար թարգմանության մեջ։ Ալիշանը «Այրարատ»-ում տվել է գահնամակի լուսատիպը։ Այս արժեքավոր վավերաթուղթը լավագույնս վերծանել ու խրատես հետազոտել է Ն. Ադոնցն իր «Армения в эпоху Юстиниана» աշխատության 10-րդ գլխում։ (էջ 79)։

112. Բառը հունարենից է՝ πρωτοφροντιστής, որի իմաստն է «առաջին խորհող կամ խնամակալ» (տե՛ս Հ. Աճառեան, «Հայերէն արմատական բառարան», պրոտոֆրոնեէս բառի տակ)։ Դա Սյունիքի մետրոպոլիտանին տրվող տիտղոս էր։ (էջ 80)։

113. Տե՛ս ծան. 7։ (էջ 81)։

114. Խոսքը վերաբերում է Արշակի՝ վերջին անգամ Պարսկաստան գնալուն, որը եղել է ոչ թե ինքնակամ, այլ Շապուհի պահանջով, ինչպես պատմում է Փավստոսը (Պատմութիւն Հայոց, 4-րդ, ԾԲ)։ (էջ 82)։

115. Այս մասին պատմվում է Փավստոս Բուզանդի երկում (5-րդ, է)։ (էջ 82)։

116. Նկատի ունի հին հրեական թագավոր Ռոբովամին, որի մասին հիշատակվում է Աստվածաշնչում (Գ. Թագ., ԺԲ, ԺԳ, Բ Մնաց., ժ—ԺԲ)։ Սակայն համեմատությունը ճշմարտությամբ չի պատշաճում, քանի որ Ռոբովամի թագավորությունը բաժանվել էր ապստամբության հետևանքով։ (էջ 82)։

117. Նկատի ունի Հայաստանի բաժանումը ժամանակի երկու աշխարհակալ մեծ պետությունների՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, որը կատարվեց 385 թվականին։ (էջ 82)։

118. Սրա աղբյուրը Փավստոս Բուզանդի երկն է։ Տե՛ս անդ, 4-րդ, ԺԵ։ (էջ 82)։

119. Փարիզյան հրատարակությունն ունի ամենիցն։ Այդպես է նաև № 6271 ձեռագրում (էջ 24 ա)։ Համապատասխան տեղում Մ. Կաղանկատվացու երկում կար յիննամենիցն (Թիֆլիս, 1913, էջ 119)։ Քննական հրատարակությունը լուծում է հարցը։ Այստեղ առկա է ննամենից բառաձևը։ Տե՛ս Մովսես Կաղանկատուացի, «Պատմութիւն Աղուանից աշխարհի», քննական բնագիրը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 106։ (էջ 82)։

120. Այս հանդիսի նկարագիրը Ս. Օրբելյանը վերցրել է Մ. Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկից (2-րդ, Ա)։ (էջ 82)։

121. Ելնելով բովանդակությունից բնագրի բաժակօք և ուռվք արտահայտությունը թարգմանիցինք «բաժակաճառերով ու պսակներով»։ Իհարկե, բաժակ բառը կարող էր «բաժակաճառ» նշանակել, բայց անպարզ է մնում ուռ-ի ստույգ իմաստը։ Այստեղ չեն պատշաճում «ծառի բողբոջ», «ընձյուղ», «ճյուղ» կամ «ուռուցք» իմաստները, ինչպես տալիս են բառարանները։ Մ. Բրոսեն թարգմանել է՝ առաջինը՝ coupe «բաժակ, ըմպա-

նակ», երկրորդը՝ baguette «ճիպոտ» բառերով («de la coupe et avec une baguette», անդ. էջ 19)։

Ն. Ադոնցն իր «Армения в эпоху Юстиниана» աշխատության մեջ տողատակի ծանոթությամբ առաջարկել է «պսակ» իմաստը՝ վերոհիշյալ արտահայտությունը թարգմանելով напитками и венками (էջ 273)։ Ինչպես տեսնում ենք, բաժակ բառն էլ մեկնել է «ըմպելիք» իմաստով։ (էջ 82)։

122. Մովպետան մովպետը զրադաշտական կրոնի քրմապետերի գլխավորն էր Պարսկաստանում։ Բառի ծագումը պահլավական է, գալիս է մոգպետ-ից։ Մոգպետ բառը պահլավերենում (mogpet, magupat) կաղմությամբ բարդ է եղել՝ «մոգերի պետ» իմաստով։ Սասանյանների շրջանում դարձավ movpet կամ maupet, որից էլ՝ movpetan movpet կամ maupetan maupet «մոգպետների պետ» (ստուգաբանությունը Հյուբշմանինն է. այդ մասին տե՛ս Հ. Աճառեան, «Հայերէն արմատական բառարան», մոգ բառի տակ)։ (էջ 82)։

123. Բնագրում՝ Աբմենու։ (էջ 82)։

124. Խոսքը վերաբերում է Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» գրքին։ (էջ 83)։

125 Խազիրները կամ խազարները թյուրք-թաթարական ընտանիքին պատկանող ժողովուրդ էին։ Բնակվում էին Կասպից և Ազովի ծովերի միջակա շրջաններում, Պովոլժիեում, Հյուսիսային Կովկասում և այլուր։ 7-րդ դարում կազմակերպվեց խազարական խաքանությունը, որի կենտրոնը նախ գտնվում էր Դաղստանում։ Խաքանությունը վերացավ 10-րդ դարում։ Խազարները բազմիցս հարձակվել են Հայաստանի և հարևան մյուս երկրների վրա։ (էջ 83)։

126. Բնագրում՝ ընդ դրունսն Ջողայ։ Այս անվան մասին տե՛ս ծան. 75։ (էջ 83)։

127. Կ. Շահնազարյանցը ժամանակին ծանուցել է, որ Տիզբոն քաղաքի տեղը նշելիս Ս. Օրբելյանը սխալվել է (տե՛ս սույն երկի փարիզյան հրատ., հ. 1-ին, էջ 327)։ Տիզբոնը (հին՝ Կտեսիփոն) գտնվում էր Տիգրիս գետի ձախ ափին, այժմյան Բաղդադ քաղաքից մոտ 16 կիլոմետր ներքև։ Պարթևների ժամանակ արքայական ձմեռոց էր, ապա դարձավ մայրաքաղաք։ Նա մայրաքաղաք էր նաև Սասանյանների օրոք։ Պահպանվել են նրա ավերակները։ (էջ 84)։

128. Տե՛ս ծան. 27։ (էջ 84)։

129. Նաղատ բնակավայրի անունը համապատասխան տեղով դեռ այժմ էլ պահպանվում է ՀՍՍՀ Սիսիանի շրջանում։ (էջ 84)։

130 Աթաչխողա-ն Մ. Բրոսեն մեկնելով ստուգաբանորեն (իրանյան ծագումով է) թարգմանել է որպես հասարակ անուն՝ les gardiens du feu «կրակի պահապաններ»։ Սակայն, նկատի ունենալով, որ Մ. Կաղանկատվացու երկի համապատասխան տեղում դա պարզորոշ հիշատակված է որպես պարսկական զորապետի անուն, մենք թարգմանեցինք վերջինիս հաշվառումով։ Ահա այդ հատվածը. «... Ահաճալք ի բաց գնացին գունդքն Պարսից հանդերձ Աթաշխոդայիւ զօրապետիւ իւրեանց» (Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1913, էջ 122)։ Նույնը և քննական բնագրում (Երևան, 1983, էջ 109)։ (էջ 85)։

131. Հին Հռոմում պատրիկներ էին կոչվում ժառանգական ազնվական դասին պատկանող մարդիկ, որոնք ունեին ընդարձակ կալվածքներ։ Կոստանդիանոս կայսեր օրոք պատրիկ-ը դարձվել էր բարձր աստիճան։ Ուրեմն, ըստ այդմ՝ պատրկաց պատրիկը բարձրագույն աստիճան կրող էր։ Ինչպես նշում է պատմիչը, Անդոկին այդպիսի բարձրագույն տիտղոսի էր արժանացրել բյուզանդական կայսր Թեոդոս Մեծը։ (էջ 86)։

132. Տե՛ս ծան. 7։ (էջ 86)։

133. Այսինքն՝ Մովսես Խորենացու։ (էջ 87)։

134. Պարբերության այս սկզբնամասը չկա բնագրի մոսկովյան հրատարակության մեջ։ (էջ 88)։

135. Ժողովրդական ստուգաբանությամբ տեղանունը դարձվել է Նախկորզան։ Մոսկովյան հրատարակությունն ունի Նակորզան, որը ավելի ճիշտ է։ Հիշատակվել է նաև որպես քաղաք։ Ենթադրվում է, որ գտնվել է Երասխի ձախ ափին, Խուդափերինի կամուրջի մոտ (տե՛ս Ս. Տ. Երեմյան, «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 72)։ (էջ 88)։

136. Ինչպես նկատել են ուսումնասիրողները (Կ. Շահնազարյանց, Մ. Բրոսե և այլք), պատմիչի նշած այս թվականները միմյանց չեն համընկնում։ (էջ 88)։

137. Փարիզյան հրատարակությունը չունի խաչից և ճշխարաց։ Թարգմանել ենք ըստ մոսկովյան հրատարակության։ (էջ 89)։

138. Հռոմն հայոց հին տոմարով տարվա երկրորդ ամիսն էր, հաջորդում էր նավասարդին, նախորդում՝ սահմիին։ Սկսվում էր սեպտեմբերի 10-ից։ (էջ 90)։

139. Խոտ ավանը գտնվել է պատմական Հաբանդ գավառում։ Այժմ՝ նույն անունով գյուղ Գորիսի շրջանում, Շնհեր գյուղի մոտ։ (էջ 90)։

140. Շաղատի մոտ ծովակ չկա, ինչպես նշել է Կ. Շահնազարյանցը (անդ, հ. 1-ին, էջ 328)։ Սակայն ազգագրագետ Ե. Լալայանը մոտակայքում դիտել և մատնացույց է արել մի տեղ, որտեղ, ըստ եղած նշանների, լճակ պիտի եղած լիներ։ «Գիւղի արևմտեան կողմում, բլրակների մէջ մի փոս կայ, ուր երբեմն լիճ է եղել»,— գրել է նա։ Տե՛ս Ե. Լալայան, «Ջանդեզուր գաւառ, նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար», Ա հատոր, «Սիսիան», Թիֆլիս, 1898, էջ 87։ (էջ 91)։

141. Այստեղ բնագրային աղավաղում կա։ Փարիզյան հրատարակությունն ունի «և արդ գաւազանին ո՞ւր խնդիր առնես բաղեակ (կամ բաջեակ) տէր» (հ. 1-ին, էջ 85), մոսկովյանը՝ «և արդ գաւազանին ո՞ւր խնդիր առնէ նմողեալ տէր այն» (էջ 31)։ Աղճատումն ակնհայտ է։ Հայերենը չի ունեցել և չունի բաղեակ բառ։ Փակագծում հրատարակչի կամ բաջեակ նշանը ևս չի օգնում։ Հոսքային տվյալ միջակայքում անիմաստ է մոսկովյան հրատարակության նմողեալ-ը։ Բացի դրանից, այստեղ դեմքի փոփոխությունը 3-րդի չի պատշաճում պատասխանի համար։ Աղճատումն ուղղելուն օգնում է № 6271 ձեռագիրը, որն ունի «և արդ գաւազանին ո՞ւր խնդիր առնեմ աղեակ տէր աստուծոյ» (էջ 34 բ)։ Կարծում ենք՝ աղեակ-ը միջին դարերում արդեն իրեն ղեալ տվող աղեկ բառի հավանական տարբերակն է՝ «լավ, բարի» իմաստով։ Թարգմանել ենք ձեռագրական այդ տվյալների հաշվառումով։ (էջ 91)։

142. Մոսկովյան հրատարակության մեջ այստեղ որոշ բառեր պակասում են, ինչպես՝ դարձեալ, սուրբ և ցանկալին (էջ 31)։ № 6271 ձեռագիրն ունի լրիվ։ Նրան համընկնում է փարիզյանը։ (էջ 92)։

143. Բառարանները չունեն գետավարար բառ։ Թարգմանել ենք «ջրառատ տեղ»՝ իհարկե, նկատի ունենալով գետի դժվարանցանելի տեղերը։ (էջ 92)։

144. Փարիզյան հրատարակությունն այստեղ ունի զպայխսե, և փակագծում էլ ավելացված է ճալ, այսինքն՝ «պայտ»։ Ղ. Ալիշանը ևս ընդունել է պայոխ-ը և հիշյալ խմաստով էլ բացատրել (Հայապատում, մասն Բ. էջ 121, ծան. 4)։ Մոսկովյան հրատարակությունն ունի զկայոխսե։ Պայոխ նշանակում է «նետի պոչի այն ճեղքը, որի վրա հենվում է աղեղի լարը», իսկ կայոխ՝ «ատամներ, կոհիք»։ Հավանականը վերջինս է, որպես և թարգմանեցինք։ Սակայն այս դեպքում էլ կայոխ-ին չի համապատասխանում երկաթի որոշիչը (էջը կարո՞ղ էր երկաթե ատամներ ունենալ)։ Գուցե փոխաբերական՝ «ամուր» իմաստով է գործածված։ (էջ 92)։

145. Թվում է, թե բնագրի այս մասում աղավաղում կա։ Ծև գլխի վերջին նախադասությունը տրամաբանորեն կապված է նախավերջին նախադասությանը նախորդողի հետ և նրա բաղկացուցիչ մասն է կազմում, ուստի թարգմանելիս վերադասավորություն կատարեցինք։ Այսպես. «... կանանց ոչ հրամայեցաւ ի նմանէ ի սուրբ եկեղեցին մտանել, և ոչ դարձեալ կանամբի էանեացայի սպասաւորութիւն առնել սրբութեան տեղւոյն»։ (էջ 92)։

146. Այսինքն՝ դիրքով առաջին տեղում դասվեն։ (էջ 93)։

147. Մոսկովյան հրատարակությունը չունի ճաւատացեալ ժողովրդականիկ արտահայտությունը (էջ 33)։ Թարգմանել ենք ըստ փարիզյան հրատարակության։ (էջ 93)։

148. Այսինքն՝ Բաբիկ իշխանի վճիռը պարունակող փաստաթուղթը։ (էջ 93)։

149. Ուլթ (Ոլթ) տեղանունը Սյունիքում հետագայում էլ պահպանվել է Ուզ ձևով, ինչպես ճիշտ կերպով նկատել է Ալիշանը («Սիսական», էջ 216)։ Գյուղն այժմ մտնում է Սիսիանի մեջ։ (էջ 93)։

150. Գտնվել է Ողուկ գավառում։ Ենթադրվում է, որ տեղը այժմյան Աղուդին պիտի լինի։ Աղխատու անունը ձևափոխվել է Աղիտու-ի, սա էլ դարձել է Աղուդի։ Համմտ. Ս. Դ. Բարխուդարյան, «Դիվան հայ վիմագրության», պրակ 2-րդ, էջ 97։ (էջ 93)։

151. Շաքի տեղանունը այժմ էլ պահպանվում է։ Այդպես է կոչվում Սիսիանի շրջանի գյուղերից մեկը։ Հարկացուցակում հիշատակված է Շաքէ ձևով Այլախ գավառում։ (էջ 93)։

152. Փարիզյան հրատարակությունն ունի գերհարդական (էջ 89), իսկ մոսկովյանը՝ գերհարդականեն (էջ 33)։ Ըստ շարադրանքի պիտի նշված լիներ մեկին երկրորդ տեղը (պատիվը), մյուսին՝ երրորդը, և ոչ թե երկուսին միաժամանակ. կա՛մ երկրորդը, կա՛մ երրորդը։ Այդ նկատառումով էլ թարգմանության մեջ ուղղել ենք։ Ըստ այդմ՝ պետք է հասկանալ Շաքիին երկրորդը, Աղխատուին՝ երրորդը։ (էջ 93)։

153. Մորենին գտնվում էր Ողուկ գավառում։ Հիշյալ անունը մոսկովյան հրատարակությունը ներկայացնում է Մրենի (Մրէնւոյ) ձևով (էջ 34), իսկ փարիզյանում՝ Մրեն (Մրենոյ— էջ 89)։ Շփոթված է Մրենի հետ Մրենի

վանքը, ինչպես հայտնի է, գտնվում է Երրակոմ, Ախուրյանի ստորին հոսանքի շրջանում։ (էջ 93)։

154. Մոսկովյան հրատարակության մեջ (էջ 34) «Ոչ է սա նա, որ պատերազմեցաւ ընդ Հայոց» նախադասությունը նշված է ոչ թե Վռամ Կրմանի, այլ՝ Հազկերտի համար։ (էջ 94)։

155. Այս հատվածում մի շարք թվական տվյալներ ու այլ փաստեր խառնված են կամ ճիշտ չեն ներկայացված։ Շապուհը (Շապուհ 2-րդը) իշխել է ոչ թե 72, այլ՝ 70 տարի, Հազկերտը (Հազկերտ 1-ինը)՝ ոչ թե 11, այլ՝ 29 կամ 30 տարի, Արտաշիրին անմիջապես հաջորդել է ոչ թե Վռամը, այլ Շապուհ 3-րդը և այլն։ Տե՛ս Կ. Շահնազարյանցի (սույն երկի փարիզյան հրատ., հ. 1-ին, էջ 328) և Մ. Բրոսեի (Ֆրանս. թարգմ. էջ 30) ծանոթագրություններ։ (էջ 94)։

156. Եթե նկատի ունենանք, որ Շապուհը գահակալել է 310 թվականից, ապա դուրս կգա, որ Բաբիկը Սյունիքի իշխանությունն ստանձնել է 378 թվականին (նրա 68-րդ տարում) և իշխելով 21 տարի՝ վախճանվել է 399 թվականին։ (էջ 94)։

157. Բնագրում՝ մոլեխինդ։ Մոլեխինդը բույս է, որից նաև թույն էին պատրաստում։ (էջ 95)։

158. Պատմիչը գրում է. «ի Բաբիկէ հետէ մինչև ցայժմ» քան իշխաներ են իշխել 332 տարի։ «Մինչև ցայժմ» ասելով նա նկատի է ունեցել մինչև իր ժամանակները։ Բայց մի՞թե այդ ժամանակաշրջանը 332 տարի էր։ Եթե Բաբիկի վերջին տարուն ավելացնենք 332 (339+332), կստանանք 731։ Իսկ սա 8-րդ դարն է։ Չէ՞ որ պատմիչը 13-րդ դարում է անցկացրել իր կյանքի հիմնական ժամանակը։ Ուրեմն ինչպե՞ս հասկանալ «մինչև ցայժմ»-ը։ Այս դեպքում կա՛մ նշված 332 թիվն է սխալ, կա՛մ «մինչև ցայժմ» արտահայտությունը։ Իսկ եթե նշվեր հայկական թվականով, կարող էր հարմար գալ (1282 թ.)։ (էջ 96)։

159. Խոսքը վերաբերում է Մեսրոպ Մաշտոցի կողմից Սյունիքում ծավալված լուսավորական գործունեությանը։ «Ձկրկին լուսաւորութիւն» է ասված՝ քրիստոնեության տարածումից հետո այստեղ կատարված լուսավորական աշխատանքի համար։ (էջ 97)։

160. Տե՛ս Բ գլուխը։ (էջ 98)։

161. Խոսքը նշանավոր Սահակ Պարթևի մասին է, որը հայոց կաթողիկոսն էր 390-ական թվականների առաջին տարիներից մինչև 439 թվականը։ Թեև 428 թվականին Արշակունի վերջին թագավորին գահընկեց անելով պարսից տիրակալները կաթողիկոսությունից զրկեցին նաև Սահակին, բայց նրա և Մեսրոպ Մաշտոցի աշակերտները նրան շարունակում էին ճանաչել հայոց կաթողիկոս մինչև իր մահը։ (էջ 98)։

162. Խոսքն Աստվածաշնչի մասին է։ (էջ 98)։

163. Աղվանից գիրն ստեղծելու մասին գրելիս Օրբելյանն օգտվել է հայ հին մատենագրության մի քանի աղբյուրներից՝ Կորյունից (Վարք Մաշտոցի), Մ. Խորենացուց (Պատմութիւն Հայոց, 3-րդ, ԻԴ), Մ. Կաղանկատ-

վացուց (Պատմութիւն Աղուանից աշխարհի, 2-րդ, Գ)։ Սակայն փաստերը ներկայացրել է տարբեր ձևով։ (էջ 98)։

164. Եղիշեն Սյունյաց եպիսկոպոս Անանիային հիշատակում է Արտաշատի ժողովին մասնակցած և Պարսից թագավորի թղթին պատասխան գրած եպիսկոպոսների մեջ (Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, 2-րդ յեղ.)։ (էջ 99)։

165. Շահապիվանը գտնվում էր Բագրեւանդում. ամանք նույնացնում են Բագավանի հետ։ Ժողովը տեղի է ունեցել 444 թվականի օգոստոսի 7-ին՝ Հովսեփի ղեկավարությամբ (տե՛ս Մ. Օրմանեան, «Ազգապատում», Կոստանդնուպոլիս, 1912, էջ 329—330)։ (էջ 99)։

166. Հավանաբար այս թվական տվյալն աղավաղված է։ Փարիզյան հրատարակության մեջ ցույց է տրվում 22 տարեկան, իսկ մոսկովյան հրատարակության մեջ՝ 44 տարի, բայց Օրբելյանի նույն աշխատության ՀԲ գլխում՝ 42 տարի, որը և նկատի ենք ունեցել թարգմանելիս։ Անանիան երբ մասնակցել էր Շահապիվանի (444 թ.) ու Արտաշատի (449 թ.) ժողովներին, ապա պիտի պաշտոնավարած լիներ 42 տարուց ավելի, քանի որ Սյունիքի եպիսկոպոս էր դարձվել դեռ հայ գրերի գյուտից առաջ, ինչպես գրում է պատմիչը։ (էջ 99)։

167. Տե՛ս ծան. 112։ (էջ 99)։

168. Սա Վարդան Մամիկոնյանն էր՝ ծնված Սահակի դուստր Սահականուշից։ (էջ 99)։

169. Խոսքը Հազկերտ 2-րդի մասին է, որ սկսեց թագավորել 438 կամ 439 թվականից։ (էջ 100)։

170. Բնագրում՝ աւետարանն, որը այստեղ լայն իմաստով է գործածված։ (էջ 100)։

171. Բնագրում հրովարտակ բառը հոգնակիով է. ելնելով բովանդակությունից թարգմանեցինք եզակիով։ (էջ 100)։

172. Բնագրում՝ լուեալ։ (էջ 100)։

173. Պատմիչն այստեղ չի անվանում տեղը։ Դա Արտաշատն էր, որտեղ 449 թվականին տեղի ունեցավ նշանավոր ժողովը։ (էջ 100)։

174. Սա Հովսեփ կաթողիկոսն էր, Վայոց ձորի Հողոցիմք (Հողոցիմ, Խողոցիմ) գյուղից, որը Սահակ Պարթևից հետո զարձավ կաթողիկոսական տեղապահ, ապա՝ կաթողիկոս։ Գլխավորեց Շահապիվանի և Արտաշատի ժողովները, մասնակցեց Վարդանանց պատերազմին, բանտարկվեց Պարսկաստանում, նահատակվեց Ապար աշխարհում։ Նրա մասին հիշատակում են Կորյունը, Եղիշեն, Փարպեցին, Խորենացին և ուրիշներ։ (էջ 100)։

175. Գրության (Թղթի, նամակի) օրինակը և նրա պատասխանը բերված են Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի 2-րդ գլխում։ Պատասխան գրած եպիսկոպոսների ցանկը նախ տալիս է Եղիշեն, ապա՝ Ղ. Փարպեցին։ Օրբելյանը, անշուշտ, օգտվել է նրանցից, բայց հիշատակում է միայն Հովսեփի, Ղևոնդ երեցի և Անանիայի անունները։ (էջ 101)։

176. Ըստ Եղիշեի՝ հատուկ ցուցակով հականե-հավանե կանչում է տասը նախարարների։ (էջ 101)։

177. Արտազ գավառը գտնվում է Պատմական Հայաստանի Վասպուրա-

կանի նահանգում՝ տարածված Արաքս գետի աջ կողմում, որտեղ էր Ամատյրի դաշտը։ Այստեղ 451 թվականի մայիսի 26-ին տեղի ունեցավ նշանավոր պատերազմը, որը ժողովուրդը կոչել է Վարդանի անունով։ (էջ 102)։

178. Այս անունը փարիզյան հրատարակության մեջ նշվում է Ազդ ձևով։ Մոսկովյան հրատարակությունն ունի Ցազդ։ Այսպես է նաև սկզբնաղբյուրում. (տե՛ս Ղազար Փարպեցի, «Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1904, 3-րդ, ՀԵ—ՀԹ)։ Մենք տալիս ենք այդ ձևով։ (էջ 103)։

179. Միհրանը պարսկական զորավար էր։ (էջ 104)։

180. Սկզբնաղբյուրում այս տեղանունը նշվում է դաշտ Ճարմանայնու (Ղ. Փարպեցի, Պատմութիւն Հայոց, 3-րդ, ՀԳ)։ (էջ 104)։

181. Այս ճակատամարտը տեղի է ունեցել 482 թվականին։ (էջ 104)։

182. Հոռի ամսի մասին տե՛ս ծան. 138։ (էջ 106)։

183. Այս գլխի հիմնական սկզբնաղբյուրն է Ղ. Փարպեցու «Պատմութիւն Հայոց»-ը։ Համմտ. 3-րդ, ՀԳ—ՀԹ։ (էջ 106)։

184. Ս. Օրբելյանի հիշատակած նղեգեաց գետը հայտնի Նղեգիս գետն է, որ այժմ էլ նույն անունով է կոչվում։ Իսկ Մողանի (Մոդ) գետը նույն Արփա գետն է։ (էջ 106)։

185. Նկատի է առնված հայ ժողովուրդը։ (էջ 106)։

186. Հայտնի է, որ Հազկերտ 2-րդից անմիջապես հետո թագավորել է Որմիզդ 3-րդը։ Պերոզը հաջորդել է նրան և իշխել մինչև 484 թվականը, երբ հեփթաղների հետ մղած պատերազմում զոհվում է։ (էջ 106)։

187. Հեփթաղները նույն քուշաններն են (հոնական ցեղեր), որոնք կոչվում են նաև սպիտակ հոներ։ (էջ 106)։

188. Պարսից այս թագավորը Պերոզի եղբայր Բալաշն էր, որին մեր պատմիչները Վաղարշ են անվանում։ Գահակալել է մինչև 487 թվականը։ (էջ 106)։

189. Բանակցությունները վարվեցին Հեր գավառի Նվարսակ գյուղում, 484 թվականին, կնքվեց հաշտության պայմանագիր, որը և հաստատվեց պարսից արքունիքի կողմից։ Վահան Մամիկոնյանը պաշտոնապես նշանակվեց Հայաստանի սպարապետ։ Կարճ ժամանակով մարզպան զարձավ Անդեկանը, որը շուտով հեռացվեց, և մարզպանությունը ևս հանձնարարվեց Վահան Մամիկոնյանին։ Իսկ այնուհետև այս քաջ հայրենասերը որքան է իշխել՝ ստույգ հայտնի չէ։ Միայն գիտենք, որ 506 թվականի մի ցուցակում նախարարների մեջ նրա անունն այլևս չի հիշատակվում։ Հիշյալ բանակցությունները վարել են պարսկական կողմից Նիխոր վշնասպդատի ղեկավարած պատվիրակությունը, Հայաստանի կողմից՝ Վահան Մամիկոնյանի ղեկավարած խումբը։ Սրա սկզբնաղբյուրը նույնպես Ղ. Փարպեցու «Պատմութիւն Հայոց»-ն է՝ 3-րդ, ՁԸ։ Վահանի պարսից արքունիք գնալու, այլև պաշտոնավարության մասին ևս պատմվում է նույն գրքի հաջորդ գլուխներում, որտեղից էլ օգտվել է Ս. Օրբելյանը։ (էջ 106)։

190. Արցախի աշխարհը կամ նահանգը՝ ըստ «Աշխարհացոյց»-ի, Մեծ Հայքի 10-րդ նահանգն էր՝ 11528 քառակուսի կիլոմետր տարածությամբ։ Ընդգրկում էր այժմյան Լեռնային Ղարաբաղը և ձգվում էր մինչև Իջևանի շրջանը։ 887 թվականին միացվել էր Աղվանքին, իսկ հայկական անկախ

պետականության վերականգնումից հետո մտնում էր Հայաստանի կազմի մեջ։ Տե՛ս Ս. Տ. Երեմյան, «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 41։ (էջ 106)։

191. Փարիզյան հրատարակության մեջ՝ «որոց զկնի պնդեալ անիծալ Աթաշխոդային չարահնար զօրօքն Պարսից», որը նշանակում է, թե անիծյալ Աթաշխոդան պարսկական չարահնար զորքերով հետապնդել է փախուցականներին։ Մոսկովյան հրատարակության մեջ դա հետևյալ կերպ է. «որոց զկնի պնդեալ զօրացն Աթաշխոդային...» (էջ 49)։ Իսկ սա նշանակում է, որ հետապնդել է Աթաշխոդայի զորքը։ Համեմատությունը ցույց է տալիս, որ այստեղ փարիզյան հրատարակությունը մոտ է № 6271 ձեռագրին, բայց ունի որոշ տարբերություններ. Ձեռագրում կարդում ենք. «անիծեալ զաւրացն աթաշխոդային չարահնար պարսկացն» (էջ 51 բ), (էջ 107)։

192. Անգելաձորը գտնվում է Շատին գյուղի մոտ, այժմյան Եղեգիսից ոչ շատ հեռու։ (էջ 107)։

193. Գյուղեր Եղեգնաձորում՝ Արտաբոյնք, Արտաբոյն (հետո՝ Արտաբին) տեղանունը, ինչպես ճիշտ նկատել է Ղ. Ալիշանը, հետագայում աղավաղվել և դարձել է Էրտափին, Ոստիճք-ը՝ Հոստուն («Միաբանական», էջ 158)։ Տեվել և դարձել է Էրտափին։ Այս Արտաբոյն—Էրտափին—ազգիներն այժմ էլ անվանում են Էրդափին։ Այս Արտաբոյն—Էրտափին—մնում է որպես գյուղատեղի։ Գտնվում է Շատին գյուղի մոտակայքում, Եղեգիս գետի հովտում։ (էջ 107)։

194 Ցաղաց քար, Ցաղացքար կամ Ցախաց քար վանքը գտնվում է այժմյան Եղեգնաձորի շրջանի Եղեգիս (հին՝ Արտաբոյնք, ապա՝ Էրդափին) և Ալայազ գյուղերից 6—7 կիլոմետր հեռավորությամբ մի բարձրադիր տեղում։ (էջ 107)։

195. Խոսքը Ուտինք և Արտաբոյնք գյուղերի մասին է։ Համմ. ծան. 193։

196. Այսինքն՝ «մայր է այնտեղ, մայր է այնտեղ»։ Սույն երկի բնագրի այս նախարտաստության մեջ հեղինակի կողմից հանդես է բերված եմ բայի ներկա ժամանակի եզակի թվի 3-րդ դեմքի բարբառային ա ձևը։ (էջ 107)։

197. Հայոց Գյուտ կաթողիկոսն աթոռակալել է 461—478 թթ.։ Ուրեմն 9-րդ տարին կլինի 462 թվականը, երբ հիմնադրվել է վկայարանը։ Ազգապրագետ Ե. Կոլաչյանը հիշյալ վկայարանի տեղը մատնացույց է արել Շատ գյուղի դամասի Քեշիշքենդ գյուղի (այժմյան Եղեգնաձորի շրջանային կենտրոն Եղեգնաձոր քաղաքատիպ ավան) հին ամրոցաբլուրը (տե՛ս «Ազգագրական հանդես». 12-րդ գիրք, Թիֆլիս, 1904, էջ 269—270)։

198. Նավահատիքը մուտքի տոն էր, որ հանդիսավոր արարողությամբ կատարվում էր վանքի, եկեղեցու կամ այլ հաստատության կառուցումից կամ նորոգումից հետո, գործարկումն սկսելիս։ (էջ 107)։

199. Պատմիչի հիշատակած խոտորակեղը գտնվել է այժմյան Եղեգնաձոր քաղաքատիպ ավանի նախկին հիմնական տարածքի տեղում։ Ս. Գ. Բարխուդարյանը դեռ 1936 թ. իր «Պատմահնագիտական-տեղագրական դիտողություններ» հոդվածում մեջ է բերել Ս. Օրբելյանի երկի այս հատվածը, որտեղ ասվում է, թե ժամանակին նահատակների համար կառուցված եկեղեցու ավերվելուց հետո հետագայում այդ տարածքում գյուղ է հիմնվել՝

խոտորակեղ անվանումով, ընդգծել է, որ տեղը լիովին համընկնում է Քեշիշքենդ (Միկոյան) գյուղին (շրջկենտրոնին)։ Տե՛ս «ՀՍՍՀ պատմության և գրականության ինստիտուտի տեղեկագիր», 1-ին գիրք, 1936, էջ 88—89։ Այնուհետև Հ. Եղիազարյանը գրել է, որ Խոտորակեղը այժմյան հիշյալ բնակավայրը պիտի լինի (Ագիրբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, էջ 46)։ Ս. Գ. Բարխուդարյանը հետագայում կրկին անդրադառնալով Խոտորակեղին և պնդելով, որ Խոտորակեղը շրջակայքի վիմական արձանագրություններում հիշատակվող նույն Խոտորակեղը կամ Սխոտորակեղն է (տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 8-րդ, էջ 103—104)։ Դա մեզ հավանական է թվում։

Սակայն կա և այն կարծիքը, ըստ որի Խոտորակեղը կամ Սխոտորակեղը տարբեր է։ Այսպես. Ա. Օ. Խաչատրյանը գրում է. «Հավանաբար այս գյուղը գտնվել է Եղեգնաձոր ավանից հարավ-արևելք, «Ղուտու-չայ» գետակի ձախափնյա հարթակի ավերակներում» (Պատմա-բանասիրական հանդես, 1974, № 4, էջ 112)։ (էջ 108)։

200. Երիցավանքը կամ Երիցուվանքը մտնում էր Բաղք գավառի մեջ։ Նրա փլատակները պահպանվում են այժմյան Ղափանի շրջանի Արծվանիկ գյուղից վերև։ Կա այն կարծիքը, թե այժմյան Արծվանիկ տեղանունն առաջացել է հենց Երիցու վանք-ից՝ Երեցվանիկ ձևի վրայից (համմ. «Դիվան հայ վիմագրության», պրակ 2-րդ, էջ 133)։ (էջ 109)։

201. Բնագրում՝ էգոնոմոս։ Սա հունարեն οἰκόνομος բառն է, որ նշանակում է «տնտեսություն վարող, կառավարիչ, տնտեսվար»։ (էջ 109)։

202. Փարիզյան հրատարակության մեջ՝ ի խոռանն արհուեական։ Պատմիչն այս դեպքում նկատի ունի Սյունիքի իշխանական պալատները և ոչ թե քաղաքորական պալատ, որպիսին այն ժամանակ Սյունիքում չկար։ (էջ 110)։

203. Տե՛ս ծան. 21։ (էջ 110)։

204. Այստեղից պարզ երևում է, որ պատմիչի ժամանակների վարչական բաժանմամբ Երիցավանքը մտել է Բարկուշատ գավառի տարածքի մեջ։ Իսկ այժմ Ղափանի շրջանի մեջ է։ Համմ. ծան. 200։ (էջ 111)։

205. Արագածոտնը Այրարատյան նահանգի 10-րդ գավառն էր՝ 3050 քառակուսի կիլոմետր տարածքով. ընդգրկում էր այժմյան Աշտարակի, Էջմիածնի, Թալինի և Հոկտեմբերյանի շրջանները։ (էջ 111)։

206. Հոժհաննավանք կամ Հոժհաննու վանքը գտնվում է այժմյան Աշտարակի շրջանում (Օհանավանք)։ Կրոնական-մշակութային կարևոր կենտրոն է եղել։ (էջ 111)։

207. Գվինը հայոց Արշակունյաց թագավորության վերացումից (428 թ.) հետո դարձել էր Հայաստանի մայրաքաղաքը։ Հիմնադրվել էր 4-րդ դարի երեսնական թվականներին, հայոց Խոսրով Կոտակ թագավորի (330—339) կողմից։ Մեր ժամանակներում պեղվեցին նրա ավերակները, որոնք գտնվում են այժմյան Արտաշատի շրջանում։ (էջ 112)։

208. Այսինքն՝ վախճանվեց։ (էջ 112)։

209. Ըստ կրոնական առասպելի՝ հայտնությունը Քրիստոսի մարդակերպ դառնալն ու մարդկանց երևալն է, նշվում է որպես կրոնական տոն։ (էջ 112)։

210. Հայտնության ճրագալույցի օրը լինում է Ծննդյան տոնի նախօրեն,

երբ եկեղեցիներում շատ ճրագներ (կամ մոմեր) ու ջահեր էին վառում՝ ճրագալույցի օր է նաև հարության (զատկի) տոնի նախօրեն։ (էջ 112)։

211. Բնագրում՝ Բնքղեհեմը (բնագրում՝ Բնդղեհէմ) կամ Բնքլեհեմը բնակավայր է՝ ընկած Երուսաղեմից հարավ-արևմուտք։ Ըստ կրոնական առասպելի՝ այնտեղ է ծնվել Քրիստոսը։ (էջ 112)։

212. Բնագրում՝ ատելախոյզ։ Կարծում ենք սա աւելախօս բառի այլափոխումն է։ Թարգմանել ենք այդ ուղղումով։ Ընդհանրապես նկատելի է, որ այս գլխի (ԻԱ) առաջին պարբերության սկզբնամասը տպագրում աղավաղված է։ Այն վերացնելուն և հատվածը հասկանալի դարձնելուն օգնում է № 6271 ձեռագրի համեմատությունը։ Այնտեղ կարդում ենք. «Ո՛վ դու մի՛ վայրաբար ինչ վարկցիս զառաջի եդեալս բան և աւելախոյզ զիս ծանիցես. այլ պատշաճ և ի դէպ մերում ձեռագրութեան զի զսխսական աշխարհի սկսաք ճառել զվէպս...» (էջ 53 ա— 53 բ)։ Թարգմանությունը կատարել ենք սրա հաշվառումով։ (էջ 113)։

213. Այս գավառի մասին տե՛ս ծան. 30։ (էջ 113)։

214. Այս անունը Ս. Օրբելյանն այստեղ հիշատակում է երկրորդ անգամ (առաջին անգամ՝ ժե գլխում)։ Ավելի հին հիշատակություններում Շաբիր ձևով է (Կորիւն, Վարք Մաշտոցի [ե], Խորենացի, Պատմութիւն Հայոց, 3-րդ, խէ, կ)։ (էջ 113)։

215. Տե՛ս ծան. 100։ (էջ 113)։

216. Այսինքն՝ դեպի Բաղք գավառի կողմերը։ (էջ 114)։

217. Աղավնո գետը այժմյան Հագարի գետն է։ Կազմում էր Արևմտյան Բաղքի արևելյան սահմանը։ Ս. Օրբելյանի ասույն երկում անվանումը հանդես է գալիս տարբերակներով՝ Աղուան (Աղվան) գետ, Աղուանոյ գետ և այլն։ (էջ 114)։

218. Քաշունիք գավառը Արևելյան կամ Մյուս Բաղքն էր՝ ընկած Աղավնո (Աղվան) գետից արևելք։ Այժմ՝ Ադրբեջանական ՍՍՀ-ի տարածում։ (էջ 114)։

219. Այսինքն՝ այդ երկրի նման այնտեղ տարին բոլոր բույսեր ու պտուղներ էին աճում բարենպաստ կլիմայի պատճառով։ (էջ 114)։

220. Այժմյան՝ նույն անունը կրող դաշտը Ադրբեջանական ՍՍՀ-ում։ (էջ 114)։

221. Պատմիչն այստեղ զուգահեռ է անցկացնում՝ հիշեցնելով Եվստաթեոսին։ Սա 4-րդ դարի նշանավոր կրոնական գործիչ Եվստաթեոս Սեբաստացի եպիսկոպոսն է, որը հայտնի է կղերականությունը վանականացնելու, միայնակեցությունն մտցնելու իր գործունեությամբ։ Հիմնել էր դպրոց, որտեղ վանականներ էին պատրաստվում (համմտ. Ե. Տեր-Մինասյան, «Ընդհանուր եկեղեցական պատմութիւն» հ. 1-ին, 1908, էջ 281)։ (էջ 115)։

222. Բնագրում հոգնակի է՝ ելնելով գլխի բովանդակությունից՝ թարգմանության մեջ ներկայացրինք եզակի ձևով։ (էջ 115)։

223. Այստեղ պատմիչը զուգահեռ է անցկացնում։ Գողգոթան (եբրայեցերեն նշ. «գանգի տեղ») Երուսաղեմի պարիսպներից դուրս մի վայր էր, որտեղ, ըստ կրոնական առասպելի, խաչել են Քրիստոսին։ (էջ 116)։

224. Փարիզյան հրատարակության մեջ՝ զգիրկ, որը գրչագրական բացահայտ աղավաղություն է։ Մոսկովյան հրատարակութիւն ունի զգիր։ Վերջին ճիշտ համարելով՝ ըստ այդմ էլ թարգմանեցինք։ Այսպես է վարվել և Մ. Բրոսեն՝ թարգմանելով la lettre (անդ, էջ 50)։ (էջ 117)։

225. Ըստ երևույթին այստեղ բնակրի աղավաղում կա։ (էջ 117)։

226. Այս սահմաններում նշվող տեղանունները միայն այստեղ են հանդիպում։ Հնարավոր չեղավ պարզել նրանց ճիշտ տեղը։ (էջ 117)։

227. Այստեղ հավանաբար աղավաղում կա։ Այսպիսի անունով վանք կամ եկեղեցի հայտնի չէ։ Մ. Բրոսեն, նրան միացնելով հաջորդ երկու բառերը, դարձրել է Manacca-i Ners (անդ, էջ 51)։ (էջ 118)։

228. Կապան բնակավայրը (քաղաքը) գտնվում էր այժմյան Ղափան քաղաքից վերև, Ղափան—Քաջարան ճանապարհի միջին հատվածում, Ողջի գետի բարձրադիր աջ ափին, այն տեղում, որ տեղացիներն անվանում են «Տանձու լենջ»։ Հիշատակվում է 5-րդ դարից։ 10-րդ դարում արդեն քաղաք էր և դարավերջին դարձավ Սյունիքի թագավորության կենտրոնը։ Համմտ. նաև ծան. 25։ (էջ 118)։

229. Այստեղ ևս հիշատակվում է կէտ—ը, որն անպարզ է։ Արաքսում կետ ձուկ չի աճում։ Թարգմանել ենք մոտավորապես՝ ըստ ընդհանուր բովանդակության։ (էջ 118)։

230. Քաղցը հայկական հին տոմարի հինգերորդ ամիսն էր։ Սկսվում էր դեկտեմբերի 9-ից։ (էջ 119)։

231. Այժմ արդեն հայտնի է, որ մեզ է ավանդվել այդ հարցումներն ու պատասխանները պարունակող գործը։ Տե՛ս Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հ. 4-րդ, Երևան, 1948, էջ 242։ (էջ 120)։

232. Այստեղ շփոթ կա։ Այս Պետրոս եպիսկոպոսը, քերթողահայր Մովսես Խորենացու աշակերտը լինելով, չէր կարող ծննիկի, Կորյունի և նրանց ընկերների հետ գնացած լինել Կոստանդնուպոլիս, քանի որ, ըստ հաճախ տվյալների, այդ տարիներին (հինգերորդ դարի քսան-երեսնական թվականներին) դեռ ծնված էլ չէր լինի։ Նրա կյանքը ձգվել է հինգերորդ դարի վերջին տասնամյակներից մինչև վեցերորդ դարի հիսնական թվականները։ Տե՛ս նաև ծան. 7։ (էջ 120)։

233. Քաղկեդոնի ժողովը տեղի է ունեցել 451 թվականին։ Այդպես է կոչվում տեղի անունով։ Ժողովը բյուզանդական արքունիքի և եկեղեցու ճնշման տակ մեծամասնությամբ որոշեց ընդունել Քրիստոսի երկու բնություն (մարդկային և աստվածային) ունենալը։ Այդ դավանանքը կոչվում է քաղկեդոնականություն։ Այդ ժողովին Հայաստանը մասնակցություն չունեցավ։ Իսկ երբ քաղկեդոնականությունը սուր բնույթ ընդունեց և սպառնալիք դարձավ հայ ժողովրդի քաղաքական ու մշակութային շահերի համար, Դվինի երկու ժողովներով (տե՛ս ծան. 235) պաշտոնապես մերժվեց։ Հայ եկեղեցին ընդունում էր Քրիստոսի մեկ՝ աստվածային բնությունը։ (էջ 120)։

234. Նկատի ունի Նիկիայի (325 թ.), Կոստանդնուպոլսի (381 թ.) և Եփեսոսի (431 թ.) տիեզերական եկեղեցական ժողովները։ (էջ 120)։

235. Դվինի այդ նշանավոր ժողովը տեղի է ունեցել 554 թվականին։ Պատմիչն այստեղ նշում է իրեն առաջին ժողով, բայց սա երկրորդ ժողովն էր, Դվինի առաջին ժողովը եղել էր 506 թվականին։ Այս փաստն էլ ինքնին ցույց է տալիս, որ Պետրոսը Մեսրոպ Մաշտոցի ավագ աշակերտնե-

րի հետ չէր կարող փաւչած լինել Կոստանդնուպոլիս, քանի որ նրանց ժամանակակիցը չէր։ Երբ նոյնիսկ ընդունենք, որ խոսքը վերաբերում է Դվինի առաջին ժողովին (506 թ.), ապա այս գեպքում էլ նրան նախորդած եպիսկոպոսի (Մակարի) գործունեության ժամանակը չի հարմարվում (նա պաշտոնավարել է՝ սկսած 510 կամ 511 թվականից, պաշտոնավարումն էլ, ինչպես պատմիչն է գրում, տեւել է 28 տարի)։ Պետրոսի ժամանակագրական անպատեհության մասին մանրամասն տե՛ս այս երկի ֆրանսերեն թարգմանության համապատասխան ծանոթագրությունը (անգ, էջ 53—54, ծան. 2)։ (էջ 120)։

236. Սա Նեբրսես 2-րդ կաթողիկոսն է, որ կոչվել է նաև Ներսես Բագրեւանդցի (նաև Աշտարակեցի)։ Աթոռակալել է 548—557 թթ.։ Նրա հրամանով ու նախաձեռնությամբ է գումարվել Դվինի 2-րդ՝ 554 թ. ժողովը՝ ուղղված նեստորականների դեմ։ Այստեղ քննարկվել են նաև հիմնարկան բարենորոգումների հարցեր։ Ներսես 2-րդի օրոք նկատվել է տոների շփոթում, որի պատճառով տոմարական փոփոխությունների առաջարկ է արվել։ (էջ 120)։

237. Նեստորականության էությունն այն էր, որ քարոզվում էր, թե Քրիստոսը ծնվել է իբրև սոսկ մարդ, նրան հետո է միացել աստվածային փառքը։ Հետևաբար Մարիամը ոչ թե աստվածածին էր, այլ՝ մարդածին։ Այս ուսմունքը դատապարտվեց 431 թվականին, Եփեսոսի ժողովում, բայց հետագայում էլ դեռ ունենում էր իր գրսևորումները։ Պատմական տվյալներից երևում է, որ հետագայում Հայաստանում էլ է նա արտահայտություն գտել։ Դրա բնորոշ ապացույցներից է Դվինի հայտնի ժողովը (554 թ.), որն ուղղված է քաղկեդոնականության և հատկապես նեստորական աղանդի դեմ։ (էջ 120)։

238. Թեոդոպոլիսը հնում հայտնի է եղել Կարին անունով։ Այդպես է անվանվել բյուզանդացի կայսեր Թեոդոսի անունով՝ ավելի ամրացվելուց և բերդաքաղաքի վերածվելուց հետո։ Գտնվում է պատմական Բարձր Հայքում։ Այժմ կոչվում է էրզրում. համանուն վիլայեթի կենտրոնը Թուրքիայում։ (էջ 120)։

239. Սա Կոտայքի Արամոնս (Արամոնք) գյուղն է։ Անունն այժմ ունի Արամուս ձևափոխությունը։ Ներկայումս այս գյուղը մտնում է Աբովյանի շրջանի մեջ։ (էջ 120)։

240. Համմ. Մովսէս Կաղանկատուացի, «Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1913, 2-րդ, ԽԲ։ (էջ 120)։

241. Փարիզյան հրատարակությունը վերնագրում չունի իշխանին բառաձևը։ Լրացրել ենք ըստ մոսկովյան հրատարակության։ (էջ 121)։

242. Մոսկովյան հրատարակությունն ունի՝ յԱբգիշոյէ՝ Աստուց եպիսկոպոսէ (անդ, էջ 66)։ Փարիզյան հրատարակության մեջ այս անունը Աբդիսո ձևով է։ Համանականը Աբգիշո ձևն է։ (էջ 121)։

243. Նիկիան Փոքր Ասիայի հին քաղաքներից էր, որտեղ տեղի է ունեցել եկեղեցական տիեզերական առաջին ժողովը 325 թվականին՝ ուղղված Արիոսի և Մելետոսի աղանդի դեմ։ (էջ 121)։

244. Խոսքը Կոստանդնուպոլսի եկեղեցական տիեզերական ժողովի մասին է, կայացել է 381 թվականին՝ ուղղված Մակեդոնի ուսմունքի դեմ, որը

մերժում էր սուրբ հոգու աստվածությունը։ Հիշվում է իբրև եկեղեցական երկրորդ ժողով։ Պատմիչն այստեղ նշում է 150 եպիսկոպոսների մասնակցությունը, այլ աղբյուրներում 180 է։ (էջ 121)։

245. Եփեսոսը Փոքր Ասիայի հին քաղաքներից էր, հունական մշակութային կենտրոններից մեկը։ 431 թվականին այստեղ կայացավ եկեղեցական տիեզերական երրորդ ժողովը, որը մերժեց Նեստորի աղանդը։ Այս ժողովի որոշումները հունարեններից հայերեն թարգմանվեցին Մեսրոպ Մաշտոցի աշակերտների կողմից և հասցվեցին Հայաստան։ (էջ 122)։

246. Նեստորը Կոստանդնուպոլսի հույն պատրիարքն էր 428—431 թթ.։ Նա քարոզում էր, թե Մարիամը ոչ թե աստված, այլ մարդ է ծնել, ուստի աստվածածին չէ, այլ՝ մարդածին. նրա ծնած Քրիստոսին հետո է միացել աստվածային փառքը։ Եփեսոսի ժողովի կողմից դատապարտվեց այս աղանդը, և Նեստորը գահընկեց արվեց ու աքսորվեց Աֆրիկա։ Բայց նրա աղանդը տարածվեց տարբեր երկրներում և, ինչպես Օրբելյանն է նշում, այդ թվում՝ նաև Հայաստանում։ Դա ժամանակին վտանգավոր էր համարվում քրիստոնեական եկեղեցու համար։ (էջ 122)։

247. Սրանք Նեստորի աղանդի հետևորդներն էին։ Տե՛ս նախորդ ծանոթագրությունը։ (էջ 122)։

248. Քաղկեդոնականները քաղկեդոնական դավանանք ընդունողներն ու քարոզողներն են։ Դրանք Քրիստոսի մեջ երկու բնություն (աստվածային և մարդկային) ընդունելու համար կոչվել են նաև երկաբնակներ՝ ի տարբերություն միաբնակների։ Այդ դավանանքի տարածման ու բնույթի մասին տե՛ս ծան. 233։ (էջ 122)։

249. Հերձվածող էին համարվում եկեղեցու միաբանությունից շեղվողներն, զանազան աղանդների հետևողները։ (էջ 122)։

250. Փարիզյան հրատարակության մեջ այս մասում աղավաղում կա։ Կետադրության խախտումով հատվածի վերջին նախադասությունն անջատված և տարված է հաջորդի սկիզբը («Զայդ հոգ կալաք յանձին...»)։ Բացի դրանից, յիշելով բառաձևից առաջ փակագծում հրատարակիչն ավելացրել է ոչ մասնիկը, որով սխալ մեկնաբանություն է տրվում։ Հատվածը ավելի բարվոք է մոսկովյան հրատարակության մեջ, բայց այստեղ էլ որոշ բացթողում կա։ Իսկությունը պարզելու համար դիմեցինք № 6271 ձեռագրին, որտեղ կարդում ենք. «Յիշելով մեր զարբոյն Գրիգորի զմեծ վաստակ և զմեծ քան որ ի մեր և ի ձեր աշխարհիդ վերայ հասարակաց և զսուրբ ծնունդն որ սրբով աւազանովն վերստին ծնաք, և զլուսաւոր և զճշմարիտ հաւատ զոր մեք և դուք ընկալաք, և այժմ ունիմք, և հոգևոր սէր զոր ընդ ձեզ ունիմք առաւել քան զամենայն, զայդ հոգ յանձին կալաք հեռացուցանել ի ձէնջ զչարի որոմանն սերմանսս» (էջ 68 ա)։ Թարգմանել ենք կետադրության շտկումով, միացնելով հատվածի նախորդ մասի հետ, քանի որ կապվում է տրամաբանորեն։ (էջ 122)։

251. Այստեղ խոսքը վերաբերում է հայոց Մովսես 2-րդ կաթողիկոսին, որը կոչվել է նաև Եղվարդեցի մականունով։ Բայց տվյալ դեպքում նկատելի է պատմական իրողությունների շփոթ։

Պատմիչի նշած 553 թվականին հայոց կաթողիկոսն էր Ներսես 2-րդ

Բագրեւանդին (համմտ. ծան. 236) և ոչ թե Մովսես 2-րդ Եղվարդեցին, որն աքոռակալել է 574—604 թթ.։ Տոների տոմարական հաշիվների շփոթումը նկատվել է և տոմարի ուղղման, թերևս և հայոց թվականի սահմանման հարցն առաջ էր քաշվել Ներսես 2-րդ Բագրեւանցու օրոք, իսկ Մովսես 2-րդ Եղվարդեցին Դվինի 3-րդ (584 թ.) ժողովով հաստատել է հայոց (մեծ) թվականը և պաշտոնապես կիրառության մեջ դրել։

Սույն երկի այս մասում խառնված է նաև Մեծիե Գնունու ժամանակը։ Մեր պատմագրության մեջ Հայաստանի այս մարզպանի պաշտոնավարման ժամանակը նշվում է 517—548 կամ 519—535 թվականներով (համմտ. Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հ. 3-րդ, էջ 329)։ Տվյալները որքան էլ հակասական լինեն, Մեծիե Գնունու պաշտոնավարման 10-րդ տարին բնավ չի համընկնում Մովսես 2-րդի, ինչպես և Ներսես 2-րդի աքոռակալության ժամանակներին։ (էջ 124)։

252. Անդրեասը, որ գիտության մեջ հայտնի է Անդրեաս Բյուզանդացի անունով, նշանավոր տոմարագետ էր։ Նիկիայի եկեղեցական առաջին տիեզերական ժողովի որոշումների հիման վրա նա կազմել էր, այսպես կոչված, զատկական աղյուսակները, որտեղ քրիստոնեական եկեղեցիների համար նշվում էր զատկի տոնը 200 տարվա ժամանակաշրջանի համար։ Դրանով էլ այդ տոնացույցը կոչվել է Անդրեասի երկնադրույցք։ Մեր թվականության 553 թվականին արդեն լրացել էր Անդրեասի երկհարյուրյակի ժամկետը, և շփոթ էր առաջացել զատկական տոնի տոմարական հաշիվների մեջ։ Անհրաժեշտ էր ուղղել։ Հայերը ժամանակին օգտագործել են Անդրեաս Բյուզանդացու աղյուսակները։ Այդ տոմարագետի գործերը քաջ ծանոթ են եղել և հետագայի գիտնականներին՝ Անանիա Շիրակացուն և Հովհաննես Իմաստասերին, որոնք խոսել են դրանց մասին։ Անդրեասին հիշատակել են և այլ մատենագիրներ՝ Ստեփանոս Ասողիկը, Կիրակոս Գանձակեցին, Սամվել Անեցին և ուրիշներ։ (էջ 124)։

253. Անդրեասի կազմած տոնացույց աղյուսակները քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում՝ նաև հայերի կողմից կիրառվել են 200 տարի՝ 352 թվականից մինչև 552 թվականը ներառյալ։ Քանի որ զատկի տոնը (և այլ տոներ) շարժական էր, ուստի որոշման դժվարություններ ու խառնաշփոթություն էին առաջանում։ (էջ 124)։

254. Ս. Օրբելյանը, այսպիսով, նախորդ մի շարք այլ մատենագիրների նման հայոց թվականի սահմանումը բացատրում է տոմարական դրդապատճառներով (Անդրեասի երկհարյուրյակի լրանալը, այնուհետև առաջացած հաշվարկման դժվարությունները)։ (էջ 124)։

255. Սա 6-րդ դարի նշանավոր տոմարագետ, աստղաբաշխ էաս Աղեքսանդրացին է։ (էջ 124)։

256. Էաս Աղեքսանդրացին այլ գիտնականների հետ կազմել է տոնացույց աղյուսակները 532 տարվա պարբերաշրջանների համար։ Նրա այդ տոնացույցը կարճ կերպով կոչվել է հինգհարյուրյակ։ Ս. Օրբելյանը նշում է, որ հայերը տոմարական խառնաշփոթությունն ուղղել են էասի հինգհարյուրյակի միջոցով, տասը թվականին։ Այս տասը թվականը հաշվվում է հայոց մեծ թվականից հետո։ Այլ աղբյուրներից ևս հայտնի է, որ Անդրեասի երկհարյուրյակի լրանալուց հետո հայերը ինը տարի տոմարի հաշվման

դժվարություններ են ունեցել, և ապա 10-րդ տարում որոշակիորեն ճշտում են կատարել Էասի գլխավորած գիտաժողովում ստեղծված հինգհարյուրյակի միջոցով։ Տե՛ս, օրինակ, Սամուէլի քահանայի Անեցւոյ «Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1893, էջ 74—75, Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Երևան, 1961, էջ 42—43 և այլն։ (էջ 124)։

257. Բնագրում՝ «Սուրբ Աստուած՝ որ խաչեցարն»։ Դվինի ժողովում հայոց մեծ թվականի հաստատման հետ քրիստոսի աստվածային մեկ բնությունը ընդունելը ընդծելու համար ավելացվել է այս արտահայտությունն ի հակադրություն քաղկեդոնականների, որոնք Քրիստոսի մեջ զուգահեռաբար ընդունել են նաև մարդկայինը։ Արտահայտությունն ունի և ուրիշ տարբերակ՝ «Անմահ՝ և խաչեցար» (համմտ. Մովսես Կաղանկատուացի, «Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1913, էջ 392)։ (էջ 124)։

258. Սա Դվինի մոգպետի որդին էր, որը, հավատալով մի հրաշքի, մկրտվեց և քրիստոնյա դարձավ, վերանվանվեց Հիզոքուզիա կամ Աստվածատուր։ Նահատակվեց 553 թվականին՝ սպանվելով պարսիկ մարզպան Վշնասպ Վահրամի ձեռքով։ Թե՛ Ս. Օրբելյանը և թե՛ այլ մատենագիրներ (Հովհ. Դրասխանակերտցի, Ասողիկ, Ս. Անեցի, Մ. Այրիվանեցի և այլն) այս անունը ներկայացնում են որոշ տարբերություններով։ Ոմանք (այդ թվում՝ Օրբելյանը) ստուգաբանում են կա՛մ «աստվածատուր», կա՛մ «աստուած ապրեցոյց» և այլն։ Հիզոքուզիա-ը պարսկերեն է՝ lazdbozed (ժառանգված պահլավերենից), նշ. «աստված է ազատում» (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 3-րդ, էջ 527)։ (էջ 125)։

259. Նահատակներին վերաբերող տողերը չկան մոսկովյան հրատարակության մեջ (տե՛ս ծան, էջ 70)։ (էջ 125)։

260. Սա Հովհաննես 2-րդ Գաբեղյան կաթողիկոսն է, որը, հաջորդելով Ներսես 2-րդ Աշտարակեցի կամ Բագրեւանդցի կաթողիկոսին, աքոռակալել է 557—574 թթ.։ (էջ 125)։

261. Հովհաննես կաթողիկոսի մի գրության օրինակը բերված է Ս. Օրբելյանի սույն երկի ԻԲ գլխում։ (էջ 125)։

262. Սյունյաց եպիսկոպոս Տեր-Վրթանեսի մահվան թվականը ստույգ հայտնի չէ։ Մ. Բրոսեն Ս. Օրբելյանի երկի ֆրանսերեն թարգմանության համապատասխան ծանոթագրության մեջ նշում է 606 թվականը (անդ, էջ 61, ծան. 3)։ (էջ 125)։

263. Սա Սյունյաց Գրիգոր 2-րդ եպիսկոպոսն է, որը հաջորդել է Վրթանեսին։ Ծննդյան և մահվան թվականներն ստույգ հայտնի չեն։ Մ. Բրոսեն մահվան թվականը նշում է 621-ը (ֆրանս. թարգմ., էջ 61, ծան. 3), որը հավաստի չէ։ (էջ 125)։

264. Սյունյաց եպիսկոպոս Քրիստափորի ծննդյան և մահվան թվականները ստույգ հայտնի չեն։ Մ. Բրոսեն նրա մահվան թվականը դնում է 631-ը (ֆրանս. թարգմ., էջ 61, ծան. 3), որի հավաստումը հայտնի չէ։ Հայտնի է, որ նա մասնակցել է Դվինի 608 թ. ժողովին։ (էջ 125)։

265. Մովսես 2-րդ Եղվարդեցի կաթողիկոսը վախճանվել է 604 թ.։ (էջ 125)։

266. Վրթանես Քերթողը Մովսես 2-րդ Եղվարդեցի կաթողիկոսից հետո կաթողիկոսական տեղապահ է եղել 604—607 թթ.։ (էջ 125)։

267. Այսինքն՝ 607 թվականին։ (էջ 125)։

268. Քառասնորդի (քառասնորդք) պասը հաջորդում էր բարեկենդանին։ Նաև կոչվում է մեծ պաս։ (էջ 125)։

269. Ծառազարդարի կամ ծաղկազարդի տոնն ընկնում էր զատիկի նախընթաց կիրակի օրը։ Կոչվել է նաև արմավենյաց տոն, ինչպես և անվանում է Ս. Օրբելյանը։ (էջ 126)։

270. Բնագրում՝ յաւուր օղոգոմեի։ Ողոգոմէն հունարեն τυσσγουμένη բառն է. նշ. «օրհնյալ, բարեբանյալ»։ (էջ 126)։

271. Սա Աբրահամ 1-ին Աղբաթանեցի կաթողիկոսն էր։ Աթոռակալել է 607—615 թթ.։ (էջ 126)։

272. Սա 10-րդ դարի մատենագիր Ուխտանեսն է։ Նրա Պատմության 2-րդ մասը նվիրված է հայոց եկեղեցուց, վրաց եկեղեցու բաժանվելուն։ Գիրքը լրիվ չափով չի հասել մեզ։ Պահպանվել են երկի 1-ին մասը և 2-րդը՝ կիսատ, իսկ 3-րդ մասն ամբողջովին չկա։ Հմմտ. Ուխտանէս եպիսկոպոս, «Պատմութիւն Հայոց», Վաղարշապատ, 1871։ (էջ 126)։

273. Ս. Օրբելյանի կողմից հիշատակված Մաքենոցաց վանքի վանահայր Սողոմոնի թուղթն օգտագործված է Մ. Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» գրքի 2-րդ հատորի ԽԸ գլխում (Թիֆլիս, 1913, էջ 309—310)։ Պատմիչն ամենուրեք գրում է Սաղոմօն։ Մենք բերում ենք Սողոմոն ձևով։ (էջ 126)։

274. Սա 9-րդ դարի կրոնական նշանավոր գործիչ Մաշտոցն է, որը կոչվել է նաև Եղիվարդեցի կամ Սևանցի։ Մնվել է 833 թ.։ Կրթություն է ստացել նախ իր հոր, ապա՝ Մաքենոցաց վանքի վանահոր մոտ (տե՛ս ծան. 291), որտեղից 860 թվականին տեղափոխվել է Սևան։ Սյունյաց Մարիամ իշխանուհու առաջարկությամբ շինել է Սևանի Առաքելոց վանքը։ (871 թ.)։ Գրել է պատմական մի երկ, թղթեր, վերջիններից մեկն էլ՝ ինչպես նշվում է, Գեորգ 2-րդ կաթողիկոսի (Գառնեցի) պահանջով, նրան էլ հաջորդեց որպես կաթողիկոս 897 թ., բայց աթոռակալեց միայն յոթ ամիս։ Գերեզմանը գտնվում է Գառնիում։ (էջ 126)։

275. Սա Գեորգ 2-րդ Գառնեցի կաթողիկոսն է։ Աթոռակալել է 877—897 թ.։ (էջ 126)։

276. Տե՛ս ծան. 271։ (էջ 126)։

277. Խոսքը Դվինի նշանավոր այն ժողովի մասին է, որ տեղի է ունեցել 608 թվականին։ (էջ 126)։

278. Խոսքը վրաց եկեղեցու՝ քաղկեդոնականություն ընդունելու և դավանության միությունից բաժանվելու մասին է։ (էջ 126)։

279. Տե՛ս ծան. 272։ (էջ 126)։

280. Պարսից Խոսրով 2-րդ թագավորն էր, որ գահակալել է 590—628 թթ.։ (էջ 126)։

281. Փարիզյան հրատարակության մեջ՝ Յուստինեոսի, մոսկովյանում՝ Յուստինիանոսի։ Նշված չէր կարող լինել ո՛չ Հուստինիանոս 1-ին բյուզանդական կայսրը (527—565 թթ.), ո՛չ էլ Հուստինիանոս 2-րդը (685—695

թթ.)։ Եթե խոսքը վերաբերում է Հուստինոս (Յուստինոս) 2-րդ կայսերը, ապա պետք է ասել, որ նրա գահակալության ժամանակը ևս չի համընկնում այն ժամանակամիջոցին, որի մասին այստեղ գրում է պատմիչը։ Հուստինոս 2-րդ կայսրը գահակալել է 565—578 թթ.։ (էջ 126)։

282. Այս Սմբատ Բագրատունին հայտնի է եղել իր քաջագործություններով ու հաղթանակներով։ Նրա գործունեությունն ընկնում է պարսից Խոսրով 2-րդի ժամանակներում։ Պարսից Խոսրով 2-րդ թագավորը նրան նշանակել էր Վրկան աշխարհի (Հիրկանիա) մարզպան։ Այդ պատճառով էլ մատենագրության մեջ հաճախ հիշվում է Վրկաց կամ Վրկան մարզպան մականունով։ Կոչվել է նաև Խոսրով Շում։ Վախճանվել է 617 թ.։ (էջ 127)։

283. Վրթանես Քերթողը հայոց կաթողիկոսական տեղապահ է եղել 604—607 թթ.։ (էջ 127)։

284. Բասենը կամ Բասյանը Պատմական Հայաստանի Այրարատյան նահանգի 1-ին գավառն էր՝ 2525 քառակուսի կիլոմետր տարածքով (Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 44), ընկած Կարկինից արևելք։ Հետո բաժանված է եղել Վերին և Ներքին Բասեն գավառակների, որոնցից առաջինը կոչվել է նաև Անբիայտ, իսկ երկրորդը՝ Վանանդ։ (էջ 127)։

285. Տե՛ս ծան. 264։ (էջ 127)։

286. Ուշտունիքը Վասպուրականի նահանգի 1-ին գավառն էր՝ 875 քառակուսի կիլոմետր տարածությամբ (Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ. էջ 79)։ Մինչև Դվինի այդ ժողովը այդտեղի եպիսկոպոսն էր Աբրահամը (տե՛ս ծան. 271)։ (էջ 127)։

287. Հմմտ. ծան. 233։ (էջ 127)։

288. Խոսքը բյուզանդական կայսր Մորիկի մասին է։ Նա թագավորել է 582—602 թթ.։ Հայտնի էր դաժանություններով։ Վարել է հայակործան քաղաքականություն։ (էջ 127)։

289. Սա Հովհան Մայրավանեցին է, որ նախատական ձևով կոչվել է նաև Մայրագոմեցի։ 7-րդ դարի 1-ին կեսի կրոնական նշանավոր գործիչ էր։ Դավանաբանական հարցերի ժամանակի ամենանշանավոր տեսաբանն է եղել Դվինի ս. Գրիգոր եկեղեցու փակակալն էր։ Կոմիտաս կաթողիկոսը նրան հանձնեց տեղապահությունը (621—628 թթ.)։ Երբ եզր կաթողիկոսը ստիպված հարեց քաղկեդոնականությանը, Հովհանը հանդիմանեց նրան։ Գժտություն առաջացավ։ Եզրը նրան կոչեց Մայրագոմեցի։ Հովհանը դավանանքի մեջ դեմ էր ամեն զիջման։ Նա ծայրահեղական էր։ Դրանից էլ գալիս էր նրա նկատմամբ ցուցաբերվող բացասական վերաբերմունքը։ Ս. Օրբելյանը, հենվելով համապատասխան աղբյուրի վրա, իրավացիորեն արդարացնում է նրան։ Կյանքի վերջին տարիներին քաշվել է Բշնիի Մայրոց վանքը (որտեղից էլ Մայրավանեցի անվանումն է), այստեղից էլ հալածվելով գնացել է Ճգնելու Գարդման գավառում, որտեղ և մեռել է։ (էջ 127)։

290. Այս վանքը մեր մատենագրության ու վիմագրության մեջ անվանվել է նաև այլ տարբերակներով՝ Մաքենոց, Մաքենեաց, Մաքենեաստից։ Մատենագրական տվյալները նրա մասին հասնում են մինչև 7-րդ դարը։ Գտնվում է այժմյան Վարդենիսի շրջանում, Մաքենիս (Չիլակլու) գյուղի հզրին, գետակի բարձրադիր աջ ափին։ Այս վանքի հիմնական եկեղեցին ժամանակի ընթացքում բազմիցս ենթարկվել է վերանորոգումների և մասնակի փլվածք-

ներով մինչև այժմ էլ կանգուն է քանդված պարսպի ներսում (մեր վերջին այցելությունը՝ 1981 թ. մայիսի 9-ին)։ (էջ 127)։

291. Ինչպես գրում է պատմագիրը, այդպես է կոչվել Մաքենոցաց միաբանության նշանավոր առաջնորդը, որը թուղթ է գրել քաղկեդոնականության դեմ։ Տե՛ս նաև ծան. 273։ (էջ 127)։

292. Այդ չորս աթոռներն ու պատրիարքություններն էին Ալեքսանդրիայինը (Մարկոս ավետարանիչի աթոռը), Անտիոքինը (Մատթեոսի աթոռը), Հռոմինը (Ղուկասի աթոռը) և Եփեսոսինը (Հովհաննեսի աթոռը)։ Սրանք լրիվ նշված են Ս. Օրբելյանի օգտագործած սկզբնաղբյուրում, որ բերված է Մ. Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհ»-ում (տե՛ս անդ, էջ 309, նաև՝ Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ Խոսրով Թորոսյանի, Երևան, 1975, էջ 135, 585, ծան. 145)։ (էջ 128)։

293. Սա Սյունիքի Դավիթ 1-ին եպիսկոպոսն է։ Ձեռնադրվել է 607 թ.։ Հաջորդել է Քրիստափորին և աթոռակալել մինչև 634 թվականը, ստացել է մետրոպոլիտության աստիճան։ (էջ 128)։

294. Նկատի ունի տիեզերական երեք ճշմարտադավան ժողովները՝ Նիկիայի, Կոստանդնուպոլսի և Եփեսոսի։ Տե՛ս նաև ծան. 234 և 243։ (էջ 128)։

295. Լևոն (կամ Լեոն) 1-ինը Հռոմի պապն էր՝ ընտրված 440 թ.։ Պատվիրակների միջոցով մասնակից դարձավ Քաղկեդոնի ժողովին։ Ընդունելով նրա որոշումները՝ հատուկ նամակով (մեզանում կոչվել է «Տոմար Լևոնի») հաստատեց Քրիստոսի մեջ երկու՝ մարդկային և աստվածային բնույթյան ընդունելու զաղափարը։ Հայ եկեղեցին նզովել է նրան։ (էջ 128)։

296. Համմտ. սույն երկը, գլ. ԻԲ։ (էջ 129)։

297. Սա այն Կյուրիոնն էր, որի առաջնորդության ժամանակ վրացական եկեղեցին բաժանվեց հայ եկեղեցուց։ (էջ 129)։

298. Քաղաք էր Եփրատ ափին։ (էջ 129)։

299. Մովսես 2-րդ Եղվարդեցի կաթողիկոսն է։ Տե՛ս նաև ծան. 251։ (էջ 129)։

300. Ըստ կրոնական ավանդության՝ Եղիշեն կամ Եղիշան Թադեոս առաքյալի աշակերտն էր, որ Երուսաղեմում օծվեց եպիսկոպոս և եկավ Աղվանք՝ քարոզելու, քրիստոնեություն տարածելու։ Այստեղ էլ նահատակվեց։ Նրա մասին պատմում է Մ. Կաղանկատվացին (համմտ. անդ, 1-ին, Ջ)։ (էջ 129)։

301. Կանգրաց (Քերևս ճիշտ կլիներ Կանգարաց) լեռը գտնվում է Կանգարք գավառում, իսկ վերջինս մտնում էր Գուգարքի բդեշխության մեջ։ (էջ 129)։

302. Ցուրտավի եպիսկոպոս Մովսեսը ձեռնադրվել էր Կյուրիոնի կողմից 599 թ.։ Տաշիրքի (Լոռի) Մեհենկերտ գյուղից էր (ծն. 570 թ.)։ Երբ Կյուրիոնն ընդունեց քաղկեդոնական դավանանքը, նա, ամուր մնալով իր դավանանքին ու մերժելով քաղկեդոնականությունը, հեռացավ Կյուրիոնից, եկավ Հայաստան, Հովհաննավանք ու համախներով ջանում էր իր համայնքը հեռու պահել քաղկեդոնականությունից։ (էջ 130)։

303. Սյունիքի մետրոպոլիտ Դավիթը նույն Դավիթ եպիսկոպոսն էր։ Տե՛ս ծան. 293։ (էջ 130)։

304. Սա Հայոց Եղիա 1-ին Արճիշեցի կաթողիկոսն էր։ Աթոռակալեց 703—717 թթ.։ Հայտնի է քաղկեդոնականության դեմ մղած պայքարով։ Սա էր, որ գնաց Աղվանք և կարգալույծ արեց Ներսես կաթողիկոսին՝ քաղկեդոնականությանը հարած լինելու և անձնական վատ վարքի պատճառով։ Նույնիսկ ամիրապետին դիմեց, զորախումբ բերելով ճնշեց նրա խռովությունը։ (էջ 130)։

305. Վկայակոչվում է Հովհաննես Դրասխանակերտցին։ Այդ մասին այս պատմագիրը նշում է իր երկի մեջ։ Համմտ. «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 47։ (էջ 130)։

306. Պատոճգրնտես բառի մասին տե՛ս ծան. 112։ (էջ 131)։

307. Մետրոպոլիտը մայրաքաղաքի արքեպիսկոպոսն է կամ եկեղեցական թեմի առաջնորդը՝ հատուկ բարձր աստիճանով։ Մետրոպոլիտ (բնագրում՝ մետրապոլիտ) բառը հունական փոխառություն է՝ μητροπολίτης նշ. «մայրաքաղաքացի», որի հիմքում ընկած են μήτηρ «մայր» և πόλις «քաղաք» բառերը։ (էջ 131)։

308. Տե՛ս ծան. 274։ (էջ 131)։

309. Տե՛ս ծան. 275։ (էջ 131)։

310. Ըստ քրիստոնեական կրոնի՝ դա կոչվում է մարդեղություն, ինչպես որ տրված է բնագրում։ (էջ 131)։

311. Հունարեն πατριάρχης «նահապետ, հայրապետ» բառն է՝ կազմված πατρία «ցեղ, ընտանիք (սա էլ՝ πάτηρ «հայր» բառից) և ἄρχω «իշխում եմ» բառերից։ Պատրիարքը քրիստոնեական կրոնի մեջ հոգևոր բարձրագույն աստիճանն է։ (էջ 132)։

312. Չորս ավետարանիչներն են Մատթեոսը, Մարկոսը, Ղուկասը և Հովհաննեսը, որոնք ունեցել են իրենց աթոռները։ Համմտ. ծան. 292։ (էջ 132)։

313. Նափորտը հոգևորականի զգեստ է. վերնաշապիկ, փիլոն, շուրջառ կամ վերարկու։ Նափորտ(ն) հունական փոխառություն է, գալիս է ἀναφορά-ից, որը կազմված է ἀνα և φέρω մասերից. նշ. «վրան կրել, տանել»։ (էջ 132)։

314. Եմիփորոնը երկար և լայն ժապավենաձև կտոր է՝ խաչերով ասեղնագործ զարդարված, որ բարձրաստիճան կրոնականները գցում են շուրջառի կամ փիլոնի վրայից՝ պատելով ուսերն ու կուրծքը։ Բառը հունարեն է՝ ὀμοφόριον նույն նշ., ծագում է ὄμος «ուս» և φερέω «կրում եմ» բառերից։ (էջ 132)։

315. Արքեպիսկոպոսը եպիսկոպոսների ավագն է, գլխավոր եպիսկոպոսը։ Ավելի ուշ ժամանակներում՝ հոգևորական աստիճան, որ շնորհում է կաթողիկոսը գլխավորապես թեմերի եպիսկոպոսներին։ Բառը հունական փոխառություն է՝ ἀρχιεπίσκοπος կազմված ἀρχή «գլուխ, սկիզբ, ղեկավար» և ἐπίσκοπος «եպիսկոպոս» բառերից։ (էջ 132)։

316. Կաթողիկոսը հայոց եկեղեցու ընդհանուր հոգևոր պետն է։ Կաթողիկոս բառը հունական փոխառություն է՝ καθολικός, նշ. «ընդհանրական»։ (էջ 132)։

317. Տե՛ս ծան. 307։ (էջ 132)։

318. Եպիսկոպոսը հոգևոր բարձր աստիճանավոր է, եկեղեցական մեկ թեմի կամ վիճակի հոգևոր գործերի կառավարիչ, ղեկավար. իրավունք ունի քահանա ձեռնադրելու։ Եպիսկոպոս հունարեն փոխառություն է՝ ἐπίσκοπος բուն նշ. «վերադիտող, տեսուչ, պահապան, լրտես»։ Կազմված է ἐπί «վրա» և σκοπέω «դիտում եմ» բառերից։ (էջ 132)։

319. Ուրարը երկար ժապավենաձև կտոր է՝ զարդերով։ Կրում են կրոնավորները։ Ιερατ(ն) բառը հունական փոխառություն է՝ ὠράριον, նշ. (սարկավագի կրած երկար ժապավենաձև կտոր»։ (էջ 133)։

320. Փակեղը այստեղ նույնացված է ուրարի հետ։ Մեր մատենագրության մեջ փակեղն բառը գործածված է տարբեր իմաստներով՝ «ծածկոց», «գլխանոց», «ուսանոց», «գոտի», «վեղար», «վակաս», «բաճկոն» և այլն։ Բառը հունական փոխառություն է՝ φάκελος բուն իմաստն է «կապոց, տրցակ»։ (էջ 133)։

321. Դիակոն հունարեն բառ է՝ διάκονος, որ նշանակում է «ծառա, սպասավոր, սարկավագ»։ (էջ 133)։

322. Բնագրում՝ հալաւ։ Սա Քեռևս հին ասուրական փոխադրություն է կամ սովորական մի բարբառային ձև է, որը չի ավանդված (տե՛ս «Հայերէն արմատական բառարան», համապատասխան բառահոդվածը)։ (էջ 133)։

323. Սկիհը արծաթե անոթ է՝ պատվանդանով, թաս, որի մեջ եկեղեցում լցնում են հաղորդության գինին։ (էջ 133)։

324. Մաղզման փոքրիկ սկավառակ է, որ դնում են սկիհի վրա, իսկ նրա վրա էլ՝ հաղորդության նշխարը։ (էջ 133)։

324 ա. Բնագրում՝ յամբոխին (փարիզյան հր., հ. 1-ին, էջ 153, մոսկովյան հրատ., էջ 80)։ Ուղղել ենք ըստ Ն. Բյուզանդացու (Նախնիք, էջ 817, մանրաժապավեն)։ Թարգմանել ենք ըստ այդ ուղղման։ (էջ 134)։

325. Անագնոս հունարեն բառ է՝ ἀναγνώστης «ընթերցող»։ Ծագում է ἀναγινγνώσκω «կարդում եմ, վերծանում եմ» բառից։ (էջ 134)։

326. Աղաբողոնը կրոնավորի վերարկու է, կարճ փիլոն։ Մեր մատենագրության մեջ բառը հանդես է բերվել զանազան տարբերակներով՝ աղաբողոն, աղէբողովն, ձ աղաբղոն և այլն։ Հունարեն բառ է՝ ἀναβολή ἀναβόλαιος ἀναλαβος ձևերով։ (էջ 134)։

327 Փսաղտ կամ փսալտ հունարենից է՝ ψάλτης «սաղմոսերգու»։ (էջ 134)։

328. Բնագրում՝ մեսեղի, հունարենից է, μεσωδία բառից։ Նշանակել է «երգի միջնատուն»։ Հայերենում օգտագործվել է «երեկոյան սաղմոսերգության կցորդ» իմաստով։ (էջ 134)։

329. Սյունիքի եպիսկոպոս Մաթուսաղան հաջորդել է Դավթին՝ սկսելով աթոռակալել 634 թվականից։ Վախճանվել է 643 թ.։ (էջ 135)։

330. Այս Հերակլը Բյուզանդիայի Հերակլ 1-ին կայսրն է, որ գահակալել է 610—641 թթ.։ Սա էր, որ կարինում ժողով գումարից և հարկադրեց հայոց Եզր կաթողիկոսին ընդունել հունադավանություն։ (էջ 135)։

331. Կարնո ժողովը Բյուզանդիայի Հերակլ 1-ին կայսեր հարկադրանքով ու անմիջական մասնակցությամբ գումարվել է 633 թ.։ Նպատակն էր՝ ընդունել տալ, այսպես կոչված, միակամական դավանանքը, որ հունադավանություն էր։ (էջ 135)։

332. Հայոց Եզր կաթողիկոսն էր, Նիգ գավառի Փառաժնակերտ գյուղից։ Աթոռակալել է 630—641 թթ.։ Հերակլի հարկադրանքով ընդունեց նրա հրատարակած միակամական դավանանքը, որը հունադավանություն էր։ Դրանից հետո հայոց մեջ Եզրը դիտվել է քաղկեդոնական և հալածանքի ենթարկվել։ (էջ 135)։

333. Սա հայոց Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսն էր, որ աթոռակալել է 615—628 թթ.։ (էջ 135)։

334. Արշարունիքը Այրարատյան նահանգի 5-րդ գավառն էր։ Ընկնում էր Կաղզվանից հյուսիս, Երասխ գետի ձախ կողմում։ (էջ 135)։

335. Քրիստափոր 3-րդ Ապահունի կաթողիկոսը, որ աթոռակալել է 628—630 թթ. ու գահընկեց է արվել։ (էջ 136)։

336. Այսպես է անվանվել հունադավանությանը հարած լինելու պատճառով։ (էջ 136)։

337. Դավիթ Սահառունին 7-րդ դարի առաջին տասնամյակների ռազմական ու քաղաքական նշանավոր գործիչ էր։ Ըստ որոշ մատենագիրների (Ասողիկ, Կ. Գանձակեցի)՝ 30 տարի եղել է Հայաստանի մարզպան։ (էջ 136)։

338. Թեոդորոս Ռշտունին 7-րդ դարի քաջ ու հայրենասեր գործիչ էր։ Դավիթ Սահառունու արտաքսումից հետո քաջաբար պաշտպանել է հրկիրը, դիմադրել է թշնամիներին։ Արաբական առաջին արշավանքի ժամանակ հետապնդել է արաբ զորքերին։ Քաջագործության համար բյուզանդական կայսր կողմից նշանակվել է Հայաստանի պատրիկ։ Բայց ի վերջո դաշն է կնքել արաբների հետ (625 թ.)։ Վախճանվել է 658 թ.։ Ավելի մանրամասն տե՛ս Բ. Ն. Առաքելյան, «Ժամանակագրական դիտողություններ». «Տեղեկագիր» Արմֆանի, 1941, № 1 (6), էջ 61—64։ (էջ 136)։

339. Խոսքը իր աշակերտ Թեոդորոսի մասին է և ոչ թե Ռշտունու, ինչպես և նշվում է բնագրում։ (էջ 136)։

340. Մաթուսաղայի թուղթը բերված է Ս. Օրբելյանի այս երկի Ի֊ր գլխում։ (էջ 136)։

341. Խոսքը Հովհան Մայրագոմեցու (Մայրավանեցու) մասին է։ (էջ 136)։

342. Տե՛ս ծան. 295։ (էջ 136)։

343. Բառը հունարեն է՝ μουνί, նշ. «իգական անդամ»։ (էջ 136)։

344. Նկատի ունի այդ ժամանակ Հայաստանի ռազմական և վարչական գործերը տնօրինող Թեոդորոս Ռշտունուն։ Այստեղ տպագիր բնագրում (փարիզյան հրատ. հ. 1-ին, էջ 159, մոսկովյան հրատ., էջ 85) գրված է ասպետ (ասպետն)։ Ն. Բյուզանդացին առաջարկել է ուղղել սպարապետ (Նախնիք, էջ 954, մանրաժապավենից)։ (էջ 138)։

345. Սա Կողբ գյուղաքաղաքն է Այրարատյան նահանգի Ճակատք գավառում, որը հռչակված է իր աղահանքերով։ (էջ 138)։

346. Հովհան Մայրագոմեցու գործունեության, Եզրի հետ ունեցած հարաբերությունների, կրած հալածանքների մասին մանրամասն տե՛ս Հ. Քեռեդերյանի «Հովհան Մայրագոմեցի» աշխատությունը, Երևան, 1973։ (էջ 139)։

347. Հովհան 3-րդ Օձնեցի կաթողիկոսն էր։ Հայտնի է և Իմաստասեր մականունով։ Աթոռակալել է 717—728 թթ.։ Գումարել է Դվինի 7-րդ (720 թ.) և Մանազկերտի (726 թ.) ժողովները։ Պայքարել է քաղկեդոնականության, պատկերամարտ, երևութական և այլ աղանդների դեմ։ Հայաստանից դուրս է մղել հույն կրոնավորներին ու նրանց հետևորդներին։ Որպես մատենագիր հայտնի է իր ճառերով, կանոններով, թղթերով, շարականներով։ Կազմել ու խմբագրել է «Կանոնագիրք Հայոց»-ը։ (էջ 139)։

348. Տե՛ս ծան. 329։ (էջ 147)։

349. Սա Սյունիքի եպիսկոպոս Աբրահամն էր, որ հաջորդեց Մաշտոցաղային՝ նրա մահվանից ութ տարի հետո (7-րդ դար)։ Ըստ Ս. Օրբելյանի՝ աթոռակալել է երեսուն տարի (651—681 թթ.)։ (էջ 147)։

350. Սյունիքի Տեր-Հովսեփ 1-ին եպիսկոպոսն է։ Հաջորդել է Աբրահամին։ Գործել է 7-րդ դարի վերջին տասնամյակներում։ Աթոռակալման ստույգ թվականները հայտնի չեն։ Մ. Բրոսեն թեև նշել է 681—700 թթ. (սույն երկի ֆրանս. թարգմ., էջ 80, տողատակի ծան.), բայց ստույգ չեն։ (էջ 147)։

351. Սյունիքի Տեր-Հովհան 1-ին եպիսկոպոսն է։ Աթոռակալել է 689—711 թթ.։ (էջ 147)։

352. Տեր-Հովհան 1-ինին հաջորդած Տեր-Մովսես եպիսկոպոսն է, որը եղել է Ստեփանոս Սյունեցու ուսուցիչը։ (էջ 147)։

353. Տեր-Մովսեսին հաջորդած՝ Սյունիքի Անանիա 2-րդ եպիսկոպոսն է, որին Ստեփանոս Սյունեցին տարավ Եղիա կաթողիկոսի մոտ և ձեռնադրել տվեց։ Անանիա 2-րդը պաշտոնավարել է մինչև 725 թ.։ (էջ 147)։

354. Անանիա 2-րդին հաջորդած Հովհան(նես) 2-րդ եպիսկոպոսն է։ Աթոռակալել է 725—734 թթ.։ Սրան հաջորդեց Ստեփան Սյունեցին։ (էջ 147)։

355. Այս Ստեփանոսը որպես Սյունիքի եպիսկոպոս աթոռակալել է մեկ տարի՝ 735 թ.։ Նրա մասին պատմվում է Ս. Օրբելյանի սույն երկի հաջորդ՝ ԼԱ գլխում, որտեղ նշվում է և նրա եղերական մահվան թվականը՝ հայոց 184-ը (ընդհանուր՝ 735-ը)։ (էջ 147)։

356. Մաշտոցաղային հաջորդած եպիսկոպոսների աթոռակալման թվականների մասին Մ. Բրոսեն նշում է Ս. Օրբելյանի սույն երկի իր կատարած ֆրանսերեն թարգմանության 80-րդ էջի տողատակում, որտեղ կան անճշտություններ։ Մենք ըստ հնարավորին ճշտումներ ենք կատարել Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան»-ի հիման վրա, որտեղ իրենց հերթին օգտագործված են Մ. Օրմանյանի «Ազգապատում»-ի և ուրիշ ուսումնասիրությունների տվյալները։ Բացահայտ սխալի նմուշի համար ասենք միայն հետևյալը. եթե ընդունենք, որ ըստ Օրբելյանի տվյալի, Ստեփանոս Սյունեցին աթոռակալել է 735 թվականին, ապա ճիշտ չեն դուրս գալիս Անանիա 2-րդի և Հովհան(նես) 2-րդի աթոռակալման թվականները, Մ. Բրոսեի վերագրած թվականները՝ 729—736 և 736—745 թթ.։ Պարզ է, որ Ստեփանոս Սյունեցուն նախորդած եպիսկոպոսների աթոռակալման թվականները տասը տարով այս կողմն են բերված։ (էջ 147)։

357. Գիտական, մշակութային ու կրոնական այս նշանավոր գործիչ Ստեփանոս Սյունեցին Դվինի ավագ քահանայի որդին էր։ Բավական ժամանակ եղել է Գեղարքունիքի Մաքենոցաց վանքում։ Հայաստանից դուրս ուսանել է նաև Կոստանդնուպոլսում, Աթենքում, Հռոմում։ Վերադառնալով հայրենիք՝ ծավալել է լայն գործունեություն։ Գրել է բազմաթիվ աշխատություններ՝ մեկնություններ (դրանց թվում՝ և Դիոնիսիոս Թրակացու «Արվեստ քերականության» հայտնի աշխատության մեկնությունը), ճառեր, շարականներ։ Շարականների համար երաժշտություն է հորինել, եղածները խմբագրել, վերափոխել և այլն։ Կատարել է նաև թարգմանություններ։ (էջ 147)։

358 Ըստ հին կտակարանի՝ քերովբեն հրեշտակ է (բարձրագույն դասից)՝ մարդկային կերպարանքով, բայց թևավոր և բազմաչյա։ Պատվանդան

է ասծու ոտքի տակ, կատարում է նրա հրամանները։ Քերովբե բառը եբրայական ծագում ունի, հայերենին անցել է հունարենի միջոցով։ (էջ 148)։

359. Մաքենոցաց վանքի մասին տե՛ս ծան. 290։ (էջ 148)։

360. Բնագրում՝ էգոնոմոս։ Այս բառի մասին տե՛ս ծան. 201։ (էջ 148)։

361. Այսինքն համաշխարհային 701 թվականին (150+551=701)։ (էջ 148)։

362. Այսինքն՝ այն դավանանքի հետևող, որը Քրիստոսի մեջ երկու բնություն էր ընդունում։ (էջ 149)։

363. Ասպետ տիտղոսը սույն Սմբատ Բագրատունու ժամանակներում (8-րդ դար) ձեռք էր բերել և զինվորական բարձրաստիճան դեկավարի նշանակություն։ Բառի ծագման և մեզանում կիրառվելու մասին տե՛ս ծան. 71)։ (էջ 149)։

364. Բնագրում՝ «որ էր հմուտ արտաքին իմաստից»։ Հնում արտաքին իմաստ էին կոչվում այն գիտությունները, որոնք աստվածաբանությունից դուրս էին, չէին դասվում կրոնական գիտությունների շարքը, այսպես կոչված, աշխարհիկ գիտություններ էին։ (էջ 149)։

365. Խոսքը Կոստանդնուպոլսում գտնվող հռչակավոր տաճարի մասին է։ (էջ 150)։

366. Բնագրում՝ ճիպապատոս։ Բառը հունարեն է՝ ὕπατος «փոխարքա»։ Բյուզանդիայում նշանակել է պետական բարձր պաշտոնյա։ Օրբելյանի շարադրանքից երևում է, որ այս Դավիթը կայսերական սեղանապետ էր։ Հետագայում ճյուպապատոս բառը ձեռք է բերել դիվանագիտական իմաստ։ (էջ 150)։

367. Այստեղ հավանաբար խոսքը վերաբերում է աստվածաբան և եկեղեցական հայտնի գործիչ Դիոնիսիոս Աղեքսանդրացուն, որը Օրիգենեսի հետևորդներից էր։ Նա 232 թվականից Ալեքսանդրիայի դպրոցի և 247/8-ից Ալեքսանդրիայի եկեղեցու ղեկավարը դարձավ։ Գրել է աստվածաբանական աշխատություններ, թղթեր, նամակներ և այլն (հմմ. Ե. Տեր-Մինասեան, «Ընդհանուր եկեղեցական պատմութիւն», հ. 1-ին, ս. էջմիածին, 1908, էջ 158)։ Բայց պատմիչը չի հիշատակում, թե նրա ո՛ր գիրքն է թարգմանել Ստեփանոս Սյունեցին։

Հայտնի է նաև, որ Ստեփանոսը գրել է հույն նշանավոր քերական Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականութեան» երկի մեկնությունը։ Այն հրատարակված է Ն. Ադոնցի կողմից։ Տե՛ս Дионисиос фракийский и армянские толкователи, СПб, 1915, էջ 183—219։ (էջ 150)։

368. Գրիգոր Նյուսացին կամ Նիսեցին (361—396) հունական եկեղեցու հայրերից էր։ Մասնակցել է Կոստանդնուպոլսի 381, 382, 394 թվականների եկեղեցական ժողովներին։ Գրել է բազմաթիվ աշխատություններ։ Նրա գործերից 10—12-ը թարգմանված են հայերեն, որոնցից Ստեփանոս Սյունեցու մի թարգմանության մասին այստեղ հիշատակում է Ս. Օրբելյանը։ Դա գրված է մարդու էության ու կազմության մասին։ Այդ նկատի ունենալով վերը փակագծում ավելացրել ենք մարդու բառածևը։ (էջ 150)։

369. Տե՛ս ծան. 347։ (էջ 151)։

370. Խոսքը հարկադրաբար աղանդավոր դարձած եղբ կաթողիկոսի մասին է։ Տե՛ս ծան. 332։ (էջ 151)։

371. Դավիթ 1-ին Կոտայեցի կամ Արամոնեցի կաթողիկոսն է։ Աթոռա-

կալել է 728—741 թթ.։ Դվինում արաբների շահանալու պատճառով կաթողիկոսական աթոռը փոխադրում է Հայրենի Արամոնք (այժմ՝ Աբովյանի շրջանի Արամուս) գյուղը, այնտեղ կառուցում է եկեղեցի։ (էջ 151)։

372. Եթե պատմիչը «որ ունի գօրինակ գայս» ասելով նկատի է ունեցել Ստեփանոսի պատասխանի և Գերմանոսի թղթի վերլուծման պատճենը, ապա դրանից հետո պիտի տեղադրեր այն։ Բայց դա չկա, մինչև նշվում է «զԳրիգոոս խաղաղութիւնն առբերելով», որը թերևս վերնագիրն է։ (էջ 151)։

373. Այսինքն՝ Հոբի գիրքը, Եղեկիելի մարգարեությունը, որոնք Հին կտակարանի գլուխներից (գրքերից) են։ Ստեփանոսի մեկնությունները հասել են մեզ, միայն Արարածոց գրքի մեկնությունը կորած է։ Արարածոց-ը (Արարածոց գիրքը) նույնպես Հին կտակարանի գլուխներից մեկն է (1-ինը), որն ավելի տարածված է Ծննդոց (Գիրք ծննդոց) անվամբ։ (էջ 152)։

374. Ինչպես Մ. Աբեղյանն է գրում, Հարության օրհնությունները սկզբնապես եղել են տասը մարգարեական օրհնությունների կցուրդներ և հետագայում «կարգվել են» որպես Հանոնի օրհնություն։ Ժամերգության կանոնի հետ կապված այս գործը կատարել է Ստեփանոս Սյունեցին, որի մասին և կարդում ենք Ս. Օրբելյանի երկի այս մասում։ Տե՛ս «Հայոց հին գրականության պատմություն», գիրք 1-ին, Երևան, 1944, էջ 486։ (էջ 152)։

375. Կցուրդը սաղմոսերգությանը կամ օրհներգությանը կցվող համառոտ երգ է, որ երգվում է եկեղեցական արարողության ժամանակ՝ ըստ ավուր պատշաճի։ (էջ 152)։

376. «Ցինանց»-ը զատիկ տոներից մինչև հոգեգալստյան տոնն ընկած որոշ օրերի երգվող սաղմոսներ են, որոնց չափը և երգասացությունը լոթ հնաձայնիներով հարմարեցրել է Ստեփանոս Սյունեցին։ (էջ 152)։

377. Այսպես թարգմանեցինք բնագրի στιχολόγια—στίχος «ուտանավորի տող» և λόγος բան, խոսք» բառերից է)։ Նշանակել է «տուն առ տուն ուտանավոր ասելը, սաղմոսելը»։ Հայերենում իբրև եկեղեցական արարողության եզրույթ գործածվել է «փոխ առ փոխ սաղմոս ասելը» իմաստով։ (էջ 152)։

378. Բնագրում ձորակ է նշված, բայց Գառնու ձորը հայտնի է իր մեծությամբ, ձորակ չէ։ (էջ 152)։

379. Այստեղ պատմիչը զուգահեռ է անցկացնում Ստեփանոս եպիսկոպոսի սպանության և Աստվածաշնչի որոշ զրույցներով ներկայացվող դեպքերի միջև։ Աքաաբը Իսրայելի թագավորներից էր, որ իշխել է մ. թ. ա. 10-րդ դարում։ Հեզաբելը նրա կինն էր, որ ամեն կերպ ջանում էր հաստատել կռապաշտություն, եղիա Մարգարեի (Օրբելյանը նշում է Հեղիաս ձևով) կարգադրությամբ սպանվում են նրա քուրմերը, և նա դրանից զայրացած վճռում է վրեժխնդիր լինել (Գ. Թագ.)։ Իսկ պատմչի կողմից հիշեցվող Հերովդիադի դուստրը Հերովդիան էր, որի թելադրանքով բանտում գլխատվեց Հովհաննես Մկրտիչը, որը հանդիմանել էր նրան՝ հարազատ հորեղբոր հետ ամուսնանալու համար (Մատթ., ԺԴ, 3—9 և այլն)։ (էջ 154)։

380. Սա գտնվում է այժմյան Ագիգբեկովի շրջանում։ (էջ 154)։

381. Մինան լեռ է Արաբական թերակղզու վրա, Կարմիր ծովի մոտ։ Ըստ ավանդության այստեղ Մովսեսի ձեռքով ստեղծվեցին Իսրայելի օրենքները։

382. Նախորդի մասին տե՛ս ծան. 313։ (էջ 154)։

383. Այստեղ պատմիչն ուրիշների հետևողությամբ դիմել է ժողովրդական ստուգաբանության։ Նկատված է, որ Վայոց ձոր տեղանունը մեր մատենագրության մեջ հիշվում է այս դեպքից շատ վաղ և սրա հետ կապ չունի։ Կ. Շահնազարյանցը կապում է հնդկական Vayou քամու աստվածանվան հետ (փարիզյան հրատ., հ. 1-ին, էջ 333)։ Ավելի հավանական է նրա էթնիկական ծագումը։ Տե՛ս ծան. 16։ (էջ 155)։

384. Այս Թանահատի վանքը գտնվում է այժմյան Եղեգնաձորի շրջանի վերնաշեն գյուղից 6—7 կիլոմետր դեպի հարավ-արևելք ընկած լեռան լանջի սարավանդի վրա։ Այժմյան կանգուն եկեղեցին կառուցվել է հետագայում, 1279 թվականին։ Համմտ. ծան. 380։ Կոչվում է նաև Թանատի վանք։ (էջ 155)։

385. Այսինքն՝ Թանից կտրվածներ։ Սա նշանակում է, որ միաբանները անվելիս Թանից անդամ զերծ են մնացել։ Վանքի անվանումը պատմիչը դրանով է բացատրում (համմտ. գլ. ԼԴ)։ Սա թերևս ժողովրդական ստուգաբանություն է։ Նույնանուն վանք կա նաև Սիսիանի շրջանում։ (էջ 155)։

386. Ընդհանուր թվականությամբ հաշված՝ լինում է 1279 թվականը։ Հիշատակվածը Եղեգնաձորի Թանահատի վանքի այժմյան կանգուն եկեղեցին է։ (էջ 155)։

387. Այսինքն՝ ընդհանուր 735 թվականին։ Եթե, իրոք, սա ստույգ է, ապա Մ. Բրոսեն 10 տարով ուշ է ցույց տալիս Հովհան 2-րդ եպիսկոպոսի աթոռակալման ժամանակամիջոցը (տե՛ս նրա ֆրանս. թարգմ., էջ 80), որին հաջորդել է Ստեփանոսը։ Համմտ. ծան. 355—356։ (էջ 155)։

388. Բնագրում՝ Մեթոդ։ (էջ 156)։

389. Իսմայիլը Արաբիայի հին անուն է. ըստ բիբլիական ավանդության՝ Աբրահամի Իսմայիլ որդու անունից։ (էջ 156)։

390. Խոսքը արաբական անապատի մասին է։ Տերիր կամ Տարիր, (Թերեր, Թաթրեր) անունով է կոչվել Արաբիայի Մեդինե(ա) քաղաքը, ուր փախել և ապաստանել էր Մահմեդը 622 թ.։ (էջ 156)։

391. Գաբաոնը Հին Հրեաստանի քաղաքներից մեկն էր։ (էջ 156)։

392. Մովսեսը հին հրեական հոչակավոր մարգարե և օրենսդիր էր, որը, ըստ ավանդության, Եգիպտոսից հրեաներին առաջնորդեց դեպի Ավետյաց երկիր։ Նրան են համարում Հին կտակարանի առաջին հինգ գրքերի հեղինակը։ (էջ 157)։

393. Ավետյաց երկիր է համարվել Պաղեստինը։ (էջ 157)։

394. Կապադովկիան հին հայոց մեջ կոչվել է նաև Գամիրք (Փոքր Հայք)։ Նրա սահմաններն էին՝ արևմուտքից՝ Փոյուգիան, հյուսիսից՝ Պոնտոսն ու Գաղատիան, հարավից՝ Կիլիկիան ու Սիրիան, արևելքից՝ Մեծ Հայքը։ Գլխավոր քաղաքներն էին Կեսարիան, Սեբաստիան և Մելիտինեն։ (էջ 157)։

395. Սա Միջերկրական ծովի հայտնի Սիցիլիա կղզին է։ (էջ 157)։

396. Հուդայի երկիրը նախապես համարվում էր Հրեաստանի հարավ-արևելյան մասը, որ բաժին էր ընկել հուդա հրեական ցեղին, որի անունով էլ կոչվել է (ավանդությունը սա էլ բխեցնում է Հակոբի որդի Հուդայի անունից)։ Հետագայում անվանման իմաստը ավելի ընդլայնվեց՝ տարածվելով ամբողջ հրեական երկրի վրա։ (էջ 157)։

397. Խոսքը կռապաշտության մասին է։ Բահաղը կուռք էր, որի պաշ-

տամունքը տարածված էր Փյունիկիայում, Բաբելոնում և այլուր։ Այս հատվածում խոսվում է այն իսրայելացիների մասին, որոնք չընդունեցին այդ կռապաշտությունը։ (էջ 159)։

398. Փարիզյան հրատարակության այս մասում պահպանում է «եօթնապատիկ քան զոր էր լուծ նոցա ի վերայ նոցա» մասը, որը կա մոսկովյան հրատարակության մեջ (էջ 111), ըստ որի էլ լրացրինք ու թարգմանեցինք։ (էջ 161)։

399. Գաղատիան գտնվում էր Փոքր Ասիայում, Բյուզանդիայից հարավ և հարավ-արևելք։ (էջ 161)։

400. Այստեղ հավանաբար բնագրային աղավաղում կա։ № 6271 լավագույն ձեռագրի հետ համեմատությունը ցույց տվեց, որ տպագիր բնագրի «և մնացեալքն ի գերութենէ մի՛ ելցեն յաշխարհացն յիւրեանց յերկիր» նախադասության յաշխարհացն բառաձևի փոխարեն ունի յաշխարհն (էջ 103 բ), որի վրա էլ հենվել ենք թարգմանելիս։ (էջ 161)։

401. Գոգը և Մագոգը ժողովուրդների անուններ են, որոնցով կոչվել են նաև համապատասխան երկրները։ Դրանք ստույգ հայտնի չեն գիտությանը։ Զանազան կարծիքներ կան։ Ըստ առավել տարածված կարծիքի՝ դրանք Ասիայի ու Եվրոպայի հյուսիսում բնակվող ժողովուրդներ էին կամ թերևս Հյուսիսային Կովկասից էին։ Գոգ անունով հիշվում է նաև նրանց առաջնորդը (հմմտ. Եզեկ., ԼՀ, ԼԹ)։ (էջ 162)։

402. Թվարկված այս ժողովուրդների զգալի մասը հիշատակված անուններով գիտությանը որոշակի հայտնի չէ։ Իսկ մի քանիսը հայտնի են, ինչպես՝ ալանները, հոները, սարմատները և այլն։ (էջ 162)։

403. Խոսքն Ալեքսանդր Մակեդոնացու մասին է։ (էջ 162)։

404. Ամրացված նավահանգստային քաղաք Միջերկրական ծովի ափին։ Կոչվում է նաև Յաֆֆա։ Հետագայում խաչակիրների ափ իջնելու գլխավոր տեղն էր։ (էջ 163)։

405. Անհասկանալի է մնում բնագրի «եւթն և կէս, որք են ամք տասն և կէս» մասը։ Թվում է, թե բնագրային աղավաղում չկա։ Այդպես են և փարիզյան ու մոսկովյան տպագրերում և № 6271 ձեռագիրը (էջ 108 ա)։ Մինայն փարիզյանում հրատարակիչը եւթն և կէս–ից հետո փակագծում ավելացրել է ամ բառը։ Գուցե հստակ ոճով յոթ ու կեսը հավասարեցվել է տասին, այսինքն՝ յոթը և նրա կեսը հավասար են տասը և կեսի (7 + 3,5 = =10,5)։ (էջ 163)։

406. Քորագինը, Բեթսաիդան և Կափառնաումը Գալիլիայի քաղաքներից են։ Հիշատակվում են Աստվածաշնչում։ (էջ 163)։

407. Այս գլխում հիշատակվող մի շարք դեպքերի մասին պատմվում է Մովսես Կաղանկատվացու անունով հայտնի «Պատմութիւն Աղուանից աշխարհի» գրքի 3-րդ մասի Ի գլխում (Թիֆլիս, 1913), բայց այնտեղ դրանք ներկայացված են որպես 9-րդ դարի անցքեր։ Հիմնական անցքերը նշվում են 270 (=821) և 276 (=827) թվականներով։ Համմտ. նաև վերջերս հրապարակված քննական բնագիրը, էջ 324—328։ (էջ 165)։

408. Սա հավասար է ընդհանուր (համաշխարհային) 727 թվականին։ Սակայն հիշյալ դեպքը «Պատմութիւն Աղուանից աշխարհի» գրքում ներկայացված է հայոց 270 թվականով, որը լինում է ընդհանուր 821 թվականը։ (տե՛ս անդ, 3-րդ, Ի, էջ 374)։ (էջ 165)։

409. Ս. Օրբելյանի նշած Ավարանշան մականվանյալ այս Մրվանը Մովսես Կաղանկատվացու գրքում հիշատակված է Սևադա, մականունն էլ՝ Սևառնշան (էջ 374)։ Ս. Օրբելյանի երկում 8-րդ դարի գործիչը շփոթված է 9-րդ դարի գործչի հետ։ Ճիշտ է նշված Մրվանի արշավելու ժամանակը, բայց նրան են վերագրվել հաջորդ դարի մեկ այլ ոստիկանի հետ կապված դեպքերը։ (էջ 165)։

410. Իշխանաց իշխան այս Վասակը Մովսես Կաղանկատվացու գրքի տվյալներով պարսիկ զորավար Բարանի հետ միացած՝ կռվել է ոչ թե արաբ զորավար Մրվանի, այլ՝ Սևադայի դեմ, վախճանվել է նույն տարում, այսինքն՝ նույն գրքում նշված 270 (821) թվականին։ Դա ճիշտ է, բայց Ս. Օրբելյանը ցույց է տալիս 176 (727) թվականը, երբ դա չէր կարող տեղի ունեցած լինել։ (էջ 165)։

411. Այս Ներսես Սյունին Վասակի (ծան. 410) թոռն էր, Փիլիպեի որդին։ Ըստ Կաղանկատվացու գրքի՝ 9-րդ դարի գործիչ էր, ըստ Օրբելյանի՝ 8-րդ դարի։ (էջ 165)։

412. Աղվանքի իշխան Ստեփանոսի որդի Վարազ Տրդատը Մովսես Կաղանկատվացու և Մխիթար Այրիվանեցու կողմից հիշատակվում է որպես 9-րդ դարի առաջին քառորդի գործիչ։ Ս. Օրբելյանը նրան մեկ դարով վաղ է ներկայացնում՝ սպանությունը դնելով 727 թվականին և սխալվում է։ Յ. Մարկվարտն ընդունում է 821—822 թթ. ժամանակամիջոցը (տե՛ս Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան» հ. 5-րդ, Երևան, 1962, էջ 69)։ (էջ 165)։

413. Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» գրքում այս դեպքը պատմվում է ոչ թե Բաղասականի, այլ Բաղաց գավառի վերաբերյալ (3-րդ, Ի, էջ 375)։ (էջ 166)։

414. Տե՛ս ծան. 17։ (էջ 166)։

415. Տե՛ս ծան. 290։ (էջ 166)։

416. Մաքենոցաց վանքի վանահայր, հայրերի հայր կոչված այս Սողոմոնի մասին Ս. Օրբելյանը հիշատակում է նաև իր Պատմության Իե, Իզ, ԼԱ գլուխներում։ Այստեղ հիշելով նրան՝ խոսում է նրա նույնանուն աշակերտի մասին, որը վանքից կրոնավորների մի մասին տարել է Շիրակի Զրեսկ վանքը։ (էջ 166)։

417. Մեր բանասիրության մեջ այն կարծիքն է հայտնվել, թե Մաքենոցաց վանքի առաջնորդ, հայրերի հայր կոչված Սողոմոնն է միաբանների խումբը տարել Զրեսկ (Մ. Օրմանեան, «Ազգապատում», Կոստանդնուպոլիս, 1912, էջ 911), այնինչ Ս. Օրբելյանը գրում է, որ դա նրա նույնանուն աշակերտն է եղել։ Եթե դա Սողոմոն Գառնեցին էլ չէր, որ Զրեսկում ճգրտելուց հետո 791 թ. ընտրվեց կաթողիկոս և հաջորդ տարին մեռավ, ապա մեկ ուրիշ Սողոմոն էր։ Հ. Աճառյանը նկատում է, որ այդ տեղափոխությունը չի կարելի կապել Բարանի արշավանքի հետ, որը եղել է 839 թվականին։ Նա, վկայակոչելով Ն. Ակինյանի մի աշխատությունը, հարցակատնով նշում է, թե արդյոք չի՞ եղել մի ուրիշ Սողոմոն (հմմտ. «Հայոց անձնանունների բառարան», հ. 4-րդ, էջ 568—569)։ (էջ 166)։

418. Շիրակ գավառի Զրեսկ վանքի հիմնադրումը ոմանք կապում են

Մաքենոցաց վանքի միաբանների մի մասի՝ այդ կողմերը տեղափոխվելու հետ։ Բայց, ըստ երևույթին, իրականում այդպես չէ։ Չէ՞ որ Օրբելյանի սուն երկում պարզ ասված է. «... Գնացին ընդ հօրն Սաղամի, ոչ առաջնոյն որ հարանց հայր կոչեցաւ, այլ ընդ նորին աշակերտին, ի գաւառն Շիրակայ, ի սուրբ ուխտն Զրէսկ» (փարիզյան հրատ., հ. 1-ին, էջ 203)։ Ուրեմն՝ Զրեսկ վանքը ոչ թե նոր էր հիմնադրվում, այլ արդեն կար, այլապես չէր ասվի «ի սուրբ ուխտն Զրէսկ»։ Իմիջիայլոց, Հ. Աճառյանի մեջբերումից պակասում է մեր ընդգծած այդ արտահայտությունը (Հայոց անձնանունների բառարան, հ. 4-րդ, էջ 568)։ (էջ 166)։

419. Ջրվշտիկ վանքը նույն ծեղիշ առաքյալի վանքն է, որ գտնվում է այժմյան Ադրբ. ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի Մարտակերտի շրջանում։ Նրա ընդհանուր նկարագրի և ներկա վիճակի մասին տե՛ս Շ. Մ. Մկրտչյան, «Լեռնային Ղարաբաղի պատմա-հնարտարապետական հուշարձանները», Երևան, 1980, էջ 54—56։ (էջ 166)։

420. Խոսքը վերաբերում է Գրիգոր Սուփան 2-րդին, որը Վասակ Գաբուտի որդին և Սմբատ 1-ինի քեռորդին էր։ 9-րդ դարի երկրորդ կեսի և 10-րդ դարի սկզբների գործիչ է եղել։ Եղել է Սիսական տան նահապետ և Գեղարքունիքի իշխան։ Շինարար անձնավորություն էր։ Նորոգել է Մաքենոցաց վանքը և կառուցել հիմնական եկեղեցին, շինել է նաև Կոթի եկեղեցին։ Անձնատուր է եղել Յուսուփին։ Թունավորմամբ սպանվել է 911 թվականին։ (էջ 166)։

421. Այստեղ խոսքը վերաբերում է Ծղուկ գավառի Թանահատի (Թանատեի, Թանատաց) վանքին։ Համանունության պատճառով հայագիտության մեջ բավական ժամանակ շփոթվել են Վայոց ձորի և Ծղուկի երկու տարբեր վանքերը։ Հնագետ Ս. Գ. Բարխուդարյանը պարզել է, որ Ծղուկի համանուն վանքը այժյան Սիսիանի շրջանի Սիսիան գետի վերին հոսանքում, Արավուս գյուղից 3—4 կիլոմետր հարավ, անտառապատ լեռան լանջի վրա գտնվող հուշարձանն է։ Տեղացիները կոչում են Կարմիր վանք (Ղըզլ վանք)։ (Տե՛ս «Պատմահնագիտական-տեղագրական դիտողություններ». «ՀՍԽՀ պատմության և գրականության ինստիտուտի տեղեկագիր», 1-ին գիրք, պատմության և գրականության ինստիտուտ, Երևան, 1936, էջ 92, 98—103, այլև՝ «Դիվան հայ վիմագրության», պրակ 2-րդ, էջ 94—95, պրակ 3-րդ, էջ 71)։ (էջ 166)։

422. Վայոց ձորի Թանահատի նույնանուն վանքից տարբերելու համար պատմիչը գրել է այս տողերը. «Որ կայ ի վերնոյ Սիւնեաց յատորոտ լերինն ի բարձրաւանդակի միոջ ի մէջ անտառին»։ Վանքի անվան համար հիշել, որ տոլգիր ընագրում նշված է «Վասն Թանահատի վանիցն...» իսկ № 6271 ձեռագրում՝ «Վասն Թանատեա վանիցն...» (էջ 111 բ)։ (էջ 166)։

423. Այստեղ էլ անվանումը նույն ձևով է բացատրում, ինչպես Վայոց ձորի Թանահատի վանքի համար։ Թանահատ են կոչվել նախ կրոնավորները, այստեղից էլ վանքը։ Համմտ. ծան. 385։ (էջ 167)։

424. Այստեղ հիշատակվող այս պատմական երկը մեզ չի հասել։ Այս Մաշտոցի մասին տե՛ս ծան. 274։ (էջ 167)։

425. Այստեղ թյուրիմացություն կա։ Այս հաշվով եկեղեցին պիտի կառուցված լիներ 151 թվականին (551 — 400 = 151), որը հնարավոր չէր,

որովհետև հայերը դեռ քրիստոնյա չէին։ Սա զուտ կարելի է բացատրել երկու կերպ՝ ա) նշված ժամանակ այդտեղ կարող էր կառուցված լինել ոչ թե քրիստոնեական եկեղեցի, այլ՝ հեթանոսական տաճար, բ) հիշյալ թվական նշումը բնագրական սխալ է։ Եթե առաջինը ճիշտ լիներ, ապա ինչո՞ տաճարը պիտի Ստեփանոս Նախավկայի անունով կոչվեր։ Բացի դրանից, տեղի արձանագրությունները հայերեն տառերով են և վերաբերում են նշվածից շատ ուշ ժամանակների։ Ուրեմն՝ մնում է կանգ առնել երկրորդ ենթադրության վրա։ (էջ 167)։

426. Հնագետ Ս. Գ. Բարխուդարյանը հայտնաբերել է այս արձանագրության 2 բեկորները, նկարագրել և գրության մնացած մասերով ապացուցել է, որ դա վերաբերում է նույն վանահայր Մխիթարին։ Հենց այդ արձանագրությունից է օգտվել Ս. Օրբելյանը։ Տե՛ս «ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտի տեղեկագիր», գիրք 1-ին, Երևան, 1936, էջ 99, «Դիվան հայ վիմագրության», պրակ 2-րդ, էջ 96։ (էջ 167)։

427. Տե՛ս ծան. 355, 357։ (էջ 168)։

428. Մ. Բրոսեն, հենվելով Ս. Օրբելյանի նշման վրա և ընդունելով Ստեփանոս Սյունեցու եղերական մահվան թվականը՝735-ը, դրան գումարում է պատմիչի այս տվյալը և այս Տեր-Հովսեփի մահվան թվականը նշում է 752-ը։ Այնուհետև հաջորդաբար ցույց է տալիս մյուս եպիսկոպոսների մահվան թվականները (իշխման տարիներով հանդերձ)։ Այսպես. Տեր-Հովակիմը վախճանվել է 769 թ., Տեր-Սադովկը՝ 801, Տեր-Հովհաննեսը՝ 893, Տեր-Սողոմոնը՝ 810, Տեր-Եղիան՝ 818, Տեր-Թեոդորոսը՝ 836, Տեր-Գեորգը՝ 844, Տեր-Դավիթը՝ 861, Տեր-Հովհաննեսը՝ 871, Տեր-Սողոմոնը՝ 888, Տեր-Հովհաննեսը՝ 921։ Տե՛ս ֆրանսերեն թարգմանության 98-րդ էջի տողատակի համապատասխան ծանոթագրությունը (այլև՝ ներածական մասը)։ Բայց այսպիսով հակասություն է ստացվում 80-րդ էջի տողատակի այն ծանոթագրության հետ, որտեղ նշվում են Անանիայի և Հովհանի (2-րդ) իշխման տարիներն ու մահվան թվականները, համապատասխանաբար՝ 7 տարի և 736 թ., 9 տարի և 745 թ., ապա հիշատակվում է Ստեփանոսի մահվան թվականը՝ 735։ Իսկ այստեղ՝ 98-րդ էջի ծանոթագրության մեջ, Ստեփանոսից հետո, ըստ պատմիչի, ցույց տալով Տեր-Հովսեփի աթոռակալման 17 տարին՝ թարգմանիչը նրա մահվան թվականը նշում է 752-ը (այսինքն՝ 735+17)։ Սա Սյունյաց Հովսեփ 2-րդ եպիսկոպոսն է, որը Ստեփանոս Սյունեցու եղբորորդին էր՝ ձեռնադրված Դավիթ կաթողիկոսի կողմից. հաջորդեց Ստեփանոս Սյունեցուն և, իրոք, պաշտոնավարեց 735—752 թթ.։ Իսկ ո՞ր ժամանակամիջոցում պիտի լինեին Հովհան 2-րդի աթոռակալման տարիները, եթե 736 թվականից իշխել է Տեր-Հովսեփը։ Կամ՝ եթե Անանիան պաշտոնավարել է մինչև 736 թվականը, ապա ինչպե՞ս կարող էր Ստեփանոսն իշխած լինել 735 թվականին։ Սրանց պաշտոնավարման ընդունելի ժամանակահատվածների մասին տե՛ս ծան. 353, 354։ Վերոհիշյալ մյուս թվական տվյալների զգալի մասն էլ ճշտման կարիք ունի։ (էջ 168)։

429. Սա Աղվանքի Վարազ Տրդատ իշխանի (9-րդ դար) գեղեցկուհի դուստրն է, որի կյանքին վերաբերող դեպքերի մասին վիպական գունավորումով պատմվում է սույն գլխում։ (էջ 169)։

430. Փարիզյան հրատարակությունն այստեղ ունի իշխանացն հոգնակի ձևը՝ թարգմանեցինք ըստ մոսկովյան հրատարակության, որտեղ եզակիով է՝ (էջ 169)։

431. Շնհերը Ս. Օրբելյանի երկում բերված հարկացուցակում նշվում է Շնոյ հերք ձևով։ Մեծ գյուղ է եղել (24 միավոր հարկաբաժնով)։ Շեներ անունով պահպանվել է մինչև մեր ժամանակները։ Այժմ մտնում է Գորիսի շրջանի մեջ։ Կառուցված է նոր ավանի (էջ 170)։

432. Գինական գետը Ալիշանի կարծիքով Տաթև անունը կրող գետակն է («Սիսական», էջ 233)։ Գտնվում է Գորիսի շրջանում։ Այս շրջանում է գտնվում նաև այն ժայռը, որը տեղացիները, ըստ ավանդության, կոչում են Շահանդուխտի անունով։ Ազգագրագետ Ե. Լալայանն իր ժամանակին նշել է, որ Տաթևից մի քանի կիլոմետր հարավ դեպի Որոտան գետի ափին ուղղահայաց իջնող երեք բլուրներից երկրորդը, որ ժայռապատ է, Շահանդուխտի անունով կոչվող ժայռն է (Զանգեզուր գաւառ, Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, Ա. հատոր, Սիսիան, Թիֆլիս, 1898, էջ 55)։ (էջ 170)։

433. Սա 8-րդ դարի վերջերի և 9-րդ դարի 1-ին քառորդի նշանավոր գործիչ, Սյունյաց Նահապետ Սահակ իշխանն է, Վասակի որդին, Փիլիպե 1-ինի եղբայրը, Գրիգոր Սուփան 1-ինի հայրը։ Պարսիկ Սևադա իշխանի հետ միացած՝ ապստամբվեց արաբների դեմ։ Հոլ ոստիկանի զորախմբի դեմ մղած ճակատամարտում սպանվեց (824 թվականից հետո, 833-ից առաջ)։ Մինչև Օրբելյանը նրա մասին հիշատակել են Հովհ. Դրասխանակերտցին, Վարդանը։ (էջ 171)։

434. Հայոց Դավիթ 2-րդ կաթողիկոսն է։ Իր ծննդավայրի՝ Մազազ գավառի Կակաղ գյուղի անունից կոչվել է Կակաղեցի։ Աթոռակալել է 806—833 թթ.։ (էջ 171)։

435. Այս Սմբատ Բագրատունին Աշոտ Մսակերի որդին էր։ Հայոց սպարապետ էր նշանակվել 824 թվականին։ Պարսից Սևադա իշխանի և Սյունյաց Սահակ իշխանի հետ միացած՝ կռվել է արաբ Հոլ ոստիկանի զորախմբի դեմ և ճակատամարտում պարտվել է։ Հետագայում տարվել է Բաղդադ, հավատքի համար տանջանքի ենթարկվել ու մեռել բանտում։ (էջ 171)։

436. Արաբ ամիրայապետ Մամունը, որ Հարուն ալ Ռաշիդի որդիներից մեկն էր, իշխել է 9-րդ դարի առաջին կեսին։ Անունը տպագրում Մայմուն ձևով է։ № 6271 ձեռագրում նույնպես Մայմուն է (էջ 116 ա)։ Մենք տվել ենք տարածված ձևով՝ Մամուն։ (էջ 171)։

437. Այս Սևադան պարսիկ իշխան էր։ (էջ 171)։

438. Սա Հրազդան գետն է։ (էջ 171)։

439. Կամակերտը պիտի եղած լինի Արարատյան դաշտում։ Ենթադրվում է, թե պիտի լիներ այժմյան Փարաքարի տեղում։ (էջ 171)։

440. Հովհաննես Կոտայեցի կաթողիկոսը գահակալել է 833—855 թթ.։ Մեղադրվել է Բագարատ Բագրատունի պատրիկի կողմից ու պաշտոնանկ արվել, բայց հետո հատուկ ժողովով արդարացվել է ու նորից հրավիրվել աթոռ։ Բուղայի արշավանքների ժամանակ տեղից տեղ է փոխադրվել։ Մեռել է Մաքենոցաց վանքում։ Նրա մասին հիշատակում են Դրասխանակերտցին, Թ. Արծրունին, Ասողիկը, Մ. Անեցին, Մ. Այրիվանեցին և այլն։ (էջ 172)։

441. Այս տեղանունը հետագայում փոփոխվելով դարձել էր Տաւա, որը կրում էր այժմյան Արտաշատի շրջանի գյուղերից մեկը, շրջկենտրոնից ոչ հեռու։ 1950 թվականից վերանվանվել է Շահումյան։ Հայտնի է, որ երբար ժամանակ Կոտայքի տարածքն ընդարձակ է եղել՝ ընդգրկել է նաև հիշյալ գյուղը։ (էջ 172)։

442. Սա Գեղարդի նշանավոր վանքն է։ (էջ 172)։

443. Սա Գրիգոր Սուփան 1-ինն է, Սյունյաց Սահակ Նահապետի որդին։ Սպանվել է Բաբկեն Սիսականի հետ կռվելիս (9-րդ դար)։ (էջ 172)։

444. Այսինքն՝ Գրիգոր Սուփան 1-ինը։ (էջ 172)։

445. Հիշեցնում է աստվածաշնչական ավանդությունը Կայեն և Աբել եղբայրների մասին, որոնցից առաջինն սպանել է երկրորդին։ (էջ 172)։

446. Սյունյաց Նահապետ այս Վասակը, որ Գաբռւռ մականունն էր կրում, ինչպես գրում է պատմիչը, Գրիգոր Սուփան 1-ինի որդին էր։ 9-րդ դարի գործիչ է։ Նրա մահվան ժամանակի վերաբերյալ տարբեր թվականներ են նշվում՝ 859 կամ 867 (Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան, հ. 5-րդ, էջ 47)։ Նրա մասին հիշատակել են Կաղանկատվացին, Դրասխանակերտցին։ (էջ 172)։

447. Սա Աշոտ Բագրատունի 1-ին Բագավորն է։ Ծնվել է 819 թ.։ 855 թ. դարձել է Հայաստանի սպարապետ։ Մահմադ-Ջաֆր ամիրապետից 858 թ. ստացել է իշխանաց իշխանի կոչում, իսկ Մութավաքիլ խալիֆը 860-ական թվականների սկզբներին նրան նշանակեց Հայաստանի կառավարիչ։ 885 թ. դարձավ թագավոր՝ հիմնադրելով Բագրատունյաց թագավորությունը։ Մեռավ 890 թ.։ Նրա մասին հիշատակում են բազմաթիվ մատենագիրներ, ինչպես՝ Հ Դրասխանակերտցին, Թ. Արծրունին, Ասողիկը, Մ. Կաղանկատվացին, Ս. Անեցին, Մ. Անեցին, Կ. Գանձակեցին, Վարդանը և այլք։ (էջ 172)։

448. Այդ ժամանակ Բաղդադի խալիֆն էր Մութավաքիլը (847—861 թթ.)։ (էջ 173)։

449. Սուլթան արաբերեն բառ է։ Մահմեդական ժողովուրդների մեջ գործածվել է «թագավոր» իմաստով։ (էջ 173)։

450. Եթե սա մեր պատմագրության մեջ հիշվող Աբուսեթ ոստիկանն է, ապա Հայաստան է եկել 849 թվականին՝ ուղարկված լինելով Մութավաքիլ խալիֆայի կողմից՝ երկրի ինքնավարությունը վերացնելու նպատակով։ (էջ 173)։

451. Սա 9-րդ դարի նշանավոր գործիչ, իշխանաց իշխան Բագարատ Բագրատունին է։ (էջ 173)։

452. Արյունարբու Բուղա զորավարը իր վարձկան զորքով Հայաստան է եկել 852 թվականին։ (էջ 173)։

453. Բագարատ Բագրատունու որդիներ Աշոտն ու Դավիթը ուրիշ հայ իշխանների հետ Բուղայի կողմից կալանավորվել ու Բաղդադ են տարվել 852 թվականին։ (էջ 173)։

454. Աշոտ Արծրունի մեծ իշխանը Նկան բերդում կռվեց Բուղայի դեմ, 852 թվականին, բայց անձնատուր եղավ և ընտանիքով գերի տարվեց Բաղդադ, որտեղից վերադարձավ 858 թվականին և տիրեց Վասպուրականին։ Վախճանվեց 874 թվականին։ Նրա մասին հիշատակել են Հ. Դրասխանակերտցին, Ասողիկը, Թ. Արծրունին, Վարդանը և այլք։ (էջ 173)։

455. Սա Ատոմ Անձևացին է, Աղբակ գավառի Որսիրանք գյուղից, ըլխավորում էր նահատակների խումբը, որոնք բռնվել և պահվում էին Բուլայի մոտ։ (էջ 173)։

456. Կոն Ստեփանոսը Սևորդյաց տոհմից էր, Ուտյաց գավառից, որը Տուս գյուղում բռնվեց Բուղայի կողմից, գերի տարվեց Բաղդադ, կրոնափոխ չեղավ, այնտեղ էլ նահատակվեց։ Նրա մասին հիշատակել են Հ. Դրասխանակերտցին, Ասողիկը, Ս. Անեցին, Կ. Գանձակեցին, Վարդանը և այլք։ (էջ 173)։

457. Մեհեկի ամիսը հայոց հին տոմարի 7-րդ ամիսն էր։ Այդ ամիսն սկսվում էր փետրվարի 7-ից։ (էջ 173)։

458. Այսինքն՝ 853 ընդհանուր թվականին։ Բայց համաժամանակյա մյուս տվյալներով և այլ պատմիչների վկայություններով Բուղայի այս արշավանքի գործերը նշվում են 852 թվականով։ (էջ 173)։

459. Սա Փիլիպե 1-ինի որդի Վասակն է, իշխանիկ կոչվածը, որի մասին մինչ այս հիշատակել է Թովմա Արծրունին (Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, 3-րդ, ԺԱ, էջ 310)։ (էջ 173)։

460. Սա Փիլիպե 1-ինն է, որի հոր անունը նույնպես Վասակ էր, իսկ այստեղ նշվող Վասակը (իշխանիկը) այդ Վասակի թոռն էր։ (էջ 173)։

461. Գարդմանը Ուտիք նահանգի 6-րդ գավառն էր։ Համապատասխանում է այժմյան Ադրբեջանական ՍՍՀ Ղազախի և Վրացական ՍՍՀ Գարայազանի շրջաններին։ (էջ 174)։

462. Այս անունը փարիզյան հրատարակության մեջ կարիճ ձևով է։ Այդպես է ներկայացրել նաև Ասողիկը (2-րդ, Ը)։ Մոսկովյան հրատարակությունն ունի տ-ով ձևը՝ Կարին։ Դիտված է (Գ. Խալաթյան), որ արաբական պատմիչ Տաբարին հիշատակում է տ-ով կատարված տառադարձությամբ (այս մասին տե՛ս Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հ. 2-րդ, էջ 681)։ Այս իշխանի մասին ավելի վաղ հիշատակել է Հ. Դրասխանակերտցին (Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 126—127)։ (էջ 174)։

463. Հայոց Ջաքարիա 1-ին կաթողիկոսն էր, Կոտայքի Ջադ գյուղից, որի անվամբ կոչվել է նաև Ջագեցի։ Հաջորդեց Հովհաննես Կոտայեցի—Ոսկիբերուն և գահակալեց 855—876 թթ.։ Օրբելյանից առաջ նրա մասին հիշատակել են նաև այլ մատենագիրներ։ (էջ 175)։

464. Սա Գրիգոր Սուփան 2-րդն է։ Համմ. նաև ծան. 420։ (էջ 175)։

465. Տե՛ս ծան. 274։ (էջ 175)։

466. Այսպես ենք թարգմանել՝ նկատի ունենալով աշխարհիկ երիցու արտահայտությունը։ (էջ 175)։

467. Տե՛ս ծան. 18։ (էջ 175)։

468. Տե՛ս ծան. 209։ (էջ 175)։

469. Սա Սյունյաց Դավիթ 2-րդ եպիսկոպոսն է։ Աթոռակալել է 840—857 թթ.։ (էջ 175)։

470. Արտավազի (Արտավազդի) ապարանք կոչված մենաստանը գտնվել էր պատմական Նիգ գավառի Բջնի վիճակում։ Տարածքն այժմ ընդգրկված է ՀՍՍՀ Հրազդանի շրջանում։ (էջ 175)։

471. Սա Աշոտ 1-ին Բագրատունու դուստր, Սմբատ 1-ին թագավորի ու Շապուհ Բագրատունի սպարապետի քույր, Սյունյաց մեծ իշխան Վասակ Գաբռւտի կին Մարիամն է։ Կառուցել է Սևանի եկեղեցիները, այլև՝ ուրիշ եկեղեցիներ։ Մայրն է Գրիգոր Սուփան 2-րդի, Սահակի և Վասակի։ Հետագայում հալածվելով Ցուսուփի հրոսակների կողմից՝ պանդխտել է Գարդման և դեղերումների մեջ մեռել է 911 թվականին։ Բնագրի այս մասում նշվում է թագուհի, բայց, ինչպես ասվեց, մեծ իշխանի տիկինն էր։ Հնագետ Ս. Գ. Բարխուդարյանն այն կարծիքն է հայտնել, որ նրա դամբարանի տեղը Շողվագա վանքի եկեղեցուց ոչ հեռու գտնվող առանձին մատուռն է (Դիվան հայ վիմագրության, պրակ 4-րդ, Երևան, 1973, էջ 241)։ Այժմ այն ընդգրկված է մի տան բակի մեջ և ավերված վիճակում է (մեր վերջին այցելությունը՝ 1980 թ. մայիսի 18-ին)։ (էջ 175)։

472. Սևանի վանքի այս եկեղեցիները այժմ էլ կանգուն են թերակղզու բլրի վրա։ (էջ 175)։

473. Այսինքն՝ ընդհանուր 874 թվականին։ (էջ 176)։

474. Սա այժմյան Սևանի շրջանի համանուն գյուղն է, շրջկենտրոնից 1,5—2 կմ դեպի արևմուտք։ Մի ժամանակ կոչվում էր Ջրուչըռ (Հրազդան գետի վրայի գեղեցիկ ջրվեժից, որը գետի հունի տեղափոխման հետևանքով այժմ արդեն չկա)։ Հին անունով վերանվանվել է 1946 թվականին։ (էջ 176)։

475. Գյուղը նույն անունը պահպանել է մինչև մեր օրերը։ Գտնվում է այժմյան Սևանի շրջանում։ Այժմ կազմում է Սևան քաղաքի հյուսիս-արևելյան թաղամասը։ (էջ 176)։

476. Այժմյան Սևանի շրջանի՝ նույն անունը կրող գյուղն էր, որն արդեն ներառվել է Սևան քաղաքի մեջ՝ հյուսիսային կողմից որպես մի թաղամաս։ (էջ 176)։

477. Բերդը, անշուշտ, եղել է Սևանա լճի շրջակայքում, բայց տեղը որոշակի հայտնի չէ։ (էջ 176)։

478. Ուտյաց տափ գյուղի տեղը նույնպես որոշակի հայտնի չէ։ Թերևս կարելի է ենթադրել այժմյան Ծովագյուղը (Ճիպոտիկ—Ջիբուխլուն)։ (էջ 176)։

479. Այստեղ բնագրային աղավաղում կա. և զոս հասկանալի է, բայց ի՞նչ է զկուտկծին-ը։ Սևանի 874 թ. արձանագրության մեջ՝ որն զկոակծնիչ (համմ. № 6271 ձեռագրում՝ և զոսն կոակծին (էջ 121 ա)։ Ղաֆադարյան, «Հայլական գրի սկզբնական տեսակները», Երևան, 1939, էջ 68, 88)։ (էջ 176)։

480. Այստեղ պատմիչն օգտագործել է Սևանա վանքի Առաքելոց եկեղեցու 874 թվականի արձանագրությունը, որի պատճենը չի բերել նույնությամբ, ինչպես վարվում է ուրիշ դեպքերում։ (էջ 176)։

481. Շողվագա կամ Շողագա վանքը գտնվում է այժմյան ՀՍՍՀ Մարտունու շրջանի Զորագյուղի արևմտյան եզրի մի երկայնաձև բլրի վրա, որի հիմնական եկեղեցին կառուցվել է Գեղարքունիքի իշխանուհի, Սյունյաց մեծ տիկին Մարիամի կողմից, 9-րդ դարի վերջերին։ Վանքը գործել է մինչև 17-րդ դարը։ Այժմ ավերակ է։ Կանգուն է եկեղեցու կիսավեր պատերի մի մասը։ Ունեցել է արձանագրություն, որի առանձին փոքրիկ մասերն են միայն մնացել (մեր վերջին այցելությունը՝ 1980 թ. մայիսի 18-ին)։ (էջ 176)։

482. Հազարացի են կոչվել արաբները, ըստ ավանդության՝ Հազար կնոջ

անունից։ Այդ ժամանակներում գյուղը գավթված է եղել Հայաստան ներխուժած արաբների կողմից, որոնցից գնվել ու նվիրվել է վանքին։ (էջ 176)։

483. Մաղազը Այրարատյան նահանգի 17-րդ գավառն էր։ Ընդգրկում էր այժմյան Սևանի և Հրազդանի շրջանների տարածքի այն մասը, որն ընկած է Հրազդան գետի և Գեղամաղան (Աղմաղան) լեռնաշղթայի միջև։ Ունեցել է 680 քառակուսի կիլոմետր տարածություն (Ս. Տ. Երեմյան, Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 64)։ (էջ 176)։

484. Մաղազ գավառի այս գներ գյուղի տեղը որոշակի հայտնի չէ։ (էջ 176)։

485. Հասկանալի է, որ բերված տեղեկությունների համար պատմիչը ժամանակին օգտագործել է եղած արձանագրություններ։ (էջ 176)։

486. Հայոց Գեորգ 2-րդ Գառնեցի կաթողիկոսն է։ Գահակալել է 877—897 թթ., Աշոտ 1-ին և Սմբատ 1-ին Բագավորների օրոք, որոնց ինքն է օծել։ Դերեզմանվել է Ախիշին ոստիկանի կողմից, կարճ ժամանակից հետո ազատվել է փրկագնով։ Նրա մասին հիշատակել են Հ. Դրասխանակերտցին, Թ. Արծրունին, Ասողիկը, Մ. Կաղանկատվացին, Մ. Աննեցին, Կ. Գանձակեցին, Մ. Այրիվանեցին և այլք։ (էջ 176)։

487. Սյունյաց Հովհաննես 5-րդ եպիսկոպոսն է։ Հաջորդել է Սողոմոն 2-րդին։ Օծվել է Գեորգ 2-րդ կաթողիկոսի կողմից։ Ինքն էլ մասնակցել է Աշոտ 1-ին Բագավորի օծմանը։ Վերակառուցել է Տաթևի վանքը։ Սրա աթոռակալության ժամանակի վերաբերյալ հայագիտության մեջ շփոթումներ ու տարբեր կարծիքներ կան։ Նրա եպիսկոպոսական պաշտոնավարման սկիզբը մեկ համարված է 888 թվականը, մեկ՝ 885-ը, մեկ՝ 882-ը, համապատասխանաբար տարբեր է ներկայացված նաև վերջը։ Այս մասին տե՛ս Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հ. 3-րդ, էջ 558։ Այստեղ, անշուշտ, ճշտման կարիք կա։ Պարզ է, որ պիտի սկսած լիներ աթոռակալել 885-ից առաջ կամ հենց նույն թվականին, շարունակած պիտի լիներ մինչև 918 թվականը, որը նրա մահվան տարին է՝ ըստ Ս. Օրբելյանի (համմտ. գլ. ԽԹ—49-րդ)։ (էջ 176)։

488. Այս եղբայրները հիշվում են որպես Սյունիքի 9-րդ դարի գործիչներ։ (էջ 176)։

489. Արտավազդ Շաղատենեցին Սյունյաց 9-րդ դարի իշխաններից է, ժամանակակից Գեորգ 2-րդ Գառնեցի կաթողիկոսին։ (էջ 176)։

490. Տե՛ս ծան. 420։ (էջ 176)։

491. Տե՛ս ծան. 459։ (էջ 176)։

492. Սա Արծրունի Դերենիկ 3-րդն է, Արծրունի Գագիկ 1-ին Բագավորի հայրը, Արծրունի Աշոտ մեծ իշխանի որդին, Արծրունյաց նահապետը, Բագրատունի Աշոտ 1-ին Բագավորի փեսան։ Բուղայի ժամանակ 852 թվականին իր հոր հետ գերի է տարվել Բաղդադ։ 857 թվականին ազատվելով ու վերադառնալով Հայաստան՝ իշխել է Վասպուրականին։ Նվաճել է Հեր և Զարեհավանդ գավառները։ Դավադրաբար սպանվել է Հերի քաղաքապետի կողմից 886 թվականին։ Նրա մասին գրել են Հ. Դրասխանակերտցին, Թ. Արծրունին, կարծեցյալ Շապուհ Բագրատունին, Ասողիկը և ուրիշներ։ (էջ 176)։

493. Տե՛ս ծան. 447։ (էջ 176)։

494. Արաբական խալիֆ Ահմադ Աբուլ-Աբասը (870—892 թթ.) Աշոտ 1-ին Բագրատունուն 885 թվականին ուղարկեց արքայական թագ ու հանդերձանք, և նա նույն թվականից հաստատվեց Հայաստանի Թագավոր։ Այդ թագավորությունը ճանաչեց Բյուզանդիայի կայսր Բարսեղ 1-ինը։ (էջ 176)։

495. Տե՛ս ծան. 486։ (էջ 176)։

496. Տե՛ս ծան. 487։ (էջ 176)։

497. Այսինքն՝ ընդհանուր 885 թվականին։ (էջ 176)։

498. Իշխանիկ կոչված Սյունյաց Վասակ մեծ իշխանից հետո նրա եղբայր Աշոտին իշխանությունն անցնում է մոտ 886 թվականին։ Այս Աշոտ իշխանը 891 թվականին ներկա է եղել Սմբատ 1-ին Բագավորի օծման հանդեսին։ (էջ 177)։

499. Աշոտ 1-ին Բագրատունու որդի Սմբատ 1-ին Բագրատունին թագադրվեց 891 թվականին և իշխեց մինչև 914 թվականը։ Ամբողջ կյանքն անցկացրեց արտաքին ու ներքին պատերազմներում։ Նվաճեց Դվինը և երկրի բոլոր այն տեղերը, որոնք մահմեդականների ձեռքն էին անցել։ Ի վերջո անձնատուր եղավ Յուսուֆին, բայց հավատքը չուրացավ և չարաչար փորձությունների ենթարկվելով՝ նահատակվեց 914 թվականին։ Նրա մասին գրել են Հ. Դրասխանակերտցին, Թ. Արծրունին, Ասողիկը, կարծեցյալ Շապուհ Բագրատունին, Մ. Կաղանկատվացին, Գ. Մագիստրոսը, Մ. Աննեցին, Ս. Աննեցին, Կ. Գանձակեցին, Վարդանը և այլք։ (էջ 177)։

500. Ափշինն արաբ ոստիկան էր, որ Հայաստան էր եկել 892 թվականին։ (էջ 177)։

501. Իղեշխ նշանակում է «մեծ իշխան, կուսակալ»։ Այսպես են կոչվել չորս նախարարները, որոնք իշխել ու պաշտպանել են երկրի սահմանային մասերը։ Բառն իրանյան ծագում ունի և հանդես է եկել նաև բդեշխ տարբերակով, այլև գործածվել է «հյուպատոս, փոխարքա» նշանակությամբ։ (էջ 177)։

502. Տե՛ս ծան. 498։ (էջ 177)։

503. Ապումրվան կոչված Գագիկ Արծրունին է, Վահան Արծրունու որդին։ Բուղայի կողմից գերի է տարվել Բաղդադ (852 թվականին), ապա ազատվել, վերադարձել է Հայաստան։ Սպանելով Գրիգոր Դերենիկ 3-րդի որդիներին՝ գրավեց Վասպուրականի իշխանությունը։ Միացավ Միջագետքի Ահմադ ոստիկանի հետ, դավաճանությամբ կռվեց Սմբատ 1-ին Բագավորի դեմ (895 թվականին) և ինքն էլ շուտով սպանվեց։ Նրա մասին գրել են Հ. Դրասխանակերտցին, Թ. Արծրունին, կարծեցյալ Շապուհ Բագրատունին։ (էջ 177)։

504. Ափշինը մեռել է 899 թվականին։ Այդ ժամանակվանից էլ նրան փոխարինել է իր եղբայր Յուսուֆը։ (էջ 177)։

505. Խոսքը Վասակ Գաբռուի մասին է, որ ամուսնացած էր Աշոտ 1-ին Բագրատունու դուստր Մարիամի հետ, ունեցել էր 3 որդի։ Տե՛ս նաև ծան. 446։ (էջ 177)։

506. Այսինքն՝ Գրիգոր Սուփան 2-րդը։ Տե՛ս ծան. 420։ (էջ 177)։

507. Տե՛ս ծան. 471։ (էջ 177)։

508. Տե՛ս ծան. 21։ (էջ 177)։

509. Տե՛ս ծան. 15։ (էջ 177)։

510. Տե՛ս ծան. 472։ (էջ 177)։

511. Տե՛ս ծան. 481։ (էջ 177)։

512. Խոսքը Գրիգոր Սուփան 2-րդի մասին է։ (էջ 177)։

513. Այսինքն՝ եկեղեցին։ (էջ 178)։

514. Աղբյուրներում գյուղաքաղաք կամ քաղաքագյուղ ասված Կոթը եղել է այժմյան ՀՍՍՀ Մարտունու շրջանի Ներքին Գետաշեն (Ներքին Ադիաման) գյուղի տարածքում։ Ակբի է ընկել իր մեծությամբ և դերով։ Եղել է Գեղարքունիք գավառի կենտրոնը և իշխանական նստավայրը։ Հետո տարածքային միավոր է եղել Իշխանագետի վերին հոսանքում։ Այստեղ է եղել Արարատյան դաշտից դեպի Պարսկաստան տանող ճանապարհների հանգույցը։ Կոթի արևմտյան կողմի քարափի գլխի վրա է գտնվում 9-րդ դարի վերջերին Գրիգոր Սուփան 2-րդի հարթությամբ կառուցված ս. Աստվածածինը կամ Կոթավանքը, որի տեղում նախկինում հուշարձան է եղել Վանքն այժմ կիսավեր է։ Վերականգնման աշխատանքներ են տարվում (մեր վերջին այցելությունը՝ 1981 թ. հուլիսի 4-ին)։ (էջ 178)։

515. Նավակատիքի մասին հմմտ. ծան. 198։ (էջ 178)։

516. Այդ ժամանակ կաթողիկոսն էր Հովհաննես 5-րդը, նույն ինքը Հովհաննես Դրասխանակերտցի պատմիչը, որն աթոռակալել է 898—929 թթ.։ (էջ 178)։

517. Տե՛ս ծան. 487։ (էջ 178)։

518. Խաղաղ ժամի նեղության կանոնը «Ջի աստուած ընդ մեզ է» աղոթքերգն է։ (էջ 178)։

519. Առավոտյան ամենից շատ երգվողներից է Ջթ (89-րդ) սաղմոսը։ (էջ 178)։

520. Գրիգոր Սուփան 2-րդի այս ընդարձակ արձանագրությունը ժամանակին ընդօրինակել է Ս. Օրբելյանը իր երկում։ Հնագետները վկայում են, որ արձանագրությունը գոտիաձև փորագրված է եղել եկեղեցու պատերի վերին մասում։ Սակ քանի որ այդ մասերի քարերը թափվել են, արձանագրությունը չի պահպանվել։ Ժամանակին Սմբատյանցը հավաքել է 10 քար։ Բայց դրանցից ոչ մեկն այժմ չկա։ Այդպիսով արձանագրության հետքը տիղում չի մնացել։ Միակը Օրբելյանի ընդօրինակածն է, որը ժողովածունեքում բերվում է իբրև բնագիր (տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 4-րդ, էջ 265)։ (էջ 178)։

521. Բեկարը արքունական հարկ էր, Հ. Մանանդյանի կարծիքով՝ հողային հարկ կամ թերևս զինվորական պարտադիր ծառայություն (Գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր, 1-ին, էջ 32—37)։ Ս. Մալխասյանցը կապում է բեգար-ի, բեգյար-ի հետ՝ հասկանալով նաև կոչ, պարտադիր աշխատանք (հմմտ. «Հայերէն բացատրական բառարան» հոմանիտասխան բառերի բացատրությունները։ (էջ 178)։

522. Նույնը տե՛ս ծան. 518։ (էջ 178)։

523. Նույնը տե՛ս ծան. 519։ (էջ 178)։

524. Խոսքը նույն վանքի հիմնական եկեղեցու մասին է, որը գտնվում է պարսպի ներսում և այժմ էլ կանգուն է բավարիվ ճորոգումներից հետո։ Ունի փլված որոշ տեղեր, որոնք այժմ ևս վերանորոգվում են (մեր վերջին այցելությունը՝ 1981 թ. մայիսի 9-ին)։ (էջ 179)։

525. Գրիգոր Սուփան 2-րդի ընդարձակ արձանագրությունը փոխագրված է եղել եկեղեցու արևելյան պատին։ Դեռ Ս. Օրբելյանի ժամանակ եկեղեցու պատերն ու արձանագրությունը վնասված են եղել։ Պատմիչը գրում է, որ քարերը խախտված էին, և ինքը չի կարողացել ամբողջն իմանալ։ Այժմ արձանագրությունից մնացել են առանձին մասեր։ Սակ քանի որ քարերը նորոգումների ժամանակ դրվել են պատահական տեղերում, արձանագրությունը խաթարվել է։ Նրա համար բնագիր է ծառայում Ս. Օրբելյանի ընդօրինակածը։ Հրատարակիչները, օգտվելով տարբեր ձեռագրերից, արձանագրությունը ներկայացրել են տարբերություններով։ Այդ պատճառով հնագետ Ս. Գ. Բարխուդարյանը համեմատելով կազմել է հավանական բնագիրը («Դիվան հայ վիմագրության», պրակ 4-րդ, էջ 290—291)։ Թարգմանությունը կատարելիս մենք հիմք ենք ընդունել դա։ (էջ 179)։

526. Սա, անշուշտ, պատմիչի բերած բնակավայրերի ցուցակի Սոթք գավառի գյուղերի ցանկում Աստվածածին գյուղն է (տե՛ս անդ)։ (էջ 179)։

527. Բնագրում գԲողաշէն սեղանոյն։ Հավանաբար նկատի է առնված Սևանա լճի մի հատվածը, որը այդպիսի անուն է կրել ըստ առասպելա վայրի, սակայն դա այժմ որոշակի հայտնի չէ։ (էջ 179)։

528. Արձանագրությունից երևում է, որ Գեղձանագետ անունը կրող գետը վարձակալությամբ օգտագործման է տրվել ձուկ որսալու համար, իսկ դրանից էլ բաժին է հանվել եկեղեցուն։ Գուցե դա վանքի մոտի ձորով հոսող գետակն է, որ ժամանակին կարող էր առատաջուր եղած լինել։ Կամ էլ թե չէ մեկ ուրիշ գետ էր այժմյան Մարտունու շրջանի տարածքում, որը հետագայում Գագիկ Բագրատունի 1-ինը նվիրել է Վանեվանաց վանքի եկեղեցուն։ Հմմտ. ծան. 555։ (էջ 179)։

529. Այս Կոթիկ գյուղը նշված է «Ջամբռ»-ի հիման վրա Ղ. Ալիշանի բերած՝ Սոթք գավառի գյուղերի լրացուցիչ ցուցակում («Սիսական», էջ 64)։ (էջ 179)։

530. Սա, անշուշտ, այն Անմեռ գյուղն է, որ Ղ. Ալիշանը «Ջամբռ»-ի տվյալներով նշել է Սոթք գավառի գյուղերի լրացուցիչ ցուցակում («Սիսական», էջ 64)։ (էջ 179)։

531. Այստեղ և ստորև առաջին դեմքի բայ-ստորոգյալը հոգնակի թվով է ներկայացվում՝ եզակիի փոխարեն։ Թարգմանության մեջ թողել ենք նույնը։ (էջ 179)։

532. Տե՛ս ծան. 516։ (էջ 179)։

533. Այսինքն՝ 851-ից մինչև 901 թվականը։ (էջ 180)։

534. Սա այժմյան Կամոյի շրջանի համանուն գյուղն է, որի անունը ժողովրդական ստուգաբանությամբ Նոռադուզ ձևն էր ընդունել (ճիշտը՝ Նոռաուռ—Նոռաուուս)։ (էջ 180)։

535. Աշոտ 1-ին Բագրատունի թագավորի կրտսեր որդին է, այդ ժամանակ Հայաստանի սպարապետն էր։ Վախճանվել է իր եղբայր Սմբատ 1-ին թագավորի կենդանության օրոք (մինչև 1914 թվականը)։ Նրա մասին գրել են Հ. Դրասխանակերտցին, Ասողիկը։ (էջ 180)։

536. Այստեղ Վանավան կամ Վանեվան հին անունը կրող գյուղն է, որը հիշատակվում է Ս. Օրբելյանի գրքում բերված հարկացուցակում՝ 7 շափ հարկով։ Սպա նշվել է նաև Կաթնոց, որը հիշվում է վանքի մեծ արձանագրության մեջ, այլև նույն պատմիչի կողմից։ Ուշ ժամանակներում կոչվել է Ներքին Ալուչալու։ Այժմյան Մարտունու շրջանի տարածքում է։

1968 թվականից վերանվանվել է Արծվանիստ։ Սյունյաց Մաթիամ մեծ տիկնոջ միջոցով նրա եղբայր Շապուհ Բագրատունու կառուցած վանքը (903 թվականին) գտնվում է Արծվանիստի հարավ-արևելյան եզրին, գետակի աջ ափին։ Տեղի հին անունով վանքը կոչվում է Վանեվանք կամ Վանեվանք։ Հետագայում հնանալով նորոգվել է։ Այժմ կանգուն է ս. Գրիգոր եկեղեցին։ Մնացած կից շինքերը կիսավեր են (մեր վերջին այցելության՝ 1980 թ. հունիսի 15-ին)։ (էջ 180)։

537. Արձանագրությունը փորագրված է ս. Գրիգոր եկեղեցու զմբեթի հյուսիս-արևմտյան և արևմտյան կողերին։ Ս. Օրբելյանից հետո ուշ ժամանակներում ընդօրինակել են շատերը։ Լավագույնը Ս. Գ. Բարխուդարյանինն է («Դիվան հայ վիմագրության», պրակ 4-րդ, էջ 121)։ (էջ 180)։

538. Տե՛ս ծան. 447։ (էջ 181)։

539. Տե՛ս ծան. 499։ (էջ 181)։

540. Տե՛ս ծան. 516։ (էջ 181)։

541. Տե՛ս ծան. 471։ (էջ 181)։

542. Այստեղ էլ տեղ-տեղ բայ-ստորոգյալի թիվը փոխվում է հոգնակիով։ Թարգմանության մեջ թողել ենք նույնը։ (էջ 181)։

543. Այս վանահայր Աբրահամը միայն այստեղ է հիշատակվում։ (էջ 181)։

544. Արձանագրության մեջ այստեղ Դ տառով նշված է չորս գյուղերի մասին (տե՛ս արձանագրության գծագրի 14-րդ տողը. «Դիվան հայ վիմագրության», պրակ 4-րդ, էջ 121)։ Պատմիչը 5 է նշել՝ թվարկված 4 գյուղերի հետ ներառելով նաև «Գետավանաց ծովը», որը, ըստ երևույթին, այդ տեղ գյուղ չի նշանակում և թվարկված 4 գյուղերի ցանկից դուրս է։ (էջ 181)։

545. Թվարկված այս 4 գյուղերից հայտնի է Կթանոցը, որը Վանեվանքը կամ Վանեվանն է (այժմյան Արծվանիստը)։ Մյուսներն էլ ո՛չ Սոթք, ո՛չ էլ Գեղարքունիք գավառների բնակավայրերի ցուցակներում նշված չեն։ Կոթաքար անվան մեջ ակնհայտ է Կոթ բաղադրիչը, որն այդ վայրերի տեղանունն է։ Հենվելով դրա և Կթանոց անվան վրա՝ կարելի է ասել, որ հիշյալ գյուղերը Սոթք գավառում էին։ (էջ 181)։

546. Ղ. Ալիշանը ենթադրաբար նշել է, որ արձանագրության մեջ հիշատակվող Գետավանաց ծովը պիտի լիներ մի ժամանակ մոտակա տարածքում եղած լճակը, որ ուշ ժամանակներում կոչել են Ալլահ գյոլ («Սիսական», էջ 26)։ (էջ 181)։

547. Փորագրված է ԻՐՈՏԵԼԵՅՆ՝ ԲՈ և Ե Յ տառակապակցությունների վրա պատվի նմանվող նշաններ։ Վայրը որոշակի հայտնի չէ։ (էջ 181)։

548. Այստեղ տպագիրն ունի յԱղարոյ վանաց ծովէ։ Ղ. Ալիշանը սրանից ելնելով ենթադրել է, որ հիշատակված Գետավանաց ծովի հետ սա էլ կարող էր մոտակայքում մատնանշվող լճակ լինել («Սիսական», էջ 26)։ Սակայն փորագրված արձանագրության մեջ միայն յաղիբողանաց բառաձևն է՝ առանց ծովէ բառաձևի (տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 4-րդ, էջ 121—122)։ Ուստի մենք թարգմանեցինք աղիբողաձիցֆ։ Բայց ի՞նչ է այս աղիբողաձիֆը։ Կարելի է ենթադրել աղաբողոն բառը՝ «կրոնավորի վերնագգեստ» իմաստով (հունարենից է)։ Այդպիսի անվանումով հավանաբար դրամ է նախատեսվել եկեղեցական պաշտոնյաների զգեստների համար։ (էջ 181)։

549. Եթե խոսքը վերաբերում է պատմական Կարբի գյուղին (այժմ՝ Աշտարակի շրջանում), ապա այնտեղ նավեր չէին կարող լինել (նրա մերձակա ձորով անցնող Քասաղ գետը նավարկելի չէ)։ Այստեղ նաև բառը մեկ այլ իմաստով է գործածված՝ «ծառի հաստ բնից պատրաստված խողովակաձև հարմարանք, որի միջով ջուրը ուղղվում է ջրաղացի թափանիվի վրա և պտտեցնում այն»։ Այս իմաստով բառը այսօր էլ դեռ կենդանի է մեր շատ խոսվածքներում (տեղ-տեղ նով ձևով է)։ Իսկ դա էլ այստեղ փոխաբերաբար կարող էր նշանակել «ջրաղաց»՝ վանքի համար եկամուտ ապահովվել ջրաղացներից։ (էջ 181)։

550. Արձանագրության առկա գծագրում չկա նզովքի բանաձևը։ Ս. Օրբելյանի երկի մեջ բերված արձանագրության պատճենի այդ տողերի տեղում փորագրված են «տր... ՍՈՂՈՄ. տր ԱՔԱՆԱՍ»։ Կառուցման թվականից հետո նշված է Սմբատ թագավորի անունը, ապա՝ կարճ արձանագրություն՝ Ընճոռ գյուղից ջուր բերելու մասին («Դիվան հայ վիմագրության», պրակ 4-րդ, էջ 121)։ (էջ 181)։

551. Այսինքն՝ ընդհանուր 903 թվականին։ (էջ 181)։

552. Տեղի վանահայրերից են։ Արձանագրության մեջ երևում է առաջին անվան Սողոմ մասը։ Քանի որ սկզբից որոշ տարածություն կա, հնագետը վերծանելիս ենթադրաբար ավելացրել է Ա և Բ տառերը՝ դարձնելով Աբիսողոմ («Դիվան հայ վիմագրության», պրակ 4-րդ, էջ 122)։ (էջ 181)։

553. Սա Սմբատ 1-ին Բագրատունի թագավորն է։ Սակայն կա նաև այլ կարծիքը, թե նա թաղված է Օձուն գյուղում, որտեղ ունի մահարձան (Մովսիսյան)։ Իհարկե, հավանականն առաջին հիշատակությունն է։ (էջ 181)։

554. Սա Գագիկ 1-ին Բագրատունի թագավորն է (990—1020 թթ.)՝ Աշոտ 3-րդ Ողորմած շահնշահի որդին։ Կառուցել է Անիի նշանավոր ս. Գրիգոր եկեղեցին (1000 թ.), նորոգել Վանեվանաց վանքը։ (էջ 181)։

555. Սա, անշուշտ, Մաքենոցաց վանքի արձանագրության մեջ հիշատակված Դեղձանագետն է։ Համմ. ծան. 528։ (էջ 181)։

556. Բնագրում՝ գաւառ։ Հայտնի է, որ Այրարատյանը գավառ չէր, այլ՝ աշխարհ, նահանգ, ինչպես որ սովորաբար նշվում է մատենագրության մեջ։ Այդ նկատառումով էլ գրեցինք նահանգ։ (էջ 182)։

557. Սա արյունարբու Յուսուփն է՝ Ափշին (Ավշին) ամիրապետի եղբայրը։ Վերջինիս մահից հետո (899 թ.) Աորպատականի ամիրայության ղեկավարությունն անցավ նրան։ Նա Հայաստանում մեծ ավերածություններ, կողոպուտ ու կոտորածներ արեց։ Նրա առաջին արշավանքը մեր երկրի վրա եղավ 909 թվականին։ Նույն ինքն էր, որ գերեց Սմբատ 1-ին Բագրատունի թագավորին ու խաչելով տանջամահ սպանեց և այլն։ Նրա արյունալի գործերի մասին Ս. Օրբելյանը պատմում է իր երկի այս՝ ԼՀ գլխում՝ օգտվելով, անշուշտ, նախորդ պատմիչներից։ (էջ 182)։

558. Սմբատ 1-ին Բագրատունի թագավորը արյունարբու Յուսուփի կողմից տանջամահ է արվել 914 թվականին։ Համմ. նաև ծան. 499։ (էջ 182)։

559. Այսինքն՝ ընդհանուր 909 թվականից։ (էջ 182)։

560. Տե՛ս ծան. 99։ (էջ 182)։

561. Գահերեց իշխան. իշխաններից ավագը կամ առաջինը, որ գրավում էր գլխավոր գահը և ավելի լայն իրավունքներ ուներ։ (էջ 182)։

562. Փելիպե 1-ինի մյուս որդին է, որը, իշխանությամբ փոխարինելով իր եղբայր Վասակ Իշխանիկին, Այունեքում շինարարական նշանակալից գործեր կատարեց։ Նրա մասին գրել են Հ. Դրասխանակերտցին, Վարդանը և այլն։ Համմտ. նաև ծան. 498։ (էջ 182)։

563. Պատնեշ օրերը զատիկի տոնի օրերն են։ (էջ 183)։

564. Բնագրում՝ գաւառ, որը հեղինակը գործածել է «նահանգ» նշանակությամբ։ (էջ 183)։

565. Այսինքն՝ Գրիգոր Դերենիկ 3-րդի։ Համմտ. ծան. 492։ (էջ 183)։

566. Սա Գագիկ-Խաչիկ Արծրունին է, Գրիգոր Դերենիկ 3-րդի որդին։ Մնվել է 870 թվականին։ Իր եղբայր Աշոտ իշխանի մահից հետո ժառանգեց Վասպուրականի իշխանությունը։ Միացավ Յուսուֆ ատրիկանին, բայց հետո անկախացավ։ 908 թվականից դարձավ Վասպուրականի թագավոր։ (էջ 183)։

567. Տե՛ս ծան. 37։ (էջ 183)։

568. Պետք է հասկանալ «աներորդի». Վասպուրականի թագավոր Գագիկ 1-ինը Սմբատի և Սոփիի եղբայրն էր։ Տե՛ս սույն ցանկում, բառ վերը, այլև՝ ծան. 566։ (էջ 183)։

569. Այսինքն՝ ընդհանուր 909 թվականին։ (էջ 184)։

570. Խոսքը Սմբատ 1-ին Բագրատունի թագավորի մասին է։ (էջ 184)։

571. Սմբատ 1-ին թագավորի եղբորորդի այս Աշոտը հոր՝ հայոց սպարապետ Շապուհ Բագրատունու մահից հետո սպարապետ դարձավ, կառուցեց Բագարանի և Կողբի եկեղեցիները։ Սակայն 910 թվականին անձնատուր եղավ Յուսուֆին, ապա նրանից թագ ստացավ ու իրեն հայտարարեց Աշոտ 2-րդից անկախ թագավոր. Սրանք կռվեցին միմյանց դեմ, ի վերջո հաշտվեցին։ Այս Աշոտը նստեց Դվինում (921 թ.), իսկ Աշոտ 2-րդը՝ Շիրակավանում։ Նրա մասին գրել են Հ. Դրասխանակերտցին, Ասողիկը և այլն։ Բնագրում նա ներկայացված է որպես Սմբատ (1-ին Բագրատունի) արքայի եղբայր, այդպես է և տպագրում, և № 6271 ձեռագրում (էջ 130 բ), որը, իհարկե, ճիշտ չէ։ Իրականում նրա եղբորորդին էր։ Մենք թարգմանեցինք ուղղելով։ (էջ 184)։

572. Խոսքը Նիգ գավառի (այժմ՝ Ապարանի շրջան) Զկնավաճառի ճամփաամարտի մասին է, որը տեղի է ունեցել 910 թվականին։ (էջ 184)։

573. Զուգադրաբար հիշատակվում է բիբլիական ավանդությունը, ըստ որի Հակոբի և Ռաքելի որդի Հովսեփը գերված բազմաթիվ իսրայելացիների փրկության պատճառ էր դարձել, շատ սիրվեց և երբ մեռավ եգիպտոս փոխադրեցին նրա ոսկորները երկար ժամանակ պահեցին ու իրենց տան, իսրայելացիները նրա ոսկրերը երկար ժամանակ պահեցին ու իրենց տան, հետ այնտեղից բերեցին, թաղեցին Սյուքեմում (հմմտ. Սննդ., Լ, 22—24, Ելք, ԺԳ, 18—19, Յեսու, ԻԴ, 32)։ (էջ 186)։

574. Համմտ. ծան. 471 և 481։ (էջ186)։

575. Սա կաղզվանի մոտի այն ձորն է, որտեղով հոսում է կապույտ գետը։ (էջ 186)։

576. Կապույտ բերդը գտնվում է Այրարատյան նահանգի Երասխաձոր կամ Արշարունիք գավառում, կապույտ գետի աջ ափին, այժմյան կաղզվանի մոտ։ (էջ 186)։

577. Այսինքն՝ ընդհանուր 913 թվականին։ Այստեղ թվականը նշված է մեկ տարով պակաս։ Մեր պատմության մեջ ընդհանրապես այս դեպքը նշվում է 914 թվականով։ (էջ 187)։

578. Տե՛ս ծան. 571։ (էջ 188)։

579. Սա Սմբատ 1-ին Բագրատունի թագավորի ավագ որդին էր։ Պատանդ է եղել Ափշինի մոտ, ապա ազատվել է։ Իր եղբայր Մուշեղի հետ մասնակցել է Նիգ գավառի Զկնավաճառ վայրի ճակատամարտին (Յուսուֆի դեմ)։ Հորից հետո գահ բարձրացավ 915 թվականին։ 920—921 թթ. հրաժիվից Կոստանդնուպոլիս և հանդիսավոր կերպով ճանաչվեց Հայաստանի թագավոր ու մի զինվորական ջոկատի հետ ուղարկվեց այստեղ։ Նա արդեն թագավոր էր, բայց սա նրա՝ որպես Հայաստանի թագավորի ճանաչումն էր բյուզանդական կայսրության կողմից։ Պատմիչի հաղորդած այն տեղեկությունը, թե Ռոմանոս կայսրից թագ ստացավ, պետք է հասկանալ նրա այդ ճանաչումը։ Ամբողջ կյանքն անցկացրեց կռիվների մեջ։ Ստացավ Երկաթ մականունը (Աշոտ Երկաթ)։ Արաբները նրան անվանում էին նաև Շահնշահ, վախճանվել է 929 կամ 930 թվականին։ Նրա մասին գրել են Հ. Դրասխանակերտցին, Ասողիկը, Մ. Անեցին, Կ. Գանձակեցին, Ս. Անեցին, Մ. Այրիվանեցին, Վարդանը և այլք։ (էջ 188)։

580. Արագածը հիշատակված է այստեղ ըստ երևույթին հետևյալ պատճառով. Սյունյաց մեծ իշխան Սմբատը Վասպուրականից եկել էր Աշոտ Երկաթ թագավորի մոտ, իսկ սա գահակալում էր Շիրակավանում. արքայից թույլտվություն ստանալով՝ նա Սյունիք է վերադարձել՝ անցնելով Արագած լեռան մոտով։ (էջ 188)։

581. Սահակ իշխանի կառուցած ս. Աստվածածին եկեղեցին գտնվում է այժմյան Կամոյի շրջանի Նորագյուղ (Նորատուք—Նորատուս) գյուղի կենտրոնում։ Մի ժամանակ պարապատված է եղել։ Բակում եղել են գերեզմաններ։ Ինչպես նշվում է պատմության մեջ, այստեղ է եղել Սահակի գերեզմանը։ (էջ 188)։

582. Կայեն (Կայան) անունով Հայաստանում եղել է 2 բերդ։ Դրանցից մեկը գտնվում էր Աղստև գետի միջին հոսանքի տարածքում, այժմյան Թեյնի շրջանի Աչաջուր գյուղի հարավ-արևմտյան կողմում, Պայտաթափ (Նալբոքան) լեռան անտառապատ գագաթին (տե՛ս Ի. Բ. Էլլարյան, «Աղստեի հովտի պատմական հուշարձանները», Երևան, 1968, էջ 77)։ Այդ բերդի անունով միջին դարերում Աղստև գետի վերին հոսանքի տարածքը կոչվել է Կայենո գավառ։ Մյուս Կայեն (Կայան) փոքրիկ բերդը գտնվում էր Հաղպատի վանքի մոտ։ (էջ 189)։

583. Անշուշտ, սա Զորափոր (Զոր) գավառն է, որն ընդգրկում է այժմյան Դեբեդի (Զորագետի) կիրճը։ (էջ 189)։

584. Սա մեծ իշխան Սահակ Սևադան է, Աշոտ Երկաթի աները, որն օգնեց իր արքա փեսային՝ ճնշելու Մովսես Ուռայցու ապստամբությունը, բայց ինքն էլ երկու անգամ ապստամբվեց նրա դեմ, պարտվեց, բռնվեց ու կուրացվեց (923 թվականին)։ (էջ 189)։

585. Բնագրում՝ Հակարի։ Նույն Հագարի գետն է։ Համմտ. նաև ծան. 217։ (էջ 190)։

586. Գյուղաքաղաք համարված Եղեղիք (Եղեգիս) ավանը գտնվում էր վայոց ձոր գավառի (այժմ՝ Եղեգնաձորի շրջան) համանուն գետի հով-

տում։ Այժմ ձորի երկայնքով, աջ ափին 3—4 կիլոմետր երկարությամբ ձգվում են նրա ավերակները։ Նրա տարածքի լայն մասում է գտնվում այժմյան Ալայազ գյուղը, որի անունը Եղեգիս-ի հետագա աղավաղումից է առաջացած։ Հին բնակավայր է եղել։ Ավելի հայտնի դարձավ Սյունյաց իշխանների ժամանակ, որոնց կենտրոնատեղին էր՝ 9-րդ դարի կեսերից սկսած։ Այստեղ հենց պատմիչը այն նշում է որպես Սմբատ մեծ իշխանի նստոց։ (էջ 192)։

587. Սա Զաքիկ 3-րդն է, որը ժամանակակիցն էր Աշոտ 2-րդ Երկաթին (915—929/30 թթ.)։ Ունեցել է երկու որդի՝ Ջևանշեր և Վահան անուններով։ (էջ 192)։

588. Սա Ջևանշեր 2-րդն է, Վահանավանքը կառուցող Վահանի եղբայրը։ (էջ 192)։

589. Տանձափարախ վանքի (կամ վկայարանի) տեղը որոշակի հայտնի չէ։ Ղ. Ալիշանը ենթադրում է, որ պիտի եղած լինի Բաղքի հարավ-արևմտյան կողմում, Կապան գետի վտակի հովտում («Սիսական», էջ 278)։ Վահանավանքի մոտ է եղել։ Այս երկի Խե գլխում Վահանավանքի սահմանները նշելիս հիշվում է նաև Տանձափարախը։ (էջ 192)։

590. Այս Շատանյա վանքի տեղը որոշակի հայտնի չէ, բայց հատվածկ բովանդակությունից երևում է, որ Բաղքում պիտի եղած լինի։ (էջ 192)։

591. Դա կառուցվել է 911 թվականին և կառուցող նույն Վահանի անունով կոչվել է Վահանավանք։ Համմ. Խե գլուխը։ (էջ 193)։

592. Սյունյաց իշխանաց իշխան Սմբատին հաջորդած նրա այս որդին գահակալած է համարվում մոտավորապես 958—963 թվականներին։ Տե՛ս Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հ. 4-րդ, էջ 548։ (էջ 193)։

593. Թերևս այստեղ խոսքն Արցախում գտնվող Դիզափայտի լեռնաշղթայի մասին չէ։ (էջ 194)։

594. Սա Դավիթ 2-րդն է, որ աթոռակալել է 840—857 թթ.։ (էջ 195)։

595. Սյունյաց գահերեց իշխան Գրիգորը հայրն էր Իշխանաց իշխան Հրահատի և Գագիկի, որը վկա է եղել Տաթևի վանքին 844 թվականին նվիրված կալվածքի գործարքին, որի մասին պատմվում է սույն երկի նույն գլխում։ (էջ 195)։

596. Պատմիչը տարբերում և «միւս Գրիգոր» է ասում՝ հիշելով նաև մականունը՝ Սուփան։ Գրիգոր Սուփան 1-ինը ժամանակակից է եղել Դավիթ 2-րդ եպիսկոպոսին և վերը հիշված գահերեց Գրիգորին։ Տե՛ս նաև ծան. 443։ (195)։

597. Սա Փիլիպե 1-ինն է։ (էջ 195)։

598. Դրամը նախ ծանրության չափ է եղել, ապա ստացել է «փող, դրամ» իմաստը։ Այս դեպքում նա դրամական միավորի նշանակություն ունի։ Տարբեր ժամանակներում տարբեր արժեք է ունեցել։ Ինչպես Ս. Օրբելյանն է նշում, որ ժամանակների համար յուրաքանչյուր դրամը հավասար է եղել 6 դանկի։ (էջ 195)։

599. Դանկ կամ դանգ բառը պահլավական փոխառություն է (dang), որի բուն իմաստն է «հատիկ»։ Դանկը նախապես ծանրության չափ է եղել՝ 2 գարեհատի կշռով, ապա ստացել է դրամական նվազագույն միավորի իմաստ։ Ինչպես այստեղ է նշվում, մեկ դրամի մեկ վեցերորդին էր հավասար (մեկ դրամը վեց դանկ էր)։ Պարսկաստանում ունեցել է դրամի մեկ քառորդի արժեքը։ (էջ 195)։

600. Ըստ այս շարադրանքի՝ Տաթևի վանքի տարածքին մոտ գյուղ է եղել։ (էջ 195)։

601. Պատմիչն Արծիվի մասին նշում է գյուղ, իսկ սրա մասին այդ նշումը չունի։ Հավանաբար այն ագարակ է եղել, մանավանդ որ մի քանի տող վեր նշվում է ագարակների վաճառման մասին։ Այս տեղանունը սույն երկի փարիզյան հրատարակության մեջ բերված է Բեռդկաներեչ ձևով։ Տեղ-տեղ բերվում է նաև Բեռդկաներչի ձևով։ (էջ 195)։

602. Նեպակը եղել է մի տեսակ հարկ, որը նշանակվել է իշխանության կողմից՝ ի հատուցումն դաշտերի վնասակար միջատների ոչնչացման։ Տրվել է նաև բառի «պարտադիր աշխատանք» բացատրությունը։ (էջ 195)։

603. Այսինքն՝ ընդհանուր 839 թվականին։ (էջ 195)։

604. Սա այժմյան Գորիսի շրջանի մեջ մտնող Հարժիս գյուղն է։ Հարժիս հին անունը հետո գործածվել է Հարժիս ձևով (ք-ս), սա էլ ուշ ժամանակներում ժողովրդական ստուգաբանությամբ աղավաղվել ու ստացել էր Յայլի ձևը։ Ներկայումս վերականգնված է Հարժիս։ (էջ 195)։

605. Լորաձորը մեծ ձոր է, ընկած է Տաթևից արևմուտք։ Զգվում է հյուսիսից հարավ։ Կոչվում է նաև Ջոր կամ Մեծ ձոր։ Այդ ձորահովտում են գտնվում այժմյան Սիսիանի շրջանի մի քանի գյուղեր (Լեռնաշեն, Լոր, Գետաթաղ, Դարբաս, Շամբ, Լծեն)։ (էջ 195)։

606. Սառնաքարը վանքապատկան գյուղ է եղել Տաթևի շրջակայքում։ (էջ 196)։

607. Մ. Բրոսեն բնագրի սեենեակ-ը համարել է հատուկ անուն և այդպես էլ ներկայացրել է ֆրանսերեն թարգմանության մեջ (տե՛ս անդ, էջ 125)։ (էջ 196)։

608. Սա նշանավոր Տաթև գյուղն է, որ այժմ մտնում է Գորիսի շրջանի մեջ՝ կրելով նույն հին անունը։ Հնում եղել է Ծղուկ, երբեմն էլ՝ Բղեն գավառների բնակավայրերի կազմում։ Գտնվում է Տաթևի վանքից մոտ մեկ կիլոմետր հեռավորության վրա։ (էջ 196)։

609. Այսինքն՝ ընդհանուր 844 թվականին։ (էջ 196)։

610. Այսպես ենք թարգմանել բնագրի երիտակ բառը, որի ծագումն ինքնայա է, բայց ձևը ենթադրում է իրանյան փոխառություն։ (էջ 196)։

611. Բնագրում՝ աձխուչչիարէ, որի իմաստը Հ. Աճառյանը նշում է «սեփականություն»։ Ծագումն էլ իրանյան է համարում՝ պահլ. xwēšāz պարսկ. xwēškār «աղգական, սեփական» xwēškāri «սեփականություն»։ Անհասկանալի է մնում ա-ը (տե՛ս համապատասխան տեղում)։ Ս. Մալխասյանցը որպես գլխաբառ վերցնում է աձխուչչիար ձևը և ա-ը համարելով ժխատական նախածանց, իսկ ամբողջ բառը՝ մակրայաբար կիրառված, նրան ենթադրաբար «անսեփականելի», «անկապտելի», «անվիճելի» իմաստներն է վերագրում (տե՛ս «Հայերէն բացատրական բառարան», համապատասխան բառի տակ)։ Դա հավանական է։ (էջ 196)։

612. Ույծը գտնվում էր Ծղուկ գավառում։ Այժմ՝ Ուղ գյուղը Սիսիանի շրջանում։ (էջ 197)։

613. Քորեպիսկոպոսը գավառական եպիսկոպոսն էր, որ ենթարկվում էր

Բնիական եպիսկոպոսին կամ թեմական եպիսկոպոսի փոխանորդը, գործավարն էր։ Բառը հունարեն է՝ կազմված χώρα «գավառ, երկիր»+ +ἐπίσκοπος «վերատեսուչ, եպիսկոպոս» բառերից։ (էջ 197)։

614. Ծիծառնավանքը (Ծիծեռնավանք, Ծիծառնիկ, Ծիծառնա, Ծիծառնո, Ծիծառնու վանք) Սյունիքի երբեմնի նշանավոր վանքերից է։ Գտնվում է Գորիսից դեպի հյուսիս մոտ 20 կիլոմետր հեռավորությամբ մի բլրակի վրա, Աղօղլան կոչված գետի աջ ափին (տե՛ս Ե. Լալայեան, «Զանգեզուրի գաւառ, նիւթեր ազգագրական ուսումնասիրութեան համար, Բ հատոր, Զանգեզուր», Թիֆլիս, 1899, էջ 46, այլև՝ Ս. Էփրիկեան, «Պատկառազդի բնաշխարհիկ բառարան», հ. 2-րդ, գիրք Ա, Վենետիկ, 1907, էջ 240։ «Դիվան հայ վիմագրության», պրակ 5-րդ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 192։ Ս. Օրբելյանի երկում բերված հարկացուցակում համանուն գյուղ է նշված Աղահեճ գավառի գյուղերի շարքում։

Վանքի նկարագիրը տե՛ս Ե. Լալայեան, նշվ. աշխ., էջ 47—48, նոր գրության մասին՝ «Դիվան հայ վիմագրության», պրակ 5-րդ, էջ 192։ Ամիջյան վարչական բաժանմամբ նրա տեղն ընկնում է ՀՍՍՀ Գորիսի և Ագրբ. ՍՍՀ Լաչինի շրջանների սահմանագլխին, մտնում է Լաչինի շրջանի տարածքի մեջ։

Ըստ Ս. Օրբելյանի բերած մի կալվածագրի՝ վանքի ամենավաղ հիշատակությունը 844 թվականից է։ Սակայն այն ավելի հին ժամանակներից է։ «... Շենքի ճարտարապետական առանձնահատկությունները,— գրում է Ս. Գ. Բարխուդարյանը,— ոչ մի կասկած չեն հարուցում, որ այն 4—5-րդ դարերի հնագույն բազիլիկ է» («Դիվան հայ վիմագրության», պրակ 5-րդ էջ 192)։ (էջ 197)։

615. Այժմ մտնում է Ղափանի շրջանի մեջ՝ Նորաշենիկ ունենով։ (էջ 198)։

616. Այսինքն՝ ընդհանուր 844 թվականին։ (էջ 198)։

617. Նշված տեղերը եղել են Կովսական գավառում (այժմյան Ղափանի շրջանի տարածքում)։ Ս. Օրբելյանի ցուցակում հիշատակվում են Բերքենին, Տարվանատը, Կերենը, Նորին որպես հարկատու գյուղեր (գլ. ՀԹ)։ (էջ 198)։

618. Մառգատը հարկացուցակում (մոսկովյան հրատ.՝ Մառգար, փարիզյան հրատ. Մառակոթ ձևով) նշվում է Կովսականի գյուղերի շարքում՝ 12 միավոր հարկաչափով։ (էջ 199)։

619. Ըղվեռծ գյուղը հարկացուցակում նշված է Ծղուկ գավառում՝ 10 միավոր հարկաչափով։ Մեկ այլ գյուղ՝ Ըղուեռծ (Ըղվերծ) ձևով հիշատակվում է Հաբանդ գավառի բնակավայրերի շարքում՝ 12 միավոր հարկաչափով։ Նշանակում է դրանք նույնական չեն։ (էջ 199)։

620. Վանանդ գյուղը հարկացուցակում ներկայացված է Մյուս Բաղքի բնակավայրերի ցանկում՝ 10 միավոր հարկաչափով։ (էջ 199)։

621. Նորիքը, ըստ հարկացուցակի, Ծղուկ գավառի 1-ին գյուղն էր՝ 12 միավոր հարկաչափով։ (էջ 199)։

622. Այսինքն՝ ընդհանուր 848 թվականին։ (էջ 199)։

623. Այսպես է սկսվում 31-րդ (ԼԱ) սաղմոսը։ (էջ 200)։

624. Քաղց ամսի մասին տե՛ս ծան. 230։ (էջ 200)։

625. Դավիթ 2-րդ եպիսկոպոսին հաշորդած Սյունյաց այս եպիսկոպոսը

Հովհաննես 4-րդն է, որի գահակալության ժամանակի վերաբերյալ հայագիտության մեջ նշվում են երեք տարբեր տվյալներ՝ 861—871 թթ., 857—867 թթ., 856—866 թթ.։ Բայց բոլոր դեպքերում ընդունվում է, որ 10 տարի է գահակալել։ Տե՛ս Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հ. 3-րդ, էջ 557։ Բայց եթե ընդունում ենք, որ Դավիթ 2-րդը գահակալել է մինչև 857 թվականը (համմ. ծան. 594), ապա պիտի նկատի ունենանք, որ այս Հովհաննեսը չէր կարող 857 թվականից առաջ հշված լինել։ (էջ 201)։

626. Սա Սյունյաց Սողոմոն 2-րդ եպիսկոպոսն է, որը նաև մականվանվել է Առաքելի։ Գործել է 9-րդ դարի երկրորդ կեսին։ (էջ 201)։

627. Սա Ս. Օրբելյանի երկին կցված հարկատու բնակավայրերի ցուցակում նշվող Հաբանդ գավառի խոտ գյուղն է։ Այժմ Գորիսի շրջանի կազմում է՝ նույն խոտ անունով։ Հիշյալ վավերագրում գյուղը նշվում է իբրև կոռավար, այսինքն՝ գյուղացիները կոռավոր աշխատանք էին կատարում հողի վրա (եկամուտները տրվում էին վանքին)։ Կոռավարի մասին համմտ. Կ. Շահնազարյանցի բացատրությունը (սույն երկի փարիզյան հրատ., հ. 1-ին, էջ 335, ծան. 45), նաև Գ. Մ. Գրիգորյան, «Սյունիքի վանական կալվածատիրությունը 9—13-րդ դարերում», Երևան, 1973, էջ 177։ (էջ 202)։

628. Փակագծերում այս հավելումը կատարել ենք ըստ Դ. Ալիշանի մեկնաբանության (համմտ. «Սիսական», էջ 227)։ (էջ 202)։

629. Այս վայրը Ս. Օրբելյանի գրքում բերված ցուցակում չի հիշատակվում։ Դ. Ալիշանը ենթադրում է, որ խոտ մոտ պիտի լիներ («Սիսական», էջ 227)։ (էջ 202)։

630. Սա այն Հրահատն է, որն իբրև վկա իր եղբայր Գագիկի հետ հիշատակվում է Տաթև գյուղը վանքին նվիրվելու վավերագրում (առտ, էջ 130)։ (էջ 202)։

631. Աղբին գյուղը հիշատակված չէ բնակավայրերի ցուցակում։ Ելնելով երկի բնագրի շարադրանքից՝ կարելի է ասել, որ նա էլ էր գտնվում խոտի մոտերքում։ (էջ 202)։

632. Ինչպես երևում է բնագրից, գուբը եղել է հողի տարածական չափի միավոր։ (էջ 202)։

633. Այսինքն՝ ընդհանուր 881 թվականին։ (էջ 202)։

634. Սյունյաց իշխաններից է, 9-րդ դարի երկրորդ կեսի գործիչ։ Աբուսմանի եղբայրն էր, Տիգրանի հայրը։ (էջ 202)։

635. Կովսական գավառի Բեխ գյուղը Հայաստանի հին բնակավայրերից է, գոյատևել է մինչև մեր ժամանակները՝ պահպանելով նույն անունը։ Այժմ մտնում է Ղափան քաղաքի տարածքի մեջ՝ կազմելով նրա մի մասը։ (էջ 202)։

636. Հարկացուցակում նշվում է Բաղքի բնակավայրերի շարքում։ Ըստ հարկի չափի (6 միավոր)՝ փոքր գյուղ է եղել։ Այս Արուքս գյուղն այժմ ավերակ է։ Գտնվել է այժմյան Ղափանի շրջանի Բեխ գյուղի դիմաց, Ղաթարի տարածքում։ Նրա միջով է անցնում դեպի լճերը տանող ճանապարհը (տե՛ս Գ. Մ. Գրիգորյան, «Պատմական Սյունիքի մի շարք գյուղերի տեղադրության հարցի շուրջը». «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, 234)։ (էջ 202)։

637. Այսինքն՝ ընդհանուր 871 թվականին։ (էջ 203)։

638. Բնագրում՝ տաճիկ: Այդ ժամանակներում այդպես են կոչվել մահմեդականները, բառը պահլավական ծագում ունի (tāčik)· Նախ նշանակել է «1. միջագետքի արաբ, 2. արաբական, 3. արագավազդ»: Արաբների միջոցով մահմեդական կրոնի տարածման հետևանքով այդ անվանումով կոչվեցին նաև այլ մահմեդական ժողովուրդներ (հմմտ. Հ. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», համապատասխան տեղում)։ (էջ 203)։

639. Բնագրում՝ ապիզար լիցի: Ապիզար իրանյան փոխառություն է, որի հնագույն ձևը չի պահպանվել։ Կա միայն պարսկերենում bezār «ձանձրալի, տաղտկացած», «ձանձրույթ, անհանգստություն, չարչարանք» (հմմտ. «Հայերէն արմատական բառարան», համապատասխան տեղում)։ Այստեղ գործածված է «նզովված, անիծված, անեծքով մերժված, հեռացած» իմաստով։ (էջ 203)։

640. Բնագրում՝ նալաթ: Փոխառյալ է արաբերենից։ Այստեղ laenot «անեծք, նզովք» բառը ժողովրդի բերանում ստացել է naclat ձևը, այդպես էլ փոխառվել է (հմմտ. «Հայերէն արմատական բառարան», համապատասխան տեղում)։ (էջ 203)։

641. Բնագրում՝ դենակորոյս: Այս բարդ բառի առաջին եզրը՝ դեն, գալիս է պահլավերենից (dēn), որ նշանակում է «կրոն», հավատք»։

642. Կշմաուքը Ս. Օրբելյանի երկում բերված հարկային ցուցակում չի հիշատակվում որպես գյուղ։ Ինչպիսի տեղ էլ լիներ, ըստ նկարագրի պիտի լիներ Բաղքում, Արուքսի մոտերքում։ (էջ 203)։

643. Սա բնագրի տպագրության մեջ փոքրատառով է տրված։ Ղ. Ալիշանը ներկայացնում է որպես հատուկ անուն («Սիսական», էջ 277)։ Հարկացուցակում հիշատակված չէ։ (էջ 203)։

644. Բնագրի ջրագնաց-ը Ղ. Ալիշանը ներկայացնում է որպես հատուկ անուն («Սիսական», էջ 277)։ (էջ 203)։

645. Կավարտ գյուղը հիշատակված է Ս. Օրբելյանի երկում բերված հարկացուցակում, Բաղքի գյուղերի շարքում (գլ. ՀԹ)։ Այժմ մտնում է Ղափանի շրջանի մեջ՝ պահպանելով իր հին անունը։ Բայց շրջանի ներկա գյուղերի ցանկում չի ներկայացվում իբրև առանձին միավոր, քանի որ արդեն ներառված է Ղափան քաղաքի տարածքի մեջ։ (էջ 203)։

646. Ս. Օրբելյանի երկում բերված հարկացուցակում Մաճ գյուղը հիշվում է Մյուս Բաղքում կամ Քաշունիքում՝ 7 միավոր հարկաչափով (գլ. ՀԹ)։ Այս Մաճ գյուղն այժմ ավերակ գյուղատեղ է։ Գտնվում է Ղափանի շրջանի Առաջաձոր գյուղի մոտ։ Այժմ ղափանցիները այդ տեղն այդպես էլ կոչում են՝ Մաճ (տե՛ս Գ. Մ. Գրիգորյան, «Պատմական Սյունիքի մի շարք գյուղերի տեղադրության հարցի շուրջը». «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, էջ 236)։ (էջ 204)։

647. Այսինքն՝ ընդհանուր 867 թվականին։ (էջ 204)։

648. Փեյղամբարը իսլամական աշխարհում համարվում է մահմեդական կրոնի մարգարեն, Մուհամմեդը (Մահմեդը)։ Բառը պարսկերենից է՝ peyγāmbar «պատգամաբեր մարգարե, հատկապես Մուհամմեդ»։ (էջ 205)։

649. Տե՛ս ծան. 487։ (էջ 205)։

650. Տե՛ս ծան. 621։ (էջ 205)։

651. Բնագրի կղերիկոս բառը (հունարեն՝ κλῆρος, κληρικός) ըստ գործածության մենք թարգմանեցինք «եկեղեցական ստորին պաշտոնյա» իմաստով, բայց դա կարող է նշանակել նաև «կրոնավոր ընդհանրապես, կղերական»։ (էջ 206)։

652. Ազատ բառը մեր լեզվում պահլավական փոխառություն է (azat), Հնում այսպես էին կոչվում ֆեոդալական դասակարգի մարդիկ՝ նախարարները, սեպուհները և այլք, որոնք ազատ էին հարկից։ Ս. Օրբելյանը դա հաճախ է գործածում՝ նշելով տերերին (=իշխաններին) ստորադասվող աղնվական մարդկանց, ինչպես այստեղ՝ «տէրանցն և... ազատաց նոցայս» (էջ 206)։

653. Տե՛ս ծան. 486։ (էջ 206)։

654. Այսինքն՝ ընդհանուր 895 թվականին։ (էջ 207)։

655. Տաթևի Պողոս-Պետրոս եկեղեցու պատին փորագրված այս արձանագրությունը այժմ կիսով չափ եղծված է։ Ամբողջացվում է Ս. Օրբելյանի հաղորդածի միջոցով, բայց սա էլ տառացի չէ։ Պատմիչն աշխատել է ներկայացնել բովանդակությունը։ Արձանագրության գծագիրը և վերծանումը տե՛ս «Տիվան հայ վիմագրության», պրակ 2-րդ, էջ 13։ (էջ 207)։

656. Կանգունը երկարության չափի միավոր էր՝ սովորաբար մարդու արմունկից մինչև միջամատի ծայրն ընկած տարածության չափով (կամ նաև անրակից մինչև արմունկ)։ Բայց տարբեր ժամանակներում տարբեր արժեք է ունեցել։ (էջ 207)։

657. Ըստ Աստվածաշնչի՝ Եհովայի պաշտամունքի համար երուսաղեմում, Մորիա լեռան գագաթին Իսրայելի թագավոր Դավթի որդի Սողոմոնը կառուցել էր հոյակապ տաճար, որը նրա անունով կոչվում էր Սողոմոնյան տաճար։ Այն որոշ ժամանակ ահց ավերվում է ու վերստին հիմնադրվում Զորաբաբելի կողմից։ Պատմիչը հիշեցնում է այդ տաճարը՝ պահելու անցկացնելով։ (էջ 207)։

658. Բոյոսը և Հաթումը Սողոմոնյան տաճարի (տե՛ս նախորդ ծան.) երկու սյուներն էին։ (էջ 207)։

659. Թակաղաղը սյան խոյակի վրա հաստատվող տափակ քարն է, որի վրա գալիս է ծածկը։ (էջ 207)։

660. Տաթևի վանքի նշանավոր շարժուն սյունն է, որ պահպանվել է մինչև մեր ժամանակները։ (էջ 208)։

661. Այսպես թարգմանեցինք բնագրի տրապէզս բառաձևը։ Տրապէզ հունարեն է՝ τράπεζα «սեղան»։ Մյուս շենքերի անունների թվարկումից երևում է, որ տրապէզները պիտի սեղանատներ լինեին՝ վանքի պաշտոնյաների համար։ (էջ 208)։

662. Սա Աղվանքի Սիմեոն 2-րդ կաթողիկոսն է, որ գահակալել է 901—922 թթ.։ (էջ 209)։

663. Խոսքը Հայաստանի թագավոր Սմբատ 1-ին Բագրատունու մասին է։ Համմտ. նաև ծան. 499։ (էջ 210)։

664. Սա Կարճևանն է, որ այժմ էլ նույն անունով մտնում է Մեղրու շրջանի մեջ։ (էջ 210)։

665. Հարժիք (Հարժիս) գյուղի մասին տե՛ս ծան. 604։ (էջ 210)։

666. Այս բնակավայրը հարկացուցակում հիշատակվում է Սոթք գավառում՝ 6 միավոր հարկաչափով (ոչ մեծ գյուղ է եղել)։ (էջ 210)։

667. Գառնու ձորի Գոտող (կամ Գոտոզ) վանքը միայն հիշատակվում է այստեղ։ Անորոշ է, թե այդտեղի մեզ հայտնի ո՞ր վանքն էր։ (էջ 210)։

668. Հարկացուցակում այս գյուղը հիշատակվում է Հաբանդ գավառի գյուղերի շարքում՝ 12 միավոր հարկաչափով։ Ե. Լալայանը տեղացիների հնչմամբ Ցղունի ավերակ գյուղատեղ է մատնացույց արել այժմյան Սիսիանի շրջանի Տոլորս գյուղի մոտ (տե՛ս «Ջանգիզուր գաւառ, նիւթեր ազգագրական ուսումնասիրութեան համար», Ա հատոր, Սիսիան, Թիֆլիս, 1898, էջ 82)։ Տերունիները պատմել են, որ գյուղը պատկանել է Տաթևին։ Գնաք է ենթադրել, որ Հաբանդ գավառում պատմիչի հիշած Ցղունին դա է, որ այդ ժամանակ հաշվվել է տվյալ գավառում կամ էլ թերևս մեկ այլ համանուն գյուղ է եղել։ (էջ 210)։

669. Այս գյուղը պահպանել է իր հին անունը Բնունիս ձևով և այժմ մտնում է Սիսիանի շրջանի մեջ։ (էջ 210)։

670. Այն կարծիքն է հայտնվել, որ Ցուրա գետը Տաթև գետակի մեջ արևմտյան կողմից թափվող գետակն է, որը ոմանք անվանել են Ջղարվան (տե՛ս Ք. Խ. Հակոբյան, «Սյունիքի թագավորությունը», էջ 142)։ (էջ 210)։

671. Ինչպես տեսնում ենք, Ցուր անունով հայտնի են և՛ գետ, և՛ բերդ, և՛ գյուղ, որոնք գտնվել են Տաթևի մոտակայքում։ (էջ 210)։

672. Այժմ այսպիսի անունով գյուղ կա Գորիսի շրջանում, Տաթև գյուղից 4 կիլոմետր հեռավորությամբ։ (էջ 210)։

673. Մոսկովյան հրատարակության մեջ՝ Դեղձակորն (էջ 167)։ Այս վայրն է, որ հիշատակվում է իբրև սահմանային Տաթևի շրջակայքի կալվածքների համար՝ պատմիչի բերած վավերագրում, բայց անվան Դեղնաձոր ձևով (գլ. ԽԹ)։ Գ. Մ. Դրիգորյանը գրում է, որ Դեղնաձորը պիտի եղած լինի Տաթևի վանքից դեպի հարավ-արևելք ընկած այժմյան Տղնաձոր կոչված վայրում («Պատմական Սյունիքի մի շարք գյուղերի տեղադրության հարցի շուրջը». «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, էջ 237)։ Միանշանակ օրինակ է Դեղնաձոր-ի Տղնաձոր տեղական հնչումը, ուստի և այդ տեղանվամբ ճիշտ է։ (էջ 210)։

674. Հարկացուցակում Տաշու գյուղը նշվում է Ծղուկ գավառում՝ Տաթևից հաշված երրորդը (գլ. ՀԴ)։ Ըստ հարկաչափի (5 միավոր)՝ փոքր գյուղ է եղել։ Գ. Մ. Դրիգորյանը գրում է, որ Տաթևի մոտի Ազանձի գյուղից այլ կոչված վայրից դեպի հյուսիս կա մի հին գյուղատեղ, որը Տաշու է կոչվում։ Հավանաբար այդտեղ էլ եղել է Տաշու գյուղը (տե՛ս նշվ. աշխ. «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, էջ 237)։ (էջ 210)։

675. Հարկացուցակում Բաղք գավառի գյուղերի ցանկում նշված է Եղէնդն ձևով (գլ. ՀԴ)։ Ըստ հարկաչափի (6 միավոր)՝ մեծ գյուղ չի եղել (էջ 210)։

676. Հարկացուցակում Արիտ գյուղը նշվում է Ծղուկ գավառում՝ 6 միավոր հարկաչափով (գլ. ՀԴ)։ Փոքր գյուղ է եղել։ (էջ 210)։

677. Տամալեկք (Տամալեկս, Տամալեսկ) գյուղը գտնվել է Տաթևի վանքի մոտ։ Շրջակայքի բնակիչները նրա ավերակները այժմ ցույց են տալիս վանքի հարավ-արևելյան կողմից ոչ շատ հեռու, գետի մյուս կողմում՝ կոչելով Տեմքալասկ։ (էջ 210)։

678. Կոկույք (Կակույք—Կակոյս) գյուղը հարկացուցակում Գեղարքունի-

քի բնակավայրերի շարքում հիշվում է 12 միավոր հարկաչափով (գլ. ՀԴ), ուրեմն միջին մեծության գյուղ է եղել։ Տեղանունը չի պահպանվել մինչև մեր ժամանակները։ (էջ 210)։

679. Խոսքը իշխանուհի Շուշանի մասին է։ (էջ 210)։

680. Այս գյուղանունը հանդիպում է նաև Ծածառ, Ծածարղ, Ցացարղ ձևերով։ Հարկացուցակում ներկայացված է Ծղուկ գավառում՝ 10 միավոր հարկաչափով (գլ. ՀԴ), ուրեմն միջին մեծության գյուղ է եղել։ Պահպանվել է միայն գյուղատեղը, որը գտնվում է Տաթևի վանքից 1 կիլոմետր դեպի արևմուտք։ Տաթև գյուղի բնակիչները տեղը մինչև այժմ էլ կոչում են Ծացարղ (Գ. Մ. Դրիգորյան, նշվ. աշխ. «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, էջ 235)։ (էջ 211)։

681. Այս գյուղը անվան նույն ձևով հարկացուցակում ցույց չի տրված։ (էջ 211)։

682. Բնագրում՝ սիգէլ, որ նշանակում է «հրաման, հրամանագիր, կնիք», ապա և՝ «կալվածագիր»։ Լատիներեն sigillum «կնիք» (signum «նշան» բառի նվազականը) բառից է կամ սրանից փոխառված հունարեն σιγίλλο «կնիք, σιγίλλον «կայսերական հրամանագիր» բառերից։ (էջ 211)։

683. Այս Համասպրուհին Սյունյաց Աշոտ մեծ իշխանի թոռն էր։ Նրա հայր Բարկենը Աշոտի կրտսեր որդին էր։ (էջ 211)։

684. Հալիքը (Հալիս) այն գյուղն է, որը հարկացուցակում հիշատակված է Հալէ ձևով, Հաբանդ գավառի գյուղերի շարքում։ Անունը որպես բաղադրամաս պահպանվել է այժմյան Գորիսի շրջանի Հալիձոր գյուղի անվան մեջ։ (էջ 211)։

685. Մոսկովյան հրատարակությունն ունի Խոտաանեան։ (էջ 212)։

686. Այստեղ անեծքի համար բառեր ու արտահայտություններ են առնված մահմեդական կրոնական գրքից՝ Կորանից։ (էջ 213)։

687. Այսինքն՝ ընդհանուր 906 թվականին։ (էջ 214)։

688. Խոտակերաց կամ Քարկոփի վանքը գտնվում է այժմյան Եղեգնաձորի շրջանի Խաչիկ գյուղի մոտ, նրանից դեպի հյուսիս, մոտավորապես 2 կիլոմետր հեռավորության վրա։ Այժմ խիստ քայքայված վիճակում է։ (էջ 214)։

689. Արաստամուղ կամ Արաստամուխ գյուղն այժմ չկա։ Գյուղատեղը գտնվում է Եղեգնաձորի շրջանի Խաչիկ գյուղից մոտավորապես 3 կիլոմետր հյուսիս ընկած ձորակում։ Տեղացիներն անվանում են Առնետ (տե՛ս Հ. Եղիազարյան, «Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները», էջ 31—32)։ (էջ 214)։

690. Այսինքն՝ ընդհանուր 910 թվականին։ (էջ 216)։

691. Խոտակերաց կամ Քարկոփի վանքի սուրբ Աստվածածին եկեղեցու այս արձանագրությունը Ս. Օրբելյանը բերել է տեղ-տեղ ոչ բառացի, այլ բովանդակության շարադրումով։ Այն պահպանվել է, բայց վնասված և հատկապես միջին մասում։ Եղել են հետագայի ընդօրինակումներ ու վերծանումներ։ Ամենից վստահելին հնագետ Ս. Գ. Բարխուդարյանինն է։ Անխոնջ գիտնականը արձանագրության գծագիրը (ինչպես և լուսանկարը) բերել է «Դիվան հայ վիմագրության» գրքի 3-րդ պրակում և վերծանման

մնը պահպանող կամ եղծված մասերի լրացումներ կատարել ըստ Օրբելյան (էջ 206—207-ի ներդիրը)։ (էջ 216)։

692. Տպագրված բնագրում՝ Յովհաննու վանիցն։ Թարգմանության մեջ վանահավաքի ձևով ենք ներկայացրել՝ նկատի ունենալով գլխի բովանդակությունից, այստեղ պատմվում է, որ Վահանը վանքն անվանել է իր անունով, որպես և առհասարակ հայտնի է մեր պատմության մեջ։ Տպագրի «Շինութիւն Յովհաննու վանիցն ի Վահանայ՝ որդւոյ Ջագկայ» վերնագրի դիմաց № 6271 ձեռագիրն ունի՝ «Շինութիւն Յոհաննու վանիցն ի Վահանայ» (էջ 165 ա)։ (էջ 217)։

693. Սա այն Վահանն է, որի մասին պատմիչը հիշատակում է իր երկի ԼՐ գլխում։ Բաղաց մեծ իշխան Ջագիկ 3-րդի որդին էր, Ջևանշեր 2-րդի եղբայրը։ (էջ 217)։

694. Աճանանը (հիշված է և Անեճ ձևով) Բաղքի հին բնակավայրերից է. նշված է և հարկացուցակում 12 միավոր հարկաչափով՝ Եճանան ձևով։ Նրա անունով Բաղքի արևմտյան մասը մի ժամանակ առանձնացվել է որպես առանձին գավառակ։ (էջ 217)։

695. Այսպես ենք թարգմանել գեղեցիկ բառաձևը։ Ըստ Օրբելյանի պատմածի (գլ. ԼԸ)՝ Վահանը մեկ եղբայր ուներ (Ջևանշերը), հետևաբար նեղ խոսքը լիներ նրա արյունակից եղբոր մասին, չէր նշվի հոգնակի ձևով։ Ուրեմն պատմիչը նկատի է ունեցել կրոնավոր եղբայրներին։ (էջ 217)։

696. Տե՛ս ծան. 589։ (էջ 217)։

697. Աչաղու գյուղը հարկացուցակում նշվում է Բաղքի գյուղերի շարքում, առաջին տեղում՝ 12 միավոր հարկաչափով (գլ. ՀԹ)։ Նույն անունով պահպանվել է մինչև մեր ժամանակները և մտնում է Ղափանի շրջանի մեջ։ Վահանավանքից մի քանի կիլոմետր հեռավորության վրա է։ (էջ 217)։

698. Ըստ երևույթին այստեղ աղավաղում կա։ Աչաղու-ից հետո փարիզյան հրատարակությունն ունի և զԱչաղուայ, զԳետառավայր։ Իսկ մոսկովյանն այդ բոլորի փոխարեն ունի զԱչաղուագետ և զԱռավայր։ Ինչ էլ որ եղած լինի, տեղը կապված է Աչաղու գյուղի հետ։ Մոսկովյան հրատարակությունը չունի Աչաղու անունը։ Սրան միացվել է հաջորդի՝ գետ մասը, մնացած մասն էլ ներկայացվել է իբրև առանձին անուն՝ Առավայր ձևով (էջ 175)։ № 6271 ձեռագիրն ունի՝ զԱչաղու և զԱչաղուա գետ [բացթողում] Արավայր (էջ 115 բ)։ (էջ 217)։

699. Շեկք գյուղը հարկացուցակում հիշվում է Բաղքի գյուղերի շարքում, Աճանանից (Եճանան) հետո, հարկաչափի նույնքան (12) միավորներով, բայց Շէֆկս ձևով։ Ենթադրվում է, որ նրա տեղում այժմյան Ղափանի շրջանի Շաղարիկ գյուղն է, Աչաղուի մոտ։ (էջ 217)։

700. Վահանավանքը գտնվում է Ղափանի շրջանում, այժմյան Ղափան քաղաքից մոտ 6—7 կիլոմետր հյուսիս-արևմուտք, Շաղարիկ գյուղի դիմաց։ Երկար ժամանակ հիմնական մասով քաղված էր հողի տակ։ Վերջին ժամանակներս՝ սկսած 1966 թվականից, պատմական գիտ. թեկնածու Գ. Մ. Դրիգորյանի ղեկավարությամբ կատարված պեղումներով վանքն ազատվեց հողի շերտերից, հայտնվեցին մի շարք շինություններ, դամբարաններ, տապանաքարեր, որոնց վրա կան արժեքավոր վիմական արձանագրություններ (մեր այցելությունը՝ 1981 թ. հունիսի 24-ին)։ (էջ 217)։

701. Այսինքն՝ ընդհանուր 911 թվականին։ (էջ 217)։

702. Սա Սյունյաց իշխանաց Աշոտի (Փիլիպե 1-ինի որդու) և մեծ տիկին Շուշանի չորս որդիներից անդրանիկն էր։ Հորից ժառանգեց Սյունիքի իշխանությունը։ 10-րդ դարի առաջին կեսի գործիչ է։ (էջ 218)։

703. Այս Վահանը նախորդ Վահանի, այսինքն՝ Վահանավանքի հիմնադրի Ջևանշեր եղբոր որդին, այդ վանքի առաջնորդ և Սյունիքի եպիսկոպոս լինելուց հետո հայոց կաթողիկոս դարձավ 968 թվականին։ Նրան Ս. Օրբելյանից առաջ հիշատակել են մի շարք մատենագիրներ։ (էջ 218)։

704. Խոսքը Սյունյաց Հակոբ 1-ին եպիսկոպոսի մասին է, որը Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսի եղբորորդին էր և նրա կողմից էլ հիշյալ պաշտոնում ձեռնադրվեց 918 թվականին ու աթոռակալեց մինչև 958 թվականը։ (էջ 218)։

705. Անանիա 1-ին Մոկացի կաթողիկոսն է, որ աթոռակալել է 946—968 թթ.։ Մեծ ջանքեր է թափել իր ժամանակներում հայոց մեջ գլուխ բարձրացրած քաղկեդոնականության ճնշման ուղղությամբ։ Նրա մասին հիշատակել են Առաքելը, Կ. Գանձակեցին, Վարդանը, Ս. Անեցին, Մ. Անեցին և ուրիշներ։ (էջ 218)։

706. Այդ հինգ տարում նա պաշտոնապես կաթողիկոս չէր ճանաչվում։ Քաղկեդոնականությանը հարած լինելու պատճառով վտարված էր 969 թվականին և փախել էր Վասպուրական, որտեղ մոտավ 972 թվականին ու Բաղնից Զորավանքում։ (էջ 218)։

707. Բերկրին գյուղ է Վանի շրջանի Աբաշայի դաշտում, որտեղ եղել է և պատմիչի հիշած վանքը։ (էջ 218)։

708. Սա Սյունյաց Գրիգոր 1-ին թագավորն է, Սյունյաց Սմբատ 2-րդ թագավորի եղբայրը։ Թագավոր դարձավ եղբոր մահից հետո, մոտավորապես 11-րդ դարի հիսնական թվականների վերջերին (նրան նախորդած եղբայրը որպես թագավոր դեռ հիշվել է 1058 թվականին. տե՛ս Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հ. 4-րդ, էջ 550)։ (էջ 218)։

709. Սա Սյունյաց Գրիգոր 1-ին թագավորի (տե՛ս նախորդ ծանոթագրությունը) կինն էր, Սևադա թաքավորի դուստրը, Սյունյաց Սենեքերիմ 2-ին թագավորի քույրը։ 11-րդ դարի գործիչ է եղել։ (էջ 218)։

710. Այս կատան Շահանդուխտ թագուհու՝ Սյունյաց Գրիգոր 1-ին թագավորի կնոջ քույրն էր։ Քույրերը՝ Շահանդուխտը և Կատան, 1086 թվականին կառուցել են ս. Աստվածածնին եկեղեցին Վահանավանքում։ Պատմիչն այստեղ նկատի ունի նրանց այդ կառուցումը։ (էջ 218)։

711. Սյունյաց Սենեքերիմ 1-ին թագավորն է, Կապանի Սևադա թագավորի որդին։ Հաջորդել է Սյունյաց Գրիգոր 1-ին թագավորին։ Գործել է 11-րդ դարի վերջին տասնամյակներին։ Հիշատակել են նաև Մ. Ուռհայեցին, Վարդանը, Մ. Այրիվանեցին։ (էջ 218)։

712. Աղվանքի այս Ստեփանոս կաթողիկոսը Վահանավանքում մեռել է 1091 թվականին։ Այստեղ էլ դտնվում է նրա գերեզմանը։ (էջ 218)։

713. 9-րդ դարի երկրորդ կեսի և 10-րդ դարի սկզբների կրոնավոր է։ (էջ 219)։

714. Համմտ. ծան. 460։ (էջ 219)։

715. Տե՛ս ծան. 459։ (էջ 219)։

716. Տե՛ս ծան. 201։ (էջ 219)։

717. Որոշ ժամանակ Սյունիքում առանձնացվել է Բղեան (Բղենո) անունով գավառ, որը, ըստ Օրբելյանի երկի տվյալների, բռնում էր Տաթևից դեպի հյուսիս-արևելք ընկած տարածքը, Որոտան գետի աջ կողմում, այժմյան Բարթռավան գյուղի շրջանում։ Երբեմն Տաթևն էլ է մտել նրա մեջ։ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 2-րդ, էջ 42)։ (էջ 221)։

718. Նոռավանք անունով Սյունիքում հիշվում են երեք վանքեր, երկուսը՝ Վայոց ձորում, մեկը՝ Բղենում։ Մինչև դարիս երեսնական թվականները որոշակի հայտնի էր միայն Վայոց ձորի Ամաղու գյուղի մոտի Նորավանքը։ Բղենո Նորավանքի տեղի մասին 1932 թվականին հնագետ Ս. Գ. Բարխուդարյանին տեղեկացրել է գրող Ակսել Բակունցը։ Հնագետը, գիտական արշավախմբի հետ 1934 թվականին այնտեղ մեկնելով, ուսումնասիրել ու մանրամասն նկարագրել է հուշարձանախումբը (աշխատությունն անտիպ է մնացել)։ Նույն վանքի մասին հոդված է գրել պատմաբան Գ. Սարգսյանը՝ («Էջմիածին», 1952, № № 3, 4, 6)։

Վանքը գտնվում է այժմյան Գորիսի շրջանի Բարթռավան (երբեմնի Երիցաձոռում) գյուղից 3—4 կիլոմետր դեպի արևելք, մի լեռնաջրուկի վրա՝ երեք կողմից շրջապատված խոր ու անտառուտ ձորերով։ Պահպանված հուշարձանախումբը Գրիգորի ու Հովհաննեսի կառուցածն է, Ստեփանոսի կառուցածից միայն որոշ հետքեր են մնացել։ Այս ամենի մասին տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 2-րդ, էջ 41—43։ Այժմ վանքն զգալի չափով վերակառուցված է (մեր վերջին այցելությունը՝ 24 հունիսի 1981 թ.)։ (էջ 221)։

719. Կատարի վանքը գտնվում էր արևմտյան Բաղքի (Աճանան) հարավային սահմանի մոտ, Բեխ գյուղի դիմաց, Ողջագետից մոտ երկու կիլոմետր հեռավորությամբ մի լեռան՝ դեպի հարավ ուղղված լանջին։ Նրա ինկունքը հյուսիսային կողմն է, որտեղ Ստեփանոսն ընտրել է Բղենո վանքի տեղի (Թ. Ա. Հակոբյան, «Սյունիքի թագավորությունը», էջ 135)։ էջ 221)։

720. Սա ուրիշ Հրահատ է. ո՛չ Քուպիդոնիտի ամուսին Հրահատը, ո՛չ էլ Տաթևի 844 և 881 թվականների կալվածագրերում հիշատակվողը։ Սրա գործունեության ժամանակն ավելի ուշ է։ (էջ 221)։

721. Այսինքն՝ ընդհանուր 936 թվականին։ 1948 թվականին կազմակերպված գիտարշավի ժամանակ հայտնաբերված որմնանայան խոյակի վրա պահպանված թվականը 32Դ է, այսինքն՝ 935։ Այստեղ պահպանված են նաև վանքի ու նրա հիմնադիրի անունները, որոնք հաստատում են, որ դա, իրոք, Բղենո գավառի Նորավանքն է։ Այս ժամանակ ավարտվել է առաջին հուշարձանախմբի կառուցումը։ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 2-րդ, էջ 43—44)։ (էջ 221)։

722. Այսինքն՝ ընդհանուր 970 թվականին։ (էջ 222)։

723. Բնագրում՝ պենտեկոստէին։ Պենտեկոստէ հունարեն է՝ բառացի «հիսուներորդ» իմաստով։ Սա Աստվածաշնչում գործածվել է «հրեաների՝ եգիպտոսից դուրս գալու հիսուներորդ օրը, հիսներյակ», «հոգեգալուստ, որ զատկից հիսուն օր հետո է գալիս», «զատկից մինչև հոգեգալուստ եղած 50 օրվա ժամանակամիջոցը» իմաստներով։ Մենք թարգմանեցինք «հոգեգալուստ» իմաստով։ (էջ 222)։

724. Ըստ արձանագրությունների՝ Գրիգորի ու Հովհաննեսի կատարած այս կառուցումներն ավարտվել են 1062 թվականին։ Տեղում ներկայումս գոյություն ունեցող հուշարձանները սրանք են («Դիվան հայ վիմագրության», պրակ 2-րդ, էջ 42)։ (էջ 222)։

725. Այս բնակավայրը Ս. Օրբելյանի երկում հանդիպում է Ցուրայ բերդ (Ցուրաբերդ), Ցուրոյ քար (Ցուրաքար), Ցուր անվանաձևերով։ Այստեղ այժմ Գորիսի շրջանի Սվարանց գյուղն է։ Համմտ. նաև ծան. 671։ (էջ 222)։

726. Այսինքն՝ ընդհանուր 915 թվականին։ (էջ 224)։

727. Այս Վասակը և Սևադան Սյունյաց Սմբատ 1-ին թագավորի (973—998 թթ.) որդիներն էին։ Հոր մահից հետո Վասակը թագավոր դարձավ և կոչվեց Վասակ 1-ին, իսկ Սևադան եղավ իշխանաց իշխան։ Վասակի գործունեությունն ընդգրկում է 10-րդ դարի վերջերից մինչև 11-րդ դարի երեսնական թվականների վերջերը։ Կա այն կարծիքը, որ նա թագավորել է մինչև 1040 թվականը (Ղ. Ալիշանի նշած 1010 թվականը վրիպակ է)։ Տե՛ս Տ. Մ. Սահակյան, «Սյունյաց թագավորության հիմնումը և նրա քաղաքական դերը 11-րդ դարում» («Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 3, էջ 223)։ (էջ 224)։

728. Այստեղ խոսքը Հակոբ 2-րդի մասին է, որն աթոռակալել է 1000—1003 թթ.։ (էջ 224)։

729. Սա Սյունյաց Գրիգոր 3-րդ եպիսկոպոսն է։ Իշխել է 1003—1006 թթ.։ (էջ 225)։

730. Այսինքն՝ ընդհանուր 918 թվականին։ (էջ 226)։

731. Սա նշանավոր պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին է, որ այդ ժամանակ կաթողիկոս էր։ (էջ 226)։

732. Սա Սյունիքի Հակոբ 1-ին եպիսկոպոսն էր։ Համմտ. ծան. 704։ (էջ 226)։

733. Զագեձորը այժմյան Գորիս քաղաքի մոտի ձորն է, որ տեղացիները մինչև հիմա էլ կոչում են «Ծակերի ձոր» («Ծակեր»-ը ձորի երբեմնի բնակելի քարայրներն են (Համմտ. ծան. 50)։ (էջ 226)։

734. Վարակն կոչված ջուրը Զագեձոր կամ Գորիս գետն է, որը Շաքի, Ներքոհակ գետերի հետ սկիզբ է առնում Եռակատարի տափից բխող աղբյուրներից և թափվում Որոտանի մեջ։ (էջ 226)։

735. Տպագրված բնագրի մի օրինակում Խոտանաձեցեաց է, մյուսում՝ Խոտանեցեաց։ (էջ 227)։

736. Նկատի ունի Նահանդի Նորիք, Խոտանան, Շնհր, Հալիք (Հալեն) գյուղերի բնակիչներին։ (էջ 227)։

737. Բնագրի համապատասխան տեղում գործածված է մատակ բառը, որը բանասերների կողմից բացատրվել է «ավազան կամ առու» (Հ. Աճա-

ռեան, Հայերէն արմատական բառարան, հ. 4-րդ, էջ 860), «ջրի ավազան, գուռ» (Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 3-րդ, էջ 265)։ Բառն առաջինը նկատել է Ա. Այտընյանը, որը դուրս է բերում (հարցականով) արաբերէն մեթքա բառից՝ «ջուր հանելու տեղ» նշանակությամբ (Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայկերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 143)։ Համանական համարեցինք «ջրավազան» իմաստը, որպես և թարգմանեցինք (էջ 227)։

738. Այսինքն՝ ընդհանուր 932 թվականին (էջ 227)։

739. Բնագրում՝ ապիզար եմ: Ապիզար բառը հանդիպում է պատմչի երկում տարբեր իմաստներով։ Այստեղ գործածված է «հրաժարում անփա-կանության իրավունքից» իմաստով։ (էջ 228)։

740. Միջնադարում մեզանում ֆրանկ (ֆռանդ) կամ փռանգ են կոչվել ընդհանրապես եվրոպացիները (հատկապես ֆրանսիացիները, այլև գերմանացիները), որոնք թափանցում էին Արևելքի երկրները։ Բառը լատիներեն է՝ francus, որը հին ֆրանսերենում դարձել էր franc։ (էջ 228)։

741. Բնագրում՝ զաւռախս, որը և նույն տեղում թարգմանված է «պատկերագործ»։ Մ. Բրոսեն իր թարգմանության մեջ (էջ 150) համարում է հունարեն ζωγραφος բառի այլափոխությունը։ Հ. Աճառյանը երկբայաբար ենթադրում է, որ առաջացած պիտի լինի պարսկերեն zarvarag բառից, որը նշանակում է «գրքի դրվագազարդման ոսկեթերթ թուղթ» (Հայերէն արմատական բառարան, հ. 2-րդ, էջ 1008)։ (էջ 228)։

742. Այսինքն՝ ընդհանուր 930 թվականին (էջ 229)։

743. Այստեղ այս անվան տակ նկատի է առնվել Աշոտ 2-րդ Երկաթ թագավորը։ Նրա մասին տե՛ս ծան. 579։ (էջ 229)։

744. Այսինքն՝ ընդհանուր 929 թվականին (էջ 229)։

745. Սա այժմյան Նեղնաձորի շրջանում գտնվող Եղիգիսի հովիտն է։ (էջ 229)։

746. Սա նույն Ոստինք գյուղն է։ Այժմ ավերակ գյուղատեղ։ Համմա-ծան. 193։ (էջ 229)։

747. Սա Սյունյաց իշխանաց իշխան Սմբատն է, որը Փիլիպե 1-ինի որդի Աշոտի անդրանիկ որդին էր, Վայոց ձորի և Ճահուկի տերը։ 10-րդ դարի 1-ին կեսի գործիչ է եղել։ (էջ 229)։

748. Սմբատի կին իշխանուհի Սուփիան Արծրունյաց մեծ նախարար Գրիգոր 3-րդ Դեբենիկի դուստրն էր, Դադիկի (թագավոր) քույրը։ Հայտնի է իր շինարարական գործունեությամբ։ (էջ 229)։

749. Այսինքն՝ ընդհանուր 938 թվականին։ (էջ 230)։

750. Սա փոքր գյուղ է եղել։ Հարկացուցակում հիշվում է Վայոց ձոր գավառում՝ 6 միավոր հարկով։ (էջ 230)։

751. Հետագայում վանքի անունը տարածվել է Հերմոնի վանք ձևով։ Հնագետներն ու բանասերները նրա ճիշտ տեղը վիճելի են համարել։ Քաջբերունին կարծիք է հայտնել, իսկ Ս. Գ. Բարխուդարյանը հաստատել է, որ դա այժմյան Նեղնաձորի շրջանի Գյումենց կոչված վանքն է։ Վերջինս հիշյալ վանքում հայտնաբերել է կամարի մեջ ագուցված մի հին քար՝ արձանագրության մնացորդով։ Այնտեղ կարդացվում է ԵՐԱՄՈՆԻ վանք։ Սկզբից հավանաբար ընկել են ԱՀ(ԱՀԵՐԱՄՈՆԻ) կամ (ՀԵՐԱՄՈՆԻ) տառերը։

Սա անժխտելի ապացույց է։ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 132, այլև՝ № 390 արձանագրությունը նույն գրքում։ Գյումենց անվանումը թուրքերեն է, գալիս է հետագա դարերից։ (էջ 231)։

752. Սա հայտնի Գնդեվանքն է, Վայոց ձորի հին ու նշանավոր հուշարձաններից մեկը։ Գտնվում է Արփա գետի վերին հոսանքի ձախ կողմում, անդնդախոր ձորի մեջ, Աղիոքբեկովի շրջանի Գնդեվազ գյուղից ներքև։ Կառուցվել է 936 թվականին։ Մինչև այժմ էլ կանգուն է հիմնական տաճարը (վերջին անգամ այցելել ենք 1979 թ. նոյեմբերին)։ (էջ 231)։

753. Խոսքը համանուն գյուղի մասին է։ Այժմ մտնում է Աղիոքբեկովի շրջանի մեջ՝ Գնդեվազ անվանումով։ Հարկացուցակում հիշատակվում է Վայոց ձոր գավառում՝ 10 միավոր հարկաչափով։ Անունը ձևափոխվել է Գնդեվանք—Գնդեվանս—Գնդեվազ անցումով։ (էջ 231)։

754. Հարկացուցակում այս գյուղը հիշատակվում է Վայոց ձոր գավառում՝ 6 միավոր հարկաչափով։ Ուրեմն՝ փոքր գյուղ է եղել։ Ըստ պատմիչի՝ գտնվել է (ձորի) մյուս կողմում։ Բայց ո՞ր գյուղն է։ Ե. Լալայանը ժամանակին գրել է. «Գնդեվազից դէպի արևմուտք, մօտ 5 վերստ հեռու, Արփաչայի աջ ափին, տեղատորուած է մի փոքրիկ թրքաբնակ գիւղ, Աղչաքանդ, որ հաւանօրէն հին Առշարը պիտի լինի» (Շարուր-Դարալագեազի գաւառ. «Ազգագրական հանդէս», 12-րդ գիրք, Թիֆլիս, 1904, էջ 255)։ Համապատասխան տարածքում՝ Աղիոքբեկովի շրջանում, այժմ չկա այդ գյուղը։ (էջ 231)։

755. Այսինքն՝ ընդհանուր 936 թվականին։ (էջ 231)։

756. Ս. Օրբելյանի ընդօրինակած արձանագրությունը, որի թարգմանությունն ենք տվել այստեղ, այժմ Գնդեվանքում ամբողջովին պահպանված չէ։ Նրա միջին մասը չկա (քարերը հավանաբար դուրս են ընկել նորոգումների ժամանակ)։ Կան նույն բովանդակությանը վերաբերող 4 փոքրիկ արձանագրություններ՝ գրության ընդհանուր ոճով, բայց տառերի տարբեր չափով ու տողերի տարբեր երկարությամբ (ընդօրինակումները, վերծանումները և լուսանկարները տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 13, 14, լուսանկարները № № 1—4)։ Հայտնվել են տարբեր կարծիքներ։ Դրանցից նորագույնը և ամենից հավանականը հնագետ Ս. Գ. Բարխուդարյանինն է։ «Այսպիսով, կարծում ենք,— եզրակացրել է նա,— որ տեղում պահպանված մի քանի բեկորները, որ նույնիսկ ասո են, բայց գրված տարբեր չափերի գրերով, նույն բովանդակությունն ունեցող արձանագրությունների մասեր են՝ գրված շինության ժամանակ» (նույն տեղում, էջ 11)։ Բայց, այնուամենայնիվ, ինչ-որ անպարզ ուսումնասիրության կարոտ բան է մնում։ (էջ 232)։

757. Այսինքն՝ ընդհանուր 999 թվականին։ (էջ 232)։

758. Գնդեվանքի վանահայրն է եղել այդ ժամանակներում։ (էջ 232)։

759. Սա էլ տեղի վանահայրերից է եղել։ (էջ 232)։

760. Սա Սարգիս 1-ին կաթողիկոսն է, հայտնի Սևանեցի մականունով։ Կրթություն է ստացել Սևանի վանքում։ Եղել է նախ Շողվագա և ապա Սևանի վանքերի վանահայր։ Կաթողիկոս է ընտրվել 922 թ. և ծերության պատճառով հրաժարվել է 1019 թ.։ Մեռել է 1022 թ.։ Նրա մասին գրել են

Աստղիկը, Ա. Լաստիվերտցին, Մ. Ուռհայեցին, Ս. Անեցին, Կ. Գանձակեցին, Մ. Այրիվանեցին և ուրիշներ։ (էջ 232)։

761. Հայոց Բագրատունի Գագիկ 2-րդ թագավորն է, Աշոտ 4-րդի որդին։ Իշխել է 1042—1044 թթ.։ Հաջորդել է Հովհաննես-Սմբատին։ Հայրենասեր էր, բայց խաբվեց դավաճան Վեստ Սարգսի ու նրա համախոհների կողմից, գնաց Կոստանդնուպոլիս։ 1079 թ. նրան կախեցին Կիզիատրա բերդում։ Նրա մասին գրել են Գ. Մագիստրոսը, Ա. Լաստիվերտցին, Մ. Ուռհայեցին, Ս. Անեցին, Կ. Գանձակեցին, Մ. Այրիվանեցին և ուրիշներ։ (էջ 232)։

762. Սա Սյունիքի և Բաղքի թագավոր Վասակ 1-ինն է, Սյունյաց Սմբատ 1-ին թագավորի որդին։ 11-րդ դարի առաջին կեսի գործիչ է։ (էջ 232)։

763. Սա Գնդեվանքի վանահայր Սարգիս 2-րդն է։ (էջ 232)։

764. Ջկնարածը այժմյան Բազարչայ գետն է։ (էջ 232)։

765. Պրակը գյուղի բնակիչները։ Գյուղը եղել է Վայոց ձոր գավառում, Հարկացուցակում հիշատակվում է 12 միավոր հարկաչափով։ Մեր ժամանակներում տեղանունը չի պահպանվել։ Ստույգ չգիտենք՝ ո՞ր գյուղն է։ Բայց դատելով պատմագրի հաղորդածից՝ կարելի է ասել, որ գտնվել է Գնդեվանքի կալվածքների մոտ, այժմյան Գնդեվազի, Կեչուտի մոտակայքում։ Ե. Լալայանը ժամանակին գրել է, թե հին Պրակը Բիլաք փոքրիկ գյուղը պիտի լինի, Կեչուտի մոտ (Շարուր-Դարալագեազի գաւառ, «Ազգագրական հանդէս», 12-րդ գիրք, Թիֆլիս, 1904, էջ 253)։ Շրջանում այժմ չկա այդ գյուղը։ (էջ 232)։

766. Վայոց ձորի Կեչուտ գյուղի բնակիչները։ Կեչուտը փոքրիկ գյուղ է եղել. հարկացուցակում նշվում է 6 միավոր հարկաբաժնով։ Այժմ մտնում է Ազիզբեկովի շրջանի մեջ և վերականգնումով կրում է նույն անունը (մի որոշ ժամանակ անվանվել է Դուշլի), Արփա-Սևան ստորերկրյա ջրանցքի համար ջրամբարի կառուցման պատճառով գյուղը տեղափոխվել է փոքրինչ վերև (նրա տեղում ջրամբարն է)։ (էջ 232)։

767. Այսինքն՝ ընդհանուր 1008 թվականին։ (էջ 232)։

768. Նկատի է ունեցել Սյունյաց Հովհաննես 7-րդ եպիսկոպոսին, որը հաջորդել է Գրիգոր 3-րդին և գահակալել 1006—1058 թթ.։ Շատ գործեր է կատարել։ Վերականգնել է Սյունյաց մետրոպոլիտությունը, որը խախտվել էր Անանիա Մոկացու կողմից։ Ետ է վերադարձրել Տաթևից խլված կալվածքները։ Կրկին վերաշինեց պարսիկների կողմից ավերված վանքը և այլն։ (էջ 232)։

769. Բնագրում՝ մարտիրոդոգ։ Հունարեն μαρτυρολόγιον բառն է՝ կազմված μάρτυρος «նահատակ, վկա», և λόγος «խոսք, բան» բառերից։ Այդպիսի գրքերում պատմվում էին նահատակների տառապանքների, գործերի, սպանությունների մասին։ (էջ 233)։

770. Նկատի ունի 4-րդ դարի կրոնական նշանավոր գործիչ Գրիգոր Աստվածաբանին, որը գրել է բազմաթիվ ճառեր, մեկնություններ, ներբողներ, դավանաբանական գործեր, ղեկավարել է Կոստանդնուպոլսի 381 թվականի եկեղեցական հայտնի ժողովը։ (էջ 233)։

771. Բնագրում՝ կողոբ։ Այս բառը մեր մատենագրության մեջ գործածվել է «կարճ ղգեստ, կրոնավորի կարճ ներքնազգեստ» իմաստով։ Գալիս է

հունարենից՝ κολόβιον, κολοβή «կարճ ներքնազգեստ»։ Այդ իմաստն այստեղ չի հարմարվում։ Մ. Բրոսեն թարգմանել է châsse բառով (անդ, էջ 153), որը նշանակում է «զգեստ, տուփ՝ տուրք մատուցներ պահելու համար»։ Դա համընկնում է Ս. Օրբելյանի գործածությանը։ Բառիմաստը փոխված է, բայց բառարանները չեն արձանագրել։ Թարգմանելիս մենք նկատի ենք ունեցել այդ իմաստը։ (էջ 233)։

772. Մազազ գավառի մասին տե՛ս ծան. 483։ (էջ 234)։

773. Սա այժմյան Սելիմի ձորն է։ (էջ 234)։

774. Հարաշկոնքը Վայոց ձոր գավառի բնակավայրերից է եղել։ Հարկացուցակում հիշատակված է 10 միավոր հարկաչափով, ուրեմն միջին մեծության է ունեցել։ (էջ 234)։

775 Խոսքը Զաքարյան Սարգիս մեծ իշխանի որդի Իվանե աթաբեկի մասին է։ (էջ 234)։

776. Այսինքն՝ Իշխանիկ կոչված Վասակին։ (էջ 235)։

777. Տե՛ս ծան. 678։ (էջ 235)։

778. Այսինքն՝ ընդհանուր 920 թվականին։ (էջ 236)։

779. Սա, անշուշտ, հարկացուցակում Հաբանդի գյուղերի շարքում հիշատակված Ղզուեռձճ է։ Միջին մեծության գյուղ է եղել (12 միավոր հարկաչափով։ (էջ 236)։

780. Այս նույն ձևով Հաբանդ գավառի գյուղերի շարքում հարկացուցակում հիշատակված չէ։ (էջ 236)։

781. Այսինքն՝ ընդհանուր 943 թվականին։ (էջ 236)։

782. Տե՛ս ծան. 677։ (էջ 237)։

783. Վաղավեր գյուղը հարկացուցակում հիշված է Սոթքի գյուղերի շարքում։ Միջին մեծության գյուղ է եղել՝ 10 միավոր հարկաչափով։ (էջ 238)։

784. Տաշտակերտը հարկացուցակում չի նշված։ (էջ 238)։

785. Այսինքն՝ ընդհանուր 925 թվականին։ (էջ 239)։

786. Եթե հիշյալ գործարք կատարողը Զագիկ 3-րդն է եղել, ապա այս անունը սխալ է գրված, պիտի լինի Վահան, որովհետև Զագիկ 3-րդի որդիներն էին Ջևանշերն ու Վահանը։ Համմտ. ծան. 693։ (էջ 239)։

787. Անանիա 1-ին Մոկացի կաթողիկոսն է։ Աթոռակալել է 941—968 թթ.։ Հայտնի է ժամանակին գլուխ բարձրացրած քաղկեդոնականության դեմ իր մղած պայքարով (Սյունիքում և Աղվանքում)։ (էջ 240)։

788. Խոսքը Բաղաց Ջևանշեր 2-րդ իշխանի որդի Վահանի մասին է, որը Վահանավանքի առաջնորդն էր։ Անանիա Մոկացի կաթողիկոսի կողմից ձեռնադրվեց և նշանակվեց Սյունյաց եպիսկոպոս՝ Տեր-Հակոբի փոխարեն, ապա և դարձավ հայոց կաթողիկոս (968 թ.)՝ այս դեպքում էլ փոխարինելով Անանիա Մոկացուն։ (էջ 240)։

789. Արըինայի վանքը գտնվում է Կարսի շրջանում, համանուն փոքրիկ գյուղի մոտ, Ախուրյան գետի ձախ ափին (այժմ մտնում է Թուրքիայի տարածքի մեջ)։ Ներկայումս ավերակ է։ Ժամանակին նշանավոր վանք է եղել։ Կառուցվել է Տրդատ ճարտարապետի կողմից։ Որոշ ժամանակ այստեղ կաթողիկոսներ են նստել։ Նախաքրիստոնեական շրջանից տեղում եղել է բերդաքաղաք։ (էջ 240)։

790. Թեոդորոս Ռշտունի 1-ին կաթողիկոսն է։ Աթոռակալել է 930—941 թթ.։ Հաջորդել է Ստեփանոսին, նախորդել Անանիա 1-ին Մոկացուն։ Ընդամում էր Աղթամարում։ Նրա մասին գրել են Ասողիկը, Ս. Անեցին, Մ. Անեցին, Մ. Այրիվանեցին և ուրիշներ։ (էջ 240)։

791. Այսինքն՝ ընդհանուր 941 թվականին։ (էջ 240)։

792. Աղվանքի կաթողիկոս Սահակն է։ Իշխել է 928—947 թթ.։ Ապրատամբվել էր հայոց կաթողիկոսության դեմ, անկախացել։ Իր ազդեցության տակ էր գցել նաև Սյունիքի եպիսկոպոսին։ (էջ 241)։

793. Աբաս 1-ին Բագրատունի թագավորն է, Սմբատ 1-ինի որդին, Աշոտ երկաթի եղբայրը։ Հաջորդել է վերջինիս, իշխել 930—954 թթ.։ Նրա մասին գրել են Հ. Դրասխանակերտցին, Թ. Արծրունին, Ասողիկը, Մ. Անեցին և ուրիշներ։ (էջ 241)։

794. Անձևացյաց նշանավոր եպիսկոպոս Խոսրովն է, Գրիգոր Նարեկացու հայրը։ Միաժամանակ մատենագիր էր։ Զանազան գաղափարների արտահայտումով ապստամբվել էր հայոց կաթողիկոս Անանիա Մոկացու դեմ ու նզովվել նրա կողմից։ Մեռել է 972 թ.։ Նրա մասին գրել են Հ. Արծիշեցին, Մ. Այրիվանեցին, Վարդանը և ուրիշներ։ (էջ 242)։

795. Խաչենը Արցախի մի մասն էր կազմում։ Ընդգրկում էր Մյուս Հաբանդի մեծագույն մասը, Մեծառանքը, Մեծկվենքը, Փառիսոսը, Բերդաձորը, Տարը, որոշ գավառամասեր Ուտիքից և այլն։ «Աշխարհացոյց»-ի տվյալների համեմատ հետագա դարերում փոխվել էին նրա սահմանները։ Տե՛ս Բ. Ա. Ուլուբաբյան, «Խաչենի իշխանությունը 10—16-րդ դարերում», Երևան, 1975, էջ 30—34։ (էջ 243)։

796. Խոսքն այն գրքի մասին է, որը մեզ հասել է Մովսես Կաղանկատվացու անունով։ (էջ 243)։

797. Պատմիչն այստեղ և այլուր նշում է այս տարբերակումը, բայց հաճախ Աղվանքի համար արխեպիսկոպոս բառի փոխարեն գործածում է կաթողիկոս բառը։ Դա արտացոլում է այն իրողությունը, ըստ որի հետագա դարերում Աղվանքի հոգևոր առաջնորդներն արդեն կաթողիկոս էին կոչվում։ (էջ 243)։

798. Տե՛ս ծան. 271։ (էջ 243)։

799. Կամիտաս Աղցեցի հայոց կաթողիկոսն է, Արաշածոտն գավառի Աղցք գյուղից։ Աթոռակալել է 615—628 թթ.։ Պայքարել է քաղկեդոնականության դեմ։ (էջ 243)։

800. Խոսքը Եղիա 1-ին Արճիշեցի կաթողիկոսի մասին է։ Համմ. ծան. 304։ (էջ 244)։

801. Պարտավը Ուտիքի նահանգի և ամբողջ Աղվանքի մայրաքաղաքն էր 402 թվականից։ Հետո կոչվել է նաև Պերոզապատ, Պերոզ-կավատ։ Այժմ՝ Բարդա, մտնում է Ադրբեջանական ՍՍՀ-ի մեջ։ (էջ 244)։

802. Տե՛ս ծան. 486։ (էջ 244)։

803. Այս Համամը Բագրատունի ցեղից էր, կոչվել է և Արևելցի (այլև՝ Հուհհաննես)։ Նորոգեց Աղվանից թագավորությունը։ Ախշիհի ձեռքից Գեորգ կաթողիկոսին (877—897) փրկագնով ազատեց 894 թ.։ Կնոջ հետ թաղված է Արցախի Վարանդա գավառի Ավետարանոց գյուղում (այժմյան Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Ասկերանի շրջանի Ջանախլի գյուղ)։ (էջ 244)։

804. Այսինքն՝ Ջևանշեր իշխանին և Տեր-Հակոբ եպիսկոպոսին։ (էջ 246)։

805. Այսինքն՝ ընդհանուր 949 թվականին։ (էջ 246)։

806. Այսինքն՝ ընդհանուր 958 թվականին։ (էջ 246)։

807. Տպագիր բնագրում հոգնակի թվով է։ (էջ 246)։

808. Սա Զաքիկ 3-րդի որդի Ջևանշեր (Ջիվանշիր) 2-րդն է։ (էջ 246)։

809. Տե՛ս ծան. 592։ (էջ 246)։

810. Տե՛ս ծան. 700։ (էջ 247)։

811. «Գիրք թղթոց»-ը դավանաբանական թղթերի ժողովածու է, ընդգրկում է 5—13-րդ դարերի գրություններ, որոնք ուղղված են դավանական շեղումների դեմ պայքարելու և եկեղեցու միասնությունը պահպանելու նպատակին։ Համմ. «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901։ (էջ 247)։

812. Խոսքը Սյունիքի Հովհաննես 7-րդ եպիսկոպոսի մասին է, որը գահակալել է 1006—1058 թթ.։ (էջ 247)։

813. Տե՛ս ծան. 760։ (էջ 247)։

814. Այսինքն՝ Անանիա 1-ին Մոկացին։ (էջ 247)։

815. Հ. Աճառյանը նշել է, թե անորոշ է մնում՝ ով էր այս Գրիգորը, գուժկա՞նը, թե թագավորը (Հայոց անձնանունների բառարան, հ. 1-ին, էջ 502)։ Մ. Օրմանյանը, ժամանակին անդրադառնալով Օրբելյանի երկի բնագրի այս մասին, գրել է, թե խոսքը վերաբերում է թագավորին, բայց նկատում է, որ նշված տարիներին վասպուրականում Գրիգոր անունով թագավոր չկար։ Դեպքը մտացածին չհամարելու դեպքում պետք է ընդունել, որ թագավորի համար Գրիգոր անունն այդտեղ սխալմամբ է գրված (տե՛ս «Ազգապատում», Կոստանդնուպոլիս, 1912, էջ 1095)։ (էջ 247)։

816. Տպագիր բնագրում գուժկանի խոսքում նշված չէ, թե ո՛վ էր մեռնողը, որի դին սպասում էր կաթողիկոսին։ Ըստ երևույթին, Արծրունյաց թագավորի մի մերձավորը, հավանաբար կինն էր մեռել, և թագավորը Անանիա կաթողիկոսին հրավիրում էր թաղման։ Այս մասին տե՛ս նաև Մ. Օրմանեան, «Ազգապատում», էջ 1095։ (էջ 247)։

817. Խոտակերաց վանքի մասին տե՛ս ծան. 688։ (էջ 248)։

818. Սա նույն Վահանավանքն է, որի անունն այս երկում տեղ-տեղ հանդիպում է և այլ ձևով։ (էջ 248)։

819. Այսինքն՝ Վահանավանքում։ (էջ 249)։

820. Ծացարդն ու Հարժիքը Սղուկ գավառի գյուղերից էին։ Ծացարդի մասին տե՛ս ծան. 680, Հարժիքի մասին՝ ծան. 604։ (էջ 249)։

821. Այսինքն՝ 963 թվականին։ (էջ 249)։

822. Տե՛ս ծան. 789։ (էջ 249)։

823. Սա Աշոտ 3-րդ (Ողորմած) հայոց թագավորն է։ Իշխել է 954—977 թթ.։ Բայց նա Աբաս 1-ին թագավորի որդին էր, որին և հաջորդեց։ Իր որդին էր Սմբատ 2-րդը։ (էջ 249)։

824. Բնագրում՝ կաւճ (կաւճիւք)։ Հունարեն ςχώϛ բառն է, որ նշանակում է «պատկեր» (այս դեպքում՝ «սրբապատկեր»)։ (էջ 250)։

825. Խոսքը Հայաստանի միջնադարյան հռչակավոր մայրաքաղաք Անիի մասին է։ (էջ 250)։

826. Ջորո կոչված վանքը գտնվում էր Վասպուրականի նահանգի Տոսպ

գավառում, որտեղ մնաց և վախճանվեց Վահանը։ Կոչվել է նաև Սալնապատ։ (էջ 250)։

827. Բնագրում՝ ſաւրէչ (քօրէշ)։ Նշանակում է «իշխանավոր, առաջնորդ, կաթողիկոս» (այստեղ՝ «կաթողիկոս»)։ Ասորերենից փոխառյալ kureš -ն է, որը Կյուրոս հատուկ անունից հասարակի է անցել։ (էջ 250)։

828. Տեր Խաչիկ կաթողիկոսն է, Անանիայի քրոջորդին։ Եղել է Արշարունիքի եպիսկոպոս։ Կաթողիկոս է դարձել 973 թ., աթոռակալել է մինչև 992 թվականը։ (էջ 250)։

829. Մոսկովյան հրատարակության մեջ նշվում է 3 տարի (էջ 213)։ (էջ 251)։

830. Սա Սյունյաց այն մեծ իշխան Սմբատն է, որը Տաթևի վանքին նվիրեց Հարժիք և Նացարդ գյուղերը՝ 963 թվականին։ Դրանից հետո (973 թ.) իրեն հռչակեց թագավոր՝ հիմք դնելով Սյունիքի վասալ թագավորության։ Մեռել է մոտավորապես 998 թվականին, թաղվել Տաթևի վանքում։ (էջ 251)։

831. Հարանդ գավառի Տեղ գյուղը նույն անունով էլ հարատևել է մինչև մեր ժամանակները։ Մտնում է Գորիսի շրջանի մեջ։ Նշված ժամանակ զգալի մեծություն է ունեցել. հարկացուցակում հիշվում է 12 միավոր հարկաչափով։ (էջ 251)։

832. Դա 31-րդ (ԼԱ) սաղմոսն է։ (էջ 251)։

833. Ջարը հատուկ հարկ է եղել։ Այստեղ հիշյալ բառը եզրույթ է՝ «կոռ, բեգյար կամ ընդհանրապես հարկ» իմաստով։ (էջ 252)։

834. Այսինքն՝ ընդհանուր 998 թվականին։ (էջ 252)։

835. Տե՛ս ծան. 725։ Համմտ. գլ. ԽԸ։ (էջ 253)։

836. Տե՛ս ծան. 729։ (էջ 253)։

837. 11-րդ դարի սկզբներին հանդես եկած Սյունյաց իշխաններից է։ (էջ 253)։

838. Այս Բոլորաքարը հարկացուցակում հիշատակված չէ։ Գտնվել է Տաթևի մոտ։ Գ. Մ. Գրիգորյանը գրում է, որ Տաթևի վանքից դեպի հյուսիս-արևմուտք մոտ 1 կիլոմետր հեռավորությամբ, հանդիպակաց բլրի վրա մինչև հիմա կա մի հին գյուղատեղ, որը կոչվում են Պլուրամար. դա պիտի լինի Բոլորաքարը («Պատմական Սյունիքի մի շարք գյուղերի տեղադրության հարցի շուրջը». «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, էջ 239)։ (էջ 253)։

839. Սա Սյունիքի Հովհաննես 7-րդ եպիսկոպոսն է։ Համմտ. ծան. 768։ (էջ 254)։

840. Այս նահապետ իշխանաց իշխան Վասակն ապրել է մինչև 9-րդ դարի 1-ին քառորդը, մեռել է 821 թվականին։ Համմտ. նաև ծան. 410։ (էջ 254)։

841. Տե՛ս ծան. 443, 444, 596։ (էջ 254)։

842. Այս պատերազմը տեղի է ունեցել 824 թվականից հետո և 833 թվականից բավական առաջ։ Համմտ. նաև ծան. 433։ (էջ 255)։

843. Համմտ. ծան. 439։ (էջ 255)։

844. Շնհերի մասին տե՛ս ծան. 431։ (էջ 255)։

845. Ս. Օրբելյանի երկում այս անունը հանդիպում է Հաբաւեղ կամ Համբրաւեղ ձևերով։ (էջ 255)։

846. Խոսքը վերաբերում է Հայաստանի կենտրոնական թագավորությանը հակադիր Վասպուրականի Արծրունյաց թագավորության հիմնադրմանը։ (էջ 256)։

847. Խոսքը վերաբերում է Սմբատ 1-ին Բագրատունի թագավորին (890—914 թթ.)։ (էջ 256)։

848. Հայոց Սմբատ 2-րդ Բագրատունի թագավորի (977—990 թթ.) ժամանակ նրա եղբայր Գուրգենը, որ իշխում էր իրեն բաժին ընկած Լոռում, ըմբոստացավ Անիի թագավորության դեմ և Գուգարքն անջատեց նրանից։ Սրա որդի Իշխան Դավիթը (Անհողին) 989 թվականին իրեն հայտարարեց թագավոր։ Այսպիսով հիմք դրվեց Գուգարքի թագավորության, որն սկզբում կոչվում էր Զորագետի կամ Լոռու, հետագայում՝ նաև Կյուրիկյան թագավորություն։ (էջ 256)։

849. Բասյանքի (Կարս—Վանանդի) թագավորությունը հիմնադրեց Աշոտ 3-րդ թագավորի եղբայր Մուշեղը։ Սա Հայաստանի ապարապետն էր։ Երբ 962 թվականին արքունիքը Կարսից փոխադրվեց Անի, Մուշեղը չենթարկվեց թագավորին, մնաց Կարսում և իրեն հայտարարեց թագավոր՝ իշխելով մինչև 984 թվականը։ Նրան հաջորդեց իր որդի Աբասը։ (էջ 256)։

850. Համմտ. ծան. 830։ (էջ 256)։

851. Գագիկ 1-ին Բագրատունի թագավորն է, Աշոտ 3-րդ Ողորմածի որդին է, որը հաջորդեց իր եղբայր Սմբատ 2-րդ թագավորին և իշխեց 990—1020 թթ.։ (էջ 256)։

852. Ս. Գրիգոր անունով կոչված այդ հռչակավոր Հ՛եղեցին կառուցվել է 1000 թվականին, նրա առաջ գրված է եղել Գագիկի արձանը։ (էջ 256)։

853. Սա այժմ ընդգրկված է Դաղստանի ԽՍՀՄ-ի տարածքի մեջ։ (էջ 257)։

854. Խորասանը Պարսկաստանի ընդարձակ նահանգներից մեկն է՝ երկրի հյուսիս-արևելյան մասում։ Ժամանակին այստեղ էր նստում մեծ սուլթանը։ (էջ 257)։

855. Ուախիֆ անվան տակ պատմիչը նկատի ունի Տայքը, որը մեծ Հայքի 14-րդ նահանգն էր։ Ուխտիֆ անունը պահպանվել է այժմյան Օլթի քաղաքի անվան մեջ։ Օլթին եղել է նահանգի կենտրոնը (այժմ՝ Թուրքիայում)։ (էջ 257)։

856 Կարինը Բարձր Հայքի 9-րդ գավառն էր՝ համանուն կենտրոնով։ Այժմյան Էրզրումի սանջակը Թուրքիայում։ (էջ 257)։

857. Զորագետը այժմյան Դեբեդ գետի շրջակա տարածքն է՝ գետի հին անվամբ։ Հետագայում սխալմամբ Զորագետ են անվանել Տաշրա ջուր գետը (տե՛ս Ս. Տ. Երեմյան, «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 63)։ (էջ 257)։

858. Տե՛ս ծան. 461։ (էջ 257)։

859. Սյունյաց Սմբատ 1-ին թագավորի որդի այս Վասակ 1-ինը Սյունիքի երկրորդ թագավորն էր, որ գահ էր բարձրացել մոտավորապես 998 թ.։ Սա էր Գագիկ 1-ին Բագրատունի թագավորի աները. նրան կնության էր տրվել իր դուստր Կատրամիդեին դեռ Սմբատի կենդանության օրոք։ (էջ 257)։

860. Վաղատնի (Վազաղնի) վանքը, որ կոչվում է նաև Որոտնավանք, գտնվում է այժմյան Սիսիանի շրջանի Վաղուդի գյուղից 2 կիլոմետր հարավ, Որոտան գետի ձախ ափի քարափի վրա։ Հնուց այստեղ եկեղեցի է եղել։ Այս վանքում 1000 թվականին Շահանդուխտը եկեղեցի է կառուցել ս.Ստեփանոսի անվամբ, ինչպես քիչ վարը տեղեկացնում է նույն պատմիչը։ Այնպես որ Շահանդուխտը այնտեղի մեկ եկեղեցու կառուցողն է և ոչ

Թե ամբողջ վանքի։ Այստեղ է նաև Շահանդուխտի որդի Սևադայի 1006 թվականին կառուցած եկեղեցին։ Այժմ այդ երկու եկեղեցիներն էլ զգալի չափով քանդված են։ Կատարվում են վերանորոգման աշխատանքներ (մեր վերջին այցելությունը՝ 1984 թվականի ապրիլի 22)։ (էջ 257)։

861. Այսինքն՝ ընդհանուր 1000 թվականին։ (էջ 258)։

862. Այս գոմերը հարկացուցակում հիշատակված է Ծղուկ գավառում՝ 7 միավոր հարկաչափով։ (էջ 258)։

863. Այսինքն՝ ընդհանուր 1006 թվականին։ (էջ 258)։

864. Խոսքը Սյունիքի եպիսկոպոս Հովհաննես 7-րդի մասին է։ Համմ. ծան. 768։ (էջ 258)։

865. Տե՛ս ծան. 760։ (էջ 258)։

866. Խոսքը Բյուզանդիայի նշանավոր Վասիլի 2-րդ կայսեր (976—1025 թթ.) մասին է։ (էջ 259)։

867. Գավառակ Գողթնում։ (էջ 259)։

868. Հին և մեծ գյուղ Գողթնում։ (էջ 259)։

869. Տե՛ս ծան. 100։ (էջ 259)։

870. Տե՛ս ծան. 668։ (էջ 260)։

871. Գոդեվանը հարկացուցակում հիշատակված չէ։ (էջ 260)։

872. Այսինքն՝ ընդհանուր 1019 թվականին։ (էջ 260)։

873. Գրվակը (Գրուակ) Ծղուկ գավառի փոքր գյուղերից է եղել։ Հարկացուցակում նշվում է 6 միավոր հարկաչափով։ (էջ 260)։

874. Այսինքն՝ ընդհանուր 1016 թվականին։ (էջ 261)։

875. Արդյոք սա այն հայտնի Շոռոթ գյո՞ւղն է, որ այժմ էլ կա Նախիջևանի ԻՍՍՀ-ում, թե համանուն մի այլ գյուղ էր ավելի մոտ տարածքում։ (էջ 261)։

876. Այսինքն՝ ընդհանուր 1026 թվականին։ (էջ 261)։

877. Տե՛ս ծան. 760։ (էջ 262)։

878. Այս Սևադա իշխանը Սյունյաց Վասակ 1-ին թագավորի եղբայրն էր, Սմբատ 1-ին թագավորի և Շահանդուխտ թագուհու որդիներից մեկը։ 11-րդ դարի 1-ին կեսի գործիչ է։ (էջ 262)։

879. Սա Սյունյաց իշխանաց իշխան Աշոտն է (11-րդ դար), Վասակ 1-ին թագավորի քրոջ ամուսինը։ (էջ 262)։

880. Տե՛ս ծան. 790։ (էջ 262)։

881. Տե՛ս ծան. 787։ (էջ 262)։

882. Այսինքն՝ Հովհաննես 7-րդ եպիսկոպոսը։ Տե՛ս ծան. 768։ (էջ 262)։

883. Ըստ Մ. Օրմանյանի ուսումնասիրությունների՝ հայոց կաթողիկոսների թիվը մինչև Սարգիս 1-ին Սևանցին 57 է։ Հիսունհինգերորդը Վահան 1-ին Սյունին է։ Նրանից հետո մինչև Սարգիս 1-ինը գահակալել են երկուսը՝ Ստեփաննոս 3-րդ Սևանցին (969—971 թթ.) և Խաչիկ 1-ին Արշարունին (973—991 թթ.)։ Համմ. Մ. Օրմանեան, «Հայոց եկեղեցին...» Կոստանդնուպոլիս, 1912, էջ 200։ (էջ 263)։

884. Սա Գողթնի նշանավոր Ագուլիս ավանն է։ (էջ 263)։

885. Սա Գողթն գավառի վանանդն է և ոչ թե Բասյանքի նույնանուն գավառը։ (էջ 263)։

886. Սա նշանավոր Նախիջևան քաղաքն է, այժմ Ադրբ. ՍՍՀ-ի Նախիջևանի ԻՍՍՀ-ի կենտրոնը։ (էջ 263)։

887. Խաչեռ խոռ (Խաչերի հեղեղատ, ձոր, փոս) է կոչվել Վայոց ձորի մի (հավանաբար դեպի Շարուրի դաշտն ընկած) մասը։ Ղ. Ալիշանն այն կարծիքն է հայտնել, թե այդ անվանումը կապված է Խաչիկ գյուղի անվան հետ («Սիսական» էջ 172)։ (էջ 263)։

888. Մոսկովյան հրատարակության մեջ այս տեղանունը Գազայ բակ ձևով է։ Կողաբակը Գեղարքունիք գավառի մի մասն էր կազմում։ Դա պատմական Կոթն էր, որ գրավում էր այժմյան ՀՍՍՀ Մարտունու շրջանի տարածքի հիմնական մասը։ Այդտեղ եղել է նաև համանուն գյուղ։ (էջ 263)։

889. Երիշատ ավանը գտնվել է Սոթք գավառում։ Հարկացուցակում նշված չէ։ Ղ. Ալիշանը, օգտվելով Ս. Երևանցու «Ջամբռ»-ից, գրել է լրացուցիչ ցանկում («Սիսական», էջ 64)։ Սակայն «Ջամբռ»-ում այն ներկայացված է Իրիշատ ձևով (Տե՛ս անդ, էջ 283)։ Նրա մոտի գետն էլ նույն անունով է կոչվել՝ Երիշատ (Արիշատ), այժմյան Մեծ Մաղրայից ոչ շատ հեռու (համմ. «Սիսական», էջ 71)՝ Վարդենիսի շրջանում։ (էջ 263)։

890. Ջաղացաձորը գտնվել է Սոթք գավառում։ Հարկացուցակում հիշատակվում է 10 միավոր հարկաչափով։ Սիմեոն Երևանցու ժամանակներում դեռ գոյություն է ունեցել (տե՛ս «Ջամբռ», Վաղարշապատ, 1873, էջ 283)։ (էջ 263)։

891. Ղ. Ալիշանը ենթադրում է, որ այս Փորակը որպես մի փոքրիկ շրջան պիտի լիներ Սոթքի տարածքում («Սիսական», էջ 26) կամ սահմանակից Սոթքին ու Տարին (անդ. էջ 75)։ (էջ 263)։

892. Տարը հին Վայկունիք գավառն է, որը միջին դարերում կրել է Տար անունը։ Մոտավորապես համընկնում է Ադրբ. ՍՍՀ-ի Քելբեջարի շրջանին։ (էջ 263)։

893. Տե՛ս ծան. 19։ (էջ 263)։

894. Տե՛ս ծան. 217, այլև համմ. ծան. 19։ (էջ 263)։

895. Այսինքն՝ ընդհանուր 1066 թվականին։ (էջ 264)։

896. 11-րդ դարում ապրած այս Դլինը Օրբելյանի երկում հիշատակվում է մի քանի տեղ։ Հայտնի է իր նվիրատվությամբ։ (էջ 266)։

897. Տե՛ս ծան. 627։ (էջ 266)։

898. Այս Վժանիք գյուղը հարկացուցակում նշված է Մյուս Բագք (Քաշունիք) գավառի գյուղերի շարքում՝ 8 միավոր հարկաչափով։ Սույն երկի փարիզյան հրատարակության մեջ բերված հարկացուցակում նշված է Վաժունիք (հ. 2-րդ, էջ 270), իսկ մոսկովյանում՝ Վաժունիք (էջ 377) ձևով։ Բայց սույն գլխում երկու հրատարակություններն էլ տալիս են Վժանիս (Վժանիք) ձևը։ (էջ 266)։

899. Այսինքն՝ ընդհանուր 1046։ (էջ 266)։

900. Այսինքն՝ ընդհանուր 1027 թվականին։ (էջ 267)։

901. Այսինքն՝ ընդհանուր 1058 թվականին։ (էջ 267)։

902. Համմ. ծան. 830։ (էջ 268)։

903. Տե՛ս ծան. 459, 460։ (էջ 268)։

904. Խոսքը Փիլիպե 1-ինի մասին է։ (էջ 268)։

905. Տե՛ս սույն երկում գլ. Լէ, Ծե, այլև՝ ծան. 433։ (էջ 268)։

906. Տե՛ս ծան. 859։ (էջ 268)։

907. Համմտ. ծան. 879։ (էջ 268)։

908. Սա Սյունյաց Սմբատ 2-րդ թագավորն է։ Իբրև իշխան հիշված է 1017, 1019 թվականներին, իբրև թագավոր՝ 1043, 1058 թվականներից՝ արձանագրություններում։ (էջ 268)։

909. Այսինքն՝ Վահանավանքում։ (էջ 268)։

910. Սա Սյունիքի 4-րդ թագավորն է։ Առաջին անգամ իբրև վկա հիշատակված է Տաթևի վանքի 1019 թվականի կալվածագրում։ Համմտ. սույն երկում գլ. ՃԶ։ (էջ 268)։

911. Նկատի ունի սելջուկ-թուրքերին։ (էջ 269)։

912. Մելիքշահը Ալփասլանին հաջորդած սուլթանն էր։ Իշխել է 1072—1092 թթ.։ (էջ 269)։

913. Սյունյաց Գրիգոր 1-ին թագավորին հաջորդած այս Սենեքերիմ թագավորը իշխեց մինչև 1094 թվականը։ (էջ 269)։

914. Այսինքն՝ ընդհանուր 1092 թվականին։ (էջ 269)։

915. Տե՛ս ծան. 801։ (էջ 269)։

916. Առանը նախապես այն երկրամասն էր Մեծ Հայքի կազմում, որ ընդգրկում էր Խաչեն և Տրտու գետերի միջին ու ստորին ավազանները, Արցախի Մեծառանք և Ուտիքի Առանառտ ու Առանձակ գավառները։ Հետագայում Առանը դարձավ աշխարհագրական ավելի լայն հասկացություն։ (էջ 269)։

917. Այժմ՝ Կիրովաբադ քաղաք, Ադրբ. ՍՍՀ-ում։ (էջ 269)։

918. Սա դարձավ Սյունյաց Գրիգոր 2-րդ թագավորը։ (էջ 270)։

919. Սա Սյունիքի Գրիգոր 4-րդ եպիսկոպոսն է։ 11-րդ դարի 2-րդ կեսի և 12-րդ դարի 1-ին քառորդի գործիչ։ Վախճանվել է 1116 թվականին։ Աթոռակալել է 1058—1116 թթ.։ (էջ 270)։

920. Խոսքը Սյունյաց Սմբատ 2-րդ թագավորի մասին է։ Համմտ. ծան. 908։ (էջ 270)։

921. Համմտ. ծան. 896։ (էջ 271)։

922. Պատմիչն այս բոլորաքարը նշում է որպես «նորեաց բաժինն»։ Նորիքը Ծղուկ գավառի գյուղերից էր։ Պետք է ենթադրել, որ այս բոլորաքարը ազարակ է եղել։ Տեղի համար համմտ. ծան. 838։ (էջ 271)։

923. Տե՛ս ծան. 676։ (էջ 271)։

924. Բնագրում՝ ճամակ։ (էջ 271)։

925. Սրանք Տաթևի վանքի եկեղեցիներն են։ (էջ 271)։

926. Այսինքն՝ ընդհանուր 1085 թվականին։ (էջ 272)։

927. Այս Նորաշինիկը հարկացուցակում հիշված է Կուլսական գավառում՝ 8 միավոր հարկաչափով։ Սյունիքում այս անունով նշվում են մի քանի գյուղեր։ Նույն անունով այս բնակավայրը պահպանվել է Ղափանի շրջանում։ (էջ 273)։

928. Ջեռատիվանքը, ըստ պատմիչի, գտնվել է Կուլսական գավառում։ Ոչ թե վանք, այլ գյուղ է։ Դա երևում է վճռագրից։ (էջ 273)։

929. Համմտ. գլ. ԼԲ։ (էջ 273)։

930. Խոսքը Գանձակի ամիրա Փառլունի մասին է (11-րդ դարի երկրորդ կես)։ (էջ 273)։

931. Տպագիր բնագրում՝ չինարիս։ Ուղղել ենք չէնեբս ձևով և ըստ այդմ թարգմանել։ (էջ 274)։

932. Խաշտատտափը հարկացուցակում չի հիշատակված։ (էջ 274)։

933. Այսինքն՝ ընդհանուր 1086 թվականին։ (էջ 274)։

934. Համմտ. ծան. 604։ (էջ 273)։

935. Բերդկաներեչին կամ Բերդկաներեչը հարկացուցակում հիշվում է Ծղուկ գավառի գյուղերի շարքում՝ 6 միավոր հարկաչափով։ Համմտ. նահ ծան. 601։ (էջ 274)։

936. Համմտ. ծան. 725։ (էջ 274)։

937. Համմտ. գլ. ԼԲ։ (էջ 275)։

938. Համմտ. գլ. ՄԳ։ (էջ 275)։

939. Մահմեդը (Մահոմեդ, Մոհամմեդ) մահմեդական կամ իսլամական (մուսուլմանական) կրոնի հիմնադիրն է։ Ծնվել է Մեքքա քաղաքում, 571 թ.։ Իր հակառակորդներից հալածվելով՝ փախչում է Նոսրիբ քաղաքը։ Այդ փախուստի (հիջրա) ժամանակն էլ (622 թ. հուլիսի 16) ճանաչվում է նրա հիմնադրած կրոնի սկիզբը։ (էջ 276)։

940. Այսինքն՝ ընդհանուր 1091 թվականին։ (էջ 276)։

941. Տե՛ս ծան. 833։ (էջ 276)։

942. Բնագրում՝ տաճկաց ճարկ։ Հայտնի է, որ մահմեդական տիրողները Հայաստանից հարկեր էին վերցնում։ Այստեղից էլ՝ ժամանակի տաճկաց ճարկ արտահայտությունը։ (էջ 276)։

943. Բերդաշար բառի երկրորդ բաղադրիչը (շար) այստեղ, անշուշտ, «հարկ» իմաստով է։ Ուրեմն պետք է կարծել, որ ժամանակին բերդերի համար հարկ էին վերցնում շրջակա բնակավայրերից։ (էջ 276)։

944. Գունդզահը հարկի տեսակ է եղել։ (էջ 276)։

945. Այսինքն՝ ընդհանուր 1086 թվականին։ (էջ 276)։

946. Բարկուշատը Մյուս Բաղք կամ Քաշունիք գավառն է։ Այժմ՝ Բերգուշետ (Ադրբ. ՍՍՀ-ում)։ (էջ 276)։

947. Խողվանի գյուղը, ըստ հարկացուցակի, մտնում էր Քաշունիքի կամ Մյուս Բաղքի (Բարկուշատ) մեջ։ Միջին մեծության գյուղ է եղել՝ 10 միավոր հարկաչափով։ (էջ 276)։

948. Այստեղ հիշատակված այս Վանանդա ձորը գտնվում էր Մյուս Բաղք կամ Քաշունիք գավառում (համմտ. «Սիսական», էջ 282)։ Հարկացուցակով այստեղ նշվում է Վանանդ գյուղ։ Նույնանուն ձոր կա նաև Գողթնում (համմտ. «Սիսական», էջ 338)։ (էջ 276)։

949. Ենթադրվում է, որ գյուղ կամ ագարակ է եղել Սյունիքի Ծղուկ գավառում։ Տե՛ս Ս. Էփրիկեան, «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան», Վենետիկ, 1905, հ. 1-ին, գ. Ա, էջ 131։ (էջ 276)։

950. Այսինքն՝ ընդհանուր 1089 թվականին։ (էջ 276)։

951. Այսինքն՝ ընդհանուր 1103 թվականը։ (էջ 277)։

952. Խոսքը Սյունյաց Ստեփանոս 2-րդ եպիսկոպոսի մասին է, որը հաջորդեց Գրիգոր 4-րդին և աթոռակալեց 1116—1143 թթ.։ Կյուրիկե 2-րդ թագավորի որդին էր։ (էջ 277)։

953. Սա 12-րդ դարի նշանավոր պատմիչ Մխիթար Անեցին է։ (էջ 277)։

954. Այսինքն՝ ընդհանուր 1076 թվականին։ (էջ 278)։

955. Այսինքն՝ ընդհանուր 1092 թվականին։ (էջ 278)։

956. Այսինքն՝ 1099 թվականին։ (էջ 278)։

957. Ընդհանուր 1103 թվականին։ (էջ 278)։

958. Ըստ այս նկարագրության՝ կապանի շրջակայքում եղած բարձրադիր տեղերից մեկն է։ (էջ 278)։

959. Համմտ. ծան. 228։ (էջ 278)։

960. Այսինքն՝ ընդհանուր 1104 թվականին։ (էջ 279)։

961. Որոտն բերդի մասին տե՛ս ծան. 54։ (էջ 279)։

962. Այսինքն՝ ընդհանուր 1105 թվականին։ (էջ 279)։

963. Բղեն բերդի մասին տե՛ս ծան. 46։ Այլև համմտ. ծան. 717։ (էջ 279)։

964. Բղեն գավառի այս խոսրովիկ իշխանը, որ դերի է տարվել սելջուկ-թուրքերի կողմից, միայն այստեղ է հիշատակվում։ (էջ 279)։

965. Տե՛ս ծան. 27։ (էջ 279)։

966. Գեղի բերդը մտնում է Ջորք գավառի մեջ։ Այժմ Ղափանի շրջանի տարածքում է։ (էջ 279)։

967. Կաթողիկոսարանը Արևիք գավառի (այժմյան Մեղրու շրջանի) տարածքում էր։ Նրա ավերակները գտնվում են Մեղրագետի ակունքների շրջանում (Թ. Խ. Հակոբյան, «Սյունիքի թագավորությունը», էջ 64)։ (էջ 279)։

968. Շնորհուսը Ջորք գավառում էր։ Համմտ. ծան. 41։ (էջ 279)։

969. Անունը պահպանվել է համանուն ավանի վրա՝ այժմյան Մեղրու շրջանում։ (էջ 279)։

970. Այժմ էլ երևում են բերդի ավերակները Մեղրի ավանի հյուսիսային մասում։ (էջ 279)։

971. Գրհամը գտնվում էր Կովսական գավառի տարածքում (այժմյան Ղափանի շրջանում)։ Համմտ. նաև ծան. 39։ (էջ 279)։

972. Սա Բաղաց Գրիգոր 2-րդ թագավորն է։ Գահակալել է Սմբեթերիմ 1-ին թագավորից հետո 12-րդ դարի գործիչ է։ Վախճանվել է 1166 թվականին։ (էջ 279)։

973. Այս Սմբատը, որ նույն Գրիգոր 2-րդ թագավորի եղբայրն էր, մեռավ նույն՝ 1166 թվականին։ (էջ 279)։

974. Բաղաց Գրիգոր 2-րդ թագավորի դուստր այս կատան ամուսնացած էր Հասան իշխան Սակոյանց խաչենացու հետ։ Քանի որ Գրիգորը արու զավակ չուներ, և եղբայր Սմբատն էլ նույն տարում մեռել էր, իշխանությունն անցավ իր փեսա Հասան իշխանին, որը թուրքերի կողմից Բաղաբերդի գրավումից առաջ կնոջ հետ փախավ Խաչեն (1170 թ.)։ (էջ 279)։

975. Այսինքն՝ ընդհանուր 1116 թվականին։ (էջ 279)։

976. Խոսքը Գրիգոր 4-րդ եպիսկոպոսի մասին է, որն աշխատակցել է 1058—1116 թթ.։ (էջ 279)։

977. Այսինքն՝ ընդհանուր 1126 թվականին։ (էջ 279)։

978. Բաղակաքարը, Բաղակի քարը կամ Բաղակու քարը գտնվում էր Ջորք գավառում (այժմյան Ղափանի շրջանում)։ Համմտ. ծան. 34, 35։ (էջ 279)։

979. Այսինքն՝ ընդհանուր 1151 թվականը։ (էջ 279)։

980. Այսինքն՝ ընդհանուր 1157 թվականին։ (էջ 279)։

981. Այսինքն՝ ընդհանուր 1170 թվականին։ (էջ 279)։

982. Կկոց քարը (կամ Կկվո քարը) Բաղք (Ջորք) գավառի ամրոցնե-

րից էր։ Գտնվում էր Բաղաբերդի մոտ, բարձր լեռան ժայռապատ գլխին, Գիրաթաղ գետակի ձախ կողմում (այժմյան Ղափանի շրջանում)։ (էջ 279)։

983. Այստեղ պատմիչը համեմատություն է կատարում Երուսաղեմի հետ։ Բաբելական թագավոր Նաբուգոդոնոսորը, որ սկսել էր թագավորել մոտ մ. թ. ա. 600 թվականին, մի շարք նվաճումներից հետո հարձակվում է հրեաների երկրի վրա, գերության է տանում բազմաթիվ մարդկանց, այդ թվում՝ և Հովակիմ թագավորին, Երուսաղեմի կենտրոնական տաճարի կողոպուտն է կազմակերպում, թանկարժեք իրերը տեղափոխում է Բաբելոն (Դ Թագ., ԻԴ, Բ Մնաց., ԼԶ)։ (էջ 280)։

984. Պարսկաստանի թագավոր Կյուրոսը մ. թ. ա. 558 թ. նվաճում է Բաբելոնը, գերությունից ազատում է հրեաներին ու վերադարձնում իրենց երկիրը։ Պատմիչն այստեղ իր համեմատության համար օգտագործել է հրեաների գարձի այս փաստը։ (էջ 280)։

985. Սա Շամսադդին Ելտկուզ աթաբեկն է, որը Իրաքի սելջուկյան սուլթանության աթաբեկներից էր։ 1147 թվականին Ատրպատականում և այլ նահանգներում հիմնադրել էր Ելտկուզյան ամիրայությունը։ Իշխել է 1147—1175 թթ. (հմմտ. Ս. Վ. Բուռնազյան, «Հայաստանը և սելջուկները 11—12-րդ դ. դ.», Երևան. 1980, էջ 222)։ Հալտնի է իր հաջողակ քաղաքականությունների։ (էջ 280)։

986. Այս դեպքում տաճիկ անվան տակ պատմիչը հիշատակում է սելջուկ-թուրքերին։ (էջ 280)։

987. Համմտ. ծան. 974։ (էջ 280)։

988. Այսինքն՝ ընդհանուր 1166 թվականին։ (էջ 280)։

989. Նկատի ունի Վայոց ձորի Ամաղու գյուղից վեր գտնվող Նորավանքը։ (էջ 281)։

990. Ինչպես երևում է շարադրվածից, Հրաշկարերը (Հրասեկա բերդը) գտնվում էր Ամաղուի Նորավանքի մոտ։ (էջ 281)։

991. Այսինքն՝ ընդհանուր 1231 թվականին։ Ղ. Ալիշանը «Սիսական»-ում նախ նշում է Համտուն 2-րդի մահվան այս թվականը (էջ 17), ապա փոփոխում և դարձնում է 1157 թվական (էջ 184). տե՛ս նաև նույն գրքի էջ 274-ի տողատակի ծանոթությունը։ (էջ 281)։

992. Համմտ. ծան. 972, 973։ (էջ 281)։

993. Մոսկովյան հրատարակությունը տալիս է Թանատէ վանս ձևով (էջ 284)։ Այստեղ խոսքը Տղուկ գավառի Թանահատի վանքի մասին է։ (էջ 281)։

994. Ղ. Ալիշանը կասկածանքով ենթադրել է, որ այս Սյունի վանքը Շաղատ ավանի մոտ հնից հիշատակված Շաղատո վանքն է («Սիսական», էջ 212)։ Սակայն պարզված է, որ դա ճիշտ չէ։ Դրանք տարբեր վանքեր են։ Սյունի վանքն այժմյան ՀՍՍՀ Սիսիանի շրջանային կենտրոնում գտնվող ավերակ վանքն է՝ կառուցված 7-րդ դարում։ Իսկ Շաղատի վանքը նույն շրջանի մեջ մտնող համանուն գյուղի մոտ է (տե՛ս Թ. Խ. Հակոբյան, «Սյունիքի թագավորությունը», էջ 82, տողատակի ծան.)։ (էջ 281)։

995. Ս. Օրբելյանն այս վարազդուխտի մասին գրում է միայն այստեղ՝

որպես հիշյալ եկեղեցին կառուցողի։ Նրա մասին այլ տեղեկություններ չկան։ (էջ 281)։

996. Ղ. Ալիշանը Կնեվանքը (Ինեվանք) տեղանշում է Վայոց ձորում, Արատեսի վանքի կողմերում՝ նույնացնելով Գյուղեղ կոչված վանքի հետ («Սիսական», էջ 145), որը, ինչպես հետագայում է պարզվել, Հերմոնի վանքն է («Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 131—132)։ Ք. Ս. Հակոբյանը Կնեվանքը տեղանշում է Ծղուկ գավառում, բայց հարցականով (համմտ. «Սյունիքի թագավորությունը», էջ 82)։ (էջ 281)։

997. Կնյունը ճահճային բույս է։ Ժողովրդի մեջ հայտնի է նիլ անվամբ։ Դրանից խոր են պատրաստում։ (էջ 281)։

998. Տպագիր բնագրում խաղ։ Թարգմանել ենք ուղղումով՝ խաչ։ Ժամանակին նկատել է Ն. Բյուզանդացին (Նախնիք, էջ 418, մանրաժապավեն)։ (էջ 281)։

999. Տե՛ս ծան. 860։ (էջ 282)։

1000. Խոսքը Բղենո Նորավանքի մասին է։ Համմտ. ծան. 718։ (էջ 282)։

1001. Տե՛ս ծան. 200։ (էջ 282)։

1002. Շատանյա վանքը Ք. Ս. Հակոբյանը հարցականով տեղանշում է Բաղք գավառում («Սյունիքի թագավորությունը», էջ 82)։ (էջ 282)։

1003. Այս Գողոբյա վանքը Ք. Ս. Հակոբյանը տեղանշում է Ջորք գավառում («Սյունիքի թագավորությունը», էջ 82)։ (էջ 282)։

1004. Վահանավանքի մասին տե՛ս ծան. 700։ (էջ 282)։

1005. Տանձափարախի մասին տե՛ս ծան. 589։ (էջ 282)։

1006. Խարազնագզեստ նշանակում է «ցնցոտի, քուրձ հագած»։ Ըստ կրոնի՝ կրոնավորների համար դա առաքինություն էր համարվում։ (էջ 282)։

1007. Լուսկեվանքը Ք. Ս. Հակոբյանը տեղանշում է Ակռիք գավառում («Սյունիքի թագավորությունը», էջ 82)։ (էջ 282)։

1008. Լճեվանքը գտնվում էր Արևիք գավառում։ Լճեվանք անունից է առաջացել Լճկվազ-ը (Լճկվանք—Լճկվանս—Լճկվազ), որ կրում է այժմյան Մեղրու շրջանի գյուղերից մեկը։ (էջ 282)։

1009. Քրոնից վանքի տեղը որոշակի հայտնի չէ։ Հարկացուցակում Հաբանդ գավառի գյուղերի թվում նշվում է Քրվանք (Քրոնք) գյուղ՝ 25 միավոր հարկաչափով։ Թերևս այդ գյուղի մոտ էր գտնվում Քրոնից վանքը։ Անունն այդ է հուշում (Քրոնք—Քրոնից)։ (էջ 282)։

1010. Դադիի (Դադի, Դադոյի, Դադուի) վանքը տեղանշվում է Քաշաթաղ (Մյուս Բաղք) գավառում (Ս. Էփրիկեան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1-ին, գիրք Ա, էջ 545)։ Ս. Օրբելյանի երկի փարիզյան հրատարակությունը բերում է Թաղեի վանք ձևով (հ. 2-րդ, էջ 84)։ Այժմ Աղրը. ՍՍՀ-ի տարածքում է, գտնվում է Քյալբաջարի շրջանի քրդաբնակ Քյոլանլու գյուղի եզրին, Տրտու (Թարթառ) գետի բարձրադիր ափին։ Կան վիճակում (մեր այցը՝ 1979 թ. մայիսի 24-ին)։ Ժողովրդի մեջ տարածված է անվան Դադի վանք ձևը։ Ժողովրդական ստուգաբանությամբ դա կապվում է դատ բառի հետ, որը ճիշտ չէ։ Կոչվում է նաև Խութա վանք՝ տեղի հսկայական քարախութի վրա գտնվելու պատճառով։ Հարուստ է վի-

մական արձանագրություններով։ Մատենագրության մեջ հիշատակվում է 9-րդ դարից, բայց ավելի հին է։ Այնտեղ կան 4—5-րդ դարերի ճարտարապետական արժեքավոր կոթողներ. (ավելի մանրամասն տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 5-րդ, Երևան, 1982, էջ 197)։ (էջ 282)։

1011. Պատմիչի թվարկումից երևում է, որ Կուռափառոր վանքը Մյուս Բաղքի վանքերից պիտի լիներ։ Բայց Գ. Մ. Գրիգորյանը գրում է, թե այն գտնվել է այժմյան Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղի մոտի Կուփառոր—Կուռափառոր վայրում («Պատմական Սյունիքի մի շարք գյուղերի տեղադրության հարցի շուրջը». «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, էջ 235)։ (էջ 282)։

1012. Սիծառնո վանքի մասին տե՛ս 614։ (էջ 282)։

1013. Պատմիչի թվարկումից երևում է, որ Խալատրո վանքը Մյուս Բաղքի վանքերից է։ (էջ 282)։

1014. Ջյունասարի վանքը Մյուս Բաղքի վանքերից է։ (էջ 282)։

1015. Սովորականը՝ Խոտակերաց, որը կոչվում է նաև Քարկուի վանք։ Տե՛ս ծան. 688։ (էջ 282)։

1016. Խոսքն Ամաղուի Նորավանքի մասին է։ (էջ 282)։

1017. Ինչպես պատմիչն է նշում տարբերելու համար, սա Մյուս Նորավանքն է Վայոց ձորի տարածքում։ Ըստ երևույթին, երկրորդաբար այսպես է կոչվել Վայոց ձորի՝ ուրիշ անունով հայտնի վանքերից մեկը։ (էջ 282)։

1018. Ցուցաց քար վանքի մասին տե՛ս ծան. 194։ (էջ 282)։

1019. Փարիզյան հրատարակության մեջ նշվում է հայոց 490, այսինքն՝ ընդհանուր 1041 թվականը, մոսկովյան հրատարակության մեջ՝ հայոց 406, այսինքն՝ ընդհանուր 957 թվականը։ Եթե խոսքը վերաբերում է Գագիկ Ա-ին թագավորի ժամանակներին, ապա այդ թվականներից ոչ մեկը չի համընկնում, քանի որ Գագիկ 1-ինն իշխել է 990—1020 թթ.։ Փարիզյան հրատարակության տվյալն ավելի մոտ է Գագիկ 2-րդի շրջանին, բայց դա էլ 1—2 տարվա տարբերություն ունի (այս Գագիկը թագավոր օծվեց 1042 թ. վերջերին կամ 1043 թ. սկզբներին։ Հ. Աճառյանը, նկատի ունենալով միայն մոսկովյան հրատարակության մեջ հիշված 406 թվականը, գրում է, որ նշվածը, անշուշտ, Գագիկ 1-ին թագավորն է. և թվերը պետք է ուղղել ըստ նրա իշխման տարիների (Հայոց անձնանունների բառարան, հ. 5-րդ, էջ 113)։ Մեզ ավելի հավանական է թվում փարիզյան հրատարակության տվյալը։ Հիշենք նաև, որ ժամանակին Ն. Բյուզանդացին մոսկովյան հրատարակությամբ ներկայացված այդ թվականը նկատել է որպես տպագրական վրիպակ։ Ըստ նրա՝ պիտի լիներ ոչ թե ՆՀ, այսինքն՝ 406 (+551 = 957), այլ՝ ՆՂ, այսինքն՝ 490 (+ 551 = 1041)։ Այսպիսով նա ևս ընդունել է 1041 թվականը, որը համընկնում է փարիզյան հրատարակության տվյալին (Նախնիք, էջ 262, մանրաժապավեն)։ (էջ 282)։

1020. Հերմոնի վանքը Վայոց ձորի նշանավոր վանքերից մեկն է։ Ավելի մանրամասն տե՛ս ծան. 751։ (էջ 282)։

1021. Փարիզյան հրատարակության մեջ բաց է թողնված Սբատիենից վանք կապակցությունը։ Լրացնում ենք ըստ մոսկովյան հրատարակության։ Սա նույն Արատեսի վանքն է Վայոց ձորում։ Գտնվում է պատմական Արա-

տ՚ինք (Արատեաց) գյուղում, որն ուշ ժամանակներում կոչվել է Այսասի, այժմ՝ Ղզլգյուղ։ Վանքը հայտնի է 7-րդ դարից։ Շենքեր են ավելացվել 10—13-րդ դարերում։ Վերջին շինարարությունը կատարվել է 13-րդ դարի 2-րդ կեսին։ Պատմիչ Ս. Օրբելյանի եպիսկոպոսական աթոռակալության ժամանակ այս վանքը դարձվել է Նորավանքի եպիսկոպոսական ամառանոց։

Հայկական կառույցներ են եղել, բայց ներկայումս մեծ մասամբ վերակառուցված (մեր վերջին այցելությունը՝ 1981 թ. հունիսի 25-ին)։ Պատմիչ Ստեփանոս Օրբելյանն այստեղ ունի վիմական արձանագրություն։ (Վանքի պատմության և նկարագրի մասին տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 120—121)։ (էջ 282)։

1022. Սա Վայոց ձորի նույն Թանահատի վանքն է։ Տե՛ս ծան. 384։ (էջ 282)։

1023. Գնդազի վանքը նույն Գնդեվանքն է։ Տե՛ս ծան. 752։ (էջ 282)։

1024. Սա Մաքենոցաց հռչակավոր վանքն է (այժմյան Վարդենիսի շրջանում)։ Տե՛ս ծան. 290։ (էջ 282)։

1025. Վանեվանյան վանքի մասին տե՛ս ծան. 536։ (էջ 282)։

1026. Շողվագա վանքի մասին տե՛ս ծան. 481։ (էջ 282)։

1027. Տե՛ս ծան. 919։ (էջ 283)։

1028. Սա Սյունյաց Ստեփանոս 2-րդ եպիսկոպոսն է։ Փոխարինելով Գրիգոր 4-րդ եպիսկոպոսին՝ իշխել է 1116—1143 թթ.։ Կյուրիկե 2-րդ թագավորի որդիներից մեկն էր։ Դեռ Տեր-Գրիգորի կենդանության ժամանակ «որդիացեալ» էր նրան (տե՛ս այս երկում՝ գլ. Կ)։ (էջ 283)։

1029. Այսինքն՝ ընդհանուր 1138 թվականին։ (էջ 283)։

1030. Այսինքն՝ ընդհանուր 1143 թվականին։ (էջ 283)։

1031. Տեր-Բարսեղը մեղրեցի էր։ Իշխել է 1143—1148 թթ.։ (էջ 283)։

1032. Այս Աստապատը նույն անունով մինչև մեր ժամանակները հասած գյուղն է։ Այժմ մտնում է Աղրբ. ՍՍՀ Նախիջևանի ԻՍՍՀ-ի մեջ (մեծ հայագիտ Մ. Աբեղյանի ծննդավայրն է)։ (էջ 283)։

1033. Մաղարթա վանքը գտնվում էր Ջուղայի մոտակայքում, Արաքսի ափին։ (էջ 283)։

1034. Նկատի ունի Բարդուղիմեոս քարոզչին (առաքյալին), որը, ըստ կրոնական ավանդության, Հայաստան էր եկել քրիստոնեություն տարածելու համար։ (էջ 283)։

1035. Այստեղ պատմիչը համեմատություն է կատարում՝ հիշեցնելով անապատում խրայելացիների համար սնունդ եղած մանանան։ (էջ 283)։

1036. Խոսքը վերաբերում է Մխքայել Ասորուն։ (էջ 283)։

1037. Խոսքը Գրիգոր Լուսավորչի մասին է։ (էջ 284)։

1038. Հայոց Գրիգոր 3-րդ (Պահլավունի) կաթողիկոսի մասին է խոսքը։ Նա Ներսես Շնորհալու ավագ եղբայրն էր։ Աթոռակալել է 1113—1166 թթ.։ (էջ 284)։

1039. Իր եղբայր Բարսեղ եպիսկոպոսին հաջորդած Սյունյաց այս Գրիգոր 5-րդ եպիսկոպոսը աթոռակալել է 1148—1168 թթ.։ (էջ 284)։

1040. Այս Խորձա գյուղը հարկացուցակում նշված է Վայոց ձորի գյուղերի շարքում։ Ոչ մեծ գյուղերից է եղել. ունեցել է 8 միավոր հարկաչափ։ Ա. Ո. Խաչատրյանը գրում է, որ այդ տեղանունն աղավաղվել, դարձել է Շորջա։ Վայրը գտնվում է այժմյան Եղեգնաձորի շրջանի Ենգիջա և էրթիչ գյուղերի մոտակայքում (Վայոց ձորի մի շարք պատմական բնակավայրերի տեղադրության մասին. «Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 4, էջ 110)։ (էջ 284)։

1041. Այսինքն՝ ընդհանուր 1168 թվականին։ (էջ 284)։

1042. Այս Հովհաննես Կապանեցի կոչված եպիսկոպոսը պաշտոնավարում էր Վահանավանքում։ Սելջուկ-Թուրքերի կողմից Կապանի գրավումից, ավերումից հետո փախավ Վայոց ձորի Ամաղուի ս. Կարապետ անապատը (Նորավանք)։ Նրա ժամանակաշրջանի մասին հայագիտության մեջ տարակարծություններ կան։ Նրա մահվան թվականը Ղ. Ալիշանն ընդունում է 1155-ը («Սիսական», էջ 184), ապա ավելի հավանական է համարում 1164-ը (Ն. տ. էջ 277, ծան.)։ Հ. Աճառյանն ընդունում է 1214 թվականը՝ ըստ պատմիչի (Հայոց անձնանունների բառարան, հ. 3-րդ, էջ 580)։ Ս. Օրբելյանի երկի այս գլխում բերվող տվյալներից երևում է, որ այս Հովհաննեսը պիտի մեռած լիներ 1168 թվականից առաջ, որովհետև՝ նախ Գրիգոր 5-րդ եպիսկոպոսը մեռել է նրանից հետո (1168 թ.) և թաղվել է նրա մոտ, ապա Գրիգորին հաջորդած Ստեփանոս 3-րդ եպիսկոպոսը, ձեռնադրվելով 1168 թվականին, ըստ պատմիչի, գործել է նաև Ելտկուզ աթաբեկի ժամանակ, իսկ սրա վերջին տարին 1175 թվականն էր։ (էջ 284)։

1043. Սա Սյունյաց Ստեփանոս 3-րդ եպիսկոպոսն է։ Ձեռնադրվել է Շնորհալու կողմից, աթոռակալել 1168—1216 թթ.։ (էջ 284)։

1044. Սրանք ժամանակի սելջուկ-թուրք տիրողներն էին, Ելտկուզյան աթաբեկության աթաբեկները։ Համմ. Հ. Մանանդյան «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. 3-րդ, Երևան, 952, էջ 131։ (էջ 284)։

1045. Ոմանք բացատրում են նաև «պարծանք քրիստոնեից»։ Տե՛ս Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հ. 4-րդ, էջ 618։ (էջ 284)։

1046. Տուղրան սուլթանի ատենագրությունը ներկայացնող փակագիրն էր, որ զարդարվելով դարձավ զինանշան։ Թուրքերենից է։ Tuğrayi՝ գիր ասելով այստեղ պետք է հասկանալ սուլթանական պաշտոնական գրություն, հիշյալ նրանով, թերևս խրախուսական բովանդակությամբ։ (էջ 284)։

1047. Բնագրում՝ փարման։ Այստեղ նշանակում է «հրովարտակ»։ Գալիս է պարսկերենից։ (էջ 284)։

1048. Արաբերենից է և նույնպես նշանակում է «հրովարտակ»։ (էջ 284)։

1049. Նշանակում է «կայսերական հրամանագիր»։ Ծագման և այլ իմաստների մասին տե՛ս ծան. 682։ (էջ 284)։

1050. Խոսքը Վրաստանի նշանավոր Թամար թագուհու մասին է։ Իշխել է 1184 թվականից։ Մահվան ստույգ թվականը հայտնի չէ։ Նորագույն հետազոտությունների համաձայն մեռել է 1207 թ.։ (էջ 284)։ Եմբագիր։

1051. Վրաց թագավոր Գեորգի 4-րդն է, որ կոչվել է Լաշա (Գեորգի Լաշա կամ Լաշա Գեորգի)։ Թամարի և Սոսլանի որդին էր։ Իշխել է 1213—1223 թթ.։ Հ. Մանանդյանը նրա մահվան թվականի մասին գրել է. «Գեորգի Լաշան վախճանվեց Բագավանում 1223 թ. հունվարի 18-ին, չորեքշաբթի օրը» (Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 3-րդ

Երևան, 1952, էջ 186)։ Ապա ծանոթության մեջ ավելացնում է, որ ամանք սխալ են, ենթադրում են 1222 թվականը (նույն տեղում. ծան. 6)։ (էջ 284)։

1052. Սա զինվորական բարձրաստիճան կոչում էր։ Բառի ամբ մասը գալիս է աբաբերենից, նշանակում է «հրամանատար»։ Սպասալար մասն էլ բարդված է պահլավական spah «զորք» և salar «զորագլուխ» բառերից։ (էջ 284)։

1053. Զաքարե և Իվանե եղբայրները պետական ու ռազմական նշանավոր գործիչ Սարգիս Զաքարյանի որդիներն էին։ Գործել են վրաց Թամար թագուհու ժամանակաշրջանում։ Սարգիս Զաքարյանը հայոց և վրաց զորքերի ամբրսպասալարն էր (ընդհանուր գլխավոր հրամանատարը)։ Նրա մահից հետո այդ բարձր պաշտոնին նշանակվում է իր ավագ որդի Զաքարեն (մեռել է 1212 թ.), սրա կրտսեր եղբայր Իվանեն դառնում է վրաց արքունիքի աթաբեկ (խնամակալ, փոխարքա), որը մեռել է 1227 թվականին։ Սրանք մեծ դեր են կատարում օտար նվաճողների դեմ մղված պայքարում։ (էջ 284)։

1054. Կայեն կամ Կայան (Կայեան) գավառը 12—13-րդ դարերում վարչական միավոր էր Հայաստանում։ Վաղ միջնադարում կոչվել է Զորոփոր կամ Զոր գավառ։ Ընդգրկում էր Աղստև գետի միջին հոսանքի շրջանը, այժմյան Դիլիջանի շրջակայքի, Իջևանի ու Կարմիրի շրջանների տարածքը։ Այստեղ է եղել համանուն բերդը։ Հմմտ. ծան. 582։ (էջ 284)։

1055. Հաղարծինի հռչակավոր վանքի համալիրը գտնվում է Դիլիջան քաղաքից 13 կիլոմետր դեպի հյուսիս-դեղատեսիլ անտառի երկու ձորերի միջև ընկած փոքրիկ սարահարթում։ 10—13-րդ դարերում կառուցված հուշարձանների խումբ է։ Հռչակված է եղել որպես կրոնական մշակութային կենտրոն միջնադարյան Հայաստանում։ (էջ 284)։

1056. Աբասաձոր գյուղը երկու տեղ հիշատակված է Հաղարծինի վանքի արձանագրություններում՝ ա) վանքին Վրաստանի Գեորգի 3-րդ թագավորի նվիրատվություններին վերաբերող ս. Գրիգոր վանքին կից գավիթ 1184 թվականի արձանագրության մեջ («Դիվան հայ վիմագրության», պրակ 6-րդ, Իջևանի շրջան, կազմեցին Ս. Ա. Ավագյան և Հռ. Մ. Ջանփոլադյան, Երևան, 1977, էջ 37, արձ. № 62), բ) սեղանատան՝ քարհատներին վերաբերող արձանագրության մեջ (տե՛ս նույն տեղում, էջ 56, արձ. № 113)։ Բայց որտե՞ղ է գտնվել այդ գյուղը։ Ս. Էփրիկյանի նշած Միխանայի ձորը հավանական չէ (հմմտ. «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան» հ. 1-ին, էջ 1)։ Ավելի ճիշտ կլիներ տեղը որոնել նույն կալեն (Զոր, Զորոփոր) գավառի տարածքում։ Ս. Ա. Ավագյանը և Հռ. Մ. Ջանփոլադյանը գրել են. «Աբասաձորը Ն. Գետիկ վանքից ոչ հեռու գտնվող այն գյուղն է, որը Քուրդևան և Տանձուտ գյուղերի հետ Վրաստանի Գեորգի Գ թագավորի կողմից 1184 թ. հաստատվել էր իբրև Հաղարծնի վանքի անբաժանելի սեփականություն» («Դիվան հայ վիմագրության», պրակ 6-րդ, էջ 56—57)։ (էջ 284)։

1057. Սյունյաց Ստեփանոս 3-րդ եպիսկոպոսի ժամանակակից, Տաթևի վանահայր այս Հակոբ ճգնակեցին հիշվում է միայն այստեղ։ (էջ 284)։

1058. Հաղպատի վանքը Թումանյանի շրջանում այժմ էլ կանգուն է։ Կառուցվել է 967 թվականին։ Ճարտարապետական շատ արժեքավոր կոթող է, միջնադարյան Հայաստանի հոգևոր և մշակութային կարևոր կենտրոններից է։ (էջ 284)։

1059. Այս Գրիգորը կոչվել է նաև Տուտեորդի (որդի Տուտա)։ Հաղպատի վանքի եպիսկոպոս է դարձել՝ հաջորդելով Բարսեղ 1-ինին, 1189 թվականից հետո։ Մահանալով է Լոռու 1208 թվականի ժողովին և այլն։ (էջ 284)։

1060. Այս Արփա գյուղը նույն անվամբ պահպանվել է մինչև մեր ժամանակները։ Բայց ուշ ժամանակներում իր հին տեղից մի փոքր տեղափոխված է եղել։ Մտնում է Եղեգնաձորի շրջանի մեջ։ 1946 թվականի սեպտեմբերի 10-ից վերանվանվել է Արենի։ (էջ 284)։

1061. Այսինքն՝ ընդհանուր 1216 թվականին։ (էջ 284)։

1062. Սյունյաց Տեր-Ստեփանոս 3-րդ եպիսկոպոսի քրոջորդի այս Տեր-Սարգիսը Աղվանքի կաթողիկոսի կողմից ձեռնադրվում և Վայոց ձորի Նորավանքում եպիսկոպոս է նստում 1216 թվականին՝ հիմք դնելով այստեղի եպիսկոպոսության։ Մտեղծվում է առանձին թեմ։ Օրբելյան Լիպարիտ իշխանի միջոցով 1216 թվականին նոր եկեղեցի հիմնադրեց և ավարտեց 1223 թվականին։ Հետո գնաց Կիլիկիա, ապա՝ Երուսաղեմ, որտեղ և նահատակվեց։ (էջ 285)։

1063. Սա Սյունյաց Հովհաննես 8-րդ եպիսկոպոսն է, որը, ապստամբվելով Նորավանքի եպիսկոպոս Տեր-Սարգսի դեմ, Աղթամարում ձեռնադրվ՝ եպիսկոպոս և 1216 թվականին նստեց Տաթևում։ Այսպիսով Սյունյաց ընդհանուր թեմը բաժանվեց 2 թեմի՝ Վայոց ձորի Նորավանքի և Տաթևի։ (էջ 285)։

1064. Տպագիր բնագրում նշվում է Նորավանքը, բայց քանի որ այս Տեր-Հովհաննեսը Տաթևում էր, ըստ այդմ էլ թարգմանության մեջ փոխեցինք։ (էջ 285)։

1065. Այսինքն՝ ընդհանուր 1251 թվականին։ Այստեղ թվական տվյալների ճշտման կարիք է զգացվում։ Կամ Տեր-Հովհաննեսի ապրած հաջորդ տարիները պիտի լինեին 35, կա՛մ այս թվականը պիտի ավելանար։ Բայց վերջինս հնարավոր չէ, որովհետև հաջորդ եպիսկոպոսը 1252 թվականից է։ Ղ. Ալիշանը վերանայել է նրա աթոռակալության տարիների թիվը՝ 36 («Սիսական», էջ 20)։ (285)։

1066. Սյունյաց եպիսկոպոս այս Տեր-Հայրապետը Տեր-Հովհաննես 8-րդին հաջորդել է 1252 թվականին և աթոռակալել մինչև 1292 թվականը։ Նորոգման աշխատանքներ է կատարել։ (էջ 285)։

1067. Սա Սողոմոն 3-րդն է, որը Տեր-Հայրապետի հետ սկսում է պաշտոնավարել միաժամանակ։ Շարունակել է մինչև 1272 թվականը կամ 1274 թվականը։ (էջ 285)։

1068. Այսինքն՝ ընդհանուր 1216 թվականին։ (էջ 285)։

1069. Այս Ելիկումը Ստեփանոս Օրբելյան պատմիչի հայր Տարսայիճի պապն է։ Ապրել է 12-րդ դարում։ Վրաց Օրբելյան ցեղից էր, ուներ հայ կին Խաշուն անունով։ Գնացել էր Ելտուզի մոտ, որից տիրույթներ է ստացել և այլն։ Որդին էր Լիպարիտը։ Նրանից է սերվել Օրբելյան տոհմը Հայաստանում։ (էջ 285)։

1070. Ելիկումի որդի այս Լիպարիտը Տարսայիճ մեծ իշխանի հայրն էր, Ստեփանոս Օրբելյան պատմիչի պապը։ Եկել էր Իվանե Զաքարյան աթաբեկի մոտ, նրանից ստացել բազմաթիվ գյուղեր Վայոց ձորում, Գեղարքունիքում, Կոտայքում և այլուր։ Դարձավ իշխանաց իշխան։ Օրբելյան

տոհմի հիմնադիրն է Հայաստանում։ Պատմութ յան ասպարեզում սկսել է երևալ 12-րդ դարի վերջին քառորդից։ (էջ 285)։

1071. Սա նույն ս. կարապետ եկեղեցին է, որ այժմ էլ վերանորոգումից հետո կանգուն է Նորավանքում։ Լիպարիտի մեծ արձանագրության մեջ (ՈՀ = 1221 թվականով, որ պիտի լիներ ՈՀՐ = 1223) այդ եկեղեցու կառուցումը նշվում է որպես Նորավանքի հիմնադրում (տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 211, արձ. № 677)։ Դա, իհարկե, երբևէ հին վանքի նոր շրջանն է։ (էջ 285)։

1072. Սա Կիլիկիայի Հեթում 1-ին թագավորն է, հայոց Հեթումյան հարստության հիմնադիրը, որն այդ ժամանակ նստում էր Տարսոնում։ Գահակալել է 1226—1270 թթ.։ (էջ 285)։

1073. Ավան Կիլիկիայում։ Այստեղ վանք է եղել, որը մշակութային զգալի դեր է խաղացել։ (էջ 285)։

1074. Այս դեպքում նկատի ունի խաչակիր եվրոպացիներին, որոնք այդ ժամանակ տիրում էին Երուսաղեմում։ (էջ 285)։

1075. Այսինքն՝ լատինական գրությամբ։ (էջ 285)։

1076. Հավանաբար սա Սյունյաց այն եպիսկոպոս Ստեփանոսն է, որի գերեզմանը գտնվում է Նորավանքում՝ ՉԹ (= 709 + 551 = 1260) թվականը կրող տապանագրով, որը բերում է Ղ. Ալիշանը «Սիսական»-ում (անդ, էջ 194)։ (էջ 286)։

1077. Վայոց ձորի Նորավանքի եպիսկոպոս այս Տեր-Սարգիսը նախորդ Սարգիս եպիսկոպոսի (տե՛ս ծան. 1062) քրոջ թոռն էր։ Ժամանակակից է պատմիչին, որն ականատես է եղել նրա եռանդուն գործունեությանը և մեծ գովեստով է պատմում նրա մասին։ Կոչվել է նաև «քահանայապետ Վայոց ձորի»։ Վախճանվել է 1298 թվականին, թաղված է նույն Նորավանքում։ Այժմ էլ պահպանվում է շիրիմը՝ ՉՆԷ (=1298) թվականով։ (էջ 286)։

1078. Ելիկումի որդի մեծ իշխան Լիպարիտը պատմագիր Ս. Օրբելյանի պապն էր, որի չորս որդիներից Տարսայիճն էլ հայրն էր։ Այս Տարսայիճը իշխանաց իշխան էր և աթաբեկ։ Եղբոր մահից հետո Սյունյաց իշխանական աթոռը ժառանգեց 1273 թվականին։ Վախճանվեց 1290 թվականին։ Այստեղ Տաթևի վանքի վերաշինման կապակցությամբ հիշված նրա եղբայրը Սմբատը Սյունյաց իշխանական գահին նստել էր 1253 թվականին և իշխել 20 տարի։ Հայտնի է թաթարների հետ վարած իր բանակցություններով (2 անգամ եղել է Թաթարիայում), այլև շինարարական աշխատանքով (1261 թ. ընդարձակել է Նորավանքը)։ Մեռել է 1273 թվականին։ Մինչև այժմ պահպանվում է նրա դամբարանը Նորավանքում՝ ՉԻԲ (=1273) թվականով։ (էջ 286)։

1079. Տե՛ս ծան. 1066։ (էջ 286)։

1080. Նման դեպքերում պատմիչը գործածում է կեցեալ բառաձևը, որը կեալ «ապրել» բառից է։ Մենք ապրել բառով չենք թարգմանում, որովհետև դա չի վերաբերում գործչի ամբողջ կյանքին։ (էջ 286)։

1081. Սա Սյունյաց Հովհաննես 9-րդ եպիսկոպոսն է։ Աթոռակալել է 1292—1295 թթ.։ (էջ 286)։

1082. Պատմագիրը նկատի ունի իրեն։ Հովհաննես 9-րդին հաջորդել է 1295 թվականին, երբ միավորվում են մեկ ամբողջության մեջ Նորավանքի և Տաթևի եպիսկոպոսական աթոռները որպես Սյունյաց «կրկնանուն մետրոպոլիտություն»։ (էջ 286)։

1083. Խոսքը Վայոց ձորի Ամաղուի Նորավանքի մասին է։ (էջ 287)։

1084. Խոսքը այն ձորի մասին է, որը գտնվում է այժմյան Եղեգնաձորի շրջանի Ամաղու գյուղից վերև։ (էջ 287)։

1085. Տե՛ս ծան. 913։ (էջ 287)։

1086. Այսինքն՝ ընդհանուր 1105 թվականին։ (էջ 287)։

1087. Այսինքն՝ Վահանավանքում։ (էջ 287)։

1088. Սա Հովհաննես Կապանեցի եպիսկոպոսն է։ Համմտ. ծան. 1042։ (էջ 287)։

1089. Սա Բաղաց Համառուն 1-ին իշխանն է։ (էջ 288)։

1090. Սա սելջուկյան սուլթան Մահմուդն է, որն իշխել է 1118—1131 թթ.։ (էջ 288)։

1091. Տե՛ս ծան. 1048, 1049։ (էջ 288)։

1092. Բնագրում՝ ի Գանձակեցեացն և ի Տխարբեցեացն։ Այս բառերը համապատասխան Գանձակ և Տխարբ գյուղանուններից են։ Այս բնակավայրերը հարկացուցակում նշված չեն։ Գանձակը Գնիշիկի մոտի այն գյուղն է եղել, որ տեղացիներն ասում են Քենձակ. կից տարածքի բնակավայրը ուշ ժամանակներում կոչվել է Ենգիջա։ 1946 թվականի սեպտեմբերի 10-ին վերանվանվել է հին՝ Գանձակ անունով։ Մտնում է այժմյան Եղեգնաձորի շրջանի մեջ։ Ենթադրվում է Ագարակաձորի գյուղական սովետի իրավասությանը։ Տխարբ գյուղի (Մ. Բրոսեն գրում է Tkharbi—Տխարբի) տեղն այժմ ավերակ գյուղատեղ է։ Գտնվում է Ամաղու գյուղից մոտավորապես 3 կիլոմետր դեպի հարավ-արևելք, Գնիշիկ գյուղը տանող ճանապարհի ձախ կողմին, Ամաղուձաորի ձախ ափին (համմտ. Հ. Եղիազարյան, նշվ. աշխ., էջ 29)։ (էջ 288)։

1093. Բնագրում մեծատառով է խազրիկ բառը։ Հազիվ թե հատուկ անուն լինի։ (էջ 288)։

1094. Ինչպես երևում է, սա էլ մոտակայքում մի բերդ է եղել, որը հետո տրվել է վանքին։ (էջ 289)։

1095. Պարսկերեն gulam «ծառա» բառն է։ Այսպես էին կոչվում արաբական տիրապետության ամիրաները (իբրև ամիրայապետի կամ բազավորի ծառաներ)։ (էջ 289)։

1096. Այս Ախթամարը, որ հիշատակվում է նաև հաջորդ (կե) գլխում, Արփա գյուղում հին ժամանակներից բնակված Ախթամարյան տոհմից էր։ Համմտ. կե գլխում։ Նրա անունը հիշվում է նաև իր որդու կանգնեցրած (Նորավանք) երկու խաչքարերի 1285 թվականի արձանագրությունների մեջ («Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 242)։ (էջ 289)։

1097. Սա խաչենեցի իշխան Վասակ Խաղբակյանն է, Խաղբակ 2-րդի որդին, Հասանի, Ջաջուռ 2-րդի, Գրիգորի և Աբուսի (Աբուսենի) եղբայրը։ Նրա որդիներն էին Պապաքը, Մրեմը և Պողոը։ Խաչենից դուրս է եկել 1201 թվականին, մասնակցել է Զաքարե և Իվանե Զաքարյանների՝ օտար գավթիչների դեմ մղած պատերազմներին։ Իր քաջագործությունների համար շատ հողեր է ստացել Վայոց ձորում, Բշնիում, Կեչառույքում։ Նշանակվել է կուսակալ Գառնուց մինչև Բարկուշատի կողմերում։ 1214 թվականին կառուցել է Կեչառույքի (այժմ՝ Ծաղկաձոր) կաթողիկե տաճարն ու վանքը, հողեր է նվիրել և այլն։ Հիմնադրել է Պռոշյան իշխանությունը։ Նրա

մասին գրել են նաև Կ. Գանձակեցին, Մ. Աւորին։ Այս տոհմի ծագման ու հետագա գործունեության մասին հայտնի է Գ. Հովսեփյանի «Խաղրակեանք կամ Պռոշեանք հայոց պատմության մէջ» ուսումնասիրությունը։ (էջ 289)։

1098. Վասակ իշխանի որդի այս Պռոշը կոչվել է նաև Հասան։ Ծավալել է լայն գործունեություն։ Իր դեչի կարևորության հիման վրա Խաչբակյան տոհմը սկսել է անվանվել Պռոշյան։ 1222—1225 թվականներին իշխանությամբ հաշորդեց հորը։ Քաջ հայրենասեր էր։ 13-րդ դարի 30—80-ական թվականներին մարտնչել է հայրենիքի ազատության համար մղված պատերազմներում։ Գեղարդում գնել է Այրիվանքը, շինարարություն կատարել։ Կառուցել է վանքեր, նվիրատվություններ է կատարել և այլն։ Մեռել է 1284 թվականին, թաղված է Կեչառույքում։ Նրա մասին գրել են նաև պատմիչներ Կ. Գանձակեցին, Մ. Այրիվանեցին, Մ. Աւորին։ Կյանքը և գործը հանգամանորեն հետազոտված են Գ. Հովսեփյանի «Խաղրակեանք կամ Պռոշեանք հայոց պատմության մէջ» հայտնի մենագրության մեջ։ (էջ 289)։

1099. Այսինքն՝ ընդհանուր 1214 թվականին։ Բայց այստեղ թյուրիմացություն կա։ Սա չէր կարող Հովհաննես Կապանեցի եպիսկոպոսի մահվան թվականը լինել։ Նա չէր կարող այսքան երկար ապրած ու պաշտոնավարած լինել։ Չնչ նույնիսկ ընդունենք, որ նա Մահմուդ սուլթանի մոտ գնացել է նրա իշխման վերջին տարին (1131 թվականին), թեկուզ և մի քանի տարի եպիսկոպոս եղած ժամանակ, ապա դժվար է պատկերացնել, որ մինչև մահը պաշտոնավարել է 85—90 տարի։ Կամ՝ քիչ ներքև պատմիչը գրում է, թե նրանից հետո աթոռակալել է Տեր-Ստեփանոսը, այսինքն՝ Ստեփանոս 3-րդը, որը աթոռակալել է սկսել 1168 թվականից։ Կան և ուրիշ հակասող փաստեր։ Համմտ. ծան. 1042։ (էջ 290)։

1100. Տե՛ս ծան. 1043։ (էջ 290)։

1101. Սա Ս. Օրբելյանը բարգմանել է «սիրող Քրիստոսի» (տե՛ս գլ. 49), իսկ ոմանք բաչատրում են «պարծանք քրիստոնէից» (համմտ. ծան. 1045)։ (էջ 290)։

1102. Տե՛ս ծան. 1039։ (էջ 290)։

1103. Խոսքը հայոց կաթողիկոս Գրիգոր 4-րդ Տղայի մասին է։ Աթոռակալել է 1173—1193 թթ.։ Ներսես Շնորհալու վաստիկ եղբոր որդին էր։ Հաջորդեց իր հորեղբայր Ներսեսին։ (էջ 290)։

1104. Ժամանակին փոքր գյուղ է եղել այս Ագարակի ձորը։ Հարկացուցակում Վայոց ձորի գյուղերի շարքում նշվում է 5 միավոր հարկաչափով։ Այժմ էլ այսպիսի գյուղանուն կա Եղեգնաձորի շրջանում։ Անունը, մի ժամանակ աղավաղվելով, դարձել էր Այար։ Այժմ հնադույնի հիման վրա վերծանված է Ագաւրակաձոր։ Եղել է նաև Ագարակ անունով ավելի մեծ գյուղ, որը հարկացուցակում Վայոց ձորի գյուղերի շարքում նշված է 12 միավոր հարկաչափով։ (էջ 290)։

1105. Այսինքն՝ ընդհանուր 1216 թվականին։ (էջ 290)։

1106. Տե՛ս ծան. 1062։ (էջ 290)։

1107. Թիթեղնականը ու կամարակապը ոսկե զարդեր են, որ կրում էին բարձրաստիճան կրոնավորները։ (էջ 290)։

1108. Շահապոնք կամ Շահապունիք գավառը այժմյան Աղրբ. ՍՍՀ Նախիջևանի ԻՍՍՀ Շահբուզի շրջանի տարածքն էր։ Համմտ. նաև ծան. 57։ (էջ 290)։

1109. Տե՛ս ծան. 1097։ (էջ 291)։

1110. Տե՛ս ծան. 1098։ (էջ 292)։

1111. Կեչառույքի (Կեչառիս) վանքը գտնվում է այժմյան Հրազդանի շրջանի Ծաղկաձոր քաղաքում։ Այդ համալիրի մեջ այսօր էլ կանգուն է Պռոշ մեծ իշխանի հոր կառուցած տաճարը։ (էջ 291)։

1112. Այսինքն՝ ընդհանուր 1216 թվականին։ (էջ 291)։

1113. Այսպես ենք թարգմանել բնագրի կայր ի խսար արտահայտությունը։ Խսար կամ խիսար բառի ծագման և նշանակության մասին համմտ. ծան. 1267։ (էջ 291)։

1114. Ջարեք բերդը գտնվում էր Փառիսոս գավառում։ Նույն Ջարեք անունով եղել է նաև վանք։ Տեղը հիշատակում է նաև Կ. Գանձակեցին (Պատմութիւն Հայոց, Զ. էջ 178, 182)։ (էջ 291)։

1115. Տե՛ս ծան. 1062։ (էջ 291)։

1116. Տե՛ս ծան. 1043։ (էջ 291)։

1117. Բնագրում՝ էջպաց։ Հէջուլ (հէջութ, հէջուլ, հէջուլ) արաբերեն է՝ «սննկապան, արարողապետ» նշանակությամբ։ (էջ 291)։

1118. Պղնձահանքն այժմյան Ախթալան է Թումանյանի շրջանում։ (էջ 291)։

1119. Բնագրում՝ ծիկնապարի։ Վրացերեն მწიგნობარი (mcignobari) բառն է, որ նշանակում է «դպիր, քարտուղար, դիվանագիր»։ (էջ 291)։

1120. Պղնձահանքի վանքն Ախթալայի վանքն է, որտեղ, ըստ Կիրակոս Գանձակեցու հաղորդման, հետո թաղվում է Իվանե աթաբեկը։ (էջ 291)։

1121. Տե՛ս ծան. 1062։ (էջ 292)։

1122. Տե՛ս ծան. 1063։ (էջ 292)։

1123. Կոստանդին 1-ին Բարձրբերդեցի կաթողիկոսն է։ Կոչվել է նաև Մավրիանցի։ Աթոռակալել է 1221—1267 թթ.։ (էջ 292)։

1124. Փարիզյան հրատարակության մեջ՝ անբառ։ Ուղղել ենք ըստ մոսկովյան հրատարակության։ (էջ 292)։

1125. Տե՛ս ծան. 1070։ (էջ 292)։

1126. Բնագրում՝ մարծուան։ Սա նույն մարզպան բառն է. ծագում է պահլավերենից՝ marzəpan «մարզի կամ ծայրագավառի կառավարիչ»։ Մ. Բրոսեն դրել է որպես հատուկ անուն՝ Mardzovan ձևով (տե՛ս ֆրանսերեն թարգմանությունը, էջ 202)։ Ավելի ճիշտ է հասկացել Կ. Շահնազարյանցը՝ գրելով, որ դա մարզպան բառն է՝ վրացերեն հնչումից վրացահայերի աղավաղումով (տե՛ս սույն երկի փարիզյան հրատարակությունը, հ. 2-րդ, էջ 303)։ (էջ 293)։

1127. Այս դպէլ-ը՝ վրացերենից է՝ დბელო, որը հնչվում է tbeli, Ս. Մալխասյանցը բացատրում է «տպեցի» (Հայերէն բացատրական բառարան, հ. 1-ին, 510)։ Վրացական պաշտոնեական մի տիտղոս էր Տբերի եպիսկոպոսի տիտղոսը։ (էջ 293)։

1128. Բնագրում բերված է փոքրատառով՝ որպես հասարակ անուն՝ մնմնաչաղէլ ձևով։ Բայց դա հատուկ անուն է. այն էլ բաղադրյալ։ Մ. Բրոսեն բաժանել է երկու մասի և դրել որպես հատուկ անուն՝ Memna Djagheli ձևով (անդ, էջ 202)։ Բառավերջի էլ մասը պիտի էլի լինի (eli), ածանց է, որը որևէ տեղից լինելն է նշանակում։ Մենք էլ դրեցինք մեծատառով՝ ընդունելով, որ հատուկ անուն է։ Մեմնան Զաղելինների տոհմի մեծավորն է եղել հրավիրվածների մեջ։ Այդ տոհմի մասին համմտ. Հ. Գ. Մարգարյան, «Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ժի դարի պատմության մի քանի հարցեր», Երևան, 1980, էջ 161։ (էջ 293)։

1129. Բնագրում՝ եղաւնդիտէլ: Վրացերեն է ეპისკოპოსი (եպիսկոպոս): Այդպես էր կոչվում Ճղոնդիդի եպիսկոպոսը, որը, Դավիթ Շինաբարից սկսած, նաև արքունի դիվանադպիրների գլուխն էր: (էջ 293):

1130. Նշանավոր Վարձիա վանքն է Վրաստանում: (էջ 293):

1131. Բնագրում՝ ծիրամ ծնօր: Վրացերեն წინამძღვარი այսինքն՝ հրոնավոր առաջնորդ, վանահայր, աբբա:

1132. Բնագրում մամթավար: Վրացերեն է՝ მამამთავარი (մամաթավարի): Նշանակում է «հայրերի հայր, պատրիարք, հայրապետ, նահապետ, տոհմապետ»: (էջ 293):

1133. Գագ բերդի անունից՝ գագեցի: Գագ բերդը գտնվում էր այժմյան Նոյեմբերյանի շրջանի Կոթ (Շավարշավան) գյուղի արևելյան կողմի լեռան գագաթին: Տե՛ս Ի. Բ. Էլլարյան, «Աղստևի հովտի պատմական հուշարձանները», Երևան, 1968, էջ 78: (էջ 293):

1134. Մածնաբերդի անունից՝ մածնաբերդցի: Մածնաբերդը, որ կոչվել է նաև Մլզնաբերդ, գտնվում է այժմյան Ադրբ. ՍՍՀ Դաշքեսանի (Քարհատի) շրջանի Ջովղար գյուղի մոտ, նրանից հարավ-արևելք բնակած մի բարձր լեռնագագաթի վրա: Նրա մասին տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 5-րդ, էջ 265: (էջ 293):

1135. Բնագրում՝ դէդեպուլ: Սա վրացերեն დიდებული— didebuli— դիդեբուլի բառն է, նշանակում է «մեծամեծ, նշանավոր, ազնվական, մեծավոր»: Կ. Շահնազարյանցը բացատրում է «ավագանի» (սուլն երկի փարիզյան հրատարակություն, հ. 2-րդ, էջ 303): (էջ 293):

1136. Բնագրում՝ ղատի: Բառն արաբերեն է (qadi): Այսպես էին կոչվում մահմեդական դատավորները, որոնք գործերը քննում ու վճիռ էին արձակում ըստ շարիաթի: (էջ 293):

1137. Սուրմարին նույն Սուրբ Մարին է: Սա այն բնակավայրն է, որի հիշյալ անունը հետագայում աղավաղվելով կոչվել է Սաւրմալու: Այժմ գտնվում է Թուրքիայի տարածքում: (էջ 293):

1138. Շեյխը իսլամական վանքի առաջնորդն է, բառը արաբերեն է՝ šēx «ծերունի, ջիուն, վանահայր» իմաստով: (էջ 293):

1139 Բջնին Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Հայտնի է իր անառիկ բերդերով ու Գ. Մագիստրոսի կառուցած եկեղեցիով: Այժմ մըտնում է Հրազդանի շրջանի մեջ: 11-րդ դարի սկզբներից եպիսկոպոսանիստ է եղել: (էջ 293):

1140. Տե՛ս ծան. 1058: (էջ 293):

1141. Այսինքն՝ ընդհանուր 1223 թվականին (ըստ վիմական արձանագրության՝ 1221): (էջ 293):

1142. Աղբերիսը (Աղբերիք) որպես բնակավայր չի հիշատակված հարկացուցակում, բայց ըստ պատմիչի նկարագրության՝ գտնվել է Նորավանքի սահմաններում: (էջ 293):

1143. Սա Եղեգնաձորի շրջանի Գնիշիկ գյուղի մոտի ձորն է, որ մի ժամանակ կոչվել է նաև նույն բնակավայրի անունով՝ նույն Ամաղվաձորի վերին մասն է: (էջ 294):

1144. Համմտ. ծան. 1092: (էջ 294):

1145. Համմտ. ծան. 1050: (էջ 294):

1146. Համմտ. ծան. 1051: (էջ 294):

1147. Այսինքն՝ ընդհանուր 1123 թվականին: (էջ 294):

1148. Արձանագրության մեջ քերականական թվի տեսակետից անհանոնություն կա: Մեկ գործածված են եզակի (նոր, լիցի), մեկ՝ հոգնակի (լիցին, յանդգնին) ձևեր: Հոգնակի թվով համահարթել ենք թարգմանության մեջ: (էջ 295):

1149. Այսինքն՝ ընդհանուր 1211 թվականին: (էջ 295):

1150. Բնագրում՝ թագաւորին: Դրանով նկատի է առնված Թամար թագուհին: (էջ 295):

1151. Սա Ամաղուի Նորավանքի սուրբ Կարապետ եկեղեցին է: Արձանագրությունը (12 տող) փորագրված է եկեղեցու հյուսիսային պատի վերին մասում: Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 211, արձ. № 677: (էջ 295):

1152. Պատմիչն ընդհանրապես հարազատ է մնացել այս վիմական արձանագրության ոգուն: Սակայն շարադրել է ազատ. զգալի չափով փոխել է, խմբագրել, որոշ հավելումներ ու կրճատումներ կատարել, բառեր և բառաձևեր փոփոխել և այլն: (էջ 295):

1153. Այսինքն՝ ընդհանուր 1223 թվականին: Պատմիչի նշած այս տվյալը չի համապատասխանում մեզ հասած հիշյալ վիմական արձանագրության տվյալին: Այստեղ թվականը նշված է ՈՀ, այսինքն՝ 670, որը ընդհանուր 1221 թվականն է: Համմտ. «Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 211: Թերևս եղել է ՈՀՐ, իսկ հետագայում Ր-ն եղծվել է: (էջ 295):

1154. Արձանագրության մեջ այս անունն Ալակում ապա Ալումին (աղավաղված ձևով է): (էջ 295):

1155. Արձանագրության մեջ այս հատվածն այսպես է. «... հայր իմ Ալումին քինացաւ Թագաւորին Ափղազաց գնաց ի տունն աթաբակ էլտկուզանց և նա մեծ ազգատոհ մեծարեց զնա...»: Ս. Գ. Բարխուդարյանն ուղղել է շփոթումով փորագրված ԱԹԱԲԱՎՄԿՈՒՉԱՆՑ տառաշարքը՝ աթաբակ էլտկուզանց (նույն տեղում, էջ 212): (էջ 295):

1156. Ակնարկում է մանուկ ժամանակ մահմեդական խորթ հոր տանը նղած լինելը: (էջ 296):

1157. Այս հատվածում կան շատ փոփոխություններ: Արձանագրության մեջ Լիպարիտի որբ թողնվելու մասին ոչինչ չկա: Արձանագրությունը ոչինչ չի ասում Վայոց ձորի, Գեղարքունիքի, Կոտայքի, Կայենի (Կայան) գյուղերից նվիրելու մասին և այլն: Վերը մատնանշված հատվածի շարունակությունը վերարտադրված է ազատ կերպով՝ զգալի հավելումներով, կրճատումներով ու այլ փոփոխություններով: (Համմտ. «Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 211: (էջ 296):

1158. Սա ավելացրել ենք ըստ վիմական արձանագրության: (էջ 296):

1159. Վիմագիր արձանագրության համեմատությամբ այս հատվածում ևս զգալի տարբերություններ կան: Այստեղ բացակայում են դիմումն ընթերցողների, Լիպարիտի մյուս երկու որդիների անունները, տյառնընդա-

առաջի տոնին հիշատակի նշումն ըստ պայմանի և այլն։ Կան տարբեր ձևակերպումներ։ Տեղի սղության պատճառով չենք բերում բոլորը տատանցիորեն։ Թերևս ընդօրինակումը կատարվել է վանքի դիվանական մատյանից, որը չի պահպանվել։

Ս. Օրբելյանի երկի փարիզյան հրատարակության մեջ այս արձանագրությունը համապատասխան տեղում բերված է ոչ լրիվ։ Շարունակության մեջ նրան է խառնված մեկ ուրիշ արձանագրություն (հ. 2-րդ, էջ 105—106)։ Իսկ նրա մի մասը տպված է ուրիշ տեղ և այլն։ Այստեղ հիմք ենք ընդունել մոսկովյան հրատարակության համապատասխան մասը (էջ 264)։ (էջ 296)։

1160. Ըստ Ղ. Ալիշանի («Սիսական», էջ 20), Տեր-Սարգսին հաջորդած (1236 թվականից հետո) այս Տեր-Ստեփանոսն աթոռակալել է 12 տարի (ուրեմն՝ մինչև 1248 թվականը)։ (էջ 297)։

1161. Հիշյալ շրջաբերականի ընդօրինակումը երկի տպագիր օրինակներում բացակայում է։ (էջ 297)։

1162. Տե՛ս ծան. 1078։ (էջ 297)։

1163. Սա ուրիշ Տեր-Սարգիս է, որ աթոռակալել է Սյունյաց մեծ իշխան Սմբատի ժամանակներում։ (էջ 297)։

1164. Այս Ակոռին որպես գյուղ հարկացուցակում չի նշված։ Բայց պարզ է, որ այդ անունով գյուղ է եղել Վայոց ձորում։ Հայաստանում համանուն ուրիշ բնակավայրեր եղել են Մեծ Մասիսի լանջին, Տայիրքում։ Սակայն այստեղ դրանցից որևէ մեկի մասին չէ խոսքը։ (էջ 297)։

1165. Հողոցիմ կամ Հողոցիմք գյուղը հարկացուցակում նշված չէ։ Վայոց ձորի հնագույն բնակավայրերից է եղել։ Հայտնի է դեռ 5-րդ դարից։ Ղազիևն հիշատակում է գիտ Հողոցմոնց ձևով. «Սուրբ Յովսէփ ի Վայոց ձորոյ՝ ի գեղջէ Հողոցմոնց» (7-րդ, էջ 178)։ Ենթադրվում է, որ հետագայի Ցայլջի կոչված գյուղի տեղում է եղել։ (էջ 297)։

1166. Տե՛ս ծան. 1060։ (էջ 297)։

1167. Այս գյուղը նույն անվամբ այժմ գտնվում է Եղեգնաձորի շրջանում՝ անվան Զիվա հնչմամբ։ Վայոց ձորի գյուղերի շարքում հարկացուցակում հիշատակված չէ։ (Նշանակում է՝ Տաթևի վանքին հարկատու չի եղել)։ (էջ 297)։

1168. Սմաղվաձորը կամ Սմաղուի ձորը Վայոց ձոր գավառի հարավային կողմում (Եղեգնաձորի շրջան) Գնհիկի ձորի շարունակությունն է։ Այդ ձորում է գտնվում Նորավանքը։ (էջ 297)։

1169. Այսինքն՝ ընդհանուր 1261 թվականին։ (էջ 297)։

1170. Սակայն վերը նշված է երեք գյուղ (գիւղս երիս)։ (էջ 297)։

1171. Այս Ալճ և Անապատ գյուղերը հարկացուցակում նշված չեն։ Անշուշտ, գտնվել են Վայոց ձորում։ (էջ 297)։

1172. Տպագիր բնագրում՝ կիւրակաջրովն, քարի վրա՝ կիրակնաջրովն։ Հավանաբար սա կիրակի օրերին ոռոգելու ջրից օգտվելու իրավունքն էր։ Մ. Բրոսեն ընդունել է իբրև հատուկ անուն և ավելացնելով «գետակ» նշանակող rivière բառը՝ թարգմանել է կյուրակոջուր գետակ՝ rivière Kiouraco-Dchour (անդ, էջ 206)։ (էջ 297)։

1173. Աբփան Օլիկումի որդի իշխանաց իշխան Հիպարիտի կինն էր, Սմբատի մայրը, մեծ իշխան Բուպաքի (Բուպա) դուստրը։ (էջ 297)։

1174. Այս Իվանեն ու Փախրադյան Սմբատի եղբայրներն էին։ (էջ 297)։

1175. Սա այժմյան Ազիզբեկովի շրջանի Ազատեկ գյուղն է։ (էջ 298)։

1176. Պարզ է, որ սա հայտնի Երևան քաղաքը չէ, այլ գյուղ է։ Բայց ո՞ր գյուղն է։ Մնդ թվում է, որ բուն անունն աղավաղվել է։ Գուցե հարկացուցակում նշված երկու Երեռուճներից մեկն է կամ էլ Երեռը (այժմյան Հերհերը), որը հենց նկարագրված տարածքի մեջ է (Ազատեկից շատ հեռու չէ)։ Ս. Գ. Բարխուդարյանը նշում է, որ «հավանաբար Երեռան պիտի լինի» («Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 218, ներդիր, ծան.)։ (էջ 298)։

1177. Ճավաձոր գյուղը, ըստ Ղ. Ալիշանի նկարագրության, գտնվել է Զիվայի կողմերում, որը դեռ իր ժամանակներում գոյություն է ունեցել այլազգի սակավ բնակչությամբ («Սիսական», էջ 169)։ (էջ 298)։

1178. Վիմական բնագրում Գնիշկաձոր է։ Պատմիչի երկում Գնիշկաձոր-Ծաղկաձոր փոփոխությունը գրիչների սրածն է, ինչպես ճիշտ նկատել է Ս. Գ. Բարխուդարյանը («Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 218, ներդիր, ծան.)։ Իսկ այդ ձորը հայտնի է Եղեգնաձորում։ (էջ 298)։

1179. Այս Բուրթելը Հիպարիտի որդի Օլիկումի որդին էր, որը Թերևք գետի մոտ 1261 թվականին սպանվեց խազարների (զիշղաների) դեմ մղված պատերազմում։ (էջ 298)։

1180. Հայկական աղբյուրներում այս ժողովուրդը հիշվում է դեռ 5-րդ դարից՝ խայլեդուրք, խայլաեդուրք, ավելի ուշ՝ խալաեդուրք (ինչպես այստեղ) ձևով։ Դրանք հոնական ցեղի քոչվոր ժողովուրդ էին։ Երկրի (աշխարհի) սահմաններն ստույգ հայտնի չեն։ Ըստ որոշ կողմնակի տվյալների՝ նրանք պիտի բնակվելիս լինեին Ռուսաստանի հարավային տափաստաններում և Ալանաց երկրի սահմանների մոտ։ Սովորաբար ասվում է, որ սրանք կովկասյան հոներն էին։ (էջ 298)։

1181. Այս անունը գալիս է Աստվածաշնչից (Բ. Կոր., Ջ, 15)։ Դրանով նկատի է առնված սատանան։ (էջ 298)։

1182. Ըստ Աստվածաշնչի՝ Քամը Նոյ նահապետի որդիներից մեկն էր։ Հոր նկատմամբ անպատշաճ վարվեց և իր վարվեցողության պատճառով նրանից անիծվեց իր սերնդով (Ծննդ., Թ, 20—27)։ (էջ 298)։

1183. Ըստ Աստվածաշնչի՝ Կորխը, Դաթան և Աբիրոնը ապստամբներ էին, հակառակվում էին Մովսեսին ու պատժվեցին (Թիւք, ԺՉ)։ (էջ 298)։

1184. Հեզեքելը Իսրայելի թագավոր Աքաաբի կինն էր, որ կամեցավ վերացնել աստվածապաշտությունը և մտցնել կռապաշտությունը։ Այդ պատճառով էլ պատժվեց (Գ. Թագ. ԺՉ, ԺԸ, ԻԱ, Դ. Թագ., Թ)։ (էջ 298)։

1185. Ըստ Աստվածաշնչի՝ Գեհազի անունով այս կինը Իսրայելի մարզպետ Եղիսեի մտերիմ ծառան էր, որի նկատմամբ ագահության և խաբեբայության հանդես բերելով՝ պատժվեց մշտական բորոտությամբ (Դ Թագ., Բ—Թ, ԺԳ)։ (էջ 298)։

1186. Արիոսական աղանդի հիմնադիրը։ (էջ 298)։

1187. Նկատի ունի Վարդանանց ազատագրական պայքարի դավաճան Վասակ Սյունեցուն։ (էջ 298)։

1188. Սմբատի այս արձանագրությունը պատմիչը որոշ մասերում բերել է բառացիորեն, իսկ ամբողջականությամբ նույնական չէ վիմական բնագրի հետ։ Փաստական առումով էլ կան զգալի տարբերություններ։ Ս. Գ. Բարխուդարյանը, նկարագրելով վիմական արձանագրությունը, գրել է. «Ամբողջ արձանագրությունը փորագրված է 12 քարերի վրա, որոնցից 7-ը հարավային և 5-ը արևմտյան պատի վրա։ Դրանցից 3-ը և 7-ը բոլորովին ջարդված, թափված են. մյուս մասերում միայն տեղ-տեղ ջարդված, Պակասող մասերը լրացնում ենք մասամբ բառերի մնացորդ տառերի հիման վրա, եթե դրանք կան, ապա ըստ նախկին հրատարակությունների, որոնց ժամանակ քիչ վնասված են եղել, և ըստ Ս. Օրբելյանի, որն ունի արձանագրության բովանդակության շարադրանքը կամ նույնի գրավոր աղբյուրի հիման վրա արտագրածը» («Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ էջ 218, ներդիր)։ (էջ 298)։

Ս. Օրբելյանի երկի հրատարակություններում բերված այս մեկ արձանագրության մեջ միացված են Սմբատի երկու արձանագրությունները։ Տեղում Բուրթելի հիշատակին արված նվիրատվությանը վերաբերող մասն առանձին արձանագրություն է՝ փորագրված զավթի գոտու վրա՝ երեք տողով։ Մեզ հասած այդ արձանագրության համեմատությունը ցույց է տալիս, որ պատմիչն այս ևս վերաշարադրել է (արձանագրության վերծանումը տե՛ս նույն տեղում)։ Ընդունելի է Ս. Գ. Բարխուդարյանի հիշյալ կարծիքը, ըստ որի պատմիչը կա՛մ վերաշարադրել է բովանդակությունը, կա՛մ ընդօրինակել մի ուրիշ գրավոր աղբյուրից։ (էջ 298)։

1189. Նորս բերդը պիտի լիներ Ելփին գետի ավազանի տարածքում (համմտ. «Սիսական», էջ 168)։ (էջ 298)։

1190. Գտնվել է Արփա գյուղի շրջակայքում։ (էջ 299)։

1191. Տե՛ս ծան. 1096։ (էջ 299)։

1192. Տպագրում այդպես է՝ Աւփասլան։ Պետք է լինի Ալփասլան, ինչպես որ կա նույն իշխանի թողած վիմական արձանագրության մեջ (համմտ. «Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 219)։ Ըստ արձանագրության՝ Դայեկո քարի այգին այս իշխանը նորավանքին է նվիրել Մխիթար քահանային հետ։ Ախթամար իշխանի անունն այստեղ չկա։ (էջ 299)։

1193. Պատմիչի այս հաղորդածը, անշուշտ, վերաբերում է և՛ Ալփասլանին, և՛ Ախթամարին։ Մեզ է հասել Ալփասլանի արձանագրությունը ((համմտ. «Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 219, արձ. № 694)։ (էջ 299)։

1194. Մեզ է հասել այս Շնորհավոր քահանայի արձանագրությունը՝ Նորավանքի ս. Կարապետ եկեղեցու երկրորդ հարկի պատին։ Այժմ խոտ եղծված է, բայց պարզ երևում է դրամական նվերին վերաբերող մասը՝ ՝ D ՝ Դեկան, այսինքն՝ 100 դահեկան (= 1000 դրամ)։ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 217, արձ. № 687։ (էջ 299)։

1195. Տե՛ս ծան. 1098։ (էջ 300)։

1196. Այս Հովհաննես Ապրակունեցին, որ, կոստանդին 1-ին կաթողիկոսին (1221—1267 թթ.) խաբելով, եպիսկոպոս էր ձեռնադրվել, ուզում էր

Երնջակի առանձին թեմ կազմել։ Բայց Կոստանդինին հաջորդած հայոց Հակոբ կաթողիկոսը (1268—1286 թթ.) նրան կարգալույծ է անում։ Այն կարծիքը կա, որ այս դեպքը պիտի կատարված լինի 1273 թվականից հետո, մինչև 1286 թվականը (այսինքն՝ Հակոբի աթոռակալման վերջին տարին)։ Այս մասին տե՛ս Գ. Հովսեփյան, «Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ», մաս 1-ին, Վաղարշապատ, 1928, էջ 96։ (էջ 300)։

1197. Ապրակոնիք (Ապրակոնիս) բնակավայրն այժմ մտնում է Ապրք. ՍՍՀ. Նախիջևանի ԻՍՍՀ-ի մեջ։ (էջ 300)։

1198. Համմտ. ծան. 1077։ (էջ 300)։

1199. Այս Հովհաննեսը չէր կարող լինել Հովհաննես 8-րդը, ոչ էլ Հովհաննես 9-րդը՝ որպես առաջնորդ։ Սյունյաց այս եպիսկոպոսների աթոռակալության ժամանակամիջոցները չեն համընկնում Հակոբ կաթողիկոսի գահակալության ժամանակամիջոցին։ Հովհաննես 8-րդը պաշտոնավարել է 1216—1251 թթ., Հովհաննես 9-րդը՝ 1292—1295 թթ., իսկ Հակոբ կաթողիկոսը՝ 1268—1286 թթ.։ Վերջինիս օրոք Տաթևում էր Հայրապետ եպիսկոպոսը, քանի որ գահակալել է (Սողոմոն 3-րդի հետ) 1252—1292 թթ., իսկ մինչև 1272 թվականը՝ նաև Սողոմոնը։ Ուրեմն դուրս է գալիս, որ Հակոբ կաթողիկոսի մոտ Տաթևից գնացածը մեկ ուրիշ Հովհաննես է կամ գուցե հետո (1292 թ.) այդտեղի առաջնորդ դարձած Հովհաննեսն է (9-րդը), որ այդ ժամանակ դեռ առաջնորդ չէր դարձել, ուստի և չէր կարող համարվել 9-րդ առաջնորդ։ (էջ 300)։

1200. Տե՛ս ծան. 1078։ (էջ 300)։

1201. Խոսքը հայոց Հակոբ 1-ին Կլայեցի կաթողիկոսի մասին է։ Անվանվել է նաև Սսեցի, Տարսոնացի, Մեծքարեցի և Հռետոր։ Աթոռակալել է 1268—1286 թթ.։ Սա է կարգալույծ արել Հովհաննես Ապրակունեցի եպիսկոպոսին։ (էջ 300)։

1202. Տե՛ս ծան. 1123։ (էջ 300)։

1203. Տպագիր բնագրում՝ կարէ ի կենաց։ Այստեղ խոսքը ոչ թե Հովհաննեսին սպանելու մասին է (այդ պահին նա Երնջակում էր), այլ նրան եպիսկոպոսական պաշտոնից հեռացնելու։ (էջ 300)։

1204. Թե՛ փարիզյան, թե՛ մոսկովյան տպագրություններում Տեր-Հակոբի կոնչակի պատճենը չկա։ Դա բացակայում է նաև № 6271 ձեռագրից։ Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ փարիզյան հրատարակության այս մասում պակասում է ավելի շատ բան։ Այնտեղ գլուխը վերջանում է «զԴաւկի քարոյ այգւոյն զվերին բաժինն» բառերով։ Մնացածը չկա։ Համեմատելով № 6271 ձեռագրի հետ՝ նկատեցինք, որ պակասում է ձեռագրական 136 տող՝ սկսած 245 բ էջի վերջին տողից մինչև 246 ա էջը։ Մոսկովյան հրատարակությունը այստեղ համընկնում է ձեռագրին։ Թարգմանելիս հիմք ենք ընդունել այն։ (էջ 301)։

1205. Նկատի ունի Վրաստանը՝ հարակից տարածքներով։ (էջ 301)։

1206. Արմազ (Արմազի) լեռը գտնվում է Կուր (Քուռ) գետի մոտ, Վրաստանի հին մայրաքաղաք Մցխեթի դիմաց, Թբիլիսիից ոչ շատ հեռու։ (էջ 301)։

1207. Նկատված է, որ Օրբելի բերդի տեղը Ս. Օրբելյանը ճիշտ չի նշել։ Այն գտնվել է ոչ թե Արմազ լեռան վրա, այլ՝ Կուր (Քուռ) գետի ալ վտակ

Քցիա գետի մոտ։ Մի ժամանակ ներառվել է Վրաստանին սահմանակից Գուգարք նահանգի մեջ։ (էջ 301)։

1208. Խունան (Խունանի) ամրոցը գտնվելիս է եղել Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի սահմանագլխին։ Կոչվել է նաև Մակուրիսցիխե, Խանցիխե։ Նրա տեղը հրամ գետի գետաբերանի մոտ էր, այժմյան Ղզղալայի և «Կոտրած կամուրջ»-ի շրջանում։ Խունան անունով կոչվել է և քաղաքը, որը նույն Հունարակերտն է։ Եպիսկոպոսանիստ քաղաք է եղել։ Տե՛ս Ս. Տ. Երեմյան, «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 63։ (էջ 301)։

1209. Սպերը հայտնի է որպես Բարձր Հայքի գավառներից մեկը։ Գրավում էր Ճորոխ գետի վերին հոսանքի շրջանը (Այժմ Թուրքիայում է, կոչվում է Իսպիր)։ Նույն անունով կա նաև քաղաք Ճորոխ գետի ափին։ Ք. Հովհաննիսյանն այն կարծիքն է հայտնել, թե այդ գավառում հավանաբար մի լիճ է եղել, որը պատմիչը ըստ սովորության ծով է անվանում (տե՛ս «История князей Орбельян. Извлечение из сочинения Стефана Сюнийского», էջ 52, ծան. 5)։ Մեզ թվում է, որ պատմիչը Սպեր ծով ասելով նկատի է ունեցել Սև ծովը, որին հանդում է Վրաստանի սահմանը։ (էջ 301)։

1210. Ք. Հովհաննիսյանը, հենվելով Սեն-Մարտինի հայտնած կարծիքի վրա, նշում է, որ այստեղ շփոթված են երկու տարբեր անձնավորություններ՝ պարսկական թագավորներ Քեքավուսը և Քայխոսրուն՝ պապը և թոռը։ Իրականում խոսքը պիտի վերաբերի առաջինին (հմմտ. «История князей Орбельян. Извлечение из сочинения Стефана Сюнийского», էջ 52—53, ծան. 7)։ Իսկ Կ. Շահնազարյանցը ուղղակի ընդգծում է, որ Քեքավուս կոչված պարսկական թագավոր չի եղել (տե՛ս սույն երկի փարիզյան հրատարակությունը, հ. 2-րդ, էջ 308, ծան. 24)։ (էջ 301)։

1211. Մեզանում հնագույն վկայությունը Մծխեթա ձևով է (Խորհնացի, 2-րդ, ՀՀ)։ Մցխեթը (Օրբելյանի երկում՝ Մցխիթա) Վրաստանի հին մայրաքաղաքն է եղել, որը հիշատակվում է դեռ Պտղոմեոսի կողմից։ Հետագայում ավերվել է Լենկթեմուրի արշավանքների ժամանակ։ Այժմ փոքրիկ քաղաք է՝ հայտնի իր հնություններով։ (էջ 301)։

1212. Նկատված է, որ այստեղ պատմիչը ժամանակագրական շփոթ է թույլ տվել։ Իրականում Աբրիտոնը (Ֆերիդունը) թագավորել է Քեքավուսից առաջ (տե՛ս «История князей Орбельян. Извлечение из сочинения Стефана Сюнийского», էջ 53, ծան. 9)։ (էջ 301)։

1213. Վրաց աղբյուրներում նշվում է Աղդոմ։ (էջ 302)։

1214. Այսինքն՝ Զինաստանի։ Քերովբե Պատկանյանն այն կարծիքն է հայտնել, որ այս Ճննաստանը մեզ հայտնի բուն Չինաստանը չէ։ Այդ երկիրը գտնվում էր ավելի այս կողմ, Վոլգայի ափերից ոչ հեռու, դեպի արևելք, ինչպես որ ցույց է տալիս նրա սահմանների այսպիսի նշումը պատմիչի կողմից (տե՛ս История монголов по армянским источникам». Выпуск первый. Перевод и объяснения К. П. Патканова, С. Петербург, 1873, էջ 80, ծան. 29)։ Կա և այն կարծիքը, ըստ որի այդ աշխարհը Թոխարների երկիրն էր, Չինաստանի սահմանին մոտ (անձնական հաղորդում ակադ. Ս. Տ. Երեմյանի կողմից)։ (էջ 302)։

1215. Համմտ. ծան. 1180։ (էջ 302)։

1216. Տե՛ս ծան. 125։ (էջ 302)։

1217. Հոները վաչկատուն ցեղեր էին։ Իբրև ժողովուրդ կազմավորվել են 2—4-րդ դարերում։ Եկել են Ուրալից։ Մի ժամանակ բնակվել են Վոլգայի, Կասպից ծովի ափերին, Հյուսիսային Կովկասում, Սև ծովի հյուսիսային ափին։ Ավերիչ արշավանքներ են կատարել Եվրոպայի ու Ասիայի տարբեր ժողովուրդների վրա։ Իրենց առաջնորդ Աթթիլայի մահից հետո (453 թ.) բաժան-բաժան եղան և աստիճանաբար վերացան պատմության թատերաբեմից։ Այստեղ պատմիչը Հոնաց աշխարհ ասելով հավանաբար նկատի է ունեցել Վոլգայի ու Կասպից ծովի մոտերքում եղած ժամանակավա բնակության տարածքը։ (էջ 302)։

1218. Ո՞րն էր Եմավոն լեռը՝ որոշակի դժվար է ասել։ Ք. Պատկանյանը նշում է նաև անվան Իմաուս տարբերակը (История монголов по армянским источникам. Выпуск первый, էջ 80, ծան. 29)։ (էջ 302)։

1219. Այս Փառնավազ թագավորն իշխել է մ. թ. ա. 302—337 թթ.։ (էջ 303)։

1220. Խոսքը վերաբերում է Վրաստանի Գեորգի 3-րդ թագավորին, որը շահակալել է 1155/56—1184 թթ.։ (էջ 303)։

1221. «Քարթլիս ցխովրեբա»-ն բովանդակում է Վրաստանի պատմությունը։ Այս անվանումը բառացի նշանակում է «Վրաց կյանք»։ (էջ 304)։

1222. 12-րդ դարի վերջերում ապրած պատմիչ Մխիթար Անեցու այս երկը բաղկացած է եղել 3 «պրակ»-ից։ Մեզ է հասել միայն առաջին պրակը։ (էջ 304)։

1223. Այսինքն՝ ընդհանուր 1049 թվականին։ (էջ 304)։

1224. Նկատված է, որ այդ ժամանակներում Վրաստանում թագավորում էր ոչ թե Դավիթը, այլ՝ Բագրատ 4-րդը (տե՛ս «История князей Орбельян. Извлечение из сочинения Стефана Сюнийского» էջ 55, ծան. 21)։ Բագրատ (Բագարատ) 4-րդը գահակալել է 1027—1072 թթ.։ (էջ 304)։

1225. Սա Կարուց կամ Վանանդի թագավոր Գագիկն է՝ Աբասի որդին և Մուշեղ Բագրատունու թոռը։ Թագավոր է դարձել 1029 թվականին։ Դիմագրավել է Տուրղութի ու Ալփասլանի արշավանքներին։ Մինչև վերջ չկարողանալով դիմադրել նրանց՝ երկիրը հանձնեց Բյուզանդիայի Կոստանդին 11-րդ Դուկաս կայսերը (1064 թ.)։ Սպանվել է 1081 թ.։ Նա Շահնշահ չի կոչվել։ Ս. Օրբելյանն այստեղ նրան շփոթել է Բագրատունի Գագիկ 1-ին Թաշավորի հետ (990—1020 թթ.), որը Շահնշահ է կոչվել։

Վանանդի այս Գագիկ թագավորի մասին հիշատակել են Գ. Մագիստրոսը, Մ. Ուռհայեցին, Ն. Շնորհալին, Ս. Անեցին, Կ. Գանձակեցին, Վարդանը, Մ. Այրիվանեցին և ուրիշներ։ (էջ 304)։

1226. Մոնոմախ (նշ. «մենամարտող») մականունով էր կոչվում Բյուզանդիայի Կոստանդին 9-րդ կայսրը (1042—1054)։ (էջ 304)։

1227. Կարնո դաշտը Կարին քաղաքի (այժմ՝ Էրզրում) շրջակայքի տարածքն է։ Բայց ավելի դեպքում խոսքը ոչ թե Կարնո դաշտի, այլ՝ Կարուց գաշտի մասին է։ Այստեղ բնագրական աղավաղում կա։ Այդ պատերազմը տեղի է ունեցել Կարուց (Կարսի) կամ Բասենո դաշտում, ինչպես վկայված

է ավելի վաղ (տե՛ս, օրինակ, «Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ», Վենետիկ, 1844, էջ 58)։ Ս. Օրբելյանի երկի սույն գլխի շարունակության մեջ արդեն ճիշտ կերպով նշված է դաշտն Կարույ։ Համմ. ծան. 1229։ (էջ 304)։

1228. Ինչպես տեսնում ենք, պատմիչը այս Լիպարիտին ներկայացնում է որպես Օրբելյան (վրաց) տոհմի ներկայացուցիչ։ Սրա հիման վրա այդպես են ընդունել հետագայի հայագետ գիտնականները։ Սակայն ակադ. Ս. Տ. Երեմյանը ցույց է տվել, որ այս Լիպարիտ զորավարը նուշն ծագումը չունի. Օրբելյան և Լիպարիտյան տոհմերը տարբեր են (տե՛ս նրա «Լիպարիտ զորավարը և նրա նախորդները» ուսումնասիրությունը. Երևանի պետական համալսարանի Ն. Մառի անվան կաբինետի «Աշխատություններ», 1947, № 2, էջ 103—149)։ (էջ 304)։

1229. Այստեղ ճակատամարտի տեղը ճիշտ է նշված։ Կարույ դաշտը նույն Բասենո դաշտն է։ (էջ 305)։

1230. Որդրու գյուղը գտնվել է Բասենում։ Հայկական հին բնակավայրերից է։ Հիշատակվում է դեռ հինգերորդ դարից։ (էջ 305)։

1231. Բնագրում՝ զինամաղս։ (էջ 305)։

1232. Լիպարիտի վախճանի մասին աղբյուրներում կան հակասական տվյալներ։ Այսպես. Արիստակես Լաստիվերտցին, նկարագրելով Լիպարիտի կռիվը, գրում է, որ նրա երիվարի ջիլերը կտրում ու իրեն ձերբակալում են Ըշնամու (այլազգիների) զորքի զինվորները (և ոչ թե վրացիները), բայց չեն սպանում, այլ տանում հանձնում են խալիֆային (Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ, Վենետիկ, 1844, էջ 59)։ Ապա՝ Մատթեոս Ուռհայեցին պատմում է, որ հիշյալ ճակատամարտում Լիպարիտը գերի է վերցվում այլազգիների կողմից, տարվում է Խորասան, Տուղրիլ սուլթանի մոտ։ Վերջինս, ականատես լինելով նրա մի քաջագործությանը, նրան ազատում է ու պարգևներով ուղարկում Կոստանդնուպոլիս։ Բյուզանդիայի Մոնոմախ կայսրը մեծարանքով վերադարձնում է Վրաստան, իր ընտանիքի գերիը (Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 108—109)։ Նույնը կրկնում են նաև որոշ օտար աղբյուրներ։ Այս մասին տե՛ս Սեն-Մարտենի կազմած «Mémoires... sur l'Arménie...», հ. 2-րդ, էջ 209—218։ Համմ. նաև Կ. Շահնազարյանցի 38-րդ ծանոթագրությունը Ս. Օրբելյանի երկի փարիզյան հրատարակության մեջ (հ. 2-րդ, էջ 316)։ (էջ 306)։

1233. Բնագրում՝ տաճիկն, որով նկատի են առնված սելջուկ-թուրքերը։ (էջ 307)։

1234. Այսինքն՝ ընդհանուր 1064 թվականին։ (էջ 307)։

1235. Սա Տուղրիլի եղբայր Ջակիրի որդի Ալփասլան սուլթանն էր, որ 1064 թվականին գրավեց Անին, բնակչության զգալի մասին սրի քաշեց՝ համառ դիմադրության հանդիպելով։ (էջ 307)։

1236. Այս Վանանդը Հայաստանի Այրարատյան նահանգի իններորդ գավառն էր, Ախուրյան գետի հովտում։ Կենտրոնական քաղաքն էր Կարսը, որի անունն էլ հետագայում տարածվեց ամբողջ գավառի վրա։ (էջ 307)։

1237. Այրարատյան նահանգի հինգերորդ գավառն էր։ Գտնվում էր Երասխ գետի ձախ ափին, Կաղզվանից հյուսիս։ Գրավում էր 1225 քառակուսի կիլոմետր տարածություն (Ս. Տ. Երեմյան, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 40)։ (էջ 307)։

1238. Ակներև է, որ պատմիչն այստեղ հանդես է բերել չափազանցում ու խիստ սուբյեկտիվ գնահատում։ (էջ 307)։

1239. Սեն-Մարտենը, հենվելով 1766 թ. հրատարակված մի քարտեզի վրա, որտեղ Թբիլիսիից արևմուտք նշվում է Բեքանիա անունով մի վայր, դա էլ նույնացնում է պատմիչի հիշատակած գևրեղմանատան հետ (տե՛ս նաև)։ Բեքանիա վանքը գտնվում է Մանգլիսի մոտ, Թբիլիսիի մոտերքում։ Սաղիում էր Թամար թագուհու ժամանակներում։ (էջ 307)։

1240. Այստեղ ևս շփոթված են Բադրատ 4-րդ և Դավիթ թագավորները։ Համմ. նաև ծան. 1224։ (էջ 307)։

1241. Սա Վրաստանի Գեորգի 2-րդ թագավորն է, որ իշխել է 1072—1089 թթ.։ Բագրատ 4-րդի որդին էր։ (էջ 308)։

1242. Գեորգի 2-րդի որդի այս Դավիթը գահակալել է 1089—1125 թթ.։ Հայտնի է նաև Շինող, Շինարար մականվամբ։ (էջ 308)։

1243. Ա ս Իվանեն քաջ Լիպարիտի թոռն էր։ (էջ 308)։

1244. Տավուշ բերդը մտնում էր Հայաստանի պատմական Տավուշ գավառի մեջ։ Այժմ նրա ավերակները գտնվում են Շամշադինի շրջկենտրոն Բերդ ավանի բարձրադիր լեռան վրա։ (էջ 308)։

1245. Գագ բերդի մասին տե՛ս ծան. 1133։ (էջ 308)։

1246. Տերունական բերդը գտնվում էր պատմական Ուտիքում, Ճամքոր քաղաքի սահմաններում (այժմ՝ Ադրբ. ՍՍՀ-ում)։ (էջ 308)։

1247. Լոռե քաղաքը իր նշանավոր բերդով գտնվում էր այժմյան Ջուլֆայի շրջանի տարածքում։ Մնացել են ավերակները։ Տեղանունը պահպանվում է Լոռի ձևով, բայց ոչ առանձին բնակավայրի համար։ (էջ 308)։

1248. Այսինքն՝ ընդհանուր 1123 թվականին։ Այս տվյալն արդեն համընկնում է Դավիթ Շինարարի գահակալության շրջանին (մինչև 1125 թվականը)։ (էջ 308)։

1249. Ագարակը գավառակ էր Տաշիրքի տարածքում, Երքմնի Լոռե քաղաքից ոչ շատ հեռու։ Հավանաբար այժմյան Ստեփանավանի շրջանի Ագարակ, Գյուլագարակ գյուղերի անունները դրա հետագայի արձագանքներն են։

1250. Սա Վրաստանի Դեմետրե 1-ին թագավորն է։ Նրա իշխման ժամանակի վերաբերյալ կան տարբեր տվյալներ՝ 1130—1150 թթ. (Սեն-Մարտեն), 1125—1154 թթ. (Մ. Բրոսե), 1125—1155/56 թթ. (Հ. Մանանդյան)։ Բոլոր դեպքերում ճիշտ կլինի ընդունել թագավորելու սկիզբը 1125 թվականը, երբ վախճանվել է Դավիթ 2-րդ Շինարարը, որին անմիջապես հաջորդել է ինքը։ Ս. Օրբելյանն այստեղ հայտնում է, որ Դեմետրեն թագավորել է 33 տարի։ Եվ մահվան համար էլ նշում է 607, այսինքն՝ 1158 թվականը։ Այդպիսով ժամանակային անպատեհություն է առաջանում հաջորդ թագավորների համար։ Այստեղ տարիների վերանայման կարիք է զգացվում։ Հիշյալ 33-ը պիտի լինի 31, իսկ 607-ը՝ 605 (=1156)։ (էջ 308)։

1251. Այսինքն՝ ընդհանուր 1128 թվականին։ (էջ 308)։

1252. Դմանիսն այժմ քաղաքատիպ ավան է Վրացական ՍՍՀ-ում։ Համանուն շրջանի կենտրոնն է։ Մի ժամանակ մտնում էր Բորչալուի գավառի մեջ։ (էջ 308)։

1253. Այսինքն՝ ընդհանուր 1158 թվականին։ Մ. Բրոսեն, օգտվելով վրացական աղբյուրներից և այլ հաշվումներ կատարելով, նշում է, որ Դմանիսին մեռել է 1154 թվականին (տե՛ս սույն երկի նրա ֆրանսերեն թարգմանությունը, էջ 216, ծան. 6)։ (էջ 309)։

1254. Մ. Բրոսեն ծանուցում է, որ այս Դավիթը թագավորել է մի-այն վեց ամիս և վախճանվել է 1155 թվականին (տե՛ս նույն տեղում)։ Հ. Մանանդյանը նույնպես նշում է, որ Վրաստանի թագավոր այս Դավիթը փոխարինելով հորը, իշխել է մի քանի ամիս՝ 1155 կամ 1156 թ. (Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, էջ 102)։ Ս. Օրբելյանը, սակայն, այստեղ ցույց է տալիս 2 տարի։ (էջ 309)։

1255. Բնագրում՝ զաւագ խատն։ Վերջինս վրացերեն ხატი (xati) բառն է, որ նշանակում է «նկար, պատկեր»։ Ելնելով այս իմաստից՝ Ս. Օրբելյանի երկի հիշյալ կապակցությունը թարգմանեցինք «գլխավոր սրբապատկերը», որն է Քրիստոսի պատկերը։ (էջ 309)։

1256. Գելաթի նշանավոր վանքը գտնվում է այժմյան Քութայիս քաղաքի մոտ։ (էջ 309)։

1257. Այսինքն՝ ընդհանուր 1161 թվականին։ (էջ 310)։

1258. Այսինքն՝ Խլաթի և Մանազկերտի ամիրայության ամիրային։ Շահի Աբմեն-ը հիշյալ ամիրայության ամիրաների տիտղոսն էր։ (էջ 310)։

1259. Այսինքն՝ ընդհանուր 1177 թվականին։ (էջ 310)։

1260. Սա Վրաստանի Գեորգի 3-րդ թագավորն է՝ գահակալած 1155/6—1184թթ.։ 21-րդ տարին լինում է 1177 թվականը։ (էջ 311)։

1261. Տպագիր բնագրում Սախատէ ձևով սա ներկայացված է որպես հատուկ տեղանուն, որի հիման վրա էլ Ք. Հովհաննիսյանը ծանոթագրել է «հավանաբար ամրոց Քարքլում, որտեղ սովորաբար բնակվում էին վրացական թագավորները» («История князей Орбельян»..., էջ 59, ծան. 52)։ Իրականում դա պիտի լինի փոքրատառով՝ որպես հասարակ անուն։ Այդպես էր կոչվում այն սենյակը, որտեղ նստում էր թագավորը (մեզ այսպես հաղորդեց ակադ. Ս. Տ. Երեմյանը, և մենք ընդունեցինք շնորհակալությամբ)։ (էջ 311)։

1262. Բնագրում՝ Հերխարւ, որ ներկայացված է որպես հատուկ անուն։ Պետք է լինի փոքրատառով՝ որպես հասարակ անուն։ Վրացերեն է՝ ერისთავი (eristavi) «իշխան», «զորագլուխ», որը կազմված է ერ «մարտիկ, զորք, ժողովուրդ» և თავი «գլուխ» բառերից։ (էջ 311)։

1263. Սրանք լուռեցիներն էին։ (էջ 311)։

1264. Այս Հասանը Գեորգի թագավորի իշխաններից էր։ Նա է կառուցել Կայան կամ Կայեն բերդը Ջորափոր գավառում, Հաղպատի վանքի մոտ (տե՛ս ծան. 582)։ (էջ 311)։

1265. Սա Անեցի Ապիրատի որդի Գրիգորն է, որ հետ մտել էր վրաց թագավորության ծառայության մեջ։ (էջ 311)։

1266. Սա նույն Ապիրատի որդի Գրիգորն է։ (էջ 312)։

1267. Բնագրում՝ «նստեալ ի վերայ բերդին խխաւր» պետք է հասկանալ «պաշարել», նստել ի վերայ բերդին խխաւր՝ «բերդը պաշարել»։ Թարգմանիչները, սկսած դեռ Սեն-Մարտենից, բնագրի խխաւր-ը դարձրել են հատուկ անուն և արտահայտել Hisar, Гисар ձևով։ Իրականում այդպիսի բերդ չի եղել, այլ, ինչպես նկատել է Կ. Շահնազարյանցը, այստեղ խոսքը վերաբերում է Շամշուլգե բերդին (անդ, հ. 2-րդ, էջ 327, ծան. 60)։ Խխաւր, խսար (մի ձեռագրում կա հիսար) արաբերեն բառ է՝ hisar, որը նշանակում է «պաշարել, շրջապատել, պաշարում», «բերդ», «պարիսպ»։ (էջ 312)։

1268. Հրոտից ամիսը հայոց հին տոմարի 12-րդ ամիսն էր, սկսվում էր հուլիսի 7-ից։ Ուրեմն Իվանեն Լոռե բերդում սկսել է ամրանալ հուլիսի 20-ից։ (էջ 312)։

1269. Մեհիկի ամիսը հայոց հին տոմարի 7-րդ ամիսն էր և սկսվում էր փետրվարի 7-ից։ Հետևաբար զորքը մնացել է մինչև փետրվարի 12-ը։ Ըստ այդմ՝ Լոռե բերդում Իվանեի ամրանալը տևել է 208 օր։ (էջ 312)։

1270. Տպագիր բնագրում՝ Վրացի։ Ձեռագրերից մեկում այստեղ կա գիդաեի բառը։ (էջ 313)։

1271. Այսինքն՝ ընդհանուր 1177 թվականին։ (էջ 314)։

1272. Այսինքն՝ ընդհանուր 1184 թվականին։ (էջ 315)։

1273. Մոսկովյան հրատարակությունն ունի Ըզգոց (էջ 286)։ (էջ 316)։

1274. Այս Գեորգին որդին էր Վլադիմիր-Սուզդալյան Ռուսիայի մեծ իշխան Անդրեյ Բոգոլյուբսկու (Վլադիմիրսկու)։ Թամարն այս իշխան Գեորգիի հետ ամուսնացավ 1185/6 թվականին և երկու տարի հետո՝ 1187/8 թվականին, բաժանվեց նրանից։ (էջ 316)։

1275. Ըստ վրաց աղբյուրների՝ սա կոչվել է Դավիթ Սոսլան, որի հետ Թամարն ամուսնացավ 1189 թվականին։ (էջ 316)։

1276. Կա այն կարծիքը, ըստ որի Գեորգի Լաշան սերվել էր ոչ թե Դավիթ Սոսլանից, այլ՝ Գեորգիից։ (էջ 316)։

1277. Այս Սարգսին դեռ Գեորգի 3-րդ թագավորը հանձնարարել էր Անիի պահպանությունը։ (էջ 316)։

1278. Հեղինակն այսպես է գրում, սակայն այս դեպքում չպետք է հասկանալ սոսկ պարսիկների, այլ՝ ընդհանրապես տվյալ ժամանակի սելջուքյուրք նվաճողների տիրապետությունը։ (էջ 316)։

1279. Ներքին կամ Ստորին Բասենը Մեծ Հայքի Այրարատյան նահանգի Բասեն գավառի մի մասն էր, տարածվում էր մինչև Մեծրաց (Սողանլու) լեռները։ (էջ 316)։

1280. Մժնկերտ (Մաժանկերտ) գյուղ և բերդ։ Մտնում էր Աբեղյանք գավառի մեջ։ Գտնվում է Մեծրաց (Սողանլու) լեռների մոտ (այժմ՝ Թուրքիայում)։ (էջ 316)։

1281. Վաղարշակերտի տեղում ուրարտական բերդ է եղել, որի շուրջ հետագայում կառուցվել է քաղաքը. նրա հիմնումը վերագրվում է հայոց Վաղարշակ թագավորին։ Գտնվում է Այրարատյան նահանգի Բագրևանդ գա-

վառում, Շարիան գետի ձախափողմյան մի վտակի վրա։ Վաղարշակերտ անունը հետագայում աղավաղվելով դարձել է Ալաշկերտ։ (էջ 316)։

1282. Նշանավոր հին ավան էր Այրարատյան նահանգի Արշարունիք կամ Երասխաձոր գավառում, Արաքսի հովտում, Կարսից մոտ 70 կիլոմետր դեպի հարավ-արևմուտք (այժմ Թուրքիայում է)։ (էջ 316)։

1283. Տե՛ս ծան. 1137։ (էջ 316)։

1284. Գրվում է նաև Ամբերդ ձևով։ Միջնադարյան նշանավոր բերդաքաղաք և ամրոց։ Կառուցվել է 10-րդ դարում, բայց դղյակը և պարսպի մի մասը կային դեռ 7-րդ դարից։ Գտնվում է Արագածի հարավային լանջին, Ամբերդ և Արքաշեն գետերի միացման տեղում, եռանկյունաձև բարձր հրվանդանի վրա, Բյուրական գյուղից 7 կմ հյուսիս։ Պատկանել է նախ Կամսարականներին, ապա՝ Պահլավունիներին։ Բագրատունիների տիրապետության շրջանում պաշտպանական կարևոր հենակետ էր։ 11-րդ դարի 70-ական թվականներին գրավվեց սելջուկների կողմից ու դարձվեց զորակայան։ Ջաքարյանները այն ազատագրեցին 1196 թվականին։ (էջ 316)։

1285. Գարդման ամրոցը գտնվում է Դեբեդ գետի ստորին հոսանքի աջ ափին։ Հետագայում կոչվել է Աղջա-ղալա։ Նույն անունով էր կոչվում նաև գավառը, որի տարածքը համընկնում էր այժմյան Ղազախի շրջանին։ (էջ 316)։

1286. Այժմ Կիրովաբադ, Ադրբ. ՍՍՀ-ում։ (էջ 316)։

1287. Համմտ. ծան. 1112։ (էջ 316)։

1288. Ք. Հովհաննիսյանն այս բնակավայրը նշում է որպես հին Հայաստանի Հարք գավառի գյուղ (История князей Орбельян..., էջ 68, ծան. 78)։ Դա հավանական չէ։ Պատմիչի շարադրանքից էլ երևում է, որ Հերբը պիտի լիներ Աղվանքում։ Ավելի իրավացի էր Կ. Շահնազարյանցը, որը, հենվելով Կ. Գանձակեցու տվյալի վրա, նրա տեղը մատնանշում էր Աղվանքում (տե՛ս Ս. Օրբելյանի սույն երկի փարիզյան հրատարակությունը, հ. 2-րդ, էջ 331, ծան. 69)։ Կարևոր է նաև անվան հարցը։ Սեն-Մարտենը ժամանակին հասկացել և նշել է Հեր ձևով, որն իրավացիորեն մերժել է Կ. Շահնազարյանցը (և. տ.)։ Այդ տեղանունը պիտի լինի Հերեբ։ Հերեբ բերդը և համանուն գավառը գտնվում էին Աղվանքի՝ կուր գետի ձախափնյա տարածքում։ (էջ 316)։

1289. Այժմ Շամխոր, Ադրբ. ՍՍՀ-ում։ (էջ 316)։

1290. Սա Աղվանքի Շաքին է։ Գտնվում է կուր գետի ձախ կողմում, հետո կոչվել է նաև Նուխի (այժմ ևս Շաքի՝ Ադրբ. ՍՍՀ-ում)։ (էջ 316)։

1291. Տե՛ս ծան. 801։ (էջ 316)։

1292. Ջարարերդը հիշատակել են նաև Մ. Կաղանկատվացին, Մ. Գոշն ու Կ. Գանձակեցին։ Արցախի ամրոցներից է։ Այժմ Ջրաբերդ է կոչվում։ Գտնվում է Տրտու (Թարթառ) գետի և նրա Թրղի վտակի միջև եղած մի բարձր ժայռի վրա (այժմ՝ Ադրբ. ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում)։ (էջ 316)։

1293. Այսինքն՝ ընդհանուր 1211 թվականին։ (էջ 316)։

1294. Այս վերջին թվարկվածները Սյունիքի բերդերից են, որոնք ծանոթագրված են համապատասխան տեղերում։ (էջ 316)։

1295. Սա Ելտկուզ աթաբեկի որդիներից մեկն էր, գարձյալ աթաբեկ։ Համմտ. ծան. 1044։ (էջ 316)։

1296. Սա նույն Համադան քաղաքն է Պարսկաստանում։ (էջ 316)։

1297. Այս քաղաքի ավերակները գտնվում են Թեհրանից մոտ 5 կիլոմետր դեպի հարավ-արևելք հեռավորության վրա։ (էջ 316)։

1298. Սա Սյունյաց Ստեփանոս 3-րդ եպիսկոպոսն է (1168—1216 թթ.)։ Համմտ. ծան. 1043։ (էջ 317)։

1299. Համմտ. ծան. 1069։ (էջ 318)։

1300. Այս Լիպարիտը պատմիչ Ս. Օրբելյանի պապն է, Տարսայիճի հայրը։ (էջ 318)։

1301. Բնագրում՝ կուղպակ։ Նշ. «կրպակ, խանութ»։ Մեզանում ավելի տարածված է կրպակ ձևով։ Փոխառյալ է պարսկերենից։ (էջ 318)։

1302. Բնագրում՝ խիլայէ։ Արաբերեն է՝ «խալաթով ծածկել, վրան խալաթ գցել, հագցնել», «լավ ընդունել»։ (էջ 319)։

1303. Ըստ պատմիչի նկարագրածի (գլ. Ծ)՝ Գոլոշտի վանքը պիտի լիներ Գնդեվանքի ձորի տարածքի շրջանում, որտեղ Գոլոշտի քար կոչված տեղն է։ Հարկացուցակում Վայոց ձորի բնակավայրերի շարքում նշվում է Գոլոշտի վանք գյուղը՝ 6 միավոր հարկաչափով։ Ակներև է, որ այդտեղ է եղել և բերդը։ (էջ 320)։

1304. Այսինքն՝ ընդհանուր 1212 թվականին։ (էջ 320)։

1305. Այսինքն՝ ընդհանուր 1227 թվականին։ Սակայն նշանավոր բանասեր-պատմաբան Գ. Հովսեփյանը գտնում է, որ Իվանե աթաբեկը մեռել է ավելի ուշ։ Հենվելով վիմագրական ու մատենագրական որոշ տվյալների վրա՝ նա եզրակացնում է. «Այսպիսով Իվանեի մահը և Ավագի իշխանության առաջին տարին պետք է նշանակենք մոտավորապես 1233/4 թվին...» (Հարցականներ կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, մաս 1-ին, էջ 100—101)։ Այդ դեպքում պետք է վերանայել նաև Ս. Օրբելյանի հաղորդած երկու տվյալ ևս։ Իր շարադրանքի շարունակության մեջ քիչ ներքև պատմիչը գրում է, որ Իվանեն Ջաքարեի մահից (1212 թ.) հետո ապրեց ևս 15 տարի (այսինքն՝ մինչև 1227 թվականը), Ավագն էլ հոր՝ Իվանեի մահից հետո իշխեց 23 տարի։ Հայտնի է, որ վերջինս մեռել է 1250 թվականին, ուրեմն նրա սկսած լիներ իշխել 1233/4 թվականից, ապա այդքան ժամանակ իշխած լինել չէր կարող։ Իսկ 1227 թվականից սկսած հաշիվը ճիշտ է գալիս։ Հակասությունը բացահայտ է։ Նշանակում է՝ ուժի մեջ պետք է թողնել Ս. Օրբելյանի հաղորդած տվյալները։ (էջ 320)։

1306. Երբ Ջաքարեն մեռել է, նրա որդի այս Շահանշահը 5 տարեկան է եղել, մնացել է հորեղբոր՝ Իվանեի խնամքին, որը և փաստորեն տարել է Ջաքարեի պաշտոնը, մինչև Շահանշահի չափահաս դառնալը։ Շահանշահը հայտնի է ակտիվ գործունեությամբ։ Գնացել է թաթարների մոտ, հաշտության դաշինք կնքելով՝ սատացել է Անին. հերոսաբար կռվել է Դամասկոսի Ղարախանի 60,000-անոց զորքի դեմ, ջարդել ու դուրս քշել։ Մեռել է 1261 թ., թաղվել Քորայրում (այժմ՝ Թումանյանի շրջանում)։ Նրա մասին գրել են Մ. Այրիվանեցին, Գանձակեցին, Վարդանը և ուրիշներ։ (էջ 320)։

1307. Իվանեի որդի այս Ավագը, հորը փոխարինելուց հետո իշխելով 23

տարի, մեռել է 1250 թվականին։ Հմմտ. նաև նախորդ ծանոթագրությունը։ Նրա մասին գրել են Մ. Այրիվանեցին, Կ. Գանձակեցին, Վարդանը և այլք։ (էջ 320)։

1308. Այս Ավագը արու զավակ չուներ (ուներ մի դուստր՝ Խոշաք անունով). նրա մահից հետո իշխանությունն անցավ կնոջը՝ Դոնցայիին։ (էջ 320)։

1309. Նկատի ունի մոնղոլ-թաթարներին։ (էջ 320)։

1310. Դա տեղի է ունեցել 1225 թվականին։ (էջ 320)։

1311. Բնագրում՝ գաւառ։ (321)։

1312. Խորեզմի պետության թագաժառանգ Ջալալեդդինը, որ անցել էր Հնդկաստան, այնտեղից վերադարձել էր Պարսկաստան (Խորասան) ու այստեղ էր գումարել իր զորքը։ Այդ պատճառով է այստեղ ասվում Խորասանի զորք։ (էջ 321)։

1313. Մոսկովյան հրատարակության մեջ՝ Քեղէ։ (էջ 321)։

1314. Այսինքն՝ ընդհանուր 1225 թվականին։ Մոսկովյան հրատարակության մեջ՝ 647 (=1198), որը սխալ է։ (էջ 321)։

1315. Նկատի ունի Միջերկրական ծովը։ (էջ 321)։

1316. Այսինքն՝ մոնղոլները։ Սրանց մուտքն Անդրկովկաս մեր պատմիչները նշում են Ջալալեդդինի մուտքից 11 տարի հետո։ Իսկ վերջինս տեղի էր ունեցել 1225 թվականին։ Այսպիսով այս թվականին ավելացնելով 11 տարի՝ ստանում ենք 1236։ Դա էլ մոնղոլ-թաթարների՝ այս կողմերն արշավելու թվականն է (չհաշված հետախուզական արշավանքների ժամանակը)։ Այստեղ էլ առաջինն արշավեց Ջարմաղանը։ (էջ 322)։

1317. Սա չի համընկնում ուրիշ աղբյուրների տվյալներին։ Օրինակ, Կ. Գանձակեցին գրում է, որ նրանք դժոխային (այլանդակ) տեսք ունեին և զարհուրելի ձայն (հմմտ., անդ, գլ. LՒ, էջ 271)։ Նրանց առավել այլանդակ տեսքով է նկարագրել Գրիգոր պատմիչը (Մաղաքիան)։ (էջ 322)։

1318. Իրականում այս հորդան արշավել է դեպի հյուսիս-արևմուտք (իր դիրքից հաշված)։ Հավանաբար պատմիչն այստեղ նկատի է ունեցել արշավանքը Հայաստանի դիրքից։ (էջ 322)։

1319. Սա հավանաբար Ղրիմն է։ Սուտաղ նույն Սուդակ տեղանունն է։ Այդ անունը կրող քաղաքը այժմ էլ մտնում է Ղրիմի մեջ։ (էջ 322)։

1320. Ալամանաց աշխարհը Գերմանիան է, իսկ Օնկոացը (բնագրում՝ Աւնկոաց)՝ Հունգարիան։ (էջ 322)։

1321. Բաթու ղանը Ջինգիզխանի թոռն էր, նրա ավագ որդի Ջուչիի որդին։ Ոսկե հորդայի հիմնադիրն էր։ Իշխել է 1236—1256 թթ.։ (էջ 322)։

1322. Սրանք նույն օղուզներն են, թյուրք-թաթարական ընտանիքին պատկանող ցեղ։ (էջ 322)։

1323. Ալամալեխը (Ալամալեք) և Բեշպալեխը (Բեշպալեք) Թաթարիայի նշանավոր քաղաքներն էին։ Այժմ նրանց որոշակի տեղը հայտնի չէ։ (էջ 322)։

1324. Ջահան մեծ գետը և Ամու Մորանը նույնն են։ Բայց հեղինակը ցանկացել է նշել Ամու Դարիան և Սիր Դարիան։ Կ. Շահնազարյանցը նշում է, որ փարիզյան իր հրատարակության մեջ գրաշարները փակագծում Ամու-ն դարձրել են Ամուր (անդ, հ. 2-րդ, ծան. 91, էջ 341)։ Ք. Պատկանյանը ժամանակին նկատել է, որ այստեղ թևև խոսվում է երկու գետի

մասին, բայց նշվում են նույն գետի (Ամու Դարիայի) երկու տարբեր անունները։ Մորան կամ մուրեն մոնղոլերեն բառ է և նշանակում է «գետ»։ Ըստ այդմ՝ Ամու Մորանը Ամու Դարիան է։ Ջահան-ը արաբական անվանումն է, որ օգտագործում են մահմեդական ժողովուրդները (История монголов по армянским источникам. Выпуск первый, էջ 82—83, ծան. 34)։ (էջ 322)։

1325. Պռնտոսի ծովը Սև ծովն է։ (էջ 323)։

1326. Շամա երկիրը Սիրիան է։ (էջ 323)։

1327. Այսինքն՝ ընդհանուր 1236 թվականին։ (էջ 323)։

1328. Նույն Ջինգիզխանն էր՝ մոնղոլ-թաթարների առաջնորդը։ (էջ 323)։

1329. Այդ ժամանակ Բաղդադի խալիֆն էր Աբու Ահմեդ Աբդալլահը։ (323)։

1330. Այսինքն՝ ընդհանուր 1258 թվականին։ (էջ 323)։

1331. Այսինքն՝ ընդհանուր 1259 թվականին։ (էջ 323)։

1332. Սա Հելիոպոլիսն է (այժմ՝ Լիբանանի տարածքում)։ Մյուս անվանումը՝ Պալպաք, նույն Բաալբեկ-ն է։ (էջ 323)։

1333. Նոյին (նուին) մոնղոլերեն բառ է, նշանակում է «արքայորդի, բյուրապետ»։ Այդպես էին կոչվում մոնղոլական իշխանները, ցեղերի առաջնորդները, զինվորական հրամանատարները։ (էջ 323)։

1334. Տե՛ս ծան. 1307։ (էջ 324)։

1335. Ջաքարեի որդին էր։ Հմմտ. ծան. 1306։ (էջ 324)։

1336. Նիրկերտը նշանավոր քաղաք էր Ջորրորդ Հայքում։ Նույն Մուֆարդինն է։ (էջ 324)։

1337. Այս Բալու նոյինը մոնղոլ-թաթարական զորքերի հրամանատար նշանակվեց 1242 թվականին՝ Ջարմաղանի փոխարեն։ (էջ 325)։

1338. Բնագրում՝ Սօնաց։ Ոմանք կարդում են Սյունեաց։ Սակայն կա այն կարծիքը, որ դա վրացական փոքր թագավորություն էր Սվանեթում, և այստեղ կար Դավիթ անունով թագավոր այդ ժամանակներում։ Տե՛ս Կ. Շահնազարյանցի 99-րդ ծանոթագրությունը (հ. 2-րդ, էջ 343—346)։ էջ 325։

1339. Բնագրում՝ Սոնաց։ Այս դեպքում պիտի լինի Սիւնեաց, որպես և մենք արտահայտեցինք թարգմանության մեջ։ (էջ 326)։

1340. Մանգու-ն ոմանք բացատրում են «հավերժական» (տե՛ս «История монголов по арм. ист.», էջ 85, ծան. 38)։ Համամոնղոլական այս ղանը թագավորել է 1251—1259 թթ.։ (էջ 326)։

1341. Նկատված է, որ այստեղ Ս. Օրբելյանը վրիպել է. Մանգու ղանը ոչ թե Գույուկ ղանի, այլ՝ Տուլի ղանի որդին էր (հմմտ. սույն երկի փարիզյան հրատարակության 2-րդ հատորի 100-րդ ծանոթագրությունը, էջ 346)։ (էջ 326)։

1342. Արևայուն մոնղոլերեն բառ է, նշ. «քրիստոնյա»։ Մեր մատենագրության մեջ գործածված է նաև արևաւուն ձևով, որն ավելի ճիշտ է ըստ ծագման։ Մենք պահպանել ենք Ս. Օրբելյանի գրած ձևը։ Ինչպես պատմիչն էլ գրում է, մոնղոլ-թաթարներն այդպես էին անվանում քրիստոնյաներին։ (327)։

1343. Մոնղոլ-թաթարներն ու նրանց առաջնորդները բոլոր ժամանակներում ու միատարր կրոն չեն ունեցել։ Նրանց մեջ նախապես իշխել է շամանիզմը։ Որոշ ցեղերի, հատկապես ույղուրների միջոցով հաղորդակից են

եղել բուդդայականության։ Քրիստոնեությանը հաղորդակից են եղել նեստորական ասորիների միջոցով։ Իսկ այնուհետև նրանց մեջ գնալով իշխող է դարձել մահմեդականությունը։ Այնպես որ պատմիչի այն ձևակերպումը, թե ամբողջ աշխարհը քրիստոնյա էր, չափազանցություն պետք է համարել։ (էջ 327)։

1344. Բնագրում՝ բարձրացաւ։ Ճիշտ կլիներ՝ բարձրացոյց։ (էջ 328)։

1345. Փայիզա բառը պարսկերենից է, նշ. «արքայական հրամանագիր»։ Թաֆարների մոտ, ինչպես և նկարագրում է Ս. Օրբելյանը, փայիզան մի ճգաչափ ոսկե տախտակ էր՝ աստծու և ղանի անունների մակագրությամբ, ծառայում էր որպես բարձրադուն շքանշան։ Նրանով պարգևատրվածն օգտվում էր մեծ արտոնություններից։ (էջ 328)։

1346. Բնագրում՝ եաուխ։ Թաթարերեն բառ է (yerlig), նշ. «հրովարտակ»։ Սրանից է ռուսերեն ярлык բառը՝ իմաստի փոփոխությամբ։ (էջ 328)։

1347. Բնագրում՝ դաւթար, որը պարսկական փոխառություն է։ (էջ 328)։

1348. Սա այն երբոնքն է, որի տեղը պատմիչը նշում է Գառնու դիմաց։ (էջ 329)։

1349. Այսինքն՝ ընդհանուր 1250 թվականին։ (էջ 329)։

1350. Վեզիր արաբերեն է. նշ. «մեծ նախարար, քաղաքացիական ամենաբարձր պաշտոնյա»։ (էջ 330)։

1351. Պասխաղ (բասղաղ) բառը թաթարերեն և թուրքերեն բաշբող (bašboy) բառի աղավաղությամբ է առաջացել. նշ. «ընդհանուր հրամանատար, զորքերի գլխավոր հրամանատար» (տե՛ս Հ. Աճառյան, «Հայերէն արմատական բառարան», հ. 5-րդ, էջ 862)։ Ի դեպ, հիշյալ բառից է նաև ռուսերեն баскак-ը։ Այս պաշտոնական տիտղոսը տարբեր ժամանակներում բովանդակությամբ տարբեր նշանակություն է ունեցել՝ «վեզիր», «գլխավոր հրամանատար», «գավառապետ» «քաղաքագլուխ», «պետ» «կառավարիչ», «կուսակալ» և այլն։ Մոնղոլ-թաթարական տիրապետության շրջանում 13-րդ դարի 40-ական թվականների վերջերին սահմանվեց պասխաղի (բասղաղի) պաշտոնը՝ ռազմաքաղաքացիական իշխանությունը և հարկահանության գործը ղեկավարելու համար։ «Բասղաղը, զինվորական-քաղաքացիական ու ֆինանսական-անտեսական գործերի վրա ընդհանուր հսկողությունից բացի, պարտավոր էր կատարել բնակչության հաշվառում, ապահովել զինակոչը, կարգավորել փոստային հաղորդակցությունը և արքունիք փոխադրել գանձված հարկերը» (Հայ ժողովրդի պատմություն, հ. 3-րդ, Երևան, 1976, էջ 616)։ Մոնղոլ-թաթարական կուսակալությունում Արղունը նշանակված էր Վրաստանի և հյուսիս-արևելյան Հայաստանի վեզիր ու բասղաղ։ (էջ 330)։

1352. Այսինքն՝ ընդհանուր 1254 թվականին։ (էջ 330)։

1353. Այսինքն՝ ընդհանուր 1251 թվականին։ (էջ 331)։

1354. Այսինքն՝ ընդհանուր 1256 թվականին։ (էջ 331)։

1355. Հուլավու դանը Մանգու դանի եղբայրն էր։ Այդ մեծ խաքանի կողմից նա նշանակվել էր մոնղոլական ընդհանուր պետության շրջանների՝ ուլուսներից մեկի կառավարիչ ու զորահրամանատար։ 1256 թվականին գալով Ատրպատական՝ նա հիմք դրեց Հուլավյան մոնղոլ-իրանական

պետությանը, այսպես կոչված իլխանությանը, որի կենտրոնական քաղաքը Թավրիզն էր (ապա՝ նրանից ոչ հեռու Ատրպատականի Գանձակը)։ Հայաստանը մտնում էր այդ տիրապետության մեջ։ Այս տիրակալն էր, որ 1258 թվականին գրավեց Բաղդատը և վերջ դրեց Արաբական խալիֆաթին։ Նրա հետ պետական-դիվանագիտական սերտ հարաբերությունների մեջ է եղել Կիլիկիայի Հեթում 1-ին հայ թագավորը։ Իշխել է մինչև 1264 թվականը։ (էջ 331)։

1356. Այս ժամատունը կամ գավիթը արևմտյան կողմից կցված է Նորավանքի ս. Կարապետ եկեղեցուն։ Օրբելյան իշխանների և վանքի առաջնորդների տապանատունն է։ Կառուցումն ավարտվել է 1261 թվականին, Սարգիս առաջնորդի ժամանակ։ Այժմ էլ կանգուն է (վերջին անգամ այցելել ենք 1979 թվականի հոկտեմբերի 21-ին)։

Ինչպես գավթի կառուցման, նույնպես և եկեղեցու նորոգման ու նվիրատվությունների մասին Սմբատը գավթի պատերին փորագրել է տվել իր հայտնի արձանագրությունը (տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 219, արձ. № 692)։ (էջ 331)։

1357. Տպագիր բնագրում՝ սնոպար։ Գրվում է նաև սնոպրի, սնովպար, սինոպրի, սոնոպար, սնօպար, սօնապար։ Ծագումով արաբերեն է՝ sanoubar «փիճի»։ Պարսկերենում cinoubär «եղևնի» (տե՛ս Հ. Աճառյան, «Հայերէն արմատական բառարան», հ. 6-րդ, էջ 331)։ Մ. Բրոսեն թարգմանել է «կարմիր մայրի»— cedre rouge (անդ, էջ 233), Ք. Հովհաննիսյանը՝ «մայրի անտառափայտ»— кедровый лес. (История князей Орбельян..., էջ 34)։ Ճիշտ է մեկնաբանել Ք. Պատկանյանը՝ բնագրի սնոպար-ը թարգմանելով сосна («եղևնի»)։ Իսկ մայրափայտից բառաձևի համար դրել է лес (հատվածի իր թարգմանությունը, էջ 43)։ Բայց այստեղ բառի մայր մասը կարող էր հենց համապատասխան ծառատեսակ նշանակել։ Այս ևս հաշվի առնելով՝ մենք սնոպար մայրափայտից բառակապակցությունը թարգմանեցինք «եղևնի և մայրի փայտ»։ (էջ 331)։

1358. Դառն դաշտը Մուղանի դաշտավայրն է՝ Կուր և Արաքս գետերի ստորին հոսանքում։ (էջ 331)։

1359. Աշորնիքը Բասենի մի մասն էր։ (էջ 331)։

1360. Թաթլո վանքը գտնվում էր Վերին Բասենում, Գաբեղյանք գավառում։ (էջ 331)։

1361. Գրիգոր Սքանչելագործը 3-րդ դարի կրոնական նշանավոր գործիչ է եղել։ Աշակերտել է Օրիգինեսին և զբաղվել է քրիստոնեության տարածմամբ։ Եղել է Նեոկեսարիայի եպիսկոպոս (տե՛ս Ե. Տէր-Մինասեան, «Ընդհանուր եկեղեցական պատմութիւն», հ. 1-ին, էջ 158)։ (էջ 331)։

1362. Նորավանքում պահպանված է այս իվանեի շիրիմը՝ «Գեղեցկածաղիկն է Իանէ» տապանագրով։ Մահվան թվականը ենթադրվում է 1260-ը («Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 230)։ (էջ 332)։

1363. Նորավանքում պահպանված է այս ելիկումի շիրիմը։ Տապանագրի մեջ անունը նշվում է Այլուկում ձևով («Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 230, արձ. № 736)։ (էջ 332)։

1364. Նորավանքում պահպանված է այս Փախրադուլայի շիրիմը՝ «Քաջ սպառազէնն է Փախրադուլայն» տապանագրով։ Վախճանված է համա-

վում 1256—1260 թթ. ժամանակամիջոցում («Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 230)։ (էջ 332)։

1365. Բնբքա կամ Բերքե դանը Զինգիզխանի անդրանիկ որդի Ջուչիի չորրորդ որդին էր, որը զինշաղների վրա իշխեց 1254—1266 թթ.։ (էջ 332)։

1366. Այսինքն՝ ընդհանուր 1261 թվականին։ Այս Բուրթելի մասին հիշատակվում է իր հորեղբայր իշխանաց իշխան Սմբատի՝ Ամաղուի Նորավանքի նշանավոր արձանագրության մեջ։ Մեծ իշխանն արձանագրում է, որ իր եղբորորդի «դեռաբոյս և դեռափթիթ» Բուրթելի հիշատակին վանքին է նվիրում իր կալվածքներից Ազատ գյուղը և Գնիշկաձորի այգին («Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 218—219, արձ. № 693)։ (էջ 332)։

1367. Այսինքն՝ ընդհանուր 1263 թվականին։ (էջ 332)։

1368. Նորավանքում Աստիայի տապանաքարից այժմ մնացել է մի բեկոր՝ տապանագրի մի փոքր մասով («Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 230)։ (էջ 332)։

1369. Այս Տարսայիճը պատմագիր Ս. Օրբելյանի հայրն է։ Համմտ. ծան. 1078։ (էջ 332)։

1370. Սա նույն պատմագիր Ստեփանոս Օրբելյանն է։ (էջ 332)։

1371. Այս տեղանունն առաջին անգամ հանդիպում է այստեղ։ Հարկացուցակում հիշատակվում է Այլախ գավառում՝ Անգեղակոթից հետո։ Ուրեմն գյուղը գտնվել է այժմյան Սիսիանի շրջանի տարածքում։ (էջ 333)։

1372. Տայգիր բնագրում գրված է եպիսկոպոսք, բայց բերված է միայն Սողոմոնի անունը, համապատասխան ստորագրյալներն էլ հոգնակի թվով են (եպսկոպոսացին, կարգեցին)։ Թարգմանիչներն զգացել են բայը և ավելացրել են Հայրապետի անունը։ Մենք ևս այդպես վարվեցինք։ (էջ 333)։

1373. Այսինքն՝ ընդհանուր 1274 թվականին։ Տարսայիճի այս արձանագրությունը փորագրված է Տաթևի Պողոս-Պետրոս եկեղեցու ներսում, հարավային մույթի հյուսիսային կողին։ Այժմ եղծված է։ Քիչ մասեր են պահպանվում (տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 2-րդ, էջ 15—16, արձ. № 11)։ (էջ 333)։

1374. Սա վերակացու, ընդհանուր հրամանատար ու կառավարիչ է եղել Հուլավու, Աբաղա և Մահմեդ դանների օրոք։ (էջ 334)։

1375. Աբաղա դանը Հուլավուի որդին էր։ Իշխանության գլուխ անցավ 1264 թվականին։ Իշխեց 18 տարի և դավաղրաբար սպանվեց 1282 թվականին, ինչպես ստորև հաղորդում է պատմիչը։ (էջ 334)։

1376. Բնագրում՝ դուման։ Սա թաթարերեն թուման բառն է՝ «տասը հազար» նշանակությամբ։ Կա նաև վրացերենում՝ დუმანი (դումանի), ռուսերենում՝ тьма։ Մի ժամանակ Պարսկաստանում մեկ թումանը հավասար է եղել 10.000 դինարի։ Հետո արժեքը փոխվել է։ Ք. Հովհաննիսյանը, նկատի ունենալով այս նշանակությունը, թարգմանությամբ մեկնաբանել է իբրև ոսկի դրամագլուխ (История князей Орбельян..., էջ 37)։ Բայց դա տվյալ դեպքում անհավանական է։ Այստեղ թուման-ը ըստ պատմիչի՝ «դուման-ը) պետական-վարչական եզրույթի (տերմինի) արժեք ունի։ Մոնղոլական տիրապետության ռազմավարչական համակարգում՝ կուսակալությունը կամ ուլուս-պետությունը բաժանվում էր վիլայեթների, վերջիններս էլ՝ թումանների։ «Թուման էր կոչվում այն վարչական միավոր-նահանգը, որը տալիս էր 10 հազար զինվոր» (Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ, հ. 3-րդ, Երևան, 1976, էջ 614)։ Ճշմարտությանն ավելի մոտ են կանգնած եղել Մ. Բրոսեն և Ք. Պատկանյանը, որոնք համապատասխան հատվածի թարգմանության մեջ դուման-թուման-ը մեկնաբանել են ոչ թե իբրև դրամական հարստություն, այլ որոշակի տարածքի բնակչության քանակ։ Համմտ. Ք. Պատկանյանի թարգմանությունը՝ «История монголов по арм. источникам...», էջ 45։ Իսկ Մ. Բրոսեի մոտ դա որոշակի երևում է նրա թարգմանության տողատակի համապատասխան ծանուցումից (անդ, էջ 234, ծան. 5), որտեղ նա նշում է, թե Աբաղայի իշխած տարածքում կային 1,5000000 անձինք (âmes)։ Այստեղ, իհարկե, վրիպակ կա. մեկ զրոն ավելորդ է, որովհետև $150 \times 10000 = 1500000$։

Հետաքրքրությունից զուրկ չէ նաև Ք. Պատկանյանի տողատակի ծանուցումը, որտեղ նշվում է, որ թուման-վարչական միավորում 10000-ը պետք էր ենթադրել ոչ թե ամբողջ բնակչությունը, այլ՝ միայն հարկադրման ենթակա անձանց՝ հանած կանանց, երեխաներին, ծերունիներին և հոգևորականներին (անդ, ծան. 2)։ (էջ 334)։

1377. Այսինքն՝ ընդհանուր 1269 թվականին։ (էջ 334)։

1378. Այսինքն՝ ընդհանուր 1264 թվականին։ (էջ 334)։

1379. Այսինքն՝ ընդհանուր 1282 թվականին։ (էջ 334)։

1380. Որդեգրվածը հետագայի նշանավոր պատմագիր, սուրբ երկի հեղինակ Ստեփանոսն էր։ (էջ 334)։

1381. Խոսքը Նորավանքի գավիթ-տապանատան մասին է։ Համմտ. ծան. 1356։ (էջ 335)։

1382. Այսինքն՝ ընդհանուր 1273 թվականին։ (էջ 335)։

1383. Բնագրում՝ տուն տապանի և եկեղեցի...։ Սմբատի համար կառուցված դամբարանատունը և եկեղեցին տարբեր չեն։ Հենց եկեղեցին էլ դամբարանատունն է։ Փոքրիկ եկեղեցի է՝ կառուցված է ս. Կարապետ եկեղեցուն կից՝ հյուսիսային կողմից։ Այժմ էլ կանգուն է։ Նրա կառուցումն ավարտվել է 1275 թվականին։ Ուրեմն Սմբատի աճյունը տապանատնից (գավթից) այստեղ պետի փոխադրված լինի այս ժամանակ։ Տարսայիճը եղել է արձանագրություն դամբարանի արևմտյան մուտքի ճակատին, որտեղ նշվում է, թե այն կառուցել է իր եղբայր «Սմպատ արքային» համար, ՋԻԴ (1275) թվականին (հմմտ. «Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 234)։ Այստեղ պահպանվում է Սմբատի տապանը։ Տապանագրում նշված է նաև մահվան թվականը՝ ՋԻԲ=1273 (տե՛ս նույն տեղում, էջ 236)։ (էջ 335)։

1384. Ռուսուդանը Վրաստանի նշանավոր թամար թագուհու դուստրն էր, Գեորգի 4-րդ (Գեորգի Լաշա) թագավորի քույրը։ Եղբոր մահից հետո գահն անցնում է նրան։ Իշխել է 1223—1247 թթ.։ Գեորգի Լաշան ամուսնացած չէր, բայց ուներ արտամուսնական մի որդի՝ Դավիթ անունով։ Ռուսուդանը սրան էր ուզում մեջտեղից վերացնել, որ գահին չտիրանար։ Նա ուզում էր թագավոր դարձնել իր որդի Դավիթին։ Հայկական աղբյուրներից Ռուսուդան թագուհու մասին պատմվում է նաև կ. Գանձակեցու նշանավոր երկում

(հմմտ. գլ. ԻԲ, էջ 238)։ Գահակալական այս պայքարի մասին հմմտ. նաև Հ. Մանանդյան, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. Գ, էջ 218—219։ (էջ 335)։

1385. Բնագրում՝ քարուտ: Բառն արաբական է (գրվում է նաև քափուտ), նշ. «սրկդ, դագաղ»։ Այսօր էլ գործածական է մեր որոշ խոսվածքներում՝ «դագաղ» իմաստով։ (էջ 335)։

1386. Համաձայնություն է կայացվում հավանաբար 1247 կամ 1248 թ.։ Գեորգի Լաշայի որդի այս Դավիթը թագավոր է նստում Տփղիսում, իսկ Ռուսուդանի որդի Դավիթը՝ Սվանեթում։ (էջ 335)։

1387. Այսինքն՝ մոնղոլական կենտրոնական արքունիքում, որը գտնվում էր Կարակորումում (Ղարաղորում)։ (էջ 336)։

1388. Այսինքն՝ Գեորգի 3-րդ թագավորը (1155/6—1184 թթ.)։ (էջ 336)։

1389. Այս տեղերում Տարսայիճը մոնղոլ-թաթարական զորքերի մեջ մասնակցում էր նրանց պատերազմական գործողություններին։ (էջ 337)։

1390 Պատմիչի նկարագրությունից երևում է, որ բալիշը այս դեպքում հաղթանակի համար տրվող պատվո պարգև, շքանշան էր և ոչ թե սոսկ մետաղադրամ։ Այդպես է ընդունել ու բացատրել նաև Մ. Էմինը Վարդանի երկի ռուսերեն թարգմանության համապատասխան ծանոթագրության մեջ (տե՛ս «Всеобщая история» Вардана Великого», М., 1861, էջ 186—187, ծան. 751)։ Այսպես են հասկացել ու թարգմանել Ս. Օրբելյանի երկի թարգմանիչները։ Բառը արևելյան թուրքերեն է։ Հ. Աճառյանը, ճիշտ նշելով ծագումը, սակայն, իբրև գլխաբառի իմաստ, մատնացույց է անում դրամական իմաստը. «Տախտակաձև կտրուած ոսկեայ կամ արծաթեայ թաթարական մի դրամ, որի արծաթեան արժէր 200 դենար»։ Միաժամանակ ավելացնում է, որ պարսիկների, մոնղոլների մեջ այդ դրամն ունեցել է տարբեր արժեք (Հայերէն արմատական բառարան, հ. 1-ին, էջ 899)։ (էջ 337)։

1391. Խաչենի մեծ իշխան Ջալալը նույն ինքը Հասան—Ջալալ—Դոլան է՝ մեծ իշխան Վախթանգ 2-րդ Տոնիկիի որդին, նշանավոր Զաքարե և Իվանե եղբայրների քեռորդին։ Հայտնի է շինարարական և քաղաքական գործունեությամբ։ Կառուցել է Դանձասարի նշանավոր վանքը (որ այժմ էլ կանգուն է Ադրբ. ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Մարտակերտի շրջանի Վանք գյուղի դիմացի բարձունքի վրա), նորոգել է Կեչառույքի՝ թաթարների կողմից ավերված վանքը և այլն։ Միջնորդ է եղել Հայոց Հեթում 1-ին թագավորի ու Բայու զորավարի միջև։ Արդուն ղանի հրամանով 1261 թվականին մահապատժի է ենթարկվել Ղազվինում։ Դանձասարի վանքում թողել է մի արձանագրություն՝ ՋԺ = 1261 թվականով (թվականի ճիշտ վերծանումը տե՛ս Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հ. 4-րդ, էջ 287)։

Նրա մասին գրել կամ հիշատակել են ժամանակի պատմիչները՝ Կ. Գանձակեցին, Վարդանը, Մ. Այրիվանեցին և ուրիշներ։ (էջ 337)։

1392. Տպագիր բնագրում Ջալալ հատուկ անվան մոտ կա աթաբեկ բառը, որը շատերի կողմից հասկացվել է որպես վերադիր հիշյալ հատուկ անվան համար։ Մինչդեռ այստեղ դա ոչ թե պաշտոնական տիտղոսն է, այլ՝ Ջալալի որդու անունը։ Ջալալը Աթաբեկ անունով որդի է ունեցել, որի մասին

պատմում է Կիրակոս Գանձակեցին։ Նա հոր դաժան մահապատժից հետո հավատարիմ մարդիկ է ուղարկում Ղազվին և այնտեղից բերել տալիս նրա քառատված մարմնի մնացորդները, թաղում Գանձասարի վանքում։ Ապա ինքը նշանակվում է հոր տեղում (Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, գլ. ԿԴ, էջ 392)։ (էջ 337)։

1393. Մինա խաթունը Տարսայիճի երկրորդ կինն էր։ Մինչ այդ Տարսայիճն ամուսնացած էր Արուղի հետ, ինչպես և գրել է պատմիչը։ Մինա խաթունը որպես Տարսայիճի կին հիշատակվում է Օրբելյանների նեղգիսի իշխանական պալատի 1274 թվականի մի արձանագրության մեջ («Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, էջ 115, արձ. № 338)։ Այնուհետև հիշատակվում է մի քանի այլ վիմական արձանագրություններում (տե՛ս նույն «Դիվան...»-ում № № 451, 683, 812 արձանագրությունները)։ Ինքն էլ Նոր-բայազետում նվիրատվության արձանագրություն է թողել ՉՆԱ = 1292 թվականով (տե՛ս «Դիվան...», պրակ 3-րդ, էջ 238, № 779)։ Թաղված է Նոր-բայազետում, Սմբատի դամբարանատանը։ Տապանագիրը նշված է ՉՆԷ = 1298 թվականով (նույն տեղում, էջ 237, արձ. № 776)։ (էջ 337)։

1394. Մինայից ծնված այս Ջալալը հիշատակվում է Ամաղուի Նորավանքում իր մոր թողած 1292 թվականի արձանագրության մեջ (տե՛ս «Դիվան...», պրակ 3-րդ, էջ 238, արձ. № 779)։ Հոր մահից հետո ստացավ Սյունիքի իշխանության մի մասը։ Ունեցել է չորս որդի, որոնցից մեկը դարձել է արքեպիսկոպոս։ 1314 թվականից առաջ մեռած է եղել։ Հիշատակված է նաև պատմագիր Ս. Օրբելյանի 1298 թվականի (նույն տեղում, էջ 216, № 685) մեծ արձանագրության մեջ։ Հիշվում է և իր որդի Ստեփանոսի թողած անթվակիր արձանագրության մեջ (տե՛ս «Դիվան...», պրակ 3-րդ, էջ 108, № 301)։ (էջ 337)։

1395. Այս ավագ դստեր անունն Ասփա էր։ Մեռել է 1311 թվականին։ (337)։

1396. Խաչենցի այս մեծ իշխան Գրիգորը (Դուփի որդին) Զաքարե և Իվանե եղբայրների քեռորդին էր, Հասան—Ջալալ—Դոլա մեծ իշխանի մյուս մորաքրոջ որդին։ Կոչվել է նաև Ղարա Գրիգոր։ (էջ 337)։

1397. Սա Խաչենի իշխան Հասան 2-րդ Դոփյանն է։ (էջ 337)։

1398. Սա Խաչենի մեծ իշխան Գրիգոր 2-րդն է, որը կոչվել է նաև Գրիգոր Բարի։ Ղարա Գրիգորի թոռն է, Իվանե աթաբեկի թոռը։ Հաջորդել է հորը՝ Հասան 2-րդին։ Իր կին Ասփայի հիշատակին վանքերին (Խաթար, Հերհեր, Ամաղուի Նորավանք) նվիրատվություններ է կատարել։ 1317 թվականին դեռ կենդանի է եղել։ (էջ 338)։

1399. Այս Մանվելը և Դավիթը Վրաստանի Դեմետրե 2-րդ թագավորի որդիներն էին։ Դավիթը Արևելյան Վրաստանի թագավոր հաստատվեց 1293 թվականին։ (էջ 338)։

1400. Սա Վրաստանի Դեմետրե 2-րդ թագավորն է։ Գահակալել է 1272—1289 թթ.։ Սպանվել է Մուղանի դաշտում՝ իշխ տեղը մեղադրվելով Արղունի դեմ կազմակերպված դավադրության մասնակցած լինելու մեջ։ (էջ 338)։

1401. Հայոց 719, այսինքն՝ ընդհանուր 1270 թվականին մեռած թագավորը Վրաստանի Գեորգի Լաշա թագավորի որդի Դավիթն էր (հմմտ. ծան. 1384, 1386)։ Դեմետրե 2-րդը սրա որդին էր (էջ 338)։

1402. Այս Գառնակեր գյուղը հարկացուցակում Գեղարքունիքի գյուղերի շարքում հիշատակված չէ։ Ս. Երևանցու «Ջամբռ»-ում այն հիշված է Շողվագա վանքի վիճակի գյուղերի մեջ (անդ, էջ 284)։ Այստեղից էլ վերցրել է Ղ. Ալիշանը՝ ամբողջացնելով գավառի գյուղերի ցանկը («Սիսական», էջ 39)։ Դատելով «Ջամբռ»-ից կարող ենք ասել, որ հիշյալ գյուղը գտնվել է այժմյան ՀՍՍՀ Մարտունու շրջանում, բայց ո՞ր գյուղն է... (էջ 338)։

1403. Այս տեղանունը գրության տարբերակներ ունի, ինչպես՝ Մեռկաձոր, Մեռակա ձոր, Մեռուակա ձոր, Մեռկաձոր, Մերկաձոր։ Հարկացուցակում չի նշվում Վայոց ձորի գյուղերի շարքում։ Չկա նաև Ղ. Ալիշանի լրացված ցուցակում (գուցե հենց ձոր է այդ անունն ունեցել, և ոչ գյուղ, որտեղ եղել են այգիներ)։ Բայց հիշվում է մի քանի վիմական արձանագրություններում՝ նվիրատվությունների կապակցությամբ (հմմտ. «Դիվան...», պրակ 3-րդ, էջ 35, № 85, էջ 87, № 239, էջ 87 № 241, էջ 124 № 359, էջ 134 № 393, էջ 149 № 451)։ Այստեղից նվիրատվություն են կատարել տարբեր մարդիկ։ Տարսայիճը (բացի ծաղաց քարի վանքին նվիրելուց) այստեղից այգի է նվիրել նաև Հերմոնի վանքի ս. Գրիգոր եկեղեցուն (արձ. № 393), որի մասին պատմիչը չի հիշատակել։ Իսկ ծաղաց քարի վանքին կատարած նվիրատվությունների մասին Ս. Օրբելյանի հիշատակածը գտնում ենք Տարսայիճի մեծ արձանագրության մեջ (տե՛ս հաջորդ ծան.)։ (էջ 338)։

1404. Տարսայիճի այդ ընդարձակ արձանագրությունը փորագրված է Ամաղուի Նորավանքի ս. Կարապետ եկեղեցու հարավային պատին (տե՛ս «Դիվան...», պրակ 3-րդ, էջ 149—150, արձ. № 451)։ Ս. Օրբելյանը այստեղ չի հիշատակել նաև Տարսայիճի չինել տված ս. Գրիգոր փոքրիկ եկեղեցուն (Սմբատի դամբարան) արած նվիրատվությունների մասին։ Այդ մասին գրված է Տարսայիճի մեկ այլ ընդարձակ արձանագրության մեջ (հմմտ. «Դիվան...», պրակ 3-րդ, էջ 235, արձ. № 765)։ Տարսայիճի նվիրատվությունների մասին է խոսվում իր իսկ թողած երկու ուրիշ արձանագրություններում, մեկը՝ Հալիձորի մոտի խաչքարի վրա («Դիվան...», պրակ 2-րդ, էջ 52, արձ. № 125), մյուսը՝ Դարբաս գյուղի ս. Աստվածածին եկեղեցու պատին (նույն տեղում, էջ 114, արձ. № 336)։ Այժմ արձանագրությունը չկա, մնացել է վերծանությունը։ Ըստ այդ արձանագրության՝ եկեղեցին կառուցել է Տարսայիճը։ (էջ 338)։

1405. Արուզ խաթունը (պատմիչի մայրը) վախճանվել է 1286 թվականին։ Տաթևի Պողոս-Պետրոս եկեղեցու արևմտյան գավթում գտնվող նրա տապանաքարի տապանագիրն ընդօրինակել է Ս. Ջալալյանը (հմմտ. «Դիվան հայ վիմագրության», պրակ 2-րդ, էջ 36, արձ. № 74)։ Ս. Գ. Բարխուդարյանը նշում է, թե Ս. Օրբելյանն իր մոր անունը գրել է Աւրզու ձևով (նույն տեղում), մինչդեռ նրա երկի բոլոր հրատարակություններում Աւրուզ է։ (338)։

1406. Այսինքն՝ ընդհանուր 1272 թվականին։ (էջ 338)։

1407. Այսինքն՝ ընդհանուր 1282 թվականին։ (էջ 338)։

1408. Նկատված է, որ այս թագուհուերը ոչ թե Աբաղա ղանի եղբորորդին էր, այլ եղբայրը։ Հուլավուի յոթերորդ որդին էր։ Իշխանության գլուխ

անցավ 1282 թվականին։ Սպանվեց իր եղբայր Ղոնգրաթայի որդիների կողմից (տե՛ս Կ. Շահնազարյանցի 134-րդ ծանոթագրությունը սույն երկի փարիզյան հրատարակության 2-րդ հատորում, էջ 354)։ (էջ 338)։

1409. Գագ բերդի անունից։ Հմմտ. ծան. 1133։ (էջ 339)։

1410. Խոսքը Սադուն Արծրունու մասին է, որն աթաբեկ էր դարձել Զաքարյաններից հետո։ Իսկ այնուհետև աթաբեկությունն անցավ Տարսայիճին։ Տե՛ս Գ. Հովսեփյան, «Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ», մասն 1-ին, էջ 97։ (էջ 339)։

1411. Բնագրում՝ ծիկնաւպար։ Տե՛ս ծան. 1119։ (էջ 339)։

1412. Այժմ դժ՛վար է ասել, թե ո՛ր գյուղն էր այս նետիքը (նետիքը)։ (339)։

1413. Այսինքն՝ ընդհանուր 1280 թվականին։ (էջ 339)։

1414. Սա պատմագիր Ս. Օրբելյանի կրոնական առաջին ձեռնադրությունն է։ (էջ 339)։

1415. Հայոց Հակոբ 1-ին կաթողիկոսն է։ Տե՛ս ծան. 1201։ (էջ 340)։

1416. Սա Կիլիկիայի հայոց Լևոն 3-րդ թագավորն է։ Գահակալել է 1270—1289 թթ., Հեթում 1-ին թագավորի որդին էր։ (էջ 340)։

1417. Սա հայոց Կոստանդին 2-րդ կաթողիկոսն է (Պռոնագործ Կատուկեցի)։ Հաշորդելով Հակոբ 1-ին Կլայեցուն՝ աթոռակալել է 1286—1289 թթ.։ (340)։

1418 Երբ Ստեփանոս Օրբելյանը մետրոպոլիտ ձեռնադրվեց (ձեռնադրվել է 1286 թ., վերադարձել՝ 1287 թ.), Սյունյաց մետրոպոլիտության ընդհանուր աշխոռը բաժանված էր տարբեր առաջնորդությունների ու առաջնորդների միջև։ Տաթևում Հայրապետն ու Հովհաննես էին, Վայոց ձորում՝ Սարգիսն ու Գրիգորը։ Մինչև նրանց միավորվելը, որ կատարվեց Ս. Օրբելյանի ջանքերով, շատ վեճեր ու տարաձայնություններ են տեղի ունեցել։ (էջ 340)։

1419. Նշանակում է «լատինական ոճի եպիսկոպոսական կամ քահանայական թագ, խույր»։ Հունարեն μίτρα «արևելյան թագ, խույր, փաթթոց»։ Բուն իմաստն է «գոտի, կապ, (տե՛ս Հ. Աճառեան, «Հայերէն արմատական բառարան», համապատասխան բառահոդվածը)։ (էջ 340)։

1420. Տե՛ս ծան. 314։ (էջ 340)։

1421. Այսինքն՝ ընդհանուր 1287 թվականին։ (էջ 340)։

1422. Տե՛ս ծան. 1346։ (էջ 341)։

1423. Տե՛ս ծան. 1345։ (էջ 341)։

1424. Խոսքը Սյունյաց Հովհաննես 9-րդ եպիսկոպոսի (1292—1295) մասին է։ (էջ 341)։

1425. Այս Տեր-Սարգիսը Նորավանքի թեմի հիմնադիր չէ (տե՛ս ծան. 1062), այլ ուրիշն է, որ գործել է 13-րդ դարի երկրորդ կեսին։ Վախճանվել է 1298 թվականին։ Նորավանքում պահպանվել է նրա մահվան հիշյալ թվականը ներկայացնող տապանագիրը։ Հ. Աճառյանը թեև նրան առանձին է ներկայացնում (Հայոց անձնանունների բառարան, հ. 4-րդ, էջ 428, № 204), բայց ս. Կարապետ վանքի կառուցումը նույնպես նրան է վերագրում, որը հավանական չէ։ Դա իրականում պատկանում է 1216 թվականին եպիսկոպոս դարձած Տեր-Սարգսին, որը ներկայացված է 126-րդ համարի տակ (նույն տեղում, էջ 419)։ (էջ 341)։

1426. Այս Բուղա Չինքսանը մոնղոլ-թաթարական կառավարող շրջաններում մեծ դիրք ուներ և վճռական դեր էր խաղացել Արղուն գահ բարձրանալու մեջ։ Այնուհետև նրա դեմ դավադրության կազմակերպիչներից մեկը դարձավ և մահապատժի ենթարկվեց նրա կողմից։ (էջ 341)։

1427. Սրանցից Ղազանը Արուխի ավագ որդին էր (հմմտ. հաջորդ ծան.)։ (էջ 341)։

1428. Արուխը՝ Բուղա Չինքսանի եղբայրը, Բաղդադի, ամբողջ Միջագետքի ու Ատրպատականի նահանգապետն էր։ (էջ 341)։

1429. Օճանը Ղազանի ախոռապետն էր։ (էջ 341)։

1430. Մոլկանա դաշտը նույն Մուղանի դաշտն է։ (էջ 341)։

1431. Այսինքն՝ ընդհանուր 1289 թվականին։ (էջ 341)։

1432. Տարսայիճի իշխանության, կառուցողական, նվիրատվական ու այլ գործերի մասին հիշատակվում է նաև վայոց ձորի, Գորիսի ու Սիսիանի շրջանների վիմական մի շարք արձանագրություններում, որոնց թիվը հասնում է 36-ի։ Դրանցից մի քանիսը անձամբ իր թողած արձանագրություններն են (հմմտ. ծան. 1383, 1403, 1404)։ (էջ 342)։

1433. Երկար ժամանակ պահպանված է եղել այդ ապարանքի (իշխանական տուն-դարպաս) մուտքի կամարակապ քարը՝ Տարսայիճի, Մինալի անունները նշող ու շենքի կառուցումը ընդհանրապես հավաստող արձանագրությամբ, ՉԻԳ (=.1274) թվականով («Դիվան...», պրակ 3-րդ, էջ 115, արձ. № 338)։ Այժմ քարը չկա։ (էջ 342)։

1434. Երկար ժամանակ Ամաղուի Նորավանքի ս. Գրիգոր փոքրիկ եկեղեցում (Սմբատի նույն դամբարանում) պահպանված է եղել Տարսայիճի տապանագրությամբ, որտեղ Տարսայիճը համարված է «արքայաշուք կողմնակալ» (կուսակալ), «հզոր և մեծ գործակալ», «քաջապահ մենամարտին, աթաբեկ»։ Այժմ տեղում քարից մնացել են մի քանի բեկորներ («Դիվան...», պրակ 3-րդ, էջ 236)։ (էջ 342)։

1435. Տարսայիճի կառուցած դամբարանի մասին հմմտ. ծան. 1383։ (342)։

1436. Այսինքն՝ ընդհանուր 1290 թվականին։ Նկատենք, սակայն, որ այժմ չպահպանված, բայց մի ժամանակ ընդօրինակված տապանագրում թվականը նշված է ՉԼՀ (= 1289) (տե՛ս «Դիվան...» պրակ 3-րդ, էջ 236, արձ. № 773)։ Հավանաբար վերջին տառը Թ է եղել, որը սխալմամբ կարդացվել է Ը։ (էջ 342)։

1437. Սա Լիպարիտ 2-րդն է, որը Տարսայիճի եղբայր Իվանեի որդին էր։ (էջ 342)։

1438. Աղվանքի այս Տեր-Ստեփանոս կաթողիկոսն աթոռակալել է 13-րդ դարի վերջերին և 14-րդ դարի սկզբներին։ Նրա մասին վերջին հիշատակությունը 1303 թվականից է (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 4-րդ, էջ 331)։ (էջ 342)։

1439. Այսինքն՝ իր՝ մեր պատմիչ Սյունյաց մետրոպոլիտի։ (էջ 342)։

1440. Ելիկումի դստեր անունն էլ Մամախաթուն է եղել։ (էջ 343)։

1441. Էական Պռոշյան կամ Խաղբակյան տոհմի նշանավոր գործիչներից է։ Մնվել է 1268—1273 թթ. ժամանակամիջոցում, մեռել է 1317 թվակա-

նին։ Իր կին Մամախաթունի հետ հիշվում է վիմական մի շարք արձանագրություններում։ (էջ 343)։

1442. Սա Ամիր Հասան 1-ինն է։ Սպարապետ էր «տանն Աւագի»։ Իր հայր Պռոշի մահից հետո (1284) եղբոր՝ Պապաքի հետ ժառանգել է նրա իշխանությունը։ Մեռել է 1292 թվականին։ Նրա մասին գրել է նաև Կ. Գանձակեցին։ Հիշված կա վիմական արձանագրություններում։ (էջ 343)։

1443. Լիպարիտի որդի այս Սմբատը գերի է տարվել Եգիպտոս, որտեղ մնացել է 12 տարի, ազատվելով վերադարձել է ու մեռել 2 տարի անց։ Հողեր է նվիրել Հերհերի վանքին։ Այդ մասին պատմվում է հիշյալ վանքի ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան պատի արձանագրության մեջ (տե՛ս «Դիվան...», պրակ 3-րդ, էջ 41, արձ. № 145)։ (էջ 343)։

1444. Լիպարիտի այս Հովհաննես որդին հետո ձեռնադրվել է եպիսկոպոս ու դարձել Քեմի առաջնորդ։ Ակադ. Լ. Ս. Խաչիկյանը նրա աթոռակալման ժամանակը նշում է 1302—1323 թթ.։ (Տե՛ս նրա «Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը». «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1969, № 9, էջ 198)։ (էջ 343)։

1445. Սա Հայոց Լևոն 3-րդ թագավորն է (Կիլիկիա)։ Տե՛ս ծան. 1416։ (344)։

1446. Այս Տեր-Հայրապետը աթոռակալել է 1252—1292 թթ.։ Սյունյաց Հովհաննեսը 8-րդ եպիսկոպոսի եղբորորդին էր, հաջորդեց նրան ու նստեց Սողոմոն 3-րդի հետ։ (էջ 344)։

1447. Այսինքն՝ ընդհանուր 1282 թվականին։ (էջ 345)։

1448. Տե՛ս ծան. 1201։ (էջ 346)։

1449. Հռոմկլան նշանավոր ամրոց-դղյակ էր Կիլիկիային մոտ։ Գտնվում էր Եփրատ գետի վրա, Աղձնիքի սահմանի մոտ։ 1147—1192 թթ. եղել է հայ կաթողիկոսական աթոռանիստ, այլև մշակութային կարևոր օջախ։ Ավերվել է Եգիպտոսի մամլուքյան սուլթան Մելիք-Աշրաֆի կողմից։ (էջ 346)։

1450. Սա Հեթում 2-րդ թագավորն է։ Գահ է բարձրացել 1289 թվականին։ Դրանից առաջ ընդունել էր կաթոլիկություն։ Սպանվել է 1307 թվականին։ Բազմիցս հիշատակված է միջնադարյան մեր մատենագրության մեջ։ Հայտնի է նաև որպես մատենագիր։ (էջ 346)։

1451. Լամբրոնը հռչակավոր բերդ էր Կիլիկիայում։ (էջ 347)։

1452. Այսինքն՝ ընդհանուր 1289 թվականին։ (էջ 347)։

1453. Տպագիր բնագրում՝ Հռոմայեցի, փոխանակ՝ Հռոմկլայեցի։ Այս Ստեփանոս 4-րդ Հռոմկլայեցի կաթողիկոսը աթոռ է բարձրացել 1290 թվականին, բայց երկար չի պաշտոնավարել. Մելիք-Աշրաֆի կողմից Հռոմկլան գրավելուց ու ավերելուց հետո գերեվարվել է, տարվել է նախ Դամասկոս, ապա՝ Եգիպտոս, որտեղ բանտում մեռել է 1293 թվականին։ Նա երջնկայի Խոխ գյուղից էր, Հռոմկլայեցի մականունն ստացել է այնտեղ աթոռակալած լինելու պատճառով։ Ս. Օրբելյանից բացի, նրա մասին հիշատակել են Ս. Անեցին, Մ. Այրիվանեցին, Սմբատ պատմիչը և ուրիշներ։ (էջ 348)։

1454. Այսինքն՝ Միջերկրական ծովի ափին։ (էջ 349)։

1455. Անտիոքը գտնվում էր Ասորիքում, Որոնտես գետի ափին։ Հնում Սելևկյանների պետության կենտրոնն էր։ Հայտնի էր որպես հելլենիս-

տական մշակույթի խոշորագույն օջախ։ Քրիստոնեական աշխարհում հրաշակված է եղել իր պատրիարքարանով։ Պատմիչի նկարագրած ժամանակաշրջանում Անտիոքի դպրության մայրաքաղաքն էր, որը գրավվեց եգիպտական մամլուքների կողմից 1268 թվականին։ Այժմ կոչվում է Անթաքիա, Թուրքիայի Հաթայ վիլայեթի կենտրոնն է։ (էջ 349)։

1456. Բնագրում՝ բրինձ։ Հին ֆրանսերեն prince բառն է, որ հիշյալ ձևով գործածվել է միջին հայերենում։ (էջ 349)։

1457. Այսինքն՝ 1268 թվականին։ (էջ 349)։

1458. Այսինքն՝ 120,000։ (էջ 349)։

1459. Բնագրում՝ գոնթ։ Ֆրանսերեն բառ է՝ comte=կոմս։ (էջ 349)։

1460. Այսինքն՝ ընդհանուր 1289 թվականին։ (էջ 349)։

1461. Այսինքն՝ ընդհանուր 1291 թվականին։ Նախորդ թվականը նշված է 1289-ը, բայց 1291 թվականի համար ասված է «յետ միոյ ամի»։ Ըստ երևույթին այստեղ թվականի սխալ կա։ (էջ 349)։

1462. Աքքան կամ Աքիան քաղաք և բերդ էր Միջերկրական ծովի արեւելյան ափին։ Շատ հին բնակավայր է. հիշվում է դեռ Աստվածաշնչում (Ակկո)։ Հնում միացնող կետ էր եվրոպայի և Ասիայի միջև։ Հռոմեացիները դարձրին զինվորական գաղութ։ Հետզհետե ընկավ խաչակիրների նրա գրավումը կատարվեց եգիպտոսի մամլուքյան սուլթան Մելիք-Աշրաֆի կողմից, որը Ալփիի որդին էր։ Պատմիչն այստեղ Մելիք-Աշրաֆի անունը չի տալիս, և այն տպավորությունն է ստացվում, թե Աքքան ևս Ալփի սուլթանն է գրավել։ (էջ 349)։

1463. Այստեղ խոսքը ասպետական կարգերի մասին է։ Սրանք կրոնական և միաժամանակ ռազմական միություններ էին 12—13-րդ դարերում, որոնք իրենց առաջ խնդիր էին դրել պայքարել անհավատների դեմ, պաշտպանել հավատացյալ քրիստոնյաներին, հետևել քրիստոնեական կրոնական կարգ ու կանոնին։ Ասպետական կարգ-միությունները բավական շատ էին։ Այստեղ Ս. Օրբելյանը հիշատակում է երեքը՝ դամփլուն, ըսպիթալուն, ալամանուն, որոնք համապատասխանաբար թարգմանեցինք տաճարական, հոսպիտալյան, գերմանական։ Պատմիչի օգտագործած՝ ժամանակին գործածված այդ անվանումները գալիս են ֆրանսերենից՝ դամփլուն՝ templier, ըսպիթալուն՝ hospitalier, ալամանուն՝ allamand։ (էջ 349)։

1464. Բնագրում՝ արծուէսք։ Հին ֆրանսերեն բառ է՝ arcevesque, arcivesque, նշ. «արքեպիսկոպոս», ինչպես որ թարգմանել է և ինքը՝ պատմիչը։ (349)։

1465. Սա եգիպտոսի Մելիք-Աշրաֆ սուլթանն էր։ (էջ 349)։

1466 Բնագրում՝ ըսպիթալին։ Նկատի է առնված ասպետական կարգերից մեկի՝ ասպնջական, հյուրընկալող (հոսպիտալյան) վանատուր միության ղեկավարին։ Համմտ. նաև ծան. 1463։ (էջ 349)։

1467. Նկատի ունի Կոստանդին 2-րդ կաթողիկոսին։ (էջ 350)։

1468. Բնագրում դաստառակ, նշ. «քաշկինակ, որով ձեռքերն ու երեսն են սրբում»։ (էջ 350)։

1469. Բնագրում պերեզոտ, նշ. «վիզը փաթաթելու շղարշ, վարշամակ»։ Բառը հունարեն է՝ περὶφωμα ուստի ուղղակի է պերիզոմ։ Հայերենում հիշյալ ձևն առաջացել է տառերի շփոթումից։ Հայերենում բուն նշանակությունն է «գոտի» (Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հ. 5-րդ, էջ 1032)։ (էջ 350)։

1470. Բնագրում կլայ։ Միջին հայերենում սովորական գործածություն ունեցող բառ է՝ «բերդ, ամրոց» նշանակությամբ։ Գալիս է արաբերենից։ (էջ 350)։

1471. Բաբանը պատերազմական սարք էր, որով հնում նետեր էին արձակում թշնամիների վրա կամ քարեր նետում պարիսպները քանդելու համար։ (էջ 351)։

1472. Դրմըշխը Դամասկոսն է։ (էջ 351)։

1473. Այսինքն՝ ընդհանուր 1292 թվականին։ (էջ 351)։

1474. Խոսքը Կիլիկիայի հայոց թագավոր Հեթում 2-րդի մասին է։ (էջ 351)։

1475. Բերդաքաղաք Սրբոց Հայքի Մելիտինե գավառակում։ (էջ 351)։

1476. Հեղինակը դիմում է Հեթում 2-րդ թագավորին։ (էջ 351)։

1477. Այսինքն՝ Հեթում 2-րդի ջանքերով կաթողիկոս ընտրված Տեր-Ստեփանոսին։ (էջ 351)։

1478. Սա Գրիգոր 3-րդ Պահլավունի կաթողիկոսն է։ Ապիրատ իշխանի որդին էր, Ներսես Շնորհալու ավագ եղբայրը։ Աթոռակալել է 1113—1166 թթ.։ Նախ նստել է Սովքի դղյակում։ Հռոմկլայի ամրոցը գնելուց հետո կաթողիկոսական աթոռը տեղափոխել է այնտեղ 1147 թվականին։ Իր քեռի Գրիգոր 2-րդ Վկայասերի հետևողությամբ գործունեություն ծավալելու պատճառով անվանվել է Փոքր Վկայասեր։ Ս. Օրբելյանը նշում է. «որ և Վկայասեր կոչեցաւ»՝ առանց Փոքր-ի։ Այստեղից էլ կ. Շահնազարյանցը անհիմն է համարում այս Գրիգորիսին Հռոմկլայի աթոռի հիմնադիր ընդունելը՝ վերջինիս շփոթելով Գրիգոր 2-րդ կաթողիկոս Վկայասերի հետ, բայց այնուհետև ճիշտ տվյալներ է մատնանշում նրա մասին (տե՛ս սույն երկի փարիզյան հրատարակության 2-րդ հատորի 153-րդ ծանոթագրությունը, էջ 358)։ Լայնորեն ներկայացված ու բազմիցս հիշատակված է հայ միջնադարյան մատենագրության մեջ։ (էջ 351)։

1479. Սա Ներսես 4-րդ կաթողիկոսն է, որ կոչվել է և Շնորհալի կամ Կլայեցի։ Կաթողիկոս է ձեռնադրվել իր ավագ եղբայր Գրիգոր 3-րդ Պահլավունի (Գրիգորիս Փոքր Վկայասեր) կաթողիկոսի կողմից 1166 թվականին և աթոռակալել մինչև 1173 թվականը։ Միջնադարյան հռչակավոր հայ մատենագիր և բանաստեղծ Ներսես Շնորհալին է։ Հեղինակ է բազմաթիվ երկերի։ (էջ 352)։

1480. Պետք է Ն.չվեր Գրիգոր Տղան։ Տե՛ս հաջորդ ծանոթագրությունը։ (352)։

1481. Այստեղ շփոթ կա։ Ներսես (4-րդ, Շնորհալի կամ Կլայեցի) կաթողիկոսին հաջորդել է նրա եղբորորդի Գրիգոր Տղան (Գրիգոր 4-րդ կաթողիկոսը), որն աթոռակալել է 1173—1193 թթ.։ Ս. Օրբելյանի երկի բնագրում նրան է վերագրվել Կոպիտաուի քարափից գահավեժ լինելը, որը

ճիշտ չէ։ Դա վերաբերում է այն Գրիգորիսին, որը նշված է նրանից առաջ։ Այս Գրիգորիսը պիտի նշվեր Գրիգոր Տղայից հետո։ Նա Գրիգոր 5-րդ Քարավեժ կոչված կաթողիկոսն է։ Գրիգոր 4-րդ Տղայի քեռորդին էր և հաջորդեց նրան՝ իշխելով 1193—1194 թթ.։ Հակառակվեց Կիլիկիայի Լևոն 2-րդ թագավորի քաղաքականությանը։ Նրա հրամանով էլ ձերբակալվեց ու տարվեց Կոպիտառի բերդը, որտեղ նրան թունավորելով սպանեցին և լուր տարածեցին, թե քարավեժ է եղել։ Նրա մասին հիշատակել են Մ. Անեցին, Մ. Այրիվանեցին, Վարդանը, Կ. Դանձակեցին և ուրիշներ։ Այդ շփոթը հավանաբար հեղինակից է գալիս։ Համեմատությունը ցույց տվեց, որ այդպես է նաև № 6271 լավագույն ձեռագրում (էջ 293 ա)։ (էջ 352)։

1482. Սա հայոց Գրիգոր 6-րդ Ապիրատ կաթողիկոսն է։ Հաջորդելով Գրիգոր 5-րդ Քարավեժ (տե՛ս վերը) կաթողիկոսին՝ իշխել է 1194—1203 թթ.։ (էջ 352)։

1483. Սա հայոց Հովհաննես 7-րդ կաթողիկոսն է։ Կոչվել է նաև Սսեցի, Մեծաբարու։ Աթոռակալել է 1203—1221 թթ.։ Նրա մասին գրել են Մ. Անեցին, Մ. Այրիվանեցին, Վարդանը, Կ. Դանձակեցին և ուրիշներ։ Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան»-ում նշված է Հովհաննես 9 (6-րդ)՝ հ. 3-րդ, էջ 580, № 240, բայց հետո մի քանի հիշատակություններում ուղղված է է (7-րդ)։ (էջ 352)։

1484. Սա Կոստանդին 1-ին Բարձրբերդեցի հայոց կաթողիկոսն է։ Կոչվում է նաև Մավռիանցի։ Հաջորդել է Հովհաննես 7-րդ Մեծաբարու կաթողիկոսին՝ իշխելով 1221—1267 թթ.։ Լայնորեն հիշատակված է մեր միջնադարյան մատենագրության մեջ։ (էջ 352)։

1485. Այս Հակորի մասին տե՛ս ծան. 1415։ (էջ 352)։

1486. Այսինքն՝ Կոստանդին 2-րդ կաթողիկոսը։ Համմտ. ծան. 1417։ (352)։

1487. Այսինքն՝ Ստեփանոս 4-րդ կաթողիկոսը։ Համմտ. ծան. 1453։ (352)։

1488. Խոսքը Հեթում 2-րդի մասին է։ Համմտ. ծան. 1450։ (էջ 352)։

1489. Այսինքն՝ ընդհանուր 1293 թվականին։ (էջ 352)։

1490. Սա հայոց Գրիգոր 7-րդ Անավարզեցի կաթողիկոսն է։ Կոչվում է նաև Տուրքերիցանց կամ Մեծքարեցի։ Աթոռակալել է 1293—1307 թթ.։ Հաջորդեց Ստեփանոս 4-րդ կաթողիկոսին։ Կաթողիկոսական աթոռը Հռոմկլայից փոխադրեց Սիս։ Դավանական կողմնորոշման հողի վրա ցուցաբերած հակառակության պատճառով Լևոն 4-րդի կողմից աքսորվեց և աքսորում էլ մեռավ։ Թողել է բավականաչափ գրական ժառանգություն։ Նրա մասին գրել են նաև Մ. Անեցին, Մ. Այրիվանեցին, Սմբատը և ուրիշներ։ (էջ 352)։

1491. Անավարզան (Անարզաբա) մի ժամանակ դաշտային Կիլիկիայի կենտրոնն է եղել։ Ընկած էր Սսից 25 կիլոմետր հարավ-արևելք։ Այժմ ավերակ է։ (էջ 352)։

1492 Խոսքը, այսպես կոչված, ծռազգակի մասին է, որը որոշ ժամանակամիջոցում առաջ էր գալիս էսայան հինգհարյուրյակի (532 տարվա ժամանակաշրջանի) զատկական տոնացույց աղյուսակների կիրառումով՝ ըստ լուսնի լրումների (համմտ. Մ. Օրմանեան, «Ազգապատում», էջ 570)։ Պատմիչը նշում է, որ զատկական տոնի այդպիսի շփոթ է եղել նաև այս Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսի աթոռակալության 2-րդ տարում։ (էջ 352)։

1493. Երբայական տոմարով նիսանը տարվա առաջին ամիսն է։ (էջ 352)։

1494. Ըստ հին հայկական տոմարի՝ արեգ ամիսն սկսվում էր մարտի 9-ից (նահանջ տարում՝ 8-ից)։ (էջ 352)։

1495. Հայերի մոտ ընդունված է հարության տոնը (մեծ զատիկը տոնել զարնանամուտին հետևող լուսնային առաջին բոլորման կիրակին անմիջապես հաջորդող կիրակի օրը)։ (էջ 352)։

1496. Հարության տոնը նույն մեծ զատիկն է։ (էջ 352)։

1497. Ողոգոմենի տոնը նույն ծառազարդն է հայերի մոտ, որը տոնվում է զատկի կիրակիին նախորդող կիրակի օրը։ Ինչպես այստեղ է նշվում, հայ եկեղեցին չի ընդունում այդ օրը զատիկ անելը։ Բառի ծագման մասին համմտ. ծան. 270։ (էջ 352)։

1498. Պասեհ այս դեպքում նշանակում է «զատկի տոնին գործածվող ուտելիք, որ պատրաստվում էր լոռից (ապա՝ բրնձից), չամչից ու համեմունքներից»։ Բառը երբայերենից է (pasax), հայերենին անցել է հունարենի միջոցով (pasxa)։ Ծագումով բուն նշանակում է «անցում»։ Հին հրեաները այդ բառով կոչում էին այն տոնը, որով նշում էին Եգիպտոսից դուրս գալը և Կարմիր ծովն անցնելը։ Քրիստոնեական եկեղեցիներում pasxa է կոչվում զատկի տոնը։ (էջ 352)։

1499. Գրիգոր Սքանչելագործի մասին տե՛ս ծան. 1361։ (էջ 354)։

1500. Աբրահամ Աղեքսանդրացին կամ Աբրահամ Մեծը 4-րդ դարի նշանավոր կրոնական գործիչ-տեսաբան էր, արիոսականության խիստ հակառակորդ։ Նրա վարդապետությունը հանգում էր «աստված ինքն է մարդ դարձել» գաղափարին։ (էջ 354)։

1501. Նկատի ունի Եսայի մարգարեին, որն Ամոսի որդին էր։ (էջ 355)։

1502. Բնագրում՝ սեղենի։ Ուղիղ ձևն է սեղէն, նշ. «առաջնորդական գահ, աթոռ»։ Հունարեն է՝ σελλίον նշ. «գահ, աթոռ»։ (էջ 355)։

1503. Սկյութացիները հնում Սև և Կասպից ծովերից հյուսիս և հյուսիս-արևելք ընկած տափաստաններում թափառող ռազմատենչ ցեղեր էին, որոնք մ. թ. ա. 7-րդ դարում արշավեցին դեպի հարավ և հարավ-արևմուտք։ (էջ 356)։

1504. Ըստ Ասողիկի՝ գաբավոնցիները՝ Գաբավոն քաղաքի բնակիչները, խաբեբա, անհանգիստ ու կռվասեր էին։ Նրանց Գաբավոն քաղաքն ընկած էր Երուսաղեմից դեպի հյուսիս։ (էջ 356)։

1505. Լեռնային Կիլիկիայի լեռներից մեկը, որտեղ մի ժամանակ վանք է եղել։ (էջ 356)։

1503. Շահապիվանի ժողովի մասին տե՛ս ծան. 165։ (էջ 357)։

1507. Համմտ. ծան. 164։ (էջ 357)։

1508. Հովհան Մանդակունի կաթողիկոսը, հաջորդելով Գյուտ կաթողիկոսին, աթոռակալել է 478—490 թթ.։ Նա է վաղարշապատից կաթողիկոսական աթոռը փոխադրել Դվին։ Մասնակցել է Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբական պատերազմներին, մի ճակատամարտում էլ վիրավորվել է։ Այստեղ մեր պատմիչը նրան է վերագրում Շահապիվանի ժողովի ղեկավարումը։ Սակայն մեր պատմության մեջ հայտնի է, որ Շահապիվանի ժողովը ղեկավարել է ոչ թե նա, այլ Հովսեփ Հողոցմանցին, որը

կաթողիկոսական տեղապահ էր, հետո էլ կաթողիկոս ճանաչվեց։ Տե՛ս Մ. Օրմանեան, «Հայոց եկեղեցին», Կոստանդնուպոլիս, 1912, էջ 197։ (էջ 357)։

1509. Այստեղ խոսքը վերաբերում է Դվինի 1-ին ժողովին, բայց փաստերը խառնված են։ Նախ՝ Նոր քաղաքը, ինչպես հայտնի է, Վաղարշապատն է, իսկ հիշյալ ժողովը հայոց Բաբկեն 1-ին կաթողիկոսի գլխավորությամբ գումարվել է 506 թվականին Դվինում, ուր այդ ժամանակ արդեն Վաղարշապատից փոխադրված էր կաթողիկոսական աթոռը։ Այս շփոթումը գալիս է նախորդող աղբյուրներից. հմմտ., օրինակ, Հ. Դրասխանակերտցի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913, էջ 62։ Ապա՝ ժողովին մասնակցում էին նաև Վրաստանի ու Աղվանքի կրոնական առաջնորդները։ Պարսկաստանում բնակվող ճշմարտադավան ասորիները որոշ ժամանակ հետո են դիմել Բաբկեն 1-ինին՝ իրենց օգնելու նեստորականության դեմ պայքարելու, և իրենք լիովին ընդունել են ժողովի որոշումները՝ քաղկեդոնական դավանանքի մերժումով։ (էջ 357)։

1510. Աղբյուրները նշում են, որ Բաբկեն 1-ին կաթողիկոսը եղել է Հովհան Մանդակունի կաթողիկոսի աշակերտը և աթոռակալությամբ հաջորդել է նրան։ Բայց սկսած Ղ. Փարպեցուց պատմիչները նրա կաթողիկոսական գործունեության ժամանակը ցույց են տալիս 5 տարի (6 ամ), որը, իհարկե, ձեռագրերի հետագա ընդօրինակման սխալ է։ Այս կաթողիկոսն աթոռակալել է ավելի երկար՝ 490—515 (16) թթ.։ Հմմտ. Մ. Օրմանեան, «Հայոց եկեղեցին», էջ 197, Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հ. 1-ին, Երևան, 1942, էջ 352—353։ (էջ 357)։

1511. Խոսքը Դվինի 554 թվականի ժողովի մասին է։ Սա Դվինի 2-րդ ժողովն էր։ (էջ 357)։

1512. Սա Ներսես 2-րդ կաթողիկոսն է։ Հմմտ. ծան. 236։ (էջ 357)։

1513. Սա Սյունյաց Մակար եպիսկոպոսին հաջորդած Պետրոս եպիսկոպոսն է (6-րդ դար), որ մասնակցել է Դվինի 554 թվականի ժողովին։ Նրան պատմիչը համարում է քերթողահայր Մովսեսի աշակերտը։ Ըստ երևույթին, այս «քերթողահայր Մովսես»-ը ուրիշ է, տարբեր 5-րդ դարի հռչակավոր պատմահայր Մովսես Խորենացուց (հմմտ. Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հ. 3-րդ, էջ 434)։ (էջ 357)։

1514. Սա Մովսես 2-րդ Եղվարդեցի կաթողիկոսն է (հմմտ. ծան. 251), որի գլխավորությամբ Դվինի այս ժողովը գումարվել է 584 թվականին։

1515. Հայոց թվականի սահմանման մասին առաջարկ էր արվել Ներսես 2-րդ կաթողիկոսի օրոք, Դվինի 2-րդ ժողովում, 554 թվականին, իսկ Մովսես Եղվարդեցու օրոք հաստատվեց ու կիրառության մեջ դրվեց Դվինի՝ նրա գլխավորած 584 թվականի ժողովում (այս մասին տե՛ս Մ. Օրմանեան, «Ազգապատում», էջ 571—572)։ (էջ 357)։

1516. Խոսքը Դվինի 608 թվականի ժողովի մասին է։ (էջ 357)։

1517. Տե՛ս ծան. 271։ (էջ 357)։

1518. Խոսքը վերաբերում է հայոց եկեղեցու դավանակցությունից բաժանվելուն։ Վրաց եկեղեցին ընդունեց քաղկեդոնական դավանանք և շարունակեց Աղվանքինը հետո դարձ կատարեց։ (էջ 357)։

1519. Քրիստափորի մասին տե՛ս ծան. 264։ (էջ 357)։

1520. Սա Եղիա 1-ին Արճիշեցի կաթողիկոսն է (703—717)։ Հմմտ. ծան. 304։ (էջ 357)։

1521. Դեպքը տեղի է ունեցել 713 թվականին։ Աղվանքի կաթողիկոս այս Ներսեսը, որ աթոռ էր բարձրացել Սպրամ Թագուհու օգնությամբ, ընդունել էր քաղկեդոնական դավանանք։ Հայոց Եղիա 1-ին կաթողիկոսը արաբ ամիրապետի աջակցությամբ նրան շղթայակապ աքսորում է ու վերջ տալիս քաղկեդոնականությանն Աղվանքում։ (էջ 358)։

1522. Եղը կաթողիկոսի մասին տե՛ս ծան. 332։ (էջ 358)։

1523. Թեոդոպոլսի (Կարնո) այս ժողովը գումարվել է 633 թվականին։ (358)։

1524. Հովհան Մայրագոմեցու մասին տե՛ս ծան. 289։ (էջ 358)։

1525. Մանազկերտի այս ժողովը կայացել է 726 թվականին։ (էջ 358)։

1526. Հովհան Օձնեցու մասին տե՛ս ծան. 347։ (էջ 358)։

1527. Անիի այս ժողովը տեղի է ունեցել 969 թվականին։ (էջ 358)։

1528. Վահան կաթողիկոսի մասին տե՛ս ծան. 788։ (էջ 358)։

1529. Բնագրում՝ կաւճիւ։ Այս բառի մասին տե՛ս ծան. 824։ (էջ 358)։

1530. Սա Ստեփանոս 3-րդ Սևանցի կաթողիկոսն է։ Ընտրվել է 969 թվականին, սակայն կարճ ժամանակ է աթոռակալել։ Մեռել է բանտում։ Նախորդ մատենագիրներից նրա մասին գրել կամ այս կամ այն չափով հիշատակել են Մ. Ուռհայեցին, Մ. Անեցին, Ս. Անեցին, Մ. Այրիվանեցին, Կ. Գանձակեցին, Վարդանը և ուրիշներ։ (էջ 358)։

1531. Սովորաբար նշվում է ամիրսպասալար։ (էջ 358)։

1532. Հմմտ. ծան. 1053։ (էջ 358)։

1533. Հմմտ. ծան. 1053։ (էջ 358)։

1534. Պատմիչն այս տեղը հիշատակում է Սևանի կղզու մոտակայքում, որտեղ այժմ այդ անունով բնակավայր չկա։ Անվան կազմությունից դատելով (Գետ + ակն)՝ կարելի է ասել, որ գետի ելման տեղի մոտ էր։ Իսկ լճից ելնող միակ գետը Հրազդանն է։ Ուրեմն ընկած պիտի լիներ Գոմաձորի մոտ, թերևս այժմյան Սևան քաղաքի տարածքի մի մասում։ (էջ 358)։

1535. Բնագրում՝ սիւճճոդոս։ Սիւճճոդոս-ը հունարեն բառ է(σύνοδος), բայց հայերենին է անցել ասորերենի միջնորդությամբ, նշ. «ժողով, մանավանդ պիտական, եկեղեցական ժողով». հայերենում ստացել է եկեղեցական մեծ ժողովի իմաստ (Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հ. 6-րդ, էջ 258)։ (էջ 358)։

1536. Այստեղ փարիզյան հրատարակությունն ունի fուսեի, մոսկովյանը՝ ուսեի։ Դրանք ձեռագրական տարբերակներ են, որոնցից ճիշտ է ընտրված fուսեի-ը։ Բառը պարսկերենից է գալիս (kūs) և նշանակում է «1. աքացի տալ, 2. խմբով գնալիս ուսով իրար զարնվել» (Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հ. 6-րդ, էջ 1532)։ (էջ 360)։

1537. Սա Օրիգենեսի աշակերտ Դիոնեսիոս Աղեքսանդրացին է։ (էջ 360)։

1538. Նկատի ունի Հակոբ Մծբնացուն։ (էջ 360)։

1539. Այս տոները հայոց եկեղեցին տոնում է անշարժ տոմարով։ Բայց ավետիսի տոնը ապրիլի 7-ին է։ (էջ 360)։

1540. Այս դեպքում նավակատիքը բուն տոնի նախօրեի տոնական արարողություն է։ (էջ 360)։

1541. Բնագրում՝ նեննետիկոն, նշ. «միաբանական թուղթ, ձեռնարկ միաբանության»։ Հունարեն է՝ ἑνωτικὸν «միարար, միացնող»։ Այսպես էր կոչվում Զենոն կայսեր 482 թվականի հրովարտակը, որով կայսրն ուզում էր հաշտեցնել քաղկեդոնականներին և ոչ քաղկեդոնականներին (Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հ. 4-րդ, էջ 251—252)։ (361)։

1542. Բնագրում՝ յեսկար։ Բառը հայերենին է անցել պահլավերենից (syātkār), որտեղ նշանակել է «գրվածք, գիրք, տետր, հուշագիր, զեկուցագիր»։ Հայ մատենագրության մեջ գործածվել է «ձեռագիր, մուրհակ, երդման թուղթ, խոստովանագիր, նամակ, զեկուցագիր, դատավճիռ» նշանակությամբ։ (էջ 361)։

1543. Սրանք պատմիչի ժամանակակից, նրա իշխանությանը ենթակա եպիսկոպոսներ են եղել։ Տեր-Գրիգորը Հովհաննես 9-րդ եպիսկոպոսի աղգականն էր։ (էջ 362)։

1544. Հավուց թառի վանքը գտնվում է Ագատ գետի ձախ ափի լեռան գագաթին, Գառնիից արևելք։ Հայտնի է 11-րդ դարից։ Միջնադարյան հայ մշակութային և կրոնական նշանավոր կենտրոններից։ Շաղկել է 12—14-րդ դարերում։ Քանդվել է 1679 թվականի երկրաշարժից։ Հետագայում նորոգումներ ու կառուցումներ են եղել։ (էջ 362)։

1545. Սա Մխիթար Գոշի աշակերտ, նշանավոր գիտնական-մատենագիր վանական վարդապետն է։ Նրա մասին գրել է իր աշակերտ Կիրակոս Գանձակեցին։ (էջ 362)։

1546. Գողթնի այս եպիսկոպոսի աթոռակալության ժամանակը Ղ. Ալիշանը նշում է 1280—1300 թթ. («Սիսական», էջ 312)։ (էջ 363)։

1547. Սա Գլաձորի համալսարանի հռչակավոր ուսուցչապետ և տնօրեն Եսայի Նչեցին է։ Նրա գործունեությունը ծավալվել է 1284—1338 թթ.։ Ունեցել է բազմաթիվ աշակերտներ։ Թողել է մատենագրական հարուստ ժառանգություն։ (էջ 363)։

1548. Այս Դավիթ վարդապետը Գլաձորի համալսարանի գիտնական դասախոսներից է։ Պաշտոնակից է եղել Եսայի Նչեցուն։ Համարվել է ուսուցչապետ։ (էջ 363)։

1549. Սա Ստեփանոս Օրբելյան պատմիչի եղբայր մեծ իշխան Սիկոսն է։ (էջ 363)։

1550. Սա Օրբելյան Լիպարիտ 2-րդն է, Ստեփանոս Օրբելյան պատմիչի հորեղբոր որդին։ (էջ 363)։

1551. Այս Իվանեն պատմիչ Ստեփանոս Օրբելյանի հոր՝ Տարսայիճի եղբայրն է։ (էջ 363)։

1552. Այստեղ շփոթ կա։ Պապաքը նշանավոր Պռոշ իշխանի որդին է (ենթադրվում է՝ մեռել է 1298/9 թվականին), իսկ էալին (վախճ. 1317 թվականին)՝ ոչ թե որդին, այլ թոռը։ Տե՛ս Գ. Հովսեփյան, «Խաղրակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ», մասն 1-ին, էջ 145, այլև՝ Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հ. 4-րդ, էջ 225—226։ (363)։

1553. Նկատի ունի Հովհաննես ավետարանիչին։ (էջ 363)։

1554. Այս Աթանասի մասին հմմտ. ծան. 1500։ (էջ 364)։

1555. Խոսքն Աբաղայի որդի Արղուն իլխանի մասին է։ Սա իրոք իլխան իշխել է 1284—1291 թթ.։ (էջ 366)։

1556. Այսպես էին կոչվում մոնղոլ-թաթարները՝ կռվաբարո և վարժ նետածիգ լինելու պատճառով։ (էջ 366)։

1557. Հուլավուն որպես Առաջավոր Ասիայի և Իրանի դան իշխել է 1256—1264 թթ.։ Հմմտ. նաև ծան. 1355։ (էջ 366)։

1558. Աբաղան որպես իլխան իշխել է 1265—1282 թթ.։ (էջ 366)։

1559. Արղուն դանը անմիջապես հաջորդել է ոչ թե իր հայր Աբաղային, այլ՝ հորեղբայր Թագոդարին (Թաքոդոր), որին ինքն էր սպանել։ Թագոդարը թուրքանալով կոչվում էր Ահմեդ խան, որը մեծ հալածանքներ սկսեց քրիստոնյաների դեմ։ Տե՛ս Կ. Շահնազարյանցի 151-րդ ծանոթագրությունը սույն երկի փարիզյան հրատարակության 2-րդ հատորում, էջ 362։ Թագոդարն իշխել է միայն 2 տարի՝ 1282—1284 թթ.։ (էջ 366)։

1560. Այս գեպքերի հանգամանքների մասին տե՛ս «История монголов по арм. источникам». Выпуск первый, ծան. 49, էջ 90—91։ (էջ 366)։

1561 Այս Սադագոլան (Սաադ—էդ—Դոլա) տնօրինում էր ոչ միայն Հայաստանի, այլև մյուս ենթակա երկրների՝ Պարսկաստանի, Արաբիայի, Ասորիքի ու Վրաստանի հարկային և տնտեսական մյուս գործերը։ (էջ 366)։

1562. Այսինքն՝ ընդհանուր 1291 թվականին։ (էջ 367)։

1563. Բնագրում՝ դրամ և դահեկան։ Այստեղ երկուսը միասին նշանակում են «փող», որպես և թարգմանեցինք։ Դրամ բառը մեր լեզվում նշանակում է «փող», և «կշռի փոքր միավոր, երկու ունկի»։ Միջին հայերենում վերջին իմաստով գործածվել է և տրեմ ձևով։ Ունեցել է նաև դրամական որոշակի միավորի նշանակություն՝ որոշակի արժեքով։ Հայերենին անցել է իրանյան լեզուներից. պահլավերեն՝ dram, պարսկերեն՝ diram։ Ծագումով հունարեն է, որ նշանակել է «1. մի փոքր կշիռ, 2. մի փոքր դրամ՝ մոտ մեկ ֆրանկի արժեքով»։ Լեզուներին անցել է միջին* draxma*, *drahma ձևերից։

Դահեկան-ը որոշակի արժեքի դրամի անուն է եղել, ապա նշանակել է «դրամ»։ Գալիս է պարսկերենից, որ բուն նշանակում էր «դարեհական, Դարեհի նշան կրող դրամ»։ Հ. Աճառյանն այս ստուգաբանությամբ մերժում է մյուս ստուգաբանությունները, որոնց մեծ մասը բխեցվում է իրանյան «տասը» նշանակող dah բառից (Հայերէն արմատական բառարան, հ. 2-րդ, էջ 383)։ (էջ 367)։

1564. Բնագրում՝ քարտէս (քարտիսէ)։ Բառը հունարեն է χάρτης, որտեղ նշանակել է «թղթի կամ մագաղաթի թերթ, գրվածք, գրություն, նամակ»։ Այստեղ «թուղթ» իմաստով է։ (էջ 367)։

1565. Սրավի դաշտը պետք է լինի Ատրպատականում, Արտերիլ և Թավրիզ քաղաքներից ոչ շատ հեռու։ Հիշյալ քաղաքների միջև եղած տարածքում, դեպի հարավ ընկած է Սրավ (կամ Սեբաթ) անունով քաղաք (տե՛ս «История монголов по армянским источникам», Выпуск первый, ծան. 52, էջ 93—94)։ (էջ 368)։

1566. Բայտուն Հուլավու դանի հինգերորդ որդու որդին էր։ (էջ 368)։

1567. Հմմտ. ծան. 96։ (էջ 368)։

1568. Բնագրում պահպանվել (այստեղ Բիֆլիսյան հրատարակությունը վրիպակով ունի պախազ, էջ 471)։ Տե՛ս ծան. 1351։ (էջ 368)։

1569. Հ. Աճառյանը գրում է, որ մանղլա, անշուշտ, թաթարական բառ է և ենթադրում է, որ հատուկ անուն կամ մի անորոշ տիտղոս պիտի լինի,

Այդպիսով բառիմաստը չի նշվում (Հայերէն արմատական բառարան, հ. 4-րդ, էջ 822)։

Ընդունելի է Ք. Պատկանյանի բացատրությունը, ըստ որի դա մոնղոլերեն բառ է (manplay), նշ.«лоб, чело, передовое войско» (История монголов по арм. источн. Выпуск первый, էջ 58, տողատակի ծան.)։ (էջ 369)։

1570. Ղազան ղանը (իլխանը) իշխել է 1295—1304 թթ.։ (էջ 369)։

1571. Այս Առաքելոց վանքը գտնվում է պատմական Արտազ գավառում, այժմյան Մակու քաղաքից (Իրան) 20 կիլոմետր հարավ-արևելք։ Հայտնի է նաև Թադեի վանք անունով։ Ավանդությունը նրա հիմնադրումը վերագրում է Թադեոս առաքյալին (մ. թ. 1-ին դար)։ Եղել է կրոնական կարևոր կենտրոն։ Այժմ պահպանվում է և ուխտատեղի է։ (էջ 370)։

1572. Խոսքը Հեթում 2-րդ թագավորի մասին է։ Համմ. ծան. 1450։ (370)։

1573. Այսինքն՝ ընդհանուր 1295 թվականին։ (էջ 371)։

1574. Ք. Պատկանյանը ծանուցում է, որ այս Հրեն Հերաթ քաղաքն է (Исотрия монголов по арм. ист. Выпуск первый, էջ 61)։ (էջ 371)։

1575. Այս Ասլանը Չինգիզխանի Ջուչիքասար եղբոր սերունդներից էր։ (371)։

1576. Դա տեղի է ունեցել 1296 թվականին։ (էջ 372)։

1577. Սուքան Հուլավու ղանի որդի Ճաշմուտի երրորդ որդին էր, որը ըմբոստացել էր Ղազան ղանի դեմ, միացել խռովարարներին, որոնք ուզում էին ղանին սպանել ու նրա տեղը դնել Սուքային։ (էջ 372)։

1578. Կ. Շահնազարյանցը Մեծևուլեթ տեղը համարում է վրացական Օսեթիան (Հարավային Օսեթիան) կամ Արագվի գետի ձորը (տե՛ս սույն երկի փարիզյան հրատարակությունը, հ. 2-րդ, ծան. 177, էջ 365)։ Ճիշտ տեղը Արագվի գետի ձորն է, ինչպես նշում է ակադ. Ս. Տ. Երեմյանը (անձնական հաղորդում), Վրաց მთიულეთი (mtiuleti —Մթիուլեթի), որ բառացի նշանակում է «լեռնաստան»։ (էջ 372)։

1579. Այս հատուկ անունը տպագիր բնագրում ներկայացված է աղավաղումով՝ Մուղէ նախէ (փարիզյան հրատ., հ. 2-րդ, էջ 224), Մուղէնախէ (մուկովյան հրատ., էջ 348)։ Կ. Շահնազարյանցը, նկատի ունենալով հեղինակի բացատրությունը, Մուղէ նախէ այլընթերցման հիման վրա նշել է, որ վրացերեն «տե՛ս» նշանակող բառաձևը մօսի (մոդի) է և ոչ թե մուղէ։ Իսկ վերջինս ենթադրում է վրաց մուխի «կաղնի» բառից (տե՛ս անդ, էջ 365, ծան. 178)։ Ճիշտ ձևին ավելի մոտ է մոսկովյան հրատարակության տարբերակը, բայց սա էլ պիտի լինի դ-ով՝ Մուդէնախէ (Մօդէնախէ), որպիսի ուղղման առաջարկ է արել Ն. Բյուլանդացին՝ բացատրելով որպես վրացերեն «ե՛կ և տե՛ս» (Նախնիք, էջ 217, մանրաժապավեն)։ Իսկ Մ. Բրոսեն ժամանակին գրել է, թե հիշյալ անունը պիտի լինի Մողանախէ. վրացերեն է՝ მოდანახე (տե՛ս ֆրանսերեն թարգմ., էջ 263, տողատակի 2-րդ ծան.)։ Ճիշտ են Ն. Բյուլանդացու առաջարկը և բացատրությունը։ Այստեղ վրացերեն երկու բայերի հրամայական ձևերն են՝ მოდი «եկ» և (მნახე (mnaxe)—մնախե) «տե՛ս։ Անտիկ բ։րդի անուն է։ (էջ 372)։

1580. Ռանի դաշտ, այսինքն՝ Առանի դաշտը, որը տվյալ դեպքում նույն Մուղանի դաշտն է։ (էջ 373)։

1581. Սա Սյունյաց Հովհաննես 8-րդ եպիսկոպոսի եղբորորդի և նրա հաջորդ Հայրապետն է։ (էջ 373)։

1582. Բնագրում փսաղտ։ Համմ. ծան. 327։ (էջ 373)։

1583. Բնագրում՝ աճագաճոս։ (Համմ. ծան. 325)։ (էջ 373)։

1584. Ղ. Ալիշանն առաջինն է նկատել, որ այս ներբանը «Անշուշտ, Գլաձորի (Գայլաձոր վանքէն) անուանեալ վարդապետն է» (Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 492, տողատակի 6-րդ ծանոթագրությունը)։ Հոլակավոր գիտնական է եղել։ Մուշում ծնված լինելու պատճառով կոչվել է նաև Մշեցի, Տարոնեցի։ Սովորել է տեղի Առաքելոց կամ Ղազարա վանքում։ Ապա գալով Արևելյան Հայաստան՝ աշակերտել է Վարդան վարդապետին։ Դարձել է Գլաձորի համալսարանի հիմնադիրը, ուսուցչապետն ու տնօրենը։ Այստեղ նշան աշակերտել են Ծաւալի Նշեցին (որը հետո փոխարինեց Նբրան), Ստեփանոս Օրբելյանը (ինչպես գրում է հենց ինքը), Հովհաննես Արճիշեցին, Մխիթար Սասնեցին։ Վախճանվել է 1284 թվականին։ Մտել է ցասմաուրքի մեջ։ (էջ 373)։

1585. Նկատի ունի Հայոց Հակոբ 1-ին կաթողիկոսին։ (Համմ. ծան. 1201)։ (էջ 374)։

1586. Նկատի ունի Կիլիկիայի Հայոց Լևոն 3-րդ թագավորին։ (Համմ. ծան. 1416)։ (էջ 374)։

1587. Հակոբ 1-ին կաթողիկոսը վախճանվել էր 1286 թվականի փետրվարի 12-ին։ (էջ 374)։

1588. Տե՛ս ծան. 112։ (էջ 374)։

1589. Բնագրում՝ զսիգելն։ Տե՛ս ծան. 682։ (էջ 375)։

1590. Արատեսի նշանավոր վանքն է Եղեգնաձորի շրջանում։ Տե՛ս ծան. 1021։ (էջ 375)։

1591. Սա շարժական՝ տեղից տեղ փոխադրվող փոքրիկ նկեղեցի կամ մատուռ էր, որ Հռոմի պապը կրոնավորների հետ ուղարկում էր կաթոլիկական դավանանքի տարածման համար։ Համմ. Ղ. Ալիշան, «Հայապատում», էջ 483, տողատակի 4-րդ ծանոթագրությունը։ (էջ 376)։

1592. Բնագրում՝ կաթողիկոսն Նեստոր։ Սա հավանաբար ասորի նեստորականների կաթողիկոսն էր, որ նստում էր Մարաղայում։ Իր գրքում Մարաղայի՝ որպես կաթողիկոսի նստավայրի մասին հիշատակում է և Ս. Օրբելյանը (գլ. 2)։ (էջ 376)։

1593. Ժամհարը մարդկանց եկեղեցի հրավիրելու նպատակին ծառայող գործիք էր՝ զանգակ կամ մի կտոր տախտակ՝ փոքրիկ մուրճով. նրանով զանգահարում կամ փոքրիկ մուրճով տախտակին խփելով ձայն էին հանում և ուշադրություն գրավում։ Ժամհար էր կոչվում եկեղեցու զանգերը հնչեցնող և ժամ հրավիրող անձը։ (էջ 376)։

1594. Ք. Պատկանյանը մատնացույց է անում մեկ այլ աղբյուր, ըստ որի Արղունի հիշյալ որդին վերանվանվել է Նիկոլայուս (История монголов... Выпуск первый, էջ 97—98, ծա. 59)։ (էջ 376)։

1595. Ք. Պատկանյանը այս անունը ստուգաբանել է պարսկերենով՝ xarbanda «հին ծառայող»։ Նշվում է, որ հաճախ այդ անունը փոխարի-

նել են ավելի բարեհունչ ձևով՝ Խոդաբենդե, որ նշանակում է «աստծուն ծառայող» (История монголов. Выпуск первый, էջ 98, 59-րդ ծանոթագրության շարունակությունը)։

Իսկ Կ. Շահնազարյանցը Ս. Օրբելյանի սուն երկի փարիզյան հրատարակության բնագրում Խարբանդա անվան դիմաց փակագծում որպես բացատրություն գրել է ծառայ Աստուծոյ (հ. 2-րդ, էջ 231)։ (էջ 376)։

1596. Անունն այս ձևն է ընդունել անգլերեն հնչումից՝ sir charles (Համմտ Ղ. Ալիշան, «Հայապատում», էջ 493, տողատակի 8-րդ ծանոթագրությունը)։ (էջ 376)։

1597. Երջի բուրջի արտահայտությունը, որով անվանել են Քեզաթուին, գրված է եղել նրա բաց թողած թղթադրամների վրա։ Ուսումնասիրողները տարբեր բացատրություններն են տվել։ Հավանական բացատրությունը Բյուրնուֆինն է, ըստ որի այդտեղ տիբեթերեն երկու բառեր են՝ արաբական տառադարձությամբ և նշանակում են «թանկարժեք ադամանդ»։ Այս մասին տե՛ս Ք. Պատկանյանի համապատասխան ծանոթագրությունը «История монголов по армянским источникам». գրքի առաջին պրակում (էջ 98, ծան. 60)։ (էջ 376)։

1598. Ս. Օրբելյանի սուն երկի մոսկովյան հրատարակության մեջ այս նախադասությունից պակասում է «ի չոչնել մեր զխաչ զառաջեաւ ունիլ և բարձրագոյն» մասը։ Փարիզյանն այստեղ համընկնում է № 6271 ձեռագրին, որն ունի մոսկովյանից պակասող այդ մասը (անդ. էջ 317 բ)։ (էջ 376)։

1599. Խոսքը Փիլիպե 1-ին Սյունյաց մեծ իշխանի մասին է (9-րդ դար)։ (էջ 376)։

1600. Խոսքը Տեր-Դավիթ 2-րդ եպիսկոպոսի մասին է։ (էջ 376)։

1601. Սա Սյունյաց Տեր-Հովհաննես 7-րդ եպիսկոպոսն է։ Տես ծան. 768։ (էջ 376)։

1602. Խոսքը Սյունիքի Սմբատ 2-րդ թագավորի մասին է։ (էջ 376)։

1603. Տաթևի այս ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կից է Պողոս-Պետրոս եկեղեցուն և սրահ-գավիթին։ Այս երրորդ անգամվա կառուցումը ավարտվել է 1295 թվականին։ Սա վերակառուցում չի համարվում, որովհետև, ինչպես պատմիչն է նշում, մինչ այդ ավերված է եղել մինչև հատակը, ուստի և հիմնովին կառուցվել է Ս. Օրբելյանի կողմից։ Այստեղ էլ մետրոպոլիտ-պատմիչը թողել է ՉԽԴ (= 744 + 551 = 1295) թվականով վիմական արձանագրություն՝ արևմտյան մուտքի ճակատակալ կամար քարի վրա, 8 տող։ Սույն արձանագրությունը տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 2-րդ, էջ 25, արձ. № 41, լուսանկարը՝ տախտակ 5-րդ, № 19։ (էջ 377)։

1604. Բնագրում՝ զբարամն։ Հայերենն այսպիսի բառ չունի։ Կ. Շահնազարյանցը գտնում է, որ դա ֆրանսերեն bras բառից է, իսկ վերջինս էլ հունարենից է (տե՛ս սույն երկի փարիզյան հրատարակությունը, հ. 2-րդ, 184-րդ ծանոթությունը, էջ 369)։ Ֆրանսերենում bras նշանակում է «բազուկ»։ Բնագրում ունենք զբարամն աչ բազկին, որի թարգմանությունն ըստ այդմ պիտի լիներ «աջ բազկի բազուկը», որպիսին անպատշաճ է։ Ուստի կարելի է բնագրի բազուկ-ը թարգմանել «թև», և կստացվեր «աջ թևի բազուկը»։ Մ. Բրոսեն թարգմանել է մոտավոր իմաստով՝ un fragment de son bras, այսինքն« նրա բազկի մի կտորը» (անդ, էջ 267)։ (էջ 377)։

1605. Արիտը ոչ մեծ գյուղ է եղել։ Տե՛ս ծան. 676։ (էջ 377)։

1606. Բնագրում՝ բուտփարիսա։ Պարսկերեն է՝ (butparast), նշ. «հրապաշտ»։ Կազմված է but «կուռք» և parast «պաշտել» բառերից։ Դիցապաշտ ձևով ճիշտ նշանակությունը Կ. Շահնազարյանցը դրել է փակագծում (տե՛ս սույն երկի փարիզյան հրատարակությունը, հ. 2-րդ, էջ 233)։ (էջ 377)։

1607. Բնագրում՝ աթաշփարիսա։ Պարսկերեն է՝ ātašparast նշ. «կրակապաշտ»։ Կազմված է ataš «կրակ» և «parast» «պաշտել» բառերից։ Կ. Շահնազարյանցը ճիշտ բացատրությունը «կրակապաշտ» դրել է փակագծում (տե՛ս սույն երկի փարիզյան հրատարակությունը, հ. 2-րդ, էջ 233)։ (էջ 377)։

1608. Այսինքն՝ ընդհանուր 1297 թվականին։ (էջ 377)։

1609. Սա Խաղբակ 1-ինի որդի Դլեն իշխանն է (11-րդ դար)։ (էջ 378)։

1610. Իշխանաց իշխան Զալալի մասին տե՛ս ծան. 1391։ (էջ 379)։

1611. Այսինքն՝ ընդհանուր 1294 թվականը։ (էջ 380)։

1612. Մեկ հոբելյանը 50 տարի էր։ Ըստ այդմ՝ հայոց թվականության 743-րդ տարին ընկնում է 15-րդ հոբելյանին։ (էջ 380)։

1613. Քեղաթու զանը փոխարինել էր իր եղբայր Արղունին՝ իշխելով 1291—1295 թթ.։ (էջ 380)։

1614. Սա հայոց Գրիգոր 7-րդ Անավարզեցի կաթողիկոսն է (1293—1307 թթ.)։ (էջ 380)։

1615. Խոսքը Վրաստանի Դեմետրե 2-րդ թագավորի որդի Դավթի մասին է, որին Քեղաթու զանը Արևելյան Վրաստանի թագավոր էր հաստատել 1293 թվականին։ (էջ 380)։

1616. Հիշեցնում է Ավետարանի գրույցը նվիրատվության գանձանակի մեջ աղքատ որբևայրու կողմից դրամ գցելու վերաբերյալ (Ղուկ., ԻԱ, 2—3)։ (էջ 382)։

1617. Այս Չիվա և ուրիշ գյուղերի նվիրման մասին Ս. Օրբելյանը վիմական ընդարձակ արձանագրություն է թողել, որը փորագրված է Նորավանքի ս. Կարապետ եկեղեցու հյուսիսային պատին, ներքուստ, 22 տող՝ ՉխԷ (= 747 + 551 = 1298) թվականով (տե՛ս «Դիվան...», պրակ 3-րդ, էջ 215—216, արձ. № 685)։ (էջ 383)։

1618. Օրբելյանը Արատեսի վանքն իր կալվածքներով Նորավանքի վրա հաստատելու մասին թողել է վիմական արձանագրություն, որը փորագրված է Արատեսի վանքի գմբեթավոր եկեղեցու հարավային պատի հարավային անկյունում։ Թվականը, սակայն, եղծված է (տե՛ս «Դիվան...», պրակ 3-րդ, էջ 125, արձ. № 363)։ (էջ 383)։

1619. Բնագրի մոսկովյան հրատարակության մեջ այս մասում աղճատում կա։ Սկսած փարիզյան հրատարակության ամենայն ջանի արտահայտությունից մինչև ի վայելումն և ի ժառանգութիւն արտահայտությունը մասը պակասում է։ Թարգմանել ենք լրացնելով փարիզյան հրատարակությունից։ (էջ 383)։

1620. Այստեղ Քարկոփը հիշվում է որպես գյուղ, որը նվեր է տրվել Ամադուի Նորավանքին։ Գյուղը հարկացուցակում նշված չէ։ Հայտնի է այս անունով վանքը, որի հիմնադրման, կառուցման, կործանման ու վերաշին-

ման մասին Օրբելյանը պատմում է իր երկի 44-րդ (ԽԴ) գլխում։ Դատելով պատմիչի հաղորդածից՝ կարելի է ենթադրել, որ այդ գյուղը գտնվել է այժմյան Սղնախ ձորի շրջանի հարևանությամբ։ Ա. Օ. Խաչատրյանը գրում է, որ հիշյալ գյուղի ավերակները գտնվում են Խոչիկ գյուղի մոտի Քարկոփ վանքից հյուսիս-արևելք եղող «Պարտավոր խաչ» կոչված վայրում (Վայոց ձորի մի շարք պատմական բնակավայրերի տեղադրության մասին. «Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 4, էջ 110)։ (էջ 383)։

1621. Տպագիր բնագրում այստեղ նորավանքի նվիրատվությունների մասին խոսվում է եզակի ձևով՝ «նա», «լիցի» և այլն։ Մենք դարձրինք հոգնակի՝ նկատի ունենալով, որ և՛ նախորդ հատվածներում, և՛ այս հատվածի վերջին մասում նշվում են երկուսը՝ Արատեսը և Քարկուրը։ Այդ տեղերի նվիրման մասին պարզորոշ նշված է նաև Ս. Օրբելյանի Չնչ թվականի արձանագրության մեջ («Դիվան...», պրակ 3-րդ, էջ 216)։ (էջ 383)։

1622. Հինունքը զատիկից մինչև հոգեգալստյան տոնը (պենտեկոստե) ընկած հինօրյա ժամանակամիջոցն է։ (էջ 384)։

1623. Կրկնազատիկը կամ երկրորդ զատիկը զատիկի կիրակին օրվան հաջորդող կիրակին է։ (էջ 384)։

1624. Ամբիծքը հոգևհանգստի արարողություն է։ Ենթադրվել է, որ անվանումը գալիս է «Երանելի են ամբիծք ի ճանապարհի» տաղմոսի ամբիծք բառից։ (էջ 384)։

1625 Տե՛ս ծան. 723։ (էջ 384)։

1626. Պատմիչի հարազատ կրոսեր եղբայր այս Փախրադոլան վանքն է վել է 1296 թվականին։ Նրա շիրիմը գտնվում է Ամաղուի Նորավանքի. ս. Գրիգոր փոքրիկ եկեղեցում (Սմբատի դամբարանում)։ Տապանաքարն ունի հետևյալ տողում արձանագրություն, որով հավաստվում է, որ դա տապանն է «Հրաշքոս տող արձանագրության Փախրադուլին»։ Կրում է Չնչ (=745+551=1296) թվականը (տե՛ս «Դիվան...», պրակ 3-րդ, էջ 236—237, արձ. № 774)։ (էջ 385)։

1627. Գրիգորիս եպիսկոպոսին վերաբերող այս լրացուցիչ բացատրությունը փարիզյան հրատարակության մեջ միացված է գլխի վերնագրին, իսկ մոսկովյան հրատարակությունում թեև այդպես չի միացված, բայց իր տեղում էլ չէ, ենթավերնագրի տեսք ունի։ (էջ 385)։

1628. Փարիզյան հրատարակության մեջ Գրիգորիս եպիսկոպոսի աթոռակալման տարիները նշված են 46, իսկ մոսկովյանում՝ 47։ (էջ 385)։

1629. Մեր պատմիչը Սյունյաց եպիսկոպոսների մեջ 6-րդն էր, որ կրում էր Ստեփանոս անունը, իսկ Նորավանքում նստած բոլոր եպիսկոպոսներից 7-րդն էր։ Տաթևի և Նորավանքի աթոռների միացումով, որպես Սյունիքի ամբողջական թեմի առաջնորդ 53-րդն էր։ (էջ 387)։

1630. Կ. Շահնազարյանցը սույն երկի փարիզյան հրատարակության մեջ ծանուցում է, որ Գյումն անմիջապես չի հաջորդել Հովսեփ 1-ինին։ Իրականում սրան հաջորդել է Մելիտե Մանազկերտցին՝ աթոռակալելով 5 տարի, ապա նրան էլ հաջորդել է Մովսես 1-ին Մանազկերտցին։ Գյումը հաջորդել է վերջինիս (անդ, հ. 2-րդ, էջ 370)։ Ս. Օրբելյանի ցուցակում Մելիտեն և Մովսես 1-ինը չեն նշված։ Այդ ցուցակը կազմելիս Ս. Օրբելյանը

հետևել է ուրիշների, որոնք հիշյալ երկու կաթողիկոսներին անտեսում են։ Մինչդեռ դրանք պետք է լինեն ցուցակում։ Մ. Չամչյանից սկսած դրանք նշվում են։ Այդ կաթողիկոսներին անտեսելու պատճառին անդրադարձել է Մ. Օրմանյանը իր «Ազգապատում» աշխատության մեջ (Կոստանդնուպոլիս, 1912, էջ 410—411)։ Մ. Բրոսեն իր ֆրանսերեն թարգմանության մեջ ավելացրել է (անդ, էջ 275)։ Գյումից հետո Մ. Բրոսեն նշում է Քրիստափոր 1-ինին (նույն տեղում)՝ 475—480 թվականներով, որը Ս. Օրբելյանի ցուցակում հիշատակված չէ։ Սակայն ըստ Մ. Օրմանյանի Քրիստափոր 1-ինը Քրիստափոր Տիրատիջցին է, որի կաթողիկոսության ժամանակը նրա կարծիքով «պետք է պատշաճեցուին 539—է 456 տարիներուն» (Ազգապատում, էջ 529)։ (էջ 387)։

1631. Բաբկեն կաթողիկոսի (նաև ուրիշների) աթոռակալման այս տարիները և սկզբնաղբյուրներում նրա գործունեության ժամանակին վերաբերող մյուս տվյալները անհամապատասխանություն ունեն։ Այստեղ թողնում ենք նույնությամբ։ (էջ 387)։

1632. Մ. Բրոսեն սույն երկի իր ֆրանսերեն թարգմանության մեջ Մովսես 2-րդից հետո ավելացնում է կաթողիկոսական փոխանորդ Վրթանեսին՝ 14 տարվա աթոռակալման նշումով. միաժամանակ նա Մովսեսի աթոռակալման տարիներն իջեցնում է 30-ի (անդ, էջ 275)։ Վերջին դեպքում իրավացի է։ (էջ 388)։

1633. Մովսես 2-րդ կաթողիկոսի աթոռակալման 4-րդ տարին լինում է 574 թվականը, իսկ այդ ժամանակ այդպիսի բան չի եղել։ Նկատված է, որ Անդրեաս Բյուզանդացու կազմած զատկական տոնացույց ապրատակների ժամանակաշրջանը լրանալու կապակցությամբ առաջացած շփոթը վերացնելու համար տոմարի նորոգման որոշում է կայացվել և Թեոդոս Հայկական թվական ընդունելու մասին առաջարկություն է մտցվել ոչ թե Մովսեսի (Մովսես 2-րդ Եղվարդեցու), այլ Ներսես 2-րդ Բագրեւանդացու (Աշտարակեցու) օրոք (Համմտ. Մ. Օրմանեան, «Ազգապատում», էջ 555)։ Իսկ Ներսես 2-րդը աթոռակալել է 448—457 թթ.։ Մովսես 2-րդի օրոք 584 թվականից պաշտոնապես կիրառության մեջ են դրվել տոմարական փոփոխությունները։ Համմտ. նաև ծան. 251։ (էջ 388)։

1634. Բնագրում՝ յիսն թուականին։ Պետք է հասկանալ «հիններորդ տարում»։ (էջ 388)։

1635. Խոսքը վերաբերում է Հաս Աղեքսանդրացու ղեկավարությամբ կազմված տոմարական նոր տոնացույցին, որն ընդգրկում էր 532 տարվա ժամանակաշրջան, այդ պատճառով էլ կոչվում էր Եիննգհարյուրյակ։ (էջ 388)։

1636. Նման հաշվումների ժամանակ հռոմեական տոմարի համեմատությամբ մեզանում բացակայում էր 2 տարվա ժամանակ։ Այսպիսով ստացվում է 551 տարի, որը և կազմում է հայկական թվականության տարբերությունը։ (էջ 388)։

1637. Մոսկովյան հրատարակությունը Յովար-ի դիմաց ունի Յակոբ։ (էջ 388)։

1638. Մ. Բրոսեն այս Գրիգոր 2-րդից հետո հիշատակում է ուրիշ չորս անուններ՝ Գեորգ, Սարգիս, Թեոդորոս, Պողոս (անդ, էջ 276—277), որոնք,

սակայն, Ս. Օրբելյանը չունի։ Դրանք Գրիգոր 2-րդի (Վկայասեր) իշխման ժամանակ հանդես եկած հակաթոռ կամ աթոռակից և մերժված կաթողիկոսներ են, թվով 5, որոնցից 1-ինին (Բարսեղին) Մ. Բրոսեն չի նշել։ Կաթողիկոսների հիմնական ցանկից դուրս բոլորին հիշատակում է Մ. Օրբանյանը։ Դրանք են՝ Գեորգ 3-րդ Լուեցի, Սարգիս Հոնեցի, Թեոդորոս Ալաֆոսիկ, Բարսեղ 1-ին, Պողոս Վարագեցի (տե՛ս նրա «Հայոց եկեղեցին...», Կոստանդնուպոլիս, 1912, էջ 200)։ (էջ 389)։

1639. Մ. Բրոսեն սուլն երկի իր ֆրանսերեն թարգմանության մեջ բնագրի համեմատությամբ զգալի փոփոխություններ է կատարել կաթողիկոսների աթոռակալման տարիների տվյալների մեջ, որոնցից ոչ բոլորն են ընդունելի։ Ավելի վստահելի են Մ. Օրբանյանի բերած տվյալները, որոնք ընթերցողը կարող է տեսնել նրա «Ազգապատում» և «Հայոց եկեղեցին» աշխատություններում։ (էջ 389)։

1640. Բնագրում՝ լսողք։ Քանի որ շարադրվածը պիտի կարդացվի, ուստի դա նպատակահարմար համարեցինք թարգմանության մեջ արտահայտել ընթերցողները բառաձևով։ (էջ 391)։

1641. Ղազան ղանի իշխման տարիների մասին տե՛ս. ծան. 1570։ (էջ 392)։

1642. Վրաց այս Դավիթ թագավորը Դեմետրե 2-րդի որդին է։ Գահ էր բարձրացել 1293 թվականին։ (էջ 392)։

1643. Այսինքն՝ հայոց Լևոն 3-րդ թագավորի որդի Հեթում 2-րդ թագավորը։ Համմ. ծան. 1450։ (էջ 392)։

1644. Այսինքն՝ պատմիչի ավագ եղբայրը, որ 1290 թվականին իշխանությամբ հաջորդել էր հորը՝ Տարսայիճին և իշխել մինչև 1300 թվականը։ (էջ392)։

1645. Խոսքը Գրիգոր Անավարզեցի հայոց կաթողիկոսի մասին է։ Համմ. ծան. 1490։ (էջ 392)։

1646. Սա Աղվանքի Ստեփանոս 4-րդ կաթողիկոսն է, որ հաջորդեց Ներսես 2-րդին՝ 1261 թվականից։ (էջ 392)։

1647. Տաճկերոս հոբելյանը հավասար է 700-ի, որին գումարելով 46՝ ստանում ենք 746, և սա ըստ հայոց թվականության (+551) լինում է 1297։ Հենց սա էլ մեր պատմիչի երկի գրության թվականն է։ (էջ 392)։

1648. Քանի որ հին Հունաստանում ավանդաբար օլիմպիական խաղերը տեղի էին ունենում 4 տարին մեկ անգամ, ուստի ժամանակի հաշվումների մեջ ամեն մի օլիմպիադը ստանում էր 4 տարվա արժեք։ Ուրեմն 186 օլիմպիադը լինում է 744 տարի, որի վրա ավելացնելով 2 տարին (սա ևս պատմիչն է նշում)՝ ստանում ենք 746 տարի, այսինքն՝ նույնքան, որքան նըշված է հոբելյաններով (տե՛ս նախորդ ծանոթագրությունը)։ Սրան էլ գումարելով 551՝ ըստ հայկական թվականության, ստանում ենք նույն թվականը՝ 1297։ Ինչպես տեսնում ենք, Ս. Օրբելյանը չի հաշվել հունական առաջին օլիմպիադայի ժամանակից (մ. թ. ա. 776 թվականից), այլ՝ պարզապես մեր թվականության սկզբից՝ ըստ օլիմպիադաների, այսինքն՝ 4-ական տարիների։ (էջ 392)։

1649. Ընդիկտիոնը կամ ընդիկտիոնը հռոմեական եկեղեցու կողմից ընդունված տոմարական ժամանակաշրջան էր, որը հավասար էր 15 տարվա։ Բառը լատինական ծագում ունի indictio «ցուցում», տարածվել է հունարենի մեջ ձևափոխելով՝ ἰνδικτιων ։ Կաթոլիկ եկեղեցին տոմարական այս միավորն ընդունել է 313 թվականից և կիրառում է մինչև այսօր։ Իր գրքի գրության թվականի համար Ս. Օրբելյանը նշում է հիսուն ընդիքտիոն՝ պակասած թվով 50 ընդիքտիոնը հավասար է 750 տարվա, եթե 4 տարի պակասեցնենք, կստանանք մյուս հաշվումներով նշված թիվը՝ 746, որը հայկական թվականությամբ (+551) լինում է 1297։ (էջ 392)։

1650. Եթե այս թվականը հաշվենք Իմաստասերի հավելումով և ավելացնենք 1083 (ընդունելով նշված թվականի օգոստոսի 11-ից հետո կատարված), գարձյալ կստանանք նույն թվականը՝ 214 + 1083 = 1297։ Ուրեմն բոլոր հաշվումները ցույց են տալիս, որ պատմիչն իր այս երկը գրել է 1297 թվականին։ (էջ 392)։

1651. Խոսքը, իհարկե, Վայոց ձորի Ամաղուի Նորավանքի մասին է։ (393)։

1652. Այստեղ նշված է երեստասան գաւառաց, այսինքն՝ տասներկու գավառների համար, բայց իրականում ներկայացված են 14 գավառներ։ Դժվար է ասել՝ փոփոխությունը հեղինակն է կատարել, թե մեկ ուրիշը նրանից հետո։ Բայց մի բան պարզ է, որ Սյունիքից դուրս ուրիշ գավառներ չեն ընդգրկված, այլ բաժանումը կատարված է նույն նահանգի ներսում. մյուս գավառներից առանձնացված են Եվալլախն ու Մյուս Բաղքը։ (էջ 394)։

1653. Խոսքը վերաբերում է Տաթևի վանքին։ Յուցակում նշված են այն գյուղերը, որոնք հարկ էին տալիս այդ վանքին։ (էջ 394)։

1654. Գյուղերի անունների դիմաց նշված թվերը ներկայացնում են հարկաչափը՝ ըստ ժամանակին սահմանված միավորների։ (էջ 394)։

1655. Փարիզյան հրատարակության մեջ Երեմի, մոսկովյան հրատարակության մեջ՝ Երամ, № 6271 ձեռագրում՝ Երեմք (էջ 332 բ)։ Բերել ենք ըստ վերջինի։ (էջ 394)։

1656. Փարիզյան հրատարակության մեջ Մարդակայր, մոսկովյան հրատարակության մեջ՝ Մարդակայ, № 6271 ձեռագրում՝ Մարդակայ։ Բերել ենք ըստ վերջիններիս։ (էջ 394)։

1657. Փարիզյան հրատարակությունն ունի Տորնիք, մոսկովյանը՝ Տոլորք, № 6271 ձեռագիրը՝ Տոլորէ (էջ 332 բ)։ Վերցրել ենք վերջին ձևը։ Սա Տոլորս ձևով պահպանվել է մինչև մեր ժամանակները (Սիսիանի շրջանի գյուղանուն)։ (էջ 394)։

1658. Փարիզյան հրատարակությունն ունի Տոռունկայ, մոսկովյանը՝ Տոռունկոյք, № 6271 ձեռագիրը՝ Տոռունկոյհ (էջ 333 ա)։ Տալիս ենք ըստ վերջիններիս։ (էջ 394)։

1659. Փարիզյան հրատարակությունն ունի Պիսակ, մոսկովյանը՝ Պիսաք, № 6271 ձեռագիրը՝ Պիսաք (էջ 333 ա)։ Տալիս ենք ըստ վերջիններիս։ (էջ 394)։

1660. Մոսկովյան հրատարակությունն ունի Աղատու, փարիզյանը՝ Աղիտու, № 6271 ձեռագիրը՝ Աղիտու (էջ 333 ա)։ Տալիս ենք ըստ վերջիններիս։ Սա այժմյան Աղուդի-ն է Սիսիանի շրջանում։ (էջ 395)։

1661. Մոսկովյան հրատարակությունն ունի Կաֆաւուրի, փարիզյանը՝ Կաֆաւաւրտի, № 6271 ձեռագիրը՝ Կաֆաւաւրտի (էջ 333 ա)։ Տալիս ենք ըստ վերջիններիս։ (էջ 395)։

1662. Մոսկովյան հրատարակության մեջ՝ Եւայլախ, փարիզյանում՝ Եւ Այլախ, № 6271 ձեռագրում՝ Եւայլախ (էջ 333 ա)։ Տալիս ենք ըստ մոսկովյան հրատարակության և ձեռագրի։ (էջ 395)։

1663. Փարիզյան հրատարակությունն ունի Սարափարախ մոսկովյանը՝ Սալափարախ, № 6271 ձեռագիրը՝ Սարափարախ (էջ 333 ա)։ Տալիս ենք ըստ փարիզյան հրատարակության և ձեռագրի (էջ 395)։

1664. Մոսկովյան հրատարակությունն ունի Մազազնէ, փարիզյանը՝ Մազազնի, № 6271 ձեռագիրը՝ Մազազնէ (էջ 333 ա)։ Տալիս ենք ըստ մոսկովյան հրատարակության և ձեռագրի (էջ 395)։

1665. Մոսկովյան հրատարակությունն ունի Կորոմնիւճ, փարիզյանը՝ Կորոմիւճ, № 6271 ձեռագիրը՝ Կորոմիւճ (էջ 333 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիս (էջ 395)։

1666. Փարիզյան հրատարակությունն ունի Եկեան, մոսկովյանը՝ Եկեռն, № 6271 ձեռագիրը՝ Եկեռն (էջ 333 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիս (էջ 395)։

1667. Փարիզյան հրատարակությունն ունի Արկադուկերտ, մոսկովյանը՝ Արկաբուկերտ, № 6271 ձեռագիրը՝ Արկաբուկերտ (էջ 333 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիս (էջ 396)։

1668. Մոսկովյան հրատարակությունն ունի Արտաբուի, փարիզյանը՝ Արտաբոյի, № 6271 ձեռագիրը՝ Արտաբոյ (մնացածը ջնջված է և տակն ավելացված ի—էջ 333 բ)։ Վերջիններս թեև մոտ են ճիշտ ձևին, բայց բոլորն էլ աղավաղված են։ Այդ տեղանվան հնագույն ձևն է Արտաբոյնէ (Արտաբոյն, հետագայում՝ Էրտափին—Էրդափին), որպես և հիշված է սույն երկի շարադրանքի մեջ (տե՛ս գլ. ԺԹ)։ Մ. Բրոսեն տվել է Artaboini ձևով (անդ, էջ 282)։ (էջ 396)։

1669. Փարիզյան հրատարակությունն ունի Փռակայ, մոսկովյանը՝ Փռակո, № 6271 ձեռագիրը՝ Փռակո (էջ 333 բ)։ Տալիս ենք ըստ վերջինիս (էջ 396)։

1670. Մոսկովյան հրատարակությունն ունի Գրկի, փարիզյանը՝ Գրկիֆ, № 6271 ձեռագիրը՝ Գրկի (էջ 333 բ)։ Տալիս ենք ըստ փարիզյան հրատարակության (էջ 396)։

1671. Փարիզյան հրատարակությունն ունի Անգռեմ, մոսկովյանը՝ Անգաեմ, № 6271 ձեռագիրը՝ Անգաեմ (էջ 333 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիս (էջ 396)։

1672. Մոսկովյան հրատարակությունն ունի Երկայն արտ, փարիզյանը՝ Երկայնարտ, № 6271 ձեռագիրը՝ Երկայնարտ (էջ 333 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիս (էջ 396)։

1673. Մոսկովյան հրատարակությունն ունի Շատախ, փարիզյանը՝ Շատաղ, № 6271 ձեռագիրը՝ Շատախ (էջ 333 բ)։ Տալիս ենք ըստ մոսկովյան հրատարակության և ձեռագրի (էջ 396)։

1674. Փարիզյան հրատարակությունն ունի Գոստենի, մոսկովյանը՝ Գոստէնի։ Ճիշտ ձևն է Գուտենի, ինչպես որ ներկայացրել է Մ. Բրոսեն (անդ, էջ 283)։ № 6271 ձեռագիրը հաստատում է դա (էջ 334 ա)։ (էջ 396)։

1675. Մոսկովյան հրատարակությունն ունի Եճեղի, փարիզյանը՝ Եճեղի, № 6271 ձեռագիրը՝ Եճեղի։ Տալիս ենք ըստ վերջիններիս (էջ 396)։

1676. Մոսկովյան հրատարակությունն ունի Խճձի թաղ, փարիզյանը՝ Խճձի թաղ, № 6271 ձեռագիրը՝ Խճձի թաղ (էջ 334 ա)։ Տալիս ենք ըստ վերջիններիս (էջ 397)։

1677. Փարիզյան հրատարակությունն ունի Երիզկայֆ, մոսկովյանը՝ Երիզկույֆ, № 6271 ձեռագիրը՝ Երիզկույֆ (էջ 334 ա)։ Տալիս ենք ըստ վերջիններիս (էջ 397)։

1678. Մոսկովյան հրատարակությունն ունի Դաստակեր, փարիզյանը՝ Դաստակերտ, № 6271 ձեռագիրը՝ Դաստակեր (էջ 334 ա)։ Տալիս ենք ըստ փարիզյան հրատարակության (էջ 397)։

1679. Մոսկովյան հրատարակությունն ունի Ջառայազարակ, փարիզյանը՝ Ջառազարակ, № 6271 ձեռագիրը՝ Ջառազարակ (էջ 334 ա)։ Տալիս ենք ըստ փարիզյան հրատարակության (էջ 397)։

1680. Փարիզյան հրատարակությունն ունի Հագֆ, մոսկովյանը՝ Հոգֆ, № 6271 ձեռագիրը՝ Հոգֆ (էջ 334 ա)։ Տալիս ենք ըստ մոսկովյան հրատարակության (էջ 397)։

1681. Փարիզյան հրատարակությունն ունի Աղաեճ, մոսկովյանը՝ Ախաչեճ, № 6271 ձեռագիրը՝ Ախաեճ (էջ 334 ա)։ Տալիս ենք ըստ մոսկովյան հրատարակության (էջ 397)։

1682. Մ. Բրոսեն Սոթից (Սոթք) գավառը ներկայացնում է որպես Ardits գավառ (անդ, էջ 283)։ Կա և Սողից (Սողք) գրությունը, որպիսին գտնում ենք մոսկովյան հրատարակության մեջ։ № 6271 ձեռագիրը գավառը նշում է Սողից, իսկ բնակավայրը՝ Սոթք (էջ 334 բ) ձևերով (էջ 397)։

1683. Մոսկովյան հրատարակությունն ունի Մոթք, փարիզյանը՝ Սոթք, № 6271 ձեռագիրը՝ Սոթք (էջ 334 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիս (էջ 397)։

1684. Փարիզյան հրատարակությունն ունի Համամաբակ, մոսկովյանը՝ Համամաբակ, № 6271 ձեռագիրը՝ Համամաբակ (էջ 334 բ)։ Տալիս ենք ըստ փարիզյան հրատարակության և ձեռագրի (էջ 397)։

1685. Փարիզյան հրատարակությունն ունի Առևիսաբակ, մոսկովյանը՝ Առափսաբակ, № 6271 ձեռագիրը՝ Առափսաբակ (էջ 334 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիս (էջ 397)։

1686. Փարիզյան հրատարակությունն ունի Սափչաճապատ, մոսկովյանը՝ Սափչի աճապատ, № 6271 ձեռագիրը՝ Սափչի աճապատ (էջ 334 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիս (էջ 397)։

1687. Փարիզյան հրատարակությունն ունի Վարդաճաբակ, մոսկովյանը Վարդաճաբակ, № 6271 ձեռագիրը՝ Վարդաճաբակ (էջ 334 բ)։ Տալիս ենք ըստ փարիզյան հրատարակության և ձեռագրի (էջ 397)։

1688. Փարիզյան հրատարակությունն ունի Շապուճաբայ, մոսկովյանը՝ Շապուճաբաղ, № 6271 ձեռագիրը՝ Շապուճաբաղ (էջ 334 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիս (էջ 398)։

1689. *Փարիզյան հրատարակությունն ունի* Ղաշուրաբակ, *մոսկովյանը՝* Ջաշուրաբակ, *№ 6271 ձեռագիրը՝* Ջաշուրաբակ *(էջ 334 բ)։ Տալիս ենք ըստ վերջինի։ (էջ 398)։*

1690. *Փարիզյան հրատարակությունն ունի* Բաշուռ, *մոսկովյանը՝* Պաշուխ, *№ 6271 ձեռագիրը՝* Պաշուռ *(էջ 334 բ)։ Տալիս ենք ըստ վերջինի։ (էջ 398)։*

1691. *Փարիզյան հրատարակությունն ունի* Տարօնիկ, *մոսկովյանը՝* Դարանիկ, *№ 6271 ձեռագիրը՝* Դարանիկ *(334 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիս։ (էջ 398)։*

1692. *Փարիզյան հրատարակությունն ունի* Տարանակ, *մոսկովյանը՝* Դարանակ, *№ 6271 ձեռագիրը՝* Դարանակ *(էջ 334 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիս։ (էջ 398)։*

1693. *Փարիզյան հրատարակությունն ունի* Պաշոյ, *մոսկովյանը՝* Պաշուխ Ներքին, *№ 6271 ձեռագիրը՝* Պաշուռ *(մնացածը եղծված է—էջ 334 բ)։ Տալիս ենք* Պաշուխ Ներքին *ձևով։ (էջ 398)։*

1694. *Փարիզյան հրատարակությունն ունի* Ջանոյ, *մոսկովյանը՝* Ջանոյ, *№ 6271 ձեռագիրը՝* Ջանոյ *(էջ 334 բ)։ Տալիս ենք ըստ փարիզյան հրատարակության և ձեռագրի։ (էջ 398)։*

1695. *Մոսկովյան հրատարակությունն ունի* Խորաստանաբակ, *փարիզյանը՝* Խորասանաբակ, *№ 6271 ձեռագիրը՝* Խորասանաբակ *(էջ 334 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիս։ (էջ 398)։*

1696. *Մոսկովյան հրատարակությունն ունի* Որա կիհ, *փարիզյանը՝* Որագիհ, *Մ. Բրոսեն գրել է* Orskik *ձևով։ № 6271 ձեռագիրն ունի* Որակիհ *(էջ 334 բ)։ Տալիս ենք ըստ վերջինի։ (էջ 398)։*

1697. *Փարիզյան հրատարակությունն ունի* Ակոճ, *մոսկովյանը՝* Ակաճ, *№ 6271 ձեռագիրը՝* Ակաճ *(էջ 334 բ)։ Տալիս ենք ըստ վերջինների։*

1698. *Մոսկովյան հրատարակության մեջ այստեղից սկսած՝ գլուխերն առանձնացված են առանձին հատվածով, և այս* Այրք-ը *դրված է որպես վերնագիր, որպես թե մնացած բնակավայրերը մտնում են ենթագավառի մեջ։ Փարիզյան հրատարակությունն այսպիսի բաժանում չունի։ № 6271 ձեռագրում* Այրք-ը *առանձնացված է ուրիշ թանաքով։ Մենք ներկայացրել ենք չառանձնացված։ (էջ 398)։*

1699. *Մոսկովյան հրատարակությունն ունի* Սահակաբեդ, *փարիզյանը՝* Սահակաբակ, *№ 6271 ձեռագիրը՝* Սահակաբակ *(—ակ-ը եղծված է և հետո ավելացված (էջ 334 բ)։ Տալիս ենք ըստ փարիզյան հրատարակության։ (էջ 398)։*

1700. *Փարիզյան հրատարակությունն ունի* Տկղլաբակ, *մոսկովյանը՝* Գգղլաբակ, *№ 6271 ձեռագիրը՝* Գգղլաբակ *(էջ 334 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիս։ (էջ 398)։*

1701. *Փարիզյան հրատարակությունն ունի* Խորոժայ, *մոսկովյանը՝* Խորեայ, *№ 6271 ձեռագիրը՝* Խորժայ *(էջ 334 բ)։ Տալիս ենք ըստ փարիզյան հրատարակության և ձեռագրի։ (էջ 398)։*

1702. *Փարիզյան հրատարակությունն ունի* Վարժանկէ աղբիւր, *մոսկովյանը՝* Վարժանկի աղբիւր, *№ 6271 ձեռագիրը՝* Վարժան (ա) կէ աղբիւր *(էջ 334 բ)։ Տալիս ենք ըստ մոսկովյան հրատարակության։ (էջ 398)։*

1703. *Փարիզյան հրատարակությունն ունի* Աղձի գետ, *մոսկովյանը՝* Աձի

գետ, № 6271 ձեռագիրը Աւձի գետ։ *Տալիս ենք ըստ վերջիններիս։ (էջ 398)։*

1704. *Փարիզյան հրատարակությունն ունի* Պոխոչոխ, *մոսկովյանը՝* Բողխոչոխ, *№ 6271 ձեռագիրը՝* Բողխոչոխ *(էջ 335 ա)։ Տալիս ենք ըստ վերջիններիս։ (էջ 399)։*

1705. *Մոսկովյան հրատարակությունն ունի* Ագարակի գետ, *փարիզյանը՝* Ագարակու գետ, *№ 6271 ձեռագիրը՝* Ագարակու գետ *(էջ 335 ա)։ Տալիս ենք ըստ վերջիններիս։ (էջ 399)։*

1706. *Փարիզյան հրատարակությունն ունի* Նապոկի, *մոսկովյանը՝* Նաբակի, *№ 6271 ձեռագիրը՝* Նաբակի *(էջ 335 ա)։ Տալիս ենք ըստ վերջիններիս։ (էջ 399)։*

1707. *Փարիզյան հրատարակությունն ունի* Պախախոնիհ, *մոսկովյանը՝* Բաղախաճիհ, *№ 6271 ձեռագիրը՝* Բաղախաճիհ *(էջ 335 ա)։ Տալիս ենք ըստ վերջիններիս։ (էջ 399)։*

1708. *Փարիզյան հրատարակությունն ունի* Մորացիհ, *մոսկովյանը՝* Ղորացիհ, *№ 6271 ձեռագիրը՝* Ղորացիհ *(էջ 335 ա)։ Տալիս ենք ըստ ձեռագրի։ (էջ 399)։*

1709. *Փարիզյան հրատարակությունն ունի* Խախծիհ, *մոսկովյանը՝* Խաղտիհ, *№ 6271 ձեռագիրը՝* Խաղտիհ *(էջ 335 ա)։ Տալիս ենք ըստ վերջիններիս։ (էջ 399)։*

1710. *Փարիզյան հրատարակությունն ունի* Աւորակ, *մոսկովյանը՝* Աւարակ, *№ 6271 ձեռագիրը՝* Աւարակ *(էջ 335 ա)։ Տալիս ենք ըստ վերջիններիս։ (էջ 399)։*

1711. *Փարիզյան հրատարակությունն ունի* Աղախերդ, *մոսկովյանը՝* Աղախիրտ, *№ 6271 ձեռագիրը՝* Աղախիրդ *(էջ 335 ա)։ Տալիս ենք ըստ ձեռագրի։ (էջ 399)։*

1712. *Փարիզյան հրատարակությունն ունի* Խալխալիհ, *մոսկովյանը՝* Խախալիհ, *№ 6271 ձեռագիրը՝* Խախալիհ *(էջ 335 ա)։ Տալիս ենք ըստ վերջիններիս։ (էջ 399)։*

1713. *Մոսկովյան հրատարակությունն ունի* Խնձորեակ, *փարիզյանը՝* Խնձորեսկ, *№ 6271 ձեռագիրը՝* Խնձորեսկ *(էջ 335 ա)։ Տալիս ենք ըստ վերջիններիս. նույն ձևով էլ (Խնձորեսկ) հասել է մինչև մեր օրերը։ (էջ 399)։*

1714. *Փարիզյան հրատարակությունն ունի* Ակարդոն, *մոսկովյանը՝* Ակարթան, *№ 6271 ձեռագիրը՝* Ակարդան *(էջ 335 ա)։ Տալիս ենք ըստ ձեռագրի։ (էջ 400)։*

1715. *Փարիզյան հրատարակությունն ունի* Տեղի, *մոսկովյանը՝* Դեղի, *№ 6271 ձեռագիրը՝* Դեղի *(էջ 335 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիս։ (էջ 400)։*

1716. *Փարիզյան հրատարակությունն ունի* Լուակուիհ, *մոսկովյանը՝* Լաւակուիհ, *№ 6271 ձեռագիրը՝* Լաւակուիհ *(էջ 335 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիս։ (399)։*

1717. *Մոսկովյան հրատարակությունն ունի* Գենեճաթաղբ, *փարիզյանը՝* Գենեճաթաղհ, *№ 6271 ձեռագիրը՝* Գենեճաթաղբ *(էջ 335 բ)։ Տալիս ենք ըստ փարիզյան հրատարակության։ (էջ 399)։*

1718. *Փարիզյան հրատարակությունն ունի* Ղոկոնի, *մոսկովյանը՝* Ղոկաճի, *№ 6271 ձեռագիրը՝* Ղոկաճի *(էջ 335 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիս։ (էջ 399)։*

1719. Փարիզյան հրատարակությունն ունի Ցատղոնի, որն ակնբախ աղավաղություն է. պիտի լինի Ցողունի: Ճիշտ ձևը տալիս է մոսկովյան հրատարակությունը: Դա հաստատում է նաև № 6271 ձեռագիրը (էջ 335 բ): (399):

1720. Մոսկովյան հրատարակությունն ունի Նախաձնոր. փարիզյանը՝ Նախաձնփոր, № 6271 ձեռագիրը՝ Նախաձնփոր (էջ 335 բ): Տալիս ենք ըստ վերջիններիս (էջ 399):

1721. Մոսկովյան հրատարակությունն ունի Աղեոյ ջրիկ, փարիզյանը՝ Աղոջրիկ, № 6271 ձեռագիրը՝ Աղոջրիկ (էջ 335 բ): Տալիս ենք ըստ վերջիններիս (էջ 400):

1722. Փարիզյան հրատարակությունն ունի Ուսկածագ, մոսկովյանը՝ Ուսկածակ, № 6271 ձեռագիրը՝ Ուսկածակ (էջ 335 բ): Տալիս ենք ըստ վերջիններիս (էջ 400):

1723. Փարիզյան հրատարակությունն ունի Տորքն, մոսկովյանը՝ Տորքի, № 6271 ձեռագիրը՝ Տորքի (էջ 335 բ): Տալիս ենք ըստ վերջիններիս (էջ 400):

1724. Մոսկովյան հրատարակությունն ունի Աւարագետ. փարիզյանը՝ Աւարագետ, № 6271 ձեռագիրը՝ Աւարագետ (էջ 335 բ): Տալիս ենք ըստ վերջիններիս (էջ 400):

1725. Մոսկովյան հրատարակությունն ունի Խոտեան, № 6271 ձեռագիրը՝ Խոտաենե (էջ 335 բ), փարիզյանը՝ Խոտանան: Տալիս ենք վերջինը, որովհետև մինչև մեր ժամանակներն այսպես էլ պահպանված է: (էջ 400):

1726. Փարիզյան հրատարակությունն ունի Ոպն, մոսկովյանը՝ Որն, № 6271 ձեռագիրը՝ Որն (էջ 335 բ): Տալիս ենք ըստ վերջիններիս (էջ 400):

1727. Փարիզյան հրատարակությունն ունի Կոտեվանք, մոսկովյանը՝ Գոդեվանք, № 6271 ձեռագիրը՝ Գոդեվանք (էջ 335 բ): Տալիս ենք ըստ վերջիններիս: (էջ 400):

1728. Մոսկովյան հրատարակությունն ունի Կռուագետ, փարիզյանը՝ Կրուագետ, № 6271 ձեռագիրը՝ Կրուագետ (էջ 335 բ): Տալիս ենք ըստ մոսկովյան հրատարակության և ձեռագրի: (էջ 400):

1729. Փարիզյան հրատարակությունն ունի Մակարագ, մոսկովյանը՝ Մոգարակ, № 6271 ձեռագիրը՝ Մոգարակ (էջ 336 ա): Տալիս ենք ըստ վերջիններիս: (էջ 400):

1730. Փարիզյան հրատարակությունն ունի Անագոն, մոսկովյանը՝ Անական, № 6271 ձեռագիրը՝ Անական (էջ 336 ա): Տալիս ենք ըստ վերջիններիս: (էջ 400):

1731. Փարիզյան հրատարակությունն ունի Լերմենիչէ, մոսկովյանը՝ Լերմենի չէն, № 6271 ձեռագիրը՝ Լերմենի չէն (էջ 336 ա): Մ. Բրոսեն բերում է Herménitche ձևով (անդ, էջ 286): Տալիս ենք ըստ մոսկովյան հրատարակության և ձեռագրի: (էջ 401):

1732. Փարիզյան հրատարակությունն ունի Հատստուռ, մոսկովյանը՝ Հաուտուռ, № 6271 ձեռագիրը՝ Հաուտուռ (էջ 336 ա): Տալիս ենք ըստ վերջիններիս: (էջ 401):

1733. Փարիզյան հրատարակությունն ունի Մատախոնի, մոսկովյանը՝ Մարդախաճի, № 6271 ձեռագիրը՝ Մարդախաճի (էջ 336 ա): Տալիս ենք ըստ վերջիններիս: (էջ 401):

1734. Փարիզյան հրատարակությունն ունի Տողոր, մոսկովյանը՝ Դողար,

№ 6271 ձեռագիրը՝ Դողար (էջ 336 ա): Մ. Բրոսեն բերում է Goghor ձևով (անդ, էջ 286): Տալիս ենք ըստ մոսկովյան հրատարակության և ձեռագրի: (էջ 401):

1735. Փարիզյան հրատարակությունն ունի Տեխ, մոսկովյանը՝ Պիղ, № 6271 ձեռագիրը Պիղ (էջ 336 ա): Տալիս ենք ըստ վերջիններիս: (էջ 401):

1736. Փարիզյան հրատարակությունն ունի Խոտի, մոսկովյանը՝ Խոդի, № 6271 ձեռագիրը՝ Խոդի (էջ 336 ա): Տալիս ենք ըստ վերջիններիս: (էջ 401):

1737. Մոսկովյան հրատարակությունն ունի Ճատուք, փարիզյանը՝ Ջոլբ, № 6271 ձեռագիրը՝ Ճատք (էջ 336 ա): Տալիս ենք ըստ ձեռագրի: (էջ 401):

1738. Փարիզյան հրատարակությունն ունի Տուտուտուռ, մոսկովյանը՝ Տուտուտ, № 6271 ձեռագիրը՝ Տուտուտ (էջ 336 ա): Տալիս ենք ըստ վերջիններիս: (էջ 401):

1739. Մոսկովյան հրատարակությունն ունի Բարկուրի վանք, փարիզյանը՝ Բակուրի վանք, № 6271 ձեռագիրը՝ Բակուրի վանք (էջ 336 ա): Տալիս ենք ըստ վերջիններիս: (էջ 401):

1740. Փարիզյան հրատարակությունն ունի Ծղու, մոսկովյանը՝ Ձղու, № 6271 ձեռագիրը՝ Ձղու (էջ 336 ա): Տալիս ենք ըստ վերջիններիս: (էջ 401):

1741. Փարիզյան հրատարակությունն ունի Տատայ, մոսկովյանը՝ Դադայ, № 6271 ձեռագիրը՝ Դադա (էջ 336 ա). Տալիս ենք ըստ վերջիններիս: (էջ 401):

1742. Փարիզյան հրատարակությունն ունի Ճակկուր, մոսկովյանը՝ Ճապկուտ, № 6271 ձեռագիրը՝ Ճապկուտ (էջ 336 ա): Տալիս ենք ըստ վերջիններիս: (էջ 401):

1743. Փարիզյան հրատարակությունն ունի Կռակկիր, մոսկովյանը՝ Գորագիտ, № 6271 ձեռագիրը՝ Գորագիտ (էջ 336 ա): Տալիս ենք ըստ վերջիններիս: (էջ 401):

1744. Փարիզյան հրատարակությունն ունի Աւրքիկ, մոսկովյանը՝ Հրքէկ: Մ. Բրոսեն բերում է Harthek ձևով՝ նշելով Hartic տարբերակը (անդ, էջ 287): № 6271 ձեռագրում Հարթեճ ձևով է (էջ 336 ա): Տալիս ենք ըստ այս ձևի: (էջ 401):

1745. Փարիզյան հրատարակությունն ունի Պահու բերդ, մոսկովյանը՝ Բահու բերդ, № 6271 ձեռագիրը՝ Բահու բերդ (էջ 336 ա): Տալիս ենք ըստ վերջիններիս (էջ 401):

1746. Փարիզյան հրատարակությունն ունի Վաժոնիճ, մոսկովյանը՝ Վաժանիճ, № 6271 ձեռագիրը՝ Վաժանիճ (էջ 336 ա): Տալիս ենք ըստ վերջիններիս: (էջ 401):

1747. Փարիզյան հրատարակությունն ունի Լուսկոր, մոսկովյանը՝ Հուսկոր, № 6271 ձեռագիրը՝ Հուսկոր (էջ 336 բ): Տալիս ենք ըստ վերջիններիս: (էջ 402):

1748. Փարիզյան հրատարակությունն ունի Մառակոթ, մոսկովյանը՝ Մառազաթ, № 6271 ձեռագիրը՝ Մառազատ (էջ 336 բ): Տալիս ենք ըստ մոսկովյան հրատարակության: (էջ 402):

1749 Փարիզյան հրատարակությունն ունի Մենիկ, մոսկովյանը՝ Մենիճ, № 6271 ձեռագիրը՝ Մենիճ (էջ 336 բ): Տալիս ենք ըստ վերջիններիս: (էջ 402):

1750. Փարիզյան հրատարակությունն ունի Դախարեան, մոսկովյանը՝ Տախարեան, № 6271 ձեռագիրը՝ Տախարեան (էջ 336 բ)։ Տալիս ենք ըստ վերջինների (էջ 402)։

1751. Փարիզյան հրատարակությունն ունի Համուրֆ, մոսկովյանը՝ Համուրֆ, № 6271 ձեռագիրը՝ Համուրֆ (էջ 336 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիի (էջ 402)։

1752. Փարիզյան հրատարակությունն ունի Լիմախավիա, մոսկովյանը՝ Լիմակովիա, № 6271 ձեռագիրը՝ Լիմախովիտ (էջ 336 բ)։ Տալիս ենք ըստ փարիզյան հրատարակության և ձեռագրի (էջ 402)։

1753. Փարիզյան հրատարակությունն ունի Աղաթախ, մոսկովյանը՝ Աղաթաղ, № 6271 ձեռագիրը՝ Աղաթաղ (էջ 336 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիի (էջ 402)։

1754. Փարիզյան հրատարակությունն ունի Շաշիկէա, մոսկովյանը՝ Շաշոյ գետ, № 6271 ձեռագիրը՝ Շաշիգետ (էջ 336 բ)։ Տալիս ենք ըստ ձեռագրի (էջ 402)։

1755. Փարիզյան հրատարակությունն ունի Արձախամայրի, մոսկովյանը՝ Արցախամայրի № 6271 ձեռագիրը՝ Արցախամայրի (էջ 336 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիի (էջ 402)։

1756. Մ. Բրոսեն բերում է Tari ձևով (անդ, էջ, 287)։ № 6271 ձեռագիրը հաստատում է Մաոի ձևը (էջ 336 բ)։ (էջ 402)։

1757. Փարիզյան հրատարակությունն ունի Բարդուբաղ, մոսկովյանը՝ Բարձուբաղ, № 6271 ձեռագիրը՝ Բարձու բաղ (էջ 336 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիի (էջ 402)։

1758. Մոսկովյան հրատարակությունն ունի Կիծ, փարիզյանը՝ Կից, № 6271 ձեռագիրը՝ Կիծ (էջ 336 բ)։ Տալիս ենք ըստ փարիզյան հրատարակության։ (էջ 402)։

1759. Փարիզյան հրատարակությունն ունի Աղաճ, մոսկովյանը՝ Աղոյ վանք, № 6271 ձեռագիրը՝ Աղոյ վանք (էջ 336 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիի (էջ 402)։

1760. Փարիզյան հրատարկությունն ունի Մոլոշաե, մոսկովյանը՝ Մոլոշոե, № 6271 ձեռագիրը՝ Մոլոշոե (էջ 336 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիի (403)։

1761. Մ. Բրոսեն բերում է Courouk ձևով (անդ, էջ 287)։ № 6271 ձեռագիրն ունի Կուրաւեֆ։ Փարիզյան և մոսկովյան հրատարակությունները՝ Կուրավաեֆ։ Տալիս ենք ըստ դրանց։ (էջ 403)։

1762. Փարիզյան հրատարակությունն ունի Կոռեկենկ, մոսկովյանը՝ Կոռեկենեֆ, № 6271 ձեռագիրը՝ Կոռեկենէ (էջ 337 ա)։ Տալիս ենք ըստ վերջիններիի (էջ 403)։

1763. Մոսկովյան հրատարակությունն ունի Խոզուշիւղ, փարիզյանը՝ Խոզու գիւղ, № 6271 ձեռագիրը՝ Խոզու գիւղ (էջ 337 ա)։ Տալիս ենք ըստ փարիզյան հրատարակության։ (էջ 403)։

1764. Փարիզյան հրատարակությունն ունի Գաճուրայ, մոսկովյանը՝ Կաճուրայ, № 6271 ձեռագիրը՝ Կաճուրա (էջ 337 ա)։ Տալիս ենք ըստ վերջիններիի (էջ 403)։

1765. Փարիզյան հրատարակությունն ունի Բոկախու, մոսկովյանը՝ Բաֆախու, № 6271 ձեռագիրը՝ Բազախու (էջ 337 ա)։ Տալիս ենք ըստ ձեռագրի։ (էջ 403)։

1766. Փարիզյան հրատարակության մեջ երկչակ գավառում ներկայացված է ընդամենը 10 բնակավայր։ Մոսկովյան հրատարակությունն ունի ավելի մեծ ցուցակ՝ 30 բնակավայրի ընդգրկումով։ Մենք տալիս ենք այս հրատարակության ցուցակը։ № 6271 ձեռագրում ևս նշված է 30 բնակավայր։ (էջ 403)։

1767. Փարիզյան հրատարակությունն ունի Ուռոռ, մոսկովյանը՝ Ուրդոռ, № 6271 ձեռագիրը՝ Ուրդոռ (էջ 337 ա)։ Տալիս ենք ըստ վերջիններիի (էջ 404)։

1768. Փարիզյան հրատարակությունն ունի Ղաբեե, մոսկովյանը՝ Ղապէե, № 6271 ձեռագիրը՝ Ղապէե (էջ 337 ա)։ Տալիս ենք ըստ վերջիններիի (էջ 404)։

1769 Մ. Բրոսեն բերել է Ezghon ձևով (անդ, էջ 228)։ № 6271 ձեռագիրն ունի Ղզղաւե (էջ 337 բ)։ Տալիս ենք ըստ ձեռագրի։ (էջ 404)։

1770. Փարիզյան հրատարակությունն ունի Գուխի, մոսկովյանը՝ Կուխի, № 6271 ձեռագիրը՝ Կուխի (էջ 337 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիի (էջ 404)։

1771. Փարիզյան հրատարակությունն ունի Սաղուասոե, մոսկովյանը՝ Սաղուասոեֆ, № 6271 ձեռագիրը՝ Սաղսաւեֆ (էջ 337 բ)։ Տալիս ենք ըստ մոսկովյան հրատարակության։ (էջ 404)։

1772. Փարիզյան հրատարակությունն ունի Հեծանայ, մոսկովյանը՝ Հեծանայ, № 6271 ձեռագիրը՝ Հեծանա (էջ 337 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիի (էջ 404)։

1773. Փարիզյան հրատարակությունն ունի Շամեե, մոսկովյանը՝ Շաւեե, № 6271 ձեռագիրը Շաւիե (էջ 337 բ)։ Տալիս ենք ըստ մոսկովյան հրատարակության։ (էջ 404)։

1774. Փարիզյան հրատարակությունն ունի Քրդե, մոսկովյանը՝ Քրտե, № 6271 ձեռագիրը՝ Քրտե (էջ 337 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիի (էջ 404)։

1775. Մ. Բրոսեն բերում է Gailakath ձևով (անդ, էջ 228)։ № 6271 ձեռագիրը հաստատում է դա։ Տալիս ենք ըստ ձեռագրիի (էջ 404)։

1776. Մոսկովյան հրատարակությունն ունի Ջուր, փարիզյանը՝ Ջուր, № 6271 ձեռագրում նույնպես կա Ջուր, բայց դա Գայլակաբ-ի հետ է (էջ 337 բ)։ Թերևս ճիշտ կլիներ դրանք վերջնել միասին։ (էջ 404)։

1777. Փարիզյան հրատարակությունն ունի Աւկու գետ, մոսկովյանը՝ Սւրգու գետ, № 6271 ձեռագիրը՝ Աւրգու գետ (էջ 337 բ)։ Մ. Բրոսեն ներկայացնում է Grgou- Get ձևով (անդ, էջ 288)։ Տալիս ենք ըստ դրանց։ (404)։

1778. Փարիզյան հրատարակությունն ունի Աղդաւ, մոսկովյանը՝ Աղտաւ, № 6271 ձեռագիրը՝ Աղտաւ (էջ 337 բ)։ Տալիս ենք ըստ վերջիններիի (էջ 404)։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Մ. Աբեղյան, *Հայոց հին գրականության պատմություն, գիրք 1-ին, Երևան, 1944։*
2. Մ. Աբեղյան, *Հայոց հին գրականության պատմություն, գիրք 2-րդ, Երևան, 1946։*
3. *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909։*
4. **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908.
5. **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971.
6. **Н. Адонц**, Дионисий Фракийский и армянские толкователи, СПб, 1915.
7. *Ալզագրական ճանդէս, 12-րդ գիրք, Թիֆլիս, 1904։*
8. **В. С. Алексанян**, Жизнь, деятельность и научно-историческое наследие Степаноса Орбеляна. Автореферат кандидатской диссертации, Ереван, 1975.
9. *Գ. Ալթունյան, Մոնղոլները և նրանց արշավանքները ԺԳ դարում, Վաղարշապատ, 1913։*
10. *Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901.*
11. *Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893։*
12. *Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հ. 1—7-րդ, Երևան, 1926—1935։*
13. *Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 1—5-րդ, Երևան, 1942—1962։*
14. *Ա. Այվազյան, Նախիջևանի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1978։*
15. *Ա. Այվազյան, Նյութեր Նախիջևանի պատմական գյուղերի տեղադրության և պատմական հուշարձանների վերաբերյալ. «Պատմա-բանասիրական հանդես», 1972. № 2։*
16. *Ս. Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866։*
17. *Ս. Գ. Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն (1-ին դ. մ. թ. ա.— 14-րդ դ.), Երևան, 1959։*

18. *Բ. Ն. Առաքելյան, Ժամանակագրական գիտողություններ. «Տեղեկագիր» Ամֆիանի, Երևան, 1941, № 1։*
19. *Լ. Հ. Բաբայան, Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության, Երևան, 1981։*
20. *Հ. Ա. Բադալյան, Հայոց տոմարի պատմություն, Երևան, 1976։*
21. *Է. Մ. Բաղդասարյան, 13-րդ դարի մի ժամանակագրության հեղինակի մասին. «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 2։*
22. *Բառագիրք ի գաղիերէն լեզուէ ի հայերէն, յօրինեաց Նորայր Ն. Բիւզանդացի, Կոստանդնուպոլիս, 1884։*
23. *Ս. Գ. Բարխուդարյան, Պատմահնագիտական-տեղագրական ուսումնասիրություններ. ՀՍՀՀ պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», 1-ին գիրք, Երևան, 1936։*
24. *Ս. Վ. Բուռնազյան, Հայաստանը և սելջուկները. 11—12-րդ դդ., Երևան, 1980։*
25. *Ո. Տ. Գեորգեան-Հովհաննիսեանց, Յամառօտ տեղեկութիւն գՀեղինակէ մատենիս, Մոսկուա, 1858։*
26. *Գ. Մ. Գրիգորյան, Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1970, № 10։*
27. *Գ. Մ. Գրիգորյան, Պատմական Սյունիքի մի շարք գյուղերի տեղադրության հարցի շուրջը. «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4։*
28. *Գ. Մ. Գրիգորյան, Սյունիքի վանական կալվածատիրությունը 9—13-րդ դարերում, Երևան, 1973։*
29. *Գ. Մ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981։*
30. *Գ. Մ. Գրիգորյան, Մտեփանոս Օրբելյան, «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 4։*
31. *Դիվան հայ վիմագրության, պրակ 2-րդ. կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960*
32. *Դիվան հայ վիմագրության, պրակ 3-րդ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967։*
33. *Դիվան հայ վիմագրության, պրակ 4-րդ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1973։*
34. *Դիվան հայ վիմագրության, պրակ 5-րդ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1982։*
35. *Դիվան հայ վիմագրության, պրակ 6-րդ, կազմեցին Մ. Ա. Ավագյան և Հռ. Մ. Ջանփոլադյան, Երևան, 1977։*
36. *Ե. Դուրեան, Պատմութիւն հայ մատենագրութեան ի վաղ ժամանակաց մինչև մեր օրերն, Կ. Պոլիս, 1885։*
37. *Ջ. Եղիազարյան, Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Երևան, 1955։*

38. Ղևոնդ Վարդանյան և Հայոց պատերազմին, ի լոյս աշխարհ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957։

39. Ս. Տ. Երեմյան, Լիպարիտ զորավարը և նրա նախորդները. Երևանի պետական համալսարանի Ն. Մառի անվան կաբինետի «Աշխատություններ», Երևան, 1947, № 2։

40. Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963։

41. Ա. Ջամիճեան, Հայ գրականութեան պատմութիւն, Ա մաս, Նոր Նախիջևան, 1914։

42. Գ. Զարբհանալեան. Պատմութիւն հայերէն դպրութեան, Վենետիկ, 1878։

43. Գ. Զարբհանալեան. Պատմութիւն հայերէն դպրութեան, Բ. Նոր մատենագրութիւն, Վենետիկ, 1905։

44. Ի. Բ. Էլլարյան, Աղստևի հովտի պատմական հուշարձանները, Երևան, 1968։

45. Ս. Էփրիկեան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1—2-րդ, Վենետիկ, 1902—1907։

46. Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917։

47. Ժամանակագրութիւն Ստեփանոսի Օրբելյանի, հրատարակության համար պատրաստեց պատմ. գիտ. թեկնածու Աշ. Աբրահամյանը, Երևան, 1942։

48. Հ. Գ. Ժամկոչյան, Ա. Գ. Աբրահամյան, Ս. Տ. Մելիք-Բախշյան, Ս. Պ. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն (սկզբից մինչև 18-րդ դարի վերջը), Երևան, 1975։

50. Ղ. Ինճիճեան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822։

51. История князей Орбелян. Извлечение из сочинения Стефана Сюнийского, армянского писателя XIII века. Перевел с армянского Х. Иоаннесов (с примечаниями и объяснениями), Москва, 1883.

52. История монголов по армянским источникам. Выпуск первый. Перевод и объяснения К. Патканова, С. Петербург, 1873.

53. Ե. Լալայեան, Ձանգեզուր գաւառ, նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, Ա հատոր, Սիսիան, Թիֆլիս, 1898։

54. Ե. Լալայեան, Ձանգեզուր գաւառ, նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, Բ. հատոր, Ձանգեզուր, Թիֆլիս, 1899։

55. Ե. Լալայեան, Շարուր-Դարալագեազի գաւառ. «Ազգագրական հանդէս», 12-րդ գիրք, Թիֆլիս, 1904։

56. Ա. Օ. Խաչատրյան, Վայոց ձորի մի շարք պատմական բնակավայրերի տեղադրության մասին. «Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 4։

57. Հ. Ս. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը. «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1969, № 9։

58. Г. А. Капанцян, Историко-лингвистические работы, т. II, Ереван, 1975.

59. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961։

60. Киракос Гандзакеци, История Армении, перевод с древнеармянского, предисловие и комментарий Л. А. Ханларян. Москва, 1976.

61. Կորիւն, Վարք Մաշտոցի, աշխատությամբ Մ. Աբեղյանի, Երևան, 1940։

62. Թ. Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968։

63. Թ. Խ. Հակոբյան, Հայ ժողովրդի պատմության հիշարժան վայրերը, Երևան, 1978։

64. Թ. Խ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, Երևան, 1966։

65. Թ. Խ. Հակոբյան, Ս. Տ. Մելիք-Բախշյան, Ստեփանոս Օրբելյան, Երևան, 1960։

66. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-ին—8-րդ, 1974—1982։

67. Հայ ժողովրդի պատմություն, խմբագրությամբ պրոֆ. Մ. Գ. Ներսիսյանի, Երևան, 1972։

68. Հայ ժողովրդի պատմություն, հ. 3-րդ, Երևան, 1976։

69. Հայկական ՍՍՀ վարչատերիտորիալ բաժանումը, Երևան, 1976։

70. Հանրագիտական բառարան, կազմեց Համբարձում Առաքելեան, հ. 1-ին, Թիֆլիս, 1915։

71. Ն. Վ. Հարությունյան, «Արգիշտի 2-րդի նորահայտ սեպագիրը». «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 3։

72. Histoire de la Siounie par Stéphannos Orbélian, traduite de l'arménien par M. Brosset, premiér livraison, Histoire de la Siounie, Saint-Pétersbourg, 1864.

73. Histoire de la Siounie par Stéphannos Orbélian, traduite de l'arménien par M. Brosset, second livraison, introduction, Saint-Pétersbourg, 1866.

74. Գ. Հավսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, մասն առաջին, Վաղարշապատ, 1928։

75. ՀՍՍՀ պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», 1-ին գիրք, Երևան, 1936։

76. Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904։

77. Կ. Ղաֆադարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները, Երևան, 1939։

78. Ս. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 1-ին—4-րդ, Երևան, 1944—1945։

79. Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952, այլև՝ Երկեր, Գ, Երևան, 1977։

80. Մանր ժամանակագրություններ. 13—18-րդ դդ., կազմեց Վ. Ա. Հակոբյան, հ. 1-ին, Երևան, 1951.

81. Հ. Գ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երևան, 1980։

82. Ս. Տ. Մելիք-Բախշյան, Ստեփանոս Օրբելյան. «Հայ մշակույթի նշանավոր գործիչները. 5—18-րդ դարեր, Երևան, 1976, էջ 353—361։

83. Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1961։

84. Ե. Տէր-Մինասեանց, Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. 1-ին, Էջմիածին, 1908։

85. Միխայէլ Յովհաննիսեան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970։

86. Մխիթար Գոշ, Դիրք դատաստանի, աշխատասիրությամբ Խոսրով Թորոսյանի, Երևան, 1975։

86 ա. Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860։

87. Ե. Մ. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1980։

88. Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, քարզմանութիւնը, նիրածութիւնը և ծանոթագրութիւններն ակադ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968։

89. Մովսեսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913։

90. Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ծանոթագրությունները՝ Վարագ Առաքելյանի, Երեվան, 1983։

91. Մովսէսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1913։

92. Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, աշխատությամբ և առաջաբանով պատմական գիտությունների թեկնածու Աշ. Աբրահամյանի, Երևան, 1941։

93. Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912։

94. Գ. Յովսեփեան, Խաղրակեանք կամ Ոռոշեանք Հայոց պատմութեան մէջ, մասն երկրորդ. Հոգևոր կեդրոններ և Գլաձորի բարձրագոյն դպրոցը Ոռոշեանց իշխանութեան մէջ, Երուսաղէմ, 1944։

95. Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, Գ, Վենետիկ, 1784։

96. Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ, Վենետիկ, 1844։

97. Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, աշխատասիրությամբ Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963։

98. Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887։

99. Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ վարդապետ Շահնազարեանց, հ. Ա և Բ, Փարիզ, 1859.

100. Պատմութիւն նահանգին Սիսական, տպարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910։

101. Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Դ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979։

102. Հ. Պետրոսյան, Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիա, Երևան, 1941։

103. Ջամբռ. գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ... Համաժողովեցեալ և շարադրեցեալ ի Սիմէօնէ... կաթողիկոսէ Երևանցւոյ, Վաղարշապատ, 1873։

104. Տ. Մ. Սահակյան, Գյուղացիական ապստամբությունը Սյունիքում 10-րդ դարում. ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», Երևան, 1956, № 3։

105. Saint—Martin M., Mémoires historiques et géographiques sur l'Arm., t. II, Paris, 1819.

106. Տ. Մ. Սահակյան, Սյունիքը 13—15-րդ դարերում, Երևան, 1973։

107. Տ. Մ. Սահակյան, Սյունյաց թագավորության հիմնումը և նրա քաղաքական դերը 11-րդ դարում։ Ե, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 3։

108. Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքումն ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893։

109. Ստեփաննոսի արքեպիսկոպոսի Սիւնեաց Պատմութիւն ի վերայ ծագման տոհմին Օրպէլեան և ի վերայ յարձակման Թաթարաց ի Հայս, յօգուտ աղգիս ի լոյս ածեալ յՈսկանայ Տ. Գեորգեան Յովհաննիսեանց, ի Մոսկուա, 1858։

110. Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861։

111. Ստեփաննոս Օրպելեան, Ողբ ի սուրբ կաթողիկէն, բնագիրը յառաջաբանով և ծանօթութիւններով հրատարակեց Կարապետ Կոստանեանց, Թիֆլիս, 1885։

112. Всеобщая история Вардана Великого. Перевел Н. Эмин, Москва, 1861.

113. Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց նախագահ արհիեպիսկոպոսի Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց, շարադրեալ ի թուին Հայոց ՉՃԱ ի կաթողիկոսութեան Գրիգորի Անաւարզեցւոյ, Կոստանդնուպոլիս, 1756։

114. Բ. Ա. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը 10—16-րդ դարերում, Երևան, 1975։

115. Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871։

116. Ս. Հ. Ումառյան, Սյունիքը պիցարան, Երևան, 1981։

117. Մ. Ուռհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898։

118. Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912։

119. Հ. Մ. Քենդերյան, Հովհան Մայրագոմեցի, Երևան, 1973։

120. Մ. Օրմանեան, Ազգապատում, Կոստանդնուպոլիս, 1912—1913։

121. Մ. Օրմանեան, Հայոց եկեղեցին և իր պատմութիւնը, վարդապետութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը ու ներկայ կացութիւնը, երկրորդ տպագրութիւն, Կոստանդնուպոլիս, 1912։

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբաս (Թագավոր)— 241
Աբաս (Ճահկեցի)— 317
Աբաս (Շերանկի որդի)— 202
Աբաղա ղան— 334, 337, 338, 366, 368, 372
Աբդիշո —121
Աբդիու— 108
Աբիսողոմ — 202
Աբիրոն— 298
Աբլ Աբաս— 117, 118
Աբլաբաս (տե՛ս Աշոտ Երկաթ)— 229
Աբլաշաբ— 237
Աբրահամ (կաթողիկոս)— 120, 121, 128, 129, 357, 388
Աբրահամ (Իշտունյաց եպիսկոպոս)— 127
Աբրահամ (Սյունիքի եպիսկոպոս)— 147
Աբրահամ (վանահայր)— 181
Աբրիտոն— 301
Աբուլեթ— 308
Աբունա— 353
Աբուսահլ— 276
Աբուսեճ— 173
Ագաթանգեղոս— 79, 83
Ադամ— 359
Աթաբեկ— 337
Աթանաս (տե՛ս Աղեքսանդրացի Աթանաս)— 142, 145, 364
Աթաշխոդա (նաև Աթաշխուդա)— 85, 107
Ալեքսանդր (Մակեդոնացի)— 162
Ալինախ— 339
Ալփասլան (սուլթան)— 307
Ալփի— 349
Ախթամար (իշխան) — 289, 299
Ահարոն (երեց)— 202
Ահարոն (վանական)— 197
Ահարոն (քահանա)— 199
Ահերմոն— 230, 231
Ահմադ (նաև Թագուտար)— 338, 339

Աղեքսանդրացի Աբրահամ— 140, 142, 143, 151, 354, 364
Աղվանեցի Աբլ Ասադ —166
Աղվանեցի Գագիկ— 246
Ամիրա— 298, 381
Ամիր Ահմադ— 176
Ամովս— 355
Անանիա (I եպիսկոպոս)— 80, 97—100, 108, 109, 357, 385
Անանիա (II եպիսկոպոս)— 147, 386
Անաստաս (եպիսկոպոս)— 117
Անանիա (կաթողիկոս)— 240, 241, 388
Անաստաս (կաթողիկոս)— 388
Անդոկ— 79, 81—84, 86, 94, 98, 194, 254
Անդրեաս— 124
Անեցի Մխիթար— 303
Անձևացյաց Խոսրով (եպիսկոպոս)— 241
Աշնակ —197
Աշոտ— 187
Աշոտ (Բագարատի որդի)— 173, 177
Աշոտ (I Բագրատունի)— 181
Աշոտ (Բագրատունի Շապուհի որդի— 184, 188, 189
Աշոտ (Գրիգոր II Թագավորի պապ)— 279
Աշոտ (Երկաթ)— 188—189
Աշոտ (Շապուհի որդի)— 189, 190
Աշոտ (III Թագավոր)— 181, 249
Աշոտ (IV Թագավոր)— 193, 195, 197, 202, 232, 235, 236, 246, 255, 256
Աշոտ (Կարապինի որդի)— 276
Աշոտ (Սահակի հայր)— 249, 256
Աշոտ (Սյունյաց իշխան)— 174, 177, 182, 212, 215—218, 275
Աշոտ (Սյունյաց տեր Վասակի որդի)— 204
Աշոտ սպարապետ— 188
Աշոտ (Վասակ I-ի փեսան)— 262, 268, 272, 279
Աշոտ (տե՛ս Տեր-Աշոտ)— 250, 251
Աշուշա բդեշխ— 101
Աչիր— 95
Ապիրատ— 269
Ապիրատյան Գրիգոր— 311
Ապողինար— 143
Ապրվեզ Խոսրով— 128
Առան (Երան)— 73
Աստվուր ղան— 323
Ասլան— 371, 372
Ասլան ղան (Նոյին)— 323, 324, 327—330
Ասպուրակես (կաթողիկոս)— 387
Աստվածաբան Գրիգոր— 233

Աստվածաբան Հովհաննես (տե՛ս Հովհաննես ավետարանիչ)— 363
Աստվածատուր— 125
Աստիա— 296, 297, 332
Աստիա (օրիորդ)— 319
Ավագ— 339
Ավագ (Իվանեի որդի)— 320, 324, 325, 329, 333, 334
Ատոմ (Անձևացի)— 173
Ատրներսեհ— 100, 101
Ատրներսեհ— 196, 197, 204
Ատրներսեհ (Աղվանքի իշխան)— 214
Ատրներսեհ (Վարդանի որդի)— 196
Ատրներսեհ (վրաց բդեշխ)— 177, 256
Արդարմոս— 301, 302
Արիոս— 140, 237, 249, 272, 275, 262, 277, 381
Արիստակես— 387
Արծրունի Գագիկ— 177, 183, 184
Արծրունյաց Աշոտ— 173
Արղուն ղան— 330, 331, 338—342, 366—369, 375, 376, 392
Արշակ— 72
Արշակ երեց— 108
Արշակ (Վահանի որդի)— 196
Արտաշես— 99
Արտաշիր— 83, 94
Արտաշիրյան Շապուհ— 98
Արտավազդ— 175
Արտավազդ (Սակռի որդի)— 237, 261
Արուզ խաթուն— 332, 338
Արուխ— 341
Արուման (Հրահատի եղբայր)— 197, 198
Արուման (Ջևանշերի եղբայր)— 204
Արուսյակ— 171
Արփասլան (Ասփասլան)— 299
Ափշին —177, 256
Աքաաբի— 154

Բ

Բաբ (եպիսկոպոս)— 121
Բաբան— 165, 166
Բաբիկ— 69, 86—90, 93—96
Բաբիկ (Ատրներսեհի եղբայր)— 100, 101
Բաբիկ (Հովհանի հայր)— 199
Բաբիկ (Վասակի հայր)— 194
Բաբկեն —172, 177, 183, 188, 190, 191, 207, 211, 212
Բաբկեն (Աշոտի որդի)— 255
Բաբկեն (իշխան)— 95, 104, 151

Բաբկեն (կաթողիկոս)— 357, 387
Բաբկեն (Փիլիպպէի որդի)— 197, 255
Բագարատ— 173
Բագրատ— 172
Բագրատունի Աշոտ I— 172, 176, 180, 185, 188, 189, 255
Բագրատունի Գագիկ (Աշոտ III որդին)— 256
Բագրատունի Գագիկ (Աշոտ IV որդին)— 231, 232
Բագրատունի Շապուհ— 180
Բագրատունի Սմբատ (սպասպետ)— 149
Բագրատունի Սմբատ I— 177, 181, 182, 184, 207, 213, 217, 256, 257
Բագրատունի Սմբատ (սպարապետ)— 171, 173
Բագրատունի Սմբատ (Վրիւան աշխարհի մարզպան)— 127
Բագրատունի Տիրոց— 102
Բաթու ղան— 322, 372
Բակուր— 104
Բակուր (եպիսկոպոս)— 244
Բահաղ— 159
Բաղակ— 71
Բաղացի Տեր-Վահան— 295
Բայտու— 367—370
Բաչու նոյին— 325, 326, 328, 329
Բասիլիոս— 143
Բարդոս— 301
Բարդուղիմէոս (առաքեալ)— 76, 77, 283, 354
Բարսեղ— 140, 143
Բարսեղ (երէց)— 199
Բարսեղ (կաթողիկոս)— 389
Բելիար— 298
Բեկիարուխ— 278
Բենիամին— 97, 98
Բերքա ղան— 332, 372
Բեքայ— 369
Բշղր— 191
Բուղա— 173, 174, 244
Բուղա Զինքսան— 341
Բուղդա— 343
Բուպաք— 319
Բուպաք (աթաբեկ)— 284, 291, 293, 294
Բուրթել— 308
Բուրթել— 298
Բուրթել (Ելիկումի որդի)— 324, 332, 343

Գ

Գագիկ (տե՛ս Արծրունի Գագիկ)— 183—186, 269, 250
Գագիկ (Աղվանքի կաթողիկոս)— 240, 242—246

Գագիկ (Գրիգորի եղբայր)— 255
Գագիկ (Գրիգորի որդի)— 197, 213
Գագիկ (I թագավոր)— 181, 256, 259
Գագիկ (II թագավոր)— 232
Գագիկ (Մուշեղ Բագրատունու թոռը)— 304
Գագիկ (Վասակի որդի)— 275
Գագիկ (Վասպուրականի իշխան)— 212
Գաբեթ— 156
Գաբեղյան Արտեն— 102
Գաբուռ Սահակ— 207
Գաբուռ Վասակ— 172, 174, 177, 255
Գազան— 90, 93
Գաղատ— 109, 385
Գառնեցի Տեր-Գեորգ (կաթողիկոս)— 126, 131, 176, 177, 205, 207, 209, 224, 245
Գդեհոն— 95, 103, 105
Գեեզ— 298
Գեղամ— 70
Գեորգ— 219, 220
Գեորգ (ազատ)— 274, 275
Գեորգ (հոգևորական)— 196, 221
Գեորգ (I կաթողիկոս)— 388
Գեորգ (II կաթողիկոս)— 176
Գեորգ (վարդապետ)— 93
Գեորգ (տե՛ս Գառնեցի Տեր-Գեորգ)— 131, 177, 388
Գեորգի (Անդրեյ Բոգոլյուբսկու որդի)— 316
Գեորգի (III թագավոր)— 303, 310, 336
Գեորգի (II թագավոր)— 308, 310
Գեորգի (Դեմետրեի եղբայր)— 309—316
Գեորգի Լաշա— 284, 294, 295, 316, 319, 335
Գնել— 82
Գնթունի Աշոտ— 214
Գնթունի Սմբատ— 94, 95
Գնունի Մժեժ— 124
Գոնցա (Ավագի կինը)— 320, 325, 329, 330, 334
Գոնցա (Դավթի կինը)— 335
Գոր— 90
Գրիգոր (Աղվանքի իշխան)— 214, 243
Գրիգոր (Արծրունյաց թագավոր)— 247, 248
Գրիգոր (I թագավոր)— 218, 268, 269, 272
Գրիգոր (II թագավոր)— 269—271, 277, 279
Գրիգոր (III թագավոր)— 270, 279, 280—282
Գրիգոր (Բջնեցի)— 362
Գրիգոր երէց— 197

Գրիգոր երէց (Տաշվեցի)— 202
Գրիգոր (Երիցավանքի քահանա)— 197
Գրիգոր (եպիսկոպոս)— 69, 80
Գրիգոր (Ընձաբի հայր)— 199
Գրիգոր (իշխան)— 172, 180, 182
Գրիգոր Լուսավորիչ (նաև ս. Գրիգոր)— 74—79, 83, 97, 99, 105, 106, 120, 121—123, 126, 139, 180, 194, 199, 217, 230, 233, 240—244, 247, 248, 257, 262, 264—266, 281, 284, 296, 331, 335, 347, 351, 355, 356, 368, 376, 377, 385, 387
Գրիգոր (կոչնակ)— 321
Գրիգոր (Հրահատի հայր)— 202
Գրիգոր Ղարա— 337
Գրիգոր (Ղարա Գրիգորի թոռ)— 338
Գրիգոր (Շիրակի իշխան)— 269, 270
Գրիգոր (Սահակի որդի)— 197, 199, 255
Գրիգոր Սյունի— 95, 96
Գրիգոր (Վասակի որդի)— 202, 265
Գրիգոր (վարդապետ)— 197
Գրիգոր (քահանա)— 175, 197
Գրիգոր (Քուպղիդուխտի եղբայր)— 204
Գրիգոր (II կաթողիկոս)— 389
Գրիգոր (III կաթողիկոս)— 351, 389
Գրիգոր (IV կաթողիկոս)— 352
Գրիգոր (V կաթողիկոս)— 389
Գրիգորիոս— 78, 79
Գրիգորիս— 76, 80, 81, 368, 385
Գրիգորիս— 352
Գրիգորիս Ապիրատ— 352
Գրիգորիս (կաթողիկոս)— 388
Գրիգորիս (V կաթողիկոս)— 388, 389
Գրիգորիս (VI կաթողիկոս)— 388
Գուլուկ ղան— 326
Գուրգեն— 248
Գուրգեն բդեշխ— 189
Գուրգեն (իշխան)— 212
Գուրգեն (վանահայր)— 232

Դ

Դաթան— 298
Դանիել մարգարե— 174
Դավիթ— 87, 298, 355, 365
Դավիթ — 248
Դավիթ (Աղվանքի եպիսկոպոս)— 245
Դավիթ (Գեորգի Լաշայի որդի)— 335—338
Դավիթ (Դեմետրե I-ի որդի)— 309, 311, 313, 315
Դավիթ (Դեմետրե II-ի որդի)— 338, 339, 372, 373, 380, 392
Դավիթ (I եպիսկոպոս)— 128, 130, 199, 386
Դավիթ (Բագարատի որդի)— 173
Դավիթ (Շինարար)— 308
Դավիթ (սեղանապետ)— 150
Դավիթ (Սոնաց թագավոր)— 325, 326
Դավիթ (վարդապետ)— 363
Դավիթ (I Վրաստանի թագավոր)— 304, 305, 307, 308
Դավիթ (I կաթողիկոս)— 151, 388
Դավիթ (II կաթողիկոս)— 388
Դավիթ (Մովսես Խորենացու աշակերտ)— 120
Դերենիկ— 183, 232
Դերենիկ Գրիգոր— 176, 183, 213
Դեմետրե I— 308
Դեմետրե II— 335, 336, 338, 339, 341, 372, 392
Դեմնա— 309, 311—314
Դեսպինա— 368
Դիոնիսիոս— 145, 150, 360
Դլեն— 253, 266, 271, 277—279, 380
Դոլոտա— 367
Դուքալ— 367, 369

Ե

Եգրես— 301
Եզեկիել մարգարե)— 156, 162
Եզնիկ— 120
Եզր (կաթողիկոս)— 136—139, 151, 358, 388
Եզրաս (տե՛ս Եզր)— 139
Ելդար— 367, 369
Ելիկոմ— 308
Ելիկոմ (Լիպարիտի հայր)— 291, 292, 295, 296, 297
Ելիկոմ (Ստ. Օրբելյանի եղբայր)— 332, 342, 343, 363, 377, 381, 392
Ելիկոմ (Սմբատի եղբայր)— 316—320, 323—325, 332
Ելիկոմ (Տարսայիճի պապ)— 285
Ելտկուզ— 280, 367, 369
Եղիա— 388
Եղիա (Արճիշեցի)— 130, 241, 244, 357
Եղիա (մարգարե)— 164
Եղիշե— 103
Եղիշե (առաքյալ)— 129
Եղիշե (եպիսկոպոս)— 388
Եղիշե (երեց)— 231
Եղիսե— 388

Ենովք— 164
Եպիփանոս— 151
Եսայի (իշխան)— 214
Եսայի (նչեցի)— 369
Եսվաղին— 80, 98, 131
Եվսեբի— 79
Եվստաթե— 115
Եվտիքես— 140, 146
Երիցակ— 109—112, 119, 221, 385
Երնջի Թուրնջի (տե՛ս Քեղաթուն)— 376

Զ

Զաքարե (ամիրսպասալար)— 284, 294, 295, 316, 318—320, 358
Զաքարիա (տե՛ս Զագեցի Զաքարիա I)— 175, 388
Զաքարիա (տե՛ս Զաքարե ամիրսպասալար)
Զավեն (կաթողիկոս)— 387
Զենոբ (եպիսկոպոս)— 75
Զրվանդատ— 78

Է

Էայի— 343, 363, 371
Էաս (Աղիքսանդրացի)— 124
Էի— 143

Ը

Ըռանձար

Թ

Թագուտար— 338
Թադե— 77
Թադեոս— 79, 86, 121
Թադոս— 202
Թադևոս— 130, 354, 370
Թամար (Թագուհի)— 284—294, 315, 316, 319
Թամթի— 319
Թանկրեդուլ— 325, 326
Թաշար— 369
Թեոդոս (Հունաց արքա)— 86
Թեոդոսիոս— 376
Թեոդորետոս— 123, 141
Թեոդորոս— 366
Թեոդորոս (Կոմիտաս Աղցեցու եղբորորդի)— 135, 136
Թեոդորոս (Մարդպետական եպիսկոպոս)— 130
Թեոդորոս (I կաթողիկոս)— 388
Թեոդորոս (քահանա)— 219—221
Թեոփիլիոս— 145
Թոթամանգու— 372
Թովմա— 77
Թուխլուխ— 341
Թուրք— 197

Ի

Իբաս— 141
Ինա— 314
Իշխանիկ— 247
Իսկարիովտացի— 164
Իսմայել— 279
Իսրայել— (կաթողիկոս)— 388
Իվան դպել— 293
Իվանե— 308
Իվանե (Աբուլեթի որդի)— 308
Իվանե աթաբեկ— 234, 284, 291—296, 298, 337, 358
Իվանե (Իպարիտի որդի)— 315, 320, 332, 363
Իվանե (Սարգսի որդի)— 316—321
Իվանե (Սմբատի եղբայր)— 297
Իվանե սպասալար— 308—315

Լ

Լաշա (տե՛ս Գեորգի Լաշա)— 319
Լեկան— 301
Լևոն (կայսր)— 149
Լևոն (Կիլիկիայի թագավոր)— 340, 344—346, 392
Լևոն (Հռոմի պապ)— 128, 137, 142
Լիպարիտ— 308, 309
Լիպարիտ (Ելիկումի հայր)— 292
Լիպարիտ (Ելիկումի որդի)— 291—297
Լիպարիտ (Իվանեի որդի)— 332, 342, 343, 363, 371, 381
Լիպարիտ (Սմբատի որդի)— 310, 312, 315
Լիպարիտ (Տարսայիճի հայր)— 285, 318—321, 328, 343

Խ

Խաչուն— 298, 317
Խաղբակ— 253, 266, 271
Խաչիկ I— 389

Խաչիկ II— 389
Խաչենեցի Վասակ (տե՛ս Վասակ Խաղբակյան)— 320
Խարբանդա— 376
Խզիլ Ասլան— 284, 316, 317
Խիաթեդդին— 338
Խոնջիբալի— 367
Խոշաք— 329, 334
Խոջա Սահիբ— 334, 366
Խոռխոռունի Գադիշո— 102
Խորազմ— 286
Խոսրով— 197
Խոսրով— 126
Խոսրով (Գագանի սերնդից)— 93
Խոսրով (թագավոր)— 88
Խոսրով Մեծ (տե՛ս Քեքավուս)— 301, 302
Խոսրով (Շարի որդի)— 77
Խոսրով (պարսից արքա)— 96
Խոսրովիկ— 279, 280
Խորազմշահ— 320
Խորասան (այսուհետ՝ Ջալալեդդին)— 321
Խորենացի Մովսես— 99
Խուդափ— 199
Խութլուշահ— 368—373
Խուպասար— 311, 315
Խուռամշի— 367, 369, 372

Ծ

Ծամամ— 284
Ծիրանածին Վասիլ— 259
Ծղուկ— 70

Կ

Կակաղեցի Տեր-Դավիթ— 171
Կամսարական Հրահատ— 104, 105
Կամրագել— 311, 312
Կամրջաձորեցի Սամվել— 79
Կայեն— 172, 178, 189, 249, 255, 261, 272, 294, 298, 333, 377, 381
Կապանեցի Տեր-Հովհաննես— 284, 287, 288, 289, 387
Կավատ— 109
Կատա (Գրիգոր II թագավորի դուստր)— 279, 280
Կատա (Շահանդուխտ թագուհու քույր)— 218, 271
Կատրամիդե— 256, 259
Կարապետ— 333
Կարապին— 276
Կափառնաում— 163
Կեսարացի Բարսեղ— 140
Կյուրեղ— 145, 151
Կյուրիոն— 129, 243, 357
Կյուրոս— 280
Կոմիտաս Աղցեցի— 135, 136, 243, 388
Կոմնենոս— 304
Կոստանդին— 352
Կոստանդին I— 389
Կոստանդին II— 389
Կոստանդին (Կեսարիայի եպիսկոպոս)— 354
Կոստանդին (պատմիչ)— 374
Կոստանդիանոս— 334
Կոստանդիանոս (Մեծ)— 75
Կոտայեցի Տեր-Հովհաննես— 172, 388
Կովկաս— 301
Կորա Քուրդ— 275
Կորխ— 298
Կորյուն— 120
Կտրիճ— 174, 239
Կրման (Վռամ)— 94
Կումսի— 77

Հ

Հաբել— 172
Հազդ— 104—106
Հազկերտ— 94, 99, 100, 102, 106
Հակոբ (եպիսկոպոս)— 246, 247
Հակոբ (երեց)— 197, 199
Հակոբ (մարգարե)— 164, 178, 293
Հակոբ (վանական)— 199
Հակոբ I— 389
Համազասպ— 99
Համազասպ (Սահակի որդի)— 199
Համազասպ (Վասպուրականի թագավոր)— 250
Համամ (Աղվանքի թագավոր)— 244, 250, 256
Համամուհ— 219
Համասպրուհի— 211
Համտուն— 288

Հայկ— 256, 257, 301
Հայկյան Գեղամ— 70
Հասան— 197
Հասան (Բաղքի իշխան)— 280, 287
Հասան (Գրիգորի որդի)— 273, 274
Հասան (Խաչենի իշխան)— 337, 379
Հասան (Կայենի իշխան)— 311
Հասան (Կարապետի որդի)— 333
Հասան Մանդլի —339
Հասան (Պռոշի որդի)— 343
Հասան (Քուրդ Կորայի որդի)— 275
Հարո— 279
Հեղաբել— 154, 298
Հեթում I — 285, 346
Հեթում II— 346, 351, 352, 370, 371, 392
Հեղիաս— 154
Հեղինե— 334
Հերակլ— 135—139, 358
Հերոս— 301
Հերովդիադ— 154
Հըզըմխվաստ— 125
Հիզդրուիզդ— 357
Հիզտրուզիտ— 125
Հմայակ— 199
Հոբնադ— 141
Հոլ— 171, 255, 268
Հոնագուր— 87, 88
Հովաբ(կաթողիկոս)— 388
Հովակիմ— 93
Հովհան— 120
Հովհան (կաթողիկոս)— 243
Հովհան III— 388
Հովհան IV— 388
Հովհան (Բաբլիկի հայր)— 199
Հովհան (իշխան)— 95, 96
Հովհան (Խուդափի հայր)— 199
Հովհան (Ներսեհի որդի)— 197
Հովհաննես (ավետարանիչ)— 123, 128, 142
Հովհաննես (եպիսկոպոս)— 78, 92
Հովհաննես (I կաթողիկոս)— 188, 189, 213
Հովհաննես (II կաթողիկոս)— 121, 388
Հովհաննես (V կաթողիկոս)— 388
Հովհաննես (VI կաթողիկոս)— 388
Հովհաննես (VII կաթողիկոս)— 389
Հովհաննես (IX կաթողիկոս)— 352

Հովհաննես (եպիսկոպոս)— 78
Հովհաննես (կուսակրոն քահանա)— 92
Հովհաննես— 300
Հովհաննես— 308
Հովհաննես (Մարդպետական եպիսկոպոս)— 139
Հովհաննես պատմագիր (տե՛ս Դրասխանակերտցի Հովհաննես)— 130
Հովհաննես (Սյունյաց եպիսկոպոս)— 173, 176, 177
Հովհաննես (քահանա)— 222
Հովհաննես (քահանա Աղոտի որդի)— 250
Հովհաննես (սուրբ)— 154
Հովնան— 242, 244, 245
Հովսեփ (I կաթողիկոս)— 100, 186, 387
Հովսեփ (II կաթողիկոս)— 388
Հոթաթա ղան— 322
Հռիփսիմե (սուրբ)— 136, 194
Հռոմկլայեցի Ստեփանոս— 348, 352, 389
Հռոմմայեցի Լևոն— 272
Հրահատ— 96
Հրահատ (Գրիգորի եղբայր)— 255
Հրահատ (Գրիգորի որդի)— 197, 202, 214
Հրահատ (Սահակի որդի)— 196—199, 204, 273
Հրահատ— 221
Հրասեկ— 71
Հրե— 108
Հուդա— 157, 177, 179—181, 202, 203, 213, 216, 235, 237, 238, 249, 252, 253, 272, 275, 276, 294—299, 333, 337, 381, 384, 393
Հուլավու ղան— 323, 331—334, 336, 366
Հուռ— 197
Հուսիկ— 387
Հուլիոս— 145
Հուստինիանոս— 126, 128

Ջ

Ջագ—71
Ջագիկ III— 192
Ջագիկ— 212, 217, 238
Ջագիկ (եպիսկոպոս)— 241
Ջագիկ (Ջևանշերի հայր)— 212, 256
Ջագիկ (Ջևանշերի որդի)— 238, 239
Ջագիկ (Սյունի)— 214
Ջագիկ (Վահանի որդի)— 197
Ջագիկ (Փարաջի հայր)— 253
Ջագեցի Ջաքարիա (կաթողիկոս)— 388

Ջեռնս—73

Ղ

Ղազան— 341, 368—372, 376, 392
Ղազար— 202
Ղարա ղան— 323
Ղևոնդ— 79
Ղևոնդ երեց— 101
Ղևոնդ (կաթողիկոս)— 387
Ղոնգրաթա— 338

Ճ

Ճահկեցի Հակոբ— 284
Ճենբակուր (թագավոր)— 302

Մ

Մաթուսաղա (եպիսկոպոս)— 135—139, 147, 386
Մաթուսաղա(Հակոբի որդի)— 199
Մաթևոս — 123
Մաժիստրանց Գրիգոր— 312
Մախոժ— 124
Մակար— 119, 385
Մակեդոն— 140, 272
Մահմեդ— 174, 203, 225, 276, 376, 382
Մահմուդ— 288
Մահևան— 280, 298
Մահևան (իշխան)— 274
Մամաս (նահատակ)— 233
Մամբրե — 120
Մամիկոնյան Վահան— 103—106, 109, 120
Մամիկոնյան Վարդ— 125
Մամիկոնյան Վարդան— 99, 102—104
Մամուն ամիրապետ— 381
Մամքա— 381
Մայրագոմեցի Հովհան— 127, 136—138, 358
Մանահիճր Գրիգոր— 120, 357
Մանասե— 127, 128
Մանգու ղան— 326, 327, 330, 331, 335
Մանդակունի Հովհան— 99, 357, 387
Մանկիկ— 197

Մանվել— 338, 339
Մաշտոց (եպիսկոպոս)— 121
Մաշտոց (տե՛ս Սևանցի Մաշտոց կաթողիկոս)— 241
Մաշտոց Մեսրոպ— 80, 81, 97, 98, 135, 357
Մատթեոս (ավետարանիչ)— 128
Մարգարիտ— 155
Մարիամ (նաև Աստվածածին)— 142, 152, 155, 175, 178, 216, 256, 364—366
Մարիամ (Վասակ Սյունու կինը)— 172, 175—177, 180, 181, 185, 186, 255
Մարծանյաց Գրիգոր— 320
Մարկոս— 196
Մարտիրէ— 104
Մելիքշահ (սուլթան)— 269, 277, 278
Մժեժ— 125
Միխայել— 283
Միհրան— 104, 105
Միհրան (Թուրքի որդի)— 197
Միհր Արտաշիր— 121, 124
Միհրներսեհ— 166
Միհրներսեհ (հազարապետ)— 100, 102
Մինա խաթուն— 337
Մխիթար (Անեցի)— 277
Մխիթար (երեց)— 199
Մխիթար (Վահանի հայր)— 197
Մխիթար (վանահայր)— 167
Մշտաքախթեն — 273
Մոկացի Տեր-Անանիա— 218, 240, 241
Մոնոմախ (Բյուզանդիայի թագավոր)— 304
Մովկան— 301
Մովսես (Սյունիքի եպիսկոպոս)— 149
Մովսես (Յուրտավի եպիսկոպոս)— 130
Մովսես— 357
Մովսես (կաթողիկոս)— 120
Մովսես (II Եղվարդեցի)— 125, 129, 357, 388
Մովսես (մարգարե)— 157
Մովսես (տե՛ս Խորենացի Մովսես)— 77, 87, 99
Մորիկ— 127, 128
Մրջյունիկ— 202
Մրվան— 165
Մուշե (եպիսկոպոս)— 77, 109, 111, 357, 385
Մուշե (կաթողիկոս)— 387
Մուշեղ (Սմբատի որդի)— 184, 185, 197
Մուշեղ (Տիրոցի որդի)— 197, 199

Յ

Յովհաննես— 119
Յուսուփ— 177, 182—190

Ն

Նաբուգոդոնոսոր— 280
Նաղիանզացի Գրիգոր— 140, 141
Նախավկա Ստեփանոս— 90, 194, 258
Նախիջևանցի Խավանդ Եսուգան— 355
Նավռուզ— 368—372
Նեոկեսարացի Սքանչագործ Գրիգոր— 140
Նեռ— 129, 294, 296, 377, 383
Ներս (եպիսկոպոս)— 121
Ներսեհ— 197
Ներսեհ (Շիրակի իշխան)— 104
Ներսես (Բակուր)— 358
Ներսես (իշխան)— 199
Ներսես (II կաթողիկոս)— 120, 357, 387
Ներսես (III կաթողիկոս)— 388
Ներսես (IV կաթողիկոս, Շնորհալի)— 352, 389
Ներսես (Մեծ)— 79—81, 194, 233, 387
Ներսես (վարդապետ)— 373
Նեստոր— 121—123, 141, 142, 272, 359
Նյուսացի Գրիգոր— 140, 150
Նշնա— 77
Նոյ (Նահապետ)— 162
Նսըր —190—192, 256
Նու (ճգնավոր)— 154
Նուն (տե՛ս Տեր-Նուն)— 109, 385

Շ

Շաբիթա— 97, 113
Շալվե— 221, 335
Շահակ— 387
Շահանդուխտ (Գրիգորի կինը)— 218, 268, 270—272, 278, 279
Շահանդուխտ (Սմբատի կինը)— 224, 225, 251, 256, 257
Շահանդուխտ (Վարազ Տրդատի դուստր)— 169, 170
Շահանշահ— 339
Շահանշահ (Զաքարեի որդի)— 320, 324
Շահապ— 71
Շահիրեխտ— 108

Շաղատենեցի Արտավազդ— 175
Շապուհ— 197
Շապուհ (Գողթնեցի)— 113
Շապուհ (պարսից արքա)— 82—88, 94, 95
Շար— 77
Շարաւիեդդին— 330
Շերանկ— 202
Շիմոն— 185
Շինող Ներսես— 187
Շնորհավոր— 299
Շուշան— 182, 183, 186, 187, 207, 215, 216

Ո

Ոսկեբերան Հովհան— 243
Որմիզդ— 82, 88, 96

Չ

Չաղատայ ղան— 323
Չանգզ ղան— 323, 326
Չիպաուչի— 372
Չորմա ղան— 323
Չորթման— 277, 278
Չուխան— 372

Փ

Փալունի Վարազշապուհ— 102
Փապ— 82
Փապաք— 363
Փետրոս (առաքյալ)— 143, 206, 208, 209, 218, 369
Փետրոս (եպիսկոպոս)— 290, 389
Փետրոս (երեց)— 202
Փետրոս (նահատակ)— 145
Փետրոս (Քերթող)— 69, 81, 87, 88, 99, 119, 121, 122, 129, 357, 386,
Փերոզ— 106
Փիղատոս— 144, 145, 252
Փիրան— 96
Փողոս (առաքյալ)— 141, 143, 144, 146, 157, 206, 208, 209, 218, 365
Փողոս (երեց)— 202
Փողոս (վանքի առաջնորդ)— 234
Փռոշ— 289, 291, 300, 320, 343, 363
Փրոկղին— 140
Փրոկղոս— 143

Ջ

Ջալալ (Հասան-Ջալալ-Դոլա)— 337, 379
Ջալալ (Հասան-Ջալալի թոռ)— 337, 342, 368, 382
Ջալալեդդին— 320
Ջաղել Մեմնա— 293, 311
Ջանադ— 197
Ջաֆար— 173, 174
Ջևանշեր— 238
Ջևանշեր (Թեոդորոսի որդի)— 197
Ջևանշեր (Զաքիկի որդի)— 192, 207, 212, 217, 218, 233, 241, 246—248, 256
Ջևանշեր (Սահակի որդի)— 202, 203
Ջոսլին— 351
Ջուրջ(ի)— 280, 381

Ռ

Ռաբբե— 196
Ռահիբ — 274, 276
Ռան ամիրա— 256
Ռշտունի Թեոդորոս— 136—138, 240, 262, 388
Ռշտունի Թեոդորոս (իշխան)— 136
Ռոբովամ— 82
Ռոմանոս կայսր— 188
Ռուսուդան— 335

Ս

Սաբել— 362
Սադադոլա— 366
Սադոկ— 199
Սադուն Աքաբեկ— 339, 343
Սաֆախ— 372
Սակռ— 237, 261
Սահակ— 96, 97
Սահակ (Աղվանքի կաթողիկոս)— 240—242, 245
Սահակ (Գարդմանի տեր)— 214
Սահակ (Գրիգորի հայր)— 197, 255
Սահակ (Գրիգոր Սուփանի եղբայր)— 185, 212
Սահակ (Գրիգոր Սուփան I-ի հայրը)— 171, 172, 254, 255, 268
Սահակ (կաթողիկոս)— 388
Սահակ (Համազասպի հայր)— 199
Սահակ (Հրահատի հայրը)— 196—199
Սահակ (Նահատակ)— 125
Սահակ (Նորիքի քահանա)— 199

Սահակ (Ջևանշերի հայր)— 203
Սահակ (Սյունյաց մեծ իշխան Աշոտի որդի)— 183, 185, 187, 188, 190, 191, 229, 230, 249, 255, 275
Սահակ (Սմբատի հայր)— 251, 256, 268
Սահակ (Սևադա)— 188, 189
Սահակ (սուրբ)— 194
Սահակ (Վասակ Գաբուտի որդի)— 174, 177
Սահակ (Վասակի որդի)— 197
Սահակդուխտ— 152
Սահակիա— 109, 110
Սահակ Պարթև— 77, 80, 98—100, 135, 262, 387
Սահառունի Դավիթ— 136
Սահիբ դիվան (տե՛ս Խոջա-Սահիբ)— 339
Սամվել (կաթողիկոս)— 387
Սամվել (նահատակ)— 125
Սարգիս (Արիտցի)—202
Սարգիս (Գնդեվանքի վանահայր)— 232
Սարգիս (իշխան)— 196
Սարգիս (հոգևորական)— 196
Սարգիս (I կաթողիկոս)— 389
Սարգիս (Նորավանքի փակակալ)— 333
Սարգիս (սպարապետ)— 286, 297, 300
Սարգիս (վանքի առաջնորդ)— 231
Սեդրակ— 300
Սեթ— 234
Սենեքերիմ I— 268—279
Սենեքերիմ (Գրիգորի որդի)— 248
Սենեքերիմ (իշխան)— 242, 248
Սերգե Նահատակ— 187
Սիմեոն (Աղվանքի կաթողիկոս)— 245
Սիմեոն (դիվահար)— 155
Սիմեոն (վանական)— 197
Սիմոն— 180
Սիմոն (կախարդ)— 253
Սիոն— 388
Սիսակ— 69, 71—73
Սիրչազ— 376
Սկևռացի Ստեփանոս— 348
Սմբատ— 308
Սմբատ (Աշոտի եղբայր)— 249, 251, 268
Սմբատ (Իվանեի եղբայր)— 314
Սմբատ (Իվանեի հայր)— 310
Սմբատ (Իվանեի որդի)— 308, 310
Սմբատ (I Բագրատունի)— 177, 181—188, 191—195, 207, 209, 212,

218, 222—226, 228, 230, 232, 235, 236, 240, 256, 261
Սմբատ (II Բագրատունի)— 249
Սմբատ (Գրիգորի II-ի եղբայր)— 279—281
Սմբատ (Հիպարխի որդի)— 286, 296, 297, 320, 324—331, 334—337, 342, 373
Սմբատ (Մուշեղի հայր)— 197
Սմբատ (Ներսեսի որդի)— 199
Սմբատ (Սենեքերիմի որդի)— 269, 271, 277
Սմբատ (Սմբատ թագավորի եղբորորդի)— 185, 187, 268
Սմբատ (Սյունիքի թագավոր)— 185, 187, 249, 251, 252, 253, 256, 257, 268
Սմբատ (II Սյունիքի թագավոր)— 260, 268, 270, 275
Սմբատ (սպարապետ)— 172—174
Սմբատ (Վասակի եղբայր)— 255
Սմբատ (Վրկանի մարզպան)— 127
Սմբատ (ցուցափետցի իշխան)— 202
Սյունեցի Հակոբ— 246
Սյունեցի Մաթուսաղա— 136
Սյունեցի Ստեփանոս— 148, 155, 168
Սյունի Ներսեհ— 165
Սյունի Սահակ (Վասակ Իշխանիկի որդին)— 127, 168, 171, 177, 180, 195
Սյունի Սմբատ— 184, 188—190
Սուփան Սյունի (տե՛ս Սուփան Գրիգոր I)—172
Սյունի Վասակ— 175, 177, 256, 275
Սողոմոն— 148, 166
Սողոմոն (եպիսկոպոս)— 202—206, 220
Սողոմոն (Իմաստուն)— 166, 240
Սողոմոն (կաթողիկոս)— 388
Սողոմոն (Մաքենոցաց առաջնորդ)— 126, 127
Սողոմոն (վանահայր)— 166
Սոսյան— 316
Սոփի (ա)— 183, 186, 187, 229—232, 237, 238
Սոփիա— 272
Սպրամ— 244, 357
Ստեփան (տե՛ս Տեր-Ստեփանոս III եպիսկոպոս)— 290
Ստեփանոս— 78
Ստեփանոս (Անիի կաթողիկոս)— 257
Ստեփանոս (իշխան)— 165
Ստեփանոս (Միծձոնավանքի վանական)— 197
Ստեփանոս Կոն— 173
Ստեփանոս (Մաքենոցաց վանական)— 175, 197
Ստեփանոս (մենակյաց)— 150
Ստեփանոս (II կաթողիկոս)— 388
Ստեփանոս (III կաթողիկոս)— 358, 388
Ստեփանոս (Տեր-Գեորգի որդի)— 221, 222
Ստեփանոս (տե՛ս Տեր-Ստեփանոս Օրբելյան)— 332, 339, 340, 373, 390
Ստեփանոս (Տիրոցի որդի)— 199
Սուլեմ— 71
Սուլթան— 366
Սուրախտամբեկ— 327
Սուրբ Հակոբ— 360
Սուրբ Ստեփանոս Նախավկա—285
Սուփան Գրիգոր I— 168, 172, 183—185, 188, 195, 197, 212, 214
Սուփան Գրիգոր II— 166, 175—179, 255
Սուփան Գրիգոր (Սուփան Գրիգոր II որդի)— 255, 256
Սուփան (Սակոի որդի)— 261
Սուքա— 372
Սքանչելագործ Գրիգոր— 331, 354
Սևադա (Աղվանքի իշխան)— 251, 256, 268, 272
Սևադա (պարսիկ իշխան)— 171
Սևադա (Սենեքերիմի որդի)— 269, 271, 275
Սևադա (Սմբատ թագավորի որդի)— 224, 225, 257, 258, 262
Սևանցի Մաշտոց (տե՛ս Մաշտոց կաթողիկոս)— 126, 131, 167, 175, 209, 220, 388
Սևինճ բեկ— 330

Վ

Վախթանգ— 104
Վահան— 77
Վահան (Անակի հայր)— 197
Վահան (Արշակի հայր)— 196
Վահան (Բաբկենի որդի)— 197, 255
Վահան (եպիսկոպոս)— 240, 247—250, 258
Վահան (կաթողիկոս)— 388
Վահան (Զագիկի հայր)— 197
Վահան (Մխիթարի որդի)— 197
Վահան (Զևանշերի եղբայր)— 192, 217
Վահան (Զևանշերի որդի)— 218, 247
Վահանիկ— 237
Վահրամ— 286
Վաղարշ— 106
Վաղարշակ— 72
Վաղինակ— 95, 97
Վանական վարդապետ— 362
Վաչագան— 117, 118, 120
Վասակ— 219
Վասակ (Անդոկի որդի)— 94, 95, 98—104
Վասակ (Աշոտի որդի)— 183, 212, 255
Վասակ (Ատրներսեհի հայր)— 196, 197
Վասակ (Բաբիկի որդի)— 194

Վասակ (Բաղացի Տեր-Վահանի որդի)— 275
Վասակ (Գնթունի)— 214
Վասակ (Գրիգորի հայր)— 202
Վասակ (Իշխանաց Իշխան)— 165, 172—174
Վասակ Իշխանիկ— 173, 176, 195, 197, 219, 235, 255, 268
Վասակ (Խաղբակյան)— 289, 291, 300, 320, 343
Վասակ (Մամիկոնյան Վարդի որդի)— 165
Վասակ (Շաբիթայի որդի)— 113, 114
Վասակ (Ջևանշերի որդի)— 239
Վասակ (Սահակի եղբայր)— 188—190
Վասակ (Սահակի հայր)— 197
Վասակ (Սմբատի եղբայր)— 188, 255
Վասակ (Սյունեցի)— 298
Վասակ (Սյունյաց Սմբատ թագավորի որդին)— 193, 224, 225, 232, 246, 251, 252, 256, 257—262, 268, 275
Վասակ (Սուփան Գրիգորի եղբայր)— 185, 188, 212, 256
Վասակ (Վասակ Գարուռի որդի)— 174, 177, 255
Վասակ (Փիլիպեի հայր)— 172—195, 196, 204, 207, 226, 236, 254, 268, 275
Վասակ (Քուպղիդուխտի եղբորորդի)— 204
Վասակ (Քուպղիդուխտի հայր)— 204
Վասղուղ— 95
Վարազգուխտ— 281
Վարազվաղան— 95, 100, 101, 109
Վարազտիրոց— 199
Վարդ— 202
Վարդան (Աարոնեբսեհի հայր)— 196
Վարդան (Գրիգոր Լուսավորչի որդի)— 368
Վարդան (Մամիկոնյան)— 103, 106
Վարդան (Ջանադի որդի)— 197
Վարդան (Վահանի հայր)— 197
Վարդիկ (Թադեոսի որդի)— 202
Վարդիկ (վանահայր)— 282
Վեհմիր Շապուհ— 99
Վիժան— 199
Վռամ— 94, 95
Վռամշապուհ— 95, 99, 100, 118
Վրթանես (եպիսկոպոս)— 121
Վրթանես (կաթողիկոս)— 387

S

Տարոնացի Աբրահամ— 121
Տարսայիճ (Նլիկոմի եղբայր)— 320, 332—342, 363, 368, 373
Տարսայիճ (Լիպարիտի որդի)— 286, 300, 373, 380, 381, 392
Տեր-Աբրահամ (եպիսկոպոս)— 147, 386
Տեր-Աբրահամ— 181
Տեր-Անանիա (I Մոկացի)— 241—250, 259, 262
Տեր-Աչոտ— 250, 251, 386, 387
Տեր-Բարսեղ— 283, 284, 386
Տեր-Դաղատ— 385
Տեր-Գևորգ— 195, 202
Տեր-Գևորգ (տե՛ս Գառնեցի Տեր-Գևորգ)— 131, 176
Տեր-Դիգան— 121, 386
Տեր-Գրիգոր— 252—254, 257, 258, 386
Տեր-Գրիգոր II— 125, 386
Տեր-Գրիգոր (Տեր Գրիգորիս III կաթողիկոս)— 225, 226, 273—276, 284, 351, 354, 355
Տեր-Գրիգոր IV— 270—273, 279, 283, 286
Տեր-Գրիգոր V— 284, 290, 317, 350, 386, 387
Տեր-Գրիգոր (Անավարզեցի)— 352
Տեր-Գրիգոր (Տղա)— 290, 389
Տեր-Գրիգոր— 341
Տեր-Գրիգոր— 362
Տեր-Գրիգորիս (եպիսկոպոս)— 284
Տեր-Գևորգ— 168, 386
Տեր-Դավիթ I— 128, 130, 135, 386
Տեր-Դավիթ II— 168, 175, 195, 199, 201, 205, 273, 386
Տեր-Դավիթ (Կակաղեցի)— 171, 172
Տեր-Եղիա (եպիսկոպոս)— 168, 386
Տեր-Երիցակ— 385
Տեր-Զաքարիա (կաթողիկոս)— 121, 201
Տեր-Թեոդորոս (եպիսկոպոս)— 168, 386
Տեր-Թեոդորոս (տե՛ս Ռշտունի Թեոդորոս)— 240, 241, 262
Տեր-Խաչիկ— 250
Տեր-Կոստանդին II— 340, 346, 348, 350, 351, 374
Տեր-Կոստանդին (Բարձրաբերդեցի)— 292, 296, 300
Տեր-Հակոբ (եպիսկոպոս)— 251, 253, 386
Տեր-Հակոբ (եպիսկոպոս)— 228, 230, 231, 235—242, 259, 273
Տեր Հակոբ (Տե՛ս Տեր Հակոբ Կլայեցի)— 218, 221, 226, 227, 340
Տեր-Հակոբ II— 224
Տեր-Հակոբ (Կլայեցի)— 300, 301, 340, 346, 374
Տեր-Հակոբ (Հերձվածող)— 386
Տեր-Հայրապետ— 285, 286, 329, 333, 334, 344, 345, 373, 386
Տեր-Հովակիմ— 168, 386
Տեր-Հովհան— 147, 386
Տեր-Հովհաննես— 168, 386
Տեր-Հովհաննես (Բջնու եպիսկոպոս)— 362
Տեր-Հովհաննես (Գաբեղյան կաթողիկոս)— 121, 125
Տեր-Հովհաննես (Դրասխանակերտցի V)— 176, 178, 179, 181, 205—209, 211, 212, 213, 215, 216, 218, 220, 225, 226, 237, 336

Տեր-Հովհաննես IV— 201
Տեր-Հովհաննես VII— 232, 247, 254, 258, 259, 262, 267, 270, 352, 376
Տեր-Հովհաննես VIII— 285, 292, 329, 386
Տեր-Հովհաննես IX— 268, 341, 345, 374, 386
Տեր-Հովհաննես (Տեր Աշոտի որդի)— 251, 386
Տեր-Հովհաննես (Հաղպատի եպիսկոպոս)— 362
Տեր-Հովհաննես (Տաթևի եպիսկոպոս)— 300
Տեր-Հովհաննես (իշխան Համտունի թոռը)— 280
Տեր-Հովսեփ I— 147, 386
Տեր-Հովսեփ II— 186, 386
Տեր Մաթուսաղա Քերթող— 386
Տեր-Մաշտոց— 385
Տեր-Մաշտոց (տե՛ս Սևանցի Տեր-Մաշտոց)— 126, 131
Տեր-Մարգարե— 362
Տեր-Մխիթար— 362
Տեր-Մովսես (եպիսկոպոս)— 147, 386
Տեր-Մովսես (կաթողիկոս)— 124
Տեր-Մուշե— 385
Տեր-Նուն— 385
Տեր-Պետրոս Քերթող— 386
Տեր-Սադովկ— 168, 386
Տեր-Սամվել— 251, 386
Տեր-Սարգիս (եպիսկոպոս)— 297, 374, 387
Տեր-Սարգիս (կաթողիկոս)— 232, 247, 258, 260, 269
Տեր-Սարգիս (Նորավանքի վանահայր)— 341, 362
Տեր-Սարգիս (Տեր-Ստեփանոս III-ի քրոջ թոռը)— 285, 286, 290—296, 300, 320, 333, 341, 374
Տեր-Սիմեոն— 209, 214
Տեր-Սողոմոն (I եպիսկոպոս)— 168, 174, 286
Տեր-Սողոմոն (II եպիսկոպոս)— 201—207, 220, 386
Տեր-Սողոմոն (III եպիսկոպոս)— 285, 386
Տեր-Սողոմոն (վանահայր)— 181
Տեր-Սողոմոն IV— 285, 333, 386
Տեր-Ստեփանոս— 386
Տեր-Ստեփանոս— 286, 297, 374
Տեր-Ստեփանոս (Աղվանքի կաթողիկոս)— 218, 342, 392
Տեր-Ստեփանոս (II եպիսկոպոս)— 271, 277, 283, 286
Տեր-Ստեփանոս (III եպիսկոպոս)— 284, 285, 290—292, 317, 319, 374, 387
Տեր-Ստեփանոս (կաթողիկոս)— 250
Տեր-Ստեփանոս (տե՛ս Հոմսկլայեցի Ստ.)— 350, 351
Տեր-Ստեփանոս (տե՛ս Ստեփանոս (Օրբելյան)— 341, 342, 380, 386
Տեր-Ստեփանոս (քահանա)— 221, 222
Տեր-Վահան (Բարկենի որդի)— 197
Տեր-Վահան (եպիսկոպոս)— 249, 263, 386

Տեր-Վրթանես— 121, 124, 125, 386
Տեր-Քրիստափոր— 386
Տիգրան— 204
Տիգրան— 238, 239
Տիրանուն երեց— 202
Տիրոտ— 90—92
Տիրոց— 197, 199
Տոնդուզ խաթուն— 334
Տրդատ (արքա)— 74, 75, 78
Տրդատ I կաթողիկոս— 388
Տրդատ II կաթողիկոս— 388
Տրդատ Վարազ— 165, 169

Ց

Ցուցան— 338

Ու

Ուխտանես— 126, 131
Ույծեցի Փանոս— 93
Ուռնայր (Աղվանքի թագավոր)— 243
Ուրծի Ներսեհ— 102

Փ

Փախրադոլա (Լիպարիտի որդի)— 297, 320, 332
Փախրադոլա (Տարսայիճի որդի)— 332, 385
Փալտուն ամիրա— 273
Փահլավան— 286, 287
Փառանձեմ— 82
Փառնավազ— 303
Փառներսեհ— 387
Փարաջ— 253
Փարպեցի Ղազար— 103
Փիլիպե— 195—199, 204, 207, 212, 219, 227, 268, 376
Փիլիպե (Սյունի Վասակի հայր)— 165, 168, 236, 237, 255, 256
Փիլիպե (Վասակի որդի)— 172, 177, 226, 228, 236
Փնտուխտար— 349
Փոկաս— 286, 287

Ք

Քամի— 298
Քավթար— 314
Քարթլոս— 301, 302
Քեղաթուն— 367, 376, 380
Քերթող Վրթանես— 125, 126

Քեքավուս— 301—303
Քվե խոսրով— 302
Քրիստափոր II— 387
Քրիստափոր III— 136, 154, 388
Քրիստափոր (Գնդեվանքի վանահայր)— 232
Քրիստափոր (եպիսկոպոս)— 125, 127, 128, 154, 357, 386,
Քրիստափոր (Ստ. Օրբելյանի եղբորորդի)— 222
Քրիստոս (նաև Հիսուս)— 99, 105—108, 112, 115, 119—124, 134, 139, 141—146, 150—152, 154, 162, 167, 169, 170, 173, 178—180, 183, 197, 200 201, 209, 216, 219—222, 227, 233, 235, 238, 239, 258, 259, 267, 271—273, 284—287, 294—296, 305—307, 333, 335, 341, 347, 349, 350, 352, 354, 356, 359, 360, 363, 365, 380—382, 385, 388, 390, 393
Քրիստոսասեր— 115—119
Քուրդ— 151
Քուրդո— 96

Օ

Օձնեցի Հովհան— 139, 151, 358, 388
Օձան— 341
Օրբելյան Լիպարիտ— 304—307
Օրդուղան— 366

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Ա

Աբասաշեն— 383
Աբխազիա— 295
Աբկավանք— 402
Ագարակ (Արևիք գավառ)— 402
Ագարակ (Բաղք գավառ)— 400
Ագարակ (Հաբանդ գավառ)— 399
Ագարակ (Ճահուկ գավառ)— 404
Ագարակ (Վայոց ձոր գավառ)— 396
Ագարակ— 308, 311
Ագարակիկ— 395
Ագարակի ձոր (գյուղ)— 290, 294—296, 396
Ադախ— 243
Ադանա— 374
Ազատ (գյուղ)— 298
Ազարիա— 230
Աթենք— 150
Աթխուլք— 401
Աթղեկ— 394
Աժդակ— 401
Ալադա— 331
Ալամալիխ— 322
Ալամանաց սահման— 322
Ալանաց դուռ— 372
Ախալքենք— 397
Ախնեն— 394
Ախոռատուն— 398
Ածափ վանք— 290
Ականա— 400
Ականք (Աղահեճ գավառ)— 399
Ականք (Եվալլխ գավառ)— 395
Ականք (Սոթից գավառ)— 398
Ակարդան— 400
Ակն— 401
Ակոռի— 297, 298, 404

Ահերմոնի վանք— 231
Ահր— 264
Ագարո— 181
Աղաթաղք— 402
Աղաթմարաթ— 394
Աղախիրդ— 399
Աղահեճ— 70, 263, 398
Աղահորդ— 401
Աղավնո գետ— 114, 117, 263
Աղբաբույնի— 396
Աղբերախաչ— 404
Աղբերաձոր— 398
Աղբերիս— 393, 394
Աղբին— 202
Աղեքսանդրիա— 142, 145
Աղթա— 381
Աղթաբույնի— 396
Աղթամար— 285
Աղիտու— 395
Աղխիտու— 93
Աղվերծն— 236, 237
Աղյավ— 396
Աղվանք կամ Աղվանից աշխարհ— 73—75, 80, 83, 98, 99, 102, 117, 120, 121, 125, 126, 129—131, 165, 166, 169, 209, 214, 218, 240—148, 275, 263, 301, 342, 357, 368, 392
Աղնջոց բերդ— 396
Աղոսկեն— 396
Աղոչրիկ— 400
Աղստև— 319
Աղվո վանք— 402
Աղտավ— 404
Աղու— 404
Աղունո գետ— 378, 379
Ամանան— 217
Ամեն— 70
Ամաղու— 396
Ամասրիա— 397
Ամասրո վանք— 403
Ամառաշեն— 403
Ամարաս— 75, 368
Ամբրավաքար— 276
Ամենափրկիչ անապատ— 387
Ամեռնափոր— 397
Ամու Մորան— 322

Այրարատյան գավառ (նաև նահանգ, աշխարհ)— 101, 257, 307, 321, 339, 373
Այրիվանք— 172, 234
Այրք— 398
Անական— 400
Անապատ (բերդ)— 283
Անապատ— 297
Անապատ (Սոթից գավառ)— 398
Անավարգա— 382
Անատաց ձոր— 401
Անբերդ— 316
Անգանք— 396
Անգեղակոթ— 395
Անգեղի— 396
Անդոկա բերդ— 71, 401
Անիժ— 398
Անի— 179, 250, 256, 280, 293, 307, 308, 310, 316, 324, 339, 358
Անծնյակ— 401
Անկյուրիա— 323
Անձկայք— 399
Անկուզիկ— 403
Անմեռ— 179
Անտիոք— 128, 323, 349, 353
Անուշավան— 399
Անուշավան (Ճահուկ գավառ)— 404
Անուշ բերդ— 72
Աշորնիք— 331
Աշորնյաց ձոր— 186
Աշտարակ— 402
Աշաղվա գետ— 217
Աշաղու— 217, 400
Ասպանա— 395
Ասպարանից գետ— 395
Ասպարանք (երնջակ գավառ)— 403
Ասպարանք (Վայոց ձոր գավառ)— 395
Ասպրակունիք— 300, 403
Աջառագավիթ— 395
Աջարաջ— 403
Աջողք— 395
Առան— 269, 304, 316, 317, 323
Առանա դաշտ— 73

Առաքելոց վանք (տե՛ս ս. Առաքելոց եկեղեցի)— 276, 284
Առնջո հուն— 397
Ասխոզ— 398
Ասորիք (նաև Ասորաց աշխարհ)— 75, 83, 135, 157, 323
Աստապատ— 283
Աստվածածին (գյուղ)— 398
Աստվածածին անապատ— 387
Ավագ ակն— 153
Ավազան— 397
Ավարագետք— 400
Ավարակ— 399
Ավելադաշտ— 211, 229
Ավեշ— 297
Ավետյաց երկիր— 186
Ավերակի— 404
Ավերք— 401
Ավժեն— 398
Աուշար— 231, 396
Աուռ— 400
Ատրմղենաբակ— 398
Ատրպատական— 76, 83, 100, 182, 187, 190, 191, 256, 265, 304, 317, 320, 325
Արմնալ— 398
Արաբիա— 162
Արաբստան— 323
Արագած լեռ— 188
Արագածոտն— 111
Արահուձ— 399
Արազ— 317
Արամոնս (նաև Արամոնք)— 120, 151
Արաստամուղ— 214, 215, 216
Արավայր— 217
Արավիսաբակ— 397
Արատենք— 396
Արատես— 374, 383
Արատինից վանք— 282
Արարատյան աշխարհ (տե՛ս Այրարատյան գավառ)— 367, 339
Արգար— 402
Արգիճի— 397
Արգինա— 240, 249
Արգու գետ— 404
Արդուլիք— 263
Արենի— 396
Արթնք— 394
Արիտ— 210, 271, 272, 277, 394

Արծիվ— 195, 394
Արծիվակատար— 195
Արկազան— 154
Արկազն— 396
Արկաքուկերտ— 396
Արկանի ձոր— 400
Արձանաձոր— 400
Արմազ լեռ— 301, 302
Արմավաշեն— 404
Արմնալ— 398
Արյաց աշխարհ— 82—87
Արշարունիք— 135
Արշարունյաց գավառ (Արշարունիք)— 307
Արոր— 396
Արոքս— 202, 203, 400
Արվական— 399
Արտաբոյնք— 396
Արտաբույնք— 107
Արտագետ— 399
Արտազ (գավառ)— 102
Արտաշեն— 400
Արտավազ— 198
Արտավիլ— 264
Արտեն— 401
Արտիճի— 397
Արտոց գետ— 395
Արցախ— 107, 186, 377, 380
Արցախամայրի— 402
Արուճ— 395
Արփա (գյուղ)— 285, 299, 341, 342, 381, 382
Արփունք— 397
Արքո (Ագահեճ գավառ)— 399
Արքո (Հաբանդ գավառ)— 400
Արքույքա— 404
Արևես— 394
Արևեք— 403
Արևիք— 70, 76, 210, 263, 279, 402
Աքաճի— 394
Աքքա— 349

Բ

Բաբելաս— 77
Բաբունք— 404
Բագախու— 403
Բագավան— 106
Բագրեանդ— 106

Բաշխածակը— 400
Բաշխ— 223
Բակավանք— 403
Բակափոր— 398
Բակերտ— 396
Բակուրի վանք— 401
Բահիղաձոր— 400
Բահու բերդ— 401
Բաղաբերդ— 70, 71, 84, 85, 86, 217, 279, 403
Բաղախանիք— 399
Բաղակի քար (Բաղակաքար)— 71, 279
Բաղասական գավառ— 166
Բաղաց ամրոց— 295
Բաղաց գավառ (երկիր)— 71, 114, 169, 192, 269, 271, 279
Բաղաց ձոր— 213
Բաղդադ — 177, 304, 323, 307, 367
Բաղք (գավառ)— 70, 76, 111, 169, 173, 177, 193, 202—204, 207, 210 218, 224, 232, 400
Բաղք մյուս (տե՛ս Քաշունիք)— 401
Բասեն— 79, 121, 127, 128, 331
Բաձյանք— 256
Բասր— 323
Բասրա— 304
Բարեբվայր— 400
Բարկուշք— 398
Բարկուշատ գավառ— 111, 114, 118, 276, 316, 319, 332, 401
Բարկուշատա բերդ— 71
Բարձի շեն— 395
Բարձրութաղք— 402
Բացահոր— 212
Բեթանիա վանք— 307
Բեթղեհեմ— 112, 211
Բեթսաիդա— 163
Բեխ— 202, 203, 402
Բեխորոտ— 403
Բեխևերջի— 402
Բեհհատին ամրոց— 351
Բեշ— 403
Բեշպալեխ— 322
Բերան— 397
Բերդ— 211
Բերդականեցիք (նաև Բերդանեցիք, Բերդականերիչ)— 195, 196, 274—276, 394
Բերդաձոր— 398

Բերդիկ— 403
Բերդի մայր— 396
Բերդն— 394
Բերկրի— 218
Բերքնի— 402
Բլուր— 404
Բղեան— 394
Բղենո— 279, 316, 329
Բղենո բերդ— 71
Բյուզանդիա— 75, 86, 87, 114, 125—128, 137, 139, 147, 161, 162, 304, 323, 337, 367, 368
Բյուրոտի վանք (գյուղ)— 395
Բնունիք— 210, 396
Բոթիբոթեր— 117
Բոլորաքար— 253, 271
Բողաշեն— 179
Բողխոչոխ— 399
Բողյան— 400
Բողոտի չուր— 395
Բոստ— 402
Բոտելեց— 181
Բոր— 396
Բորոդանա բերդ (Բորոտն)— 71
Բորոտան— 316, 400
Բորոտն— 329
Բորոտնա բերդ— 320, 328
Բորտ— 333
Բորտի— 395
Բորտո բերդ— 71
Բոքս— 400
Բշնի— 293, 304, 316, 332, 362
Բռնակոթ— 394
Բստեձոր (նաև Բստիձոր)— 259, 268
Բրտի այրք— 397
Բուլղարաց երկիր— 322
Բուստ— 259, 403

Գ

Գաբավոն— 156
Գագ— 308
Գազավանք— 402
Գագի գաշտ— 310
Գազբուլ— 212, 213
Գադ— 403
Գաղատա— 395

Գաղատիա— 161
Գալլակաթ— 404
Գալլոց վանք— 395
Գանգրա— 325
Գանձակ— 269, 283, 294, 315, 316, 318
Գանձաղ անտառ— 397
Գանձասար— 243
Գանձափարախի վանք— 387
Գայլյանք— 130
Գառնակեր— 338
Գառնի —179, 316, 324
Գառնու ձոր— 152, 210, 321
Գավակ— 196
Գարդման— 186, 189, 214, 257, 316
Գաշտեուք— 293
Գհհենիք— 404
Գեղամ— 282
Գեղամա գավառ— 254
Գեղամա լեռներ— 234
Գեղամաբակ— 398
Գեղարքունի(ք)— 70, 166, 177, 188, 189, 195, 207, 210, 235, 238, 257 259, 260, 263, 296, 319, 329, 338, 397
Գեղարքունվո բերդ— 71
Գեղաքունի— 397
Գեղե ամրոց— 321
Գեղին— 279
Գեղո վանք— 403
Գեննեսաքաղք— 399
Գետաբակ — 398
Գետակից— 394
Գետակն— 385
Գետամեջ— 181
Գետավանայց ծով— 181
Գետիկ— 395
Գերատու— 397
Գիլան— 369
Գինական գետ— 396
Գիշերաձոր նկեղեցի— 379
Գիրկն— 402
Գլակա վանք— 75
Գլխերաց— 347
Գլխերաց եկեղեցի— 351
Գղվրիոտ— 395
Գյուղ Կովսականն— 401
Գնդայի վանք (տե՛ս Գնդեվանք)— 282

Գնդաշեն— 400
Գնդեվանք— 231, 232, 396
Գնշին— 395
Գնջյաց սահման— 294
Գոգաձոր Ներքին— 395
Գոգաձոր Վերին— 395
Գոգեվան— 260
Գոգեվանք— 400
Գոլոշտի վանք— 320, 395
Գոլոշտի քար— 231
Գողաձոր— 397
Գողգոթա— 116, 119
Գողթան— 78, 97, 113, 189
Գողթն— 70, 76, 77, 97, 117, 189, 255, 263, 363
Գողորյա վանք— 282
Գոճո ձոր— 397
Գողոց ագարակ— 398
Գոմեր— 258, 395
Գոմոր— 378
Գոմք (Գեղաքունի գավառ)— 397
Գոմք (Վայոց ձոր գավառ)— 396
Գոն— 402
Գոչեն— 403
Գոտող վանք— 210
Գորագիտ— 401
Գորայք— 400
Գորու— 399
Գրկիք— 396
Գրհամ —70, 71, 279
Գրվակ— 260, 394
Գուգարք— 183, 187
Գուկական— 400
Գուկաոինճ— 397
Գուտենի— 325, 396

Դ

Դադա— 401
Դադեի վանք— 282
Դալարինք— 404
Դալք— 402
Դայակի քար (Դայեկի քար)— 299, 381
Դամասկոս— 323
Դամղան— 323
Դառն դաշտ— 331
Դաստակերտ (Գեղաքունի գավառ)— 397

Դաստակերտ (Սղուկ գավառ)— 394
Դաստակերտ (Քաշունիք գավառ)— 401
Դաստակերտ (Նվայլխ գավառ)— 395
Դարանակ— 398
Դարանք— 398
Դարատափ— 202
Դարիալ— 302
Դարիալի կիրճ— 372
Դարու լեռ— 77
Դգոլաբակ— 398
Դեզապանարտ— 234
Դեկն— 395
Դեղի— 400
Դեղձանագետ— 179, 181
Դեղնաձոր— 210—212
Դերբենդ— 256, 337
Դերբեն— 395
Դրմբըչխ (Դրմբըչխ, տե՛ս Դամասկոս)— 323, 351
Դիարբաք (տե՛ս Ասորիք)— 323
Դիզափայտ— 193
Դիղք— 401
Դից մայրի— 402
Դմանիս— 308
Դողար— 401
Դվին— 77, 112, 120, 124—127, 138, 148, 149, 151, 171, 174, 184, 186, 187, 191, 192, 226, 240, 268, 272, 293, 316, 357
Դպրաբակ— 398
Դռնակերտ— 402
Դրախտիկ— 404
Դրունք (Սոթից գավառ)— 398
Դրունք (Վայոց ձոր գավառ)— 396

ե

Եգիպտոս— 114, 157, 186
Եղատունք— 404
Եղնանիստան— 396
Եղնի— 400
Եթովպական ծով— 161
Եփրիք— 156, 161
Եկեռն— 395
Եղեգիս— 107, 179
Եղեգիք— 192, 230, 324, 329, 383, 396
Եղեգյաց ձոր (գավառ)— 153, 229, 230
Եղեղն— 400

Եղիճնաձոր— 396
Եղեգք — 210
Եղջերվենիք— 398
Եճանան— 400
Եճեղի— 396
Եմավոն լեռ— 302
Եվայլախ գավառ— 395
Եվանակաց հուն— 397
Ետեցիք— 398
Երասխ— 73, 76, 88, 97, 114, 115, 117, 184, 265, 269, 283, 367, 369, 370, 371
Երասխաձոր— 135
Երեզիք— 402
Երեզ— 397
Երեծ— 394
Երեղի— 401
Երեմք— 394
Երերի— 398
Երերն— 396
Երերոն— 324
Երերոնք— 329
Երերուք— 397
Երերունք— 396
Երերունք մյուս— 396
Երեց— 401
Երիզկույք— 397
Երիժու— 396
Երիշատ — 263
Երիցակավանք (նաև երիցավանք)— 109, 110, 113, 130, 197, 219—221, 282
Երկայնարտի— 396
Երնջակ— 70, 71, 183, 259, 260, 263, 300, 403
Երնջակի ամրոց— 183, 186, 189, 255, 317
Երնջակի վանք— 300
Երուսաղեմ— 112, 116, 128, 163, 164, 167, 180, 185, 186, 190, 197, 323, 344, 349, 352
Երևան— 179, 298
Եփեսոս— 122, 144
Եփրատ— 75

Ջ

Ջաչուրաբակ— 398
Ջառագարակ— 397
Ջարերիտասկերտ— 400
Ջաքեի վանք— 395

Ջեղյա— 395
Ջերիշատ— 398
Ջմյուռնիա— 323
Ջորացիք— 399
Ջվարկի վանք— 403
Ջրեսկ (վանք)— 166

Է

Էլար— 319
Էրդեչ— 395

Ը

Ըզդոն— 404
Ըղվերծ եկեղեցի— 199
Ըղվերձ գյուղ— 400
Ըղուերծ— 394
Ըշտե— 103
Ըշտեմատյրի— 394
Ընջղակերտ— 404
Ըռեղի— 396
Ըրվենք— 395

Թ

Թաթերք— 404
Թաթլո վանք— 331
Թաթու մարգ— 402
Թալիշ— 264
Թաղարա— 400
Թաղթուն— 399
Թամաշաղ— 404
Թամբարարք— 397
Թանատեի վանք— 282
Թանահատից վանք (նաև Թանահատի վանք) Վայոց ձոր գավառ— 153
Թանահատի վանք (Մղուկ գավառ)— 166, 281
Թավրիզ— 256, 334, 370
Թեղյակ— 403
Թեղո— 402
Թերեք— 332
Թեոդուպոլիս— 120, 127, 358
Թզենո գետ— 117
Թմաձոր— 294
Թմոկ— 397
Թով— 401
Թով մյուս— 401
Թործողու— 394
Թուրք— 400

Ի

Իմայել— 156
Իսրայել— 159, 162
Իստահր— 84
Իրաք— 304
Իցան (Կովսական հավաո)— 402
Իցան (Քաշունիք գավառ)— 401

Լ

Լամբրոն բերդ— 347, 351
Լավակունք— 399
Լեխք— 303
Լերին վանք— 395
Լերմենի շեն— 401
Լիճ— 396
Լիմ— 402
Լիմախովիտ— 402
Լիմ Վերին— 402
Լծեն — 394
Լհեվանք— 282
Լոհավանք— 403
Լոռաստան— 323
Լոռե— 308, 312, 316
Լսորք— 399
Լոր— 394
Լորաձոր— 195, 212
Լուսկա վանք (Լուսկավանք)— 282, 403
Լուցմայրի— 402
Լինաց սահման— 355

Խ

Խազիրական դաշտ— 332
Խազրաց աշխարհ— 302, 322
Խաթաստան— 322
Խալանդրաց աշխարհ— 298, 302
Խախ— 404
Խախալք— 399
Խախտք— 401
Խաղտիք— 399

Խանութ— 400
Խանք— 394
Խաշտատատափ— 274
Խաչատուր վանք— 282
Խաչեն— 243—280, 337, 378
Խաչերոխտով— 263
Խառան— 323
Խարաշկոնք— 234, 396
Խարձա— 284
Խիրք— 401
Խմուլճ— 400
Խնձի թաղք— 397
Խնձորեսկ— 399
Խնձորոգլուխ— 278
Խնձորուտ— 396
Խոդի— 401
Խոզաձոր— 403
Խոզավաս— 396
Խոզու գյուղ— 403
Խոժռաբերդ— 70, 71
Խոլավանք— 402
Խոկաոինճ— 397
Խոզաց բլրակ— 212
Խողվան— 276
Խողվանի— 401
Խոնթակաբակ— 398
Խոտ (գյուղ)— 202, 212, 216, 333, 400
Խոտ (ավան)— 90
Խոտագետ— 266, 332, 333
Խոտակերաց վանք— 216, 248, 282
Խոտանան— 212, 400
Խոտորալեզ— 108
Խոտունիք— 404
Խոտորձի— 396
Խոտուք— 394
Խորասան— 83, 85, 257, 288, 304, 317, 323, 337, 338, 368, 371, 372
Խորասանաբակ— 210, 398
Խորեզմ— 83, 304, 320
Խորթագետ— 397
Խորժա— 398
Խորին (մենաստան)— 346
Խորխոռ— 399
Խորյա— 399
Խորձա— 395

Խորոան— 397
Խրու— 399
Խուժաստան— 122, 323, 357
Խումզ (Հորմուզ)— 323
Խունան— 301, 308
Խուրնք— 394

Ծ

Ծածարդ (Ծաչարդ)— 211, 249, 349, 394
Ծակուտ քար— 381
Ծաղքանու— 403
Ծաղկա (Դեղաքունի գավառ)— 397
Ծաղկա (Ծաղուկ գավառ)— 394
Ծաղկաձոր— 298
Ծաղկիկ— 266
Ծանաղու— 402
Ծավալք— 404
Ծար— 263, 398
Ծափաքաղք— 397
Ծնքղի— 394
Ծիծառնավանք (Ծիծառնու վանք, Ծիծեռնակի վանք)— 197, 282, 387, 399
Ծիրանահող— 196
Ծղուկ— 70, 85, 88, 165, 197, 210, 272, 394
Ծննի— 394
Ծոբի— 402

Կ

Կադավանք— 399
Կաղոհորինք— 399
Կաթիկ— 179
Կախան աղբյուր— 398
Կախեթ— 303
Կածիք— 397
Կահուրա— 403
Կաղզվան— 316
Կաճաճուտ— 403
Կամավանք— 394
Կամբրյուն— 397
Կամրջախել— 381
Կամրջո ձոր— 396
Կայեն (բերդ)— 324

Կայեն (գավառ)— 284, 296, 319
Կանդիրք— 129
Կապադովկիա— 157
Կապականեն երկիր— 163
Կապան— 70, 118, 192, 246, 277, 279
Կապուլտ բերդ— 71, 186
Կապուլտք— 395
Կառատի— 402
Կասպից ծով— 355
Կավակերտ— 171, 255
Կավարտ— 203, 400
Կատար— 196
Կարբի— 181
Կարբինք Ներքին— 399
Կարբինք Վերին— 399
Կարին— 136, 256, 369
Կարկատան— 399
Կարճավան (նաև Կարճևան)— 210, 279, 402
Կարճևանի սուրբ ուխտ (տե՛ս Կարճավան)— 387
Կարմիր եկեղեցի— 404
Կարմիր լեռ— 356
Կարնո գաշտ— 304
Կարս— 307, 316, 339
Կարս—Վանանդ— 256
Կաքավաբերդ— 279
Կաքավարտի— 395
Կաքավուց աղբյուր— 396
Կեչառուլքի վանք— 291
Կեչուտ— 396
Կեսարիա— 75, 79, 80, 81, 194, 233, 354
Կերեն— 198, 402
Կթանոց— 180, 181
Կիլիկիա— 161, 285, 323, 339, 345, 371, 374, 353, 375
Կիրակոսիկ— 394
Կից— 402
Կիցք— 403
Կկոց քար— 279
Կմեզ— 401
Կնեվանք— 281
Կշմատուք— 203
Կոթ— 178, 180, 397
Կոթաքար— 181
Կողբ— 138
Կողոնիա— 129
Կոճորու— 401

Կոռոշափոր— 395
Կոստանդնուպոլիս— 120, 121, 127, 128, 140, 141, 149, 353, 368
Կովկաս լեռ— 83, 355
Կովսական (գավառ)— 70, 198, 202, 203, 273, 402
Կոտայք— 120, 173, 296, 319, 329
Կորեկներ— 404
Կորովի— 394
Կորոտյունք— 395
Կոմեն— 401
Կոզաբակով— 263
Կոկույք— 210, 235, 397
Կովա— 400
Կորոնք— 396
Կրովագետ— 400
Կուքն— 397
Կուշկունիք— 397
Կուռափաձոր— 282
Կուտակ— 398
Կուտրակագոմք— 397
Կուր (գետ)— 104, 302, 341
Կուրանք— 396
Կուրավանք (Արևիք գավառ)— 403
Կուրավանք (Ծղուկ գավառ)— 395
Կուքի— 404

Հ

Հաբանդ (գավառ)— 70, 210, 236, 254, 260, 263, 325, 399
Հաբանդա բերդ— 71
Հաբեշստան— 351
Հագարի— 190
Հալե— 400
Հալեպ (կամ Բերիա)— 323
Հալիձորի անապատ— 387
Հալիք— 211
Հակ— 395
Հաղպատ— 130, 284, 293, 362
Համա— 323, 337
Համամաբակր— 397
Համադան— 370
Համբանդ— 255
Համիան— 296, 316, 334
Համս— 323, 337
Համսար— 296, 319

Համուրք— 402
Հայաստան (Հայոց աշխարհ, Հայոց երկիր)— 69, 72, 74, 75, 77—80, 82, 84, 94, 100, 106, 107, 114, 120, 124—127, 129, 130, 135—139, 148—150, 152, 161, 165, 171—173, 177, 182—184, 188, 190, 191, 208, 243, 244, 255, 275, 279, 294, 295, 301, 304, 307, 308, 316, 320, 321, 323, 329, 339, 347, 351, 380
Հայելյակ— 399
Հայրաբերդ— 71
Հայրի— 399
Հավաքաղք— 397
Հավու (գյուղ)— 230, 396
Հավուտուք— 401
Հավուց քառ— 362
Հարանց անապատ— 287
Հարքենք— 401
Հարժիք— 195, 196, 210, 274—276, 332, 333, 394
Հարյաց տափ— 294
Հարսնեավազ— 213
Հացիք— 390
Հացյաց աղբյուր— 398
Հարք— 79
Հեծանա— 404
Հերեք— 303
Հերթ— 316
Հերմոնի վանք— 282
Հին վանք— 215
Համանդրախտ— 203
Հյունյաց ձոր— 400
Հնդկական ծով— 323
Հնդկաստան— 322
Հնցնյան— 401
Հողար— 400
Հողոցիմի այգի— 298
Հողք— 397
Հոյնացկոր— 402
Հոնաց դուռ— 73
Հոնաց երկիր (աշխարհ)— 87, 302, 334
Հոնաց պահակ— 75
Հոնաց սահման— 355
Հոնջենք— 398
Հոպպե— 163
Հոռոմոց երկիր— 86
Հովհաննավանք (նաև Հովհաննու վանք)— 111, 248, 268, 270, 287, 387

Հովված աշարակ— 397
Հորդանան— 359
Հորք— 396
Հռոմ— 145, 151, 194, 376
Հռոմկլա— 348, 350, 351
Հրաշկաբերդ— 296, 319, 323
Հրաչե— 257
Հրասեկի բերդ (նաև Հրասեկա բերդ)— 71, 214, 288, 289
Հրե քաղաք— 371
Հուբանկախոռ— 236, 237
Հունարակերտ— 73
Հունչաք— 399
Հուշապերեկ— 397
Հուսկոր— 402
Հուրազդան (Հրազդան)— 171, 255, 339

Ձ

Ձագ— 397
Ձագաձոր (Ձագեձոր)— 71, 226, 227, 325, 399
Ձագեձորո բերդ— 71
Ձաղա— 404
Ձեռատիվանք— 273
Ձիասար— 399
Ձկնարած (գետ)— 232
Ձկնարած (գյուղ)— 395
Ձղահայրյանք— 395
Ձղու— 401
Ձյունասարի վանք— 282
Ձորագետ— 189, 257
Ձորավանք— 218, 250
Ձորք— 70, 403

Ղ

Ղազվին— 316
Ղալեն— 404
Ղարաղորում— 327
Ղեխք— 397
Ղոկանի— 399

Ճահուկ (գավառ)— 70, 255, 263, 292, 297, 317, 318, 404
Ճահուկ (գյուղ)— 404
Ճապկուտ— 401
Ճավաճոր— 298
Ճարմանի դաշտ— 104
Ճենաց աշխարհ— 302, 308, 315
Ճողք— 401
Ճորա դուռ— 83

Մ

Մազազ— 234
Մազազնի— 394
Մազազնէ— 395
Մազանդարան— 304
Մալանու— 402
Մալև— 387
Մախազատափ— 118
Մախուլն— 399
Մակաղոց— 400
Մակաղուց— 400
Մակաղոց մյուս— 400
Մաղազ (գավառ)— 176
Մաղարա— 370
Մաղարթա վանք— 283
Մաղձնատուք— 401
Մաճ— 204, 401
Մաճկան— 402
Մաճռանկա ձոր— 338
Մայրագույք— 396
Մայրի— 71, 402
Մայրյակ— 403
Մանազկերտ— 358
Մանակա (եկեղեցի)— 118
Մանազու— 403
Մանուա՛ի մարգ (գյուղ)— 402
Մառագաթ— 402
Մառաքատ եկեղեցի— 199
Մառի— 402
Մասքութք— 75
Մավր— 323, 371
Մատրակերտ— 399
Մարանդ— 108
Մարաց երկիր (նաև աշխարհ)— 87, 97
Մարգաձոր— 400

Մարգք— 399
Մարդախանի— 401
Մարդակայք— 394
Մարդաղ— 121
Մարտիրոս— 395
Մարուր— 402
Մաքենոցաց վանք (նաև Մաքենյաց վանք, Մաքենոց վանք)— 126, 127, 140, 148, 165, 166, 175, 179, 186, 197, 282
Մաքենոց (գյուղ)— 398
Մեթևուլեթ— 372
Մել—402
Մելիճ ավան— 285
Մելիտենե— 80, 130
Մեծաձոր— 395
Մեծաձոր մյուս— 395
Մեծամարդ— 400
Մեծ Անապատ— 387
Մեծիք— 394
Մեծ Հալք— 80, 99
Մեհոգած— 397
Մեղրաձոր (նաև Մեղրու ձոր)— 210, 276
Մեղրի— 70, 279, 399, 387
Մեղրո վանք— 402
Մեննիք— 402
Մերթակերտ— 401
Մժնկերտ— 316
Միափոր գավառ— 186
Միջագետք— 370, 396
Մծխիթա— 301, 302
Մյուս Անապան— 401
Մննի— 399
Մշենի— 399
Մշկաձոր— 394
Մոգազարակ— 400
Մոգույք— 394
Մոգք— 401
Մոդենախե (բերդ)— 372
Մոզան— 107
Մոզն— 396
Մոխրոց— 396
Մոլոշոն— 403
Մոշենք— 399
Մովկան— 244
Մովկանա դաշտ— 341
Մորենի— 93, 394

Մսեն— 395
Մսըր (Եգիպտոս)— 349, 350—352
Մրկաքար— 399
Մրուց— 394
Մեսխրանի դաշտ— 372
Մուղանի դաշտ— 114, 338, 366, 371
Մուսուլ— 370
Մուցք— 395
Մուֆարղին— 323

Ց

Ցուղտամաղք— 395

Ն

Նախանձփոր— 399
Նախիչևան— 71, 151, 183, 184, 190, 191, 263, 280, 292, 297, 317, 318, 320, 369, 370
Նախկոտան— 402
Նախկորզան— 88
Նախշավանիկ— 401
Նակորզան— 117, 401
Նափակաշեն— 400
Նեսիս գյուղ— 339
Նեստորաց աշխարհ— 326
Ներքին Բաեն— 316
Ներքին Վարդենիք— 397
Ներքին Ուշակ— 211
Նիգ— 136
Նիկիա— 121, 140, 227, 364
Նիշապուր— 371
Նշավուր— 323
Նոպատ լեռ— 106
Նոր— 357
Նորաբակը— 397
Նորագյուղ (Զորք գավառ)— 403
Նորագյուղ (Ճահուկ գավառ)— 404
Նորագյուղ մյուս (Ճահուկ գավառ)— 404
Նորագյուղիկ— 403
Նորակերտ— 403
Նորաշեն— 397
Նորաշինիկ (Բաղք գավառ)— 400
Նորա ինիկ մյուս (Բաղք գավառ)— 400

Նորաշինիկ (Կովսական գավառ)— 402
Նորաշինիկ (Հաբանդ գավառ)— 399
Նորաշինիկ (Ճահուկ գավառ)— 404
Նորատուք— 180, 188, 256
Նորավանք (Վայոց ձոր գավառ)— 282, 284—300, 320, 324, 331—335, 339, 341, 342, 374, 375, 380—83, 387
Նորավանք (Բղեն գավառ)— 282
Նորավանք (անապատ)— 281
Նորբերդ— 404
Նոր Երուսաղեմ— 111
Նորիք— 199, 205, 253, 271, 394, 396
Նորո— 299
Նորոբերդ— 298
Նրբյուն— 396
Նփրկերտ (Նաև Մուրֆաղին)— 324

Շ

Շագվա— 399
Շաթիքաղք— 400
Շահակերտ— 403
Շահապիվան— 99, 357
Շահապոնից բերդ— 71
Շահապոնք (ձոր)— 70, 71, 255, 290
Շաղատ— 84, 85, 88, 90—93, 165, 394
Շաղատա վանք— 197
Շաղատո վանք— 395
Շամա երկիր (նաև Շամ)— 323, 337
Շամշուլդե բերդ— 308, 312
Շամրթա— 399
Շամքոր— 316
Շաշատո վանք— 395
Շաշիգեն— 402
Շապուհաթաղ— 398
Շավառնահող— 181
Շավեն— 404
Շատախ— 396
Շատախ մյուս— 396
Շատանյա վանք— 192, 282
Շատջրեք— 398
Շատվան— 398
Շարաքո— 403
Շարուր— 214
Շաքե— 395
Շաքի— 93, 316
Շեկք— 217

Շեքքս— 400
Շիկակարբն— 397
Շիկահողք— 402
Շինիք— 397
Շիրակ— 103, 104, 166, 240, 257, 307, 310
Շիրակավան— 249
Շլորուտ— 71, 279
Շմրթայի— 404
Շնհեր— 270, 255, 333, 387
Շնո հերք— 400
Շողվագ (Շողվագա)— 176, 177, 186, 282
Շոռնոխո (Հաբանդ գավառ)— 399
Շոռնոխո (Քաչունիք գավառ)— 401
Շոռոտ— 261
Շոքար— 395
Շտատուք— 402
Շուշթար— 323

Ո

Ոբն— 400
Ոզիհի— 394
Ոզմունք— 398
Ոզոհի— 403
Ոլենի— 404
Ողենի— 397
Ողյան— 396
Ողուլհի— 402
Ոչեքի— 403
Ոպնի— 394
Ոսկեձոր մյուս— 403
Ոստինք— 107
Ովայից— 172
Ովզավ— 403
Ոբրոքո քար— 399
Որգոերեգի— 396
Որդան հայր— 395
Որդիշո վանք— 402
Որդնիք— 398
Որզվատ գյուղ— 76, 77, 113
Որդոք— 404
Որդրու— 305
Որձաբերդ— 394
Որոկնք— 398

Որոտան— 193
Որոտն բերդ— 71, 279, 394
Որոտն (գյուղ)— 394
Որոտն երկիր— 316, 319, 329, 332
Որուց— 398
Ոփիք (երնջակ գավառ)— 403
Ոփիք (ճահուկ գավառ)— 404
Ոփյաց ձոր— 397

Չ

Չահո— 398
Չամոտուք— 402
Չարեք բերդ— 291, 316
Չերքեզաց երկիր— 322
Չին և Մաչին— 322, 326
Չվայի այգի— 298
Չուվա (Չիվա)— 382, 383

Պ

Պահավանք (գյուղ)— 397
Պահեստ— 404
Պալպաք (նաև Արեգ)— 323
Պաշուզք— 398
Պաշուք Ներքին— 398
Պատանդավանք— 399
Պարսկաստան (Պարսից աշխարհ, երկիր)— 76, 82—85, 87, 90, 100, 106, 114, 125, 128, 147, 169, 173, 187, 288, 295, 301, 315—319, 320, 323
Պարտավ— 244, 269, 316, 357
Պարքոն— 400
Պարքոն մյուս— 401
Պետրոսկա վանք (գյուղ)— 400
Պիսաք— 394
Պղնձահանք— 291, 293
Պողոսի վանք (գյուղ)— 402
Պոնտոսի ծով— 323
Պրակք— 396

Ջ

Ջահան գետ— 322
Ջաղացաձոր— 263, 398
Ջասանի կիրճ— 372
Ջավախեթ— 303
Ջերմուկ— 396

Ջհատիքաղ— 278
Ջրվշտիկ վանք— 166
Ջուղա— 260, 263
Ջուր— 404

Ռ

Ռաժիկի վանք— 120
Ռանի գաշտ— 373
Ռապատ— 403
Ռհ— 316
Ռմբաձոր— 269
Ռուսաց երկիր— 322

Ս

Սահակաբակք— 398
Սաղատձոր— 395
Սաղվասունք— 404
Սապատաձոր— 394
Սառնաքար— 196
Սարաւիարախ— 395
Սարկողովք— 396
Սափլի անապատ— 397
Սեբաստիա— 80, 126, 130
Սենյակ— 196
Սինա— 154
Սիոն (լեռ)— 154, 221
Սիս— 346, 347, 374
Սիրիա— 161
Սիցիլիա— 157, 161
Սկևրտ— 397
Սկյութիա (լեռ)— 154
Սյունի վանք— 281
Սյունիք (Սիսական աշխարհ, Սյունյաց աշխարհ)— 67, 69—71, 75—79, 81, 84—88, 90, 93—100, 102, 103, 107—111, 113, 117, 120—130, 135, 139, 149, 151, 152, 165, 166, 171, 174, 181, 183, 188, 190, 193, 194, 209, 210, 218, 221, 232, 234, 241, 246, 249, 254—258, 262, 264—266, 268—271, 279, 283, 286, 292, 307, 316, 319, 340, 343, 390, 391
Սյունյաց բերդ— 71
Սնաձոր— 398
Սոզոմ— 378
Սոքից (գավառ)— 397
Սոքք— 70, 175, 210, 238, 397

Սոնաց աշխարհ— 325
Սպահան— 288, 316
Սպերի ծով— 301
Ստերջաց գավակ— 195
Ստորին— 400
Սրավի գաշտ— 368
Սրկղոնք— 108
Սուլեմա ձոր— 233, 234
Սուտաղաց (երկիր)— 322
Սուրբ Առաքելոց— 253, 275, 332, 338, 370
Սուրբ Աստվածածին— 118
Սրուբ Գեորգ (Աղահեճ գավառ)— 399
Սուրբ Գեորգ (Ծնջյակ գավառ)— 403
Սուրբ Գրիգոր— 180, 199, 272
Սուրբ Կարապետ— 287, 288, 294, 320, 338
Սուրբ Հովհաննես— 387
Սուրբ Հռիփսիմե— 350
Սուրբ Մարի— 316
Սուրբ Նախավկա— 111, 127, 197, 297, 324, 394
Սուրբ Սահակ (գյուղ)— 383
Սուրբ Սոփի— 346
Սուրբ Սոֆիայի տաճար— 150
Սուրմարի (տե՛ս Սուրբ Մարի)— 293
Սևանա կղզի— 175, 177, 185, 220, 358
Սևաջուր— 197
Սևասար— 117

Վ

Վաժանիք— 401
Վաժնատուք— 402
Վաժոց— 397
Վաժունիք— 403
Վախտանգաձոր— 402
Վաղատին (գյուղ)— 395
Վաղատնի վանք— 257, 258, 282
Վաղատու— 399
Վաղավեր— 238, 239, 397
Վաղարշակերտ— 96
Վաղարշապատ— 76, 129
Վահանավանք— 217, 218, 247, 270, 272
Վայոց ձոր— 70, 71, 107, 110, 155, 177, 190, 192, 214, 232—234, 255, 259, 260, 263, 280, 282, 284, 285, 288, 292, 296—298, 300, 319, 320, 324, 329, 340, 374, 395

Վան— 403
Վանա ծով— 240
Վանանդ (Ախուրյանի հովտում)— 307
Վանանդ (Երնջակի գավառ)— 77, 121, 199, 263, 304, 305, 401, 403
Վանանդա բերդ— 71
Վանանդա ձոր— 271
Վանավան— 397
Վանաց ձոր— 196
Վանաց վանք— 282
Վանեվան— 282
Վանեվանաց ձոր— 180
Վանեվանաց վանք— 181
Վանոցա— 399
Վաչեի բակը— 398
Վառ— 199
Վառամաղբյուր— 402
Վասակակերտ (Աղահեճ գավառ)— 399
Վասակակերտ (Ծղուկ գավառ)— 394
Վասակակերտ (Ճահուկ գավառ)— 404
Վասակաշեն (Գեղաքունի գավառ)— 397
Վասակաշեն (Սոթից գավառ)— 398
Վասպուրական— 183, 184, 187, 188, 190, 212, 218, 240, 246, 250, 256, 257
Վարարակն — 226, 227
Վարդանաբակը— 397
Վարդանաձոր— 403
Վարդանամարգի— 195
Վարդավանք— 400
Վարդենիք (Գեղաքունի գավառ)— 397
Վարդենիք (Վայոց ձոր գավառ)— 396
Վարդենյաց կողմ— 299
Վարդիկ հայր— 135
Վարժակի աղբյուր (գյուղ)— 398
Վարձե վանք— 293
Վարոսի վանք— 402
Վերին Բորտի— 395
Վերին շեն— 399
Վժանիք— 266
Վժնաքերդ— 399
Վրաստան (կամ Վիրք)— 74, 75, 83, 93, 104, 126, 127, 129, 250, 275, 285, 293, 295, 301—304, 308—317, 321, 323, 329, 337, 338, 341, 357, 370, 372, 380, 392
Վրկան աշխարհ— 250

Տագամար— 400
Տաթև— 69, 168—170, 183, 193, 195, 196, 200, 205, 212, 213, 222, 223, 228, 237, 238, 245, 246, 249, 251—253, 257, 260—264, 270—276, 280, 283—286, 300, 329, 332, 338, 340, 344, 367, 374—378, 380, 391, 394
Տախարյան— 402
Տախն— 401
Տախտակը— 404
Տաճկաձոր— 401
Տաղամայրի— 403
Տամալեկը— 210, 211, 237
Տանձավայր— 401
Տանձատափ— 210
Տանձափարախ— 192, 217, 282
Տանձյակ— 399
Տանձուտ— 398
Տաշտակերտ— 238, 239
Տաշտոն— 70
Տաշտուն— 402
Տաշու— 210
Տավրոս լեռ— 173
Տավուշ— 308
Տատան— 394
Տատնեղիշեն— 400
Տարոն— 75, 173, 185
Տարվանոտ— 402
Տափյար (Արևիք գավառ)— 403
Տափյար (Բաղք գավառ)— 400
Տեհի— 403
Տեղ— 251, 252, 399
Տերանդատ— 400
Տերեկունիք— 403
Տէռնատեան— 398
Տերունական— 202, 308
Տիգեն— 404
Տիզբոն— 84
Տինիք— 403
Տիր— 198
Տխարբ— 289, 296
Տխունիք— 394
Տյառնավանք (գյուղ)— 77, 395
Տոգող— 400

Տալորք— 394
Տոսպ— 218
Տորթնի— 400
Տորվանուտ— 198
Տորունիք— 394
Տորունկուլք— 394
Տրապիզոն— 304, 323
Տրնտուք— 397
Տրիպոլի— 349
Տրյա— 401
Տուս— 323
Տուտուտք— 401
Տփխիս— 293, 307, 308, 311, 330, 336, 339
Տևի— 403

Ց

Ցաղաց քար— 107, 282, 338, 375
Ցաքուտ— 226
Ցողունի (Ցողուկ գավառ)— 210, 260, 294, 399
Ցողունի (Հաբանդ գավառ)— 399
Ցրտոգետ— 396
Ցրցնի— 397
Ցուր— 224, 225, 253, 332, 394
Ցուրա բերդ (Ցուրաբերդ)— 210, 211, 222, 223
Ցուրա գետ (Ցուրագետ)— 202, 210, 274—276
Ցուրաքար— 223, 225, 253
Ցուրտավ— 130
Ցուցագետ— 202

ՈՒ

Ուիքբրուն— 397
Ուխտիք— 257
Ուղի ձոր— 395
Ույծ— 93, 197, 199
Ունչիձոր— 397
Ունջոռք— 396
Ուռական գետ— 395
Ուռակարբ— 398
Ուռիք— 396
Ուռհան— 323
Ուռո քար— 215
Ուսկածան— 400
Ուստին— 229
Ուրծն— 329

Փ

Փառաժնակերտ— 136
Փառականք— 397
Փառավադ— 401
Փառավարտու վանք— 402
Փեթականոց— 395
Փշատնգրուս— 402
Փշատիք— 396
Փշունք— 396
Փողահանք— 329
Փորակ— 260, 263
Փորակո— 396
Փոքր Սյունիք— 75
Փոքր Ույծ— 394

Ք

Քալասրահ— 317, 318
Քաղաւաակ— 395
Քաղկեդոն— 120, 123, 126, 127, 128, 137, 138, 140—142, 145, 357, 359
Քաշաթաղ— 70
Քաշաթաղք— 399
Քաշեթաղուց բերդ— 71
Քաշի մարդ— 396
Քաշունիք— 111, 114, 198, 401
Քարակուի— 282, 383, 405
Քարաձոր— 213
Քարավադ— 215
Քարատինք— 211
Քարհվանք— 230
Քարթլ (Քարթլի աշխարհ)— 301, 302
Քարունջ— 395
Քեթի վանք— 332, 333
Քնդաձոր— 399
Քիրման— 304
Քոշադեղ— 400
Քորադին— 163
Քրդստան— 323
Քրման— 323
Քրոնիկ վանք— 282
Քրվանք— 400
Քրտն— 404
Քուլլք— 404
Քուռակախաղաց— 298

Ո

Ոճի գետ— 398
Ոնկրաց սահման— 322
Ոսոֆրև— 291
Ովհաննես ծով— 321, 323
Որբևի (բերդ)— 301, 303, 315
Որոգիքիք— 394
Որոլաս— 259, 263

Ֆ

Ֆարս— 304

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Սյունիքի պատմություն 65
Ծանոթագրություններ 405
Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ . . . 550
Անձնանունների ցանկ 557
Տեղանունների ցանկ 583

Ստեփանոս Օրբելյան

Սյունիքի պատմություն

Стефанос Орбелян
История Сюника
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1985

Համրագիր՝ Ռ. Գ. Սարգսյան
Նկարիչ՝ Ա.ն. Վ. Գասպարյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճաճանապանյան
Վերատուգող սրբագրիչ՝ Ք. Վ. Բարսեղյան

ՀԲ 5154.
Հանձնված է շարվածքի 24. 12. 85.:
Ստորագրված է տպագրության 17. 06. 86:
Թուղթի տպագր. № 1: Տառատեսակ՝ Գրքի սովորական:
Տպագրության՝ բարձր: 32,34 պայմ. տպ. մամ, 30,7 հրատ. մամ.:
Տպաքանակ՝ 20000: Պատվեր՝ 2822: Գինը՝ 3 ռ.:
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:
Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65:
Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Алавердяна, 65.